

ՆԻՒԹԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ը. ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

«ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի հրատարակությունը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:

© All rights reserved
ISBN 978-9953-0-2113-3

Ներկայ հատորին տպագրությունը իրականացած է նուիրատուութեամբ Տէր եւ Տիկին Հրայր եւ Մակի Սողոմոնեաններու:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» շարքի* Ութերորդ հատորը յատկացած է Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին եւ կուսակցութեան 1909-1911 տարիներու գործունէութեան: Կազմուած հատորին ծաւալին պատճառով անկէ դուրս մնացին եւ շարքին Իններորդ հատորով պիտի տրուին, այլ նիւթերու կարգին, կովկասեան շրջանները եւ Պարսկաստանը: Այս վերջինը, ուր Հ. Յ. Դաշնակցութիւնը կը շարունակէր իր գործօն մասնակցութիւնը բերել երկրի սահմանադրական կարգերու ամրապնդման ուղղութեամբ, հերթական անգամ թատերաբեմ պիտի հանդիսանար զինեալ նոր բախումներու եւ նորանոր խռովութիւններու: Գահընկէց Շահը՝ Մեհմեդ Ալի, որ ապաստան գտած էր Ռուսիա, վերջինիս օժանդակութեամբ վերադարձած էր Իրան եւ նոր զօրքեր կուտակելով՝ կը ձգտէր վերատիրանալ կորսնցուցած գահին: Անոր վերադարձը նոր աշխուժութիւն տուած էր յետադիմական ուժերուն, մասնաւորաբար երկրին հիւսիս արեւելեան շրջաններուն եւ Ատրպատականի մէջ: Անդին, Ռուսիոյ տարածքին եւ յատկապէս Կովկաս, ցարական իշխանութիւններու հակահայ ու հակադաշնակցական մոլեգնութիւնը կը մտնէր նոր փուլի մէջ. 500ի հասնող ձերբակալուածներէն բանտերուն մէջ կը մնային 160 հոգի, որոնց դէմ կը պատրաստուէր դատական քննիչ Լըժինի ծաւալուն ամբաստանագիրը, որ հիմք պիտի ծառայէր Պետերսբուրգի մէջ կայանալիք «Դաշնակցութեան գործ» անունը կրող ծանօթ դատավարութեան:

Հ.Յ.Դ. Կեդր. դիւանատունը առատ նիւթ կը հայթայթէ վերոյիշեալ իրադարձութիւններէն թէ՛ մէկուն եւ թէ՛ միւսին մասին:

Հետեւաբար կացութիւնը 1911 թուականին այնպէս էր, որ Արեւելեան Բիւրոյի անդամներուն, ինչպէս եւ պատասխանատու բազմաթիւ ընկերներու կալանքի տակ կամ փախստական ըլլալու քերումով, կովկասեան կազմալոյծ կամ ընդլատակ անցած դաշնակցական մարմինները ի վիճակի չէին ո՛չ կանոնաւոր ժողով գումարելու՝ Ընդհ. Ժողովի օրակարգը քննելու համար, ոչ ալ ընտրովի պատգամաւոր ուղարկելու կուսակցութեան գերագոյն ժողովին: Արդէն ուրիշ շրջաններու

*) Յիշատակութեան արժանի է որ «ՆԻԻԹԵՐ»-ու հրատարակութեան այս շարքին խորագիրը առաջին անգամ գուգադիպարար եւ նոյնութեամբ գործածուած կը գտնենք Վեցերորդ Ընդհ. Ժողովի Արշանագրութեանց եւ Որոշումներու զրքոյկին մէջ (Տես էջ 92 եւ 133):

շարքին արեւելեան մարմիններն ու շատ մը ընկերներ անպատեհ կը գտնէին Ընդհանուր Ժողովի գումարումը, մատնանիշ ընելով այն անորոշ, երբուն վիճակը, որ գոյութիւն ունէր Կովկասի, Պարսկաստանի եւ բուն իսկ Թուրքիոյ մէջ. փոխարէնը կը թելադրէին բաւականանալ արեւմտեան գօտիին յատուկ ռայոնական ժողովով մը: Արեւմտեան Բիւրոն եւ իրեն հետ այլ կազմակերպական շրջաններ, ընդհակառակն, կողմնակից էին յարգելու վերջին Ընդհ. Ժողովին որոշումը, ըստ որուն Վեցերորդը պէտք է գումարուէր 1911 թուականին: Հիմնական պատճառաբանութիւնը այն էր՝ որ Դաշնակցութեան նախորդ Ընդհ. Ժողովները եւս կայացած էին մեր ժողովուրդին համար եթէ ոչ աւելի՝ գէթ նոյնքան տազնապալի պայմաններու մէջ, որոնք ինքնին պարտադիր կը դարձնէին անոր անյապաղ գումարումը:

Այդպէս ալ եղաւ: Նախապատրաստական աշխատանքները կատարուած էին. օրակարգ եւ հրահրագրեր դրկուած էին արդէն:

Ընդհ. Ժողովի օրակարգը շրջաններուն ուղարկուած էր միաժամանակ թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան Բիւրոներու անունով: «Կազմալուծման» խնդիրը, հետեւաբար, չի վերաբերիր Արեւելեանի բոլոր շրջաններուն, այլ միայն անոր կովկասեան թեւին: Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ կամ Հայաստանի հատուածը, Կարին կեդրոնով, կը գործէր եւ, ինչպէս յայտնի է, Ընդհ. Ժողովին պիտի մասնակցէին անոր իրաւասութեան տակ գտնուող Ատրպատական-Պարսկաստանի, Վան-Վասպուրականի, Տարօն-Սասունի, Կարնոյ եւ Տրապիզոնի Կ. Կոմիտէութիւնները:

Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովը բացուեցաւ Պոլիս 1911 թ. Օգոստոսի կիսուն եւ տեւեց ամիս մը ամբողջ: Նիստերը տեղի կ'ունենային «Ազատամարտ»ի շէնքին մէջ: Մասնակիցներուն մէջ քիչ չէր թիւը կովկասահայ ընկերներուն (նոստիկանական հետապնդումներէն Թուրքիա ապաստանած), բայց եւ այնպէս ժողովի օրինաւորութեան հարցը վերաբարձուեցաւ երկրորդ նիստին իսկ (17 Օգոստ.), հիմք ունենալով կովկասեան մարմիններու բացարձակ բացակայութիւնը: Թեր ու դէմ կարծիքներու փոխանակութենէն ետք, ի վերջոյ եզրակացուեցաւ՝

«Ներկայ ժողովը համարել լիազօր այն բոլոր հարցերուն համար, որոնք կը վերաբերին Թուրքիային, Պարսկաստանին եւ գաղութներուն, իսկ Ռուսիոյ վերաբերմամբ բաւականանալ լոկ նախընթաց Ե՞ր Ժողովի գծած շրջանին մէջ կապարտելիք չեղած կոնկրետներու գործնական որոշումներով»:

Ընդհ. Ժողովի օրակարգը ծանրաբեռնուած ըլլալով հանդերձ երեք երկիրներու վերաբերեալ հարցերով, Թուրքիան կը գրաւէ անոր զբաղումներուն հիմնական կեդրոնը: Իթքիհատի եւ կառավարութեան հետ յարաբերութիւնները, հայ գիւղացիութեան բռնագրաւուած հողերու, պատրիարքարանի եւ Ազգ. Իշխանութեանց հետ կապուած ներազգային խնդիրները եւ ինքնապաշտպանութեան կազմակերպման յատկացուած նիստերը կ'անցնին բուն վիճաբանութիւններով, բայց եւ խորքային քննարկումներով ու դաշնակցական ժողովներու բնորոշ խիստ ինքնաքննադատութեամբ: Կազմակերպական շրջաններու տեղեկագրերն ու զեկուցումները եւս լայնօրէն կ'անդրադառնան վերոյիշեալ փշոտ խնդիրներուն, որոնք սահմանադրութեան հոչակումէն ասդին իրենց բաղձալի լուծումը գտնելէ հետո՝ աւելիով բարդացուցած էին կացութիւնը ու սրած միջ-ցեղային արդէն իսկ կնճռոտ հակասութիւնները:– Հայկական ներքին գաւառներէն տեղացող գանգատ-բողոքները՝ ի մասին հողային նորանոր բռնագրաւումներու, դաշնակցական յայտնի գործիչներու դէմ յարուցուած դատական հետապնդումները, պետական պաշտօնէութեան բացայայտ կողմնակալութիւնն ու կաշառակերութիւնը, դատարաններու արձակած անարդար վճիռները, քիւրտ ցեղապետներու ու հանրածանօթ ոճրագործներու կողմէ օր ցերեկով գործուած սպանութիւնները եւայլն, եւայլն: Պաշտօնական իշխանութեանց մօտ այս բնոյթի բոլոր դիմումները դժբախտաբար մնացած էին անհետեւանք, իրենց հետ մոռացութեան մատնելով Սահմանադրութեամբ խոստաց-

ւած արդիական ու արդար նոր Թուրքիա մը կերտելու բոլոր յոյսերը: Եւ ասիկա այն աստիճան, որ բարի կամեցողութիւն ունեցող մարդոց համար համոզում կը դառնար որ՝

– Իթքիհատը ողողուած է բոլորովին յետադիմական, կրօնամոլ ու ցեղապաշտ տարրերով, որոնց ճնշումով ան, Իթքիհատը, անտեսելով օսմանցիութեան շուրջ գոյացած ընդհանուր համախոհութիւնը՝ կը հետապնդէ պարզապէս թուրքչիութեան ծրագիր, միշտ նպատակ ունենալով նուիրականացնելու օսմանեան բազմազգ ժողովուրդներուն մէջ բացառաբար թուրք տարրին գերակայութիւնը:

– Հայաբնակ գաւառներուն մէջ, փոխանակ համիտեան օրերէն մնացած հին վարչակազմի արմատական բարեփոխման ու աւատատիրական կարգերու գէթ աստիճանական չէզոքացման, կը հովանաւորուի քիւրտ ցեղապետներու սանձարձակ գործունէութիւնը, որ խորքին մէջ կը ծառայեցուէր ըստ նախկինին ճնշելու համար հայ գիւղացիութիւնը եւ զայն հեռացնելու իր պապենական հողերէն:

– Ատանայի ողբերգութենէն ետք Դաշնակցութեան կողմէ բազմաթիւ առիթներով կատարուած դիմումները Իթքիհատի թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ Սելանիկի կեդրոններուն մօտ, երկուստեք կայացած հանդիսաւոր համաձայնութիւնները կը մնային, խորքին մէջ, մեռեալ տառ, խափանման ենթարկուելով իբր թէ տեղական պատասխանատուներէն, մինչդեռ հետզհետէ յստակ կը դառնար նոյն այդ կեդրոններուն խաղացած երկդիմի ու հայադաւ քաղաքականութիւնը:

– Երկրորդական խնդիրներու պարագային Իթքիհատն ու իրմէ սերած կառավարական դաշինները գոհացում կու տային անշուշտ հայոց դիմումներուն՝ պատրիարքարանի, կուսակցութեան կամ պետական հայ երեսփոխաններու կողմէ ներկայացուած: Շուտով պարզորոշ պիտի դառնար, սակայն, երիտասարդ թուրքերու այս հասարակ ու խաբեպատիր խաղին հետապնդած իսկական նպատակը:– դիւանակալական ձգձգումներով ժամավաճառ ընել իրենց հայ խնդրարկուները՝ ի վերջոյ բաւարարութիւն տալու համար անոնց լոկ մասնակի պահանջներուն, իսկ ազգային ու համապետական չափանիշով բարեկարգումներու պարագային՝ միայն խոստումներ շռայլել՝ այն ալ ապագայի հաշուոյն, առանց երբեք նախաձեռնութիւն ցոյց տալու անոնց գործնականացման ուղղութեամբ:

Վռամեան, Վանայ Սարգիս եւ դաշնակցական պատասխանատու շատ դէմքեր կ'անդրադառնային անշուշտ այս իրականութեան եւ բարձրաձայն ալ կը գոչէին որ՝ թէ՛ Իթքիհատը եւ թէ՛ կառավարութիւնը մեզ կը խաբեն:

Նաեւ համոզում գոյացած էր, որ կայսրութեան մէջ քաղաքական մենատիրութիւն հաստատած Իթքիհատը *հակահայ* է ըստ էութեան եւ *հակադաշնակցական*:

Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովը, ինչպէս ըսուեցաւ, խոր քննութեան ենթարկեց այս իրողութիւնը բազմիցս: Արդէն անցնող երեք տարիներու ընթացքին, հակառակ արտաքին երեւոյթներուն, այնքան ալ հաշտ ու հեզասահ չէին եղած յարաբերութիւնները իշխող կուսակցութեան՝ Իթքիհատի հետ, որ քաղաքական գետնի վրայ անմրցակից էր եւ որմէ կախուած էր, դժբախտաբար կարելուր չափով մը, թուրք ոճրածին խուժանին դէմ հայ ժողովուրդի անվտանգութեան այնքան ցատտ խնդիրը: Այս պայմաններուն մէջ, ուրեմն, Ընդհ. Ժողովը նախքան խզումի երթալը՝ որոշեց վերջին փորձ մը կատարել:– ի մօտոյ (1911 թ. Հոկտ.) Սելանիկի մէջ կայանալիք Իթքիհատի Համագումարին ուղղել յիշատակագիր-յայտարարութիւն մը, պահանջելով «*իրական երաշխիքներ*»... կրկնուած խոստումներու մօտալուտ իրագործման համար: Այլապէս «արտօնել Արեւմտեան Բիւրոն որ դադարեցնէ իր յարաբերութիւնները Իթքիհատի հետ»:

Անգամ մը եւս գրաւ կը դրուէր «Իթքիհատի իբր թէ «առողջ» ու «սահմանադրատէր» համարուող ձախակողմեան թեւին վրայ, որ արդէն փոքրամասնութեան վերածուած՝ կորսնցուցած էր ոչ միայն ամէն հեղինակութիւն, այլեւ ի՛նք յետագային հետեւորդ ու գործակից պիտի ըլլար կուսակցութեան որդեգրած «ցեղային մաքրագուման» ծրագրին:

*
**

Ներկայ հատորի առաջին գլուխը բաղկացած է գլխաւորաբար հետեւեալ փաստաթուղթերէն.–

- 1) Ընդհ. Ժողովի հրաւեր, օրակարգ, հարցարան եւ լիազօրագրեր (էջ 8-22):
- 2) «Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհանուր Ժողովի ատենագրութիւնները»: 274 էջերէ բաղկացած եւ թիւ 1541-22 համարակալումը կրող մեծ մատեան, ձեռագիր արտագրութիւն 1911 թ. Մեպտ. 17 Հոկտ. 17ին կայացած 50 նիստերուն (էջ 23-119):
- 3) «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Զ^ր Ընդհ. Ժողովի կողմէ ընտրուած Հաշուերմանի յանձնախմբին (1911)»: Չեռագիր 24 էջ, ստորագրուած Գ. Ն. Քեստանեանի կողմէ (էջ 120-124):
- 4) «Հ. Յ. Դաշնակցութեան Վեցերորդ Ընդհանուր Ժողովին Որոշումները» (Օգոստոս 17 – Սեպտեմբեր 17, 1911 – Ամփոփում եւ քաղուածքներ): 31 էջերէ բաղկացած գրքոյկ «միայն մարմիններուն համար» մակագրութեամբ (էջ 125-135):

Պիտի յաջորդեն Արեւմտեան Բիւրոյի, Թուրքիոյ տարածքին գործող կազմակերպական շրջաններու, Պալքաններու եւ Ամերիկայի յատկացուած գլուխները:

Զ. Ընդհանուր Ժողովի կազմը

Յայտնենք որ արձանագրութիւններուն մէջ ժողովականները յիշուած են առ հասարակ իրենց կուսակցական ծածկանուններով կամ պարզապէս առաջին անունով: Տեղին, ծանօթագրութիւններու ճամբով ջանացած ենք տալ հարկ եղած պարզաբանումները եւ ճշդել ենթակայաններուն ինքնութիւնը: Նոյն ձեւով վարուած ենք տեղանուններու պարագային եւ արդէն, հատորի վերջաւորութեան կազմուած անձնանուններու եւ տեղանուններու ցանկերուն մէջ ըստ կարելոյն ճշդուած են անոնց իսկական անուանակոչումները:

Ընդհ. Ժողովին մասնակիցները կարելի է դասել հետեւեալ երեք խումբերուն մէջ.–

Ա.– Ընտրովի եւ իրենց մարմինները կամ իրաւասու ժողովները ներկայացնող անդամներ

- 1.- Ռոստոմ – Արեւելեան Բիւրօ (Կարնոյ հատուած):
- 2.- Արշակ Վոսմեան – Արեւմտեան Բիւրօ (Պոլսոյ հատուած):
- 3.- Բժ. Յովսէփ Տէր Դարբեան – Կարին:
- 4.- Յարութիւն Շահրիկեան – Պոլիս:
- 5.- Հայրապետ Պանիրեան – Ատրպատական-Պարսկաստան:
- 6.- Արամ Մանուկեան – Վան-Վասպուրական:
- 7.- Միմոն Չարարեան – Տարօն-Մասուն:
- 8.- Յ. Տէրտէրեան – Տրապիզոն:
- 9.- Տիգրան Աստիկեան – Խարբերդ:
- 10.- Յովհ. Երեցեան – Տիգրանակերտ:
- 11.- Սեբաստացի Մուրատ – Սեբաստիա:
- 12.- Գեորգ Վիշապեան – Կեսարիա:

- 13.- Գեորգ Քեստանեան – Պալքան:
- 14.- Նշան Թաշճեան – Ամերիկա:
- 15.- Միքայէլ Վարանդեան – Երոպայի Ուս. Միութիւն:
- 16.- Սամսոն-Մարգուանի պատգամաւորին անունը չէ յիշատակուած. ժողովատեղի կը հասնի 8րդ նիստին (22 Օգոստոս):

Շրջանային պատգամաւորներու ցանկը փակելու համար յիշատակենք նաեւ Իզմիրի ներկայացուցիչ Մարտիրոս Մարըեանը, որուն կը տրուի խորհրդակցական ձայնի իրաւունք միայն: Իբրեւ կազմակերպական շրջաններ, բացի Կովկասէն, Ընդհ. Ժողովին ներկայ չեն նոյնպէս Կիլիկիան եւ Եգիպտոսը:

Բ.– Իրաւասու ձայնով հրաւիրեալներ

Հաշուի առնելով կովկասեան մարմիններու բացակայութիւնը, Ընդհ. Ժողովը վճռական ձայնի իրաւունք կու տայ նոյնպէս հետեւեալներուն.–

- 17.- Աւետիս Ահարոնեան:
 - 18.- Աւետիք Իսահակեան:
 - 19.- Գարեգին Խաժակ:
- Երեքն ալ նոյն տարին դրամական երաշխաւորութեամբ դուրս ելած էին ցարական բանտէն եւ կը մնային Կովկաս, առանց երկիրը լքելու արտօնութեան անշուշտ:

Այսուհանդերձ, Ընդհ. Ժողովի նախօրեակին գաղտնի ճամբով անոնք անցան սահմանը եւ հասան Պոլիս: Ժողովի ատենագրութեանց մէջ Աւոն՝ Իսահակեանն է, Բարան՝ Գարեգին Խաժակը իսկ Միսեան ծածկանունով յիշատակուածը ամենայն հաւանականութեամբ Ահարոնեանն է: Ժողովը վճռական ձայնի իրաւունքով հրաւիրած էր նաեւ Տիգրան Աստիկեանը, երբ Խարբերդի Կ. Կոմիտէն իմացուց ենթակային իրենց շրջանի պատգամաւոր ըլլալու պարագան:

Գ.– Խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ

Ընդհ. Ժողովը ունեցաւ նաեւ բազմաթիւ հրաւիրեալներ, ինչպէս Անդրանիկը (որ պիտի չգար), Խանասորի Վարդանը, Ակնունին, Մարը (Միք. Տէր Մարտիրոսեան), բժ. Յ. Չարեանը, Հրաչ-Հայկ Թիրեաքեանը, Ռուրէն Չարդարեանը, Մարգալետը, Օսմ. խորհրդարանի Վանի եւ Մշոյ պատգամաւորներ՝ Վահան Փափագեանն ու Գեղամ Տէր կարապետեանը. ապա նաեւ՝ Յարութիւն Գալֆայեանը, Բարթող Չօրեանը, Ղեւոնդ Մելոյեանը, Սաթենիկ Օհանջանեանը, Միքայէլ Վարանդեանը: Վերջինս աւելի ուշ Երոպայի Ուս. Միութեան կողմէ լիազօրուեցաւ զիրենք ներկայացնելու:

Այլապէս նաեւ ատենագրութեանց մէջ կը հանդիպինք Ֆելիքս, Մելքում, Վարազդատ, Մարումեան եւ այլ անուններու, երեւի իբրեւ տեղեկաբեր որոշ նիստերու ներկայ ըլլալու համար: Չանցառուած չէ նոյնպէս, որ անոնցմէ ոմանք գործածուած ըլլան վերոյիշեալ մասնակիցներուն համար իբրեւ տարբեր մէկ ծածկանուն:

ԳԼՈՒԽ I

Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՑԵՐՈՐԳ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Ա. – ՀՐԱՒԻՐԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ

Ա 1. – Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Շրջաբերական թիւ 13
(Ստանալմիդ իմացուցեք)

Ընկերներ, Ինչպէս գիտեք, ապահովել կարենալու համար մեր կուսակցական գործունեութեան բոլոր ծիւղերուն ներդաշնակ գարգացումը, անհրաժեշտ է ճշդի տեղեակ ըլլալ Կազմակերպութեան ներքին վիճակին, ուրիշ խօսքով կուսակցական վիճակագրութեան:

Հրամայական կը դառնայ այս պահանջը մանաւանդ հիմա, երբ առաջիկայ Վեցերորդ Ընդհանուր ժողովին գումարունը ենթարկուած է կարգ մը պայմաններու, որոնք սահմանուեցան Ե.րդ Ընդհանուր ժողովին կողմէ:

Վերջինս, որոշելով հանդերձ Զ^ր Ընդհանուր ժողովը գումարել տալ 1911ի մէջ, միւս կողմէն՝ հետեւեալ պայմանները կը հակադրէր այդ ժողովը կազմելու իրաւասու մարմիններուն (տես Ե. Ընդհանուր ժողովի Կազմակերպական հրահանգներ - Ա.):

1.- Հրաւիրագրերը ցրուելու ատեն՝ Բիւրոները նկատի առնելու չեն միայն Կ. Կոմիտէներու *դրամական* սակը, այլ նաեւ ուշադիր գտնուելու են անոնց *կուսակցական* գործունեութեանն ալ:

2.- Վերջնական հրաւիրագրերը կ'արձակեն այն պարագային միայն, երբ ստացուած ըլլան *սակ ունեցող* իրաւասու մարմիններու *երկու երրորդին* տեղեկագրերն ու հաշիւները:

3.- Ժողովին մասնակցելու հրաւիր կը դրկուի *այն* մարմիններուն միայն, որոնք *իր ժամանակին* կը ներկայացնեն իրենց հաշիւները, տեղեկագրերն ու պատգամաւորներու ընտրագիրը:

Այնքան է, որ մինչեւ վերի երեք գլխաւոր կէտերը չգործադրուին, Բիւրոները ի վիճակի չպիտի ըլլան Զ. Ընդհանուր ժողովի հրաւիր ցրուելու, որովհետեւ անհրաժեշտ է ունենալ:

Նախ դրամական այն նուազագոյն գումարը, որ հարկ է տրամադրելի ընել Զ. Ընդհ. ժողովին, իր որոշումներուն գործադրութիւնը ապահովելու *երկրորդ*՝ Կուսակցութեան ներքին վիճակին ճշգրիտ գիտակցութիւնը, առանց որուն կարելի չէ առաջիկայ գործունեութեան ուղին գծել. *երրորդ*՝ բնական է որ Ընդհ. ժողով գումարելու եւ կազմակերպութեան ճակատագիրը տնօրինելու իրաւունք չեն կրնար ունենալ այն բոլոր Կեդր. Կոմիտէները, որոնք պահանջուած գէթ նուազագոյն գործունեութիւն մը ցոյց տուած չեն, բոլոր ծիւղերուն մէջ:

Ուստի այժմէն իսկ հարկ կը համարենք առաջարկել Կեդր. Կոմիտէներուն եւ անկախ կոմիտէներուն (անոնք որ Կեդր. Կոմիտէ չունենալուն՝ ուղղակի կը յարաբերին Բիւրոներուն հետ), որ *փութաւ* յղելու իրենց Բիւրոյին:

ա) Կազմակերպութեան ընդհանուր պիտոճէին սահմանուած իրենց բաժինը (40% թուրքիոյ եւ 80% Գաղթային մարմիններէն) 1909 երկրորդ կիսամեակի եւ 1910 ամբողջ տարեշրջանի հաշուէն:

բ) Անհայելի դրամաւելիս սահմանուած է 5% իրենց բաժինը, համաձայն Ե. Ընդհ. ժողովի կազմ. որոշումներու Զ.րդ կէտին: Դրամական սոյն առաքումները *փութացնել*՝ զատ, անմիջապէս ձեռնարկելու է պատրաստել հաշուեկշիռները եւ վիճակագրերը համաձայն այն աղիւսակներուն, որ առաջիկայ սուրհանդակով պիտի ստանաք:

Այդ աղիւսակներուն (Ա.) տեսակը ցրուելու է տեղական մարմիններուն որպէսզի անյապաղ երկուքական օրինակ լեցնեն, մէկը իրենց քով պահելու եւ միւսը Կեդր. Կոմիտէին դրկելու համար:

(Բ.)-ը ենթակոմիտէներուն եւ Կոմիտէներուն, որոնք իրենց ձեռքը կը կեդրոնացնեն *խումբերու հաշիւները*, անկախ խումբերուն (որ ուղղակի կը յարաբերին Կեդր. Կոմիտէի հետ), որպէսզի իւրաքանչիւրը երկուքական օրինակ լեցնեն, մէկը իրենց քով պահելու, միւսը Կեդր. Կոմիտէին դրկելու համար:

(Գ.), (Դ.) եւ (Ե.) տեսակները յատկացուած են Կեդր. Կոմիտէներուն եւ այն մարմիններուն որ կապուած չըլլալով Կեդր. Կոմիտէի մը՝ կը յարաբերին Բիւրոյին հետ:

Կեդր. Կոմիտէները կը հրաւիրենք հաշուական աղիւսակները պատրաստել հետեւեալ երեք կիսամեակներու համար՝ Յուլիս-Ղեկտեմբեր 1909, Յունուար-Յունիս 1910, Յուլիս-Ղեկտեմբեր 1910: Ինչպէս հաշուական, նոյնպէս եւ վիճակագրոյց աղիւսակները ջանալու է հասցնել մինչեւ Ապրիլ ամսու վերջը, եթէ հնարաւոր է՝ աւելի շուտ: Իսկ Յուլիս ամսու մէջ արդէն պատրաստուած ըլլալու է այս 1911 տարուան առաջին կիսամեակին հաշիւները:

Կեդր. Կոմիտէները եւ անմիջաբար Բիւրոյի հետ յարաբերող մարմինները պարտաւոր են հաշուական աղիւսակներէն զատ, Բիւրոյին ներկայացնել նաեւ իրենց Օրհանգի կամ Սնտուկի ելեւնուտքին *ճշգրիտ պատճէնը*, վաւերացուած համարատու մարմին բոլոր անդամներուն ստորագրութիւններով:

Յուսով ենք որ Կեդր. Կոմիտէները ոգի ի բռին պիտի աշխատին իր ժամանակին ակարտել տալու այս աշխատութիւնները, ինչպէս եւ *անյապաղ* յղելու մեր կազմակերպութեան ընդհանուր պիտոճէին յատուկ գումարները, *հնարաւոր դարձնելու համար Ընդհանուր ժողովին գումարունը, այս տարի:*

Ընկերական քերական բարեւերով.
Հ.Յ.Գ. ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՕ (Թ. հատուած)

Մարտ 14/27, 1911

3. Գ. - Կը հաստատենք մեր թիւ 12, Յունուար 26, 1911 թուակիր շրջաբերականը, Ազատամարտի մասին: Կը սպասենք լսել ձեզմէ այս ուղղութեամբ ձեր կատարած քննարկներուն արդիւնքը:

Փաստ. 1542-1

Ա 2. – Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Շրջաբերական թիւ 15
(Ստանալմիդ իմացուցեք)

Ընկերներ,

Ե՞րբ Ընդհանուր ժողովի որոշումին համաձայն՝ Վեցերորդ Ընդհանուր ժողովը պիտի գումարուի այս տարի, առաջիկայ Օգոստոս ամսու մէջ: Ժողովին գումարման վայրը կը հաղորդուի երկրորդ ու վերջին հրաւիրագիրով մը, որ իրաւասու մարմիններուն պիտի ուղղուի Յուլիս ամսու սկիզբը, երբ ստացուած ըլլան բոլոր Կեդրոնական եւ Մեկուսի կոմիտէներու տեղեկագրերն ու հաշիւները, եւ ստուգուած իւրաքանչիւրին գործունէութեան եւ դրամական սակը:

Հոս կ'արտատպենք ամբողջովին Ե՞րբ Ընդհանուր ժողովին Կազմակերպական Որոշումներու Առաջին մասը, որը կը յանձնարարենք ձեր խորին նկատառութեան:

1. Վեցերորդ Ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ 1911-ին, բացման օրն ու վայրը կ'որոշեն երկու Բիւրոները:
2. Ընդհ. ժողովին օրակարգը հաղորդելու ատեն, Բիւրոները ստիպողաբար կը պահանջեն իրաւասու մարմիններէն, որ ժողովին բացման օրէն ամիս մը առաջ փութացնեն իրենց տեղեկագրերն ու հաշիւները:
3. Ժողովին մասնակցելու հրաւիր կը դրկուի այն մարմիններուն միայն, որոնք *իր ժամանակին* ներկայած են իրենց տեղեկագրերը, հաշիւներն ու պատգամաւորներու ընտրագիրը (mandat):
4. Բիւրոները վերջնական հրաւիրագիրը (գումարման օրն ու վայրը յայտնող) կ'արձակեն այն պարագային միայն, երբ ստացած ըլլան *սակ ունեցող* իրաւասու մարմիններու *երկու երրորդին* տեղեկագրերն ու հաշիւները, պատրաստուած Բիւրոներու յանձնարարած սիստեմով:
5. Նորակազմ Կեդր. Կոմիտէները, որոնք գէթ *վերջին երկու* տարուան մէջ պահանջուած սակը չունին – հրաւիրագիր չեն ստանար:
6. Բիւրոները հրաւիրագրերը ցրուելու ատեն, նկատի առնելու չեն միայն դրամական սակը, այլ ուշադիր ըլլալու են *յեղակոխական* սակին ալ:
7. Կեդր. Կոմիտէները ուշադիր գտնուելու են, որ պատգամաւորները ա) չգտնուին դատական անբաստանութեան տակ. բ) ծանօթ ըլլան իրենց ներկայած շրջանի գործերուն:
8. Ժողովին մասնակցող մարմինները անվրէպ *ապահովելու* են իրենց պատգամաւորներուն երթուղարձի ծախքը եւ ապրուստը՝ ժողովին ամբողջ տեւողութեանը միջոցին:
9. Բիւրոները ժողովին մասնակցելու կը հրաւիրեն Օսմանեան, Ռուսական եւ Իրանեան խորհրդարաններու դաշնակցական երեսփոխանները, առաջարկելով անոնց իրենց կողմէն ներկայացուցիչ եւ տեղեկագիր յղել:
10. Բիւրոները պարտաւոր են կազմակերպիչ մասնախումբին միջոցով պատրաստել տալ զեկուցումներ եւ բանաձեւեր, Օրակարգի կարեւոր խնդիրներու մասին, եւ մշակել տալ ստացուած տեղեկագրերը:
11. Խորհուրդին կը յանձնարարուի ժամանակին կատարել նախապատրաստական աշխատանքները, որպէսզի Ընդհ. ժողովը չտեսնէ *երկու* շաբաթէն *աւելի* եւ կատարէ արդիւնաւոր գործ:
12. Պատգամաւոր ընկերները պարտաւոր են *նշանակուած օրը* գտնուիլ ժողովին գումարման վայրը:

Բացայայտ է ուրեմն՝ որ մինչեւ Յուլիս 1 ստացուած ըլլալու եմ Բիւրոններու մէջ՝ բոլոր Կեդր. Կոմիտէներէն եւ Մեկուսի (*) կոմիտէներէն տեղեկագրեր, վիճակացոյցեր, հաշիւներ եւ կազմակերպական հասոյթի, ինչպէս նաեւ 5% Անհպելի Դրամագլխին բաժինները:

Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի շրջան Ընդհանուր Ժողովին կը մասնակցի 2 պատգամաւորներով, մէկը Շրջանային Ժողովի կողմէն ընտրուած, միւսը Կեդր. Կոմիտէի իբրեւ ներկայացուցիչ (Կանոնագիր, յօդ. 102): Հետեւաբար Կեդր. Կոմիտէները աճապարելու են արտակարգ Շրջանային Ժողով գումարել, թէ շրջանի պատգամաւորը ընտրելու եւ թէ քննավիճելու համար բոլոր այն խնդիրներու մասին, որոնք պիտի ներկայացուին Ընդհ. Ժողովին, իրենց Շրջանի կողմէն:

Մեկուսի կոմիտէներն ալ անմասն չձգելու համար Ընդհ. Ժողովի աշխատանքին, Բիւրոնները կը հրաւիրեն այդ Մարմիններն ալ պագամաւոր դրկելու Ժողովին իրենց Շրջանի կողմէն, խորհրդակցական ձայնի իրաւունքով միայն, համաձայն կանոնագրի 103րդ յօդուածին, եւ 113ի վերջին պարբերութեան:

Աւաջիկայ սուրհանդակով կը փութացնենք Ընդհ. Ժողովին Օրակարգը, պատրաստուած երկու Բիւրոններուն կողմէ:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

(*) – Դոս հարկ կը համարենք շեշտել անգամ մը ընդմիջտ թէ սխալ ըմբռնուած է ոմանց կողմէ մեր թիւ 13 Շրջաբերականին «Անկախ Կոմիտէներ» արտաբերութիւնը: Անկախ ըսելով մենք ակնարկած ենք մեկուսի մնացած այն Կոմիտէները, որոնք տակաւին չեն ընդունուած Կեդրոնական Կոմիտէութեան շրջանի մը մէջ եւ հետեւաբար հարկադրուած են իրենց բոլոր կարգի յարաբերութիւնները պահպանել իրենց Բիւրոյին հետ, մինչեւ կամ իրենց շրջանը Կեդր. Կոմիտէութեան վերածուի եւ կամ միանան մեր ծակայ Կեդր. Կոմիտէի մը: «Անկախ» հանգամանք չի ճանչցուիր, ըստ Կանոնագրին, եւ ո՛չ մէկ կոմիտէի համար. բոլորն ալ պարտաւոր են ուշ կամ կանուխ կապուիլ Կեդր. Կոմիտէի մը հետ եւ հաւաքական գործունէութիւն մը ունենալ: Նոր թիրիմացութեան մը տեղի չտալու համար է որ հոս կը գործածենք Մեկուսի բառը, «Անկախ»ի փոխարէն: Մեկուսի Կոմիտէները Բիւրոյին կը վճարեն իրենց հասոյթներուն առնուազն հարիւրին վաթսուը, ինչ որ պիտի ընէին արդէն, եթէ ենթարկուած ըլլային Կեդր. Կոմիտէի մը:

Այս միջոցիս իբրեւ Մեկուսի Կոմիտէ կը ճանչցուին հետեւեալ վայրերը միայն – Կեսարիա, իր շրջակայքով, Այնթապ (Հալէպի նահանգ) եւ Ատանա իր շրջակայքով:

Փաստ. 1542-2

ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Ստանալնիդ իմացուցեք



Ա 3.– ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Զ* ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ
(ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ 1911 ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՈՒ ՄԷՉ*)

- ա) Առժամեայ Դիւանի ընտրութիւն:
- բ) Պատգամաւորներու ընտրագրերուն (mandat) ստուգումը:
- գ) Ժողովի բացումը, Օրակարգի հաստատումը եւ Յանձնաժողովներու ընտրութիւն:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ
(ՏԵՂԵԿԱԳԻՐ-ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ 1909-1911)

1) Արեւմտեան Բիւրո

- ա) Բիւրոյի գործունէութիւնը Թուրքիոյ մէջ:
- բ) Բիւրոյի գործունէութիւնը Եւրոպայի եւ Մ. Նահանգներու մէջ:
- գ) «Դրօշակ»ի խմբագրութիւնը եւ իր հրատարակութիւնները:
- դ) Ամփոփ տեղեկատուութիւն Արեւմտեան Բիւրոյի Շրջանի Մարմիններուն գործունէութեան մասին – Թուրքիոյ նահանգներ՝ Ատանա, Այնթապ, Հալէպ, Մամուրէթ-իւլ-Ազիզ, Պոլիս, Սըվազ, Բալքանեան երկիրներ, Եգիպտոս, Եւրոպա, Մ. Նահանգներ:

2) Արեւելեան Բիւրո

- ա) Բիւրոյի գործունէութիւնը Ռուսիոյ մէջ:
- բ) Բիւրոյի գործունէութիւնը Պարսկաստանի մէջ:
- գ) Ամփոփ տեղեկատուութիւն Արեւելեան Բիւրոյի Շրջանի Մարմիններուն գործունէութեան մասին – Ռուսիա, Կովկաս, Պարսկաստան, Թիւրքիոյ նահանգներ՝ Բաղէշ, Կարին, Վան, Տիգրանակերտ եւ Տրապիզոն:

Բ. ԱՐԴԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՐԵՔ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ
ԵՒ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ ԱՆՈՐ ՀԱՆԴԵՊ

Լ ԹՈՒՐԷԻԱ

1) Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները:

- ա) Միութեան եւ Յառաջդիմութեան Կոմիտէն (Իթթիհատ վէ Թերազզը):
- բ) Միւս քաղաքական կուսակցութիւնները:
- գ) Ոչ-հայ ազգային խմբակցութիւնները (ասորի, եգիպտի, յոյն, չերքէզ, քիւրտ, եւն):

* Ժողովին գումարման օրը եւ վայրին անունը իրաւասու մարմիններուն կը հաղորդուի Տեղեկագրերու եւ Հաշուեցոյցերու ստացումէն ետք, երկրորդ հրաւիրագրով մը (Կազմ. Որոշումներ Ե. Ընդի. Ժողովի Բ. յօդուած 4, Տե՛ս նաեւ Շրջաբերական թիւ 15, Սայիս 7/20 1911):

2) Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը

- ա) Հողային հարցը (բռնատիրուած հողեր, իսլամ գաղթականներու գրաւած հողեր, անհող եւ սակաւահող գիւղացիներուն հողի բաշխում):
 - բ) Ապահովութեան խնդիրը հայաբնակ գաւառներու մէջ:
 - գ) Նահանգային ինքնավարութիւնը կամ «իրաւունքներու ընդլայնումը»:
 - դ) Հարկային սխտենի բարեփոխումը (աշարի խափանումը, յառաջատուական տուրքի հաստատումը եւն):
 - ե) Հաղորդակցութեան ծամբաները հայկական նահանգներու մէջ (խճուղի, երկաթուղի):
 - զ) Տնտեսական բարգաւաճման միջոցներ (մանր եւ աժան վարկի ընկերութիւններ, երկրագործական Դրամատունը, գործակցական (co-opératif) ընկերութիւններ):
 - է) Մշակութային (cultural) ինքնավարութիւնը Թուրքիոյ բաղկացուցիչ ազգերուն (կրթական խնդիր, բարեգործական հաստատութիւններ եւլն.):

3) Դաշնակցութիւնը եւ Հայ Ազգային խնդիրներ

- ա) Մեր մասնակցութեան եղանակը ազգային-մշակութային հաստատութիւններուն:
- բ) Թուրքիոյ Հայոց Ազգային Սահմանադրութեան վերաքննումը:
- գ) Պայքար հայ պահպանողական եւ յետադիմական տարրերու դէմ:

4) Օսմանեան Խորհրդարանի Դաշնակցական Երեսփոխանութիւնը

- ա) Համարատուութիւն իրենց գործունէութեան մասին:
- բ) Խորհրդարանական խմբակը եւ Բիւրոն, փոխյարաբերութիւններ:
- գ) Հրահանգներ առաջիկայ գործունէութեան մասին:
- դ) Առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները (1912-1916 նստաշրջան):
 1. Թեկնածուներու անուանման եղանակը:
 2. Երեսփոխաններու դրամական մասնակցութիւնը Կուսակցութեան ընտրողական ֆոնդին:

II ՈՌԻՄԻԱ

- ա) Դաշնակցութեան տակտիկը Ռուսիոյ արդի ռեժիմին հանդէպ եւ կազմակերպական նոր եղանակի մը անհրաժեշտութիւնը:
- բ) Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները:
- գ) Դաշնակցութիւնը եւ կովկասեան նահանգային ինքնավար նոր հաստատութիւններ (Զէնստվո):
- դ) Դաշնակցութիւնը եւ հայ ազգային հաստատութիւնները:
- ե) Կուսակցական մամուլը Կոմկասի մէջ:
- զ) Դաշնակցութիւնը եւ «Դաշնակցական Գործը» անուան տակ ծանօթ դատավարութիւնը եւ հալածանքը հայ ժողովուրդին դէմ:

III ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

1. Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները, Խորհրդարանէն ներս եւ դուրս:
2. Դաշնակցութիւնը եւ Իրանի սահմանադրական կառավարութիւնը:
3. Պարսկաստանի հայաբնակ վայրերու ապահովութեան խնդիրը:

5.- Իրանեան Խորհրդարանի Դաշնակցական Երեսփոխանութիւնը

- ա) Համարատուութիւն անցեալ շրջանի մասին:
- բ) Դաշնակցական Երեսփոխանութիւնը եւ Ատրպատականի Կ.Կոմիտէն, փոխյարաբերութիւններ:
- գ) Հրահանգներ առաջիկայ գործունէութեան մասին:

Գ. ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- ա) Կուսակցութեան աշխատաւորական քաղաքականութիւնը՝ գիւղացիական, արհեստակցական եւ գործակցական միութիւններու հանդէպ (ամոնց կուսակցական կամ ոչ-կուսակցական, ազգային կամ միջազգային կազմակերպումը եւլն):
- բ) Ուրոյն նուազագոյն աշխատաւորական պահանջներ՝ Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի քաղաքական եւ տնտեսական պայմաններու համաձայն:

Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

- ա) Օսմանեան կառավարութենէն վաւերացուած Ծրագրին վերաքննումը:
- բ) Հիմնական կանոնագրին վերաքննումը եւ վաւերացումը:

- Հ.Յ.Դ. Խորհուրդի ընտրութիւնը Ընդհանուր Ժողովի կողմէ:
- * Կուսակցութեան այլ եւ այլ մարմիններու իրաւասութեանց աւելի բացայայտ ճշդումը:
- * Բիւրոյական Շրջաններու նոր բաժանում
- * Պատասխանատու մարմիններու վերահաստատում
- Մնայուն հաշուեքննիչ մարմնի մը հաստատում:
- Թուրքիոյ Կեդր. Կոմիտէներու շրջաններուն աշխարհագրական ճշդումը:
- Թուրքիոյ մարմիններու համար հայերէն-թուրքերէն կնիքներու գործածութեան խնդիր:
- գ) Դրօշակի հրատարակութեան վայրը:
- դ) Դաշնակցութեան ժընեւի տան գնում:
- ե) Փոխադարձ օգնութեան արկղի մը հաստատումը դաշնակցականներու համար:

**) Աստղանիշ կրող առաջարկները ստացուած են Կեդր. Կոմիտէներէ:*

Ե. ԲԱՆԱԻՐ ԵՒ ԳՐԱԻՐ ՊՐՈՊԱԳԱՆԴ

- ԳՐԱԻՐ՝**
1. Պաշտօնաթերթ Դրօշակը:
 2. Կիսապաշտօնական թերթերը:
 3. Հրատարակութիւններ:

- ԲԱՆԱԻՐ**
1. Դասընթացքի մը հաստատում պրոպագանդիստներու համար:
 2. Գործիչ եւ պրոպագանդիստ ընկերներու բաշխում: Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդ ոչ-հայախօս հայերու մէջ:

Զ. ԵԼԵԻՄՍԱՑՈՅՑԸ (Budget)

1. Դրամական հաշուետուութիւնը իւրաքանչիւր մարմնի (1909 Յուլիս – 1911 Յուլիս):
2. Նախահաշիւ առաջիկայ շրջանի համար:

Է. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհանուր Ժողովէն ընտրելի մարմիններու՝ Բիւրօ, Հաշուեքննիչ Մարմին, եւլն:

Փակումը Զ՞ Ընդհանուր Ժողովին եւ որոշում յաջորդ գումարման մասին:

Ծանօթ.– Իրաւասու մարմինները, ինչպէս նաեւ ամէն Դաշնակցական մարմին եւ ընկեր կը իրաւորուին փութացնել իրենց առաջարկները, որոնք կը ներկայացուին Ընդհանուր Ժողովին նկատառութեանը Օրակարգի հաստատման ատեն:

Փաստ. 50-59

Շրջաբերական քիւ 16
(Ստանալնիյ իմացուցէք)

Ա 4.– Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն
ՏԵՂԵԿԱԳՐԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

2.Պ Ընդհանուր ժողովին ներկայանալի տեղեկագրերու պատրաստութեան առթիւ կը խնդրենք հակիրճ պատասխանել նաեւ հետեւեալ կէտերուն:

Այս հարցարանը միայն թուրքիոյ, Պարսկաստանի եւ Գաղթային մարմիններու համար է: Կովկասի բացառիկ կացութիւնը նկատի առնելով՝ Կովկասեան մարմիններուն համար տարբեր հարցարան մը պատրաստուած է: Հարցերու առջեւ տրուած գլխատառերը կը ցուցնեն թէ որոշ խնդիր մը ո՞ր երկրին համար մասնայատուկ է – այսպէս թ. (Թուրքիա), Պ. (Պարսկաստան), Գ. (Գաղութներ):

Ա. ՏՆՏԵԱԿԱԿԱՆ

1. Ի՞նչ արդիւնաբերութիւն գարգացած է ձեր շրջանին մէջ եւ ի՞նչ համեմատութեամբ (երկրագործութիւն եւ արհեստներ, որ ճիւղերը): թ. եւ Պ.
2. Ի՞նչ գործարաններ կան ձեր շրջանի մէջ, քանի բանուոր, միջին օրավարձքը:
3. Ո՞րքան գոհացուցիչ եղած է ձեր բերքը 1910ին: թ. եւ Պ.
4. Ի՞նչ վնաս պատճառած է ձեր գաւառին երաշտը եւ անասուններու համաճարակը: թ.
5. Զինուորագրութիւնը ի՞նչ հետեւանք ունեցած է ձեր գաւառին տնտեսութեան վրայ: թ.
6. 1910ին որքա՞ն տուրք վճարած էք եւ որքան յետամնաց ունիք նոյն հաշիւէն: թ.
7. Սահմանադրութեան հռչակումէն ասդին ձեր տնտեսական կացութիւնը բարելաւա՞ծ է թէ ոչ, եւ ի՞նչ չափով: թ. եւ Պ.
8. Սօտաւորապէս որքա՞ն կը կարծուի ըլլալ ձեր շրջանի հայ բնակչութեան թիւը:

Բ. ԳԱՂԹԸ (արտագաղթ եւ ներգաղթ)

1. Քանի անձ կան ընտանիք պանդխտած են ձեր կողմէն, եւ ո՞ւր:
2. Քանի անձ կան ընտանիք վերադարձած են արտասահմանէն, Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ասդին: թ.
3. Սօտաւորապէս որքան հայ պանդուխտներ ունիք ձեր շրջանը, եւ որ գաւառներէն: Գ.
4. Ի՞նչ զբաղում ունին պանդուխտներն ու գաղթողները: Գ.
5. Նուազա՞ծ է թէ աւելցած պանդուխտներու թիւը վերջին տարին. Գ.

Գ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

1. Բռնատիրուած հողերէն քանի՞ կտոր վերստին անցած են իրենց օրինաւոր սեփականատէրերու ձեռքը Սահմանադրական շրջանի մէջ: թ.
2. Եղա՞ծ են, ո՞ւր եւ քանի դէպք նոր բռնատիրումներու, Սահմանադրական շրջանի մէջ: թ.
3. Հողային վեճերու շուրջ ի՞նչ ընդհարումներ ունեցած են հայերը՝ աւատապետներու, հարստահարիչներու եւ կամ բնակակից այլազգիներու հետ:

Դ. ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹ

1. Քանի դպրոց ունիք ձեր շրջանին մէջ, ի՞նչ աստիճանի (նախակրթարան, միջնակարգ, բարձրագոյն), քանի աշակերտ, քանի ուսուցիչ:
2. Քանի գիւղ ունիք, եւ անոնց քանի՞ն վարժարան ունին: թ. եւ Պ.
3. Քանի՞ դպրոց Դաշնակցութեան ազդեցութեան ներքեւ կը գտնուին:
4. Ուսուցիչներուն քանի առ հարիւրը դաշնակցական են:
5. Թաղական խորհուրդներու, հոգաբարձութեանց, Գաւառ. ժողովին, Ազգային վարչութեան անդամներուն քանի առ հարիւրը դաշնակցական են կամ Դաշնակցութեան համակիր:
6. Ուսանողութեան (համալսարան եւ բարձրագոյն վարժարաններ) քանի առ հարիւրը դաշնակցական են:
7. Անուանել այն ուսանողները որոնք իրենց ուսանողութեան շրջանին կան աւարտումէն ետք կը յօժարին մտնել Դաշնակցութեան գործօն շարքերը:
8. Քանի՞ գրադարան ունիք, քանի՞ն գիւղական:

Ե. ՄԻՋՑԵՂԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ի՞նչ հանգամանք կը կրեն փոխադարձ յարաբերութիւնները ձեր շրջանի հայերու եւ բնակակից միւս ազգերու եւ ցեղերու միջեւ:
2. Սահմանադրութեան հռչակումէն ասդին ո՞ր աստիճան բարելաւուած են:

Զ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ի՞նչպէս կը վերաբերին ձեր տեղական իշխանութիւնները դաշնակցականներու հանդէպ. թ. եւ Պ.
2. Ո՞ր կարգի գործեր հնարաւոր եղած է կարգադրել տեղին վրայ տեղական իշխանութիւններուն հետ ձեր համաձայնութեամբ:
3. Վարչական մաքրագործումը լրիւ կատարուա՞ծ է ձեր շրջանին մէջ, եւ ի՞նչ նոր փոփոխութիւններ բաղձալի են ձեր վայրի վարչական պաշտօնէութեան մէջ:
4. Պատրաստել եւ հաղորդել ցուցակը անբարեխիղճ, անձեռնհաս եւ յետաշրջական պաշտօնէաներու (անուն, մականուն, ծննդավայր, պաշտօն), փաստերով պատճառաբանուած:
5. Պատրաստել եւ հաղորդել ցուցակը բարեխիղճ, ձեռնհաս եւ սահմանադրասէր պաշտօնէաներու:

Է. ՄԻՒՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ի՞նչ քաղաքական կուսակցութիւններ կան ձեր շրջանին մէջ եւ ի՞նչ դիրք ունին հասարակութեան առջեւ:
2. Իւրաքանչիւր կուսակցութեան պատկանողներու թիւը, մօտաւորապէս:
3. Կա՞ն անոնց մէջ յետադիմականներ կամ Դաշնակցութենէ արտաքսուածներ եւ ի՞նչ համեմատութեամբ:
4. Ի՞նչ դասակարգի կը պատկանին անոնք (երկրագործ, արհեստաւոր, խանութպան, վաճառական):
5. Ձեր եւ անոնց միջեւ փոխադարձ յարաբերութիւններու բնոյթը: (Սասնաւորապէս ծանրանալ Իթթիհատ վէ թէրագզի վրայ):
6. Ո՞ր հարցերու շուրջ հնարաւոր եղած է համերաշխ գործակցութիւն մը ունենալ Իթթիհատի եւ միւս կուսակցութիւններու հետ:
7. Գաղթային մարմինները ի՞նչ յարաբերութիւն մշակած են տեղական ընկերվարական կուսակցութիւններու հետ: Գ.
8. Օտար արհեստակցական միութիւններու մէջ (trade-union) որքան հայեր կան եւ քանի՞ դաշնակցական: Գ.

Դաշնակցական մարմիններէ կը խնդրուի սոյն հարցերուն իրենց պատասխանները փութացնել իրենց Կեդր. Կոմիտէներուն, որպէսզի ասոնք ալ ի վիճակի ըլլան կարճ ատենուան մէջ պատրաստելու իրենց պատկան շրջաններու տեղեկագրերը, ներկայացնելու համար Ընդհանուր ժողովին:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈ

Մայիս 21, 1911

Յետ գրութեան. – ա) Կեդր. Կոմիտէներէն անոնք որ տակաւին Արեւմտեան Բիւրոյին չեն դրկած իրենց ներքին կանոնագիրը՝ երկ-երկու օրինակ փութացնելու են: Բ) Հաշուեցոյցներու կողքին դրկելու է նաեւ Դրօշակի մէջ հրատարակելի տարեկան ցուցակը անդամավճարներու եւ նուէրներու, բայց ամփոփ կերպով: Գ) Ընկալագրերու կտրօնները ներկայելու է հաշուեցոյցներուն հետ:

Բ.- ԼԻԱԶՕՐԱԳՐԵՐ

Փաստ. 1542-5

Ատրպատականի Կենտրոնական Կոմիտեի

1911 Յուլիս 4

Հ.Յ.Դ. VI Ընդհանուր Ժողովի դիւանին

Ընկերներ,

Կ. Կոմիտեն ընտրելով ընկեր Պիոնեանին լինելու իր պատգամաւորը VI Ընդհանուր Ժողովին, այս գրութեամբ տալիս է նրան լիազօրութիւն մասնակցելու Ժողովի պարապմունքներին եւ իբր իր ներկայացուցիչ՝ քուէ տալ զրուած բոլոր հարցերի նկատմամբ:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ



Փաստ. 1542-6

Հ. Յ. Դաշնակցութեան Զ. Ընդհանուր Ժողովին

6/19 Յուլիս 1911

Տիգրանակերտ

Վիշապաձորի Դ. Շրջ. Ժողովի կողմէ Զ. Ընդհ. Ժողովին մասնակցելու համար, միաձայն հաւանութեամբ պատգամաւոր ընտրուեցաւ ընկեր Յովհ. Երէցեան (Ժիրայր):

Վիշապա)ձորի Դ. Շրջ. Ժողովի դիւան
Քարտուղար
Վ. ԿԻՐԱԿՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Նախագահ
Մ. ՊԱՍԹԱՃԵԱՆ

Փաստ. 1542-7

Դուրան-Բարձրաւանդակի Կենտրոնական Կոմիտեի

10 Յուլիս 1911

Վկայական

Դուրան-Բարձրաւանդակի Շրջանային Ժողովի կողմից իրաւասու է ընկեր Սմբատ Օհանեան¹, մասնակցելու առաջիկայ Հ.Յ.Դ. VI Ընդհանուր Ժողովին:

ԴՈՒՐԱՆ-ԲԱՐԶՐԱՎԱՆԴԱԿԻ
ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷ



Փաստ. 1542-9

Աւագանի (Տրապիզոնի) Կեդր. Կոմիտեի

1911 Յուլիս 19

Հ.Յ.Դ. Արեւմ. Բիւրոյի Թ[ուրքիոյ] Հ[ատուած]ին
Ընկերներ,

Կը հաստատենք մեր 11 Յուլիս հեռագիրը. հոն սխալ մը սպրդած էր. Եսայեանի չկարենալ գալու պարագային, մեր պատգամաւորը կը լինի Յ. Տէրտէրեանը, եւ ոչ թէ Արամ Մանուկեանը: Այսօր կ'ուղարկենք նաեւ Մովսիսի Շրջ. մարմնի աղիւսակը (911 Յուլիս 1), որուն հաշիւը մտցուած էր նաեւ մեր V Շրջ. Ժողովի հաշիւին մէջ:

Տեղեկագիր եւ հարցարաններու պատասխանները՝ պատգամաւորին հետ կ'ուղարկենք: Հրդեհը վատ ազդեցութիւն յառաջ բերաւ հոս ալ. հոս ալ հանգանակութիւն ձեռնարկելու վրայ է կառավարութիւնը:

Ընկերական բարեւներով
Ի դիմաց Աւագանի Կ. Կոմիտէի
ՏԻՏԱՆ

Յ.Գ. 11 Յուլիսին մէջ ներփակ էին նաեւ Դ. եւ Ե. աղիւսակները:

ՆՈՅՆ

Պոլիս գտնուող Պետրոս Օտապաշեանը մեր ընկերներէն է, հարկ եղած բարոյական աջակցութիւնը չզրկուեալ:

ՆՈՅՆ

1.- Սմբատ Օհանեան՝ Ձաւարեան Սիմոն:

Փաստ. 1542-10

26 Յուլիս 1911
Կիրասոն

Ա. Վռամեան,

Ինձ վստահուած մանդատը ընդունելով Պոլիս գալ չեմ կարող. շատ էին ուշացրել նամակը, այնպէս որ ես Բաթում գնալու համար տոմսակ իսկ գնել էի երբ Թաւրիզից ստացայ յանձնարարական նամակ: Ես հրաժարուում եմ, մասնաւորաբար որ չեմ կարծում թէ ընդհանուր մի բան լինի: Խնդրում եմ իմ անունով ստացուելիք գրուածները բարի եղէք յանձնելու պր. Հ. Պանիրեանին որ Վիեննայից գալու է եւ իմ փոխարէն այդ գործի համար նշանակուած կը լինի: Խնդրում եմ ներողամիտ եղէք իմ այս հրաժարականի համար: Շոգեհաւից եմ գրում, մանրամասնել չեմ կարող:

Բարեւներով Կ. ՊՈՆՆԵԱՆ

Փաստ. 1542-11

27/9 Յուլիս, 1911
Կեսարիա

Պատգամաւորական Զ. Ընդհ. Ժողովոյ
Յարգելի ընկերներ

Համաձայն կանոնական տրամադրութեան եւ Արեւմտ. Բիւրոյի N° 276 հրահանգի, Հ.Յ.Դ. Զ. Ընդհ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրուի շրջանիս կողմէի Պ. Գ. Վիշապեան, որ խորհրդակցական ձայնով մասնակցելով ժողովին՝ լիազօրութիւն պիտի ունենայ ներկայացնելու մեր պահանջները:

Պրն.ը արդէն իսկ մեկնած ըլլալով տեղէս, որոշուած ժամանակին կը հասնի Պոլիս համաձայն ձեր հրահանգին գտնուելու համար ժամանակին ժողովին գումարուելիք վայրը:

Ուստի, ներկայս կը յանձնուի իրեն ի պահանջել հարկին գործածելու իր լիազօր պատգամաւորի հանգամանքը ճշդելու համար յատենի ժողովոյդ:

Ընկերական բարեւներով
ԲԱՐՁՐ ՍԱՐԻ ՄԱՐՄԷՆ՝
Մ.ՅԿԲ. Բ. ՊՈՍԹԱՆԵԱՆ
ԳԱՌՆԻԿ Յ. ԳԱՎՃԵԱՆ

Փաստ. 1542-12

Բարձր Սար Կոմիտէ
Հ.Յ.Դ. Արեւմ. Բիւրոյի Թուրքիոյ Հատուածին, Կ. Պոլիս

1911 Յուլիս 27/9, Կեսարիա

Ընկերներ,

Ընդունեցինք Ձեր 4/17 11/24 եւ 18/31 Յուլիս երեք նամակները:

Մեր կողմէ Զ. Ընդհ. Ժողովի համար պատգամաւոր լիազօր ընտրուած է ընկեր Պ. Գ. Վիշապեան որ արդէն իսկ ճամբայ ելած ըլլալով ճիշդ ժամանակին Ձեզ կը ներկայանայ եւ մեր Ընդհ. տեղեկագիրն ալ իրեն յանձնուած ըլլալով կը ներկայացնէ:

50 օրինակ պաշտ[օնական]. նամակի թուղթ, 10 օր[ինակ] կանոնագիր տեղական կոմիտէի, 6 Նախագիծ փոստէն առնուեցաւ:

Մեր շրջանի գործիչի մասին մեր պատգամաւորին յանձնարարութիւն եղած է, շրջանս անհրաժեշտ պէտք ունի կարող գործիչի մը:

Պ. Գ. Վիշապեան հաշիւի մասին բացատրութիւն պիտի տայ:

Ընկերական բարեւներով
ԲԱՐՁՐ ՍԱՐԻ ՄԱՐՄԷՆ

Փաստ. 1542-14

1911 Օգոստ. 9/22, Ռուսճուք

Հ.Յ.Դ. Թ. Ընդհանուր Ժողովի դիւանին,

Ընկերներ,
Ընկերներ Գ. Քեստանեան Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. Կոմիտէի ձայնով կը մասնակցի Թ. Ընդհանուր Ժողովին:

Շնորհաւորելով մեր գերագոյն ժողովը, կը մաղթենք որ արդիւնաւէտ ու բեղմնաւոր ըլլայ անիկա վերածնունդ հայրենիքին:

Ընկերական բարեւներով
Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան
Կ. Կոմիտէի ընկերներ
Մ. ՊԱՍՄԱՃԵԱՆ
ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՓՉԵԱՆ



Փաստ. 1542-15

1911 Օգոստոս 15

Հ.Յ.Դ. Զ. Ընդհանուր Ժողովին,

Ընկերներ,
Հ.Յ.Դ. Պոլսոյ շրջանի կազմակերպութեան Գ. Շրջ. ժողովին կողմէ միաձայնութեամբ եւ օրինաւորապէս Ընդհ. Ժողովին համար պատգամաւոր ընտրուած է ընկեր Շահրիկեան, պարտականութիւն ունենալով շրջանի ձայնն ու կարծիքները ներկայացնել ժողովիդ: Ինչ կը վերաբերի Կեդր. Կոմիտէի ուրոյն պատգամաւորի ընտրութեան՝ այն եւս պիտի նշանակուի Կեդր. Կոմիտէի յառաջիկայ նիստին մէջ եւ արդիւնքը ծանուցուի առանձին յանձնարարականով:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ՊՈՒՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1542-17

1911 Օգոստոս 19

Հ.Յ.Դ. Զ. Ընդհանուր Ժողովին,

Ընկերներ,

Պոլսոյ Կեդր. Կոմիտէն, համաձայն կազմական կանոնագրին, երէկուան իր հերթական նիստին մէջ պարտականութիւն յանձնեց իր ընկերներէն Տելիսքին, իբրեւ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ մասնակցել Ընդհ. Ժողովիդ եւ ներկայացնել իր ձայնը: Փափաքելով ճանչցուած տեսնել զայն իբր մեր օրինաւոր պատգամաւորը՝

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ՊՈՒՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1542-18

Վիեննա, 21 Օգոստոս 1911

Արեւմտեան Բիւրոյին
Ընկերներ,

Այսօր ստացայ Ձեր Օգոստոս 5/18 թ. գրութիւնը: [Ընդհ.] Ժողովին մասնակցելու յանձնարարութիւնը, ինչպէս գիտէք, եղել էր ընկ. Պիոնեանին, այնպէս որ Ձեր հրաւերը, ինչպէս եւ սրանից երկու օր առաջ Պիոնեանից ստացած նոյն մտքով երկտողը, ինձ համար անակնկալ էր. եւ ես ինձ գտնում եմ բոլորովին անպատրաստ, նախ, որ օրակարգի շուրջ թաւրիզի ընկերների խորհրդակցութիւններին եւ որոշումներին ես անծանօթ եմ, որովհետեւ դրանք կատարուել են իմ այնտեղից մեկնելուց յետոյ, ապա այն, որ տակաւին ընկերներից ոչ մի լուր չեմ ստացել վերջին փոփոխութեան մասին եւ ոչ էլ այդ առթիւ պաշտօնական որեւէ յանձնարարութիւն, եւ վերջապէս այն, որ նիւթական տեսակէտից էլ հնարաւորութիւն չունեմ տեղիցս շարժուելու, որի համար ես արդէն գրել էի թաւրիզ մեր դպրոցի հոգաբարձութեան՝ ինձ պէտք եղած ճանապարհածախսը փոխադրելու՝ վերադարձի համար. այնպէս որ այժմ այս բոլոր պայմանների մէջ յամենայն դէպս կարելի եւ կարեւոր կը գտնէք իմ ժողովին մասնակցելը՝ խնդրում եմ կարգադրեցէք եւ եթէ երբեւիցէ կարիք կը լինի հեռագրելու, կարելի է Միսիթարեանների հասցէով հեռագրել:— Միսիթարեաններ, Հայր Ներսէս Ագիւնեան՝ Պանիրեանին:

Ներքին Պարսկաստանի հետ միաժամանակ Ատրպատականի վիճակն էլ ներկայումս ծանրանում է, շնորհիւ այն բանի, որ ինչպէս նոր հեռագիրներն են հաղորդում, էքս շահը, իր բանակի մի մասը Միմնան[?] թողած, ինքը մտադիր է Բարֆրուշ եւ ապա Աստարա անցնել՝ Մարաղայի դաւաճանած հրամանատար Սիւլա էդ Դովլէին միանալու, որ կառավարակ[ան] միջոցներով եւ իր մարդկանցով Արտաքիլ էր անցել՝ իբր թէ շահաժամանակներին զսպելու: Կառավարութիւնը թ[աղի] Ջադէի խոստացած դրամակ[ան], միջոցները դժուար թէ կարողանար հայթայթել. այդ մասին, ինչպէս թաւրիզի ընկերներն են գրում, յոյսը դրուած է ժողովրդակ[ան] հանգանակութեան վրայ, այն ժամանակ, գրում են, հնարաւոր կը լինի մեծ թուով տղաներ բերել: Ամէնից կարեւորն այն է, որ կառավարութիւնը զինէ վստահելի տարրերը անխտիր, մանաւանդ սահմանագլխային ազգաբնակչութիւնը — Սալմաստում, Ուրմիում: Եթէ այդ բանը յաջողուի լաւ է. քաղաքներում նոյնը անշուշտ տեղի կ'ունենայ՝ նեղն ընկած ըրպէին:

Ընկերական բարեկեցութեամբ՝
ՀԱՅՐԻԿ՝

Փաստ. 1542-19

Վառնա, 23 Օգոստոս 1911

Միրելի ընկեր պ. Վառնեան

Պ. Անդրանիկը՝ գիւղէն լուր դրկած է ինձ իմացնելու համար ձեզ թէ Ընդհ. Ժողովին մասնակցելու համար իրեն եղած հրաւերը ստացած է, սակայն կը ցաւի որ չի կրնար այդ հրաւերին անձամբ պատասխանել ու շնորհակալ ըլլալէ յետոյ ընկերներու կողմանէ իր մասին արտայայտուած համակրական զգացումներուն համար, կատարեալ յաջողութիւն կը մաղթէ ու սիրով կը բարեւէ ամէնքդ ալ:

Նոյն մաղթանքները եւ բարեկեցութեամբ ձեզ անկեղծօրէն՝

Յ. ՓԱՓԱՉԵԱՆ

Յ.Գ.- Կը խնդրեմ որ ուշադրութեան առնէք հասցէս ուր վայրը նշանակած եմ: Քաղաքիս մէջ Փափագեաններ շատ են, նոյնիսկ ատամնաբոյժ օրիորդ Փափագեան մըն ալ կայ եւ մանաւանդ որ անունս Յակոբ չէ եւ վերջին նամակնիդ ձեռքէ ձեռք պտտած էր թէ եւ առանց բացուելու:

Dr. H. S. Papazian, Dentiste
Varna

2.- Հայրիկ՝ ժաճկանունն է Պանիրեան Հայրապետի:
3.- Խօսքը կը վերաբերի հայդուկապետին, որ այդ տարիներուն Պուլկարիա կը մնար:

Փաստ. 1542-32

Հ.Յ.Դ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէ

5/18 Սեպտ. 1911, Կ. Պոլիս

Հ.Յ.Դ. Ընդհանուր Ժողովին,
Ընկերներ,

Որպէսզի Ազատամարտի, մանաւանդ անոր պիւտճէին նկատմամբ ժողովին կողմէ տրուած որոշումները ունենան իրենց բաղձալի արդիւնքը.— անհրաժեշտ էր որ ժողովը նշանակէր ձեռնհաս ընկերներ, յանձնախումբ մը՝ քննութեան ենթարկելու թերթին ներկայ վիճակը, անոր խմբագրութեան ու վարչական կազմը, ընդհանուր ծախսերը եւ հնարաւոր այն բոլոր բարեփոխութիւնները, որոնք կարող էին կատարուել թէ բարոյական եւ թէ պիւտճէդային տեսակէտներով:

Այս կարգադրութիւնը անով աւելի ստիպողաբար անհրաժեշտ է յատկապէս, որ փոփոխութեան ենթարկուելիք պաշտօնեաները ժամանակ ունենան, իր ատենին, գտնելու իրենց յատուկ զբաղումներ, քանի դեռ փակուած չեն մանաւանդ վարժարանները:

«Ազատամարտ»ի խմբագրութեան կողմէ
Ռ. ՉԱՐԴԱՐԵԱՆ

Փաստ. 1542-33

8 - 9 - 1911

Արեւմտեան Բիւրոյին
Ընկերներ,

Մեր շրջանէն Ընդհ. Պատգամ. ժողովի պատգամաւոր ընտրուած է ընկեր Նշան Թաշճեան: Այս երկտողով կը վաւերացնենք:

Ընկեր. բարեկեցութեամբ
ԱՄԵՐ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ
Քար. Ն. Մ. Ատենապետ ՉԱՏԻԿ ՄԱԹԻԿԵԱՆ

Փաստ. 1542-35

Հ.Յ.Դաշնակցութեան ԶԽ Ընդհ. Ժողովոյ դիւանին,

Ընկերներ,

Սեպտ. 8/21 երէկուան նիստին մէջ Ընդհ. Ժողովը Մեկուսի կոմիտէներու %45ի սակը բարձրացնելով 80ի ինձ կը թուի թէ անցուց մի քիչ սխալ ու անարդար որոշում:

Մեկուսի կոմիտէի մը ձայնն ու վիճակը ներկայացնող միակ պատգամաւորը լինելուս՝ ուղեցի արտայայտուելու բայց չյաջողուեցաւ ինձ ձայն ստանալ, շնորհիւ այս խնդրոյն վրայէն ժողովի տարօրինակ հապճեպով մը անցնելուն եւ մեծամասնութիւնը վճռեց...:

Ներկայիս խոնարհաբար կ'ուզեմ ձեզ դիտել տալ թէ Կեսարիա իբրեւ մեկուսի կոմիտէ կը ներկայացնէ

դեռ նոր կազմակերպուած աղքատ շրջան մը, որուն առանձին մնալու շարժառիթը չէ եղած կարգ մը ուրիշ մեկուսի կոմիտէութեանց վերագրուած շահադիտութիւնը, այնպէս որ կեսարիան չըլլալով կենտրոնական կոմիտէութենէ անջատուած կոմիտէութիւն մը, ունեցած է իր ուրոյն գոյութեան ու ծագումին արդարանալի պայմանները:

Դիտել կու տամ դարձեալ թէ սակի այս անսպասելի բարձրացումը յուսահատական ազդեցութիւն պիտի ընէ մեր շրջանի վրայ զմեզ զրկելով մեր դրամական միջոցներէն, որով ոչ միայն կարելի չպիտի ըլլայ շրջանը կենտրոնական կոմիտէութեան վերածելու համար մեր գործունէութիւնը տարածել շրջականերուն վրայ՝ պահելով շրջուն գործիչ մը, այլեւ պիտի անդամալուծուի արդէն գոյութիւն ունեցած կազմակերպութիւնն իսկ, կազմակերպութիւն որուն գոյութիւնը եւ ուժեղացումը մեզ համար աւելի արժէք պէտք է ունենայ քան տարուայ մը սակի %35 յաւելումը:

Եւ ի վերայ այս ամենայնի Ատանան եւս ճանչցուած իբրեւ ապագայ մեկուսի կոմիտէութիւն, անմիջապէս որ կազմակերպուի, ենթակայ պիտի ըլլայ յիշուած % 80 սակի կաշկանդիչ ազդեցութեանը, բան մը որ նոր կազմակերպուած քայքայուած շրջանի մը համար մեծագոյն անարդարութիւնը պիտի լինէր:

Եւ որովհետեւ՝ կեսարիան, Ատանան, Հալէպը ներկայիս մէջ ճանչցուած 3 մեկուսի կոմիտէութիւնները շահադիտական ձգտումով չէ որ կ'անջատուին այլ՝ աշխարհագրական եւ ուրիշ անտեղիտալի պայմաններու բերումով, երբ միւս կողմէ իրենց % 35 սակի յաւելումը կարելոր գումար մը չէ ընդ՝ կազմակերպութեան պիտեճի տեսակէտից: Դիտել տալով այս բոլորը կը խնդրեմ յարգելի ընկերներ անդրադառնալ կայացուած այդ որոշման վրայ ենթարկելու համար զայն անհրաժեշտ սրբագրութեան:

Կեսարիոյ շրջանի մեկուսի կոմիտէութեան պատգամաւոր
Գ. Ս. ՎԻՇԱՊԵԱՆ

14/27 Սեպտ. 1911
Կ. Պոլիս

Փաստ. 1543-22

Իզմիր, 25/7 Սեպտ. 1911

Հ. Յ. Գաշնակցական Խորհուրդին
Ընկերներ,

Ժամանակին ստացած ենք մեր շրջանէն Խորհրդակցական ձայնով, Զ^ր Ընդհ. Ժողովին մասնակցելու արտօնութիւնը:

Կեդր. կոմիտէն՝ այդ հանգամանքով իբր պատգամաւոր ընտրած է ընկեր Մարտիրոս Սարբեանը որ Զեզ կը ներկայանայ եւ նրան յայտնած ենք նաեւ բերանացի մեր բոլոր ընկերներուն բաղձանքները կազմակերպութեանը յառաջիկային բռնելիք ընթացքին ու ունենալիք թաքթիքին մասին:

Մեր տեղեկագիրը առանձին մեր պատասխաններուն հետ կ'ունենաք: Հաշիւները ու աղիւսակները ընկեր Ֆարհատի⁴ յանձնուած են:

Միրալիբ բարեւներով
Հ. Յ. Գ. Իզմիրի Կեդր. կոմիտէ
ՎՏԱԿ

4.- Ֆարհատ Գայկ Թիրիաքեանն է, Պանք Օթոմանի գրաւման ծանօթ հերոսներէն Գրաչը, որ Սահմանադրութեան հռչակումէն ետք բանտէն արձակուած էր, ու կը վարէր Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթին վարչական բաժանումը:

Փաստ. 1541-22

Գ.- Հ. Յ. Գ. Հիշուած
բախտաւոր Տաքթիք
Կազմակերպութեանը.
(1911)

Համաձայն Հ. Յ. Գ. Ե^ր Ընդհանուր Ժողովի որոշման՝ Զ^ր Ընդհանուր Ժողովի գումարման հրաւեր ուղղուած ըլլալով կուսակցութեան մարմիններուն, այդ առթիւ Շրջաններէն եկած պատգամաւորներն ու գործիչ ընկերները ունեցան նախապատրաստական հաւաքումներ՝ լրացնելու համար կարգ մը անմիջական աշխատութիւններ:

Ա) Որպէսզի ժողովները կանոնաւորութեամբ շարունակուին, մշակուեցաւ եւ ընդունուեցաւ հետեւեալ ներքին կանոնագրութիւնը:

- 1- Ժողովի նիստերը տեղի պիտի ունենան օրական երկու անգամ. առաւօտեան ժամը 9-12 եւ կէսօրէ ետք ժամը 4-7:
- 2- Ամէն պատգամաւոր, եթէ ժողովի որոշուած ժամուն բացուելէն ետքը մինչեւ 15 րո. ուշանայ եւ այդ կրկնուի երեք անգամ, պատասխանատուութեան պիտի ենթարկուի դիւանին կողմէ:
- 3- Նախագահական կազմը ամէն ժողովի վերջնալէն ետք՝ կանխաւ կը յայտնէ ժողովականներուն յաջորդ նիստի օրակարգը:
- 4- Կարելոր առաջարկներն ու բանաձեւերը ժողովականները կը ներկայացնեն նախագահութեան՝ գրաւոր կերպով:
- 5- Բոլոր բացատրութիւնները, բողոքները, դիմումները որ կ'ըլլան ժողովի միջոցին, պէտք է ուղղուին նախագահական կազմին, ժողովը վերջնալէն յետոյ: Եթէ նախագահութեան կողմէ անլսելի մնայ դիմողի ձայնը, բողոքողը կարող է անմիջապէս դիմել ընդհանուր ժողովին:
- 6- Ժողովի ընթացքին կարգապահութիւնը խանգարողները առաջին անգամ կը զգուշացնէ նախագահը. երկրորդ անգամ կը զրկէ այդ ժողովի միջոցին խօսելու իրաւունքէն. իսկ երրորդ անգամին կ'առաջարկէ ժողովին, հեռացնել նիստի դահլիճէն կարգը խանգարողը՝ նոյն ժողովէն միայն:
- 7- Շրջաններու տեղեկագիրները կը ներկայացուին անպայման գրաւոր կերպով. ռայոններու տեղեկագիրները որ պիտի կարդան համարատուական յանձնաժողովները, կրնան ըլլալ նաեւ բերանացի, պայմանով սակայն, որ ժողովէն ետքը նոյնը ներկայացուի գրաւոր եւ աւելի ընդարձակ կերպով:
- 8- Զեկուցումները պէտք է ըլլան գրաւոր, բաց ամփոփ:
- 9- Էական հարցերու վերաբերող զեկուցումները կը տեւեն ոչ աւելի քան 40 րոպէ. ժողովը կրնայ այդ ժամանակը պակսեցնել կամ աւելացնել:
- 10- Իւրաքանչիւր խօսողի առաջին անգամ կը տրուի 15 րոպէ իսկ երկրորդ անգամ 10 րոպէ:
- 11- Զեկուցանողին կը դրուի 20 րոպէ, իր վերջին խօսքն ըսելու համար:
- 12- Բոլոր անոնք որ, յարգելի պատճառներով, ստիպուած կ'ըլլան որոշ ժամանակով բացակայի ժողովէն, պէտք է կանխաւ արտօնութիւն ստանան նախագահութենէն:

Միսել եւ թէյ եւայլն խմել կարելի է միայն ընդմիջումներու պահուն:
Ընդհանուր Ժողովը տեւելու է աւելի քան 15 օր (մինչեւ Օգոստ. 31-ը):
Բ) Ժողովին մասնակցելու համար պատգամաւոր ուղարկած կամ նշանակած էին հետեւեալ շրջանները. — Վան՝

Արամ, Կարին՝ Բժիշկ, Մուշ՝ Անտոն, Տիգրանակերտ՝ Թորգոմ, Տրապիզոն՝ Մէմօ, Սեբաստիա՝ Սուրէն, Կեսարիա՝ Վիշապ[եան], Պոլիս՝ Ատոմ, Ամերիկա՝ Նշան, Պալքանի՝ Գրգօ, Պարսկաստան՝ Հայրիկ¹: Խարբերդ, Սամսոն-Մարգուան, Իզմիր, Այնթապ, Ատանա, Եգիպտոս — պատգամաւորներ չունէին, ոմանք կազմի անբաւարարութեան իսկ մէկ-երկուքն ալ այլ անյարմարութիւնների պատճառով ինչպէս նաեւ կովկասէն չէին հասած պատգամաւորներ:

Վճռական եւ խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուելիք ընկերներու մասին կատարուած խորհրդակցութեան արդիւնքով՝ որոշուեցաւ որ վճռական ձայնով հրաւիրուելիք ընկերներու թիւը աւելի չըլլայ ժողովին մասնակցող պատգամաւորներու 1/3-էն:

Երբ մարմին մը ձայնի իրաւունքով արդէն կը մասնակցի Ընդհանուր ժողովին անոր միւս անդամները եթէ հրաւիրուին ժողովին՝ խորհրդակցական ձայն միայն կրնան ունենալ:

Վճռական ձայնի իրաւունք տուաւ կովկասէն նոր դարձող ընկերներ՝ Սիսեանի, Բաբայի եւ Աւոյի, ինչպէս նաեւ ընկեր Տիգրանի² կանչուած արդէն Արեւմտեան Բիւրոյի կողմէ — որ նախորդ Ընդհանուր ժողովէն յետոյ ընդարձակ շրջան մը ըրած էր Թուրքիոյ գանազան նահանգները եւ ընթացք տուած կազմակերպական գործերուն. իսկ խորհրդակցական ձայնով մասնակցելու համար որոշուեցաւ հրաւիրել Անդրանիկ, Վարդան, Ակնունի, Մար, Ասլան, Վարանդեան, Զաւրեան, Հրաչ, Մարգպետ, Վահան (օսմանեան պատգամաւոր), Գալֆա եւ Ժիրայր³:

Գ) Անցնելով նախագահական ընտրութեան՝ գաղտնի քուէարկութեան արդիւնքով նախագահ ընտրուեցան Բաբա (10 ձայն), Անտոն (9 ձայն), Ասլան (8 ձայն): Բարտոլոմայութեան աշխատանքները հերթով պիտի տանին Ամերիկայի, Պալքանի, Աւագանի⁴ պատգամաւորները եւ Ժիրայր:

Դ) Կարելոր հարցերու վիճաբանութեան պահուն արձանագրութեան մէջ պիտի մտնեն իւրաքանչիւր ընկերոջ խօսածներուն ամփոփումը, իսկ հերթական եւ ընթացիկ խնդիրներու վերաբերմամբ յայտնուած կարծիքները պիտի արտայայտուին ընդհանուր կերպով առանց խօսողները մատնանշելու:

1.- Յաջորդաբար՝ (փակագծի մէջ իրենց ներկայացուցած շրջանը)
Արամ — Մանուկեան Արամ (Վան-Վասպուրական):
Բժիշկ — Տէր Դաւթեան Յովսէփ (Կարին):
Անտոն — Չաւարեան Սիմոն (Տարօն-Սասուն):
Թորգոմ — Երեցեան Յովհաննէս (Տիգրանակերտ):
Մէմօ — Յ. Տրտրեան (Տրապիզոն):
Սուրէն — Սեբաստացի (Խրիմեան) Մուրատ (Սեբաստիա):
Վիշապ — Վիշապեան Գեորգ (Կեսարիա):
Ատոմ — Շահրիկեան Յարութիւն (Պոլիս). Գաեւ Ժանօր Նիքոս Ժածկանուցով:
Նշան — Թաշճեան Նշան (Ամերիկա):
Գրգօ — Քեստանեան Գեորգ (Պալքան):
Հայրիկ — Պանիրեան Հայրապետ (Պարսկաստան): Արձանագրութիւններու մէջ աւելի յաճախ՝ Կարագեան:
2.- Բաբա — Գարեգին Խաժակ (Չապաւեան):
Տիգրան — Աստիկեան Տիգրան: (Խարբերդ):
Աւօ — Իսահակեան Աւետիք կամ Եւ Ահարոնեան Աւետիս. երկուքն ալ կը մասնակցին Ընդ. ժողովին:
Սիսեան — Ամենայն հաւանականութեամբ Ահարոնեան Աւետիսի համար գործածուած ծածկանունն է:
3.- Խորհրդակցական ձայնով հրաւիրուելիք իսկական անուններով՝
Անդրանիկ — Օգանեան, որ պիտի չկարենար գալ:
Կարդան — Մեհրապեան Սարգիս, Խանասորի Վարդանն է:
Ակնունի — Մալումեան Խաչատուր:
Մար — Տէր Մարտիրոսեան Միքայէլ:
Ասլան — Չարդարեան Ռուբէն:
Վարանդեան — Յովհաննիսեան Միքայէլ:
Զաւրեան — Բժ. Զաւրեան Յակոբ:
Հրաչ — Թիրեաբեան Հայկ:
Մարգպետ — Ղազարոսեան Ղազարոս:
Վահան — Փափագեան Վահան (Կոմս):
Գալֆա — Գալֆայեան Յարութիւն:
Ժիրայր — Չօրեան Բարթող:
4.- Աւագանը նախկին Ծովափին տրուած ծածկանունն է. կը ներկայացնէ Տրապիզոնի եւ Կիրասոնի շրջանը:

Նիստ Ա.

17 Օգոստոս (Զորեքչաբթի առաւօտ)

Ներկայ՝ Կարինի, Մուշի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Պոլսոյ, Ամերիկայի, Պալքանի, Կեսարիոյ պատգամաւորները, Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը. վճռական ձայնով հրաւիրուածներ են՝ Բաբա, Աւօ եւ Տիգրան. իսկ խորհրդակցական ձայնով 3. ընդամէնը 13 վճռական ձայն եւ 3 խորհրդակցական:

Դիւանը ժողովին հաղորդեց նոր ստացուած մէկ-երկու հեռագիրներու բովանդակութիւնը, որոնցմով ժընեւ եւ այլուր գտնուող մէկ քանի ընկերներու մեկնումը կը ծանուցուէր:

Եւրոպայի դաշնակցական Ուսանողական միութիւնը նամակով մը յայտնելով ժողովին որ ուսանողական վերջին համագումարի որոշման չկրնալով ընդ առաջ գնալ — պատգամաւոր ընտրել բոլոր անդամներու քուէով եւ ուղարկել — կ'առաջարկուի իբր միութեան պատգամաւոր ընդունիլ ընկեր Վարանդեանը: Այս առթիւ ժողովին մասնակցող ընկերները մատնանշեցին ուսանողական միութեան ցենզին անբաւականութիւնը, ինչպէս նաեւ նախորդ Ընդհ. ժողովին իսկ նոյն Միութեան կողմէ եղած առաջարկ մը, որով կը խոստովանէին իրենց ցենզին անբաւականութիւնը եւ յառաջիկային համար կը հրաժարէին իրենց ձայնի իրաւունքէն:

Այս պատճառաբանութեան դէմ դիտել տրուեցաւ որ կազմ. կանոնագիրը ոեւէ փոփոխութիւն չէ կրած, ոչ ալ նախորդ Ընդհ. ժողովը այդ մասին արգելիչ որոշում մը ունի. ինչ կը վերաբերի ցենզին՝ պէտք չէ այնքան խստապահանջ ըլլալ, այլ նկատի ունենալու է խնդիրն բարոյական կողմը. ու ցորչափ կանոնագիրը ի գօրու է, անոր տրամադրութիւններուն պարտի հետեւի ժողովը: Հարցը քուէի դրուելով 13 իրաւասու ձայներէն 7ին մեծամասնութեամբ, ընկեր Վարանդեան վճռական ձայնի իրաւունքով ընդունուեցաւ ներկայացուցիչ Եւրոպայի դաշնակցական Ուսանողական միութեան:

Բացում ժողովին.— Նախագահը (Անտոն) ժողովը բացուած յայտարարեց, աւելցնելով որ քան տարուայ մեր գործունէութենէն յետոյ՝ ուրախութեամբ կանգ կ'առնէ երեւոյթի մը վրայ այն թէ՛ քան տարի առաջ-լայ փոքր խմբակցութիւնը եղած է ամենագործօն տարրը հայութեան մէջ եւ ազդեցիկ հայկական կեանքին մէջ: Այս յաջողութիւնը արդիւնք է անոր որ Դաշնակցութիւնը իր ամբողջ ուշադրութիւնը դարձուցած է տառապող ժողովուրդի ցաւերուն եւ անոր պատճառներուն վրայ ու այս նպատակին շուրջ ալ կ'ուռած՝ իրեն հետ ունենալով ժողովուրդին վստահութիւնը: Այս է որ տուած է կենսունակութիւն կուսակցութեան: Մենք կարողացած ենք, Արեւմտեան երկիրներու զաղափար-

ները իւրացնելով յարմարցնել մեր ժողովուրդի պայմաններուն ու պահանջներուն: Մեր պայմանները չէին թոյլատրեր ծրագիր ստեղծել այնպէս, ինչպէս կ'ըմբռնուէր եւ կը գործադրուի եւրոպական երկիրներու մէջ. մեր ծրագիրը հաշտեցումն է մեր պայմաններուն եւ ժամանակակից ընկերվարական փոխադարձութեան: Ահա այս ընթացքով է որ մեր ժողովուրդին մէջ առաջնորդող դեր կը կրցած ենք կատարել եւ տալ անոր Մերձաւոր Արեւելքի մէջ յառաջդիմութեան ջանակիւրի դերը, ուր որոշ չափով յաջողած ենք: Մեր ուղղութիւնը մեր ոչ-տոկմաթիկ ծրագրով շատ աւելի արդիւնալից եւ կենսունակ է քան դրացի տոկմաթիկ ուղղութիւնները — մենք եղած ենք աւելի գործնական քան տեսական: Այս մասին ճիշդ է որ մեր երիտասարդութեան նկատողութիւնները կան, բայց ժողովուրդը, որուն համար մենք կ'աշխատինք, աւելի գործնական օրինակով է որ կը դաստիարակուի, գործնականութիւնը աւելի դաստիարակիչ է՝ քան տեսականութիւնը: Չնայելով մեր ապակեղրոնացման դրութեան, մեր կուսակցութիւնը ունեցած է խիստ լաւ տիսիփիլին, որ նպաստած է մեր գործունէութեան յաջողութեան ունենալով իր մէջ միաժամանակ միշտ ընկերական ներողամիտ ոգի այն փոքր թերութիւններու վերաբերմամբ, որոնք սովորական են ամէն կուսակցութեանց կեանքին մէջ — խիստ՝ մեծ խնդիրներու մէջ գործուած յանցանքներու վերաբերմամբ, ներողամիտ ոգի՝ փոքր թերութեանց վերաբերմամբ, առաւել կամ նուազ, նպաստած են մեր յաջողութեան: Աչքի առաջ ունենալով այս բոլորը, ներկայ ժողովն ալ հարկ է որ ղեկավարուի այդ ուղղութեամբ եւ ընթացք տայ առաջարկուած աշխատութեանց:

Օրակարգի դասաւորում.— Աշխատանքներու դիւրութեան եւ կանոնաւորման համար դիւանը օրակարգը նոր բաժանման ենթարկած էր հետեւեալ կերպով — Ա) Զեկուցում Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոններու շրջաններուն՝ իրենց շրջանի մարմիններուն հետ՝ 4 նիստ. Բ) Դաշնակցութիւն եւ ազգային խնդիրներ՝ 1 նիստ. Գ) կազմակերպական՝ 2 նիստ. Դ) Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդա՝ 1 նիստ. Ե) Դաշնակցութիւնը, միւս կուսակցութիւնները եւ Օսմ. Դաշ. երեսփոխանութիւն՝ 6 նիստ. Զ) Դաշնակցութիւն եւ կառավարութիւն, հողային հարց եւն.՝ 4 նիստ. Է) Աշխատաւորական քաղաքականութիւն՝ 2 նիստ. Ը) Պարսկաստան՝ 2 նիստ. Թ) Ռուսաստան՝ 2 նիստ. Ժ) Ընտրութիւններ եւն:

Առաջարկուեցաւ հարցերէն ոմանք տեղափոխել, որ պէտքի մէկը միւսէն բխելով գիրար լրացնեն, ինչպէս նաեւ ի հարկին աւելցնել կանոնագրի, բանաւոր եւ գրաւոր փոփոխականութիւն եւ Ռուսաստանի համար սահմանուած նիստերուն թիւը: Դիւանը աչքի առջեւ ունենալով եղած այս առաջարկները՝ իրենց կարգին պիտի ընէ հարկ եղած փոփոխութիւնները:

Զեկուցանող յանձնախումբը.— Փոխադարձ համա-

ձայնակցեցան, զեկուցանող յանձնախումբի անդամ նշանակուեցան:

- 1) Մանտաթներու քննութեան համար՝ Բժիշկ, Ժիրայր, Տիգրան:
- 2) Կանոնագրի քննութեան համար՝ Բժիշկ, Ակնուհի, Վահագն, Մէմօ, Ժիրայր:
- 3) Հաշուեքննիչ՝ Տիգրան, Գրգօ, Նշան:
- 4) Ներքին քաղաքականութիւն — Իթթիհատ, կառավարութիւն եւ այլն՝ Վահագն, Վարանդեան, Երէց[եան]:
- 5) Հողային եւ տնտեսական — Ատոմ, Անտոն, Բաբա:
- 6) Ազգային-կուլտուրական — Ասյան, Ատոմ, Աւօ:
- 7) Փարլամենթական — Վահան [Փափագեան]:
- 8) Ռուսաստան — Ռոստոմ, Վարանդեան, Սիսեան եւ Բաբա:
- 9) Պարսկաստան — Հայրիկ եւ Ռոստոմ:
- 10) Մամուլ եւ փրոփականտա — Նշան, Ատոմ, Բաբա, Մէմօ:
- 11) Աշխատաւորական — Լեռնեան⁶, Ֆելիքս, Երէց[եան] եւ Արամ:
- 12) Ինքնապաշտպանութիւն — Սուրէն, Վիշապ[եան], Մարգարէտ, Հրաչ, Հայրիկ, Ռոստոմ:
Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուկ:

Նիստ Բ.

17 Օգոստ. (Չորեքշաբթի կէսօրէ ետք)

Ներկայ՝ Պալքանի, Ամերիկայի, Տիգրանակերտի, Ուս. միութեան, Կեսարիոյ, Մուշի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Կարինի, Վանի, Պոլսոյ պատգամաւորները եւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը: Վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուած ընկերներէն՝ Բաբա, Աւօ, Տիգրան. խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն՝ Մար եւ Ժիրայր, ինչպէս նաեւ Օսմ. երեսփոխան Վահան, ընդամէնը 15 վճռական եւ 3 խորհրդակցական ձայն:

Առաջարկուեցաւ խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրել նաեւ ընկերներ Մելօ եւ Սաթեմիկ⁷: Նկատի առնելով առաջինին երկրի մէջ ունեցած գործունէութիւնը եւ երկրորդին մօտալուտ մեկնումը Կովկաս բանտարկեալներու եւ այլ գործերով՝ ընդունուեցաւ եղած առաջարկը:

Տեղեկաբերութիւն մանտաթային յանձնախումբին.— Մանտաթային յանձնախումբը իր տեղեկաբերութիւնն ըրաւ, առանց պատգամաւորներու ընդունելութեան մասին արտայայտուելու, այն նկատմամբ որ՝ Թուրքիոյ մարմինները դրամական կանխատեսուած

ցնցը չէին լրացներ, որ շատ մը շրջաններու անդամական ցնցը ոչ միայն լրիւ, այլ աւելի իսկ էր, պատգամաւորներու մեծամասնութիւնը ունի իր ընտրութիւնը ծանուցանող յանձնարարական, որոնց մէկ մասը Կեդր. Կոմիտէներու կողմէ եկած, մէկ քանին ալ ընտրուած Շրջ. ժողովներէն:

Դրամական ցնցի այս պարագան խորհրդակցութեան առարկայ դառնալով, հետեւեալ դեր ու դէմ արտայայտութիւններն եղան այդ մասին:

Վահագն.— Կը մատնանչէ կանոնագրի եւ Ե՞մ Ընդհ. ժողովի ցուցմունքները, որոնց վրայ հիմնուելով չէ կարելի Ընդհ. ժողովը լրիւ համարել, հետեւաբար հարկ կ'ըլլայ որ ներկայ Ընդհ. ժողովը իր իրաւասութիւնը ճշդող բանաձեւ մը քուէարկէ, յիշելով որ Կովկասը չէ մասնակցած, մարմինները իրենց դրամական ցնցը չեն լրացներ եւ այս պայմաններուն մէջ Ընդհ. ժողովը, իբրեւ իրաւասու ժողով մը չի կրնար նկատուիլ ինքզինք՝ իր որոշումներուն մէջ դուրս չգալով նախորդ Ընդհ. ժողովի որոշումներու սահմանէն, մանաւանդ երբ հարցը հիմնական խնդիրներու մասին է:

Բաբա.— Ի՞նչ երաշխաւորութիւն ունինք որ գալիք Ընդհ. ժողովին ներկայանալիք շրջանները իրենց ցնցով աւելի համապատասխան պիտի ըլլան ու եթէ յաջորդ Ընդհ. ժողովին ալ անբաւական ըլլայ՝ ի՞նչ պիտի ընենք: Մենք դրամական ցնցը լրացուցած ենք մի միայն բռնի հանգանակութեանց օրերուն, լեկալ պայմաններու մէջ մեր հասոյթները միշտ կը պակսին: մենք անդամներու որակին պիտի կռթնինք, հետեւաբար չենք կրնար ներկայ Ընդհ. ժողովը լրիւ չնկատել:

Վահան.— Չեմ գիտեր թէ նախորդ Ընդհ. ժողովը որքան համապատասխան էր նշանակուած ցնցին. այնուամենայնիւ ներկայ անցողական շրջանին երբ կազմակերպութիւնը նոր կը հիմնաւորուի նոր պայմաններու տակ, ցնցի մասին ծանրանալ խիստ պիտի ըլլար: Մանաւանդ շրջապատող քաղաքական պայմաններուն մէջ, երբ Ընդհ. ժողովը սահմանափակուած իրաւունքներով դուրս գայ, այդ պարագային մենք մեր գործունէութիւնը վտանգած պիտի ըլլանք: Եւ յետոյ մենք մեր իրաւասութիւնը ինչպէ՞ս պիտի գծենք: Այս նկատումներով ալ Ընդհ. ժողովը հարկ է իրաւասու նկատել:

Բժիշկ.— Հաշիւները տակաւին կուսակցութեան գործունէութեան պատկերը չէ որ կու տան, հաշիւներէն դուրս շրջանները կրթական եւ այլ խնդիրներու մէջ շատ աւելին ըրած են եւ շատ աւելի դրամական գոհողութիւն հրապարակ բերած: Այս նկատումներով Ընդհ. ժողովին իրաւասութիւնը պէտք է պահել:

5.- Վահագն՝ Վոսմեան Արշակ, իսկական անունը՝ Ղերծակեան Օճնիկ:
6.- Լեոնեան՝ Նազարեանց Լիպարիտ:
7.- Մելօ՝ Մելոյեան Ղեւոնդն է, իսկ Սաթեմիկը կամ Սաթօ Օհանջանեան:

Կարդացուելով նախորդ Ընդհ. ժողովի որոշումները ցնցի եւ Ընդհ. ժողովի գումարման պարագաները ճշդող, կրկին խօսք առաւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը, լրացնելով իր պաշտպանական տեսակէտը:

Վահագն.— Իմ խստապահանջութիւնս հիմնուած է տեսական եւ կանոնագրական նկատումներու վրայ միանգամայն, որովհետեւ իւրաքանչիւր ժողով ամէն տեղ իր գոյութեան պայմանները կը լրացնէ որոշ ցնցով եւ այդ կը հիմնաւորուի կանոնագրով: Վերջին Ընդհ. ժողովի ցուցմունքները շատ աւելի խիստ կէտեր կը պարունակէ քան նոյնինքն կանոնագիրը: Ընդհ. ժողովը հրաւիրուած է պարտաւորիչ հանգամանքներու տակ — նախ՝ յարգելու համար նախորդ Ընդհ. ժողովի որոշումը՝ որով յաջորդ ժողովը գումարել կը յանձնարարէր այս տարի. երկրորդ՝ յարաբերութեանց եւ պայմաններու փոփոխութիւններ յառաջ եկան, որոնց առջեւ Բիւրոնները եւ մարմինները չունին իրաւասութիւն ըստ այնմ ընթանալու համար: Խորհուրդ ալ կարելի չեղաւ գումարել՝ որպէսզի կարենայինք Ընդհ. ժողովը յետաձգել եւ նոր աշխատանքով ներկայանալ: Խորհուրդ գումարելու համար ռայոնական ժողովներ չկային. մանաւանդ որ ռայոնական ժողովներու գումարումն ալ ինքնին Ընդհ. ժողովի հաւասար ծախք մը կ'ենթադրէր: Միւս կողմէ մեր առջեւ կը ներկայանար թաքթիքական լուրջ խնդիրներ որոնց անհրաժեշտ էր ընթացք տալ. կար Կովկասի վիճակը, կար Պարսկաստանի վիճակը՝ որոնց մասին հարկ կ'ըլլար նմանապէս արտայայտուելու: Այս պայմաններուն առջեւ Բիւրոնները պարզ է որ չկրնային պատասխանատուութիւն ստանձնել: Եթէ սակը մեր աչքին առջեւ արժէք մը ունի՝ պէտք է ուրեմն լրացնել եւ պահել, եթէ չունի պէտք է լրացնել. իսկ եթէ երբեք սակերը վերցնենք՝ վերցուցած պիտի ըլլանք գոհողութեան անհրաժեշտութիւնը, որով եւ վտանգած՝ կազմակերպութեան գոյութիւնը:

Այս պատճառաբանութիւններուն ի պատասխան գանազան ընկերներ դիտել տուին թէ՛ նախորդ Ընդհ. ժողովն ալ իր շատ շրջաններով դրամական ցնց չէր լրացներ եւ սակայն իրաւասու ժողով մը եղաւ: Այս ժողովը առ առաւելն Ռուսաստանի եւ Կովկասի մասին միայն կրնայ վերապահ ըլլալ եւ [դուրս] չգալ նախորդ Ընդհ. ժողովի գծած որոշումներու սահմանէն, ուր մէկէ աւելի պատգամաւորներ կային: Դրամ տալը տակաւին գործունէութեան նշան չէ. կան շրջաններ՝ որոնք դրամ տուած են առանց բարոյական կուսակցական ունեւ գործունէութիւն ունենալու: Ոչ Խորհուրդ, ո՛չ ունեւ այլ ժողով կրնայ փոխարինել այս ժողովին, քանի որ հոս են եւ հոս պիտի հասնին ոչ միայն շրջաններու օրինաւոր պատգամաւորները այլ եւ Դաշնակցութեան յայտնի գործիչ-ընկերները: Եթէ ներկայ ժողովն ալ իրաւասու չըլլայ, ո՞ր ժողովն է որ իրաւասու պիտի ըլլայ, երբ մանաւանդ վաղը ունեւ արտակարգ պարագա-

յի առջեւ գտնէ ինքզինք կուսակցութիւնը: Եթէ Կովկասը իր պատգամաւորները չունի, հարկաւ պատճառներ ունեցած է, քանի որ հրաւիրագրեր դրկուած են, ինչ որ ան եւս վերջերս գումարել է իր ռայոնական ժողովը:

Անտոն.— Մեր կուսակցութեան մէջ նշանակուած ցնցերը միշտ ալ փոխուած են. Յժի ժողովը դրամական ցնց չունէր, այլ այս կամ այն քաղաքին մէջ գործօն խումբեր. յետոյ դրուեցաւ գինական ցնց. այսօրուան ցնցն ալ կուսակցութեան բիւրոյացման ցնցը պիտի ըլլայ, այս պայմանը միայն դրամական ցնցի հետ չէ կարելի կապել. մեր կուսակցութիւնը կը գտնուի ներկայիս այն ուղիին մէջ՝ ուր կը գտնուէր 10-15 տարի առաջ. այժմ ալ, նոր պայմաններու մէջ նոր աշխատանք պիտի սկսինք: Ճիշդ է, որ սահմանուած դրամական ցնցը կը պակսի որոշ չափով, սակայն կայ կուսակցական հասունացման ցնց: Ինչո՞ւ մենք նախորդ ռեժիմին օրով, երբ կովկասեան պատգամաւորները ճշդող մեծամասնութիւն էին, կու տայինք Թուրքիոյ մասին որոշում եւ այսօր նոյնը կը զլացուի այն ժողովին՝ որուն տարրերուն մէջ կայ նոյնիսկ մեծ թուով ռուսահայեր: Համամիտ եմ որ հիմնական կէտերու մասին վճռական որոշումներ չտանք, բայց զգացնենք կուսակցութեան ղեկավարութեան սկզբունքը:

Վիճաբանութիւնը բաւ համարուելով քուէարկութեան դրուեցան հետեւեալ երկու բանաձեւերը.

Ա. բանաձեւ.— Ընդունելով թէ իւրաքանչիւր Ընդ. ժողով ինչպէս նաեւ ունեւ կազմակերպութեան հերթական համաժողովները, որոնք կազմակերպութեան կամքն արտայայտելու իրաւասութիւնն ունին, օրինաւորապէս ենթարկուած են իրենց գումարումէն առաջ հաստատուած կանոններուն եւ վճիռներուն,

Եւ նկատելով որ այս Ընդհ. ժողովն ամբողջապէս կը բացակային կովկասեան մարմիններու պատգամաւորները,

Նկատելով նաեւ որ Թուրքիոյ եւ Պարսկաստանի Կեդր. Կոմիտէները բացարձակապէս չեն համապատասխաներ կանոնագրին եւ յատկապէս նախորդ Ե՞մ Ընդհ. ժողովին կողմէ ճշդուած պայմաններուն:

Այս բոլոր նկատումներով այս ժողովը չի կրնար ինքզինքը հռչակել իբր լիազօր եւ հերթական Ընդհ. ժողովը Դաշնակցութեան:

Այս ժողովը բարոյական եւ կանոնական պարտականութեան տակ կը գտնուի սահմանափակելու իր լիազօրութիւնը, որոշելով զբաղիլ միմիայն տակտիկի եւ գործնական խնդիրներու լուծումով եւ ընտրութիւններով, հաւատարիմ մնալով նախորդ Ընդհ. ժողովի որոշումներու ոգիին (ստացաւ 1 ձայն):

Բ. բանաձեւ.— Նկատելով որ երկրին մէջ տիրող ընդհանուր յետամնացութիւնը եւ անցողական դրութիւնը թող չեն տուած մեր մարմիններուն հասնելու որոշուած սակին,

Որ՝ Դաշնակցութեան մէջ տիրող ոգին եղած է աւելի բարոյական սակին նշանակութիւն տուող եւ որ նախընթաց երկամեակի տեւողութեան բաւական մեծ գործ է կատարուած կուսակցական գիտակցութեան եւ մշակութային տեսակէտով,

Որ՝ ներկայ ժողովի անդամները լիազօր ներկայացուցիչներ են Հ.Յ.Դ. մարմիններու անդամներու գումարին,

միեւնոյն ատեն նկատելով որ Ռուսաստանէն չկայ ոչ մէկ պաշտօնական ներկայացուցիչ,

Կորոշուի —

Ներկայ ժողովը համարել լիազօր այն բոլոր հարցերուն համար, որոնք կը վերաբերին Թուրքիային, Պարսկաստանին եւ գաղութներուն. իսկ Ռուսիոյ վերաբերմամբ բաւականաճառ լոկ նախընթաց ԵՊ ժողովի գծած շրջանին մէջ կատարուելիք ձեռնարկութիւններու գործնական որոշումով (ստացաւ 12 ձայն):

Ընթերցում տեղեկագրերու.— Որոշուեցաւ տեղեկագրերը կարդալ եւ լրացուցիչ բացատրութիւններ ուղղել պատգամաւորներէն, առանց վիճաբանութեան մտնելու. իսկ ամբողջ տեղեկագրերու ընթերցումէն յետոյ կուսակցութեան գործունէութիւնն ու վիճակը ենթարկել ընդհ. քննադատութեան:

Կարդացուեցաւ Պոլսոյ տեղեկագիրը միայն, մնացեալներուն ընթերցումը վերապահելով յաջորդ նիստին:

Նիստ Գ.

18 Օգոստ. 911 (Հինգշաբթի առաւօտ)

Ներկայ՝ Պալքանի, Ամերիկայի, Պոլսի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Վանի, Մուշի, Ուս. միութեան, Կեսարիոյ, Պարսկաստանի պատգամաւորները, Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը, իսկ վճռական ձայնով հրաւիրուածներէն՝ Բաբա, Աւօ, Տիգրան, Վահան (Օսմ. երկսփոխանական) ժողով. խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն ներկայ՝ Ժիրայր, Մելօ, Ասլան.

Կարդացուեցաւ Ամասոնի տեղեկագիրը. քուրբայի պատճառով անկարող եղած են ժողով գումարելով պատգամաւոր եւ լիակատար տեղեկագիր ուղարկել: Կարդացուեցաւ նոյնպէս Տրապիզոնի եւ Կեսարիոյ շրջանի տեղեկագիրը: Զանազան խնդիրներու մասին դրուեցան հարցեր, որոնց պատասխանուեցաւ պատգամաւոր ընկերոջ եւ այդ շրջանի գործերու ծանօթ ընկերներու կողմէ:

Նկատելով որ տեղեկագիրներու մանրամասն ընթերցումը պիտի տեւէ շատ երկար, ընկեր Անտոն առա-

ջարկեց տեղեկագրերէն կարդալ այն մասերը միայն որ կը վերաբերին կուսակցութեան կազմին, անոր զարգացման կամ յետադիմութեան եւ այլն. միւս մասերը կարդալ այն ատեն՝ երբ օրակարգի մէջ համապատասխան հարցերուն կու գայ կարգը: Այս մասին վիճաբանութիւն տեղի ունենալով՝ ժողովը յանգեցաւ հետեւեալ եզրակացութիւն-որոշման.

Նկատելով որ ընդարձակ տեղեկագրերը կարդացուած լմնցած են արդէն եւ մնացած են սեղմ կերպով պատրաստուած տեղեկագրերը միայն, շարունակել մնացած տեղեկագրերուն ընթերցումը, հարցարանին տրուած պատասխանները յանձնելով պատկան յանձնախումբերուն՝ իրենց կարգին ժողովին ներկայացնելու համար.

Քառորդ ժամ դադարէ վերջ՝ ժողովը շարունակեց իր գրադումները:

Կարդացուեցաւ Խարբըրդի շրջանի տեղեկագիրը, որուն մէջ կը պակսէր շրջանի պատկերը: Ընկեր Աստիկեան տուաւ բերանացի լրացուցիչ տեղեկութիւններ, պատասխանելով տրուած հարցերուն: Տիգրանակերտի պատգամաւորը, ժամանակ չլինելու համար իր տեղեկագիրը տուաւ բերանացի. ընկերներ զանազան հարցեր տուին որոնց նոյնպէս պատասխանուեցաւ:

Նիստ Դ.

19 Օգոստ. 911 (Ուրբաթ առաւօտ)

Ներկայ՝ Պալքանի, Ամերիկայի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Վանի, Մուշի, Ուս. միութեան, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Պոլսի, Կարինի, Պարսկաստանի պատգամաւորները եւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը: Վճռական ձայնով հրաւիրուածներէն՝ Բաբա, Աւօ, Տիգրան: Խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն Ժիրայր, Մելօ, Ասլան, Մարգաբետ:

Կարդացուեցաւ Կարինի, Դուրան-Բարձրաւանդակի, Պալքանի, Ամերիկայի եւ Կովկասեան շրջաններու տեղեկագրերը: Տրուեցան նաեւ բերանացի լրացուցիչ տեղեկութիւններ՝ ի պատասխան հարցերու:

Պոլսի Կեդր. Կոմիտէն պաշտօնական նամակով մը կը յայտնէր ընկեր Ֆելիքսի ընտրութիւնը իբր իրենց ներկայացուցիչը Ընդհ. Ժողովին մէջ, փափաքելով ճանչցուած տեսնել զայն իբր իրենց օրինաւոր պատգամաւորը: Այս առթիւ եղան հետեւեալ վիճաբանութիւնները. —

Ժիրայր.— Խօսեցաւ ի նպաստ անոր ընդունելութեան, փաստ բերելով անդամական ցենզի լրիւ ըլլալը: Իսկ դրամական ցենզի ոչ-լրիւ ըլլալու մասին յիշեց այս մասին ուրիշ պատգամաւորներու այդ առթիւ եղած

թոյլտուութիւնը համաձայն մեր որոշման:

Արամ.— Խօսեցաւ դէմ՝ հիմնուած Բիւրոյի ցրուած հրաւիրագրերու այն կէտին վրայ, որով կը յանձնարարուի ցենզ չունեցող մարմիններուն միայն շրջանի կողմէ պատգամաւոր ըրկել՝ զրկելով Կեդրոնական Կոմիտէները իրենց իրաւունքէն:

Վիշապ(եան).— Խօսեցաւ ի նպաստ՝ հիմնուած ներքին կանոնագրի տրամադրութեան վրայ:

Թորոզով.— Նոյնպէս խօսեցաւ ի նպաստ՝ ներքին կանոնագրի տրամադրութեան վրայ:

Ատոմ.— Խօսեցաւ ի նպաստ՝ յայտնելով որ Բիւրոն իրաւունք չունէր այդ սահմանափակումն ընելու, զայն նկատելով բռնաբարում ներքին կանոնագրի այդ մասին ունեցած տրամադրութեան: Անդրադառնալով դրամական ցենզին, ընկերը նկատել տուաւ որ Կեդր. Կոմիտէն ըլլալով նորակազմ եւ ունենալով կարճ ժամանակի գործունէութիւն, ունեցած է դրամական հասոյթ մը՝ որ պահանջուած ցենզէն աւելի է:

Վահապ.— Դէմ խօսելով, դիտել տուաւ թէ Կեդր. Կոմիտէն վեց ամսուայ կարճատեւ գոյութիւն մը ունեցած է, այլ նշանակուած է Յուլիսէն Յունուար եւ հետեւաբար ունեցած մէկ տարուած գոյութիւն, բայց միայն վեց ամսուան գործունէութիւն ունեցած է:

Բժիշկ.— Նոյնպէս խօսեցաւ դէմ՝ յայտնելով որ Կ. Կոմիտէի կողմէ անտակտ քայլ առնուած է այդ դիմումով, քանի որ միւս Կ. Կոմիտէներու շրջանները մէկ մէկ ձայնով միայն մասնակցած են Ընդհ. Ժողովին, իսկ Պոլսի Կոմիտէն բացառիկ գործունէութիւն մըն ալ ցոյց տուած է այդ իրաւունքն ունենալու համար:

Ատոմ.— Կ. Կոմիտէի առած քայլը չէ անտակտ, այլ Բիւրոյի բռնած դիրքը այս խնդրին հանդէպ:

Անտոն.— Խօսեցաւ ի նպաստ, առաջարկելով նոյնիսկ Կ. Կոմիտէի ամբողջ կազմը հրաւիրել՝ ներկայ ըլլալու խորհրդակցական ձայնով լսելու անոնց կարծիքը զանազան խնդիրներու մասին, այդպիսով օգտակար ըլլալու համար ժողովին:

Վիճաբանութիւնը երկար շարունակելով, հարց ծագեցաւ թէ, քանի որ ժամանակը ուշ է, պէ՞տք է սպասել մինչեւ լուծում գտնէ այս հարցը թէ ոչ: Որոշուեցաւ շարունակել վիճաբանութիւնը, որուն անվերջ շարունակուելուն հետեւանքով, կարելի չեղաւ եզրակացութեան մը յանգիլ, որով նախագահը ստիպուեցաւ փակուած յայտարարել ժողովը՝ ժամը 1.30ին:

Նիստ Ե.

20 Օգոստ. 911 (Շաբաթ առաւօտ)

Ներկաներ.— Բիւրոյի ներկայացուցիչը, Ուս. միութեան, Մուշի, Վանի, Տրապիզոնի, Տիգրանակերտի, Պարսկաստանի, Ամերիկայի, Պալքանի, Պոլսոյ, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Կարնոյ պատգամաւորները. վճռական ձայնով՝ ընկերներ Բաբա եւ Աւօ. իսկ խորհրդակցական Վահան, Լեռնեան, Մարգաբետ, Մար, Ասլան, Ժիրայր:

Նիստը բացուեցաւ ընկեր Ասլանի նախագահութեամբ:

Կարդացուեց եւ վաւերացուեց I եւ II ժողովներու արձանագրութիւնները:

Պարսկաստանի գեկուցումը.— Ընկեր Կարագեան բերանացի տեղեկագրերով ըրաւ Պարսկաստանի կազմակերպական գործունէութեան եւ վիճակին⁸: Ընկերների կողմէն զանազան հարցեր տրուեցան որոնց պատասխանեց, գրաւոր գեկուցումը պատրաստուած ըլլալով Դաշ. Ընդհ. Ժողովի փակումից առաջ:

Փորթուգալեանի յոբելեանական Ամերիկայի Կեդր. Յանձնախումբի կողմէն ստացուած նամակը կարդացուելով որոշուեց յետաձգել այդ խնդիրը իր հերթին:

Ժողովի օրակարգի վրայ եղող խնդրի — Պոլսոյ Կեդր. Կոմիտէի շրջանէն երկու պատգամաւոր տալու հարցը — վիճաբանութեան շարունակութեան համար նախագահը հարց տուաւ շարունակել վիճաբանութիւնները թէ փակել. 7 ձայնով ընդդէմ Թ-ի, որոշուեց շարունակել, պայմանաւ որ կարելի եղածին չափ համառօտ ըլլայ եւ իւրաքանչիւր խօսողի 5 րոպէէն աւելի ժամանակ չտրուի:

Ընկ. Կարագեան.— Բիւրոյից ստացուած հրահանգի համաձայն իւրաքանչիւր շրջան տալու է 1 ձայն. թէ պէտ Բիւրոյի ներկայացուցիչը յայտնեց թէ Բիւրոն ունի ուրիշ կարգադրութիւն մը եւս, բայց այդ մեզ յայտնի չէր, այժմ քանի որ հարց է բարձրացրել եւ այդ պատճառ կը դառնայ եւ միւս շրջաններից պահանջներ առաջ գալուն, ուստի առաջարկում եմ բաւականանալ 1 պատգամաւորով եւ Պոլսոյ Կ. Կոմիտէին առաջարկել չպնդել իր պահանջին վրայ:

Երէց(եան).— Համաձայն կանոնագրի իւրաքանչիւր Կ. Կոմիտէ տալու է 2 պատգամաւոր. պէտք է նայիլ անդամական եւ դրամական ցենզին միայն, այլ եւ յեղափոխական ցենզին. ուստի կ'առաջարկեմ բոլոր մարմիններին տալ մէկ մէկ ձայն եւս:

Վարանդեան.— Այս հարցը գոցելու համար փոխանակ բոլոր Կ. Կոմիտէներուն մէկ-մէկ պատգամաւոր եւս տալու, իրաւունք տալ Պոլսոյ Կ. Կոմիտէի ամբողջութեամբ մասնակցելու ժողովին խորհրդակցական ձայնով:

8.- Կարագեան Գոր անուն է, հաւանաբար գործածուած իբր ժածկանուն Պարսկաստանի պատգամաւոր Պանիրեան Գայրապետի (Գայրիկ) փոխարէն:

ժիրքայր.— Մինչև Կ. Կոմիտէի ներկայացուցիչի ընտրութիւնը, Բիւրոյի կողմէն Կ. Կոմիտէն ունէ հրահանգ էր ստացած. այս ժողովին մէջ այդ հարցը բարձրացաւ՝ երբ Կ. Կոմիտէն իր ընտրութիւնը կատարեց եւ տեղեկացուց:

Նշան.— Իւր ձայնը միացնելով ընկ. Վարանդեանի ձայնին՝ առաջարկեց տալ խորհրդակցական ձայն Պոլսոյ Կ. Կ. ի ընտրուած ընկերոջ, որպէսզի չկարծուի թէ կ'ուզենք զայն զրկել ձայնէ եւ կամ մէկ ձայնն է որ պիտի վճռէ ժողովի բախտը:

Վահագն.— Եթէ Բիւրոն չըջաններուն յայտնել է մէկ ձայն տալու մասին այդ արեւ է Ե. Ընդհ. ժողովի որոշման վրայ հիմնուելով: Եթէ այդ առթիւ պարսաւ պէտք է այդ պիտի ըլլայ ոչ թէ այդ նոյն հարցին համար, այլ այս ժողովը հրաւիրած ըլլալուն համար, քանի որ ոչ մէկ չըջան ցենդ չի ներկայացներ. ընկ. Վարանդեանի առաջարկը Պոլսոյ Կ. Կ. ի ընկերներին տալ իրաւունք խորհրդակցական ձայնով մասնակցելու, կը հակասէ մեր նախորդ որոշման. այն է՝ ժողովին վայրը գտնուող Կ. Կոմ. ի անդամները ժողովի հրաւիրելը պարտաւորիչ չէ: Իսկ բոլոր Կ. Կոմ. երուն նոր մէկ մէկ ձայն տալը նոր անպատեհութիւններ յառաջ կը բերէ: ա) Ծախսերը կ'աւելնան բ) ժողովը կ'երկարի եւ գ) մեր բոլոր նախորդ որոշումները կը մնան վիճելի եւ միմիայն բաղձանք՝ մինչև բոլորին ներկայութիւնը. ուստի կ'առաջարկեմ այս խնդիրը յետ մղել:

Անտոն.— Մենք Բիւրոներից չենք ստացել ունէ՛ հրահանգ ընտրութեանց սահմանափակման առթիւ. բայց ղեկավարուել ենք հիմնական ծրագրի այն կէտով՝ որ թելադրուած է իւրաքանչիւր շրջանի ուժեղացման եւ թուլացման հետ նուազեցում եւ աւելացում նրա մասնակցութեան չափին՝ Ընդհ. ժողովի մէջ, որով ընտրել ենք մի անդամ. պիտի նկատի ունենալ նաեւ այն որ գանազան Ծախսերու տեղի չտալու համար է որ ոմանք մի մի ձայնով են ներկայացել ժողովին, որից զերծ է Պոլսոյ Կ. Կոմ. ն: Երբ ուսանողական մարմինն եւ այլ մարմիններու ձայն տուինք առանց խստապահանջ ըլլալու եւ երբ Պոլսոյ Կ. Կոմ. ն որոշ չափով մօտեցել է ցենզին, հարկ չկայ այնքան խստապահանջ ըլլալ. աւելի նպատակաւոր մար կը լինէր Կ. Կոմ. ի կազմը հրաւիրել խորհրդակցական ձայնով:

Վիճաբանութիւնները փակուած համարուեցան. առաջարկուեց 5 բանաձեւ. ընկերներ՝ Արամի, Վարանդեանի, Գրգոյի, Բժիշկի եւ Կարագեանի կողմից:

Ի. Ընկ. Արամի բանաձեւը.— Նկատելով որ բոլոր Կ. Կոմիտէների կողմէն եկած են մէկ-մէկ պատգամաւոր, ցենդ չունենալուն պատճառաւ:

Նկատելով որ Պոլսոյ Կ. Կոմիտէն ունէ բացառիկ գործունէութիւն չունի, հակառակ նրան որ պատահական գործիչ ընկերներու ահագին խմբեր միշտ տրամադիր են եղել տեղական գործերու, հոս են եղել եւ Բիւրո-

ներու անդամները, պարլամենտական պատգամաւորները:

Նկատելով որ Կ. Կոմիտէն չի ունեցել եւ դրամական ցենդ, որովհետեւ ընդհ. կուսակցական դրամէն յետոյ, խմբագրական եւ այլ գործիչները համար Ծախսուած գումարները մեծ մասամբ տրամադրելի են եղել Պոլսոյ շրջանի համար, առաջարկուած է մերժել Պոլսոյ Կ. Կոմ. ի առաջարկը ընդհանուր մարմիններու իրաւահասարակութիւնը յարգած լինելու համար (3 ձայն):

II. Վարանդեանի բանաձեւը.— Իրաւունք տալ Պոլսոյ Կ. Կոմ. ին հաւաքաբար եւ խորհրդակցական ձայնով մասնակցելու ընդհանուր ժողովին (7 ձայն ստացաւ):

III. Գրգոյի բանաձեւը.— Նկատի ունենալով որ Պոլսոյ սը համեմատաբար ամէնէն կանոնաւոր Կ. Կոմ. ական շրջան մը եղած է եւ քանի որ տարբեր հոսանք մը կը ներկայացնէ եւ կարելի է պնդել թէ նոյնիսկ ցենդը լրացնելու փոքրիկ պարբերութիւն մը մնացած է եւ ընդհ. կանոնագրի 182րդ յօդուածը որոշ տրամադրութիւն ունի 2 պատգամաւոր տալու, կ'առաջարկուի տալ Պոլսոյ Կ. Կոմ. ին մէկ ձայն եւս (1 ձայն):

IV. Բժիշկի բանաձեւը.— Նկատելով որ բոլոր Կ. Կոմ. երէն եկած են մէկ մէկ պատգամաւոր ցենդ չունենալուն համար եւ որ Պոլսոյ Կ. Կոմ. ի շրջանն էլ նոյնպէս ցենդ չունի, առաջարկուած է մերժել 2 ձայն տալ Պոլսոյ Կ. Կոմ. ի շրջանին (ստացաւ 2 ձայն):

V. Ընկեր Կարագեանի բանաձեւը.— Ի նկատի ունենալով որ միւս Կ. Կոմ. ները կամ համապատասխան ցենդ ներկայացրած չլինելու կամ Ծախսերից խուսափելու եւ այլ հանգամանքների պատճառով ժողովում ունին միայն մի-մի վճռական ձայն, ի նկատի ունենալով որ Պոլսոյ երկրորդ ձայն տալով կարող է ուրիշ Կ. Կոմ. միտէներից եւս երկրորդ ձայնը ընդունելու հարցը Ծագիլ, ինչ որ յապաղման եւ այլ անպատեհութիւնների առիթ կարող է դառնալ, միւս կողմէ այդ խնդրին մի կերպ լուծում տալու համար, առաջարկուած է Պոլսոյ Կ. Կոմ. ին յետ վերցնել երկրորդ ձայն ունենալու համար իր առաջարկը (ստացաւ 8 ձայն):

Ընկեր Անտոն առաջարկեց եւ հետեւեալ բանաձեւը՝ այդ հարցին ընդմիջտ վերջ տալու համար.

Պոլսոյ շրջանին 2 պատգամաւոր ունենալու ցանկութեան առթիւ առաջարկել Մանտաթային յանձնաժողովին շտապեցնել, ներկայացնել Ընդհ. ժողովին իր փաստային տեղեկագիրը, բոլոր Կ. մարմինների սակի մասին (դրամական, ռազմական, բարոյական, յեղափոխական եւն) որպէսզի ըստ կանոնագրի ճշդուի ամէն մէկ շրջանի Ընդհ. ժողովին մասնակցող պատգամաւորների թիւը (8 ձայն):

Որոշուեցաւ վերջնութեւ բանաձեւի բովանդակութեան համաձայն գրել Պոլսոյ Կեդր. Կոմիտէին:

Ժողովը փակուեց ժամը 12.30ին:

2. Նիստ

20 Օգոստ. 911 (կէսօրէ ետք)

Ներկայ՝ Բիւրոյի ներկայացուցիչը, Մուշի, Կարինի, Տրապիզոնի, Վանի, Պարսկաստանի, Տիգրանակերտի, Պալքանի, Ամերիկայի, Կեսարիոյ, Ուս. միութեան պատգամաւորները. վճռական ձայնով հրաւիրուածներէն Տիգրան, Բաբա, Աւօ. իսկ խորհրդակցական ձայնով՝ Ասլան, Վահան, Սաթօ, Լեոնեան, Մարգպետ, Ժիրայր:

Նիստը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ասլանի: Ժողովը օրակարգ ունենալով բերանացի եւ գրաւոր փոփոխականութիւն հարցը, նախքան համապատասխան յանձնախումբի գեկուցումը լսելը, յարմար դատուեցաւ լսել, իրենց ընդհանուր գիծերուն մէջ «Դրօշակ»ի եւ «Ազատամարտ»ի խմբագրութեան տեղեկաբերութիւնը: Առաջինին հաշուական մասը վերապահելով յաջորդ նիստին, անոր բարոյական դերին վրայ տեղեկութիւններ տրուեցաւ ընկեր Վարանդեանի կողմէ: «Դրօշակ»ը սկիզբէն կը տարուէր 3 ընկերներով, բայց յետոյ մէկ ընկեր մնաց՝ միւսներուն տեղափոխութեան պատճառով: Թերթին բովանդակութիւնը ճոխացնելու համար ցաւով դիտել կը տրուի որ ոչ մէկ շրջանի ընկեր իր մասնակցութիւնը չէ բերած, մասնաւորապէս Պարսկաստանը, որ վերջերս մեծ կեանք մը ապրեցաւ. նման լայն ուսումնասիրութիւններ պակսեցան նոյնիսկ «Ազատամարտ»ին՝ Թուրքիայէն: Հաշուական մուտքը եղած է շատ աննշան. պահանջ կայ՝ «Դրօշակ»ի ամբողջ հաւաքածուն հրատարակութեան:

Ընկեր Ասլան ձգելով «Ազատամարտ»ի ուղղութեան եւ բարոյական դերին քննադատութիւնն ու գնահատութիւնը ժողովին, յայտնեց որ թերթը ամէն տեղէ լաւ ընդունելութիւն գտած է. անոր խմբագրութիւնը յանձնուած է 5-8 ընկերներու՝ որոնցմէ իւրաքանչիւրը պատասխանատու է իր ստանձնած բաժինին: Թերթը գտնուելով Բիւրոյի անմիջական հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ՝ կարելոր խնդիրները, մասնաւորապէս խմբագրականները, գրուած են անոր գիտակցութեամբ եւ ընկերական խորհրդակցութեամբ: Առաջման սակի փոփոխութեան յետոյ՝ փոխանակ թերթին բաժնեգիրին վրայ մասնաւոր զեղ ընելու, ինչ որ բաւական վնաս պիտի պատճառէր թերթին, խորհուած է Եաբաթաթերթը հիմնել, որ իր բարոյական համեստ դերին հետ նիւթական բաւական յայտնի պակաս մը կը լրացնէ: Վարչութեան կողմէ ընկեր Հրաչ հաշուական գործառնութեանց մասին ընդարձակ տեղեկութիւններ տուաւ, ցոյց տալով երկու տարուայ մէջ թերթին ունեցած ելեւմուտքը, բաժնեգիրներէ եւ այլ կողմնակի հասոյթներէ գոյացած գումարներու քանակը, ելքի ստորաբաժանումները, կազմակերպութեան

ստացած գումարի քանակը թէ Ե. Ընդհ. ժողովէն առաջ եւ թէ անկէ յետոյ, թերթին թիրափոն կրած անկումն ու բարձրացումը եւ այժմեան վիճակը:

Ներկայացուած հաշիւները հետեւեալ պատկերը կը պարզէին.— «Ազատամարտ»ի գոյութեան մինչև 1911 Յունիսի վերջ, 25 ամսուայ ընթացքին, թերթին մուտքը եւ ելքը կը կընէ մօտաւորապէս 1,040,734 դրուշի գումար մը հետեւեալ մանրամասնութեամբ.

Սոււոք	Ելք
Բաժնեգիրներ	430,682
Ճանուցումներ	124,112
Պոլսի հատակաճառութիւն	129,519
Յրատարակչական	8,271
Չանագան հասոյթներ	33,819
Կազմակ. օժանդակութ.	274,162
Տպարանին համար զանազաններ	27,000
Փոխառութիւն զանազաններ	13,169
	1,040,734
Պաշտօնութեան եւ աշխատակիցներու	320,121
Փոսթ, առաքում, քոնթրոլ	203,239
Թուղթ, վարչական խմբագր.	158,553
Օֆիս, հեռագիր, օտար թերթեր, թղթակից եւս	21,436
Տպարանական, Ատոմ Շահէն, պանդ., հրատարակչական	173,147
Նորոգութիւն, դատական	11,647
Վարձք	33,206
Նպաստ, գոմիսիոն, կորուստ եւս	16,929
Կարասիք եւ տպարան	91,202
Կազմ. վերադարձուած հնչիւն	11,296
	1,040,816

Կազմակերպութեան ստացած 274,162 դրուշ գումարէն զեղչելով 11,296 դրուշ վերադարձուածը, ինչպէս նաեւ զեղչելի 10,342 դրուշը — մինչ 1910 Նոյեմբեր օֆիսի, վարձքի եւ այլ կազմակերպական Ծախսերու, որոնք թերթը հոգացած է թէեւ բայց դեռ չէ հաշուակցած — կազմակերպութեան տուած գումարը կ'իջնէ 252,524 դրուշի, մօտ 2338 ոսկի, որուն 700ը տրուած է նախորդ Ընդհ. ժողովէն առաջ (2338 - 700 = 1638), իսկ 348 ոսկին տալ որոշած է Զ. Ընդհ. ժողովը (1638 - 348 = 1290): Այս գումարին դէմ թերթը ունի տպարան մը՝ 844 ոսկի արժէքով եւ 1200 ոսկիէն աւելի գանձելի ապահով գումար մը բաժանորդներէ:

Տեղեկութիւններէն յետոյ եղան հարցումներ՝ որոնց պատասխանուեցան: Ընկեր Վահագն լրացուց «Ազատամարտ»ի տեղեկաբերութեան բաժինը՝ մանաւանդ այն պահուն՝ երբ չորս կողմէ Դաշնակցութիւնը կը հալած-

ւէր: Որպէսզի մեր փրօփականտը թուրք մտաւորական-հասարակական խաւերու մէջ եւս արդիւնք տար, աւելցուեցաւ թուրքերէնի բաժին մը՝ որ ունեցաւ իր օգուտները:

Մախքերու խնայողութեան եւ կուսակցական հրատարակութեանց դիւրացման տեսակէտներէն առաջնորդուած՝ Բիւրոն եւ թերթին վարչութիւնը հետամտեցան սեփական տպարանի մը հիմնումին:

Քննադատութեանց անցնելէ առաջ ընկեր Անտոնի առաջարկութեամբ կարդացուեցաւ Ե՞ Ընդհ. ժողովի կողմէ՝ «Դրօշակ»ի եւ «Ազատամարտ»ի վերաբերմամբ եղած որոշումները, որոնք հետեւեալներն են.

1) Աչքի առաջ ունենալով որ Պոլսում հրատարակւող կիսապաշտօնական թերթի պահանջը դրուած է ոչ միայն Պոլսոյ այլ եւ Թուրքիայի եւ այլ կեդր. մարմինների կողմից, Ընդհ. ժողովը եւս գտնելով նրա օգտակարութիւնը, պարտականութիւն է դնում Թուրքիայի բոլոր մարմիններին վրայ հայթայթել նրա համար անհրաժեշտ միջոցներ: Մանրամասնութիւնները թողնուում է Արեւմտ. ռազմի ժողովին (13 կողմնակից ձայն):

2) Համաձայն սոյն նիստում տրուած նախորդ որոշման, կիսապաշտօնական թերթի օգտակարութիւնը ժողովը գտնում է անհրաժեշտ 1) ունենալ Պոլսում եւ Թիֆլիսում կուսակցական կիսապաշտօնական թերթեր («Ազատամարտ» եւ «Հորիզոն»), 2) Կ. Պոլսոյ եւ Թիֆլիսի թերթերին կուսակցութիւնը պէտք է դրամական նպաստ տայ, որի քանակը չպիտի դուրս գայ Ընդհ. ժողովի որոշած սահմաններից (15 ձայն): 3) Յանձնարարել այդ երկու շրջանների — Պոլսի եւ Թիֆլիսի ռազմական ժողովներին՝ ճշդել երկու վայրի թերթերին նպաստի քանակը եւ հոգալ այդ մասին (18 ձայն):

3) «Թերթը շարունակելու պարագայում՝ յանձնարարուում է թերթերի խմբագրութիւններին՝ պաշտօնական գոյն չտալ իրանց գոյութեան եւ կուսակցութեան պաշտօնական ազդերը պաշտօնական թերթում տպագրուելուց եւ կամ թուղիկներով դուրս գալուց յետոյ միայն տպել թերթերում» (18 ձայն):

Խօսք տրուեցաւ ներկաներուն՝ արտայայտուելու համար օրակարգին վրայ գտնուած հարցին շուրջը:

Անտոն.— Ե՞ Ընդհ. ժողովի որոշումը երկար վիճաբանութիւններէ յետոյ անցեր է: Թերթի օգտակարութիւնը չէ որ վէճի առարկայ կը լինի հոս, այլ անոր վրայ ապօրինի կերպով ծախսուած գումարներու քանակը, քանի որ «Ազատամարտ»ն ալ միւս դաշնակցական թերթերու նման թերթ մըն է: Ընդհ. ժողովը իր նախահաշիւին մէջ նախատեսած է 8000 Ֆր.ի գումար մը յատկացնել թերթին. այդ գումարը կարելի է որ որոշուած քանակութեան մէջ պահել եւ վճարել՝ երբ կուսակցութեան մոտքը մնար նաեւ նախատեսուած սահմաններուն մէջ միայն. այն ինչ կուսակցութեան մոտքը նախատեսուած գումարէն անհամեմատ պակաս ըլլալով

հանդերձ՝ Բիւրոն 8000 Ֆր.ի գումարը նոյնիսկ եռապատկած եւ քառապատկած է: Պոլսը հին ժամանակներէ ի վեր միշտ գաւառը կողոպտեր է յօգուտ իր բարելաման. այժմ ալ նոյն դրութիւնը ստեղծուած կ'երեւի նաեւ մեր կուսակցութեան մէջ. այս ընթացքը մեզ դէպի հնչակեանութեան կ'առաջնորդէ: Ինչո՞ւ հակառակ Ե՞ Ընդհ. ժողովի որոշման աւելորդ գումար պիտի ծախսուէր: Երբ կուսակցական զանազան պէտքերի համար դրամի պէտքը կը զգացուի՝ դրամ չկայ, երբ Սասունն է սովամահ՝ դրամ չկայ. մինչ այդ նպատակներու համար սահմանուած գումարներ «Ազատամարտ»ի վրայ ծախսելու համար դրամ կայ: Այս ապօրինի ծախսերը պատճառ եղած են մեր պիւտճէի խանգարման, մեր զինական, փրօփականտի եւ կազմակերպման գործի կաղացման: Ի՞նչ կ'արժեն մեր որոշումները՝ երբ անոնք պիտի չգործադրուին եւ երբ հակառակ գործողները պիտի չպատժուին: Որոշուած էր մարմիններու լայն մասնակցութիւնը «Ազատամարտ»ին. երբ բացի Ամերիկայէն ոեւէ մարմին չի մասնակցիր այդ ծախսերուն՝ կը նշանակէ թէ այդ ծաւալով թերթ հրատարակելը աւելորդ էր. պէտք է անմիջապէս դադարեցնել կամ ծաւալը փոքրացնել՝ փոխանակ հազարաւոր ոսկի ծախսելու կազմակերպութեան արկղէն: Յոյց կը տրուի որ 1700 ոսկի առնելիք ունինք. բայց այդ գումարը ինձ համար ընդունելի չէ, քանի որ անոնց գանձումը հաւանական չէ, լոկ պատկեր են անոնք: Թերթին թիրափին անկման պատճառը նոյն ինքն «Ազատամարտ»ը չէ՞ր արդեօք: Եթէ Բիւրոն իր ունեցած միջոցները անոր վրայ չծախսէր, «Ազատամարտ» ստիպուած պիտի ըլլար ուրիշ միջոցներու դիմել: Կ'առաջարկեմ պատասխանատուութեան տակ կանչել Բիւրոն եւ թերթին վարչութիւնը եւ տրուած աւելի գումարները ետ պահանջել:

Վահագն (Բիւրոյի կողմէ).— Եթէ պատասխանատու մը կայ՝ Բիւրոն [է] եւ ոչ թէ թերթին վարչութիւնն ու խմբագրութիւնը, քանի որ դրամները տուողը Բիւրոն է եղած: Սխալ է Ե՞ Ընդհ. ժողովէն յետոյ տրուած գումարի քանակը չափազանցուած համեմատութիւններու հասցնել. կազմակերպութեան տուած գումարին քանակը — գեղջելով հաշուակցուած եւ հաշուակցուելիքները — կը հասնի 2300 ոսկիի, որուն 700ը տրուած է նախորդ Ընդհ. ժողովէն առաջ եւ իբրեւ կատարուած իրողութիւն ընդունուած, 350 ոսկի ալ տալ վերջին Ընդհանուր ժողովն է որոշած. ուրեմն տրուած աւելորդ գումարը 1300 ոսկի է, որուն դէմ այսօր գոյութիւն ունի 850 ոսկի արժէքով տպարան մը՝ կազմակերպութեան սեփականութիւն, եւ 1200 ոսկիի պահանջով գանձելիներ. թող որ թերթի հիմնումի պահուելու 30,000 Ֆրանքի գումար մը վճարել նախատեսուած է: Բիւրոն, համաձայն Ընդհ. ժողովի որոշման, դիմեց կազմակերպութեան Կ. կոմ.ներուն, որոնցմէ միայն Ամերիկա հասաւ օժանդակութեան, մնացեալները իրենց անկարողութիւնը յայտ-

նեցին: Այս պայմաններու մէջ որքա՞ն պատուաբեր էր թերթը գոցել, երբ անոր օգտակարութիւնը անառարկելի էր պայքարի այդ հրատապ օրերուն — այդ տեսակ քայլ մը կազմակերպութեան անկումին հաւասար պիտի ըլլար: Ներկայի պատկերը միտիթարական է եւ թերթը, յուսալի է որ, իր տպարանով եւ սպառումով ոչ միայն իր գոյութիւնը պիտի կրնայ ապահովել այլեւ պիտի կրնայ իր պարտքերը վերադարձնել կազմակերպութեան մաս առ մաս:

Վիճաբանութեանց շարունակութիւնը վերապահելով յաջորդ նիստին, ժողովը փակուեցաւ:

Նիստ է.

22 Օգոստ. 911 (Երկուշաբթի առտու)

Ներկայ Տրապիզոնի, Պալքանի, Ուս. միութեան, Կեսարիոյ, Կարնոյ, Պոլսոյ, Սեբաստիոյ, Պարսկաստանի, Տիգրանակերտի, Վանի պատգամաւորները, ինչպէս նաեւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը. վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն՝ Սիսեան, Տիգրան, Բաբա, Աւօ. խորհրդակցական ձայնով՝ Ասլան, Սաթօ, Մար, Վահան, Լեռնեան, Մելօ. ընդամէնը 15 վճռական ձայն, 8 խորհրդակցական ձայններ:

Կարդացուեցաւ Գ. եւ Դ. նիստերու արձանագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Չեկուցումն գրաւոր եւ բանաւոր փրօփականտի յանձնախումբին.— Յանձնախումբը առանց անդրադառնալու այդ երկու տարուան մէջ մղուած բանաւոր եւ գրաւոր փրօփականտին առաւելութիւններուն կամ պակասութիւններուն՝ ներկայացուց հետեւեալ առաջարկ-եզրակացութիւնը:

1) Դրօշակ.— Վերածել զայն ամսական հանդէսի, 100-120 էջ ծաւալով, տեղ տալու համար քաղաքական, տնտեսական, հասարակական եւ երկրի ուսումնասիրութեան վերաբերող երկարաշունչ յօդուածներու:

2) Կիսապաշտօնական թերթեր.— Այն բոլոր թերթերը, որ կը հրատարակուին կազմակերպութեան կամ ընկերներու օժանդակութեամբ, անպայման պէտք է ունենան դաշնակցական աշխատակողական ուղղութիւն: Յանձնախումբը համոզուած է որ այդ ուղղութիւնը կարելի է պահել այն ժամանակ միայն, երբ մտաւորական ուժերու հաւասար բաշխում ըլլայ զանազան մարմիններու վրայ եւ խմբագրական մարմինը ազատուած՝ վարչական գործերէ:

3) Հրատարակութիւններ.— Բանաւոր պրոպականտը յաջող կերպով առաջ տանելու համար պէտք է անոր գուզութեամբ եւ սխտեմաթիկ կերպով առաջ տարուի նաեւ գրաւոր փրօփականտը, դասախօսութիւնները

աստիճանական դասաւորութեամբ հրատարակելով առանձին գրքոյկներու մէջ: Այս գրքոյկներու հրատարակութեան ատեն ամէն ջանքի գործ դնել լեզուն մատչելի դարձնելու համար կիսախտելիգետ դասին օգտակար ըլլալու նպատակով:

4) Բերանացի պրոպականտ.— Այն կեդրոններուն մէջ ուր հնարաւոր է, ինչպէս օրինակ Պոլսի մէջ, ունենալ կուսակցական պրոպականտիստներ պատրաստելու դասընթացներ, որոնք տեւեն առնուազն ինն ամիս: Այս դասընթացին պիտի մասնակցին միջնակարգ կրթութիւն ստացած կամ ինքնագրագամամբ այդ աստիճանին հասած անձեր: Յանձնախումբը կ'առաջարկէ նաեւ ուժեղացնել բանաւոր պրոպականտը ա) լուսաբանելով օրուայ ինդիւրները կուսակցական տեսակէտով բ) կազմակերպել մեր ընկերներուն համար սխտեմաթիկ դասախօսութիւններ, բացատրելու համար կուսակցութեան թէ՛ ծրագրային եւ թէ՛ փիլիսոփայական աշխարհահայեացքը. գ) բոլոր դաշնակցական իրաւասու մարմինները պարտաւոր են հսկել, որ պրոպականտը չտարուի խակ եւ անպատրաստ անձերու ձեռքով՝ որուն անխուսափելի հետեւանքը կ'ըլլայ փոխանակ շինելու քանդել գործը:

Նախագահը դիտել տալով որ զեկուցանող յանձնախումբը իր առաջարկ-բանաձեւը լաւ չէ պատճառաբանած, ինչպէս նաեւ կը պակսի այդ զեկուցման մէջ անցեալ երկու տարուան աշխատութեանց եւ յառաջիկային գործ դրուելիք աշխատութեանց բաղդատական տարբերութիւնը իրենց առաւելութիւններով ու թերութիւններովն հանդերձ, թելադրեց որ առհասարակ բոլոր զեկուցանող յանձնախումբերը իրենց առաջարկները պատճառաբանուած եւ լաւ բանաձեւուած ներկայացնեն, որպէսզի ժողովը դիւրութիւն ունենայ արտայայտուելու:

Լսուեցաւ «Դրօշակ»ի խմբագրութեան տեղեկաբերութիւնը թերթի տնտեսական եւ բարոյական վիճակի վրայ, ուրկէ պարզուեցաւ որ խնայողական նկատումներով տարուան ընթացքին թերթը միացեալ թիւերով լոյս տեսած է. տարին մօտ 8 թիւ՝ փոխանակ 12ի, 6000-ական օրինակ թիրափով: Հրատարակուած է 2000 օրինակ 5-8 գրքեր, որոնք բաւական սպառում ունեցած են: Աւելին կարելի չէ եղած ընել՝ դրամական թէ՛ ուժերու սակաւութեան պատճառով, թէ՛ եւ պահանջը աւելին ընել կը հարկադրէր:

Ազատութեան մատենադարանի յանձնախումբի հաշուետուութիւն-տեղեկաբերութեան տեսնուեցաւ որ մօտ 3500 ոսկիէն աւելի արժէքով գիրքեր կը մնան պահեստին մէջ, «Յառաջի», «Դրօշակ»ի, «Հայրենիք»ի եւ «Ազատութեան Մատենադարան»ի հրատարակութիւններէն: Նոր գրքեր հրատարակուած են ընդամէնը 7-8 կտոր: Գրքերու ցրուումը եւ տարածումը եղած է անկանոն եւ անհամապատասխան տրամադրելի գրքե-

րու արժեքին. վաճառող մարմինները թերացած են վաճառման եւ վճարման գործառնութեանց մէջ, տեղի տալով դրամական կորուստներու եւ մեծագումար ապահովներու: Յանձնախումբը կ'առաջարկէ միջոցներ՝ յառաջիկայ տարեշրջանին մէջ գրքերու տարածման գործը սիւստեմաթիկ յառաջ տանելու համար: Իբր լրացում ընկեր Տիգրան դիտել կու տայ թէ իր այցելած վայրերուն մէջ տեսած է որ մեծ քանակութեամբ գրքեր եւ պատկերներ երեսի վրայ կը մնան, այնպէս որ աւելի օգտակար պիտի ըլլար զանոնք հաւաքել ծովեզերեայ վայր մը, ուրկէ ճամբորդներու միջոցով կարելի էր դիւրութեամբ փոխադրել հարկ եղած տեղը: Դրոշակի բաժանորդներէն ոմանք թերթ չեն ստանար, մինչ տեղ տեղ ալ դրկուած ծրարները կը մնան մարմիններուն մօտ՝ առանց ցրուելու: այս պայմաններուն մէջ չենք կրնար ըսել որ հրատարակուած 8000 օրինակները կը սպառին:

Որպէսզի կարելի ըլլար Դրոշակի մասին հանգամանորէն արտայայտուիլ, խմբագրութիւնը հաշուական տեղեկութիւններ հաղորդեց — մանրամասնութիւնները ձգելով հաշուեքննիչ յանձնախմբին — որուն համաձայն Դրոշակի իւրաքանչիւր համարին վրայ կը ծախսուի մօտ 1000 Փր. այնինչ երկու տարուայ ընթացքին հազիւ 1500-2000 Փր. մուտք եղած է ի հաշիւ բաժնեգրիներու:

Առաջարկուած խնդիրներու շուրջ հետեւեալ արտայայտութիւններն եղան:

Ատտմ.— Ազատութենէն յետոյ «Դրոշակ»ը այն դերը չի կատարեր՝ ինչ դեր որ կը կատարէր առաջ: Այժմեան «Դրոշակ»ը եթէ տեսական խնդիրներու իր բովանդակութեամբ լաւ խմբագրուած է, բայց մատչելի չէ մեր շարքերուն: Այս տեսակ հրատարակութիւն մը բնականաբար արդիւնաւոր չի կրնար ըլլալ: Ասկէ յետոյ «Դրոշակ»ը պէտք է դարձնել հանդէս, ուր ոչ միայն տեսական հարցեր շօշափուին, այլ եւ կուսակցական այլ խնդիրներ, մեր յեղափոխական պատմութեան եւ անցեալի համար նշանակութիւն ունեցող նամակ-դժբիւմաններ, կուսակցական կեանքը պատկերացնող գրութիւններ:

Վահան.— Հանդէսի վերածելու գաղափարին համար միտ է աշխատակիցներ եւս կարելի է ճարել. հանդէսը պիտի ունենայ նաեւ վիճաբանական բաժին: Անհրաժեշտ է նաեւ գուտ կուսակցական օրաթերթի մը գոյութիւնը, որ առօրեայ ընթացիկ խնդիրներու լուրջ արտայայտուէր: Հրատարակելու է նաեւ ամսական տեսարակներ՝ որ պատկերացնէ կուսակցութեան ներքին կեանքը՝ զանազան շրջաններու մէջ: Յետոյ անհրաժեշտ է նաեւ թուրքերէն լեզուով կուսակցական թերթի մը գոյութիւնը:

Տիգրան.— «Դրոշակ»ի ներկայ վիճակը համապատասխան չէ նախորդ Ընդ. Ժողովի ցանկութեան. հարկ է որ ան ճոխանար. ներկայ վիճակէն լաւ չէ տպաւորուած գաւառը: Կարելի է նաեւ հրատարակել հին հաւաքածոներ որոնք սպառուած են եւ որոնց մեծ պահանջ կայ:

Աւլան.— Ընդհանուր իմացական զարգացման անհրաժեշտութիւնն ունինք. եւ այդ բանը կը սպասուի Դրոշակցութենէն: Ուրեմն «Դրոշակ»ը վերածելով հանդէսի մը, պէտք է որ ան ըլլայ ընդհանուր իմացականութեան արտայայտիչը: Եւ որպէսզի «Դրոշակ»ը չզրկուի միեւնոյն ատեն իր գուտ կուսակցական բովանդակութենէն, յայտարարութիւններ, նուիրատուութիւններ եւ այլ կուսակցական խնդիրներ՝ հրատարակել արտասահմանի մէջ եւ կցել բուն հանդէսին, այս վերջինը հրատարակելով Պոլիս:

Գրգօ.— Եթէ շրջաններու հաշիւները աչքի առջեւ ունենանք՝ պիտի տեսնենք որ բաւական գումար գանձուած է, սակայն «Դրոշակ»ի խմբագրութիւնը նկատուի ունի միայն իր ստացածները: Այդ գումարներուն կանոնաւոր առաքումը պարտադրելով՝ պիտուէին մէջ որոշ հաւասարակշռութիւն կարելի է մտցնել:

Կարազեան.— «Դրոշակ»ը հրատարակել ընդհ. իմացական պահանջներուն գոհացում տալու մտքով՝ կուսակցական օրկան ըլլալէ դադարեցնել կը նշանակէ: Իսկ անոր փոխադրութիւնը Պոլիս կը նշանակէ եւթարկել զայն այստեղի հոսանքներուն եւ փոփոխական պայմաններուն: Առանց մասնաւոր բաժանորդագրութեան եւ անոր շօշափելի արդիւնքին՝ կարելի չէ «Դրոշակ»ի հին հաւաքածոները հրատարակելու ձեռնարկել, որ շատ մեծ ծախք կը պահանջէ:

Ատտմ.— Կը կարդայ Պոլսոյ Երջանային ժողովի առաջարկները որ հետեւեալն է.— «Ընդարձակել «Դրոշակ»ի ծաւալը, տալով անոր ընկերվարական ճոխ հանդէսի մը բովանդակութիւնը, ուր պատկերանայ ո՛չ միայն միջազգային քաղաքական-տնտեսական կեանքը, այլ եւ մեր կուսակցութեան ծոցին մէջ նկատուող կազդուրիչ երեւոյթները, որոնց ընթացումը ըլլայ հետաքրքրական կուսակցութեան բոլոր խաւերուն համար եւ առհասարակ: Դրոշակի բովանդակութեան մասին եղած գանգատները նոր չեն: Եթէ նախկին ռեժիմին օրով անիկա օգտակարութիւն մը ունեցեր է, այն պարզ պատճառով որ միաժամանակ կատարեր է յեղափոխական օրաթերթի մը դերն ալ: «Դրոշակ»ը պիտի ծառայէ կուսակցական շարքերու դաստիարակութեան, առանց յաւակնելու ընդհանուր իմացական-դաստիարակութեան խնդիրներու մէջ մտնելու: Յօդուածներուն վճարելու գաղափարը ընկերներուն մէջ կը մեծցնէ զոհողութեան գաղափարը: Տեղափոխութեան հարցը առաջ կու գայ պիտուէի հարցէն, ոչ թէ հրատարակութեան դժուարութենէն: Յետոյ պէտք չէ մոռնալ որ թերթը կուսակցութեան ընդհանուր օրկանն է — եւ թուրքիոյ եւ Պարսկաստանի եւ Ռուսիոյ, որոնց իւրաքանչիւրը տարբեր պայմաններ ներկայացնելով՝ չէ կարելի թերթը մէկին կամ միւսին պայմաններուն ենթարկել:

Նշան.— Ծոխացման առաջարկին համարիտ ըլլալով՝ փոխանակ «Դրոշակ»ի հաւաքածուն հրատարակելու,

լաւ կ'ըլլայ անոր մէջէն կարելի կտորներ [ընտրել] ու հրատարակել, ինչպէս նաեւ իրականացնել ալպոմի գաղափարը, զայն հրատարակելով պրակ առ պրակ: Ներկայ վիճակով՝ «Դրոշակ»ին համար բաժնեգրին գանձել դժուար պիտի ըլլայ, իսկ եթէ բաղձացուած ձեւով հանդէս մը ըլլայ ան՝ կարելի է նպաստաւոր պիտուէ մը ունենալ: Գալով ընդհանուր իմացականութեան հետ կապուած պահանջին՝ կարելի է տարբեր ձեւով մը գոհացում տալ, օրինակ ճոխացնելով «Ազատամարտ» շաբաթաթերթը:

Անտոն.— Որքան ատեն որ թերթը ճրի ըլլայ, այնքան ատեն հրատարակուած օրինակները չպիտի ցրուուին, պիտի մնան հոս ու հոն:

Մենք ոչ թէ թերթին թիրաժը մեծ ըլլալուն համար պիտի ոգեւորուինք, այլ անով թէ որքան կը գնահատուի ուղղակի բաժանորդագրութեամբ եւ հնչիւն փոխարինութեամբ. վեց ամսուայ մէջ 7000 Փր. ծախք եղած է, փոխարէն 275 Փր. միայն ստացուած. ասիկա արդիւնք է պատրաստ դրամի գոյութեան, որուն վստահելով խմբագրութիւնը իր կողմէ ջանք չէ թափած բաժնեգրիներու գանձման եւ նիւթական այլ աղբիւրներու ստեղծման համար: Երբ թերթը կ'ընթի իր իսկ պիտուէին վրայ՝ պարտաւորուած պիտի ըլլայ անոր բովանդակութիւնն ալ ճոխացնելու՝ ի հաշիւ տարածման: «Դրոշակ»ի ներկայ վիճակին պատճառներէն մէկն ալ կուսակցական կողմնակի թերթերու գոյութիւնն է. մինչեւ որ առօրեայ այդ թերթերու վրայէն կուսակցական հանգամանքը չվերնայ՝ «Դրոշակ»ի դիրքը չի փոխուի: Վճարելու դրութիւնը ընդունելու է, քանի որ գործներու մեծագոյն մասին հասոյթի աղբիւրը այդ է. մանաւանդ այս պարագային յօդուածներու վերաբերմամբ աւելի խստապահանջ կրնանք ըլլալ: «Դրոշակ»ը կը մնայ գուտ կուսակցական թերթ առանց գրական հանդէս ամսագրի ձեւ ստանալու:

Վահան.— «Դրոշակ»ի պակասութիւններէն մէկն ալ հետու ըլլալն է երկրէն. հետեւաբար անոր խմբագրութիւնը ու խմբագիրները պէտք է ըլլան երկրին մօտ: «Դրոշակ»ի վերաբերմամբ մեր բռնելիք դիրքը կախած է մեր պիտուէնէն. իսկ այդ պիտուէն կը խօսի ի նպաստ իննադրութեան: Այդ իննադրութիւնը կրնայ տեղի ունենալ՝ զայն Պոլիս փոխադրելով, ուր սեփական տպարան եւ այլ յարմարութիւններ կան: Այսպէսով փոխադարձ գործունէութեան վրայ ընդհանուր քոնթրոլ մըն ալ եղած կ'ըլլայ: Այս բոլորին հետ կ'ընդունի կուսակցութեան օճախին պահանջումը՝ ժընեւի մէջ:

Լեւոնեան.— «Դրոշակ»ը փոխադրելով ծախքերու կրճատում չ'ըլլար, որովհետեւ ժընեւի մէջ աւելի քիչով կրնան ապրիլ ընկերները: Ուժերու կեդրոնացման գաղափարն ալ գոյութիւն չունի, քանի որ նոյն այն ընկերները որ «Դրոշակ»ը պիտի խմբագրեն՝ դարձեալ անով պիտի զբաղին: Եթէ այդպէս չ'ըլլայ՝ պիտի կլանուին

միւս աշխատանքներով՝ ինչ որ իրենց բուն աշխատանքին տկարութիւնը կ'ենթադրէ: Մենք Դրոշակցութեան մասին խօսած ատեններս՝ միայն թրքահայ հատուածն է որ աչքի առջեւ կ'ունենանք, առանց նկատի առնելու միւս երկիրներու պայմանները: Պոլիսը դեռ յեղափոխական օրկանի մը առանձնայատուկ խօսքի ազատութիւնը չ'ընծայեր, մանաւանդ մենք պիտի արտայայտուէինք նաեւ Ռուսիոյ դէմ, ինչ որ Պոլսոյ մէջ հնար չէ. յետոյ թերթը ընդհանուր կուսակցութեանն է: Կայ նաեւ միջազգային ընկերվարական կեանքին հետ շփման պարագան: «Դրոշակ»ը պէտք չէ որ անպատճառ պարբերական ըլլայ՝ որպէսզի անխնամ հրատարակութիւններէ խուսափի. կարելի է պարագաներու տակ կարելի է թուուցիկ հրատարակել:

Վարանդեան.— Ուրախ եմ որ ժողովը կարելորութիւն կու տայ կուսակցական գրականութեան: Սակայն իր կարծիքն է չափազանցութեան մէջ չիյնալ, եղած ուժերը տրուած աշխատանքներուն հետ բաղդատելով անբաւական եղած են հազիւ այդքանն ալ ընել յաջողելով, որովհետեւ կուսակցական այլ կարելոր աշխատանքներ ալ միաժամանակ ստիպուած են տանիլ. ամիսներով նոյն իսկ հեռանալ ժընեւէն. թերթը տեսական դարձած է, որովհետեւ Ընդհ. Ժողովը այդպէս որոշած է, եւ թերթի բովանդակութիւնը համապատասխան է գժուած ուղղութեան:

Հարցը սպառած չլինելով՝ վիճաբանութեանց շարունակութիւնը վերապահուեցաւ յաջորդ նիստին:

Նիստ Ը.

22 Օգոստ. 911 (Երկուշաբթի կէսօրէ ետք)

Ներկայ՝ Ամերիկայի, Տրապիզոնի, Պարսկաստանի, Սեբաստիոյ, Կեսարիոյ, Պալքանի, Կարնոյ, Ուս. միութեան, Վանի, Տիգրանակերտի պատգամաւորները եւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը: Վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն՝ Սիսեան, Աւօ, Տիգրան եւ Բարա: Խորհրդակցական ձայնով՝ Ակնունի, Սաթօ, Մարգարէ, Վահան (Օսմ. երեսի-), Ասլան, Մելօ, Մար, Ժիրայր:

Բանալիի Կեդր. Կոմիտէն⁹ նամակով մը կ'իմացնէր ժողովին՝ ընտրութիւնը իր պատգամաւորին, որ ժողովի վայրը կը գտնուի: Այս առթիւ մանտաթային յանձնախումբի տեղեկաբերութեան կցուեցաւ Բիւրոյի տեղեկաբերութիւնները եւ թեր ու դէմ արտայայտութիւններէ յետոյ որոշուեցաւ անոր մասնակցութիւնն

9.- Բանալի՝ Սամսոնի եւ Մարգարէի շրջանն է:

եւս՝ վճռական ձայնով. ընտրուած պատգամաւոր ընկերը՝ այս ժողովին իսկ մասնակցեցաւ նիստերուն: Այսպէս՝ ժողովը բացուեցաւ 18 վճռական եւ 9 խորհրդակցական ձայներու մասնակցութեամբ եւ նախագահութեամբ ընկեր Ակնունիի:

«Դրօշակ»ի բովանդակութեան մասին արտայայտուելու կրկին փափաք յայտնուելով խօսք տրուեցաւ:

Միտան.— Նախ պէտք է քննել այն պատճառները թէ ինչո՞ւ «Դրօշակ»ը չի կարգացուիր, երբ անցեալի մէջ կը կարգացուէր:

«Դրօշակ»ը կարգացուելու համար պէտք է գաղափար դնել անոր մէջ. ներկայիս ինչ որ «Դրօշակ»ը կու տայ, կուտայ նաեւ «Ազատամարտ»ը. տեսական հարցերու մասին Ռուսաստանի մէջ [կայ] ամէն դիւրութիւն ընթերցանութեան. ի՞նչ հարկ այլեւս «Դրօշակ»ը կարողալ, որուն հետ կապուած է վտանգներ: «Դրօշակ»ը Դաշնակցութեան արտայայտիչ օրկանն է, հետեւաբար այն դերը որ կը կատարէր անցեալի մէջ Թուրքիոյ վերաբերմամբ պէտք է ընէ այժմ Ռուսաստանի եւ կովկասի վերաբերմամբ: Ան պէտք է ըլլայ մարտական օրկան, ուր շօշափուած տեսական հարցերը [ըլլան] չափաւոր, որ պարունակէ մարտական շունչով գրական յօդուածներ: Ներկայ բովանդակութեամբ մենք երբեք չենք կրնար վարել ժողովուրդը:

Ատոմ.— Հէնց այդ մարտական շունչը անաղարտ պահելու համար ալ կ'ուզուի թերթը մեր գործունէութեան շրջաններէն դուրս պահել:

Ակնունի.— Այս տարուայ «Դրօշակ»ը խմբագրուած է համաձայն նախորդ Ընդհ. ժողովի որոշման: Եթէ կ'ուզուի «Դրօշակ»ը դարձնել կենսունակ, հարկ է պահել ամօրեայ: Սակայն մեր ներկայ պիտոճէով եւ կրկին ծաւալով, աշխատակիցներուն ալ վճարելու պայմանով թերթը չենք կրնար հրատարակել արտասահմանի մէջ:

Ժողովը կրկին անցնելով բանաձեւերու նկատառութեան, քուէարկութեան ենթարկեց Վահագնի հետեւեալ բանաձեւը «Դրօշակ»ի բովանդակութեան վերաբերմամբ:

Ա. Բանաձեւ.— Ժողովը բաղձանք կը յայտնէ, որ «Դրօշակ»ը պահելով հանդերձ իր դիրքը, ընդարձակուի անոր ծաւալը ու բովանդակութիւնը, մանրամասնութեանց ճշդումը ձգելով յանձնախումբի մը (4 ձայն):

Բ. Բանաձեւ.— Քուէարկութեան ենթարկուեցաւ նաեւ ընկեր Վարանդեանի եւ Անտոնի միացեալ հետեւեալ բանաձեւը.

1) «Դրօշակ»ը հրատարակուի է ամէն ամիս, նոյն դիրքով եւ կրկնակ ծաւալով: Նա անպայման պիտի ունենայ իր տեսական եւ մարտական-գրական բաժինը. միաժամանակ տեղ է տալիս եւ լուրջ ու ամփոփ տեղեկագրերի մեր երկրի տնտեսական ու սոցիալական եւ յեղափոխական-պատմական վիճակի մասին: Կուսակցութեան գրող ուժերին պարտաւորեցնում է աշխատակցել

(13 ձայն): 2) Բացարձակապէս կը վերցուի թերթին ճրի տարածումը եւ կ'ուղարկուի միմիայն արժէքը վճարողներին (15 ձայն): 3) «Դրօշակ»ը կը հրատարակուի մեր գործունէութեան վայրերէն դուրս (12 ձայն):

Վիճաբանութիւն եւ բանաձեւ «Ազատամարտ»ի շուրջ.— Ընկեր Անտոնի հիմնուելով նախորդ նիստին մէջ իր ըրած քննադատութիւններուն վրայ, կ'առաջարկէ՝

1) Ե՞ւ Ընդհ. ժողովի որոշած 8000 Ֆրանքէն աւելի ծախսուած գումարը համարել ապօրինի եւ պահանջել զայն վերադարձնել գործնական միջոցներով: Այդ պարտքին պատասխանատու համարել Բիւրոյի, խումբագրութեան եւ վարչութեան անդամները: 2) Շաբաթաթերթը դադրեցնել՝ գաւառի խուլ անկիւններու բաժնեգիրները գեղջելով փոխարէնը: 3) Դաշնակցական համարուած թերթերու (Ազատամարտ, Հայրենիք, Յաւաջ, Առաւօտ, Աշխատանք) մէջ տպուած յօդուածները համարել այն չափով կուսակցական՝ որչափով որ անոնք ամբողջովին կամ առանձին կը կրեն կուսակցական համապատասխան մարմիններու ստորագրութիւնը:

Վահագն.— Անտոնի առաջարկն ու քննադատութիւնը «Ազատամարտ»ի վերաբերմամբ — ինչպէս նախորդ ժողովի մէջ ալ յայտնեցի — անհամապատասխան է իրականութեան, որովհետեւ Պատասխանատու մարմինը արդէն 7000 ոսկի ծախսեր էր, անկէ յետոյ որոշուած է Ե. Ընդհ. ժողովի 8000 Ֆրանքը, իսկ ասոնց դէմ կայ 800 ոսկի արժող տպարանը եւ 1200 ոսկիի գանձելի ապահով գումարները: Աւելցնենք նաեւ որ թերթը եղած է մեր միակ փրոփականտիսթը, անոր բարոյական ազդեցութիւնը, անոր կատարած դերը անուրանալի է: Տարբեր խնդիր որ որոշուած գումարներէն աւելի տրուածները մաս առ մաս վերադարձուի:

Արամ.— Դրամական խնդիրը քննադատելէ աւելի լաւ կ'ըլլայ որ մէկ քանի տարուայ ընթացքին մէջ վերադարձնելու որոշում տրուի: Անցնելով թերթին բովանդակութեան, կը տեսնենք որ անխնամ տեղեկութիւններ եւ յօդուածներ կը գետնադուրս հոն, որոնք չեն պատշաճիր մեր կուսակցութեան կշիռին: Մեր թերթը հրատարակուելով Պոլսոյ մէջ՝ աւելի տարուած է պոլսական վէճերով եւ պոլսական խնդիրներով, փոխանակ աւելի լայն տեղ տալու գաւառի պէտքերուն: Պայքարի ընթացքին մեր թերթը չմնաց քաղաքացիական բարձրութեան վրայ, ինչ որ անհրաժեշտ էր՝ օրինակ հանդիսանալու համար նոյնինքն հակառակորդներուն: Ընդհանրապէս մեր թերթը կեանքի երեւոյթներուն չէ մօտեցեր կուսակցական տեսակէտներով, այն ինչ բոլոր երեւոյթներուն ան պիտի մօտենար ա՛յդ ակնոցով: Մեր նպատակն ըլլալով աւելի պակասութեանց վրայ ծանրանալ, անոր առաւելութիւններուն վրայ կանգ չեմ առներ, որ անուրանալի է, ոչ ալ անոր կատարած դերին վրայ — թերթը միակ կենդանի փրոփականտիսթը եղած է եւ Դաշնակցութեան գաղափարները ներմու-

ծած է հոն՝ ուր ոչ մէկ դաշնակցական մտած է: Ասկէ յետոյ կը մերժենք դրամական ունէ՛՛ նպաստ տալ, իսկ պարտքերու համար կ'ընդունինք եղած առաջարկը: Թերթը իր առաջիկայ կեանքին մէջ ունենալու է խնամուած բովանդակութիւն, հետու մնալով անձնականութիւններէ:

Ատոմ.— «Ազատամարտ»ի կատարած հանգանակութիւնները անոր գոյութեան իրաւունքին արդարացումը չեն կրնար ըլլալ: Երբ կը յայտարարուի որ կուսակցութիւնը պատասխանատու չէ թերթին վերաբերմամբ՝ անբնական կ'ըլլայ եւ սխալ — կամ թերթը պիտի հետեւի կուսակցութեան աշխարհահայեացքին եւ պիտի մնայ պատասխանատու, կամ պիտի մնայ անկախ: Մէկ կողմէ այսքան նպաստներ տալ միւս կողմէ անոր պատասխանատու չըլլալ՝ անբնական է: Միայն հոն է որ նախորդ Ընդհ. ժողովը չէ զբաղած խմբագրական կազմի իրաւասութիւններու եւ պատասխանատուութեանց ճշդումով: Խմբագրութեան մէջ կան կուսակցութեան աշխարհահայեացքին ոչ-հիմնովին ծանօթ ընկերներ. այս անպատասխանատուութիւնը ազդած է նոյն իսկ անոր բովանդակութեան վրայ. ան կրած է աւելի անհատական դրոշմ, յաճախ տուած է սխալ լուրեր եւ կուսակցութեան աշխարհահայեացքին հակասող յօդուածներ, եւ այս պայմաններուն մէջ թերթը եղած է աւելի ազատական կուսակցութեան արտայայտութիւն քան թէ Դաշնակցութեան: Այս բոլոր սխալները կը վերնան այն ատեն՝ երբ թերթը կը պատկանի Թուրքիոյ ռայոնական ժողովին եւ խմբագրական մարմինն ալ կ'ընտրուի անկէ, ինչպէս նաեւ վարչականը, առանց Բիւրոյի միջամտութեան:

Արամ.— Ընկեր Ատոմի յայտնած կարծիքները խիստ էին եւ վիարաւորական. եթէ «Ազատամարտ» եղած է անհատական թերթ, աւելի Ատոմին կը պատշաճի այդ մեղադրանքը, քանի որ ամէնէն աւելի շատ ան երեւցած է թերթին մէջ:

Արագպետ.— Թերթին վրայ ծախսուած գումարները այնքան ալ անուշադրութեան առնուելիք խնդիր մը չէ, կուսակցութեանը նիւթական պատճառներու մէջը բերումով գործել չէ կրցած հոս հոն, մինչ թերթին վրայ ծախսելու դրամ գտած է: Եթէ կուսակցութեան որոշումները պիտի չյարգուին՝ հարկ չկայ ուրեմն որոշումներ քուէարկելու:

Վահագն.— Այն օրէն որ ընկերներու կողմէն նկատուութիւն եղած է թերթին բովանդակութեան վերաբերմամբ՝ նկատի առնուած է: Խմբագրական կազմը պատահական անձնաւորութիւններէ կազմուած չէ, այլ ընկերներու փոխադարձ հաճութեամբ հրաւիրուածներէ. եղած քննադատութիւնները եւ դժգոհութիւնները աւելի անհատական դրոշմ կը կրեն եւ արդիւնք են անհատական տրամադրութիւններու եւ նախասիրութիւններու:

Վարանդեան.— Առանց ակնարկներու՝ պէտք է համաձայնիլ որ տրուած աւելորդ գումարները վերադարձուելու են մաս առ մաս: «Ազատամարտ»ը ուղղութեան տեսակէտէն ունի շատ մը պակասաւոր կողմեր, ան պէտք է ըլլայ աւելի բարձր, լուրջ եւ հետեւողական մանաւանդ երբ խնդիրը կուսակցութեան աշխարհահայեացքին կը վերաբերի: Ես ալ վրդովումով դիտած եմ սկզբունքային խնդիրներու շուրջ տեղի ունեցած շեղումները, ինչպէս պուրժուա տարրերին ալ մեր շարքերուն մէջ առնելու կամ անոր գերակշիռ դիրքի շուրջ գրուած յօդուածները: Թերթը բաղձալի իտէականութենէն հեռու է, գոր պէտք է դարձանել յառաջիկային: Միւս կողմէ՝ Թուրքիոյ պայմանները նկատի առնելով եւ օրաթերթի հանգամանքը՝ փոքր խնդիրներու վերաբերմամբ այնքան ալ խիստ ըլլալու չէ:

Տիգրան.— Առանց Բիւրոյի դրամական աջակցութեան թերթը պիտի դադրէր. իսկ թերթին դադարումը Դաշնակցութեան անկումն ըսել էր: Ճիշդ է որ Արեւմտ. Բիւրոն դէմ գացեր է Ընդհ. ժողովին, բայց երբ չբերէր հարկ եղած աջակցութիւնը, թերթը պիտի դադրէր: Այո՛, կարելի էր մէկ-քանի գործիչ աւելի դրկել գաւառները, բայց թերթին գոյութիւնը տրուած պայմաններու մէջ աւելի կարեւոր էր: Թելութիւններ գործուեր են խմբագրութեան կեանքին մէջ, սակայն ներողամիտ աչքով դիտելու է գանոնք, քանի որ այնպիսի անպատկառ հակառակորդներէ շրջապատուած ենք որ մարդ ակամայ իր պայքարի ընթացքին շեղումներու մէջ կ'իյնայ:

Լեւոնեան.— Այն ընկերները որոնք դրամական նպաստին դէմ խօսելով հանդերձ միջոց չկրցան ցոյց տալ, թերթին անհրաժեշտութիւնը ընդունած եղան, նաեւ այն՝ որ Բիւրոն ուրիշ կերպ չէր կարող վարուել: Կուսակցութիւնը մենակ «Ազատամարտ»ն ունէր իր օղորդութեան մէջ թերի է, կամ կեղրոնական ուղղութիւնը կը բացակայի: Թերթը կուսակցական է. այս մասին կասկած չկայ. հետեւաբար իբր այդպիսին իր կուսակցական ուղղութիւնը պիտի ունենայ. ասոր պատճառն ալ խմբագրական մարմինն մէջ պէտք է փնտռել, ուր կուսակցական դաստիարակութեան անընտել ընկերներ կան: Մեր թերթին մէջ արմատական պակաս կայ եւ եթէ Ընդհ. ժողովը ունի դեր մը՝ այդ ուղղութեան խնդրին մէջ խիստ վերաբերուելի է:

Գրգգ.— Ընդհանրապէս «Ազատամարտ»ի մէջ նկատուելի է խնամքի պակաս եւ վայրկեանական տպաւորութեան տակ խմբագրուած ըլլալու շունչ մըն է որ կը տիրէ: Երբեմն կ'ըլլան խոստումներ այս կամ այն խնդրին վերադառնալու համար՝ որոնք չեն գործադրուիր: Նկատուելի է անհետեւողականութիւն եւ համակիրներու քննադատելի արարքներու մասին ներողամիտ ոգի:

Աուրէն.— «Ազատամարտ»ի դէմ սկսուած հալածանքին մէջ ընդունինք որ մենք ալ ունեցանք մեր պատաս-

խանատուութեան բաժինը, որովհետեւ տեղի տուինք անտեղի վէճերու եւ պայքարներու: Ասոնց առջեւ առնել հարկ է, տեղի չտալու համար նման երեւոյթներու կրկնութեան:

Կարագեան.— Դրամական խնդիրներու մասին Արեւմտ. Բիւրոն տարբեր կերպով չէր կրնար վարուիլ: պէտք է որ Ընդհ. ժողովն ըլլար կտրուկ դիրք բռնողը, աչքի առաջ ունենալով անցեալի փորձառութիւնը:

Անտոն.— Ընդհ. ժողովին տուած որոշումները շատ կտրուկ եւ պարզ են: Եթէ խմբագրութիւնը քիչ մը համակերպէր տեղական պայմաններուն՝ իրականութիւնը տարբեր պիտի ըլլար: Դրամական խնդրին մէջ կատարուածը ապօրինի է՝ նուազագոյն որակումով: Առանց այս ապօրինութեանց դատապարտութեան՝ ասկէ յետոյ ոչ մէկ որոշում կը յարգուի, կուսակցութիւնը իր միւս պէտքերն ունէր եւ դրամները պէտք էին այսքան առհարիր յատկացնել այդ նպատակներուն: Ո՞վ պիտի ըլլար պատասխանատուն՝ վտանգի պահուն, երբ այդ նպատակին յատկացուած գումարները ծախսուած են թերթին վրայ: Գաւառները ազատ ընկեր պահելու համար ամսական 3-4 ոսկիի պէտքը կայ, որուն չգոյութեան համար ամբողջ շրջաններ կը մնան երեսի վրայ: Այս պայմաններուն մէջ, երբ կուսակցութեան որոշումները չեն յարգուիր ու գործադրուիր՝ կուսակցութիւնը չի կրնար ստանձնել ոեւէ պատասխանատուութիւն: Ոչ միայն կատարուած անօրինութեան թոյլ տուողները պէտք է պատասխանատուութեան կանչել, այլ եւ դրամը չյանձնել Պոլիս գտնուող ձեռնհաս մարմին:

Աւսլան.— (Պատասխանելով) Թերթը տարուած է այն ուժերով եւ այնքան՝ որքան որ հնարաւոր է: Կ'ընդունուի թերթին պակասները, սակայն նկատի ունենալու է՝ զինք շրջապատող պայմանները: Ամէն գործ քննադատելի է: մանաւանդ թերթի պէս ձեռնարկ մը, ուր ամէն ընկեր իր ճաշակին եւ ըմբռնումներուն համաձայն յօդուածներ կը փնտռէ: Թերթին հիմնումին օրէն իսկ որոշուած էր ունենալ դեմոկրատական ուղղութիւն, առանց սոսկ կուսակցական եւ ընկերվարական հողի վրայ կենալու: Հիմնովին սխալ է այն քննադատութիւնը թէ «Ազատամարտ» Պոլսոյ թերթի եղած է. եղած գանգատները ընդհակառակը ատոր դէմ են. նկատի առնելու չէ պետական թէ զազային այն խնդիրները՝ որոնք Պոլսէն կը բխին, սակայն տեղական չեն, այլ ընդհանուր: խմբագրականներուն 90%ը գաւառին եւ անոր ցաւերուն նուիրուած են. գաւառի լուրերուն եւ թղթակցութիւններուն եւս մեծ տեղ տրուած է: Փարլամենթ, պետական կեանք եւայլն մեծ տեղ կը գրաւեն. պայքարի օրերուն, ճիշդ է որ երբեմն կորսնցուցիք մեր պաղարկուողութիւնը, բայց մոռնալու չէ որ մենք ալ մարդ էինք եւ ջիղեր ունէինք. շրջապատող պայմաններուն մէջ ամէնէն ակնյի պաղարկու ընկերը ամէնէն անհանդարտ կը դառնար: Քոնթրոլը անհրաժեշտ է, որ խմբագրութեան

կողմն ալ որ ըլլայ, թէկուզ անսխալական, պէտք է որ քոնթրոլի ենթարկուի: Ընկեր Անտոն դրամական խնդրին վրայ շատ կը ծանրանայ եւ սակայն «Ազատութեան մատենադարան»-ի գրքերու հրատարակութեան մէջ ինքն ալ տարբեր ուղղութեան մը չհետեւեցաւ:

Հարցը սպառած նկատելով՝ որոշուեցաւ յաջորդ ժողովին անցնիլ բանաձեւերու քուէարկութեան:

Նիստ Թ.

23 Օգոստ. 911 (Երեքշաբթի առտու)

Ժողովը բացուեցաւ 20 ընկերներու ներկայութեան: **«Ազատամարտ»-ի հարց.**— Համաձայն նախորդ նիստի որոշման, վիճարանութիւնները փակուած նկատելով, բանաձեւեր ներկայացուեցան. 1) Ընկեր Վարանդեանի կողմէ, որ բաժնուած էր 3 մասերու — բովանդակութեան, պատասխանատուութեան եւ հատուցման: 2) Ընկեր Վահագնի կողմէ՝ որ կը վերաբերի միայն դրամական խնդրին: 3) Ընկեր Անտոնի կողմէ՝ որ նոյնպէս կը բաղկանար 3 մասերէ:

Բանաձեւերու շուրջը տեղի ունեցաւ կրկին վիճաբանութիւն, ուր արտայայտուեցան հետեւեալ կարծիքները:

Անտոն.— Հակառակ Ե. Ընդհ. ժողովի այն որոշման — որ նախահաշուին մէջ նշանակուած է — որ «Ազատամարտ»-ին համար առ առաւելն 8000 Փրանկ նպաստ յատկացուի — Բիւրոն ապօրինի կերպով աւելի մեծ գումար մը յատկացուցած է — որ ճշգրիտ քանակը պիտի որոշուի հաշուեքննիչ յանձնախումբի կողմէ, պէտք է որ այս մասին խօսուի եւ ամենախիստ կարգադրութիւններ ըլլան Բիւրոյի եւ վարչութեան դէմ. որպէսզի ապագային ալ այսպիսի երեւոյթներ չկրկնուին: «Ազատամարտ»ը պարտի վճարել այդ գումարը:

Վահագն.— Թէեւ ծախսուած է մեծ գումար մը «Ազատամարտ»-ի վրայ սակայն պէտք է նկատի առնել որ այդ գումարներուն փոխարէն ունինք տպարան մը մամուլով որ հասոյթի ու խնայողութեան աղբիւր մըն ալ է, որ չէ կարելի կորսուած նկատել, եւ այն ծախսելու պարագային միշտ դրամագլուխ մըն է որ չէ կարելի կորսուած նկատել. ես ալ համաձայն եմ որ «Ազատամարտ»ը մաս մաս վերադարձնէ գումարը հաշուեքննիչի ընկիւղ ցուցմունքներուն [համաձայն]. ընկերը ներկայացուց հետեւեալ բանաձեւը, որ ստացաւ 11 քուէ:

«Ընդհ. ժողովը պարտականութիւն կը դնէ «Ազատամարտ»-ի վարչութեան վրայ առաջիկային մաս մաս վերադարձնել թերթին համար Բիւրոյի կողմէ աւելի վճարուած գումարը, համաձայն հաշուեքննիչ յանձնախումբի կողմէն գծուելիք հատուցման եղանակին:

Միւս կողմէ նկատի առնելով այն՝ որ «Ազատամարտ»-ին յատկացուած այս գումարը Ե. Ընդհ. ժողովի որոշումի սահմաններէն դուրս է եւ տրամադրութեանցը հակառակ, ժողովը միաձայնութեամբ տուաւ հետեւեալ որոշումը:—

«Բիւրոյի այս կարգադրութիւնը նկատել ապօրինի եւ Ե. Ընդհ. ժողովի որոշման հակառակ»:

Անտոն.— Կրկին անգամ կը ծանրանայ «Ազատամարտ»-ին վրայ ծախսուած աւելի գումարին մասին, պահանջելով Բիւրոն պատասխանատուութեան ենթարկել. ժողովի մեծամասնութիւնը, սակայն, յարմար դատեց սպասել հաշուեքննիչ մասնախումբի տեղեկութիւններուն, ըստ այնմ որոշելու համար: Այս առթիւ ընկեր Անտոն կարգաց իր հետեւեալ բանաձեւը:

«Նկատելով որ վերջին Ընդհ. ժողովին մէջ կիսապաշտօնական թերթերին («Ազատամարտ» եւ «Հորիզոն») նպաստ տալը անցած էր մեծ վերապահութիւններով՝ այն իմաստով որպէսզի նպաստի ընդհանուր գումարը չանցնի 8000 Փր.-էն, վերջինս վճարուէր մաս մաս եւ միմիայն մինչեւ Յունուար երբ խմբագրութիւնը պարտաւոր էր հաւասարակշռութիւն մտցնել իր ծախսելիքի մէջ, ծախսերի կրճատումով, թերթի ձեւը փոխելով կամ դարձնելով նա մասնաւոր կամ շրջանային հրատարակութիւն»:

Նկատելով որ շնորհիւ թերթի վրայ ծախսուած գումարի այդ խոշորութեանը, բնականաբար գանց պէտք է առնուէին կուսակցութեան որոշումները մեր գործունէութեան այլ ճիւղերու մասին — զինական գործ, կազմակերպութիւն, անհրաժեշտ օգնութիւն տուած վայրերին եւն:

Նկատելով որ որչափ էլ ցանկալի եւ կարեւոր լինէր թերթի շարունակութիւնը, որոշուած գումարի կրկնապատկելն ու եռապատկելը ոչ միայն հակառակ է մեր որոշումներուն, այլեւ անբարոյացուցիչ ազդեցութիւն կ'ունենայ կուսակցութեան վրայ ապացուցանելով որ ամէն մի վճիռ կարող է անպատիժ կերպով ոտնակոխ առնուել:

Նկատելով որ Դաշնակցութեան ամէն մի շրջան կամ ռայոն ունի հապէս իր շրջանային կիսապաշտօնական թերթը («Հայրենիք», «Առաւօտ», «Յառաջ», «Աշխատանք» եւ այլն) եւ միմիայն «Ազատամարտ»-ի կիսապաշտօնական ընդունուելը կու տայ նրան արտօնեայ մի դիրք միւս թերթերի հանդէպ միաժամանակ անհնարին դարձնելով հասարակութեան ճշդելու ո՞րն է կուսակցութեան պաշտօնական կարծիքը՝ պաշտօնական «Դրօշակ»-ին թէ ոչ կիսապաշտօնական «Ազատամարտ»-ինը:

Փորձից տեսնելով որ ամէնօրեայ թերթերի մէջ կուսակցական ուղղութեան անշեղ պահպանումը ու տաք տիկական սխալներ չկատարելը ներկայացնում է ան-

հարթելի դժուարութիւններ:

Համարել «Ազատամարտ»ը Պոլսի շրջանի ոչ կիսապաշտօնական դաշնակցական թերթ, որի խմբագրութեան մէջ մասնակցութիւն են ունենալու տեղին դաշնակցական ռայոնի ներկայացուցիչները (Բիւրօ, Շրջանային ժողով, պարլամենտական խմբակ):

Թերթերու ուղղութեան շուրջ.— Այս առթիւ ալ կարծիքներու փոխանակութենէ վերջ ժողովը քուէարկեց հետեւեալ բանաձեւը:

«Ազատամարտ»ը ինչպէս նաեւ մեր ընկերներու ու կազմակերպական մարմիններու ջանքերով ու ծախսերով հրատարակուող բոլոր պաշտօնական ու կիսապաշտօնական թերթերը պիտի ունենան Հ.Յ.Դ.եան ուղղութիւնը»:

Կանոնական առաջարկ.— Ժողովը 10 ձայնով քուէարկեց հետեւեալը որ կանոնագրի մաս պիտի կազմէ:

«Մնայուն Հաշուեքննիչ մարմին մը ստեղծել, որ իրաւունք ունենայ Ընդհ. ժողովներու կողմէ գծուած եւ գծուելիք նախահաշիւներու գործադրութեան վրայ հսկողի դերը կատարել»:

Հաշուեքննիչ մարմինն առաջարկը.— Ընկեր Գրգօ հաշուեքննիչ մարմինն կողմէ գեկոյց թէ իրենց տրամադրութեան տակ բաւականէն աւելի հաշուական գործեր կան. ուստի «Ազատամարտ»-ի հաշիւները քննելու համար ժողովը ընտրէ մասնաւոր նոր մարմին մը: Սակայն ժողովը յարմար նկատեց նշանակել երկու ընկերներ եւս յանձին Շաւարշի եւ Մայրի:

Կիսապաշտօնական թերթերու հարց.— (Առաւօտ, Յառաջ, Աշխատանք Վանի, Աշխատանք Իզմիրի, Հայրենիք, Ուսանող, Ասպարէզ, եւն): Նկատի առնուեցաւ այն որ շատ թերթեր կը հրատարակուին եւ ոմանք ակամայ կը ծանրաբեռնուին կազմակերպական պիւտճէին վրայ:

Արամ.— Կ'առաջարկէ որ բացի «Դրօշակ»էն եւ «Ազատամարտ»էն բոլոր գաւառական թերթերը յանձնուին անհատներու պատասխանատուութեան:

Ատոմ.— Քանի որ այդ թերթերը իրենք կը յայտարարեն թէ դաշնակցական են եւ անոր սկզբունքներուն պաշտպան, պէտք է որ անպատճառ ենթարկուին նաեւ Դաշնակցութեան քոնթրոլին: Գալով դրամականին՝ այս մասին կրնան դիմել իրենց շրջանին համապատասխան մարմիններուն:

Լեւոնեան.— Համաձայն է որ անհատներու յանձնուի թերթերու ղեկավարութիւնը, պայմանաւ որ Ընդհ. ժողովը որոշէ թէ ո՞ր շրջաններու մէջ պէտք է կիսապաշտօնական թերթեր հրատարակուին:

Վահագն.— Քանի որ մեր կանոնագրին մէջ (161-162 յօդ.) շատ որոշ կերպով ըսուած է թէ կեդր. կոմիտէները իրաւունք ունին թերթ հրատարակելու, հարկ կ'ըլլայ լրացուցիչ յօդուած մը աւելցնելու որ վերաբերի դրամական մասին, ուր ճշդուած ըլլայ այն պարագան որ

պրոպականտի յատուկ գումարէն աւելի չծախսուի թերթերու վրայ:

Անտոն.— Վշտացած կերպով ըսաւ «Որքան ատեն որ Ընդհ. Ժողովներու որոշումները չգործադրող մարմիններու նկատմամբ ժողովը որոշ եւ կտրուկ որոշումներ եւ պատիժներ չտնօրինէ, ես չեմ մասնակցիր ոեւէ՛ որոշման. քանի որ այլ եւս աննպատակ կը դառնայ Ընդհ. Ժողովի որոշումները»:

Ժողովը այս հարցը բաւական լուսաբանուած նկատելով քուէարկեց հետեւեալ բանաձեւերը:

(ա) **Արամի բանաձեւը.**— որ ստացաւ 4 քուէ. «Բացի «Դրօշակ»է ուրիշ ոեւէ՛ թերթ չի ստանում դրամական օժանդակութիւն կուսակցութենէն. իսկ բացի «Դրօշակ»էն եւ «Ազատամարտ»էն կուսակցութիւնը ոեւէ՛ պաշտօնական մասնակցութիւն չպիտի ունենայ անոնց խմբագրական կազմին մէջ: Դաշնակցական ընկերներու ձեռքով հրատարակուած թերթերը, համաձայն կանոնադրի տրամադրութիւններին, պիտի համապատասխանեն կուսակցութեան ծրագրին եւ ընթացիկ գործերակերպին: «Հակառակ դէպքում թերթերը երբ հակադաշնակցական դիրքի մէջ են, կուսակցութիւնը կը յայտարարէ զանոնք ոչ-դաշնակցական»:

Ասոր դէմ անցաւ 9 ձայնով Վահագի բանաձեւը:

1) «Բոլոր Կ. Կոմ.ները ըստ կանոնագրի 181րդ յօդ. իրաւունք ունին թերթ հրատարակելու, առանց դուրս գալու իրենց պրոպագանդի պիւտճէէն»:

2) Ոեւէ Կ. Կոմ. թերթ հրատարակելէ առաջ պէտք է համաձայնութիւնը առնէ քոնթրոլի մարմիններ կազմակերպող իր դրամական վիճակը եւ խմբագրական կազմը» (միաձայն):

Որոշուեցաւ այս յօդ.ները մտցնել կանոնագրի մէջ:

Ժամանակը ուշ ըլլալուն օրակարգի այս խնդրին վերաբերող միւս կէտերու նկատառութիւնը վերապահուեցաւ յաջորդ նիստին:

Նիստ Ժ.

23 Օգոստ. 911 (կէսօրէ ետք)

Ներկաներ՝ Պարսկաստանի, Պալքանի, Ամերիկայի, Կարինի, Պոլսի, Վանի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշի, Սամսոնի, Ուս. միութեան, Խարբերդի պատգամաւորները: Վճռական ձայնի իրաւունքով՝ Բարա, Աւօ, Սիսեան, Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնով՝ Մայր, Վահան, Մար, Սաթօ, Մարգարեան, Ժիրայր, Ասողիկ¹⁰, Ակնունի, Լեռնեան:

Կիսապաշտօնական թերթերու շուրջ.— Միաձայնու-

թեամբ որոշուեցաւ «բոլոր միւս թերթերը եւս (ինչպէս «Ազատամարտ») եթէ կազմակերպական գանձէն ստացած են պիւտճէի մէջ սահմանուածէն աւելի գումար, նոյնպէս պարտաւոր են վերադարձնել»:

Հրատարակչական գործը.— Վահագ՝ հրատարակչական գործին շուրջ ամփոփ տեղեկութիւններ տուաւ, ըսելով թէ բաւական շատ սթոք կայ. տարածումը կանոնաւոր ու պէտք եղած ձեւով չէ կատարուած: Այս մասին կարծիքներու հետեւեալ փոխանակութիւնը եղաւ.—

Ատոմ.— Այդ գործի անցեալին մասին տեսութիւն մը ըրաւ. առաջարկեց այդ գործը յանձնել անհատական շահակցութեամբ կազմուած եւ կազմուելիք խմբերու որպէսզի զարկ տրուի տարածման:

Առլէն.— Դիտել տուաւ թէ հրատարակութիւններու լեզուն պէտք է հասկանալի լինի. պէտք է բարեփոխել նոյնիսկ Մրագրի լեզուն:

Լեռնեան.— Ենչտեց թէ մեր հրատարակած գրքերու լեզուն եւ բովանդակութիւնը չէ որ պատճառ կ'ըլլայ չտարածուելուն, այլ այն որ տարածումը շատ անկանոն եղած է. ուստի տարածման համար պէտք է խնամք տարուի. պէտք է ուղեցոյց մըն ալ պատրաստել մեր հրատարակութիւնները ծանօթացնող:

Տիգրան.— Կ'առաջարկէ որ իւրաքանչիւր մարմին ունենայ մատենադարաններ, կարելի չափով նպաստելու համար մեր հրատարակութիւններու տարածման:

Լեռնեան.— Յարմար կը դատէ նաեւ պատրաստել բառարան մը դժուարահասկնալի բառերը բացատրող:

Անտոն.— Բացատրեց թէ գրքերը մնայուն եւ կրթիչ հանգամանք ունին եւ պէտք է որ ասկէ վերջն ալ որոշ պիւտճէ մը յատկացուի եւ յանձնուի մասնաւոր յանձնախումբի մը որ կատարէ այդ գործառնութիւնները եւ լրացուցիչ հրատարակութիւնները:

Բաքա.— Ենչտեց թէ լեզուն մեծ նշանակութիւն ունի եւ ամենայնի օգտակար է այդ հրատարակչական գործին ո՞ք տալը. շեշտեց նոյնպէս թէ գրաւոր փրփականտը լաւ, յաջող կերպով յառաջ տանելու համար բանաւորն ալ պէտք է միանայ անոր:

Կարագեան.— Կը գտնէ որ հրատարակչական գործը յաջող կերպով տանելու համար աշխատութիւնը ոչ թէ անհատներու այլ կազմակերպութեան յանձնելու է:

Վահագ.— Հրատարակութիւններու տարածման համար ամէնէն յարմար ձեւն է հիմնել այս շէնքին մէջ խանութ մը եւ նշանակել մասնաւոր պաշտօնեայ որուն բացի ամսականը՝ տալ նաեւ որոշ տոկոս մը, որ պէսզի այդ պաշտօնեան շահագրգռուի եւ աշխատի մեծ չափով տարածել. առաջարկեց նաեւ ընդունիլ սէրիլ ձեւով վաճառելու ձեւը, ընելով մասնաւոր գեղջ:

10.- Ասողիկ՝ ծածկանունն է Սշոյ երեսփոխան Տր Կարապետեան Գեղամի: Մայրի ինքնութիւնը անճանօք է սեզի:

Նախագահը քուէի դրաւ այն որ մասնաւոր յանձնախումբ մը ընտրուի, որպէսզի այս խնդրի մասին ժողովի տրամադրութիւնը արտայայտող բանաձեւ մը պատրաստէ. այդ յանձնախումբի անդամ նշանակուեցան, Ատոմ, Անտոն, Լեռնեան:

Բանաւոր պրոպականտ.— Ընկեր Վահագ Բիւրոյի կողմէ տուաւ գեկուցում ի նպաստ պրոպականտի 2 տարուան մէջ եղած ձեռնարկներու մասին: Ժամանակի ընթացքին զանազան ընկերներ շրջանները դրկուեր են. թէեւ շատ աւելիին պահանջ կար, բայց կարելի չէ եղած գոհացում տալ յարմար ընկերներու չգոյութեան պատճառաւ: Ընկեր Վահագ յիշեց նաեւ որ դիմում եղած է նաեւ քանի մը ուսանող ընկերներու որոնք մերժած են եղած առաջարկները:

Ներկաներու կողմէ առաջարկուեցաւ որ ընկեր Տիգրան ընէ ընդհանուր տեղեկաբերութիւն մը՝ իբրեւ ամէնէն ընդարձակ եւ երկար շրջան ընող, որպէսզի ժողովականները որոշ գաղափար կարենան ունենալ այդ շրջաններու մասին:

Տիգրան.— 1909 Նոյ. 1էն մինչեւ 1911 Մարտ 19 այցելած եմ 12 քաղաքներ, որոնք են Ամասիա, Զարչամպա, Մարզուան, Զիլէ, Թոքատ, Սեբաստիա, Կիւրին, Տարէնտէ, Աշոտի, Մալաթիա եւ Խարբերդ: Պոլսոյ հակադաշնակցական պայքարի պահուն էր որ Պոլսէն մեկնեցա՞յ դէպի գաւառները: Այս պայքարը իր վատ ազդեցութիւնը ունեցեր էր գաւառի հայութեան վրայ. մէկ կողմէն չէզոք եւ հակառակորդ տարրերը լարուած էին Դաշնակցութեան դէմ, իսկ միւս կողմէն ալ ընկերական շարքերը, ուր Սահմանադրութեան օրերուն խանդավառութեան եւ ոգեւորութեան տակ մտած էին ամէն կարգի մարդիկ այլ եւ այլ ակնկալութիւններով, սկսան յարգանքը որ կը վայելէին Սահմանադրութեան օրերուն յեղափոխական կուսակցութեանց մասնաւորապէս Դաշնակցութեան հանդէպ: Ահա այս վիճակին մէջ էր որ գտայ կուսակցութեան ամբողջ կազմը, որոնք վերակազմելը շատ դժուարին գործ մը պիտի ըլլար, ոեւէ գործիչի մը համար ինչպէս ինձի: Իմ ամբողջ գործունէութեան միջոցին զբաղած եմ թէ ներքին կազմակերպական եւ թէ արտաքին պրոպականդի գործերով: Ներքին կազմակերպական ճիւղին մէջ, միշտ աշխատած եմ կանոնաւորել անդամավճարներու գանձման եւ ընկերական շարքերու ուժեղացման խիստ դժուարին գործը: Ամէն տեղ տեսած եմ որ անհատական եւ անձնական խնդիրները դժբախտաբար պատճառ եղած են շարքերու լքումին եւ կազմակերպական գործին կազմանը: Արտաքին պրոպականդին պէտք եղածէն աւելի ուժ տուած եմ: Առ հասարակ իմ ամբողջ ատենախօսութեանց նիւթերը կազմած են Դաշնակցութեան աշխարհահայեացքները եւ օրուայ հասարակական ու ազգային հրատապ հարցերը: Ասոնց մէջ գլխաւոր տեղ

բռնած են եւ գրեթէ ամէն տեղ ալ կրկնուած հետեւեալ գլխաւոր նիւթերը.— հակադաշնակցական պայքարը, հայ-թրքական համերաշխութիւնը, կուսակցութիւններու օգտակարութիւնները, Դաշնակցութեան դերը անցեալին եւ ներկային, ընկերակարութիւն եւն: Ընդհանրապէս՝ ատենախօսութեանց այցելողները եղած են ժողովրդի պարզ, աշխատաւոր ու մտաւոր դասակարգերը, ինչ որ խիստ ուրախալի երեւոյթ մըն է. ընդամէնը աւելի քան ութսուն ատենախօսութիւններ սարքած եմ յիշեալ վայրերուն մէջ:

Անցեալ Ընդհ. Ժողովէն ետք՝ եթէ կարող գործելու պրոպականդիսները դրկուէին գաւառները, կազմակերպութիւնը այսօրուրէն աւելի տարբեր վիճակի մը մէջ պիտի ըլլար: Ինձմէ ետք, գաւառները ոչ մի գործիչ դրկուած չըլլալով, իմ կատարած գործերս ապարդիւն մնացին. ինչ որ՝ դրկուելու պարագային՝ գործը աւելի ուժգին թափով առաջ կրնային տանիլ:

Ընդհակառակը մեր հակառակորդ կուսակցութիւնը, Ս. Դ. Հնչակեանութիւնը, պէտք եղածէն աւելին ըրած է իրենց շարքերը ուժեղացնելու մասին: Կեդրոնէն դրկուած եւ տեղական գործիչներ յաջորդաբար այցելած են Տիգրանակերտէն Սամսոն գծին վրայ գտնուած վայրերը, որոնց այցելութեան շնորհիւ հնչակեան շարքերը սկսած են վերակենդանութեան նշոյններ ցոյց տալ: Մեր ընկերներու որոշ մասին մէջ կը տիրէ այն համոզումը թէ՛ հնչակեան շարքերը կազմուած են անգիտակից եւ պաշիպոզուք անհատներէ: Այսպիսի համոզումի մը գոյութիւնը մեր մէջ, կատարելապէս ինքնախաբուութիւն մըն է մեր կողմէն: Ընդդէմ է որ անոնց մէջ կը գտնուին անգիտակից անհատներ, բայց սա չի նշանակեր որ ամէնքն ալ անանկ են: Մեր շարքերն ալ ամբողջովին գիտակիցներէ կազմուած չեն. ինչ որ անկարելի է քանի որ աչքի առաջ ունինք մեր հայ ժողովուրդի հոգեկան եւ մտաւոր վիճակը ներկայիս:

Գալով արհեստակցական եւ բանուորական միութիւններու հարցին՝ այսչափը կրնամ ըսել որ իմ այցելած վայրերուն մէջ կան միայն Թոքատը, Սեբաստիան եւ Մալաթիան որոշ չափով հող կը ներկայացնեն այս հարցին համար: Իմ մասնաւոր ջանքերովս հազիւ կարողացայ 8-10 օրուայ ընթացքին՝ Մալաթիոյ մէջ կազմակերպել կլայագործներու միութիւն մը, Դաշնակցութեան հովանաւորութեան տակ:

Իմ այցելած ամբողջ վայրերուն մէջ նկատուած է որ մտաւորական տարրը, մասնաւոր ուսուցիչներու մեծամասնութիւնը, դաշնակցական են, Խարբերդի մէջ, Մէզրէի 3 ժամուայ հեռաւորութեան վրայ կը գտնուին 34-40 դաշն. ուսուցիչներ: Վերջերս յաջողեցանք կազմել դաշնակցական Ուսուցչական միութիւն մը, որուն գլխաւոր նպատակը պիտի ըլլար նախ՝ Դաշնակցութիւնը պրոպականտ ընել եւ երկրորդ իրենց շահը պաշտպանել: Ասկէ զատ, հաստատեցի պրոպականտի դպրոց մըն

ալ, ուր հաւաքուելով դաշն. ուսուցիչները եւ քիչ թէ շատ դատող ընկերներ, մասնաւոր դասախօսութիւններ պիտի տրուէին ծրագրային եւ հասարակական հարցերու շուրջ: Բայց այս Ընդհ. Ժողովին առթիւ իմ անմիջական մեկնումը խորհրդէն, դադրեցուց այս դասախօսութիւնները:

Ընկեր Տիգրանի տեղեկաբերութիւնը վերջանալէ յետոյ քանի մը հարցումներ տրուեցան, որոնց ամփոփ կերպով պատասխանեց: Բայց ժամանակը ուշացած ըլլալուն՝ խնդրին վիճաբանութիւնը յետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Նիստ ԺԱ.

24 Օգոստ. 1911 (Երեքշաբթի կէսօրէ առաջ)

Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ակնունիի, ներկայ էին բոլոր պատգամաւորները ինչպէս նաեւ վճռական եւ խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուած ընկերները, բացի Սիսեանէ եւ Վահանէ:

Դասընթացքի հաստատման շուրջ.— Թէեւ այս մասին նախորդ նիստով խօսուած է, բայց հարկ նկատուեցաւ վիճաբանութիւնները շարունակել:

Վարանդեան.— Թէեւ տրուած հարցը համակրելի է եւ կարելորդ, սակայն նկատի առնելով է որ պէտք եղած չափով մարդիկ չունինք այդ գործին ձեռնհաս:

Տիգրան.— Ես այդ ձեռնարկը կը գտնեմ աննպատակ, այն պատճառաւ որ ահագին գումարներ պէտք են:

Բաբա.— Քանի որ ամէն կողմէ գործիչի պէտքը կը շեշտուի, այդ պէտքին գոհացում տալու համար պէտք է ոյժ տալ յիշուած ձեռնարկին. բայց ոչ թէ բազմա-ծախս կերպով՝ այլ աւելի ամփոփ, ինչպէս եղած է Կովկասում:

Առերէն.— Կը ցանկամ որ այդպիսի ձեռնարկներ չսահմանափակուին միայն Պոլսոյ մէջ, այլ եւ գաւառներու քանի մը գլխաւոր կեդրոններու մէջ:

Վահագն.— Այսպիսի ձեռնարկներու ատեն պէտք է նկատի առնել թէ ինչպիսի տրամադրելի ուժեր կան այս ձեռնարկի համար մասնաւոր որոշում տալու համար, սպասել գործիչ ուժերի վերջնական բաշխումին, քանի որ մասնաւոր պիւտճէ չենք կրնար յատկացնել:

Թորգոմ.— Կ'առաջարկեմ որ մասնաւոր պիւտճէ մը նշանակուի եւ այդ ձեռնարկը ոչ թէ Պոլսոյ հիմնելու է այլ գաւառի մէջ:

Հայրիկեան.— Կը գտնեմ շատ կարելորդ եւ կը կարծեմ որ կազմակերպութեան թուլացման գլխաւոր պատճառներէն մէկն է պրոպականտի պակասը եւ անկանոնութիւնները. իմ կարծիքով լաւ է որ Պոլսի մէջ

հիմնուին դասախօսական կուրսեր, նշանակելով մասնաւոր պիւտճէներ:

Ատոմ.— Ոչ պիւտճէ հարկաւոր է եւ ոչ ալ մասնաւոր մարմիններու պէտք կայ. ես կը գտնեմ հնարաւոր այդպիսի ձեռնարկներ հիմնել գլխաւոր կեդրոններու մէջ, միայն թէ նախաձեռնութիւնը ձգելու է Կ. Կոմ.ներուն:

Մոսիսեան.— Դասընթացքը հիմնելու առթիւ պէտք է նկատի առնել այն, որ դասընթացքին մասնակցող աշակերտները ինչ չափով պիտի երթան Երկիր, ժողովրդին մէջ գործելու:

Շատեր ալ արտայայտուեցան ու այս կամ այն տեսակէտները պաշտպանեցին ու նկատի առնելով որ հարցը բաւական լուսաբանուած է, պահանջուեցան բանաձեւեր:

1) **Ընկեր Վարանդեանի բանաձեւը.**— «Յանձնել պրոպականտի գործի կազմակերպութիւնը շրջանային մարմիններին եւ դնել նրանց տրամադրութեան տակ նիւթական միջոցներ՝ պրոպականտի յատկացուած պիւտճէի սահմաններում (4 ձայն):»

«Նկատելով թէ՛ Դաշնակցութեան բանաւոր պրոպագանդը մինչեւ օրս ընթացել է կաղէ կաղ եւ մասամբ անձեռնհաս ընկերների ձեռքով,

«Թէ՛ դրանից սաստկապէս տուժել է կուսակցութեան վարկը եւ նրա ընդարձակ բարգաւաճման գործը, «Ընդհ. Ժողովը ցանկանալով ուժեղ մղումն տալ կուսակցական պրոպագանդին,

Որոշում է՝ հիմնել Կ. Պոլսում եւ եթէ հնարաւոր է նաեւ գաւառական կարելորդ կեդրոններում մշտական ու կանոնաւոր դասընթացքներ՝ ծրագրային ոգով պրոպագանդիստ գործիչներ պատրաստելու եւ Երկիր ճամբելու նպատակով» (4 ձայն):»

Բժիշկի բանաձեւը.— «Կուսակցութեան ղեկավար մարմինները, շրջանները եւ պատրաստուած ընկերները ժամանակի խոշոր մասը պարտական են նուիրելու բանաւոր պրոպականտի, կազմակերպելով պրոպագանդի խնդրի դպրոցներ, դասընթացքներ, ընկերական վիճաբանութիւններ եւ այլ միջոցներով, չչեղելով որոշուած պիւտճէի սահմաններից (14 ձայն):»

Պրոպականդի եւ հետեւապէս կուսակցական գիտակցութեան եւ կազմակերպութեան զարգացումը կախուած լինելով ղեկավար մարմինների եւ անհատների տուած օրինակից, պրոպագանդի հարցը կապելու է կազմակերպութեան եւ ոյժերի բաշխման հետ (14 ձայն):»

Կուսակցական հրատարակչութեան համար ընտրուած մարմինը պիտի իրեն ցուցումներով եւ հրատարակութիւններով օգտակար հանդիսանայ այդ գործում Կ. Կոմ.ների համար (10 ձայն):»

Վահագնի բանաձեւը.— Հրատարակչական գործը վարող մարմինը կը մշակէ ու կը հրատարակէ մանրամասն ծրագիր մը, յարակից հրատարակութիւններով,

որով կ'առաջնորդուին դասախօսները: միանգամայն կը հայթայթէ անոնց պէտք եղած գրականութիւնը, դասընթացքը հաստատող մարմիններու ծախքով» (11 ձայնով անցաւ):»

Բանաձեւ Ակնունիի.— Սա ստացաւ 1 ձայն. բայց կ'արձանագրուի որպէս անձնական կարծիք: «Ընդհանուր ժողովը նկատելով մեր պրոպականդի գործին թոյլ ու անկազմ կացութիւնը, այլ եւ այն տեսակէտն ունենալով, որ այժմեան պայմաններում մանաւանդ՝ անհրաժեշտ է ոյժ տալ հասուն, տեւական ու սիստեմատիկ պրոպագանդի, թէ՛ ծրագրային եւ թէ՛ կազմակերպական տեսակէտից, որոշեց՝

ա) Հիմնադրել յատուկ դասընթացքներ պրոպականդիստներ պատրաստելու համար եւ Պոլսում եւ գաւառի կարելորդ կեդրոններում, դնելով այս դասընթացքները շրջանի բարձր մարմինների ղեկավարութեան տակ.

բ) Այս գործի յաջողութեան համար դասընթացքների հսկայ ծախքը մտցնել ընդհանուր պիւտճէի մէջ, դուրս չգալով, հարկաւ, պրոպագանդի գործի համար նախորոշուած ծախքի սահմաններից:

Ընդհ. Ժողովը նկատի առնելով մինչեւ այժմ եղած ջանքերը այդ մասին միաձայնութեամբ կ'ընդունի թէ մինչեւ ցարդ պրոպագանդի գործը տարուած է շատ թոյլ եւ խակ մարդոց ձեռքով:

Կարդացուեցաւ Ե. նիստի արձանագրութիւնը եւ պատիկ փոփոխութեամբ մը հաստատուեցաւ:

Կարդացուեցաւ նաեւ Ուսանողական միութեան մարմինն մէկ հեռագիրը, որով կը յայտնէին թէ, եթէ Վարանդեանը իրենց ներկայացուցչութիւնը մերժէ, իրենց պատգամաւոր նկատուի ընկեր Աճէմեանը:

Նկատի առնելով որ ընկեր Վարանդեանը արդէն ստացած է անոնց ներկայացուցչութիւնը, խնդիրը համարուեցաւ կարգադրուած:

Ժամանակը առաջացած ըլլալուն՝ ժողովը փակուեցաւ կէսօրէ (ետք) նորէն գումարուելու պայմանաւ:

Նիստ ԺԲ.

24 Օգոստ. 911 (Երեքշաբթի կէսօրէ ետք)

Ներկաներ՝ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը, Մուշի, Կարինի, Վանի, Սեբաստիոյ, Մամսոն-Մարգուանի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Տիգրանակերտի, Պալքանի, Ամերիկայի, Պարսկաստանի, Ուս. Միութեան պատգամաւորները: Վճռական ձայնով հրաւիրուածներէն՝ Բաբա, Աւօ, Սիսեան, Տիգրան: Խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն՝ Ժիրայր, Ասլան, Մար, Մե-

լօ, Լեոնեան, Մարգալետ, Սաթօ, Ակնունի, Ասողիկ, Վահան:

Կարդացուեցաւ եւ թեթեւ սրբագրութիւններով ընդունուեցաւ նախորդ նիստերու արձանագրութիւնները:

Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը.— Բիւրոյի ներկայացուցիչը կարդաց Դաշնակցութեան եւ Իթիֆիհատի, ինչպէս նաեւ Դաշնակցութեան եւ կառավարութեան յարաբերութիւններու մասին մի ընդարձակ տեղեկագիր:

Տեղեկագրի այս բաժնի մասին վիճաբանութիւններու սկսելէ եւ այս հարցին համար կարգուած յանձնախումբի գեկուցումը լսելէ առաջ, նպատակաւորմար սեպտեմբեր լսել նաեւ փարլամենտի պատգամաւորի տեղեկագիրը: Սոյն պատգամաւորի այն յայտարարութեան վրայ թէ իր տեղեկագիրը պատրաստ չէ դեռ, որոշուեցաւ լրացուցիչ տեղեկութիւններ խնդրել Բիւրոյի տեղեկաբերէն՝ տալով հարցեր:

Հինգ ըրպէ դադարէ վերջ՝ ընկերները ուղղեցին հարցումներ, որոնց պատասխանեց ընկեր տեղեկաբերը՝ տալով լրացուցիչ տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ՝ տեղեկագրին մէջ յիշուած խնդիրներու մասին:

Ժողովը փակուեցաւ ժամը 8-ին:

ՆԻՍՏ ԺԳ.

25 Օգոստ. 911 (առաւօտ)

Ներկաներ՝ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը, Մուշի, Կարինի, Ուս. միութեան, Սեբաստիոյ, Պալքանի, Վանի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Պարսկաստանի, Ամերիկայի, Պոլսի, Տրապիզոնի պատգամաւորները: Վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն՝ Տիգրան, Բաբա, Սիսեան. խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն՝ Ասլան, Ակնունի, Մելօ, Վահան, Սաթօ, Ասողիկ, Մար, Ժիրայր:

Փարլամենտի պատգամաւոր ընկեր Վահանի տեղեկագիրը.— Ընկեր Վահան տուաւ բերանացի ընդարձակ տեղեկութիւն Օսմ. փարլամենտի կազմի եւ հոսանքներու մասին ընդհանրապէս, իսկ հայ պատգամաւորներու եւ դաշնակցական պատգամաւորներու մասին մասնաւորապէս: Խօսեցաւ նաեւ Բիւրոյի եւ փարլամենտական պատգամաւորներու յարաբերութեան մասին: Այս ընդհանուր տեղեկատուութենէն վերջ՝ ընկերը ներկայացուց առաջարկներ առաջիկային աւելի յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան համար:

Քառորդ ժամ դադարէ վերջ, պատգամաւոր ընկեր Գեղամ տուաւ լրացուցիչ տեղեկութիւններ՝ հայ պատ-

գամալորներու փարլամենթական գործունէութեան մասին, մասնաւորապէս ծանրանալով հայութիւնը շահագրգռող խնդիրներու վրայ, ինչպէս են գինուորագրութիւն, սպանութիւններ, հարստահարում, աշար, աղնամ, ճամբու եւ այլ տուրքեր եւն:

Տեղեկագրերու աւարտումէն ետք — որոնք գրաւոր պիտի ներկայացուին արձանագրութեան կցելու համար — տրուեցան հարցեր, որոնց պատասխանելէ եւ լուսաբանութիւններու սկսելէ առաջ, այն խնդիրը ծագեցաւ թէ իթթիհատի եւ Դաշնակցութեան յարաբերութիւնները պիտի քննեն առաջ թէ դաշնակցական պատգամաւորներու փարլամենթական գործունէութիւնը: Այս մասին գաղափարներու փոխանակութիւն կատարելէ վերջ՝ ժողովը յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան:

Իթթիհատի եւ Դաշնակցութեան յարաբերութիւններու մասին ոեւէ՞ որոշում տալէ առաջ՝ նախ քննել փարլամենթական գործունէութիւնը, հողային հարցը, կառավարութեան դիրքն այս խնդիրներուն հանդէպ եւ այլն, որոնց միջոցին ինքնին պիտի պարզուի նաեւ իթթիհատի դիրքը, ընդունելով զայն առանցքը այս բոլոր խնդիրներու մասին ըլլալիք վիճաբանութիւններուն — անկէ վերջ ճշդելու համար մեր դիրքը իթթիհատի եւ առհասարակ կառավարութեան հանդէպ:

Ժողովը փակուեցաւ ժամը 1-ին:

Նիստ ժ-Դ.

25 Օգոստ. 911 (կէսօրէ ետք)

Ներկաներ՝ Պարսկաստանի, Պալքանի, Ամերիկայի, Պոլսի, Կարինի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Մուշի, Սամսոն-Մարզուանի, Ուս. միութեան պատգամաւորները եւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը: Վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն Տիգրան եւ Աւօ: Խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն՝ Ասողիկ, Ասլան, Մելօ, Վահան, Ժիրայր, Մարգպետ, Սաթօ, Ակնունի, Մար:

Կարդացուեցաւ եւ քանի մը սրբագրութիւններով ընդունուեցաւ նախորդ նիստերու արձանագրութիւնները:

Ընկեր Վահան սկսաւ պատասխանել նախորդ ժողովին մէջ պատգամաւորներու կողմէ տրուած հարցերուն:

Ժողովը նկատի ունենալով ընկեր Սուրէնի գրաւոր դիմումը որով կը պահանջէր խիստ միջոցներ ձեռք առնել նիստերը որոշուած ժամանակին սկսելու համար, մեծամասնութեամբ տուաւ հետեւեալ որոշումը:

Նիստերուն երեք անգամ կէս ժամ ուշացող պատգա-

մաւորը կը գրկուի ձայնի իրաւունքէն, ժողովի ամբողջ ընթացքին:

Ժողովը սկսաւ զբաղիլ դաշնակցական պատգամաւորներու փարլամենթական գործունէութեան քննադատութիւնով:

Ասլան.— Պատգամաւոր ընկերներու գործունէութեան դրական կողմին վրայ կանգ պիտի չառնեմ, այլ պիտի ծանրանամ անոր թերութիւններուն վրայ, ապագային աւելի լաւ վարելու համար գործը:

Խորհրդարանական կազմը չունեցաւ հաւաքական գործունէութիւն, հակառակ Բիւրոյի յամառ ջանքերուն՝ զանոնք հաւաքական աշխատանքի լծելու մենք առաջարկեցինք անոնց Բիւրոյին կից մասնաւոր սենեակ մը յատկացնել, ուր, իբրեւ խորհրդարանական Բիւրօ, անոնք հաւաքուէին խորհրդակցութիւններ կատարելու եւ որոշ աշխատանք կատարելու. այս աշխատանքի պակասին հետեւանքով էր որ խորհրդարանի առջեւ եկած կենսական խնդիրներ արժանի ուշադրութեան չարժանացան մեր պատգամաւորներուն կողմէ:

Վահան.— Առաջարկեց փաստեր ներկայացնել:

Կարագեան.— Պատգամաւոր ընկերը ըսաւ թէ աշխատաւորական եւ այլ խնդիրներու շուրջ չկրցան որոշել արդիւնաւէտ գործ կատարել, որովհետեւ այս մասին կան եղեր հոգեբանական պատճառներ, գործին անպատրաստ ըլլալու եւ լեզուին անծանօթ ըլլալու խնդիր: Խօսուածքի խնդիրն ալ մէջ բերաւ ընկերը. անձնական տրամադրութիւնը հոս դեր պէտք է խաղայ. պատգամաւորները ղեկավարուելու են մեր ուղղութեամբ, որու մասին եթէ բոլոր պատգամ. ները չէին կարող արտայայտուիլ, մէկը իբր ներկայացուցիչ պէտք է արտայայտուէր. մեր պատգամաւորներուն [հանդէպ] եղած սիրալիր վերաբերումը արգելք պիտի չըլլար որ անոնք ըլլային խստապահանջ:

Արագաբե.— Պատգամաւորները մեծ դեր մը չխաղացին. վարեցին քուլիսներու քաղաքականութիւն մը. ղեկավարող ուժ չհանդիսացան. ընդհ. քաղաքականութիւն մը չունեցան, որու երեսէն սաստկապէս տուժեց հայկական հարցը: Երկրի հարստահարութեանց մասին ուսումնասիրուած բողոք չներկայացուեցաւ, ինչպէս օրինակ Զօհրապ ներկայացուց Ալպանիոյ մասին, թէ եւ համեմատաբար խաղաղ եւ հանգիստ եղած ըլլար ան: Սկիզբէն նոյն իսկ «Ազատամարտ» չարտայայտուեցաւ այդ ուղղութեամբ. բայց երբ համբերութեան բաժակը յորդեցաւ, ան սկսաւ գրել խիստ: Գուցէ առարկուի թէ հայ պատգ. մեծ ձայն չունէր. հետեւաբար աւելորդ էր աղմուկ բարձրացնել. բայց ընդունելի է այս, որովհետեւ փաստով տեսնուած է թէ երբ ուսումնասիրուած եւ փաստացի տեղեկագիր ներկայացնեն, ինչպէս օրինակ ներկայացուեցան Ալպանիոյ, Արաբիոյ եւ այլ պատգամաւորներու կողմէ, կ'ունենան որոշ ազդեցութիւն:

Ակնունդ.— Մեր պատգ. հատուածի թուութեան պատճառն այն է որ ան կը կազմէր փոքր թիւ — 11 — մինչ մենք կը պահանջէինք առնուազն 20 ձայն, համաձայն օրէնքի. նոյն օրէնքի համաձայն, յոյներն ու պուլկարներն ալ պիտի ունենային համեմատական ներկայացուցիչ: Մեր կուսակցութիւնը չկրցաւ իրականացնել իր այս պահանջը որուն մէջ մեղադրելի է Հազգը փաշան, որը կ'առաջարկէր 7 պատգամաւոր, իբրեւ ներկայացուցիչ 700,000 (?) հայի: Փրկելու համար այս կացութիւնը կը մնար երկու միջոց 1) Միացնել հայերը, բարձրացնելով հայ պատգամաւորներու դիրքը. եթէ այս յաջողէր՝ մեր պատգամաւորութիւնը կ'ունենար բացառիկ դիրք շնորհիւ այն իրողութեան որ մեր փլաթֆորմը ընդունուած էր գրեթէ բոլոր միւս փարլ. հատուածներէ, 2) Հայերու բարոյական դիրքը, մաքրութիւնը միւս կողմէն պիտի ըլլային գորաւոր ազդակ մը:

Մենք ոչ միայն այսչափը չկրցանք ընել, այլ նոյնիսկ չկրցանք մեր չորս պատգամաւորները միացնել մէկ պլոքի մէջ. աւելին անոնք ոչ միայն չմիացան, այլ եւ չունեցան համագործակցութիւն եւ յաճախ խորհեցուցին Զօհրապն ու Հալլաճեանը. մեր պատգամաւորները, — թէ մեր չորսը եւ թէ հայերը առ հասարակ — յաճախ արտայայտուեցան իրարու հակառակ. ինչ որ մեծապէս վարկաբեկեց մեզ. ես զարմանքով կարդացի Ամերիկայի մէջ այն յայտարարութիւնը թէ Գարոն¹¹ ու Վարդգէսը իթթիհատական պատգամաւորներ են ու այս բանը չհերքուեցաւ: Ես ալ կը կրկնեմ, որ հոս խառնուածքի խօսք չի կրնար ըլլալ: Եթէ մեր չորսը պլոք կազմած ըլլային, ես վստահ եմ թէ միւս հայ պատգամաւորներն ալ պիտի կարենային համախմբել իրենց շուրջը: Իբր եզրակացութիւն, կ'առաջարկեմ պարտաւորեցնել յառաջիկային անպատճառ պլոք կազմել եւ ըլլալ կորիզը հայ երեսփոխանութեան. այսպիսով միայն հայ պատգամաւորութիւնը պիտի կարենայ ունենալ օգտակար գործունէութիւն մը:

Տիգրան.— Երբ ես կը փափաքէի գիտնալ մեր պատգամաւորներու անհամբերաշխ գործունէութեան պատճառը, ասկէ կ'ուզէի եզրակացնել ամբողջ հայ պատգամաւորութեան անհամբերաշխ գործունէութիւնը: Եթէ մեր չորսը չեն կրցած գործակցիլ, ալ ինչպէս կրնանք ակնկալել որ 11 հայերը միանան: Պէտք է առաջիկային շատ խիստ ըլլալ եւ պարտաւորեցնել մեր պատգամաւորները որպէսզի չհամբերաշխողները յայտարարեն Դաշնակցութենէն դուրս:

Ասլան.— Ես կ'ուզեմ քննադատութեան մէջ արդար ըլլալ. ընկեր Ակնունդին իր բուռն քննադատութեան մէջ այնքան ալ արդար չէր: Պատգամաւորութիւնը որչափ որ քննադատելի է, նոյնչափ ալ մենք: Ես իմ քննադատութիւնս պիտի բաժնեմ երկուքի — անհատական եւ հաւաքական: Մենք սխալ ըրինք ընտրելով մարդիկ միայն դաշնակցական ըլլալուն համար. մենք շատ լաւ

գիտէինք որ Վահանը, Գարոն թուրքերէն չգիտէին եւ անպատրաստ են խորհրդարանական կեանքին: Ընտրութիւններու պայքարը մենք վարեցինք կազմակերպութեան ծախքով բայց հաշուեպահանջ չեղանք. ո՞ր ընտրական շրջանը հաշիւ պահանջեց եւ պատգամաւորը չգոհացուց: Երջանները պարտաւոր էին ընել այս եւ գոհացում չստանալու պարագային բողոքել կազմակերպական ճամբով եւ հակառակ պարագային նոյնիսկ մամուլի մէջ: Ես ալ իմ բաժինս ունենալով այս թերութեան մէջ, կ'անցնիմ քննադատութեան:

Դաշնակցական պատգամաւորութիւնը ոչ միայն չէ ունեցեր հաւաքական գործունէութեան արտայայտութիւն. ոչ միայն իր հաւաքական գործունէութեան պակասով թերացեր է, այլ եւ ունեցած է իր բացասական ազդեցութիւնը: Մենք մեր պատգամաւորներէն չենք կրնար պահանջել այն ինչ որ չունէին: Մի բան սակայն կրնայինք պահանջել, աշխատանքը, որ բացարձակապէս բացակայեր է: Մեր խառն ժողովներուն մէջ երբ իրենց գործունէութեան մասին փաստ կը պահանջէինք, ամիսներ կը սպասէինք ու չէինք ստանար: Վարդգէս, ի պատասխան մեր այս պահանջին մեզ ներքին գործոց նախարարութեան կը յանձնարարէր: Գեղամը կը կարծէր գործ կատարած ըլլալ ամէն մի հեռագրի առթիւ նախարարի դուռը ափ առնելով կամ փարլամենթի մէջ խօսք բարձրացնելով անհարկի կերպով, ինչ որ պատգամաւորի արժէքը կը կորսնցնէ: Հողային կամ այլ կարեւոր հարցի մասին ոչ մի խղճամիտ ուսումնասիրութիւն չէ եղած: Հողային հարցի մասին ներկայացուած նախագիծը, որ իբր գործունէութիւն ցոյց տուին պատգամաւորները, ոչ միայն պիտի լուծում չտար այդ կնճռոտ հարցին այլեւ, եթէ ընդունուէր, ամբողջովին պիտի քանդէր եղածն ալ, որովհետեւ նախարարութեան պատրաստած նախագիծի իբր հակառակադիմ մեր պատգամաւորներուն պատրաստած ու նախարարութեան ներկայացուածը, որ անկէ մերժուելու պարագային պիտի ներկայացուէր փարլամենթին — ոչ միայն բաւարար լուծում չէր տար հարցին այլեւ կը վնասէր անոր. քանի որ այդ նոր նախագիծը ընդունելու պարագային գոյութենէ պիտի դադրէր այն գոյութիւն ունեցող օրէնքը, որ եթէ գործադրուի լիովին գոհացում կու տայ արդէն հողային հարցի բաւարար եւ արդար լուծման:

Ասլան է հսկայ ռափոր Գարոնի ներկայացուցածի մասին, որ ոչ միայն հսկայ չէ, այլ եւ իր մտքի ծնունդը չէ: Նա ոչ մի խղճամիտ ուսումնասիրութիւն կատարած չէ հանրային շինութեանց մէջ:

Ո՞ր օրէնսդրական օրինագծի մէջ է որ մեր պատգա-

11.- Խօսքը կը վերաբերի Արմէն Գարոնի Փաստըմաճեան Գարեգին, որ Վարդգէսի (Սերենկիլեան Յովհաննէս) հետ երեսփոխան էր Կարոն: Արմանագրութեանց մէջ Գարոն արեւմտահայ հնչիւնով ընդհանրապէս գրուած է Կարո ձեւով:

մաւորները յանձնախումբերու մէջ իրենց առաջարկը ներկայացուցին, ընդունիլ տուին կամ մերժեցան. չբռնին. ընկեր Ակնունին մեծ դառնութեամբ կ'ըսէր թէ չկրցանք հայ փարլամենթականներու պլոքը կազմել. չկրցանք եւ պիտի չկարենանք, որովհետեւ մեր հայ պատգամաւորները, բոլորն ալ չեն եղած հայկական ընտրութեան արդիւնք. իթթիհատականները այն ատեն մեզ դիմած են, երբ անկարող եղած են անկախօրէն ընտրել. իսկ երբ կրցած են՝ ընտրած են անկախօրէն եւ ընտրած են մեր հակառակորդը: Մեր պատգամաւորները չզգացին իրենց վրայ հսկողութիւն եւ հետեւաբար չունեցան բաղձալի գործունէութիւնը: Միակ մարդը որ կրցաւ յաջողապէս արտայայտուիլ Զօհրապն է, որ նոյնպէս աշխատանք չկատարեց: Եթէ ան բախում ունեցաւ Զօհրապի հետ եւ Վարդգէսը կը գտնեմ իրաւացի, որովհետեւ Զօհրապը քննադատելի էր յաճախ, օրինակ երբ ան կը պաշտպանէր Մերակոյտը: Զօհրապը չէր կրնար այն անհամբերաշի դիրքը բռնել եթէ իր ետեւը տեսնէր դաշնակցական պլոքը: Եւ եթէ Զօհրապ ի նրա պատ Ալլախիոյ փառաւոր ճառ արտասանեց եւ ոչ ի նպատակ հայաստանի, պատճառը շատ պարզ է: Որովհետեւ Ալլախիա գէնք ունէր ձեռքը, իսկ ոչ միայն հայ պատգամաւորները անհամբերաշի էին, այլեւ դաշնակցականները չունէին իրենց պլոքը:

Ուրեմն մենք իրաւունք չունինք անոնցմէ պահանջելու իրենց չունեցածը. կրնայինք աշխատանք պահանջել, որ չունեցան: Ոչ ալ յարաբերութիւն մը կատարուեր [է]. ոչ իսկ երեք տարուայ ընթացքին պատգամաւորներէն երկուքը իրենց ընտրական շրջանը գացած են՝ խնդիրներուն տեղին վրայ ծանօթանալու համար:

Լեւոնեան.— Ես բնաւ տարօրինակ չեմ համարեր որ քննադատութիւնները այսչափ հեռու կ'երթան եւ անձնականութիւններ կը շօշափուին: Երբ վերջին երեք տարուայ ընթացքին քննադատութիւններ կ'ըլլային, Դաշնակցութեան ղեկավար մարմինը գոհացում չէր կրնար տալ, առարկելով թէ Ե. Ընդհ. Ժողովը լիազօրութիւն տուած է իր պատգամաւորներուն: Ուրեմն, մեղադրելին Երդ Ընդհ. Ժողովն է, որ առանց նկատի ունենալու պատգամաւորներու իրական արժէքը, տրուած է անոնց այս լայն արտօնութիւնը: Այս սխալը պէտք է այս ժողովէն շտկուի: Ընկեր նախագահը շատ լաւ բնորոշեց Վահանի ճառը, զայն անուանելով ինքնամբաստանութիւն, որուն առջեւ թէեւ կ'ակնկալուէր որ քննադատները գինաթափ ըլլային, բայց ես կը կարծեմ ընդհակառակը. ան աւելի կը գորացնէ քննադատները: Երբ մեր պատգամաւորները հասկցան թէ իրենք անյարմար են այդ պատասխանատու պաշտօնին, պէտք է հրաժարէին անմիջապէս:

Տիտիլիլիի բացակայութիւնը ամէնէն աւելի երեւան եկած է մեր պատգամաւորներու գործունէութեան մէջ. կրնամ բազմաթիւ փաստեր բերել: Շատեր կ'ըսեն

թէ լեզուին անծանօթ են. փարլամենթական գործունէութիւնը ճառերու մէջ չէ եւ այն ո՞ր լեզուն է որ երեք տարուայ մէջ կարելի չէ սորվիլ: Պատգամաւորութեան երեք տարուան գործունէութիւնը ոչ մէկ փաստով ապացուցած է թէ փարլամենթի մէջ կայ դաշնակցական ֆրակցիա: Զեմ ուզեր ծանրանալ աշխատանքի մասին, որուն մասին խօսեցաւ ընկեր Ատոմ: Քանի՞ անգամ մեր պատգամաւորները երկիր, իրենց ընտրական շրջանակը գացած են: Իսկ երբեմն գնացողները իրենց շրջանը գնացած չեն: Այստեղ պլոքի խնդիր կար, կ'ըսեմ.— եթէ դաշն.ները, որ դամոկրիան սրի պէս իրենց գլխին վրայ կախուած ունէին Դաշնակցութիւնը, ու պլոք չկազմեցին, ինչպէ՞ս կ'ակնկալենք ամբողջ հայերու պլոքը.— նկատի ունենալով մեր պլատֆորմը, անկարելի կը նկատեմ ամբողջ հայկական պլոքի կազմութիւնը. եթէ ըլլար իսկ վնասակար պիտի ըլլար. որովհետեւ այդ հայ պլոքին մէջ ալ մեր ընկերները բախում ունենալով՝ մեզ պիտի վարկաբեկէին. հետեւաբար, եթէ կարելի չէ ընկերվարական փլաթֆորմի մը շուրջ համախմբել հայերը, գոնէ գանոնք համախմբելու է ազգային ընդհանուր բնոյթ կրող հարցերու շուրջ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ ԺԵ.

28 Օգոստոս 911 (առաւօտ)

Ներկայ՝ Պարսկաստանի, Պալքանի, Ամերիկայի, Պոլսոյ, Կարինի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշ-Սասունի, Սամսոն-Մարգուտանի, Ուս. միութեան պատգամաւորները եւ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը. վճռական ձայնով հրաւիրուածներէն՝ Բաբա, Տիգրան, Աւօ. խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն՝ Ասողիկ, Սաթօ, Ակնունի, Ժիրայր, Մարգալետ, Մար, Վահան, Ասլան, Մելօ:

Կարդացուեցաւ ընկեր Անդրանիկի³ նամակը, որով իր շնորհաւորութիւններուն հետ՝ կ'իմացնէր նաեւ իր չկրնալ ներկայ գտնուիլ ժողովին:

Օրակարգի խնդիրն էր՝ շարունակութիւն Օսմ. փարլամենթի դաշնակցական երեսփոխաններու գործունէութեան.— Կը կարդացուի կրկին վերջին Ընդհ. Ժողովի որոշումը՝ Օսմ. փարլամենթի դաշնակցական երեսփոխաններու պարտականութիւններն ու իրաւասութիւնները գծող:

Վահագ (ի դիմաց Բիւրոյի).— Կը շեշտէ երէկուան ժողովին մէջ ըսուածները՝ հաւաքական գործունէութեան բացակայութեան մասին եւ խորհրդարանական Բիւրոյի մը պէտքը: Այս ուղղութեամբ երեսփոխաններու գործունէութիւնը այնքան անգոհացուցիչ եղած է

որ՝ Արեւմտ. Բիւրոն ինք հարկադրուած է նամակով դիմել երեսփոխաններուն: Շատ բաներ ոտքի վրայ խօսուած են. աշխատանքի բաժանումը բացակայած է. նախ քան իթթիհատին ներկայանալը՝ խորհրդակցութիւններ քիչ անգամ տեղի ունեցած են, այնպէս որ հակասական դուրս եկած են Բիւրոն եւ երեսփոխանները. հակասական եղած է նաեւ անոնց գործունէութիւնը խորհրդարանին մէջ: Այս բանին մէջ ալ Բիւրոյի ջանքերը անզօր եղած են: Յաւալի կէտերէն մէկն ալ այն էր որ ընկերները անպատրաստ գնացին խորհրդարան. միակ Վահանն էր որ մէկ անգամ պատրաստուած հրապարակ եկաւ. աւելի նախընտրելի էր չխօսիլը՝ քան թէ անտակ կերպով հրապարակ գալը՝ ինչպէս եղաւ յաճախ.— օրինակ՝ Հայկական Հարցի մասին Վարդգէսի անպատրաստ հրապարակ գալը. այդ քայլին տպաւորութիւնը շատ ճշող էր: Մեր երեսփոխաններուն պակասեցաւ սխալեմատիկ աշխատանքը, տեղի տալով պատահական գործունէութեան մը: Ամէն անգամ կազմակերպութենէն եկած նամակները տրամադրելի եղան իրենց, որոնցմէ չօգտուեցան սակայն: Այս աշխատանքի պակասին մէջ մատնանշուած պատճառներէն զատ, գլխաւորը՝ ծուլութիւնն էր. երկրորդը՝ երեսփոխանական հանգամանքը եւ չորս տարուան պայմանը՝ որ ինքնահաճ կամայականութիւն մը առաջացուցած է անոնց մէջ. անոնք՝ ստեղծուած կապերը պետական շրջանակներու հետ՝ վերագրեցին կարծես իրենց հեղինակութեան, մոռնալով Դաշնակցութեան դերն ու գոյութիւնը, եւ այն մտայնութեամբ որ՝ կարծես ալ պէտք չպիտի ունենան անոր. երրորդը՝ Ընդհ. Ժողովի որոշումի եւ փոխարարութեան անստորգ գծումն է: Չնայելով որ իրենք կազմակերպութեան ծախքերով ընտրուած էին, իրենց դրամական մասնակցութիւնը չբերին անոր, հակառակ Բիւրոյի դիմումին, բացի այն համեստ մասնակցութենէն՝ որ բերին գրպանի ծախսերուն:

Անտոն.— Ընդհ. Ժողովի որոշման ծանօթ ըլլալէ յետոյ՝ կ'ուզէ շեշտել որ՝ Դաշնակցութեան գործունէութեան մէջ փարլամենթի գործունէութիւնը ամէնէն անգոհացուցիչն է: Վահանը ինքը շեշտեց որ՝ իրենք բարոյական հեղինակութիւն ունէին միւսներուն եւ ժողովուրդին վրայ, որովհետեւ յեղափոխական կազմակերպութեան մը ներկայացուցիչն էին: Մեր պատգամաւորները ոչ միայն չպահեցին այդ կազմակերպութեան փրեսթիժը այլ վարկաբեկեցին զայն. պատգամաւորները ամէնէն առաջ ժողովուրդին ներկայացուցիչն են, բայց ոչ մէկ անգամ չկանգնեցան ժողովուրդին ցաւերը ցուցնելու համար. եթէ խորհրդարանին մէջ լսողներ չըլլային, դուրսը լսողներ կ'ըլլային: Եթէ այդ ալ չէին կարող ընել, գոնէ կրնային պատրաստուած նիւթերը տպագրել եւ ցրուել: Երկրի քիւրտերն անգամ մեզ միլիւն վճարի կ'ընդունին եւ այդ ակնածանքով կը դիմեն. պէտք է արդարացնենք այդ յոյսերը: Եթէ մեր երեսփո-

խան ընկերները պատրաստ չէին, կրնային գոնէ առաջնորդուիլ մեր գրականութենէն. Վլախովի մը մէկ ճառը ամէնքը յարգանքով լսեցուց դէպի այն. մեր ընկերներէն ոչ մէկը ինքզինք նրա դիրքին մէջ դրաւ: Պետական պատրաստութեան չենք սպասեր, բայց կը պահանջենք իրենցմէ ժողովուրդին շահերուն պատշտպան ըլլալ: Լեզու չգիտէին, այո՛, բայց չէին կրնար գրել տալ եւ կարողաւ: Այս երկիրը օրէնքներով կը բարեկարգուի. մենք հարկադրուած ենք անբաժան մնալ թուրքերուն հետ. անոնք այդ գիտեն. անոր համար է որ օրէնքներու մշակման մէջ մենք պէտք ենք մեր մասնակցութիւնը բերել: Երկաթուղին կարեւոր է. դեռ փարլամենթէն առաջ այդ խնդիրը դրուեցաւ. բայց ոչ մէկ ատեն ելան պաշտպանելու խորհրդարանին մէջ: Ինչո՞ւ պէտք էր կապուիլ ոեւէ Չէսթրի կամ այլ ընկերութեան անունին. մեզի երկաթուղի պէտք էր. այս է էականը. ինչո՞ւ Դաշնակցութեան անունը կապուած չպիտի ըլլար այդ կարեւոր գործերուն մէջ. բանուորական օրէնք կը կազմուի, չեն գար առաջ, տարի կ'անցնի եւ շատ վերջը հրապարակ կու գայ ան: Ի՞նչ մեծ դժուարութիւն կար աշարի¹² օրէնք մը պատրաստելուն մէջ: Պաշտօնեաներու եւ գինուորականներու ամսականները բարձրացուցին, ու փոխանակ անոնց դէմ արտայայտուելու՝ զինուորները անդին մոռացութեան տրուեցան. անոնց մասին ոչ ոք մտածեց: Մեր ընկերները երբ դիրքի ելան, համեստութենէ զրկուեցան: Մեր մէջ քննադատութիւնը պակասեցաւ. քննադատութեան պակասը եղաւ այս վիճակին պատճառը: Գաւառ գնալու եւ գալու խնդիր եղաւ. բայց գաւառ երթալ եւ ոչինչ չընել ի՞նչ կը նշանակէ. կ'երթան պարզ ճանապարհորդութեան համար եւ ճանապարհածախսի համար: Ասոնք մեր աւանդութիւններուն հակառակ, հակոտնեայ երեւոյթներ են. կուսակցութեան դրամականին մասնակցելու պարագան՝ կարեւոր էր նկատի առնելով սոսկ ընկերական-յարաբերական տեսակէտով: Ոչ իսկ՝ իրենց քայլերը պատշաճեցուցած են կազմակերպութեան պատասխանատու ընկերներու քայլերուն ու Բիւրոյի ներկայացուցիչին հետ. հակառակ ուղղութեամբ են գործած: Ժամանակաւոր կառավարութեան մէջ միայն պիտի մըտնէին պատգամաւորները, այն եւս երբ յեղափոխական շրջանի մը մէջ գտնուէինք, մինչդեռ մենք ուժ տուած ենք Գարոյի թեկնածութեանը: Եթէ մեր պատգամաւորները այս կամ այն յարաբերութիւնը պահեցին՝ աւելի ի հաշիւ իրենց դիրքերու պահպանմանն էր: Մինչեւ որ փոխթեքանութեան, դիրքի պահպանման, ուժիկներու աւելացման եւ այլ հետամտութիւններուն վերջ չտրուի, պիտի կրկնուին այս երեւոյթները: Գալով իրենց ուղղութեան յառաջիկային համար, այսքան կ'ըսեմ որ կարելի չէ բոլոր հայ պատգամաւորները միաց-

12.- Աշարը՝ բերքի տասանորդ տուրքն է:

նել. բացի ազգային իրաւունքներու պաշտպանութեան խնդիրէն, միւս խնդիրներու մէջ չենք կրնար միանալ անոնց. մենք պիտի ձգտինք աշխատաւորական խմբակ առաջ բերելու, մինչեւ այդ՝ իթթիհատի ձախ թեւին հետ կը յարաբերուինք եւ գործակցինք ի հարկին. եթէ կարելի է կ'աշխատինք նոյնիսկ անոնք ալ կապել եւ այդ ուղղութեամբ տանիլ մեզի հետ:

Ակնունդը.— Վիճաբանութեան այս ուղղութիւնը մեզ նպատակի չի տանիր: Եթէ ժողովը տեսութիւններու շուրջ կանգ պիտի առնէ, չեմ կարծեր որ օգտակար ըլլանք: Եթէ պատգամաւորութեան թերի կողմը կարգաւորելով գործնական խնդիրներու շուրջ արտայայտուելինք՝ այն ատեն խօսինք:

Վահան (ի պատասխան).— Ոստղները, մասնաւորապէս երկու երեք ընկերներ, համախորհուրդ գործունէութեան մասին անբաւարար գտան իմ ըսածներս. անոնք հաւաքական եւ համախորհուրդ գործունէութիւնը շփոթեցին. հաւաքական գործունէութիւն եղած է, բայց ոչ համախորհուրդ գործունէութիւն: Հաւաքական գործունէութիւնը ազգային եւ աշխատաւորական բնոյթ ունեցող խնդիրներու մէջ արտայայտուած է. համախորհուրդ գործունէութիւն չենք ունեցած, պարլամենտի մէջ ընկերներու արտայայտութեան եւ քուէարկութեան պարագային: Պատճառ՝ որովհետեւ թուրքիոյ կեանքին համար փարլամենտի գոյութիւնը նոր երեւոյթ մըն էր. դրութեան եւ ռեֆորմի յանկարծական փոփոխութիւնը բոլորովին անսպասելի վիճակի մէջ դրին մեզ. կային խնդիրներ՝ որոնք անմիջական լուծում կը պահանջէին, զորս չէին նախատեսած մեր կուսակցական ժողովները: Այս պարագային է որ իւրաքանչիւր դաշնակցական պատգամաւոր արտայայտուեցաւ եւ գործեց իր տեմպերամէնտով¹³ եւ մտածելակերպով: Երազիրը թէ եւ բոլոր ընկերներ ընդունած են, սակայն տաքտիկի մէջ շատեր կը տարբերին անոնցմէ. այս պարագան արտայայտուած է սահմ. ռեֆորմի օրով, զանազան ընկերներու գործունէութեան շուրջ: Տիսիփիլինը անշուշտ դեր ունի, բայց մոռնալու չէ անհատին գիտակցութիւնն ու կուսակցական հասկացողութիւնները: Ծիչդ է որ պետական կեանքին մէջ անհատական սերտ յարաբերութիւններու պահպանման շնորհիւ մեր դիմադրական ուժը թուլացած է եւ այս ցաւելով դիտել տուի. արդէն նոյնիսկ մեծ նշանակութիւն ունեցած է մեզ անդամաւորութեան տեսակէտէն, օրինակ՝ ազգային խնդիրներու մասին հրապարակ չգալը հէնց իթթիհատական բարեկամներու խորհուրդն է. մեզմէ ոմանք կը կարծէին թէ մօտիկ յարաբերութեամբ աւելի կը շահէինք, քան թէ դիմադրական դիրքով. այս կարծիքները կարելի չեղաւ հաշտեցնել միմեանց հետ. միայն այն եղաւ որ սերտ յարաբերութիւն պահելու հոսանքը աւելի տիրապետող եղաւ եւ այդպէս ալ շարունակուեցաւ: Մեր կուսակցութիւնը մեզ ընտրած է այլ նկատումներ

ով. ան կը կարծէր որ լեզուէ, ընդունակութենէ աւելի՛ յեղափոխական տեմպերամենտ ունեցող մարդիկ դրկել հարկաւոր է, որովհետեւ սահմանադրութեան մասին վստահ չէր: Ծիչդ է որ քուէի մէջ ալ բաժնուեցանք — Հագգը փաշայի դահլիճին ի նպաստ եւ աննպաստ քուէ տալու մէջ — բայց այդ պարագային ալ ձայները հաւասար էին, որով տիսիփիլինի խնդիր չէր կրնար գոյութիւն ունենալ: Հայկական ցաւերու մասին փարլամենտի մէջ չխօսուելը արդիւնք է այլ պատճառի. սկիզբի շրջանին որոշուած էր արտայայտուելի. ինչպէս որ եղաւ քանիցս. վերջը ինչո՞ւ չարտայայտուեցանք — մեզ ալպաններու եւ արաբներու հետ բաղդատել ճիշդ չէ. մեր քիչուորութիւնը, զանազան թուլութիւնները դեր ունին այս գործին մէջ. անոնց հետ միացան շատ անգամ թուրքեր եւ այլ ազգութիւններ: Մենք արտայայտուելէն արդիւնք չէինք սպասել, աչքի առջեւ ունենալով փարլամենտի մտայնութիւնը. լեզու չգիտնալը նոյնպէս մեծ դեր կը կատարէր. դատ մը պաշտպանելու համար պէտք է լեզւին գիտակ ըլլալ: Պլոքներ չկազմելու մեղադրանքին գալով՝ հայ պատգամաւորներու հետ ազգային հարցերու մասին միշտ փորձեր եղած եւ անյաջողութեան մատնուած են, եթէ միշտ ալ ինքզինքնին համաձայն ցոյց տուած են: Ընդհանուր մեղադրանքներու մէջ կան անպայման արդարացի կէտեր: Ընտրութեանց օրերուն Դաշնակցութիւնը ամէն կերպ աշխատեցաւ սահմանադրական տարրերը կապել մեզ հետ, մեկնելով նաեւ այն հիմնակէտէն որ ընտրուածները դաշնակցական թեկնածուներ ըլլան եւ այդ բնական էր եւ պէտք էր որ այդպէս ըլլար: Հողային հարցին մասին եղած աշխատանքները անհատներու աշխատութեան արդիւնքը չէ, այլ հաւաքական ժողովներու: Երկաթուղային հարցի շուրջ եղածներն ալ կ'անտեսուին: Յաջողեցանք պատգամաւորները ժողովի հրաւիրելու երկու անգամ. առաջինին եկան 60-70 հոգի. երկրորդ անգամ է որ — ինչ անցաւ դարձաւ չենք գիտեր — այլ եւս չեկան: Բանւորական օրինագծին ուշանալուն պատճառն այն է որ կը փափաքէինք ուրիշ պատգամաւորներ եւս միացնել անոր: Սեկցիաներու մէջ եւս աշխատութիւններ կատարուած են — օրինակ, ընկերներէն ոմանց մասնակցութիւնը ու օգտակարութիւնը հանրօգուտ եւ երկաթուղային սեկցիաներու մէջ, ինչ որ նոյնիսկ կը խոստովանին թուրք երեսփոխանները, տարբեր խնդիր որ չօշափելի արդիւնք չէ տուած: Չէսթրի ծրագրին ընդունելիլը յանձնաժողովէն՝ մեր ընկերներու ջանքերուն արդիւնքն է. կրթական խնդիրներու մէջ նոյնպէս ունեցած ենք դեր. եւ այս շատ մը խնդիրներուն մէջ ղեկավարուած ենք միշտ Դաշնակցութեան ծրագրէն: Մեզմէ ոչ մէկը պատգամաւորի իր պաշտօնին վրայ դողացող չէ ու պիտի չվարանի հրաժարել անկէ. բայց կային նկատումներ.

13.- Տնայեղամենտով խառնուածքով:

տումներ. կուսակցական տիսիփիլինը, հրաժարման պարագային յաջորդ մը չգտնուելը, յառաջիկային օգտակար ըլլալու յոյսերը՝ որուն արդիւնքը նկատելի եղած է տարուէ տարի: Ռոճիկներէն կազմակերպութեան չտալու ցանկութիւն չկայ. բայց այլ եւ այլ պատճառներով չեն կրցած անմիջապէս գոհացնել. ոչ ռոճիկները, ոչ ալ իրենց դիրքը փոխած են իրենց ներքին մարդը: Անցնելով հիմնական խնդրի մը՝ խղճի եւ ծրագրի խնդրին — իրականութեան մէջ այնպէս է որ՝ արդէն տարիներու ընթացքին մեր խիղճը ենթարկուած է այդ ծրագրին: Ամէն քայլափոխումի մեր մէջ երկուութիւն մը կը ցցուի, միացնելով նախաձեռնութեան ոգին եւ գոհելով մեր սեփական մտածողութիւնները: Միայնք շատ կան. ասկէ յետոյ պէտք է որոշ գծել պատասխանատուութիւններու սահմանը թէ մեզ եւ թէ գալիքներուն համար:

Աստղիկ.— Ազգային խնդիրներու եւ ցաւերու մասին չխօսուելու մէջ երեսփոխանները պատասխանատու բռնելու չէ, որովհետեւ Ընդհ. ժողովը ոչ մէկ ցուցմունք եւ պարտադրութիւն ըրած է: Այս բոլորին հետ՝ երեք տարուայ ընթացքին ներկայացած պատեհութեամբ արտայայտուած են իրենք. վերջին ամիսներու ընթացքին եղած արտայայտութիւնը անակնկալի արդիւնքն է: Ամէն խնդրի համար դիմում եղած է, թէ եւ առանց բաւարար լուծման:

Նախագահը բաւարար համարելով քննադատութեան պատասխանները կ'առաջարկէ միջոցներ ցոյց տալ:

Աստղ.— Ժողովը կրնայ կանոններ սահմանել, սակայն այդ կանոնները գործադրող ուժ հարկաւոր է: Առաջադրուած խնդիրին գոհացում տուող միակ էականը՝ աշխատանքն է. այն օրը որ գործադրուեցաւ այդ պայմանը, այն օրէն կը դարձանուի ցաւը:

Մարգարէ.— գործել հաւաքաբար եւ կուսակցութեան հետ խորհրդակցաբար. դաշնակցական պատգամաւորները՝ հարկ է որ նախ իրենք իրենց մէջ հաւաքումը ներկայացնեն կազմելով կորիզը հայ պատգամաւորութեան եւ ղեկավարելու համար զայն ու ձգտին աշխատաւորական խմբակցութեան մը առաջացումին:

Ասլան.— Վճուել անհրաժեշտաբար որ դաշնակցական երեսփոխանութիւնը համախորհուրդ եւ հաւաքաբար գործէ եւ ներկայացնէ կազմակերպութիւն մը: Ընդունելով անոնց ինքնուրոյն գոյութիւնը՝ պատասխանատուութեանց կէտերը ճշդել եւ կազմակերպութեան համապատասխան մարմինի հետ համերաշխ եւ համախորհուրդ գործունէութիւն մը պարտադրել:

Գրգո.— Հարկ է լաւ ճշդել իթթիհատի եւ մեր երեսփոխաններու յարաբերութեան պարագաները, որպէս չի յառաջիկային անոնց գործունէութիւնն ու արտայայտութիւնը չկաշկանդուի այս կամ այն նկատումներով: Բիւրոյի դերը պէտք է զգացնել եւ Օսմ. երեսփոխանութեան պէտք է տալ խողովակի մը դերը: Կը կարդացուի Պոլսոյ Երջ. ժողովի հետեւեալ բա-

նաձեւը, որ կ'ընդգծէ հետեւեալ միջոցները.

«Մեկնելով կուսակցութեան ու հասարակութեան շահերու տեսակէտէն, միանգամայն եւ քննութեան առնելով Օսմ. փարլամենտի դաշն. երեսփոխաններու գործունէութիւնը իրենց աշխատանքին ու արտայայտութեան մէջ, Երջ. ժողովը ոչ միայն գտաւ զայն անգոհացուցիչ, այլ բացասական:

«Իբրեւ արդիւնք Ա. նստաշրջանէն ստացուած փորձառութեան եւ իր այս եզրակացութեան, կ'առաջարկուի Զ. Ընդհ. ժողովին ա) կուսակցութեան փրեսթիփին եւ հասարակութեան շահերուն չվնասելու նախանձախնդրութեամբ հրաժարիլ ընկերներու թեկնածութիւնը պաշտպանել, եթէ չգան յարմարագոյններ: բ) Պաշտպանել անպայման թրքերէնի հմուտ ընկերներու թեկնածութիւնը: Յարմարագոյն ընկեր չգտնուած պարագային նախընտրել մեր տեսակէտներուն մօտ դեմոկրատիկ սկզբունքներու տէր ոչ-դաշնակցական անհատներ: գ) թեկնածուներու անուանումը չձգել տեղական կազմերուն, այլ թուրքիոյ Ռայոնական ժողովին: դ) Հետամտիլ հայ երեսփոխաններու թիւը ընդլայնելու փարլամենտին մէջ: ե) Դաշնակցական երեսփոխաններէն փարլամենտին մէջ ունենալ ուրոյն խմբակ եւ պարտադրել զանոնք արտայայտել իրենց ինքնութիւնը ու դաշնակցական տեսակէտները եւ, համաձայն կուսակցութեան կողմէ կազմուած գործունէութեան նոր փրակթորմի, ի հարկին գործակցիլ իթթիհատին եւ խորհրդարանական ազատական տարրերու հետ: զ) Պարտադիր դարձնել դաշն. երեսփոխաններու հաւաքական պատասխանատուութիւնը թէ կուսակցութեան առջեւ, իրենց գտնուած վայրի կեդր. մարմինի միջոցով եւ թէ իրենց գործունէութեան մէջ. միաժամանակ պահելով սերտ յարաբերութիւն իրենց ընտրական շրջանի հետ: է) Երեսփոխանները ընտրական ֆոնտին կը մասնակցին որոշ գումարով, փոխադարձ համաձայնութեամբ որոշելով զայն համապատասխան մարմինի հետ. իսկ իրենց անդամավճարները ըստ սակի կը վճարեն իրենց գտնուած եւ ապրած վայրի տեղական մարմին, իբրեւ սոսկական անդամներ կազմակերպութեան»:

Ընկեր Վարանդեան կը կարդայ իր բանաձեւը, որ սակայն քուէարկութեան դրուելէ առաջ հարց կը տրուի:

Ակնունդ.— Չատել հարկ է յառաջիկայ ընտրութիւններու եւ յառաջիկայ պատգամաւորներու ընտրութեան պարագան, ներկայ պատգամաւորներու գործունէութեան քննադատութիւններէն եւ յառաջիկայ նստաշրջանի գործունէութենէն:

Աստղ.— Հարցին շուրջը պէտք եղածին աւելի խօսուեցաւ եւ շօշափուեցան այս կամ այն կէտերը: Այժմ կարգը բանաձեւերու քննադատութեան եւ քուէարկութեան մասին է:

Օրակարգի առաջարկուած կերպով դասաւորման

մասին կարծիքներու փոխանակութենէ յետոյ որոշուեցաւ բոլոր մնացած խնդիրներու մասին խօսիլ եւ բանաձեւ ներկայացնել քուէարկութեան համար:

Ակնուէր.— Առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները ըստ մեր ծրագրին եթէ համեմատական սիստեմի դրութեամբ տեղի ունենան խնդիրը կը դիւրանայ: այս առաջարկը պէտք է ընդունիլ տալ իթթիհատին պահանջելով մօտ 20 պատգամաւոր: Թուրքերու թիւը կը հաշուեն 7 միլիոն, արաբներուը 10 միլիոն, յոյն 3.5 միլիոն, հայ՝ 2 միլիոն, քիւրտ՝ 2.5 միլիոն, պուլկար՝ 1 միլիոն, Ալպան՝ 2.5 միլիոն: կան ազգութիւններ որ այս թիւերը կը շատցնեն, օրինակ յոյները, թուրքերը եւ արաբները: Թուրքերու մէջ այն ձգտումը կայ որ ազգերու բաժանումը տրուի ոչ թէ ըստ ազգութեան այլ ըստ կրօնի: այս համեմատութեամբ իսլամներու թիւը կը հասնի մօտաւորապէս 22 միլիոն: քրիստոնեայ 7 միլիոն: Այս տեսակէտին դէմ է Դաշնակցութիւնը: Հոս աւելի գերիշխանութեան պահպանման նկատմամբ են որ կը խօսին, թէ եւ թուրքերը որոշ գիջումներ ընելու տրամադիր էին հայերու վերաբերմամբ, ընդունելով անոնց ուղղամտութիւնը: Այս խնդիրն է որ պէտք է քննուի: Իր կարծիքն է՝ առանց քոմիտիսի պաշտպանել համեմատական ընտրութեան սիստեմը: անցեալ շրջանին մէջ թեկնածուներու ընտրութիւնը դրուած էր բուն կուսակցութեան հողի վրայ, ուր դժուարութեանց բախուեցաւ, որովհետեւ թէ անձի եւ թէ օրինական արգելքներ եղան: Այս պատճառով ալ հարկ է ընդունիլ — եթէ դաշն: շարքերու մէջ չկան համապատասխան անձնաւորութիւններ՝ այդ պարագային ոչ-դաշնակցական յարմարագոյն հայ թեկնածուներու տալ կամ միջկուսակցական ձեւին հակիլ եւ ծայրայեղ պարագային՝ միջազգային ձեւին: Նախորդ ընտրութիւնները եղան տեղական մարմիններու եւ Պատասխանատու մարմնի համաձայնութեամբ: Այս շրջանին համար ալ հարկ է յատուկ ընտրական Բիւրօ ստեղծել որուն նպատակն ըլլայ այդ գործով զբաղիլ, իսկ ձեռնհաս մարմինները 4-5 ամիս առաջ մտնեն գործի մէջ եւ ուժեղ պրոպականդ մղեն: Դրամական գործին մէջ այն կարծիքն է որ այդ պարտականութիւնը ոչ թէ ստիպման մը տակ պիտի իրագործուի այլ իրենց անհատներու բարոյական հասկացողութեան պէտք է թողուլ:

Դեռ խօսողներ մնացած ըլլալով՝ շարունակութիւնը վերապահուեցաւ յաջորդ նիստին:

Նիստ ԺԶ.

28 Օգոստոս 911 (կէսօրէ ետք)

Ներկայ՝ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը, Մուշ-Սասունի, Պոլսի, Կարինի, Տիգրանակերտի, Սեբաստիոյ, Սամսոն-Մարզուանի, Պալքանի, Տրապիզոնի, Պարսկաստանի, Ամերիկայի, Կեսարիոյ, Ուս. միութեան պատգամաւորները: Վճռական ձայնի իրաւունքով՝ Աւօ, Բաբա, Տիգրան, խորհրդակցական ձայնով՝ Մելօ, Վահան, Մար, Սաթօ, Ժիրայր, Ասողիկ, Ակնուէր, Ալպան: Ընդամէնը 18 վճռական եւ 7 խորհրդակցական ձայն:

Շարունակութիւն նախորդ օրակարգի խնդիրին.—

Ատում.— Ակնուէրն լաւատես է դէպի ընտրական հարցը: Ճիշդ է որ Դաշնակցութեան սկզբունքներէն մէկն ալ համեմատական ընտրութեան կիրարկման խնդիրն է: բայց երբ հարցը գործնականին կու գայ խնդիրը կը տարբերի: Պատգամաւորական ժողովի թեկնածուներու նշանակումը պէտք է թողուլ Ռայոնական ժողովին, ինչպէս ըրաւ Կովկասը, Պարսկաստանը: Նոյնն է նաեւ Թուրքիոյ համար, այլ կերպ վարուելով անհետեւողական քայլ մը առած պիտի ըլլայինք: Ընտրութեան ձեւին գալով՝ կ'առաջարկուի բանակցիլ իթթիհատին հետ, ինչպէս եղաւ անցեալի մէջ, քանի որ անոնք էին յաջողցնող մեր թեկնածուներուն ընտրութիւնը:

Ճիշդ է որ այդպէս ըրին, սակայն՝ այն վայրերու մէջ՝ ուր մեր թեկնածուներու յաջողութիւնը ակներեւ էր՝ այն ինչ՝ քիչ-հայաշատ կեդրոններու մէջ մեր թեկնածուներու ընտրութիւնը ետ մղուելով անգոյն մարդիկ առաջ քուցեցան: Կուսակցական թեկնածուներ առաջ քուցու համար մեր ուժն ու ազդեցութիւնը գործածեցինք անցեալի մէջ, այդպէս պիտի ընենք նաեւ ապագայի՝ վերաբերմամբ: Բայց այսքանը բաւ չէ. ընտրութեանց ատենի յաջողութեան շանսերն ալ նկատի ունենալու ենք: Անցեալ ընտրութեանց ատեն յայտնի համարձակ ընդդիմութիւն չկար, որովհետեւ համար կար մինչդեռ այժմեան «Իթթիհատ»ը յայտնի համարձակ հակահայկական, հակադաշնակցական է: Հետեւաբար ամէնէն առաջ մեր կուսակցական ուժերուն վրայ վրձնաւորու եւ զանոնք ուժեղացնելու հետամտելու ենք: Մեր գլխաւոր աշխատանքն ու դերը երկրորդ կարգի ընտրութեանց պահուն պէտք է արտայայտուի, առաջին ընտրութեանց պարագային առանց մեր ընտրելիներու մասին յայտնի եւ սուր բնաւորութեամբ արտայայտուելու: Ոեւէ անփութութիւն եւ անտակտութիւն եղածն ալ մեր ձեռքէն կը տանի: «Իթթիհատ»ը եւս իր

14.- Բնագրին մէջ՝ «անցեալի վերաբերմամբ», ինչ որ արտագրութեան սխալ պէտք է համարել:

մասին մտածելու հարկադրուած է, որովհետեւ անոր ալ կը պակսին յաջողութեանց շանսեր:

Մէմօ.— Եթէ համեմատական ընտրութեան մասին պնդենք, ներկայ փարլամենթի կազմէն աւելի վատ կազմ կ'ունենանք: իսկ քոմիտիսի դիմելով եւս արդիւնք չպիտի ձեռք բերուի, որովհետեւ առաջուց պիտի համաձայնին՝ ետքը չիրականցնելու համար: Ուրեմն երկու պարագային եւս մենք յաջողութեան շանսեր չունինք: Այս պայմաններուն մէջ մենք պիտի նախընտրենք ժողովրդի այն տարրերը՝ որոնք օրէնսգիտական հրատուութիւն ունին եւ մեզ մօտիկ են: Դրամական ծախքերու հոգացման համար նպատակաշարժար է ընտրական ֆոնտ ստեղծել, որուն մասնակցին կազմակերպութիւնը, շրջանները եւ իրենք պատգամաւորները: Ընտրութիւնները տարուելու են Բիւրոններու եւ Կ. Կոմ.ներու կողքին կազմուած ընտրական մարմիններու կողմէ եւ անոնց փոխադարձ համաձայնութեամբ նշանակուելով թեկնածուները:

Նշան.— «Իթթիհատ»ի հետ համաձայնութեամբ ընտրական պայքարին մէջ մտնելը նպատակաշարժար է եւ յաջողութեան յոյսեր կը ներշնչէ քան առաջարկուած միւս կերպերը: Գալով ընտրելիներուն՝ նախընտրելու է մեր նուազ պատրաստութեանը ուրիշներէն: Եթէ տարբեր կուսակցութեան հետ պիտի համաձայնինք՝ այդ պարագային հարկ պիտի ըլլայ նախ համաձայնութիւն կնքել կուսակցական հողի վրայ: Դրամական խնդիրին գոհացում տալու համար՝ սխալ է պատգամաւորներու ամսականները իջեցնել Բիւրոյի ընկերներու ապրուստի սակին՝ մնացածը վերապահելու համար կազմակերպութեան որովհետեւ անոնց պէտքերը իրենց դիրքին ու պայմաններուն համեմատելով անբաղդատելիօրէն աւելի են:

Տեղաւոր.— Հարցը թեկնածուներու անուանման տեսակէտէն է որ աւելի կարեւորութիւն ունի: Դժուար թէ մենք նախկին յաջողութիւնն ունենանք: Միակ ելքը միւս հայ կազմակերպութեանց հետ համերաշխութիւնն է: առանձին գործունէութեան մը պարագային ձախողութիւնն է որ կը սպասէ մեզի: Կուսակցական սուր հետամտութիւններէ տարուելու չենք. այն հայերը որոնց տեմբերամեանին եւ ուղղամտութեան վրայ վստահ ենք, պէտք չէ խորշիք անոնց թեկնածութիւնը առաջարկել:

Արամ.— Եթէ «Իթթիհատ»ի համերաշխութիւնը մեզի զօրավիզ չունենանք՝ այժմէն մեր անյաջողութիւնը ընդունելու ենք: կառավարութիւնը որոնց ձեռք որ ըլլայ՝ անոնց ոյժը պիտի գործածուի ի նպաստ ընտրութեան: Առաջին ընտրութեանց ատեն թեկնածուներու անունը տալու չտալու խնդիրը թաքտիքի հարց է, եւ ընտրելիին հետ կապուած. այս ալ տեղական խնդիր է: Եթէ մենք խնդիրին արմատական կերպով պիտի մօտենանք, այդ պարագային մեր սկզբունքը պիտի ըլլայ —

կամ լա՛ւ. [կամ] պատգամաւոր բնաւ. ու մեր թեկնածուներէն գատ տարբեր կուսակցութեանց չենք կրնար տալ մեր քուէները: Կուսակից եմ որ մեր ընտրելիները թուրքերէն լեզուն գիտնան: Կայ նաեւ Դաշնակցութեան հմայքի պահպանման խնդիրը, որ նոյնչափ դաշնակցական պատգամաւորներու պէտքը կը զգացնէ: Անցեալ ընտրութեան ատեն անփորձ էինք եւ հրապարակ եկանք աւելի ճառերով եւ անիրականալի պահանջներով, քան գործով եւ աշխատանքով: Թեկնածուներու անուանումը ռայոնական ժողովին ձգել անգործնական է: հարկ է Պոլսոյ մէջ կազմել կեդր. մարմին որ կեդր. կոմ.ներու հետ համախորհուրդ ընթացք տայ աշխատանքներուն եւ որոշեն թեկնածուները: կազմակերպուած պայքարը ամէնէն մեծ գրաւականն է յաջողութեանց եւ հէնց այդ ուժէն կախուած է նաեւ Իթթիհատի դիրքը: Պէտք է որ պատգամաւորները մասնակցին ֆոնտին, չհաշուելով իրենց անդամավճարները. սակայն հարկ է որ կազմակերպութիւնն ալ բերէ իր մասնակցութիւնը:

Մելօ.— Նախ պարզելու է թէ փարլամենթական գործունէութեան ծանրութեան կեդրոնը գուտ սոցիալիստական թէ ազգային տեսակէտի վրայ պէտք է կեդրոնանայ: Մենք չենք կրնար ցոյց տալ ընտրական շրջաններ՝ ուր հայերը աւելի ըլլան թուրքերէն: Այս պայմաններուն մէջ ոչ միայն դաշնակցական այլ եւ հայ երեսփոխաններու թիւն ալ պակաս պիտի ըլլայ այժմեան թիւէն: Համեմատական ընտրութիւններու մէջ երբ մենք համազգային ուժով աշխատինք՝ աւելի արդիւնք ձեռք պիտի բերենք եւ համեմատական ընտրութեան պահանջին ալ ուժ տրուած պիտի ըլլայ այդպէսով: Ընտրութեան արտակուսակցական ըլլալը վնասակար է: Քիչ մը շատ կը խօսուի պատգամաւորներու ամսականներու մասին, իբրեւ թէ մեծ բան մը ըլլար ստացածնին. նշանակութիւն չունի թէ Բիւրոյին հաւասար պէտք է ստանան անոնք: կազմակերպութեան մէջ անգամ ապրելակերպի անհաւասարութիւններ կան, ա՛յդ է որ պէտք է դարմանել նախ: Յաւալին այն է որ դրամի եւ դիրքի պատճառով անոնց բարոյական դերն ու դիրքն է որ կ'աղճատուի:

Անտոն.— Ընկերները կ'ուզեն փափկանկատ ըլլալ, առանց նկատելու որ՝ այն ինչ որ այսօր ընկերական շրջաններու մէջ գոյութիւն ունի ամէնէն մեծ անփափկանկատութիւնն է: Խնդիրը կուսակցական օրէնքի մասին է: գուցէ պատգամաւորները կ'ընեն անհատական օգնութիւններ եւս. սակայն այդ տարբեր է, կուսակցական պարտականութիւնը տարբեր: Որպէսզի մեր կուսակցութեան մէջէն այս ցաւը վերցնենք, հարկ է որ անհատական ակնկալութիւններուն սանձ դրուի: Երբ պատգամաւորներու մասին այս սկզբունքը ընդունինք, վաղը նոյնը պիտի տարածենք նաեւ պետական այլ պաշտօններու մէջ եղող ընկերներու վերաբերմամբ: Չայնի

4-5 առաւելութիւնը ինքնին մեծ նշանակութիւն չունի՝ ունէ լուրջ ճառ աւելի կ'արժէ քան 5 պատգամաւորի առաւելութիւնը: Մեր ազգաբնակչութեան թիւը անորոշ է. եթէ ստուգելու ելլենք՝ պիտի դիմենք կառավարութեան տոմարներուն, ուր ճիշդ չէ, ընդհակառակը շատ նուազ: Խնդիրը որակին մէջն է ոչ թէ թիւին մէջ. մեր մտաւոր զարգացումը, տնտեսական ուժն ու կշիռն է որ պէտք է նկատի առնուի. թէ փոքրամասնութեան իրաւունքի տեսակէտով եւ թէ այլ տեսակէտներով համեմատական ընտրութեան վրայ պնդելու չէ: Ընտրութեան քոնսիլիդները այժմէն նախատեսել դժուար է. միայն այն կ'ըսեմ որ աւելի նախընտրելի է մեր այս սովոր պատգամաւորները՝ քան թէ գանազան կարգի այլ անհատներ: Առաջուց հարկ է աշխատիլ հայ հասարակութեան մէջ համերաշխ հոսանք առաջացնելու, նոյն իսկ գոհացում տալով անոնց փափաքներուն. նոյնը նաեւ իթթիհատի վերաբերմամբ: Թեկնածուներու անուանումը նշանակելու է ռալոնական-չըջանային ժողովներու կողմէ. կազմելու է նաեւ փարլամենթական մարմին, որուն մէջ կը մտնեն ռալոններու ներկայացուցիչներ եւ պատգամաւորները եւս:

Կարգազեան.— Եթէ մեր պատգամաւորներու թիւի մասին կանգ կ'առնենք՝ ոչ այն նպատակով որ 2-3 հատը առանձին նշանակութիւն մը ունի, այլ անոր համար որ անոնք ձախ են, որոշ ուղղութեան տէր եւ իրենց որակով բարձր ու ազդեցիկ: Այնպէս որ քանի մը ուժեղ պատգամաւորներն ալ պիտի բաւեն մեր ցանկացած դերը կատարելու համար: Այս առթիւ, ընկերը ծանօթութիւններ տուաւ Պարսկաստանի պատգամաւորներու պայմաններուն մասին: Դրամական խնդիրը պատգամաւորները իրենք պէտք էին կարգադրած ըլլալ զգալով որ այդ կարգի խնդրի մը արծարծումը հոս անախորժ պիտի ըլլար իրենց համար:

Բաբա.— Աւելի լաւ է քիչ թիւով ուժեղ անհատներ, քան թէ շատ թիւով թոյլ տարրեր: Ես համամիտ կ'ըլլայի համեմատական ընտրութեան՝ եթէ մեր թիւը որոշ ըլլար, բայց քանի որ որոշ սթատիսթիք չկայ եւ թիւրիմացութեանց տեղի կ'ընայ տրուելի, նախկին ընտրական սիստեմի ու համաձայնութեան եղանակը կ'իրարկելու է յառաջիկային համար եւս:

Վահագն.— Առ այժմ ընտրութեան եղանակի եւ թեկնածուների մասին մտածել անժամանակ է: Եթէ մենք գուտ կուսակցական հողի վրայ կանգնինք՝ հայկական կեանքին մէջ նոր խնդիրներ եւ նոր ընդդիմութիւններ պիտի ըլլան: Սխալ պիտի ըլլայ լրսել թէ՛ իթթիհատին կոթնելով միայն կրնանք դաշնակցականներու ընտրութիւնը յաջողցնել. օգտուելու է ի հարկին ազատական տարրերէն, որոնց մէջ պարկեշտ եւ ձեռնհաս անձնաւորութիւններ չեն պակսիր եւ որոնց կարելի է ընդունիլ տալ մեր փլաթֆորմը: Նոյնիսկ միւս հայ կուսակցութեանց դէմ պայքարելու տեսակէտէն ասիկա

յարմարագոյն թաքթիքը կ'ընայ ըլլալ — այսինքն՝ մեզի հետ ունենալ ազատական տարրերը, որոնք կուսակցութիւններէն դուրս են: Դրամական խնդիրներու մէջ պէտք է նաեւ հաւասարութիւն եւ ոչ թէ առանձնաշընորհեալ ընկերներ — մեծամոլութեան առաջըր առնելու միակ ելքն է այս: Ընտրութեանց ահագին ծախք մը կը սպասէ մեզ, գոր այժմէն հարկ է հայթայթել եւ որուն մէջ հարկ է որ մեր պատգամաւորները գալ տարիէն իրենց մասնակցութիւնը բերեն:

Մաք.— Համեմատական ընտրութեան վրայ թեթեւ կերպով կը նայուի. այն ինչ Թուրքիոյ այժմեան իրականութեան մէջ միակ յարմար սիստեմն է որ մեզ կ'առաջնորդէ դէպի ապակեղորոնացում: Պէտք է այդ պահանջով հրապարակ գալ ընտրութեանց առթիւ:

Վիշապ.— Պատգամաւորներու ամսականներէն 20% առնել: Չունինք բաւական դաշնակցական ուժեր՝ գուտ կուսակցական հողի վրայ. հետեւաբար կուսակցութեանէն յետոյ նախապատուութիւն տալու է ժողովրդի այն տարրերին, որոնք մեզ համակիր են եւ մեր փլաթֆորմին կողմնակից:

Անցնելով բանաձեւերու նկատառութեան, ընկեր վարանդեան ետ առաւ իր բանաձեւը, միանալով ընկեր Անտոնի հետեւեալ բանաձեւին, որ ամբողջովին կարողացուելէ յետոյ մաս առ մաս քուէարկութեան դրուեցաւ:

«Լսելով պարլամենտական գործունէութեան մասին եղած պատգամաւորներու զեկուցագիրը ինչպէս եւ ժողովում արտայայտուած թեր ու դէմ կարծիքները եւ

Գտնելով որ այդ գործունէութիւնը արտայայտուել է աւելի ներքին պարլամենտի բեմին յետեւ եւ դուրսը կատարուող գնահատելի աշխատանքի մէջ. բայց գործունէութիւնը չի արտայայտել կուսակցական բարոյական դիրքին վայել, պարլամենտական պրոպագանդագիրտացիոնը ինչպէս եւ պատգամաւորութիւնը իր գործունէութիւնը չի հիմնել հետեւողական լուրջ աշխատասիրութեան եւ կուսակցական դիսցիպլինի (կարգապահութիւն) սկզբունքներու վրայ (12 ձայն):

Համոզուած որ թէ կուսակցական շահերը եւ թէ Օսմ. պետութեան վերակազմութեան ու վերածնութեան գործը պահանջում է դաշնակցական պատգամաւորներից բոլոր պարագաների մէջ էլ լինել անաչառ եւ անշահախնդիր քննուող հարցերի եւ ներկայացուող կարիներտական եւ այլ կոմբինեզոնների նկատմամբ (2 ձայն. չէ անցած):

Դիտելով որ պատգամաւորները ընտրուում են դաշնակցութեան բարոյական-նիւթական միջոցներով, իսկ միւս կողմից նրանց բացառիկ բարձր ուժիկները (գործող ընկերների հանդէպ) չի համապատասխանում կուսակցական շարքերի մէջ գոյութիւն ունեցող դեմոկրատիկ աւանդութիւններին եւ փոխ-յարաբերութիւններին (10 ձայն):

Նկատելով որ պարլամենտական մեր գործունէութիւնը շահաւէտ դարձնելու համար անհրաժեշտ է յատուկ ծախսեր ընելով աշխատանք կատարել պարլամենտէն, նոյնիսկ մայրաքաղաքէն դուրս, պահել յատուկ քարտուղարութիւն, նախապէս պատրաստուել եւ մասնակցել ընտրողական ծախքերին (13 ձայն):

Ընդհ. ժողովը կ'որոշէ, Անշեղ կերպով հետեւիլ Ե.րդ Ընդհ. ժողովի այդ առթիւ տուած հետեւեալ որոշումներին

«Գործել հաւաքական խորհրդակցութեամբ ու պատասխանատուութեամբ.

Սերտ յարաբերութիւն պահել զիրենք ընտրող չորջաններու կ. կոմիտէներու հետ եւ փոխադարձ տեղեկութիւններ ստանալ.

Պարլամենտական գործունէութեան ընթացքին՝ բոլոր քննուող հարցերը լուսաբանել աշխատաւոր եւ ճնշուած խաւերու տեսակէտէն:

Պատգամաւորներուն, ինչպէս նաեւ դաշնակցականներուն առհասարակ, կ'արգելուի մտնել նախարարական կազմերու մէջ.

Մանօթ.— Այս որոշումը չի վերաբերիր յեղափոխական եւ բացառիկ-անցողական շրջաններուն: Իրենց ներկայացուցած շրջանի ղեկավար մարմիններու համաձայնութեամբ՝ դաշնակցական ընկերները կարող են մտնել ժամանակաւոր կառավարութեան մէջ՝ դադրելով նոյն օրէն կուսակցութեան գործօն անդամ ըլլալէ (14 ձայն):

Այդ կէտերին Ընդհ. ժողովը կ'աւելացնէ հետեւեալ հրահանգները.

1) Պարլամենտի մէջ ժամանակաւոր բլոկներ կազմել՝ ազգային-կրթական խնդիրներու պաշտպանութեան համար հայ եւ այլ մանր ազգերի պատգամաւորների հետ (15 ձայն):

Մնացած տնտեսական եւ ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հարցերի նկատմամբ աշխատաւորական մտայնութեան եւ անկասկած դեմոկրատիկ սահմանադրական ընթացք ունեցող կազմակերպութիւնների ու տարրերի հետ (15 ձայն):

2) Ամէն մի պարլամենտական նստաշրջանի մէջ ամէն դաշնակցական պատգամաւոր յանձնախմբերից դուրս ջանալու է ներկայացնել առնուազն մէկ նախապէս պատրաստուած, ուսումնասիրուած առաջարկութիւն կամ լուսաբանութիւն ընթացիկ խոշոր հարցերի վերաբերմամբ (15 ձայն):

3) Տարին գէթ 3 ամիս պատգամաւորը պարտական է անցկացնել գաւառների աշխատաւոր ժողովրդի խաւերի մէջ, վերջիններիս պէտքերը ուսումնասիրելու եւ ի հարկին պաշտպանելու համար (15 ձայն):

4) Դաշնակցութեան ջանքերով ու օժանդակութեամբ ընտրուած ամէն մի պատգամաւոր իր ստացած ուժիկից անձնական տրամադրութեան տակ է ունենա-

լու այնչափ ուժիկ որչափ ստացել է նախքան պատգամաւոր ընտրուելը, առաւել ամիսը 5ական ոսկի անակրնկալ ծախքերի եւ ներկայացուցչութեան համար, մնացածը յանձնելով կուսակցութեան Բիւրոյի ընտրողական եւ այլ ծախքերը հոգալու համար (1 ձայն. չէ անցած):

5) Ապագայ պատգամաւորների թեկնածուների որոշելը թողնելու է տեղական մարմիններին, խորհրդակցութեամբ համապատասխան Բիւրոնների կամ կեդրոնական կոմիտէների, այն պայմանով որպէսզի թեկնածուների ցանկը վաւերացուած լինի շրջանի դաշնակցական պատգամաւորական ժողովի կողմից (15 ձայն):

6) Դաշնակցական ազդեցութեան տակ գտնուած շրջանների մէջ դաշնակցական ձայները տրուելու են այնպիսի անհատների (դաշնակցական կամ համակիր) որոնք կը պարտաւորուին պաշտպանել դաշնակցական պլատֆորմը ինչպէս եւ ենթարկուել խորհրդարանական հատուածին վերաբերեալ կարգապահութեան: Մնացած շրջանների մէջ դաշնակցական ձայները կարող են տրուիլ կուսակցութեան ուղղութեան ամէնէն աւելի մօտեցող տարրերի (12 ձայն):

7) Պարլամենտական գործերը վարելու համար կազմուած է յատուկ մարմին իր դիւանով: Պարլամենտական մարմնի որոշումները պարտաւորեցուցիչ են պատգամաւորների համար (15 ձայն):

8) Այս որոշումներին չենթարկուող պատգամաւորները գրկուում են վերընտրուելու իրաւունքից եւ նրանց թեկնածութեան դէմ մաքառելու է կուսակցութիւնը իր բովանդակ ոյժով ու միջոցներով» (նկատառութիւնը մնաց յաջորդ նիստին):

Յաջորդ նիստին յետաձգուեցաւ պատգամաւորներու անդամավճարներու եւ ընկերական ֆոնտի մասնակցելու հարցին նկատառումն ու քուէարկութիւնը, ինչպէս նաեւ ուրիշ մէկ-երկու այլ կէտեր:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամանակին:

Նիստ ժե.

27 Օգոստ. 911 (առաւուտ)

Ներկայ՝ բոլոր պատգամաւորները, բացի Սերաստիոյ պատգամաւորէն. վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն կը բացակայէր Սիւսեան. խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն կը բացակայէին Վահան, Մար եւ Լեռնեան:

Պարլամենտական հատուածի շուրջ. — երէկուայ նիստով տրուած որոշումներէն զատ մնացած էր նոյն հարցին վերաբերեալ կարգ մը այլ առաջարկներու նկատառութիւնը այս օրուայ նիստին: Այս մասին ներկա-

յացուած քանի մը բանաձեւերու շուրջ տեղի ունեցաւ կարծիքի փոխանակութիւն:

Անտոն.— Կ'առաջարկեմ որ պարլամենտի ներկայ անդամ ընկերները եւ այլ պաշտօններու անցնողները վճարեն իրենց առած ամսականներուն համեմատութեամբ որոշ տոկոս կազմակերպութեան, յառաջատուական սկզբունքով:

Վահագն.— Կ'առաջարկեմ որ փարլամենտական ընկերները վճարեն 10% իրենց ամսականներէն կուսակցական տուրք մէկ ամսական՝ ընտրական ֆոնտին համար եւ իրենց Բիւրոյի դիւանական ծախքերը:

Աստղիկ.— Կը գտնեմ չափազանց խիստ այս առաջարկները քանի որ պատգամաւորները մեծ ծախքեր ունին եւ դժուար թէ կարելի ըլլայ գործադրել այսպիսի որոշումներ:

Բաբայ.— Ես ալ նոյնպէս շատ խիստ կը գտնեմ եւ յարմար կը նկատեմ գոհանալ միայն ամսավճարներով, խստութիւնը գտնելով անպատուաբեր:

Վահագն.— Համաձայն եմ որ հին նստաշրջանին մասնակցողները ազատ ըլլան ընտրական ֆոնտին վճարելէ քանի որ անոնք աւելի կամ նուազ չափով գումարներ տուած են այլ եւ այլ անգամ «Ազատամարտ»ի անունով. միայն նորերուն գործադրելի ընենք տրուելիք որոշումը:

Անտոն.— Փորձով տեսանք որ Դաշնակցութեան ջանքերով եւ նիւթական գոհողութիւններով ընտրուած սակայն ոչ մէկ նիւթական գոհաբերութիւն ըրած են: Երեսփոխանները չափազանց չափազանց նիւթական շահերու այլ բարոյական վարձատրութեան. թէ եւ համաձայն եմ որ որոշ գումար մը ստանան, բայց ոչ թէ շատ լայն չափով: Գալով համակիրներին՝ մենք կ'առաջարկենք որ անոնք ալ ենթարկուին նոյն տրամադրութեան եւ գոնէ ազգային ոեւէ հաստատութեան մը վճարեն:

Քուէարկութեան համար ներկայացուցեցան բանաձեւեր, որոնք առանձին առանձին քուէարկուցեցան տարով հետեւեալ արդիւնքը:

Անտոնի բանաձեւը.— «Դաշնակցութեան ջանքերով եւ ազդեցութեամբ ընտրուած պատգամաւորները, ինչպէս եւ այլ վարձատրուող պաշտօնների կոչուողները, իրենց ստանձնած բարոյական պարտականութիւնները կատարելէն զատ, պարտաւոր են նաեւ նիւթապէս օժանդակել կազմակերպութեան հետեւեալ ձեւով:

1. Մինչեւ օրս ընտրուած կամ պաշտօնի կոչուածները՝

- ա) վճարելու են միանուազ կերպով մէկական ամսական ընտրական պատրաստութիւնների համար (1 ձայն):
- բ) իրենց կուսակցական անդամավճարները բարձրացնելու են ապագայում ճշդուելիք առաջատուական սկզբունքի համեմատ (11 ձայն):
- գ) Պարլամենտի պատգամաւորները բացի այդ ապահովելու են իրենց Բիւրոն, քարտուղարութիւնը եւ

այլ անհրաժեշտ սեպուած աշխատութիւնները (11 ձայն անցած):

II. Ապագային մէջ դաշնակցական ջանքերով եւ օժանդակութեամբ նոյնանման պաշտօնների նոր ընտրուողներն ու հրաւիրուողները պարտաւոր են՝

ա) Ստացած ռոճիկից իրենց տրամադրութեան տակ պահել այնչափ գումար, որչափ աշխատած են նրանք առաջ (նախքան նոր պաշտօնների առաջի անգամ կոչուելը) + (աւելացրած) Ծական ոսկի բացառիկ ծախքերի համար: Անցեալում աշխատանքի չափի ճշդելու դժուարութեան պարագային՝ նրանց առնելիքը չի կարող անցնել տեղիս կուսակցական ազատ ընկերների առածէն + Ծական ոսկի (1 ձայն):

III. Վերը բերուած որոշումները ցանկալի է գործադրել կուսակցութեան ազդեցութեամբ պատուաւոր պաշտօնների ընտրուող ու հրաւիրուող ոչ-դաշնակցականների նկատմամբ, այն տարբերութեամբ որ ոչ-դաշնակցականները իրենց վճարումները յանձնելու են ընտրական ֆոնտին, ազգային եւ ոչ-ազգային կրթական մշակութային հաստատութիւնների (1 ձայն):

IV. Երեք ամսուայ ընթացքին մէջ այս որոշումներին չենթարկուողները յատուկ ազդարարութեամբ համարուում են դաշնակցական շարքերից դուրս (10 ձայն):

V. Այդպիսիների ինչպէս եւ այս որոշումներին չենթարկուողները վերընտրուելուն կամ պաշտօնի կոչուելուն դէմ մաքառելու է կուսակցութիւնը իր բովանդակ ոյժով ու միջոցներով (10 ձայն):

Բաբայի բանաձեւը.— Անդամավճարների վերաբերմամբ պարլամենտի մեպուսներին ենթարկել այդ առիթով գոյութիւն ունեցող դաշնակցական օրէնքների ամենամեծ չափին (10%) աւելացնելով ժողովի որոշած պարլամենտական դիւանի բոլոր ծախքերը (1 ձայն):

Վահագնի բանաձեւը.— 1) «Երեսփոխան ընկերները, ինչպէս նաեւ բոլոր անոնք որ կազմակերպութեան բարոյական աջակցութեան շնորհիւ պաշտօն մը ձեռք կը բերեն պարտին իրենց մէկ ամսականը ամբողջովին տրամադրել կազմակերպութեան ընտրական ֆոնտին (10 ձայն):

2) Երեսփոխական ընկերներու պարտականութիւնն է իրենց ծախսով պահել երեսփոխանական խմբակի Բիւրոն (11 ձայն):

3) Երեսփոխական ընկերները, համաձայն կանոնադրի, կազմակերպական տուրքի առաւելագոյն չափը կը վճարեն — իրենց հասոյթի 10% — իրենց բնական վայրի կոմիտէին՝ ի հաշիւ իրենց ընտրական շրջանի կոմիտէին (10 ձայն):

Մանօթ.— Յօդ. 1-ի տրամադրութենէն ազատ են խորհրդարանական 1908-1911 նստաշրջանի երեսփոխանները (10 ձայն):

Կարագեանի բանաձեւը.— Պարլամենտական դաշնակցական պատգամաւորները, ինչպէս եւ դաշնակցու-

թեան ջանքով գանազան պետական այլ պաշտօններու հասած ընկերները, պահելով իրենց ապրած վայրում բաւարար ապրուստի գումարը + իրենց դիրքի եւ պաշտօնի բերման հետ կապ ունեցող ծախսերի գումարը՝ մնացածը յանձնում են կազմակերպութեանը (2 ձայն):

Վահագն.— Կ'առաջարկեմ յայտնել, որ Օսմանեան երեսփոխաններէն երկուքը, Գարօ եւ Վարդգէս, ոչ ժողովի եկած են եւ ոչ ալ իրենց զեկուցագիրը դրկած:

Ներքին քաղաքականութիւն

Կարդացուցեցաւ նախորդ Ընդհ. ժողովի որոշումները այս մասին.

Ակնունք.— Կը կարծեմ որ նախքան այս հարցի մասին խօսուելը՝ պէտք է Բիւրոյի ներկայացուցչի զեկուցումը լսենք ու յետոյ անցնինք բուն խնդրին:

Մէմօ.— Կը կարծեմ որ ժողովը կանոնաւոր ընթանալու համար Բիւրոյի զեկուցումը լսելէ յետոյ գնահատել եւ կամ քննադատել զայն ու յետոյ անցնիլ բուն հարցին:

Վահագն.— (Բիւրոյի կողմէ տուաւ բերանացի տեղեկութիւններ, այլ կուսակցութեանց հետ եղած յարաբերութեան մասին, այդ խնդրի մասին գրաւոր զեկուցումը տակաւին պատրաստ չըլլալով):

Անտոն.— Հարց կու տամ թէ Ե՞ր Ընդհ. ժողովի մէջ եղած այն որոշումը թէ մեր որոշ տոկոսը պէտք էր յատկացուած ըլլար Զիֆոնին, արդեօք գործադրուած է թէ ոչ: Այս խնդիրը յարմար նկատուցեցաւ յետաձգել յառաջիկայ նիստերու:

Թորգոմ.— Կարդաց տեղեկութիւններ իթթիհատի մասին շրջաններէ եկած տեղեկագրերէն ամփոփուած մասնախուսմբի կողմէ, թէ իթթիհատի յարաբերութիւններ շատ տեղեր ձեւական եղեր են, հողային հարցին հանդէպ բացասական դիրք բռնած են եւ իրենց շարքերը կազմուած են ընդհանրապէս աւատապետներէ:

Տիգրան.— Իթթիհատի հետ մեր ունեցած յարաբերութիւնը խզելու եւ չխզելու հարցը ամենակնճառոտն է մեզի համար: Բոլորի ալ ծանօթ է այն իրողութիւնը թէ՛ գաւառները իթթիհատի մասնաճիւղերը անկազմակերպ վիճակի մէջ են եւ անոնք կազմուած են ընդհանրապէս յետադիմական տարրերէ, որոնք յետադիմական շարժման մը պարագային՝ իրենց գոյնը կը փոխեն: Եթէ գաւառներու մէջ կան քիչ թէ շատ վստահելի իթթիհատական անհատներ, ատոնք ալ Պոլսէն դրկուած զինուորականներն են, որոնք իրենք ալ չեն վստահիր տեղական իթթիհատականներուն վրայ: Եթէ իթթիհատի հետ մեր յարաբերութիւնները խզենք, Դաշնակցութիւնը գաւառները ի՞նչ ոյժ կը ներկայացնէ, որով կարենայ որոշ խնդիրներ առանձինն կարգադրել: Առանց ուժի Դաշնակցութիւնը չի կրնար իր պահանջումները գործադրել տալ: Ցաւալի է ըսել որ՝ Սահմանադրութենէն ետք Դաշնակցութիւնը ոչինչ ըրաւ գաւառներու մէջ իր կազմերը ուժեղացնելու մասին: Այսօր վտանգի

մը պարագային՝ հայ ժողովուրդը բոլորովին անպաշտպան դուրս պիտի գայ: Եթէ Դաշնակցութիւնը պէտք եղած ուժերը դրկէր գաւառները, այսօր բոլորովին տարբեր վիճակի մէջ պիտի գտնէինք գաւառները: Ուրեմն, աչքի առաջ ունենալով հայ ժողովուրդի ներկայ թոյլ եւ անկազմակերպ վիճակը, ինչպէս նաեւ երկրի անկայուն կացութիւնը, կ'առաջարկեմ չխզել մեր յարաբերութիւնները իթթիհատի հետ:

Վարանդեան.— Յանձնախումբի երկու անդամների կողմից կու տայ հետեւեալ բանաձեւը: Հիմնական խընդիրների վերաբերմամբ (հողային հարց, ժողովուրդի ապահովութեան հարց եւն) իթթիհատը սահմանափակել է լոկ խոստումներով: Գոհացում տուել են միայն մի քանի երկրորդական պահանջների (պաշտօնեաների փոփոխութիւն, օտարահպատակ ուսուցչի հարց եւն) մինչ մենք կատարել ենք հաւատարմութեամբ մեր բոլոր յանձնառութիւնները:

Եւրոպայի մէջ մեզ քննադատողներ եղած են մեր համաձայնութեան համար: Նոյնպէս քննադատուած ենք հայ ջակողմէն. բայց եւ այնպէս կը գտնեմ որ խզում յայտարարել եւս անժամանակ է: Երիտասարդ թուրքերը չեն ներկայացնել միապաղաղ տարր, բայց կան նաեւ անոնց շարքերուն մէջ մաքուր տարրեր, որոնք հաւանաբար կրնան մեզ որոշ չափով վստահութիւն ներշնչել. բայց եւ այնպէս պէտք է յայտարարել թէ մենք կը մնանք կրկին մեր խոստման վրայ պայմանով որ մենք ասկէ վերջ ըլլանք աւելի քննադատ. պէտք է յայտնել թէ՛ մեր կողմէ եղած պահանջներուն գոհացում տրուելու է, այլապէս կը յայտարարենք մեր կապը խզուած:

Վահագն.— Մենք պէտք չէ որ յայտարարենք մեր յարաբերութիւնները խզուած, ցորչափ մենք պատկառելի ոյժ մը չեներկայացնենք:

Մէմօ.— Իթթիհատը երբեք չէ եղած անկեղծ, այլ միշտ միայն նեղը ինկած ժամանակին է որ մեզի դիմած են եւ խոյս տուած են պատասխանատուութիւն մը ստանձնելու հայկական ջարդի մը հանդէպ: Մեր յարաբերութիւնը արդէն խզուած է այժմ, ուստի նոր հիմունքներ որոնելու է եւ նոր պայմաններ առաջարկելով նոր համաձայնութիւն կնքելու է:

Թորգոմ.— Մենք կարելի չափով այդ համաձայնութենէն օգտուելու համար պէտք է մեր կողմէ ջանքեր եղած ըլլար. կան նաեւ անոնց մէջ մաքուր տարրեր: Մենք չենք կրցած լաւ յարաբերուիլ անոնց հետ եւ ազդել անոնց մտայնութեան վրայ:

Կարագեան.— Մինչեւ այժմ տրուած տեղեկութիւնները իթթիհատի եւ մեր յարաբերութեան մասին թերի են. մութն է մանաւանդ իթթիհատի իսկական դիմագիծը. տարուայ ընթացքում խօսքեր եղան նրանց տարեկան կոնգրէի գաղտնի որոշումների մասին, որոնք ծայր աստիճան չովէն բնոյթ են կրում. այդ բոլորը

պէտք է ստուգել. այս բոլորից յետոյ մեր որոշման մէջ չպիտի լինենք հապճեպ այլ զգուշաւոր եւ շրջահայեաց: Նրա վերաբերմունքի մէջ դէպի Դաշնակցութիւնը նկատելի են եղել միշտ խուսափում եւ արհամարհանք, դա ուժեղի հոգեբանութիւնն է: մենք պիտի լինէինք խստապահանջ դէպի նրանց յանձնառութիւնները, բողոքող եւ օգտուող նրանց իւրաքանչիւր թոյլ մոմենտից: մինչդեռ մեր պատգամաւորները պարլամենտում զանազան անհեռատես փափկանկատութեամբ զիջումներ են արել: Այս բոլորի հետ միասին Իթթիհատը մնում է տակաւին, որպէս սահմանադրութեան պահպանը, որի հետ պիտի շարունակել մեր համերաշխ գործունէութիւնը մի նոր, վերաքննուած համաձայնութեամբ:

Ա. Շաւարշ.— Ամէն անգամ որ Իթթիհատի գաւառային մասնաճիւղերը մեզի հետ կը յարաբերին, այդ միշտ կ'ըլլայ անոնց կեդրոնէն եղած յանձնարարութեան համաձայն եւ միշտ հետապնդած են իրենց շահերը: Մարտ 31-ին¹⁵ անոնցմէ 15-20 հոգիներ միայն մասնակցած են ինքնապաշտպանութեան գործի ատեն: Անոնց 25%ը շահերով կապուած են սահմանադրութեան եւ մասամբ կարելի է վստահիլ: Շատ բան կախուած է Սելանիկի կեդրոնէն: Եթէ կրնանք այդ կեդրոնի վրայ ազդեցութիւն բանեցնել, կարելի կ'ըլլայ արդիւնք ձեռք բերել:

Ժ. Իրալը.— Ընդունելով որ Իթթիհատը շատ մը խոստումներ ըրած եւ չէ գործադրած, սակայն պէտք է ընդունիլ որ մեր ալ յարաբերութիւնը չէ տարուած ցանկալի տաքթով: մենք մեզ չենք կրցած բարձր պահել: յարաբերող անհատները միաձեւ չեն տարած, մէկը մեղմ եւ միւսը խիստ եղած է: կ'առաջարկեմ պահել նախկին որոշումները սպասելով անոնց յառաջիկայ քունկէին, քանի որ շատ բան կախուած է ատկէ եւ ապա միայն որոշել մեր դիրքը:

Վ. Իշապ.— Համաձայնութիւնը կը գտնեմ շատ տրամաբանական: անոր պայմանները շատ որոշ ու սահմանափակ են արդէն: կը յանձնարարեմ շարունակել համաձայնութիւնը փոխադարձ ծանօթութիւն ձեռք ձգելու համար: ոչ մի ազդարարութիւն ընել: դիրք մը պահել որ վայել է մարտական կուսակցութեան: Հակառակ պարագային միայն Դաշնակցութենէ դուրս մարմին մը ղէպքերուն դէմ՝ ղէպքերով պատասխանելու է, որպէսզի զգացնենք մեր ուժը:

Կարդացուեցաւ Խարբերդի մէկ հեռագիրը որով Տիգրանին կու տան իրենց ձայնը: յիշեալ ընկերը որ հրահրուած էր իբր գործիչ այժմ կը նկատուի պատգամաւոր:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

15.- Մարտ 31 – ակնարկութիւն 1909 թ. Մարտ 31-ին Սուլթան Գամիտի յետադիմական փորձին Սահմանադրութիւնը տապալելու:
15ա.- Ձեռագրին մէջ Մարգուանի փոխարէն Մարգպետ:

Նիստ ժ.Բ.

27 Օգոստ. 911 (կէսօրէն վերջ)

Ներկայ էին Պալքան, Ամերիկա, Մուշ, Տիգրանակերտ, Կեսարիա, Սեբաստիա, Տրապիզոն, Արեւմտեան Բիւրօ, Խարբերդ, Ուսանող., Սամսոն-Մարգուան^{15ա}, Պարսկաստան, Սաթ(ենիկ), Ասլան, Մար եւ Ակնունի: Պոլիս, Արամ, Ասողիկ:

Ներքին քաղաքականութիւնը.— Կարդացուեցաւ Իթթիհատի հետ կնքուած համաձայնութեան պայմանագիրը:

Է. Ակնունի.— Սահմանադրութեան սկզբի օրերուն, Իթթիհատը Մանխիա Ջաղի բերնով, ուղղակի բացասական դիրք բռնեց մեր դէմ, որ շատ բնորոշ է, անոնց ներկայ ընթացքը ուրեմն կը բխի այդ հին տրամադրութենէն: անոնց ձախ թեւը դեռ երկար ատեն է ի վեր գոյութիւն ունեցած էր: Պարզ է, որ անոնց աջ թեւը բացարձակապէս հակառակ է Դաշնակցութեան գոյութեանը: Միւս կողմէ գերմանական ազդեցութիւնները օրըստօրէ շատցած են, եւ մենք լաւ գիտենք որ անոնք հակահայ քաղաքականութիւն ունին: Թուրքերու ներկայ քաղաքականութիւնը կրնայ բացայայտուիլ երկու պատճառներով, առաջին այն որ՝ Դաշնակցութիւնը որ ամէնէն աւելի անջատականութեան դէմ է այժմ սկսած է կասկածիլ: Երկրորդ՝ Թուրքերը ռուսական նենգ ազդեցութեան տակ, անոր թելադրանքներով այն համոզումն են գոյացուցեր՝ թէ անկեղծ չեն եւ պէտք չէ հաւատալ հայերուն:— բացի այդ՝ որովհետեւ պաշտպանած ենք զինուորագրութիւնը եւ շատ մը ձեռնարկներ: Ես տեղեկութիւններ ունիմ թէ հայ ներքին կեանքին մէջ տեղի ունեցած կռիւնները շատ վատ դեր են կատարած եւ նոյնիսկ այդ կռիւնները թելադրուած են եղեր գէշ աղբիւրներէ: Ես չեմ միանար այն ընկերներին որ կ'ըսեն թէ պէտք է խզում յայտարարել Իթթիհատի հետ, եւ նոյնպէս համաձայն չեմ ներկայ ձեռով յարաբերութեանց շարունակուելուն, պէտք է ըլլալ աւելի խիստ:

Ատոմ.— Աչքի առաջ ունենանք թէ մենք երբ Իթթիհատի հետ համաձայնութիւն ունեցանք, ճիշդ Ատանայի կոտորածին ժամանակ էր: չնայելով այդ պայմաններին՝ որ ունեցեր ենք, ես որ հակառակ եմ եղած այդ կուսակցութեան, բայց դարձեալ համաձայն եմ այդ համաձայնութեան: Ինչքան ալ կուսակցութիւնը եղած ըլլայ աթոռի ձգտող եւ շատ քննադատելի, բայց կայ նաեւ այն որ նա կամայ ակամայ ստիպուած է սահմանադրութեան պաշտպանը ըլլալ եւ պիտի մնայ: Հակառակ անոր որ շատ մը հարցեր լուծել խոստացան, սակայն միշտ էլ խաբեցին: մենք ամէն համաձայնութեան ատեն պէտք է աչքի առաջ ունենանք որ մենք Թուրքի հետ է որ գործ ունինք, Յ դարերը շարունակ տիրապետող տարրի

մը հետ: Նա երբ տեսաւ որ բոլոր հայերը սկսան զարթնիլ, այդ հաճելի չէր անոնց եւ անոնք բնականաբար դէմ պիտի ըլլային բոլորին, նոյնպէս եւ Դաշնակցութեան գոյութեանը: Իթթիհատը օր մը պիտի մնայ օփոգիցիայի մէջ եւ ակամայ յեղափոխական պիտի լինի: Մեր պայմանները այնքան փափուկ են, որ ստիպուած ենք մենք բացի մեզ զանոնք ալ կառավարել: Պէտք է գիտնանք, որ ամենամեծ գործօնն է ուժը: Եթէ այսօր կ'ապրին Իթթիհատները, պէտք է վերագրել այդ անոնց քոմիտեմիաներուն զանազան տարրերու հետ, եւ անոնց այդ միջոցները կը հատնին եւ ակամայ անոնք ալ կ'իյնան: ուստի մենք պէտք է պատրաստուինք դրական ուժ մը ամփոփելու համար: ուրիշ ելք չկայ: ուժ կարելի եղածին չափ հաւաքելու համար պէտք է կազմակերպական կեանքը վերանորոգել, եւ կենսական գործունէութիւն ունենալ:

Մալը.— Սահմանադրութենէն վերջ ինքնամփոփուելու համար պէտք զգացինք Սահմանադրական կուսակցութեան հետ համաձայնութիւն կնքել, բանակցութեանց ընթացքին երեւցաւ թէ անոնք պէտք չէին զգար Դաշնակցութեան գոյութեանը: Ես կ'ուզեմ որ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք աւելի կուսակցական ինքնամփոփմանը: համաձայնութիւնը շատ չնչին արդիւնք է տուած, աւելի շատ բացասական, եւ մասամբ ալ մենք ենք ազդուեր անոնցմէ եւ չենք կեդրոնացեր զինման գործին: Գալով այն տեսակէտին, խիստ յայտարարութիւն մը տալուն, կը գտնեմ վնասակար: Մեզի պէտք է ազգային մարտական ուժ, իսկ համաձայնութիւնը պէտք է պահել:

Ասլան.— Իթթիհատի մէջ աշխարհայեացք գոյութիւն չունի, անոնց միակ գաղափարը, երկրի ամբողջութեան պահպանումն է: ուստի մենք այս պարագան նկատի առնելով, ըստ այնմ ալ պէտք է որոշում տանք: Իրենց կարծիքը այն է որ երկրին ապակեդրոնացումը կրնայ քայքայում մը ստեղծել: Պէտք է գիտնալ որ անոնք հաւաքական ամբողջութիւն մը չեն ներկայացներ եւ միշտ Թուրք տարրին գերակշռութեան կը ձգտին: Դաշնակցութիւնը ունի ահագին փորձառութիւն մարտական եւ յեղափոխական տեսակէտով, բայց քաղաքականութեան մէջ խակ ենք, մինչ անոնք ասիական սխտեմով կը ջանան մեզ խաբել: բացի այդ լեզուին չենք տիրացած, այդ ալ արգելք մ'է, իսկ յարաբերութեան խզումը կը բերէ նաեւ վտանգի մը հաւանականութիւնը: սակայն եթէ ներկայ ձեռով յարաբերիլ շարունակենք այդ ալ պատուաբեր չէ: աւելի խիստ պէտք է ըլլայ, իսկ տեսնելով որ չեն շարունակեր գոհացում տալ, իրաւունք տանք յառաջիկայ Բիւրոյին որ ի հարկին իրաւունք ունենայ յարաբերութիւնները խզելու:

Լեռնեան.— Համաձայն եմ ընկեր Ատոմի արտայայտած մտքերուն: Մենք չենք ունեցեր այնպիսի գործունէութիւն որ մեր ուժը բարձրացնէր եւ բարոյական

վարկն ալ բարձրանար: Իթթիհատը եթէ համաձայնեցաւ մեզ հետ այն ակնկալութեամբ թէ՛ մենք շատ ուժ պիտի ներկայացնենք: Եթէ կայ ընելիք բան մը այն ալ մեր կուսակցութեան ուժի բարձրացմանը ուժ տալն է: Կը տեսնուի որ մենք ձգտում մը ունինք ծախքերու կրօնատուին, այն ինչ աւելի շատ պէտք է հասոյթներու աւելացման ձգտիլ: Իմ կարծիքով փոխանակ երկրորդական պէտքերուն ծախսելու մեր գումարները պէտք է 3/4ը յատկացնել բուն գործին, միայն 1/4-ը երկրորդական խնդիրներու: Քանի որ այժմ եղածին չափ ուժ չունինք անյարմար է խզում յայտարարել, լաւագոյն է այս ժողովին կողմէ դիմել անոնց կոնգրէին, որ մեծ նշանակութիւն կ'ունենայ:

Սուրէն.— Մենք ալ կարծեմ սխալմամբ երբեմն պաշտպանած ենք նոյնիսկ անոնց սխրագործութիւնները, մենք պէտք է շատ լուրջ ըլլանք եւ քորեքթ որպէսզի անոնք չկարծեն թէ մենք կը շոյենք զիրենք, այլ անաչառօրէն վերաբերելու ենք: Ատանայի առթիւ որ մեր ազգային մարմինները միշտ կասկածոտ էին, այն ինչ մենք շատ լաւատես էինք, եւ կարծես կ'ուզէինք արդարացնել զանոնք: Մեր մարտական կողմը շատ տկար է մնացած, այն ինչ, մենք շատ մեծ ջանք պէտք է թափէինք այդ տեսակէտին: Ես ալ համաձայն եմ որ այս ժողովին կողմէ կող մը ուղղուի Իթթիհատին լուրջ լեզուով:

Մարտմեան¹⁶.— Լաւ չէ կարծել թէ մենք տկար ենք եւայլն, ընդհակառակը մենք այսօր կրնանք մեր վրայ վստահ ըլլալ, եւ մեր համաձայնութեան վրայ հիմնուած աւելի պահանջկոտ ըլլալ: Մենք կարծելով թէ, սահմանադրութիւնը արդէն բաւական բան բերած է, ուստի փոխանակ շարունակելու հին ձեռով պատրաստուելու, աւելի միթիւնկներով, թերթերով զբաղեցանք եւ չկրցանք նոյնիսկ հակադաշնակցական հոսանքի հոգեբանութիւնը հասկնալ եւ կասեցնել այդ կռիւլը: Իթթիհատականները իրաւամբ համոզուեցան թէ մենք չենք ներկայացնել այն, ինչ որ կ'ենթադրէին: Մենք պէտք չէ հայկական կեանքի մէջ ստորաբաժանում ստեղծելու առիթ տայինք, քանի որ համահայկական ներդաշնակութեամբ միայն կարելի էր ազդել Իթթիհատականներու վրայ: Փորձերը ցոյց տուին թէ այն բոլոր առաջարկները, որ հաւաքաբար եղած են որոշ արդիւնք մը տուած են:

Մովսէս¹⁷.— Թուրքիոյ մէջ մեր կազմակերպութիւնները պէտք է նոր կազմեր նկատել, եւ ճիշդ է թէ անոնք ցանկալի վիճակի մը մէջ չեն: Դաշնակցութիւնը որքան ալ ուժեղ եղած ըլլայ, պիտի չկրնայ եւ չի կրնար

16.- Նոր անուն. հաւանաբար Մանուկեան Արամն է: Արիսիւնքու մէջ կը գտնուի Արամի կողմէ գաղտնի թանաքով զորւած շարք մը ճանապարհորդներ, որոնց ազատ էջերուն վրայ գրուած «բաց» գրութիւնները կը կրեն Սարուսեան ստորագրութիւն:
17.- Նոր անուն մը եւս. հաւանաբար Խարբերդի պատգամաւոր Աստիկեան Տիգրանն է:

դիմագրաւել բոլոր պատահարներուն: Մեր կեդրոնական նպատակը պէտք է ըլլայ ստեղծել Ազգային քաղաքականութիւն մը, այլապէս ամէն ձեռնարկ պիտի հանդիպի անյաջողութիւններու:

Աստղիկ.— Իթիբիհատի հետ եղած համաձայնութիւնը ոչ միայն օգուտ չէ տուած, այլ եւ անոնք զաւառներու մեր աւատապետներ ունին որ նոյնիսկ կը հալածեն հայերը: Ես ալ հակառակ եմ խզում յայտարարելուն: Ուժ հաւաքել եւ պատրաստել որ կ'ըսէինք՝ պէտք է հասկընանք ոչ թէ չնչին ցոյցեր ընելու, այլ աւելի սիստեմաթիք ինքնամփոփման համար: Եթէ Դաշնակցութիւնը կը ձգտի համերաշխի իթիբիհատի հետ, ինչո՞ւ հայ միւս կուսակցութեանց հետ ալ չմտնեայ: նոյնպէս կ'ըսեմ՝ լաւ չըլլա՞ր որ քիւրտերու հետ ալ միանանք, մանաւանդ անոնց ռայա տարրերուն հետ: օրինակներ շատ կան հաստատող որ անոնք եղած են անկեղծ, եւ շատ անգամ ալ հակառակ եղած հրամաններու չեն ջարդած հայերը: Համերաշխութիւնը շարունակելով պիտի ջանանք հողային խնդրին լուծման եւ զաւառներու մէջ անոնց մասնաձիւղերը մաքրագործել տալ, աւատապետները դուրս ձգել տալով:

Մաք.— Իթիբիհատի հետ տեղի ունեցած դիմումներուն ատեն անոնք մեզի կ'ըսեն թէ ձեր ժողովուրդը քանի որ ձեզի հետ չէ ինչպէ՞ս կը պահանջէք մեզմէ ձեզի գոհացում տալ: Քննադատելի են այն բոլոր ընկերները որ բացի-գոցի խնդիրներով¹⁸, կ'երթային միթիւններ սարքելու եւ ժողովուրդը կը լարէին մեզի դէմ, այն ինչ մենք հաւաքականութիւն պիտի ունենայինք, իսկ խզումը կարելի չէ քանի որ իրականին մէջ մենք ուժ չունինք խզումը ցոյց մըն է, ցոյցով օգուտ չենք կրնար վաստակել: Փաստը այն է որ օրըստօրէ մեր վիճակը վատթարանում է, ինքնաքննադատութիւնը օգուտ չի կրնար տալ, այլ ունի դէպք որ պատահի, պէտք է հակադարձքով պատասխանել:

Անտոն.— Ինձ թուում է որ մենք այս համաձայնութեամբ վաստակել ենք շատ չնչին բան մը կրթականին մէջ. գալով ապահովութեան խնդրին ոչինչ չեն տուել: Հողայինի մէջ գրեթէ բնա՝ իսկ հետեւեալ խնդիրները մնացած են ապարդիւն, — պաշտօնէութեան մաքրագործում, գաղթականութեան խնդիր, դաւանափոխութեան ու յետոյ Ատանայի յանցաւորները պատժելու խնդիր:

Նկատի առնելու է որ այս երկրին մէջ ստիպուած ենք ապրիլ. որո՞ւ հետ պէտք է գործել. եթէ մաքուր տարր մը կայ ան ալ իթիբիհատի մէջ գտնուող անհատներն են. հոս միայն կան համապատասխան տարրեր. ինձ թուում է որ, իթիբիհատի հետ կնքուած պայմանագիրը պէտք է վերաքննել: Այնտեղ կայ նահանգներու իրաւասութիւնները ընդարձակելու խնդիրը, այն ինչ այժմ այդ աքթըր վնասակար է մեզ. պէտք է նաեւ հողային հարցը հետապնդել: Քանի որ անոնց մէջ պառակ-

տում կայ, պէտք է մեր յարաբերութիւնները ճշդենք պայմանադրական կերպով. միայն կապուինք անոնց հետ, դնելով մեր կարեւոր պահանջները. ի հարկէ խոստումներ ընել նաեւ մեր կողմէ, — Սահ. պաշտպանութիւնը եւայլն. այժմ միայն հայ տարրն է անոնց հետ հաշտ. եթէ յայտարարենք թէ հակառակ պարագային ստիպուած ենք մեր դիրքը ճշդել, անոնք նկատի պիտի առնեն:

Հակառակ եմ նաեւ բացի-գոցի առթիւ եղած շարժումներուն, որով մեր դէմ լարեցինք հասարակութիւնը: Աստղիկը շեշտեց քիւրտերուն հետ համերաշխութիւն կայացնելու խնդիրը, այո՛, պէտք է այդ ուղղութեամբ ալ աշխատինք: Մենք նաեւ պէտք աշխատաւորութեան շահերուն պաշտպանի դերը շարունակենք, նաեւ քիւրտերու համակրութիւնը. ես քննադատելի կը գտնեմ նաեւ այն որ մենք զբաղել ենք թմբկահարութեամբ, այն ինչ մէկ կողմ ենք ձգել լուրջ գործերը: Ուրեմն կ'առաջարկեմ շարունակել համաձայնութիւնը եւ դասաւորել մեր պահանջները:

Ժամանակը առաջացած ըլլալուն այս խնդրոյ վիճաբանութիւնը յաջորդ նիստին յետաձգուեցաւ:

Նիստ ԺԹ.

29 Օգոստոս 911 (առաւօտ)

Ներկաներ՝ Բիւրոններու ներկայացուցիչներ՝ ընկերներ Վահագ Եւ Ռոստոմ, Մուշ-Մասունի, Կարինի, Պուսի, Խարբերդի, Սեբաստիոյ, Սամսոն-Մարգուանի, Կեսարիոյ, Վանի, Տիգրանակերտի, Ամերիկայի, Պալքանի, Պարսկաստանի, Տրապիզոնի եւ Ուս. միութեան պատգամաւորները: Վճռական ձայնի իրաւունքով հրահրուածներէն՝ Բաբա եւ Աւօ. խորհրդակցական ձայնի իրաւունքով հրահրուածներէն՝ Մարգաբետ, Մելօ, Ակնունի, Սաթօ, Աստղիկ, Ժիրայր:

Ժողովը բացուեցաւ ընկեր Բաբայի նախագահութեամբ, ընկեր նախագահը առաջարկեց հրահրել ընկեր Մելքոնը խորհրդակցական ձայնով ժողովի, քանի որ նա եղել է կովկասեան ընդհարումներու ժամանակ պատասխանատու դերում եւ այժմ էլ Նիկոլի հրահրով մեկնում է Պարսկաստան: Ընդունուեցաւ:

Հարց բարձրացաւ թէ որքա՞ն ժամանակ եւս տրուելու է իթիբիհատի շուրջ վիճաբանութեանց, քանի որ 3 ժողով արդէն զբաղուել ենք. որոշուեցաւ ցանկը փակել եւ իւրաքանչիւր խօսողի տալ 10 րոպէ:

18. «Բացի գոցի խնդիր» — Ալկարկուսիւն ատենին սեօ աղմուկ յարուցած այն հարցին, թէ պէ՞տք է արտօնել թէ ոչ, որ աշխարհական ճառախօսներ ելոյթ ունենան եկեղեցւոյ թեմէն:

Վահագ.— Ես կանգ չեմ առնի այն հարցի վրայ թէ մենք պիտի խզենք իթիբիհատի [հետ] յարաբերութիւնը. մեր յարաբերութիւնը շարունակելով է որ գործ պիտի կատարենք: Գլխաւոր մի քանի պատճառներ կան որ այս հարցի վիճաբանութեան առիթ է ներկայացնում. I. Մեր դերը. մենք ցարդ չենք կարողացել գործերը տանել այնպէս ինչպէս պէտք էր: Այժմ մենք ամէն ջանք ի գործ պիտի դնենք իթիբիհատին հետ համերաշխ ընթացակարգով՝ որքան կարելի է հասկացնել թէ մենք այլեւս նրա հետ չենք բաժանում պատասխանատուութիւնը, ինչպէս եւ Եւրոպային եւ հայ ժողովուրդին: II. Ինչպէս ուրիշ ընկերներ ըսին՝ ամէն միջոցով իթիբիհատին ձախ կողմը պիտի կազմակերպենք. նրան ոյժ պիտի տանք, որը ապագային մէջ պէտք պիտի գայ: Ոյժի մասին համաձայն ենք. դա անհրաժեշտութիւն մըն է: Անցեալ Ընդհ. Ժողովը չուզեց կանգ առնել էական խնդրի մը վրայ, այն է դաւադրական կազմի մասին, որով մենք մեր ուղղութիւնը գծուած չգտնելով խարխափեցինք: Մենք կարող ենք եւ ուրիշ ուղղութեամբ գործել: Այն ինչ որ տեղի է ունենում այժմ երկրի մէջ, համայնական ինքնապաշտպանութեան հակահարուած տալ, որով կառավարութեան եւ իթիբիհատին մէջ համոզում կը գոյանայ, որ երկիրը դժգոհ է այդ դրութենէն եւ եթէ շարունակուի ազգամիջեան ընդհարումներ առաջ կու գան եւ այդ փաստը նրանց առջեւ ցցուած ըլլալուն, կը ստիպէ նրանց որ աւելի լուրջ ուշադրութիւն դարձնեն հարցին:

III. Մենք ի նկատի պիտի ունենանք եւ այն, որ Պարսկաստանը մեզ համար լինելու է ոյժի կեդրոն: Եփրեմի իւրաքանչիւր յաղթութիւն իթիբիհատի եւ կառավարութեան վրայ մեծ ազդեցութիւն է ձգում. ուստի անհրաժեշտ է այդտեղ բաւականի ոյժ ունենանք, որով կ'անդրադառնայ եւ Տաճկաստանի վրայ:

IV. Մենք ցարդ յարաբերութիւն ենք պահել պարլամենտի ընկերների միջոցով. այդ սխալ է. միանգամ ընդմիշտ վերջ դնելու ենք այդ հարցին եւ յարաբերութիւնները շարունակելու ենք մեր կազմակերպական ձեռնհաս մարմնի միջոցով, որոնք գերծ ըլլան այլեւայլ նկատումներէ:

V. Ինչպէս իթիբիհատն է ըրեր, ընկերներ ուղարկուին մեր բոլոր շրջանները եւ գոնէ կարեւոր վայրերում լուրջ կազմակերպեն:

VI. Աշխատիլ հայ ժողովուրդի լաւագոյն տարրերի հետ յարաբերութիւն պահել. բացի դրանից եւ այն բոլոր ցեղերը որոնք մեզ հետ հաշտ են, օրինակ եգիպտիները եւն. նրանց մէջ եւս պահպանել սերտ յարաբերութիւն:

Ակնունդ.— Այստեղ երեք առաջարկ կայ. I. Խզել յարաբերութիւնները II. Սպառնալիք ընել III. Յանուն մեր Ընդհ. Ժողովի նրանց կոնգրէին յայտնել դժգոհութիւն: Յաւանի է ըսել որ մենք դրութիւնը լաւ չենք

ըմբռնել. շատերս հեռու ենք եղած երկրից. ես կ'ասեմ այն ինչ կարողացել եմ հաւաքել դրսից: Ասում են իթիբիհատի ձախ թեւը պիտի ուժեղացնել. բայց ինչպէ՞ս. ձախ թեւը այժմ գոյութիւն չունի եւ նրա թուլացման մէջ մենք եւս ունեցանք մեր բաժինը. մենք չհասկացանք նրանց աջակողմեանների ընթացքը, որոնք ձախ թեւի անուան տակ մեզ հետ յարաբերում էին: Նազըմ բէյբրու թիւր շատ է իթիբիհատի մէջ: Մեր համերաշխութեան կէտերը, որ կնքուեցան, նրանց կողմից խաբէութիւն էր եւ յաջողեցան. նրանց ցանկութիւնն էր մեր դիրքը հայ հասարակութեան առաջ խախտել, եւ յաջողեցան. ուստի մենք այդպիսիներուն հետ չենք կարող համերաշխել: Ես կ'ուզէի ասել եւ այն, որ մենք ոչ թէ պիտի պաշտպանենք այն, որ իթիբիհատը ունենալու է երկրի ղեկը իր ձեռքը. ես կ'ասեմ որ այլեւս իթիբիհատի ձեռքը չի լինելու երկրի ղեկը, այլ սահմանադրական կառավարութեան. ուստի մեզ անհրաժեշտ է հասկացնել թէ իթիբիհատին հասկացնել թէ գաղտնի գործունէութիւն որ ունին ազդելու կառավարութեան վրայ, այդ մարմնի մասնակցելու են ոչ թէ միայն իթիբիհատականները եւ հայերը, այլ եւ բոլոր ազգութեանց ներկայացուցիչները: Իսկ մեր գլխաւոր խնդիրների մեմորանտումը պիտի ներկայացնենք իթիբիհատի կոնգրէին ոչ թէ միայն գրաւոր, այլ նրա հետ եւ ներկայացուցիչներ, ընտրուած այս ժողովի կողմից որոնք պաշտպանեն այդ հարցը եւ թոյլ չտան զանազան ձեւի մեկնաբանութիւններ անելու:

Ասում.— Որպէսզի հարցի վիճաբանութիւնը չերկարուի, պէտք է խնդիրը հետեւեալ ձեւով դնել. ունեցե՞լ ենք յարաբերութիւն իթիբիհատի հետ, ո՞ր իթիբիհատի հետ. գոյութիւն ունի՞ այնպիսի իթիբիհատ մը, որին դիմենք եւ պատասխանատուութիւն ծանրացնենք նրա վրայ: Եթէ եկել ենք այնպիսի եզրակացութեան որ այս երկրից այլեւս խեր չկայ, ձեռք վերցնենք. այդ չենք կարող անել. չպիտի կրկնեմ այն սխալները, որոնք անցեալում եղել են. այլ խօսքս ներկային դարձնելով պիտի ասեմ, գոյութիւն ունի այն իթիբիհատը, որ պետութիւնը ձեռքում ունի. նրա ձախ թեւը նոյնիսկ գոյութիւն չունի. էլ ի՞նչ ենք սպասում. Ասում բէգի պէս մարդը նրանց ձախ թեւի մէջ է. մի մարդ, որը յայտնի աւատապետ է. էլ ի՞նչ ենք սպասում ձախ թեւից. մենք չենք կարող այդպիսի ձախ թեւի հետ համերաշխել եւ յարաբերութիւն պահել. այդ ձախը դեռ իր ոյժը չկորցրած ի՞նչ արաւ. նոյնիսկ Վանի, Կարինի, Սեբաստիոյ կուսակալների տուած թագրիւնները, որոնց նմանը մենք իսկ չենք կարող տալ, մնաց անհետեւանք. էմին բէյի տուած թագրիւրը պարզ ցոյց էր տալիս թէ այն կուսակցութիւնը որ երկրի ազատագրումը իր ուսերի վրայ տարաւ այս ուղղութեամբ ոչ մի շինարար գործ չի կարող կատարել, երբ մեր ձեռքն է կապտում. այդ բոլորը ստանում է

ձախ թալէադը. բայց ի՞նչ էր անում նա... առանց քաշ-
լելու մեզ էր ցոյց տալիս, ուրեմն համաձայն էր կուսա-
կալներին հետ. բայց իրականութեան մէջ ոչինչ էր կա-
րողանում անել:

Ինձ թւում է թէ աչքի առաջ ունենալով որ չկայ այն-
պիսի իթթիհատ մը, որի հետ կարողանանք համերաշխ
գործել, այլ կան անհատներ, որոնք ուզում են մի բան
անել բայց չեն կարողանում անել. այդպիսիներին մենք
պիտի կազմակերպենք, ուղղութիւն ցոյց պիտի տանք,
եւ առաջնորդենք դէպի յեղափոխական ուղի: Մենք
չենք կարող եւ մեր յարաբերութիւնները խզել. ոչ թէ
նրա համար որ ջարդ առաջ կու գայ, այլ նրա համար որ
մեր յեղափոխական գործը կը կատարենք այն ժամա-
նակ եւ այս երկիրը կը փրկուի, երբ ընդդիմադիր յեղա-
փոխական տարր կը ստեղծենք նրանց մէջ եւս. մեր
խզումով կը դառնանք ազգայնական, որով մեզ դէմ կը
գրգռենք. մինչդեռ անհրաժեշտ է միացնել ընդդիմա-
դիր տարրերը:

Մենք մեմորանտում պիտի ներկայացնենք իթթիհատ-
տի կոնգրէին Դաշնակցութեան անունով եւ ցոյց տանք
ա՛յն բոլոր պակասութիւնները որ ցարդ գործեր են
նրանք եւ ա՛յն ուղին որով եթէ ընթանան կարող է այս
երկիրը փրկուի:

Մենք մեմորանտում պիտի ներկայացնենք իթթիհատ-
տի կոնգրէին Դաշնակցութեան անունով եւ ցոյց տանք
ա՛յն բոլոր պակասութիւնները որ ցարդ գործեր են
նրանք եւ ա՛յն ուղին որով եթէ ընթանան կարող է այս
երկիրը փրկուի:

Վարանդեան.— Ընկերները թուեցին ներքին եւ ար-
տաքին պատճառները. իսկ Ակնուհին ի միջի այլոց եւ
Գերմանիոյ ազդեցութիւնը մէջ բերաւ, որով ցոյց էր
տալիս նրա դերը այս երկրի մէջ. ինձ թւում է թէ այդ
մեկնաբանութեան մէջ կան եւ չափազանցութիւններ:
Այս գործում մեծ դեր ունեցել ենք եւ մենք: Սկզբում
մեր քաղաքականութիւնը եղել է շատ անտակաւ. մենք
կարծել ենք թէ մեծ ոյժ ունեցել ենք գինուորական տե-
սակէտից. այն ինչ երբ Մարտ 31-ին պէտք զգացուեց
համարեա ոչինչ չկարողացանք ցոյց տալ: Ես համաձայն
եմ Ատոմի հետ, որ եթէ ոյժ ունենայինք կարող կը լի-
նէինք մեծ դեր խաղալ. բայց քանի որ չունինք, ստիպ-
ւած ենք լուրջ մտածել: Չմոռանանք որ մահմետական
տարրի մէջ միակ սահմանադրական տարրը եղել է իթ-
թիհատը. չմոռանանք եւ ա՛յն, որ գինուորական տարրը
մեծ դեր է խաղացել այս երկրի մէջ եւ նրա ոյժը կեդրո-
նացած է իթթիհատի ձեռքը: Չմոռանանք եւ Եւրոպայի
կարծիքը: Եթէ մեր յարաբերութիւնները խզենք եւրո-
պացիք նոյնիսկ մեզ կը դատապարտեն. ինձ թւում է որ
մենք յայտարարենք նրանց թէ եթէ այդ ընթացքը շա-
րունակեն, մենք կ'ոչ կ'ընենք հայ ժողովրդին որ իր գլխի
ճարը նայի. մենք կարող ենք եւ սպառնալ: Ինչպէ՞ս եղել
է որ անցեալ բռնապետական ռեժիմին զգալի հարուած-

ներ հասցրել ենք եւ այժմ կասկածում ենք: Մենք մեմո-
րանտումով կարող ենք դիմել իթթիհատի կոնգրէին եւ
այդ թողութը որպէս փաստ կը մնայ թէ Եւրոպայի եւ թէ
հայ ժողովրդի առաջ եւ որով ցոյց կը տանք Եւրոպային
թէ մենք դարձեալ կարող ենք մեր նախկին ընթացքը
շարունակել եթէ ոեւէ փոփոխութիւն չկրի այս երկիրը:

Վեչապ.— Մենք չենք կարող յարաբերութիւնը խզել,
բայց այդ յարաբերութիւնը պիտի շարունակենք առ
երես. մենք պիտի պարզենք երկրի ընդհանուր վիճակը
եւ ցոյց տանք որ երկիրը փրկելու միակ միջոցը ատոնց
դարման տանելով է որ կ'ըլլայ. համաձայն լինելով Ա-
տոմի բոլոր ասածներին, կ'առաջարկեմ անմիջապէս
մեր գործին սկսիլ:

Մեք.— Ես կողմնակից եմ յարաբերութիւնները խզե-
լու. գարմանալի է. մեր յարաբերութեանց ո՞ր մասը շա-
րունակուել է որ խզման մասին խօսք ենք անում: Մի
բան որ արդէն խզուած է նրանց կողմից, այլ եւս ինչ ո՞ւ
մենք պիտի խօսինք խզման մասին: Հարցը տարբեր է՝
եթէ մենք առաջարկենք նոր միջոցներ յարաբերու-
թեանց՝ եւ յետոյ այստեղ ընկերներից ոմանք կարծում
են թէ եթէ յարաբերութիւնները խզենք կարող է բար-
դութիւններ գալ. միթէ՞ յաւակնութիւնը ունինք կար-
ծելու որ հայկական ջարդերու առաջը Դաշնակցու-
թիւնն է որ առնում է: Իմ կարծիքով դա սխալ է. մեր
համերաշխութեան օրից իսկ հնչակեանները, ազգային
երեսփոխանները եւ թերթերը քննադատեցին մեր ա-
րարքը, հակառակուեցին այդ համերաշխութեան. ին-
չ ո՞ւ ջարդ առաջ չեկաւ. եւ եթէ իրապէս մեր խզումով է
որ ջարդ յառաջ պիտի գայ, մի անգամ ընդմիջտ վերջ
տանք այս հարցին. խզենք յարաբերութիւնը եւ եթէ լի-
նելու է մի ըողպէ առաջ թող լինի, փոխանակ իւրաքան-
չիւր շաբաթ սիստեմատիկ 8-10 հայեր սպաննելու: Ի
նկատի ունեցէք եւ այն որ մեր ժողովրդի յեղափոխա-
կան ոգին մարեցաւ. նոյնիսկ Սասունը, Մուշը, նրանց
մէջ այլեւս անձնական վրէժխնդրութիւնը կորաւ. փո-
խանակ իր եղբօր, ազգականի կամ արենակցի վրէժը
լուծելու սպասում են վերելից օգնութեան. չէ՞ որ կայ
Դաշնակցութիւնը եւ նրա հետ իթթիհատի համերաշ-
խութիւնը. այսպիսով մենք մեր յեղափոխական ոգին է
որ պակասեցնում ենք:

Անտոն.— Հարցը դառնում է բողոքի եւ պատճառա-
բանուած դժգոհութիւն յայտնելու շուրջը որ ըստ հու-
թեան միեւնոյնն է. կը կարծուի որ չարիքը առաջ եկած
է «ոչ լաւ» անհատների հետ գործ ունենալուց: Նախ,
փաստերը ցոյց տուին որչափ դժուար է դա, երկրորդ
դեկավարուել այդպիսի սուբեկտիւ չափով, կը նշանա-
կէ իթթիհատականներին եւս իրաւունք տալ դեկավար-
ւել նոյն տեսակէտով որ վտանգաւոր է: Իթթիհատի
սխալների եւ խոստմնադրութեան մասին խօսելիս,
պարտական ենք խոստովանուել նաեւ մեր սեփական
սխալները, սխալ տաքտիկը: Մինչեւ Քեամիլ փաշայի

անկումը մեր այստեղի գործունէութիւնը կայանում էր
իթթիհատի յայտնի անձերուն անուանարկելու, կաս-
կածելի տարրերի հետ համերաշխելու մէջ, որ վերջը չէր
գտած նոյնիսկ ազատական բանակի Պոլսին մօտենա-
լու ժամանակ: Իթթիհատը տեսնում էր այդ ամէնը եւ
լցուած էր կասկածով ու ռիսով մեր դէմ: Անհատներէն
զատ ամէնէն աւելիով կուսակցութիւնների գործերով է
որ մենք դատելու ենք ամէն մէկի արժէքը: Արդեօք ի՞նչ
գործ ըրինք մենք: Իթթիհատը գոնէ տուաւ ապացոյց իր
վճռականութեամբ ու սահմանադրականութեամբ. նա
էր որ իր բանակով Համիտը գահընկէց ըրաւ եւ ազա-
տեց երկիրը ռէակցիայից, իսկ մենք մի հոգով անգամ
չմասնակցեցանք այդ պատմական քայլին: Լաւ է մեզ
չմտնել մեր ուժերէն վեր դիպլոմատիքական խորխո-
րատների մէջ: Գերմանական գաղութներ չեկան թուր-
քիոյ մէջ. ամբողջ Բաղդադի գծի վրայ ոչ մի գաղութ
չկայ. նոյնիսկ Համիտը թոյլ չտուաւ գերմանական
գաղթականութեան: Մոռնալու չէ թուրք կառավարու-
թեան թուլութիւնը. նրանք հարկադրուած են հակել
կամ Ռուսիայի եւ Անգլիայի եւ կամ Գերմանիայի կող-
մը: Թուրքիայի պահպանութեան տեսակէտից դժուար
է պնդել որ վերջինս ամենամանկապատկառմարն է:
Ամէնից լաւն է լինել ուղղամիտ եւ անկեղծ: Մենք մեր
պահանջը դնելու ենք իթթիհատին, որ այլեւս չենք կա-
րող շարունակել ձգձգողական յարաբերութիւնները,
յայտարարելով միանգամայն որ սահմանադրութեան
վտանգ սպառնալու դէպքում մենք պատրաստ ենք մեր
արիւնը խառնել նրանց արեան հետ. դրա հետ միասին
լուսաբանելով եղածի անգոհացուցիչ լինելը, պահանջե-
լու է անպայման կերպով աստիճանաբար, որոշ ժամա-
նակաշրջանների մէջ բաւարարութիւն տալ մեր հա-
տուեցած պահանջներին — հողային խնդրի լուծում, հայ
պաշտօնեաների նշանակում, դեմոկրատական ուղղու-
թիւն: Եթէ նոյնիսկ մեր առաջարկը 15-20 հոգի ընդու-
նի, այդ մասի հետ համերաշխ գործակցութիւն յայտա-
րարել եւ պահել: Մեր պահանջները եւ յանձնարարութիւն-
ները այսուհետեւ լինելու են պայմանադրական:

Բժեշէկ.— Մեր դժգոհութիւնները պարզելով մեր յայ-
տագրի մէջ, առաջարկել իթթիհատին, վերաքննել
նրանց հետ ունեցած յարաբերութիւններն ու համա-
ձայնութիւնը եւ աշխատիլ մտցնել աւելի մանրամասն
կէտեր հողային, ապահովութեան, ազգային մշակու-
թական խնդիրների վերաբերմամբ, ամբողջ պետու-
թեան վերաբերմամբ: Համապատասխան մեր հայեացք-
ների, որպէսզի ներկայի պայմանների մէջ մեր եւ
նրանց միմիմում պահանջները Օսմ. սահմանադրական
պետութեան, պարզուի, եւ մշակուի մեր կազմի գոր-
ծադրութեան ձեւերը:

Սուրէն.— Մեր համերաշխութիւնը մեր ժողովրդին
շատ կաշկանդեց. իթթիհատը մեր համաձայնութեան
կէտերը չյայտարարեց իսկ. դա վատ ազդեց ժողովրդին.

իսկ այն վայրերում ուր դատարանները վճիռ էին կա-
յացնելու յօգուտ հայ կամ քրիւտ գիւղացիներու, իթ-
թիհատը փոխանակ ոյժ տալու ստիպել է որ յօգուտ բէ-
գերի վճռուի. մենք չպիտի վախենանք թէ հալածանք է
սկսելու. օր առաջ թող սկսի, այդ լինի ոչ թէ հայու այլ
Դաշնակցութեան դէմ:

Ռոստոմ.— Այստեղ զանազան կարծիքներ է յայտ-
նուում. ուզում ենք խզել յարաբերութիւնները, սպառ-
նալ, յայտագիր տալ. այդ բոլորը անտեղի է քանի որ
մենք այդ կուսակցութեան հետ համերաշխութիւն ենք
կնքել ժամանակաւոր: Մեր համաձայնութեան կէտերը
մենք միշտ յարգել ենք մինչդեռ նրանք ոչինչ չեն արել,
ապակեղրոնացման ուղղութեամբ, որ սկզբունքով ըն-
դունուած էր նրանց կողմից. թող նրանք էլ ցոյց տան
մի կէտ որ մենք ժխտել ենք: Բացի այդ մեր ընկերները
շատ անգամ իթթիհատ եւ կառավարութիւն խառնում
են իրար: Էլ դա բոլորովին ի գուր է, պէտք է ի նկատի
ունենալ, որ եթէ այսօր այդպէս է, վաղը այդպէս չի
մնար. վաղ թէ ուշ նրանք բաժանուելու են, որից յետոյ
հաստատուելու են խորհրդարանական կուսակցու-
թիւններ եւ կառավարութիւնը կը պատկանի այս կամ
այն կուսակցութեան. ուրեմն այժմուանից չչփոթենք
այդ երկուսը եւ մեր վերաբերմունքով ցոյց տանք որ
գաղտնի կոմիտէի եւ տիրող կառավարութեան միջեւ
տարբերութիւն ենք դնում: Պէտք է ցրել ժողովրդի եւ
մեր շարքերի ինչպէս նաեւ դուրսը բոյն դրած թիւր
ըմբռնումները: Մեր ժողովուրդը միշտ սպասել է դրսից
ոյժ. ուրեմն մեզ մնում է նրանց այդ համոզումը փո-
խել: Մեր ժողովուրդը կարծում է թէ մեր եւ իթթիհատ-
տի միջեւ կատարեալ համաձայնութիւն է տիրում եւ
ապակեղրով այդ համաձայնութեան սպասում է որ իր
բոլոր դարտի դարմանը կառավարութեան հոգացուի:
Դաշնակցութեան կեդրոնական մարմնի միջնորդու-
թեամբ եւ իր կողմից ակտիւ ջանքեր չի թափուում: Մենք
պէտք է ցոյց տանք որ մենք անհաշտ թշնամի ենք իթ-
թիհատին այն դէպքերում որոնք վերաբերում են ժո-
ղովրդի տնտեսական եւ հասարակական կեանքին: Ի
նկատի ունենալով եւ այն որ իթթիհատը չի մնացել այն
ինչ որ էր առաջ, թէ նրա մէջ մտել են պէյեր, ազդեցիկ-
ներ որոնք իթթիհատի հեղինակութիւնը ծառայեցնում
են իրենց անձնական դիրքը եւ ուրիշ շահերը ապահովե-
լու համար, այնպէս ինչպէս մի ժամանակ մեր մէջ էր,
մենք նրանց ցոյց պիտի տանք թէ երկրի բարօրութիւնը
կը պահանջէ գտել նրանց շարքերը: Ընդունելով որ մեզ
անհրաժեշտ է ոյժ ունենալ, լարենք մեր ջանքերը ժողո-
վրդական խաւերը կազմակերպելու գործում, այլա-
պէս եթէ մենք թոյլ մնանք, անբնական կը լինի պահա-
ջել, որ մեզ կարեւորութիւն տան, ի գուր կը լինին մեր
բողոքները եւ պահանջները: Մեզ համար կարեւորու-
թիւն չպիտի ունենայ այն հանգամանքը, որ իթթիհատ-
ականները անհատապէս թէ իբրեւ կուսակցութիւն

ինչ ձգտումներ են արտայայտում այժմ: Թուրքիոյ բարեկարգութեան ընդհանուր գործը կը ստիպի նրանց կանգնել մեր տեսակէտներէ վրայ մի շարք խնդիրներու մ: Ինչպէս օրինակ ապակեղորոնացման եւ աւատականութեան ոչնչացման հարցի եւ պահանջի: Պիտի ցոյց տանք որ կառավարութեան ներկայ ընթացքին դէմ կուտուի ենք, եւ կոչ անենք իթիֆհատին միասին լինել: Այդ միջոցով է որ մենք պիտի կարողանանք իթիֆհատի հետ ունենալ գործակցութիւն: Կ'առաջարկեմ խառն ժողովներուն միանգամ ընդմիջտ վերջ տալ, մինչեւ այն ատեն եթէ նա կառավարութեան հակառակ կը գնայ, քանի որ նրանք միշտ մեզ խաբել են:

Ատոյլիկ.— Յարաբերութիւնների խզումէն ոչ մի օգուտ սպասելու է. հետեւանքը աւելի վատ կը լինի. գիտնալու էք որ մեր ժողովուրդը՝ նոյնիսկ պարզ-անձնական ինքնապաշտպանութեան իսկ չէ ուզած դիմել, նոյն իսկ այս սահմանադրական շրջանին, որովհետեւ ինքնապաշտպանութիւնը տեղական իշխանութիւններու կողմէ միշտ մեկնուած է իբր ըմբոստութիւն պետական օրէնքներու դէմ եւ այս հայեցակէտով ինքնապաշտպանութեան փորձերն իսկ տասը հեղ աւելի ծանր նստած են հայ ժողովուրդին.— գաւառներու մէջ տեղական իշխանութեան կողմնակալ եւ աչառկոտ ընթացքը յայտնի է. երբ որ իթիֆհատի կուսակցութեան հետ ալ մեր յարաբերութեանց խզումը իմանան, անոնք աւելի պիտի շատցնեն իրենց գեղծումները եւ չարիքները հայ ժողովուրդի դէմ. արդէն այդպիսիներու ուզածն ալ այդ է. հետեւաբար՝ իմ մասին՝ հակառակ եմ խզման: Լաւ կ'ըլլար անոր փոխարէն մենք պահանջէինք որ իթիֆհատը մաքրէր իր գաւառական մասնաճիւղերը հին բռնակալ եւ գեղծագործ տարրերէ եւ ընդունէր խառն մարմիններու կազմութիւնը երկու կուսակցութեանց համար:

Արամ.— Խօսեցինք այն կոնգրէտ հարցերի մասին որոնք պէտք են մեր համերաշխութեան հիմը կազմեն: Բայց միշտ մոռանում ենք այն միջոցները որոնք պէտք է նպաստեն այդ հարցերի իրականացման: Մինչեւ հիմա ունեցանք միայն մի խառն մարմին. նա միայն որոշումներ կը տայ. հարկաւոր է միայն այդ մարմինը ուժեղացնել այնպիսի իրաւունքներով որ նա կարողանայ իր որոշումները իրագործել կեանքի մէջ. վերջապէս պէտք է գտնել գործնական մի ուղի. մասնաւոր պէտք է աշխատիլ որ նման խառն մարմիններ ստեղծուին գաւառների մէջ.

Ժողովը փակուեց ժամը 12-ին:

Նիստ Ի.

31 Օգոստոս (Զորեքշաբթի առտու ժամ 10)

Ներկայ էին պատգամաւորներէն՝ Վան, Կարին, Մուշ-Սասուն, Պոլիս, Պարսկաստան, Ամերիկա, Պալքան, Արեւելեան Բիւրօ, Արեւմտեան Բիւրօ, Տիգրանակերտ, Կեսարիա, Տրապիզոն, Սեբաստիա, Սամսուն-Մարզուան, վճռական ձայնով հրաւիրուածներէն՝ Աւօ, Աստիկ, Բաբա, խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն՝ Ասլան, Մար, Ժիրայր, Ասողիկ, Ակնունի, Մարզպետ, Մելքում, Մելօ, Սարը(եան), Սաթօ:

Շարունակութիւն նախորդ նիստի

Մեծամասնութեան քուէով առաջարկուեցաւ անմիջապէս անցնիլ բանաձեւերուն՝ փակելով վիճաբանութիւնները:

Ներկայացուեցան վեց բանաձեւեր, որոնք քուէարկութեան դրուեցան հետեւեալ կարգով, անոնց մասին լրացուցիչ բացատրութիւններ տալէ եւ գաղափարներու փոխանակութիւն կատարելէ վերջ:

1- Պոլսի Երջ. ժողովի հետեւեալ բանաձեւը.— ստացաւ հինգ (5) ձայն:

Պոլսոյ Երջ. ժողովը քննութեան առնելով ազգային կուլտուրական խնդիրներու մէջ Դաշնակցութեան մասնակցութեան հարցը, եւ նկատելով Ա.- Որ մեր ազգային կուլտուրական հիմնարկութիւնները սերտ առնչութիւն ունին մեր ժողովուրդի կուլտուրական կեանքի հետ եւ կ'ամփոփեն իրենց մէջ ազգային կուլտուրական ինքնավարութեան սաղմերը: Բ.- Որ այդ հիմնարկութեանց բարեկարգութիւնը եւ նպատակաշարժար ուղղութիւնը մեծ կարեւորութիւն ունի ժողովուրդի աշխատաւոր մեծամասնութեան տնտեսական, կրթական ու բարոյական շահերու տեսակէտէն:

Գ.- Որ կուսակցութեան ձեռնպահութիւնը այդ հիմնարկութեանց մասնակցութեան մէջ յետադիմական-պահպանողական տարրերու ազդեցութեան աւելացումը պիտի նշանակէ, ինչ որ աշխատաւոր դասակարգի շահերու ոտնահարումը ըսել է:

Երջ. ժողովը կ'որոշէ, Ա.- Կուսակցութիւնը կը մասնակցի երեսփոխանական եւ այլ ընտրութեանց՝ յանուն կուսակցութեան, նայելով տեղական պայմաններուն, մասնակցութեամբ նաեւ ազատական տարրերուն, կուսակցութեան թեկնածուները առանձնապէս ծանօթացնելով սակայն ժողովուրդին:

Բ.- Ազգ. օրէնսդրական ժողովին մէջ դաշնակցական երեսփոխանները կը կազմեն ուրոյն խմբակ, առանձին պատճառով, ի հարկին գործակցելով ազատականներուն:

Գ.- Վարչութեանց ու խորհուրդներուն մէջ դաշնակցականները կը մասնակցին անհատական հանգամանքով, ըլլալով սակայն հետեւող խորհրդարանական խումբակի պլատֆորմին եւ պատասխանատու կուսակցութեան առջեւ՝ իրենց գտնուած շրջաններու կեդր. մարմիններու միջոցաւ:

ՈՒ Մեկնելով սահմանադրութեան վերաքննութեան գաղափարի շուրջ ժողովուրդին մէջ առաջացած նպատաւոր տրամադրութենէն եւ ընդունելով այդ վերաքննութեան անառարկելի անհրաժեշտութիւնը, կ'առաջարկուի,

Ա.- Շարունակել սահմ. վերաքննութեան գաղափարին շուրջ սկսուած աշխատանքն ու պահանջները:

Բ.- Պատրաստել ուսումնասիրուած նախագիծ մը, համահայկական հիմունքով, առանց դաւանանքի խըտութեան, ըստ այնմ միօրինակ եւ սխտեմաթիկ փրօփականտա կարենալ մղելու եւ ամէն առթիւ պաշտպանելու համար անոր հիմնական առաջադրութիւնը:

Գ.- Շարունակել յետադիմական-պահպանողական տարրերու դէմ սկսած պայքարը, առանց սակայն զայն այլասերելու եւ մնալով մեր դերին համապատասխան բարձրութեան վրայ:

- 2- Ատոմի բանաձեւը ստացաւ եօթ (7) ձայն
- 3- Մեծատուրի բանաձեւը ստացաւ չորս (4) ձայն
- 4- Անտոնի բանաձեւը ստացաւ ութ (8) ձայն
- 5- Վահագի բանաձեւը ստացաւ եօթ (7) ձայն
- 6- Բժիշկի բանաձեւը ստացաւ վեց (6) ձայն

Ակնունք.— Քուէարկութեան արդիւնքէն յայտնի է որ ազգային կուլտուրական գործերուն ոչ կուսակցականօրէն մասնակցելու առաջարկը կը ստանայ առաւելագոյն քուէն: Բայց որովհետեւ այս առաջարկին ալ ստացած քուէն 2/3 չի կազմեր, ըստ օրինի, ոչ մէկ նոր որոշում կ'անցնի եւ նախորդ Ընդհ. ժողովի որոշումը կը մնայ ի գորտ: Բայց եւ այս առիթէն չեմ ուզեր օգտուիլ՝ ետ մղելու համար մասնակցելու մասին բերուած նոր առաջարկները: Իբրեւ միջին ճամբայ, եւ կ'առաջարկեմ փոխադարձ զիջողութիւններ անել երկրորդական կէտերու վրայ եւ կազմել բանաձեւ մը որ կարենայ հաւաքել համաձայնութեան բոլոր կէտերը:

Անտոն.— Ես կը բաղձամ որ մեր որոշումները տուած ատեն զգուշանայինք անհետեւողական ըլլալէ եւ չտանք այնպիսի որոշում կուսակցականօրէն մասնակցիլ վճռելով որ գլխովին հակառակ ըլլայ մեր նախորդ ժողովի որոշումին: Չտանք այդպիսի որոշում մասնաւոր անոր համար, որ մեր Կովկասի ընկերները բացակայ են այս ժողովէն: Կ'առաջարկեմ մաս մաս քուէարկել եւ միացնել բանաձեւը:

Ատոմ.— Երկու կողմերը մօտեցեր են. անոնք որ բոլորովին կը մերժէին, անոնք որ կուսակցականօրէն

մասնակցիլ կ'առաջարկէին: Ես ամբողջ սրտով համաձայն կ'ըլլայի բնաւ չմասնակցելուն, ոչ իբրեւ անհատ, ոչ իբրեւ կուսակցութիւն, եթէ այդ ըլլար ընդհանուր բաղձանքը: Բայց, քանի որ մասնակցելու գաղափարը գերակշռող էր, եւ առաջնութիւն կուտամ կուսակցականօրէն մասնակցելուն, որովհետեւ անհատական մասնակցութեան պարագային անկոնտրոլ գործունէութիւն տեղի կ'ունենայ որմէ կը ծագին շատ անպատեհութիւններ եւ այն բոլոր վտանգները, որ կուսակցականօրէն մասնակցելուն հակառակ եղողները մէջ կը բերեն: Մինչդեռ երբ իբր կուսակցութիւն մասնակցինք ընկերներ ենթարկուած կ'ըլլան որոշ քոնթրոլի:

Ամօ.— Հոս որոշապէս երեւան չեկաւ թէ որն է գերակշռող կարծիքը, մասնակցիլ թէ ոչ: Ես կ'առաջարկեմ մեծամասնութիւն ստանալու համար քուէարկել սկզբունքներ:

Բաբա.— Մենք պէտք չէ նկատի ունենանք Կովկասի մեր ընկերներուն հետեւած քաղաքականութիւնը, անոնց մասնակցութեան եղանակը եւ այլն. կ'առաջարկեմ սկզբունքներ քուէարկել, եւ ճշդել ուժերու համեմատական բաշխումը:

Հայրիկ.— Մասնակցութեան երկու ձեւին մէջ տարբերութիւն չեմ տեսներ եւ. անհատապէս պարտաւորուած ըլլալ կամ կուսակցականօրէն մասնակցիլ, նոյն բանն է: Ազգային-կուլտուրական խնդիրները բազմապիսի են եւ որոնցից շատերը կարող են ոմանց չհետաքրքրել, դրա համար նրանց չպէտք է պարտաւորեցնել: Մասնակցութիւնը կամաւոր պիտի լինի:

Ատոմ.— Անհատապէս մասնակցելու պարագային անպատեհութիւնները այս են, ժողովուրդը բնաւ գանազանութիւն չի դնել այս երկուքին մէջ.— չմասնակցիլ ազգային կուլտուրական գործերուն, երբ մեր ուժերը հազիւ կը բաւեն մեր կազմակերպական գործերուն:

Ակնունք.— Ես կ'առաջարկեմ նոր բանաձեւ որ հաշտեցման եւ նոր բանաձեւ պատրաստելու միջոց է:

(1) Պահպանել իբր սկզբունք նախկին Ընդհ. ժողովի որոշումը, ո'չ կուսակցական մասնակցութեան վերաբերմամբ:

(2) Անհատական մասնակցութիւնը ցանկալի կարգապահութեան ենթարկելու եւ անոնց բռնելիք ընթացքը որոշ ուղեցոյցի ենթարկելու համար, նախկին Ընդհ. ժողովի որոշման կցել ներկայ ժողովին կողմէն մշակելիք ուղեցոյց-պլատֆորմը, թէ պլոքներու կազմութեան, եւ թէ անհատ ընկերներու գործունէութեան վերաբերմամբ:

(3) Յանձնել յատուկ մասնախումբի, վաղուան ժողովին բերել այս ուղղութեամբ մշակուած բանաձեւ, ձայներու վճռական մեծամասնութիւնը ապահովելու համար:

Անտոն.— Ես կը նկատեմ որ մտքերու նոյնութիւն կայ բոլոր առաջարկներու մէջ ալ, տարբերութիւնը մի-

Ջոցներուն մէջ է: Իբրեւ ելակէտ, ես կ'առաջարկեմ, արգիլել վարիչ մարմիններուն մասնակցիլ ազգային-կուլտուրական գործերուն. լաւագոյն եւ գործնական ձեւն է այս ուժերու բաշխման:

Այս վիճաբանութիւններէն վերջ որոշուեցաւ սկսիլ սկզբունքներու քուէարկութեան:

- 1- Կուսակցականօրէն մասնակցիլ 8 ձայն:
- 2- Անհատապէս բայց ժողովին կողմէ գծած ուղեցոյցի մը համաձայն մասնակցիլ 8 ձայն
- 3- Բնա՛ւ չմասնակցիլ 4 ձայն
- 4- Դաշնակցականներու անհատական կամ կուսակցական մասնակցութիւնը կը կանոնաւորուի կազմակերպութեան կողմէ:

Նիստ ԻԱ.

31 Օգոստոս (կէսօրէ ետք ժամը 5-ին)

Ներկայ էին պատգամաւորներէն՝ Վան, Կարին, Մուշ-Սասուն, Պոլիս, Պարսկաստան, Ամերիկա, Պալքան, Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներ, Տիգրանակերտ, Կեսարիա, Տրապիզոն, Սեբաստիա, Սամսոն-Մարզուան. վճռական ձայնով հրաւիրուածներէն՝ Աւօ, Աստիկ, Բաբա, խորհրդակցական ձայնով հրաւիրուածներէն՝ Ասլան, Մար, Ժիրայր, Ասողիկ, Ակնունի, Մարգպետ, Մելքում, Մելօ, Սարը(եան), Սաթօ:

Որովհետեւ նոր բանաձեւ պատրաստած չէր ժողովը քուէարկեց նշանակել յանձնախումբ մը՝ բաղկացած գլխաւոր բանաձեւ ներկայացնող ընկերներէն, այսինքն. — Ատոմ, Անտոն, Վահագ:

- 1) Դաշնակցականներու մասնակցութիւնը նախազըծող ուղեցոյց — միաձայն:
- 2) Կուսակցականօրէն մասնակցելու առաջարկը ստացաւ 8 ձայն:
- 3) Դաշնակցական շրջանները ազատ ըլլան մասնակցելու կամ ոչ. 11 ձայն:
- 4) Շրջ. ժողովները եւ Կ. Կոմիտէները իրենք ընտրեն ներկայացուցիչներ. 9 ձայն:
- 5) Դաշնակցականները պլոք կը կազմեն. ի հարկին ուրոյն կերպով գալով. 7 ձայն:
- 6) Դաշ. հատուածը առանձին չի մասնակցիլ վարչութեան, այլ համախորհրդակցութեամբ եւ Կ. Կոմիտէի հաւանութեամբ ստացաւ 8 ձայն:

Քուէարկութեան դրուեցան ներկայացուած բանաձեւերը որոնցմէ Մեծատուրի բանաձեւը՝ չմասնակցիլ ազգային-կուլտուրական գործերուն՝ ստացաւ 3 ձայն: Ինչպէս նաեւ բժիշկին հետեւեալ բանաձեւը (1) Որովհետեւ

տեւ կուսակցութիւնը տրամաբանօրէն այն ժամանակ պիտի աւելի ուժեր տայ ազգային-կուլտուրական գործերին երբ Ընդհ. ժողովը պարտաւորեցնի Կ. մարմինները պաշտպանելու մասնակցելու այդ գործերին, եւ որովհետեւ հակառակ այդ տեսակ պարտաւորեցման չմասնակցելու, միշտ ընկերներ չափազանց շատ են այդ գործին մէջ մասնակցելու համար]:

2^ր Ընդհ. ժողովը առաջարկում է հետեւել նախկին Ե^ր Ընդհ. ժողովի¹⁹ իր գործերի մէջ, չտարուելով ազգ. կուլտուրական գործերով: Ստացաւ 8 ձայն:

Այնուհետեւ քուէարկուեցան մաս առ մաս ընկերներ Վահագի, Անտոնի եւ Ատոմի ներկայացուցած հետեւեալ բանաձեւերը եւ տուին հետեւեալ արդիւնքները.

Ա. Բանաձեւ Ատոմի. — Հ. Յ. Դաշնակցութեան 2^ր Ընդհանուր ժողովը առաջնորդուելով իւր ծրագրային այն հիմնական պարտականութիւններից՝ որով կուսակցութիւնը նպատակ է դրած պաշտպանել նաեւ հայ աշխատաւորութեան ազգային կուլտուրական շահերը, ստացաւ (10) տասը քուէ:

Աչքի առաջ ունենալով՝ որ Թուրքիայում հայ աշխատաւորութեան կուլտուրական կեանքը ամփոփուած են հայ-ազգային սահմանադրութեամբ գծուած ու օրինականացած Ազգ. ներքին կուլտուրական ինքնավար հիմնարկութիւնների մէջ. ստացաւ (11) տասնեմէկ քուէ:

Նկատի ունենալով սակայն որ թէ՛ Կովկասում եւ թէ՛ Թուրքիայում երկա՛ր տարիներ կուսակցութիւնը անլեկալ պարած լինելու պատճառով հնարաւորութիւն չէ ունեցած ազգ. կուլտուրական իւր պահանջները պարզել եւ աստիճանական նուաճումի իւր պլատֆորմը գծել. ստացաւ 5 քուէ:

Նկատի ունենալով՝ որ այդ անորոշութեան պատճառով, «կուսակցական ծրագրից չչեղելու» նախընթաց ընդհանուր ֆորմիւլաները անբաւական են եղած կուսակցական շարքերի ու գործող ընկերների համար կուսակցական ներդաշնակ գործելակերպ ստեղծելու, ստացաւ (8) վեց քուէ:

Նկատի ունենալով նաեւ՝ որ կուսակցական կեանքի եւ հետապնդած ընդհանուր նպատակի համար՝ քաղաքական ու աշխատաւորական գործունէութիւնը, եւ կուսակցական պրոպագանդի ու շարքերի ուժեղացումը նախապատուութիւն ստանալով միայն կարելի պիտի լինի կուլտուրական կեանքի մէջ եւս նուաճումներ անել, եւ հետեւաբար աշխատանքի եւ ուժերի բաժանումը պիտի կատարել համապատասխան որակով ու քանակով, ստացաւ 11 քուէ:

19.- Յայտնաբար ատենագրութեան մէջ գանց առնուած է Ե. Ընդհ. ժողովի համապատասխան բանաձեւը, որով կ'որոշէր. — «Իբրեւ կուսակցութիւն չմասնակցիլ ազգային-կուլտուրական եւ հասարակական մարմիններուն՝ բաց դուռ ձգելով այսուհանդերձ կուսակցութեան անդամներուն առջեւ, պայմանաւ որ անոնք չհակասեն կուսակցութեան սկզբունքներուն»:

Ընդհանուր ժողովը որոշում է.

Ա. Մշակել պլատֆորմ հայ-ազգային կուլտուրական կեանքի անմիջական եւ նուազագոյն պահանջների ու նուաճումների համար:

Բ. Ընտրական պայքարները մղել յանուն կուսակցութեան եւ պլատֆորմային պահանջներով՝ միացած բոլկ կազմուած այլ տարրերի հետ, եթէ կան:

Գ. Կեդրոնական ու գաւառային Ազգ. խորհրդարանական ժողովների անդամակցութեան համար թեկնածուներին ընտրել համապատասխան Շրջ. ժողովներից, Պոլսոյ մէջ՝ խորհրդակցութեամբ ձեռնհաս²⁰ մարմնի հետ:

Դ. Կուսակցական պատգամաւորները ներկայանան համապատասխան ժողովների մէջ որպէս դաշնակցական խմբակցութիւն:

Ե. Այն բոլոր հարցերի շուրջ որ կարելի է ազատական ու դեմոկրատ տարրերի եւ խմբակցութիւնների հետ համաձայնուել, նոյնպիսի որոշ հարցերի շուրջ այդ տարրերի եւ խմբակցութիւնների հետ բոլկներ կազմել:

Զ. Վարչական մարմիններին ընկերների մասնակցութիւնը յորդորել իրանց անձնական պատասխանատուութեամբ իբր դաշնակցական անհատներ: Բայց եւ այնպէս մասնակցող ընկերները պարտաւորուած են իրենց շրջանի մարմիններին եւ խորհրդարանական խմբակցութեան համաձայնութիւնը ստանալ, եւ ուր որ ընկերների մասնակցութիւնը կը վնասի նախապատուութիւն ունեցող կուսակցական գործերին, այնտեղ մասնակցել ցանկացող ընկերները կ'արգելուին:

Է. Շրջ. ժողովների ու մարմինների ընտրութիւնների ու համաձայնութիւնների մէջ անպայման առաջնորդուել ուժերի որակի ու քանակի համեմատական ու համապատասխան բաշխման անհրաժեշտութեամբ, ուր առաջնութիւնը միշտ ստանալու են քաղաքական, աշխատաւորական ու պրոպագանդի գործունէութիւնն ու պահանջները, եւ ուր որ կուլտուրական կեանքին մասնակցութեան համար բաւարար ուժեր չեն գտնուի, շրջանը կը մնայ ձեռնպահ:

Ը. Բանաձեւ Անտոնի. — Քննելով մեր ներքին-ազգային գործունէութեան քաղաքականութիւնը ինչպէս եւ մեր բռնելիք դիրքը դէպի հայկական կուսակցութիւններն ու տարրերը, Հ. Յ. Դ. 2^ր Ընդհ. ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Գտնելով որ հայ եւ հարեւան ժողովուրդների տնտեսական քաղաքակրթական ներկայ յետամնաց շրջանին մեր ընկերական-յեղափոխական արմատական տարրերը անկարող են կազմել մեծամասնութիւն եւ գործադրել իրենց բովանդակ ծրագիրը՝ այլ հարկադրուած են վերջինիս հետամուտ լինել մասնակի նուաճումներով եւ գործնական ձեռնարկներով եւ իրենց խոչալների լայն արծարծումով եւ համախոհներ գտնելով:

Ընդունելով որ մեր գործունէութեան տարրերի

ներկայ սոցիալիստական պայմանների մէջ՝ սկսած պետական կարգերից մինչեւ տեղական կամ ազգային ինքնավարութիւններն ու ընտանեկան ամենաշակական կարեւորութիւն ունեցող] սահմանադրական սկզբունքի (այսինքն մարդկային ազատութիւնների, ժողովրդապետութեան ու իրաւակարգի) լայնացումը, խորացումը եւ կիրառումը կեանքի մէջ՝ կամայական-աւատական, կղերական օրէնքներու մտածողութեան տիրապետութեան աւանդութեանց տեղ: Ստացաւ 17 քուէ:

Նպատակ ունենալով ապահովել բացի — ինչպէս եւ ամէն մի ազգութեան ազգային-մշակութային ինքնավարութիւնը իբրեւ պետական գործունէութեան մի ճիւղ իր ինքնավար վարչութեամբ ու յատուկ տուրք սահմանելու իրաւունքով, ստացաւ 17 քուէ:

Գիտակցելով որ թէ՛ ազգային մշակութային, թէ՛ սահմանադրութեան կիրարկման գործունէութեան մէջ մեզի համամիտ եւ համագործակից կը լինին թէ՛ յառաջադէմ կուսակցականները թէ՛ չէզոք խաւերի ազատամիտ տարրերը: Ստացաւ 18 քուէ:

Ենտելով որ Հ. Յ. Դ. բարոյական ազդեցութիւնը հետեւանք է ոչ միայն մեր Մրագրի ու գործելակերպի ճշդութեան այլեւ կուսակցական անդամների անձնութեան, անշահախնդրութեան եւ միշտ էլ նրա դժուարագոյն գործեր ստանձնելուն եւ մտքի ու սոցիալական կեանքի նոր հորիզոններ բանալու մէջ: Ստացաւ 18 քուէ:

Որոշում է

Դաշնակցութիւնը ջանալու է օրէնքի միջոցաւ ապահովել հայ ազգային մշակոյթին վերաբերեալ ինքնավարութիւն (իբրեւ պետական իրաւասութեան ու գործունէութեան մի ճիւղ) վերակազմելով համապատասխան վարչութիւնները դեմոկրատիկ ապակենտրոնացման աշխարհական հիմունքների վրայ եւ ապահովելով ճրի, պարտադիր, ընդհանուր տարրական կրթութիւնը, ճնշուած խաւերին օժանդակութեան անհրաժեշտութիւնը հասարակութեան եւ համայնքի կողմից եւ ծառայեցնելով դրանց ազգային կալուածներն ու հասոյթները, ազգային տուրքը եւ պետութիւնից ստանալիք մշակութային բաժնի մէջ հասնելիք մասը. ստացաւ 18 քուէ:

Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն ու ամբողջութիւն չմասնակցելով ազգ-մշակութական գործերի ու հիմնարկութիւնների մէջ, կուսակցական անհատները եւ շրջանները կը մասնակցին այդ գործերին առանց հակասելու կուսակցական սկզբունքներուն լինելով ներշնչողի, ուղղութիւն տուողի, գործակցողի, եւ ոչ հրաման տուողի կամ միակ գործադրողի դերին մէջ. ստացաւ 7 քուէ:

20.- Չեռագրին մէջ՝ ձեռնուր:

կրօնական եւ նրա հետ կապուած դաւանական խնդիրները ու համապատասխան հաստատութիւնները հանդէպ բռնելու է չհրաք դիրք ապահովելով ու յարգելով ամէն մէկի խղճի ազատութիւնը, համբերատար քաղաքավարի վերաբերմունք ցոյց տալով դէպի բոլոր տեսակի դաւանանքներն ու կրօնական սրբութիւնները: Ստացաւ 18 քուէ:

Ազգային մշակութական մարմինները իրաւունքները պաշտպանութեան ու գործունէութեան մէջ աշխատողները գործում են բլոքներ կազմելով միւս յարատեւ գործունէութեան ընդունակ ազատական դեմոկրատիկ տարրերի հետ (ստացաւ 18 քուէ):

Դաշնակցական ղեկավար մարմինների անդամները (Բիւրօ, Կ. Կոմիտէ, խմբագիր, Պարլամենտի անդամ) չեն կարող մտնել ազգային վարչութեան, քաղաքական ժողովների մէջ: Ստացաւ 10 քուէ:

Մասնակցողները հաշուետու են շրջանային ժողովների առաջ. ստացաւ 15 քուէ:

Գ. Բանաձեւ Վահագի.— Ընդհանուր ժողովը ապահովել կարենալու համար համաչափ ներդաշնակութիւն մը կուսակցական գործունէութեան բոլոր ճիւղերուն մէջ եւ միանգամայն կանխելու համար բոլոր այն անպատեհութիւնները որոնք ծագեցան կամ կրնան ծագիլ առաջիկային եւս՝ դաշնակցական ընկերներու անհատական հանգամանքով, ազգային ներքին ինքնավարութեան գործերուն մասնակցած ըլլալուն հետեւանքով:

Պարտադիր կ'ընէ նուազագոյն պահանջներու պլատֆորմ մը, որով պարտին առաջնորդուիլ ազգային ներքին ինքնավարութեան գործերուն մասնակցող բոլոր ընկերները:

Թէ ազգային կեդրոնական եւ թէ գաւառական ժողովներուն մէջ մեր ընկերները կը մասնակցին հաւաքաբար, իբրեւ դաշնակցական երեսփոխանական հատուած, պայմանաւ որ ամէն անգամ այդ մասնակցութիւնը որոշուի այն պարագային՝ երբ տեղին վրայ կը գտնուին ձեռնհաս ընկերներ, որոնց մասնակցութիւնը ազգային գործերուն չվնասէ կազմակերպական գործունէութեան միւս ճիւղերուն: Թեկնածուների անուանումը կը կատարէ իւրաքանչիւր վայրի Շրջանային ժողովը: Պոլսի մէջ՝ խորհրդակցութեամբ Արեւմտեան Բիւրոյի թրքահայ հատուածի հետ:

Դաշնակցական ընկերները ազգային ժողովներու մէջ պահպանելով հանդերձ իրենց կուսակցական հատուածի ինքնութիւնը, միշտ խմբակցութիւն (bloc) մը կը կազմեն ազատական տարրերու հետ, անոնց հետ պահպանելով եւ իրագործելով անոնց ծրագրի բոլոր այն մասերը՝ որոնք համաձայն են մեր պլատֆորմին, եւ հրապարակ գալով առանձինն՝ ամէն անգամ երբ անհրաժեշտութիւն կը տեսնուի յանուն կուսակցական սկզբունքներուն միջամտելու:

Դաշնակցական հատուածը առանձինն չի մասնակցիր վարչական ժողովներուն, այլ համագործակցութեամբ ազատական խմբակցութեան. վարչական այդ ժողովներու դաշնակցական թեկնածուները կ'անուանեն տեղին Կեդրոնական Կոմիտէները, իսկ Պոլսի մէջ՝ ձեռնհաս մարմինները, խորհրդակցութեամբ դաշնակցական երեսփոխանական հատուածին:

Ընտրական պայքարի ատեն դաշնակցական հատուածը հրապարակ կու գայ ազատական խմբակցութեան հետ — եթէ յաջողի միացեալ ընտրական պլատֆորմի մասին համաձայնութիւն գոյացնել կանխաւ:

Բոլոր այս բանաձեւերէն մէկ հատ պատրաստելու համար, որոշուեցաւ ընտրել յանձնախումբ մը՝ հետեւեալ ընկերներէն Բաբա, Ռոստոմ, Արամ, Թորգոմ:

Թուրքիոյ Հայոց Ազգ. սահմանադրութեան վերաքննութիւնը

Նկատի ունենալով որ այս խնդիրը կը կարօտի երկարատեւ եւ լուրջ ուսումնասիրութեան, ժողովը միաձայն որոշեց խնդիրը յանձնել ա'յն յանձնախմբին, որ պիտի գրադի պլատֆորմի պատրաստութեամբ:

Մեր դիրքը

Հայ միւս կուսակցութիւններուն հանդէպ

Ատոմ.— Այդ հարցը արդէն լուծուած կը նկատեմ ազգային կուստուրական հարցի մասին մեր բռնելիք դիրքի որոշմամբ:

Լիպարիտ.— Անհրաժեշտ կը նկատեմ առանձին բանաձեւ անցնել միւս կուսակցութիւններու իւրաքանչիւրի մասին, պատճառաբանուած կերպով որոշելով մեր դիրքը անոնց հանդէպ, անոնց վիճակը պարզելով ժողովուրդին քննադատական-ուսումնասիրական հրատարակութեամբ մը:

Ալալան.— Ես նպատակայարմար չեմ նկատեր միւս կուսակցութիւններու մասին այսպիսի խրտչեցնող եւ ընդհանուր համերաշխութեան վնասող որոշում-բանաձեւ մը անցնել: Վաղը կրնանք այս կամ այն կուսակցութեան հետ գործակցիլ որոշ խնդիրներու շուրջ:

Կարազեան.— Համաձայն եմ Լիպարիտին, պէտք է վճռապէս որոշենք մեր դիրքը եւ ժողովուրդին ներկայացնենք միւս կուսակցութիւններու իսկական դէմքը: այսպիսով մենք վերջ մը դրած պիտի ըլլանք ժողովուրդային տրտուենքին:

Վահագի.— Կը կրկնեմ Ասլանի նկատողութիւնը անտակտ նկատելով այսպիսի խիստ որոշում մը, մանաւանդ որ մեզի կը պակսին անհրաժեշտ նիւթերը՝ այսպիսի լուրջ խնդրի մը մասին լուրջ եւ խղճամիտ ուսումնասիրութիւն մը պատրաստելու համար: Կ'առա-

ջարկեմ բաւականանալ միայն ցաւ յայտնելով որ հակառակ մեր անկեղծ ջանքերուն չեն իրականացած համերաշխութեան փորձերը:

Մարգալետ.— Մեր անկեղծ ձգտումը՝ քաղաքական կուսակցութիւններու միջեւ համերաշխութիւն կայացնելու, մատուցեցաւ անյաջողութեան: Համերաշխ գործունէութեան տեսակէտէն բան մը չհասցանք, բայց բարոյական տեսակէտով շահեցանք: Ժողովուրդը տեսաւ որ մենք անկեղծ կողմնակիցներ ենք քաղաքական հողի վրայ համերաշխ գործունէութեան:

Կ'առաջարկեմ ուրեմն, հաստատել նախորդ Ընդհանուր ժողովի որոշումը այդ մասին եւ կեանքի մէջ համերաշխ գործել քաղաքական կուսակցութեանց մաքուր եւ անկեղծ տարրերուն հետ, ուր որ հնար է:

Լեւնեան.— Կը կրկնեմ իմ առաջարկս, որովհետեւ այդ բանը երբեք վէճի առիթ չի տար. պէտք է ցոյց տանք որ այդ կուսակցութիւնները իրենց անունին բոլորովին անհամապատասխան ուղղութիւն եւ գործունէութիւն ունին. անհրաժեշտ է պարզել անոնց ֆիզիոնոմին:

Թորգոմ.— Համաձայն եմ Լիպարիտի. ժողովուրդը անտեղեակ է իրողութեան. ինչո՞ւ չպարզել իրողութիւնը. այսուհանդերձ, մենք կրնանք գործակցիլ փարլամենթի իրենց ներկայացուցիչներուն եւ այն մարմիններուն հետ, որոնց հետ կարելիութիւն կայ:

Բաբա.— Համաձայն չեմ ամբողջ կուսակցութիւնը դատապարտելով, որովհետեւ, ընկերներն ալ կը խոստովանին թէ անոնց մէջ ալ կան մաքուր տարրեր, որոնց հետ կրնանք գործակցիլ:

Մուրատ.— Բոլորովին հակառակ եմ այդ կուսակցութիւններուն հետ ոեւէ համերաշխութեան. փաստերը այդ համոզման բերած են գիւ. համագործակցիւք ձախակողմեան բոլոր մաքուր տարրերուն հետ ուր որ ալ գտնուին անոնք եւ կամ ով [որ] ըլլան:

Ժողովը փակուեցաւ ժամը 8-ին:

Նիստի ԻԲ.

30 Օգոստոս (Երեքշաբթի առաւօտ)

Ներկայ՝ Մուշի, Պարսկաստանի, Կարնոյ, Սամսոն-Մարգուանի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Պալքանի, Ամերիկայի, Ուս. միութեան, Պոլսոյ պատգամաւորները, Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներուն ներկայացուցիչները: Վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն՝ Բաբա, Տիգրան, Միսեան, խորհրդակցական ձայնով 8 ընկերներ:

Նիստը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ասլա-

նի եւ ներկայութեամբ 18 վճռական եւ 8 խորհրդակցական ձայներու:

Օրակարգ.— Մեր բանակցութեան եղանակը Ազգ. կուստուրական գործերու մէջ կուսակցութեան ուժեղացումը եւ յարաբերութիւն միւս հայ կուսակցութեանց հետ:

Ալեւնուի.— Վերջին տարիներու մեր գործունէութեան մէջ երկու ուղղութիւն կը նկատուի. մէկը այն՝ որ կ'ուզուի մեր կուսակցութիւնը — իբրեւ ընկերվարական յեղափոխական կուսակցութիւն — կեդրոնացնել քաղաքական²¹ խնդիրներու շուրջը, ոյժ տալով իր գլխաւորական բաժնին. միւսը՝ հանրային ուժերու կեդրոնացման եւ կուսակցական մեկուսացման: Թուրքիոյ մեր գործունէութեան ընթացքին չենք կրնար նախկին սխալներու կրկնութեան թոյլ տալ, մնալով նեղ-կուսակցական հողի վրայ՝ առաջ բերելով հայ ժողովուրդին մէջ ներքին պառակտումներ: Ոմանք կ'ըսեն թէ մեր շարքերը այժմ աւելի ուժեղ են, ես հակառակ կարծիքի եմ. նոյնինքն Ընդհ. ժողովի կազմը այդ կ'ապացուցանէ: Մեր թուլացումը իր ապացոյցը տուաւ մեր գործունէութեան ընթացքին: Նոյն իսկ Հազգը փաշային դահլիճին գլուխն անցնիլն ու սանձարձակ գործունէութիւնը կապուած է հայ ժողովուրդին մէջ առաջացած ջլատումին եւ ներքին հակամարտութեանց: Նախկին շրջանին մէջ ընդհակառակը մեր պահանջները յարգուեցան — գինուորագրութիւնը չպիտի ընդունուէր՝ եթէ չըլլար Դաշնակցութեան ուժը: Ներկայի պայմանները պարտադիր կը դարձնեն ներքին ուժերու համախմբման: Ներքին պայքարը պիտի վնասէ մեր գործունէութեան: Մենք այս կամ այն ազգային հաստատութեանց եւ գործօններու մէջ մտցնելով մեր ընկերները՝ կ'ուրախանայինք, մոռնալով որ այդ իւրաքանչիւր քայլը, կամ ենթադրուած յաջողութիւնը ղեկավարութեան խմորումը առաջացուց: Այդ քայլերէն ոչ մէկը յաջողութիւն կ'ընդունիմ. յաջողութիւններ կան տեւական, յաջողութիւններ կան վաղանցուկ, մենք վաղանցուկ յաջողութեանց հետ չպիտի մոռնանք որ մենք հայ ժողովուրդի ծոցին մէջ մեծ պառակտում մը կ'առաջացնենք եւ առաջացուցինք ալ՝ ձգելով կուսակցութեան ազդեցութեան կշիռը՝ յաջա այլ տարրերու եւ նոյնիսկ կառավարութեան: Այս ընթացքով մեր ունեցած յաջողութեանց դուռերն ալ կը փակենք, երբ մանաւանդ կառավարութեան տրամադրութիւնը շատ որոշ է, որ մատնացոյց ըրաւ նոյնինքն Բիւրոյի տեղեկագիրը: Մեզի կարեւոր է ամէնէն առաջ մերձեցումն առաջ բերել մեր ներքին հայ կեանքին մէջ: Ժամանակ է որ մեր նեղ ուղղութիւնը ձգելով՝ լայն եւ շրջահայեաց ուղղութեան մը հետեւինք: Այս կարծիքը կը պաշտպանեն Եւրոպայի յայտնի ընկերվարականներ, որոնց հետ տեսնուած ենք: Ապագային, սահմանադրա-

21.- Չեռագրից մէջ՝ քաղաքապետական:

կան վստահելի պայմաններու մէջ միայն կարող ենք երեւան գալ մեծ ոյժով եւ մեր ոյժով: Ներկայ պայմաններուն մէջ, երբ քաղաքական կացութիւնը շատ վտանգաւոր է, առողջ դատողութիւնը կը պահանջէ վերջ դնել ներքին կռիւներու բորբոքման, ձգտել առաջ բերել ժողովրդական կենսունակ տարրերու եւ խաւերու շողկապ, համերաշխեցնել քաղաքական հայ կուսակցութիւնները եւ այսպէսով ներքին ներդաշնակ ոյժ ստեղծել՝ դիմադրել կարենալու համար գալիք վտանգներուն:

Կարագեան.— Այս երկու տարուայ ընթացքին ազգ-կուտորական խնդիրներու մէջ մեր մասնակցութեան մասին տարակարծութիւններ կան, մէկը մասնակցելու, միւսը լոկ յեղափոխական գործունէութեան մէջ ինքնամփոփուելու վերաբերմամբ: Եթէ Դաշնակցութիւնը չմասնակցի այդ գործունէներուն՝ կրնանք միանգամայն վստահ ըլլալ որ հոն ոչինչ չի կատարուիր: Թուրքոյ մէջ սակայն պայմաններու փոփոխութիւնը նկատելի է. հոս եթէ Դաշնակցութիւնը ուղղակի չմիջամտէ իսկ՝ կ'երեւին տարբեր ուժեր, որոնք առաւել կամ նուազ չափով կրնան դեր մը կատարել, այն ինչ կուսակցական ընկերները, մասնաւորապէս Պոլսոյ մէջ, կլանուեն են այդ գործով: Հեռուէն այդ պայքարը մեզի կը թուէր աննպատակալարմար: Այս պայքարով մենք կերպով մը միջամտած կ'ըլլանք՝ հայ ժողովուրդի խղճի գործին, ինչ որ կ'արգիլէ նոյնիսկ մեր Մրազիրը: Պահպանողական տարրը ինչ յետին նպատակներէ ալ առաջնորդուած ըլլար մեր դէմ, այնուամենայնիւ մենք պէտք չէինք պայքարին այս գոյնը տալ: Յաջորդող նպատակաւոր փոփոխութիւնները ոչ թէ արդիւնք է մեր յաղթանակին, այլ պայքարի տարածման եւ ընկերներու ինքնամփոփման: Հնչակեաններու հետ յարաբերութեան խնդիրը նոր չէ. հնչակեաններու միակ նպատակը Դաշնակցութեան առջեւ խոչընդոտներ հանել եւ զայն զբաղեցնել եղած է. համերաշխութիւնը տեսակ մը գէնք ծառայած է, որ տեղին համաձայն գործածութեան դրած են, նոյնիսկ ներհակ ուղղութիւններով, տեղ մը Դաշնակցութեան դէմ խօսելով, ուրիշ տեղ մը պաշտպանելով: Անցնելով տարբեր ազգութեանց յարաբերութեան խնդրին, կը դիտուի որ քրտերու մէջ զանազան շարժումներ տեղի կ'ունենան, ապացոյց՝ քիւրտ ցեղապետներու երթեկերը պարսկա-թուրք սահմաններուն վրայ: Բայց այս բոլոր շարժումներուն մասին Բիւրոյի տեղեկութիւններն ու շահագրգռութեան չափը անբաւարար են: Եզրակացնելով կ'աւելցնեմ որ հնչակեաններու հետ ոեւէ համերաշխութիւն ցանկալի չէ. չկալանուելի ազգային-կուտորական գործերով եւ նուիրուելի կուսակցութեան յեղ. գործին:

Բաբա.— Թիւրիմացութիւն մը կը նկատեմ. ընկեր Ակնունին դեռ անցեալ ոգեւորութեան շրջանին մէջ կը զգայ ինքզինք, երբ ամէն հայ դաշնակցական կ'անուանէր ինքզինք: Բայց ո՛չ մէկ լուրջ կազմակերպութիւն

ունինք: Երեւի պատահական ոգեւորութեան տակ մեր շուրջը եկած նորամուտ տարրերը հեռացան՝ այն օրէն զանազան տարրեր իրենց գլուխը բարձրացուցին: Այսօրուան լուսութիւնը արդիւնք է նոյնինքն մեր կազմակերպութեան շարքերու տակաւ շատացման: Ահա այս պատճառով ալ մեր կազմակերպութեան միակ մտահոգութիւնն ըլլալու է կուսակցութեան ուժեղացումը: Ազգովին կազմակերպուելի անհնարին է եւ այդ տեսակ երեւոյթ ոչ մէկ ազգի մէջ գոյութիւն ունեցած է: Ընկերներ, որոնք կաթողիկոսական հարցին մէջ մասնակցութիւն ունենալուն ի նպաստ կը խօսէին, այսօր դէմ կը խօսին ազգային-կուտորական խնդիրներուն մէջ մասնակցութեան: Երէկ, նախկին ռեժիմին օրով մեր շարքերը քիչ էին, սահմանափակուած էինք միմիայն գէնքի գործով, բայց այսօր երբ շարքերը շատցան, ինչպէս կարելի է չզբաղիլ, ինչո՞ւ անբնական կը նկատուի՝ եթէ ոեւէ դաշնակցական իբր համայնքի անդամ մասնակցի ազգային կուտորական գործերուն: Կուսակցութիւնը չի կրնար, այժմեան պարագային զատել զուտ յեղափոխական գործերը եւ միայն անով զբաղիլ, մանաւանդ որ այդ գործունէութիւնը բաւարարութիւն չափի տայ: Ծարքերու մեծ մասը դեր եւ աշխատանք ունին կուտորական գործերու մէջ, այնպէս որ կուսակցութիւնը արգիլել մասնակցելէ՝ անբնական բան մը պիտի ըլլար, ապացոյց՝ Կովկասի մեր գործունէութիւնը: Եւրոպայի մէջ զուտ տնտեսական հողի վրայ կուսակցութիւններ կան՝ որոնք յեղափոխական ընկերակառութեան դէմ չեն նկատուիր եւ ընկերակառականները այսպիսիները նախասոցիալիստական չեն գտներ, որովհետեւ անոնց աշխատանքն ալ սոցիալիստական աշխատանքներու լրացումը կ'ընդունին: Եթէ մեր կուսակցութեան մէջ սխալներ եղած են, պատճառն այն է որ մենք սկիզբէն հիմնական գործ չենք կատարած:

Առստով.— Այն ընկերութիւնները՝ որոնց մէջ մեր ընկերները մուտք չեն գործած՝ հակադեմոկրատական հոսանքին գլուխն են: Ազգային յարաբերութեանց ուղղման տեսակէտով ազատականներու հետ սկսած գործունէութեան եղանակը յարմարագոյն կերպն է: Այս բոլորին հետ մենք համամիտ չենք որ կուսակցութեան անունով գործուի. քանի որ անհատին եւ կուսակցութեան զանազանութիւնը, նոյնիսկ մեր շարքերուն համար, կարեւոր է հասկցնելու համար կուսակցական յեղափոխական գործին եւ ազգային-կուտորական գործին մէջ գոյութիւն ունեցող զանազանութիւնը: Պէտք է մնալ նախորդ Ընդհ. ժողովի որոշման վրայ: Կովկասի օրինակը միշտ դաս պէտք է ըլլայ մեզի: Հոն ալ կուսակցութեան անունով չէր սկսուած, սակայն պահանջուած տակտը պակսելուն՝ այն երեւոյթը ստացաւ որ կուսակցութիւնը իբրեւ կուսակցութիւն կը մասնակցի: Այսքան փորձերէ եւ փորձառութիւններէ յետոյ կուսակցութեան հետ խառնել կողմնակի նպա-

տակներ՝ անյարմար է: Մենք նոյնիսկ արհեստակցական եւ այլ միութիւններ կը կազմակերպենք անկուսակցական հողի վրայ:

Տիգրան.— Դաշնակցութիւնը ժողովուրդին ծոցէն ծնած անհատներէ կազմուած ըլլալով՝ չի կրնար չհետաքրքրուիլ իրենց առօրեայ կեանքին հետ կապ ունեցող եւ ազդող խնդիրներու մէջ, երբ մանաւանդ իրենց աչքին առջեւ կը կատարուին բազմաթիւ դէպքեր՝ որոնց համաձայն չենք եւ նոյնիսկ բողոքող:

Երբ կայ մեր կուսակցութեան ծոցին մէջ նոր եւ գլխավոր տարր մը՝ անկարելի է գիրենք արգիլել միջամտել եւ պայքարել: Կ'ընդունինք որ պայքարի ընթացքին սխալներ գործուեցան, բայց ատոնք անխուսափելի էին, որոնք սակայն ապագայ մեր գործունէութեան համար դասեր կը պարունակեն: Մենք չենք կրնար չզբաղիլ ազգային-կուտորական գործերով, որովհետեւ ամէն ընկեր իր զաւակին կամ եղբոր կրթութեամբ կը հետաքրքրուի եւ չպիտի յանձնառու ըլլայ հաճի աղաներու դեկավարութեան տակ տեսնել այդ կրթութիւնը: Նոյն բանը կարելի է ըսել դաշնակցական ուսուցիչներու վերաբերմամբ: Նոյնիսկ սերունդին դաստիարակութեան եւ կուսակցական զարգացման տեսակէտով պէտք է որ անոր կրթութեան գործը մեր ձեռքը ունենանք: Համաձայն եմ յանուն կուսակցութեան մասնակցելու առաջարկին, որովհետեւ դիտած եմ որ նոյնիսկ կեդր. կոմիտէները իրենց ժողովներուն նիւթ ըրած եւ արձանագրութիւն պահած են, չնայելով Ընդհ. ժողովի հակառակ որոշման: Ասիկա ցոյց կու տայ թէ որքան հրամայական է պահանջը:

Անտոն.— Կը թուի թէ նախորդ Ընդհ. ժողովի որոշումները լրիւ ու բաւարար չեն, որ թիւրիմացութիւն առաջ եկած է: Մեր ծրագիրը կ'առաջարկէ՝ «պաշտպանել հայ աշխատաւոր մուսանների բովանդակ շահերը թէ տնտեսական-դասակարգային, թէ մարդկային-քաղաքական եւ թէ ազգային կուտորական»: Այս առաջադրութիւնները միայն փարլամենթով կամ օրէնքներով չեն իրականանար, այլ օրէնքներու հետ, մարդիկ իրենք իրենց մէջ պէտք է փոխուին: Բաւական չէ միայն կուսակցութեան անդամ ըլլալ եւ կատարել սոսկ դրամական եւ այլ յանձնառութիւններ. հարկ է ծրագրային առաջնորդութեանց իրագործումին եւս հետամտիլ, մասնակցելով բոլոր այն գործնական ձեռնարկներուն մէջ, որոնք այս կամ այն կերպով առաջ կը մղեն մեր տեսակէտները: Դաշնակցականները պէտք է մասնակցին այդ բոլորին մէջ՝ անոնցմէ իւրաքանչիւրը տեղաւորուելով իր ընդունակութեան համապատասխանող գործերու մէջ: Պակասութիւնը հոն է որ մեր մասնակցութիւնը չէ եղած ուղղութիւն տուողի հանգամանքով, այլ պատասխանատուութիւնը հրաման տուողի ձեռով: Այս եղանակն էր որ մեր դէմ հակահոսանք առաջացուց: Գալով «բաց ու բաց» ինչորին՝ մենք շատ լաւ գի-

տենք որ Ֆրանսայի մէջ անգամ երբ կառավարութիւնը եկեղեցիէն բաժնուեց, եկեղեցին յանձնեց հաւատացեալներուն: Մենք մեր համոզումներով կը տարբերինք ժողովրդական մասսաներէն, հետեւաբար պէտք է տաքթով ընթանալ: Այդ խնդրին կարգադրութիւնը կը մնայ թողուլ իւրաքանչիւր տեղի հոգաբարձութեան հայեցողութեան: Մեզի, իբրեւ ընկերակառականներու՝ շատ ալ ձեռնտու չէ եկեղեցիի կամարներու տակ ճառել: Այս տեսակէտներու վրայ հիմնուած՝ կ'առաջարկեմ լրացնել Ընդհ. ժողովի որոշումները՝ հետեւեալ կէտերու ներմուծումով.

Դաշնակցական ամէն մի անդամ կուսակցութեան դաւանանքները տարածելէ, անդամավճար տալէ եւ պետական ընտրութիւններին անհրաժեշտաբար մասնակցելէ զատ, պատրաստ է մասնակցութիւն ունենալ նաեւ մեր նպատակին գործակից եւ անընդհատ կենդանի գործունէութեան բնոյթ ունեցող հետեւեալ ճիւղերէն գէթ մէկուն մէջ՝

- Ա. Պրոպագանդային-ագիտացիական
- Բ. Ինքնապաշտպանողական-մարտական
- Գ. Արհեստակցական-գիւղացիական միութեան
- Դ. Սպառողական-արդիւնաբերական

- ընկերութիւններու
- Ե. Ազգային-մշակութական լուսաւորութեան
- Զ. Համայնական-քաղաքապետական
- Այս ճիւղի գործերը տարուելու են ոչ կուսակցական հողի վրայ, եւ այդ ձեռնարկների մէջ մասնակցող դաշնակցականները ջանալու են մտցնել այդ ձեռնարկների մէջ իրենց ուղղութիւնը, գործունէութեան մասին հաշուետու լինելով շրջանային ժողովների առաջ:

Ատով.— Վիճարանութիւններէն առաջ հարկ է որ օրակարգի այս խնդրին մասին լսուի համապատասխան յանձնախմբին զեկուցումը. որովհետեւ յանձնախումբը տարակարծիք գտնուեցաւ, յարմար դատուեցաւ որ մեզմէ իւրաքանչիւրը, իբրեւ անդամ յանձնախմբի, առանձնապէս զեկուցանէ առաջադրուած հարցի մասին: Նկատուող բոլոր թիւրիմացութիւնները առաջ եկած են այն պատճառով որ մենք ազգային-կուտորական-կրթական գործերը չփոխած ենք իրարու հետ: Երբ մեր ծրագրին մէջ կան որոշ առաջադրութիւններ հանդէպ ազգային-կուտորական գործերու մեր պարտականութեան մասին, մենք չենք կրնար ըսել որ այս մասը կ'ընդունինք եւ միւսը ոչ: Այն թուականներուն՝ երբ էի Կովկաս եւ էի այլուր, մեր ընկերները մասնակցելով հանդերձ ազգային կուտորական գործերուն մէջ՝ ներկայի դժգոհութիւնները չէին առաջանար. պատճառը այն էր որ իբրեւ ոչ-կուսակցական կը մըտնէին, անձնապէս մնալով յեղափոխական իլլեկալ աշխատանքին մէջ եւ հետեւաբար չէին շօշափեր այս կամ այն տարրին կամ դասակարգին շահերը: Երբ կեանքի իրականութեան մէջ կը մտնենք, ինչ անունով ալ որ ըլ-

լայ, որոշ շահերու ընդհարում առաջ կու գայ եւ պայքարը անխուսափելի կը դառնայ: Ոեւէ ուղղութիւն որոշ ժամանակէ յետոյ կը դառնայ երբեմն անարժէք՝ այս ու այն պատճառներով: Կուսակցութիւններու հետ յարաբերութեանց խնդիրին մէջ, երբ կարգը կու գայ ազգային կուսակցութեանց՝ սահմանները կը շփոթուին: Այդ բոլոր հարցերը երեւան եկան այնպիսի պատճառներով՝ որոնք չէին նախատեսուած. հիմնական ծագման պատճառներուն մէջ կ'ընդունուի այն՝ որ ամէն բանէ առաջ մեզի պէտք էր կուսակցական-քաղաքական գործունէութիւն եւ շարքեր, կուսակցական աշխարհայեացք: Ու փոխանակ այդ աշխատութիւններուն նուիրուելու՝ ամբողջովին նետուեր ենք ազգային-կուլտուրական գործերուն մէջ: Պայքարը արդիւնք չէ հրամայելու քաղաքականութեան, այլ դաշնակցական ըլլալու-չըլլալու հանգամանքին: Հնչակեաններու մասին խօսուած ատեն մոռնալու չէ որ անոնք ալ տարբեր չեն շարժած, սակայն որովհետեւ լաւագոյն տարրերը չեն եղած անոնց շուրջը, նոյնիսկ անոնց հետ եղած համաձայնութիւնը՝ ազգային-կուլտուրական խնդիրներէ անդին չեն անցնիր: Անոնց հետ գործակցելու ուղին գծեր են նախորդ ընդհանուր ժողովները — գործակցութիւն մաքուր տարրերու հետ: Որպէսզի մեր կուլտուրական-ազգային գործունէութեան մէջ նպատակաշարժար ուղղութիւն ունենանք, հարկ է որ կուսակցութիւնը ընդգծէ մեր պահանջները՝ ազգային-կուլտուրական ներքին կեանքի վերաբերմամբ՝ մեկնելով աշխատաւորական շահերու տեսակէտէն: Այս պակասն է որ թիւրիմացութեանց տեղի տուած է: Ընդհանուր ժողովը պիտի գծէ պատշաճ, որպէսզի անհատ ընկերները հոն ներկայանան կուսակցականի դէմքով: Յետոյ այլ է ազգային ժողովին մէջ մտնել՝ որ օրէնսդիր է եւ ուղղութիւն տուող, այլ է վարչական դեր վերցնելը: Ազգային վարչական դերեր վերցնելը վնասակար կ'ըլլայ այն պարզ պատճառով որ օրէնսդիր ժողովները կազմուած կ'ըլլան այնպիսի տարրերով՝ որոնցմէ ծնած վարչութիւնները կարենան ստեղծագործող դեր կատարել: Յորչափ կը պակսի այդ կազմը, մեր ցանկացած վարչութիւնները չեն կրնար ոչ յաջողութիւն գտնել, ոչ ալ պաշտպանութիւն: Վարչական մարմիններու մէջ մտնելը կը նշանակէ իշխանութեան գլուխ անցնել, որ հոգեբանութեան եւ մտածելակերպի ահագին տարբերութիւն առաջ կը բերի. պէտք չէ որ Ընդհ. ժողովը թոյլ տայ իբր կուսակցութիւն մասնակցելու այն վարչութեանց մէջ, որոնց ծնուցիչ ոյժերը մեր տարրերէն չեն. դաշնակցական անհատները կրնան մտնել՝ առանց կուսակցութիւնը պատասխանատու նկատելու:

Եզրակացութիւն.— 1) Կուսակցութիւնը բնաւ թոյլ չպիտի տայ որ իր անդամները անհատապէս ներկայանան օրէնսդիր ժողովներուն, այլ յանուն կուսակցութեան, 2) Աչքի առջև ունենալով այդ ժողովներուն

կազմութիւնը, վարչութեանց եւ գործադիր իշխանութեանց կը մասնակցին ընկերները անհատապէս, այս պարագային ալ անոնք միայն՝ որոնք ուժեղ են եւ կրնան ազդողի դեր կատարել, 3) կազմել ուրոյն խմբակ ազգային խորհրդարանին մէջ, ի հարկին գործակցելու համար ազատական խմբակցութեան, առանց նոյնանալու անոր հետ եւ առանց մեր շարքերը անոր տրամադրութեան տակ դնելու՝ ինչպէս եղաւ ասկէ առաջ:

Գրքօ.— Դաշնակցականները անհատապէս մասնակցելով՝ ոչ միայն ինքնին արդէն կը շփոթուի կուսակցութեան հետ, այլ մասնակցութեան եղանակի անորոշութիւնը պատճառ կ'ըլլայ, ինչպէս եղած է, ընկերներու տարանջատումներուն եւ տեղի տուած աններդաշնակութեանց: Պայքարը իր էութեան մէջ ոչ թէ փրփականտի միջոց է եղած, այլ զգացումներու եւ ամբոխային գորգումներու: Պէտք է կուսակցութիւնը իբրեւ կուսակցութիւն մասնակցի:

Մեջօ.— Կը թուի թէ մենք շատ աւելի մեծ կարծիք ունինք մեր մօտաւոր անցեալի ուժին՝ քան ներկային: Մեր սխալը կը սկսի սահմանադրութենէն անմիջապէս յետոյ սկսած մեր գործունէութենէն: Ամէն քաղաքական կուսակցութիւն երբ յեղափոխական-ժողովրդական գործունէութենէն շեղելով, փոխթիկանութեամբ կը զբաղի, կը քննադատուի, ինչպէս եղաւ մեր գործունէութիւնը սահմանադրութեան յաջորդող տարիներուն մէջ՝ առանց կշիռի առնելու մեր ուժը: Նոյնը նաեւ ազգային-կուլտուրական գործունէութեան վերաբերմամբ: Մէկ-երկու ուժերու ներմուծումը այդ ասպարէզին մէջ մեզ շարժուց: Աչքի կը գարնէ այն՝ որ մեր ընկերները ժողովրդական խաւերու եւ վարժարաններու մէջ չմտան, վերէն նայեցան եւ տեղի տուին տիրող մտայնութեան: Իւրաքանչիւր դաշնակցական ազգային-կուլտուրական գործերուն պէտք է մասնակցի անհատապէս. բայց այն պարագային՝ երբ այս կամ այն անհատը իր արտայայտութեամբ կամ խառնուածքով իր դէմ եւ իրմով կուսակցութեան դէմ կը լարէ ժողովուրդը, կուսակցութիւնը պէտք է որ յայտնէ թէ այնինչ ընկերը կուսակցութեան անունով չէ որ կը գործէ: Հնչակեաններու հետ կուսակցական պայքարի մէջ չմտնալ եւ անհատներուն հետ յարաբերուիլ:

Նշան.— Եթէ պիտի մնանք զուտ յեղափոխական գործունէութեան վրայ, պէտք է որոշ համաձայնութեան մէջ ըլլալ միւս հայ կուսակցութիւններու հետ: Իսկ եթէ պիտի մասնակցինք ազգային-կուլտուրական գործերուն մէջ՝ այն ատեն այդ համաձայնութիւնը հետապնդելու հարկ չի զգացուիր, որովհետեւ այդ գործունէութիւնը իր հոսանքին մէջ պիտի ձգէ զանազան ազատական տարրեր: Կուսակցապէս կամ անհատապէս մասնակցելու մէջ տարբերութիւն չի տեսնել, որովհետեւ երկու պարագային ալ կուսակցութեան մասնակցելու երեւոյթը կը ստանայ եւ այսպէս ալ կ'ըն-

դունուի: Եւ ինչո՞ւ չմասնակցիլ՝ երբ կուսակցութեան ծրագիրը կը պարտադրէ այդ ուղղութեամբ գործունէութիւն մը: Եթէ մինչեւ հիմա մեր գործունէութիւնը ցանկալի արդիւնք չէ տուած, որովհետեւ պակսեր է ուղղութիւն, ծրագիր եւ հաւաքական աշխատանքը: Մենք ժողովուրդը խրտչեցուցած ենք ոչ թէ կուսակցութեան դէմ՝ այլ մեր սխալ տաքթիքին դէմ:

Իզմիրի Կ. Կոմիտէն ուղարկած ըլլալով իր տեղեկագիրը, կ'առաջարկէ խորհրդակցական ձայնի իրաւունքով ընդունիլ իր պատգամաւորը որ ժողովի վայրը կը գտնուի: Կարծիքներու փոխանակութիւններէ վերջ, որոշուեցաւ ընդունիլ Իզմիրի Կեդր. Կոմիտէին պատգամաւորը, որ մասնակցեցաւ նիստերուն՝ այսօրու յէսկսեալ:

Նիստ ԻԳ.

Օգոստոս 29 (երեկոյ 4:50)

Ներկայ Բիւրոներուն ներկայացուցիչները, Ռոստոմ, Վահագ, պատգամաւորներ՝ Տիգրանակերտի, Վանի, Մուշի, Տրապիզոնի, Խարբերդի, Սեբաստիոյ, Կեսարիոյ, Պարսկաստանի, Սամսոնի, Պալքանի, Ամբրիկայի, Պոլսոյ, Ուս. միութեան, հրաւիրուած ընկերներ վճռական ձայնով, Բաբա եւ Աւօ. խորհրդակցական ձայնով՝ ընկերներ Մելքում, Գեղամ, Մար, Ակնունի, Սաթօ, Ժիրայր:

Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Բաբայի:

Նկատելով որ յանձնախումբը դեռ բանաձեւը չէր պատրաստած, նախագահը առաջարկեց առանձնաձև եւ բերել բանաձեւը մինչեւ նախորդ նիստերու արձանագրութեանց ընթերցումը եւ վաւերացումը:

Կարդացուեցան եւ վաւերացուեցան 14, 15, 18, 17րդ նիստերու արձանագրութիւնները: Յանձնախումբը ժամը 8-ին առաջարկ բերաւ թէ քանի չէ վերջացեր բանաձեւը, լաւ կը լինէր այդ յետաձգել վաղուան եւ անցնիլ նոր հարցերու: Առաջարկուեցաւ ընկեր Անտոնի կողմից ներքին ուժեղացման խնդրով զբաղիլ:

Ընկեր Վահագ առաջարկեց՝ քանի որ Իթթիհատի խնդիրը վերջացած կարելի է նկատել, լաւ կը լինէր ամէնից առաջ մեր յարաբերութիւնները ազատական խմբակցութեան հետ. թեր ու դէմ կարծիքներուց յետոյ որոշուեց լսել Բիւրոյի զեկուցման շարունակութիւնը միւս կուսակցութեանց եւ ազգային յարաբերութեանց մասին. ընկեր Վահագ զեկոյց: Դրուեցան զանազան հարցեր զեկուցման շուրջը եւ պատասխանուեցան ընկեր Վահագի կողմէ: Յետոյ որոշուեց քննադատութիւնը առաւօտուան թողնել:

Ժողովը փակուեց ժամը 7:30ին:

Նիստ ԻԴ.

30 Օգոստոս (կէսօրէ ետք)

Ներկայ՝ Մուշի, Պարսկաստանի, Կարնոյ, Սամսոն-Մարգուանի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Պալքանի, Ամբրիկայի, Ուս. միութեան, Պոլսոյ պատգամաւորները, Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներու ներկայացուցիչները. վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուածներէն Բաբա, Տիգրան, Սիսեան, խորհրդակցական ձայնով՝ Յ ընկերներ:

Շարունակութիւն նախկին օրակարգի վիճարանութեան.—

Վերապահեան.— Ներքին պայքարը կը սկսի «Ազատամարտ»ի երեւումէն անմիջապէս յետոյ բովանդակելով իր մէջ Աղթամարի եւ նման խնդիրներ: Մենք ըլլալով ընկերվարական կուսակցութիւն մը՝ մեր դէմ էին թաղականները, աղաները, կրօնականները եւ այլն: Պայքարը մեր եւ ժողովուրդի միջեւ չէր. այլ մեր եւ աղայականութեան մէջ: Երբ այդ նոյն տարրերը ամէն գնով կ'աշխատէին Դաշնակցութեան գործունէութեան դէմ արգելք յարուցանել, Դաշնակցութիւնը ինչպէ՞ս կրնար անտարբեր մնալ՝ առանց վաղուան սերունդին եւ իր պատմական կոչումին դէմ դաւաճանած ըլլալու: Խընդիրը հոն չէ որ այդ պայքարի ընթացքին մենք եւս ունեցած ըլլանք շեղումներ: Պիտի մասնակցիլ ազգային կուլտուրական գործերուն, իբրեւ անհատ որոշ ծրագրով, մեր պահանջները համաձայնեցնելով շրջապատող պայմաններուն եւ մեր ուժին: Հնչակեաններու հետ իբրեւ կուսակցութիւն համերաշխելու համար եզրեր չկան. տարբեր խնդիր երբ անհատ հնչակեաններու հետ համերաշխիք ու գործակցինք: Ժողովուրդը ունի զոյգ մը նախապաշարումներ՝ որոնց պէտք է մօտենալ զգուշութեամբ՝ քանի որ նախնական աշխատանք չէ կատարուած. բան մը որ մեր ընկերներէն շատերուն պակաս է, պատճառ դառնալով մեզի փարած ժողովուրդը մեզմէ հեռացնելու:

Աւտղիկ.— Կուսակցութեան դէմ առաջ եկած դժգոհութեանց պատճառներ շատ են. «Ազատամարտ»ը երկրորդական տեղ կը գրաւէ այդ շարժման մէջ. այդ տեսակ հոսանքներ առաջ եկած են նախորդ ուժի մի օրով, իսկ վերջին դժգոհութեանց պատճառներէն մէկը այն է որ՝ զեղեցիկ կերպով ստեղծուած պրոպագանդայի գործը շեղեցաւ իր ուղիէն՝ տեղ-տեղ տեղի տալով նոյնիսկ ճշդումի. երկրորդ պատճառն էր մեր մուտքը ազգային-կուլտուրական գործերուն մէջ առանց որոշ ծրագիր մը ունենալու. կայ նաեւ ժողովուրդի արժէքը արհամարհելու սխալը, ինչպէս նաեւ եկեղեցական եւ այլ աւանդութեանց վրայ յարձակելու սխալը: Այս բոլորէն յետոյ յանուն կուսակցութեան արտայայտուիլ

եւ յանուն կուսակցութեան մտնել այդ գործերուն մէջ՝ նոր սխալ մը սկսիլ կը նշանակէ: Դաշնակցական պատգամաւորները ուղղակի Դաշնակցութենէն չեն ընտրուիր այլ ժողովուրդէն, հետեւաբար մեր պատգամաւորները բարոյական իրաւունքը չեն կրնար ունենալ ազգային եւ այլ ժողովներու մէջ ներկայանալ յանուն Դաշնակցութեան կամ իբրեւ դաշնակցական: Հարկ է մօտենալ ժողովրդական այն բոլոր խաւերուն որոնք կրնան մեզի հետ գործել եւ օգտակար ըլլալ:

Առւրէն.— Կովկաս «բաց ու բոց» ինչիւր չկար, սակայն հոն եւս նոյն երեւոյթը կրկնուեցաւ, եթէ «բաց ու բոց» չլլար, ազատականութիւն եւ կղեր ուրիշ խնդիր պիտի հանէին՝ իրենց շահերուն ի պաշտպանութիւն: Ինչպէս կարելի է այդ բոլորին դէմ լռել ու չխօսիլ: Անցեալ Ընդհ. ժողովին որոշման կրկնութիւնը կ'առաջարկէին իբրեւ կուսակցութիւն մասնակցելով չափազանցութեանց մէջ պիտի իյնան մեր ընկերները, քանի որ պահանջուած կուսակցական պատրաստութիւնը չունին:

Արամ.— Պայքարը անխուսափելիօրէն հինի եւ նորի խնդիր է. յետադիմութեան եւ յառաջդիմութեան խնդիր է: Անոնք որ պայքարի էութեան մասին թիւր կարծիքներ ունին՝ հեռուէն դիտողի տպաւորութեամբ կը խօսին: Հալածանքը արդարացնելու համար ստեղծուած պատրուակները սուտ եւ շինծու եղած են — իրողութիւնն այն է որ յետադիմութիւնը մեր ազդեցութիւնը կ'ուզէր չէզոքացնել: Մեր սխալը այն է որ մենք պատրաստուած եւ հիմնաւորուած չէինք եւ չէինք ստեղծած իսկական կուսակցական շարքեր: Այժմ գիտադարձի այս շրջանին երբ փոխադարձ ուժերու ծանօթութիւն ունինք, ի գուր պիտի ըլլար արգիլել զայն կէս ճամբուն վրայ... իսկ այս կամ այն անունով մասնակցիլ ու ձեւին վրայ կրկին պնդել՝ աչկապուկ խաղալ պիտի նշանակէ: Պէտք է իբրեւ կուսակցութիւն մասնակցիլ՝ երկդիմութիւններէ խուսափելու համար. ուր կը սկսի եւ ուր կը վերջանայ մեր կուսակցականի եւ անհատ քաղաքացիի սահմանները, — կամ պէտք է թէ իբրեւ անհատ քաղաքացի եւ իբրեւ կուսակցութիւն չմասնակցիլ եւ կամ մասնակցիլ իբրեւ կուսակցութիւն. այս վերջին պարագային՝ միայն օրէնսդրական մարմիններուն մէջ, իսկ գուտ վարչական գործօններու մէջ՝ իբրեւ անհատ: Հնչակեաններուն գալով՝ անոնք իրենց կուսակցական կեանքի գոյութիւնը կը փնտռեն մեզ դէմ հակառակ ընթանալու մէջ. առանց անհատներու մասին խօսելու՝ հնչ. կուսակցութեան հետ ոեւէ համերաշխութիւն փորձել անպատակ է: Միակ հնալրաւորելը ազատական տարրերու հետ գործակցելուն մէջն է, գծելով որոշ ուղղութիւն:

Ալեմ.— Դաշնակցութեան դէմ պայքար յորդորողները իրենց ոտքին տակ հող չունին, անոնց միակ շարժառիթը իրենց շահերու պաշտպանութիւնն է, դիրքերու պահպանումը: Համաձայն եմ կուսակցութիւնը իբ-

րեւ կուսակցութիւն մասնակցելու գաղափարին. մինչեւ հիմա մեր մասնակցութիւնը եղած է անհատապէս՝ ըստ երեւոյթին, այն ինչ բոլոր խնդիրները կուսակցութեան ժողովներուն մէջ վիճուած եւ վճուած կ'ըլլան. իսկ ժողովուրդը գիտէ որ կուսակցութիւնն է մասնակցողը: Պարտադիր որոշումով չմասնակցելուն վնասն այն է որ ընկերները պատրաստ պիտի ըլլան ենթարկուելու այդ որոշման, ժողովուրդն ալ դիւրութիւն պիտի ունենայ իր դիրքը ճշդելու: Կեդր. վարչական մարմիններու մէջ ալ իբրեւ կուսակցութիւն մասնակցելուն կողմն եմ, քանի որ անոնց ձեռքը կենտրոնացած է բաւական ֆոնկսիոններ: Հայ կուսակցութիւններէն Սահմանադիրը՝ ռամկավարները բացարձակ յետադիմականներ են. իսկ հնչակեաններու բնորոշումը եղաւ. իմ խօսքը անգիտակից մասսայի մասին չէ որոնք միշտ կը նախապաշարուին իրենց վերի խաւերէն:

Ասլան.— Յանձնաժողովին մէջ ընկեր Ատոմին հետ տարակարծիք գտնուեցայ երկու կէտերու մէջ: Պայքարի մասին չ'ուզել խօսիլ՝ որովհետեւ խօսուեցաւ պէտք եղածէն աւելի: Իր տեսակէտն է որ մեր պլատֆորմը տարբեր բան մը չպիտի ըլլայ, Ազգային ժողովին մէջ ներկայիս գոյութիւն ունեցող ազատական խմբակցութեան ծրագրէն երկրորդ՝ անոնք տակաւին բարոյական ուժ մը չեն ներկայացնել որով առանց մեզի ոչինչ պիտի արժեն եւ այսօր որ մեր թիկունքը կը կազմեն, վաղը պիտի խնդրտ տարր մը դառնան. կայ նաեւ քուէարկութեան պարագան՝ առանց ազատականներու գործակցութեան՝ մեր ոչ մէկ թեկնածուն կրնայ անցնիլ: Որպէսզի մենք ուժ մը ներկայացնենք ազգային շրջանակին մէջ եւ անկէ դուրս՝ ազատականներու հետ մեր գործակցութիւնը անհրաժեշտ է: Այժմ հարց է թէ՛ անհատաբար մասնակցելով ալ մենք չափազանց սանձարձակ ձգած չե՞նք անհատ ընկերները, որոնք իրենց թանտաններով²² պիտի առաջնորդուին. իրականին մէջ արդէն կուսակցութիւնն է որ մասնակցած կ'ըլլայ. անհատաբար մասնակցելով երեւոյթները փրկած կ'ըլլայ որ ժամանակի մը համար անհրաժեշտ է: Բայց որպէսզի որոշ ուղղութեամբ մը առաջ երթան դաշնակցական ընկերները՝ հարկ է ունենալ դաշնակցական ընկերներու յատուկ ներքին պլատֆորմ՝ անկէ առաջնորդուելու համար: Կայ նաեւ խորհուրդներու մասնակցելու պարագան՝ որ նոյնքան կարեւոր է: Առաջարկ- 1) Ընդհ. ժողովի կողմէ ընտրուած յանձնախումբի մը կողմէ գծել դաշնակցականներու յատուկ պլատֆորմ 2) Մասնակցիլ անհատապէս թէ՛ ժողովներուն եւ թէ՛ վարչութեանց ու խորհուրդներուն 3) Անպայման գործակցիլ ազատականներուն՝ առանց ուրոյն խմբակ կազմելու:

22.- Թանտանս (ֆրանսերէն) ձգտում, միտում, նախասիրութիւն:

Ար.— Սխալ է թէ վերջին պայքարները, պայքարն է յետադիմութեան եւ յառաջդիմութեան կամ հինի եւ նորի: Այդ պայքարը ժողովուրդէն Դաշնակցութեան դէմ ուղղուած պայքար մըն էր, որ շահագործուեցաւ այդ տարրէն. այս պայքարը մեր սխալ տաքթիկն եւ սխալ գործունէութեան արդիւնքն է, որովհետեւ մենք հանդիպած պատեհութեամբ դէմ կանգնեցանք ժողովուրդին զգացման: Գալով մասնակցելու խնդրին չենք կըրնար զանազանել անհատական եւ կուսակցական մասնակցութիւնը:

Վահան.— Մեր ծրագրին մէջ կայ ազգային-կուլտուրական շահերու պաշտպանութեան որակը, որ պէտք է պաշտպանենք կազմակերպութիւններով: Մեր կուսակցութիւնը կը գտնուի հայ ժողովուրդի բոլոր խնդիրներու մէջ միջամտելու եւ իր կնիքը դնելու անհրաժեշտութեան առջեւ: Մենք տեսած ենք, օրինակ Կովկասի մէջ, երբ չենք մտած ազգային-կուլտուրական խնդիրներու մէջ, բեղմնաւոր արդիւնքներ չենք ունեցած նոյնիսկ կուսակցական դաստիարակութեան տեսակէտով: Մեր քաղաքական նպատակի տրամադրութեամբ՝ հարկ է որ Դաշնակցութիւնը իր անպայման մասնակցութիւնը ունենայ ազգային-կուլտուրական խնդիրներու մէջ: Թուրքիոյ (մէջ) Ազգ. սահմանադրութիւնը ներքին ազգային ինքնօրինութեան տարրեր կը պարունակէ եւ մենք իբրեւ ընկերվարական ազգային կուսակցութիւն պարտաւոր ենք միջամտել, դեր վերցնել եւ մեր տեսակէտները անցնել: Եթէ մենք փասիւ մասնակցութիւն ցոյց տալով բաւականանք, չպիտի կրնանք այն արդիւնքն ու դերը ցոյց տալ, քան ինչ որ աքթիւ մասնակցելով պիտի տայինք: Մեր աքթիւ մասնակցութիւնը իբր կուսակցութիւն այս պայմաններուն մէջ անհրաժեշտ է թէ օրէնսդրականին թէ վարչականին մէջ: Քանի որ եթէ առաջինը օրէնքներ կը մշակէ, միւսը շատ մը աշխատանքներ կը կատարէ: Առանց Քաղաքական ժողովին ձեռնհաս տարրերէ կազմուած ըլլալուն, խորհուրդներուն մէջ դեր մը չենք կրնար կատարել: Մեր կուսակցութիւնը ունի երկու գլխաւոր նպատակ — յետադիմական-աշխատաւորական, եւ ազգային-կուլտուրական: Մեր կուսակցութեան մէջ կան երկու տարրեր, մէկը կտրուկ յետադիմական տարրը, միւսը քաղաքական լեկալ հողի վրայ գործող տարրը. աշխատանքը բաժնել տալով իւրաքանչիւրին իր ընդունակութեան յարմար ասպարէզը: Եւ այս բոլորը կուսակցական բնոյթ կրելու է: Կուսակցութիւնը պաշտօնապէս մասնակցելու է իրաւունք ունենալու համար իր անդամներէն հաշիւ պահանջելու եւ իր շարքերը հարկադրելու: Եթէ Դաշնակցութիւնը այս ձեւով մասնակցի, ինքն ըստ ինքեան ազատական տարրերը մեզ կը միանան եւ կը կազմեն պլոք: Սխալ է թէ ազատականները մեր պլատֆորմը պիտի ընդունին. կան խնդիրներ, որ անոնք մեզ հետ չպիտի միանան, օրինակ սահմանադրութեան²³ վե-

րաքննութեան հարց, եւ հոտ է որ տարբերութիւնը հրապարակ պիտի գայ. շատ խնդիրներու մէջ անոնք մեզ հետ չպիտի ըլլան այլ մեզի դէմ:

Ար.— Եթէ Պոլսոյ մէջ սկսուած պայքարը «Ազատամարտ»ին կը վերագրուի թիւրիմացութեամբ, գաւառներու մէջ ինչի՞ պէտք է վերագրել: Ժողովուրդէն մեզի դէմ պայքար չի գար, գոյութիւն ունեցած պայքարը հինի եւ նորի խնդիր է: Ազատականներու հետ գործակցելու է այնչափով, ինչ չափով որ չենք հակասեր մեր Մրագրին:

Լեւոնեան.— Անոնք որ կը պահանջեն սահմանափակում մասնակցութեան եղանակին՝ թէ որի ազդեցութեան տակ կը գտնուին: Հոս ընկերային ազդակներու դերը ճշդել դժուար է, թէ ուր կը սկսի մէկը եւ ուր կը վերջանայ միւսը: Եթէ մենք կը ցանկանք մեր ազդեցութիւնը ունենալ ընկերային գործերու մէջ, պէտք է այդ ազդեցութիւնը ունենալ ընկերային գործերու մէջ, պէտք է այդ ազդեցութիւնը դնենք ընկերային զարգացման բոլոր գործօններու վրայ: Եթէ այդ ազդեցութիւնը կը գտնենք դպրոցներու մէջ՝ պէտք է մտնել հոն: Մենք անպատճառ չենք ըսեր որ մեր ազգային գործունէութեան մէջ այն եռանդը ցոյց տանք, ինչ եռանդ որ ցոյց կու տանք մեր միւս գործունէութեան մէջ: Կուսակցութիւնը պէտք է մասնակցի իբրեւ կուսակցութիւն ինչպէս մինչեւ հիմա. քանի որ ներկայիս բոլոր ընկերները ոտքով, գլխով այդ գործերուն մէջ մտած են, պէտք է խնդիրը այսպէս դնել. — թեկնածուները պէտք է նշանակէ կուսակցական մարմինը ինք, անհատապէս մասնակցելու եղանակը շարքերու մէջ անկարգապահութիւն եւ անպատասխանատուութիւն կ'առաջացնէ: Եթէ կուսակցապէս ալ չմասնակցինք՝ մեր ընկերները պիտի կրկին կլանուին եւ իրականութիւնը նոյնը պիտի ըլլայ: Միւս տարրերուն մասին մեր գործունէութիւնը պիտի ըլլայ պլոքի ձեւով, ունենալով մեր պլատֆորմը, այսինքն մեր նուազագոյնը միացնելով անոնց առաւելագոյնին:

Վահան.— Պայքարի մասին սխալ կարծիքներ յայտնեցին հեռուն գտնուողները: Հարցերուն նայուեցան բաւական թեթեւ, մոռնալով որ 908-ին Կովկասի մէջ Դաշնակցութիւնը ամբողջովին ինկաւ կեդրոնական ժողովի պայքարին մէջ: Պայքարը ազգային-կուլտուրական գետնի, պայքար մըն էր: Հայ ժողովուրդին սեփական-իրաւունքը իր սեփական հողին վրայ, առանց կաթողիկոսական եւ այլ միջամտութիւններու, նայելով խնդրին նոյնիսկ խղճի տեսակէտէն. պայքարին մէջ աւելի յաղթեցինք քան կորսնցուցինք՝ ապացոյց գոյութիւն ունեցող օրինակները: Պայքարը տարուած է ընկերներու խորհրդակցութեամբ. եթէ եղած են որ որո-

23.- Խօսքը կը վերաբերի Կ. Պոլսոյ պատրիարքութեան 1863 թ. ընդունած հայ Ազգ. Սահմանադրութեան:

չուսներուն հակառակ արդիւնք դուրս եկած է, այդ ալ յաջորդող իրականութեան արդիւնքն է²⁴։ Կոխ մղած ենք՝ երբ յարձակում եղած է մեր վրայ։ Կուսակցութիւնը այսօր իր նիւթական, թուական եւ բարոյական ուժերով աւելին է քան էր 908-909ին։ Եթէ չկուուէինք, ոչ համերաշխութիւն գոյութիւն կ'ունենար, ոչ ալ պայքարը կը դադրէր։ Ազգային Սահմանադրութիւնը ընդունելով իբր մաս օսմ. սահմանադրութեան, պարտական ենք հոն մտնել ու զարգացնել զայն։ Եթէ մենք քաշուինք պահ մը ու չհետաքրքրուինք՝ մեզ սպաննած պիտի ըլլանք, տեղ տալով ուրիշներուն։ Հետեւաբար պիտի հոն ներկայանանք իբրեւ կազմակերպուած կուսակցութիւն, առանց զանազան դիմակներու տակ մտնելու, այլապէս թէ տիտիլիներ եւ թէ համաձայնութիւնը պիտի բացակային։ Մենք թէ օրէնսդրական եւ թէ վարչային ժողովներուն պիտի մասնակցինք, պայմանով որ Երջ. Ժողովները թեկնածուներ նշանակեն։ Որպէսզի զանազան կասկածելի կուսակցութիւններու տեղ չտրուի, գործակցելու ենք քաղաքականներու հետ՝ պլոքի ձեւով, մնալով ուրոյն բայց գործակցելով։

Ռոստոմ.— Եթէ կ'առաջարկեմ կուսակցութեան դրօշի տակ հրապարակ չգալ, որովհետեւ կուսակցապէս պատրաստուած մասսա չունինք. սկզբունքին դէմ չեմ, այլ այդ թաքցիլը մեզ համար վտանգաւոր պիտի ըլլայ եւ ազգային հողի վրայ տեղի ունեցած ամէն կոխ պիտի անդրադարձնայ կուսակցութեան յեղափոխական գործունէութեան վրայ։ Օրինակ փարլամենթի երեսփոխանութիւնը՝ որ համեմատաբար պատրաստուած ուժեր են՝ չեն կրնար համախորհուրդ գործել։ Ինչպէ՞ս պիտի կրնանք վստահիլ համեմատական անպատրաստ ուժերու։ Կուսակցապէս հրապարակ զարու պարագային՝ աւելի բարդութեանց տեղի պիտի տանք եւ տարածայնութեանց։ Աչքի առջեւ ունենալով կուսակցութեան թուլութիւնը, գործի յաջողութեան տեսակէտով, հարկ է որ Դաշնակցութեան անունով դուրս չգանք։ Մէկ-երկու ընկերներու ներկայութիւնը ոեւէ ժողովներու մէջ՝ բաւական կ'ըլլայ ազդելու, բայց հէնց որ անոնք Դաշնակցութեան անունով խօսին՝ անմիջապէս ընդդիմութիւնը կը սկսի, մենք չէ՞զոքներու մեծ մասսա ունինք, երբ մենք մեր շարքերու վրայ վստահ չենք, ի՞նչպէս վստահ պիտի ըլլանք անոնց վրայ, կը մնայ տակաւ զանոնք մեզ կապել, ինչ որ պիտի նպաստէ կուսակցութեան ուժեղացման։ Առանց այս պայմանին՝ մեր շարքերը պիտի խառնուին, որովհետեւ այդ ուղղութեամբ հետամտութիւններով զինուած մարդիկ պիտի մտնեն մեր շարքերը, եւ մեզ շեղեցնեն ու վարկաբեկեն։ Ազատական տարրերու հետ գործակցութիւնը օգտակար կը գտնեմ, բաւական է որ մեր ընկերները չչեղին կուսակցութեան ուղղութեան։

Բանաձեւերու մասին խօսիլ վերապահուեցաւ յաջորդ նիստին։

Նիստ եւ.

1 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Բիւրոներու ներկայացուցիչներ, Պարսկաստանի, Պալքանի, Ամերիկայի, Կարինի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշ-Սասունի, Սամսոն-Մարզուանի, Ուս. միութեան, Խարբերդի, Պոլսոյ պատգամաւորները։ Վճռական ձայնով՝ Վարազդատ, Սարումեան, Աւօ, Սիսեան։ Խորհրդակցական ձայնով՝ Ասողիկ, Մարգպետ, Ժիրայր եւ Ասլան։

Կարդադուցեալ նախորդ մէկ, երկու նիստերու արձանագրութիւնը եւ հաստատուեցաւ։

Նկատի առնելով որ տակաւին օրակարգի վրայ կան շատ մը խնդիրներ՝ խորհրդակցութեան եւ որոշման կարօտ, կարծիքի փոխանակութիւններ տեղի ունեցան այն մասին թէ՛ ո՞ր խնդիրներուն պէտք է առաջնութիւն տալ։

Աարումեան.— Կ'առաջարկեմ հետեւեալ կարգով աշխատիլ. (1) կազմակերպական խնդիրները, (2) ելեւմտացոյցը (3) Պարսկաստան (4) Ռուսիա եւ այլն։

Ատոմ.— Նկատի ունենալով որ հակառակ մեր ցանկութեան աշխատանք չի տարուիր, ուստի աւելի լաւ է միայն կէսօրէ առաջ ժողով գումարել, իսկ կէսօրէ ետք յանձնախումբերի աշխատութեանց յատկացնել։

Ժիրայր.— Եթէ յանձնախումբերը աշխատին լաւ է, բայց փորձերը ցոյց տուին որ այդպէս ալ արդիւնք ձեռք չբերուեցաւ։

Նախագահը քուէի դրաւ օրը անգամ մը ժողով ընելու առաջարկը որ 11 ձայնով ընդունուեցաւ. ուստի որոշուեցաւ նիստերը ամէն օր կէսօրէ վերջ ժամը 3էն սկսիլ եւ շարունակել մինչեւ ուշ ատեն։

Իթիֆհատը եւ մեր ներքին քաղաքականութիւնը.— Նախորդ նիստերու մէջ այս հարցը լայնօրէն ծեծուած ըլլալով պարտականութիւն յանձնուած էր յատուկ յանձնախումբի մը բանաձեւ պատրաստել եւ ներկայացնել ժողովի նկատառութեան եւ քուէարկութեան. ընկեր Վահագ կարդաց յանձնախումբին պատրաստած բանաձեւը որմէ յետոյ տեղի ունեցաւ կարծիքի փոխանակութիւն։

Սուրէն.— Պահանջները շատ ամփոփ կերպով գրուած է. աւելի լաւ կ'ըլլայ ընդարձակել։

Կարապետ.— Որովհետեւ Իթիֆհատի վիճակը շատ անորոշ է, չենք գիտեր թէ առաջիկայ քունկրէն ի՞նչ վիճակի մէջ պիտի դնէ զայն. ուստի լաւ է որ վերապահումներ ըլլան։

Վահան.— Բանաձեւին մէջ գրուած է թէ «կանոնաւոր յարաբերութիւն չեն ունեցած մեզ հետ»։ պէտք է

24.- Յայտնապէս արձանագրութիւնը հեռու է ատենախօսին մտքերը յստակօրէն ցոյացնել։

ըսել բնաւ չեն ունեցած յարաբերական եւ ընդհանրապէս բոլոր խնդիրներու մէջ։

Նշան.— Հոն ըսուած է «ոյժ տալ ձախակողմին»։ այդպէս պէտք չէ գրել, քանի որ Ահրարին ոյժ տալով սխալած եղանք. փոխանակ ձախակողմին ըսելու, նպատակաւորապէս պիտի ըլլար ըսել՝ սահմանադրական բոլոր տարրերուն։

Ժիրայր.— Մենք պէտք է շեշտենք թէ՛ մենք համաձայնութիւն կնքած ենք Իթիֆհատի եւ ոչ թէ կառավարութեան հետ. ուստի պէտք չէ ըսել չբաժնելու համար կառավարութեան պատասխանատուութիւնը եւ այլն» այլ ուրիշ աւելի պարզ եւ հասկնալի ձեւով մը։

Ասողիկ.— Ես համաձայն չեմ խզելու սպառնալիքին. պէտք է այլ ձեւով շարադրել որ սպառնալիքի ձեւ չառնէ։

Անտոն.— Պէտք չէ ծանրանալ միայն Սելանիկեան յանձնառութեան վրայ քանի որ բացի այդ եղած են շատ մը խոստումներ խառն ժողովներով. պահանջել որ բացառիկ հանգամանքներով եղած ցաւերը դարմանելու համար բացառիկ միջոցներ ձեռք առնուին։

Ատոմ.— Ես ալ յանձնախումբի մէջ եղած եմ. բայց համաձայն չեմ կարդացուած բանաձեւին. ուստի ես առանձինն իմ բանաձեւս կը ներկայացնեմ. բայց ատկէ առաջ ըսեմ որ Սելանիկեան համաձայնութիւնը նոյնը չէ յետագայ համաձայնութեանց հետ. էապէս տարբեր է. ուստի ըստ այնմ վերաբերուելու է։

Ընկերը կը կարդայ իր բանաձեւը եւ նախագահին առաջարկով այս երկրորդ բանաձեւի շուրջը եւս կարծիքներ կը փոխանակուին եւ կ'որոշուի երկու բանաձեւերն ալ մաս առ մաս կարդալ եւ քուէարկել սկզբունքները։

Համաձայն այս որոշման՝ ընկեր Վահագ կը կարդայ յանձնախումբին բանաձեւը որ հետեւեալ արդիւնքը կու տայ։

Ընդհանուր ժողովը լսելով Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը եւ միւս ընկեր պատգամաւորներու գեկուցումները, Իթիֆհատի կազմի, գործունէութեան, Դաշնակցութեան հետ փոխ-յարաբերութիւններու եւ ատկէ սերած դահլիճներու յեղեղով եւ հակազատական քաղաքականութեան մասին, եւ նկատելով որ Դաշնակցութեան ցարդ կատարած բազմաթիւ դիմումներն ու պահանջները հայ ժողովրդի բացառիկ կենսական պահանջներու մասին՝ առանց հետեւանքի մնացին Իթիֆհատի եւ անկէ սերած դահլիճներու կողմէ, թէ երկուքն ալ՝ գոհացում տալով կարգ մը վարչական բնոյթ ունեցող երկրորդական խնդիրներուն՝ Իթիֆհատն ու կառավարութիւնը էական խնդիրներու հանդէպ շատացան լոկ սին ու անիրազործելի մնացած խոստումներով (13 ձայն)։

Նկատելով որ Իթիֆհատն ու անոր յենած դահլիճները փոխանակ ոչնչացնել ձգտելու աւատական ուժի

մնացորդ միջնադարեան ուժերը եւ փոխանակ արգիլելու որ վերջին երեսուն տարիներու անխիտանութեան հետեւանքով առաջ եկած բռնատէրեր իրենց հողային գրաւումներուն չտան օրինական հանգամանք, ընդհակառակը իր հետեւած սիրաշահելու քաղաքականութեամբ, քաջալերեց լղանոնք ստեղծելով տեսակ մը առանձնաշնորհեալ դասակարգ, ի վնաս Թուրքիոյ բազմաշարժար աշխատաւոր խաւերուն եւ երկրին բնականոն առաջադիմութեան (13 ձայն)։

Հաստատելով միւս կողմէն որ Դաշնակցութիւնը անյողդողդ հետեւողականութեամբ մը հաւատարիմ գտնուած է Օսմանեան Սահմանադրութեան հռչակման ատեն իր ստանձնած բոլոր յանձնառութիւններուն նոր Թուրքիոյ հանդէպ, այլ[եւ] ուղղամտօրէն գործակցած է Իթիֆհատին իր փոխ-յարաբերութիւններու սահմաններուն մէջ (12 ձայն)։

Մինչդեռ հակառակ Սալոնիկեան եւ այլ համաձայնութեան ոգիին եւ տառին, արտաքին քաղաքականութեան ընթացքը որոշելու ատեն՝ Իթիֆհատը ընդհանրապէս չէ դիմած Դաշնակցութեան ձեռնհաս մարմիններու խորհրդակցութեանը,

Ընդհանուր ժողովը կ'որոշէ,

1) Յանուն ժողովի ուղղել Իթիֆհատի առաջիկայ համաժողովին ամփոփ յիշատակագիր մը որ բովանդակէ (ա) վերջի երեք տարուայ կացութիւնը հալաբնակ նահանգներուն. (բ) կտրուկ եւ հիմնական միջոցներ հայ ժողովրդի տառապանքները դարմանելու. (գ) լայն ռամկավար ոգիով բարենորոգումներ, որոնց կիրառումը անխուսափելի եւ անյետաձգելի պահանջ դարձած է, Թուրքիոյ առաջդիմութիւնը չկասեցնելու համար. (դ) ճշդում երկու կուսակցութիւններու փոխ-յարաբերութեան եւ բացորոշ պայմաններ առաջիկայ գործակցութեան։

2) Եթէ յանուն կուսակցութեան գերագոյն մարմինն կատարուած սոյն դիմումէն ետք եւս Իթիֆհատն ու անկէ բխող դահլիճները գործնական երաշխիքներ չտան ցարդ շուսյուլու խոստումներու մօտալուտ իրագործման մասին, ժողովը կ'արտօնէ իր ձեռնհաս մարմինը դադրեցնել իր յարաբերութիւնները Իթիֆհատի հետ, ոեւէ՛ կերպով բաժնած չըլլալու համար անոր հետ պատասխանատուութիւնը՝ Իթիֆհատական դահլիճներուն կատարած կամ կատարելիք քաղաքական սխալներուն մէջ (11 ձայն)։

3) Դաշնակցութիւնը հաւատարիմ իր սկզբունքներուն աւանդութիւններուն եւ հանդիսաւոր յանձնառութիւններուն՝ ոչ միայն իր առաջին պարտականութիւններէն կը շարունակէ ընդունիլ օսմանեան սահմանադրութեան պահպանումը արտաքին եւ ներքին թրջնամիներուն դէմ, այլեւ պիտի հետամտի իր վստահութիւնը եւ գործակցութիւնը ընձեռել թէ Իթիֆհատի ձախակողմեան ռամկավար թեւին, այլ նաեւ Թուրքիոյ

բոլոր առաջադէմ եւ ազատամիտ ու ռամկավար տարրերուն՝ նոր Թուրքիոյ վերածնութեան եւ բարեկարգումի գործին մէջ:

Ժողովը կը հրահանգէ միանգամայն (1) Օսմանեան խորհրդարանի դաշնակցական երեսփոխաններուն ստանձնել անաչառ քննադատի դեր կառավարութեան եւ Իթթիհատի հանդէպ (13 ձայն):

(2) Կը թելադրէ Թուրքիոյ իր մարմիններուն իրենց պրոպագանդով ներշնչել հայ ժողովրդին որ հրաժարին նկատել դաշնակցական-իթթիհատական համաձայնութիւնը իբր միակ եւ տարամերժ գրաւականը իր կենսական շահերուն պաշտպանութեան համար, այլ սթափելով իր թմրութենէն, ձգտի կազմակերպուիլ քաղաքական կուսակցութիւններու մէջ:

(3) Իթթիհատի եւ Դաշնակցութեան փոխ-յարաբերութիւնները պիտի վարէ ձեռնհաս կազմակերպական մարմինը, որու մէջ ներկայացուցիչ մը կ'ունենայ նաեւ Օսմանեան խորհրդարանի դաշնակցական հատուածը:

Ատոմ.— Կը խնդրէ արձանագրել իր սա ուղղումը թէ Դաշնակցութիւնը իր սկզբունքի հիման վրայ պատասխանատու չէ եղած եւ չէ Իթթիհատի քաղաքականութեան:

Անցնելով ընկեր Ատոմի բանաձեւին նկատառութեան եւ քուէարկութեան, կը ստացուի հետեւեալ արդիւնքը:

Դաշնակցութեան ԶԻ Ընդհ. ժողովը ուշադրութեան առնելով Թուրքիոյ ներկայ քաղաքական, ընկերային ու տնտեսական դրութիւնը ընդհանրապէս եւ Թրքահայաստանի վիճակը մասնաւորապէս, սրտիցաւով արձանագրում է որ երեք տարիներէ սահմանադրական շրջանի մէջ կառավարական աշխարհավարութիւնը ոչ միայն չէ նպաստել այլակրօն ու այլացեղ ազգերի ընդհանուր միութեանն ու համերաշխութեանը, երկրի ընդհանուր վերաշինութեանը մեծ գործին՝ այլ տեղի է տուել ընդհանրապէս անվստահութիւնների վերազարթնումին, ազգային ինքնութիւնների հալածանքին, շեշտուել են միջցեղային խտրութիւնները, եւ ի մասնաւորի հայաբնակ գաւառներում պաշտպանուել են աւատական ու հակասահմանադրական, կեղեքիչ եւ ոճրագործ տարրերը, ներումի են արժանացել չարագործները, ջանքեր են դրուել յափշտակութիւններին օրինականացնելու (ընդունուած):

Ընդհ. ժողովը վերաքննութեան ենթարկելով Իթթիհատ-Թէրազզը կուսակցութեան հետ Սալոնիկում կայացած համաձայնութիւնն ու նոյն թուականից ի վեր երկու կուսակցութիւնների միջեւ տեղի ունեցած փոխ-յարաբերութիւններն ու բանակցութիւնները,

Նոյնքան սրտիցաւով արձանագրում է դառն իրականութիւնը՝ որ Իթթիհատ-Թէրազզը կուսակցութիւնը մինչեւ անգամ անցնելով իշխանութեան գլուխ եւ ներկայացնելով պարլամենտական մեծամասնու-

թիւն, աստիճանաբար յետ է նահանջել Սահմանադրական ժողովրդապետական սկզբունքներից, օրէնսդրական աշխատանք գործ չէ դրել ճնշող ժողովրդի բեռը թեթեւացնելու, հարկային սիստեմը բարեփոխելու, տնտեսական բարենորոգումներ մտցնելու:

Ոչ միայն օրէնսդրական ճանապարհով՝ այլ եւ վարչական յստակ ու որոշ աշխարհավարութիւնը բացակայել է, որով նա հետեւած պիտի լինէր յետադէմ ու հակասահմանադրական տարրերին չէզոքացնելու եւ ներքին ու արտաքին վստահութիւնը ամրապնդելու: Ընդհակառակը իր վարած քաղաքականութիւնը երկրի բոլոր անկիւններում խռովութիւնները խրոնիկական դարձած, ընդհանուր ապահովութիւնը բացակայած, զինուորական ճնշումների շրջանը վերանորոգուած եւ Եւրոպայի համար Արեւելեան հարցը վերստին վերաբացուած է մնում (13 ձայն):

Այնուամենայնիւ աչքի առաջ ունենալով՝ որ Դաշնակցութեան քաղաքական դաւանանքն է եղել պաշտպանել Օսմանեան Սահմանադրութիւնն ու պետական ամբողջութիւնը ինքնորոշ ազգերի Օսմանեան միութեամբ:

Աչքի առաջ ունենալով՝ որ Դաշնակցութեան համաձայնութիւնը Իթթիհատի հետ սահմանափակուած է եղել իր հիմնական նպատակից բխած սահմանադրական կառավարութեան դէմ ներքին ու արտաքին թշնամիների ու յարձակումների դէմ պաշտպանել, որին կուսակցութիւնը անշեղ հետեւողն ու հաւատարիմը կը մնայ,

Աչքի առաջ ունենալով որ երկու կուսակցութիւնների մէջ կայացած հիմնական կէտից դուրս ընկերային, տնտեսական եւ այլ հարցերում Հ. Յ. Դաշնակցութիւնը ունենալով իր ուրոյն ընկերվարական-յեղափոխական դաւանանքը նրանց վերաբերեալ հարցերում մնացել է եւ կը մնայ ընդդիմադիր (11 ձայն):

Եւ նկատի ունենալով որ Իթթիհատի պարլամենտական կուսակցութեան ու նրանից բխած կառավարութեան ուղղութիւնն ու աշխարհավարութիւնը հետեւանք է այդ տարրերի դասակարգային քաղաքութեանը, նրանց ընկերային տնտեսական շահերին եւ ըմբռնումներին:

Նկատելով որ՝ պարլամենտից դուրս եւ ներսը Իթթիհատական շարքերում ճնշող մեծամասնութեամբ մուտք դրած բազմաբղէտ ու կասկածելի տարրերը դիմափոխած են նոյնիսկ Իթթիհատական կուսակցութեան տեսական-քաղաքական դիմագիծը եւ ենթարկած են ինքն իրա մէջ պառակտումների ու հերձուածների:

Եւ ընդունելով որ պետական-ընկերային վերանորոգման մեծ գործը կարենալ գլուխ բերելու եւ պետութեան ճակատագիրը վարելու համար Իթթիհատական եւ ընդդիմադիր խմբակցութիւնները դեռ եւս կարօտ են ոչ միայն գտման, շերտաւորման ու բարեշրջման, այլ եւ այդ շերտաւորման ու գտման անհրաժեշտու-

թեամբն հանդերձ, այլացեղ ազգերի դեմոկրատական կուսակցութիւնների միջեւ կայանալիք համագործակցութեանը,

Ընդունելով՝ որ համագործակցութեան պարտադրութիւնը եւ դեմոկրատական աշխարհավարութեան իրականացումը կախուած է այս նպատակին համար կոչուած կուսակցութիւնների մարտական ու բարոյական ուժերի փոխ-յարաբերութեան չափերից (9 ձայն):

Ընդհանուր ժողովը պարտադրում է իր բոլոր մարմիններին ու շարքերին որ կուսակցութիւնը ինքն իրա մէջ ամփոփուելով, իր շարքերը սեղմելով ու զարգացնելով հանդերձ՝ երկրի վերածնութեան համար անհրաժեշտ եղող կուսակցութեան հայեացքները մասսաների սեփականութիւն դառնան եւ ըստ այնմ մթերուին ու պատրաստուին համապատասխան ուժերը:

Ընդհ. ժողովը յանձնարարում է եւ պարտադրում է իր բոլոր մարմիններին ու շարքերին՝ պարլամենտից դուրսը եւ ներսը ամէն տեղ անխտիր, ցեղերի ու կրօնների թելադրել, առաջնորդել եւ ուժ տալ դեմոկրատական տարրերի գտմանը, շերտաւորման ու ինքնուրոյն կազմակերպմանը եւ կազմակերպուած շարքերի հետ կայացնել համագործակցական համաձայնութիւն:

Ընդհ. ժողովը որոշում է իր կողմից մի յատուկ պատուիրակութիւն ղրկել Իթթիհատի առաջիկայ գումարելի քոնկրէին եւ նրան ներկայացնել մի մէմորանսում երկրի առհասարակ եւ ի մասնաւորի հայաբնակ գաւառների կացութեանն ու հրատապ կենսական հարցերի (մասին):

Որոշում է նոյն քոնկրէին ուղղել իր գրաւոր ողջոյնը եւ կոչ անել վերջ դնել տատառումներին, յետադէմ ու պահպանողական տարրերի հետ կոմպրոմիսներին, մտնել առանց վերապահումների համագործակցական շրջանի մէջ. մատնանշել այն բոլոր սխալները՝ որոնք մղեցին ու առաջնորդեցին երկիրը ներկայ վիճակին եւ ցոյց տալ այն ուղին՝ որով միայն կարելի կը լինի ընդհանուր հայրենիքի վերածնունդի մեծ գործը գլուխ բերել ու հայրենասիրութեան պարտքը կատարել, օսմանեան միութիւնը իրականութիւն դարձնել:

Նկատ իջ.

2 Սեպ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Բիւրոններու ներկայացուցիչներ, Ամերիկայի, Պալքանի, Տիարպեքլի, Մուշ-Մասունի, Կարինի, Տրապիզոնի, Սամսոն-Մարզուանի, Պարսկաստանի, Սեբաստիոյ, Սարբերդի, Պոլսոյ, Ուս. միութեան պատգամաւորները: Խորհրդակցական ձայնով՝ Մարզպետ, Ասլան, Ժիրայր, Ասողիկ, Վահան: Վճռական ձայնով՝ Մարումեան, Աւօ:

Ժողովին կը նախագահէր ընկեր Անտոն: Կարդացւեցաւ պ. Աշոտ Եղիկեանի մէկ նամակը, որով կը խընդրէր իր դատը վերստին քննել ինչպէս նաեւ Վանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Գ. Խլղաթեանի մէկ նամակը. որոշուեցաւ երկու նամակներն ալ յղել դատական մարմին:

Օրակարգ.— Կանոնագրի ըննութիւն. ընկեր Արամ կանոնագրի յանձնախումբի կողմէն գեկոյց այն փոփոխութիւններու մասին, որոնք մտցուած են կանոնագրին մէջ: Այս առթիւ վիճաբանութեան ենթարկուեցաւ Խորհուրդի գոյութեան եւ անոր կազմութեան խնդիրը:

Ատոմ.— Թէ Պոլսոյ Շրջանային ժողովի եւ թէ իմ անձնական կարծիքն է որ Խորհուրդը իր այն իրաւասութիւններով գործնական չէ եւ անհամապատասխան կուսակցութեան ապակեդրոնացման սկզբունքին:

Տեղաւոր.— Ես ալ համակարծիք եմ Խորհուրդի վերացման. անցեալ Ընդհանուր ժողովին ալ նոյն հարցը դրուեցաւ եւ մերժուեցաւ. լաւ կ'ըլլայ Խորհուրդը լուծել եւ անոր տեղ ընդունիլ պատասխանատու մարմիններու գոյութիւնը, քանի որ Խորհուրդը արդէն ինքնին անկարելի կ'ըլլայ գումարել, ինչպէս փորձերը ցոյց տուին:

Ռոստոմ.— Դուք կ'ըսէք թէ չէ կարելի Խորհուրդի գումարումը իրականացնել. եթէ նոյնիսկ այդպէս ըլլայ, ի՞նչ վնաս: Խորհուրդի նպատակը այն է որ եթէ Ընդհ. ժողով կարելի չըլլայ գումարել, Խորհուրդը գումարուի. սխալ է կեդրոնացման վախեր ունենալ. ընդհակառակը՝ եթէ Խորհուրդ չըլլայ այն ատեն Բիւրոնները այդ գործերը կատարելով կեդրոնացման տեղի տուած կ'ըլլան: Մենք Ընդհ. ժողովները շատ դժուարաւ կրնանք գումարել, անոր համար որ մեր շարքերը չեն կազմակերպուած. մինչեւ այս պակասին դարմանումը հարցը հիմնովին լուծել դժուար կ'ըլլայ: Մեր այս անկերպարան վիճակին մէջ՝ չենք կրնար ժամանակաւոր երեւոյթներու վրայ հիմնուած նոր հարցեր առաջարկել: Մենք կ'ընտրենք Խորհուրդը եւ եթէ հնարաւոր չըլլայ Խորհուրդ գումարել, այն ատեն այժմէն կարող ենք Բիւրոններուն ցոյց տալ այնպիսի ընկերներ՝ որոնց մով կարողանան լրացնել կազմը: Եւ որ գլխաւորն է, մենք չենք կարող Խորհուրդի վերացման մասին խօսել,

քանի որ օրակարգի մէջ չէ դրուած այդպիսի առաջարկ:

Վահագն.— Եւտելով այն միտքը թէ ժողովը չի կրնար խորհուրդի վերացման մասին քուէարկել, քանի որ օրակարգին մէջ նման առաջարկ չկայ, կը թուէ խորհուրդի տուած օգուտները Պարսկաստանի, Ռուսաստանի եւ Սասունի գործերու ժամանակ. մեզի անհրաժեշտ է ունենալ խորհուրդ՝ ունենալու համար մարմին մը, որը կարողանայ Ընդհ. ժողովի անունով գործել: Նկատի ունեցէ՛ք որ եթէ կարողանայինք խորհուրդ գումարել, այս անկատար Ընդհ. ժողովը չէինք գումարել: Խորհուրդը կարող կ'ըլլար քանի մը գործեր կատարել որով Ընդհ. ժողովը չէինք գումարել: Խորհուրդը կարող կ'ըլլար քանի մը գործեր կատարել որով Ընդհ. ժողովը կը գումարէինք այն ատեն՝ երբ կանոնաւոր շրջաններ կ'ունենայինք: Ես համակարծիք եմ ընկեր Ռոստոմի ըսածին թէ՛ պէտք է ներկայացուցչական սիստեմ մտցնել, որ Բիւրոյի անդամները եւ համարատու եւ համարառու չլլան: Երբ ռալոնական ժողովները որոշուին, իւրաքանչիւր ռալոնական ժողովին կարելի է տալ մէկ-մէկ ձայն:

Կարագեան.— Ես կը կարծեմ թէ խորհուրդի վերացման փոխարէն Բիւրոններն են որ պէտք է վերանան. Բիւրոններու դերը այժմ փոխուած է. նպատակայարմար պիտի ըլլար Կեդրոնական Կոմիտէներէ գատ Ընդհանուր մարմին մը ընտրել, որուն կարելի է տալ վարչական մարմնի դեր: Եթէ վերացման մասին կայ առաջարկ, լաւ կ'ըլլայ վերցնել Բիւրոնները:

Առւրէն.— Համակարծիք չէ այն մտքին թէ խորհուրդը կեդրոնացեալ մարմին մըն է. մեր կեանքի իրականութենէն բխած է ան. մեր դրութիւնը փոխուած չեմ ընդունիր տակաւին. անցեալում Թուրքիան էր խռով, այժմ Ռուսաստանը, վաղը ո՞վ գիտէ ի՞նչ կը լինի եւ այստեղ: Խորհուրդը մեծ դեր ունի կատարելիք անակրնկալ վարկեաններու մէջ:

Անտոն.— Սկիզբները խորհուրդը գոյութիւն չէ ունեցած. սակայն յետոյ կեանքը ստիպեց այդ կարգի մարմնի մը գոյութիւն տալ Ընդհ. ժողովներու ստեպ գումարման դժուարութիւններու առաջին առնելու համար, ես կ'առաջարկեմ ունենալ չորս Բիւրո, մեր գործունէութիւնը բաժնելով չորս գլխաւոր մասերու: Եթէ զանազան կարեւոր շրջաններու մէջ կարելի չըլլայ ռալոնական ժողով գումարել՝ Բիւրո կազմելու համար, այդ շրջանի ամենաուժեղ մարմինը (կու) տայ խորհուրդին իր ներկայացուցիչը:

Առտմ.— Օրակարգին մէջ է այս խնդիրը, հետեւաբար, կրնանք զբաղիլ անով: Այն բոլոր ընկերները, որոնք կ'առաջարկեն խորհուրդի գոյութեան պահպանումը, կամ Բիւրոններու լուծումը, նկատի ունին կազմակերպութեան շահը: Կ'ըսուի թէ ճիշդ կեդրոնացման առջեւն առնելու համար կազմուած է խորհուրդը,

սխալ է. խորհուրդէն առաջ կար կազմակերպութեան կամքը ներկայացնող մարմին եւ որովհետեւ այդ նոյն ատենները խորհուրդի կազմութիւնը որոշուեցաւ, յղացուեցաւ նաեւ կազմել պատասխանատու մարմին. եւ գիտէ՞ք ի՞նչ ըրաւ կազմակերպութեան կամքը ներկայացնող այդ մարմինը. բռնի հանգանակութիւն կատարեց. ատկէ յետոյ, այս մարմինը վերածուեցաւ խորհուրդի, որ երբեք չէ կազմուած ըստ կանոնագրի: Այն ընկերները որոնք կը պաշտպանեն խորհուրդի ընտրութիւնը, կ'ընդունին որ ռալոնական ժողով գումարելը եղած է սկիզբէն ի վեր անկարելի. ան առհասարակ կազմուած է Բիւրոններու ներկայացուցիչներէն եւ գործիչ ընկերներէ. իսկ տեսնե՛ք թէ Բիւրոնները ո՞վ կը ներկայացնեն. իրաւ է ընտրուած են Ընդհ. ժողովէն բայց իբր համարատու չեն կրնար նաեւ համարառու ըլլալ: Բիւրոններու կազմութիւնը շատ անգամ ենթարկուած է պատահականութիւններու. պատահած է որ հետագած են Բիւրոյի անդամներու մեծամասնութիւնը եւ մնացած անդամները կամ անդամը հրաւիրած են ուրիշներ խորհրդակցական ձայնով (Բիւրոյի ներկայացուցիչը ոչ-խորհրդակցական այլ ձայնի իրաւունքով) եւ այդպէս լրացած է կազմը: Խորհուրդը ե՞րբ կատարած է իր դերը՝ գծուած կանոնագրի տրամադրութիւններով, երբե՞ք: Իբր եզրակացութիւն խորհուրդի գործունէութեան մեծագոյն մասը կը վերաբերի Բիւրոններուն եւ Կ. Կոմիտէներուն, որոնք եթէ իրենց դերին մէջ գտնուին խորհուրդի գոյութիւնը կը դառնայ անպէտ. ասոնցմէ գատ պէտք է ըլլայ կազմակերպութեան կամքը ներկայացնող մարմին մը որ ի պահանջել հարկին գումարուի եւ տայ որոշումներ առանց համարատուի եւ համարառուի երկեակ եւ հակասական դերերուն մէջ գտնուելու:

Բժիշկ.— Համարատուի եւ համարառուի առարկութիւնը աւելորդ է. որովհետեւ եթէ այդ աչքով նայինք Ընդհ. ժողովն ալ այդ վիճակին մէջ կը գտնուի կազմուած ըլլալով Կեդրոնական Կոմիտէներու ներկայացուցիչներէն, որոնք համարատու են իրենց գործունէութեան: Իսկ թէ խորհուրդը չի կազմուիր համաձայն կանոնագրի, նոյն բանը կարելի է ըսել Կ. Կոմիտէներուն համար ալ:

Վահագն.— Խորհուրդները հաւաքուելը են այն չափով որ հնարաւոր եղեր է. եւ եթէ անկանոնութիւններ պատահած են այդ ալ հետեւանքն եղած է կազմակերպութեան ամբողջ մեքանիզմի անկանոնութեան. ռալոնական ժողովները չեն գումարուած խորհուրդէն առաջ եւ այսպէս միւսները. Բիւրոյի պակաս անդամները լրացած չեն խորհրդակցական ձայնով այլ վճռական ձայնի իրաւունքով: Կանոնագրի յիշուած կէտերը բոլորն ալ դրուած չեն անպատճառ կատարուելու համար խորհուրդի կողմէ, այլ նշանակուած են՝ Ընդհ. ժողով չգումարուելու պարագային գործադրուելու համար:

Արամ.— Խորհուրդը Ընդհ. ժողովէն ընտրելու առաջարկին առաւելութիւնն այն է որ ռալոններու ներկայացուցիչ չկարենալ դրկելու պարագային, մարմին մը գոյութիւն կ'ունենայ. այս մարմինը կարելի է ընտրել երկուքը Բիւրոյի անդամ, երբքը ընտրուած, իսկ չորս ուրիշներ ալ այս հինգի կողմէն կ'ընտրուին շրջաններէն:

Ռոստոմ.— Նկատելով որ դժուար է Ընդհ. ժողով գումարել, 1898ին ընդունուեցաւ խորհուրդի սկզբունքը, որ մօտաւորապէս պիտի ունենար Ընդհ. ժողովի ձեւը՝ առանց դուրս գալու Ընդհ. ժողովի որոշումներէն: Ասոր նպատակն էր, խնդիրներու լուծումը չթողուլ ընտրուած մարմիններուն — Բիւրո, Կ. Կոմիտէ: Եթէ խորհուրդը վերջացնէք, գործը կը մնայ Բիւրոններուն, որ աւելի անկատար է քան անկատար կերպով ընտրուած խորհուրդը. իսկ այս աւելի դէպի կեդրոնացում կը տանի մեզ քան խորհուրդի ընտրութիւնը: Խորհուրդը ժողովի կողմէն ընտրել լաւ չեմ նկատել: Եթէ ռալոն. ժողով չունինք, ներկայացուցիչ ունենանք ռալոններէն՝ Կովկաս, Պարսկաստան, Արտասահման, Թուրքիա գոյութիւն ունեցող մարմիններուն փոխարարձ համաձայնութեամբ: Գաղութներու մասնակցութիւնը չդարձնենք պարտաւորիչ՝ նկատի ունենալով դժուարութիւնները, բայց եթէ գան, աւելի լաւ:

Վիշապեան.— Եթէ խորհուրդը կարեւոր է, անպատճառ ընդունիլ անոր գոյութիւնը՝ առանց նկատի ունենալու արգելքները: Խորհուրդը չընտրել Ընդհ. ժողովէն այլ ռալոնական ժողովներէն, որ աւելի համարատասխան է պահանջին ու անոր դերին: Խորհուրդը ընտրել ռալոնական ժողովներէն եւ անոնց խորհրդակցութեան հրաւիրել անհատ գործիչներ:

Անտոն.— Մեր կազմի իրողութեան մէկ կողմը լաւ է, որ հաշուետու մարմինները եղած են նաեւ համարառու. խուսափելու համար այս անպատճառութենէն, խորհուրդն ընտրել այնպէս որ ըլլայ օրէնսդրական մարմին, անոր ընտրութեան մասնակից դարձնելով²⁵ ընկերական լայն շարքեր:

Հարցը քուէարկութեան ենթարկուելով, (ա) Ընդհ. ժողովի, Բիւրոններուն եւ Կ. Կոմիտէներուն միջեւ ուրիշ մարմին չընտրելու առաջարկը ստացաւ 1 ձայն: (բ) Խորհուրդը Ընդհ. ժողովի կողմէ ընտրուելու առաջարկը, անկախ Բիւրոններու եւ Կ. Կոմիտէներու անդամներէն, ստացաւ 8 ձայն: (գ) Խորհուրդները կամ ռալոնական ժողովներէն եւ կամ այդ ռալոններուն մէջ գտնուող մարմիններու փոխադարձ համաձայնութեամբ ընտրուելու առաջարկը ստացաւ 13 ձայն:

Քոնսթրուկտիվ կազմութիւն.— Ձեկուցանող յանձնախումբի ներկայացուցիչը ներկայացուց հաշուեքննիչ յանձնախումբ մը կազմելու անհրաժեշտութիւնները բերելով այդ մասին զբաւոր առաջբերումներ, որոնց մասին տեղի ունեցան կարծիքի փոխանա-

կութիւններ՝ հետեւեալ արտայայտութեամբ.

Գրգօ.— Ըլլալով հաշուեքննիչ յանձնախումբի անդամներէն մին, գտայ հաշիւները ընդհանրապէս անկանոն, չկայ տոմարական դրութիւն. պէտք է ստեղծել հաշուական միօրինակ դրութիւն մը, որուն համաձայն պատրաստուին բոլոր հաշիւները եւ ընտրուի մարմին մը հսկելու համար այս կանոնաւորութեան:

Անտոն.— Մեր շրջանի կողմէն ընտրուած է քոնսթրուկտիվ մարմին մը որ կը հսկէ որոշումներու ճշգրիտ գործադրութեան՝ հակառակ պարագային հրաւիրելով Շրջանային ժողով՝ անկախ Կ. Կոմիտէէն: Նոյնը կայ պետութիւններու մէջ. առանց պետական քոնսթրուկտիվ արտօնութեան ոչ մի ծախք չի կատարուիր. մենք հարկաւ ամբողջովին չենք կրնար հետեւիլ պետութիւններու օրինակին, բայց պէտք է ընդունինք քոնսթրուկտիվ սկզբունքը որովհետեւ այդ մարմնի պակասին արդիւնքն է անհաշիւ ծախսերու գոյութիւնը. մինչեւ չհաստատուի քոնսթրուկտիվ եւ պատժի չենթարկենք որոշուած պիւտճէնն աւելի ծախսողները մենք չենք կրնար կուսակցութիւնը դնել բաղձալի վիճակին մէջ: Պէտք է Ընդհ. ժողովը ընտրէ անկախ մարմին մը որ ոչ միայն քոնսթրուկտիվ դերն ունենայ այլեւ գործունէութենէն դադարեցնէ կանոնական եւ պիւտճէի սահմաններէն դուրս ելող անհատները կամ մարմինները՝ սպասելով դատական մարմնի որոշումին:

Տիգրան.— Հաշուեքննիչ մարմնի մը ընտրութիւնը կը գտնեմ աւելորդ. Բիւրոններու հաշուապահները եւ շրջուն գործիչները կրնան հաշուեքննիչի դերը կատարել:

Վարանդեան.— Կը գտնեմ անհրաժեշտ քոնսթրուկտիվ մարմնի գոյութիւնը, անոր պակասը նկատելով մեր ամենակարեւոր վէրքերէն մէկը:

Առւրէն.— Ծախսի մասին առարկողներ եղան. նկատի ունենալով այն օգուտը որ պիտի բխի քոնսթրուկտիվ մարմնի գոյութեանն անհամեմատ աւելի մեծ պիտի ըլլայ քան այդ նպատակին համար ըլլալիք ծախսերը:

Ռոստոմ.— Ես ալ կ'ընդունիմ քոնսթրուկտիվ մարմնի անհրաժեշտութիւնը, որովհետեւ մեր մարմիններէն շատեր զանազանութիւն չեն կրնար դնել կազմակերպական եւ ոչ-կազմակերպական ծախսերու միջեւ: Տեղեր կան ուր հիւրասիրութեան ծախսերն ալ մտցուած են կազմակերպութեան հաշուին. իսկ տեսած եմ մարմիններ ալ ուր բոլորովին հակառակն է տեղի ունեցեր. ընկերներ իրենց գրպանէն վճարած են բացառիկ ծախսերը: Ես համաձայն չեմ պետական սխտեմի քոնսթրուկտիվ. մենք յեղափոխական կազմակերպութիւն ենք եւ հարկադրուած ենք ակամայ շեղումներ ընել. օրինակ, եթէ «Ազատամար»ին համար եղած բացառիկ ծախսերը չվճարէին, արդեօք օգտակար գործ կատարուած կ'ըլլա:

25.- Ձեռագրին մէջ՝ մասնակցելով:

լար: Այս բանը կարելի կ'ըլլար եթէ մենք հնարաւորութիւն ունենայինք կանխագուշակելու դէպքերը, նախատեսելու անակնկալները:

Մարզպետ.— Ընդհ. ժողովը իր որոշումները կուտայ նախատեսութեան վրայ. եթէ բացառութիւն կրնայ կազմել այս կամ այն մասնաւոր պարագան, ինչպէս «Ազատամարտ»ը, ինչո՞ւ չունենան միւսները, որ նոյնպէս ունին արտակարգ պատճառներ: Ես կ'առաջարկեմ որ իւրաքանչիւր ռայոն ունենար իր վճարուած հաշուեպահը. այս պաշտօնին համար ընտրուած անդամին իրաւասութիւն տալ մարտական-կազմակերպական քոնթրոլին:

Նշան.— Իմ առաջարկը կը մօտենայ Մարզպետի առաջարկին. իւրաքանչիւր շրջան կ'ունենայ իր վճարուած ընկերը հաշիւներու քննութեան հսկողութեան եւ կանոնաւորման համար: Զանազան շրջաններու համար նշանակուած կամ տեղին վրայ ընտրուած այս ընկերները ի պաշտօնէ կը կազմեն ընդհ. քոնթրոլի մարմինը:

Մէմօ.— Իմ առաջարկն է ունենալ ընդհ. քոնթրոլի մարմին հսկելու համար Կ. Կոմիտէներու արկղին վրայ:

Վարդապետ.— Հաշուական խնդիրը ամէնէն կարելի որ մասն է ունէ՞ կազմակերպութեան համար. հետեւաբար, մեր շրջանին մէջ, ես անհրաժեշտ տեսած եմ ոչ միայն Կ. Կոմիտէներուն, այլ բոլոր ստորադաս մարմիններու կողքին դնել քոնթրոլի մը. համաձայն եմ ընկեր Մարզպետի առաջարկին:

Գրգօ.— Ապակեղրոնացումը ամէն տեղ նպատակաշարմար չէ. դրամականին մէջ անհրաժեշտ է կեղրոնացումը: Պէտք է ընտրել քոնթրոլ երկու հոգի Ընդհ. ժողովէն որ հսկէ եւ կանոնաւորէ բոլոր կեղրոնական մարմիններու հաշիւները եւ, պարբերաբար հաշուեկրչիւ պահանջելով իւրաքանչիւր մարմնէ, անոնց կցած ըլլալով մուտքի եւ ելքի վաւերացումը:

Վահագն.— Ես կը վախճամ որ այս խիստ կեղրոնացումը չտայ այն օգուտը որ ընկերը կ'ակնկալէ. Մարզպետի եւ Գրգոյի առաջարկներու միացումով կրնանք հասնիլ այս նպատակին. տեղական հաշուեպահները կը հսկեն եւ կը կանոնաւորեն հաշիւները՝ հետեւելով ընդհ. քոնթրոլի մարմնին թելադրութիւններուն եւ ցուցմունքներուն: Քոնթրոլի մարմինը բոլորովին անկախ ալ պէտք չէ որ ըլլայ. ան պիտի ենթարկուի նաեւ Խորհուրդին:

Թորգոմ.— Ընտրել չորս հոգի, տալով իւրաքանչիւր Բիւրոյէ երկու անդամ, որոնք միանալով Բիւրոյի անդամներէն մէկին կը կազմեն երեք հոգիէ բաղկացած քոնթրոլի մարմինը: Ասոնցմէ զատ իւրաքանչիւր Կ. Կոմիտէ ալ կ'ունենայ իր քոնթրոլ մարմինը:

Կարապետ.— Բոլորդ ալ կ'ընդունիք մեր հաշիւներուն մէջ կանոնաւորութեան բացակայութիւնը, որուն դարման տանելու համար կ'առաջարկուի քոնթրոլ մարմին: Կեղրոնական քոնթրոլի մը բաւարարու-

թիւն չի կրնար տալ լայնածաւալ կազմակերպութեան: Այն ինչ որ կ'առաջարկուի, կայ արդէն կանոնագրի մէջ, եթէ Բիւրոները կատարեն իրենց վրայ դրուած պարտականութիւնը: Իսկ ինչ պակաս կը մնայ, յանձնուած է Խորհուրդին, որով կ'ամբողջանայ հաշիւներու կանոնաւորման համար անհրաժեշտ միջոցները: Վիշապ[եան] համաձայն է ընկեր Վահագնին:

Արեւել.— Եթէ այսօր գանազան մարմիններ պահանջուած ցենզը չեն լրացներ, պատճառներէն մէկն ալ քոնթրոլի պակասն է. անհրաժեշտ է քոնթրոլի մարմնի կազմութիւնը, ընտրուած Ընդհ. ժողովէն եւ անջատ Բիւրոներէն:

Անտոն.— Առարկուեցաւ թէ այդ գործը Բիւրոներուն վերապահուած է. Բիւրոները սակայն ծանրաբեռնուած ըլլալով վարչական գործերով չեն կրնար զբաղիլ հաշուական քոնթրոլի գործով. եթէ հաշուական քոնթրոլը գտնուէր անջատ մարմնի մը ձեռքը, «Ազատամարտ»ին համար, օրինակ, չէր ծախսուեր այդ աւելորդ գումարը: Անհրաժեշտ է կեղրոնական քոնթրոլի մարմինը որ հսկէ Կ. Կոմիտէներու հաշիւներուն, իսկ ստորադաս մարմինները իրենք հսկեն իրենց հաշիւները: Քոնթրոլ մարմնի ձեռքը պիտի գտնուի գանձը, ընկալագրերը եւ դրամականին հետ կապուած բոլոր թղթերը:

Կեղրոնական քոնթրոլի մարմին մը ընտրելու առաջարկը ընդունուեցաւ 12 ձայնով: Յետոյ քուէարկուեցան յանձնախումբին առաջարկները՝ որոնք ընդունուեցան 12 ձայններու բացարձակ առաւելութեամբ:

«Հաշուեքննիչ մարմինը պարտականութիւն ունի.

- 1) Բոլոր մարմինների հաշուապահական սխտեմը կարգաւորել:
- 2) Հսկել որ մարմինները կուսակցութեան ընդհանուր սնտուկը մտցնեն որոշեալ %ը [սակը]:
- 3) Հսկել որ կուսակցութեան պիւտճէն ըստ %ների բաշխուի եւ թոյլ չտրուի որ ունէ ճիւղի գերապատուութիւն տրուի ի վնաս միւսի:
- 4) Կոնտրոլի ենթարկել Բիւրոներու, Պատասխանատու մարմիններու, Կ. Կոմիտէներու եւ այլ ձեռնարկներու հաշիւները Ընդհ. ժողովի կամ Խորհուրդի ներկայացուելու համար:
- 5) Կազմել պիւտճէի նախագիծ:
- 6) Հաշուեքննիչ մարմինը իրաւունք ունի ապօրինի գործողութիւններ անող մարմինները եւ անհատները պատասխանատուութեան կոչել եւ, մինչեւ դատը, կախակայել գանձը. եթէ պատասխանատու մարմին, կեղր. Կոմիտէ են Բիւրոյի համաձայնութեամբ, իսկ եթէ Բիւրոներն են՝ իրենց միաձայն որոշումով եւ միւս Բիւրոյի որոշումով Խորհուրդը հրաւիրել:
- 7) Ամէն ռայոնական ժողով պարտաւոր է իր շրջանի համար ընտրել վերաքննիչ մարմին որը իր շրջանի համար ունի այն իրաւունքները ինչ որ Ընդհ. ժողովի կողմէ ընտրուած մարմինը:

8) Ռայոնական շրջանների քննիչ մարմինները հաշուետու եւ պատասխանատու են կեղրոնական քննիչ մարմնի առաջ:

9) Կեղր. քննիչ մարմինը ի պահանջել հարկին կարող է այս ու այն ռայոնը լիազօր քննիչ ուղարկել:

Պատասխանատու մարմիններու, Կ. Կոմիտէներու եւ այլ մարմիններու հետ յարաբերութիւնների կարգադրութիւնը պիտի առնուի Բիւրոյի միջոցաւ:

Նիստ ԻԷ.

3 Սեպտ. 911 (Շաբաթ կէսօր)

Ներկայ՝ Պալքանի, Կեսարիոյ, Տիգրանակերտի, Ամերիկայի, Տրապիզոնի, Պարսկաստանի, Վանի, Կարնոյ, Մուշ-Սասունի, Սամսոն-Մարզուանի, Ուս. միութեան, Պոլսի պատգամաւորները եւ Արեւելեան ու Արեւմտեան Բիւրոներու ներկայացուցիչները: Վճռական ձայնի իրաւունքով՝ Տիգրան, Սիսեան, Բարա: Խորհրդակցական ձայնի իրաւունքով՝ Մելքում, Մարզպետ, Սաթօ, Ակնունի, Ժիրայր, Վարազդատ:

Նիստը կը բացուի նախագահութեամբ ընկեր Անտոնի: Կարգացուելով՝ կը վաւերացուին նախորդ մէկ-երկու նիստերու արձանագրութիւնները: Հայ կուսակցութեանց հետ համերաշխութեան խնդրին զեկուցում — բանաձեւի աշխատանքը յանձնուած ըլլալով ընկեր Ռոստոմի՝ կը կարդայ Մեծ-Հայքի Ռայոնական ժողովի հետեւեալ որոշումը: «Ռայոնական ժողովը ծանօթացաւ համերաշխական ժողովի առթիւ հնչակեան վերջին Ընդհ. ժողովին ընդունուած բանաձեւի հետ եւ նկատելով որ՝ համերաշխական ժողովի կանոնաւոր ընթացքը ընդհատուած է հնչակեան վերջին Ընդհ. ժողովի որոշման հետեւանօք, որ համերաշխական ժողովի առթիւ ընդունուած որոշման մէջ կարեւոր դեր են խաղացեր հնչակեան կուսակցութեան մէջ բոյն դրած այնպիսի տարրեր, որոնք ոչ միայն ունէ՞ առնչութիւն չունին ընկերվարութեան հետ այլ եւ իրենց էութեամբ հակառակ են հայ ժողովրդի ամէն մէկ ռամկավար քայլին:

Նկատելով որ այդ տարրերու հետ եւ անոնք, որոնք կամ դաշնակցական շարքերէն արտաքսուած եւ կամ անընդունակ են ունէ շինարար դրական աշխատանքի, համերաշխութիւնը պիտի նկատեն կաշկանդող հանգամանք մը իրենց սովորական գործելակերպին համար եւ բնականօրէն պիտի ձգտէին քանդել սկսուած համերաշխութեան փորձը:

Նկատելով նաեւ որ տարիներու ընթացքին մէջ համերաշխութիւն քարոզող եւ միւս յեղափոխական կու-

սակցութիւնները դատապարտող Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը այդ միեւնոյն տարրերու ճնշման տակ ինքը նահանջի դիմեց, հէնց որ հարկ եղաւ համերաշխութեան առաջին գործնական քայլերն իրականացնել:

Ռայոնական ժողովը յայտնելով իր ցաւը կատարուած իրողութեան մասին, միաժամանակ որոշեց՝

Ա. Ռայոնի մարմիններին յանձնարարել՝ շարունակելի համարելու Պոլսոյ համերաշխական ժողովի որոշումները:

Բ. Մասնաւորապէս չզբաղուիլ հնչակեան որոշ մասովի միջոցաւ տարածուող սուտերու, զրպարտութիւններու մերկացումներով:

Գ. Ամէն կերպ աջակցիլ հնչակեան այն մարմիններուն եւ խմբակներուն, որոնք անկեղծօրէն կանգնած են յեղափոխական-ընկերվարական հողի վրայ»:

Ընկերներէն ոմանք առարկեցին Հնչակեան կուսակցութեան մասին եղած ծանրացումին դէմ. նախընտրուեցաւ կանգ առնել աւելի Դ. ըրդ Ընդհ. ժողովի որոշման վրայ:

Անտոն.— Մեր Ընդհ. ժողովները միշտ ջանք թափած են եւ արդիւնք չեն տուած. հարկ է միայն ցաւ յայտնել որ մեր բոլոր ջանքերը ապարդիւն մնացած են հակառակորդներու կողմէ եղած ընդդիմութեան շնորհիւ, եւ կրկին անդրադառնալ Գրդ Ընդհ. ժողովի որոշումներուն:

Վահագն.— Այդ բանաձեւի արդիւնքով մեր ընկերները հնչակեաններու դէմ պայքարելու չպիտի ելլեն. պէտք է քիչ մը աւելի վճռական ըլլալ, որպէսզի ընկերները չփոթուին չմատնուին եւ գիտնան իրենց ընթանալիք ուղին. պարզ է մեր ընդդիմադիրներու միակ նպատակն է մեր դէմ պայքարիլ ամենագարշելի եղանակաւ:

Մարզպետ.— Պայքարը, ժողովրդին կողմէ եւ անոր անունով մղելու է:

Ակնունի.— Ներկայ պայմաններու մէջ մղուած պայքարը կուսակցութեանց մէջ փոխադարձաբար՝ մեր շուրջը պիտի ստեղծէր անախորժ տրամադրութիւն, ինչպէս առհասարակ բոլոր պայքարներու ընթացքին: Պայքարը գանոնք ուժեղացնելու միայն կը ծառայէ եւ ծառայած է, պատճառ դառնալով անոնց կազմակերպումին: Ամէնէն նպատակաշարմար քաղաքականութիւնը պիտի ըլլար ժողովուրդին մէջ համերաշխութեան գաղափարը տարածել եւ համերաշխ գործել հասարակական բոլոր գործօններուն հետ, եթէ կ'ուզուի կուսակցութիւնը բարձրացնել:

Ռոստոմ.— Պայքարը անհրաժեշտ է. բայց պայքարի միջոցներուն համամիտ չեմ: Անոնց նպատակն է կուսել Դաշնակցութեան դէմ, իրենց գոյութիւնը ցոյց տալու համար. եւ հող է որ իրենց գոյութիւնը ցոյց պիտի տան, ոչ թէ շինարար աշխատանքի մէջ: Մեր պայքարը պիտի շարունակուի՝ առանց սակայն անդրադառնալու ա-

նոնց գոյութեան, այլ հրապարակ բերելով միայն մեր դրական աշխատանքը:

Նշան.— Մեր մղած պայքարը հակառակորդները ուժեղացուցած է եւ մերիններու ուշադրութիւնը հոն կեդրոնացուցած է, փորձերը մեզ այն համոզումին բերին որ մենք նուիրուելու ենք շինարար եւ կազմակերպական աշխատանքի: Այժմ ժողովուրդը եւ նոյնիսկ մեր կուսակցական խորհող շրջանակները զգուած են այս պայքարէն եւ եկած վերոյիշեալ եզրակացութեան:

Կարծիքներու լայն փոխանակութենէ յետոյ քուէարկութեան դրուեցան հետեւեալ երկու կէտերը:

1) Ծարունակել մեր յարաբերութիւնները՝ 1907ի Ընդհ. ժողովի գծած ուղղութեամբ, ցաւ յայտնելով որ անկէ յետոյ մեր կուսակցութեան կողմէ եղած ջանքերուն դէմ ամէն կարգի խոչընդոտներ յարուցուած են այն տարրերու կողմէ՝ որոնք զանազան առիթներու մէջ չեն դադրած համերաշխութեան անուկով խօսելու — (12 ձայն): (2) Ծարունակել համերաշխութեան քայլերը 1909ի Ընդհ. ժողովի որոշման համաձայն (5 ձայն):

Կանոնադրի քննութեան նկատառութիւնը յետաձգելով՝ իբրեւ օրակարգի հարց՝ քննութեան առնուեցաւ Պարսկաստանի խնդիրը:

Այս առթիւ կարդացուեցաւ պարսկական փարլամենթի դաշնակցական երեսփոխանին տեղեկագիրը: Կարդացուեցաւ նաեւ պարսկական շարժման եւ ընթացիկ կացութեան մասին տեղեկագիր-նամակ մը որ նոր ստացուած էր:

Ակնունդ.— Պարսկաստանի մեր ընկերներու գործելակերպը համապատասխան է Ե՞ր Ընդհ. ժողովի ցուցմունքներուն: Նոյնիսկ Եփրեմի առանձին խումբին գոյութիւնը նպատակայարմար է, որովհետեւ խառն խումբի մը գոյութիւնը պիտի վարկաբեկէր մեր ընկերներու գործունէութիւնը: Ուստի փոխանակ երկար զբաղելու այս հարցով կ'առաջարկեմ Դաշնակցութեան անունով հեռագիր ուղղել փարլամենթին եւ շնորհաւորել զայն, յանձնարարելով Պարսկաստանի կազմակերպութեան շարունակել իր ընթացիկ գործունէութիւնը:

Ռոստոմ.— Անցեալ Ընդհ. ժողովի որոշումը քիչ մը անարդար էր եւ թերահաւատ վերաբերում ցոյց կու տայ դէպի Պարսկաստանի շարժումները, ինչ որ ազդեց մեր գործերու ընթացքին վրայ, որովհետեւ տեղական մարմինները կաշկանդուած զգացին ինքզինքնին: Ներքին կառավարական-փարլամենթական կեանքին մէջ տեղին ընկերները եւս թերութիւններ գործեցին չմիջամտելով այդ գործերուն մէջ: Դեմոկրատները ճիշդ է այն են՝ ինչ որ իթթիհատականները եւ աւելի լաւ տարրերէ բաղկացած քան պարսկական փարլամենթի չափաւորականները: Պարսկաստանը նուազ ձախողանքներու մատնուէր գուցէ՝ եթէ դեմոկրատներուն ուժը պահպանուէր: Դեմոկրատները կուր մղելով Ռուսաստանի դէմ՝ ռուս կառավարութիւնը աշխատեցաւ

անոնց ոյժը կոտորել: Իսկ դեմոկրատներու սխալը հոն էր որ Դաշնակցութեան ուժին չէին կրնար հանդուրժել եւ առհասարակ կը նախանձէին: Մեր ընկերներու այս սխալը, ընդդէմ դեմոկրատներու համաձայն չէ նաեւ Ընդհ. ժողովի որոշումներուն: Անոնք են դարձեալ միակ տարրը որոնց վրայ կրնայինք յայտ դնել: Ընդհ. ժողովի վերապահ որոշումը պատճառ եղաւ որ Պարսկաստանէն դուրս գտնուող մարմիններն ալ, մասնաւորապէս Կովկասը, ձեռնպահ մնան: Արդի կուրին մէջ մեր դժբախտութիւնը այն է որ՝ ոչ թէ կուսակցութիւնն է որ իբրեւ կուսակցութիւն դուրս կու գայ, այլ անհատ ընկերներն են որ դուրս կու գան: Ներկայիս իրականութիւնը այն է որ մեր եւ կուսակցական ուժերը խառն կը գործեն: Առաջարկ՝

1) Աշխատիլ Ատրպատականի, մասնաւորապէս Սալմաստի մէջ, ունենալ մեծ մասամբ հայերէ կազմուած թէկուզ խառն խումբ մը սահմանազուլի ինքնապաշտպանութեան համար:

2) Այս գործերուն մէջ թուրք կառավարութիւնն ալ կարգ մը նկատումներով շահագրգռուած ըլլալով՝ հարկ է որ աջակցի: Նոյնիսկ սահմանազուլի ինքնապաշտպանութեան համար:

3) Վերահաստատել նախորդ Ընդհ. ժողովի որոշումները, կցելով անոր վերոյիշեալ առաջարկները, ինչպէս նաեւ աւելցնել

4) Աւելի մեծ թափով մասնակցիլ արդի կուրին, պէտքն զգացնելով թուրքիոյ եւ Կովկասի մեր մարմիններու աքթիւ աջակցութիւնը:

5) Որ Պարսկաստանի կուրները հայ յեղափոխական երիտասարդութեան համար լաւագոյն մարզարանը կը հանդիսանայ:

Կարազեան.— Ընկերներէն ոմանց յարաբերութիւնը դէպի դեմոկրատները չեն ազդած մեր յարաբերութեանց վրայ: Ընդհակառակը մեր թերթերը եւ կուսակցական հանրային արտայայտութիւնը դէպի ի նպաստ դեմոկրատ կուսակցութիւնը եղած է: Սալմաստի խումբի մասին եղած առաջարկը ամէն քննադատութենէ վեր է, որովհետեւ տիրող սարսափին հետեւանքով արտագաղթը ուժեղացած է շատ: Սխալ է նաեւ այն թէ՝ Դաշնակցութիւնը աշխատանք չի կատարեր, այլ անհատները: Ընդհակառակը մարմինները պէտք եղածէն աւելին կ'ընեն, առանց հրապարակաւ արտայայտուելու: միջոցներու պակասն զգալի է միայն:

Անտոն.— Պարսկաստանի գործունէութիւնը վերջերս սկսաւ Ռուսաստանի ներկայ վիճակէն յետոյ: Պարսկաստանի մեր գործունէութիւնը ցանկալի է մենք թէ թուրքիա, թէ Կովկաս, թէ Պարսկաստան հայթրքական համերաշխութեան պիտի ձգտինք: Բայց այդ բանին մէջ մեր անկեղծութեան մասին վստահութիւններ չնչեղու համար հարկ է գործնական աջակցութիւն: Արդէն համերաշխական հոսանքը եւ դէպի այն ձգտու-

մը նկատելի է նաեւ պարսիկ ժողովուրդին մէջ: Կրնայ Պարսկաստան, Ռուսաստանի կամ Անգլիոյ ազդեցութեան տակ գտնուիլ: Երկու պարագային ալ մենք պէտք ունինք տեղական ազգաբնակչութեան հետ համերաշխ գործունէութեան: ասիկա թուրքիոյ վրայ եւս իր նշանակութիւնն ունի: Նոյնը նաեւ Կովկասի թուրքերուն վրայ, որոնք կրօնակից են աւելի պարսիկներուն եւ կը հետեւին մեր գործունէութեան՝ մեծ ուշադրութեամբ: Ահա այս պատճառաւ նախորդ Ընդհ. ժողովի որոշումը հարկ է քիչ մը աւելի ընդլայնել:

Վարանդեան.— Կ'առաջարկէ բանաձեւի քուէարկութիւնը յետաձգել, խօսելու համար հանգամանօրէն: Ի՞նչ դիրք պիտի բռնենք երբ Ռուսիա վաղը կամ միւս օր գրաւէ Ատրպատականը, նկատի առնելով միջազգային տրամադրութիւնը՝ որ մեծ արգելք ցոյց չի տար Ռուսիոյ այդ դիտաւորութեան: Պէտք է ամէն պարագայի մէջ համերաշխ գործենք պարսիկներու հետ, ինչպէս կ'առաջարկուի: Հարցը բարդ է եւ փափուկ, հետեւաբար եւ վիճաբանութեան կարօտ: Պարսկաստան, հակառակ մեր այսքան զոհողութեան իր կողմէ ոչ մէկ նպաստաւոր քայլ առաւ դէպի մեզ: Իմ կարծիքս, եթէ ոչ վճռական, կ'առաջարկէի ձեռնպահութեան քաղաքականութիւնը: Ես չեմ մտնէր նաեւ այն փափուկ խնդիրին մէջ թէ՝ ռուսական տիրապետութիւնը նախընտրելի է, հակառակ նոյնիսկ այս վերջինին ժամանակակից խստութեան:

Ակնունդ.— Այս խնդրին մասին, մասնաւոր մեր ներկայ ուժերու սահմանին մէջ, կարծիք յայտնել դժուար է եւ մեր ուժերէն բարձր: Որքան գիտեմ կարծիքները շօշափած եմ պարսիկներու՝ կրնամ ըսել որ Պարսկաստանի ժողովուրդը ընդհանրապէս կուսակից է ռուսական տիրապետութեան: Ժողովուրդի այս հոգեբանութիւնը կազմակերպութեան առաջնորդ չի կրնար ըլլալ: Որովհետեւ եթէ այս հոգեբանութեամբ առաջնորդուինք՝ այդ մտքերը պիտի արտայայտենք նաեւ թուրքիոյ վերաբերմամբ: Ատանայէն յետոյ է որ այդ ուղղութեամբ մտքեր սկսան ժողովուրդական խաւերու մէջ հոս եւս: այն ինչ սահմանադրութենէն յետոյ այդ տեսակ միտք չկար: Ասկէ 25 տարի առաջ մեր մասին թուրքիոյ մէջ այն կարծիքը կար թէ՝ մենք թուրքիոյ մէջ ոչինչ կրնայինք ընել: Նոյնը Կովկասի եւ Պարսկաստանի վերաբերմամբ, բայց դէպքերը եկան ցոյց տալու թէ, ինչպէս Արեւմուտքի մտքերը հաստատեցին, հայ ժողովուրդը Արեւելքի մէջ մեծ դեր մը կատարելու է կոչուած: Ահա այս տեսակէտէն ալ պէտք է որ մեր գործունէութեան չափը լայնցնենք աստիճանաբար: Անյաջողութեան դէպքում նոյնիսկ մենք պիտի վերսկսէինք մեր կուրը, ինչպէս յաջողութեան օրերին, բայց այս բոլորին դէմ՝ ժողովուրդին պէտք է շօշափելի արդիւնք ցոյց տալ եւ ի նպաստ անոր շահերուն նուաճումներ ընել: Պարսկաստանի մէջ ունեցած մեր յաջողութենէն

օգտուելու ենք, պահանջելով — 1) Պատգամաւորներու թիւի աւելացում 2) Նախարարութեան մէջ հայ ժողովուրդին համապատասխան տեղ 3) Սալմաստի մէջ կազմել գունդ մը՝ որ ըլլայ առաջին հայ գունդը՝ երկրի պաշտպանութեան նուիրուած 4) Զինուորագրութեան պահանջ:

Կարազեան.— Վերջին շարժումներէն յետոյ վերցած է խտրութիւնը դէպի հայ տարրը որ առաջ իբր ստրուկ նկատուած էր: Հայը չէր կրնար էնծիւմեններու²⁶ մէջ մասնակցութիւն ունենալ: մինչդեռ այժմ ունի եւ այս՝ առանց ուժոյ պահանջի: Այս պայմանները պատեհութիւն տուին որ հայ ժողովուրդը կազմակերպուի ինքնուրոյն՝ ազգային-կուլտուրական հողի վրայ: օրինակ՝ թեմական խորհուրդները՝ որոնց միջոցաւ պարսկահայերը ազգային ընդհ. սահմանադրութիւնը պիտի ստեղծեն: Նախասահմանադրական շրջանի մէջ հայերու ունեցած վիճակը այժմեանին հետ չի կրնար բաղդատուիլ: Միւսիստրութիւնը իսլամական օրէնքի վրայ հիմնուած ըլլալով, հայերու մասնակցութիւնը խստիւ կ'արգիլուի: Հետեւաբար դժուար թէ փարլամենթը մօտենայ այդ հարցին: սահմանադրական գունդի մասին Եփրեմը դիմում ըրած էր եւ մասամբ յաջողման ճամբու մէջ, սակայն նահանգապետի չկամութիւնը յետաձգեց խնդիրը: Պէտք է մոռնալ եւ Պարսկաստանի Դաշնակցութեան դերը Ռուսաստանի յեղափոխութեան վերաբերմամբ: Քաղաքական ներկայ պայմաններուն մէջ, երբ չորս պետութիւններու մրցակցութիւնը կայ եւ Մէհմէտ Ալին²⁷ ալ պարտուած է, դժուար թէ Ռուսիա գրաւման փորձ ընէ:

Մելքոն.— Մենք պէտք է պատմութեան դատաւճիռէն ազատ մնանք: Ուեւ յեղափոխական կուսակցութիւն Պարսկաստանի իրականութեան առջեւ չի կրնար դեկավարուիլ հաշիւներով եւ Դաշնակցութիւնը իբր այն հարկ է իր վճռական խօսքը ըսէ իր ուժեղ մասնակցութիւնը ապահովելով: այժմ երբ հայերը այնքան դեր կատարեցին, մեր չէզոքութիւնը պիտի նշանակէր կեղծաւորութիւն: Կոտորածներու մասին խօսուած ատեն՝ մոռնալու չէ մեր ժողովուրդին ինքնապաշտպանութեան, դիմադրական ներքին ուժն ու տրամադրութիւնները: Ռուսական արշաւանքը փոխիթեանութիւն է, որու մասին այժմէն ոչինչ կրնանք ըսել: Եթէ մենք իրերի քաղաքական դերը վարողն ըլլանք՝ դժուար չպիտի ըլլար մեզի որոշել մեր դիրքը: Նոյնիսկ հայկական ինքնամիտի կեդրոնացման տեսակէտով Պարսկաստանը յարմար գետինը կը ներկայացնէ որուն շնորհիւ մեր միջազգային դերը կ'ունենայինք:

Լեւոնեան.— Մասնակցութեան խնդրին մասին ար-

26.- Անճիւմաններ — Պարսկաստանի մէջ յեղափոխական գաղտնի կոմիտէներ:
27.- Սեմսէտ կամ Սուհամսէտ Ալի — Պարսկաստանի անկախ Ըսիզ, որ Թեհրանի գրաւումէն ետք Ռուսիա ապաստանած էր:

դէն ուշ է խօսիլ, քանի որ արդէն կը մասնակցինք: Մենք այս կամ այն միջոցներով մեզի համար գործունէութեան լաւ հող պիտի ստեղծենք: Մինչեւ այժմ մեր գործունէութիւնն եւ յարաբերութեան գիծերը որոշ չէին եղած պարսկական շարժման մէջ: Գալով կոտորածի երկիւղներուն՝ այդ նոյն վայնասունն է որ կը կրկնուէր Թուրքիոյ մեր յեղափոխական շարժման օրերուն: Եթէ Շահը յաջողի՝ կրնայ առանց անոր ալ կոտորել որովհետեւ մեր անցեալի ըրածն ալ կը բաւէ այդ բանին համար: Եթէ պարսիկները կը կռուին հոս արշաւանքին դէմ՝ մենք ալ անբաժան պիտի կռուինք:

Վահագն.— Այն բաները որոնք Թուրքիոյ մէջ ըրած ենք անցեալի մէջ՝ առանց կոտորածի ուրուականէն վախնալու, առանց ժողովուրդին վայնասունը մտիկ ընելու, նոյնը պիտի ընենք Պարսկաստանի համար: Ընդհակառակը այդ կռիւները մեր ժողովուրդին կորովը կը բարձրացնեն: Այսուհետեւ այս 20 տարուայ կռիւներէն յետոյ բնաւ վախնալու պատճառ մը չունինք: Ասկէ յետոյ մեր միակ քաղաքականութիւնը պիտի ըլլայ մեր եւ մահմետականներու մէջ առաջացած խրամատը եւ լեցնել եւ մեր յարաբերութիւնները դնել տանելի հողի մը վրայ եւ այդ ուղղութեամբ առնուած քայլերը որ երկրին մէջ ալ ըլլայ, իր նշանակութիւնը պիտի ունենայ դրացի մահմետականներու վրայ: Մեր գործունէութեան ընթացքին միշտ դէպի ապագան պիտի նայինք: Եթէ նոյնիսկ Ռուսիան փորձէ գրաւել Պարսկաստանը, խնդրի է գիտնալ թէ Ռուսիա պիտի ուզէ՞ միլիոնաւոր իսլամ բնակչութիւն մը, դժգոհ իրմէն, կցել իր հողամասին: Նոյնիսկ այդ բանին համար մեր ներքին ուժեղացումը կարեւոր է եւ այդ պիտի նկատի առնուի Ռուսիոյ կողմէ: Հայութիւն եւ Դաշնակցութիւն տարբեր են. մէկը ժողովուրդ է, միւսը կռուող ոյժ մը: Մեր կրօնը է միաժամանակ ռուսական միջամտութեան դէմ՝ մեր ներքին գործերուն մէջ: Մեր յեղափոխական պատմութեան մէջ քանի մը տասնեակ հայերու անկումը պարսիկներու հետ՝ փառք մըն է, մինչ անոր նահանջը անպատուաբեր ու վարկաբեկիչ: Մենք հայկական պահանջներով հրապարակ գալու չենք, ոչ ալ առիթէն օգտուելով պահանջներ դնելու ենք: Փոխանակ ուրոյն հայկական գունդ մը ստեղծելու աւելի նպատակալարմար է խառն խումբ մը ունենալ քանի որ արդէն առանց անոր ալ թիւրիմացութիւններ չեն պակսիր մեր շուրջը: Յեղափոխական այսպիսի շրջանի մը մէջ անհրաժեշտ է պատասխանատու մարմին մը:

Ռոստոմ.— ՁՕԹ թուականէն ի վեր Սալմաստի շրջանին մէջ գտնուող խումբը գործած է ի նպաստ պարսիկ ազգաբնակչութեան: Անգլիոյ համաձայնութիւնը խաբելու քաղաքականութիւն է՝ ռուսական ոտնձգութեան առջեւ առնելու համար: Կոտորածի երկիւղ կայ. բայց մեր մասնակցութիւնը աւելի կը նպաստէ առջեւն առնելու այդ կոտորածին. արդէն ռուսական նպատակն

ալ այդ է, մտցնել գործը Թաւրիզ եւ կոտորած առաջ բերել տեղական յետադիմական ուժերու ձեռքով, յետոյ ազատարարի դիմակով գալու համար: Պարսկաստանի մեր մարտական ուժի մասին այնքան ալ թերահաւատ ըլլալու պատճառ չունինք: Կ'առաջարկէի Թուրքիոյ գանազան նահանգներէն 4-5ական ընկերներ բերել եւ վարժեցնել կռուի կեանքին:

Անտոն.— Մեր շահու տեսակէտով Թուրքիոյ եւ Պարսկաստանի պահպանութիւնը աւելի կարեւոր է քան Ռուսիոյ առաջխաղացութիւնը: Յեղափոխութեան ճամբուն վրայ տրուած զոհը աւելի արդիւնք կու տայ: Այս առիթէն օգտուելու ենք, մարտական ուժը ուժեղացնելու համար: Կ'առաջարկէ հետեւեալ բանաձեւը իր կողմէ.

Խօսելով Պարսկաստանի մէջ մեր ունեցած գործունէութեան եւ բռնելիք ընթացքի մասին եւ շեշտելով անցեալ ժողովի նկատումները՝ Ընդհ. ժողովը ուրախութեամբ դիտեց կուսակցութեանս ունեցած յաջողութիւնները, այս առթիւ իր ոյղջոյնները ուղղելով նաեւ Պարսկաստանի ազատագրութեան համար կռուող բոլոր մարտիկներին: Սրա հետ միասին ենթադրելով որ Պարսկաստանի մղած այսօրուայ պայքարը ապագայում կրնայ հանդիպիլ խոչընդոտների ու անյաջողութիւնների, Ընդհ. ժողովը որոշեց յանձնարարել իր Պարսկաստանի մարմիններին ու ընկերներին բոլոր պարագաներում էլ գործել համերաշխաբար պարսիկ դեմոկրատիկ ազատական տարրերի հետ, պահպանելով իր կուսակցական ինքնուրոյնութիւնը: Նախաձեռնարկ լինել հողեր տալով եւ հարկերը թեթեւացնելով բարելաւելու աշխատաւոր գիւղացիութեան վիճակը ի հաշիւ պետական դաւաճանութիւն գործող աւատապետների: Ապահովել օրէնքով ազգային կուլտուրական ինքնավարութիւնը, ազգային տուրք նշանակելու իրաւունքը:

Պարսկաստանէն դուրս (ա) Յանձնարարել կուսակցական մարմիններին չզլանալ իրենց կուսակցական պարտականութիւնը Պարսկաստանի ազատագրական պայքարին հանդէպ. (բ) Պարսկաստանի եւ այլ պետութիւնների սահմանների փոփոխութեան համար մղուած ինտրիգներն ու պատերազմը համարել կորստաբեր հայ [ժողովուրդի] ապրած վայրերի վերանորոգման եւ մեր ազգային մշակութական վերածնութեան տեսակէտից:

Ընկեր Վարանդեան կ'առաջարկէ քուէարկել իր հետեւեալ բանաձեւը իրբեւ լրացուցիչ մաս Պարսկաստանի մէջ մեր հետեւելիք քաղաքականութեան: Ընդհ. ժողովը որոշում է որ այն պարագային երբ ռուսական զօրքը ներս կը խուժէ Ատրպատականը գրաւելու դիտաւորութեամբ, Հ. Յ. Դաշնակցութիւնը չէզոք կը մնայ ռուս-պարսկական պատերազմի մէջ: Կարծիքներու մէջ հիմնական մեծ տարբերութիւն չտեսնուելով առաջարկուած բանաձեւերու սահմանին մէջ մշակուած բանաձեւի մը քուէարկութիւնը յետաձգելով ուրիշ ժողովի մը, նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ ԻԸ.

5 Սեպ. 1911 (առաւօտ)

Ներկայ՝ Պալքանի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Պարսկաստանի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Ամերիկայի, Սամսոն-Մարզուանի, Ուս. միութեան, Մուշ-Սասունի, Պոլսոյ, Խարբերդի պատգամաւորները, Բիւրոներու ներկայացուցիչները: Վճռական ձայնով՝ Աւօ: Խորհրդակցական ձայնով՝ Ժիրայր, Մարգալետ, Սաթօ, Ակնունի, Լեռնեան, Ասլան, Մելքում:

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ նախորդ մէկերկու նիստերի արձանագրութիւնները:

Պարսկաստան.— Շարունակուեցաւ կարծիքներու փոխանակութիւնը Պարսկաստանի կազմի մասին: Առաջարկուեցաւ Թեհրանին տալ Կեդր. Կոմիտէի իրաւունք. քուէի կը դրուի Լեռնեանի հետեւեալ բանաձեւը որ կը ստանայ 3 ձայն:

ա) Թեհրանի կոմիտէն բարձրացնել կեդրոնականի աստիճանին.

բ) Կազմել Պարսկաստանի Պատասխանատու մարմին, որուն պիտի մասնակցին երկու հոգի ընտրուած Ընդհ. ժողովէն եւ երեք հոգի՝ ընտրուած երկու Կեդր. Կոմիտէներէ:

Պատասխանատու մարմինը կ'ըլլայ հոն, ուր հարկը կը պահանջէ:

Վահագն.— Նկատի ունենալով կարծիքներու տարբերութիւնը, միջին ճամբայ մը գտնելու համար կ'առաջարկեմ ուժեղ Կեդր. Կոմիտէ մը ընտրել՝ որ վարէ ամբողջ գործը, վայրը որոշել իրենց ձգելով: Ընդհ. ժողովին կողմէ ալ ուժեր տալու է:

Լեռնեան.— Կը գտնեմ աննպատակ այդ առաջարկը, քանի որ այնտեղ քաղաքները իրարմէ 20-25 օրուան հեռաւորութիւն ունին: Կ'առաջարկեմ կանգ առնել աւելի Թեհրանի վրայ, որպէսզի այդ տեղի կազմը ուժեղացուի: Այս առաջարկը քուէի դրուելով 3ի դէմ կը ստանայ 11 ձայն:

Կը քուէարկուի նաեւ հետեւեալ առաջարկը. «Ուղարկուելիք ընկերների թիւը եւ պիւտճէի մասը կը մնայ ուժերի բաշխումների ժամանակին», որ կ'անցնի 1ի դէմ 13 ձայնով:

Ռոստոմ.— Պարսկաստանի մեր ընկերները մէկ բան միայն կ'ուզեն, այն՝ որ իրենք անկախ ըլլան որպէսզի հարկաւոր դէպքում կարենան ձեռնհաս կերպով տանիլ գործերը: Պէտք է գիտնալ որ Թաւրիզը եւ Թեհրանը երկուքն ալ կարեւոր կեդրոններ են եւ միշտ ունին զանազան գործեր. ուստի կ'առաջարկեմ քուէարկել հետեւեալը.— «Հնարաւորութեան դէպքում երկու կոմիտէները պէտք է գործեն խորհրդակցաբար, հակառակ պարագային միայն՝ ազատ են անկախօրէն գործելու», որ կ'անցնի միաձայնութեամբ:

Ընդունուած այս հիմունքներուն համաձայն յատուկ յանձնախումբի մը պարտականութիւն յանձնուեցաւ կէսօրուան նիստին իսկ բերել ամբողջական բանաձեւ:

Դաշնակցութիւնը եւ Իթիֆհատ.— Նախորդ ժողովներու մէջ այս հարցը ծեծուած էր եւ քուէարկուած էին կարգ մը հակա կէտեր, որոնց ամփոփում-խմբագրութիւնը յանձնուած էր մասնախումբի մը. խնդրի առարկայ այդ բանաձեւը պատրաստուած ըլլալով՝ կարդացուեցաւ: Ընկեր նախագահը հրաւիրեց որ ժողովականներէն բոլոր անոնք որ բանաձեւի մասին ուեւէ՞ դիտողութիւն ունին՝ յայտնեն:

Վահագն.— Իմ բանաձեւիս մէջ կար այն որ բացի հայկական կեանքի վերաբերեալ կէտէն, մէմորանտումին մէջ պէտք է գրել ընդհանուր ձեւով մը համապետական խնդիրներու շուրջ եւ ապա միայն հայկական ցաւերու մասին:

Անտոն.— Բանաձեւին մէջ կրկնութիւն կայ — օրինակ, շարքերու ուժեղացման կէտը: Այդ բանաձեւին մէջ պէտք է մտցնել աշխատաւորութեան հարկերի նուազեցումը եւ պէտք է որ անոնք ստանան այդ տեսակէտը՝ իրագործելու համար: Մենք մեր բանաձեւին մէջ մոռցած ենք աւելցնել արտաքին քաղաքականութեան վերաբերեալ նկատումները. պէտք է ըսել թէ կառավարութիւնը գործակցելով Գերմանիոյ պատճառ կ'ըլլայ դեմոկրատ կառավարութիւններու մեզմէ հեռանալուն:

Ռոստոմ.— Եթէ մենք մեր յիշատակարանին մէջ աշխատաւորութեան տեսակէտը դնենք, կը նշանակէ թէ մենք յոյսեր ենք ունեցեր Իթիֆհատէն այդ ուղղութեամբ, այն ինչ անոնք չէին ալ կրնար աշխատաւորական տեսակէտ ունենալ: Կ'առաջարկեմ որ մեր շարքերու ուժեղացման հատուածը գատուի այս բանաձեւէն:

Վահագն.— Մոռցուած է նաեւ խառն կոմիտէներու յարաբերութեան մասին եղած բանաձեւը, որ պէտք է անպատճառ աւելցուի:

Ժամանակը առաջացած ըլլալուն՝ կարծիքներու փոխանակութեան շարունակութիւնը յաջորդ նիստին ձգուեցաւ:

Նիստ ԻԹ.

5 Սեպ. 1911 (կէսօրէ վերջ)

Ժողովը բացուեցաւ ներկայութեամբ Տրապիզոնի, Տիարպեթի, Կեսարիոյ, Պալքանի, Խարբերդի, Ամերիկայի, Մուշ-Սասունի, Պարսկաստանի պատգամաւորներուն, Բիւրոներու ներկայացուցիչներուն. վճռական ձայնով ներկայ էր Բաբա, խորհրդակցական ձայնով՝

Ակնունի, Սաթո, Վարազդատ, Մելքում:

Նախագահ ընկեր Ակնունի ցաւ կը յայտնէ որ հակա-
ռակ բոլոր ջանքերին եւ նկատողութիւններին այսօր էլ
ժողովը ուշ է սկսում եւ այն 11 ձայներով՝ յետոյ կար-
դալով մնացեալ օրակարգի խնդիրները ցուցակը,
բաժնուած շաբթուայ մնացեալ օրերուն վրայ դիտում է
որ ժողովը փակուելու է առաջիկայ շաբաթ օրը՝ 10
Սեպտեմբերին:

«Ազատամարտ»ի խմբագրութեան կողմից մի գրա-
ւոր առաջարկ կարդացուեց, որով առաջարկուում էր
նշանակել մի յանձնախումբ՝ քննելու «Ազատամարտ»ի
նիւթական եւ բարոյական վիճակը, որպէսզի նրա վի-
ճակի մասին եղած որոշումները կարելի լինի շտապեց-
նել, զանազան ստիպողական նկատումներով: Ժողովը
ձայների մեծամասնութեամբ որոշեց ընտրել այդ առ-
թիւ մի յանձնախումբ: Ընտրուեցան Կարապետ, Մարգ-
պետ, Նշան բերելու մի գեկուցում «Ազատամարտ»ի ա-
պագայ վիճակի մասին: «Ազատամարտ»ի համար վերջ-
նական որոշումը կը տրուի երբ ժողովը կը գայ նրա
նիւթական եւ այլ գեկուցումներին:

Կարդացուեց նաեւ Պարսկաստանի մասին պատ-
րաստուած հետեւեալ բանաձեւը, որ ձայների մեծա-
մասնութեամբ ընդունուեց:

Դաշնակցութեան Զ. Ընդհ. Ժողովը, լսելով Պարս-
կաստանի մասին ներկայացրած գեկուցումը եւ ընկեր-
ների տուած լրացուցիչ տեղեկութիւնները,

Ընդունելով որ պարսիկ ժողովրդի մէջ արդէն կազ-
մակերպուում եւ ամրանում է սահմանադրական տար-
րը՝ պատրաստ արեան գնով պաշտպանելու ձեռք բեր-
ւած իրաւունքները:

Ընդունելով նաեւ, որ մեր կազմակերպութիւնը
Պարսկաստանում՝ ճանաչուած նախորդ Ե. Ընդհ. Ժո-
ղովից իբրեւ յեղափոխական գործօն մարմին, կարողա-
ցել է մեծապէս նպաստել մանուկ սահմանադրութեան
հաստատման գործին, առաջին շարքերի մէջ կուուելով
յետադէմ տարրերի դէմ թէ՛ սկզբում Շահի գահընկէ-
ցութիւնից յետոյ եւ թէ՛ վերջերս՝ Մուհամէտ Ալու նոր
արշաւանքի պահուն,

Գոհունակութեամբ է արձանագրում երիտասարդ
իրանի հերոսական եւ յաջող ճիգերը ընդդէմ արտաքին
ու ներքին թշնամիների եւ մասնաւորապէս մեր ընկեր-
ների կատարած կարեւոր դերը պատմական այս կարե-
ւոր պայքարի մէջ:

Սրա հետ միասին Ընդհ. Ժողովը աչքի առաջ ունե-
նալով այն, որ ռէակտիւն տարրերի յաղթանակը քաջա-
լերիչ հանգամանք պէտք է հանդիսանայ Թուրքիայի յե-

տադէմ տարրերի համար եւ պիտի նպաստէ Ռուսիոյ
արդի ռեժիմի ամրապնդման,

Որոշեց,

1) Յանձնարարել Կովկասի եւ Թուրքիոյ դաշնակցա-
կան մարմիններուն աւելի մեծ չափով մասնակցութիւն
ցոյց տալ իրանի ազատագրական գործին մարդով եւ
զէնքով:

Դրա հետ միասին ժողովը որոշեց

ա) Աչքի առջեւ ունենալով սահմանագծի յատուկ
կարեւորութիւնը, առաջարկել՝ պահել այնտեղ կամա-
ւորների մի քանի խմբեր տեղաւորուած Ուրմիայից
մինչեւ Մակու:

բ) Յատուկ կոչ անել Թուրքիայի Արեւմտեան մասի
մարմիններին ուղարկել Սալմաստ դաշնակցական երի-
տասարդներ, որոնք ծառայելով հանդերձ իրանի դա-
տին՝ ձեռք կը բերեն հարկ եղած ռազմական հմտու-
թիւնը:

Տալ Թեհրանի մարմին Կ. Կոմիտէի իրաւասու-
թիւններ, զօրեղացնել նրան նոր անդամներով եւ յանձ-
նարարել Վրէժի եւ Շահի²⁸ Կ. Կոմիտէներին՝ գործը վա-
րել անպայման փոխադարձ համաձայնութեամբ:

Շարունակել սերտ յարաբերութիւն պահպանել դե-
մոկրատիկ տարրերի հետ համագործակցելով նրանց
հետ այն բոլոր պարագաներում երբ անհրաժեշտու-
թիւն կը ներկայանայ սահմանադրական կարգերը
պաշտպանելու եւ ամրացնելու: Աշխատիլ նրանց հետ
միասին (a) Ապահովելու հիմնական օրէնքներով մեր
ազգային-կուլտուրական ինքնավարութիւնը, տալ մեր
ազգային ժողովին իրաւունք՝ պարտաւորական տուրք
առնելու: (b) Վերացնել կանոն էսասիէն²⁹ սահմանադ-
րական ոգուն հակասող այլ եւ այլ սահմանափակում-
ները՝ յենուած ազգային կամ կրօնական խտրութիւն-
ների վրայ, ինչպէս օրինակ՝ արգելք ոչ-միւսիւլմաննե-
րին վարել պետական բարձր պաշտօններ, (c) Մտցնել
ոչ-միւսիւլման տարրերին գինուորագրութեան:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամանակին:

Նիստ I.

8 Սեպտ. 1911 (առտու)

Ներկայ՝ Տիգրանակերտի, Տրապիզոնի, Կեսարիոյ,
Ամերիկայի, Մուշ-Սասունի, Կարինի, Սամսոն-Մար-
զուանի, Պալքանի, Խարբերդի, Ուս. միութեան պատ-
գամաւորները. վճռական ձայնով՝ Բաբա, խորհրդակ-
ցական ձայնով՝ Մելքում, Ասլան, Ասողիկ, Ակնունի,
Մար, Վարազդատ, Սաթո: Ներկայ են նոյնպէս Բիւրո-
ներու ներկայացուցիչները:

Ինքնապաշտպանութեան յանձնախումբը սկսաւ իր

28.- Վրէժը՝ Ատրպատական է, մինչ այդ ամբողջ Պարս-
կաստանի միակ Կերդ. Կոմիտեի փոխ: Վեցերորդ Ընդհ. ժողո-
վը երկրորդ Կերդ. Կոմիտեի փոխ կը ծանցնայ նաեւ Թեհրանի
շրջանը՝ Շահ կամ Շահստան անունով ծանօթ:

29.- «Կանոն Էսասիէ» – հիմնական օրէնք:

գեկուցումին: Զեկուցանող ընկերը կարդալէ առաջ
յանձնախումբի գրաւոր որոշումը, տուաւ բերանացի
ընդարձակ բացատրութիւններ՝ ինքնապաշտպանու-
թեան գործի կազմակերպումին համար: Ընկերներու
կողմէ եղան հարցումներ որոնց լրացուցիչ տեղեկու-
թիւններ տուաւ գեկուցանող ընկերը:

Արեւմտեան Բիւրոն նոյնպէս ներկայացուց իր գոր-
ծունէութիւնը՝ ինքնապաշտպանութեան գործի մա-
սին. այս առթիւ եւս եղած հարցումներուն տուաւ լրա-
ցուցիչ տեղեկութիւններ՝ Բիւրոյի ներկայացուցիչը:

Տիգրան.— Երկրի մարմիններու տրամադրութեան
տակ գտնուած գոյքերը շատ խեղճուկ վիճակի մէջ են.
փոխադրութեան վստահելի եւ ապահով միջոցներու
չգոյութեան հետեւանքով եղած է այս. դրամը վճարած
է արժէքաւոր զէնքերու համար. բայց ստացած չէ. ճա-
նապարհին փոխուած կամ խորտակուած են. զնման
գործին համար պէտք է ընտրել Կերդ. մարմին մը, որ
հսկէ եւ առաջն առնէ այս անպատեհութիւններուն: Ես
համաձայն չեմ անհատ վաճառականներու վստահիլ
այս գործը. պէտք է ընկերներու յանձնել:

Թորգոմ.— Անբաւական կը գտնեմ Բիւրոյի տեղե-
կատուութիւնը. մենք չտեղեկացանք թէ իւրաքանչիւր
չրջանի մէջ ինչ կատարուած է ինքնապաշտպանու-
թեան հողի վրայ. կ'ուզեմ հարցնել ուրեմն թէ զնման
համար յատկացուած գումարը ինչպէ՞ս բաշխուած է
(Բիւրոյի ներկայացուցիչը կու տայ տեղեկութիւններ):

Վարազդատ.— Յեղափոխական կազմակերպութեան
մը համար ամենաանհրաժեշտը գինումի գործն է, որու
կազմակերպումին համար կը թելադրեմ հետեւեալը.—
մեր խումբերը գինել կառավարութեան արգիլած արժէ-
քաւոր զէնքերով, իսկ ժողովուրդը՝ արտօնեալ որսոր-
դական զէնքերով: այսպիսով պատեհութիւն տուած
կ'ըլլանք ժողովրդին գինավարժութեան եւ զէնքերու հո-
գատարութեան. մինչդեռ երբ արգիլուած զէնք ունենայ
նիւթակայ է փաստօրէն³⁰ եւ վստահուելու:

Ալմու.— Զեկուցանողի ներկայացուցած ծրագիրը
գտայ շատ նպատակայարմար. գնումի գործը դնել չէ-
զոք հողի վրայ, թոյլ տալ որ վաճառականներ կատարեն
վաճառումը. ուրիշ կերպ թէեւ կրնայ աւելի աժանագին
ստանալ զէնքերը, բայց կան շատ անպատեհութիւններ
այս խնդրի շուրջ: Մեր շրջանի մէջ ինքնապաշտպանու-
թեան գործը գոհացուցիչ վիճակի մէջ է, մասնաւոր
գիւղերը:

Կարապետ.— Կազմակերպական գինումը վերջին
տարիները առաջ չէ տարուած բաղձալի քանակով,
մնացած է հինը. Զիֆոնի մասին տեղեկութիւն չունինք:
Ժողովրդական ինքնապաշտպանութեան գործը տար-
ւած է բաւական գոհացուցիչ կերպով. ընդհանուր առ-
մամբ 60-70 տոկոսը բոլոր շրջաններու գինուած է: Ժո-
ղովրդի ինքնապաշտպանութեան գործը փորձ ըրած
ենք յանձնելու ժողովրդին ձեռք, բայց անյաջողութեան

մատնուած ենք. Կերդ. Կոմիտէն ինք վարած է զինման
գործը: Ապագային աւելի յաջող կերպով վարելու հա-
մար այս գործը, անհրաժեշտ է Կ. Կոմիտէին կից ունե-
նալ մասնաւոր մարմին մը որ կողմնակի միջոցներով
ջանայ առաջ մղել այս գործը:

Ռոստոմ.— Մեր մէջ սխալ ըմբռնում մը կայ. ինքնա-
պաշտպանութիւն ըսելով մենք գէնքի գնում կը հասկը-
նանք. հայ-թաթարական կուուի ատեն գէնք ունեցող
քաղաքները չկրցան պաշտպանուիլ: մինչդեռ այնպիսի
քաղաքներ — ինչպէս Պաքու — թէեւ շատ գէնք չկար,
բայց կրցաւ կազմակերպուիլ: Պակասը կազմակեր-
պումն է, ուրեմն: Հետեւաբար, բաժնել պէտք է այս եր-
կուքը իրարմէ.— գէնքի գործը յանձնել անկախ վաճա-
ռականներու, իսկ կազմակերպումի գործը դնել կազ-
մակերպութեան վրայ. Ընդհ. Ժողովը կ'ընտրէ գաղտնի
մարմին մը որ շրջելով բոլոր վայրերը կը հսկէ զէնքե-
րուն եւ կը կանոնաւորէ, կը կազմակերպէ ինքնա-
պաշտպանութեան գործը, կազմելով ինքնապաշտպա-
նական խմբեր՝ արդէն զէնք ունեցողներէն եւ գործի
մէջ քաշէ զէնք չունեցող բայց ընդունակ անհատները.
կազմակերպումի այս գործը առանց ծախսի չ'ըլլար.
պէտք է փոքրիկ ֆոնս մը տրամադրել ընել այդ մարմ-
նին, որ շրջելով եւ ո'չ նամակագրութեամբ գործէ:

Անտոն.— Պէտք է համաժողովրդական հողի վրայ
դնել զինման գործը եւ ժողովրդին հասկցնել զէնքի ան-
հրաժեշտութիւնը, անոր սէրը, ու այս գործին մէջ
պէտք է մեր ընկերները օրինակ ըլլան:

Քուէարկուեցան հետեւեալ կէտերը.

1) Ունենալ մարմին մը ինքնապաշտպանութեան
գործի ղեկավարման համար — միաձայն

2) Ընտրել այդ մարմինը Ընդհ. Ժողովին կողմէ:

Անտոն.— Երկրորդ մասը քուէարկելէ առաջ պէտք է
որոշենք նախ թէ ի՞նչ պիտի ըլլան անոր յարաբերու-
թիւնները Կ. Կոմիտէներուն հետ: Որպէսզի բարդու-
թիւններ առաջ չգան եւ հակասութեան մէջ չլինանք՝
այդ մարմինները — ինքնապաշտպանութեան կամ մար-
տական — կազմեն իւրաքանչիւր կուսակցական-կազ-
մակերպական մարմնի հատուածը, գործելու համար
ոչ-բոլորովին անկախ:

Ակնունի.— Իրաւացի է կեդրոնացման վախը այս
գործին մէջ. իսկ երբ հատուածներ ստեղծուին այս ձեռ-
նարկին համար, այն ատեն գաղտնի ըլլալէ կը դադրի:

Ռոստոմ.— Կեդրոնացման վախը կրնար ծագիլ այն
ատեն, երբ ան իր ձեռքին մէջ ունենար դրամ եւ զէնք.
մինչդեռ ոչինչ չունի ան իր ձեռքին մէջ կեդրոնացած.
ան պիտի շրջի միայն եւ կազմակերպէ, ղեկավարէ ար-
դէն գինուածները:

Վիճաբանութիւնները շարունակելի նկատուելով,
ժողովը փակուեցաւ ժամը 1.30ին:

30.- Փաստօրէն՝ ժանգոտելու:

Նիստ 11.

8 Սեպտ. 1911 (երեկոյ)

Ներկայ՝ Պարսկաստանի, Տիգրանակերտի, Պալքանի, Տրապիզոնի, Մուշ-Սասունի, Կեսարիոյ, Սամսոն-Մարզոկանի, Սեբաստիոյ, Կարինի, Խարբերդի պատգամաւորները, վճռական ձայնով՝ Աւօ, Բաբա. խորհրդակցական ձայնով՝ Ակնուկ, Վարազդատ, Մելքում, Մարզպետ, Հրաչ. ներկայ են նաեւ Բիւրոներու ներկայացուցիչները:

Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ակնուկի:

Օրակարգն է՝ շարունակութիւն ինքնապաշտպանութեան խնդրի վիճաբանութեան:

Առաջին. — Կ'առաջարկէ այդ մարմինը ընտրել Ընդհ. Ժողովի կողմէ, որ պատասխանատու ըլլայ խորհուրդին եւ Ընդհ. Ժողովին առաջ. այդ մարմինը չ'ունենար զինավաճառական Ֆունկցիա:

Կարագեան կ'առաջարկէ այդ մարմինն տալ եւ ընդհանուր զինական քոնթրոլի իրաւունք:

Հարց կը դրուի թէ ինչպէս պիտի լինի այդ մարմինի փոխարարբերութիւնները կազմակերպութեան ձեռնհաս մարմիններէ հետ:

Առատով. — Կեղը. մարմինը միմիայն կը յարաբերի Բիւրոյի հետ, իսկ գաւառի մարմինները, եթէ կարիք ունենան, Կեղը. Կոմիտէի մէկ անդամին միջոցաւ յարաբերութիւն պահեն, քանի որ գաղտնի կը պահուի:

Թորգոմ. — Քանի որ այդ մարմինը գործ պիտի ունենայ նաեւ շրջաններու հետ, չի կրնար չ'յարաբերուի:

Կարագեան. — Կ'առաջարկէ Բիւրոներու կից եւ Կ. Կոմիտէներու կից ստեղծել մարմին մը, սեկցիոնի ձեւով:

Վահագն. — Ես հակառակ եմ սեկցիոնի սիստեմին. քանի որ կ'ուզենք գաղտնի պահել, մենք ունինք այնպիսի ընկերներ մեր կազմերու մէջ, որոնք հաւանականաբար կրնան հեռանալ կամ հեռացուիլ Դաշնակցութենէն: Մենք պիտի աշխատինք մեր այդ մարմինը գաղտնի պահել նաեւ մեր շատ մը ընկերներէն, որոնք դեռ իլլեկալ գործունէութեան վարժ չեն: Կ'առաջարկեմ կեդրոնացեալ մարմին մը ունենալ ինքնապաշտպանողական հողի վրայ, որը կ'ըլլայ բոլորովին գաղտնի: Անհրաժեշտ է մեծ գողութիւն կատարել, քանի որ այդ գործի վտանգուելէն կախուած է եւ մեր գործունէութիւնը: Մարմինը պատասխանատու կ'ըլլայ խորհուրդի եւ Ընդհ. Ժողովի առաջ: Կը խորհրդակցի Բիւրոյի հետ:

Թորգոմ. — Կը գտնէ որ անհնար է մարմիններէն գաղտնի պահել այս մարմին գոյութիւնը քանի որ անկա գործ պիտի ունենայ տեղական ընկերներու հետ: Հակառակ չեմ գաղտնապահութեան եթէ կարող էք, գտէք միջոցը. կը կարծեմ թէ պէտք է գտնէ Շրջանային

Ժողովի կողմէ մէկ ընկեր յարաբերութիւն պահէ:

Վարագեան. — Կ'առաջարկէ փոխանակ զինական կամ մարտական անուանելու, անուանել այդ մարմինները Որսորդական խումբ, քանի որ այդ բանը արդիւնաւոր է. ու եթէ զինական-մարտական անուանենք, կանոնադիր մը պէտք պիտի ըլլայ, որով աւելի վտանգաւոր պիտի ըլլայ:

Առատով. — Գտնում է որ եթէ Կեղը. յանձնախումբը բարձրագոյն մարմնի հետ պիտի խորհրդակցի, ուրեմն եւ պիտի խորհրդակցի միւս մարմիններու հետ. կամ այն է որ սեկցիոնի ձեւ պիտի ստանայ, կամ պէտք է բաժանել Դաշնակցութիւնը երկու մասի. մին յեղափոխական, միւսը կուլտուրական. միմեանցից անջատ, որոնք կը միանան Ընդհ. Ժողովի առաջ: Ի նկատի պէտք է ունենալ որ եթէ այդ մարմինը ունէ՛ գործ կատարէ գաւառի մէջ, այդ պարագային անմիջական հալածանքը պիտի սկսի տեղական մարմինների դէմ. քանի որ կատարելիք գործերը գաղտնի պիտի մնան մարմնից, կ'առաջարկէ կամ սեկցիոնի ձեւ տալ եւ կամ այստեղ վերջացնել գործը, որպէսզի ով որ ուզի կուլտուրականին, իսկ ո՛վ որ կ'ուզի յեղափոխականին մէջ մտնէ:

Առատով. — Երբ ասում ենք որ Կեղը. մարմինը գաւառներուն մէջ ունենայ մասնաճիւղեր, կարծում են թէ դա դրսից է լինելու. պէտք է նկատի ունենալ այն որ կարող են Կ. Կոմիտէների անդամները եւս լինել այդ մասնաճիւղի մէջ, նոյնիսկ գուցէ եւ հաւաքաբար, ես կ'առաջարկէի ոչ թէ որոշէինք անպայման յարաբերուի, այլ թոյլ տալ նրանց, եթէ կ'ուզեն թող յարաբերուին. լաւ է բոլորովին անջատել:

Վահագն. — Կարծում է որ Բիւրոյի հետ կապ ունենալով պէտք է Կեղը. Կոմիտէներու հետ յարաբերուի. անկարելի է Դաշնակցութիւնը բաժանել. այժմէն դժուար թէ կարելի ըլլայ ապագայ բարդութիւնները գուշակել: Յարդ Բիւրոները կարողացել են տանիլ եւ մարտական գործը. ուստի ոչ մէկ դժուարութիւն չկայ այժմ էլ շարունակելու մէջ. կ'առաջարկէ անպայման խորհրդակցիլ Բիւրոներու կամ համապատասխան մարմիններու հետ:

Թորգոմ. — Գտնում է որ հին եւ նոր կազմուած Կեղը. Կոմիտէները չի կարելի բաժանել. պէտք է աշխատիլ միօրինակ տանիլ. անհրաժեշտ է որ իւրաքանչիւր մարմին կարողանայ մասնակցիլ այդ մարմնին, բայց ոչ թէ ղեկավարուի. կ'առաջարկէ մարտականը կազմել բոլորովին անջատ եւ գաղտնի:

Առատով. — Գտնում է որ մարմնի գոյութիւնը անհրաժեշտ է. նա խորհրդակցելու է անպայման Բիւրոյի հետ եւ պարտաւոր է Կ. Կոմիտէներու վստահելի ընկերները եւս ունենալ իր մէջ, նայած որակին եւ քանակին: Բաժանել կուսակցութիւնը երկուսի՝ նոր անպատեհութիւններ առաջ կը բերէ, հաւանականաբար, մինչեւ յաջորդ Ընդհ. Ժողովը. կ'ունենանք երկու հակառակ բա-

ժիններ, կասկածում է որ միլիտարիզմը զարգանայ. սեկցիոնի ձեւը գտնում է անհնար գաղտնապահութեան տեսակէտէն:

Վարագեան. — Գտնում է որ անհնար է ինքնապաշտպանականը գաղտնի պահել մարմիններէն. ատիկա ցոյց տուաւ Կովկասի գործունէութիւնը: Եթէ նոյնիսկ այդ մասերը բաժանուին, չի կարելի կառավարութիւնից պահել. եւ երբ լսուի, որպէս դաւադրական կուսակցութիւն, խիստ հալածանք կը սկսի անոր դէմ. կ'առաջարկէ գանազան անուններու տակ կազմել այդ մարմինները, որպէսզի կառավարական ուշադրութիւնը չգրաւէ: Եւ այդ մարմինը կը յարաբերուի ամէն մարմնի հետ:

Վիշապ[եան]. — Կը գտնէ որ անհրաժեշտ է իւրաքանչիւր մարմնի հետ յարաբերուիլ — այլ մէկ մարմնի (Բիւրօ կամ համապատասխան) հետ. այդ մարմինը կրնայ իր մէջ առնել եւ Կ. Կոմիտէներու մէկէ աւելի ընկերները եթէ վստահելիներ կան:

Առատով. — Գտնում է որ եթէ մարմիններու հետ անմիջական յարաբերութիւն չունենայ, անհնար կը լինի խնդիրը լուծել:

Հրաչ. — Փոխանակ դիւրացնելու բարդացնում ենք. պիտի նախափորձը անել. կեդրոնական մարմինը արդէն կազմուած է, պիտի նրան թելադրել որ աւելի լայն խորհրդակցութիւններ ունենայ եւ որոշեն գործելակերպը. կարծում է որ եթէ մենք որոշենք պատմական սխալ գործած կը լինենք. լաւ կը լինի աւելի ազատ թողնել մարմինը իր գործունէութեան մէջ, ի հարկէ խորհրդակցութիւն տանելով համապատասխան մարմնի հետ (Բիւրօ եւն.). այս մեզ համար պիտի լինի փորձ մը. եթէ այդ մարմինը կը գտնէ որ անհրաժեշտ է յարաբերութիւնը գաւառներում, կը յարաբերուի:

Նիկոլ³¹. — Նախ պէտք է պարզ լինի թէ ինքնապաշտպանութիւն ասելով ինչ պիտի հասկնալ. երբ այդ պարզ կը լինի, այն ատեն եւ մենք կարող ենք գտնել մեր գործունէութեան ուղին: Եթէ սահմանադրութեան պաշտպանութեան համար է, կարելի է ազատ անել, բայց քանի որ միմիայն այն է, ուրեմն մեզ համար անհրաժեշտ է յեղափոխական ճանապարհով գնալ: Մեր գործը կը բաժնուի 3 մասի I- Սահմանադրութեան պաշտպանութիւն. II- Հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւն. III- Մեր ուժով սպառնալիք: Երեք դէպքում էլ մենք պիտի կանգնինք յեղափոխական հողի վրայ: Եթէ կայ մարմին մը որ այս ֆունկցիաները վերցնելու է իր վրայ, դա լինելու է Դաշնակցութիւնը. յետոյ գտնում է որ մեր այդ գանազան անուան տակ կազմած մարմիններով գործելը աւելորդ է. եթէ կառավարութիւնն իր հալածանքները սկսի, անիկա չպիտի փնտռէ գաղտնիները, այլ յայտնի դաշնակցականները: Առաջարկում է փոխանակ այդքան դժուարութեամբ եւ ծախսելով կազմելու այդ մարմինը, ստիպել բոլոր ընկերներին զինուորագրութեան գնալ՝ որտեղ աւելի լաւ է մարզուում. եւ

ոնէ՛ ծախս չի լինի. նոյնիսկ աշխատելու է որ որքան կարելի է զինուորագրութիւնը շատցնել. այդպէսով առաջը կ'առնուէր այդ դժուար հարցին:

Երկար վիճաբանութիւններից յետոյ ունէ՛ եզրակացութեան չգալով՝ առաջարկուեցաւ ինքնապաշտպանութեան յանձնախումբին վաղուայ համար պատրաստել ամփոփ բանաձեւ մը:

Ժողովը փակուեց ժամը 7-ին:

Նիստ 12.

7 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկայ՝ Բիւրոներու ներկայացուցիչներ, Ամերիկայի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Ուս. միութեան, Պարսկաստանի, Պալքանի, Կարինի, Կեսարիոյ, Մուշ-Սասունի, Խարբերդի պատգամաւորները: Վճռական ձայնով՝ Բաբա, խորհրդակցական ձայնով՝ Մարզպետ, Ասլան, Նիկոլ³¹:

Ժողովը բացուեցաւ ընկեր Ասլանի նախագահութեամբ:

Օրակարգ. — 1) Հաշուական 2) Կանոնադրական Նկատելով որ հաշուեքննիչ յանձնախումբի գեկուցումը դեռ պատրաստ չէ, յետաձգուեցաւ յաջորդ նիստերէն մէկուն, եւ նկատի ունենալով որ հաշիւները դեռ կ'ուշանան, ընտրուեցաւ նախահաշուի մասնախումբ մը՝ ընկերներ Բժիշկէ եւ Ակնուկի բաղկացած: Կանոնադրական. — խորհրդակցութեան ենթարկուեցաւ Վանի Կեղը. Կոմիտէի առաջարկը, Պատասխանատու մարմնի մը ստեղծման՝ Մեծ-Հայքի համար:

Առատով. — Կարծում է որ այս հարցը կարելի է յետաձգել. Վանի մարմինը եթէ այդ առաջարկը բերել է, նրա համար է, որ իրանք ներքին դրամական դրութեամբ վատ են եւ յոյս ունին որ պատասխանատու մարմին մը լինելու դէպքում դրամ կը մտնի Երկիր. կ'առաջարկէ յետաձգել պատասխանատու մարմնի խնդիրը եւ զբաղուել միմիայն ինքնապաշտպանութեան խնդրով որ մեր ներկայ վիճակի եւ ոյժի միակ պահանջն է:

Վարագեան. — Ընկեր Ռոստոմի ասածները որոշ ճշմարտութիւններ ունին, բայց ի նկատի պիտի ունենանք եւ այն տեղերու դրութիւնը՝ որ ռէակցիայի է հասել, ուստի մենք անհրաժեշտաբար պէտք է որ պատասխա-

31.- Այս Նիկոյի կամ Նիկոլի ինքնուրուի ծանօթ չէ մեզի: Նիկոլ Ղուամը չի կրնար ըլլալ. վերջինս այդ օրերուն կը գտնուէր Թաւրիզ:

նատու մարմին մը կազմենք փրկելու համար այդ վայրերը:

Անտոն.— Պատասխանատու մարմնի կազմութեան հակառակ է. նախ որ դրանք կազմուում են մասնաւոր ձեռնարկներու համար. մինչդեռ առհասարակ շրջանները ցանկանում են որ ընկերները գնան եւ ղեկավարեն զիրենք. ինչ որ մեր սկզբունքներուն անհամապատասխան է եւ որոշ չափով արգելք նախաձեռնութեան ոգիի զարգացման մեր շարքերուն մէջ: Բացի դրանից աշխատում են պատասխանատուութիւնը ձգել ուրիշներու վրայ: Քանի որ Վանի շրջանը էական ապրում է քրիթի-քական ընդհանրութեան սահմանակից երկիր, ուստի կ'առաջարկէ, եթէ հնարաւոր է, ուղարկել ընկերներ եւ ուժեղացնել մարմինը:

Թորգոմ.— Գտնում է որ եթէ տեւորներ եւ այլններ չենք ընելու աւելորդ է կազմել պատասխանատու մարմին. աւելի լաւ է ինքնապաշտպանութեան խնդրի հետ կապենք:

Տիգրան.— Գտնում է Մուշի եւ Վանի վրայ պէտք է նայել բոլորովին տարբեր աչքով քան միւս վայրերուն, քանի որ այդ շրջանները կը գտնուին առանձնապատուկ պայմաններու մէջ. ուստի կ'առաջարկէ լուրջ ուշադրութիւն դարձնել եւ զօրացնել այդ շրջանները:

Վեռայեան.— Գտնում է որ ինքնապաշտպանութեան մարմնի եւ պատասխանատու մարմնի դերը նոյնն է եւ կ'առաջարկէ այդ մարմիններու ֆունկտիոնները հաշտեցնելով յանձնել ինքնապաշտպանութեան մարմնին:

Ատոմ.— Նկատելով որ ցարդ մեր պատասխանատու մարմինները եղել են ակտիւ գործունէութեան համար եւ գտնելով որ ներկայ վիճակը չի ներբեր մեզ մտնել ակտիւ գործունէութեան մէջ, կ'առաջարկէ մերթել պատասխանատու մարմնի ստեղծման պահանջը:

Միաձայնութեամբ կը մերժուի պատ. մարմնի գոյութիւնը, թողնելով ինքնապաշտպանութեան մարմնի ֆունկցիաները մէջ մտնել պատ. մարմնի այն ֆունկցիաները որոնք նպատակաւորմար կը նկատուին:

Ընկեր Բժիշկ յանձնախումբի կողմից գեկոյց որ աւելորդ է ունենալ Բիւրոններու հատուածները, քանի որ նրանք չեն կարողանում իրանց դերի մէջ լինել:

Թորգոմ.— Նկատում է որ Արեւելեան Բիւրոյի թրքահայ հատուածը իր դերի մէջ չէ եղել. դրա մէջ մեղաւոր են եւ մարմինները: Գտնում է աւելորդ այդ հատուածի գոյութիւնը:

Ռոստոմ.— Գտնում է աւելորդ Բիւրոններու հատուածները, բայց կարծում է որ ապագայում հարկաւոր կը լինին. լաւ կը համարի Արեւելեան Բիւրոյի թրքահայ հատուածը միայն վերցնել:

Արզապետ.— Գտնում է որ եթէ Արեւել. Բիւրոյի [թրքահայ] հատուածը բաժանուի, այդ դէպքում կուսակցութեան երկու հատուածներու բարոյական կա-

պերը կը թուլանան. ուստի կ'առաջարկէ պահել:

Բաբայ.— Բաժանման կամ թուլացման վախը յետ մղելով կ'առաջարկէ Կարնոյ հատուածը ուժեղացնել որով հնարաւոր չափով կարողանայ աջակցիլ եւ ձեռք տալ Կովկասին:

Տիգրան.— Գտնում է աւելորդ Արեւել. Բիւրոյի թրքահայ հատուածի գոյութիւնը, քանի որ ցարդ նա օգտակար չէ եղել:

Անտոն.— Բաբայի ասածները վրայ աւելացնում է եւ այն որ գործունէութեան տարբերութիւն կայ. պէտք է աշխատիլ ապակեղրոնական դրութեամբ տանիլ. չենք կարող ղեկավարուել կեղրոնից. պիտի աշխատել, որ Երկիրը ինքը ղեկավարէ իրան, եւ նկատելով որ Բիւրոններու աւելանալը ունէ՛ ծրագրային հակասութիւն չունի իր մէջ, եւ քանի որ լրիւ չէ այս Ընդհ. Ժողովը, կ'առաջարկէ պահել նոյն դրութիւնը ինչ որ եղել է նախորդ Ընդհ. Ժողովի որոշումով, կանոնադրական փոփոխութիւն չընելու համար:

Վահագն.— Գտնում է որ Արեւել. Բիւրոյի թրքահայ հատուածի այս տարուայ անգործունէութեան գլխաւոր պատճառները մինն է ազատ գործիչ չունենալը եւ հաւանականաբար յաջորդ շրջանի մէջ էլ չկարողանայ ունենալ. քանի որ մարմիններու բաժանումները ոյժի կարօտ են եւ չպիտի կարողանանք բաւարարութիւն տալ, այսպէս թէ այնպէս ստիպուած ենք կապուել Պոլսի հետ, քանի որ ազգային գործերու եւ կառավարութեան կեղրոնը այդ վայրն է. ի նկատի պիտի ունենալ եւ այն որ այս երկու երկիրներու մէջ տարբեր գործունէութիւն կայ. ապացոյց նախորդ ռեժիմին Արեւել. Բիւրոյի թրքահայ հատուած նշանակելը Թիֆլիսում: Գտնում է որ Կովկասի հետ աւելի շուտ յարաբերութիւն կարելի է պահել Պոլսից քան Կարինից: Ուստի կ'առաջարկէ որ Բիւրոյի այն ընկերները որոնք կը գտնուին զանազան վայրեր՝ այնտեղից կարողանան, կապ պահելով Պոլսի հետ, ղեկավարել գործերը: Անհրաժեշտ կը գտնէ ընկերներ ուղարկել Երկիր, նոյնիսկ Բիւրոյի ընկեր անդամներ: Կ'առաջարկէ մէկ Բիւրո պահել, քանի որ հատուածները կարող են հաւաքաբար գործել:

Նշան.— Նկատելով, որ Պոլսոյ գործունէութիւնը աւելի քիչ ազդեցութիւն կարող է ունենալ Երկրի մէջ, քան այնտեղ գտնուած մարմինը, կ'առաջարկէ Կարնոյ մէջ ուժեղ մարմին մը ունենալ:

Ժողովը նկատելով որ 11 ձայն ունի, որով 2/3 չի կազմեր, չէր կարող քուէարկել, որոշուեց մի ընկեր եւս հրահրել բայց չգտաւ. նկատի ունենալով որ ընկերներից մէկը բացակայել է միշտ եւ պիտի մեկնի, ներկայ 11 ձայները [համարել] օրինական թիւ, 2/3, ընդունելով անցաւ քուէարկութեան: Երկու գլխաւոր առաջարկ կար: 1- Թուրքիոյ մարմինները կապել միմիայն Արեւմտեան Բիւրոյի հետ (ստացաւ 2 ձայն): 11- Պահել նախկին դրութիւնը (ստացաւ 9 ձայն):

Ընկեր Բժիշկ յանձնախումբի կողմից բերաւ եւ այն առաջարկը թէ՛ Բիւրոնները իրաւունք ունենան պատասխանատուութեան կանչել մարմինները եւ անհատ ընկերները խորհուրդի առաջ, ժամանակաւոր կերպով դադարեցնելով նրանց գործունէութիւնը:

Նկատելով որ կանոնադիրը իր մէջ ունի եւ այդ հարցը, որոշեց պահել նախկինը:

Անտոն.— Առաջարկեց հետեւեալ ընդհանուր կէտը աւելցնել կանոնագրի մէջ: Կուսակցութեան ամէն մարմին — Բիւրո, Կեղր. Կոմիտէ եւ այլն — կարող է մասնակցիլ իրմէ աւելի նեղ իրաւասութիւն ունեցող շրջանային ժողովներուն մէկ ձայնի իրաւունքով, իսկ մարմիններուն՝ խորհրդակցական ձայնի իրաւունքով: Այն առաջարկը անցաւ 11 ձայնով:

Ժողովը փակուեց ժամը 1-ին:

Նիստ 19.

7 Սեպտ. 1911 (երեկոյ)

Ներկաներ՝ Պարսկաստանի, Պալքանի, Ամերիկայի, Կարինի, Մուշ-Սասունի, Խարբերդի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Սամսոն-Մարզոսի պատգամաւորները, Բիւրոններու ներկայացուցիչները: Վճռական ձայնով՝ Բաբա. խորհրդակցական ձայնով՝ Սաթո, Մարգալետ, Ասլան:

Ժողովը բացուեցաւ ընկեր Ասլանի նախագահութեամբ: Օրակարգն է շարունակութիւն կանոնագրի քննութեան:

Ընկեր Բժիշկ յանձնախումբի կողմից առաջարկեց թուրքիան բաժանել 2 ռայոնի Ա) Մեծ Հայք Բ) Փոքր Հայք եւ Կ. Պոլիս:

Անտոն.— Այդ բաժանումը այնքան էլ լաւ չէ. աւելի յարմար է Թուրքիան բաժանել 3 մասի Ա) Մեծ Հայք Բ) Փոքր Հայք եւ Գ) Պոլիս՝ որուն մասնակցելու են Պոլիս, Իզմիր, Ատանա, Պալքան եւ այն ծովեզերեայ վայրերը, որոնք հեշտութեամբ կարող են յարաբերուիլ Պոլսոյ հետ եւ ուրիշ ռայոնի մասնակցելու հնարաւորութիւն չունին. եւ քանի որ ռայոններու խնդիրը կապ ունի խորհուրդի գոյութեան հետ, կ'առաջարկեմ տալ Ամերիկային՝ մէկ ձայնի իրաւունք, որ երկու Կ. Կոմիտէի ցենդ ունի: Մէկ ձայն Պարսկաստանին եւ 1 ալ Կովկասին:

Բժիշկ.— Հակառակ է Փոքր Հայքին ձայն տալու գաղափարին. կ'առաջարկէ Կովկասին տալ 2 ձայնով խորհուրդին մասնակցելու իրաւունք:

Վահագն.— Դիտել կու տայ թէ Ե. Ընդհ. Ժողովը որո-

շած է որ այն վայրերը, որոնք 4 ցենդաւոր Կ. Կոմիտէ չունին, չեն կարող Ռայոնական ժողով գումարել: Կ'առաջարկէ այդ որոշումը հիմ բռնել եւ այդպիսիներին տալ միմիայն հաւաքուելու եւ իրենց շրջանի հարցերու մասին մտածելու իրաւունք. իսկ խորհուրդին մասնակցելու իրաւունքը վերապահել համապատասխան ցենդ ներկայացնողներուն:

Վիճարանութիւնները բաւ համարուելով, նախագահը կ'անցնի քուէարկութեան:

Ներկայ 14 ձայներով հետեւեալ վայրերը ճանաչուեցան ռայոններ: Մեծ-Հայք (միաձայն), Փոքր-Հայք (11 ձայն), Պոլսոյ շրջանը՝ Պալքանի հետ (12 ձայն), Կովկաս (միաձայն), Պարսկաստան (12 ձայն), Ամերիկա (12 ձայն): Հինգ Կ. Կոմիտէ ունեցող ռայոնները կ'ունենան 2 ձայնի իրաւունք (անցաւ 12 ձայնով):

Մեկուսի կոմիտէներ.— Թեր ու դէմ կարծիքներէ յետոյ որոշուեցաւ ծայրայեղ պարագաներուն միայն ճանչնալ մեկուսի կոմիտէներու գոյութիւնը եւ իբր այն յարաբերուիլ անոնց հետ, հիմ ընդունելով հետեւեալ պայմանները:

ա) Մեկուսի կոմիտէներ կրնար ճանաչուիլ անոնք՝ որոնք ամենամօտ Կ. Կոմիտէէն հեռու են 3 օրով (10 ձայն):

բ) Մեկուսի կոմիտէի շրջանային ժողովին կը մասնակցի Բիւրոյի ներկայացուցիչը (միաձայն):

գ) Մեկուսի կոմիտէները Բիւրոյին յանձնելու են թէ Կոմիտէի եւ թէ Բիւրոյին յանձնելիք գումարները (միաձայն):

դ) Մարմին մը մեկուսի կարող է լինիլ միմիայն խորհուրդի որոշմամբ:

Առաջարկուեցան հետեւեալ վայրերը ճանչնալ մեկուսի կոմիտէ.— Կեսարիա, Այնթապ, Գարահիսար, Երզնկա, Մալաթիա, Եգիպտոս, Ուրֆա, Ատանա, իսկ մնացեալները մերժուեցան:

Հինգ վայրկեան դադարից յետոյ ժողովը անցաւ պրոպագանդի եւ իթիւհատի բանաձեւերուն:

Պրոպագանդ.— Այս մասին յանձնախումբը բերաւ հետեւեալ բանաձեւը:

Գրաւոր պրոպագանդ

Ընդհանուր ժողովը, քննութեան առնելով, գրաւոր ու բանաւոր պրոպագանդի խնդիրը, որոշեց՝

«Երօջակ».— ա) «Երօջակ»ը, կուսակցութեան պաշտօնական օրգանը, հրատարակել ամիսը մի անգամ, նոյն դիրքով բայց կրկնակ ծաւարով: Նա պիտի ունենայ տեսական, յեղափոխական-պատմական ու մարտական-գրական բաժիններ ու միաժամանակ տեղ պիտի տայ լուրջ ու ամփոփ տեղեկագրերու երկրի տնտեսական ու սոցիալական վիճակի մասին:

բ) Բացարձակապէս վերացնել «Երօջակ»ի ճրի տարածումը եւ ուղարկել միայն նրանց, որոնք կը վճարեն

տարեկան բաժնեգրին (5 ֆրանկ):

գ) Պաշտօնական օրգանը հրատարակել Դաշնակցութեան գործունէութեան վարչերից դուրս:

«Ազատամարտ».— ա) Ճանաչել «Ազատամարտ»ը իբրև Թուրքիոյ շրջանի կիսապաշտօնական թերթը:

բ) Յանձնել Բիւրոյին՝ կազմել թերթի համար դեկավար մարմին, բաղկացած 3 հոգուց (մէկը խմբագրութեան կողմից, երկրորդը վարչութեան եւ երրորդը՝ Բիւրոյի կողմից):

գ) Դադարեցնել «Ազատամարտ»ի որեւէ դրամական նպաստ տալը կուսակցական ընդհանուր արկղից, թողնելով ի հարկին այդ խնդրի կարգադրումը շրջանային ժողովին:

Թերթեր.— 1) Բոլոր Կ. Կոմիտէները, ըստ կանոնագրի 181րդ յօդուածի, իրաւունք ունին թերթ հրատարակել, առանց դուրս գալու իրանց պրոպագանդի պիւստէից:

2) Որեւէ Կ. Կոմիտէ թերթ հրատարակելուց առաջ, պէտք է առնէ համաձայնութիւնը քոնթրոլի մարմնին (հաշուեքննիչ) ներկայացնելով իր դրամական վիճակը եւ խմբագրական կազմը:

Հրատարակութիւններ.—

Բազմակողմանի կերպով քննութեան ենթարկելով կուսակցական հրատարակութիւնների խնդիրը այլեւ նկատելով,

1) Որ մեր կուսակցական հրատարակութիւնների սպառումը բաւականաչափ կազմակերպուած չըլլալով՝ չեն ծառայել իրենց նպատակին եւ տարիներ շարունակ կը մնան իբրև մեռած դրամագլուխ:

2) Որ այս երեւոյթը հետեւանք է մէկ կողմէն անոր որ՝ հրատարակութիւններու տարածումը ստանձնող կուսակցական անհատները կամ մարմինները նիւթապէս չեն շահագործուած այդ գործով. իսկ միւս կողմէն անոր որ՝ գրքերու ոչ միայն բովանդակութիւնը, այլ եւ յաճախ լեզուն անմատչելի կը մնան կուսակցութեան լայն խաւերուն:

3) Որ վերջապէս բանաւոր պրոպագանդը նախապայման է գրաւորին յաջողութեան:

Ընդհ. ժողովը նպատակայարմար կը գտնէ՝

1. Մասնաւոր շահագործման հիմերու վրայ դնել հրատարակութիւններու գործը:

2. Համընթաց ուղղութիւն տալ բանաւոր եւ գրաւոր պրոպագանդին.

3. Յանձնարարել Բիւրոյին կազմել ձեռնհաս ընկերներէ մարմին մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ՝

ա) կազմել ընթերցանութեան ուղեցոյց մը եւ դասաւորել եղած հրատարակութիւնները ըստ նիւթի եւ բովանդակութեան աստիճանական բարդացման:

բ) կազմել համառօտ բառարան օտար բառերու եւ գիտական-մասնագիտական տերմիններու: գ) Որոշել

նոր հրատարակութիւններու նիւթերը, ըստ իրենց աստիճանական բարդացման: դ) Հսկել լեզուի մաքրութեան եւ մատչելիութեան վրայ: ե) Կանոնաւորել հրատարակման եւ սպառման գործերը:

Նոր հրատարակութիւններու բովանդակութիւնը պիտի կազմեն՝

1. Յիշողութիւններ եւ էջեր հայ եւ օտար յեղափոխական կեանքէ.

2. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար.

3. Ուսումնասիրութիւններ հայաբնակ շրջաններու տնտեսական եւ քաղաքական վիճակի. վիճակագրական տեղեկագիրներ:

4. Ընկերային եւ տնտեսական տեսութիւններ եւ իրենց լուսաբանութիւնը:

5. Գիտական այլեւ այլ ճիւղերու վերաբերեալ դիւրամատչելի հրատարակութիւններ, մասնաւորաբար ոյժ տալով այնպիսիներուն, որոնք կ'արթնցնեն քննադատական միտքը եւ կը փարատեն նաշապաշարումները:

6. Հրատարակութիւններ, որոնք կը լուսաբանեն եւ կը քննեն Հ. Յ. Դաշնակցութեան Մրազրի տեսական դրութիւնները եւ սկզբունքները:

Բանաւոր պրոպագանդ.—

Կուսակցական դեկավար մարմինները, շրջանները եւ պատրաստուած ընկերները իրանց ուժերի ու ժամանակի որոշ մասը պարտական են նուիրել բանաւոր պրոպագանդի, կազմակերպելով պրոպագանդային դասընթացներ, որով առաջնորդուելու են դասախօսներն ու պրոպագանդիստները. մատակարարելով դրա հետ միասին դասախօսներին, եթէ կարիք լինի, հարկաւոր գրականութիւնը (դասընթացք հաստատող մարմինների ծախքով):

Ժողովը նկատելով որ բանաձեւը իր մէջ կը պարունակէ եւ զանազան մանրամասնութիւններ, միմիայն գլխաւոր ուղղութիւնները քուէարկեց. այն է՝

ա) Ուղղութեան բաժինը (անցաւ միաձայն)

բ) Մասնաւորի գործ դարձնելու առաջարկը (մեծամասնութեամբ անցաւ).

գ) Յանձնախումբի ընտրութիւնը Բիւրոյին թողել առաջարկը՝ մեծամասնութեամբ:

Իթիբիհատի բանաձեւը.— Կարդացուեցաւ կրկին սրբազրուած բանաձեւը՝ այս խնդրին վերաբերեալ, որուն շուրջ դարձեալ կարծիքի փոխանակութիւն տեղի ունեցաւ:

Վահագ.— Նկատեց որ նախորդ բանաձեւերու մէջ նկատուած էր կէտ մը, ուր կը շեշտուէր հետեւեալը — պահանջել իթիբիհատին լայն եւ դեմոկրատիկ գործունէութիւն երկրի մէջ:

Ուստով.— Մենք հիմք պիտի վերցնենք մեր համա-

ձայնութեան կէտերը, եւ ոչ թէ այնպիսի կէտեր՝ որոնց մասին նոյնիսկ չենք մտածել. մեր այս քննադատութեամբ կարծես ուզեցել ենք որ իթիբիհատը մեր ծրագրով ընթանայ:

Անտոն.— Գտնում է որ մեր նկատումները պէտք է մեղմացնել, բայց պահանջներու մէջ պէտք է աւելացնել երկրի ընդհանուր պահանջներու մասը եւ լաւ կը լինի մեր դիմումը ընէինք ոչ թէ քոնկրէին, որը կարող է չկայանալ կամ կայանալու դէպքում³² մեզ չընդունիլ, այլ իթիբիհատին:

Սուրէն.— Գտնում է որ նկատումները շատ լաւ են, բայց մեր որոշումները մեղմացնում են դրանց. լաւ կը լինի որոշումները խստացնել

Թորգոմ.— Փոխանակ կառավարութեան եւ իթիբիհատի դերերը բաժանելու, մենք կառավարութեան դերին համար ալ իթիբիհատին ենք մեղադրում. մեր նկատողութիւնները վերաբերում են ե՛ւ կառավարութեան ե՛ւ իթիբիհատին, իսկ որոշումները կեդրոնանում են իթիբիհատի վրայ:

Տիգրան.— Կը ձայնակցի Թորգոմին եւ կ'առաջարկէ բաժանել պատասխանատուութիւնը:

Վահագ.— Մենք գծեցինք մեր դիրքը հանդէպ իթիբիհատի, բայց ոչ մի որոշում հանդէպ կառավարութեան. կ'առաջարկէի որ Ընդհ. ժողովը լուրջ մտածէ եւ ապագային գործելու ուղի մը գծէ:

Ատոմ.— Գտնում է որ չի կարելի խիստ վերաբերել. այդ կառավարութիւնը չի ունեցել այն ուժը՝ որով կարողանայ դեկավարել, բայց կայ նրա մէջ տարր մը որոնց մէջ եւ գինուորականներից շատեր կան, կարող են աւելի գիտակցութեան հասնիլ եւ ոյժ ստանալով կառավարութեան դեկը ձեռք առնել. մենք պարտաւոր ենք քաջալերել եւ ոյժ տալ իթիբիհատի մէջ կատարուած խըմորումներուն եւ այդ ձեւով է որ կարող կը լինինք երկիրը փրկել:

Վահագ.— Կը գտնէ որ իթիբիհատի կարծեցեալ խմորումներուն վրայ յոյս չենք կարող դնել. պէտք է մեր դժգոհութիւնները արտայայտել, որպէսզի ցոյց տանք թէ՛ կառավարութեան, թէ՛ իթիբիհատին որ հայ տարրը, միակ սահմանադրասէր ժողովուրդը, դժգոհ է. կարող է ազդել եւ իթիբիհատի եւ կառավարութեան վրայ. անհրաժեշտ կը գտնէ որ մենք եւ մեր պատգամաւորները արտայայտուին երբ պարագան գայ. ուստի կ'առաջարկէ Ընդհանուր ժողովին՝ լուրջ ուշադրութիւն դարձնել այս հարցին:

Մեր կարծիքը յայտնել անհրաժեշտ է. ի նկատի ունենալու է որ հայ ժողովուրդը մեր վրայ է դրած իր յոյսը եւ սպասում է մեր կարծիքը լսել:

Անտոն.— Գտնում է որ խիստ արտայայտուիլը այնքան էլ յարմար չէ, քանի որ մինչեւ նոր պարլամենտի ընտրութիւնները ինք՝ իթիբիհատն էլ երբեք չէր օրութիւն ունի. այդ ընտրութիւններից կախուած է նրա վի-

ճակը եւ եթէ այժմ արտայայտուինք՝ կարող է եւ մեզ համար վնասակար լինել:

Նկատելով որ բանաձեւը ունէր դեռ պակաս կէտեր՝ յանձնուեց ընկեր Ասլանին որ լրացնելով ներկայացնի յաջորդ նիստին:

Ժողովը փակուեց ժամը 8.30ին:

Նիստ 17.

8 Սեպտ. 1911 (երեկոյ)

Ներկաներ՝ Բիւրոններու ներկայացուցիչներ, Ամերիկայի, Կարինի, Տրապիզոնի, Մուշ-Սասունի, Պարսկաստանի, Պալքանի, Տրապիզոնի, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Խարբերդի պատգամաւորները. վճռական ձայնով՝ Բաբա, Ա.Ս. Խորհրդակցական ձայնով՝ Վարագդատ, Մելօ, Մարգպետ, Սաթօ:

Օրակարգն է Հողային խնդիրը: Այս մասին ընկեր Անտոն կարդաց գրաւոր զեկուցումը յանձնախումբի կողմից եւ ներկայացուց պատրաստուած բանաձեւը:

Ատոմ.— Ընկեր Անտոնը շատ մանր հարցեր է շօշափել, որոնք աւելորդ էին. Գեղամի գրածը, ունի չափազանցութիւններ. կարելի է այս հարցը 2 գլխաւոր մասերու բաժանել: 1- ժողովրդային բանկերու չգոյութիւնը որ գիւղացին կարողանար յարմարագոյն տոկոսներով դրամ առնել: 2- Որ հայը օրէնքէն դուրս է ձգած հին ռեժիմը. ինձ համար աս է կենսականը. հողերու գրաւումով՝ հայը կտրուեց երկրէն եւ օրէնքը փոխանակ ժողովրդին պաշտպանելու՝ ընդհակառակը դեռ կարողանում է մուհաճիւններ բերել եւ տեղաւորել հայկական շրջաններում: Ինձ ցաւ չի պատճառում որ նոր բռնատէրեր են երեւան եկել. ինձ համար նոյնն է թէ անոնք հին են կամ նոր. ցաւը նոյնն է որ այդ գրաւումները վաւերացում են կառավարութեան կողմից. երբ բռնատէրը ցոյց է տալիս մուրհակը՝ ընդունում է կառավարութեան կողմից եւ երբ ցոյց են տալիս որ դա կեղծ է՝ չեն ուզում լսել եւ ուղարկում են դատարան: Ընկեր Անտոնը դիմում է երկրագործական պանքայի միջնորդութեան, այն պանքային՝ որը աւելի վատ է անում. իբր թէ տալիս է էժան տոկոսով փող, բայց ժամանակից մի օր աւելի չի սպասում եւ աժան գնով ծախել է տալիս հողը, ինչպէս անում են աւատապետները: Ներկայ կառավարութեան յայտարարութիւնը ոչինչ չի տալիս մեզ այսօր. կարող է այդ ձեւով յայտարարել, հպուց բոլորովին ուրիշը կու տայ. մենք դրանց վրայ յոյս չենք կարող

32. - Չեռագրիմ մեջ՝ «չկարողանալ կամ կարողանալու դէպքում». ըստ իմաստի վերածեցինք՝ «չկայանալ կամ կայանալու դէպքում»:

դնել. մեզ մնում է կամ յեղափոխութեան միջոցով անել, կամ արմատական՝ պարլամենտի միջոցով, երբ կառավարութիւնը կ'անցնի արմատական եւ լաւ անձնաւորութիւնների ձեռքը: Ես կարծում եմ, որ եթէ կառավարութիւնը բարեհաճի օրէնքի ճիշդ գործադրութեանը ձեռնարկել, մենք կարող ենք բաւարարութիւն ստանալ. ուստի անհրաժեշտ է մեզ կանգ առնել այդ հարցի վրայ: Կ- Յեղափոխական ճանապարհով ստիպենք այդ խնդրի լուծումը. այս հարցին մեծապէս պիտի նպաստէ մեր ուժը. երկրորդ՝ գաւառական լաւ փաստաբաններ ունենալով:

Վարանդեան.— Ընկեր Ատոմ այդ ասելով չի ուզում քուէարկել այդպիսի բանաձեւ. բայց ես կարծում եմ, որ մենք անհրաժեշտաբար օրինական ձեւերով պիտի գործենք եւ քանի որ մեր գլխաւոր գործն է հողային խնդիրը, ուստի կ'առաջարկեմ քուէարկել այդ բանաձեւը:

Ատոմ.— Քանի որ մեր տեղեկութիւնները դեռ հիմնական չեն եւ Գեղամի բերածը ունի մեծ թերութիւններ, կ'առաջարկեմ որ բոլոր գաւառական մարմինները լուրջ ուսումնասիրութիւն-վիճակագրութիւն կատարեն այս խնդրի առթիւ: Կառավարութիւնը ուշադրութիւն չի դարձնում. մեր տուած տեղեկութիւնները ոչինչ են մի քանի կուսակալների տուած յայտարարագրի համեմատութեամբ. բայց ինչ դուրս եկաւ. ոչինչ: Կ'առաջարկեմ փոխանակ գանազան նորութիւններ եւ մանրամասնութիւններով մէջ մտնելու պահանջներ օրէնքի գործադրութիւնը:

Թորգոմ.— Կը գտնէ որ գեկուցումի մէջ թերութիւններ կան: Տիգրանակերտի մէջ աւելի վատ է հողային դրութիւնը. կու տայ մի քանի օրինակներ եւ կ'առաջարկէ աշխատել գաւառները տեղաւորել սոցիալական գաղափարներով տոգորուած փաստաբաններ:

Աուրէն.— Կը գտնէ որ այս հայածանքը շատ երկար ժամանակ է ի վեր սկսած է. ամէն շրջան նոյն դրութիւնն է. ես համաձայն եմ Ատոմին. բաւական է որքան լացինք խնդրանքներով եւ դիմումներով. աւելի լաւ կը լինի մի քիչ էլ տարբեր միջոցներով վարուիք, մեր ուղղութիւնը պիտի լինի այդ. եթէ ոյժ տեսնեն, չեն կարող այդքան էլ առաջ գնալ:

Մարգալետ.— Գտնելով որ խնդիրը շատ պարզ է եւ խոր ու ցաւալի որ երկարել կարիք չկայ. կ'առաջարկէ դեկլարացիայով մը բողոք ներկայացնել:

Ռոստոմ.— Գտնում է որ մեր ընկերները շատ սխալ են տարել բանակցութիւնները. իթթիհատականները աշխատել են մեզ խաբել. մի օրուայ որոշումը աշխատել են միւս ժողովում ուրիշ առաջարկ բերելով անվերջ ձգձգել: Կ'առաջարկեմ մեր եկած եզրակացութեան վրայ հաստատ մնալով՝ գայն չփոխել, այլ կանգ առնել պահանջի վրայ:

Վահագն.— Անտոնի եւ Ատոմի առաջարկներուն մէջ

տարբերութիւն չկայ. մին ուզում է լուծել խնդիրը վարչական միջոցով, միւսն ալ համարեա նոյնը՝ տարբեր ձեւով: Զիս կը զբաղեցնէ այն հարցը թէ, եթէ լուծում չստանանք ինչ դիրք պիտի բռնենք. ինչով ենք արտայայտուելու. այս է որ մեզ պիտի առաջնորդէ, ուստի կ'առաջարկեմ լուրջ մտածել: Ես կ'առաջարկեմ պարլամենտի մէջ ընկերներով եւ գանազան տեղեր՝ մարմիններով եւ պատրիարքարանի միջոցով՝ ընդհանուր եւ միօրինակ բողոք՝ հրապարակային եւ այլ տեսակի: Մենք այժմ կարող ենք նոյն իսկ Հագգը փաշայի դահլիճը ամբաստանել պրովոկացիայի եւ ընդհանուր ջարդի մէջ. ժողովուրդը կը սպասէ թէ ինչ դիրք պիտի բռնէ Դաշնակցութիւնը. ուստի անհրաժեշտ է մեր ուղին գծել որ մարմինները կարողանան գործել: Այս պարագային մենք չենք կարող լուրջ. լուրջ մեր մահն է. անհրաժեշտ է որ մենք սկսինք մեր յարձակումները կառավարութեան դէմ միթիւնկներով՝ սկսած Պոլսէն: Այս օրուայ նախարարի յայտարարութիւնը մեզի իրաւունք կու տայ հարցապնդում ընել կառավարութեան եւ պահանջել լուծում: Եթէ քիւրտերը կարող են ջարդ յառաջ բերել եւ ինքը վստահ է, ինչու՞ զօրք չ'ուղարկել գաւառները:

Վեշապ.— Գտնում է որ իթթիհատի եւ կառավարութեան դէմ մեր բողոքը եւ որոշումը նոյն ձեւով պիտի լինի: Ես համաձայն եմ ընկեր Վահագնի որ պէտք է բողոքի միթիւնկներ գումարել. պէտք է կառավարութեան եւ իթթիհատին հասկացնել թէ իրենց կոտորելու քաղաքականութիւնը մեզ յայտնի է, որ նրանց տնտեսական հալածանքը հայութեան մահուան խնդիրն է. համաձայն եմ որ փաստաբանները օգտակար կը լինին. բայց աւելի էականը ինքնապաշտպանութիւնն է: Երբ Կորիւնները կարողանում են մի շրջան կամ գիւղ փրկել, ուրեմն Հ. Յ. Դաշնակցութիւնը ունի իր մէջ ահագին թուով կորիւններ. երբ ժողովրդին մէջ կայ ինքնապաշտպանութեան ոգին, անհրաժեշտ է որ զարգացնենք եւ դա կը դառնայ կենդանի բողոք, որով կառավարութիւն եւ իթթիհատ կը տեսնեն որ այլ եւս չէ կարելի մարսել հայուն իրաւունքը:

Վարանդեան.— Գտնում է որ պէտք է խնդիրները չբաժանել. ընկեր Վահագն հողային խնդրի շուրջ միայն կանգ առաւ. իսկ ես գտնում եմ՝ քանի որ բողոքներով մասին սկսանք խօսիլ, մեր բոլոր պահանջները դնենք կառավարութեան:

Վարագդատ.— Համաձայն լինելով ընկեր Վահագնի հետ կ'առաջարկէ եւ գաւառներում դիմել խիստ միջոցների, որ կարելի լինի խնդիրը աւելի շուտ լուծել եւ կամ լսելի ընել կառավարութեան:

Ատոմ.— Առաջարկում է չորդեգրել ո'եւէ արտաքին ցոյց, քանի որ դա մեզ չի օգնի, այլ կը վնասի մեր դատին:

Անտոն.— Մենք չպիտի լայնցնենք մեր տեսութիւնները,

որ, քանի որ ոչ միայն Տիգրանակերտի այլ եւ Սղերդի շրջանում կայ. մեզ համար թիւը կամ տարածութիւնը չէ որ դեր պիտի խաղայ, այլ իրականութիւնը. դրա համար վիճակագրութիւնը մեզ այնքան անհրաժեշտ չէ, թէ եւ աւելի լաւ կ'ըլլար ունենալ: Օրէնքները բաւական չեն, այլ պէտք է որ օրէնքը բացատրող կէտեր ալ ունենայ. օրինակ մի գիւղ որ ունի որոշ վարելու հող, ունենալու է իր արօտատեղին: Նոյնպէս՝ երբ երկու հոգի գնում են կառավարութեան իրանց ձեռքին ունենալով նոր եւ հին քոչաններ³³, պէտք է իրաւունք տրուի հողը մշակողին: Նմանապէս՝ գաղթականների խնդիրը. վերադարձող հայ գաղթականներին տալ նպաստ, ինչպէս տալիս են մուհաճիւրներին: Դարձեալ՝ անհրաժեշտ է պաշտօնեաներու փոփոխութիւն. եթէ այս կազմը մնայ, երբ ամբողջ Մուշի մէջ մի հայ ժանտարմ չի լինի, ոչ մի օգուտ չենք ունենար. ի նկատի պէտք է ունենալ որ մեր շրջանը կուտելու ցանկութիւն չունի: Այն շրջանը որ ունեցել է յեղափոխական անցեալ եւ անցեալում ուր մահը աւելի շատ էր քան ծնունդը, մինչ այժմ ծնունդը կրկնապատկուել է. եթէ ի նկատի առնենք եւ տնտեսական ներկայ դրութիւնը՝ շատ աւելի լաւ պիտի գտնենք ան, քան անցեալը. մենք անցեալ Ընդհանուր ժողովին մէջ որոշեցինք լեկալիզացիայի ենթարկուել, իսկ այժմ յանկարծ ուզում ենք յեղափոխական աքթիւ գործ կատարել. դա կը վնասէ մեզ, մեր հմայքը կորսուած է, լաւ է առայժմ զիջող լինենք եւ ներքին ոյժը բարձրացնենք. այդպէսով երբ ոյժ կ'ունենանք՝ կարող ենք անել եւ օրինականը եւ ոչ-օրինականը:

Ժամանակը լրացած ըլլալով, նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ 16.

9 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Պարսկաստանի, Ամերիկայի, Կարինի, Վանի, Խարբերդի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշ-Սասունի, Ուս. միութեան, Սամսոն-Մարգուանի պատգամաւորները, Բիւրոներու ներկայացուցիչները. վճռական ձայնով՝ Բաբա. խորհրդակցական ձայնով՝ Վարագդատ, Ասլան, Մելքում, Մարգալետ, Վահան:

Նախագահում է ընկեր Ասլան: Օրակարգն է՝ հողային հարց:

Երէկուայ նիստին մէջ առաջադրուած հարցի մասին արդէն վիճաբանութիւններ կատարուած ըլլալով՝ նախագահը քուէի դրաւ մէկ-երկու էական սկզբունքներ.

այսպէս (1) Վարչական եղանակով եւ արդէն գոյութիւն ունեցող օրէնքներով հողային հարցը լուծելու տեսակէտը ստացաւ 12 ձայն եւ անցաւ իբրեւ որոշում:

Վահագն.— Իմ կարծիքով, հողային խնդրին հետ պէտք է կապել նաեւ ապահովութեան հարցը. քանի որ իրարու հետ շատ սերտ կապով կապուած օրինակներ կան. Վարագայ վանքի, Սանասարեանի հողային խնդիրները շատ բնորոշ են:

Անտոն.— Ապահովութեան խնդիրը պէտք էր կապել աւելի «Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը» խնդրին. թէ եւ կ'ընդունիմ որ ապահովութեան հարցը կապուած է բոլոր հարցերուն հետ, բայց լաւ է այժմ հողային խնդիրը առանձին լուծենք, իսկ գալով ապահովութեան խնդրին՝ այդ ընդհանուր տակտիկը ճշդելու ատեն կարելի է որոշել:

Վարանդեան.— Երկու կարծիք կայ — մէկ մասը կ'ուզէ որ հողային խնդրին կապուի նաեւ ապահովութեան խնդիրը, այն ինչ ուրիշներ կ'ուզեն գատել:

Նախագահը.— Ընդհանուր տրամադրութիւնը հողային հարցը առանձին քննելու տեսակէտին կողմնակից է, ուստի աւելորդ է քուէի դնել. թող ընկեր Անտոն կարդայ իր բանաձեւը որպէսզի իր բանաձեւը քուէարկուի:

Քուէարկութեան համար ներկայ են 14 ձայն. ընկեր Անտոն կը կարդայ իր հետեւեալ բանաձեւը, որ ընդունուեցաւ միաձայնութեամբ:

1) Նկատի ունենալով որ շնորհիւ հայկական շրջանների մէջ համիտեան ռեժիմի եւ մանաւանդ 1890-1908ին իշխող բացառիկ ճնշումներով՝ բռնութեան, կեղծիքի, կողմնապահութեան, օրէնքի բացակայութեան — հայ հողագործը գրկուել է աշխատանքի եւ ապրուստի ամենաանհրաժեշտ միջոցից՝ հողից, հարկադրուած՝ տարեկան հասոյթին 40-80%ը այս կամ այն ձեւով վճարելու բռնակալներին ու դրամատէրերին:

Նկատելով որ առանց այդ բացառիկ ճնշումների հետեւանքների վերացման, հայ ճնշուած տարրին համար մեռած տառ կը մնան սահմանադրութիւնն ու արդարութիւնը եւ ընդհակառակը՝ բռնակալները, յափշտակիչները, գեղծարարները (սահմանադրութեան, օրէնքի ու կառավարութեան ձեռնպահութեամբ) կրնան խրախուսուիլ, պատեհ առթիւ նոր օրինազանցութիւններ գործելու համար:

2) Ընդունելով որ Օսմանեան երկրի հողային օրէնքների իմաստով իսկ հողը վերապահուած է մշակողին եւ հայերի հողերի կատարուած փոխանցումները արդիւնք են կամ բացարձակ բռնութեան, կամ հայերի գաղթեցնելուն ճնշման տակ եւ կամ անարժան պաշտօնեաների

33.- Քոչաններով — կալուածաթուղթերով, սեփականութեան փաստաթուղթերով: Նոյն իմաստով կը գործածուի նաեւ թափու:

կողմէ օրէնքներու կեղծելուն կամ չիլ մեկնաբանութիւններ անելուն:

3) Համոզուած որ աւատական մնացորդներով լեցուն հայ-քրտական շրջաններու մէջ ամէն մի աւատականի կողմից ամենաչնչին հողի տիրանալը համահաւասար է դրանով իսկ ամբողջ գիւղին ու շրջանի վրայ իշխելուն, անվերջ բռնութիւնների հետ միասին:

4) Դիտելով որ իսլամ մուհաճիրներին անուան տակ վերջին պատերազմից յետոյ օսմանեան հողն են գաղթած եւ կը շարունակեն գաղթել շատ անգամ աւագակութեան ու գողութեան համար հալածուողները, որոնց հողերը կը յանձնուին ռուս գաղթականներին³⁴ որ մուհաճիրները մեծ մասամբ կը տեղաւորուին հայերի իբր թէ ազատ կամ մահլիճ³⁵ համարուած գետինների վրայ, զանց առնելով Միջագետքի բերրի բայց ամալի դաշտերը եւ խոյս տալով հայկական շրջանի հողաշատ մահմետական գիւղերէ, որոնց հանդէպ մուհաճիրները անկարող պիտի լինէին ցանկացած բռնութիւնները կատարելու:

5) Տեսնելով դրա հետ միասին, որ յանուն նոր կարգերու եւ սահմանադրութեան, տասնեակ հազար հայ հալածուածներ մնալով օտարութեան մէջ առանց հողի, դարձած են այսօր մայր երկիր, բայց կը գտնուին թշուառ վիճակի մէջ առանց հողի, անասունի, իրենց հողերը անցած տեսնելով զանազան կարգի բռնաւորների ձեռքը:

6) Վստահ որ շահագրգռուած եւ խապիլական աշխարհահայեացք ունեցող եւ այն էլ տեղացիների մի տարրից միայն կազմուած պաշտօնէութիւնը իր աշառութեամբ ու կողմնապահութեամբ, բնականօրէն պիտի ստեղծէր վերը յիշուած անարդար կացութիւնը, ապագային նկատմամբ եւս չխոստանալով աւելի յուսալի արդիւնք:

Ընդհ. Ժողովը որոշում է.

1) Հայ տարրի 1895ին գոյութիւն ունեցող հողային status-quo-ի վերահաստատումը համարել կառավարութեան արդարամտութեան եւ կուսակցական համերաշխութեան ամենաէական պայմաններից մին: Հողային թալանի խնդիրը լուծուելու է գոյութիւն ունեցող հողային օրէնքների հիմնական սկզբունքներու հիման վրայ, որ կը տրամադրէ հողը ապահովել աշխատողին, վարչութեան ուժով վերացնել կատարուած բռնութիւն եւ զեղծումներ, օրէնքի խեղաթիւրումներ. աւելի բարդ դէպքում խնդրի կարգադրութիւնը թողնելով խառը մարմիններին:

2) Մուհաճիրների եւ այլ հողագուրկների համար ազատ հողեր փնտռելիս, վերջիններիս մէջ չհամարել գիւղերի արօտատեղիները, մարաները(?), բալթալիքները(?), ճլաստանները(?), անտառները ինչպէս եւ առանց քոչանի մշակուող հողերը: Ամէն պարագայի մէջ կովկասից եկած կամ գալիք գինուած եւ կասկածելի աշխատաւորութեան ու բարոյականի տէր գաղթականներին տեղաւորել Ջօրի եւ Միջագետքի հողաշատ եւ այլ շրջանների մէջ, ամենածայրայեղ դէպքում միայն տեղ տալով հայկական շրջանների մէջ կամ կից, 8 ժամէն ոչ պակաս հայ գիւղացիներին հողային սահմաններին:

3) Իսլամ մուհաճիրներին վերապահուած հողային, հարկային եւ այլ կարգի օժանդակութիւնները տարածել օսմանեան երկրէն դուրս փախած ու վերադարձածների վրայ, ինչպէս եւ այն գիւղերի, որոնք աւերուած ու թալանուած են համիտական ռեժիմին դէմ կուռելու համար:

4) Հայ գիւղերից հեռացնել բոլոր այն ոչ-հայերին որոնք առնելիքների կամ այլ պատրուակներով 1890-ից ի վեր հաստատուած են հայ գիւղերի մէջ, խառը մարմինների միջոցաւ քննելով անոնց բռնօրէն հաստատած բնակութեան պատճառի էութիւնն ու իրաւասութիւնը:

5) Վերաքննութեան ենթարկել 1890-ից ի վեր էրաֆների, քաղաքացիների եւ այլ ազդեցիկների կատարած հողային գրաւումները, օրինականութեան դէպքում այդպիսիների հողերը (փոխանցումների կամ յատուկ վարձատրութեան միջոցով) միացնել մէկ կտորի մէջ (իր բնական սահմաններով), իսկ մրիպահ հողագործներին հող տալով սեփական խալի հողերէն:

6) Իբրեւ գրաւական անաչառ վարչութեան եւ օրէնքի գործադրութեան ու կեդրոնի հրահանգների գործադրութեան, օր առաջ վերակազմել հայկական գաւառների վարչութիւնը եւ ժամտարմըրին, տեղացիների տեղ նշանակելով դրսեցի պաշտօնեաներ, որոնց մէջ իսլամ պաշտօնեաների հետ լինելու են նաեւ հայեր (վերջիններիս թուի համեմատ):

Հողային խնդրին շուրջ մարմինները ինչ հարց որ ստանան, պէտք է ուղարկեն Բիւրոյին կազմելու համար ընդհանուր ցուցակներ:

Որոշուեցաւ հողային խնդիրը վերջացած նկատելու յանձնարարուեցաւ յանձնախումբին խմբագրել վերջնական բանաձեւը, նկատի ունենալով նաեւ իրաւաբանական տեսակէտները:

Վահագն.— Քանի որ հողային խնդրին առթիւ առայժմ ուրիշ ըսելիք չունինք, կ'առաջարկեմ անցնել «Դաշնակցութեան տակտիկի մասին», ճշդելու համար յառաջիկային մեր բռնելիք ընթացքը:

Վարանդեան.— Կ'առաջարկեմ հետեւեալ բանաձեւը.— Ընդհ. Ժողովը կը յանձնարարէ իր ձեռնհաս մարմիններուն, փարլամենթի դաշնակցական երեսփոխաններուն եւ դաշնակցական ընկերներուն պայքարիլ կառավարութեան հակահայ քաղաքականութեան դէմ, այն

34.- Ըսել կ'ուզէ – Ոուսիայէն եկած թրքացեղ գաղթականներու: 35.- Մահլիճ – պետական սեփականութեան հող:

բոլոր միջոցներով՝ որ կը թելադրեն օրէնքը եւ կացութիւնը: Բանաձեւը անցաւ միաձայնութեամբ եւ որոշուեցաւ միացնել իթթիհատի բանաձեւին:

Անտոն.— Անցեալ օր խօսելու ատեն ես յայտնեցի, թէ ի՞նչ ընթացք պէտք է ունենանք. թէ եւ մենք շատ տեսակ պահանջներ ենք ներկայացուցած, բայց գոնէ անոնց մէկ մասը եթէ գործադրուին, այն ալ բան մըն է: Գալով քիւրտներուն՝ անոնց հետ պէտք է համերաշխիլ քանի որ քիւրտ աշխատաւորութիւնն ալ մեզ պէս հետաքրքրուած է հողային խնդրով եւ անոնց հետ կրնանք աշխատիլ: Իսկ հակառակ պարագային եթէ կառավարութիւնը չուզէ գոհացում տալ՝ կ'առաջարկեմ դիմել օրինական ամէն միջոցներու:

Տրուած որոշումը այս մասին բաւ համարուեցաւ: Ժողովը թէ եւ ուզեց անցնիլ ազգային-մշակութային խնդրին, բայց բանաձեւը լրիւ չըլլալուն՝ յետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Կարդացուեցաւ ինքնապաշտպանութեան գործի համար համապատասխան մասնախումբի կողմէ պատրաստուած բանաձեւը, որուն իբր լրացուցիչ կարդացուեցաւ նաեւ ընկեր Անտոնի բանաձեւը: Այդ բանաձեւերէն միաձայնութեամբ ընդունուեցան հետեւեալ կէտերը:

1) Ինքնապաշտպանութեան գործը տանելու համար Ընդհ. Ժողովի կողմից ընտրուում է յատուկ մարմին, որի տրամադրութեան տակ է դնելու կեդրոնական կասսայից ինքնապաշտպանութեան յատկացուելիք գումարները:

2) Տեղական մարմիններից կը գատուին տեղական ինքնապաշտպանական մարմիններ, որոնց տրամադրութեան տակ կը դրուի կուսակցական գոյքը եւ տեղական հասոյթների նոյն գործին յատկացուելիք տոկոսը:

3) Կուսակցական ուժերի մի մասը զբաղոււմ է ինքնապաշտպանութեան գործի մէջ իր ձեռքն անցնելով կուսակցական ապրանքը, ինքնապաշտպանութեան գործին յատկացուած տեղական միջոցների %-ը:

4) Ինքնապաշտպանութեան մարմինը կը գործէ պարտաւորիչ խորհրդակցութեամբ՝ համապատասխան ձեռնհաս մարմիններուն:

5) Բիւրոնները կանխավճար մը կ'ընեն ինքնապաշտպանութեան մարմինին առաջին առթիւ վար դնելու համար իր ստանալիք սակերու գումարէն:

6) Ինքնապաշտպանութեան մարմինը չպիտի զբաղի զէնք բերելու կամ տեղափոխելու գործով: զնումներն ու տեղափոխութիւնները պիտի կատարուին չէզոք մարմիններու միջոցաւ, վաճառականական հողի վրայ:

7) Ընդհ. Ժողովը կը յայտարարէ իր մարմիններուն որ հասկցնեն հայ ժողովուրդին թէ ոեւէ ոչակսիոնի կամ կոտորածի դէմ բացի բարոյական ակնկալութենէ չեն կրնար կուսակցութեան վրայ դնել դրամական կամ գիւնային ակնկալութիւններ: Ոեւէ վտանգի պահուն կու-

սակցութիւնը իր միջոցներով դուրս կու գայ, իսկ ժողովուրդն ալ անպայման պէտք է իր յոյսը դնէ իր միջոցներուն վրայ:

Ազատամարտի շուրջ.— Ընտրուած մասնախումբին կողմէ ընկեր Նշան կարդաց պատրաստուած բանաձեւը, որ կազմած են խմբագիրներու եւ վարիչ ընկերներու հետ խորհրդակցելէ յետոյ:

1) Ուղղութեան մասին աւելի շրջահայեաց ըլլալ եւ շեղումներու տեղի չտալ:

2) Խմբագրական եւ վարչական մարմինը ընտրել Բիւրոյի կողմէ եւ զայն նկատել պատասխանատու:

Մէկ-երկու ընկերներու կողմէ դրուեցաւ հետեւեալ առաջարկը:

3) Գործը դնել շահակցական հողի վրայ, այսինքն թերթին ելեւմտացոյցը հաւասարակշռելէ եւ կազմակերպութեան համար նշանակուած տարեկան գումարը վերադարձնել յետոյ՝ մնացեալը բաժնել խմբագիրներու եւ վարչական մարմին անդամներուն մէջ, համեմատական հաշուով:

Գրեց.— Գործնական չեմ գտներ այդ առաջարկները: լաւ չէ Ազատամարտի խմբագրական կազմի Բիւրոյին ձգելը եւ միայն 1 հոգի պատասխանատու նշանակելը: Իմ կարծիքով Ընդհ. Ժողովը պէտք է ընտրութիւն ընէ եւ այն ալ 3 հոգիի վրայ: մէկ՝ վարիչ, մէկ՝ խմբագրապետ եւ մէկ՝ քարտուղար: այդ երեքը հաւաքաբար պատասխանատու նկատելու է կուսակցութեան առջեւ:

Աւելան.— Մասնախումբի կողմէ գծուած է որ խմբագիրները 9 ժամ աշխատին. ես կը գտնեմ այս չափազանց ծանր, քանի որ խմբագիրները մեքենական աշխատանք չէ որ պէտք է տանին, այլ ստեղծագործող աշխատանք, եւ անոնք պէտք է օրինական զարգացումով կարենան օգտակար ըլլալ, իսկ այս կերպով բանուորի պէս ստիպուած են աշխատիլ եւ չյառաջդիմել:

Տիգրան.— Եթէ յանձնախումբը այդ առաջարկները բերած է՝ կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչ թերութիւններ նկատած է եւ ուսկէ՞ բխած են այդ առաջարկները:

Ընկեր Նշան կու տայ բացատրութիւններ այդ պատճառներու մասին:

Առաքէն.— Կարծես թէ մեր թերթին վրայ քոնթրոլ չէ եղած, երբեմն թղթակցութիւններ կան որ այս կամ այն անիրաւ պաշտօնեան պաշտպանած են:

Աւելան.— Միայն է ընկեր Սուրէնի ըսածը. քանի որ մենք նշանակած ենք թղթակցները կոմիտէներու ցուցմունքներով, ուստի այդ թղթակցութիւններու պատասխանատուն մարմիններն են:

Մ. Շաւարշ.— Իբրեւ հաշուեքննիչ, Ազատամարտի մասին տուաւ բացատրութիւններ, որոնց համաձայն թերթը կազմակերպութեան միջոցաւ ստացած է մօտաւորապէս 1830 ոսկի, իսկ զանազաններէ 318 ոսկի: Ասոնց փոխարէն՝ կարասի, գոյք ունի 65 ոսկի արժէքով, տապարան եւ այլն 775 ոսկի, զանձումը ապահով

նկատուած ապառիկներ կան 1200 ոսկի արժէքով: Այնպէս որ ներկայ վիճակով Ազատամարտը իր ծախքը հանելով ամիսը 7-8 ոսկի շահ կ'արտադրէ. բացի այդ 100 օրինակի չափ ձրի թերթ կ'ուղարկուի զանազաններու ծանուցումներու 600 ոսկիի հասոյթ մը ունի: Ազատամարտ կրնայ ամիսը 8-10 ոսկի վճարել ի հաշիւ իր պարտքին:

Տիգրան.— Ազատամարտի անկանոնութեան պատճառը հոն է, որ պատասխանատու մարմին մը չէ եղած. պէտք է պատասխանատու մարմին մը ունենայ որ տանի գործերը:

Ալեմօ.— Եթէ ընկերներու ըսածին պէս ըլլայ, կազմակերպութեան պահանջը կը կաղայ, ուստի մինչեւ այդ գումարի գանձումը պէտք է թերթը Ընդհ. ժողովի հսկողութեան տակ պահել, ապա միայն ենթարկել ուսումնական ժողովին:

Ժամանակը լրացած ըլլալով հարցին նկատուման շարունակութիւնը յետաձգուեցաւ յաջորդ նիստին եւ ժողովը փակուեցաւ:

Նիստ 12.

9 Սեպտ. 1911 (երեկոյ)

Ներկայ՝ Ամերիկայի, Մուշ-Սասունի, Կարինի, Սամսոն-Մարզուանի, Տրապիզոնի, Տիգրանակերտի, Աբաստիոյ, Վանի պատգամաւորները. Արեւմտ. եւ Արեւել. Բիւրոններու ներկայացուցիչները: Վճռական ձայնով՝ Տիգրան. խորհրդակցական ձայնով՝ Սաթօ, Մարգպետ, Մելքում, Ժիրայր:

Հաշուեքննիչ յանձնախումբի կողմէ ընկեր Տիգրան բերանացի գեկուցում մը ըրաւ մարմիններու հաշիւներու մասին ընդհանրապէս, Արեւմտեան Բիւրոյի (թրքաճայ հատուած եւ Դրօշակ) մասնաւորապէս, գրաւոր տեղեկագիր եւ ներկայացնելու խոստումով. կը դիտուի որ բոլոր մարմիններն ալ հաշուական թերութիւններ եւ նշանակուած սակերու հակառակ ծախքեր ըրած են: «Դրօշակ»ի խմբագրութեան պիւռոնները իրենց պէտքերը հոգալու համար անձեռնմխելի գումարէն ծախսած են, անոր քանակութիւնը իջեցնելով մօտաւորապէս 10.000 Ֆրանկի: Յանձնախումբը ծանրացաւ Ե. Ընդհ. ժողովէն անմիջապէս յետոյ, Յուլիան-Մարտ պահած հաշիւներու մէջ դրամական անհաւասարակութեան մը մասին, որուն գումարը կը հասնի 80-90 ոսկիի. այս առթիւ որոշուեցաւ լսել ընկեր Հրաչի բացատրութիւնները, յաջորդ ժողովին մէջ: Դիտել տրուեցաւ նաեւ Արեւմտ. Բիւրոյի կողմէ Ջարիֆեանի ի հաշիւ անհատի մը իբր կանխավճար տրուած 150 ոսկիէ աւելի գումարի մը մասին՝ որուն գանձումը այնքան ալ ապա-

հով չի թուիր. այս առթիւ ալ լսուեցաւ ընկեր Վահագի բացատրութիւնները, որ յայտնեց թէ Արեւմտեան Բիւրոն արդէն սկսուած յարաբերութիւններն է որ շարունակեց, հիմնուելով խնդրոյ առարկայ անձին հանդէպ տածուած վստահութեան վրայ: Ասոր հետ միաժամանակ, վերոյիշեալ կանխավճար-գումարը ինքն անձամբ տուած ըլլալով, եթէ երբեք անոր գանձումը անկարելի դառնայ, ինք կը ստանձնէ ժամանակի ընթացքին մէջ մուծել: Ընկեր Տիգրան Ե. Ընդհ. ժողովի կողմէ ընտրուած իննի յանձնախումբի հաշուական սեկցիայի իբրեւ անդամ՝ տեղեկութիւններ տուաւ նաեւ նախկին Պատասխանատու մարմնի հաշիւներու մասին: Խիստ քննադատութեան ենթարկուեցաւ հաշուական գործերու մէջ տիրող անկանոնութիւնը, մանաւանդ այն պարագան որ կուսակցութեան հասոյթները պակասած ըլլալով հանդերձ, ծախքերը ոչ միայն նախագծուած սահմանէն չեն պակսեցուած, այլ ընդհակառակը անցած են, պատճառ դառնալով որ անձեռնմխելի գումարն ալ սպառի զանազան կողմնակի գործերու վրայ:

Այս պարագաները աչքի առջեւ ունենալով, ժողովը կրկին անգամ Գոնթրոլ-մարմինն վրայ ստիպողական պարտականութիւն կը դնէ,

- 1) Բոլոր մարմիններու հաշիւները խիստ քննիչով ենթարկել եւ աւելորդ ծախքերը արգիլելու համար ընել կտրուկ կարգադրութիւններ:
 - 2) Պահանջել չուղարկուած հաշիւները, կուսակցութեան հաշուական ընդհանուր պատկերը կազմելու համար:
 - 3) Մշակել եւ հետապնդել հաշուական միօրինակ սիստեմ:
 - 4) Հաւասարակշիւ եւ հարկ եղած որոշումները ընել Բիւրոյի չհաւասարակշիւութեան հաշիւին մէջ, նկատի առնելով այս առթիւ տրուած եւ տրուելիք բացատրութիւնները եւ ծանօթանալով փաստերուն:
- Պարտականութիւն յանձնուեցաւ նաեւ ընկերներ Բժիշկի, Ակնունիի, Ժիրայրի պատրաստել յառաջիկայ տարեշրջանի պիւստիքն:
- Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ 11.

10 Սեպտ. 1911 (երեկոյ)

Ներկաներ՝ Պալքանի, Ամերիկայի, Կեսարիոյ, Տիգրանակերտի, Սամսոն-Մարզուանի, Նարբերդի, Մուշ-Սասունի, Աբաստիոյ, Կարինի, Տրապիզոնի պատգամաւորները. Բիւրոններու ներկայացուցիչները: Վճռական ձայնով՝ ներկայ ընկեր չկար. խորհրդակցական

ձայնով հրաւիրուածներէն ներկայ էին Սաթօ, Ասողիկ, Ակնունի:

Բիւրոյի գործունէութիւնը.— «Ազատամարտ»ի եւ այլ հաշուական խնդիրներ.— Ընկեր Հրաչ բացատրութիւններ տուաւ Ե. Ընդհ. ժողովէն յետոյ մինչեւ Մարտ Բիւրոյի հաշուին մէջ գտնուած բացերու մասին, նամակներու թուականներով ապացուցանելով որ մէկ-երկու գումարներ — յանձնուած «Ազատամարտ»ին՝ իր միջոցով — կրկին անգամ արձանագրուած են, քանի որ ինքը նման գումարներ չէ ստացած:

Այս պատճառով պատգամաւորները կրկին անդրադարձան հաշուական թէ Բիւրոյի գործունէութեան նկատուման:

Վիշապ(եան).— Բիւրոյի գործունէութիւնը քննադատելու ատեն պէտք է ղեկավարուինք շատ որոշ տեսակետներով. տեսանք որ Բիւրոն իր գործունէութեան ընթացքին մէկ կամ միւս խնդիրներուն վրայ աւելի ծախսած է հակառակ նախահաշուի տրամադրութեան եւ այդ բնականաբար ի վնաս միւս պահանջներուն որով՝ ես կ'ըսեմ որ Բիւրոյի գործունէութիւնը վնասակար եղած է:

Ալեմօ.— Հաշուեքննիչ յանձնախումբը պէտք եղած ձեւով տեղեկութիւն չէ տուած, որով ճշգրտօրէն չկրցանք հասկնալ. ընկեր Անտոն իր բացատրութեամբ, այլ կերպ կը լուսաբանէ հաշուական ծախսերը, իսկ ընկեր Վահագ բոլորովին այլ կերպ: Ուստի կ'առաջարկեմ որ հաշուեքննիչ յանձնախումբը աւելի մանրամասն կերպով տեղեկաբերութիւն ընէ, որպէսզի ըստ այնմ քննենք եւ եզրակացնենք:

Ակնունի.— Հաշիւի այն տարբերութիւնը որ կայ, այդ քննելու համար յանձնած եմ ընկեր Հրաչին. ինչպէս որ տեսած էք ելքը աւելի է քան մուտքը. քանի որ ես անձնական դրամ չեմ ունեցած, ուստի չի կրնար իմ դրամս եղած ըլլալ, կը նշանակէ որ գումար մը եկած է եւ մոռցուած արձանագրուելու: Եթէ քննուելու ըլլայ՝ վստահ եմ որ կարելի պիտի ըլլայ գտնել:

Ինչպէս անցեալ նիստին ալ նման որոշում մը տրուած էր, յարմար դատուեցաւ այդ խնդիրը յանձնել քննիչով մարմնին որպէսզի քննէ եւ երեւան հանէ այդ տարբերութիւնը:

Նախագահ.— Պատասխանատու մարմնի նախասահմանադրական շրջանի հաշիւներու մասին ընկեր Ակնունին պէտք է տեղեկաբերութիւն տայ, քանի որ ինքն ալ անդամ է եղած:

Ակնունի.— Այդ հաշիւները կը պահէր ընկեր Վահագն³⁸, ուստի ան պիտի գիտնայ, հաւանաբար ժընել ըլլայ:

Անտոն.— Ընդհ. ժողովի ամէնէն մեծ գործն է կուսակցութեան հաշիւները քննել, այն ինչ տակաւին այս ժողովին չէ ներկայացած Պատասխանատու մարմնին նախասահմանադրական շրջանի հաշիւները. այս բանը

օրինաւոր չէ, քանի որ հաշիւները պէտք չեն մթութեան մէջ մնալ եւ պէտք էր ներկայացնել նոյնիսկ մարմիններուն: Անցեալ ժողովին որոշած էինք քննիչ յանձնախումբի յանձնել. ի՞նչ եղաւ:

Ակնունի.— Ճիշդ է որ Ընդհ. ժողովէն վերջ պէտք էր հաշիւները քննուէին, բայց քաղաքական պատճառներով կարելի չէ եղած թիֆլիս երթալ եւ հաշիւները քննել, ուստի այդպէս ալ մնացած է:

Վահագ.— Նախահաշուին մէջ նշանակուած է շատ մը մուտքեր. ինչո՞ւ բոլոր մարմինները չեն ուղարկած բոլոր որոշեալ գումարները. եթէ դրամ չէ եկած, չի նշանակել որ մենք պէտք չէ ծախսէինք, քանի որ շատ մը մարմիններ իրենց բոլոր մուտքը ծախսած են տեղական գործերու վրայ:

Անտոն.— Իմ ըսածս այն է որ մեր կուսակցութեան գործունէութեան մէջ, փոխանակ համաչափութեան դիմելու սկսանք թերթին վրայ ծախսել. կան նամակներ փոխանակուած ժընելի եւ Բիւրոյի միջեւ, եւ պիտի տեսնէք թէ այն ժամանակ մենք համաձայն չէինք թերթի լոյս տեսնելուն: Գալով Մուշին՝ Ընդհ. ժողովի որոշմամբ, 100 ոսկիի մուտք պէտք էր ունենար, այն ինչ եղած է 300 ոսկի, բայց ծախսուած է տեղին վրայ: Ինչպէս որ ըսուեցաւ ուրիշ ընկերով մը կողմէ, լաւ է որ հաշուական մասնախումբը գրաւոր կերպով ամփոփ տեղեկագիր մը պատրաստէ եւ ներկայացնէ՝ հիմնուելով նախահաշուին վրայ:

Գրքօ.— Եթէ Բիւրոնները չհետապնդեն եւ մարմիններէն դրամ չպահանջեն, բնականաբար այս արդիւնքը կու տայ. օրինակ Վանը բաւական հասոյթ ունեցած է, բայց տեղույն վրայ ծախսած է եւ 50 ոսկի ալ պատրաստ դրամ մնացած, շատ տեղեր ալ զանազաններու վրայ ապառիկ մնացած է. այս տեսակետով մասնաւորապէս Արեւելեան Բիւրոն շատ թոյլ եղած է:

Անտոն.— Ես իբրեւ անդամ Արեւել. Բիւրոյի հետեւեալ տեղեկութիւնները տամ. նախ այն որ՝ այն կողմերը կազմակերպութիւնները շատ թոյլ են. բացի այդ ազատ ընկերներ չունինք որ հետապնդեն. մենք բոլորս զբաղած ենք եւ այն տեղերը ճամբորդելը շատ դժուար է եւ մեծ ծախսի կարօտ:

Աուրէն.— Երբ կը խօսինք պէտք է նկատի ունենալ որ սահմանադրութենէն վերջ՝ նոյնիսկ դաշնակցական գործիչ ընկերներ թուլցած են եւ բնականաբար այդ կ'անդրադառնայ նաեւ մասսաներուն վրայ, իսկ գալով գործիչներուն նպաստ տրուած ըլլալու հարցին, կ'ըսեմ թէ ոեւէ ընկեր որ աշխատած է եւ հիւծուած, կարելի՞ է չօգնել:

Ընկեր Նշան յանձնախումբի կողմէ կարդաց «Ազատամարտ»ի բանաձեւը:

Վարագդատ.— Գիտենք որ յեղափոխութիւնը արտա-

կարգ վիճակ մըն է. այնպէս չէ, սակայն, թերթը, թէեւ ան ալ արտակարգ վիճակներ ունեցաւ եւ անցաւ այդ քրիզը: Թերթը հանդարտ գործունէութիւն ունի եւ կրնայ ունենալ այժմ. անոր բովանդակութենէն մեծ բան կախում ունի. մենք տեսանք որ անոր ղեկավարները լաւ տարին եւ մեր դիրքը բարձրացուցին: Ուստի այնպէս ընենք որ անոր խմբագիրները չթուլանան եւ չվհատին, եւ նոյնիսկ քաջալերուին:

Ակնունդը.— Երկու կէտ կայ այս հարցի մասին. մէկ ու միւս մասը բացառաբար շատ է կարեւորութիւն տալիս, միւս մասն էլ ցանկանում է թերթի գոյութեան մեր կազմակերպութեան համար իսկապէս որ օգտակար եղած է թերթը, բայց չտանք չափազանցուած նշանակութիւն. ոչ ոք կարող է ժխտել նրա օգտակարութիւնը: Լաւ չէ թերթը յանձնել մի խմբագրապետի եւ մի վարիչի. եւ այդպէս չէ եղած անցեալին ալ. միշտ մարմինների յանձնուելու է, որպէսզի հաւաքաբար տանին այդ գործը: Գալով ընտրութեան ձեւին՝ փոխանակ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներուն ձգելու անոր խմբագրութիւնը, աւելի գործնական կ'ըլլայ միայն Արեւմտեան Բիւրոյին յանձնելու որ ան ընտրէ եւ հսկէ: Ստորադաս պաշտօնեաները վարձատրելու տեսակէտին մէջ ես ալ համաձայն եմ որ աւելի լաւ վարձատրուին: Գալով խմբագրապետին՝ պէտք է գիտնանք որ ան համեմատաբար շատ քիչ կը ստանայ, ինչպէս նաեւ վարիչը որ կը ստանայ միայն 10 ոսկի, այն ինչ 15 ոսկիով պաշտօն գտած էր, բայց չթողինք որ գնայ քանի որ գործերը չի կարելի երեսի վրայ թողնել: «Ազատամարտը ղնել շահակցական հողի վրայ իմ կարծիքով լաւ չէ, քանի որ 3-4 տարիէ որ թերթերը կարող են շահ բերել: Ահա իմ կարծիքս եւ կը խնդրէի որ յանձնախումբը փոխէ իր առաջարկը:

Մեքուս.— Ես ալ ծանօթ եմ մի քիչ տպագրական եւ խմբագրական գործերուն եւ կը կարծեմ որ չպիտի այդքան լաւատես ըլլալ եւ նորանոր ծախքեր, յաւելումներ ընել, այդպէսով նորանոր պարտքեր չդիզուէ համար: Գալով վարիչին՝ պէտք է առանձին մարդ ըլլայ եւ միակը կառավարէ տպագրական եւ հրատարակչական գործերը: Մենք չպիտի օրինակ առնենք եւրոպական թերթերէն, որոնք աւելի նպաստաւոր պայմաններով է որ կ'ապրին. պէտք է նկատի ունենալ որ կուսակցական մամուլը այլ է եւ անոր խմբագրական կազմը անպատճառ որոշ չափով գոհողութեան ընդունակ տարրեր ըլլալու են, քանի որ շահակցական գործ չէ այլ գաղափարական: Եթէ մենք զբաշարի մասին ժամի խնդիր կ'ընենք, կարելի չէ նոյնը ընել նաեւ խմբագիրներու մասին: Իմ կարծիքս այն է որ թերթը de facto այսօր բաց ունի եւ պիտի ունենայ. ուստի եթէ գոհողութիւն չըլլայ այս գործը առաջ է՛նթար:

Նիստ 1Ը.

10 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Պալքանի, Մուշ-Սասունի, Կարինի, Վանի, Սեբաստիոյ, Պարսկաստանի, Ամերիկայի, Տիգրանակերտի, Սամսոն-Մարզուանի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Խարբերդի պատգամաւորները. Բիւրոներու ներկայացուցիչները. խորհրդակցական ձայնով՝ Սաթօ, Մելօ, Վարազդատ, Մարգպետ, Լեռնեան, Մելքում, Ժիրայր:

Ընկեր Ռոստոմ ժողովին յայտնեց Թաղիզատէի առաջարկը՝ թէ պարսիկ դեմոկրատ կուսակցութիւնը մտադրութիւն ունի, իր քոնկրէի իսկ որոշումով, պլոք կազմել Դաշնակցութեան հետ: Ու քանի որ Ընդհ. Ժողովի որոշումն ալ համապատասխան է այդ մասին, հետեւաբար ընկեր Ռոստոմ ժողովին առաջարկեց խորհուրդ տալ Պարսկաստանի ընկերներուն՝ որպէսզի օգտուին առիթէն եւ համախորհուրդ գործեն: Յետոյ միջոցներ ձեռք առնել՝ որպէսզի կառավարութիւնն ալ իր նիւթական աջակցութիւնը բերէ այդ գործին: Առաջարկեց նաեւ նիւթական անմիջական աջակցութիւն ուղարկել Պարսկաստանին: Որոշուեցաւ այդ առաջարկը նկատի առնել պիւտճէի քննութեան ժամանակ:

Բիւրոյի դրամական եւ բարոյական գործունէութեան շուրջ.— Առաջարկուած օրակարգին շուրջ վիճաբանութիւնները վերջացած չըլլալով՝ ժողովը անցաւ կրկին նոյն այդ հարցին:

Վահագն.— Չարիֆեանի համար ծախսուած գումարը համաձայն է, կամ մօտ, նախատեսուած սակին:

Անտոն.— Երբ ընդհանուր կէտերը նկատի ունենանք՝ պիտի տեսնենք որ փոխանակ կէս առ կէս ծախսուելու՝ ծախսած ենք 1/8 մասը: Բիւրոներու ծախսը՝ նոյնիսկ աւելի է կուսակցութեան ընդհանուր եկամուտէն. այն ինչ նախահաշուի եւ ստացուած ու ծախսուած գումարներուն մէջ համաչափութիւն պէտք է պահել: Այս ուղղութեամբ սխալ գործունէութիւն մը՝ մեզի եւ ժողովուրդին համար շատ սուղի պիտի նայի:

Նշան.— Փոխանակ ծախսերու սակին վրայ ծանրանալու, աւելի օգտակար պիտի ըլլայ խնդրին նայիլ գործունէութեան ընթացքին եւ նպատակայարմարութեան կամ աննպատակայարմարութեան տեսակէտէն: Այս տեսակէտէն մեկնելով՝ եղած ծախքերը աւելի պէտքի մը արդիւնք են եւ ոչ թէ շոյալութեան: Այսպէս եղած քննադատութիւնն իր տրուած ձեւին մէջ ընկերները վհատեցնելու միայն կրնայ ծառայել:

Թորգոմ.— Եթէ քննադատելի մէկը կայ՝ ան ալ Ե. Ընդհ. Ժողովը պէտք է ըլլայ, որովհետեւ խնդիրներուն բաղձալի շրջահայեցութեամբ չէ նայած: Ինչ որ ալ ըլլայ, մեզ առաջնորդող ուղեգիծը պիտի ըլլայ Ընդհ. Ժողովի որոշումները, որոնք մեզ պէտք է առաջնորդող հանդիսանան:

Աուրէն.— Անուրանալի է որ Չարիֆեանի գործը եթէ ոչ մոռացութեան տրուած, բայց կիսով չափ նայուած է, ինչ որ աւելի կենսական էր քան բանաւոր պրոպագանդը եւն: Ասոր համար ալ կարեւոր է որոշ որոշումներ տալ:

Կարապետ.— Կարելի չէ որ որեւէ Ընդհ. Ժողով, ինչքան ալ հեռատես ըլլայ, նախատեսէ այն՝ ինչ որ վաղը կեանքի մէջ պէտք է կը զգացուի: Եւ որոշումներ կ'ըլլան՝ սակայն այդ շեղումները յամենայն դէպս այնքան լայն ըլլալու չեն՝ ինքզինքնիս անելի առջեւ զգալու համար:

Նախագահը հարց տուաւ պատգամաւորներուն թէ՛ իրենք քանի՞ % տնտեսած են Չարիֆեանի վրայ. տրուած տեղեկութիւններէն պարզուեցաւ՝ որ տեղ տեղ ծախսուած է տոկոսի համաչափութիւն Չարիֆեանի վրայ, իսկ տեղ-տեղ ձգուած ժողովրդական հողի վրայ կամ ժողովրդական միջոցներով:

Անտոն.— Յոյս տրուած փաստերը ի նպաստ իմ քննադատութեան կը խօսին եւ ընդդէմ Բիւրոյի գործածած ոչ-համաչափութեան. իմ քննադատութիւնները զուտ կուսակցական օգտի տեսակէտէն են. ինձ համար ճշմարտութիւնն ու կուսակցութեան համաչափ գարգացումը աւելի մեծ կշիռ ունի:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ 1Թ.

10 Սեպտ. (կէսօրէ վերջ)

Ներկայ՝ Պալքանի, Պարսկաստանի, Ամերիկայի, Պոլիսի, Կարինի, Վանի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշ-Սասունի, Սամսոն-Մարզուանի, Խարբերդի, Ուս. միութեան պատգամաւորները, Բիւրոներու ներկայացուցիչները. վճռական ձայնով՝ Բաբա. խորհրդակցական ձայնով՝ Սաթօ, Ակնունի, Մելօ, Մարգպետ, Ժիրայր:

Պիւտճէ.— Յանձնախումբը յառաջիկայ շրջանի նախահաշուի մասին հետեւեալ տեղեկութիւնները ներկայացուց:

Համաձայն Ե. Ընդհ. Ժողովի կազմական նախահաշուին՝ կուսակցութիւնը տարեկան հետեւեալ նախահաշու-եղեմուտքը կը նախատեսէ:

Ձանազան մարմիններու քով պատրաստ 89.000 Ֆր. պարտքեր — 23.000:

Սպասելիք հասոյթ՝ 259.000 Ֆր., որուն 149.000 Ֆր. տեղական շրջանային պէտքերու վրայ գործածելի. իսկ 125.000ը կեդր. արկղը ուղարկելի՝ ընդհանուր ձեռնարկներու համար:

Այս գումարներուն մաս չի կազմեր անձեռնմխելի գումարը: Գանձելի գումարներէն 18.000ը կովկասեան մարմիններու մօտ կը գտնուէր (17.000 Ոսկանապատ,

1000ը Նաւահանգիստ). 1000ը Վրէժի մօտ՝ որուն դէմ ունէր 15.000ի պարտք մը.³⁷ 34.000 Ֆր.ը Ամերիկա, 4000ը՝ Պալքան. մնացեալը Պատասխանատու մարմինն եւ Թուրքիոյ մարմիններու մօտ՝ որոնք մեծ մասամբ յաջորդ տարուան մէջ ծախսուելու են ի հաշիւ տեղական-չրջանային եւ այլ ծախսերու:

Առանց կովկասի եւ Վրէժի հաշիւները ի ձեռն ունենալու — որոնք չեն դրկուած — Թուրքիոյ եւ Արտասահմանի շրջաններէն ստացուած հաշիւներէն կը յայտնուի որ սպասուած 259.000 ընդհանուր հասոյթին դէմ — միջին հաշուով ստացուած է 78.197 Ֆր. հասոյթ եւ տեղական պէտքերու վրայ ծախսուած այդ գումարէն տարեկան — 42.954 Ֆր.:

Նախատեսուած եղեմուտքն ու ստացուածը կը ներկայացնէ սա բաղադրական պատկերը.

	Նախատեսուած մուտք (Ֆր.)	Ներքին ծախք (Ֆր.)	Ստացուած մուտք (Ֆր.)	Ծախք
Կովկաս —				
Պարսկաստան	105.000	—	—	—
Վասպուրական	1.000	6.000	3.300	3.640
Մուշ — Սասուն —				
Ս[ալւոյ] Չոր ³⁸	7.000	4.200	3.200	4.800
Կարին	10.000	6.000	2.340	1.339
Ամերիկա	30.000	16.000	42.597	15.131
Պալքան	10.000	2.000	5.340	2.500
Եգիպտոս	2.000	800	—	—
Պոլիս	40.000	24.000	3.400	1.000
Տրապիզոն	5.000	3.000	3.800	2.200
Իզմիր	10.000	6.000	—	—
Սամսոն-				
Մարզուան	4.000	2.400	1.840	900
Խարբերդ	10.000	6.000	3.100	3.100
Սեբաստիա	10.000	6.000	2.000	3.600
Տիգրանակերտ				
Նիւրկերտ ³⁹	5.000	3.000	2.900	2.374
Կիլիկիա	1.000	600	—	—
«Պոշակ»ի խմբագր.	5.000	—	—	—
Դամասկոս —				
Այնթապ	—	—	100	170
Կեսարիա	—	—	1.480	1.340

Ձեռքիւնով կովկասի եւ Վրէժի մարմիններուն համար նախատեսուած հասոյթը՝ կը դիտուի որ Արտասահմանի եւ Թուրքիոյ մարմինները նախատեսուած 154.000 Ֆրանկին տեղ ունեցած են միայն 76197 Ֆր. հասոյթ — գրեթէ կէսը:

37.- Ոսկանապատը՝ Պաքուս է, Նաւահանգիստը՝ Պաքուս, Կրէժը՝ Ատրպատական-Պարսկաստան:
38.- Սալւոյ Չորը՝ Պիթլիսի եւ Ախալքալաքի շրջանն է:
39.- Նիւրկերտը՝ Մուֆարդիի քաղաքն է, Տիգրանակերտի շրջանին մէջ:

Կեդր. արկղին մէջ ստացուելիք 125.000 Ֆր. գումարի փոխարէն երկու տարուան մէջ ստացուած է մօտաւորապէս 40-50.000 Ֆր., մէկ տարուան մէջ՝ 25.000 Ֆր.: Այդ 125.000ին 83.000ն է որ պիտի հայթայթէին Թուրքիոյ եւ Արտասահմանի մարմինները: Ըսել է՝ բացի Ամերիկայէն ոչ մէկ մարմին կրցած է հայթայթել իրեն համար նախատեսուած պիւտճէն. նոյնիսկ հայթայթուած անբաւարար պիւտճէին մեծագոյն մասը ծախսուած է տեղական պէտքերու վրայ, փոխանակ որոշուած սակին համաձայն գումար փոխադրելու կեդր. արկղը: Վերոյիշեալ գումարներէն զատ նուէրներ, տոկոսի, Ազատութեան մատենադարանի, բանտարկեալների օգտին եւ այլ մոտաքեր ունեցած է կուսակցութեան կեդր. սնտուկը մօտաւորապէս 35-40.000 Ֆր.:

Իրողութիւնն այն է որ կուսակցութեան զանազան մարմիններու ուղարկած դրամներէն զատ՝ Բիւրոններու եւ «Դրօշակ»ի խմբագրութեան միջոցով ծախսուած է պահեստի անձեռնմխելի գումարը՝ մնալով 10.000 Ֆրանկ: Միայն նախատեսուած 125.000 Ֆրանկին դէմ

191.000 Ֆրանկի տարեկան ելք մը գծած է Ընդհ. Ժողովը, պակաս գումարը ամբողջացնելով զանազան մարմիններու մօտ գտնուած անձեռն 89000 Ֆրանկէն. այսպէս — Արեւել. Բիւրօ (Կովկաս, Թուրքիա) 15.000, Արեւմտ. Բիւրօ եւ «Դրօշակ» 25.000, Կովկասեան թերթին 5000, Պոլսոյ թերթին՝ 8000, Կովկասի վերակազմութեան՝ 5000, Հրատարակութեանց՝ 5000, Զ.-Զ.ի (Մեծ Հայք 15000 + Փոքր Հայք 10000 + Կիլիկիա 13000) 38.000, Զ.Մ. (Կովկաս՝ 15000 + Վրէժ 5000) 19000, բանտարկեալներ — 50.000, Ընդհ. Ժողով 15.000 եւ անակնկալներու համար 8000:

Առաջնորդուելով պարզուած իրականութենէն, ինչպէս նաեւ աչքի առջեւ ունենալով յառաջիկայ մեր գործունէութեան եւ կազմակերպութեան զարգացման աստիճանական ընթացքը, յառաջիկայ տարեշրջանի համար հետեւեալ նախահաշիւը կրնանք ունենալ եւ կիրառութեան ենթարկել.

Ապասելի հասոյթներ

	Ընդհ. հասոյթ	Տեղական-Շրջ. ծախքեր	Պատրաստ մարմինների մօտ	Կեդր. արկղ փոխադրելի
Պոլիս	7000	4200	500	2800
Իզմիր	1000	600	—	400
Աւագան ⁴⁰	5000	3000	1600	2000
Կարիս	5000	3000	500	2000
Վան	3000	1800	—	1200
Մուշ —Սասուն	1000	600	—	400
Խարբերդ	3500	2100	—	1400
Տիգր(անակերտ)–Նփրկ(երտ)	3500	2100	100	1400
Կեսարիա	2000	1200	160	800
Հալեպ —Դամասկոս — Այնթապ	1000	600	—	400
Սեբաստիա	3500	2100	—	1400
Սամսոն —Մարզուան	2000	1200	380	800
Պալքան	6000	2000	2000	4000
Ամերիկա	45000	12000	10000	33000
Պարսկաստան	8000	—	—	—
Կովկաս	—	—	—	—
Դրօշակի խմբագրութեան	10000	—	10000	10000
Ազատութեան մատենադ.ին	1500	—	—	1500
Ազատամարտին	1000	—	—	1000
Արտակարգ հասոյթներ	20000	—	—	2000
Բիւրոյի մօտ	—	—	25000	—
	128,000	36,500	50,240	91,500

Այսպէս յառաջիկայ նախահաշուի համար կեդր. արկղին եւ ընհանուր ձեռնարկներուն համար տրամադրելի գումար կ'ունենայ կուսակցութիւնը 50.000+91.000 = 140.000, որուն 25000 Ֆր.ը կովկասեան բանտարկեալներու պիտի ղրկուի՝ անոնց անուով հաւաքուած ըլլալուն համար, իսկ մնացեալ 115.000 Ֆրանկը կը բաշխուի հետեւեալ կերպով:

- I- Արեւելեան Բիւրօ (Կովկաս — Թուրքիա)
- 1) Մի անդամ (ազատ) եւ ճանապարհածախս 12,000 դրշ.
 - 2) Դիւանական 1,000 »
 - 3) Կազմակերպական շրջ. 3,000 »
- 16,000 դրշ. = 3,200 Ֆր.
- Կովկասեան
- 1) Ազատ 2 հոգի 24.000 դրշ.
 - 2) Դիւանական 2,000 »
 - 3) Կազմակերպական 4,000 »
- 30,000 դրշ. = 6,800 Ֆր.
- Ընդհ. գումար 10,000 Ֆր.

- II- Արեւմտեան Բիւրօ
- 1) 2 ազատ ընկեր 24,000 դրշ.
 - 2) Դիւանական 7,000
 - 3) կազմակերպական՝ 4,000
 - 4) Պրոպագանդ գրաւոր 10,000
- 45,000 դրշ. = 10,000 Ֆր.
- «Դրօշակ» 12,000 Ֆր.

- III- Ինքնապաշտպանութիւն
- Ընդհանուր ծախք —
- 1) Ազատ ընկերներ եւ ճամբու ծախք 46,000
 - 2) Դիւան 500
- 46,500 դրշ. = 11,000 Ֆր.

- IV- Կոնտրոլ-մարմին
- 1) Ազատ ընկեր եւ ծախք 18,000 դրշ.
 - 2) Դիւան 7,000 դրշ.
- 25,000 դրշ. = 5,000 Ֆր.

- V- Չինուորական մարտական
- Ընդհանուր — Հայկական գաւառներ — Կովկաս, Վրէժ
- Մուտքի 40%ը = 50,000 Ֆրանկ
- Արտակարգ- անակնկալ 15,000 Ֆրանկ
- VI- Պիւտճէն դուրս —
- Պահանջուած Արեւմտեան շրջանից
- 1) Բանտարկեալներ = 120.000 Ֆր. արուած է 1) 52 տուլար «Դրօշակ»ից 2) Ամերիկա հաւաքուած 50,000 Ֆր. (Հանրային է) 3) Թուրքիայի հանգանակութ. 70,000 Ֆր. Գումար 120,000 Ֆր.
 - 2) Պարսկաստանից ղրկուած է 24,000 Ֆր.

Առաջարկուած նախահաշուի մասին կարծիքներու փոխանակութիւնը եւ վերջնական որոշումը վերապահւեցաւ յաջորդ նիստին:

Նիստ Խ.

12 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկայ՝ Պոլիսի, Կեսարիոյ, Ամերիկայի, Կարինի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Սասուն-Մուշի, Սամսոն-Մարզուանի, Պալքանի, Վանի պատգամաւորները. Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոններու ներկայացուցիչները. Խորհրդակցական ձայնով՝ Վարազդատ, Մելօ, Ժիրայր, Ասլան, Լեռնեան, Սաթօ, Վարդան, Ակնունի:

Ժողովին կը նախագահէ ընկեր Ակնունի: Օրակարգն է Շարունակութիւն պիւտճէի վիճաբանութեան. —

Անտոն. — Եթէ մեր պիւտճէն, ինչպէս ընկերներից ոմանք յայտնեցին, կարեւորութիւն չունի, այն ատեն աւելորդ է նրա մասին մտածել. իսկ եթէ մեր պիւտճէն մի քիչ կշիռ պիտի ունենայ, կ'արժէ մտածել այդ մասին: Անցեալում գծուած է տարեկան 125.000 Ֆրանկ մուտք. իսկ ստացած ենք 1/5ը 25-30.000 Ֆրանկ: Մենք նկատի պիտի ունենանք որ ամբողջ երկիրը իր տուածից աւելի պիտի ծախէ, որովհետեւ քայքայուած է: Մենք պիտի վերցնենք մեր իրական մուտքը եւ ոչ թէ երեւակայականը:

Եթէ անցեալում ստացել ենք 20.000 Ֆրանկ, ուրեմն

40.- Աւագանը՝ Տրապիզոն-Կիրասունի շրջանն է:

մեր պիւտճէն այդ հաշուից դուրս չի գալու. սովորական գումարները պիտի պահել ապագայ անակնկալներին՝ օրինակ՝ այսօր Պարսկաստանը այնպիսի դրութիւն ունի՝ որ մեզմէ շատ ծախս չի պահանջեր, բայց կարող է գալ մի րոպէ երբ մեր բոլոր կարողութիւնը ստիպւած կը լինենք ի գործ դնել: Մախսերը պէտք է կրճատել. պէտք է ազատ ընկերների որոշումով 10 ոսկի գումարը իջեցնել: Եզրակացնելով կ'ասեմ. իրական մուտքը վերցնելով՝ իսկական ծախսերը գոցելու է. իսկ արտակարգ գումարները պահելու է արտակարգ դէպքերու:

Ատում.— Ինձ թւում է որ մի ծայրայեղութիւնից միւսը ընկնում ենք. մենք պետութիւնների նման չենք կարող մեր պիւտճէն կազմել. նրանք ունին մնայուն մուտքեր, իսկ յեղափոխական կուսակցութիւնը երբեք այդ ուղղութիւնը չի կարող բռնել. մենք ոչ թէ պիտի նայինք թէ որքան մուտք ունինք եւ ըստ այնմ գործենք, այլ ընդհակառակը մենք իրական կեանքը պիտի նկատի առնենք եւ ինչ որ որոշենք պիտի մտնենք ասպարէզ եւ գործադրութեան դնենք: Մեր ազատ ընկերները չպիտի մտածեն թէ դուրսը ինչ կարող էին շահել, այլ նա պիտի գիտնայ որ որպէս յեղափոխական՝ պէտք է գոհողութիւն անէ. բայց մենք չենք կարող ազատ գործիչ ընկերների համար եղած ծախսերը ինչայնչ. մեզ աւելի պէտք է մտածել թէ այդ գործիչը գնայ որոշ ուղղութեամբ, ահա այդ միջոցով կարող ենք շարքերը խտացնել եւ մեր աշխատանքը ապարդիւն չի գնար:

Վահագն.— Մենք չպիտի ենթադրենք թէ Թուրքիոյ կազմակերպութիւնը՝ անմխիթար է. ես կարծում եմ որ այժմ Թուրքիոյ մեր կազմերը աւելի լաւ են քան անցեալ տարիներունը. թուանշանները պերճախօս ապացոյցներն են. նոյնպէս ի նկատի պիտի ունենանք որ կուսակցութիւնը 80.000 ֆրանկ կարողացաւ հաւաքել կովկասեան բանտարկեալ ընկերներին. դա եղած է մեր ջանքերով եւ մեր ընկերների մասնակցութեամբ, ուրեմն այս ալ ի նկատի ունենալով պիտի ըսենք որ մեր ժողովուրդը իր կարողութիւնից էլ աւելի է տուել: Գտնում եմ որ այդ նշանակուած գումարները վերջնական չպիտի նկատել, մեր մուտքը կախուած է մեր գործունէութիւնից: Գալով ազատ ընկերներու գործին, մենք չենք կարող նրանց ստացածի կէսի մասին խօսք ընել, չի կարելի ապրել այդքան գումարով. ուրեմն մենք միայն նշանակելու ենք մաքսիմումը 10 ոսկին եւ թոյլ տանք որ իւրաքանչիւր շրջան իր տեղի եւ ծախսի համեմատ վարուի: Մենք մեր ուժերի բաշխումը լաւ կատարելու ենք, այն ատեն մեր պիւտճէն կարող է կրկնապատկուիլ. ինձ համար դրամը կարեւորութիւն չունի, այլ մարդը. երբ մարդ կայ, դրամ ալ կայ:

Անտոն.— Եթէ կայ կազմակերպութեան մէջ թերութիւն՝ պէտք է վերագրել միայն կեդրոնական մարմիններուն, այլ տեղական կազմակերպութեան մարմիններուն:

Եւ այս թերութիւնը արդիւնք է աւելի ուժերու բաշխման աններդաշնակութեան եւ կամ այդ գործին պահանջուած կարեւորութիւնը չտրուելուն: Շրջաններու մէջ գոյութիւն ունեցող ուժերով նախատեսուած եկամուտն ալ չեն կարող ունենալ. հարկ է ուժերու նոր դասաւորում եւ բաշխում: Նորմալ հասոյթներ պիտի հայթայթել կազմակերպութեան եւ ուժերու նոր բաշխման շնորհիւ, իսկ արտասովոր ծախքերու համար հարկ է մտածել այլ միջոցներ: Օրինակ՝ ինքնապաշտպանութեան մարմինը նախատեսուած ուղղութեամբ աշխատանք կատարելու համար կրկին տրամադրելի գումար չի պէտք կայ, որովհետեւ կարելի է սպասել որ սանթիմներով եկած գումարներով մեծ պէտք մը հոգացուի:

Արքայ.— Ներկայ ուժերով նախատեսուած հասոյթները չենք ունենար. հարկ է ուժերու բաշխում. իսկ սակերու նուազեցում՝ քանի որ գծուած սակերը ոչ մէկ ատեն կարելի չէ եղած իրականացնել:

Նշան.— Անցեալ պիւտճէով եւ ներկայ պիւտճէով կազմակերպութեան դրամին կէսը ստացուած եւ ակնկալուած է Ամերիկայից: Վերջին 4 տարին Ամերիկան մնացել է լքուած, մինչ Ամերիկան միշտ պահանջել է գործիչ, ի հարկէ նկատի ունեցել է ապագան: Բացի 43.000ից Ամերիկան տուել է, գանազան հանգանակութեանց միջոցով, ահագին գումար. վերջին տարին եկաւ ընկեր Ակնոնի. դա մեր մարմինների պահանջը չէ. նկատի ունեցէք որ մեր հանգանակութիւնը թէպէտ չէ՝ զոք հողի վրայ եղած է, բայց 9/10ը վճարել են ընկերները. եթէ այսպէս շարունակուի՝ առաջ պիտի գայ ընդհանուր լքում մը. մեր մարմիններու վերջին լքումը այն աստիճանի է հասեր որ մտադրուած է նոյնիսկ խզել կապերը եւ գումարը պահել Կեդր. Կոմիտէի կասսային մէջ. օրինակ Ֆրեզնօ որ ունի 5000 հոգի, հազիւ 25 ընկեր ունինք. ի՞նչ է պատճառը. այդ վայրը ցարդ ոչ մէկ գործիչ չէ գնացեր, միմիայն վերջին ամիսներուն մէջ ընկեր Ակնոնին գացած է: Հոն թերթ մը ունինք եւ եթէ ընկեր մը լլայ իբրեւ խմբագիր, կարող է անդամներու թիւը հասցնել 200ի. համոզուած եմ որ եթէ Ամերիկայի վրայ այս ժողովը լուրջ ուշադրութիւն չդարձնէ օգտակար գործ մը ըրած չպիտի լլայ:

Վարագդատ.— Կը գտնէ որ ներկայ վիճակը մեր ուժերու սխալ բաշխումից է եղած. եթէ մենք լաւ ընկեր մը կարողանայինք ունենալ իզմիր, պիտի տեսնենք թէ այդ շրջանը որ այժմ ոչ մէկ գումար չէ տուած, կարող էր մեծ գումարներ տալ. ուշադրութիւն պէտք է դարձնել եւ այն վայրերուն վրայ՝ որոնք ունենալով դրամական ցնեղ՝ ունին եւ յեղափոխական ցնեղ. ահա այն ժամանակ մենք կը կազմաւորենք մեր գործերը:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն շարունակութիւնը թողնելով յաջորդին:

Նիստ նԱ.

12 Սեպտ. 1911 (երեկոյ)

Ներկաներ՝ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու ներկայացուցիչներ, Ամերիկայի, Կարինի, Տիգրանակերտի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշ-Սասունի, Սամսոն-Մարգուանի, Խարբերդի, Ուս. միութեան եւ Պոլսի պատգամաւորները, ինչպէս նաեւ Պալքանները. խորհրդակցական ձայնով՝ Վարագդատ, Մարգաբետ, Ժիրայր, Ասլան, Լեոնեան, Վարդան, Մելքում. վճռական ձայնով՝ Աւօ:

Ժողովը բացուեցաւ ընկեր Ռոստոմի նախագահութեամբ:

Օրակարգն է Շարունակութիւն պիւտճէի քուէարկութեան:

Ընկեր նախագահը գտնելով որ հարցը պարզուած է, առաջարկեց հետեւեալ ձեւը:

Մեր ունեցած պահեստի գումարը եւ արտակարգ հասոյթները պահել գանազան անակնկալ դէպքերու համար: Իսկ ընթացիկ ծախսերու համար հոգալ ընթացիկ, տեղական եկամուտներից (չքուէարկուեցաւ):

Վահագն առաջարկեց հետեւեալ բանաձեւը.— Պահեստի գումար համարել միայն այն գումարները՝ որոնք գոյութիւն ունին ժրնեւ, եւ կազմակերպութեան միջոցներով կովկասեան բանտարկեալների համար հաւաքուած 17.000 ֆրանքի գումարը (որը կը հասնի 27.000 ֆրանքի). առաջարկել բոլոր մարմիններուն՝ որ չեն վրճարած 5% անձեռնմխելի գումարը, անմիջապէս այդ գումարը փոխադրեն եւ աւելացնել այդ գումարին վրայ (ստացաւ 1 ձայն):

Անտոն.— Գտնում է որ պահեստի գումարի 5%-ի վրայ յոյս դնելը աւելորդ է քանի որ 40%-ը չեն վճարած մարմինները, ինչպէ՞ս կանգ առնել 5%-ի վրայ. կ'առաջարկէ ամբողջ գումարը պահել պահեստի եւ անակնկալի դէպքում փոխադրութիւն անել այդ գումարից (ստացաւ 8 ձայն):

Վարագդատ.— Կ'առաջարկէ պահեստի գումարի 40.000ը պահել, իսկ 8.000 գործառնութեան դնել (10 ձայն):

Անտոն.— Քանի որ այս առաջարկով մենք որոշեցինք ընթացիկ ծախքերը եկամուտներով հոգալ, պէտք է ուրեմն մեր եկամուտի համաձայն բարձրացնել կամ իջեցնել մեր ծախսերը, բաժանելով իւրաքանչիւրի վրայ համեմատական չափով:

Նախագահ.— Կը գտնէ որ դա անհնար է, մենք չենք կարող այդպիսի սահմանափակումներ ընել, այլ պէտք է կեանքը թոյլ տայ մեզ թէ ո՞ր ճիւղին աւելի պիտի ծախսուի:

Հարց բարձրացաւ թէ գործիչները ի՞նչ համեմատու-

թեամբ պիտի ստանան ապրուստի դրամ. թեր ու դէմ կարծիքներից յետոյ՝

Որոշուեցաւ որ ամէն տեղ միեւնոյն գումարը ստանան գործիչները, վճարի նորմալ քանակ ընդունելով 200 ֆրանկ:

Հարց բարձրացաւ նաեւ թէ կազմակերպական ընդհանուր գումարի 50%-ը պիտի շրջանառութեան մտնէ ժողովուրդը գինելու, թէ՞ այդ տոկոսով կազմակերպական գէնքեր գնելով տրամադրելի պիտի լլայ ի հարկին մարտական մարմին: Այս մասին եւս թեր ու դէմ կարծիքների փոխանակութենէ յետոյ որոշուեց՝

Այդ գումարը յատկացնել գէնքի եւ թողնել ինքնապաշտպանութեան մարմինն տրամադրութեան տակ կեդրոնացնելու համար գանազան վայրերու մէջ:

Այս որոշումներէն յետոյ ներկայացուած նախահաշիւը ընդունուեցաւ նոյնութեամբ:

Ժողովը անցաւ ուժերու բաշխման խնդրին:

Նախ նկատի առնուեցաւ Մուշի եւ Վանի շրջանները, որ իրենց հաշուին ազատ գործիչ չեն կարող պահել նկատուեց որ Վանը կարող է իր ծախսերով պահել ազատ գործիչ. իսկ Մուշին կազմակերպական միջոցներով պահել ազատ գործիչ մը:

Անտոն.— Առաջարկեց անցեալում եւ ներկայում պրոշիւրներից եղած մուտքերը յատկացնել գիրքերու հրատարակման. ընդունուեցաւ այս առաջարկն ալ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ նԲ.

13 Սեպտ. 1911 (կէսօրէ վերջ)

Ներկաներ՝ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու ներկայացուցիչներ, Վանի, Կարինի, Ամերիկայի, Պալքանի, Սասուն-Մուշի, Պոլսի, Ուս. միութեան, Խարբերդի, Տիգրանակերտի, Կեսարիոյ պատգամաւորները: Խորհրդակցական ձայնով՝ Վահան, Մելօ, Ժիրայր, Ակնոնի:

Շարունակելով խորհրդակցութիւնը ուժերու բաշխման մասին, կազմուեցան ցուցակներ Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներու, Քոնթրոլ մարմնի, ինքնապաշտպանութեան մարմինն եւ պրոպագանդիստներու համար՝ անոնց վրայ կատարելով ընտրութիւնը:

Կովկասէն Արեւելեան Բիւրոյի անդամ ընտրելու կամ Ընդհ. Ժողովին կողմէ մէկը Կովկաս ղրկելու մասին եղած առաջարկները նկատի առնելով՝ որոշուեցաւ յետաձգել՝ այդ մասին որոշում կայացնելով Կովկասեան զեկուցումը լսելէ վերջ:

Ժողովը փակուեցաւ ժամը 8.30ին:

Նիստ 109.

14 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Տրապիզոնի, Ամերիկայի, Պալքանի, Սեբաստիոյ, Կեսարիոյ, Տիգրանակերտի, Խարբերդի, Վանի, Մուշ-Սասունի, Սամսոնի, Ուս. միութեան, Կարինի պատգամաւորները, Բիւրոններու ներկայացուցիչները, վճռական ձայնով՝ Բաբա, Աւօ, խորհրդակցական ձայնով՝ Ակնունի, Ասլան, Վարագդատ, Մելքում, Մար, Մելօ, Ասողիկ, Սաթօ, Լեռնեան:

Ուժերու բաշխում.— Անտոն.— Քանի որ ընկեր Ռոստոմ կ'աճապարէ երթալ, լաւ է որ խօսինք ինքնապաշտպանութեան մասին. այդ մարմինը ուժեղացնելու համար պէտք է Ռոստոմն ալ մտցնել անոր մէջ:

Գրգօ.— Քանի որ ընկեր Ռոստոմը առանց այն էլ կրնայ եւ կ'օգնէ այդ գործերուն, ուստի փոխանակ զայն ընտրելու, առանց անոր կազմակերպենք նոր մարմին մը եւ ընտրենք նոր անհատներ:

Ալեք.— Ես դիտած եմ որ շատ անգամներ մենք փոխանակ պատասխանատու գործերին փորձառու ընկերներ ղնելու՝ դրած ենք անփորձ ուժեր. ես կ'առաջարկեմ փորձառուներին նախապատուութիւն տալ:

Սուրէն.— Ես համաձայն եմ որ ընկեր Ռոստոմ դպրոցի գործը չձգէ:

Վարագդատ.— Եթէ ընկեր Ռոստոմը պիտի նշանակուի պատասխանատու գործի, որպէսզի կարենայ օգտակար ըլլալ, պէտք է դպրոցէն հրաժարի:

Ակնունի.— Ես կը կարծիքի որ ինքնապաշտպանութեան մարմինը մէկ քաղաքի մէջ պէտք է ըլլայ, որպէսզի կարենայ օգտակար ըլլալ:

Արեւմտեան Բիւրոյի կազմ

Նախագահ.— Անցեալ նիստին առաջարկ մը եղած է որ փարլամենթի անդամները Բիւրոյի անդամ չեն կարող լինել:

Գրգօ.— Մեր որոշումները ձեւական չըլլալու համար ջանանք որ մէկ ընկեր քանի մը աշխատանքի մէջ չմտնէ, քանի որ օգտակար չի կրնար ըլլալ. իսկ գալով ընկեր Գարոյի թեկնածութեան՝ կ'ըսուի որ չղաշնակցական չեմ կ'ըսէ. այսպիսի անձեր պէտք է որ Բիւրոյի անդամ ընտրենք:

Նախագահը քուէի դրաւ թէ՛ Վարդգէսի եւ Գարոյի թեկնածութիւնը պէ՛տք է պահել. գրեթէ միաձայնութեամբ որոշուեցաւ վերցնել անոնց թեկնածութիւնը:

Ժողովը անցաւ առանձին թեկնածուներու մասին կարծիքներու փոխանակութեան. նախ ընկեր Անտոնը դուրս ելաւ եւ անոր մասին խօսուեցաւ. Ժողովին ընթացքին հարց ծագեցաւ թէ պէտք է խօսուի նաեւ ազատ ընկեր ըլլալու մասին բայց որոշուեցաւ յետաձգել եւ առանձին խօսիլ այդ մասին: Իսկ ընկեր Անտոնի թեկ-

նածութիւնը ընդունուեցաւ: Ժողովը անցաւ ընկեր Ատոմի շուրջ կարծիքներու փոխանակութեան՝ ինք բացակայ ըլլալով ժողովէն:

Նշան.— Առաջարկ դրաւ որ որոշում մը անցնի թէ ասկէ վերջ ընտրելու չէ այնպիսի ընկերներ՝ որոնք պետական քոնսետիոններ ունին, իսկ ընտրուելու պարագային՝ պէտք է գոնէ հրաժարին:

Գրգօ.— Իբրեւ ընկեր Ատոմի թեկնածութիւնը առաջարկող՝ ետ կը վերցնեմ առաջարկս, քանի որ ինքն ալ ներկայ չէ արդէն:

Ժողովը սկսաւ ընկեր Ասլանի մասին խօսիլ իր բացակայութեան եւ որոշուեցաւ նաեւ պահել նրա թեկնածութիւնը:

Ընկեր Վարանդեանի մասին խօսելու համար ան եւս դուրս հանուեցաւ եւ խօսուելէ վերջ՝ միաձայնութեամբ որոշուեցաւ պահել իր թեկնածութիւնը: Որոշուեցաւ «Դրօշակ»ի մասին առանձին խօսիլ:

Ընկեր Մարի մասին ալ եղան խորհրդակցութիւններ. ինքը բացակայ էր արդէն եւ որոշուեցաւ զայն Քոնթրոլի մարմին մէջ մտցնել, որուն վրայ հանուեցաւ իր անունը Բիւրոյի թեկնածուներու ցանկէն:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ 107.

14 Սեպտ. 1911 (կէսօրէ վերջ)

Ներկաներ՝ Պալքանի, Սեբաստիոյ, Տրապիզոնի, Խարբերդի, Տիգրանակերտի, Մուշ-Սասունի, Կարինի, Սամսոն-Մարզուանի, Ամերիկայի, Վանի պատգամաւորները, Բիւրոններու ներկայացուցիչները. վճռական ձայնով՝ Բաբա, Աւօ. խորհրդակցական ձայնով՝ Մելքում, Սաթօ, Վահան, Ասողիկ, Վարագդատ, Ակնունի, Մելօ:

Ինքնապաշտպանութեան մարմին.— Ներկայացուած թեկնածուներու վերաբերմամբ կարծիքներու փոխանակութեան պէտք տեսնուելով՝ փոխադարձ լուսաբանութիւններէ յետոյ գրեթէ միաձայնութեամբ անցաւ Սուրէնի, Ռոստոմի, Վարդանի, Հրաչի եւ Պարոյի թեկնածութիւնը:

Ընկեր Անտոնի թեկնածութիւնն ալ դրուած էր թէ-եւ, սակայն նկատելով որ ան միշտ օգտակար կ'ըլլայ առանց ընտրուած ըլլալու ալ, մանաւանդ որ Բիւրոյի ալ թեկնածու նշանակուած է արդէն, հարկ չտեսնուեցաւ ծանրանալ:

Քոնթրոլի մարմին.— Կարծիքներու փոխանակութեան յետոյ՝ այս մարմինն համար իբրեւ թեկնածու ընդունուեցան Վարդան, Գալֆա, Ժիրայր, Հրաչ, Մար:

Ընկեր Վահայ յիշեցուց որ շատ մը մարմիններ կ'նի-

քի պէտք ունին, ինչպէս նաեւ պաշտօնական թղթեր թուրքերէնով: Դատական խնդիրներու մասին ալ պէտք է խօսուի եւ կարգադրութիւն մ'ալ ըլլայ, այլապէս անախորժ երեւոյթներ կը պարզուին: Այս առթիւ հետեւեալ ընկերներէ յանձնախումբեր նշանակուեցան, գոյութիւն ունեցող խնդիրները դասաւորելու, կարգադրելու եւ իրենց եզրակացութիւնները բերելու համար: 1) Դատականի համար՝ Նշան եւ Լեռնեան, 2) Կանոնականի համար՝ Ժիրայր, Գրգօ, 3) Մրագրային հարցերու համար՝ Բաբա եւ Վարանդեան, 4) Իթիքհատի բանաձեւին համար՝ Ակնունի, Ասլան, Ոստան:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ 106.

14 Սեպտ. 1911 (գիշեր)

Ներկաներ՝ Ամերիկայի, Կարինի, Վանի, Մուշ-Սասունի, Ուս. միութեան, Սեբաստիոյ, Պալքանի, Խարբերդի, Սամսոն-Մարզուանի, Կեսարիոյ, Տիգրանակերտի պատգամաւորները, Բիւրոններու ներկայացուցիչները. վճռական ձայնով՝ Բաբա, խորհրդակցական ձայնով՝ Ակնունի, Լեռնեան, Մելքում, Մարգապետ, Մելօ:

Յառաջիկայ Ընդհ. Ժողովի ժամանակը.— Ժողովի գումարման մասին եղան երկու գլխաւոր առաջարկներ, առաջինը՝ երեք տարիէն գումարել, երկրորդը՝ երկու տարիէն գումարել: Այս առաջարկները քուէարկութեան դրուելով՝ առաջինը ստացաւ 5 ձայն, երկրորդը ստացաւ 8 ձայն: Որոշուեցաւ ուրեմն յառաջիկայ է. Ընդհ. Ժողովը գումարել 1913 Յուլիսին, այն թելադրութեամբ որ եթէ անհրաժեշտ խնդիրներ չըլլան հրապարակի վրայ, Բիւրոնները՝ համաձայնութեամբ, ժողով չգումարեն:

Հ.Յ.Դ. Ժրնեւի տան գնումը.— Տեղեկութիւն տրուեցաւ թէ Ամերիկայի պատգամաւորական ժողովը որոշած է գնել Հ.Յ.Դ. Ժրնեւի տունը եւ այդ նպատակի իրագործման համար իբր գործնական քայլ, որոշած է նաեւ որ իւրաքանչիւր ընկեր Ամերիկայի մէջ վճարէ մէկ մէկ տոլար:

Լեռնեան.— Ես կը կարծեմ որ ոչ ոք դէմ չէ այդ տան գնումին, քանի որ յիշատակներ ունին հոն եւ նիւթական տեսակէտէն ալ չենք վնասեր, ժամանակի ընթացքին չէնքին արժէքն ալ կը բարձրանայ եւ մենք կ'օգտուինք:

Սուրէն.— Ամերիկայի կողմէ եղած առաջարկը լաւ է. սակայն պէտք է ձգել միայն Ամերիկային, այլ բոլոր մարմիններուն հարկադրելու է այս մասին հոգալ:

Անտոն.— Այդ տան գնումով դրամական ոչ մէկ ա-

ռաւելութիւն չենք կրնար ունենալ քանի որ Եւրոպայի մէջ դրամագլուխը շատ քիչ տոկոս կը բերէ, իսկ գալով յիշատակներու տեսակէտին՝ այդ շէնքը ոչ մէկ արժէք չունի, որովհետեւ մեր հին ընկերներու բնակարանը չէ եղած այլ վերջերս հոն փոխադրուած «Դրօշակ»ի խումբագրութիւնը. իսկ եթէ ուզենք օգտակարապէս գործածել այդպիսի գումար մը՝ աւելի նպատակաշարժար է Սասունի մէջ գործածուի, որովհետեւ վստահ եմ որ 100% շահ կ'արտադրէ եւ ժողովուրդին վրայ ալ լաւ տպաւորութիւն կ'ընէ:

Աարումեան.— Նախ տունը խոնաւ է, յետոյ ոչ մէկ յիշատակ կայ այդ տան մէջ եւ ինչպէս որ ընկեր Նշանը ըսաւ թէ՛ դրամը ոչ միայն Ամերիկայի պիտի տայ այլ եւ բոլոր մարմինները. ես ալ համաձայն եմ ընկեր Անտոնին որ ընկերներու մէջ ներշնչելու է այն որ նախընտրութիւնը տրուի կարեւորագոյն գործերու եւ ոչ թէ ժրնեւի մէջ շէնք գնելու:

Ատոմ.— Ես համաձայն չեմ ընկեր Սարումեանի տեսակէտին. կան առաջարկներ որ որոշ ցանկութիւններէ կը բխին եւ չեն կրնար քննադատութեան ենթարկուիլ, մանաւանդ այս պարագային որ Ամերիկայի նախաձեռնութիւնէն կը բխին շատ անկեղծ կերպով եւ մենք իրաւունք չունինք այդպիսի լաւ առաջարկները կողմէ ձեռնարկ մերժելու:

Ակնունի.— Ես չեմ մտածեր որ Ամերիկայի մեր ընկերները մտածէին թէ Ընդհ. Ժողովը պիտի կրնայ այսպիսի վերաբերում ցոյց տալ՝ մերժելով ինքնաբոլոս առաջարկ մը, իսկ գալով խոնաւութեան այդ տունը մենք մեր բնակութեան համար չէ որ կը գնենք, այլ կազմելու համար ընդհանուր յիշատակարան մը:

Մարգապետ.— Մենք չենք ուզեր նոր Միսիթարեաններ ստեղծել. աւելի լաւ է ամէն խնդրի վրայ նայինք «Դէպի Երկիր»ի ձեռնով ու ամէն ձեռնարկ ընենք գաւառի մէջ:

Վահայ.— Եթէ կ'ուզենք Դաշնակցութեան յիշատակները յաւերժացնել, շատ աւելի լաւ գործ մը ըլլած պիտի ըլլայինք եթէ պատրաստէինք Դաշնակցութեան պատմութիւնը, որի մասին թէեւ շատ խօսուած է, սակայն բան մը չէ եղած. կրնանք նոյնիսկ հատորներ կազմել եւ ատոր համար ալ պէտք կայ մեծ ծախքերով թող Ամերիկայի մեր ընկերները նախընտրութիւնը տան այդ բանին:

Ռոստոմ.— Եթէ օգտակարութեան տեսակէտից նայինք, այդ շէնքի գնումը երկրորդական է: Մենք որոշած էինք ձգել այդ շէնքը եւ վարձել նոր սենեակ մը, աւելի աժան. բայց երբ հոն գացի զգացում մը արթնցաւ մէջս եւ ես ալ պէտքը զգացի գնումին, որովհետեւ շատ մը առարկաներ տեսայ հոն, բոլորն ալ յիշատակներ: Իսկ ապագային եթէ ազատութիւն ըլլայ՝ կրնանք նաեւ այդ բոլորը Երկիր փոխադրել:

Վիշապեան.— Կը ձայնակցի Վահայի առաջարկին: Անտոն.— Մենք շատ խոշոր պահանջներ ունինք եւ

նախընտրութիւնը պէտք է տալ անոնց. իսկ զանազան ընկերներու յիշատակները շատ դիւրաւ կարելի է փոխադրել երկրի մէկ կողմը:

Տիգրան.— Կը ձայնակցի Վահագի առաջարկին:

Բաբա.— Ես անգամ ամենաբուռն կերպով համակիր եմ ընկեր Վահագի առաջարկին բայց եւ այնպէս կը կարծեմ թէ բնաւ պէտք չէ այդ ինքնաբոլիս առաջարկը յետ մղել. եթէ խնդիրը վերջնայ կրնանք ուրիշ առթիւ տարբեր առաջարկներ բերել եւ նրանք նորէն կ'օգնեն:

Նշան.— Ես չեմ գիտեր թէ ինչ եզրակացութեան պիտի գայ ժողովը, բայց ես կ'ուզէի գիտնալ թէ անոնք որ այս առաջարկը քննադատեցին, մինչեւ ցարդ ինչո՞ւ այլ կարեւոր առաջարկները — շիրիմներ կազմելու, Դաշնակցութեան պատմութիւնը պատրաստելու եւն.— իրենք չեն ըրած եւ այժմ ալ մեր առաջարկը կը քննադատեն. մենք նիւթական շահեր նկատի չենք ունեցած, այլ բարոյական:

Նախագահը քուէի դրաւ Ամերիկայի Պատգ. ժողովի կողմէ «Դրօշակ»ի խմբագրատունը գնելու առաջարկը, որ ստացաւ 3 քուէ, իսկ հակառակը 4 քուէ ստացաւ:

Առաջադրուած հարցի շուրջ քուէարկութեան դրուեցաւ նաեւ Լեռնեանի հետեւեալ բանաձեւը որ ստացաւ 2 ձայն: «Նկատի ունենալով որ այս պահուս աւելի այժմէական է Դաշնակցութեան պատմութեան կազմումը, որ այդ գործին մէջ կապուած ծախքերը հոգալու համար կուսակցութիւնը ի վիճակի չէ տրամադրելի ընել յատուկ գումար, մինչդեռ ամերիկացիներու կողմէ առաջարկուած մասնավճարն իսկ բաւական է Դաշնակցութեան պատմութեան համար»:

Ընդհանուր ժողովը, չգոցելով Դաշնակցութեան տան գնումին խնդիրը եւ շնորհակալութիւն յայտնելով եւ գնահատելով Ամերիկայի ընկերներուն իրենց առաջարկած նուէրին համար, կ'առաջարկէ որ Դաշնակցութեան տան գնումին համար ժողովուրդը գումարի առաջին մասնավճարը յատկացուի Դաշնակցութեան պատմութեան համար:

Քուէարկութեան դրուեցաւ նաեւ ընկերներ Գրգոյի եւ Վիշապ(եան)ի հետեւեալ բանաձեւը, որ ստացաւ 5 ձայն.— «Ընդհ. ժողովը ուրախութեամբ ողջունելով Ամերիկայի ընկերներու կողմէ յայտնուած դրամական այս նախաձեռնութիւնը, ներկայիս՝ աւելի նպատակաւոր մար կը համարէ այդ նախաձեռնութեան արդիւնքի կիրառումը Հ. Յ. Դաշնակցութեան ընդհանուր պատմութիւնն ու արլուստը պատրաստելու յատկացնել — մասնակցութեամբ բոլոր կուսակցական մարմիններու»:

Քուէարկուեցաւ նոյնպէս ընկեր Անտոնի հետեւեալ բանաձեւը, որ ստացաւ 10 ձայն.— «Գնահատելով այն զգացմունքները, որ թելադրել են Ամերիկայի Շրջանային ժողովը առաջարկել գնել ժընեւի տունը իբրեւ կուսակցական սեփականութիւն — Ընդհ. ժողովը ներկայ

պարագաներում աւելի նպատակաւոր մար է գտնում կուսակցութեան անցեալը յաւերժացնել այլ կարգի ձեռնարկներով, որպիսին են Դաշնակցութեան պատմութիւնը, այլուրի կազմելը, նահատակների շիրիմներ կառուցում են.»:

Դատական յանձնախումբի գեկուցումը.— Զեկուցանողը կարգաց եւ բերանացի բացատրութիւններ տուաւ դատական գործի մասին իր կատարած քննութեան արդիւնքին՝ առաջարկելով այդ խնդիրը չքննել այս ժողովին մէջ, այլ յանձնել ժողովի կողմէ ընտրուած առանձին մարմնի մը, որ հնարաւորութիւն ունենայ մանրամասն եւ լուրջ քննութեան ենթարկել այս խնդիրները:

Որոշուեցաւ եւ ընտրուեցաւ ինը անդամէ բաղկացած յանձնախումբ մը հետեւեալ նկատումներով: Նկատի ունենալով որ Խորհուրդի գումարումը անհնարին է մօտ ժամանակի մէջ, Ընդհ. ժողովը կ'ընտրէ Բարձրագոյն Դատական մարմին, քննելու եւ վերջաբանելու դատական տոսիէի մէջ եղած եւ ներկայացուելիք գործերը: 1) Վարդան, 2) Լեռնեան, 3) Անտոն, 4) Հրաչ, 5) Գալֆա 6) Ակնունի, 7) Բաբա, 8) Վարագդատ, 9) Ս. Շաւարշ:

«Ազատամարտ» հարցը.— Զեկուցանող յանձնախումբը ժողովին ներկայացուց հետեւալ բանաձեւը.— «Ընդհ. ժողովը կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրոյին ընտրել երկու հոգի, յանձնելով մէկուկէ թերթին խումբագրականին մասին վերահսկողութիւնը, իսկ միւսին՝ վարչական մասին: Այս երկու անձերը Բիւրոյի ներկայացուցչի մը հետ միասին կը կազմակերպեն խմբագրական եւ վարչական մարմինները եւ պատասխանատու են Բիւրոյի առջեւ թերթին հետ կապուած բոլոր հարցերու համար»:

Անտոն.— Մենք պէտք է «Ազատամարտ»ի գործը, ինչպէս գրաւոր պրոպագանդի հարցը, դենք շահակցական հիմքերու վրայ. վարձատրենք բոլոր պաշտօնեաները հաւասար չափով: Թերթին ձրի աշխատակցութիւն ընդունելով պիտի գնահատուին եւ արժէքը պիտի յանձնուի կազմակերպական գանձին. թերթը պէտք է վճարէ տպարանին վարձը: Դադրեցնել շաբաթաթերթը իբրեւ անօգտակար: Ասոր փոխարէն գաւառներու բաժանորդագրութիւնը իջեցնել:

Վահագ.— Ըստաձեռններուն մէջ կան գեղեցիկ խօսքեր, որոնք սակայն կը ջախջախուին իրականութեան երկաթէ փաստերուն դէմ: Շաբաթաթերթի մասին յայտնուած կարծիքները անճիշդ են. անկարեւոր աղբիւր է նիւթական տեսակէտը:

Ակնունի.— Պէտք է փակել այս հարցը, որովհետեւ վիճաբանելի կէտեր չատ կան. կ'առաջարկեմ այս հարցն ալ յանձնել ժողովի մանր խնդիրները կարգադրելու համար ընտրուելիք յանձնախումբին:

Կ'ընդունուի այս առաջարկը:

Ըննի յանձնախումբ.— 1) Ընդհ. ժողովի օրակարգին

մէջ մնացած մանր խնդիրներու կարգադրութիւն, 2) բանաձեւերու վերջնական խմբագրութիւն: 3) «Ազատամարտ»ի խմբագրա-վարչական կազմի որոշում: 4) Խմբագրել եւ ընթացք տալ Իթթիհատին ըլլալիք դիմումին (համաձայն ժողովի որոշման) 5) Խմբագրել ազգային-հասարակական գործունէութեան յատուկ պատգոհում 6) Փորթուգալեանի յոբելեան 7) Բանտարկեալներու խնդիր 8) Ժողովի որոշումներու հրատարակութիւն:

Այս յանձնախումբի անդամներն են 1) Վարանդեան, 2) Վահագ, 3) Ակնունի, 4) Մելո, 5) Անտոն, 6) Բաբա, 7) Ասլան, 8) Գրգո, 9) Մելքում, 10) Ս. Շաւարշ, 11) Վարագդատ, 12) Տիգրան:

Ուժերու բաշխում.— Ժողովը երկար զբաղեցաւ այս խնդրով, սակայն մէկ կողմէ ուժերու սակաւութիւնը, միւս կողմէ զգացուած պէտքը ամէն վայրերու մէջ, դժուար վիճակի մէջ գտաւ ինքզինքը եւ առ այժմ բաւականացաւ միայն Ամերիկայի համար տրամադրելի ընելով Վրացեանը:

Արեւելեան Բիւրօ.— Միաձայնութեամբ ընտրուեցան ընկերներ՝ Ակնունի (12 քուէ), Զաւրիեւ (11 քուէ), Բժիշկ (12 քուէ): Գործողը եւ Հինգերորդ անդամները կ'ընտրուին Ռայոնական ժողովին կողմէ:

Արեւմտեան Բիւրօ.— Ընդունուած թեկնածուներէն գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան ընկերներ՝ Վարանդեան (11 քուէ), Ասլան (10 քուէ), Վահագ (11 քուէ), Բաբա (10 քուէ), Անտոն (11 քուէ):

Հաշուեքննիչ յանձնախումբ.— Նախապէս նշանակուած թեկնածուներու վրայ քուէարկութիւն կատարելով՝ ընտրուեցան ընկերներ՝ Մար (11 քուէ), Գալֆա (10 քուէ), իսկ համեմատական մնացին ժիրայր (7 քուէ), Վարդան (5 քուէ), Հրաչ (2 քուէ). այս երեք թեկնածուներուն վրայ կրկին քուէարկութիւն կատարուելով ստացուեցաւ հետեւեալ արդիւնքը.— առաջին անունը ընդունելով իբր անդամ, իսկ յաջորդ երկուքը թեկնածուներ. ընտրուեցան Վարդան, Հրաչ եւ ժիրայր:

Ինքնապաշտպանութեան մարմին.— Գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ՝ արդիւնքը գաղտնի պահելու որոշումով — ընտրուեցան ընկերներ՝ Վ = 12 քուէ, Ռ = 12, Ա = 11, Հ = 11, Մ = 12⁴¹:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ ԽԶ.

15 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Բիւրոներու ներկայացուցիչներ, Պալքանի, Ամերիկայի, Վանի, Կարինի, Կեսարիոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուշ-Սասունի, Ուս. միութեան, Խարբերդի պատգամաւորները. խորհրդակցական ձայնով՝ Մելո, Վահան, Ասող[իկ], Ակնունի, որու նախագահութեամբ բացուեցաւ ժողովը:

Կանոնադրական փոփոխութիւններ.— **Կնիքի խընդիւր.**— Ժողովը նկատի առաւ կնիքի գործածութեան խնդիրը երկրի զանազան մարմիններու կողմէ, որոնք ասկէ առաջ չէին վայելել այդ իրաւունքը:

Անտոն.— Մեր վիճակը անկայուն է. կ'առաջարկեմ ուրեմն, կնիքի գործածութիւնը ընդհանրացնել բոլոր քիւլաներու համար, իսկ կազմակերպութեան զանազան մարմիններուն համար պահել նախկին սահմանափակումը:

Սուրէն.— Եթէ ընդունած ենք Կեդր. Կոմիտէներու գոյութիւնը, պէտք է նաեւ իրաւասութիւն տանք անոնց կնիք գործածելու:

Տիգրան.— Խարբերդի շրջանն ալ կնիք ունենալու պահանջը դրած է. ես չեմ խորհիր թէ ասկէ անտեղութիւններ երեւան կու գան. անտեղութիւններ առանց կնիքի ալ կը պատահին:

Արամ.— Ընդենք խնդիրը. ցենց չունեցող Կեդր. Կոմիտէները պէ՞տք է ունենան կնիք թէ ո՛չ:

Ակնունի.— Այս խնդիրը կանոնական է եւ հետեւաբար վիճաբանութեան իսկ չի կրնար ենթարկուիլ. որոշ է որ կնիք պիտի ունենան Կ. Կոմ.ները. իսկ այն Կ. Կոմիտէները որ ցենց չունին պէ՞տք է ձանջուին իր Կ. Կոմիտէ թէ ոչ:

Վահագ կը կարդայ ներքին կանոնագրի յօդ. 70-ը:

Կարծիքներու այս փոխանակութիւնը բաւական համարուելով՝ խնդիրը քուէարկութեան կը դրուի եւ կ'որոշուի հետեւեալը:

Մեկուսի կոմիտէներուն կնիք գործածելու իրաւասութիւն չտալ:

Նկատի առնելով կնիքի մէջ թրքերէն լեզուի ալ գործածութիւնը ընկերները հետեւեալ կերպով կ'արտայայտուին:

Անտոն.— Մենք միջազգային կազմակերպութիւն ենք, եթէ հայերէն տարբեր լեզուներ գործածել պէտք ըլլայ, այն ատեն շատ լեզուներ կան որ պիտի գործածուին. կ'առաջարկեմ պահել պաշտօնական կնիքի լեզուն հայերէն, իսկ քիւլաները թող ունենան իրենց թրքերէնը:

Վահագ.— Մենք ասկէ առաջ իրաւունք տուինք դաշնակցական քիւլաներուն իրենց մէջ առնել նաեւ համակիրներ, հետեւաբար քիւլաներուն չենք կրնար կնիք գործածելու իրաւասութիւն տալ:

41.- Համապատասխանաբար՝ Վ=խանասորի Վարդան Սեփրապեան Սարգիս. Ռ=Ռոստոմ՝ Զօրեան՝ Ստեփան. Ա=Անդրանիկ (Օզանեան). Գ=Թիրեաքեան Հայկ (Հրայ). Մ=Տէր Սարտիրոսեան Միքայէլ Սար:

Միաձայն ընդունուեցաւ հետեւեալը.

1) Կազմակերպութիւնը կ'ունենայ հայերէն կնիք միայն:

2) Քիւլաքները կրնան ունենալ, իրենց կնիքը հայերէն եւ թրքերէն, առանց գինանշանի:

Կեդր. Կոմիտէի ցենզի նուազեցում.— Յանձնախումբը առաջարկ բերած էր անդամական ցենզի նուազագոյն չափը իջեցնել 500-ի:

Քրթօ.— Կ'առաջարկեմ ընդունիլ. այսպէսով խրախուսած կ'ըլլանք զանազան շրջաններ եռանդուն գործունէութեան:

Նշան.— Երկրին համար ընդունած ենք դրամական ցենզի նուազեցումը. չընդունիլ անդամական ցենզի նուազեցումը՝ որովհետեւ այդպէսով շատցուցած պիտի ըլլանք Կ. Կոմիտէներու թիւը՝ տեղի տալով այն հաւանական անպատեհութիւններուն, որոնց մասին վախ յայտնուեցաւ կնիքի գործածման հարցի ատեն:

Որոշուեցաւ անդամական ցենզը պահել 1000:

Էրամական ցենզը.— Յանձնախումբը կ'առաջարկէ դրամական ցենզը ընդունիլ 10.000ը, որուն առնուազն 5000ը պէտք է անպատճառ անդամական տուրք ըլլայ, իսկ միւս 5000ը՝ կազմակերպութեան պահանջներուն համար հաւաքուած՝ կազմակերպական ճամբով:

Ատոմ.— Կ'առաջարկեմ բոլորովին վերցնել դրամական ցենզի խնդիրը. ամէն Կ. Կոմիտէ որ կը վճարէ իր անդամական տուրքերը, ունի ցենզ: Դրամական ցենզը կրնայ ստեղծել այն անպատեհութիւնը որ դրամ շատ վճարողներ ստանան ցենզ, առանց արժանի ըլլալու:

Անտոն.— Հակառակ եմ դրամական ցենզի վերացման. պէտք է որոշ պարտք դնել ընկերներու վրայ. Տարօն, որու որ հարցնէք, դաշնակցական եմ կ'ըսէ, բայց երբ կարգը դրամին զայ ոչ ոք կ'ուզէ վճարել:

Ատոմ.— Հիմնական չէ աս մեր կանոնագրին մէջ. դրամական ցենզի ներմուծումը եղած է այն ատենին, երբ մենք սկսած ենք խաղալ հարիւր հազարներու հետ. ցենզը պէտք է ըլլայ գիտակցական. անդամավճարներէն զատ բացառիկ հանգանակութիւններով առաջացած գումար պահանջել՝ մեզ կը դնէ սխալ ճամբու մէջ:

Արամ.— Գիտակցութիւնը դեռ ապացոյց չէ թէ դրամական ցենզը կարելի է ապահովել. շատ գիտակիցներ ունինք, որ չեն վճարեր իրենց տուրքերը. պէտք է պարտաւորիչ ընել:

Հարցը քուէարկութեան դրուելով ստացաւ հետեւեալ արդիւնքը:

- 1) Քսան հազարը մնայ անխախտ (1 ձայն)
- 2) Տասը հազար՝ Յանձնաժողովի առաջարկին համեմատ (8 ձայն)
- 3) Չորոշել ոչ մէկ սակ, այլ հիմունքի անդամավճարներու կանոնական տոկոսի վճարման վրայ (ստացաւ 9 ձայն), 2 ձեռնպահ, 2 հակառակ:

Անտոն.— Ընդունելով եւ համաձայն ըլլալով դրամական ցենզի անցած որոշման, կ'առաջարկեմ անդամավճարի մէջ մտցնել առաջատուական սկզբունքը, այսպէս.—

- 1) Տարեկան 10 ոսկի եկամուտ ունեցողը — 1%
- 2) Տարեկան 20 ոսկի եկամուտ ունեցողը — 2%
- 3) Տարեկան 30 ոսկի եկամուտ ունեցողը — 3% եւ այսպէս յաջորդաբար մինչեւ 100 ոսկի եկամուտ ունեցողը: 100 ոսկիէն վեր իւրաքանչիւր 100 ոսկի աւելի եկամուտին 1% աւելի:
- Իւրաքանչիւր 10-20 ոսկի եկամուտ ունեցողը 1-2%
- Իւրաքանչիւր 21-40 ոսկի եկամուտ ունեցողը 2-3%
- Իւրաքանչիւր 41-80 ոսկի եկամուտ ունեցողը 3-4%
- Իւրաքանչիւր 81-100 ոսկի եկամուտ ունեցողը 4-5%

Քառորդ ժամ դադարի միջոցին կարծիքներու նոր փոխանակութիւններ կատարուելով, ժողովին ներկայացուեցաւ հետեւեալ առաջարկը՝ 11 ընկերներու ստորագրութեամբ. «Նկատելով որ պիտե՛՛նք ի հարցը Ատոմի բանաձեւով կը մատնուի անորոշութեան եւ թէ՛ ոչ մէկ մարմին չունենալով կոնկրէտ գումարի պարտականութիւն՝ չի ալ ձգտիր դրամական պիտե՛՛նք ապահովելու, նկատելով որ այդ դրութեամբ անկարելի է որոշեալ ձեւով հաշիւ պահել, քոնթրոլի ենթարկել եւ այս ու այն մարմինն պահանջներ ընել,

Նկատելով որ այդ դրութեամբ եկամուտները անորոշութեան կը մատնուին, մինչդեռ պիտե՛՛նք ի բլքը որոշուած է,

Նկատելով որ անորոշ պիտե՛՛նք ոչ մէկ մարմին չի կրնար ընտրուիլ եւ գործել,

Կ'առաջարկենք՝ վերաքննել զայն իբրեւ հակասող բոլոր նախկին որոշումներուն»:

Այս առաջարկին վրայ մտքերու նոր փոխանակութիւն տեղի ունեցաւ եւ ընդունուեցաւ հետեւեալ նոր բանաձեւը.— «Կ. Կոմիտէներու դրամական ցենզը նշանակել 10.000 Ֆրանկ, որուն առնուազն 3000ը պէտք է գոյացած ըլլայ անդամական կանոնական տուրքերէ, 2000ը կազմակերպական ջանքերով հաւաքուած (հանգանակութիւն, նուէր, եւն.) բուն կազմակերպական ձեռնարկներու համար, մնացած 5000ը դարձեալ կուսակցական ջանքերով ձեռք բերուած, բայց կարելի է գործ դնել ոչ-կազմակերպական, բայց կուսակցութեան համակրելի ձեռնարկներու համար. «Տորհուրդին կը թողուի, նկատի ունենալով երկրի այլ եւ այլ շրջաններու տնտեսական կացութիւնն ու յեղափոխական գործունէութիւնը, նուազեցնել այս ցենզը իբրեւ բացառութիւն»:

Ժողովը փակուեցաւ ժամը 1.30ին:

Նիստ ԽԷ.

16 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկայ՝ Ամերիկայի, Մուշ-Սասունի, Պալքանի, Տրապիզոնի, Պոլսոյ, Կեսարիոյ, Ուս. միութեան, Սամսոն-Մարզուանի, Վանի, Խարբերդի պատգամաւորները. Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու ներկայացուցիչները. վճռական ձայնով՝ Բաբա, Աւօ. խորհրդակցական ձայնով՝ Մելո, Ակնունի, Վարազդատ, Մելքում, Վարդան:

Պրոպագանդի բանաձեւի վերջնական մշակումը յանձնուեցաւ Իննի մասնախումբին, իսկ բանաձեւը, որ պատրաստուած էր արդէն պէտք տեսնուեցաւ կարդալ եւ վաւերացնել:

Նոյնպէս կարդացուեցաւ ընկեր Վահագի մէկ առաջարկը եւ Իննի յանձնախումբին (կանոնական) յղուեցաւ:

Ընկեր Ատոմ եւս կ'ուզէ իր հարցի մասին քանի մը լուսաբանութիւններ տալ:

Նախագահ.— Ատոմի շուրջ ամբաստանութիւններ չեն եղած, այլ նկատի առնուեցաւ այն որ՝ յիշեալ արդէն, ինչպէս նաեւ Գարոն, ամբաստանուած են եւ չեն կարող թեկնածու ըլլալ Բիւրոյի: Եթէ ժողովը ուզէ, կարող է զինքը լսել եղած նոր ակնարկներու մասին, յատկացնելով որոշ ժամանակ մը:

Ատոմ.— Ես չեմ համաձայնիր որոշ ժամանակ որոշելու առաջարկին. ես ստիպուած եմ պատմել բոլոր եղածները. ժողովը պէտք է ազնիւ ըլլայ եւ ստիպուած է զիս մտիկ ընել, հոգ չէ թէ երկար տեւէ իմ ըսելիքս. ես կը պահանջեմ այդ չեմ կրնար թողուլ որ զիս բարոյապէս մեռցնէք իմ բացակայութեան խօսելով եւ զիս լռեցնելով:

Անտոն.— Ընկեր Ատոմ իրաւունք չունի այդքան խստապահանջ ըլլալու, քանի որ ինք իրաւունք ունի այս ժողովին ներկայ ըլլալու եւ բոլոր ակնարկութեանց պատասխան տալու, բայց իր կամքէն անկախ պատճառով ներկայ չկրցաւ ըլլալ. ասոր հետ մէկտեղ կ'առաջարկեմ որ օրակարգը վերջանալէ յետոյ միայն լսուի ընկերը, ընկերաբար, որպէսզի ժողովը մէկ կողմը միայն լսած չըլլայ:

Բաբա.— Ժողովին մէջ Ատոմի նկատմամբ նոր ամբաստանութիւններ եղան ուստի եւ իրաւունք ունի պահանջելու որ խօսի եւ տայ լուսաբանութիւններ, բայց նախ օրակարգը վերջացնենք եւ ապա միայն լսենք զինքը:

Նշան.— Ես ալ այն կարծիքն եմ որ լսենք Ատոմը, քանի որ անոր շուրջ եղան նոր ակնարկներ. եթէ հարկ ըլլայ քանի մը օր եւս սպասել՝ սպասենք եւ լսենք զինքը:

Ատոմ.— Քանի որ իմ բացակայութեանս խօսուած է իմ մասին եւ եղած են զրպարտութիւններ, ուստի իմ

արդար իրաւունքն է բացատրութիւններ տալ: Նախագահը քուէի կը դնէ Ատոմը լսելու առաջարկը եւ 1-ի դէմ 7 ձայնով կ'որոշուի լսել անոր բացատրութիւնները:

Ժողովը անցաւ Դաշնակցութիւնը եւ Ազգային կուլտուրական գործերը բանաձեւին նկատուութեան: Ներկայ էին 12 ձայներ, որոնց 9-ին քուէներով անցաւ իբրեւ դաշնակցական Ֆրակցիա ազգային երեսփոխանական ժողովին հաւաքաբար մասնակցելու առաջարկութիւնը, որ կար բանաձեւին մէջ. յետոյ կէտ առ կէտ կարդացուեցան բանաձեւի մնացեալ մասերը եւ չնչին փոփոխութեամբ վաւերացուեցան:

«Քննելով ներքին ազգային գործունէութեան քաղաքականութիւնը ինչպէս եւ մեր բունելիք դիրքը, դէպի այդ ասպարէզի կուսակցութիւններն ու տարրերը,

Դաշնակցութեան Զ. Ընդհ. Ժողովը, «Գտնելով որ հայ եւ հարեւան ժողովուրդների տնտեսական-քաղաքակրթական ներկայ յետամնաց շրջանին մէջ ընկերվարական-յեղափոխական եւ արմատական տարրերը անկարող են կազմել մեծամասնութիւն եւ գործադրել իրենց բովանդակ ծրագիրը, այլ եւ հարկադրուած են սահմանափակուիլ մասնակի նուաճումներով եւ իրենց իտէալներու արծարծումով ու համախոհներ գտնելով:

Ընդունելով որ մեր գործունէութեան վայրերի ներկայ սոցիալական պայմանների մէջ՝ ամենաէական կարեւորութիւն ունի սահմանադրական սկզբունքի (մարդկային ազատութիւններու, ժողովրդապետութեան ու իրաւակարգի) լայնացումը, խորացումը եւ կիրառումը կեանքի մէջ, աւատական ու կղերական մտածողութեան տիրապետութեան տեղ:

Նպատակ ունենալով ապահովել հայի՝ ինչպէս եւ ամէն մի ազգութեան ազգային-կուլտուրական ինքնավարութիւնը, իբրեւ պետական գործունէութեան մի ճիւղ, իր ինքնավար վարչութեամբ ու յատուկ տուրք սահմանելու իրաւունքով:

2) Գիտակցելով որ ազգային-կուլտուրական հարցերու ու սահմանադրութեան կիրառման մէջ մեզի համամիտ թէ համագործակից կը լինին թէ յառաջադէմ կուսակցականները թէ չէ՞՞՞ք խաւերի ազատամիտ տարրերը:

3) Շեշտելով որ Դաշնակցութեան բարոյական ազդեցութիւնը հետեւանք է ոչ միայն մեր ծրագրի ու գործելակերպի ճշդութեան այլեւ կուսակցական անհատների անձնուիրութեան, անչահախնդրութեան եւ միշտ դժուարագոյն գործեր ստանձնելուն՝ մտքի ու սոցիալական կեանքի նոր հորիզոններ բանալու մէջ,

Կ'որոշէ, 1.- Ձանալ օրէնքի միջոցով ապահովել հայոց ազգային-կուլտուրական ինքնավարութիւնը (իբրեւ պետական իրաւասութեան ու գործունէութեան մի ճիւղ) վե-

րակազմելով Համապատասխան վարչութիւնները դեմոկրատիկ-ապակեղորոնական աշխարհական հիմերու վրայ, ապահովելով ճրի-պարտադիր, տարրական, ընդհանուր կրթութիւնը, ճնշուած-աղքատ խաւերի համար՝ ծառայեցնելով անոր ազգային կալուածներն ու հասոյթները, ազգային տուրքը եւ պետութեան կողմէ ստանալիք մշակութական նպաստի հասնելիք մասը:

2.- Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն ու ամբողջութիւն չմասնակցելով ազգային-կուլտուրական գործերու ու հիմնարկութիւններու մէջ՝ կուսակցական անհատները եւ շրջանները կը մասնակցին այդ գործերին առանց հակասելու կուսակցական սկզբունքներուն, լինելով ներշնչողի, ուղղութիւն տուողի, գործակցողի եւ ոչ կարգադրողի կամ միակ գործադրողի դերին մէջ:

3.- Կրօնական եւ անոր հետ կապուած դաւանական խնդիրներու ու համապատասխան հաստատութիւններու հանդէպ բռնելու է չէզոք դիրք՝ ապահովելով ու յարգելով ամէն մէկի խղճի ազատութիւնը, համբերատար ու վայելուչ վարմունք ցոյց տալով դէպի բոլոր տեսակի դաւանանքներն ու կրօնական զգացումները:

4.- Ազգային-մշակութական մարմիններու մէջ աշխատող մեր ընկերները կը գործեն՝ պլոքներ կազմելով՝ յարատեւ գործունէութեան ընդունակ միւս ազատական-դեմոկրատիկ տարրերի հետ:

5.- Դաշնակցական ղեկավար մարմիններու անդամները (Բիւրօ, Կ. կոմիտէ, խմբագիր, փարլամենդի անդամ) չեն կարող մտնել վարչական ու քաղաքական ժողովներու մէջ:

6.- Կեդրոնական ու գաւառային ազգ. խորհրդարանական ժողովների անդամակցութեան թեկնածուները կը նշանակուին համապատասխան շրջանային մարմիններէն, իսկ Պոլսոյ մէջ՝ խորհրդակցութեամբ ձեռնհաս մարմիններու: մասնակցողները հաշուետու են շրջանային ժողովին:

7.- Կուսակցական պատգամաւորները կը ներկայանան ազգային երեսփոխանական ժողովների մէջ որպէս դաշնակցական խմբակցութիւն: Այն բոլոր հարցերի շուրջ ուր կարելի է ազատական ու դեմոկրատիկ տարրերու ու խմբակցութիւններու հետ համաձայնուիլ պէտք է պլոքներ կազմել անոնց հետ:

8.- Ազգային վարչական մարմիններուն ընկերները կը մասնակցին անձնական պատասխանատուութեամբ իբր դաշնակցական անհատներ, իրենց խորհրդարանական խմբակցութեան կամ շրջանի մարմիններու համաձայնութիւնը ստանալէ ետք:

Մանօթ.— Ուր որ ընկերներու մասնակցութիւնը կը վնասէ կուսակցութեան գործերուն, մասնակցութիւնը կ'արգիլուի:

9.- Ընտրութիւններու գործերը կը կարգադրուին

դաշնակցական ձեռնհաս մարմիններու ներքին հրահանգներով:

10.- Ազգային-մշակութային կեանքի անմիջական հասունացած պահանջներին համար կը մշակուի յատուկ պլատֆորմ, որմէ պարտաւոր են առաջնորդուիլ մեր պատգամաւորները»:

Իթթիհատի բանաձեւը.— Կարդացուեցաւ բանաձեւը որ մասնախումբի կողմէ որոշ փոփոխութեան ենթարկուած էր եւ ժողովն ալ որոշ, փոքրիկ փոփոխութիւններ ընելով հաստատեց, որ հետեւեալն է.— «Ընդհ. ժողովը լսելով Արեւմտ. Բիւրոյի տեղեկագիրը եւ ընկեր պատգամաւորներու զեկուցումները՝ Իթթիհատի կազմին, գործունէութեան, Դաշնակցութեան հետ ունեցած յարաբերութիւններուն եւ Իթթիհատէն սերած դահլիճներու քաղաքականութեան մասին.

Ուշադրութեան առնելով Թուրքիոյ ներկայ քաղաքական, ընկերային եւ տնտեսական դրութիւնը ընդհանրապէս եւ հայկական նահանգներու վիճակը մասնաւորապէս.

Սրտի ցաւով արձանագրելով եռամեայ շրջանին մէջ կառավարական քաղաքականութիւնը, [որ] հակառակ շատ մը յուսատու նախափորձերու ոչ միայն չէ նպատած այլակրօն ու այլացեղ ազգերու հաշտ համակենցողին, ինչ որ հիմ պէտք է ծառայէր երկրի ընդհանուր վերաշինութեան մեծ գործին, այլեւ տեղի է տուել ընդհանրապէս անվստահութիւններու արծարծման եւ գոյութիւն ունեցող ազգային իրաւունքներու ճնշումին.

Որ Իթթիհատը եւ անոր յենած դահլիճները փոխանակ հետեւողականօրէն ոչնչացնել ձգտելու աւատական ռեժիմի մնացորդ միջնադարեան առանձնաշնորհումները, փոխանակ արգիլելու որ Անատոլիոյ մէջ վերջին երեսուն տարիներու անխիստութեան հետեւանքով առաջ եկած բռնատէրեր օրինական հանգամանք չտան իրենց հողային գրաւումներուն,— ընդհակառակը իրենց հետեւած սիրաշահումի քաղաքականութեամբ քաջալերած են զանոնք ի վնաս Թուրքիոյ բազմաչարչար աշխատաւոր զանգուածներուն եւ երկրի բնական յառաջդիմութեան.

Որ Իթթիհատը, ձգտելով իր ձեռքը պահել իշխանութեան ղեկը եւ ներկայացնելով փարլամենթական մեծամասնութիւն, աստիճանաբար ետ է նահանջեր սահմանադրական-ժողովրդապետական սկզբունքներէն, գործ չէ դրած օրէնսդրական աշխատանք՝ ճնշուած, աշխատաւոր ժողովրդի բեռը թեթեւեցնելու, հարկային սխտեմը բարեփոխելու եւ տնտեսական բարենորոգումներ մտցնելու, այն պատճառով որ իր կազմին մէջ է ապէս սահմանադրասէր եւ դեմոկրատ տարրերուն ընդդէմ գոյութիւն ունի խայտաբղէտ եւ մեծ մասով աջակողմեան բազմութիւն մը.

Որ Իթթիհատական քաղաքականութիւնը զանց ըրած է Ֆինանսներու մէջ հաւասարակշռութիւն ստեղծելու եւ ոչ-արդիւնաւէտ ծախսերը կրճատելու տեղ՝ շարունակած է պարտքեր ընելու սխտեմը, ինչ որ չի կրնար վտանգի չենթարկել պետութեան անկախութիւնը:

ծելու եւ ոչ-արդիւնաւէտ ծախսերը կրճատելու տեղ՝ շարունակած է պարտքեր ընելու սխտեմը, ինչ որ չի կրնար վտանգի չենթարկել պետութեան անկախութիւնը:

Որ Նոր-Թուրքիան իր աշխարհագրական դիրքին եւ քաղաքական շահերուն վայել քաղաքական չէզոք յարաբերութիւն չէ պահած Եւրոպայի քաղաքական խոշոր խմբակցութեանց հետ, այլ եղած է միակողմանի եւ ենթարկուած է գերմանական ազդեցութեան՝ այսպէս պաղեցնելով իրմէ արեւմտեան Եւրոպայի ամենազեմոկրատիկ ու ազատասէր կառավարութիւնները, ինչ որ բարդութիւններու դուռ բանալ կը նշանակէ:

Արձանագրելով դարձեալ՝

Որ Դաշնակցութեան ցարդ կատարած բազմաթիւ բանակցութիւններն ու համաձայնութիւնները հայ ժողովրդի բացառիկ կացութեան ու կենսական պէտքերուն նկատմամբ՝ մնացած են առանց հետեւանքի Իթթիհատի եւ անկէ բխած դահլիճներուն կողմէ:

Որ Իթթիհատը եւ իր դահլիճները գոհացում տալով կարգ մը երկրորդական խնդիրներու, էականներուն հանդէպ շատացած են միայն լոկ անիրագործելի մնացած խոստումներով,

Որ, հակառակ Սելանիկեան եւ բոլոր այլ համաձայնութիւններուն՝ Իթթիհատը չէ խորհրդակցած Դաշնակցութեան հետ երկրի կացութեան վերաբերող կարեւոր հարցերու լուծման ատեն, ինչպէս եւ իր գաւառական մարմինները՝ տեղին դաշնակցական կոմիտէներուն հետ,

Որ կառավարութիւնը, յանուն Կիլիկիան սարսափելի ոճիրներուն, իր դատած ու դատապարտած յանցաւորները հետզհետէ ներման արժանացնելով՝ բանտէն ազատ արձակած է, վարկաբեկելով արդարութեան ուժը թէ դժբախտ գոհերու եւ թէ յանցագործ տարրերու աչքին ու նպատելով այն հին համոզման արմատացումին թէ՛ կարելի է սահմանադրական ռեժիմին տակ եւս թալանել, հրդեհել, ջարդել եւ մնալ անպատիժ:

Հաստատելով միւս կողմէ՝ որ Դաշնակցութիւնը ոչ միայն անյողողը հետեւականութեամբ հաւատարիմ գտնուած է Օսմանեան սահմանադրութեան հաստատման ատեն իր ստանձնած բոլոր յանձնառութիւններուն՝ հանդէպ Նոր-Թուրքիոյ,— այլ եւ ուղղամտօրէն գործակցած է Իթթիհատին՝ փոխ-յարաբերութիւններու սահմանին մէջ, յաճախ նոյնիսկ ընդդէմ երթալով հայ ժողովրդի մէկ ստուար մասին զգացումներուն,

Ընդհ. ժողովը կ'որոշէ

1) Կուսակցութեան անուկով Իթթիհատի առաջիկայ քունկէին ուղղել յայտարարագիր մը՝ հիմ ունենալով վերի մատնանշումները, ճշդելու համար երկու կուսակցութեանց փոխ-յարաբերութիւններու եղանակը եւ գործակցութեան բացորոշ պայմանները, կցելով այդ յայտարարագրին նաեւ ամփոփ Յիշատակագիր մը որ

բովանդակէ ա) Վերջին 3 տարիներու կացութիւնը հայ բնակ նահանգներու մէջ, եւ, բ) Կտրուկ ու հիմնական միջոցներ՝ հայ ժողովրդի բացառիկ տառապանքներուն դարմանման նկատմամբ:

2) Եթէ յանուն կուսակցութեան կատարուած այս դիմումէն ետք եւս Իթթիհատն ու անկէ բխած դահլիճները գործով երաշխիքներ չտան ցարդ եղած խոստումներու մօտալուտ իրագործման մասին՝ ժողովը կ'արտօնէ իր ձեռնհաս մարմինը, դադրեցնել յարաբերութիւնները Իթթիհատի հետ, որեւէ կերպով պատասխանատուութեան բաժնած չըլլալու համար անոր հետ՝ Իթթիհատական դահլիճներու կատարած կամ կատարելիք սխալներուն մէջ:

3) Սակայն, Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր սկզբունքներուն եւ հանդիսաւոր յանձնառութիւններուն, ոչ միայն կը շարունակէ միշտ իր առաջին պարտականութիւններէն՝ մէկը ընդունելի օսմանեան սահմանադրութեան պահպանումն ու զարգացումը, այլ եւ չի խնայել իր գործակցութիւնը Իթթիհատի ձախակողմին հապէս ռամկավար տարրերուն ինչպէս եւ Թուրքիոյ բոլոր անկեղծօրէն սահմանադրասէր տարրերուն՝ յանուն երկրին վերանորոգման գործին:

Ժողովը կը հրահանգէ միանգամայն՝ (Ա) որ Թուրքիոյ դաշնակցական մարմինները իրենց շարունակական պրոպագանդով ներշնչեն հայ ժողովուրդին՝ հրաժարիլ Իթթիհատ-դաշնակցական համաձայնութիւնը նկատելէ իբր սիակ եւ բացարձակ գրաւակներ իր կենսական շահերու պաշտպանութեանն համար եւ ձգտիլ կազմակերպելի քաղաքական կուսակցութեանց մէջ: (Բ) Որ Օսմ. խորհրդարանի դաշնակցական պատգամաւորները ստանձնեն անաչառ քննադատի դեր՝ հանդէպ կառավարութեան եւ Իթթիհատի:

4) Իթթիհատի եւ Դաշնակցութեան փոխադարձ յարաբերութիւնները պիտի վարէ Արեւմտեան Բիւրոն, մասնակցութեամբ Օսմանեան խորհրդարանի դաշնակցական հատուածի ներկայացուցչին, իսկ խորհրդակցութիւնները եւ որոշումները տեղի կ'ունենան խառն մարմնի մէջ, կազմուած Բիւրոյի անդամներէն, մէկ պոստներէն⁴² եւ Կ. Պոլսոյ Կ. Կ.ի մէկ ներկայացուցչէն:

Ներկայ որոշման վերաբերմամբ ապագայում անելիք այս կամ այն քայլը՝ կ'որոշէ կամ դաշնակցական խորհուրդը կամ նրա բացակայութեամբ՝ երկու Բիւրոները, փոխադարձ համաձայնութեամբ, խորհրդակցութեան կանչելով շրջանի ձեռնհաս ընկերները»:

Ընկեր Անտոնը պատրաստած ըլլալով միջազգային յարաբերութեան մասին բանաձեւ մը, կարդացուեցաւ եւ այդ մասին [եղաւ] կարծիքներու հետեւեալ փոխանակումը.—

42.- ՄԿԱՐԱՆԵՐԻՆՆԵՐԸ — պետական երեսփոխաններն, պատգամաւորներն:

Բարբա.— Ես կը կարծեմ որ միջազգային յարաբերութեան խնդիրը շատ բարդ է եւ այդ չէ կարելի այժմէն որոշել, որովհետեւ պայմանները միշտ կը փոխուին եւ մենք չենք կրնար որոշ դիրք ունենալ:

Վարանդեան.— Շատ դժուար է այդ խնդիրը լուծել. ես ալ շատ եմ մտածեր, բայց չեմ կրցած որոշ եզրակացութեան գալ եւ խնդիրը այնքան դժուար լուծելի է որ պէտք է շարաթներ խօսուի եւ վիճուի որպէսզի կարենանք մեր դիրքը ճշդել. ես կ'առաջարկեմ այս խնդիրը յետաձգել:

Ատոմ.— Ընկեր Անտոնի առաջարկութեան մէկ մասը արդէն անցած է — որ բոլոր դաշնակցականները իրենց քաղաքացիական պարտականութիւնները... եւ պէտք է գիտնալ թէ դաշնակցականները նախ դաշնակցական են եւ յետոյ միայն քաղաքացի:

Անտոն.— Նկատի առնելով որ հարցը երկար վիճաբանութեան պէտք ունի, բաւականաչափ լուսաբանւած չէ, ես կ'առնեմ իմ առաջարկը աչքի առաջ ունենալով որ ժամանակը սուղ է:

Ժողովը միաձայնութեամբ որոշեց նոր Քոնֆրոնի մարմին պարտականութիւն յանձնել նախորդ Ե. Ընդհ. Ժողովի կողմէ ընտրուած հաշուեքննիչ մարմնին տեղեկագիրը մտցնել Ընդհ. Ժողովի որոշման մէջ եւ ցրուել մարմիններուն:

Նկատ իմ:

18 Սեպտ. 1911 (կէսօրէ վերջ)

Ներկաներ՝ Սամսոն-Մարգուլանի, Ամերիկայի, Ուսմիութեան, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Խարբերդի, Պալքանի, Վանի, Պոլիսի պատգամաւորները. վճռական ձայնով՝ Բարա, Աւօ, խորհրդակցական ձայնով՝ Վահան, Մելօ, Ժիրայր, Սաթօ, Ասողիկ, Մարգպետ, Մելքում, Ակնուհի: Հրաւիրուած էր նաեւ ընկեր Ֆելիքս:

Աշխատաւորական քաղաքականութիւն.— Յանձնախումբի կողմէ ընկեր Ֆելիքս բերանացի կու տայ մանրամասն գեկուցում, շեշտելով որ օգտուած են բոլոր տեղեկագիրներէն եւ պատգամաւորներու բերանացի բացատրութիւններէն. յանձնախումբը եկած է այն եզրակացութեան՝ որ բոլոր տեղեկագիրներն ալ անխնամ կերպով պատրաստուած էին, ինչ որ ներելի չէ: Յետոյ ընկեր թուական բացատրութիւններ տուաւ գլխաւոր շրջաններու մէջ եղած տարրերու մասին թէ ինչ չափով աշխատուած է եւ որքան բանուորներ կան ու ինչ նոր ձեռնարկներ եղած են այդ ուղղութեամբ. օրինակ քորեբրաթիւ-գործակցական ընկերութիւններ են: Յետոյ շեշտեց այն որ աշխատաւորական յառաջդիմութեան եւ կազմակերպմանը համար գրեթէ բնաւ ջանք չէ թափ-

ւած, ինչպէս փարլամենթի բեմէն, նոյնպէս նաեւ մեր օրաթերթին մէջ, այն ինչ պէտք էր շատ աւելի աշխատանք թափուէր աշխատաւորական միութիւններ կազմելու համար, եւ եթէ քիչ շատ բան մը եղած է ան ալ անհատ ընկերներ է որ ըրած են. այն ինչ միջազգային սոցիալիստական կուսակցութիւն մը որպիսին է մերը, պէտք է աւելին ընէր: Ընկերը կարգաց էնթեոնասիոնալի մէկ որոշումը թէ ինչ ձեռքով պէտք է կազմակերպել արհեստակցական միութիւնները եւ առաջարկեց այդ միջին ձեռք իւրացնել եւ այդ ձեռքով միայն կազմել նոր միութիւնները. նկատել տուաւ նաեւ այն որ մենք մեր ներկայացուցչին բերնով էնթեոնասիոնալին խոստացած ենք կազմակերպել նաեւ օսմանցի տարրեր: Մեր շահը իսկ կը պահանջէ ուրիշ ազգերու արհեստակցական միութեանց հետ յարաբերուիլ, քանի որ անոնց իրական շահերու պաշտպանը կրնայ միայն սոցիալիստական կուսակցութիւն մը լլլալ, ուստի մենք պէտք է յարաբերուինք սերտ կերպով եւ հասկցնենք թէ միայն մենք կրնանք անոնց պաշտպանը լլլալ՝ թէ փարլամենթի մէջ եւ թէ դուրսը. այսպիսով քաղաքական կամ քաղաքացիական ոեւէ առթիւ կրնանք բոլոր արհեստակցական միութիւնները եւ բանուորները միացնելով՝ միջազգային հողի վրայ պահանջներ ներկայացնել եւ յաջողիլ: Յայտնեց նաեւ թէ յանձնաժողովի մէջ ընկեր Արամը տարբեր տեսակէտի վրայ կեցած է:

Վեռապեան.— Ընկեր գեկուցանողը ըսաւ թէ, որպէս թէ Կեսարիոյ մէջ աշխատաւորական միութիւններ կազմելու հող չկայ ըսած լլլամ ես. այն ինչ ես ըսած եմ թէ գիւղացիական եւ այլ միութիւններ կարելի է կազմել, բայց միայն բանուորական միութիւններ է որ չէ կարելի կազմել. պատճառը այն է որ քաղաքի մէջ կան 200 գործաւորներ, որոնք բաւականաչափ օրական կը ստանան, անոնք չեն կրնար իրենց օրականները բարձրացնել, այլապէս արդիւնաբերութիւնը կը քայքայուի:

Սուքէն.— Դաշնակցութիւնը իր գործունէութիւնը չի ցուցադրեր, այդ պատճառով մեր բովանդակ գործունէութիւնը չ'ամփոփուի ընկեր Ֆելիքսի գեկուցման մէջ: Սեբաստիոյ շրջանին մէջ 5-8 արհեստակցական միութիւններ կան՝ որոնք գործադուլներ ըրին եւ բաւական ալ յաջողեցան: Ես պատեհութիւն ունեցայ նաեւ Երզնկա երթալու, ուր եւս բաւական աշխատանք թափուած է եւ գոյութիւն ունի միութիւն մը:

Վարանդեան.— Շատ ցաւալի է որ գեկուցումը տըխուր կերպով նկարագրած է մեր աշխատաւորական գործունէութիւնը, սակայն չպիտի կարծել թէ ատոր պատասխանատուութիւնը կ'իյնայ ղեկավար ընկերներու վրայ, քանի որ երկրի յետամնացութիւնը մեծ դեր է կատարում, արդիւնաբերական թուրութիւնը մեծ չափով կ'ազդէ, նոյնպէս նաեւ մեր գոյութեան անորոշութիւնը, վտանգներու ներկայութիւնը եւ այլն: Իմ կարծիքով հայ բանուորները պէտք է կազմել ազգային հո-

ղի վրայ, նախ քանի որ առ այժմ մենք խառն արհեստակցական միութիւններ կազմելով կը ստեղծենք մեծ Բարբելոն մը. ճիշդ է, մենք խոստացած ենք էնթեոնասիոնալին բոլոր տարրերի կազմակերպումին ձգտիլ, բայց խառն ձեռքով չենք կրնար. մենք մեր ձեռնհաս ընկերներու ձեռքով կ'աշխատինք նաեւ անոնց մէջ:

Ակնուհի.— Այս հարցը լուսաբանելու համար պէտք է աչքի առաջ ունենանք Կովկասի մեր գործունէութիւնը, որպէսզի կարելի լլլայ աւելի լաւ ծրագիր եւ քաղաքականութիւն մշակել: Ուրիշ երկիրները չէ կարելի օրինակ առնել, մենք ապրում ենք բացառիկ պայմաններում, այստեղ կրօնային, ազգային շերտաւորումը մեծ չափերով շեշտուած է, ուստի մենք հոս անկուսակցական հողի վրայ հիմնելու ենք արհեստակցական միութիւններին եւ եթէ կ'ուզենք՝ նոյնիսկ միջազգային հողի վրայ լլլալու են անոնք որպէսզի ազգերու մերձեցում մը առաջ բերուի: Եթէ կուսակցական հողի վրայ դնենք, նախ յոյները չպիտի կարենանք մեզ մօտեցնել. նոյնիսկ հայ բոլոր տարրերը, քանի այստեղ կուսակցական ատելութիւնը մեծ չափերու է հասած:

Աբամ.— Իմ կարծիքս այն որ գիւղացիական եւ արհեստակցական միութիւնները պէտք է լլլան կուսակցական եւ անոնք պէտք է դաստիարակուին ազգային, քաղաքական եւ տնտեսական երեք տեսակէտներով. այն ինչ ընկեր Ֆելիքս կ'ուզէ — շատ մաթերիալիստական-տնտեսական հողի վրայ եւ այդ դաստիարակութեամբ վարել: Իսկ գալով այն կասկածին թէ միութիւնները կուսակցական հողի վրայ դնելով ազգային խտրութիւններ կը ծագին, ինչպէս կարծում է ընկեր Ակնուհի, այդ ճիշդ է, ընդհակառակը երբ միջազգային հողի վրայ կազմուի աւելի կրնայ վտանգուիլ այդ յարաբերութիւնները: Քանի որ մեր քաղաքական խումբերը շատ գործունէութիւններ չունին ընելիք, ուստի պէտք է աշխատուի արհեստակցական եւ այլ տնտեսական շարժումներու հետ կապել, բայց բնաւ չմոռնալ քաղաքական եւ ազգային գործունէութիւնը: Գիւղացիական միութիւնները պէտք է կազմել միայն կուսակցական հողի վրայ:

Ընկեր Ֆելիքս եղած քանի մը հարցերուն կը պատասխանէ ըսելով թէ ինք երբեք չէ ըսած որ արհեստակցականները պէտք է զբաղուին քաղաքացիական հարցերով. իր առաջարկած ձեռն այն է որ արհեստակցական միութիւնները կազմուին անկուսակցական հողի վրայ:

Էաբա.— Կովկասի մասին ըսեմ որ այստեղ գործունէութիւնը եղաւ շատ արագ, տակաւին մօտաւորապէս չպատրաստուած սկուեց գործադուլները եւ շատ անգամ ատրճանակով կ'ուզուէր գործ տեսնել: Գալով անոր թէ մեր միութիւնները ապագային հողի վրայ պիտի դնել թէ ոչ՝ ես կ'ըսեմ թէ այդ ձեռքով Սոց. Դեմ.ը կրնան ընել, իսկ մենք իբրեւ Հ. Յ. Դաշնակցականներ

կը կազմենք հայկական միութիւններ եւ եթէ ուզենք միջազգային հողի վրայ դնել, պէտք է նախ ազգային խմբակները պատրաստուին եւ ապա դաշնակցական կապերով կապուին ուրիշ ազգի միութիւններու հետ. միասին գործելով՝ լեզուի խնդիրներ կարող ենք ունենալ, իսկ գիւղացիները կազմակերպելիս շատ աւելի դիւրութեամբ կրնայինք կազմել կուսակցական հողի վրայ:

Ատոմ.— Ընկեր Ֆելիքսի ներկայացուցած ձեռք սենտիքալիստներու տեսակէտներու վրայ հիմնուած է, որ կարծեմ չի համապատասխաներ մեր պայմաններին, քանի որ հոն տարբեր պայմաններ կան, ուր զանազան ազգութիւններ չկան. իսկ Աւստրիոյ եւ Ռուսիոյ պայմանները որոշ չափով յարմարում են մերինին, որովհետեւ հոն գոյութիւն ունին տիրապետող եւ տիրապետող ցեղեր եւ կայ ձուլման քաղաքականութիւն. ուստի եւ շեշտում է ազգային խտրականութիւն. նոյնը կայ նաեւ հոս Թուրքիոյ մէջ. կան հայ, թուրք, յոյն եւն աշխատաւորներ, ուստի այդ ձեռքով ալ պէտք է կազմակերպել: Դաշնակցութիւնը եթէ պիտի կազմակերպէ աշխատաւորութիւնը, պէտք է մօտենայ աշխատաւորին դաշնակցական դիմակով, ուրիշ կերպ չի կարելի. իսկ անկուսակցական եւ ազգային ձեռքով կազմակերպելու մասին խօսք անգամ չի կարելի ընել: Այդպէս լլլալով հանդերձ կայ թաքթիքի հարց: Օրինակ՝ եթէ կան ուրիշ ազգի աշխատաւորներ, որոնք չունին ոչ մէկ միութիւն, անոնց մէջ պէտք է ջանալ միութիւններ ստեղծել ու խոստանալ գործակցիլ անոնց, որով լաւագոյն ձեռք ընդունած կը լինինք: Գործադուլներու մասին խօսելու ատեն ըսուեցաւ թէ արդեօք հող կա՞ գործադուլի եւն: Ես կ'ըսեմ որ ճիշդ է թէ հոս համեմատաբար արդիւնաբերութիւնը ետ է մնացած, բայց փոխանակ սպասելու որ [զարգանայ ան] եւ ապա միայն գործենք, — այդ սխալ կ'լլայ. այժմէն պէտք է սկսի սխտեմատիկ աշխատանքը նախապատրաստական քայլեր առնելով, մասնաւորապէս ոյժ տալով նաեւ քորբերութիւններու եւ գործակցականներու:

Անտոն.— Ընկեր Ատոմ խօսելու ատեն ըսաւ թէ օրինակ առնենք եւրոպական սոցիալիստական կազմակերպութիւններէն, ես ալ այդ տեղէն կը սկսիմ: Այն աշխատաւորները որ տնտեսական բարելաւման կը ձգտին, այդ չի նշանակել թէ անոնք պատրաստուած են նաեւ քաղաքականապէս: Եւրոպայի մէջ ըսուած է թէ՛ բոլոր տնտեսական ձեռնարկները, լլլան արհեստակցական թէ գործակցական, պէտք է լլլան անկուսակցական, իսկ քաղաքական կուսակցութեանց անդամները կը մնան այդ միութեանց մէջ եւ կը մղեն պրոպականդ եւ կ'աշխատին ի նպաստ քաղաքական կուսակցութեան: Այս օրինակով մենք հոս ալ պէտք է կազմակերպենք անկուսակցական հողի վրայ, մասնաւոր մեր պայմաններու տակ, որ մասսաները չափազանց պէտք են եւ չու-

նին հարկաւոր գիտակցութիւնը: Գալով գիւղականներուն, որովհետեւ դաշնակցականները չափազանց քիչ են եւ չեն կարող զուտ կուսակցական հողի վրայ ընել, Ռայոնական ժողովն այսպիսի որոշում մը տուած է թէ՛ Մեծ-Հայքում սենտիքաները լինելու են անկուսակցական: Մեր տնտեսական այս պայմաններում մեր աշխատաւորական գործունէութիւնը երկրորդական տեղ միայն կարող է բռնել մանաւանդ յետ մնացած վայրերում մէջ, ինչպէս Մուշ, եւն, ուր տակաւին նորմալ պայմաններ չկան եւ սակայն 2-3 տարուան խաղաղ կեանքը բաւական եղած է որ ցորենը 4 անգամ բազմապատկուի: այս կը նշանակէ թէ հունձքը կրկնապատկուած է, եռապատկուած է, իսկ օրականը կրկնապատկուած է: Ես այս օրինակներով կ'ըզգեմ ապացուցանել թէ որքան մեծ դեր կը կատարէ քաղաքական եւ տնտեսական փոփոխութիւնը:

Վարագդատ.— Մեր ձգտումն է աշխատանքի արդիւնքը աշխատաւորին տալ. ասիկա իտէալն է, սակայն, պէտք է ճշդել թէ ինչ գործնական ճանապարհով պիտի ձգտինք հասնիլ այդ կէտին: Արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները շատ քիչ չափերով տարածուած են, մասնաւորապէս մեր մէջ, ու մեր աշխատաւորներէն շատերը անգործ են — պէտք է ձգտինք արդիւնաբերութեան զարգացման, որպէսզի աշխատանք ստեղծուի բանուորներու համար: Ինչպէս որ ես պաշտպանեցի ազգային ժողովին մէջ կուսակցականապէս մասնակցելու տեսութիւնը, նոյնպէս նաեւ կ'ըսեմ թէ մենք աշխատաւորական միութիւնները պէտք է կազմակերպենք կուսակցական հողի վրայ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն՝ օրակարգի շարունակութիւնը վերապահելով յաջորդ ժողովին:

Նիստ ԽԹ.

17 Սեպտ. 1911 (առաւօտ)

Ներկաներ՝ Սամսոն-Մարգուանի, Պոլիսի, Կեսարիոյ, Խարբերդի, Մուշ-Սասունի, Սեբաստիոյ, Վանի, Ամերիկայի, Ուս. միութեան, Պալքանի պատգամաւորները, Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը. վճռական ձայնով՝ Բաբա. խորհրդակցական ձայնով՝ Ակնունի, Մելօ, Ֆելիքս, Լեւնեան, Ասլան, Սաթօ, Վահան:

Շարունակութիւն վիճաբանութեան — Աշխատաւորական քաղաքականութեան մասին

Լեւնեան.— Մեր կուսակցութիւնը ազգային է, քանի որ մեր ծրագիրը միջազգայնական է, բայց ազգային հողի վրայ կեցած: Ընկերավարութեան մէջ միջազգայնու-

թիւնը իտէալ մըն է եւ անոր կը ձգտինք. քանի որ կան նախապաշարուածներ, նոյնիսկ լարուած վիճակներ, ուստի միջազգայնութեան իսկ ոյժ տուած ըլլալու համար՝ պէտք է իբր ազգ, ազգային հողի վրայ դաշնակցական կապերով կապուիլ. կուսակցական ձեւով կազմակերպուելով կը յարաբերուինք այլ կուսակցութեանց հետ, որով միջկուսակցական տեսակէտը կ'ուժեղնայ: Այն կուսակցականները որ մեր շարքերու մէջ են՝ անոնք կը կազմեն դաշնակցական կուսակցական արհեստակցական միութիւններ, հոգ չէ թէ անոնց թիւը ըլլայ շատ փոքր. այսպիսով ուրիշ ազգի եւ ուրիշ կուսակցութեանց ներկայացուցիչներու հետ կարելի է հաւաքական աշխատանք տանիլ: Գիւղացիական խումբերը աւելի դժուար է պահել. ընկեր Անտոնը ըսաւ թէ գիւղացիներու համար նոր ձեռնարկներ ստեղծելու է. իմ կարծիքով անոնք կրնան հաւաքական-համագործակցական ձեւով տանիլ:

Յետոյ ընկեր Ֆելիքս բոլոր ընդդիմախօսներուն եւ քննադատներուն պատասխանեց մանրամասն կերպով. ընկեր Վիշապ(եան)ին պատասխանելով՝ ըսաւ թէ եթէ գործադուլի համար հող չկար այդ չի նշանակել որ արհեստակցական միութիւնները պէտք չէ գործեն. անոնք պէտք է շարունակեն դրամ հաւաքել, գիտակցիլ եւ պատրաստուիլ ապագայ գործունէութեան համար: Քաղաքական կուսակցութիւն մը կը կազմուի քաղաքական հողի վրայ եւ աշխատաւորական շահերը կը պաշտպանեն փարլամենթներու եւ այլ պետական քաղաքային ժողովներու մէջ. իսկ զուտ տնտեսական ու գործադուլային գործունէութիւնները կը տարուին անջատ եւ անկախ: Ոեւէ գործարանի մէջ եղած 100 կամ 200 գործաւորներէն 10-20ը կազմելով չենք կրնար արդիւնաւոր գործ մը ըրած ըլլալ, պէտք է բոլորը անկուսակցական հողի վրայ կազմել եւ պատրաստել մեր ընկերները որ անոնց մէջ ամէն օր պրոպագանդ ընեն եւ որքան շատ ըլլայ այդ պրոպագանդը, այնքան աւելի մեր ազդեցութիւնը ձեռք կը բերուի: Գալով միջազգային հողի վրայ կազմելու տեսակէտին որուն դէմ արտայայտուեցան քանի մը ընկերներ՝ ընդհակառակը անոնք հաւաքաբար կազմակերպելով, աւելի մեծ չափով կրնանք ազգային ատելութիւնները մեղմացնել եւ համոզել թէ իրենց տնտեսական շահերը մէկ են եւ փոխանակ տկար տկար ազգային քանի մը միութիւններ ունենալու, աւելի լաւ կ'ըլլայ մէկ, մեծ եւ ուժեղ միութիւն կազմել: Քաղաքական եւ տնտեսական մեթոտները զատ զատ ըլլան. մէկը կը կազմուի ազգային հողի վրայ, իսկ տնտեսականը զուտ միջազգային հողի վրայ լեզուի մասին ըսուեցաւ, բայց այնքան ալ դժուար խընդիլ չէ այդ, մանաւանդ եթէ նկատի առնենք ստացուելիք օգուտները, ազգամիջեան յարաբերութիւններու լաւացման տեսակէտէն:

Վիճաբանութիւնները բաւարար նկատուեցան, ուս-

տի ժողովը անցաւ բանաձեւերու ընթերցումին՝ մէկը ներկայացուած ընկերներ Ֆելիքսի եւ Անտոնի կողմէ, իսկ միւսը ընկերներ Վարանդեան եւ Բաբայի կողմէ:

Ընկեր նախագահը քուէի դրամ բանաձեւերու ոգին: կուսակցական հողի վրայ կազմակերպելու առաջարկը ստացաւ 7 քուէ, 5ի դէմ, որոնք կողմնակից են անկուսակցական հողի վրայ կազմակերպուելուն:

Անտոն.— Աշխատաւորական քաղաքականութեան մէջ, որովհետեւ նոր է մեր գործունէութիւնը, ուստի մենք ալ ըստ այնմ պէտք չէ շտապենք՝ քանի դեռ պայմանները շատ բարդ են եւ անորոշ, ուստի մեր որոշումն ալ պէտք է անորոշ ըլլայ: Բոլոր այն ձեռնարկները որ եղած են կուսակցական՝ միշտ չեն յաջողած, իսկ անկուսակցականները յաջողած են, օրինակ էրզրումի Երիտասարդաց միութիւնը, եւն: Մեր որոշումները պէտք է ըլլան առաձգական:

Յանձնարարուեցաւ ընկեր Բաբային երկու տեսակէտները իրար հաշտեցնել, բանաձեւի մը պատրաստութեամբ որ պատշաճեցուի իւրաքանչիւր շրջանի պայմաններուն:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նիստ Ծ.

17 Սեպտ. 1911 (կէսօրէ վերջ)

Ներկաներ՝ Մուշ-Սասունի, Սամսոն-Մարգուանի, Վանի, Խարբերդի, Կեսարիոյ, Սեբաստիոյ, Պալքանի, Ամերիկայի, Ուս. միութեան, Պոլիսի պատգամաւորները. վճռական ձայնով՝ Բաբա, Աւօ, Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը. խորհրդակցական ձայնով՝ Վարագդատ, Մարգալետ, Մելօ, Ակնունի:

Ժողովը սկսաւ աշխատաւորական քաղաքականութեան մասին պատրաստուած բանաձեւի քուէարկութեամբ, որ հետեւեալն է.—

- 1) Նկատելով որ մեր կազմակերպութեան գլխաւոր խարխիւն է հայ աշխատաւորութիւնը.
- 2) Որ աշխատաւորութիւնը (գիւղացիներ, բանուորներ, արհեստաւորներ) կազմակերպուելով հանդերձ տնտեսական շահերու շուրջը, պէտք է հետապնդէ նաեւ քաղաքական եւ ազգային կուլտուրական նպատակներ.
- 3) Որ գրաւոր եւ բանաւոր պրոպագանդը պիտի կատարուի որքան հնարաւոր է ուժերի խնայող գործադրութեամբ, իսկ այդ խնայողութեան ամէնից մեծ չափին կարելի է հասնիլ ազգային միջավայրում, ուր կը տիրէ լեզուի, զարգացման աստիճանի եւ հոգեբանութեան համամասնութիւն.
- 4) Նկատելով որ հայերի ապրած բազմացեղ եւ բազ-

մայեզու միջավայրում ներկայումս տիրում են ազգային խոր հակամարտութիւններ եւ փոխադարձ անվրատահութիւններ եւ որ այդ երեւոյթը կազմակերպութիւնների ծոցում ստեղծելու է անխուսափելի ընդհանրումներ՝ փոքրամասնութիւնների եւ մեծամասնութիւնների միջեւ,— մի բան որ անպատճառ պիտի ազդէ գործի առաջադիմութեան վրայ, կազմալուծելով նորածիլ միութիւնների վարչական միութիւնները եւ գործունէութիւնը.

5) Նկատելով որ վերոյիշեալի նման բախումներ անխուսափելիօրէն պէտք է տեղի ունենան նաեւ այն պարագաներում, երբ հայ աշխատաւորութեան մէջ կը լինին կուսակցական բաժանումներ.

Ընդհ. ժողովը որոշում է. Աշխատաւորական կազմակերպութիւնները դնել ազգային եւ կուսակցական հողի վրայ, իսկ ուր անհնարին է այդ առժամապէս կանգնել միջազգային եւ անկուսակցական հողի վրայ:

1) Բոլոր աշխատաւորական կազմակերպութիւնները պատրաստ են անպայման համերաշխօրէն եւ միջազգայնաբար գործել տնտեսական (բոյկոտ, գործադուլ եւն.) ձեռնարկների մէջ:

Մանօթ.— Աչքի առաջ ունենալով որ հայ աշխատաւորական շահերը կարող են իրապէս բարգաւաճիլ միմիայն այն պարագային, երբ դրացի ժողովրդներին մէջ եւս կազմակերպուած կը լինին աշխատաւորական տարրերը եւ երբ բովանդակ միջազգային աշխատաւորութիւնը կ'ուղղէ իր համերաշխ ճիգերն ընդհանուր թշնամիների — աւատականութեան եւ կապիտալիզմի դէմ.

2) Որ հայ ընկերվարական մտաւորականութիւնը, իբր աւելի գիտակից եւ պատրաստուած տարր օսմերկրին մէջ՝ պարտաւոր է իր ուժերի ներած չափով՝ դեկավար հանդիսանալ դրացի ազգերի աշխատաւորութեան.

Ընդհ. ժողովը հրահանգում է իր ձեռնհաս մարմիններին՝

Շուանդուն պրոպագանդ մղել դրացի ազգերի աշխատաւորութեան մէջ, կազմակերպել նրանցից միութիւններ, ի հարկին հրատարակել գրքոյկներ աշխատաւորական հարցերի մասին թուրք, քիւրտ եւ այլ լեզուներով, առաջ քաշել եւ ջանալ պատրաստել ընկերվարական ոգով ծրագրուած մտաւորական տարրեր, որոնք ժամանակին կարողանան ստանձնել իրենց ազգի աշխատաւորների դատի դեկավարութիւնը:

Մանօթ.— Ընդհ. ժողովը յանձնարարում է իր բոլոր ձեռնհաս մարմիններին, արհեստակցական-սենտիքալ գործունէութեան ասպարէզում նախապատուութիւն տալ այնպիսի ձեռնարկներին, որոնք հասունացած են եւ կարող են տարուել մասնակցող աշխատաւորների ջանքերով:

Որոշուեցաւ յանձնել սոյն բանաձեւը իննի յանձնախումբին որ վերջնական կերպով խմբագրէ, նկատի առնելով նաեւ ընկեր Անտոնի նկատումները:

Քաղաքական կացութեան հանդէպ մեր դիրքը.— (Թուրք եւ իտալական (պատերազմ)).

Առաջարկուեցաւ իրաւասութիւն տալ իննի յանձնախումբին խմբագրել թուրքիկ-յայտարարութիւն մը՝ ուղղուած հասարակութեան:

Կարծիքներու փոխանակութիւններէ վերջ որոշուեցաւ կազմել յանձնախումբը, 3 հոգիէ բաղկացած, որ խմբագրէ յայտարարութիւնը՝ պայմանաւ որ վաւերացուի իննի յանձնախումբէն:

Ակնունդ.— Կ'առաջարկէ ընտրել յանձնախումբ մը՝ թուրքիկ-յայտարարութիւնը խմբագրելու համար, բայց ի՞նչ ուղղութեամբ պիտի խմբագրուի այդ յայտարարութիւնը. ի՞նչ պիտի ըլլայ դեկլարացիոն միտքը. պէտք է Ընդհ. Ժողովը ուղեցոյց միտք տայ որուն համաձայն յանձնախումբը խմբագրէ յայտարարութիւնը:

Բարա.— Համաձայն չեմ:

Որոշուեցաւ ձայն տալ իւրաքանչիւր պատգամաւորի կարճ կերպով արտայայտուելու, դիւրացնելու համար յանձնախումբի գործը:

Վարանդեան.— Կոչ համագործակցութեան եւ համերաշխութեան թուրքիայում գործող զանազան կուսակցութիւններին. քննադատութիւն Հազգը փաշայի գերմանասէր դիրքին:

Լեւոնեան.— Պէտք է քննադատութիւն մտցնել այդ յայտարարութեան մէջ ցոյց տալով կառավարութեան դիրքը այս խնդրին հանդէպ եւ անկէ վերջ ընել համագործակցութեան կոչ:

Մարգարէտ.— Յայտարարութեան մէջ ինքնավարութեան խնդիրը մէջ բերել եւ այդ մասին դնել պահանջներ:

Ակնունդ.— 1) Նախ յայտնել այն միտքը թէ չենք ուզեր լռել եւ այդ պատճառով ալ կ'ընենք մեր խօսքը ինչպէս միշտ. 2) Մեր դժգոհութիւնը կառավարութենէն փաստերով. 3) Այնուամենայնիւ կը մնանք հաւատարիմ մեր ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան գործին. 4) Միջոցներ ձեռք առնել թէ՛ թուրք մամուլի եւ թէ՛ թուրք ժողովուրդի (տեղեակ ?) պահելու. 5) Վտանգը անցնել վերջ կրկին պահանջ կը դնենք երկիրը իրապէս բարեկարգելու:

Վահան.— Թուրքիկը աւելորդ է. [ե]թէ հայ ժողովրդին ուղղուած է, լաւ, բայց քանի որ պիտի ըլլայ ընդհանուր, աւելորդ է. թէ ինչո՞ւ մեր ջանքերը ցարդ անցեր է աննկատ. ամէն անգամ մենք երեւան եկած ենք այսպիսի պարագաներու մէջ, բայց մնալով աննկատ՝ տոնքիչոթութիւն ըրած ենք աւելի: Այսպիսի պարագաներու մէջ լուռ մնացողներն են աւելի ազդեցիկ: Եթէ որոշուած է թուրքիկը, ասոր առանցքը պիտի ըլլայ քննադատական, ներկայացնելով երկրի կացութիւնը:

տական, ներկայացնելով երկրի կացութիւնը:

Ատոմ.— Տակաւին որոշել չկարենալով հանդերձ թէ պէ՞տք է հրատարակել այսպիսի յայտարարութիւն մը թէ ոչ, կարծեմ թէ աւելորդ է որովհետեւ մեր տուած որոշումներուն մէջ արտայայտուած ենք արդէն:

Անտոն.— Քննադատութեան մասը աւելորդ է, ինչպէս աւելորդ պիտի ըլլար մեռելի տան մէջ, տանտիրոջ թերութիւններուն վրայ խօսիլ: Արտայայտելու է միայն մեր հաւատարմութիւնը:

Քուէի դրուելով՝ թուրքիկ հրատարակելու առաջարկը ստացաւ միաձայն հաւանութիւն: Յայտարարութիւնը խմբագրելու համար ընտրուեցան հետեւեալ ընկերները — Վահապ (10), Ակնունդի (9 ձայն), Անտոն (10), Վարանդեան (10):

Տասը վայրկեան դադարէ վերջ, ժողովը նկատի առաւ ընկեր Ատոմի այն առաջարկը թէ այս յայտարարութեան խմբագրութենէն վերջ՝ պէ՞տք է փոփոխութեան ենթարկել Ընդհ. Ժողովի որոշումները թէ ոչ:

Ատոմ.— Քանի որ նոր Յայտարարութիւն կը խմբագրուի, հետեւաբար պէտք է յետաձգել հինը, թոյլ տալով համապատասխան մարմին հինը յանձնել պատկան մարմին իր յարմար ատենին. վարչական գործ ըլլալով այս՝ ժողովը չզբաղեցաւ:

Կանոնական նոր առաջարկ Ընդհ. Ժողովի մասին.— Ընկեր Վահապ ներկայացուց հետեւեալ գրաւոր առաջարկը՝ ապագայ Ընդհ. Ժողովները աւելի արդիւնաւոր ընծայելու համար. — «Նկատելով որ Հ. Յ. Դաշնակցութիւնը գերազանցապէս յեղափոխական ուժերու եւ ինքնագործակցութեան վրայ հիմնուած կազմակերպութիւն մըն է, ուր աշխատանքի բաժանումը միշտ կատարուել է ոչ թէ բարձրագոյն մարմիններու կամ «պետ»երու հրամաններու գորութեամբ այլ անձնուէրներու ինքնաբոլիս յօժարութեամբը:

Հաւատալով միւս կողմէ, որ ցարդ ուժեր գտնելու եւ նպատակայարմար բաշխումի մէջ նոյն Ընդհ. Ժողովները միայն յաջողել են, որոնց մէջ իրենց պատշաճ մասնակցութիւնը ունեցել են գործիչ ընկերները, շնորհիւ այն պարագային որ գործիչները գործի պահանջներուն մօտէն ծանօթանալէ ետք, իրենք իրենց ձայնով կը մասնակցին իրենց մասին տրուած որոշումներուն,

Ժողովը կ'որոշէ՝ ապահովել պատասխանատու գործի վրայ գտնուող բոլոր գործիչ ընկերներու մասնակցութիւնը առաջիկայ Ընդհ. Ժողովին, անոնց ընտրութիւնը թողնելով Ընդհ. Ժողովէն առաջ գումարուող Խորհուրդին:

Ինչ որ ալ ըլլայ թիւը հրաւիրուելիք գործիչներուն՝ անոնց ձայներու թիւը պիտի չանցնի պատգամաւոր ընկերներու ընդհանուր թիւին կէսը: Գործիչներուն տրուելիք ձայներու յատկացումը կարելի է որոշել կամ անոնց գործունէութեան հնութեան վրայ, կամ պար-

զապէս վիճակով: Անոնց ծախքերը կը հոգան պատկան մարմինները կամ շրջանները:

Բիւրոնները, իբրեւ Ընդհ. Ժողովէն ընտրուած եւ անոր առջեւ պատասխանատու մարմիններ, խմբովին ներկայ կ'ըլլան ժողովին, իւրաքանչիւր Բիւրո մէկ ձայնի իրաւունքով միայն, միւս անդամները խորհրդակցական:

Բիւրոյի անդամները ոեւէ՛ ուրիշ մարմնի կողմէն պատգամաւորի ձայն չեն կրնար ստանալ:

Ընդհ. Ժողովի գումարումէն գէթ ամիս մը առաջ նիստ կ'ունենայ Խորհուրդը, ա) Լուծելու համար բոլոր դատական խնդիրները եւ զեկուցանելու Ընդհ. Ժողովին, բ) Նախապատրաստական բոլոր աշխատանքները

կատարելու (զեկուցում, բանաձեւ) որպէսզի Ընդհ. Ժողովը մշակուած նիւթեր ունենալով իր առջեւ՝ չհարկադրուի տարապայման երկարացնել իր նիստերը:

Սոյն առաջարկը որոշուեցաւ յանձնել իննի յանձնախումբի նկատուման:

Միջազգային յարաբերութիւններու բարդութեան պարագային՝ կուսակցութեան դիրքը.— Այս խնդիրը եւս յանձնուեցաւ իննի յանձնախումբին: Պարսկաստանի ընկերներուն մեր ողջոյնն ու քաջալերանքը Վսմբագրելու գործը՝ յանձնուեցաւ նոյնպէս իննի յանձնախումբին:

Ժողովը վերջնապէս փակուած յայտարարուեցաւ ժամը 8ին:

Փաստ. 1629-3

Գ.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. Զ^ր ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԷ ԸՆՏՐՈՒԱԾ ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱՍՄՔԻՆ (1911)

ՏՐԱՊԵՉՈՆ - ԱԻԱԶԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ունի 8 հատ կոմիտէ, որոնք հետեւեալ կարգով հասոյթ ունեցած են, հաշուելով գուտ անդամավճարները:

40%	1) Տրապիզոնի կոմիտէն՝	1909-1911	-	8620	դր.
20%	2) Օրտուկի	»	»	6500	»
35%	3) Կիրասունի	»	»	4500	»
12%	4) Եոմուրայի	»	»	4400	»
70%	5) Շապին Գարահիսար	»	»	3900	»
30%	6) Թրիպոլիի	»	»	3200	»
3%	7) Էլեվիի	»	»	2955	»
100%	8) Կիւմիւշխանէի (նոր)	»	»	340	»

32415 դր.

Ծախքերը հետեւեալ ձևով՝

- 1) 2750.- 2) 570.- 3) 1700.- 4) 500.- 5) 2816.- 6) 860.- 7) 92.- 8) 370.-

Ինչպէս կ'երեւի վերեւի հաշուէն այս շրջանի կոմիտէները միջին հաշուով ծախսած են 30% եւ մնացեալը փոխադրած են Կ.Կ.ի արկղը:

Կեդր. կոմիտէին մուտքը՝	
Անդամավճարներէ՝	25755
Չանագան հասոյթներէ՝	1991,75
Նուէրներէ	620
Բանտարկեալներու համար ¹	21500
Վաճառ[ուած] իրեղէններէ	3900
	53746,75

Գումար մօտաւորապէս 50,000 դր.:

«Դրօշակ»ի բաժնեգիններէ մուտք արձանագրուած է միայն 91 դր. այն ինչ մարմինները 2150 դր. մուտք ունեցած են, այդ գումարը իսկ շատ փոքր է. մենք կը կարծենք որ Տրապիզոնի շրջանը շատ աւելի կրնայ հաւաքել «Դրօշակ»ի բաժնեգին եւ անմիջապէս մտցնել Կեդր. կոմ. արկղը:

Տրապիզոնի Կեդր. կոմիտէն իւր 28000 դր. մուտքէն 50%ը ծախսած է տեղւոյն վրայ, որուն 25% տեղական եւ 25% արտակարգ ծախսեր: Իսկ Բիւրոյին փոխադրած է 12108 դր.: Պատրաստի գումար ունին 8094 դր.:

Այս մարմինն հաշիւները բաւական կանոնաւոր են:—

ՆՓՐԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ. - ՄԵԿՈՒՍԻ ԿՈՄԻՏԷ

1910 - 19 տարուայ մէջ ունեցան են 5000 դր. մուտք անդամավճարներէ եւ փոքր գումար մը նուէրներէ:

«Դրօշակ»էն եւ հրատարակութիւններէ հասոյթ քիչ ունեցած են. ցանկալի է որ թերթին եւ հրատարակութեանց տարածմանը ուժ տան:—

Հասոյթ «Դրօշակ»էն 75 դր. հրատ.էն 100. Բանտարկեալներու համար հաւաքած են 9388 դր.: Տեղական ծախքը եղած է 100%: 2950 դր. ի իրեղէններ ծախած են. այդ ծախուած իրեղէններու գումարին 1276 դր.ը վճարած են փոխառութեան՝ Հին պարտքերուն եւ մնացեալը 1953 դր. փոխադրուած Բիւրոյին: Հաշիւները բաւական կանոնաւոր են:

Կ. ՊՈՒՍՈՑ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ունի 15 կոմիտէներ, որոնք հետեւեալ կարգով հասոյթ ունեցած են

- 1) Գրնճըլար 1500
- 2) Պարտիզակ 1500
- 3) Ատաբազար 1200
- 4) Պոլիս 860
- 5) Սկիւտար 860
- 6) Զոնկուլտաք 690
- 7) Զենկիլէր 550
- 8) Պալիս 430
- 9) Գուրտպելէն 370
- 10) Արմաշ 295
- 11) Բերա 290
- 12) Իզմիդ 215
- 13) Մալկարա 122
- 14) Գարթալ 70

Պոլսոյ շրջանը երկու տարուայ մէջ ունեցած է 33000 դր. մուտք անդամավճարներէ եւ ծախսած է 7060 դր. կը նշանակէ 22%ը ծախսուած է. արտակարգ ծախքեր ալ ունեցած են 3750 դր. ի մօտ:

Կեդր. կոմիտէն 1909էն 1911 երկու տարուան մէջ մուտք ունեցած է 23000 դր. որուն 9000 դր.ը տեղական

1.- Գարցը կը վերաբերի Կովկասի քաղաքական բանտարկեալներու համար հանգանակուած գումարին:

ծախսերու գործածուած է 40%ը: Բանտարկեալներու համար հաւաքած են 21729 դր. իսկ Դրօշակի բաժնեգիններէն 895 դր. միայն հաւաքած են որ շատ քիչ է Պոլսոյ շրջանին համար: Գալով հաշիւներուն կարելի է ըսել, որ ամէնէն կանոնաւորն է: Պատրաստ դրամ մնացած է 3617 դր.:

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ունի 9 կոմիտէներ: Մուտք 1910-1911 մէկ տարուան մէջ անդամավճար]է 1500 Ֆր. հասոյթ որուն 20%ը ծախսած են տեղական ծախքերու: Քաղաքական բանտարկեալներու օգտին հաւաքած են 1900 Ֆր., անուղղակի հասոյթ 3500 Ֆր., Բիւրոյին ղրկած է 6353 Ֆր.: Դրօշակի բաժն. է 420 Ֆր., հրատար[ակութիւններ]է 328 Ֆր.:

Պատրաստ դրամ ունին 2200 Ֆրանք. հաշիւները կանոնաւոր են:

ԽԱՐԲԵՐԴԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

1909 - 1911 երկու տարուայ մէջ ունեցած է 30000 դր. մուտք անդամավճարներէ եւ 100% ծախսած է տեղւոյն վրայ, վաճառուած է 7000 դր. ի իրեղէններ: Ապառիկ մնացած է 5000 դր. զանազաններու վրայ, ինչ որ ներելի է: «Դրօշակ»ի բաժնեգիններէ շատ քիչ մուտք ունեցած են 265 դր. պէտք է հետապնդեն որ ամբողջութեամբ գանձուին: Բիւրոյին ղրկած են 8358 դր.: Իսկ հրատարակութիւններէ ոչինչ ստացած են. պատրաստ դրամ ունին 2130 դր.:

ՍԱՍՈՒՆ - ՄՈՒՇ

1909էն 1911 երկու տարուան մէջ ունեցած են 32000 դր. մուտք անդամավճարներէ եւ ներկայացումներէ. իսկ ծախք 48000 դր., այս ծախքին մէջ կը մտնեն նաեւ 44700 դր. ի գոյքերու համար ծախսուածը. կը նշանակէ որ յիշեալ մարմինը շատ աւելի ծախսեր է, առանց նկատի առնելու Ընդհ. Ժողովի որոշումը: Այս ծախքերը գոցելու համար Կ.Կ.ը դիմած է փոխառութեան 18.000 դր. ի եւ ունի 968 դր. պատրաստ դրամ: Դրօշակի բաժնեգիններէ հասոյթ բնաւ չէ ունեցած ինչպէս նաեւ հրատարակութիւններէ. յառաջիկայ մարմիններու ուշադրութիւնը կը հրաւիրենք այս զանցառութեան վրայ:

ՏԵԳՐԱՆԱԿԵՐՏ - ՎԻՇԱՊԱԶՈՐ

1909 - 1911 երկու տարուան հաշիւը, անդամավճարներէ եւ զան[ազան] հասոյթներէ գոյացած է 19500 դր., որուն 13000ը առաջին տարուայ մէջ գոյացած է. քաղա-

քական բանտարկեալներու օգտին հանգանակած են 10000 դր. ի մօտ գումար մը: «Դրօշակ»ի բաժնեգիններէն ոչ մի հասոյթ չեն ունեցած. հաւանաբար գործակալի վրայ մնացած է պէտք է հետապնդուի: Արեւելեան Բիւրոյի փոխադրած են 3650 դր.: Տեղական ծախքը հասած է 15250 դր. ի մօտաւորապէս 75%ը տեղական ծախք: Պատրաստ դրամ 443 դր.:

ՍԵՐԱՍԻԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

1909 - 1911 երկու տարուան մէջ ունեցած է անդամավճարներէ եւ նուէրներէ մուտք 10111 դր. ասոր 9000 դր.ը հաւաքուած է առաջին 1/2 տարուան մէջ: Զատիկեանի[?] համար հանգանակութիւն ըրած են 17000 դր. քաղաքական բանտարկեալներու օգտին հանգանակուած է 5150 դր. եւ փոխադրուած Բիւրոյին: Ամբողջ հասոյթը ծախսած են տեղւոյն վրայ, հաշիւները կանոնաւոր չեն. ուշադրութիւնը կը հրաւիրենք քոնթրոլի մարմնին որ բոլոր ապառիկներու վրայ հակ է նուազագոյնի մը հասցնել տայ. յառաջիկայ տարեշրջանին Ընդհ. Ժողովի որոշումները անշեղ գործադրուի: Դրօշակի բաժնեգիններէն դրամ չէ հաւաքուած. պէտք է հետապնդել: Հաշիւները կանոնաւոր չեն: Պահանջներ ունին զանազաններու վրայ 14943 դր. պէտք է հաւաքուի այս գումարը: Պատրաստ դրամ 43.50 դր.:

ԿԱՐԻՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ներկայացուցած է միայն 1910 - 1911ի մէկ տարուան հաշիւները, 1909 - 1910ի հաշիւները պէտք է պահանջել: Մէկ տարուան մէջ 11750 դր. հասոյթ ունեցած են միայն անդամավճարներէ եւ 978.50 դր. ալ վաճառուած իրեղէններէ գոյացած է. հասոյթին 55%ը ծախսած են տեղւոյն վրայ, Բիւրոյին փոխադրած են 1537 դր. միայն: Պատրաստ դրամ ունին 3750.75 դր. պէտք է պահանջել այս գումարը: Բանտարկեալներու հաշուին հաւաքուած է 158.50 դր. պէտք է պահանջել: Նոյն նպատակի համար 1909/10 հաշուէն 588 դր. հաւաքուած է. ծախսուած է տեղւոյն վրայ, այս գումարն ալ առանձին պիտի գատել եւ պահանջել: Բիւրոյին փոխադրեալ արձանագրուած 1537 դր.ը պէտք է արձանագրել Բիւրոյի հաշուոյն ծախք, այս բառը արձանագրելու է նաեւ Արեւելեան Բիւրոյի հաշուոյն մէջ: Հաշիւները կանոնաւոր են:

ԿԵՍԱՐԻԱ - ԲԱՐՁՐ-ՍԱՐ

Ունի 5 մարմիններ, - Կեսարիա, Մուսնուսու, Էլեւրէկ-Ֆենեսէ, Էֆքերէ, Թալաս: 1909 - 1911. երկու տարուան մէջ անդամավճարներէ եւ զան. հասոյթներէ 15800

դրչ., Հին Հաշիւներէ պատրաստ ունեցածնին 790.75 դրչ. Դրօշակի բաժնեգրիններէ 326.50 դրչ. հրատարակութիւններէ 25 դրչ., քաղաքական բանտարկեալներու օգտին 7585.25 դրչ., որը ամբողջութեամբ փոխադրուած է Բիւրոյին: Բիւրոյի փոխադրած են միայն 1259.25 դրչ. իսկ տեղական ծախքը հասած է 85%օր: Դրօշակի բաժնեգրիններէ փոխադրած են 235 դրչ.ը միայն մնացած գումարը պէտք է պահանջել: Պատրաստ դրամ ունին 848.50 դրչ. Հաշիւներ անկանոն չեն բայց ջանալու է որ միայն մէկ կոմիտէն յարաբերուի Բիւրոյի Հետ եւ միայն անոր միջոցաւ տեղի ունենայ Հաշուետուութիւնը:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ – ՇԱԽԵՐ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

1909 – 1911 երկու տարուան Հաշուեկշիռը ներկայացած, Հաշիւները անկանոն են:

Արեւելեան Բիւրոյէն ստացած են 1630 դրչ.	
անդամավճարներէ	23,792,75
Ջանազան Հասոյթներէ	10,000
	34000

110% ծախսած են. կը նշանակէ իրենց Հասոյթէն 10% աւելի ինչ որ ներելի չէ. քոնթրոլի մարմինը դէպի այս երեւոյթը պէտք է շատ խիստ ըլլայ եւ չթողնէ այսպիսի ծախսեր: Քաղաք. բանտարկեալներու օգտին 5215.50 դրչ. Հաւաքած են եւ միայն 2160 դրչ.ը փոխադրած են Բիւրոյին ուստի կը մնայ 3055.50 դրչ.ը, որը պէտք է պահանջել: Վաճառուած իրեղէններէ գոյացեր է 2214 դրչ. Բիւրոյին փոխադրուած է 240 դրչ.ը ըսուած է Հաշուոյն մէջ, բայց չէ հաստատուեր. պէտք է լուսաբանել: Պատրաստ դրամ կայ այժմ 5075.75 դրչ.: Ընկերներու վրայ փոխատուութիւն ըրած են. այդ գումարները պէտք է ետ պահանջուի եւ արգիլուի փոխատուութիւն ընելու:

ԴԱՄԱԿՈՍ. ՄԵԿՈՒՄԻ ԿՈՄԻՏԷ

1909 – 1911 երկու տարուան Հաշիւները: Պատրաստ ունեցած են 235 դրչ.: Անդամավճարներէ 938.75 դրչ. Հասոյթ ունեցած են որոնց % 85ը ծախսած են տեղւոյն վրայ: «Դրօշակ»ի բաժնեգրիններէ ստացած են 150 դրչ. քաղաքական բանտ. օգտին 752 դրչ. այս երկու գումարներն ալ ամբողջութեամբ փոխադրած են Բիւրոյին: Պատրաստ դրամ ունին այժմ 102.75 դրչ.:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

1910 – 1911 մէկ տարուայ Հաշիւը: Նախորդ շրջանէն պատրաստ ունեցած են 137598 դրչ.: Անդամավճարներէ եւ այլ Հասոյթներէ 213000 դրչ. տեղական եւ ինքնապաշտպանութեան Համար ծախսած են 88000 դրչ.: Կը նշանակէ որ % 45 ծախսած են: «Դրօշակ»ի բաժնեգրիններէ Հաւաքած են միայն 282 դրչ., այս գումարը չեն փոխադրած, ասկէ վերջ պէտք է կարգադրել որ բոլոր կոմիտէները Դրօշակի բաժնեգրինները Կեդր. Կոմիտէի միջոցաւ փոխադրեն եւ ըստ կարելոյն շուտ: Բանտարկեալներու օգտին Հաւաքած են 25862 դրչ.: Նահատակ ընկերներու օգտին Հաւաքած են 17661 դրչ.:

Հաշիւները կանոնաւոր են, պահանջելու է միայն 1909 – 1910 տարուայ Հաշիւները: Պատրաստ դրամ ունին 408368 դրչ.: Քաղաքական բանտ.ներու օգտին եւ նահատակ ընկերներու ի նպաստ Հաւաքուած գումարներէն աւելի փոխադրած են որով Հաշիւները չեն կանոնաւորուիր:

ՇՐՈՇԱԿՆԻ ՀԱՇՒՆՆԵՐԸ

2 տարուան մէջ 20000 Փր. մուտք ունեցած է. բոլորը կարելի չէ հասոյթ նկատել, բուն Հասոյթը շատ քիչ է. Դրօշակէն եւ հրատարակութիւններէն մօտաւորապէս 4000 Փր.ի հասոյթ է. ելքի կողմը կան շատ մը գումարներ որոնց մանրամասն քննութիւնը կը ձգուի քոնթրոլի մարմնոյն. այդ ելքերու մասին կան մասնաւոր տոքիւմաներ: Հաշիւները շատ կանոնաւոր են եղած, բայց հակառակ մեծ գործողութիւններ ունեցած ըլլալուն, խմբագրութիւնը բաւականացած է միայն քասայի տետրով, այն ինչ պէտք էր մայր Հաշիւի տետր մալ ունենալ: Ժամանակի ընթացքին շատերու փոխատուութիւնն եղած է. պէտք է մանրամասն ցանկ մը հանել եւ բոլորին Համար առանձին Հաշիւներ բանալ եւ Հետապնդել այդ գումարները գանձելու, ըլլայ այդ դրամով ըլլայ հեղինակութեամբ քանի որ պարտականներու մէջ կան այնպիսիներ, որոնք կրնան իրենց պարտքը վճարել գոնէ մէկ մէկ յօդուած գրելով, որով Հաշիւներն ալ վայելուչ ձեւով մը փակուին: Կան շատ մը անողղակի ծախքեր. օրինակ նպաստներ գանազաններու, գործիչներու ճանապարհածախս եւայլն. յաջորդ շրջանին Համար պէտք է Հարկադրել եւ յանձնարարել խմբագրութեան որ բացի թերթին գանազան խմբագրական, դիւանական եւ տպագրական ծախքերէ ուրիշ բաներու վրայ գումարներ չծախսէ, որով կանոնաւորութիւն կը մտնէ եւ շատ մը ծախսեր կը վերնան. թերթէն դուրս եղած կամ ըլլալիք բոլոր գործառնութիւն-

ները պէտք է ձգուի Բիւրոյի Թուրքոյ Հատուածին վրայ: Փոխատուութիւնները բացարձակապէս արգիլելու է, անհաճոյ դէպքեր չստեղծելու համար:

Պէտք կը զգանք աւելցնելու թէ, խմբագրութիւնը ջանք չէ թափած «Դրօշակ»ի բաժնեգրինները Հաւաքելուն. բաւական չէ բաժնեգրին որոշելը, պէտք է միշտ հետապնդել եւ բաժնեգրինները պահանջել:

Բանտարկեալներու Հաշուին ուղարկուած գումարները պէտք է քննել. այս մասին ունէ քննութիւն կարելի չեղաւ ընել: Պ. Վահան Փափագեանի վճարուած է որոշ գումար մը. փոխարժէքը ստանալու պայմանալիչեալը կ'ընէ որ այդ գումարը ուղարկած է Յովնանի Հասցէին՝ մինչ տոմարին մէջ չկայ արձանագրուած այդպիսի գումար մը, ուստի պէտք է այս մասին հարցընել ընկեր Յովնանին եւ ստուգել:

Այժմ պատրաստ դրամ ունին 20028,85 Փր.:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

Բիւրոն շատ ուշ սկսած է գործի, 1910ի Սեպտ.ին եւ կարելի է ըսել որ բնաւ գործունէութիւն չէ ունեցած, չէ կարողացած Հետապնդել իր շրջանի մարմիններուն, որով դրամական շատ փոքր գործառնութիւն մը ունեցած է: Տիրաբնակերտ եւ Մովսիս, այս երկու մարմինները միայն դրամ փոխադրած են. առաջինը 28½ ոսկի իսկ երկրորդը 15 ոսկի միայն: Այս մուտքերուն դիմաց 107 ոսկիի ծախք մը ունեցած է որ երբեք չի համապատասխաներ. նախահաշուին: Քաղաքական բանտարկեալներու օգտին Հաւաքուած 178 ոսկի 64 դրչ. 35 փր. այս գումարը ամբողջութեամբ կը մնայ յիշեալ մարմնոյն քով, պէտք է պահանջել որ այդ գումարը ամբողջութեամբ փոխադրուի Բիւրոյէն Պոլիս:

Մախքերու համար տոքիւմաններ չկան. կայ մանրամասն գրուած անոնց Հաշուետետրին մէջ: Պատրաստ գումար ունին 254 ոսկի 49 դրչ. 15 փր. այս գումարին մէջ է նաեւ բանտարկեալներու դրամը: Տետրը վաւերացուած չէ:

Ծանօթ.- Վերջի պահուն ստացանք Ամերիկայի մէկ նոր Հաշուեկշիռը. կարծենք բաւական տարբեր է Հին Հաշիւէն ու կը շարունակուի մինչեւ 1911 Յունիս 30ը. ըստ մեզ այս վերջինը պէտք է քննուի քոնթրոլի մարմնի կողմէն:

Ստացանք նաեւ Իգմիրէն Կեդր. Կոմիտէի Հաշուետետրերը, որոնց քննութեան ժամանակ չմնաց, ուստի այդ Հաշիւները պէտք է քննել եւ կանոնաւորութեան մը մէջ մտցնել. ասոնց քննութիւնը եւս կը յանձնարարուի Հաշուական մարմնին:

Քննութեան նաեւ Ազատամարտի Հաշիւները, որոնց

մասին մանրամասն արձանագրութիւն չէ եղած սակայն:

Յ.Գ.- Խումբ մը պէտք է աւելցնել այս տեղեկագրին վերջին մասին մէջ. Ազատամարտը ասկէ վերջ ունէ գումար չի կրնար ստանալ կազմակերպութեան գանձէն. նոյնիսկ մինչեւ ցարդ առած գումարներն իսկ պէտք է կամաց-կամաց վերադարձնէ, թէեւ Ազատամարտը ի վիճակի է աւելի մեծ գումարներ ալ վերադարձնել, սակայն ցանկալով որ թերթը մաս մալ իր վրայ գործածէ, յանձնախումբը եկաւ այն եզրակացութեան որ, առայժմ մինչեւ յառաջիկայ Ընդհ. Ժողով, պէտք է վճարէ տարին 50-60 ոսկի եւ երբեմն ալ հրատարակութեամբ Հաշուակցի:

Կարելի է աւելացնել որ, «Ազատամարտ»ի Հաշիւները ամէնէն աւելի կանոնաւոր եղած են. նոյնպէս նաեւ տեղեկագիրը:

ԱՐԵՒԱՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Մանրամասն քննութեան ենթարկուեցաւ նաեւ Արեւմտեան Բիւրոյի Հաշիւը ընկեր Աստիկեանի ձեռքով. մանրամասն արձանագրութիւնը պիտի տրուէր բայց ընկեր Աստիկեանի մեկնումովը կարելի չեղաւ բայց Հաշիւները կանոնաւոր էին. կար միայն քասայի տետր:

ԸՆԴՀ. ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1) Հաշիւներու միօրինականութիւն չկայ. կը յանձնարարուի Հաշուական մարմնի ուշադրութեան որպէսզի յառաջիկային միօրինակութիւն մտցնելու աշխատի:
- 2) Նախահաշիւներու համաձայն էլ եւ մուտք չեն ունեցած մարմինները. այս հսկողութիւնը կը յանձնուի դարձեալ Հաշուական մարմնին:
- 3) Չափազանց շատ են անկարելուր եւ ապօրէն ծախքեր. այս մասին պէտք է շատ խիստ ըլլալ եւ ամէն 2 ամիսը անգամ մը բոլոր Կ. Կ.ներէ եւ Բիւրոններէ պէտք է պահանջուի ծախքերու եւ ելքերու տոքիւմանները եւ հաստատելու է Հաշիւներու կանոնաւորութիւնը:
- 4) Պատրաստ դրամ նկատուած գումարը չէ կարելի նկատել կազմակերպական դրամ. անոր մէջ են շատ մը աղբիւրներէ գոյացած դրամները, ուստի պատրաստի Հաշիւներն ալ պէտք է բաժանել ըստ տեսակի:—
- 5) Բոլոր այն գումարները որ կը Հաւաքուին գանազան հաստատութիւններու եւ ձեռնարկներու ի նըպաստ, այդ գումարները լրիւ եւ անմիջապէս պէտք է փոխանցուի պատկանեալ մարմիններուն:
- 6) Կազմակերպական Հասոյթները ըստ մեզ պէտք է որ շատ ճիւղաւորուին. կարելի է բաժնել երկու մասի:

ա) Անդամական կամ խմբական ամսավճար
բ) Զանազան (թատրոն, հանգան, նուէր, տուգանք, վիճակ[ահանութիւն], եւ այլն):

Որով դիւրութիւն մը եղած կ'ըլլայ:

7) Պէտք է շեշտել մասնաւոր շրջաբերականներով թէ միայն այս գումարներէն կարելի է տեղական ծախքի համար տոկոս հայթայթել:

8) «Դրօշակ»ի բաժնեգրիները պէտք է փոխադրել ուղղակի ժրնեւ Կ. Կ. ներու միջոցաւ:

9) Հրատարակութիւնները առ հասարակ ցրուած են բոլոր կոմիտէներու քով: Ազատութեան մատենադարանի մարմինը պէտք է յատուկ շրջաբերականով մը ժրնեւ, Ամերիկա եւ բոլոր Կեդր. Կոմիտէներէ պահանջէ ընդհ. ցուցակը եւ հաշիւները ու կեդրոնացնէ մէկ տետրի մէջ, որով շատ մը անպատեհութիւններու առաջը կ'առնուի:

10) «Դրօշակ»ի, «Կազմակերպութեան» եւ բոլոր կարեւոր հաստատութեանց ինչպէս «Ազատամարտ»ի եւ «Ազատութեան մատենադարան»ի պրակ-ստացագիրները պէտք է պահանջել եւ պահել հաշուական մարմինի տրամադրութեան տակ ու ցուցակագրելէ եւ վաւերացնելէ յետոյ միայն շրջաբերութեան թողնել՝ պահելով արձանագրութիւններ այդ մասին եւ միշտ պահանջել սպառած քուէքոնները: այն պրակները որ կարելի չէ ետ պահանջել գործածութեան եւ շրջագայութեան մէջ ըլլալուն համար, պէտք է պահանջել Կ. Կ. ներէ ցուցակները, թիւերով:

11) Հաստատելով նոր դրութիւններ, պորտերոններու գործածութիւնը: որպէսզի պարտաւորիչ ըլլայ ամէն ամիս եղած դրամական գործողութեանց ցուցակը ձեռքի տակ ունենալ:

12) Բոլոր Կեդր. Կոմիտէները ունին մեծ քանակութեամբ ապառիկներ: բոլոր պարտականներու համար բանալ առանձին հաշուերնթացներ եւ հետապնդել այդ գումարներու գանձումը:

13) Կեդր. Կոմիտէները կը պահեն միայն քասայի տետրակներ: դիւրութեան համար, այդ տետրակէն ամէն ամիս կ'արտագրեն մուտքի եւ ելքի գործողութիւնները եւ կը ղրկեն հաշուական մարմնոյն, որով յիշեալ մարմինը Մայր Տոմար կ'ունենայ մանրամասն գրուելներով զանազան շրջաններու համար, որով իր տրամադրութեան տակ կ'ունենայ ամբողջ Դաշեան հաշիւները:

14) Հաշ. մարմինը յամառօրէն կը պահանջէ բոլոր Կեդր. մարմիններու հաշիւները, չթողնելով այդ բանը իրերու բնական ընթացքին: շատ գործ ըլլալու պարագային կազմակերպութեան շահը կը պահանջէ, մէկէ ավելի ազատ անդամ ունենալ եւ գործը կանոնաւոր տանիլ, աչքի առաջ ունենալով ընդհ. ժողովէն գծուած պիւտճէն:

15) Հաշուական մարմինը պահելու է նաեւ վիճակագրական մատենաներ, համաձայն հաւաքուած եւ հաւաքուելիք վիճակացոյցներու:

16) Հաշուական մարմինը պարտականութիւն ունի ամփոփելու բոլոր մարմիններու հաշիւները, լուսաբանութիւններ եւ ծանօթութիւններ ալ կցելով տպագրութեան տալ ու Կեդր. Կոմիտէներու միջոցաւ ցրուելու համար բոլոր կոմիտէներուն:

17) Պարտականութիւն ունի ընդհ. ժողովի գումարումէն առաջ հաւաքել բոլոր Կեդր. մարմիններու հաշիւները եւ կազմել ընդհ. հաշուական տեղեկագիր եւ ներկայացնել ընդհ. ժողովի քննութեան եւ վաւերացման: պարտաստել նաեւ յառաջիկայ տարուան նախահաշիւը:

Զ՞ ընդհ. ժողովի կողմէ ընտրուած
Հաշուեքննիչ յանձնախումբ
Գ. Ն. ՔԵՍՏԱՆԵԱՆ

1911 Սեպտ. 28
Կ. Պոլիս

Փաստ. 1542-37

ՄԻԱՅՆ ՄԱՐՄԵՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ե.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՑԵՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Օգոստոս 17 – Սեպտեմբեր 17, 1911

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

Ե՞ Ընդհանուր ժողովին որոշման համաձայն, Զ՞ Ընդհանուր ժողովը պիտի գումարուէր 1911 տարուան մէջ, ըստ այսմ ցրուեցան հրաւիրագրերը եւ ժողովը տեղի ունեցաւ 1911 Օգոստոս 17էն մինչեւ Սեպտեմբեր 17, նուիրելով միջին հաշուով օրական երկու, ընդամենը 50 միտ օրակարգի գլխաւոր խնդիրներուն:

Տեղեկագրերու ընթերցումէն եւ բերանացի գեկոյցներէն ետք, ժողովն անցաւ վիճաբանութիւններուն եւ տուաւ որոշումներ, որոնցմէ կը քաղենք հոս կարեւորագոյնները:

Ա. ԱՇԽԱՏԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ժողովը նկատելով՝

Որ մեր կուսակցութեան գլխաւոր խարխախն է հայ աշխատաւորութիւնը,

Որ աշխատաւորութիւնը (գիւղացի, բանուոր, արհեստաւոր եւ այլն) կազմակերպուելով հանդերձ իր տնտեսական շահերուն շուրջ, մոռնալու չէ երբեք թէ մերինին պէս յետամնաց հասարակութեանց մէջ տնտեսական պայքարը կարելի չէ բնաւ յաջող վախճանի մը հասցնել, առանց մղելու քաղաքական ուժգին պայքար մը՝ պետական եւ ազգային մշակոյթի լայն բարենորոգումներու համար:

Որ պրոպագանդը՝ բանաւոր թէ գրաւոր, պէտք է որ կատարուի հնարաւոր եղածին չափ ուժերու խնայող տնտեսութեամբ, իսկ այդ տնտեսութեան ամէնէն բարձր աստիճանին կարելի է հասնիլ ազգային միջավայրի մէջ, ուր կը տիրէ համանմանութիւն մը լեզուի, հոգեբանութեան եւ զարգացման աստիճաններու:

Որ հայերուն բնակած բազմացեղ եւ բազմալեզու միջավայրերուն մէջ տակաւին կը տիրեն ազգային խոր հակամարտութիւններ եւ փոխադարձ անվստահութիւններ — երեւոյթ մը, որ կազմակերպութիւններու ներսը կը ստեղծէ անխուսափելի ընդհարումներ՝ փոքրամասնութիւններու եւ մեծամասնութիւններու միջեւ, կազմալուծելով վարչական մարմինները նորածիլ միութիւններուն:

Որ նման բախումներ անվրէպ տեղի պիտի ունենան այն պարագային, երբ հայ աշխատաւորութեան մէջ եւս առաջ գան կուսակցական բաժանումներ,

Որ հայ աշխատաւորութեան շահերը կրնան իրապէս բարգաւաճիլ այն պարագային միայն՝ երբ դրացի ժողովուրդներու մէջ եւս կազմակերպուած կ'ըլլան աշխատաւորական տարրերը ու երբ միջազգային բովանդակ աշխատաւորութիւնը իր համերաշխ ճիգերը կ'ուղղէ ընդհանուր թշնամիներուն՝ աւատականութեան եւ կապիտալիզմին դէմ,

Որ հայ ընկերվարական մտաւորականութիւնը, իբր ավելի գիտակից եւ պատրաստուած տարր մը թուրքիոյ մէջ, պարտի իր ուժերուն ներած չափով ղեկավար հանդիսանալ բնակակից ազգերու աշխատաւորութեան, կ'ՈՐՈՇէ

1) Աշխատաւորական կազմակերպութիւնները դնել ազգային եւ կուսակցական գետնի վրայ, իսկ ուր անհնարին է ատ, առժամապէս կանգնիլ միջազգային՝ անկուսակցական տեսակետի վրայ: Բոլոր աշխատաւորական կազմակերպութիւնները անպայման պարտին համերաշխօրէն եւ միջազգայնաբար գործել տնտեսական ձեռնարկներու մէջ (գործադուլ, պոյքթ եւ այլն):

Ծանօթ.- ա) Ընդ. ժողովը իր բոլոր ձեռնհաս մարմիններուն կը յանձնարարէ արհեստակցական (սենտիքալ) գործունէութեան ասպարէզին մէջ նախապատուութիւն տալ այնպիսի ձեռնարկներու, որոնք հասունցած են եւ կրնան իրագործուիլ մասնակցող աշխատաւորներու ջանքերով:

բ) Շրջանային պատգ. ժողովները հրահանգներ կը մշակեն իրենց շրջանի աշխատաւորական գործունէութեան համար, հիմնուելով այս որոշումներուն վրայ եւ յարմարցնելով ասոնք իրենց տեղական պայմաններուն:

2) Եռանդուն պրոպագանդ մղել բնակակից ազգերու աշխատաւորութեան մէջ, կազմակերպել անոնցմէ միութիւններ, ի հարկին հրատարակել գրքոյկներ աշխատաւորական հարցերու մասին՝ թուրք եւ քիւրտ եւ այլ տեղական լեզուներով, խրախուսել եւ ջանալ պատրաստել ընկերակարական ոգիով տոգորուած մտաւորական տարրեր, որպէսզի առաջիկային անոնք կարենան ստանձնել ղեկավարութիւնը իրենց համազգի աշխատաւորներու դատին:

Բ. ԹՈՒՐԲԻԱ

ՀՈՂԱՎԷՃԸ

Նկատելով որ Համիտեան ռեժիմին տակ Հայաբնակ նահանգներուն մէջ, յատկապէս 1890էն ի վեր տիրող բռնութեան, աչառութեան, օրինական խարդախութիւններու եւ օրէնքի չիլ մեկնաբանութեանց շնորհիւ, Հայ Հողագործը զրկուեցաւ իր ապրուստի էն ահարժեշտ միջոցէն — Հողէն, որուն հետեւանքով, ինչպէս նաեւ այլ յարակից պատճառներով՝ Հայ աշխատաւորներու ստուար մասը հարկադրուած եղաւ իր Հասոյթին մեծագոյն մասը այս կամ այն ձեւով լեցնելու հարստահարիչներու եւ վաշխառուներու գրպանը,

Հաստատելով որ Համիտեան բացառիկ բռնութիւններէն տարագիր արտասահման ապաստանած տասնեակ հազարներով Հայեր, տարիներ շարունակ թըշաւառ կեանք մը քաշքընելէ ետք, այսօր երբ սահմանադրական ռեժիմին ապաւինած կը վերադառնան իրենց հայրենիքը, գրաւուած կը գտնեն իրենց Հողերը այլեւայլ հարստահարիչներէ, որոնք յենած իրենց բիրտ ուժին կամ օրինական խարդախութիւններու՝ կը մերժեն Հայ աշխատաւորին յանձնել իր օրինական սեփականութիւնը,

Ապացուցուած համարելով, թէ աւատական մնացորդներով լեցուն Հայաբնակ նահանգներուն մէջ, հարստահարիչները Հողեր յափշտակած են ո՛չ թէ իրենց պէտքերուն համար այդ Հողերը մշակելու, այլ անոնց վրայ բնակեցնելու եւ շահագործելու համար միջոցառելու որ ու հայեր եւ Հոն կուռան մը ստեղծելէ ետք՝ հետզհետէ իրենց բռնութիւնները տարածելով՝ տիրանալու համար շրջակայ գիւղերուն,

Դիտելով, որ Կովկասի ռուս իշխանութիւններէն իրենց գողութեան կամ աւագակային արարքներուն համար հալածուած տարրեր, Թուրքիա ապաստանելով, կը շահագործեն իսլամ գաղթականի անունը, օգտուելու համար առ այդ թուրք կառավարութեան ընծայած մեծամեծ դիւրութիւններէն,

Թէ մինչ այդպիսի փախստականներու Հողերը ռուս

կառավարութեան կողմէ բացառապէս կը տրուին ռուս գաղթականներու, թուրք կառավարութիւնը զանոնք կը տեղադրէ «ազատ կամ մահիլի Հողի»՝ պատրուակի տակ Հայկական Հողերու վրայ, զանց ընելով Միջագետքի ամայի դաշտերը եւ խոյս տալով Հողաշատ մահմետական գիւղերէ, որոնց հանդէպ նորեկ իսլամները անկարող պիտի գտնուէին գործադրելու այն բոլոր ապօրինութիւնները, որոնք անհանդուրժելի ըլլած են գիրենք հայաբնակ գիւղերուն մէջ,

Շեշտելով, որ օսմանեան հողային օրէնքներուն համաձայն Հողը օգտագործելու իրաւունքը վերապահուած է զայն մշակողին, մինչդեռ վերջին 30 տարուան մէջ Հայ գիւղացիներուն Հողերը յափշտակուած են կամ բռնութեամբ, կամ օրինական խարդախութիւններով եւ կամ մահուան սպառնալիքի տակ հարկադրելով զանոնք թողելու իրենց Հողերը եւ հեռանալու երկրէն,

Մատնանիչ ընելով միանգամայն, թէ ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս եւ այժմ դիտուած բոլոր գեղծումներն ու ապօրինութիւնները արդիւնք են կառավարական պաշտօնեաներու աչառութեանն ու անբարեխղճութեանը եւ ատ աստիճան մը եւս կը շեշտուի շնորհիւ այն պարագային, որ պաշտօնէութիւնը մենաշնորհն եղած է իսլամ տարրին,

Հաստատապէս համոզուած որ — եթէ արտակարգ միջոցներով չդարմանուին Համիտեան բացառիկ ճնշումներուն արդիւնք եղող այս անօրինակ գրկանքները,— Հայ ժողովրդին համար մեռած տառ մը պիտի մնայ Սահմանադրութեան աւետած բարիքները եւ աստիճան մը եւս պիտի խրախուսուին բոլոր յափշտակիչներն ու գեղծարարները՝ գործելու նորանոր ապօրինութիւններ,

Կ'որոշէ, հողավեճի լուծման ձեռնարկելու ատեն, իբր դեկավար սկզբունք ունենալ հետեւեալ կէտերը.

1) 1890էն ասդին կատարուած Հողային եւ յարակից գրաւումները հեշտակել տալ իբր արդիւնք հայութեան դէմ ուղղուած բռնութիւններու եւ քաղաքական բացառիկ հայածանքներու: Հետեւաբար 1890ին գոյութիւն ունեցող Հայ Հողային-Ջրային սեփականութեան status quo-ի վերահաստատումը նկատել սահմանադրական կառավարութեան արդարամտութեան եւ իթթիհատ-Դաշնակցական համերաշխութեան կարեւոր պայմաններէն մէկը:

2) Հողավեճը լուծել տալ վարչական եղանակով եւ խառն յանձնաժողովներու միջոցով, յենուելով օսմանեան Հողային օրէնքներուն եւ անոնցմէ բխող լրացուցիչ լուսաբանութիւններու: Վիճելի Հողերու եւ ջրերու

1.- Սեփականագուրկ, անհող մշակ:
2.- Պետական սեփականութիւն:

նկատմամբ սեփականութեան իրաւունքը ճանչնալ հին վաւերացութիւններ ներկայացնողին, համաձայն 1909 (1329) Օգոստոս 27 Պետական Խորհուրդի որոշման:

3) Հալածանքներու երեսէն արտասահման փախած կամ ցրուած եւ Սահմանադրութենէն ետք իրենց բնագաւառը վերադարձող Հայերուն ընծայել դրամական բոլոր այն օժանդակութիւնները եւ ապահարկութեան արտօնութիւնները՝ որոնք վերապահուած են եղեր մինչեւ այժմ իսլամ գաղթականներուն:

4) 1890էն ասդին Հայ Հողերու վրայ հաստատուած իսլամ գաղթականները փոխադրել տալ ուրիշ ազատ վայրեր: Իսլամ գաղթականները այսուհետեւ տեղադրել Միջագետք կամ ուրիշ Հողաշատ շրջաններ, զանոնք բնակեցնելով 8 ժամէն ոչ մօտ հայաբնակ գիւղերուն:

Ծանօթ.— Ազատ հողերը ճշդելու ատեն իբրեւ այդպիսին չնկատել զիւրերու արօտատեղիները, անտառները, շամբերը, ինչպէս նաեւ առանց թափուի արդէն մշակուող արտերը.—

5) Հայ գիւղերէն հեռացնել բոլոր այն բռնակալները, որոնք առնելիք գանձելու կամ այլ պատրուակներով 1890էն ի վեր բնակութիւն հաստատած են Հոն:

Անոնց պահանջներուն օրինաւորութիւնը վերապահել քննելու դատարաններու կամ խառն յանձնախումբերու առջեւ:

6) Վերաքննել 1890էն ասդին աւատականներու եւ հարստահարիչներու կատարած Հողային իւրացումները: Օրինաւորութեան պարագային՝ այդպիսիներու Հողերը (փոխանակութեան կամ մասնաւոր հատուցման մը միջոցով) միացնել մէկ կտորի մէջ, իր բնական սահմաններով:

7) Հողավեճի լուծման հետեւանքով անհող մնացած Հայ եւ քիւրտ միջոցներուն Հող տալ պետական խալի Հողերէն, քիւրտներուն 8 ժամէն ոչ մօտ իրենց հեռացած վայրէն:

8) Տեղացիներու հետ ազգակցական կամ շահակցական հաշիւներով կապուած պաշտօնեաներու փոխարէն կարգել տալ դրսեցիներ: Ասոնց մէջ հայերու թիւը աստիճանաբար աւելցնել, հասցնելով տուեալ վայրի Հայ բնակչութեան ներկայացուցած տոկոսին:

ԻԹԹԻՀԱՏ ՎԷ ԹԷՐԱԳԳԸ ԵՒ ՕՍՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ընդհ. ժողովը լսելով Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը եւ ընկեր պատգամաւորներու զեկուցումները Իթթիհատի կազմին, գործունէութեան, Դաշնակցութեան հետ ունեցած յարաբերութիւններուն եւ Իթթիհատէն սերած դահլիճներու քաղաքականութեան մասին, Ուշադրութեան առնելով Թուրքիոյ ընկերային,

տնտեսական եւ քաղաքական արդի դրութիւնը՝ ընդհանրապէս եւ հայկական նահանգներուն կացութիւնը մասնաւորապէս.

Սրտիցաւով կ'արձանագրէ
Թէ սահմանադրութեան եռամեայ շրջանին մէջ կառավարութեան քաղաքականութիւնը՝ հակառակ շարք մը յուսատու նախափորձերու, ո՛չ միայն չէ նպաստած այլակրօն եւ այլացեղ ազգերու հաշտ համակենցողին,— բան մը որ պէտք է ծառայէր իբրեւ հիմը երկրին ընդհանուր վերաշինութեան մեծ գործին,— այլ ընդհանրապէս տեղի տուեր է անվստահութիւններու արծարծման ու գոյութիւն ունեցող ազգային իրաւունքներու ճնշումին,

Թէ Իթթիհատը եւ անոր յենած դահլիճները փոխանակ հետեւողականօրէն ոչնչացնել ձգտելու աւատական ռեժիմի մնացորդ միջնադարեան առանձնաշնորհումները, փոխանակ արգիլելու որ վերջին 30 տարիներու անիշխանութեան հետեւանքով Անատոլիոյ մէջ առաջ եկած բռնատէրեր օրինական հանգամանք չտան իրենց Հողային յափշտակութիւններուն,— ընդհակառակը, իր հետեւած սիրաշահումի քաղաքականութեամբ քաջալերած են այդ տարրերը ի վնաս Թուրքիոյ բազմաչար աշխատաւոր զանգուածներուն եւ երկրին բնականոն առաջդիմութեան,

Թէ Իթթիհատը ձգտելով իր ձեռքը պահել իշխանութեան ղեկը եւ ներկայացնելով հանդերձ խորհրդարանական մեծամասնութիւն՝ աստիճանաբար ետ նահանջը է սահմանադրական-ժողովրդապետական սկզբունքներէ, օրէնսդրական աշխատանք չէ կիրարկած թեթեւեցնելու համար ժողովրդին բեռը, բարեփոխելու հարկային սխտեմը կամ ներմուծելու տնտեսական բարենորոգումներ,

Թէ իթթիհատեան քաղաքականութիւնը փոխանակ ելեւմտական հաւասարակշռութիւն ստեղծելու եւ ոչ արդիւնաւէտ ծախքերը կրճատելու՝ շարունակել է պարտքեր ընելու սխտեմը, բան մը որ չի կրնար վտանգի չենթարկել պետութեան անկախութիւնը,

Թէ Նոր Թուրքիան իր աշխարհագրական դիրքին եւ քաղաքական շահերուն պատշաճ բարեկամական չէզոք յարաբերութիւն չէ պահպանած Եւրոպայի քաղաքական խոշոր խմբակցութեանց հետ, այլ միակողմանի ազդեցութեան ենթարկուելով՝ ուծացուցած է իրմէ արեւմտեան Եւրոպայի ռամկավար ու ազատամիտ կառավարութիւնները, պարագայ մը որ չէր կրնար չանդրադառնալ Թուրքիոյ ներքին ու միջազգային կացութեան վրայ,

Թէ Իթթիհատը միջոցներ ձեռք չառաւ պայքարելու եւ մաքրելու իր կազմը աջակողմեան խայտաբղէտ տարրերէ, որոնք հետզհետէ բազմանալով իր կուսակցութեան մէջ գերակշիւ ազդեցութիւն մը ձեռք բերին հոն.

Արձանագրելով դարձեալ,
Թէ հայ ժողովրդի բացառիկ կացութեան ու կենսական պէտքերու մասին Դաշնակցութեան ցարդ կատարած բազմաթիւ բանակցութիւններն ու համաձայնութիւնները Իթքիի հետ՝ մնացած են առանց հետեւանքի, Իթքիի հետ եւ անկէ բախճ դահլիճներուն քով,

Թէ Իթքիի հետ ու իր դահլիճները գոհացում տալով կարգ մը երկրորդական խնդիրներու, հակառակորէն հանդէպ շատացել են անիրագործելի մնացած խոստումներով միայն,

Թէ հակառակ Կ. Պոլսի (1909) եւ Սելանիկի (1911) համաձայնութիւններուն՝ Իթքիի հետ չէ խորհրդակցած Դաշնակցութեան հետ՝ երկրին կացութեան վերաբերող կարեւոր հարցերու լուծման ատեն, ինչպէս եւ իր գաւառական մասնաճիւղերը՝ տեղին դաշնակցական կոմիտէներու հետ,

Թէ կառավարութիւնը հետզհետէ ներման արժանացնելով եւ բանտերէն ազատ արձակելով կիլիկեան զարհուրելի ոճիրներուն համար իր դատած ու դատապարտած յանցաւորները, վարկաբեկած է արդարութեան ուժը թէ՛ դժբախտ գոհերուն եւ թէ՛ չարագործ տարրերու աչքին, եւ ատով նպաստած է այն հին համոզումին արմատացման թէ սահմանադրական ռեփորմի տակ եւս կարելի է թալլել, ջարդել եւ անպատիժ մնալ,

Հաստատելով միւս կողմէն՝

Թէ Դաշնակցութիւնը ո՛չ միայն անյողողդ հետեւողականութեամբ հաւատարիմ գտնուած է Օսմ. սահմանադրութեան հաստատման ատեն Նոր Թուրքիոյ Հանդէպ իր ստանձնած բոլոր յանձնառութիւններուն, այլ եւ ուղղամտօրէն գործակցած է Իթքիի հետ՝ փոխ-յարաբերութիւններու սահմանին մէջ, յաճախ նոյնիսկ դէմ երթալով հայ ժողովրդի մէկ մասին զգացումներուն:

ԿՈՐՈՇԷ,

1) Յանուն Հ.Յ.Դաշնակցութեան՝ ուղղել Իթքիի տրամադրութիւնները, ճշդելու նպատակով երկու կուսակցութեանց փոխ յարաբերութիւններու եղանակը եւ բացորոշ պայմաններ առաջիկայ գործակցութեան համար: Կցել անոր ամփոփ յիշատակագիր մը, որ բովանդակէ՝ ա) Վերջին երեք տարիներու մէջ կացութիւնը հայաբունակ նահանգներուն եւ անոր հանդէպ դիրքը Իթքիի հետ եւ իթքիական դահլիճներուն. բ) Կտրուկ հիմնական միջոցներ, որոնք կը հարկադրուին հայ ժողովրդի բացառիկ տառապանքները դարմանելու. գ) Հայն ռամկավար ոգիով կարգ մը բարենորոգումներ, որոնց կիրարկումը անհրաժեշտ է փութացնել:

2) Եթէ յանուն Կուսակցութեան կատարուած այս դիմումէն ետք եւս՝ Իթքիի հետ ու անկէ բխող դահլիճները գործով երաշխիքներ չտան ցարդ կրկնուած խոստումներու մօտալուտ իրագործումին — արտօնել Արեւմտեան Բիւրոն որ դադարեցնէ իր յարաբերութիւնները Իթքիի հետ, ո՛րեւէ կերպով պատասխանատուութիւններ չընդունէ իր յարաբերութեան հետ՝ իթքիական դահլիճներու կատարած կամ կատարելիք սխալներուն մէջ:

3) Թուրքիոյ դաշնակցական մարմինները անընդհատ պրոպագանդ կը մղեն ներշնչելու հայ ժողովուրդին՝ որ հրաժարի նկատելի Իթքիի Դաշնակցական համաձայնութիւնը իբր միակ ու բացարձակ գրաւակներ իր կենսական շահերուն պաշտպանութեանը, եւ շարունակէ կազմակերպուելու քաղաքական կուսակցութեանց մէջ:

4) Յանձնարարել Դաշնակցութեան ձեռնհաս մարմիններուն եւ Օսմ. Խորհրդարանի երեսփոխաններուն՝ պաշարիլ կառավարութեան հակահայ քաղաքականութեան դէմ այն բոլոր օրինական միջոցներով, զորս կը թելադրէ կացութիւնը:

5) Օսմանեան խորհրդարանի դաշնակցական երեսփոխանները կը ստանձնեն անաչառ քննադատի դեր կառավարութեան հանդէպ, իրենից առաջնորդ ունենալով կուսակցութեան սկզբունքները, տակտիկն ու յանձնառութիւնները, եթէ կան:

6) Իթքիի հետ յանուն Հ. Յ. Դաշնակցութեան կը յարաբերի Արեւմտեան Բիւրոն՝ մասնակցութեամբ Օսմ. Խորհրդարանի Դաշնակցական Հատուածին ներկայացուցչին, իսկ խորհրդակցութիւններն ու որոշումները տեղի կ'ունենան իրան մարմին մը մէջ, կազմուած Բիւրոյի անդամներէն, Դաշն. երեսփոխաններէն եւ Կ. Պոլսի Կ. Կոմիտէի մէկ ներկայացուցչէն:

7) Այս որոշման համաձայն առաջիկային ունէ՛ք քայլ կամ ձեռնարկ կ'որոշէ Դաշնակցութեան Խորհուրդը կամ անոր բացակայութեան՝ երկու Բիւրոնները, խորհրդակցութեամբ իրենց շրջանի ձեռնհաս ընկերներուն:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր ժողովը լսելով խորհրդարանական գործունէութեան մասին ներկայ երկու երեսփոխաններու անհատական զեկուցումները, ինչպէս նաեւ ժողովին մէջ արտայայտուած թեր ու դէմ բոլոր կարծիքները եւ գտնելով՝

Որ այդ գործունէութիւնն աւելի՛ շատ արտայայտուել է Խորհրդարանին նիստերէն դուրս կատարուած գնահատելի աշխատանքներով, քան Կուսակցութեան բարոյական դիրքին վայել խորհրդարանական պրոպագանդայով,

Որ Դաշնակցական երեսփոխանութիւնը իր գործը չէ հիմներ հետեւողական եւ լուրջ աշխատութեան եւ կուսակցական կարգապահութեան սկզբունքներու վրայ,

Որ խորհրդարանական մեր գործունէութիւնը բեղմնաւոր դարձնելու համար անհրաժեշտ է դրամական գոհողութիւններ ընելով՝ աշխատանք կատարել Խորհրդարանէն եւ նոյնիսկ մայրաքաղաքէն դուրս, պահել յատուկ քարտուղարութիւն եւ մասնակցիլ ընտրողական պայքարի ծախքերուն,

Որ մինչ երեսփոխանները կ'ընտրուին Դաշնակցութեան բարոյական-նիւթական միջոցներով, գործիչ ընկերներու ստացածին հետ բաղդատամբ անոնց թոշակները չեն համապատասխաներ կուսակցութեան շարքերուն մէջ գոյութիւն ունեցող ռամկավար աւանդութիւններուն եւ փոխարարներութիւններուն,
ԿՈՐՈՇԷ.

1) Երեսփոխան ընկերները կը գործեն հաւաքական խորհրդակցութեամբ եւ պատասխանատուութեամբ, սերտ յարաբերութիւն կը պահպանեն — փոխադարձաբար իրազեկ պահելով զիրար — զիրենք ընտրող շրջաններու կեդր. Կոմիտէներու հետ եւ կը լուսաբանեն բոլոր խնդիրները աշխատաւոր եւ ճնշուած խաւերու շահերուն տեսակէտէն:

2) Երեսփոխաններուն, ինչպէս առհասարակ բոլոր դաշնակցական ընկերներուն կ'արգիլուի ընդունիլ նախարարի պաշտօնը:

Օանօթ.— Յեղափոխական եւ բացառիկ-անցողական շրջաններում միայն՝ դաշնակցական ընկերները կրնան մտնել առժամեայ կառավարութեան մէջ, հաւանութեամբ իրենց շրջանի ղեկավար մարմիններուն, բայց նոյն օրէն կը դադրին գործօն անդամ ըլլալ կուսակցութեան մէջ:

3) Ազգային-կրթական խնդիրներու լուծման համար Դաշն. երեսփոխանները պլոքներ կը կազմեն հայ եւ ոչ-թուրք երեսփոխաններուն հետ: Իսկ տնտեսական եւ ընդհանուր պետական կարեւորութիւն ունեցող խնդիրներու համար՝ պլոք կը կազմեն աշխատաւորական մտայնութիւն եւ աներկբայօրէն ռամկավար ընթացք ունեցող կազմակերպութիւններու եւ տարրերու հետ:

4) Խորհրդարանի ամէն նստաշրջանին՝ դաշնակցական իւրաքանչիւր երեսփոխան, խորհրդարանական յանձնախմբերու մէջ իր աշխատանքէն զատ, կը ջանայ ներկայել առնուազն մէկ ուսումնասիրուած առաջարկութիւն կամ լուսաբանութիւն ընթացիկ կարեւոր խնդիրներու մասին (օրինագիծ, ուսումնասիրութիւն, պատճառաբանուած ճառ եւայլն):

5) Երեսփոխան ընկերները տարին 3 ամիս պարտաւոր են անցնել գաւառները՝ աշխատաւոր խաւերուն մէջ, անոնց պէտքերն ուսումնասիրելու եւ ի հարկին պաշտպանել կարենալու համար:

6) Երեսփոխան թեկնածուների անուանումը կը թողուի իւրաքանչիւր շրջանի ղեկավար մարմին, խորհրդ-

դակցութեամբ համապատասխան Բիւրոյին եւ դրացի կեդր. Կոմիտէներուն, պայմանով որ թեկնածուներուն ցուցակը վաւերացուի նոյն շրջանի Պատգ. Ժողովէն:

7) Դաշնակցութեան ազդեցութեան տակ գտնուած շրջաններուն մէջ՝ դաշնակցական քուէները տրուելու են այնպիսի անձերու (դաշնակցական կամ համակիր), որոնք յանձնառու կ'ըլլան պաշտպանել Դաշնակցութեան պատգործը եւ ենթարկուիլ Դաշնակ. Խորհրդար. Հատուածին կարգապահութեանը: Միւս շրջաններուն մէջ դաշնակցական քուէները կրնան տրուիլ իրենց ուղղութեամբ կուսակցութեան աւելի մօտ կեցող անհատներուն:

8) Դաշն. Երեսփ. Հատուածը իբր ուրոյն մարմին, կ'ունենայ իր դիւանը: Երեսփոխանները իրենց միջոցներով պիտուէ մը կ'ապահովեն, իրենց գրասենեակի, քարտուղարութեան եւ խորհրդարանական ուրիշ անհրաժեշտ աշխատանքներու համար:

9) Խորհրդարանական Հատուածին որոշումները պարտադիր են երեսփոխաններուն համար:

10) Դաշնակցութեան ջանքերով եւ ազդեցութեամբ ընտրուած երեսփոխանները, ինչպէս եւ այլ վճարեալ պաշտօններու կոչուողները, իրենց ստանձնած բարոյական պարտականութիւնները կատարելէ զատ, պարտաւոր են նաեւ նիւթապէս օժանդակել կուսակցութեան: Երեսփոխանական ընկերներն իրենց հասոյթին 10% (առաւելագոյնը կազմակերպական տուրքին) կը վճարեն իրենց բնական վայրի Կ. Կոմիտէին, ի հաշիւ իրենց ընտրական շրջանի Կ. Կոմիտէին:

11) Երեսփոխան ընկերները, ինչպէս նաեւ բոլոր անոնք, որ կուսակցութեան բարոյական աջակցութեան շնորհիւ պաշտօն ձեռք կը բերեն, պարտին իրենց մէկ ամսականը տրամադրել ընտրական պաշարի անտուկին:

Օանօթ.— Սոյն յօդուածին տրամադրութեանը ազատ են 1908-1912 նստաշրջանի երեսփոխանները:

12) Այս որոշումներուն անսաստողները կ'ենթարկուին Հիմնական Կանոնագրին կարգապահական յաւելեալ տրամադրութեան: (Տես երես 29)³:

ԱԶԳԱՅԻՆ – ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ընդհանուր ժողովը քննելով կուսակցութեան ներքին՝ ազգային գործունէութեան քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ մեր բռնելիք դիրքը նոյն ասպարէզին վրայ գործող հայ կուսակցութիւններուն հանդէպ,

Գտնելով, որ հայ եւ անոր բնակակից ժողովուրդներու տնտեսական-քաղաքական արդի յետամնաց շրջանին մէջ՝ ընկերավարական-յեղափոխական եւ արմատա-

3.- Ներկայ հրատարակութեան մէջ էջ 134 (Կարգապահական):

կան տարրերը անկարող ըլլալով մեծամասնութիւն կազմել եւ գործադրել իրենց բովանդակ ծրագիրը, հարկադրուած են մասնակի նուաճումներով սահմանափակուիլ: Իրենց խտէպներն արծարծելու եւ համախոհներ գտնելու գործին մէջ,

Ընդունելով որ մեր գործունէութեան վայրերու ընկերային արդի պայմաններուն տակ՝ կենսական կարեւորութիւն ունի աւատական ու կղերական մտածողութեան տիրապետումը փոխարինել սահմանադրական սկզբունքներով, (մարդկային ազատութիւններ, ժողովրդապետութիւն, իրաւակարգ), անոնց կիրառումով, լայնացումովն ու խտացումովը կեանքի մէջ,

Նպատակ ունենալով ապահովել հայուն, ինչպէս եւ ամէն մէկ ազգի՝ ինքնավարութիւնը իր ազգային մշակոյթին մէջ, նկատելով զայն պետական գործունէութեան ճիւղ մը, իր ինքնավար վարչութեամբ եւ յատուկ տուրք սահմանելու իրաւունքով,

Գիտակցելով որ ազգային մշակոյթի խնդիրներուն ու սահմանադրութեան կիրառման մէջ՝ մեզի համար եւ գործակից կրնան գտնուիլ թէ՛ առաջադէմ կուսակցութիւններ եւ թէ՛ ազատախոհ չէզոք տարրերը,

Շեշտելով որ Դաշնակցութիւնը իր բարոյական ազդեցութիւնը կը պարտի ոչ միայն իր ծրագրին ու գործելակերպին, այլ եւ իր ընկերներու անձնուրութեան, անշահախնդրութեան եւ միշտ դժուարագոյն պատասխանատուութիւններ ստանձնելու յօժարակամութեան՝ մտքի ու ընկերային կեանքի նոր հորիզոններ բանալու կոչուած աշխատանքներուն մէջ,

Նկատելով վերջապէս, որ կուսակցութիւնը առաջադրած ունի իրեն՝ իր ծրագրին ու տակտիկին վերաբերող ուղղակի նպատակներ, որոնց նուիրուած պիտի ըլլայ ընկերներու աշխատանքին ու ջանքերուն մեծագոյն մասը,

Կ՝ՈՐՈՇԷ.

1) Հետամտիլ օրէնքի միջոցով ընդլայնելու Թուրքիոյ Հայոց Ազգային Սահմանադրութեամբ ճանչցուած ինքնավարութիւնը, իբրեւ պետական իրաւասութեան ու գործունէութեան ճիւղ մը, վերակազմելով՝ ռամկավար, աշխարհական հիմերու վրայ՝ անկէ բխող վարչական մարմինները: Ճնշուած եւ չունեւոր խաւերուն ապահովել ճրի-պարտադիր տարրական կրթութիւն, այդ նպատակին յատկացնելով ազգային կալուածներու հասոյթը, ազգային տուրքը եւ պետութեան վճարելիք բաժինը ազգային կրթական պիւտճէին:

2) Հ. Յ. Դաշնակցութիւնը իբր կուսակցութիւն եւ անբողոքի մասնակցի ազգային մշակոյթի գործերուն եւ հիմնարկութիւններուն: Կուսակցական շրջաններն ու անհատներն են, որ կրնան մասնակցիլ անոնց՝ առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն, միշտ մնալով սակայն ներշնչողի, ուղղութիւն տուողի,

գործակցողի, եւ ո՛չ թէ տնօրինողի կամ միակ գործադիրի դերին մէջ:

3) Կրօնի եւ անոր հետ կապուած դաւանական խնդիրներուն ու համապատասխան հաստատութիւններուն հանդէպ՝ դաշնակցականները չէզոք դիրք կը բռնեն, ապահովելով ու յարգելով ամէն մարդու խղճի ազատութիւնը, պատշաճ ու համբերատար վերաբերում ցոյց տալով ամէն տեսակի դաւանանքներու եւ կրօնական զգացումներու հանդէպ:

4) Երեսփոխանութեան թեկնածուները կ'անուանուին, եթէ հնար է, Շրջանային Պատգ. ժողովէն, հակառակ պարագային՝ շրջանին ղեկավար մարմինէն (Պոլսոյ մէջ՝ խորհրդակցութեամբ Բիւրոյին), որ այդ առթիւ կու տայ ընտրական հրահանգները: Երեսփոխան ընկերները համարատու են Շրջան. Պատգ. ժողովին:

5) Երեսփոխան ընկերները Ազգային ընդհանուր եւ գաւառական ժողովներու մէջ կը ներկայանան իբրեւ դաշնակցական խմբակցութիւն:

6) Դաշնակցական ղեկավար մարմիններու (Բիւրօ, Կ. Կոմիտէ) անդամները, ինչպէս նաեւ Խորհրդարանի երեսփոխանները եւ կէս-պաշտօնական թերթերու խմբագիրները չեն կրնար մտնել Ազգ. կեդր. եւ Գաւառ. վարչութիւններէ մէջ (քաղաքական ժողովներ):

Ասոնցմէ դուրս ուրիշ ընկերներ իրենց անձնական պատասխանատուութեան տակ միայն կրնան անդամակցիլ վարչական մարմիններուն, կանխաւ հաւանութիւնն առնելով իրենց Ազգ. խորհրդարանական խմբակցութեան կամ շրջանի ղեկավար մարմինին: Անոնց անդամակցութիւնն ալ կ'արգիլուի, երբ վնասակար դատուի կուսակցութեան տեղական գործերուն համար:

7) Ազգային բոլոր այդ մարմիններուն մէջ աշխատող մեր ընկերները պլոք կը կազմեն յարատեւ գործունէութեան ընդունակ ազատական ռամկավար տարրերու հետ:

8) Ազգային մշակոյթի հասունացած անմիջական պահանջներուն համար կը մշակուի յատուկ պլատֆորմ, որով պարտին առաջնորդուիլ դաշնակցական երեսփոխանները:

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընդհանուր ժողովը լսելով Դաշնակցութեան եւ հայ քաղաքական այլ կուսակցութիւններու փոխյարաբերութիւններու մասին զեկուցումը,

Իր ցաւը կը յայտնէ այն ձախողանքին համար, որուն հանդիպած է, իր գործադրութեան տակաւին սկզբնական քայլերուն մէջ իսկ, Ե՞ւ Ընդհանուր ժողովին որոշումով եւ յանձնարարութեամբ սկսուած համերաշխութեան ծանօթ ձեռնարկը, որ էր:

«Ոչ մէկ ջանք չխնայել՝ յաջողցնելու համար դիմադիր քաղաքական հայ կուսակցութիւններու եւ խմբակցութիւններու համերաշխ գործունէութիւնը:

Ճանօթ.- Իբր այդ ուղղութեամբ նախապատրաստական քայլ՝ Ընդհանուր ժողովը կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրոյին՝ իրաւիքել զանազան հայ կուսակցութիւններէ խորհրդակցական ժողով մը եւ ձգտիլ համերաշխութիւն գոյացնել քանի մը անցեալի խնդիրներու շուրջը – ապահովում Օսմ. Սամահանդրութեան, պաշտպանութիւն ազգային մշակոյթի շահերու եւայլն: (Տես որոշումներ Ե՞ւ Ընդհանուր ժողովի):

Ժողովը կը հրահանգէ միանգամայն. Եթէ հակառակ բոլոր մեր անկեղծ ջանքերուն՝ ապագային եւս անկարելի ըլլայ հայ կուսակցութիւններու ամբողջին հետ համերաշխութիւն պահպանել – յանձնարարել դաշնակցական մարմիններուն գէթ մասնակի համերաշխութեան եւ գործակցութեան մտնել տեղական վստահելի խումբերու հետ՝ գործնական այլեւայլ ձեռնարկներու շուրջը:

Ժողովն այն համոզումն ունի, թէ համերաշխութեան ձեռնարկներու ձախողելու պարագային՝ միջկուսակցական կռիւններու վերջ տալու լաւագոյն միջոցն է՝ անտեսել հակառակորդներու յարձակումները, չէզոքութեան դատապարտելով բոլոր այն տարրերը, որոնք դրդուած կուսակցական անձուկ տեսակէտներէ ու շահերէ միայն՝ արուեստականօրէն կռիւններ կ'արծարծեն հանրային կեանքին մէջ:

Գ. ՌՈՒՄԻԱ

Ընդհանուր ժողովը նկատելով, որ Ե՞ւ Ընդհ. ժողովէն ետք զգալի փոփոխութիւն մը առաջ չէ եկած Ռուսիոյ քաղաքական կացութեան մէջ,

Կ'որոշէ իր ուժին մէջ պահել նախորդ Ընդհ. ժողովին որոշումը, որ էր.

«Նկատի առնելով թէ Ռուսիոյ մէջ միապետական ռեժիմը՝ որ յենուած է ազնուական հողատէրերու եւ խոշոր բուրժուազիայի վրայ ու կը շահագործէ աշխատաւոր խաւերը եւ քաղաքացի միջակ դասը՝ վաղուց չի համապատասխաներ երկրին քաղաքական ու տնտեսական հասունութեան:

«Գիտակցելով, որ արտաքին բարդութիւններու եւ ներքին յեղափոխութեան ճնշման տակ 1905-ին յայտարարուած սահմանադրութիւնը ընդդիմադիր տարրերու տաքտիքային սխալներուն շնորհիւ (ներքին երկպառակութիւն, մարտական ուժի տկարութիւն), յետագային էապէս խափանուեցաւ, ու այսօրուան Պետական Դուման կը հանդիսանայ միայն իբրեւ նպաստա-

ւոր միջոց ու քող՝ փրկելու կառավարութեան դիրքը թէ՛ ներսը եւ թէ՛ դուրսը,

«Գտնելով, որ ժողովրդական զանգուածներու վրայ յենուող կուսակցութիւնները դրական հետեւանքներու կարող են հասնիլ միայն այն պարագային, երբ առանց մոռացութեան տալու կուսակցութեան հեռաւոր նպատակները, կը մարզեն զանգուածները գործնական քայլերով՝ կոնկրէտ հարցերու շուրջը (աւատական կարգերու բարձում, հողերու բաշխում, հարկերու թեթեւացում եւ այլն),

Կ՝ՈՐՈՇԷ.

1) Կազմակերպական շարքերը զօրացնելու եւ ամրապնդելու պահուն՝ ամենամեծ ուշադրութիւն դարձնել ընդհանուր քաղաքական պահանջներու եւ կռուի կարեւորութեան, ինչպէս նաեւ այն միջոցներու վրայ, որոնք կ'ապահովեն անոնց յաղթանակը:

2) Նախաձեռնութիւն ստանձնել՝ իրաւիքելու թէ Ռուսիոյ մէջ ընդհանրապէս եւ թէ Կովկասի մէջ մասնաւորապէս՝ ընկերվարական եւ ասոնց համաձայնութեամբ ուրիշ ռամկավար կուսակցութիւններու համագումար մը՝ ընդհանուր պահանջներ, տակտիկ եւ գործունէութեան ձեւեր մշակելու համար:

3) Այժմու հալածանքներու դէմ միջոցներ ձեռք առնելը թողուլ Դաշնակցութեան Կովկասի ձեռնհաս մարմիններուն:

Դ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ընդհանուր ժողովը լսելով Պարսկաստանի կացութեան մասին ներկայացուած զեկուցումը եւ պատգամաւոր ընկերներու հաղորդած լրացուցիչ տեղեկութիւնները,

Ընդունելով որ պարսիկ ժողովուրդին մէջ արդէն կը կազմակերպուի ու կ'ամրանայ սահմանադրական տարրը, պատրաստ իր արեան գնով պաշտպանելու ձեռք բերուած իրաւունքները,

Հաստատելով նաեւ, որ Պարսկաստանի մեր կազմակերպութիւնը, որ Երբ Ընդհանուր ժողովի կողմէն ընդունուած էր իբրեւ յեղափոխական գործօն մարմին, մեծապէս նպաստել է իրանի մանուկ սահմանադրութեան ամրապնդմանը, միշտ առաջապահ շարքերուն մէջ կուռելով յետաշրջականներուն դէմ, ինչպէս սկիզբները՝ Մուհամէտ Ալլիի գահընկէցութենէն ետք, նոյնպէս վերջերս՝ անոր արշաւանքին պահուն:

Գոհունակութեամբ կ'արձանագրէ Երիտասարդ Իրանի հերոսական ճիգերը արտաքին ու ներքին թշնա-

մինչև իրենց հետևողները, եւ մասնաւորապէս մեր ընկերներուն կատարած կարեւոր դերը պատմական այդ պայքարի մէջ. նկատելով միեւնոյն ատեն, որ յետաշրջական տարրերու յաղթանակը կրնայ քաջալեր հանդիսանալ թուրքիոյ յետադէմ տարրերուն եւ նպաստաւոր՝ Ռուսիոյ միապետական ռեժիմին ուժեղացմանը, ԿՈՐՈՇԷ՛:

1) Յանձնարարել Կովկասի եւ Թուրքիոյ դաշնակցական մարմիններուն մարտական եւ զինական ուժերու աւելի մեծ համեմատութեամբ մասնակցիլ Իրանի Ազատագրական գործին:

2) Տալ Կեդրոնական Կոմիտէի իրաւասութիւնները Թեհրանի Կոմիտէին, զօրեղացնելով զայն նոր անդամներով եւ յանձնարարել Պարսկաստանի երկու Կեդր. Կոմիտէներուն՝ փոխադարձ համաձայնութեամբ վարել սահմանադրական ազատութիւններու համար կռիւլ:

3) Շարունակել սերտ յարաբերութիւն պահպանել ռամկավար տարրերու հետ, զորոճակցելով անոնց այն բոլոր պարագաներուն մէջ, երբ անհրաժեշտութիւն կը ներկայանայ պաշտպանելու եւ ամրապնդելու սահմանադրական կարգերը: Աշխատիլ անոնց հետ ա) ապահովել տալու՝ հիմնական օրէնքներով՝ մեր ազգային մշակութային ինքնավարութիւնը եւ պարտադիր տուրք գանձելու իրաւունքը Պարսկահայոց Ազգային ժողովին համար: բ) Ձեռքի տալու «Կանոն տասիւն» սահմանադրական ոգին հակասող բոլոր սահմանափակումները, որոնք հիմնուած են ազգային կամ կրօնական խտրութիւններու վրայ (այսպէս, ոչ-միւսիլմաններուն դէմ դրուած արգելքը պետական բարձր պաշտօններ վարելու եւ զինուորագրութեան մասնակցելու եւլն):

4) Առաջարկել Իրանի սահմանադրական կառավարութեան յարջունիս գրաւել սահմանադրութեան դաւաճանողներուն կալուածները եւ յանձնել զանոնք զիւղական համայնքներուն:

Ե. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ՊՐՈՊԱԳԱՆԶ

Գրաւոր

Ա.— ԴՐՕՇԱԿ

1) Կուսակցութեան պաշտօնական օրգանը՝ Դրօշակ հրատարակել ամիսն անգամ մը, նոյն դիրքով, բայց կրկին ծաւալով: Դրօշակը կ'ունենայ բաժիններ՝ տեսական, յեղափոխական-պատմական, մարտական-գրական, տեղ տալով նաեւ լուրջ ու ամփոփ տեղեկագրերու՝ երկրին տնտեսական եւ ընկերային կացութեան մասին:

2) Բացարձակապէս դադրեցնել Դրօշակի ձրի տարածումը (բաժնեգին ընդունելով տարին 12 համար 5 ֆրանք):

3) Դրօշակը հրատարակել Դաշնակցութեան գործունէութեան վայրերէն դուրս:

Բ.— ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1) Կեդր. Կոմիտէները կանոնադրի 181^ա յօդուածին համաձայն (1907-ի տպ.), իրաւունք ունին թերթ հրատարակելու, պայմանով որ դուրս չելլեն իրենց պրոպագանդի պիւտճէէն:

2) Թերթի մը հրատարակութեան ձեռնարկելէ առաջ, Կեդր. Կոմիտէն կը ստանայ հաւանութիւնը Կեդր. Հաշուեքննիչ մարմինն եւ իր Բիւրոյին՝ ներկայացնելով առաջնոյն իր նիւթական միջոցները, եւ երկրորդին՝ խմբագրական կազմը:

ԱԶԱՏԱՄԱՐՆԸ ՕՐԱԹԵՐԹԸ

1) Ճանչնալ Ազատամարտը թուրքիոյ շրջանի իբր կէս-պաշտօնական թերթը:

2) Արեւմտեան Բիւրոյին թողուլ՝ Ազատամարտի համար կազմել ղեկավար մարմին մը, երեք անդամէ, որոնց մէկը կը ներկայացնէ Բիւրոն, միւսը կը ստանձնէ անոր խմբագրութիւնը, երրորդը՝ վարչութիւնը:

3) Կուսակցութեան ընդհանուր արկղէն դադրեցնել ոեւէ նպաստ Ազատամարտին, թուրքիոյ Ռայոնական ժողովին թողով ստանձնել ատոր հոգը, եթէ պէտք մը տեսնուի:

Գ.— ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհանուր ժողովը նկատելով Որ կուսակցական մեր հրատարակութիւններու սպառումը գոհացուցիչ կերպով կազմակերպուած չլլ՝

լալով՝ անոնք չեն ծառայել իրենց նպատակին ու տարիներ շարունակ կը մնան իբր մեռած դրամագլուխ,

Որ այդ երեւոյթը մէկ կողմէն հետեւանք է անոր, որ հրատարակութիւններու տարածումը ստանձնող անհատները նիւթապէս չեն շահագրգռուած այդ գործով, իսկ միւս կողմէն՝ գրքերու բովանդակութիւնն ու յաճախ ալ լեզուն անմատչելի կը մնան կուսակցութեան լայն խաւերուն,

Որ բանաւոր պրոպագանդը անհրաժեշտ նախապայմանն է գրաւորին յաջողութեանը,

ԿՈՐՈՇԷ՛:

1) Համընթաց ուղղութիւն տալ բանաւոր եւ գրաւոր պրոպագանդին.

2) Փորձել մասնաւոր շահագործման հիմերու վրայ դնել հրատարակութեանց գործը.

3) Յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին ընտրել ձեռնհաս ընկերներէ Պրոպագանդի մարմին մը, որ պարտականութիւն ունենայ. ա) Պատրաստել ընթերցանութեան եւ դասախօսութեան ուղեցոյցներ (ինքնազարգացումով զբաղողներու եւ պրոպագանդիստներու համար), դասաւորելով արդէն եղած բոլոր հայերէն հրատարակութիւնները, ըստ նիւթերու բովանդակութեան, աստիճանական բարդացումով. բ) Կազմել համառօտ բառարան մը օտար բառերու եւ գիտական-մասնագիտական թերմիւններու: գ) Որոշել նոր հրատարակութեանց նիւթերը, ըստ իրենց աստիճանական բարդացման: դ) Հսկել անոնց լեզուն մաքրութեան ու պարզութեանը: ե) Կանոնաւորել հրատարակութեան եւ սպառման գործը:

Ճանօթ.— Պրոպագանդի մարմինը կը հայթայթ դաշնակցական մարմիններու խնդրանքին վրայ եւ անոնց հաշուով՝ դասախօսներու կամ պրոպագանդիստներու համար կարելոր դատուած օտար լեզուով գրքեր:

4) Նոր հրատարակութիւնները հետեւեալ բովանդակութիւնը ունենալու են.

ա) Յուշեր եւ էջեր հայ եւ օտար յեղափոխական կեանքէն:

բ) Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (առանձին դրուագներ, ուսումնասիրութիւններ եւլն):

գ) Ընդլայնում եւ բացատրութիւն Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին եւ սկզբունքներուն:

դ) Ընկերային եւ տնտեսական տեսութիւններ եւ իրենց լուսաբանութիւնը:

ե) Ուսումնասիրութիւններ հայաբնակ շրջաններու տնտեսական եւ քաղաքական վիճակի: Վիճակագրական տեղեկագրեր:

զ) Դիւրամատչելի հրատարակութիւններ գիտական այլեւայլ ճիւղերու վերաբերեալ, նախապատուութիւն

տալով անոնց՝ որ կ'արթնցնեն քննադատական միտքը եւ կը փարատեն արմատացած նախապաշարունակները:

է) Թուրքերէն լեզուով հրատարակութիւններ՝ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան, ծրագրին, ինչպէս նաեւ տնտեսական եւ քաղաքական խնդիրներու մասին:

Բանաւոր

Կուսակցութեան բոլոր շրջանները, ղեկավար մարմիններն ու ընկերները պարտին իրենց ուժերուն եւ ժամանակին որոշ մասը նուիրել բանաւոր պրոպագանդին, կազմակերպելով պրոպագանդի դասընթացներ եւ վարել պրոպագանդի գործը, տեղական պայմաններուն պատշաճ եղանակով մը, առանց դուրս ելլելու որոշուած պիւտճէի սահմաններէն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ ՎԵՐԱՔՆՆՈՒՄԸ

Ընդի. ժողովը մի առ մի քննեց Դիմնական կանոնագրի լրացման եւ բարեփոխման մասին եղած կարելոր առաջարկները,— ասոնց մէկ մասը մնացած նախորդ Ընդհանուր ժողովէն,— ընդունեց եւ քուէարկեց կարգ մը փոփոխութիւններ, որոնք պիտի ներմուծուին Կանոնագրին նոր տպագրութեան մէջ, որ լոյս պիտի տեսնէ ի մօտայ: Աւելորդ չենք համարեր հոս յիշատակել հետեւեալները.

ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՔՆՆԵՉ ՄԱՐՄԻՆԸ

Ժողովը կարելոր դատեց հաստատել Կեդրոնական Հաշուեքննիչ մարմին մը, իր հետեւեալ բանաձեւովը.

«Ընդհանուր ժողովէն կ'ընտրուի Կեդրոնական Հաշուեքննիչ մարմինը. իր իրաւասութիւններն են.

1) Պատրաստել կուսակցութեան ընդհանուր պիւտճէի նախագիծը:

2) Հակակշռի ենթարկել Դաշնակցութեան բոլոր վարչական մարմիններուն (Բիւրօ, Պատասխ. մարմին, Կ. Կոմիտէ եւայլն) հաշիւները եւ ներկայացնել զանոնք Ընդհանուր ժողովին կամ Խորհուրդին:

3) Հսկել, որ կուսակցութեան հասոյթներուն բաշխումը կատարուի ըստ պիւտճէին եւ թոյլ չտալ որ ո՛րեւէ ճիւղին գերադասութիւն տրուի ի վնաս միւսներուն:

4) Հետամուտ ըլլալ, որ Դաշնակցութեան բոլոր մարմինները կուսակցութեան ընդհանուր սնտուկին

Հատուցանեն հասոյթներու որոշուած տոկոսը:

5) Պատրաստել տոմարակալութեան միօրինակ սխտեմ մը, պարտաւորիչ Դաշնակցութեան բոլոր մարմիններուն համար:

6) Պատասխանատուութեան կոչել դրամական ապօրինի գործողութիւններու մէջ ամբաստանուած մարմիններն ու ընկերները, կախակայելով գանոնք մինչեւ դատավարութեան ակարտումը: Եթէ ամբաստանեալը Պատ. մարմին կամ Կեդր. Կոմիտէ է՝ իր Բիւրոյին հաւանութեամբը, եթէ Բիւրօ մըն է ամբաստանեալը՝ Կեդր. Հաշ. մարմինը միաձայն որոշումի մը յանգելէ ետք, միւս Բիւրոյին հաւանութեամբը գումարել կու տայ Հ.Յ.Դ. Խորհուրդը:

7) Կեդր. Հաշ. մարմինը, ի հարկին, լիազօր քննիչ կը դրկէ, տեղին վրայ քննութիւն կատարելու համար:

8) Ամէն ռալոնական ժողով իր շրջանին համար կ'ընտրէ հաշուեքննիչ մարմին մը, որ կ'ենթարկուի Կեդրոնական Հաշուեքննիչին՝ նոյն իրաւասութիւններով իր շրջանի մարմիններուն հանդէպ:

9) Կեդր. Հաշուեքննիչը դաշնակցական մարմիններուն հետ կը յարաբերի Բիւրոններու միջոցով:

ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՍԿԸ

Ժողովը Կեդր. Կոմիտէներուն համար դրամական սակ (Կանոնագիր 1907-ի յօդ. 122) որոշեց 10,000 Ֆրանք (օսմ. ոսկի 435): Այդ գումարին առնուազն 3000 Ֆր. (օսմ. ոսկի 131) պէտք է գոյացած ըլլայ անդամավճարներէ, 2000 Ֆր. (օսմ. ոսկի 87) կազմակերպութեան ջանքերով կուսակցական ձեռնարկներու համար հաւաքուած հասոյթներէ (նուէր, հանգանակութիւն, ներկայացում, վիճակահանութիւն եւայլն), իսկ մնացած 5000 Ֆր. (օսմ. ոսկի 218) դարձեալ կազմակերպութեան ջանքերով ձեռք բերուած գումարներէ, որոնք կը յատկացուին կուսակցութեան նպատակներուն մօտիկ, սկզբունքով համակրելի ձեռնարկներու (դպրոց, գրադարան, եւայլն):

Ծանօթ.— Այս սակի մասին ո՛նէ բացառութիւն խորհուրդը միայն կրնայ ընել, նկատի առնելով շրջանի մը տնտեսական կացութիւնը եւ անոր կուսակցական գործունէութիւնը:

ՅԱՆՈՒՑՏՈՒԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ ԿԵՐԱՌՈՒՄԸ

Անդամավճարներու քանակը պատշաճեցնելու համար արդարութեան գաղափարի մը, ժողովը բաղձալի գտաւ, որ անդամավճարներու տոկոսը (հասոյթին 1—10 %) ճշդելու պարագային՝ ընկերները իրենց առաջնորդ ունենան յառաջտուական սկզբունքը: Օրինակի համար.

10-20 ոսկի տարեկ.	հասոյթ ունեցողը վճր.	1-2 տոկոս
21-40 »	»	» 2-3 »
41-80 »	»	» 3-4 »
81-100 »	»	» 4-5 »
101-120 »	»	» 5-6 »
121-140 »	»	» 6-7 »
141-160 »	»	» 7-8 »
161-180 »	»	» 8-9 »
181-200 »	»	» 9-10 »

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

Ժողովը որոշեց հետեւեալ կարգապահական տրամադրութիւնն աւելցնել հիմնական կանոնագրին մէջ.

Կուսակցութեան կանոնագրին եւ Ընդ. ժողովին ու խորհուրդին որոշումներուն անաստորոշեցը ազդարարութիւն կը ստանան պատկան մարմինէն, եւ եթէ երեք անուան տեսութեան մէջ չուզենան համակրելի անոնց՝ Դաշնակցութեան շարքերէն դուրս կը յայտարարուին: Այդպիսիները եթէ երեսպիտան են՝ անոնց վերընտրութեան կամ պետական պաշտօններու կոչուելու դէմ կը մաքառի կուսակցութիւնը իր բոլոր միջոցներով:

ԱԵԿՈՒՄԻ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Ընդհանուր ժողովը անգամ մը եւս շեշտելով սերտ գործակցութեան հրամայական անհրաժեշտութիւնը դրացի կոմիտէներուն միջեւ, կանոնական սահմանափակումներու ենթակցեց մեկուսի կոմիտէներու գոյութիւնը: Առաջիկայ շրջանին մէջ, իբրեւ այդպիսին, ժողովը որոշեց ճանչնալ հետեւեալ վայրերը, իրենց շրջաններով միասին. Այնթապ, Ատանա, Եգիպտոս եւ Կեսարիա:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

ԵՒ

ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԴԱՏԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՄՈՒՄԸ

Ժողովը նկատելով, որ Հ.Յ.Դ. Խորհուրդին գումարումը տակաւին մօտալուտ չէ, ընտրեց ինը ընկերներէ Դատական Յանձնախումբ մը, լիազօրութիւն տալով անոր, քննել ու վճիռ տալ, յանուն Ընդհանուր ժողովին, բոլոր այն գործերու մասին, զորս կը պարունակէր ժողովին դատական պարութեան⁴: Յանձնախումբն իր աշխատանքներն ակարտելէ ետք, անոր եզրակացութիւններն ու որոշումները մասնաւոր շրջաբերականով մը պիտի հաղորդուին Կ. Կոմիտէներուն:

4.- Թղթածրարը:

ՀԱՇՈՒԱԿԱՆ

ԺԸՆԵՒԻ ՏԱՆ ԳՆՈՒՄԸ

ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ 1907-1911 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ (Ե՞ր եւ Զ՞ Ընդհ. ժողովներու շրջան)

Ընդհանուր ժողովը յանձնարարեց Կեդր. Հաշ. ւեքննիչ մարմինին.

ա) Քննել Ընդհ. ժողովներէ ընտրուած մարմիններու հաշիւները, բ) Պահանջել ու քննել այն մարմիններուն, որոնք թերացած են հաշիւ տալու նոյն շրջաններուն մէջ, եւ ամփոփելով այդ բոլորը Ե՞ր եւ Զ՞ Ընդհ. ժողովներու հաշուեքննիչ յանձնախումբերու կատարած աշխատանքներուն հետ, հաղորդել ի գիտութիւն Կ. Կոմիտէներուն:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՀԱՇՈՒՆԵՐԸ

Ընդհ. ժողովը որոշեց.

1) Նկատել ապօրինի Արեւմտեան Բիւրոյի այն տնօրինութիւնը, որով յաւելուածական գումար մը յատկացուցած էր Ազատամարտ օրաթերթին, դուրս ելլելով Ե. Ընդհ. ժողովին քուէարկած պիւտճէէն:

2) Պահանջել Ազատամարտի վարչութեանն որ մաս առ մաս կուսակցութեան վերադարձնէ յաւելուածական այդ գումարը, հատուցման եղանակին ճշդումը թողլով Կեդր. Հաշուեքննիչ մարմինին:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Առաջիկայ Եօթներորդ Ընդհանուր ժողովը որոշեցաւ գումարել 1913 Յուլիս ամսուն:

Յանձնարարուեցաւ սակայն երկու Բիւրոններուն, որ փոխադարձ հաւանութեամբ առժամապէս յետաձգեն անոր գումարումը, եթէ հրատապ եւ կարեւոր խնդիրներ անհրաժեշտ չդարձնեն զայն նոյն պահուն:

4.- Թղթածրարը:

ԳԼՈՒԽ II

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Բաժինը յատկացուած է Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի 1909-1911 տարիներու գործունէութեան, որուն հիմնական առանցքը կը կազմեն հայերու յարաբերութիւնները:

Ինչպէս ծանօթ է, 1908 թ. Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք Պոլսոյ մէջ հաստատուեցաւ Դաշնակցութեան Պատասխանատու մարմինը՝ հայերու յարաբերութիւնները վարելու եւ կայսրութեան հայկական եւ հայաբնակ նահանգներուն մէջ կազմակերպական կառոյցը վերաշխուժացնելու առաքելութեամբ: Պատ. մարմինն գործունէութիւնը տեսնեց մէկ տարի: 1909 թ. Հինգերորդ Ընդհ. Ժողովի որոշումով զոյգ Բիւրոները պիտի ունենային Թուրքիոյ իրենց հատուածները, Արեւելեանը՝ Կարին իսկ Արեւմտեանը Պոլիս կեդրոններով:

Յայտնի է Արեւելեան Բիւրոյի թիֆլիսեան կեդրոնի կազմալոյժ վիճակը ցարական Ռուսիոյ Դաշնակցութեան դէմ յարուցած հալածանքներու սաստկացումէն ասդին: Գործօն դարձաւ որոշ չափով Կարնոյ հաստատուածը, ուր հաստատուած էին բժ. Յովսէփ Տէր Դաւթեան եւ Ռոստոմ (վերջինս թէւ Արեւմտեան Բիւրոյի անդամ ընտրուած):

Միւս կողմէ Արեւմտեան Բիւրոյի ծանրութեան կեդրոնը փոխադրուեցաւ Պոլիս: Ժընեւը, ուր կը մնային Միք. Վարանդեան եւ, պարագայաբար, միւս անդամներէն մէկ քանին, պիտի ծառայէր առաւելաբար պաշտօնաբերք «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Հայ Դատի ու եւրոպական քարոզչութեան համար:

Այսուհանդերձ, հակառակ Պոլսոյ վիճակուած փափուկ դերին ու անոր վրայ ինկած ծանր պատասխանատուութեան, հոս եւս կը նշմարուի ուժերու պակաս: Կեդրոնական դէմքը Արշակ Վոսմեանն է. միւս անդամները շարժուն են եւ տեղէ տեղ փոխադրուող, անշուշտ յատուկ առաքելութեամբ գործուողուած: Ասոր փոխարէն, Արեւմտեան Բիւրոն լայնօրէն կ'օգտուի Պոլիս ներկայութենէն բազմաթիւ գործիչներու, ոմանք մնայուն կերպով հաստատուած, ուրիշներ պարագայաբար հոն գտնուող: Ասոնց շարքին կարելի է յիշատակել «Ազատամարտ»ի խմբագիր Ռուբէն Զարդարեանը, Մարը, Լիպարիտ Նազարեանը, Նիկոլ Դումանը, բժ. Յովսէփ Տէր Դաւթեանը, Միսն Զաւարեանը, Յարութիւն Գալֆայեանը եւ շատ ուրիշներ, որոնք մայրաքաղաք գտնուած ժամանակ կը հրաւիրուէին մասնակցելու Բիւրոյի պաշտօնակազմին նիստերուն կամ ընդհանուր խորհրդակցութեանց:

* * *

Ներկայացուած թղթածրարին վրայ բացորոշ է Վոսմեանի դրոշմը իբրեւ հեղինակ բերուած փաստաթուղթերու մեծագոյն մասին: Պէտք կը տեսնենք ընդգծել որ Վոսմեանի պատկանող *բոլոր* փաստաթուղթերը, բացի ծայրայեղօրէն դժուար ընթեռնելի ըլլալէն, ունին նոթագրութեան կամ սեւագրութեան բնոյթ, որոնք գեղուցուելու ատեն պիտի ամբողջացուէին հարկ եղած բացատրութիւններով, կամ մաքուրի արտագրութեան պարագային՝ վերջնական տեսքի բերուէին:

- Փաստ. 1543-21 - «Տեղեկագրի ամփոփոյր Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրո (Թ. հաստուած) 1909 Նոյ. - 1911 Օգոստոս»: Վոսմեանի ձեռագրով 30 էջ:
- Փաստ. 87ա-1 - «Յարաբերութիւնները «Իթքիհատ վէ Թերաքք»ի հետ, 1909 Նոյ. - 1911 Օգոստոս»: Վոսմեանի ձեռագրով 40 էջ:
- Փաստ. 78ա-2 - «Յիշատակագիր Հ. Յ. Դաշնակցութեան եւ «Իթքիհատ վէ Թերաքք» կուսակցութիւններու փոխադարձ յարաբերութիւններու մասին, պատրաստուած Զ. Ընդհանուր Ժողովի որոշումով»: Վոսմեանի ձեռագրով 196 էջ:
- Փաստ. 877-35 - «Թիւրք կառավարութենէն վաւերացուած ծրագրի բնագրին ձեռագիրը»: Վոսմեանի գրչով 9 էջ:
- Փաստ. 107-164 - Շրջաբերական թիւ 11 (Կ. Կոմիտէներուն):
- Փաստ. 108-42 - Նամակ Արեւմտեան Բիւրոյէն Արեւելեան Բիւրոյին:
- Փաստ. 108-138 - Խորագիր, հասցէ եւ թուական չկրող մէկ էջոց գրութիւն, յայտնաբար Ռոստոմի ձեռագրով եւ հաւանաբար Կովկասի մարմիններէն մէկուն ուղղուած նամակ:

Փաստ. 1543-21

**Ա. - ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՅՔ
Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ (Թ[ՈՒՐԹԻՈՅ] ՀԱՏՈՒԱԾ)**

1909 Նոյ. - 1911 Օգոստոս

Կազմը. -

Վարանդեան, Յովնան (Ժընեւ), Ռ[ոստոմ], Ակ[նունի] եւ Վահ[ապ] (Պոլիս):

Փոփոխութիւններ՝ տնտեսական եւ ուժերու բաշխման տեսակէտներով - Ակնունին՝ Եւրոպա եւ Ամերիկա 1910 Մարտին, Ռոստոմը՝ Կարին 1910 Օգոստոսին, Յովնան՝ (Թաւրիզ) 1910 Յունիս:

Թ[ուրքիոյ] հատուածը օգտուեցաւ Պոլիս գտնուող ընկերներէն՝ ընկերներ Մալխաս եւ Մելոյեան յաջորդաբար անդամ-քարտուղարութեան պարտականութիւնը: Աւելի ուշ՝ ընկեր Մար: Բիւրոն 1910-ի վերջերը՝ Ասլան, Մար, Վաթան, Լիպ[արիտ] եւ Վահապ: Նիկոլը հոս եղած ատեն միշտ կը հրաւիրուէր: Քանի մը անգամ Գալֆան: Վերջին ամիսներուն մէջ՝ ընկեր Բժիշկ, իբրեւ անդամ Արեւելեանի: Նոյնպէս՝ Զ[աւարեան]՝:

Կուսակցութիւններու հետ

- 1.- «Իթքիհատ եւ Թերաքք» - Տես այս մասին մասնաւոր տեսութիւնը թիւ 2
- 2.- Հայ կուսակցութիւններ. - Համերաշխութեան ժողովին կազմումը, 1909-ի Հոկտ.ին - Ս. Դ. Հնչակեան, Վերակազմեալ Հնչակեան եւ Սահմ[անադիր] Ռամկավար: Վերջիններս կը հեռանան ժողովէն 1909 Դեկտ.ին, պատրուակ բռնելով Շահր[իկեան]ի յօդուածը Սուլթանին դէմ: Միւսները կը շարունակեն մնալ. նիստերու թիւը կը հասնի 25-ի: Որոշումներէն կարեւորներն են՝ ԺԹ-ին նիստերունը, որ առանձին թուուցիկով հրատարակուեցաւ (Ապրիլ 13/28, 1910), եւ «Բաց ու գոցի» խընդրին առթիւ համաձայնութիւններ: Տես մեր շրջաբերականը թիւ 3 (Մարտ 3/15, 1910) եւ թիւ 5 (28 Ապրիլ 1910): Փոքր Հայքի [Հնչակեան] Նահ[անգային] վարչութեան դիմումը մեզ Դեկտ. 15/28) 1909 նամակով մը - Երազիր, կանոնագիր եւ Ընդհ. Ժողովի որոշումները (գաղտնի) խնդրելով: Պատ[ասխանը] Դեկտ. 28, 1909 եւ դրկուած տպագիր հրատարակութիւնները: Զուլուելու տրամադրութիւններն. ետ կենալու «յարգելի» պատճառը՝ հին դրամական հաշիւներու քրքրելու վախը կը ստիպէ «հին»երը մնալ Հնչակեան շարքերուն մէջ: Յունիսի (1910) մէջ սակայն հին Հնչակեան կեդրոնը տապալեցաւ (Հ.մ. Արամեանցի վարչութիւն) եւ անոր տեղ անցնելով Սապահ Գուլեանինը - խզեց յարաբերութիւնները, առանց ոեւէ զեկուցման:

Համերաշխութեան հակառակ գնացին Հնչակեան մարմինները, գաւառական բազմաթիւ բողոքներ՝ Տիւրանակերտ, Սվազ, Ամերիկա՝ յատուկ խստութեամբ: Պատճառ՝ համերաշխութեան շրջանին իրենց ընկերներու 1) թուլնալը, 2) յարիւր աւելի գորաւոր կազմակերպութեան՝ Դաշնակցութեան գերիշխանութեան:

Վերակազմեալները շարունակեցին պահել իրենց բարեկամ[ական] ընթացքը. վերջերս ալ բերանացի դիմումներ կրկնեցին՝ վերսկսելու պաշտ[օնական] յարաբերութիւններն ու գործակցութիւնը:

Ս. Դ. - Շեշտուած թշնամութեամբ մը գործեցին ժամանակ մը, յատկապէս օգտուելով Ազգ. իշխանութեանց շրջանակներու մէջ ծագած թշնամութենէն: Իզմիրի երկու մահերը եւ Վանի իրենց ընկերներէն մէկուն սպանուիլը, բաւական զսպած է զիրենք: Հակադաշ[նական] արշաւին դադրիլը զգալապէս նպաստած է անոնց ձախողանքին:

Ստալը կազմակերպութիւններէն յարաբերութիւն պահպանած ենք Սալոնիկի Բանուորական Դաշնակցութեան հետ, մասնակցած ենք անոնց միթիւնկին (ընկեր Վ. Փափագեան խօսած է հոն) եւ աջակցած ենք անոնց ձերբակալուած ընկերներու արձակմանը: Régie-ի գործադուլի պարագան: Անոնց առաջարկը ողջունելու մեր համաժողովը յատուկ պատուիրակութեամբ:

Հակադաշնակցական պայքարին դէմ պայքարը: Թերթով եւ մանաւանդ ազգային գործունէութեան գետնի վրայ: «Բաց ու գոցի» խնդրը պատրուակ է ծառայել՝ ընկերներու կորովը արթնցնելու եւ համախոր-

1.- Ծածկանունով յիշուած անունները՝ Ակնունի - Մալուսեան խաչատուր: Ռոստոմ - Չօրեան Ստեփան: Յովնան - Դաւթեան Յոնան: Մալխաս - Յովսէփեան Արտաշէս: Մար - Տէր Մարտիրոսեան Միքայէլ: Ասլան - Չարդարեան Ռուբէն: Վաթան - Մելոյեան Ղեւոնդ: Լիպարիտ - Նազարեան Լիպարիտ. ծանօթ նաեւ Լեւոնեան ծածկանունով: Վահապ - Դերձակեան ՕՃճիկ, աւելի ծանօթ Վոսմեան Արշակ անունով: Նիկոլ - Նիկոլ Դումանն է (Տէր Յովհաննիսեան Նիկոլ): Գալֆա - Գալֆայեան Յարութիւն:

2.- Զեռագրին մէջ տեսութիւնը թիւը նշուած չէ: Յարցը կը վերաբերի թիւ 78ա-1 թղթածրարին «Յարաբերութիւնները «Իթքիհատ վէ Թերաքք»ի հետ» (տեսնել էջ 143):

հուրդ եւ համաչափ գործունէութեան մղելու — հարկ է միշտ գործով մը «գբադեցնել», եւ բնական է ազգ[ա- յին], մշակ[ութային], քաղաք[ական] [հարցերով] աւելի շատ հնարաւոր էր, քան գուտ աշխատ[աւորական] խնդրով մը:

Մեր պայքարը անհրաժեշտ էր եւ պետական տեսա- կէտէ՝ կառավարութեան առջեւ մեր համալք պահանջ- լու: Մեր հակառակորդներու թաքուն նպատակներէն մէկն ալ՝ ճիշդ մեզ վարկաբեկելն էր կառավար[ական] շրջանակներուն առջեւ, վտարելով մեզ Ազգ. իշխանու- թենէն:

Միթիւններ եւ անոնց նշանակութիւնը: Պայքարի բուն հանգամանքը. Իզմիրի դէպքերը: Ինքնապաշտ- պանութեան գլխաւոր միջոցը՝ յարձակողականի անց- նիլն է:

Հայկական գաւառներու վիճակը տագնապալից, եւ Դաշ[նակցութեան] եւ «Ազատամարտ»ի խրոխտ դիրքը համակրանք կ'արթնցնէ: Ազատական երեսփոխաննե- րու խմբուիլը մեր շուրջ աստիճանաբար, — 1/5-ի դադա- րեցման խնդիրը եւ մեծ միթիւններու կատարած գոր- ծը: — Դաշ[նակցական] երես[փոխաններու] գործու- նէութիւնը՝ անհատաբար, սակայն մարմիններու գոր- ծակցութեամբ: Դաշնակցական եւ ազատական ընտրե- լիներ յաջողցնելու մասին: Լայն խորհրդակցութիւն Պոլսոյ ընկերներուն, առժամեայ Կեդր. Կոմիտէի եւս՝ ազգային ինքնավարութեան մասնակցելու առթիւ:

Նոր Ազգ. ժողովի դիմագիծը՝ ազատականները գրե- թէ 2/5-ի ուժ, եւ համակրանքը չէզոք տարրերու: Ս. Դ. երու պարտութիւնը՝ նոր վարչութեան (Սթամպուլ- քան) եւ «Համերաշխութեան» զինադուլը: — Քաղաքա- կան ժողովին իբրեւ կուսակցութիւն ազատականներու մուտքը: Ընդհ. ժողովին առջեւ հարցը կը դրուի՝ մեր երես[փոխան] ընկերներու կարգապահութեան. իբրեւ ոչ- կուսակցական անհնարին է այլեւս. կրնայ առաջ գալ անախորժութիւններ:

Աշակուծային գործերը. — Դպրոցական ֆոնտը հա- սած մօտ 250 ոսկի (24.416):

— Սասունի դպրոց. ֆոնտը՝ 20.925 [դրուշ]:

— Կեդր. դպրոցի աշակերտներուն համար մօտ 100 ոսկի:

— Օգնենք Սասունին՝ հասած 60 լիրայի:

Պրոպագանդ (գրաւոր)

Գրաւորը՝ «Ազատամարտ».— Անոր կարեւորու- թիւնը ամէն անկիւնէ. պահպանելու հրամայական պա- հանջը.— Ընդհանուր ժողովի որոշումը 8000 ֆրանք: Անկէ առաջ արդէն ծախք եղած էր Պատ. մարմնի ձեռ- քով՝ 87.102 դրուշ (տես Իննի յանձնաժողով) Ե. Ընդհ. ժողովի, քննիչ յանձնաժողովի տախտակ): Անկէ ետք փոխ տրուած է³, ըսել է 8000 ֆրանք. աւելին՝

.....³: Բայց ատոր փոխարէն պատրաստ ապրանք կայ կազմակերպական սեփականութիւն՝ տպարան: Նոյնպէս (?) կազմ. հասոյթներու միջոց մը:

Թուրքերէն բաժինը Բիւրոյի կարգադրութեամբ կատարուած, իբրեւ պրոպականտի միջոց թուրքերու մէջ. անոր կատարած դերը՝ կառավ. շրջանակներու եւ պաշտօնեաներու վրայ:

Ազատութիւն մատենադարան

Բաժնուած Բիւրոյի արկղէն՝ անկախ ապրելու հնա- րաւորութիւն ստեղծելու համար: Հրատարակուած «Ա- զատութեան մատենադարան» շարքէն 7 կտոր (տես մանրամասնութիւնները Ազատ. մատ. ի հաշուեցոյցին մէջ):

Պրոպականդ (բանաւոր)

Միջոցներու սղութիւնը եւ ընկերներու պակասը:

Պոլսոյ համար՝ պրոպականտի դասընթացք մը ստեղծելու փորձեր: Ընկեր Ա. Դարբինեան եւ ընկեր Ռ. Լեռնեան, Բիւրոյի սուղ միջոցներով. բաւական ջերմ ընդունելութիւն երիտասարդութեան կողմէ:

Նոյն նպատակով ձեռնարկուեցաւ Ակումբը Հիմնե- լու, որ մինչեւ վերջն ալ վայելեց Բիւրոյի օժանդակու- թիւնը. թէ՛ վայրի դիւրութեան եւ թէ՛ փոխադրութեան մասին: Ակումբին կատարած դերը՝ իբրեւ հաւաքատե- ղի:

Իբրեւ շրջիկ պրոպականդիստ՝ Աստիկեան (Խար- բերդ՝ ամբողջ գիծը 17 ամիս), Վառնեան եւ Լեռնեան՝ Իզմիր, Գալֆա՝ Պոլսոյ, Ֆարհատ՝ Պոլկարիա եւ Իզ- միր, Սուրէն՝՝ Տրապիզոն եւայլն: Սուրէն՝ Բաղէչի հա- մար ուզուած, բայց բիւզձէ չեն ցոյց տուած: Գարմէ- նին՝⁶ առաջարկած ենք շրջիկ-պրոպականդիստի եւ կազ- մակերպիչի դեր՝ Ատանայի համար. մերժած է. Ակնու- նի՝ Ամերիկա, Ռոստոմ՝ Կարին:

Դիմումներ ըրած ենք՝ Ս. Յակոբեան, Շահխաթուն- եան, Դարբինեան՝ Եգիպտոս, Իզմիր եւ Ամերիկա՝ իբր խմբագիր-գործիչ. մերժած են:

Ուսուցիչներ եւ տեսուչներ դրկելու փորձը — գրեթէ անյաջող. կազմ[ակերպութեան] մօտ շրջանակի եւ հին ընկերներ միայն յանձնառու գտնուած են:

Ինքնապաշտպանութեան եւ **գ[ինական] գործը.** — Մեր N° 1, պայմանագրական հեռագիր:

Շուկայ ստեղծելու նպատակով՝ մեր կողմէն գնում- ներ կատարուած եւ աժան — 900 ոսկիի ծախք մը, 300 հատ, որուն 250-ը արդէն ծախուած, մարմիններուն եւ ընկերներուն: Փորձ եղած է նաեւ մեծաքանակ բերել

3.- Չեռագրին մէջ բաց ձգուած:
4.- Ֆարհատ — Թիրիաքեան Դայլ (Դրայ):
5.- Սուրէն — Սեբաստացի Սուրբատ (Սրիմեան):
6.- Գարմէն — Սելքոնեան Սկոտիչ, նախկին Տաճատ վրո.:

տալու ծայր եւ կոթ, բայց առայժմ անյաջող: Նպատակ- ներ՝

Մասնաւոր մարմնի մը կազմութեան պէտքը, Բիւրո- յի կից, գոհացում տալու պահանջներուն եւ անակնկալ- ները կանխելու:

— Շամի մարմնին տուած, մեր հրահանգին համա- ձայն, Մինարէթէն՝ 32 կոթ, + 3 ուրիշներ եւս Փարոսէն, ընդամէնը 35 (տես Ատրպատականի Կ.Կ. Հոկտ. 7, 1910):

Մրագրին օրինականացումը

Մեծ դժուարութիւններ: Թարգմանել տուինք ամ- բողջ Մրագիրը, կանոնագիրը (դաւադրականի յապա- ւումովը), Ե. Ընդհ. ժողովի Յայտարարագիրն ու որո- շումները — նախորդը յայտարարած թէ հասկցող չկայ: Լաւագոյն է համառօտութիւն մը տալ, ինչ որ ըրած ենք անունը պահուած թուրքերէնի մէջ ալ:

Ճշգրտու կարօտ Կէտ (1) «Կեդրոնական մարմնի մը» անուանումը: Կառավ[արութեան] օրէնքով պատաս- խանատու կը համարուին կեդրոնի ներկայացուցիչնե- րը: (2) Կնիքի պէտքը թուրքերէն: (3) Ակումբներու դիր- քը կազմակերպութեան մէջ:

Օրինականացած եւ չօրինականացած վայրեր. որոշ կարգադրութեան մը պէտքը այս առթիւ:

Յարաբերութիւններ դաշն. մարմիններու հետ

Ա.— Օսմ. խորհրդարանի հայ երեսփոխաններու խմբակը: Անոնց ներքին անախորժ գործունէութիւնը: Բիւրոյի առաջարկները գրասենեակ մը ունենալու, աշ- խատանոց եւ գրադարանի՝ անտարբեր ընդունելու- թիւն: Խառն ժողովները անկանոն՝ պատրաստելու հա- մար խնդիրները «Իթիհաստ»ի Խառն ժողովին առջեւ: Հասունութիւն եւ աշխատութիւն կը բացակային: Ան- հատական գործունէութիւն խորհրդարանի մէջ՝ կան- խաւոր խորհրդակցութեան պակաս: Պատրաստուած ճառ միայն Վահանինը՝ կրթական խնդրին առթիւ: Քր- ւէարկութեան ատեն՝ իրարու հակասող չորսն ալ: Վնա- սակար մեր վարկին թէ խորհրդարանի մէջ եւ թէ կառա- վարութեան առջեւ: Վարդգէսի ճառը՝ անպատրաստ:

Պատճառներ — երեսփոխ. «ազատագրումը» կու- սակցութենէն շնորհիւ իրենց անձնական հեղինակու- թեան եւ կապերուն «Իթիհաստ»ի վարիչներուն եւ նախ[արարներու] հետ (Վարդգէս, Գարօ, եւայլն): Փոխ- յարաբերութիւնները չճշդել: Անհատական խառնը- ւածք՝ Գեղամի, Գարոյի, Վարդգէսի, Վահանի՞: Ան- պատրաստ եւ⁸ ոչ բոլորն ալ ատակ: Լեզուի անգիտակ: Դրամական խնդիրը՝ Վարդգէս, Գեղամ (?), Վահան (?), Գարօ (?): Ընդհ. համագումարին Սալոնիկ՝ Վ. ի չբրթալը: Ընդհ. ժողովին չպատրաստուելը, «ցրուելը»:

Բիւրոն հաղորդեր է իր նամակներով երեսփ. ընկեր-

ներուն՝ գիտակ պահելու համար զանոնք իրենց շրջանի գործերուն:

Բ.— Կեդր. Կոմիտէներ

Պոլիս — Բիւրոյի ջանքերը շրջանը վերակազմելու մասին. շրջիկ (քարոզիչ) զինուոր (?) Գրիգոր եւայլն:

Նշանակուած Կեդր. Կոմիտէ 1910 Յուլիանի մէջ: Վեց ամսուան գործունէութիւնը 1911 Յունուարի Երջ. ժո- դովը հնարաւոր կը դարձնէ: Մեր շրջանի մէջ ստաց- ւած է 8228+1275=7501. Ծախք եղաւ՝ 3500+1275=4775, որով գուտ հասոյթ միայն 2728 դրուշ՝ 1909—1910 շրջա- նի մէջ:

Փաստրմաճեան-Շահրիկեանի միջադէպը.— Գարոյի տեղեկագիրը 1910: Արեւելեան Բիւրոյի հետ խորհրդակ- ցութեամբ Խորհուրդին թողնել որոշուիլը (նամակ Ա- րեւելեան Բիւրոյի Փետր. 13, 1910):

Շահրիկեանը ամիսներ ետք՝ Կիրասոնէն հեռագրով կը պահանջէ: Բիւրոն Խառն ժողով կը հրաւիրէ՝ Օսմ. Խորհ. երեսփոխ[անները] եւ հին գործիչներ: Խառն ժո- դովը մեծամասնութեամբ որոշեց՝ պատասխանատու- րութեան ենթարկել Գարոն Խորհուրդին առջեւ, բայց մերժեց հրապարակաւ ունէ լուսաբանութիւն ընել (Տես Մայիս 23ի որոշումը Խառն ժողովի. Բիւրոյի ընդհ. Գ. տետրը, երես 220, Յունիս 8/19 1911):

Հիմնական տարբերութիւնը հայեացքներու՝ Կ.Կ.էն անպատճառ հրապարակաւ բացատրութիւն մը եւ Խոր- հուրդի որոշման նկատումներէն միայն մէկը հրատարա- կել որ ի նպաստ Շահրիկեանի էր: Բիւրոյի առարկու- թիւնը՝ որոշումը ամբողջովին միայն կարելի է, յապա- ւելու իրաւունք չունինք: Կ.Կ. չէր համաձայնեցր ատոր, եւ Բիւրոն ալ. իւրաքանչիւրը տարբեր նկատումներով: Առաջինը կը պնդէր միայն «չանթափ» բառը հերքել, իսկ երկրորդը՝ անարդար գտնելէ գատ, վնասակար թէ կազմ[ակերպութեան] եւ թէ նոյնիսկ այդ ընկերներու շահերու տեսակէտէն:

Կ.Կ. շրջ[աբերականին] սխալ եւ կամաւոր խեղա- թիւրում — Շահրիկեանին թողուած չէ որոշելը, այլ ի նպաստ անոր հատուած մը միայն աւելցուած. որոշու- մը Խորհուրդին տրուելն է:

Կ.Կ. հակակարգ[ապահ] գտնուեցաւ՝ 1) Բիւրոյին հետ Խառն ժողովին մասնակցելէ ետք՝ Խառն ժողովի որոշումը չ'ընդունիր եւ դուրս կ'ելլէ. 2) Կեդր. Կոմիտէ- ներուն կը ցրուէ շրջ[աբերական], հակառակ Բիւրոյին դիմած եւ Բիւրոյին թելադրութիւն ստացած ըլլալուն,

7.- Յաջորդաբար՝ Տր Կարապետեան Գեղամ, Փաստրմաճե- ան Գարեգին (Արմէն Գարօ), Սերեցիկեան Յովհաննես (Վարդգէս) եւ Փափագեան Վահան:

8.- Էջի լուսանցքին դժուար, յաճախ նաեւ բոլորովին անըն- քանելի բառեր:

որ չգրադեցնէ շրջանները այդ գործով:

Շահրիկեանը նոյնպէս՝ Մարմինն դիմելէ ետք, չի գոհանար եւ դատարանին դիմում կ'ընէ: Երկու ընկերներն ալ անկարգապահ (Շահր. եւ Գարո)⁹:

– Կ.Կ.ի յաւակնութիւնը մասնակցելու «Իթթիհա-տ»ի հետ մեր յարաբերութիւններուն:

Անոնց նամակը այդ մասին եւ բացատրութիւն չկարեւալ տալը:

Խառն ժողովներ ընդունած ենք մենք միայն տեղական եւ Պոլսոյ շրջանի վերաբերող խնդիրներու համար:

Իզմիրի շրջանը.–

Յաջող գործունէութիւն Մարտ 31-ին¹⁰: Հանգանակութիւնը: Պարտք նիւթեր գնելու համար, վճարումը Բիւրոյի կողմէն, մօտ 8000 ֆրանք: Պատրաստ ապրանք (տես ռազմ. դիւանը):

Հոն կը դրկուին Վահագն, Պատիկեան՝ մաքրելու համար հաշուական գործերը եւ «Իւդ»ի¹¹ խնդիրը վերջացնելու:

Վերակազմութեան ջանքերը – Վահագնի հոն երթալը, Բաց ու գոցի խնդրին տաք ատենը: Մեծ ռեզոլուցիան շարքերու մէջ. վճարական նշանակութիւնը այդ դէպքերուն:

Միւս մասնադիրը Ռամկ[ավար]ներու եւ Վեհունի վար[դապետ]ի գժուճ մեքենայութիւնները, ստորին եւ սրիկայ խաւերը գրգռելու՝ օդի, դանակ, դրամ: Վախճանը՝ կրկնակ սպանութիւն, Գասպարի ձերբակալում եւ դատապարտութիւնը: Յանցաւորը եւ պատասխանատու այդ դէպքին՝ Նալբանդեան եւ Հ. Բաթաբանեան ըստ Իզմիրի կոմ[իտէի] յայտարարութեան:

Բիւրոն հեռագրած էր սպասել Ազգ. ժողովի որոշումին:

Այդ դէպքին բարոյական նշանակութիւնը:

Իզմիր դրկուած Ռ., Լեռնեց դասախօսութիւններու համար եւ ընկ. Ֆարհատ՝ շրջանը վերակազմելու:

Այդ շրջանին կարեւորութիւնը՝ համակիր տարրերը (բուրժուականներ), յեղափոխական երիտասարդութիւն, թէ հոն եւ թէ շրջանը:

Գործիչի պէտքը եւ «Աշխատանք»ի խմբագիրը: Կարող է պահել իր հաշուով:

9.- Յար. Շահրիկեան–Արմէն Գարո «միջադէպ» ծագած էր երբ վերջինս իբրեւ Օսմ. խորհրդարանի անդամ, կառավարութեան ներկայացուցած էր երկրի արեւելեան նահանգներէն անցնող երկաթուղիի մը հաստատման ծրագիր մը, որուն նպատակը բնականաբար հայկական շրջաններու զարգացումն էր: Շահրիկեանի միջամտութիւնը խնդրին մէջ, իբրեւ ֆրանսական դրամատան մը ներկայացուցիչի, ունեցած էր ըստ Արմէն Գարոյի խանգարիչ հանգամանք եւ իր կողմէ որակուած «շանթաժ»: Խնդիրը քաջքունեցաւ տարիներ, մանաւանդ որ կողմերը չէին յարգեր կուսակցական մարմիններու եւ յատկապէս Դաշնակցութեան խորհուրդին այն վճիռը, որմով կը թելադրու-

Ատանա.–

Անբարոյացում եւ լքում՝ ջարդերէն ետք. կազմակերպելու ճիգ չի տեսնուիր: Պատիկեան եւ Վահագն՝ երկուքն ալ գգուշաւոր: Ժողովուրդի մէջ տիրող հակադեցութիւնը պատճառ կը բռնեն: Առարկելի: Ունին համակիրներու խումբ մը միայն:

Շրջանին մէջ՝ Ջէյթուն (Նազարէթ Նորաշխարհեանի եւ Վաղարշակ վրդպ.ի ջանքերը. երիտասարդներու խումբ մը. նշանակելի ոչինչ) – Միւս՝ Գիւտ վրդ. – Հաճըն, Կարս-Բագար, դադրած:

Գարմէնին⁶ առաջարկած ենք – մերժած է:

Այնթապ.–

«Իրաւատու մարմին» մը հաստատումը Այնթապի մէջ, Շրջանային ժողովէ մը, Յուլիս 5, 1910: Մասնակցած են՝ Հողաբլուր, Հովիտ, Լիճ, Մոց, Լեռ, Մուսա-լեռ¹²: Ե. Ընդհ. ժողովի որոշումներու համաձայն՝ տնօրինութիւններ: «Ընդհանուր ուսանող. միութեան մը» հաստատումը կ'որոշուի. հոս դիմումներ՝ ապարդիւն:

Բիւրոյէն կը պահանջուի շրջուն գործիչ մը որ թէ պրոպ[ագանդ] եւ թէ ռազմ. գործիչ, բայց Բիւրոյի հաշուով:

Կը գեղչէ Բիւրոյի 40%ը 20%ի, ինքնահաճ մեկնաբանութեամբ մը Ընդհ. ժողովի ցենզի մասին որոշումին, որ կ'արտօնէր Ռայ. ժողովները կէսի իջեցնելու՝ տագնապի ատեն, դրամական, ընտրական, եւայլն ցենզի սակը:

Աչքի զարնող գործունէութիւն մը երեւան եկած չէ. բայց Քարավանք (Չ[ոք] Մարզ[ուան]), Մարաշ բաւական գոհացուցիչ եղած են վերջերս:

Ուսանող. խմբերը Պէյրութի եւ Դամասկոսի նոյնպէս եռանդուն, արձագանգ տուած են հանգանակ[ութեան] գործին:

Շրջ. ժողով մը պիտի գումարուէր այս Յուլիսին եւ Ընդհ. ժողովի պատրաստական աշխատանք) հրաւիրուած էր, սակայն միայն Մարաշի պատգ[ամաւորը] գնացեր է Այնթապ: Քոլերան արգելք եղած է հաւաքոյթին:

Ամսոն.–

Կանխաւ Մարզուան էր Կ.Կ., անցեալ տարի Սամսոն, խորհելով թէ աւելի ձեռնհաս ընկերներ պիտի կրնային

ետ հարցը փակուած նկատել ու հրապարակային բանավեճի միւս շղարձել:

10.- Ալեքսանդրիւն 1909 թ. Մարտ 31ին Սուլթան Գամիտի հակասահմանադրական յեղաշրջումի փորձին:
11.- «Իւդ» պայթուցիկ միւսն է, ուժանակ: Վահագնը Տաթեւանց է, Պատիկեանը Չաքարի, ծանօթ Կիլիկեան ծածկանունով, Կիլիկիոյ հին գործիչներն:
12.- Գողարուրը Այնթապի շրջանն է. Գովիտը՝ Այնթապ քաղաքը. Լիճը՝ Դամասկոս. Ծոցը՝ Պէյրութ. Լեռը՝ Գալէպ. Մուսալեռը՝ Սուտիոյ շրջանը:

գործերու ղեկավարութիւնն ստանձնել: Յուսախարութիւն, գործի ընկերներ բոլորն ալ: Շարունակ պնդած ռազմ են գործիչ մը, իրենց հաշուով:

Կարեւոր դեր կատարած է ռազմ. փոխ[ադրական] գործերու համար եւ կրնայ աւելին ընել:

Շրջանային ժողով չէ կրցած՝ քոլերայի պատճառով ընկեր Արմ. Բարսեղեան [?]:

1910 Օգ. 13-ին ունեցած եւ Շրջ. ժողով Արեւմտ. Բիւրոյի կողմէն ընկեր Արամ¹³:

Ավագ.–

Շրջ. ժողով ունեցած չէ. կազմը՝ տկար. շրջանը չէ կրցած կառավարել:

Առաջարկ րրած է միանալու Մարզուանի հետ:

Արաբքերգ.–

Ունեցած է շրջանային ժողովներ – 1910 Մարտի մէջ:

Ընդհանրապէս աւելի խօսող, քան գործող. եղած է մտաւորական կեդրոն մը եւ մտաւորական շարքերը մեր մէջ կը համարուին: Ամէնէն շատ բիւրջէն յատկացուցած է պրոպականդիստներու համար, բայց ոչ նշանակելի արդիւնք: Բիւրոյի բաժինը դժուարութեամբ գանձած է, հաշուակցութիւններով:

Բողոքները Մալաթիայէն եւ Արաբկիրէն: Ասոնք որոշած էին իրենք գործածել իրենց դրամը իրենց պրոպագանդին համար:

Անհրաժեշտութիւն կանոնադրին մէջ յաւելում մը՝ կոմիտէները արտօնելու ուղղակի Բիւրոյին ղրկելու կազմակերպութեան] % [սակի] բաժինը եւ անհպելի դրամագլխինը:

Մանօթ վէճը Բանայիի եւ Սեւ Բլուրի հետ¹⁴: Նամակով մը կ'աշխատին [?] բացատրել իրենց գանձատնետուն հոլութիւնը:

Արեւելեան Բիւրո.–

Իր անընդհատ յարաբերութիւնները այդ շրջանի, մանաւանդ Տարօնի եւ Վանի հետ:

Տիգրանակերտ.–

Նփրկերտի¹⁵ խնդիրը բաժանման. Ճէմիլի (Ֆերիտ)¹⁶ պրոպականտը եւ հեռացումը այնտեղէն:

Դաշնակցական Մեղրիկեանի ամբաստանութիւնը եւ անպարտ արձակուիլը:

13.- Մանուկեան Արամն է:
14.- Բանայիին Սամսոնի շրջանն է, իսկ Սեւ Բլուրը՝ Սեբաստիան (Սըվազ):
15.- Նփրկերտը Ֆարդիհի շրջանն է, որ նախապէս ենթակայ էր Տիգրանակերտ–Տիարպեթի (Վիշապաձոր) Կեդր. Կոմիտեան, ապա անջատուած: Ծանօթ էր Փրակերթ ծածկանունով:
16.- Ֆերիտ ճեմիլը, յետագային Տիգրան Ծամիւր, բուն անունով Ամսեւան Տիգրան:
17.- Ֆրանսերէն՝ փոխ-հատուցում:
18.- Խօսքը կը վերաբերի Ս. Չաւարեանին:
19.- Սուրէն իբրեւ ծածկանուն գործածուած Սեբաստացի Սուրատի (Խրիմեան) համար:

Պասթաճեան կարապետը սպանողի ձերբակալութեան մասին «Ազատամարտ»ի մէջ հրատարակութեան մը առթիւ ներքին վէճ հոն: Ճշդումը կը գոցէ խնդիրը:

Փրակերթ (Նփրկերտ).–

Կը բաժնուին Տիգրանակերտէն: Շրջ. ժողով Յուլիս 28-30, 1910: Պատճառներ՝ հեռաւորութիւնը եւ անոնց պահանջին գոհացում չտրուելը պրոպագանտի մասին: Բիւրոյի դիտողութիւնները երկուքին եւս:

Նփրկերտի մտայնութիւնը – 30 հոգի կը բաժնուին հնչակեան կը դառնան պատճառ[աբան]ելով թէ Դաշնակցութիւնը՝ անկրօնութիւն կը քարոզէ:

Մուշ-Տարօն.–

Կուսակալներու փոփոխութիւն եւ պաշտօնեաներու (Թահիր փաշա, Իսմայիլ Հազգը, Մուշի վիլայէթ) զբաղցուցին մեզ անընդհատ:

Գարմէնի խնդիրը: Պաշտօն կը խնդրէր՝ գտնուելէն ետք ոչ մէկ պատասխան. իր անտակտ վարմունքը 1910 Յուլիսին Մուշի հրամանատարի ներկայութեամբ: Compensation-ի¹⁷ գաղափարը: Թահիրի տեղ՝ Գարմէնի հեռացումը: Իր ձգձգումները, Վանի մարմինն ապաստանիլը եւ հաշուական կնճիռներ ու անկանոնութիւններ:

Միմէնը¹⁸ նշանակուած «Ազատամարտ»ի թղթակցի անուան տակ՝ գործիչ 1911 Յունուարէն սկսած – Յուլիս:

Բաղէշի համար Սուրէնը¹⁹ ճամբու ծախքը անգամ չկրցին տալ:

Վան.–

Կուսակալի եւ պաշտ[օնեաներու] փոփոխութիւն. Պէթիր Սամիէն ետք, Նազմ: Յետադէմներու պաշտօնակցութիւն (Թալաթ պէյ 1910):

Մարտ 1909 շուկայի դէպքին առթիւ ամբաստանուած Քաղ. ժողովի անդամներուն արդարացումը:

Ապտիւլ Գատէր ծերակուտականին ետ կոչել տրուելը:

Գարմէնի գտած պաշտպանութիւնը:

Չինուած դաշնակցականներ եւ չեղքէզներ աւագակներ հետապնդող՝ Պէթիր Սամի պէյի հրահանգով:

Դաւիթի մահը. խնդիրը անորոշ եւ չբացատրուած Բիւրոյին:

16.- Ֆերիտ ճեմիլը, յետագային Տիգրան Ծամիւր, բուն անունով Ամսեւան Տիգրան:
17.- Ֆրանսերէն՝ փոխ-հատուցում:
18.- Խօսքը կը վերաբերի Ս. Չաւարեանին:
19.- Սուրէն իբրեւ ծածկանուն գործածուած Սեբաստացի Սուրատի (Խրիմեան) համար:

Կարին.—

Մասնաւոր յարաբերութիւններ չենք մշակած, Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածի գոյութեան պատճառով հոն:

Երզնկայի միջադէպը, որուն լուծման օգնեցինք հաշտարար եղանակով: Սուրէնի հոն երթալը անկէ առաջ հոն մեկնող ընկերներու միջոցով մեր թելադրութիւնները:

Տրապիզոն.—

Սարափի²⁰ խնդիրը. Սուրէնի երթալը հոն:

Պարսկաստան.—

Ատրպատականի Կ. Կ.ի հետ յարաբերութիւնները՝ Վասպ[ուրական]ի եւ սահմանագլխի գործերու շուրջը: Կարաբէկով, Թաղիզադէ:

Կոթերու²¹ խնդիրը:

20.- Սարափը Տրապիզոնի շրջանի Եոնուրա աւանի կուս. ժածկաւանում է:

21.- Գրացաններու:

Handwritten Armenian text, likely a letter or report, written in cursive script.

Handwritten Armenian text, likely a letter or report, written in cursive script.

Վաստեանի ձեռագրէն Գնոյշ մը (փաստաթուղթ 78ա-2)

Փաստ. 78ա-1

Արեւմտեան Բիւրոյի Թ[ուրքիոյ] հատ[ուած]

Բ 1.- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ԻԹԹԻՀԱՏ ՎԷ ԹԵՐԱՔԲԸ»-Ի ՀԵՏ 1909 ՆՈՅ. — 1911 ՕԳՈՍՏՈՍ

Խառն ժողովները — Արեւմտեան Բիւրոյի եւ «Իթթիհատ»ի յարաբերութիւնները 1909-ի վերջին երկու ամիսներու մէջ տարտամ հանգամանք մը ունէին, շնորհիւ նոյնինքն «Իթթիհատ»ի մէջ տիրող անստուգութեան: Այդ վիճակը տեւեց մինչեւ Թալէաթ եւ Ճաւեր բէյերու մուտքը դահլիճին մէջ: Յարաբերութիւնները կանոնաւորուելի սկսան 1910ի սկիզբները, երբ կազմուեցաւ **Խառն մարմինը**, հետեւեալ կերպով — երեք ընկեր Դաշ[նակցութեան] (որոնց երկուքը խորհրդ[արանի] երեսփոխան) եւ 1 կուսակց[ութեան] կողմէ) եւ երեք ընկեր Իթթիհատէն, դարձեալ նոյն համեմատութեամբ:

Այս երեւոյթին գլխաւոր պատճառը պէտք է] համարել՝ ընդհանուր հիմնական պատճառներէն դուրս, որոնց պիտի գանք ստորեւ — հետեւեալները.

- 1) Յաճախակի տագնապները, նախարարական եւ կուսակցական.
- 2) Իթթիհատի կարեւոր ընկերներու յաճախակի բացակայութիւնը քաղաքէն.
- 3) Սիստեմատիկ գործունէութեան մէջ իրենց անվարժութիւնը.
- 4) Մեր պահանջներուն գոհացում տալու մասին իրենց անկարողութեան զգացումը**:

Կազմը — երեսփ. Գարօ եւ Վարդգէս, կուսակց[ութեան]՝ Վրամեան — [Իթթիհատի կողմէ] Միտհաթ եւ Հապիպ բէյերը եւ կուսակց.՝ Հաջի, Նազմ, երբեմն Քեամիլ: — կուսակց[ութեան] կողմէ՝ մէկ երկու անգամ մասնակցած է նաեւ Շահրիկեան:

Հայկական — Խորհրդակցութեանց նիւթ կազմող խնդիրները անլուծելի մնացին՝

- 1) Հողավէճը իր բոլոր պարագաներով.
 - 2) աւատականներու աստիճանաբար տկարացումը եւ ընդհանուր օրէնքներու հպատակեցումը.
 - 3) ապահովութեան խնդիրը, իր բոլոր պարագաներով,
 - 4) սահմանադրական ներկայաց[չութեան] սկզբունքի կիրառումը պաշտօնէութեան մէջ:
- Լուծուած խնդիրներու մէջ՝ առաջին տեղը կը բռնէ 1) կրթական ինքնավարութեան շուրջը յարուցուած խնդիրներու առթիւ տեղի ունեցած համաձայնութիւնը, որ իր ամբողջին մէջ կրնայ գոհացուցիչ նկատուել: (Օտարահպատակ հայ ուսուցիչներուն թոյլտուութիւն

Խառն ժողովները փոխնիփոխ գումարուեցան Դաշ[նակցութեան] կամ «Իթթիհատ»ի պաշտօնատուները եւ մերթ երեսփ. ընկերներու բնակարաններու մէջ: Մեր ժողովները, հակառակ մեր բոլոր ջանքերուն, պարբերական կանոնաւորութիւն մը չունեցան: Երբեմն ամիսներով ընդհատուեցան: Այսպէս անցան գրեթէ՝ 1910ի Մարտ, Ապրիլ, Մայիս եւ Յունիս ամիսները: Ընդամէնը կանոնաւոր նիստեր ունեցած ենք հազիւ 18* մէկուկէս տարուան ընթացքին մէջ:

* Մասնաւոր տեսակցութիւնները չենք հաշուած հոս: Կանոնաւոր նիստերէ դուրս, թէ երեսփոխան ընկերներ եւ թէ կուսակց. ներկայացուցիչները ունեցած են տեսակցութիւններ նախարար Իթթիհատականներու կամ կուսակց. պատասխանատու) ներկայացուցիչներու հետ:

** Երկու կարգի կը բաժնուին խնդիրները. ա) ընդհանուր պետական, բ) Անատոլուի վերաբերող (քիւրտերու եւ սահմանագլխի), գ) բուն հայկական, դ) Իթթիհատի մասին՝ կազմակերպական ձեւի եւ ծրագրի մասին:

Ընդհանուր պետական — Դահլիճի կազմին մասին դիտողութիւնները, ներքին եւ արտաքին քաղաքականութեան սխալները. բարեկարգումներու պէտքը (ընկերային եւ տնտեսական՝ բանուորական օրէնք, աշար, աղնամ), երկաթուղիներու կառուցման անհրաժեշտութիւնը. զինուորագրութիւնը, բանուորական օրինագիծը, աւատականութեան ջախջախման պէտքը:

Անատոլուի վերաբերող — Քիւրտ աշիրէթներու հաստատման (նստակեաց ընելու) խնդիր. քիւրտերը շահելու եւ սահմանադրական) դարձնելու համար հիմնական միջոցներ:

Իթթիհատի կողմ — Գաւառներէ եկած դիտողութիւնները հաղորդուած՝ կազմի մասին. համասեւ մարդիկ, ծրագիր որոշ սահման[ադրական] սկզբունքներու հռչակում:

եղաւ, իր ժամանակին, մեր դիմումներուն վրայ):

2) Կարգ մը կուսակալներու եւ այլ պաշտօնեաներու պաշտօնանկութիւն կամ անուանումը: Այսպէս՝ Վանի, Բաղէշի, Կարնոյ, Սըվազի, Խարբերդի եւ Ատանայի կուսակալութեան անուանեցան հետզհետէ Պէքիր Սամի, Իսմայիլ Հազգը, Ճելալ, Մեհմէտ էմին, Ճեմալ, Մուամմէտ պէյերը, եւայլն:

Մերակուտական անուանեցան Զարեհ Տիրպէր, պետական խորհուրդի անդամ՝ Ս. Գայաթեան եւն, եւն:

Պաշտօնանկ եղածներուն մէջ՝ Բաղէշի կուսակալ Թահիր փաշա, Դ. զօրաբ[անակի] հրամանատար Իբրահիմ փաշա, եւ կարգ մը միւլթեսարիֆներ (Մուշ) ու գայմազամներ (Արճէշ, Ոստան):

Սալոնիկի համաձայնութիւնը

Աւելի քան մէկ տարուան ընթացքին մէջ շարունակուող եւ կրկնուող բողոքներու, տեղի ունեցած համաձայնութիւններու անհետեւանք մնալը, եւ միւս կողմէն ներքին գաւառներու կացութեան աստիճանաբար սպառնալից հանգամանք մը ստանալը հարկադրեց Բիւրոն, ուղղակի դիմում մը ընելու Սալոնիկի Կեդր. մարմին: Ընկերներ Շահրիկեան եւ Վուամեան Բիւրոյի պաշտօնաթղթով 1910 Մարտ 20ին Սալոնիկ երթալով՝ Իթթիհատի կեդրոնի անդամներուն հետ երկար խորհրդակցութիւններ ունեցան՝ գլխաւորաբար հողավէճին, ապահովութեան, կրթական խնդիրներու եւ դաշ[նակցական] ընկերներու դէմ տեղ-տեղ ծայր տուած հալածանքներու առթիւ, որոնք սխտեմաթիկ հանգամանք մը ստացած էին:

Ընդունելութիւնը շատ սիրալիւր եղաւ: Կեդրոնի անդամները ամէն կերպով ջանացին հաւաստել եւ համոզել Բիւրոյի պատուիրակները, թէ հայերու եւ Դաշնակցութեան հանդէպ «Իթթիհատ»ի քաղաքականութիւնը փոխուած չէ, թէ ընդհակառակը երթալով աւելի խորունկ համոզում կը կազմեն թէ հայ ժողովուրդը Սահմանադրութեան միակ զօրավիգ եւ հաւատարիմ նեցուկն է Անատոլի մէջ: Հաւաստեցին թէ իրենք ձուլման քաղաքականութիւն չհետապնդելէ զատ, իրենց համար հետեւելու օրինակ մը առնելու վրայ են աւստրիական պետական կազմը, որ փոքր ազգութիւններու շահերն ապահովելով հանդերձ՝ կը պահպանէ պետութեան ամբողջութիւնը: Բաւական ախորժելի եւ միտիթարական անակնկալ մը եղաւ մեր պատուիրակներուն համար՝ տեսնել Ֆրանսայէն նոր ստացուած բազմաքանակ գրքեր, բոլորն ալ ընկերային գիտութեանց վերաբերող, որոնք բերել տուած էին Իթթիհատի կեդր. գրադարանին համար, յատկապէս գործիչներու գործածութեան յատկացուած:

Սալոնիկի խորհրդակցութիւններու արդիւնքը՝ ցոր-

չափ խնդիրը տեսականին մէջ կը մնայ, գոհացուցիչ էր: Հաջի բէյ իր ձեռքով յայտարարութիւն մը յանձնելէ զատ ազգային հարցի մասին Իթթի[հատ]ի տեսութիւններուն, գրի առաւ նաեւ համաձայնութեան կէտերը, զոր կը կցենք այս տեղեկագրին (Տես թիւ 1 հայերէն թարգմանութիւն)ը թուրքերէն բնագրին հետ):

Այդ համաձայնութեան կէտերը պիտի ենթարկուէին Պոլսի Խառն մարմին, գործնական ձեւի մը վերածելու համար:

Եւ արդարեւ, մեր պատուիրակներու վերադարձէն ետք տեղի ունեցած Խառն ժողովին մէջ, Ապրիլ ամսուն սկիզբը, երկարօրէն ծեծուելով համաձայնութեան այդ կէտերը, հետեւեալ գործնական կէտերն ընդունուեցան՝

- ա) Հողային վէճին վարչական եղանակով լուծումը (ատոր հետ նաեւ Չարասնճագինը)։
- բ) Ապահովութեան խնդիրը։
- գ) Դատական բարենորոգումներ։
- դ) Քաղաքական վերատեսուչներ։
- ե) Պաշտօնեաներու փոփոխութիւններ (Տես մանրամասնութիւնները թիւ 2)։

Կրթական գործի վրայ հարկ չեղաւ երկար կանգ առնել, իրենց կողմէն սկզբունքով ընդունուած ըլլալով յարիլ այն եզրակացութիւններուն, որոնց պիտի յանգէր յոյն երեսփոխաններու հետ արդէն իսկ բանակցութիւններ վարող Իթթիհատական յանձնախումբը:

Ապրիլ 8/19ին այս կէտերու թուրքերէն թարգմանութիւնը իբրեւ յիշատակագիր յանձնուեցաւ Թալէադ պէյին (Տես Բիւրոյի թղթակցութիւններու պատճէնը, երես 90):

Խառն ժողովին մէջ Իթթիհատական ընկերները յայտարարած էին թէ իրենք Սալոնիկի Կեդրոնէն հրահանգ ստացած էին արդէն, — Սալոնիկի մէջ տեղի ունեցած Համաձայնութիւնը հիմ բռնելով, գործադիր իշխանութեան քով դիմումներ ընել՝ Պոլսի Խառն մարմնի որոշումներն իրագործել տալու: Իթթիհատական ներկայացուցչին պիտի ընկերանար մեր երեսփոխան ընկերներէն մէկնումէկը՝ նախարարներու հետ այդ առթիւ տեղի ունենալիք բանակցութիւններու ընթացքին:

Այս Համաձայնութիւնը եւ անոր հետեւող գործնական որոշումներն ալ մնացին անհետեւանք: Այդ միջոցին էր որ ծագեցաւ ներքին հերձուածը Սատրգ պէյի առաջնորդութեամբ, որ ամբողջովին գրաւեց Իթթիհատական ղեկավարներու ժամանակը: Այդ հերձուածի մէջն էր Խառն ժողովի Իթթիհատական անդամներէն՝ Հապիպ պէյը (Պոլսի երեսփոխան): Քիչ յետոյ վրայ հասաւ Սուլթանին ճամբորդութիւնը Մակեդոնիա, որու միջոցին Պոլսէն բացակայեցան թէ եպարքոսն ու նախարարներ եւ թէ Իթթիհատական պարագլուխները:

Քիչ ետք՝ Մայիս 23ին տեղի կ'ունենար երեսփոխանական ժողովին փակումը, որ կու գար անկախութիւն

մը տալու Դահլիճին՝ իր գործառնութիւններուն մէջ: Եւ սակայն դահլիճը արդէն կը խուսափէր տակաւ ձակակողմ Իթթիհատականներու ազդեցութենէն. վերջիններս կը խոստովանէին ներքին] գործ[ոց] նախարար Խալիլ պէյին թէ՛ ապիկարութիւնը եւ թէ անոր հետ իրենց ունեցած անհամաձայն գտնուելը կարգ մը խնդիրներու մէջ:

Այս միջոցին էր որ յայտնեցին իրենք թէ մտադիր են ձաւեր եւ Նաջի պէյերը Անատոլու դրկել, ճամբորդութիւն մը ընելու, գլխաւոր նպատակ ունենալով ժողովրդային համակրանքը վերադարձնելու Իթթիհատին հանդէպ: Եւ թէ այդ ուղեւորութենէն կ'ուզէին օգտուել Անատոլուի վերաբերող առկա խնդիրները, յատկապէս հողավէճը տեղին վրայ ուսումնասիրել տալու, եւ անկարող պաշտօնեաները ձգել տալու:

Յունիսի երկրորդ շաբթուն տեսակցութիւն մը տեղի ունեցաւ ձաւեր եւ Նաջի պէյերուն հետ. ներկայ էին ներկայացուցչէն զատ, Վահան եւ Վարդգէս:

Այս անգամ երկու Իթթիհատականները, ինչպէս անոնցմէ առաջ Թալէադ պէյ բացարձակապէս յայտարարեցին թէ ոեւէ ակնկալութիւն ունենալու չէ արդի դահլիճէն, թէ իրենք ալ նպատակ [ունին] եւ առիթի կը սպասեն տապալելու զայն, իրապէս երիտասարդ թուրք նախարարի մը գործի գլուխ անցնելու համար: Մանաւանդ անոր համար որ պէյսգի հարազատ Իթթիհատական դահլիճ մը իշխանութեան վրայ գտնուի՝ երկրորդ նստաշրջանի ընտրական պայքարներու ատեն:

Այս առթիւ յայտնեցին երկուքն ալ՝ թէ Իթթի[հատ] մտադրած է Դաշ[նակցութեան] հետ կատարելու ընտրական պայքարը, թէ հիմակուրէն պատրաստելու ենք մենք մեր թեկնածուները, որոնց թիւը այս անգամ կ'ընդունին իրենք որ աւելի շատ ըլլալու է քան անցեալ անգամ. բոլոր հայաշատ կեդրոններուն կը ճանչնային մէկ-մէկ պատգամաւոր ընտրել տալ:

Գալով հայաբնակ նահանգներու ներքին ցաւերուն՝ հողավէճին վարչական եղանակով լուծումին համաձայն ըլլալով՝ պիտի ջանային, եթէ հնար է, այս տարի իսկ, ձեռնարկել տալ ատոր Վանի եւ Բաղէշի կուսակալութիւններուն մէջ: Մենք երկարօրէն բացատրեցինք մեր հայեացքները եւ յատկապէս իրենց ուշադրութիւնը հրաւիրեցինք հազարերորդ անգամ ըլլալով՝ քիւրտ հարստահարուած գիւղացիութեան դատը ձեռք առնելու անհրաժեշտութեան վրայ, քաղաքական, ընտրական եւ կուսակցական տեսակէտներէ: Կատարելապէս մեզի համակարծիք ըլլալին յայտարարեցին:

Յունիս 25ին մեկնեցան անոնք, իսկ նոյն միջոցին Պոլսի Իթթի[հատի] ներկայացուցիչ Նազմ պէյ եկաւ մեզի յայտնելու թէ ինքը հրահանգ ստացած է Սալոնիկէն գործակցելու եւ աջակցելու մեր ներկայացուցչին, կառավարութեան քով ըլլալիք մեր դիմումի առթիւ — քանի որ խառն ժողովները ինքնին դադարած էին՝ թէ երես-

փոխան եւ թէ կուսակցական ընկերներու բացակայութեան պատճառով քաղաքէն:

Անկէ ետք անձնական յարաբերութիւններ ունեցանք Նազմ պէյին հետ եւ փորձեցինք օգտուել անոր առաջարկէն պաշտօնական դիմում մը ընելու համար Խալիլ բէյին թէ՛ ընդհանուր խնդիրներու եւ թէ յատկապէս Խոյթի դէպքերու առթիւ:

Նազմ պէյի հետ ընկերներ վահան եւ Վուամեան մօտ երեք ժամուան տեսակցութիւն մը ունեցան Յուլիս 2ին ներքին գործերու նախարարութեան հետ: Վերջինս հերքեց թէ Խոյթի զօրքերուն հրահանգ դրկուած ըլլայ բիրտ միջոցներու չձեռնարկել կամ գնդակ չարձակել մարդասպանները ձերբակալելու համար, ուրացաւ որ խոստում տրուած ըլլայ 4 վաշտ զօրք եւ 8 վաշտ պահեստի հոն ճամբելու. նոր զօրք դրկելու անկարելիութիւնը շեշտեց, անհնարին գտաւ յանցապարտ եւ ոճրագործ աւատականները վարչական եղանակով աքսորել տալ՝ Սահմանադրութեան հակառակ գտնելով այն: Իր բոլոր խոստումը եղաւ՝ գիւղական պահակներու դրուութիւնը հաստատել տալ, եւ դատարա[նա]կան վերակազմութիւնը փութացնել հոն: Երկուքն ալ անգործադրելի մինչեւ այսօր:

Այս տեսակցութիւնը որքան մեր պատուիրակներուն, նոյնքան եւ Նազմ պէյի վրայ թողուց շատ անյոյս տպաւորութիւն մը: Երկրորդական խոստումներէն՝ ներում Սեպուհին եւ Մարգպետին, չիրագործուեցաւ նոյնպէս: Այս փորձէն ետք՝ աւելորդ համարեցինք նոր դիմում մը եւս կրկնել, սպասելով հեղինակաւոր Իթթիհատականներու վերադարձին: Դժբախտաբար, անոնք բոլորն ալ այլեւայլ՝ կուսակցական թէ անձնական գործերով, ինչպէս վերը ըսինք, Պոլսէն հեռու կը գտնուէին եւ կը գտնուին այս պահուս ալ:

Յարաբերութիւնները խզուած չեն, կը շարունակւին Նազմ պէյի հետ, բայց կը կրեն պղատոնական բնաւորութիւն — արդիւնք անստոյգ կացութեան մը, որուն վախճանը կախուած է «Իթթիհատ»ի առաջիկայ համաժողովին՝ ձախակողմեաններու յաղթանակով կամ պարտութեամբը:

Այս ընդհանուր եւ արագ տեսութենէն ետք՝ «Իթթիհատ»ի հետ մեր ունեցած յարաբերութիւններու մասին, աւելորդ չենք համարել մատնանշել այն երեւոյթները, որոնք մեր կարծիքով պատճառները պէտք է համարել ոչ-գոհացուցիչ այն արդիւնքին, որ իրաւունք ունինք սպասելու 1909ի համաձայնութեան կնքումէն ետք¹:

1.- Առաջին եւ գլխաւոր պատճառը պէտք է որոնել «Իթթիհատ»ի կազմին մէջ, ուր հետզհետէ տիրապետող դիրք ստացան հողատէրեր, աւատականներ, հին ութի-

1.- Ակնարկութիւն Գ.Յ.Դ. Պոլսոյ Պատասխանատու մարմնին եւ Իթթիհատի Սեւաքիկի Կեդրոնին միջեւ 1909 թ. Օգոստոսին կնքուած համաձայնագրին: Տես «Նիւթեր», ու 2. հատոր, էջ 266:

մեան զեղծարար պաշտօնեաներ, մոլլաներ, եւ այլն: Տիրապետող եւ պետական կուսակցութեան տէրը դառնալով՝ անոնք աստիճանաբար ետ մղեցին «Իթթիհատ»-ի թէեւ տարտամ ռամկավար սկզբունքները, եւ կրօնական մոլեռանդութիւնը արծարծելով՝ թուրք ազգայնամոլական ձգտումները խորացուցին եւ զօրացուցին անոր մէջ: Այդ տարրը՝ ի սկզբան սմբած ազատարար բանակի առթած սարսափին տակ՝ հետզհետէ գլուխ բարձրացուց, օգտուելով՝ «Իթթիհատ»-ի վարչներու դէմ յարուցուած դժգոհութիւններէն: Յարդ կազմուած դահլիճներու, մանաւանդ վերջինին երեքուն եւ վարանոտ քաղաքականութիւնը, իթթիհատական վարչներէն ումանց նպաստաւորութիւնը իրենց պետական դիրքէն, անոնց ամբարտաւան վերաբերումը թէ՛ ներսը՝ իրենց մէջ եւ թէ՛ դուրսը՝ մայրաքաղաքի մտաւորական շարքերու մէջ ծագած դժգոհութիւններուն, եւ վերջապէս դժգոհ սպաներու խլրտումները բարձր զինուորականութեան մէջ՝ թեւ եւ թիկունք եղան այդ աջակողմեան հոսանքին՝ ինքզինքն արտայայտելու: Սատրգ պէյի հերձուածը, որ ապրիլ ամսու մէջ յանկարծ պռուժկաց՝ պատրաստուած էր ամիսներ առաջ: Այդ խլրտումներու հետեւանքն էր որ Թալէադ պէյ քաշուեցաւ, որուն հետեւեցաւ Հալաճեան փետրուարին եւ ապա ձաւեր պէյը — երեք «երիտասարդ»ները Հազգը փաշայի դահլիճին: Խորհրդարանին մէջ եւս՝ կուսակցապետ Խալիլին յաջորդեց Սէյիտ պէյ, աջակողմեան մը, մուսթ սադրանքներու մարդ, որով կառավարական շրջանակներու մէջ «Իթթիհատ»-ի ձախակողմեան թեւի ազդեցութիւնը զգալապէս ինկաւ: Խալիլին գործունէութիւնը իր ներքին գործերու նախարար շուտով եկաւ փարատել այն պատրանքները որ կը սնուցանէր ձախը՝ կարծելով թէ Թալէադի փոխարինումը Խալիլով՝ անձի եւ ո՛չ ուղղութեան փոփոխութիւն պիտի ըլլար: Շատ չանցած իր գոյնը ցոյց տուաւ նաեւ դատական նախարար Նէճմէտտին մոլլա, որ թէեւ կասկածելի տարր՝ «երիտասարդ»ներուն հետեւ եղած էր միշտ՝ պատերազմի նախարար Սատրգ պէյի հանդէպ շատ երկդիմի դիրք մը բռնած ըլլալով՝ չէր վայելեր այլեւս նախկին վստահութիւնը: Իբրեւ բուն իթթիհատական մնաց Խալիլի պէյ (էվթաֆի նախարար), որ անպայման կը հրաժարէր՝ եթէ վախը չունենային՝ թէ վերջին դիրքն ալ ձեռքէ կը հանէին: Հազգը փաշայի դահլիճը, որ ի սկզբան ամէնէն աւելի «Իթթիհատական»ը եղած էր բոլոր դահլիճներուն — այսօր կարելի է ըսել թէ ապա-իթթիհատութեամբ վերջացուց:

2.- Պետութեան ներքին խառնակ վիճակը՝ ապստամբական շարժումները (Ալբանիա, Արաբիա, Հաւրան, մակեդոնական չեկոսներ[?] եւ այլն) թէ պիտուէի վրայ ծանրացան ահագնապէս եւ թէ կառավարութեան ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուցին իրենց վրայ:

3.- Քիւրտ ժողովուրդը եւ աւատապետները չզրգուե-

լու եւ ապստամբութեան չմղելու մտահոգութիւննին, որը մասնաւոր հոգածութեամբ մը կը մշակեն Հայաստանի եւ Քիւրտիստանի քիւրտութեանը հողատէր երեսփոխանները, քրտական խնդրի մը խրտուկլակը դնելով կացութեան անտեղեակ դահլիճին եւ իթթիհատին աւելեւ:

4.- Հայ ժողովուրդի տնտեսապէս եւ քաղաքականապէս զօրացման հեռապատկերը Հայաստանի մէջ՝ թուրք ազգայնամոլներուն երկիւղ կ'ազդէ: Խօսակցութեան մը մէջ Տոքթոր Նազմ պէյ յայտնեց թէ քիւրտ աւատապետները շատ յօժար են եղեր բռնատիրուած հողերը ետ դարձնելու, բայց անոնք կը վախնան եղեր թէ հայերը հոծ բնակչութիւն մը կրնան կազմել եւ ապագային մէջ զիրենք նեղել: Դժուար թէ այս միտքը չբաժնէր ինքը Նազմ պէյ, որուն կը վերագրուի Մակեդոնիան իսլամ գաղթականներով բնակեցնելու ծրագիրը: Առանց քաշուելու խոստովանած են մեզի, քանի քանի անգամներ, թէ մակեդոնական խնդիրը լուծելու միակ բանաւոր միջոցը որ կը գտնեն իրենք — իսլամ ուսուցիչներ կազմել՝ մակեդոնական գանգուածին մէջ:

5.- Դիտելի է որ Դ. զօրաբանակը իր աւանդուածներով կը շարունակէ պաշտպան հանդիսանալ քիւրտ աշիրէթապետներուն եւ թշնամի՝ հայ տարրին զօրացման: Ասկէ առաջ՝ Թահիր փաշայի հետեւած սիրայիր վարմունքը աւատապետներուն հանդէպ, ինչպէս նաեւ կարնոյ եւ Վանի կուսակալներուն (ձեյալ եւ Պեթրի Սամի պէյեր) բռնած կտրուկ ընթացքին հետեւանքով Պարսկաստան ապստանած կարգ մը աւատապետներու եւ աւագապետներու հանդէպ ցոյց տուած վրդովիչ կերպով մեղմ ընթացքը՝ իթթիհատը կը վերագրէր Դ. զօրաբանակի հրամանատար Իպրահիմ փաշային, որ վերջ ի վերջոյ պաշտօնանկ ըրին (յուլիս 1910):

Այս տարի ալ նոյն զօրաբանակի քննիչ Օսման փաշային հրամաններուն պէտք է վերագրել Խոյթ բարձրացող զօրագունդին թոյլ վարմունքը՝ Խոյթի ահուկի ոճիրը կատարողներուն հանդէպ: Օսման փաշային արտասանած խօսքերը Խասգիւղի մէջ կը յատկանշէին ոչ միայն Օսման փաշային, այլ Դ. զօրաբանակի սպայակոյտին մտայնութիւնը:

6.- Թէ «Իթթիհատ»-ի եւ թէ կառավարական շրջանակներու կողմէ ցոյց տրուած յողողող եւ վարանոտ վերաբերումը մեզ շահագրգռող հրատապ հարցերուն (օրինակ՝ հողայինը, աւատապետութեան ջնջումը, ապահովութեան համար կտրուկ միջոցներ եւ այլն) պէտք է բացատրել նաեւ այդ խնդիրներու մասին անոնց բացարձակ տգիտութեամբը: Մէջ հողավէճին պարագաները ուսումնասիրած են, ո՛չ քիւրտ ժողովուրդի ներքին ուժերը գիտեն եւ ոչ ալ կը ճանչնան այն ափ մը աւագապետները, որոնք կը շարունակեն վայելել կառավարութեան ներողամտութիւնը:

Պէտք է աւելցնել ասոր նաեւ ձեռնհաս մարդոց ահ-

ոելի պակասը, եւ սիստեմատիկ եւ երկարաշունչ աշխատութեան անպատրաստ եւ անվարժ ըլլալնին:

7.- Դաշնակցութեան ընդգրկած խաղաղասիրական եւ խստիւ օրինապահ տակտիկը անպայման մեծ դեր կատարած է՝ իթթիհատը եւ կառավարութիւնը մտահոգ չընելու համար հայկական նահանգներու մասին, հետեւաբար եւ անտարբեր մնալու համար մեր կենսական պահանջներուն հանդէպ:

Պէտք է չմոռնալ որ ռուսական հալածանքները կողկասի մէջ, Նովոչերքասքի դատը՝ ապահովութիւն կը ներշնչեն «Իթթիհատ»-ին թէ Դաշնակցութիւնը խաղաղութեամբ է գոհանալ թուրքիոյ արդի պայմաններով եւ լռել*:

8.- Տակաւին լրիւ չուսումնասիրուած, բայց կարելի պատճառ մը նկատելու ենք նաեւ ռուս կառավարութեան դիւանագիտական հակազդեցութիւնը թուրք կառավարութեան քով, «երես չտալ» հայերուն եւ մասնաւորապէս Դաշնակցութեան: Ներքին նահանգներուն մէջ ռուս հիւպատոսները իրենց պարտք համարած են միշտ «զգուշացնել» թուրքերը հայերուն ներկայացուցած «վտանգին» հանդէպ:

Ոչ նուազ հաւանականութեամբ կարելի է նոյն խորհրդածութիւնը ներքին համարել գերման դիւանագիտութեան համար, որուն Փոքր Ասիոյ արկածախնդրութեան առջեւ արգելք մը կրնայ համարուիլ հայ ժողովուրդը, իր կազմակերպական ուժերով:

9.- Հողավէճին առթիւ «Իթթիհատ»-ի ցոյց տուած չկամութեան վերջին բայց ոչ-անկարելի մէկ պատճառն ալ կարելի է համարել Բիւրոյի եւ երեսփոխան ընկերներէն երկուքին՝ Գարոյի եւ Վարդգէսի միջեւ եղած տարաձայնութիւնը: Մինչ Բիւրոն իր ներկայացուցչի բերնով intransigent² էր իր պահանջներուն մէջ, յիշած երեսփոխան ընկերները հակամէտ էին գիջանելուն: Այդ պարագան չէր կրնար խուսափիլ «Իթթիհատ»-ի ներկայացուցիչներու ուշադրութեանէն եւ չազդել անոնց տրամադրութեան վրայ:

«Իթթիհատ»ը գաւառներուն մէջ

Միակերպ քաղաքականութիւն մը ունեցած չէ: Մինչ բաղադատաբար սիրայիր եղած են կարին, Իզմիր եւ կարգ մը երկրորդական քաղաքներու մէջ, անհնարին եղած է Վան, Բաղէշ, մասամբ Տիգրանակերտ, նայելով տեղական կազմի մէջ գտնուողներուն անհատական եւ ընկերային շահերուն (Տիգրանակերտ-միայն քաղաքը, միւս կողմերը թոյլ):

Տեղ տեղ պատահած է որ նոյնիսկ իթթիհատական ներկայացուցիչները (Սալոնիկէն կարգուած) չափա-

* Պատճառ մը նաեւ ներքին պայքարի հետեւանքով Դաշնակցութեան կարծեցեալ տկարացումը:

զանց կասկածելի քաղաքականութեան մը հետեւած են — այսպէս Խարբերդ (ժանտարմի հրամանատար Ղանի պէյ) եւ Ատանա (Շագուպ Ճեմիլ պէյ):

Երկու տեղ՝ Հայէպ եւ Այնթապ 1910-ի Հոկտեմբերի մէջ քիչ մը տարօրինակ առաջարկներ եղած են տեղական «Իթթիհատ»-ի կողմէն — ձուլուիլ իրենց հետ, հողորդելով իրենց՝ դաշնակցական անդամներու ցուցակը, հասոյթները եւ այլն:

Իրաւունք չենք համարել բացասական այս երեւոյթները վերագրել կեդրոնի հրահանգներուն, քանի որ ընդհանուր բնոյթ մը չունին: Ընդհակառակը՝ «Իթթիհատ»ը ինչպէս հողորդեցին պաշտօնապէս, 1910 փետրուարի մէջ շրջաբերական մը ղրկեց իր մարմիններուն համագործակցելու Դաշնակցութեան, եւ այդ մասին անոնց անկեղծութեան վրայ կասկածելու պատճառ մը չենք տեսներ:

Խոստացան ոչ միայն պատուիրակներ ղրկել համերաշխութիւնը զօրացնելու — մինչեւ իսկ կարնոյ մէջ հաստատել Խառն մարմին մը՝ արեւելեան գաւառներու գործերով զբաղող —, բայց չկրցան գլուխ հանել: Այդ մարմին իբրեւ անդամ, Նաջի պէյ երկար չմնաց հոն: Իբրեւ շրջիկ պատուիրակ ղրկեցին Մուստաֆա Նեճիպ եւ Հազգը պէյերը գործակցութիւն քարոզելու: անոնք ալ երկար չկրցան մնալ: Առաջինի մասին (Մ. Նեճիպի) գովեստով խօսեցան իրեն հետ յարաբերող մեր ընկերները: Ուշագրաւ են անոր դիտողութիւնները ներքին կացութեան մասին՝ համաձայն մեր տեսակէտներուն:

Անկարող եղան մարդ հասցնելու ամէն տեղ՝ բայց ուր որ դժգոհութեան ձայն մը ելաւ՝ դարմանեցին անմիջապէս: Օրինակ կրնանք յիշել էտիպ մոլլա անուն անձի մը պարագան: Այդ մոլլան որ իբրեւ ներկայացուցիչ ղրկուած էր Վան՝ բան գործ ըրած էր շերիաթի քարոզութիւններով զբաղելու հոն: Մեր բողոքին վրայ (հոկտ. 1910) «Իթթիհատ»ը ետ կանչեց զինք:

Միայ մը չենք ըրած ըլլար ըսելով՝ թէ Սալոնիկի կեդրոնի եւ մասնաճիւղերու յարաբերութիւնները ենթադրուածին չափ սերտ եւ կուռ չեն: Եւ ասով պէտք է բացատրել Սալոնիկի կեդրոնին կողմէ յատուկ ներկայացուցիչներու անուանումը բոլոր վիլայէթներուն մէջ: Բայց ատոնց մեծագոյն մասը անփորձ, գաղափարական պատրաստութենէ զուրկ եւ հեղինակութիւն չվայելող անձեր են դժբախտաբար: «Իթթիհատ»-ի ներքին տկարութեան գլխաւոր պատճառներէն մէկն է, առաջինը ըլլալով, յատակ ծրագրի մը չգոյութիւնը:

Մեր յարաբերութիւնը կուսակցութեան հետ

Թէ՛ օրինականացումէն առաջ եւ թէ՛ ետք՝ յարաբերած ենք ն[երքին] գ[ործերու] նախարարին հետ, շատ

2.- Ֆրանսերէն անգիօղո:

Ատանայի եղեռնը

Այդ ամենը չափազանց սուղի արժեքան հայ ժողովրդին: Բռնակալութեան այս հոգեվարժի ցնցումներուն հանդէպ ցուցադրուած դիմադրութեանը քաւել նորէն վիճակուեցաւ հայ ժողովուրդին: Ատանայի եղեռնագործութեան վրայ կանգ չենք ուզեր առնել, բայց զոր մոռնալու չէին ու չեն թուրք առաջադէմ տարրերը՝ ահաւոր փորձութիւն մըն էր որ երբեք կանգնած ըլլայ հայ քաղաքական գործիչներու առաջ[?]: Եւ սակայն Դաշնակցութիւնը կրցաւ բարձր մնալ վայրկեանի տպաւորութիւններէն եւ թելադրութիւններէն, տեղի չտուաւ հայ ժողովուրդի մէջ ծայր տուած եւ բորբոքած արդար ցասումին եւ կսկիծին, դէմ գնաց իր ժողովուրդի տրամադրութիւններուն, գոհնելով մինչեւ իսկ իր կազմակերպական շահերը — եւ ձեռք տուաւ «Իթթիհատ»ին աւելի հանդիսաւոր խոստում մը կնքելու, մոռցնել տալու համար եղեռնով լի անցեալը ու ներկան, պատրաստելու համար հաշտութեան ապագայ մը՝ գալոց սերունդներուն: Մեր խօսքը՝ Սայրոնիկի համաձայնութեան (Օգոստոս) 20, 1909) մասին է, զոր կը բերենք հոս ամբողջութեամբ⁴:

Այդ Համաձայնութիւնը, որ Ատանայի եղեռնէն հազիւ չորս ամիս ետք կը կնքուէր՝ որքան ալ որ տարտամ իր ընդհանուր յանձնառութիւններով, գործակցութեան գետինը անգամ մը եւս կը ճշդէր երկու կուսակցութիւններուն միջեւ, ամրապնդելով կապերը, որոնք թուցած էին այն օրէն, երբ «Իթթիհատ»ը յաջողած էր ձեռք առնել կառավարութեան ղեկը:

Կ'արժէ պահ մը կանգ առնել այդ Համաձայնութեան կէտերուն վրայ, որովհետեւ ցաւ է ըսել, որ անոր գոյութիւնն իսկ մոռացութեան տրուեցաւ (մեռած տառ մնաց) յատկապէս «Իթթիհատ»ի գաւառական ճիւղերուն կողմէ:

Որքան ալ տարտամ այդ Համաձայնութիւնը, մէկ բանի մէջ — այն որ «Իթթիհատ վէ թերագգը»ն հանդիսաւորապէս կը ստանձնէր Դաշնակցութեան հետ համերաշխ գործակցիլ երկու կարգի նկատումներով:

Առաջին՝ ապահովելու հետեւեալ յանձնառութիւններու կատարումը. ա) Սահմանադրութիւնը կիրարկելը՝ հանրային զարգացումը անսասանօրէն ամրապնդելը՝ յետաշրջական շարժումներու հաւանականութեան դէմ միջոցներ ձեռք առնել. դ) հակահայկական նախապաշարումները քննադատել ու ցրել. ե) նահանգային իրաւանց ընդարձակման հետամտիլ:

Երկրորդ՝ որ ամէնէն կարեւորն է եւ իրապէս բուն շարժառիթն է այդ Համաձայնութեան կնքումին, ամփոփուած է Համաձայնութեան 5րդ կէտին մէջ:—

Քաղաքականութեան եւ քաղաքակրթութեան կրթական տեսակէտներէ յետամնաց արդի վիճակը թուրքիոյ՝ չի կրնար նպաստաւոր ըլլալ հակամարտ կուսակցութիւններու պայքարին:

Մարտ 31-ը կը խնայուէր այս երկրին եւ անոր հետ Ատանայի աղէտները եթէ «Իթթիհատ»ը տեսակ մը գիտնովցած իր յաջողութիւններէն՝ մենատէրը դառնալ չնկրտէր կառավարական մեքենային եւ շարգիլէր քաղաքականապէս տարբեր գաղափարներու ծաւալումը: Այդ համոզումն է որ դրդած է Սայրոնիկի Համաձայնութեան ստորագրողները յատուկ յօդուածով մը շեշտելու կրկին ու կրկին «ձեռք ձեռքի տուած աշխատելու» անհրաժեշտութեանը երկու կուսակցութիւններուն միջեւ՝ նոր եւ աղէտալի ցնցումներէ փրկելու համար թուրքիան:

Օգոստ. 20-ի Համաձայնութեան կարեւորութիւնը Կիլիկիոյ համար

Կը համարձակինք կարծել որ թուրքիոյ քաղաքական վարկի համար այնքան տագնապալի պահու մը, որպիսին էր Ատանայի եղեռնը, այդ Համաձայնութեան կնքումը ամէնէն աւելի տառապած ու տակաւին արիւնլուայ հայ ժողովուրդին քաղաքական գործօն կուսակցութեան կողմէն՝ քաղաքականապէս անշնչան օգնութիւն եւ ծառայութիւն ըլլալէ գատ՝ ընդհակառակը թանկագին աջակցութիւն մըն էր սահմանադրական թուրքիոյ կառավարութեան:

Այդ Համաձայնութիւնը կարեւորութիւն մը կ'ունենար անով որ հեռու մասնաւոր փոխարինութիւններու հանգամանք մը կրելէ՝ տողորուած էր լոկ ընդհանուր պետական շահերու մտահոգութեամբ:

Աւելորդ կը համարենք ծանրանալ մատնանշելու համար Դաշնակցութեան բոլոր մարմիններու ցարդ ցոյց տուած ուղղամիտ վերաբերումը այդ Համաձայնութեան ոգիին եւ տառին, նոյնիսկ այն գաւառներու մէջ, ուր Իթթիհատական տեղական մասնաճիւղը անցեր է տեղին հարստահարիչներուն եւ հայատեացիներուն ձեռքը: Աւելին կ'ըսենք: Դաշնակցութեան ղեկավար մարմինները մէկէ աւելի անգամներ փութացին հաղորդել «Իթթիհատ»ի կեդրոնին կամ մասնաճիւղերուն իրենց ձեռք բերած բոլոր այն կարգի լուրերը եւ տեղեկութիւնները, որոնց հարկ էր իրագրել ընել թուրք քաղաքական շրջանակները՝ պետական ընդհանուր շահերու տեսակէտէն: Կրնայինք մանրամասնել այս կէտը, եթէ անյարմար չնկատէինք խորհրդապահական տեսակէտէ (այդպիսի դէպքերը, Մակու, ռուսական ինտրիկները, Պարսկաստանի շարժման մեր մասնակցութիւնը):

Այս բոլորէն ետք՝ գանք ճշդելու թէ ինչպէս գործադրուեցաւ Սայրոնիկի այդ Համաձայնութիւնը վերջին երկու տարիներուն մէջ:

4.- Արձանագրութեան մէջ նշուած բայց մտքերուած չէ խնդրոյ առարկայ համաձայնութիւնը: Այս մասին տեսնել թիւ 1 ծանօթագրութիւնը, էջ 145:

Կառն մարմինը

Օգոստոսի Համաձայնութիւնը կը պարտադրէր երկու կողմն ալ «միացած ուժերով», «միասիրտ հաստատակամութեամբ» եւ «ձեռք ձեռքի տուած» աշխատելու եւ պայքարելու[ու]:

Այդ յանձնառութիւնները մէկ պայմանով կարելի էր կատարել — եթէ երկու կողմի ներկայացուցիչներէ կազմուած խառն մարմիններ համերաշխ համաձայնութիւն մը գագային տուեալ պարագաներու մէջ երկու կողմերու բռնելիք ընթացքը ճշդելու: Գործակցութեան այդ կերպը ընդունուած էր տակաւին Փարիզի Համաձայնութեան մէջ: Կը մնար նոյնը կիրարկել այս անգամ եւս, աւելի կանոնադրութեամբ: Համաձայնութեան ստորագրումէն վեց ամիս ետք՝ հազիւ 1910 սկիզբը հնարաւոր եղաւ կազմել այդ մարմինը, Պոլսոյ մէջ, այն ենթադրութեամբ որ նման մարմիններ հետզհետէ պիտի կազմուէին նաեւ գաւառներու մէջ, տեղական գործերու ձեռնհասութեամբ:

Կառն մարմինը շատ անկանոն գործեց. հազիւ 14 գումարում ունեցաւ այդ երկու տարիներու ընթացքին մէջ, — ոչ բոլորը լիագումար, շնորհիւ այն պարագային, որ Իթթիհատական անդամները հետամուտ չեղան անոր կանոնադրման՝ պատճառներով, զորս մեզի չի վերաբերիր որակել հոս: Աւելցնենք նաեւ թէ մօտ չորս ամիս՝ 1910 մարտ, ապրիլ, մայիս եւ յունիս ամիսներու մէջ հնարաւոր չեղաւ նիստ գումարել, հակառակ խառն մարմինն դաշնակցական անդամներու կրկնակի պահանջներուն:

Այդ ժողովները մեծ մասով բարեկամական խօսակցութեան բնոյթ կրեցին, քան որոշումներու յանգելու նպատակով ի մի եկած գործի մարդոց խորհրդակցութեան մը: Կարեւոր որոշումները եւ «Իթթիհատ»ի անունով եղած խոստումներն ո'չ մէկը չիրագործուեցաւ: Անիրաւ չլլալու համար յիշատակենք որ գործադրուեցան վարչական երկրորդական գործեր՝ պաշտօնեաներու փոփոխութիւն, պաշտօնանկում կամ անւանում հայաբնակ նահանգներուն մէջ: Այսքան միայն, եւ ան ալ ո'չ բոլորը:

Գործակցութեան պակաս ընդհանուր պետական խնդիրներու շուրջը — ամէնէն աչքառու կէտն է այդ յարաբերութիւններուն մէջ: Ոչ խառն մարմինին առջեւ, ո'չ ալ դաշնակցական երեսփոխաններու խմբակցութեան առջեւ դրուեցան պետութեան ընդհանուր քաղաքականութեան վերաբերող հարցերը (արտաքին թէ ներքին): Ո'չ օրէնսգէտներու, ո'չ նախարարական փոփոխութիւններու կամ դահլիճի կազմութեան, ո'չ արտաքին քաղաքականութեան տագնապներու, ո'չ հայ երեսփոխաններու ընտրութեան մէջ — ո'չ մէկ անգամ դիմում եղաւ Դաշնակցութեան ձեռնհաս մարմիններու կարծիքն ալ հարցնելու: «Իթթիհատ»ի մեր ընկերներէն

եւ Դաշնակցութենէն վրիպեցաւ եւ այն կարեւոր պարագան՝ թէ «Սահմանադրութեան կիրառումը», «հանրային զարգացման ամրապնդումը», «յետաշրջականներու դէմ պայքարը» եւ «ձեռք ձեռքի տուած աշխատանքը», որ կը հարկադրէր Օգոստոսի Համաձայնութիւնը՝ այնպիսի ծանրածանր պատասխանատուութիւններ էին՝ որոնց անհնար էր հաւատարիմ մնալ առանց համագործակցութեան մը՝ գործակցելու Իթթիհատական թուրքիոյ ներքին եւ արտաքին քաղաքականութեան, օրինաբար, քաղաքական եւ մտաւորական չափով մը: Եւ վերջապէս, եթէ Օգոստոսի Համաձայնութիւնն իսկ տեղի ունեցած չլլար, իրաւունք ունենալ կը կարծենք պնդելու թէ Դաշնակցութեան տնտեսական ընկերային ծրագիրը, անոր գերագանցապէս ընդհանուր պետական հանգամանք կրող պահանջները՝ արտայայտուած իր պլատֆորմին մէջ, անոր երկարամեայ փորձառութիւնը եւ տրամադրելի մտաւոր ուժերը, անոր թափած արիւնը Փոքր Ասիոյ ժողովուրդներու ազատագրութեան համար՝ առանց կրօնի ու ցեղի խտրութեան, ըլլայ Կովկաս թէ Պարսկաստան, եւ վերջապէս անոր անվերապահ յարումը նոր թուրքիոյ վերածնութեան գործին, կը կրկնենք, պէտք էր բաւելին, կը կարծենք, բարոյապէս հարկադրելու համար «Իթթիհատ»ը, որ օգտուէր անոր խորհուրդներէն, փրկելու համար երկիր մը, որ հայրենիքը չէր միայն թուրք ցեղին*:

Ոչ իսկ ընտրական արդարութիւն հայ ժողովուրդին

Օգոստոս 20-ի Համաձայնութեան մէջ դաշնակցական պատուիրակներ ոչ իսկ բառ մը սպորդեցուցած էին այն անժխտելի ու տարրական փոխարինութեան մասին, որ հայ ժողովուրդը իրաւունք ունէր ակնկալելու նոր ռեժիմին: Բռնապետական ռեժիմը երկարատեւ, անընդհատ, բացառիկ ու մասնաւոր օրէնքներով ու կարգադրութիւններով ֆիզիքապէս եւ տնտեսապէս բնաջինջ ընել ջանացեր էր օսմանցի հայը: Նոր ռեժիմը պարտաւոր էր դարմանել այդ ահաւոր չարիքը, հնարաւորութեան սահմանին մէջ, նոյնպէս բացառիկ միջոցներով: Հարիւր հազարներով կոտորուածներուն եւ սպանուածներուն յարութիւն կարելի չէր տալ, միլիոնաւոր ոսկիներու կողոպուտը եւ թալանը անդարձ գացած էր: Ատոնց մասին չէր խօսքը: Երբ ժողովուրդ մը որոշած էր խեղդել իր սրտին մէջ ու աւուրած մոռնալ ատելութեան եւ փոխվրէժի ամուլ եւ աղիտաբեր գագացումները, նոր թուրքիոյ վերածնութեան մէջ իր ապագան ստեղծելու անսասան հաւատքով, — գործնականը

* (Հոս դնել եւ ընդհ. քաղաքականութեան սխալները՝ աւատականութեան եւ լիւրերներու [?] գորացումը, տնտեսական խնդիրներ, երկաթուղիներու խնդիրներ եւ այլն):

եւ կարելի՞ն միայն կրնար պահանջել, եւ այդպէս ալ ըրաւ. եւ ո՞վ կրնայ ժխտել թէ քաղաքական չափաւորութեան աւելի մեծ ապացոյց մը կրնար կամ կրցեր է երբեք տալ ոեւէ ազգ, որ անցած ըլլար արիւնի ու չարչարանքի այն ծովէն որ բաժին ինկաւ հայուն:

Դաշնակցութիւնը Օգոստոս 20-ի համաձայնութեան մէջ չզրաւ այդ խնդիրները: — Նոր ռեժիմը եւ «Իթթիհ-հատ»ը նախատելու համազօր պիտի ըլլար իբր պայման առաջարկել բան մը, որ անուանարկիչ պայմանն էր ոեւէ համաձայնութեան — որովհետեւ բարոյական արդարութեան պահանջն էր այդ, նոր ռեժիմի մը raison d'être-երէն⁶ ապահովաբար առաջինը: «Իթթիհատ»ը որ հաշտեցումի եւ խաղաղեցման անուանով հրապարակ կ'իջնէր նոր Թուրքիան ստեղծելու, պէտք էր որ անգիտանար այդ հրամայական պայմանը:

Կ'ենթադրուէր թէ Խառն մարմինն առաջին գործը պիտի ըլլար՝ հին չարիքները աստիճանաբար դարմանել եւ միանգամայն ապահովել հայ ժողովուրդի ազատ զարգացումը, իր ազգային մշակոյթի բոլոր շրջանակներուն մէջ, եւ զուգընթաց՝ պետութեան ընդհանուր եւ միւս ազգերու նոյնքան համազօր շահերուն:

Այդպէս չեղաւ դժբախտաբար: Խօսինք օրինակներով:

1 **Հողային վէճը:** — Բռնի կամ օրինական կեղծիքներով հայ ժողովուրդի յափշտակուած հողերուն իրենց հարազատ տէրերուն ետ տրուելը սկզբունքով ոչ մէկ օսմանցի կրցած է ժխտել ցարդ: Տնտեսապէս քայքայուած ժողովուրդին տրուելիք գոհացումը ուրիշ բան մը չէր կրնար ըլլալ թէ ոչ իր ապրուստի աղբիւրը վերադարձնել իրեն: Ըսենք անմիջապէս թէ խոստումները չեն որ պակսեցան: Քեամիլի փաշայի վարչապետութեան օրով որոշուեցաւ քննիչ յանձնաժողովի մը առաջուժը՝ ձեռնհաս ու անաչառ պաշտօնեաներու խումբ մը պիտի պտտէր հայաբնակ նահանգները տեղին վրայ քննելու եւ վարչական եղանակով զրկուած հայը իր սեփականութեան մէջ հաստատելու համար: «Իթթիհատ»եան երեսփոխանները մերժեցին այդ գործնական եւ իմաստուն ձեռնարկը, որ եթէ ընդունուէր, մինչեւ այսօր երեք տարուան ընթացքին մէջ, թերեւս վերջնականապէս գոցած ու սպիացուցած ըլլար վէրք մը, որ երթալով ախտաւոր բնոյթ մը կը ստանայ եւ կը սպառնայ ծանր բարդութիւններով:

Երկրորդ փորձ մը եղաւ Հիլմի փաշայի վարչութեան ատեն, 1909 (1327) Օգոստոս 27 որոշումը պետական խորհուրդին, վաւերացուած կայս(երական) իրատէսով, որ իրաւունք կու տար իտարէ մէծլիսներուն՝ ճշդել սեփականութեան իրաւունքը կալուածաժողովներու հնութեամբ եւ տուրքերու ընկալագրով, եւ յանձնել օրինական տէրերուն, հակառակորդ կողմին վերապահելով դատարան դիմելու իրաւունքը: Որքան ալ թերի՝ այս որոշումը նորէն կիսամիջոց մըն էր, որ տեղ տեղ օգնեց խղճամիտ

կուսակալներուն՝ կարգ մը վէճեր տնօրինելու:

Սակայն պետական խորհուրդի նոր ձախորդ որոշումը 1910-ի գարնան եկաւ նախորդը կասեցնելու, իտարէ մէծլիսներու ձեռնհասութիւնը մէկ տարուան մէջ միայն տեղի ունեցող վէճերու սահմանափակելով զայն: Նոր խառնակութիւն, նոր զրկանքներու եւ նոր բռնութիւններու տեղի տուաւ այդ խնդիրը: Շատ բռնատէրեր վերստին տէր եղան արդէն յանձնած հողերուն: Հայերուն կ'առաջարկուէր դատարան դիմել: Դատարաններու անձեռնհասութիւնը եւ անոնց թերի կազմը հանրածանօթ իրողութիւն մըն է, զոր կը խոստովանին բոլոր բարձրաստիճան պաշտօնեաները: Ո՞ր հայ գիւղացին, եթէ դրամ իսկ ունենար, քաջութիւնը պիտի ունենար տարիներով հարստահարիչներու ազդեցութեան տակ գտնուող, անոնց ազգական կամ կաշառուած դատարաններու առջեւ իր դատը վարելու: Եւ ո՞ր հայը կամ քիւրտ հողագործը պիտի երթար վկայելու ի նպաստ զրկուածի մը, երբ հարստահարիչներու զնդակը իրականութիւն մըն է, իսկ կատարուած վկայութեան պաշտպանութիւնը՝ կեղծիք մը: Խոյթի ոճիրները կ'ազատեն մեզ՝ նոր ապացոյցներով ծանրաբեռնել այս գրութիւնը:

Այդ որոշումը համազօր էր ըսելու հայուն եւ քիւրտին — նոր ռեժիմը որոշած է ձեր հողերը չտալ ձեզի, եւ պաշտպանել բռնատիրութեան իրաւունքը: Խոստովանութիւն վարչական ոյժով կատարուած:

1 **Էլվաճիքը** սիստեմատիկաբար հետամուտ եղաւ անարդարութեան մը, որ կրնար դարմանուիլ նոյն կառավարութեան վարչական միջամտութեամբ միայն: Եւ խորունկ ցաւով հարկադրուած ենք արձանագրել հոս, թէ այդ կարճամիտ եւ իր հետեւանքներով աղէտայլի որոշումը տեղի ունեցաւ ամէնէն իթթիհատական կարծուած դահլիճի մը օրով՝ երբ պաշտօնի վրայ կը գտնուէին Թալէադ եւ Ճաւեր պէյերը: Թալէադ պէյ արդարացնել փորձեց միշտ, առարկելով թէ հայ նահանգներուն չէր վերաբերել այդ որոշումը, բայց ետ չառնուեցաւ ան եւ տակաւին մինչեւ այսօր կը մնայ ի զօրու: Եւ բան մը որ կու գայ զօրացնելու այս առթիւ ստեղծուած անվստահութիւնը՝ այն պարագան է որ նոյնիսկ դատական վճռով ճանչցուած իրաւունքները գործադիր իշխանութիւնը զլացաւ յարգել: Բազմաթիւ փաստերէն յիշենք՝ Վանի Վարազայ վանքի Ալոկանը[?] գիւղի, Կարնոյ Սանասարեան վարժարանի ծանօթ արտերուն, Արճէշի Մեծոփայ վանքի արտերուն, Իզմիր՝ Արմաշի հողերուն եւ բազմաթիւ նման դէպքեր:

II **Ապահովութիւնը հայաբնակ նահանգներուն մէջ:**— Հողային վէճին հանդէպ այս եղեռնական ընթացքը չէր կրնար չանդարդառնալ երկրին ապահովութեան

5.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստը:

վրայ: Ապացուցանելու պէտք չկայ այլեւս թէ վէճը երկու ցեղերու մէջ չէ՝ հայու եւ քիւրտի, այլ մէկ կողմէն՝ քիւրտ աւատապետներու եւ վերջին երեսուն տարիներու միջոցին երեւան եկած չարագործներու, եւ միւս կողմէն՝ անպաշտպան հայ գիւղացիներուն:

Հայուն հողը հայուն վերադարձնելով՝ քիւրտ գիւղացին չէ որ զրկանքի պիտի ենթարկուէր, այլ քիւրտ բռնատէրը, որ իրրեւ միւրիբաժ բերած նստեցուցած է քիւրտ հողագործը, շահագործելով զայն չարաչար կերպով:

Երբ ազատութեան, եղբայրութեան, հաւասարութեան եւ արդարութեան անուանով խօսող կառավարութիւնը չուզեց տարրական արդարութիւնը իրագործել հայուն նկատմամբ, շատ բնական էր քիւրտ բռնատէրը մնաց իր համոզման մէջ թէ անուանները փոխուած էին, բայց ոչ իրերը: Կառավարութիւնը հարստահարողներու կողմն էր — այս էր տխուր, բայց մերկ իրականութիւնը: Ու ազատութեան առաջին օրերու մէջ զսպուած քիւրտ հարստահարիչը՝ աստիճանաբար վերադարձաւ իր այն բարձրուն, որ չափազանց ծանօթ են արդէն:

Բայց միւս կողմէն հայ գիւղացին չէր կրնար այդքան դիւրաւ հրաժարիլ իր անկապտելի իրաւունքէն. եւ յամառութեամբ մը պիտի հետապնդէր յափշտակիչը:

Հետեւանքը եղաւ ոճիրներու շարք մը, որոնց մէջ առաջնութեան իրաւունքը կը մնայ Նէմրունի սպանութիւններուն (Վանի վիլայէթ), բայց զոր եկաւ գերազանցելու՝ Խոյթի Թաղավանքի ահաբեկի ոճիրը (ուրիշ հոգի, մէկ ընտանիք, կանխամտածութեամբ խողխողած, նոյն օրը, երկու կէտի վրայ):

Անապահովութեան սաստկանալուն նպաստեց նաեւ կառավարութեան ներողամիտ դիրքը չարագործներուն հանդէպ: Ազատութեան հռչակումէն մինչեւ այսօր (1908 Յուլիս — 1911 Յուլիս) երեք տարուան ընթացքին մէջ պատահած ոճիրներուն հեղինակներէն եւ ո՛չ մէկը օրէնքի տրամադրած պատիժը կրեց, հայաբնակ նահանգներու մէջ հայերու վրայ կատարած յանցանքներու համար:

Ո՛չ Ալճեվազի, ո՛չ Նեմրունի, ո՛չ Խոյթի, յիշելով միայն իմբական ոճիրները, ո՛չ մէկուն իրական հեղինակները ձերբակալուեցան եւ պատժուեցան:

Կառավարութեան թոյլատու այս ընթացքը բնականաբար վերստին առաջ բերաւ տգէտ խաւերու մէջ հին ռեժիմին յատուկ այն յանցապարտ դրութիւնը, թէ հայուն կեանքն, ինչքը եւ պատիւը կրնար անպատիժ բռնաբարոյի, իշխանութեան լուծելայն հաւանութեան տակ:

Աւելորդ կը համարենք մանրամասն ցուցակը ներկայացնել հոս վերջին երեք տարիներու ոճիրներուն, բռնաբարոյներուն, ահաբեկումներուն, խոշտանգումներուն եւ այլն: Պատրիարքարանը, խորհրդարանի հայ երեսփոխանները քանի մը անգամներ ներկայացուցած են յիշատակագրեր այդ ուղղութեամբ: Դաշնակցութեան կողմէ եւս ամիսներ առաջ Իթթիհատի Սալո-

նիկի կեղորոնին եւս գրուած է: Բաւ համարենք յիշել որ շատ չափաւոր հաշուով մը՝ հետեւեալ պատկերը կ'ունենանք՝

- Սպանութիւններ
- Վիրաւորում
- Բռնաբարում
- Առեւանգում
- Բռնի իսլամացում:

Կառավարութեան միակ արդարացումը եղաւ այն տղայամիտ առարկութիւնը թէ այդ կարգի ոճիրները քաղաքակիրթ երկիրներու մէջ ալ կը գործուին: Բայց չկրցաւ բացատրել ցարդ, թէ ինչո՞ւ այդ ոճիրները միայն հայերու վրայ կը գործուէին, եւ որոնց հեղինակները չեն ձերբակալուիր, իսկ ձերբակալուածները անպարտ կ'արձակուէին: Այդ կարգի արդարացումները մէկ բանի մը միայն ծառայեցին՝ աւելի եւ աւելի վարկաբեկ ընելու նոր ռեժիմը թէ՛ օսմանցիներուն եւ թէ՛ քաղաքակիրթ աշխարհին առջեւը (comble⁷՝ Ատանայի չարագործները):

Պատասխանատուութիւնը իրերու այս կացութեան առջեւ:

Դաշնակցութիւնը, թէ՛ իր կոմիտէներու պրոպագանդով եւ գործունէութեամբ, թէ՛ իր երեսփոխաններով խորհրդարանի մէջ, թէ՛ իր մամուլով կը հանդիսանար միակ զօրավիզը «Իթթիհատ»ին, այսինքն՝ կուսակցութեան մը, որ աստիճանաբար կը հրաժարէր ո՛չ միայն ընդհանուր պետական բարենորոգումներէն, ո՛չ միայն չէր յարգել Թուրքիոյ բաղկացուցիչ ազգերու բնական եւ անկապտելի իրաւունքները իրենց ազգային մշակոյթի անկաշկանդ եւ ազատ զարգացումին մէջ — այլ, չենք սխալիր եթէ ըսենք, կոպտաբար արդար գոհացումը տալ ամէնէն աւելի տառապած, երկրին ազատութեան համար ամէնէն աւելի պայքարած ժողովուրդի մը աղաղակող պէտքերուն: Որքան ալ անմիջական ազդեցութիւն ունենալէ զրկուած երկրին քաղաքական ուղղութեան մէջ — բարոյապէս պատասխանատուութեան մեծ բաժին մը կ'իյնար Դաշնակցութեան վրայ, թէ իր կուսակցութեան շարքերուն, թէ հայ ժողովուրդին, թէ բոլոր օսմանեան տարրերուն եւ թէ Եւրոպայի առջեւ — որովհետեւ ցորչափ շարունակէր չբողոքել «Իթթիհատ»ի եւ անկէ սերող դահլիճներուն հետեւած քաղաքականութեան դէմ — հաւանութեան եւ համամըտութեան ամբաստանութիւն մը կրնար ծանրանալ իր վրայ, պատասխանատուութիւն մը, որ չէր կրնար ընդունիլ ինք, հակոտնեայ համարելով զայն Թուրքիոյ իրական շահերուն:

6.- Միրիբա կամ մրիպա — անող, սեփականագուրկ մշակ:
7.- Ֆրանսերէն՝ ի լրումն [չարեաց]:

մը պէտք չկար այլևս ճշդելու համար իրենց դիրքը ակատականութեան հանդէպ, որուն աստիճանական ոչնչացումը վճռուած խնդիր մը եղած էր հին Թուրքիոյ վարիչներուն համար, տակաւին կէս դար առաջ: «Իթիհատ»-ին կը մնար իր տրամաբանական վախճանին հասցնել այդ պայքարը, պետութեան կեանքին ու զարգացման տեսակէտէն՝ գէթ երկու մեծ սկզբունքներ ունենալով առաջնորդ:

Առաջին՝ վերջ մը դնելու համար պետութեան մէջ պետութիւնը (դրութեան), զոր կը ներկայացնեն այդ ակատականութեան:

բ) Ազատագրելու եւ իր կողմը շահելու համար Թուրքիոյ բազմամիլիոն բնակչութիւնը, որ ճորտը եղած էր այդ ազգային հարստահարիչներուն:

«Իթիհատ»ը այլապէս չհասկցաւ իր քաղաքական կոչումը՝ վստահելով այն մարդոց, որոնք իրենց շահերով միայն՝ ռիսերիմ թշնամին պիտի ըլլային ու եղան արդարութիւն եւ հաւասարութիւն աւետող նոր ռեփորմին: Ներքին գաւառներու իթիհատեան ակումբներուն յետադարձ⁹ ուղղութիւնը վերջին երկու տարուան մէջ գաղտնիք մը չէ այլևս ո՛չ մէկուն համար: Այդ իրողութիւնը ունի իր բացատրութիւնը եւ ատոր անմիջական հետեւանքով՝ անոնց դէմ պայքարող հազուագիւտ պաշտօնեաները (Իթիհատ) չուզեց կամ չկրցաւ պաշտպանել: այսպէս՝ հետզհետէ հեռացուեցան Հիւսէյն Քեռիմ պէյ Հալէպէն, Պեքրի Սամի պէյ Վանէն, Մեհմէտ էմին պէյ Սվազէն, Նազմ պէյ Համայն, եւ այլն եւ այլն:

Ներքին դժգոհութիւնները երբ ապստամբութիւններու յանգեցան, փոխանակ ժողովուրդին ցաւերը դարձանելով՝ ըմբոստութիւնը արմատէն բառնալու, իթիհատեան վարիչները ժողովուրդը արհամարհելով, հարստահարիչ եւ ակատական դասը ձեռք առին, հետեւելով համիտեան հազար անգամ փորձուած ձախող քաղաքականութեան: Այսպէս Արաբիոյ մէջ շէյխերուն ճանչցան վարչական իրաւունքներ, իսկ Ալպանիոյ մէջ պայքարատարները¹⁰ միւսիւր կարգեցին:

Իթիհատը ակատական դասուն անհետացումին չաշխատելէ զատ՝ իր թեւարկութեան տակ առաւ նաեւ բոլոր այն անձերը, որ կէս ակատական դիրք մը ստեղծած էին, իրենց անպատիժ մնացած ոճիրներուն սարսափովը, վերջին 10-15 տարուան անիշխանութեան միջոցին: Երբ Հիւսէյն փաշա մը եւ իր ընկերները, ժողովուրդին արիւնով յղիացած չարագործներ, ըմբոստանալով սահմանադրութեան բերած դոյզն արդարութեան դէմ, Պարսկաստան չուեցին, իբրեւ ցոյց, «Իթիհատ»ը փոխանակ առիթէն օգտուելով ամբողջ գաւառներ ազատագրելու այդ ճիւղներու թալանի ոյժերէն, ներում բերել տուաւ անոնց եւ հրաւիրեց Թուրքիա, իրենց դիրքերուն տիրանալու: Այդ սխալ ըմբռնուած ներողամտութիւնը կառավարութեան տկարութեան վերագրուեցաւ եւ նուազեցուց Սահմանադրութեան

համայնը թէ այդ չարագործներու աչքին եւ թէ անոնց ձեռքին տակ հարստահարուած նահանգներուն մէջ:

Եւ շնորհիւ այդ սիրաշահողական քաղաքականութեան է որ կամաց կամաց իրենց գլուխը սկսաւ բարձրացնել ակատական ու կէս-ակատական հարստահարիչ դասակարգը, որ ինքն իրեն մէջ ամփոփուած կծկուած էր ազատութեան առաջին ամիսներուն:

Կարժէ յիշատակել նաեւ անտակտ քայլը որ թոյլ տուաւ իրեն ներքին գործերու իթիհատեան նախարար մը՝ Պոլսէն շղթայակապ վտարել տալով այն թշուառ քիւրտերը, որոնք եկած էին բողոքելու Նիսպի «փաշա»ի ապօրինութիւններուն դէմ: Ոճրագործներ եւ չարագործներ չշղթայող եւ չպատժող կառավարութիւնը հարիւր անգամ պէտք է որ զգուշանայ այդպիսի ընթացք մը բռնելէ այդ հողագործ քիւրտերուն դէմ, եթէ մինչեւ իսկ անոնք իրենց յուսահատութեան մէկ պահուն անօրէնք արտայայտութիւն մը կամ քայլ մը ըրած ըլլային՝ ամէն պարագայի տակ անարիւն, միւսներու ոճիրներուն բաղդատմամբ:

Ժողովուրդի տնտեսական բարելաման հանդէպ ցոյց տրուած անտարբերութիւնը՝ «Իթիհատ»ի ներքին քաղաքականութեան ախտաւոր կէտերէն մէկը եղաւ:

Ռոճիկներու յաւելում, հանգստեան թոշակներ իրար յաջորդեցին աւելի ու աւելի ծանրացնելով պետութեան պիւտճէն, բայց «Իթիհատ» չուզեց մօտենալ ո՛չ աշարի, ո՛չ աղնամի¹¹ տուրքերուն, ունէ կերպով թեթեւցնելու համար աշխատող ու զրկուած մեծամասնութիւնը:

Մշակուեցաւ առաջատուական տուրքը, հարստահարիչ եւ հարուստ դասակարգին օգտին (որ) շարունակեց ծանրաբեռնել պետութեան ամբողջ պիւտճէն՝ զրկուած ժողովուրդին վրայ: Ոչինչ այնքան անխոհեմ էր եւ տրամագծօրէն հակառակ հարցին զարգացումը ապահովելու, Սահմանադրութիւնը պաշտպանելու եւ Ռէաքսիոնի դէմ կռուելու, որուն համար համբրաշխած էին երկու կուսակցութիւնները:

Լրացնելու համար այդ պատկերը, կը գոցենք. անցնինք՝ յիշատակելով միայն սա կէտն ալ, թէ Անատոլի երկաթուղիներու կառուցման խնդրին մէջ՝ «Իթիհատ»ը սխալ քաղաքականութեան մը հետեւեցաւ, մերժելով նկատի առնել այն առաջարկները, որոնք կը վերաբերէին Արեւելեան Անատոլիի գիծերուն, բայց թոյլատրելով Հազգը փաշան, որ ստորագրէ շինութիւնը [?]:

Պաղտատի բաժնին (Ատաբազար — Պոլիս), որուն կառուցումը ո՛չ մէկ անմիջական օգուտ պիտի ունենար Թուրքիոյ համար, օտար դրամատէրերուն գրպանը լցնելէ զատ:

9.- «Յետադարձ ուղղութիւն» ըսուած է յետադիմական (ռեակտիւ) ուղղութիւն իմաստով:
10.- Թուրքերէն՝ դրոշակակիրները:
11.- Աշարը՝ տասանորդի, իսկ աղնամը՝ ոչխարի տուրքն է:

Փաստ. 877-35

Գ 1.-

ՆՊԱՏԱԿ

«Հ. Յ. Դաշնակցութիւն» անուն կուսակցութիւնը, կազմուած 1890-ին, ընկերվարական կուսակցութիւն մըն է, որ կը ձգտի պաշտպանել, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, աշխատաւոր զանգուածներու բովանդակ շահերը՝ տնտեսական-դասակարգային, մարդկային-քաղաքական եւ ազգային-մշակոյթի (cultural):

Դաշնակցութիւնը անջատողական ո՛նէ է ձգտում չի սնուցաներ Թուրքիոյ հանդէպ — ինչպէս քանիցս պաշտօնապէս յայտարարած է Սահմանադրութեան հռչակումէն տակաւին տարիներ իսկ առաջ: Սահմանադրական ռեփորմ կ'ընդունի իբր բրաշխիքը Թուրքիոյ բարօրութեան համար. հետեւաբար պիտի պաշտպանէ Օսմ. սահմանադրութիւնը անոր ներքին եւ արտաքին թշնամիներու դէմ եւ պիտի աշխատի անոր անընդհատ զարգացումին:

Աշխատաւորական կուսակցութիւններու կազմակերպումին շնորհիւ հնարաւոր է իրականացնել ազգերու համերաշխութիւնը, որ ամէնէն հզօր ազդակը պիտի ըլլայ աստիճանաբար տկարացնելու եւ անհետացնելու միջցեղային այն բզբտումները, որոնք կործանումի հաս[ց]ուցին Թուրքիան, ինչպէս նաեւ ուրիշ շատ մը երկիրներ:

Համերաշխութեան այդ փառահեղ գործին հիմնաքարը պիտի կազմէր յարգանքը իւրաքանչիւր ցեղի մտաւոր-հոգեկան կեանքի նկատմամբ՝ պետականօրէն, առանց նպաստաւորելու մէկ կամ միւս ցեղը: Ուստի Դաշնակցութիւնը կը պահանջէ Թուրքիան կազմող բոլոր ազգերու կատարեալ իրաւահավասարութիւնը, ոչ միայն թոյլ տալու, այլ մանաւանդ նպաստելու անոնց, որ զարգանան իրենց ներքին ուժերու համաձայն:

Օսմանեան լայնածաւալ կայսրութեան գաւառները իրենց աշխարհագրական, ցեղագրական եւ այլ մասնայատկութիւններով այնպիսի բազմազանութիւն մը կը ներկայեն, որ վարչութեան մը ձեռնհասութենէն վեր է յանձանձել այդ գաւառներու բազմապիսի եւ յաճախ ինքնայատուկ տեղական պետութիւնները: Ուստի ինքնին կը հարկադրուի, Օսմանեան հայրենիքի բոլոր մասերուն անարգել եւ ներդաշնակ զարգացման համար, որ այդ գաւառները — որոնք են Հայաստանը, Քիւրտիստանը, Արաբիան, Սուրիան, Մակեդոնիան, Ալպանիան եւ այլն, — ունենան տեղական ինքնավարութիւն մը, դաշնակցային (fédéral) կապերով զօդուած իրարու, Օսմ. խորհրդարանի գերագոյն իրաւասութեան ներքեւ:

ՄԵՋՈՑՆԵՐ

Օսմ. Սահմանադրութեան հռչակումով՝ քաղաքական պայքարի համար օրինական պայմաններ ստեղծուեցան: Դաշնակցութիւնը հանդիսաւորապէս հրաժարեցաւ Թուրքիոյ մէջ դաւադրական միջոցներու կիրառումէն: Դաշնակցութիւնը կը մնայ յեղափոխական լոկ այն իմաստով՝ որ արդի դրամատիրական կարգերու յեղաշրջումը կը հետապնդէ, պատրաստելու եւ հաստատելու համար ապագայի ընկերվարական կարգերը:

Դաշնակցութեան գործադրած ու հսկան միջոցն է փրոփականտը՝ բանաւոր ու գրաւոր իր բոլոր ձեւերուն մէջ:

Համայնական ոգիով դաստիարակելու համար աշխատաւորները եւ արդի կարգերու մէջ համայնական սեփականատիրութեան եւ տնտեսութեան հնարաւոր ձեւերը իրագործելու նպատակով ալ, Դաշնակցութիւնը կը կազմակերպէ գիւղացիական եւ արհեստակցական միութիւններ, գործակցական ընկերութիւններ (coopératif) եւ այլն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան անդամակցիլ փափաքողը ամբողջովին ընդունելու է կուսակցութեան ծրագիրը ու գործելակերպը, ենթարկուելու է անոր կանոնադրին եւ լրջօրէն հետամուտ ըլլալու է իր կեանքին մէջ անոր սկզբունքները իրագործելու:

Դաշնակցական անդամները կը կազմեն խումբեր, որոնք կ'ըլլան քաղաքական, գիւղացիական եւ արհեստակցական:

Կիները կրնան կազմել նաեւ Կարմիր Սաչի կամ Կարմիր Մահիկի միութիւններ:

Կազմակերպական մարմիններն են՝ խումբ, ենթակոմիտէ, կոմիտէ, կեդրոնական կոմիտէ, Բիւրօ, որոնք կ'ընտրուին ներքին կանոնադրի համաձայն, որ պիտի վաւերացնէ առաջիկայ Ընդհանուր Ժողովը:

Դաշնակցական իւրաքանչիւր մարմին կրնայ ունենալ իր ակումբը (Club):

Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէ տարին գէթ մէկ անգամ իր շրջանի պատգամաւորական ժողովը կը գումարէ, ուր լուծում կը ստանան շրջանի ընթացիկ խնդիրները եւ կը կատարուի ընտրութիւնը Կեդր. Կոմիտէի:

Թուրքիոյ բոլոր Կեդր. Կոմիտէները միասին կամ շրջաններու բաժնուած՝ կ'ունենան Շրջանային Ժողովներ (assemblée régionale): Հոն է որ կը քննուին եւ լուծում կը ստանան ընդհանուր խնդիրներ, եւ հոն է որ կը մշակուի խորհրդարանական գործունէութեան մասին կուսակցութեան պլատֆորմը, որ կը հրատարակուի Օսմ. խորհրդարանի քառամեայ շրջանի սկզբին:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՍՈՑԹՆԵՐ

Դաշնակցութեան դրամական հասոյթները կը կազմեն անդամավճար, նուիրատուութիւն, հանգանակութիւն, վիճակախաղ եւ այլն, տիրող օրէնքներու տրամադրած սահմաններուն մէջ:

Փաստ. 107-164

**Գ 2.- ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ ԹԻՒ 11
(Կ. ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ)**

3/16 Դեկտ. 1910, Կ. Պոլիս

Ընկերներ,

Սօս օրերս տպագիր պիտի ստանաք կառավարութեան կողմէ վաւերացուած մեր ծրագիրը, որ պահանջուած ատեն կը ներկայացնէք տեղական իշխանութիւններուն իբր վաւերաթուղթ: Մեր կողմէն արդէն իսկ կեդրոնական կառավարութեան հաղորդած ենք անունները բոլոր այն վիլայէթներուն ուր ունինք կազմակերպուած մարմիններ: Վարչական դիրութեան համար ամէն խնդիր որ հնարաւոր է տեղական բարձրագոյն իշխանութիւններուն ձեռքով կարգադրել՝ հետապնդեցէք կուսակալութեան կեդրոնավայրի մարմնի միջոցով – հակառակ պարագային միայն ձգելու էք Պոլսոյ Բիւրոյին:

Ընկերակցութեանց օրէնքի (Տես «Ազատամարտ» թիւ 54) յօդ. 6-ի համաձայն ամէն մարմին մէկ կամ երկու անձնաւորութիւն կը ներկայացնէ տեղական կառավարութեան, յարաբերութիւններու իբրեւ միջնորդ:

Ամէն մարմին իրաւունք ունի ակումբ բանալու պայմանով որ մասնակցողներու անդամավճարներով միայն պահպանենք անոնք, որպէսզի զուտ կազմակերպական հասոյթները ամբողջովին յատկացուին գրաւոր եւ բանաւոր փրոփականտին կամ ծրագրով թոյլատրուած ձեռնարկներուն:

Կազմակերպութեան օրինականացման իբր հետեւանք՝ մեր մարմինները յատուկ ուշադրութեան առնելու են ընկերակցութեանց օրէնքի 7-րդ յօդուածը, որով իւրաքանչիւր մարմին ունենալու է – 1) հաշուական, 2) անդամակցական, 3) արձանագրութեանց առանձին տոմարներ: Յետեւաբար՝ մինչեւ այժմ տեղի ունեցած գործառնութիւններու վերաբերեալ բոլոր տրքիւմաններէն ու տոմարներէն – եթէ ունիք այդպիսիները – կարելորագոյնները ընտրելով կը յղէք մեզ՝ կուսակցութեան դիւանատան մէջ՝ պահելու համար իսկ անկարելի թուղթերը հոդ կ'ոչնչացնէք, մասնախմբի մը ձեռքով:

Նկատելով որ անհնար է գրաւոր հրահանգներով մանրամասնօրէն բացատրել օրինականացման հետ առնչութիւն ունեցող բոլոր խնդիրները – կը պատրաստուինք մասնաւոր պատուիրակներ հանել գաւառը, որոնցմէ լրացուցիչ տեղեկութիւնները առաջիկային կ'առնէք:

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՏ. Բ[ԻՐՐՈՅ]Ի Թ[ՈՒՐԹԻՈՅ] ՅԱՏՈՒԱԾ

Փաստ. 108-42

Գ. – ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Ապրիլ 2/15 1911, Կ. Պոլիս

Ընկերներ,

Նկատի ունենալով կառավարութեան անբարեհաճ վերաբերմունքը դէպի ներկայ այրող կացութիւնը – ինչպէս են հողային, կրթական, ապահովական եւայլն, եւ այն հանգամանքը, որ հետզհետէ տեղական պաշտօնէութեան ոչ անկողմնակալ վերաբերմունքի հետեւանքով բողոքը մեր գաւառներում ուժեղանում է, եւ դրա հանդէպ կառավարութիւնը ոչ մի լուրջ միջոցի չէ ձեռնարկում, մեր եւ երեսփոխականական խառը ժողովը որոշեց, որ ընկերներից Վաւառն ու Շահրիկեանը երթան Սալոնիկ եւ վերը յիշուած հարցերը անկեղծօրէն դնեն Իթիթիւ(ատի) Կեդրոնի առաջ՝ բաւարարութիւն պահանջելով: Նրանց տուած պատասխանից պիտի կախուած լինէր անմիջապէս որոշել մեր դիրքը դէպի Իթիթիւ կազմակերպութիւնը: Ե օր Սալոնիկում հարկ եղածը խօսուած է, եւ Կենտրոնը գոհացուցիչ պատասխաններ տուած ու յանձնառութիւններ ստանձնելով՝ մեր ընկերները վերադարձան այստեղ՝ տեղիս Իթիթիւ(ատի) գլխավորների հետ աւելի մանրամասնօրէն խօսելու ու այնտեղ եղած խոստումները գործնականի դարձնելու համար միջոցներ գտնել:

Երէկ մեր խառը ժողովին՝ խմբագրատան մէջ՝ ներկայ էին Թալէաթ, Նազըմ բէյ եւ Միտհատ բէյ: Ժողովի մէջ տրուած համաձայնութիւնը հետեւեալն է:

- 1.- Հողային հարցը պիտի լուծուի վարչական ձեւով, առանց Խորհրդարան մտնելու: Հարկ եղած հրահանգները պիտի տան վախիճներուն: Անհող գաղթական հայերին հող պիտի տրուի իրենց նահանգին մէջ եւ պետական նպաստ: Յատուկ քննիչներ պիտի ղրկուին տեղի վրայ հարկ եղած աջակցութիւնը եւ կոնտրոլը կատարելու: Դատական բարենորոգումը պիտի փութացուի:
- 2.- Ապահովութեան համար սկզբունքով ընդունեցին աստիճանաբար հարստահարութիւնները զսպել: Բո-

12.- Խորհուրդներու անդամներ:

լոր այն գիւղերը, հայ-քիւրտ, որոնք վտանգի ենթակայ են, պիտի գինուին կառավարական զէնքով. վաչկատունների թափառումները պիտի սահմանափակուին:

3.- Կրթական խնդրում՝ ճանաչեցին պատրիարքարանների իրաւունքը, ինչպէս նաեւ առաջնորդներին: Գլխորդներին տրուելիք նպաստը պիտի բարձրացուի ըստ հարկատուների թուի: Օտարահպատակ ուսուցիչներին արգելք չպիտի լինի: Պետական վարժարաններում հայ ազաներ¹² պիտի ընտրուին համեմատական ձեւով եւ ի հարկին աւել՝ մեր յանձնարարութեան վրայ: Դաշնակցական ընկերների դէմ սկսուած դատերը պիտի դադարեցուին: Մարզպետին եւ Սեպուհին ներում պիտի անեն: Գարմէնի հետապնդումը պիտի գոցուի (նման դատ եթէ լինի ձեր կողմը, անմիջապէս իմացնելու էք մեզ):

Շատ խոստումներ, տեսնեք թէ գործը ինչ ցոյց կը տայ:

Ներփակում ենք Ամերիկայից Վրացեանին ուղղուած նամակը. այդ խնդիրը կարգադրելէն առաջ լաւ կ'ըլլար Կովկասի մեր ընկերների բողոքը նրա մասին նկատի ունենալ:

Այսօր ձեզ ղրկեցինք մեր N13 շրջաբերականի մէջ խոստացած աղիւսակներէն Ա. 150 [հատ], Բ. 75 եւ Գ. 10. պիտի շուտ ցրել Ա. եւ Բ. գաւառները, որ լցնեն: Դուք էլ նրանց վրայ հիմնուած ընդհանուր հաշուեկշիռ կազմէք: Մենք ղրկած ենք Ա. էն եւ Բ. էն միայն Բաբերդ եւ Շ. Գարահիսար:

Ընկ(երական) բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ
Թ[ՈՒՐԻՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ]

– Տ[երսիմի] Աչոտի մասին Եգիպտոսէն Նշանի եւ Մատթէոսի կարծիքները նպաստաւոր են. պիտի վերջացնել այդ խնդիրը. ամէն անգամ ղիմումներ է անում: Ի՞նչ է ձեր կարծիքը:

Փաստ. 108-138

Ե. – ԿՈՎԿԱՍԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Թուական չի կրեր, շատ մանրատառ, մէկ էջի վրայ. ձեռագիրը Ռոստոմինն է. գրուած Զ. Ընդի. Ժողովի փակումէն անմիջապէս ետք եւ ուղղուած պէտք է ըլլայ կովկասեան մարմիններէն Թիֆլիսի կամ Պաքուի Կ. Կոմիտէութեանց եւ կամ՝ շրջաբերականի ձեւով, Արեւելեան շրջանի բոլոր մարմիններուն:

2. Ընդհ. Ժողովը վերջացրեց աշխատանքները եւ ցրուեց: Մի երկու շաբաթից պատրաստ կը լինեն վճիռներն ու կայացրուած բանաձեւերը որ ուղարկուեն բոլոր Կ. Կոմիտէներին. կ'ուղարկենք եւ ձեզ:

Պէտք է ցաւով ասենք, որ Սարուստանից ոչ մի ներկայացուցիչ չկար. այդ պատճառով ժողովը բարուք համարեց այդ տեղի գործերը թողնել տեղական ռայոնական ժողովին, մինչեւ որ պայմաններն աւելի բարեյաջող լինեն:

Կատարուեցին Արեւելեան եւ Արեւմտեան Բ[իւրո]-ների ընտրութիւնները: Արեւմտեանի համար ընտրուեցին Ե հոգի, իսկ Արեւելեանի համար Զ, թողնելով որ երկուսն էլ ձեր ռայոնական ընտրէ իբր Սարուստանի Բ[իւրոյ]ական սեկցիա: Յոյս ունինք, որ ընտրութիւն կը կայացնէք եւ ձեր յարաբերութիւնները կը կանոնաւորէք թէ՛ Կարնի ձեր սեկցիայի եւ թէ՛ մեզ հետ:

Խնդրում ենք բանտարկեալների դրութեան եւ գործի ընթացքի մասին մեզ մանրամասն տեղեկութիւններ տաք: Բացի այդ մի քանի անգամ արդէն խնդրել ենք, որ մինչեւ այժմ բանտարկեալների համար ուղարկուած բոլոր դրամների եւ նրանց ծախսման մասին մանրամասն հաշիւ ներկայացնէք, որպէսզի մենք հնարաւորութիւն ունենանք մնացած դրամներն էլ ձեզ փոխադրելու:

Ընկերներ, ուրախութեամբ տեղեկացանք Վրէժի մեր ընկերներից, որ դուք պատրաստակաճութիւն էք յայտնել օգնել այնտեղի ընկերներին մարդով եւ զէնքով: Մեր կարծիքով այժմ Պարսկաստանին պէտք է ամէն կերպ օգնել, որովհետեւ պէտք է ջանալ այնտեղ մարզել մեր կռուող ուժերը, պատրաստի բանակ կազ-

մել, որպէսզի ապագայում բոլոր հնարաւոր բարդութիւնների առջեւ սեւերես չմնանք:

Շատ լաւ կը լինէր, որ ձեր պահեստները – երկարների, կարճերի եւ ծայրերի – ամբողջ հաշիւները կազմէիք եւ որեւէ մի վստահելի ընկերոջ ուղարկէիք էրզրում Ռ[ոստոմի] եւ միւս ընկերների հետ մանրամասն խորհրդակցելու համար: Այնտեղ արդէն կարելի կը լինի որոշել թէ՛ որքան ուղարկել Վրէժ, որքան Շամ, որքան այլ վայրեր եւայլն: Ինչ ասել կ'ուզէ, որ նախ կը պարպէք արդէն վտանգուած կամ վտանգուելու աւելի հաւանականութիւն ունեցող պահեստները եւ ապա միւսները:

Մենք պատրաստում ենք մի ընդարձակ մեմորանտում Իթիթիւ(ատի) ներկայացնելու եւ հետո էլ մի ուլտիմատում դնելու, թէ՛ մեր համաձայնութեան պայմանագիրին ինքը խախտում է, թողնում իբր մեռած տառ, որ պէտք է վերջապէս վերջ դնել այդպիսի վարմունքին, պէտք է լուծել հողային, տեղական ինքնավարական, քրիստոնեաների եւ իսլամների իրաւունքների լիակատար իրաւահաւասարութեան հարցերը, պիտի աշխատաւոր գիւղացիութեան եւ բանուորութեան համար մշակել օրէնքներ, մտցնել այս, այս եւ այս բարենորոգումները եւայլն: Եթէ այդ պայմանների իրականացման անմիջապէս չէք սկսի ձեռնարկել, մենք կը խզենք մեր յարաբերութիւնը ձեզ հետ եւ կը ջանանք գտնել աւելի ձախակողմեան տարրեր եւ բլոկ կը կազմենք նրանց հետ: Սակայն մենք միշտ կը մնանք Թուրքիոյ սահմանադրութեան անկեղծ պաշտպաններ... Ահա ա՛յս է մեր գրելիքին միտքը, համաձայն Ընդ. Ժ[ողովի] որոշման:

ԳԼՈՒԽ III

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

1910 ՀՈԿՏ. 2-13, ԿԱՐԻՆ

Ինչպէս 1908 Հոկտեմբերին, նոյնպէս 1910 Հոկտ. 2-13ին Կարին-Էրզրումի մէջ կը գումարուի Արեւելեան Բիրոյի Թուրքիոյ հատուածին իրաւասութեան ենթակայ Մեծ Հայքի կազմակերպական շրջաններու Ռայոնական ժողովը: Ներկաներէն յիշատակելի են՝ Ռոստոմը, բժ. Յ. Տէր Դաւթեան (Բարսեղեան?), Վարդգէսը (Սերենկիւեան), Սեպուհը, Հրաչեայ Մարալը: Գլխաւոր բացական Վան-Վասպուրականն է, որուն ներկայացուցիչը, ինչպէս կը նշուի ծանօթագրութեան մը մէջ, կը հասնի ուշ՝ օր մը ետք ժողովի ցրուելէն: Արխիւներու մէջ պահպանուած են ժողովին արձանագրութիւնները՝ խմորատիպ երեք օրինակներով, եւ պարզ մատիտով գրուած սեւագրութիւն – բնագիր մը, որ եւ ստորագրուած է ձայնի իրաւունք ունեցող բոլոր պատգամաւորներուն կողմէ: Խմորատիպ օրինակներուն եւ սեւագրին միջեւ չկան ուշագրաւ տարբերութիւններ կամ յաւելումներ: Կարեւոր նկատուածները նշած ենք ծանօթագրութիւններով:

Փաստ. 1595-1

Ժողովը սկսաւ Հոկտ. 2 կէսօրէն յետոյ ժամը 2½-ին: Վճուական ձայնով կը մասնակցին ժողովին՝

1. Արեւել. Բիւրոյի կողմէն ընկ. Բարսեղեան¹
2. Բարձրաբերդի Կեղը. Կոմ.ի կողմէ Մարալ²
3. Բարձրաբերդի Շրջ. ժողովի կողմէ Սեպուհ³
4. Դուրան-Բարձրաւանդակի Շրջ. կոմիտէի կողմէ Մանուկ
5. Ծովափի Շրջ. կոմիտէի կողմէ Ռոստոմեան⁴
6. Վիշապաձորի Շրջ. կոմիտէի կողմէ Վրոյր⁵
7. » » ժողովի կողմէ Բեգուլ⁶
8. Օս[մանեան] երեսի[ոխանական] ժողովի Դ[աշնակցութեան] Հայ պատուիր[ակութեան] կողմէ Վարդգէս⁷

Ժողովէն կը բացակայէին՝
 Շամի Կեղը. Կոմիտէն
 Շամի Շրջանային ժողովը⁸
 Ծովափի եւ Դուրանի Շրջ. ժողովները

1.- Բարսեղեանը՝ Արեւելեան Բիրոյի ներկայացուցիչ, հաւանաբար բժ. Յովսէփ Տէր Դաւթեանն է:
 2.- Մարալ կամ Գրաչեայ Մարալ, ծանօթ է նոյնպէս Փիլոս ծածկանունով, բուն անունը՝ Դարիպեան Գրիգոր:
 3.- Սեպուհ՝ հանրածանօթ մարտիկն է, իսկական անունը՝ Ներսէսեան Արշակ:
 4.- Ռոստոմեանը նոյն Ռոստոմն է (Ջօրեան Ստեփան):
 5.- Վրոյր, սեւագրին մէջ նաեւ Վարդ, բուն անունով Տէր Եղիայեան Վարդ: Վերջին երկուքը պատգամաւոր Տիարաբերդի – Տիգրանակերտի (Վիշապաձոր):
 6.- Բեգուլ, սեւագրին մէջ նաեւ՝ ճերմակ:
 7.- Վարդգէս՝ Սերենկիւեան Յովհաննէս:
 8.- Շամը՝ Վան-Վասպուրականի շրջանն է: Դուրան-Բարձրաւանդակը՝ Տարօն-Սասունի: Ծովափը՝ Տրապիզոնի եւ Կիրասոնի շրջանը:

Պահանջուած մեծամասնութիւնը կազմուած լինելով՝ ժողովն օրինաւոր ճանաչուեցաւ:
 Որոշուեցաւ օրական երկու ժողով գումարել. ժամը 2-4 առաւօտները եւ 8-12 երեկոները: Որոշուեցաւ ժողովին խորհրդակցական ձայնով մասնակցելու համար հրաւիրել ընկերներ՝ Տուրքախ, Արմէն⁹ եւ Կեղը. Կոմիտէի մնացած անդամները: Սմբուլին հրաւիրելու խնդիրը յետաձգուեցաւ մինչեւ անոր հարցի պարզուելը: Ժողովին նախագահ ընտրուեցաւ ընկ. Բարսեղեան, քարտուղար՝ Մարալ:

Օրակարգի հարցերն են՝

1. Տեղեկագիր եւ զեկուցում Կեղը. Կոմիտէներու.
2. » » Արեւելեան Բիւրոյի.
3. Կեղը. Կոմիտէներու դրամական հաշուետուութիւն.
4. Արեւելեան Բիւրոյի » »
5. Վ ընդ. ժողովի Բարձրաւանդակի խոստացուած նպաստի խնդիրը.
6. Մահարձան նահատակ ընկերներու վրայ.
7. Երկիրն ուսումնասիրելու խնդիրը.
8. Լիբարտի խնդիրը.
9. Մարալի »
10. Սմբուլի »
11. «Յառաջ» թերթի տարածման խնդիրը.
12. Անկախ կոմիտէներու խնդիրը.
13. Պրոպագանտ՝ քրդախօս հայերու մէջ.
14. Միջոցներ՝ կազմակերպական վիճակը ուժեղացնելու, զբաղումներ՝ կազմակերպուած խմբերու համար:
15. Վերաքննութիւն Ազգ. Սահմանադրութեան.
16. Ազգ. դպրոցներն ու պետական հսկողութիւնը.
17. Ռայ. ժողովի պատգամաւորներու թուի ճշդումը.
18. Մեր դիրքը դէպի համերաշխութեան ժողովը (Հնչակեան կուսակցութիւնը).
19. Սարուստան¹⁰ կազմակերպութեան վիճակի բարեկարգման խնդիրը եւ բանտարկուած ընկերները.
20. Մեր վերաբերմունքը դէպի Մէծլիսի Ումումի, Պելետիէի եւ Խտարէի ընտրութիւնները.
21. Հողային խնդիր.
22. Պարսկաստանի ներկայ վիճակը եւ մեր վերաբերմունքը.
23. Գիւղատնտեսական եւ արհեստակցական միութիւններ.
24. Պղէեանի խնդիրը.
25. Կեղը. Կոմիտէներու գործունէութեան խնդիրը.
26. Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածի պակաս անդամներու ընտրութիւնը.
27. Հարկերու թեթեւացման խնդիրը.
28. Հանրագրութեան խնդիրը:

Օրակարգի խնդիրները ստուգելէ վերջ, ժողովն անցաւ տեղեկագրերու ընթերցման:

9.- Տուրքախ՝ Կիրակոսեան Յարութիւն, վաստակաւոր մարտիկներէն: Արմէն՝ արդեօ՞ք Արմէն Գարոն (Փաստորմածեան Գարեգին):
 10.- Սարուստան՝ ընդհանրապէս Ռուսիոյ եւ յատկապէս Կովկասի տարածքին գործող դաշնակցական կազմակերպութեան ծածկանունը:

Բ. ՆԻՍ

Ժամանակն ուշ լինելուն պատճառով ժողովն զբաղեցաւ նախնական խնդիրներով միայն: Որոշուեցաւ. ա.— Հեռագրել Շամ՝ պատգամաւորին եւ Դուրան՝ ընկ. Գարմէնին¹¹ անմիջապէս մեկնել, հասնելու համար ժողովին*:

Գ. ՆԻՍ

Դուրան-Բարձրաւանդակի հաշիւներու քննութիւն

Դուրան-Բարձրաւանդակի հաշիւներու ընթերցումէն յետոյ, պատգամաւոր ընկերը տուաւ նաեւ լրացուցիչ տեղեկութիւններ՝ տեղւոյն կազմակերպական վիճակի մասին, որը մխիթարական չէ: Ընկերով հաղորդած տեղեկութիւններէն պարզուեցաւ, որ շնորհիւ այն բանին, որ տեղւոյն մարմինը՝ որպէս կուսակցութիւն ակտիւ կերպով մասնակցել է ազգ. կրթական գործին եւ նմանապէս կազմակերպական գործով, որով կազմակերպութիւնը այդ շրջանի մէջ մնացել է թույլ վիճակի մէջ: Բացի այդ՝ հասարակական այլ խնդիրներով, ժողովրդական ցաւերը բուժելու անհրաժեշտ աշխատանքով տարուած, կազմակերպական գործիչ ընկերները յաճախ ստիպուել են անտեսել զուտ կազմակերպական աշխատանքը, որով պէտք է բացատրել այն բոլորը, որ կուսակցական անդամներու անդամավճարները մնացել են անգանձելի, որ հնարաւորութիւն չէ եղեր Շրջ. ժողով գումարել, եւ որ՝ վեց ամիսէ ի վեր կանոնաւոր յարաբերութիւն պահուած չէ Կեդր. Կոմիտէի եւ շրջաններու միջեւ եւ որու պատճառով ալ Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. կոմիտէութեան շրջաններու մանրամասն տեղեկագրութիւնը կարելի չեղաւ ներկայացնել Ռայ. ժողովին:

Բացի վերոյիշեալ պատճառներէն, տեղական կառավարութեան՝ Դաշնակցութեան դէմ ամիսներէ ի վեր սկսած հալածանքը նոյնպէս արգելիչ պատճառ մէկը կազմակերպութեան վիճակը կանոնաւորելու: Հակառակ այս բոլորովին սակայն Դուրանի իւրաքանչիւր գիւղին մէջ գոյութիւն ունին կազմակերպուած խմբեր, 20-30 անդամներով: Գիւղերէն զատ քաղաքին մէջ նոյնպէս՝ Սահմանադրութեան հռչակումէն յետոյ կազմակերպուած էին 10-15 խումբ, որոնք սակայն կոմիտէի

կարգադրութեամբ կազմալուծուեցան ամբողջութեամբ, որովհետեւ հապճեպով ու շտապով կազմակերպուած լինելով անոնց մէջ սպորդած էին այնպիսի տարրեր, որոնց մուտքը կազմակերպութեան մէջ երբեք օգտակար ու ցանկալի չէր: Քաղաքի խմբերու կազմալուծումէն յետոյ անոնք տակաւին վերակազմուած չեն եւ մէկ տարիէ ի վեր քաղաքի մէջ ոչ մէկ դաշնակցական խումբ գոյութիւն չունի:

Կազմալուծուած նոյն վիճակը կը ներկայանեն նաեւ Պոլլանըզը, Վարդոն եւ մի երկու այլ շրջաններ: Կազմակերպական ընդհանուր այս դրութիւնը բարւոքելու համար պատգամաւոր ընկերը կ'առաջարկէ յեղափոխական անցեալ ունեցող մի ազատ ընկեր ուղարկել այնտեղ:

Տեղեկագրի ընթերցումէն եւ պատգամաւոր ընկերով հաղորդած լրացուցիչ տեղեկութիւններէն յետոյ ընկերներէն ոմանք մի քանի հարց տուին տեղւոյն կազմակերպական գործերու վերաբերմամբ:

Ա. Թէ ինչո՞ւ Դուրանի Մարմինը տեղական կրթական գործին մասնակցեցաւ ակտիւ կերպով՝ որպէս կուսակցութիւն:

Բ. Ինչո՞ւ Վ Ընդհ. ժողովէն յետոյ Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. կոմիտէութեան հաշիւները ներկայացուած չեն կազմակերպական պատշաճ մարմիններուն, իսկ ներկայ Ռայ. ժողովին ներկայացուած հաշիւներն ալ նոյնպէս լրիւ չեն եւ ոչ ալ վաւերացուած տեղական Շրջ. ժողովի կողմէն:

Պատգամաւոր ընկերը պատասխանեց, որ կրթական խնդրի համար երբ տեղւոյն առաջնորդը ելաւ շրջանները կրթական տուրք հաւաքելու, ժողովուրդը դէպի նացոյց տուաւ չափազանց սառն անտարբերութիւն. այդ պատճառով ալ տեղական գաւառական երեսփոխանական ժողովի յանձնարարութեամբ ազգային վարչութիւնը յատուկ պաշտօնագրով մը դիմեց Դաշն. մարմնին, խնդրելով վերջնոյս աջակցութիւնը՝ կրթական գործը դնելու լուրջ հիմքեր վրայ: Տեղական կոմիտէն նկատի ունենալով խնդրի կարեւորութիւնը եւ պաշտօնական դիմումը, ընդունեց մասնակցել կրթ. գործին: Իսկ ինչ կը վերաբերի հաշիւներուն, մինչեւ 908 թուի հաշիւները ղրկուած են արդէն IV Ընդհ. ժողովին: 907, 908, 909 թուերու հաշիւները ղրկուած լինելը կամ չլինելը ինքը չի գիտեր. իսկ 909 Ապրիլ 17էն մինչեւ 910 Մարտ 18ի հաշիւները, որոնք ներկայացուած չեն ներկայ Ռայ. ժողովին, թէ եւ քննուած՝ բայց տեղւոյն Շրջ. ժողովի կողմէ վաւերացուած չեն եւ Ռայ. ժողովին կը ներկայացուին որպէս հում նիւթ:

Պատգամաւոր ընկերով հաղորդած վերոյիշեալ բացատրութիւններէն յետոյ, մտքերու փոխանակութենէ վերջ ժողովը Ա) նկատելով որ կրթական գործը Դու-

րան-Բարձրաւանդակի շրջանին մէջ ոչ միայն կազմակերպութեան բարոյական ուժերն է կլլեր, այլեւ խլեր է կազմակերպութեան նիւթական ուժերն ալ, որոշեց՝ Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. կոմիտէի ուշադրութիւնը հրահրել այս երեւոյթի վրայ եւ յանձնարարել որ Տեղական Մարմինը որպէս դաշնակցական մարմին իր ջանքերը կեդրոնացնէ զուտ կազմակերպական գործին վրայ, ընկերներէն իւրաքանչիւրն ազատ թողլով մասնակցել Ազգ. կրթական ու կուլտուրական խնդիրներու մէջ՝ որպէս քաղաքացիներ, առանց ի հարկէ չփոթելու ազգային խնդիրները կուսակցական խնդիրներու հետ:

Բ) Ժողովրդի եւ կառավարութեան միջեւ լինելիք յարաբերութիւնները թողուլ ըստ կարելոյն միմիայն ազգային վարչութիւններուն:

Գ) Նկատելով որ 907ին, 908ին 909 թուականներու հաշիւները տակաւին տեղ չեն հասած, որոշեց Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. կոմիտէութեան նոյն թուականներու հաշիւներու պատճէնները անյապաղ ղրկել պատշաճ մարմիններուն:

Դ) Ժողովն անբաւարար գտնելով քաղաքի մէջ ցարդ ոչ մէկ դաշնակցական խումբ չլինելու առթիւ տրուած բացատրութիւնները, յանձնարարեց Տեղական մարմնին միջոցներ ձեռք առնելու, քաղաքի մէջ եւս կանոնաւոր կազմակերպութիւն առաջ բերելու համար:

Դ. ՆԻՍ

Ժողովականներու քննութեան պատճառով տեղեկագրերու ընթերցման շարունակութիւնը, ինչպէս նաեւ զեկուցումներու, յետաձգուեցաւ ուրիշ աւելի ամբողջական նիստի, եւ զբաղեցաւ՝

- Ա) Բարձրաւանդակի նպաստի խնդրով.
Բ) Նահատակ ընկերներու մահարձանի խնդրով եւ
Գ) Երկրի ուսումնասիրութեան հարցով:

Ա) Բարձրաւանդակի պատգամաւորը բողոքեց, որ հակառակ Վ Ընդհ. ժողովի որոշման, Բարձրաւանդակի համար որոշուած նպաստը ցարդ ստացուած չէ:

Ընկերով բողոքի դէմ ընկերներ Բարսեղեան եւ Մարալ յայտնեցին որ խոստացուած նպաստի մէկ մասն արդէն ղրկուած է, որու ստացուած լինելու ստացականն ալ կայ, բայց Տեղական մարմինը չէ հասկցեր նպաստ լինելը. իսկ միւս մասին համար ալ գրուած է իրենց, բայց իրենք եղած առաջարկներուն պատասխանած չեն:

Չանազան վիճաբանութիւններէ յետոյ ժողովն յանձնարարեց Արեւել. Բիւրոյին՝ Բարձրաւանդակի նպաստը յանձնել նոյն տեղի մարմնին:

Բ) Ժողովը ջերմապէս համակրելով նահատակ ըն-

կերներու վրայ մահարձան կանգնեցնելու առաջարկին, որոշեց Դաշնակցութեան 20ամեակի առթիւ հանդէսներ սարքել ամէն տեղ եւ հանգանակութիւններ ընել նոյն նպատակի համար, իսկ ընդհանուր հանգանակութեան խնդիրը թողնել յառաջիկայ ամրան:

Գ) Ընկեր Սեպուհ, նկատի ունենալով ուսումնասիրուած եւ յատուկ վիճակագրութեան անհրաժեշտութիւնը, առաջարկեց՝ Ռայ. ժողովի կողմէն յանձնարարել բոլոր կեդր. կոմիտէներուն, որ իւրաքանչիւրն իր շրջանին մէջ տեղական ընկերներու աջակցութեամբ ուսումնասիրէ ազգաբնակչութեան թիւը, կազմէ յատուկ ցուցակներ, այսպիսով գէթ վիճակագրութեան ընդհանուր ամփոփում մ'ունենալու համար:

Ժողովն ընդունելով հանդերձ խնդրի կարեւորութիւնը, բայց նկատի ունենալով նաեւ այս ձեռնարկի համար փորձունակ մասնագէտ ուժերու պակասը, որոշեց յանձնարարել մեր մարմիններուն, իրենց շրջաններուն մէջ հնարաւոր չափով ձեռնարկելու վիճակագրական տեղեկութիւններ կազմելու եւ այսպիսով գոնէ մօտաւոր թիւ մ'ունենալու համար:

Ե. ՆԻՍ

Լիբարտի խնդիր

Կարդացուեցաւ Բարձրաբերդի Շրջ. ժողովի այն բանաձեւը, որով նոյն Շրջ. ժողովը որոշել էր հեռացնել զայն Բարձրաբերդի շրջանէն եւ դաշնակցական շարքերէն:

Բանաձեւի ընթերցումէն յետոյ, գործին ծանօթ ընկերները տուին եւ ուրիշ լրացուցիչ տեղեկութիւններ Լիբարտի խնդրի վերաբերմամբ, պարզեցին Շրջ. ժողովի կողմէ նշանակուած քննիչ յանձնախմբի քննութեան արդիւնքը, առաջարկելով որ յարգուի Շրջ. ժողովի որոշումը, քանի որ Լիբարտը հակառակ նոյն ժողովի որոշման կը մնայ տակաւին Բարձրաբերդի շրջանին մէջ:

Կարդացուեցաւ Լիբարտի Արեւելեան Բիւրոյին ուղարկած նամակը, ապա նաեւ ընկ. Բարսեղեան հաղորդեց այն պատճառները, որոնց համար Լիբարտին ինքը որոշել էր մնալ Բարձրաբերդի շրջանին մէջ, յայտնելով նաեւ այս պարագաները Կեդր. կոմիտէին՝ իր մեկնած օրը:

Ընկ. Ռոստոմ սկզբունքով համաձայն լինելով հանդերձ որ ոեւէ դաշնակցական մարմնի կամ ժողովի որոշումները գործադրուելու են անպայման, սակայն միւս կողմէն գտնելով որ Լիբարտը Բարձրաբերդի շրջանէն հեռացնելու վերաբերմամբ Շրջ. ժողովի տուած որոշումը աննպատակալարմար է, քանի որ եթէ այդ որոշումը որպէս պատիժ տրուած է Լիբարտի բացասա-

*) Մանօթ.— Շամի պատգամաւոր ընկերը հասաւ ժողովը ցրուելու հետեւեալ օրը եւ ներկայացուց Շամի վերաբերեալ տեղեկագրերու զեկուցումը:

11.- Գարմէն՝ Սելքոնեան Սկրտիչ (նախապէս Տաճատ վարդապետ):

կան կողմերուն համար, ապա ուրեմն նա բոլորովին անծանօթ չըջաններ երթալով, նոյն բացասական կողմերով կարող է նոր խնդիրներ առաջացնել ու աւելի վնասակար լինել:

Ռոստոմի առակութեան վրայ ընկերները պարզեցին այն շարժառիթները, որոնց հիման վրայ Շրջ. ժողովը տուած էր իր որոշումը: Այս առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւններէն յետոյ ժողովը [որոշեց]

Նկատելով որ Շրջ. ժողովը Լիբարիտի վերաբերմամբ իր որոշումը տուած ատեն, Լիբարիտը մինակ էր այստեղ՝ առանց իր ընտանիքին, որմէ յետոյ սակայն տեղս եկած է իր ընտանիքը, որով Լիբարիտը աքսորուելու պարագային, ասոր պատիժը բոլորովին անմեղ տեղը պիտի բաժնուէր նաեւ իր կնոջ եւ որդիներուն վրայ:

Նկատելով որ Լիբարիտի աքսորման մասին պնդել այժմ կը նշանակէ դարձեալ բաժնել անոր պատիժը անմեղ անձերու վրայ, Ռայ. ժողովը որոշեց թողուլ զայն պաշտօնավարելու Բարձրաբերդի շրջանին մէջ, իսկ կազմակերպական շարքերէն հեռացնելու իր պատիժը փոխանակ մէկ տարուայ՝ բարձրացնել երկու տարի: Ժամանակամիջոցը լրանալէ յետոյ կազմակերպական շարքերու մէջ ընդունուիլը թողուլ իր բնական շրջանի կեդր. Կոմիտէի անոր ընթացքին մասին տուած վկայութիւններուն:

2. ՆԻՍ

Ա. Մարալի խնդիր
Բ. Մմբուլի խնդիր

Ռայ. ժողովը լսելով Բարձրաբերդի Շրջ. ժողովի առաջարկը Միջնաբերդի¹² խնդրի վերաբերմամբ ընկ. Մարալի ունեցած պատասխանատուութեան մասին, եւ նկատելով որ այս առթիւ մի որեւէ եզրակացութեան հասնելուն համար անհրաժեշտ տեղեկութիւններն ու ցուցմունքները կը պակսին տակաւին ժողովին, նկատելով նաեւ որ նոյն խնդրի հետ կապուած է նաեւ ընկեր Տերսիմցին,

Ժողովը որոշեց յանձնարարել Բարձրաբերդի կեդր. Կոմիտէին այս առթիւ յատուկ քննութիւն կատարել եւ արդիւնքը հաղորդել Ա[րեւելեան] Բիւրոյին: Բացի այս, Վիշապաձորի պատգամաւոր ընկ. Ճերմակի առաջարկութեամբ ժողովը որոշեց ճշդել նաեւ Մովսիսի մարմնոյն բարոյական պատասխանատուութեան չափը ընկ. Եղիշի¹³ դէմ լարուած դաւադրութիւնը կանխելու համար՝ ժամանակին միջոցներ ձեռք չառնուելու մասին:

Մմբուլի¹⁴ խնդիր

Ընկ. Ռոստոմ յայտնեց որ Բուզարիայի մէջ 907 թուի

սկզբին, զինուորական դպրոցը եղած ժամանակ, աշակերտական ընդհանուր հարցարան տեսրակին մէջ «ո՛վ ինչ կուսակցութեան կը պատկանի» հարցի բաժնին մէջ, Մմբուլն իր ժամանակին գրեթէ մօտաւորապէս հեռեւեալ բառերը.

«Աւա՛ղ երբեմն դաշնակցական, իսկ այժմ ոչ»:

Նկատելով որ այս բառերը գրելէ անմիջապէս յետոյ Կովկաս վերադառնալով եւ յետոյ Թուրքիա անցնելով միշտ գործեր է դաշնակցական շարքերուն մէջ, առանց սակայն իր գրած վերոյիշեալ բառերու մասին բացատրութիւն տալու, անհրաժեշտ է որ ինքը՝ Մմբուլը բացատրութիւն տայ նոյն բառերու մասին:

Ռոստոմի առաջարկութեան դէմ Մմբուլը պատասխանեց, որ ինքը երբեք չի յիշեր այդպիսի բառեր գրած լինելը, եւ կարող է պատահել որ զանազան մարդիկ կեղծած լինեն իր գիրը:

Ընկերոջ տուած բացատրութիւններուն վրայ Ռայ. ժողովը որոշեց յանձնարարել Արեւել. Բիւրոյին՝ քննել եւ վերջնականապէս պարզել այս խնդիրը:

Վերոյիշեալ եզրակացութենէն յետոյ, հարց դրուեցաւ ժողովի նիստերուն՝ Մմբուլը հրաւիրելու համար: Ընկ. Ռոստոմ սկզբունքով ոչինչ չունենալով հանդերձ կը մնայ ձեռնպահ, մտածելով որ Մմբուլը ինչպէս որ ներկայիս կը մեղադրէ դաշնակցական այն մարմինները, որոնք իր վերոյիշեալ բառերը գրելէ յետոյ՝ գործեր են յանձնել իրեն, այժմ ալ նոյն ձեռով կրնար մեղադրել դարձեալ Ռայ. ժողովը նոյն առարկութեամբ:

Ժողովը չորս ձայնով ընդդէմ երկուսի եւ մէկի ձեռնպահութեամբ որոշեց անոր մասնակցութիւնը ժողովին:

3. ՆԻՍ

«Յառաջ» թերթի տարածման խնդիր

Ընկ. Մարալ շեշտելով գաւառական կեանքի մէջ գաւառական թերթի չափազանց անհրաժեշտութիւնը, որու մասին որոշումներ տրուեն են ոչ միայն Բարձրա-

12.- Միջնաբերդը կուս. ծածկանունն է Բաբերդ քաղաքի:
13.- Կարոյ «Յառաջ» թերթի նախկին խմբագիր Թովչեան Եղիշ, որ սասնակցած էր Վառճայի Գ.Յ.Գ. Գիւգեղորդ Ընդի. ժողովին եւ ընտրուած Արեւելեան Բիւրոյի անդամ: Կարին վերադարձի ծամբուն վրայ, Բաբերդի մօտ դաւադրաբար սպանուած (Դոկ. 23, 1909) խմբագրու Միհրանի եղբոր Յաբէթի կողմէ:
14.- Սմբուլ – Գ.Յ.Գ. Պուլկարիոյ զինուորական վարժարանի աշակերտներէն. դպրոցի տոմարին մէջ կը յիշուի Սմբուլ մշեցի, բուն անունը՝ Յակոբեան Սմբատ. Նշուած է նաեւ որ «ուղարկուած է Կովկասէն բայց մնացած է միջնէ Երևան 1907]. վարժարանին մէջ լաւ դեր ունեցած է, ասոր համար ալ կեդր. Կոմիտէն [Պալքաճի] սեւ յանձնարարական չէ տուած յիշելու՝ մեկնած պահուն» [փաստ. 1179-25]:

բերդի Շրջ. ժողովներուն մէջ, այլ նաեւ նախորդ Ռայ. ժողովին մէջ եւս, թերթի գոյութիւնն ընդունելով՝ որպէս կարեւոր մէկ միջոց գրաւոր պրոպագանդի տեսակէտէն, պարզեց, որ «Յառաջ»ը թէեւ կոչուած է լրացնելու այդ պակասը, բայց նիւթական իր ներկայ անախանձելի վիճակի պատճառով կարող է շուտով դադարման դատապարտուիլ եթէ այժմէն միջոցներ ձեռք չառնուին թերթի նիւթական դրութիւնը բարելաւելու:

Այս նպատակով ալ ընկ. Մարալ կ'առաջարկէ, որ Ռայ. ժողովն իր կողմէն եւս նոր միջոցներ ձեռք առնէ եւ ժողովին մասնակցող կեդր. Կոմիտէներէն իւրաքանչիւրն իր շրջանին մէջ ջանայ տարածել թերթը, այսպիսով նպաստելու անոր նիւթական վիճակի բարելաւման, բան մը, որ հնարաւորութիւն կու տայ թերթի խմբագրութիւնը դարձնելու աւելի բազմակողմանի եւ աւելի արտայայտիչ մեր սկզբունքներուն եւ աշխարհահայեացքին:

Ընկերոջ յայտնած բացատրութիւններէն յետոյ, ժողովն ընդունելով անհրաժեշտ՝ թերթի գոյութեան շարունակութիւնը, որոշեց՝

Պարտադրել Ռայ. ժողովին մասնակցող մարմիններուն՝ իւրաքանչիւրն իր շրջանին մէջ ընկերներէն կարգել յատուկ գործակալներ իրենց շրջանին մէջ թերթի տարածմանը նպաստելու, ինչպէս նաեւ գտնել յատուկ թղթակիցներ, տեղական թարմ լուրեր հաղորդելու թերթին:

Ը. ՆԻՍ

«Անկախ» կոմիտէներու խնդիր

Ժողովին ներկայացուած տեղեկագրերէն, ինչպէս նաեւ ընկերներու տուած գեկուցումներէն պարզուեցաւ, որ մէկ քանի վայրեր, ինչպիսիք են Արծիւ եւ Խորածոր Բարձրաբերդի շրջանին մէջ, Նփրկերտ՝ Վիշապաձորի շրջանին¹⁵ մէջ, կը ձգտին անկախ լինել, առանց կազմակերպական կապերով կապուած զգալու իրենց շրջանին մէջ գոյութիւն ունեցող կեդր. Կոմիտէներու հետ, եւ այս՝ առաւելապէս իրենց կազմակերպական եկամուտները միմիայն իրենց շրջանին մէջ ծախսելուն ցանկութիւնով: Հաշիւներու ընթացումէն պարզուեցաւ իսկապէս որ նոյն շրջաններու տեղական մարմինները ըրեր են այնպիսի ծախսեր, որոնք ոչ միայն շատ են տեղ. կոմիտէութեան համար նշանակուած ծախսի համեմատութեամբ, այլեւ երբեմն բոլորովին աւելորդ ալ են: Բացի այս, Վիշապաձորի պատգամաւորը իրենց շրջանի Շրջ. ժողովի ընդունած բողոք բանաձեւը կարողալէ վերջ Նփրկերտի կոմիտէի հակակազմակերպական ընթացքի դէմ, յայտնեց նաեւ որ նոյն շրջանի կոմիտէի անդամներէն մէկ երկուսը, մօտիկ անցեալի

մէջ, իրենք գիրենք յայտարարեր են «Դաշնակցութեան պատասխանատու մարմին» եւ այս ստորագրութեամբ ալ նամակներ գրեթէ՝ զանազան շրջաններ, բան մը, որ իսկական կազմակերպական ապօրինութիւն է:

Ռայ. ժողովը նկատի ունենալով այս բոլորը որոշեց՝ Ա) Պարտադրել վերոյիշեալ մարմիններուն անպայման կերպով կապուիլ մի ոեւէ կեդր. Կոմիտէի հետ, թողնելով իրենց միանգամայն ազատ իրենց շրջանի կեդր. Կոմիտէներէն մէկն ու մէկն ընտրել:

Բ) Հասկցնել նոյն մարմիններուն, որ իրենք վարչականօրէն միայն կապուած լինելու են իրենց կեդր. Կոմիտէներուն հետ, մնալով միաժամանակ կատարեալ անկախ իրենց ներքին գործերուն մէջ, Ընդհանուր եւ Ռայոնական ժողովներու գծած սահմաններուն մէջ:

Գ) Վիշապաձորի մարմնէն պահանջել Նփրկերտի մարմնի կողմէ «Պատասխանատու մարմին» ստորագրութիւն կրող գրութիւնները եւ դատի հրաւիրել գաւառի իրենց ապօրինի ընթացքին համար: Բացի այս, ժողովը որոշեց յանձնարարել Արեւել. Բիւրոյին նոյն շրջանի կազմակերպական բոլոր խնդիրներու համար յատուկ քննիչ ուղարկել եւ վերջնականապէս կարգադրել նոյն շրջանի գործերը:

Թ. ՆԻՍ

Գրաւոր պրոպագանտ քրդախօս հայերու մէջ

Տեղեկաբեր ընկերներու գեկուցումներէն պարզուեցաւ որ Թուրքիոյ զանազան գաւառներուն մէջ կան այնպիսի վայրեր, ուր հայ ազգաբնակչութիւնը զրկուած է ոչ միայն կուլտուրական, տնտեսական եւ այլ հասարակական յառաջ մղիչ պայմաններէ, այլ զրկուած է իր մայրենի լեզուէն անգամ, բան մը, որ մեծ չափով կը նպաստէ անոնց աննախանձելի վիճակի ամրացման, ինչպէս նաեւ իրենց ծայրայեղօրէն յետամնաց դրութեան շարունակման:

Նկատի ունենալով նաեւ այն, որ գաւառական նոյն յետամնաց վայրերուն մէջ կը պակսի նաեւ սահմանադրական տարրական ազատութիւններու գործադրութիւնը, որ վերոյիշեալ աննպաստ պայմաններու պատճառով՝ շահագործող, վախառու եւ յետադիմական դասերը դեռեւս կը տիրապետեն տեղերը սանձարձակօրէն, Ռայ. ժողովը անհրաժեշտ նկատեց գրաւոր թէ բանաւոր պրոպագանդ մղել նոյն վայրերու քրդական գիւղերուն մէջ, այս նպատակով հրատարակել յատուկ բրոշուրներ հայերէն տառերով ու քրդերէն լեզուով,

15.- Բարձրաբերդ-Կարինի շրջանին մէջ Արծիւ Երզնկան է, Խորածորը՝ Զիլին: Վիշապաձոր-Տիգրանակերտի շրջանին մէջ Նփրկերտը Ծարդին քաղաքն է, Փրակերթօ ծածկանունով:

որոնք սակայն կազմուած լինին միանգամայն պարզ, դիւրամատչելի եւ գաւառի կեանքն ու կարիքները շօշափող նիւթեր:

Ռայ. ժողովը կը յայտարարէ պատշաճ մարմիններուն դիւրամատչելի լեզուով բրոշուրներ հրատարակել նախ այն պատճառով ու այն հաւատքով, որ վերոյիշեալ ձեւի բրոշուրներ իրենց շօշափած նիւթերով կարող են մեծապէս նպաստել նաեւ մեր դրացի քիւրդ տարրի զարգացմանը, որը նոյնպէս, զրկուած յառաջդիմական նպաստաոր պայմաններէ, խորապէս կարիքն ունի ներկայ քաղաքական-տնտեսական պայմանները շօշափող ու պարզաբանող հրատարակութիւններու:

Միջոցներ կազմակերպական վիճակը բարելաւելու

Թէ՛ տեղեկագրերէն եւ թէ՛ ընկերներու տուած գեկուցումներէն պարզուեցաւ, որ կազմակերպական գործերը, համարեա՛ բոլոր շրջաններուն մէջ, կը գտնուին թոյլ ու աննախանձելի դրութեան մէջ: Ընդհանուր այս թուութեան համար, մի քանի ժամանակներէ ի վեր սկսած հակադաշնակցական պայքարը որքան ալ ունենայ իր բացասական ազդեցութիւնը դաշնակցական շարքերուն վրայ, սակայն եւ այնպէս կազմալուծման գլխաւոր պատճառը կը բացատրուի անով որ դաշնակցական շարքերը չեն ներկայացներ դեռեւս պահանջուած հասունութիւնը, որ անոնք մեծ մասամբ դեռեւս չեն իւրացուցած կազմակերպութեան քաղաքական-տնտեսական աշխարհահայեացքը եւ անոր հասարակական բնոյթը, եւ որ վերջապէս առօրեայ հրատապ խնդիրներու մէջ իսկ կազմակերպուած տարրը չ'ունենար ոչ մի մասնակցութիւն, երեւոյթ մը, որ ինքնին անգործութեան կը դատապարտէ զանոնք եւ որ ինքնին կարելոր պատճառ մ'է կազմալուծման. Ռայ. ժողովը ի նկատի ունենալով այս բոլորը, որոշեց՝

Ա) Ծանօթացնել խմբերը Դաշնակցութեան անցեալ պատմութեան հետ եւ սիստեմատիկ կերպով բացատրել անոնց Դաշնակցութեան ծրագիրը, ինչպէս նաեւ անոր աշխարհահայեացքը հասարակական բոլոր խնդիրներու մէջ:

Բ) Իւրաքանչիւր վայրի մէջ օրուայ հրատապ խնդիրներուն ջանալ մասնակից դարձնելու դաշնակցական խմբերը եւ, առաւելապէս, պետական ու ազգային մարմիններու ընտրութիւններուն:

Գ) Ամէն առիթէ օգտուելով պարզել մեր հասարակական դաւանանքն ու տեսակէտները:

Ժ. ՆԻՍ

Վերաքննութիւն Ազգ. Սահմանադրութեան

Զեկուցանող ընկ. Վաղարշ շեշտելով Ազգ. Սահմանադրութեան անհրաժեշտութեան վրայ, որպէս նախաքայլը ազգային կուլտուրական ինքնավարութեան, պարզեց նաեւ այն պակասաւոր կէտերը, որոնք գոյութիւն ունին նոյն սահմանադրութեան մէջ եւ որոնց համար անհրաժեշտ նկատեց ընդունիլ Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան սկզբունքը:

Զեկուցանող ընկերը կանգ առնելով ընտրական սկզբունքի վրայ, շեշտեց՝ որ նոյն սկզբունքի թերի սխտեմին պատճառով Ազգ. Երեսփ. ժողովի 140 անդամներուն 100ը կ'ընտրուին Պոլսէն, որոնց 20ը միայն հոգեւորական, 80ը աշխարհական. իսկ մնացած 40ը միայն հայկական գաւառներէն, որուն աչքի ընկնող մէկ մասը նոյնպէս կ'ընտրուի պոլսաբնակներէն: Այս երեւոյթը խոշոր չափով արգելք կը հանդիսանայ գաւառի կարիքները հարազատութեամբ եւ ուժեղ կերպով արտայայտելու Ազգ. բարձրագոյն ժողովի առաջ: Միւս կողմէն Պոլիսը չունենալով իր ուրոյն գաւառական երեսփ. ժողովը, Ազգ. երեսփ. կեդրոնական ժողովը յաճախ կը դատապարտուի զբաղելու միմիայն պոլսական խնդիրներով, մոռացութեան մատնելով բազմաթիւ գաւառներու բազմապիսի ցաւերն ու կարիքները: Բացի այս, ընկերը կանգ առաւ նաեւ այն երեւոյթի վրայ, որ Ազգ. Սահմանադրութիւնը լինելով հանդերձ ազգային կուլտուրական կեանքի օրինականացած ինքնավարութիւնը, սակայն եւ այնպէս նոյն կուլտուրական պահանջներու համար միջոցներ հայթայթելու խնդիրը դրուած է միմիայն բարոյական պարտաւորութեան հիմերու վրայ, առանց օրինական յատուկ տրամադրութեամբ իրաւասութիւն տալու ազգային իշխանութեան՝ հայթայթելու նոյն ազգ. կուլտուրական պահանջներու համար անհրաժեշտ միջոցները, ինչպէս օրինակ կրթական տուրքը, բան մը, որ անհրաժեշտ է կրթական վիճակի բարելաւման համար:

Ընկ. Վաղարշի տուած տեղեկութիւններէն յետոյ, Ռայ. ժողովը ընդունելով Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան սկզբունքը, որպէս վերաքննելի կէտեր՝ կանգ առաւ հետեւեալ խնդիրներու վրայ:

Ա) Հայկական բոլոր գաւառները, ինչպէս եւ Պոլիսը, ազգաբնակչութեան որոշ թուի համեմատութեամբ կուտան Ազգ. կեդրոնական Երեսփ. ժողովին հաւասար թուով պատգամաւորներ: Պոլիսը որպէս ուրոյն շրջան ունենալու է իր ուրոյն գաւառական երեսփ. ժողովը:

Բ) Վերացնել ընտրութեան ցենզը եւ ընտրուելու միւսմում 25 տարին իջեցնել 21-ի:

Գ) Հոգեւորականութիւնն որպէս առանձին դասակարգ չպիտի մասնակցի ազգային ժողովներուն. իւրաքանչիւր հոգեւորական որպէս պարզ քաղաքացի ընտ-

րելի է միաժամանակ եւ կ'ընտրուի ժողովրդական քուէով:

Դ) Սահմանել օրինական յատուկ տրամադրութիւն մը Ազգ. Սահմանադրութեան մէջ, որով ազգային իշխանութիւնները հնարաւորութիւն ունենան միջոցներ ձեռք բերելու ազգային կրթական ու կուլտուրական խնդիրներու զարգացման համար, եւ իրաւասութիւն՝ որոշումները գործադրելու:

Ե) Ազգային Սահմանադրութիւնը էապէս ազգային դարձնելու համար, միջոցներ մտածել լուսաւորչական համայնքի հետ կապելու նաեւ այլադաւան հայերը:

Ձ) Ազգ. Երեսփ. կեդրոնական ժողովը իր զբաղումներու համար կ'ունենայ իր յատուկ ժամանակաշրջանը. զբաղումներուն ժամանակամիջոցին համար ընդունիլ պատգամաւորները վարձատրելու սկզբունքը:

Ռայ. ժողովը գտնելով անհրաժեշտ Ազգ. Սահմանադրութեան մէջ վերոյիշեալ կէտերու լրացումը, անոնց գործադրութեան պայմանամիջոց կ'առաջարկէ. ա. Գումարել Ազգ. Երեսփ. ժողով մը իւրաքանչիւր վայրի ազգաբնակչութեան թուի համեմատութեամբ ընտրուած պատգամաւորներով, եւ կեդրոնական ժողովի քննութեան ենթարկել թէ՛ այս եւ թէ՛ Սահմանադրութեան վերաբերեալ այլ կէտեր:

բ. Ազգ. Երեսփ. ժողովի անդամներուն, ընկերներուն եւ առհասարակ բոլոր քաղաքացիներուն մէջ պրոպագանդ մղելով արծարծել նոյն խնդիրները եւ մտքեր պատրաստելու Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան համար:

*
**

Ազգային դպրոցներ եւ պետական վերահսկողութիւն.— Տեղեկութիւններ առնելու համար վերջերս կառավարութեան կողմէ եղած յաճախակի դիմումներու առթիւ, ժողովը երկար վիճաբանութիւններէ յետոյ որոշեց՝

Նկատելով որ, ինչպէս իւրաքանչիւր քաղաքակիրթ պետութիւն, այնպէս եւ Օսմ. պետութիւնը դպրոցական եւ այլ կարգի վիճակագրութիւններու համար անհրաժեշտօրէն պէտք ունի իմանալու իր պետական շրջանակին մէջ գոյութիւն ունեցող դպրոցներու, ուսուցիչներու եւ այլ խնդիրներու ճշգրիտ թուերն ու պատկերը. նկատելով նաեւ որ նման յարաբերութիւններու համար՝ Ազգային Սահմանադրութեան ոգոյն համաձայն գոյութիւն ունին արդէն ազգային իշխանութիւնները, Ռայոն. ժողովը ընդունեց՝ Որ կառավարութեան յարաբերութիւնը ազգային դպրոցներու մասին զանազան տեղեկութիւններ քաղելու համար՝ պէտք է կատարուի միմիայն Ազգ. իշխանութիւններու միջոցաւ:

ԺԱ. ՆԻՍ

Ռայոնական ժողովի պատգամաւորներու թուի ճշդումը

Ռայոն. ժողովը նկատի ունենալով մի շարք վայրեր, որոնք հակառակ իրենց գործ դրած աշխատութեանց հնարաւորութիւն չեն կրնար ունենալ կազմակերպական կանոնագրի համաձայն կենտր. կոմիտէներու վերաբերմամբ պահանջուած ցենզը լրացնելու, զրկուելով այսպիսով կազմակերպական բարձրագոյն ժողովներուն մասնակցելու իրաւունքէն, որոշեց՝

Այն շրջանները, որոնք հակառակ իրենց գործ դրած ջանքերուն չեն կարողանար լրացնել կանոնագրով պահանջուած ցենզը, — իրենց Երջանային կոմիտէի եւ Երջանային ժողովի կողմէ Ռայոն. ժողովին կ'ուղարկեն մէկ մէկ պատգամաւոր, առաջինը խորհրդակցական, իսկ վերջինը վճռական ձայնի իրաւունքով:

*
**

Համերաշխական ժողով

Օրակարգի այս խնդրի վերաբերմամբ ժողովն անհրաժեշտ նկատեց վերջին ժամանակներս Պոլսոյ մէջ կայացած հայ կուսակցութիւններու համերաշխական ժողովի մասին տեղեկութիւններ քաղել: Ընկեր Ռոստոմը, որպէս իրագեկ՝ համառօտ գեկուցում տուաւ համերաշխական ժողովի, անոր բնաւորութեան, անոր ընթացքի եւ վախճանի մասին:

Զեկուցումէն վերջ Ռայոն. ժողովը ծանօթացաւ նաեւ համերաշխական ժողովի առթիւ Հնչակեան վերջին ընդհանուր ժողովի ընդունած բանաձեւի հետ, եւ նկատելով որ՝

Համերաշխական ժողովի կանոնաւոր ընթացքը ընդհատուել է Հնչակեան վերջին ընդհանուր ժողովի որոշման հետեւանօք, որ Համերաշխական ժողովի առթիւ ընդունուած որոշման մէջ կարեւոր դեր են խաղացեր Հնչակեան կուսակցութեան մէջ բոյն դրած այնպիսի տարրեր, որոնք ոչ միայն որեւէ առնչութիւն չունին ընկերվարութեան հետ, այլեւ իրենց էութեամբ հակառակ են հայ ժողովրդի ամէն մէկ ռամկավար քայլին:

Նկատելով որ այդ տարրերու հետ եւ անոնք, որոնք կամ դաշնակցական շարքերէն արտաքսուած եւ կամ անընդունակ են ոեւէ շինարար դրական աշխատանքի, համերաշխութիւնը պիտի նկատէին կաշկանդող հանգամանք մը իրենց սովորական գործելակերպին համար եւ բնականօրէն պիտի ձգտէին քանդել սկսուած համերաշխութեան փորձը:

Նկատելով նաեւ որ տարիներու ընթացքին մէջ համերաշխութիւն քարոզող եւ միւս յեղափոխական կու-

սակցութիւնները դատապարտող Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, որ միեւնոյն տարրերու ճնշման տակ ինքը նահանջի դիմեց, հէնց որ հարկ եղաւ համերաշխութեան առաջին գործնական քայլերն իրականացնել,

Ռայոնական ժողովը յայտնելով իր ցաւը կատարեալ իրողութեան մասին, միաժամանակ որոշեց՝

Ա. Ռայոնի մարմիններուն յանձնարարել՝ շարունակելի համարելու Պոլսոյ Համերաշխական ժողովի որոշումները:

Բ. Մասնաւորապէս չզբաղուել հնչակեան որոշ մամուլի միջոցաւ տարածուող սուտերու, զրպարտութիւններու մերկացումներով:

Գ. Ամէն կերպ աջակցել հնչակեան այն մարմիններուն եւ խմբակներուն, որոնք անկեղծօրէն կանգնած են յեղափոխական, ընկերվարական հողի վրայ:

ԺԲ. ՆԻՍՍ

Ապրուստանի¹⁰ կազմակերպական վիճակը եւ բանտարկեալ ընկերները

Ապրուստանէն եկած ընկ. Արմէնը գեկոյց այնտեղի ընդհանուր կազմակերպական վիճակի մասին: Հնարաւորութիւն չունենալով իւրաքանչիւր տեղի մասին ճշգրիտ եւ ամփոփ թուեր տալու, նա նախ եւ առաջ պարզեց ընդհանուր վիճակը, կանգ առնելով նաեւ քաղաքներու վրայ առանձին առանձին:

Մեծ Քաղաք¹⁶.— Ժամանակէ մը ի վեր կառավարութիւնն առանձին ուշադրութիւն է դարձուցած Մ. Ք.ի վրայ, եւ խստութիւններն այնտեղ կրկնակի կերպով ծանրացած են քան մնացած վայրերը: Զնայած ասոր սակայն, Մ. Ք.ի մէջ կան կազմակերպուած կանոնաւոր խմբեր, կազմակերպուած առաւելապէս քաղաքական կուռի համար, որոնց թիւը կը հասնի մօտաւորապէս 200-ի: Արհեստակցական միութիւններ բնաւ գոյութիւն չունին: Կազմակերպուած քաղաքական խմբերը կը կառավարուին իրենց եւ բանուորական միութիւններէ ընտրուած տեղական կոմիտէով, տիրող դժնդակ պայմաններու պատճառով, ինչպիսիք են՝ զինուորականութիւն, լրտեսական վոհմակներու գործած բիրտ ճնշումները եւայլն եւայլն:

Խմբերու մէջ ժողովներ տեղի կ'ունենան շատ քիչ եւ ուշ-ուշ: Հակառակ այս բոլորին, ընդհանուր տրամադրութիւնը թէ՛ կազմակերպուած շարքերու մէջ եւ թէ՛ հասարակութեան մէջ բարձր է եւ լաւ: Հակաեղափոխական եւ հակադաշնակցական տարրերը, չնայած իրենց գործ դրած անդուլ ջանքերուն եւ պրոպոկասիոններուն, չեն յաջողիր ժողովրդականութիւն ձեռք բերել,

ընդհակառակը՝ կարելի է ըսել, որ ժողովուրդը ներկայիս աւելի քան երբեք կը զգայ Դաշնակցութեան անհրաժեշտութիւնը, երեւոյթ մը, որու մէկ ապացոյցը կարելի է նկատել այն՝ որ հոգաբարձական ընտրութիւններու ժամանակ՝ հակադաշնակցական տարրերը համարեալ թէ սեւացան, եւ անոնց թեկնածուները, բացառութեամբ մէկ երկուսի չընտրուեցան ամբողջութեամբ:

Ոսկանապատ¹⁷.— Կազմակերպական վիճակը համեմատաբար միտքարական է, եւ կարելի է ըսել, որ Ոսկանապատը միակ վայրն է, ուր մտաւոր հասունութիւն ներկայացնող բանուորական միութիւնները գոյութիւն ունին: Բանուորական միութիւններն այնտեղ ունին 4 պրոպագանդիստ ընկերներ, որոնք նոյն շարքերու մէջ պրոպագանդ կը մղեն: Լաւ են կազմակերպուած նաեւ անոր չրջակայ արուարձանները:

Մրգաստան¹⁸.— Ստացուած վստահելի տեղեկութիւններու համաձայն քաղաքը եւ շրջակայ գիւղերը կազմակերպուած են:

Քար¹⁹.— Նախ քան ընդհանուր ձերբակալութիւնները գոյութիւն ունէին լաւ կազմակերպուած խմբեր-ձերբակալութիւններէ վերջ կազմալուծուած են:

Այգեստան²⁰.— Մօտաւորապէս հինգ ամիս առաջ այնտեղ գումարուած ժողովի մը մէջ բռնուեցան շարք մը տղաբնիկներ, որուն պատճառով ալ քայքայուեցաւ գոյութիւն ունեցող կազմակերպութիւնը:

Նաւահանգիստ²¹.— Տեղացիներու ցանկութեամբ այնտեղ ուղարկուած էր պրոպագանդիստ ընկեր մը, որը բաւական լաւ գործունէութիւն ցոյց տուաւ: Դժբախտաբար պրոպագանդիստ ընկերը բռնուեցաւ շուտով եւ ստեղծուած կազմակերպութիւնն ալ քայքայուեցաւ իրմէ յետոյ:

Չրաբերդ²².— Չրաբերդի ինչպէս նաեւ մնացած համարեալ բոլոր վայրերու մէջ ալ գոյութիւն չունին լուրջ կազմակերպութիւններ եւ որոնք կանոնաւոր յարաբերութիւնն ալ չեն պահեր Կենտրոնական Մարմնի հետ: Ընդհանրապէս կարելի է ըսել որ կեանքը մեռած է, դրութիւնն անմխիթարական: Հատուկտոր ընկերներ կան համարեալ ամէն տեղ, բայց անոնք ցրուած են այս ու այն կողմ, եւ անհրաժեշտ է կարող ու հեղինակաւոր ձեռք մը, որ կարողանայ միացնել, ի մի հաւաքել ցրուած ուժերը եւ իրարու հետ կապել զանոնք: այս պարագային միայն կարելի է ըսել, որ կազմակերպական կեանքը կը կենդանանայ անպայման:

Բանտարկեալ ընկերներ.— Բանտարկեալ ընկերներու դրութիւնը որքան ալ ծանր է ու անմխիթար, բայց

16.- Մեծ-քաղաքը՝ Թիֆլիսն է:
17.- Ոսկանապատը՝ Պաքուի Կեդր. Կոմիտեուփիւնը:
18.- Մրգաստանը՝ Երեւանի Կեդր. Կոմիտեուփիւնը:
19.- Քարը՝ Ալեքսանդրապոլի Կեդր. Կոմիտեուփիւնը:
20.- Այգեստանը՝ Գանձակի Կեդր. Կոմիտեուփիւնը:
21.- Նաւահանգիստը՝ Պաթումի Կեդր. Կոմիտեուփիւնը:
22.- Չրաբերդը՝ Կարսի Կեդր. Կոմիտեուփիւնը:

անոնք իրենց զիրենք կը պահեն շատ լաւ եւ արի:

Թէ՛ բանտարկեալներուն եւ թէ՛ անոնց կարօտ ընտանիքներուն երբեմն երբեմն մասնակի օգնութիւններ կը լինին:

Չրացի ազգութիւններ.— Կովկասեան դրացի ազգերու մէջ համայնական յեղափոխական գաղափարները սկսած է նորէն խմորուիլ: Տիրող դժնդակ կարգերուն դէմ դժգոհութիւնը գնալով կը զարգանայ, թէ ուսեւորու, թէ վրացիներու եւ թէ թուրքերու մէջ: Վերջին ժամանակներ մանաւանդ թուրքերու մէջ նկատելի է շարժում մը կազմակերպուելու վերաբերմամբ: անոնք այժմ տխուր յիշողութիւններով կը նային դէպի անցեալը եւ բաւականաչափ լուրջ քայլեր կ'առնեն կազմակերպուելու համար:

Կովկասի ընդհանուր վիճակը ներկայիս շատ անձուկ է, նա որ իր կարեւոր դերն է խաղացեր հայ յեղափոխական պատմութեան մէջ:

Ընկ. Արմէնի տուած գեկուցումէն յետոյ Ռայ. ժողովը ընդունելով չափազանց անհրաժեշտ թէ՛ բանտարկեալ ընկերներուն եւ թէ՛ կովկասեան յեղափոխական շարժման սատարելու սկզբունքը, որոշեց՝

Ա. Հնարաւոր բոլոր միջոցներով նպաստել կովկասահայ յեղափոխական գործին, թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս, պատշաճ մարմնի միջոցաւ:

Բ. Յատուկ ուշադրութիւն դարձնել թուրք յեղափոխական շրջանակներու հետ համերաշխ գործունէութիւն մշակելու աշխատանքին վրայ:

Գ. Ռայ. ժողովի անունով յատուկ յայտարարագիր ուղարկել բոլոր մարմիններուն, կովկասահայ բանտարկեալներու օգտին ընդհանուր հանգանակութեան ձեռնարկելու թէ՛ քաղաքներու եւ թէ՛ գիւղերու մէջ, այսպիսով նորէն ամրացնելու (համար) կովկասահայ եւ տաճկահայ տարրի միջեւ ընդհանուր ազգային կապը:

Բացի այս, ժողովը նկատի առնելով որ կը մօտենայ բանտարկեալներու դատաւարութեան օրը եւ որ գուցէ շուտով անոնք ստանան իրենց մեղադրական ակտերը, նկատելով նաեւ որ մեղադրական ակտի այն մասը, որ որպէս դաշնակցական բանտարկեալներու պիտի բնորոշէ իրենց պատկանած կազմակերպութեան ընդհանուր բնոյթը, եւ որը անպայման կազմուած կը լինի բոլորովին սուտ ու սխալ տեղեկութիւններու, ինչպէս նաեւ անուանարկիչ զրպարտութիւններու վրայ, որը անկասկած պրոպագանդիստ խոշոր նիւթ պիտի դառնայ ընդհանրապէս հակաեղափոխական, մասնաւորապէս հակադաշնակցական տարրերու ձեռքին՝ անուանարկելու Դաշնակցութիւնը հասարակութեան առաջ,

Ռայ. ժողովը որոշեց՝ մեղադրական ակտը ստանալէ անմիջապէս յետոյ դաշնակցական երկու Բիւրոններու խորհրդակցութեամբ, յատուկ բացատրական նամակով պարզել Դաշնակցութեան իսկական դերը:

ԺԳ. ՆԻՍՏԸ

Մեր վերաբերմունքը դէպի Մէճլիսի Ումումիի եւ Պէլէտիէի ընտրութիւնները²³

Ընդունելով որ վերոյիշեալ մարմիններէն իւրաքանչիւրն ալ կարեւոր ազդակներ են մեր երկրի յառաջդիմութեան եւ սաղմերը՝ ապագայ նահանգային վարչական ու նահանգային ապակեդրոն ու ինքնավար դրութեան, նկատելով որ անոնցմէ իւրաքանչիւրը իրենց այժմեան վիճակով իսկ կարեւոր միջոցներ են, հաղորդակցութեան միջոցներէ ի սպառ գուրկ օսմ. երկրի, իւրաքանչիւր նահանգի ու քաղաքի գործերու մէջ մասը գոնէ տեղացիներու ուժով տեղւոյն վրայ գործադրելու, բայց որոնք տակաւին բոլորովին թերի են ու պակասաւոր ժողովրդական լինելէ, ինչպէս նաեւ հետու են համապատասխանելէ մեր երկրի պահանջներուն յատուկ ինքնուրոյն դիրքէ. նկատելով որ անոնցմէ իւրաքանչիւրը, առաւելապէս Մէճլիսը Ումումիին (Նահանգին Ընդ. ժողով), չնայած իրեն վերապահուած չափազանց կարեւոր դերին, սակայն եւ այնպէս չի վայելեր պահանջուած իրաւունքները, որ՝ իւրաքանչիւր նահանգի կուսակալ Մէճլիսի Ումումիի վերջին օրինագծով կը վայելէ անհամեմատ աւելի լայն իրաւասութիւններ՝ քան ամբողջ նահանգային ժողովն ինքը. նկատելով որ ընտրական սխտեմն ալ նոյնպէս մշակուած է ոչ բոլորովին ռամկավար ձեւով,— Ռայ. ժողովը ընդունելով հանդերձ վերոյիշեալ մարմիններու իւրաքանչիւր մէկի ընտրութեան մասնակցելու սկզբունքը, միաժամանակ որոշեց՝

Ա. Թէ՛ պարլամենտական պատգամաւորներն եւ թէ՛ դուրսը, ընկերներու եւ հասարակութեան մէջ պրոպագանդ մղել, բողոքի դասախօսութիւններ կազմակերպել, եւ ամէն կերպ աշխատիլ ժամանակի ոգուն եւ պահանջներուն համաձայն ռամկավարացնել անոնց ընտրական սխտեմնը:

Բ. Ընդարձակել Մէճլիսի Ումումիի օրէնսդրական իրաւասութիւնը նահանգային խնդիրներու վերաբերմամբ:

Գ. Իտատէի ժողովին մէջ պաշտօնի բերումով մասնակցողներէ գատ, աւելցնել անոնց թիւը ժողովրդական ընտրութեամբ:

Դ. Աւելացնել նոյնպէս Պէլէտիէի անդամներու թիւը, անոնց մէջ կազմելով նաեւ թէ՛ քաղաքային խորհուրդ եւ թէ՛ գործադիր վարչութիւն:

Հողային խնդիր

Ժողովին մասնակցող իւրաքանչիւր պատգամաւոր բերանացի համառօտ գեկուցում տուաւ ժողովին իր

23.- Մէճլիս Ումումի – Գահանգային խորհուրդ. Պէլէտիէ – քաղաքապետութիւն:

չըջանի մէջ գոյութիւն ունեցող հողային գրաւումներու թուի եւ անոնց գրաւման ձեւի մասին:

Թէ տեղեկագրերէն եւ թէ տրուած գեկուցումներէն պարզուեցաւ որ ռայոնի ամէն մէկ վայրի մէջ գոյութիւն ունին բազմաթիւ խնդիրներ, բոլորն ալ գանազան ձեւերով տրուած: Բացի այս, կան գանազան տեղեր, առաւելապէս Սասնոյ, Խոյթի, Բռնաչէնի եւ Փսանաց գաւառներուն մէջ, ուր մինչեւ հիմա եւս կը շարունակուի ճորտատիրական դրութիւնը, եւ ուր գանազան բէկերու ձեւերով ոչ միայն հողեր են գրաւուած այլեւ մարդիկ, որոնք կ'անցնին ձեռքէ ձեռք իրեւ ապրանք, վաճառք, եւ գրաւուած հողի այս կամ այն տարածութեան վրայ բնակուող ժողովուրդը ենթակայ է նորանոր աղէտներու եւ բէկերու շահատակութիւններուն:

Նոյն շրջանի պատգամաւորը պարզեց որ Սասնոյ շրջանին մէջ կան բաւական տեղեր, որոնց համար թափուէ՞ բոլորովին գոյութիւն չունի, ոչ հայերու եւ ոչ ալ քրտերու մէջ, բայց տասնեակ տարիներէ ի վեր հայերը մշակեր, վարեր ու ապրեր են նոր հողերու վերայ եւ կատարելապէս վճարել պետական հարկը: Բէկերու կողմէն հայերու դէմ դատեր բացուած են դատարանական ճանապարհով գրաւելու նոյն հողերը: Հայերը ի նկատի ունենալով դատարաններու մէջ բէկերու ունեցած բազմաթիւ ազգական-բարեկամ պաշտպաններու գոյութիւնը, կը մերժեն դատարան երթալ, եւ խնդիրը այսպէս ալ կը մնայ առ այժմ: Բայց հաւանական է որ վերջիվերջոյ բէկերը գան ու բռնի գրաւեն հայերու մշակած նոյն հողերը:

Բէկերը եւ առհասարակ հողեր բռնագրաւող բոլոր աղաները վերջերս չափազանց շատ քաջալերուած են տեղական կառավարութեան այն ընթացքէն, որով հայերու հողերուն վերայ բռնի կերպով բնակող մուսուլմանները եւ ուրիշները որոնք դուրս հանուած էին Սահմանադրութենէն յետոյ, նորէն բերելով հաստատեց նոյն հողերուն վերայ:

Ընկերներու հաղորդած գեկուցումներէն յետոյ ընկեր Վարդգէս պարզեց ընդհանուր առմամբ կառավարութեան եւ իթթիհատեան շրջանակներու մէջ տիրող տրամադրութիւնը նոյն ցաւոտ խնդրի վերաբերմամբ եւ պատմեց նաեւ այն փուլերը, որոնցմէ անցեր է ցարդ հողային խնդիրը կառավարութեան շրջանին մէջ:

Ընկ. Ռոստոմ հողային խնդիրը բաժանած է երեք գլխաւոր մասերու:

Ա. Բռնի գրաւուած հողեր, որոնք օրինական ձեւակերպութիւններով վաւերացուած չեն կառավարութեան կողմէ եւ որոնց գրաւողները չունին թափու քուչաններ: Այսպիսիները դատարանական գործողութիւններով յանձնուելու են իրենց տէրերին:

Բ. Սպառնալիքով կամ չնչին գումարով գրաւուած եւ օրինական ձեւակերպութիւններով ապրողներու վրայ վաւերացուած հողերը, զորս նոյնպէս ջանալու է

լուծել, վարչական ճանապարհներով:

Գ. Ընդհանուր հողային խնդիր, որ կը վերաբերի թուրքիոյ բոլոր գիւղացիներուն, հայ, թուրք, քիւրտ եւ այլն:

Տերէբէյական շրջանի մէջ ժողովուրդը կը ճանչնար միայն մէկ տէր, տերէբէյին: Ժողովուրդը միայն անոնց տուրքեր կը վճարէր, իսկ կեդրոնական կառավարութեան հետ ոչ մի անմիջական կապ չունէր. անոր հետ յարաբերութիւն ունէին միայն իրենք տերէբէյիներ: Ժողովուրդը հպարտակ կը վարուէր տերէբէյիներուն: Երբ կեդրոնական կառավարութիւնը խորտակեց տերէբէյիներու քաղաքական ուժը եւ սահմանեց իր տուրքերը, բնականաբար պիտի ոչնչանային տերէբէյական տուրքերը: Այդպէս չեղաւ սակայն շատ վայրերու մէջ: Խոչոր տերէբէյիներու ժառանգները կը շարունակէին գանձել իրենց սովորական տուրքերը: այսպիսով աշխատաւոր գիւղացիութիւնը ստիպուած եղաւ տուրքերը վճարել երկու իշխանութիւններուն, կեդրոնական կառավարութեան եւ տերէբէյիներու ժառանգներուն: Նաեւ եղաւ հպատակ երկու տէրերու: Համարեան ռեժիմը ռուս-թուրքական պատերազմէն յետոյ առանձնապէս սկսաւ հովանաւորել աւատականներուն, նկատելով անոնց ուժը իբր անհրաժեշտ պայման իր սեփական գոյութեան: Այդ ընթացքն էր որ եղաւ հիմնապատճառը հայկական բոլոր աղէտներուն: Արդի սահմանադրական կարգերուն մէջ աւատականները զգալով, որ երկրին մէջ օրէնքը հաստատուելով իրենք պիտի զրկուին իրենց առանձնաշնորհեալ դիրքէն, կը ձգտին օրինական ձեւ տալ կեղեքումներուն. անոնք կը ձգտին ցոյց տալ, որ իրենց եկամուտները ոչ թէ տուրքեր են, երբեմնի հպատակներէ աւանդաբար գանձուող, այլ վարձ այն հողերուն համար, զորս կը մշակեն գիւղացիները: Այսպիսով իրենց վաղեմի իրաւունքները՝ կապուած գիւղացիներու հետ, իբրեւ հպատակներու, գանոնք կը փոխանցեն այժմ հողին, որու վրայ կ'աշխատին այդ գիւղացիները: Անոնք կ'ուզեն իբր անհատական սեփականութիւն ցոյց տալ այն հողերն, որոնց վրայ դարբէյ ի վեր արիւն քրտինք է թափել աշխատաւոր գիւղացիութիւնը:

Սահմանադրական կառավարութեան առաջին պարտականութիւնն է վերջ տալ աւատականներու ոտնձգութիւններուն՝ հասկցնելով օրէնքը, անջատել գիւղացիութիւնը՝ հայ, թուրք, քիւրտ եւ այլն տերէբէյիներու իշխանական լուծէն:

Ռայ. ժողովը թէ՛ գեկուցանող ընկերներու եւ թէ՛ ընկ. Ռոստոմի հաղորդած տեղեկութիւններէն յետոյ, նկատելով որ՝ հողային խնդիրները մեր գաւառներուն մէջ աղաղակող անարդարութիւններ են՝ գործուած

24.- Թափու, քուչան – սեփականատիրութեան փաստաթուղթ:

նախորդ ռեժիմի օրով, որուն հրամայողականօրէն անպայման վերջ պիտի տար սահմանադրական կառավարութիւնը, գործադրած լինելու համար Սահմանադրութեան ռեժիմը թիտղոս ամենատարրական արդարութիւնը:

Նկատելով որ քանի այս ցաւոտ խնդիրը լուծուած չէ արդարօրէն, մեր երկրի համար չափազանց անհրաժեշտ անդորրութիւնը չպիտի կարողանայ իրականանալ:

Նկատելով որ հողային այդ խնդիրներու լուծումը թողնել դատարանական միջոցներու վրայ ոչ միայն աւելորդ այլ եւ անարդար կը լինէր, քանի որ համարական կառավարութիւնը ուղղակիօրէն ինքն է եղեր քաջալերողը հողային բռնագրաւումներու. եւ հետեւապէս ալ ներկայ կառավարութիւնը վարչականօրէն ինքը պիտի ձգտի լուծել ցաւոտ խնդիրը:

Ռայ. ժողովը բացի մինչեւ ցարդ ձեռք առնուած միջոցներէն, որոշեց նաեւ միթիւնկներով, հանրագրերով եւ այլ միջոցներով ուժգին կերպով բողոքել կառավարութեան վարանոտ քաղաքականութեան դէմ – պահանջել հողային խնդրի արդար լուծումը:

Ժողովը որոշեց նաեւ իրաւագրկուած բոլոր տարրերուն կողմէն, առանց ցեղի եւ ազգի խտրութեան, հանրագրութիւններով բողոքել նաեւ բէկերու, աղաներու գործած գրաւումներու, ինչպէս նաեւ անոնց ձգտումներուն դէմ, որով անոնք կ'աշխատին օրինական սեփականատէր հանդիսանալ աշխատաւոր ժողովրդի հողերուն, հիմնուած տերէբէյական ժամանակներէն իրենց ունեցած առանձնաշնորհեալ դիրքի եւ գանձուած տուրքերու վրայ:

ԺԴ. ՆԻՍ

Պարսկաստանի ներկայ վիճակը եւ մեր վերաբերմունքը

Տարիներու ընթացքին մէջ մղուած արիւնոտ պայքարը, ինչպէս յայտնի է, դեռեւս հասած չէ Պարսկաստանի մէջ այն ցանկալի վախճանին, եւ վերջերս մանաւանդ արտաքին ոտնձգութիւններէ խրախուսուած՝ միապետական տարրերն այնտեղ նորէն սկսած են պայքարի մտնել սահմանադրական կառավարութեան հետ ուժեղ կերպով, վտանգելով ոչ միայն ներքին անդորրութիւնը, այլեւ գոյութիւն ունեցող սահմանադրական կարգերը:

Ընկ. Ռոստոմ համառօտակի գեկոյց Պարսկաստանի ազատագրական շարժման նշանակութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութեան կատարած դերը նոյն շարժման մէջ: Իր գեկուցումէն յետոյ ընկերը ծանրացաւ նոյնպէս

Պարսկաստանի ներկայ տխուր վիճակին վրայ, գտնելով որ՝ ներկայ կացութիւնը այնքան լուրջ է, որ կարող է վտանգել արդէն իսկ գրաւուած քաղաքական ազատութիւնները:

Ռայ. ժողովը գեկուցումէն վերջ որոշեց. Յանձնարարել այժմէն Արեւելեան Բիւրոյին միջոցներ ստեղծելու թէ կողմասէն եւ թէ թուրքիայէն փոխադրելու անմիջապէս ռազմական օգնութիւն, ապահովելու համար այնտեղ սահմանադրական կարգերը:

Արհեստակցական եւ գիւղացիական միութիւններ

Թէ արհեստակցական եւ թէ գիւղացիական միութիւններու կազմակերպումը անմիջականօրէն ընկերով Դաշնակցութեան ծրագիր-կանոնագրէն, ժողովը վիճաբանեցաւ միայն կազմակերպման թեքնիքական յարմարութիւններու վրայ, եւ ընդունելով արհեստակցական եւ գիւղացիական միութիւններու անհրաժեշտութիւնը մեր կեանքի մէջ, որպէս տնտեսական կարեւոր գործառնութիւններ, բայց եւ նկատելով որ կազմակերպուելիք միութիւններու մէջ կարող են լինել եւ այնպիսի տարրեր, որոնք անհրաժեշտ չափով հասունութիւն չեն ներկայացնել ըմբռնելու կուսակցութեան սկզբունքներն ու աշխարհահայեացքը, Ռայ. ժողովը որոշեց.

Միութիւններու այդ մասը ղեկավարել առայժմ անկուսակցական հողի վրայ ընկերներու մասնակցութեամբ եւ ընդունիլ գանոնք կուսակցութեան մէջ միայն այն ժամանակ ու այնտեղ, երբ անոնք կը ներկայացնեն երաշխիք ըմբռնելու կուսակցութեան աշխարհահայեացքն ու գործելակերպը:

Պտէեանի խնդիրը

Պտէեանի խնդիրը Ռայ. ժողովի առաջ դրուած էր Դուրան-Բարձրաւանդակի մարմնի կողմէն, բայց ժողովը նկատելով որ՝ նոյն խնդիրը Դաշնակցական Խորհուրդին մէջ քննուած եւ յատուկ որոշում ալ տրուած է արդէն, որոշեց՝

Յայտնել իր ցաւը Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. Կոմիտէին, որ չնայելով թէ ինքը՝ նոյն մարմինը ծանօթ է արդէն Պտէեանի խնդրի Խորհուրդին մէջ քննուած լինելուն, ինչպէս նաեւ անոր մասին տրուած որոշման, սակայն եւ այնպէս նոյն խնդիրը իր կողմէն դրեր է նաեւ տեղույն Շրջանային ժողովի առաջ՝ նոր որոշում ընդունելու համար:

Բացի այս՝ ժողովը որոշեց իր կողմէն եւս առաջարկել Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. Կոմիտէին, անպայման գործադրել Խորհուրդի տուած որոշումը Պտէեանի խնդրի վերաբերմամբ ամէնէն մօտիկ ժամանակի մէջ:

ԺԵ. ՆԻՍՏ

Կեդր. Կոմիտեներու գործունէութեան խնդիրը

Ժողովի կողմէն ընտրուած հաշուեքննիչ յանձնախումբը տուաւ իր գեկուցումը Ռայ. Ժողովին մասնակցող Կեդր. Կոմիտեներու հաշիւներու ստուգութեան մասին: Բարձրաբերդի հաշիւներուն մէջ նկատելով մի քանի անորոշ կէտեր դիտողութիւն եղաւ այդ մասին. ներկայացուցչի տուած բացատրութիւններէն պարզուեցաւ որ նոյն հաշիւները քննուած են Շրջ. Ժողովի կողմէ եւ վաւերացուած:

Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. Կոմիտէի հաշիւներու աւթիւ, նկատելով որ Տեղական մարմինը իր ներքին գործերու համար ծախսեր է անհամեմատ շատ տուկոս (75%), որը մեր կանոնագրի նախատեսած տուկոսէն անհամեմատ շատ է, որոշեց նկատողութիւն ընել նոյն մարմնին, յանձնարարելով որ այսուհետեւ չափաւորեն իրենց ծախսը՝ մեր կանոնագրի նախատեսած սահմաններուն մէջ:

Բացի այս, նկատելով որ Դուրան-Բարձրաւանդակի մարմնի կողմէ Ռայ. Ժողովին ներկայացուած հաշիւները փոխանցուած չեն տեղւոյն Շրջ. Ժողովի կողմէն, յանձնարարեց նոյն հաշիւները ներկայացնել եւ վաւերացնել տալ Շրջ. Ժողովէն, արագացնելով Շրջ. Ժողովի գումարումը:

Նկատելով որ Շամի ինչպէս նաեւ Մովսիսի մարմիններու հաշիւներն ու տեղեկագիրները ներկայացուած չեն ժողովին, որոշուեցաւ պահանջել սոյն մարմիններէն իրենց հաշիւներն ու տեղեկագրերը:

Վիշապաձորի մարմնի հաշիւները կանոնաւոր էին:

Թէ գեկուցումէն եւ թէ ներկայացուած հաշուետուութենէն՝ նկատելով Բարձրաբերդի Կեդր. Կոմիտէի չափազանց թույլ ընթացքը, որը ի միջի այլոց նկատուեցաւ նաեւ Ռայ. Ժողովի նիստերուն կանոնաւոր չմասնակցելուն համար, ժողովը որոշեց նկատողութիւն ընել Բարձրաբերդի Կեդր. Կոմիտէին իր սոյն դատապարտելի ընթացքին աւթիւ, միաժամանակ յանձնարարելով որ Կեդր. Կոմիտէն իր պակաս անդամներու թիւը լրացնելու համար հրաւիրէ նոր ընկերներ, վերականգնելու համար իր գործունէութիւնը:

Նկատելով նաեւ որ Դուրան-Բարձրաւանդակի այժմեան Մարմինը ընտրուած չէ տեղւոյն Շրջ. Ժողովէն, Ռայ. Ժողովը որոշեց յանձնարարել նոյն մարմնին որ փութացնէ Շրջ. Ժողովի գումարումը, ընտրելու համար նոր Կեդր. Կոմիտէ:

Ընտրութիւն Արեւել. Բիւրոյի պակաս անդամներու

Ընտրուեցան ընկեր Անտոն եւ Թորոս, իսկ եթէ յիշուած ընկերներէն մէկն ու մէկը չկարողացաւ ստանձնել

իր պաշտօնը, այդ պարագային թողնել Արեւելեան Բիւրոյին լրացնելու իր թիւը²⁵:

Բացի այս ժողովը նկատելով որ Արեւելեան Բիւրոյին շրջանը կազմող Կեդր. Կոմիտէները ընդհանուր առմամբ իրենց բիւրօներէն Արեւելեան Բիւրոյին հասնելիք տուկոսը չեն հայթայթեր, երեւոյթ մը որ գլխաւոր արգելիչ պատճառ է հանդիսացեր Բիւրոյի գործունէութեան, նկատելով նաեւ որ նոր ընտրութեամբ ուժեղացած կազմը, որ պիտի ջանայ Սարուստանի հետ նոր կապեր եւ նոր գործունէութիւն ստեղծել, որը անշուշտ առանց համապատասխան եկամուտի չի կարող լինել, Ռայ. Ժողովը որոշեց յանձնարարել շրջանի բոլոր Կեդր. Կոմիտէներուն, որ այսուհետեւ իւրաքանչիւրը իր եկամուտէն Բիւրոյին հասնելիք բաժինը առ առաւելն երկու ամիսը մի անգամ անվրէպ ուղարկէ հաշիւներու հետ միասին:

Հարկերու թեթեւացում եւ հանրագրութիւններ

Ռայ. Ժողովը նկատելով որ՝ հարկերու ներկայ սիւտեմը համարեա թէ բացառապէս ծանրացած է աշխատաւոր դասակարգի վրայ, հանգամանք մը որ մեծ չափով խոչընդոտ կը հանդիսանայ երկրի տնտեսական զարգացման, որ՝ ունեւոր դասակարգը հարկերու բաշխման մէջ ալ կը վայելէ առանձին արտօնեալ վիճակ:

Նկատելով որ՝ հարկերու արդար բաշխումով Թուրքիոյ աշխատաւոր դասակարգը ազատել հարկերու ծանրութենէն, կը նշանակէ նպաստել նաեւ Սահմանադրութիւնը ժողովրդականացնելու անհրաժեշտ խնդրին, որոշեց՝

Պարլամենտական ընկերներու միջոցով նոյն հաստատութեան եւ պետական շրջանակներու մէջ շարունակել դարձեալ պայքարիլ հարկերու արդար բաշխման մասին, յառաջատուական սիստեմն ընդունելով որպէս ամենանպատակալարմարը ներկայ կարգերու մէջ:

Յանձնարարել ժողովին մասնակցող իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի, ամէն մէկն իր շրջանին մէջ, առանց ազգի եւ ցեղի խտրութեան հանրագրութիւններ պատրաստելու, միթիւններու միջոցաւ բողոքելու՝ հարկերուն ներկայ անարդար բաշխման փոխարէն պահանջելով յառաջատուական սիստեմը²⁶:

25.- Անտոնը՝ Չաւարեան Սիմոն է, Թորոսը՝ Ալոյեան Գալուստ, ծանօթ նաեւ Դարվիշ ծածկանուցում:
Ներկայ արձանագրութեան սեւագրին մէջ կը յիշուի որ Արեւելեան Բիւրոյի իրեն թեկնածու անդամ ընտրուած է Սիգ, որ ծածկանուցում է Վրացեան Սիմոնի:
26.- Ատենագրութեան սեւագրութեան տակ ստորագրած են՝ Մանուկ, Ռոստոմ, Բարսեղեան, Մարալ, Սեպուհ, Վրոյր եւ Ռեզուլ, այլ խօսքով՝ իրաւասու ձայն ունեցող պատգամաւորները:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ IV

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

«Կազմակերպական շրջաններ»ու բաժինը կը սկսինք Կ. Պոլիսով: Մինչեւ 1908 թ. ընդյատակեայ եւ առաւելաբար դաւադրական բնոյթի գործունէութեամբ յատկանշուող Պոլիսը (Վիշապ), Սահմանադրութեան հռչակումէն ասդին կը կազմակերպուէր արագ թափով: Նախկին փոքրաթիւ բջիջներու հիմքին վրայ կը ստեղծուէր կոմիտէներու եւ ենթակոմիտէներու ցանց մը մայրաքաղաքի հայկական թաղերուն եւ հայաշատ շրջակայքին մէջ, Թուրքիոյ եւրոպական բաժնէն մինչեւ Պրուսա՝ Փոքր Ասիոյ տարածքին:

Կեդր. Կոմիտէներուն չէր տառապեր, ինչպէս այլուր, մտաւորական ու ղեկավար ուժերու պակասէն: Հոն հաստատուած էին նախ՝ Պատասխանատու մարմնի եւ «Ազատամարտ»ի անդամներն ու խմբագրութիւնը, ապա, Հինգերորդ Ընդհ. Ժողովի աւարտին՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի (Թուրքիոյ հատուած) անձնակազմն ու բազմաթիւ գործիչներ: Հոն փութացած էին նոյնպէս տարագրութենէ վերադարձած ստուարաթիւ մտաւորականներ, յայտնի գրողներ ու արուեստագէտներ: Հետզհետէ պիտի ստուարանային նաեւ՝ սահմանէն անդին ցարական իշխանութեանց վարած հայահալած քաղաքականութենէն փախուստ տուող եւ այսպէս թէ այնպէս ազատական կարգեր ընդունած Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ ապաստան փնտրող դաշնակցական եւ այլ մտաւորականներն ու հասարակական գործիչները: Այնպէս որ հայկական Պոլիսը Սահմանադրութեան կարճատեւ տարիներուն, արտաքնապէս գէթ, կը ներկայանար քաղաքական, ազգային ու մշակութային աննախընթաց եռուզեռ ապրող ոստանի մը երեսոյթով:

Կուսակցական գետնի վրայ, վերոյիշեալ մթնոլորտին մէջ զարգացող կեանքը, ընդհանրապէս ետուն եւ դրական իր շատ մը երեսներով, գերծ չէր այսուհանդերձ կազմակերպական եւ յարաբերական կարգ մը անհարթութիւններէ: Իբրեւ կեդրոն՝ Պոլիս հաստատուած էին, ինչպէս ըսինք, նախ Պատասխանատու մարմինը, ապա, Հինգերորդ Ընդհ. Ժողովէն ետք, Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոն՝ Թուրքիոյ հատուածով: Որպէս գերադաս մարմիններ, այս վերջիններուն էր վերապահուած ընդհանուր խնդիրներու տնօրինումը՝ երեսփոխանական ընտրութիւններէն մինչեւ ազգային ու պետական շրջանակներու, մասնաւորաբար Իթքիհատի մարմիններուն հետ յարաբերութիւն պահպանելու հարցերը: Բայց եւ ասոցցումով շահագրգռուած էր միաժամանակ Կ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէն, եւ բնական է որ այս պայմաններուն մէջ, միեւնոյն միջավայրին մէջ գործող երկու մարմիններուն միջեւ ծագէին իրաւական կարգի տարակարծութիւններ: Ու որքան ալ որ խառն նիստերու միջոցով փորձուէր հաւաքական լուծումներ գտնել ներկայացող՝ երբեմն ամենօրեայ խնդիրներուն, զոյգ մարմիններու փոխադարձ իրաւասութիւններու ճշդումի հարցը կը մնար սեղանի վրայ, մանաւանդ

որ հետզհետեւ ինքզինք հաստատող Պոլսոյ Կ. Կոմիտէութիւնը կը դառնար աւելի պահանջկոտ եւ քննադատական՝ գերադաս մարմնի նկատմամբ:

Այս երեւոյթը, որուն խիստ դրսեւորումին կը հանդիպինք երբեմն Պոլսոյ Շրջանային ժողովներու արձանագրութեանց մէջ, եզակի չէ, այլ բնորոշ այն բոլոր վայրերուն, ուր տեղականին կողքին ներկայ է եւ կը գործէ գերադաս մարմին մը:

*
**

Պոլսոյ թղթածրարը կը բաղկանայ՝

1.- Փաստ. 1543-2 թուակիր տետրակէ մը, ուր տարբեր ձեռագրերով կը գտնուին.- ա.- «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէի», 1909 Օգոստ. - 1910 Դեկտ., ձեռագիր 16 էջ:

բ.- «Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Պոլսոյ Բ. Շրջանային ժողովի», գումարուած 1911 Յունուար 3-10, ձեռագիր 71 էջ:

գ.- «Տեղեկագիր Պոլսոյ Շրջ. ժողովի Հաշուեքննիչ յանձնախումբի», 1911 Յունուար, 11 էջ:

Արխիւներուն մէջ պահպանուած է նոյնպէս Կեդր. Կոմիտէի 18 Փետր. 1911ի ընդարձակ շրջաբերականը «Ամփոփում Պոլսոյ Բ^Գ Շրջանային ժողովի ատենագրութեան», մեծագիր 32 էջ, խմբարտիպ (փաստ. 878-16):

2.- «Հ.Յ.Դ. Պոլսոյ շրջանի Արտակարգ Գ. Շրջանային ժողովոյ ատենագրութիւնը», 1911 Յուլիս 12-19, ձեռագիր 98 էջ: Յայտնենք որ «արտակարգ» կը կոչուէին շրջանային ժողովները, որոնք կը գումարուէին Ընդհ. Ժողովի նախօրեակին եւ կը քննէին գլխաւորաբար վերջինիս օրակարգը: Ատով պէտք է բացատրել միեւնոյն տարուան ընթացքին երկու շրջանային ժողովներու գումարումը (1911 թ. Յունուար եւ Յուլիս):

3.- «Ազատամարտ»ի խմբագրութեան մէկ շրջաբերականը (1-10-1910) ուղղուած մարմիններուն եւ ընկերներուն:

Փաստ. 1543-2

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ

1909 ՕԳՈՍՏ. - 1910 ԴԵԿՏ.

Ընդհանուր ակնարկ.— Թուրքիոյ սահմանադրութեան հռչակումէն յետոյ, դէպի Դաշնակցութիւնը ստեղծուած տարերային համակրութեան հետեւանքով՝ Պոլսոյ եւ իր շրջանին մէջ, ինքնաբերաբերաբար թէ ընկերներու նախաձեռնութեամբ, կը կազմուէին դաշնակցական խումբեր թէ մարմիններ, որոնց ամէնն ալ իրենց ատենին կը կապուէին Պոլսոյ Պատասխանատու մարմնին հետ: Գոյութիւն առած կազմերը, ծնունդ վայրկեանի խանդավառութեան, այդ առաջին տարուան մէջ թէ-եւ իրենց որակով չէին համապատասխաներ կազմակերպութեան սահմանած ցենզին եւ կանոնական տրամադրութիւններուն, սակայն Դաշնակցութեան Երդ Ընդհ. ժողովի նախօրէին - 1909 Օգոստոս - կը գումարուէին Ա. Շրջանային ժողովը, որ կ'ընտրէ Շրջանի պատգամաւորը՝ Ընդհ. ժողովին համար եւ շրջանի կազմակերպութեան դրամական-բարոյական գործունէութեան քննութեան հետ - թէ-եւ ոչ լրիւ - կու տայ կարգ մը որոշումներ՝ շրջանի կազմակերպութիւնը ուժեղացնելու եւ կանոնաւորելու նպատակով: Կ'ընտրէ Կեդր. Կոմիտէ՝ հետեւեալ ընկերներէն - Պատրիքով, Պերճ, Ասլան, Արամ եւ Խոսրով¹:

Շրջանի եւ Կեդր. Կոմիտէի կազմն ու գործունէութիւնը.— Մէկ կողմէ Շրջ. ժողովի հապճեպ գումարումը, միւս կողմէ նորընտիր Կեդր. Կոմիտէի անդամներու մեծամասնութեան հրաժարման պատճառով՝ կարելի չ'ըլլար առաջադրուած որոշումներն իրագործել: - Շրջանական ժողովի որոշումները չեն հաղորդուիր մարմիններուն, յարաբերութիւնները չեն պահուիր, մարմիններն ու խումբերը կը մնան առանց հրահանգի որոնք անձանօթ ըլլալով կուսակցութեան աւանդութիւններուն, սկզբունքներուն եւ անոնցմէ բխած օրէնքներուն՝ կը մատուցին անգործութեան եւ կազմալուծման: Ամբողջ Ե-7 ամիս միայն ընկեր Պատրիքով կը պահէ յարաբերութիւնները՝ իր զբաղումներու թոյլատրած սահմանին մէջ եւ Բիւրոյի հետ խորհրդակցաբար: Այս Ե-7 ամսուան ժամանակամիջոցին մէջ մէկէ աւելի անգամներ Կեդր. Կոմիտէն վերակազմելու փորձեր կ'ըլլան Բիւրոյի կողմէ, սակայն բաղձալի արդիւնքը ձեռք չի բերուիր: 1910 Յունիս ամիսէն՝ Բիւրոյի խորհուրդով ընկեր Ժիրայր² կը գործակցի ընկեր Պատրիքովին՝ ստանձնելով յարաբերութեանց պահպանման աշխատութիւնը: Առաջ բերուած պատճառներով՝ շրջանի կազմակերպութիւնը շատ տեղեր անորոշ եւ կազ-

մալուծուած վիճակի մը մատնուած ըլլալով՝ հարկ կ'ըլլայ յատուկ շրջան մը ընել՝ մօտէն ճանչնալու համար թէ կազմակերպութեան մէջ մտած տարրերը տեղւոյն վրայ եւ թէ ցրուած խումբերն ու անհատ ընկերները կազմակերպելու համար: Այս նպատակով Ժիրայր եւ Արշաւիր շրջանի կարեւոր մէկ մասը կը շրջին: Միաժամանակ Բիւրոն կ'ամբողջացնէ Կեդր. Կոմիտէի կազմը՝ անդամ նշանակելով Պատրիքովի եւ Ժիրայրի հետ նաեւ Արշաւիրը³, Սեւակն ու Տէլլիքսը՝ մինչեւ Բ^Գ Շրջ. ժողովի մը գումարումը տանելու համար Կեդր. Կոմիտէի աշխատութիւնները:

Վերակազմուած Կեդր. Կոմիտէն իր ուժերու ներած աշխատութիւնը ի գործ կը դնէ՝ ըլլայ նամակներով, ըլլայ շրջաբերականով՝ պահելու համար սերտ յարաբերութիւն՝ շրջանի մարմիններու եւ խումբերու հետ եւ զանոնք գործունէութեան մղելու: Բերանացի փրփուկանտի համար մէկէ աւելի ընկերներ շրջանի մէկ-քանի կարեւոր կեդրոններու մէջ կը կազմակերպեն բանախօսութիւններ եւ ընկերական հաւաքումներ: Եւ իրօք, ըլլայ Կեդր. Կոմիտէին ուղղած նամակներուն եւ շրջաբերականներուն թիւը, ըլլայ շրջանի մարմիններէն եւ խումբերէն ստացուածներունը՝ ցոյց կու տան թէ զգալի բարեփոխութիւններ ներմուծուած եւ արդիւնքներ ձեռք բերուած է բարոյական-կազմակերպական թէ նիւթական կրկնակ տեսակէտներով:

Տրամադրուած ժամանակին հետ՝ աշխատութեանց արտակարգ բնոյթը դժբախտաբար թոյլ չտուէին որ Կեդր. Կոմիտէի ընկերները այցելեն նաեւ Պանտրմա-Պալիս եւ Ռոտոսթօ-Տէտէ Աղաճի շրջանը՝ մօտէն ծանօթանալու համար նոյն շրջաններու կազմակերպական վիճակին եւս. աշխատութիւն մը՝ որ կը մնայ իրականացնել Կեդր. Կոմիտէի յառաջիկայ կազմին:

Ներկայ առժամեայ Կեդր. Կոմիտէի աշխատանքը աւելի վերակազմութեան աշխատանք մը եղաւ եւ այցելող ընկերները աւելի այդ մասին աշխատեցան, քանի որ ամենակարեւորն ա՛յդ էր: Եւ իբրեւ արդիւնք վերակազ-

1.- Պատրիքով կը թուի թէ Գրաչն է (Թիրիաքեան Գայկ), որ միւս չորսին հետ ընտրուած էր Կ. Կոմիտէի անդամ յիշուած Շրջ. ժողովին: Պերճը՝ Բարսեղ Շահպազն է: Արամը՝ Յակոբով: Խոսրովը՝ Պապայեան:

2.- Ժիրայրը, Պալքանի Կեդր. Կոմիտէի անդամներէն Զօրեան Բարթողն է, որ կանչուած էր անդամակցելու Պոլսոյ Պատ. մարմնին: Ներկայ տեղեկագրի ձեռագիրն ալ կը պատկանի իր գրչին:

3.- Արշաւիրը՝ ծածկանուն Միսաքեան Շաւարշի:

մուծեան այդ աշխատանքին, յաջողեցանք պատրաստել բաւական մանրամասն վիճակացոյց մը — յանձնարարելի պատգամաւոր ընկերներու ուշադրութեան — գորհետեւեալ կերպով կարելի է խտացնել հոս:—

Այս պահուստ Պոլսոյ Կեդր. Կոմիտէի շրջանին մէջ կազմակերպութիւն ունինք, Պոլսէն դուրս — 13 վայրերու մէջ՝ մօտ 800-850 ընկերներով: Իսկ հաւանական կազմակերպելի վայրեր՝ 10ը՝ 150-200 յուսալի ընկերներով: Պոլիսը կը ներկայացնէ 3 ենթակոմիտէներ՝ 180-200 կազմակերպուած ընկերներով: Կազմակերպուած 13 վայրերուն 2ը՝ կը ներկայացնեն կոմիտէներ՝ 8ը՝ ենթակոմիտէներ: Մնացեալ 5 վայրերը՝ մէկ կամ մէկէ աւելի խումբեր: Ընդհանուր թիւ ընկերներու՝ 800, որոնց 50-60ը ընկերուհիներ, առանց հաշուելու կազմակերպելի վայրերու հաւանական անդամները, ինչպէս նաեւ մասնաւորապէս Պոլսոյ եւ իր արուարձաններուն մէջ գտնուած այնպիսի անձնաւորութիւններ՝ որոնք իրենց համոզումներով դաշնակցական լլլալով հանդերձ՝ չեն մտած շարքերուն մէջ եւ կամ չեն տակաւին շարքերուն մէջ: Կազմակերպուած այս շրջանները, իրենց 800 ընկերներով եւ անդամավճարներու եւ կողմնակի հասոյթներու ներկայ անգուցացուցիչ եւ վտիտ քանակութեամբ տարեկան 25-30,000 դուրուշի եկամուտ մը միայն կրնան արտադրել, եթէ սակայն կանոնաւոր վրձարումներ լլլան եւ պարտադիր դառնան եւ առանց գեղջելու այդ գումարէն տեղական ծախսերու սակը: Իսկ եթէ մնացեալ 8-10 վայրերն ալ կազմակերպուին, այդ հասոյթի գումարը ամենայն հաւանականութեամբ կրնայ բարձրանալ 35000ի, դարձեալ վճարման նոյն պայմաններով: Մինչդեռ Դաշնակցութեան նման կուսակցութեան մը համար, եւ ան ալ Պոլսոյ պէս բարեկեցիկ շրջանի մը մէջ՝ այդ գումարը շատ փոքր բան մըն է: Երջ. ժողովին կը մնայ ուրեմն անդամավճարներու եւ բացառիկ հասոյթներու աւելացման եւ կանոնաւորման անհրաժեշտութիւնը նկատի առնել եւ պարտադիր կանոններ մշակել, միանգամ ընդմիջտ ապահովելու համար մեր շրջանի հասոյթին հետ կազմակերպութեան ընդհանուր պիւտճէն, խնդիր մը՝ որ դրուած է արդէն ժողովի օրակարգին մէջ:

Պէտք է խոստովանիլ որ, վերակազմութեան վերջին ամիսներու աշխատանքէն յետոյ, եւ շնորհիւ մշտատեւ յարաբերութեան, պարտականութեան եւ իրաւունքի ըմբռնումը հետզհետէ կ'իւրացուի մեր շարքերէն եւ այդ իսկ տեսակէտով արդիւնքը կը դառնայ աւելի շօշափելի: Նոյն բանը պիտի ըսէինք կարգապահութեան վերաբերմամբ, որովհետեւ կիրառութեան դրուած ժամանակաւոր հրահանգներուն հետեւանքով՝ կարելի եղած է կարգապահական ոգին տակաւ մտցնել ընկերներուն մէջ: Այս իսկ երեք-չորս ամսուայ ընթացքին՝ մէկէ աւելի նման խնդիրներ դրուած են Կեդր. Կոմիտէի սեղանին վրայ — ինչպէս Ենովք Եւսէնի եւ Արօնեանի

խնդիրները — որոնց մասին Կեդր. Կոմիտէն կայացուցած է որոշումներ, անոնց վերջնական վաւերացումը թողով ժողովիդ:

Հաշուական գործառնութիւններ.— վերոյիշեալ թերի պայմաններուն մէջ առաջացած կազմերը, պարզ է որ պիտի ունենային նաեւ թերի հաշուապահութիւն, քանի որ պակասած է շարքերուն առհասարակ ոչ միայն Դաշնակցութեան մաքուր աւանդութիւններուն եւ սկզբունքներուն գիտակցութիւնը, այլեւ պակասած է գոնէ առաջնորդող անհրաժեշտ օրէնք մըն ալ: Այս պատճառով ալ հաշուական թիւրիմացութիւններ պակաս չեն եղած. օրինակ՝ եղած են շրջաններ՝ ուր Սահմանադրութեան խանդավառութեան առաջին օրերու, տպաւորութեան տակ կազմակերպուած եւ ամիսներ յետոյ ցրուած են՝ իրենց հաւաքած ունէն անշունչ կամ նշանակելի գումարին գոյութիւնն ալ թողելով անորոշութեան մէջ: Կան ալ որ՝ իրենց հաւաքած փոքրաքանակ գումարները ծախսած են ամբողջովին կամ մեծ մասով տեղական-կազմակերպական, նոյն իսկ գիւղական պէտքերու վրայ, ուղարկելով կեդրոնական արկղին շատ չնչին մաս մը: Ուրիշներ՝ ցարդ ունին թերհաշիւներ՝ զանազան պատասխանատու կարգադրութիւններ ըրած լլլալուն. բայց ասոնց փոխարէն եղած են շրջաններ ալ՝ որոնք հաւաքած գումարնին առանց երբեք համբելու՝ ուղղակի փոխադրած են: Եւ այս բոլոր գանձումներն լլլալով յանուն կուսակցութեան՝ կատարուած թերութիւնները կը տարածուին կուսակցութեան վրայ եւ միաժամանակ պահանջ կ'ըլլայ նուիրատուութիւններու հրատարակման՝ «Դրօշակ»ի մէջ: Կեդր. Կոմիտէն եթէ Պատասխանատու մարմնի եւ իր ստացած գումարները միայն հրատարակութեան տարձգուած թէ գոհանային տեղական նուիրատու անհատներն ու խումբերը: Իսկ նուիրատուութիւնները մանրամասնօրէն հրատարակելու համար՝ Երջ. ժողովի հաւանութիւնն ու գիտակցութիւնը հարկ էր՝ այդ պատասխանատու գործին համար: Այս ընդհանուր թերութեան եւ հաշուետուութեան անկանոնութեան հետեւանքով է որ կարելի չեղաւ մեզ հաշուական ընդհանուր եւ որոշ չափով լիակատար ցուցակ կազմել՝ հասկնալու համար թէ սահմանադրութենէն յետոյ Պոլսոյ շրջանը ինչ մուտք ունեցած է եւ ինչ ուղղութեամբ ծախսուած են ստացուած գումարները: ասիկա պարտադիր անհրաժեշտութիւն մը լլլալէն զատ կուսակցական-հաշուական քոնթրոլի անխուսափելի օրինապահութեան տեսակէտէն, իր օգտակարութիւնն ալ պիտի ունենար մեր յառաջիկայ պիւտճէի կազմութեան համար եւս: Այսպէս լլլալով հանդերձ՝ պատգամաւոր ընկերներու քով եղած եւ կամ դեռ գալիք հաշիւներն ալ ստանալէ յետոյ Կեդր. Կոմիտէն պատրաստելով ժողովիդ պիտի ներկայացնէ կարելի եղածին չափ ամփոփ հաշուեցու-

ցակ մը՝ ինչպէս նաեւ իր դիտողութիւնները՝ այս կամ այն մարմնի հաշուական թերութիւններու վերաբերմամբ:

Գալով Կեդր. Կոմիտէի դրամական գործառնութիւններուն, ինչպէս ըսուեցաւ, մինչեւ 909 Օգոստոս՝ ուղարկուած դրամները անցած եւ արձանագրուած են Պատասխանատու մարմնի հաշուոյն եւ այդ մասին անդրադարձած է նախորդ Երջ. ժողովը: 909 Օգոստոսէն մինչեւ 910 Օգոստոս ստացուած գումարները — որուն մանրամասնութիւնը նշանակուած է Կեդր. Կոմիտէի հաշուետուին մէջ — անցած են Բիւրոյի հաշիւին, որուն փոխարէն Բիւրոն ինք հոգացած է մեր շրջանի ընթացիկ ծախքերն ու դրկուած փրփականդիստներու եւ քոնթրոլ-ընկերներու ծախքերը: Իսկ 910 Օգոստոսէն յետոյ եղած էլեւմուտքի հաշիւը եւս պահուած է առանձինն՝ Կեդր. Կոմիտէի կողմէ:

Իսկ ինչ կը վերաբերի նուիրատուութեանց հրատարակման խնդիրին, Կեդր. Կոմիտէն հետեւեալ կարծիքն է.

1) Ոչ մէկ պատասխանատուութիւն ստանձնել եւ հետեւաբար հրատարակել այն մարմիններու կամ կազմերու հաշիւները, որոնք իրենց կազմութենէն յետոյ դրամական-հաշուական կապակցութիւն չեն ունեցած կեդրոնական մարմիններու հետ եւ լուծուած. եւ ապագայ ունէ դիտողութեան պատասխանել այս մտքով: 2) Հրատարակել «Դրօշակ»ի մէջ այն մարմիններու հաշիւները՝ որոնք տիրող պայմաններու բերումով թէեւ չեն լրացուցած հաշուական կանոններու տրամադրութիւնները եւ իրենց գանձումներուն մեծագոյն մասը ծախսած են տեղոյն վրայ, եւ սակայն ներկայացուցած են կանոնաւոր հաշիւ: Հրատարակելով նաեւ թերհաշիւ ունեցող եւ պատասխանատու կարգադրութիւններ ընող մարմիններու նուիրատուութեանց ցանկը՝ պատասխանատուութեան հրաւիրել համապատասխան մարմինը:

Շրջանի կազմակերպման գործը.— Շրջանի կազմակերպութիւնը մեծագոյն մասամբ նորամուտ ընկերներէ՝ բնական է որ անոնք պիտի լլլային անձանօթ՝ կուսակցութեան ընդգրկած սկզբունքներուն եւ անոր բարձրօրէն գեղեցիկ աւանդութիւններուն, օրէնքներուն եւ սիստեմներուն: Ահա՛ հոս ալ պէտք է փնտռել շարքերու նօսրացման գլխաւոր պատճառներէն մէկը՝ խանդավառ տրամադրութեանց անմիջապէս յաջորդող հակադաշնակցական-հակայեղափոխական տրամադրութեանց օրերուն: Բայց այս շրջանը նպատակայարմար պիտի լլլար անուանել «գտման» եւ «վերակազմութեան» շրջան, որովհետեւ առաջացած հալածանքը պատճառ եղած է որ ասպարէզ գան մեր իսկական ընկերները՝ որոնք այսօր կը կազմեն շարքերը եւ որոնց վրայ պիտի կռթնի կուսակցութիւնը: Այժմ անոնց կու-

սակցական-յեղափոխական դաստիարակութեան աշխատանքի մասին պէտք է հոգալ՝ նպատակայարմար միջոցներով:

Շարքերու թուլացման մէջ դեր ունեցած է օրինականացման խնդիրին շուրջն ստեղծուած կազմակերպական սխալ հասկացողութիւններուն հետ Կեդր. Կոմիտէի ցրուած վիճակը, ինչ որ մատնանշեցինք իր տեղին: Յամենայն դէպս՝ սխալ պիտի լլլար կարծել թէ՛ շրջանի ընկերներու կուսակցական-կազմակերպական ներկայ թերի հասունութեան մէջ կազմակերպման գործը կարելի է առաջ տանիլ առանց շրջող ընկերներու եւ արտաքին ձեռքերու օժանդակութեան — ահա՛ թէ ինչպիսի դրական կարգադրութեան մը պէտքն զգալի է: Նոյն բանը պիտի ըսէինք նաեւ հաշուական քոնթրոլի վերաբերմամբ:

Կազմակերպական գործին մէջ՝ ակումբներու հաստատութիւնն եւս ունի իր որոշ նշանակութիւնը, պայմանով որ որոշապէս ճշդուած լլլայ անոնց նիւթական թէ՛ բարոյական-կազմակերպական յարաբերութեանց սահմանները: Յարդ գոյութիւն առած խմբատեղի-ընթերցարաններն ու ակումբները իրենց պիւտճէով ծանրացած են կուսակցութեան պիւտճէին վրայ, մինչդեռ, մեր ըմբռնումով, ակումբները պէտք էր դառնային միջոցներ՝ կուսակցութեան պիւտճէի աւելացման՝ իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւններով: Պիւտճէի այս պարագան ճշդելէ զատ՝ անհրաժեշտ է միօրինակ կանոնագրի մը մշակութիւնը՝ դաշնակցական ակումբներու համար, ուր որոշապէս ճշդուած լլլան անոնց իրաւասութեանց եւ յարաբերութեանց սահմանները:

Ուրիշ նոյնքան եւ աւելի նկատողութեան արժանի պարագայ մըն ալ:— Ինքզինքնին «դաշնակցական անլանող, «անպատասխանատու» եւ «անկազմակերպ» տարրերու արարքներն ու արտայայտութիւնները նըւազ վնասակար չեն եղած՝ կազմակերպութեան թուական կամ բարոյական առաւելութեան տեսակէտով: Ուստի, կազմակերպման գործին մէջ ունենալու համար ցանկալի յաջողութիւն, Երջ. ժողովը, մեր կարծիքով, օգտակար գործ մը ըրած պիտի լլլայ՝ եթէ հրապարակով արտայայտուի այդպիսի «ինքնակոչ» եւ «անպատասխանատու» տարրերու վերաբերմամբ, թոյլ չտալով որ Դաշնակցութեան անունը շահագործուի, ոչ ալ այդպիսիներու արարքը վերագրուի անոր, եւ կամ՝ նման տարրեր չքաջալերուին իրենց արարքին եւ վերաբերումին մէջ:

Բանուորական հարց.— Պոլիսը, իր շրջականերով, կրնայ ըսել որ Թուրքիոյ կարեւոր շրջաններէն մէկն է, ուր իսկական բանուորութիւն մը գոյութիւն ունի, մանաւանդ շրջակայ մէկ քանի գիւղերու եւ քաղաքներու մէջ՝ ուր բանուորութիւնը ամփոփ վիճակով մը կը ներ-

կայանայ [եւ] կազմակերպման տեսակէտով կու տայ անվիճելի դիւրութիւններ: Հակառակ այս առաւելութիւններուն՝ մեր ընկերները այդ ուղղութեամբ գրեթէ ոչինչ րրած են: Ճիշդ է որ Սահմանադրութեան սկիզբի օրերուն՝ Դաշնակցութեան շուրջը հաւաքուեր է բան-ւորական ստուար խումբեր, սակայն տեղացի թէ այցե-լու ընկերներու կողմէ տեղի ունեցած սխալներու եւ անպատեհ ու անժամանակ գործադուլներու պատճա-ռով՝ բանուորական շարքերու մէջ յուսալքում եւ ցրուում առաջացած է, որովհետեւ տրուած չափազանց յոյսերուն յաջորդող բաւարարութիւնը անհամապա-տասխան եղած է կամ ոչ տեւական: Այս պատճառին վրայ եկած է աւելնալ միջ կուսակցական տարանջա-տումներ՝ բանուորական շարքերու մէջ, շնորհիւ իրենք զիրենք հնչակեան անուանողներու վնասակար եւ պա-ռակտիչ փրոփականտին, ուրկէ օգտուած են միշտ գոր-ծատէրերը: Եւ սակայն այս բոլորէն առաջ եւ այս բոլո-

րին հետ՝ մեր ընկերներու անտարբերութիւնը այս ամե-նակենսական խնդիրին հանդէպ՝ ոչ մէկ պատճառաբա-նութեամբ կրնայ արդարանալ, որուն վրայ հարկ է որ լրջօրէն անդրադառնայ Շրջանական ժողովը, ճշդելով միաժամանակ իր տեսակէտը՝ բանուորական միու-թիւններու կազմակերպական ձեւի եւ ուղղութեամբ վերաբերմամբ:

Ահա՛ այս խնդիրներն է որ ուզեցինք յանձնել Շրջ-ժողովի ուշադրութեան, եթէ ոչ իբրեւ արդիւնք գոր-ծունէութեանը Կեդր. Կոմիտէին, այլ արդիւնք համեստ փորձառութեան մը: Ու ցանկալով յաջող եւ արդիւնա-լից գործունէութիւն նորընտիր Կեդր. Կոմիտէին:

Հ.Յ.Դ. ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԻ
ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

1910 Դեկտ. 31

Ա 2.—[ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ՊՈԼՍՈՅ Բ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ]

ՆԻՍ Ա.

1911 Յունուար 3, Երկուշաբթի

Հ.Յ.Դ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէն շրջանային ժողովի հրաւիրած ըլլալով շրջանի մարմինները, այսօր, Յուն-ւար 3 Երկուշաբթի, տեղի ունեցաւ առաջին գումարու-մը:

Համաձայն Կեդր. Կոմիտէի յանձնարարած օրինա-կան տրամադրութիւններուն, շրջանային ժողովին ի-րաւունք ունէին մասնակցելու վճռական ձայնով կոմի-տէի ու ենթակոմիտէի ցենզ ներկայացնող շրջանները, իսկ խորհրդակցական ձայնով՝ մէկ կամ մէկէ աւելի խումբեր ունեցող շրջանները: Այսպէս Ատա-բազար ու Պարտիզակ (կոմիտէներ) կ'ունենային 2-ական վճռա-կան ձայնի իրաւունք, իսկ Չէնկիլէր, Գնճրլլար, Գուրթալէյն, Արմաշ, Բերա, Սամաթիա եւ Սկիւտար իրենց շրջանակներով՝ 1-ական ձայն. Կեդր. Կոմիտէն՝ նոյնպէս 1 ձայն, ընդամէնը 12 վճռական ձայն. իսկ խորհրդակցական ձայն ունէին՝ Գարթալ, Ռոտոսթօ, Մալկարա, Պալիա-Մատեն, Տէտէ-աղաճ, Պրուսա եւ Չոնկուլտաք՝ յանձին մէկ մէկ պատգամաւորի:

Այս առաջին ժողովին վճռական ձայնի իրաւունքով ներկայացան — Կեդր. Կոմիտէի կողմէ՝ Ժիրայր², Ատա-բազարէն՝ Տոքթ. Տ. Գասապեան եւ Յ. Աթանասեան, Պարտիզակէն՝ Սրենց⁴ եւ Ֆարհատ⁵, Գնճրլլարէն՝ Թ. Սօֆեան, Չէնկիլէրէն Գ. Աբգարեան, Արմաշէն Յ. Ղու-կասեան, Բերայէն՝ Սասունի⁶, իսկ խորհրդակցական ձայնով Գարթալէն՝ Վտարանդին⁷, Մալկարայէն՝ Փան-նիկեան:

Իրաւասու ձայներու 2/3-ի մեծամասնութիւնը ներ-կայ ըլլալով՝ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը ժողովը բացուած յայտարարեց, ուրկէ ետք ժողովը անցաւ ստուգելու՝ պատգամաւորներու ընտրութեանց օրինա-ւորութիւնը ճշդող վկայագրերը, որոնք բաւարար նկատուեցան՝ յառաջիկային օրէնքի բոլոր տրամադ-րութիւններն ալ յարգուելու թելադրութիւն ընելով մարմիններուն:

Անցնելով դիւանի կազմութեան՝ գաղտնի քուէար-կութեան արդիւնքով, ձայներու մեծամասնութիւնով ա. նախագահ ընտրուեցաւ ընկեր տոքթ. Տ. Գասապ-եան, բ. նախագահ՝ ընկեր Ֆարհատ, ինչպէս նաեւ քար-տուղար՝ Ժիրայր եւ Աթանասեան:

Նախագահը ժողովը օրինաւորապէս բացուած յայ-տարարելով՝ նախաձեռնուեցաւ ընթացիկ աշխատու-թեանց:

Ժողովներու ժամանակը եւ ներքին կանոնադիր.— Խորհրդակցութեան առնուելով ժողովի գումարման ժամանակն ու տեւողութիւնը, ինչպէս նաեւ վիճարա-նութեանց ընթացքը, աշխատութեանց արդիւնաւոր-ման տեսակէտով, որոշուեցաւ,

1- Ժողովները պիտի գումարուին ամէն օր կէսօրէ յետոյ ժամը 2-8, գիշերները 8-11, իսկ բացառաբար Երեքշաբթի ու Չորեքշաբթի օրերուն, առաւօտեան ժա-մը 10-12 եւս:

2- Մնացեալ օրերու առաւօտեան ժամերուն պիտի աշխատին յանձնախումբերը:

3- Վիճարանութեանց ընթացքին ո'եւէ հարցի մասին առաջին անգամ կը խօսուի առառաւելին 15 վայրկեան, ըստ կարգին՝ 5 եւ ընդդիմախօսութիւն՝ 5 վայրկեան:

4- Ժողովի որոշումները պիտի վերապահուի. Կեդր. Կոմիտէն պիտի հաղորդէ զանոնք շրջաններուն, իսկ պատգամաւորները՝ իրենց դարձին պարտաւոր պիտի ըլլան ընդհ. ժողովներ կազմել ու ծանօթացնել իրենց տեղական ընկերները՝ ժողովի զբաղումներու, վիճա-բանութեանց եւ առ հասարակ յարակից խնդիրներու հետ:

5- Պատգամաւոր մը անպայման պէտք է ներկայ գտնուի. առանց դիւանի հաւանութեան՝ տեղի ունեցած ա. բացակայութիւնը ներքի է. բ. անգամուն նկատողու-թիւն կ'ըլլայ եւ գ. անգամուն կը կորսնցնէ իր ձայնը:

Հրաւիրելիք ընկերներ.— Որոշուեցաւ խորհրդակ-ցական ձայնի իրաւունքով հրաւիրել՝ Պոլիս գտնուող այն ո'չ տեղացի ընկերները՝ որոնք անցեալի մէջ իրենց աքթիւ գործունէութիւնով ծանօթ են, ու յանձնարար-ւեցաւ դիւանին՝ հրաւիրել ընկերներ Դուման, Մալ-խաս⁸, Սահակեան, Մելոյեան, Տէրտէրեան. որոշուեցաւ հրաւիրել նաեւ Ամերիկայի ընկերներէն Արիս Իսրայէլ-եանը՝ այն նկատումով որ Կեդր. Կոմիտէն մտադրու-թիւն ունէր անոր մասին առաջարկ բերել ժողովին՝ շրջանի փրոփականտի գործին մէջ դեր տալու համար անոր. ինչպէս նաեւ օր. Ս[աթենիկ] Օհանջանեանը՝ ցանկալով ունենալ ժողովին մէջ գործօն ընկերուհի մըն ալ ներկայութիւնը: Ասոնցմէ գատ՝ պարտականու-

- 4.- Սրենց՝ Գլըճեան Սարգիս:
- 5.- Ֆարհատ ծածկանունով ծանօթ են դաշնակցական յայտնի գործիչներ Օհանջանեան Սարգիս, Թիրիաքեան Դայկ եւ Գասապեան Սիմա (Վերածին) եւ ուրիշներ: Այս մէկը հա-լանաբար Դայկն է:
- 6.- Սասունի՝ ապագայի ծանօթ Կարօ Սասունցի է:
- 7.- Վտարանդի՝ Արամ Չարըզն է:
- 8.- Նիկոլ Դուման Տէր Յովհաննիսեան Նիկոլ: Մալխաս՝ Յովսէփեան Արտաշէս:

թիւն յանձնուեցաւ դարձեալ դիւանին՝ իմացնել Բիւրոյին՝ իր ներկայացուցիչը ունենալ ժողովին մէջ՝ վճռական ձայնի իրաւունքով, ինչպէս նաեւ՝ Ազատամարտի խմբագրական մարմինն ու Օսմ. խորհրդարանի դաշնակցական պատգամաւորութիւնը՝ մէյմէկ խորհրդակցական ձայնով:

Ընտրութիւն յանձնախումբերու.— Որպէսզի իւրաքանչիւր յանձնախումբի անդամ կարենայ ուշադիր հետեւիլ տեղեկագրի ընթերցման՝ համաձայն իրեն յանձնուած պարտականութեան բնոյթին, որոշուեցաւ յանձնախումբերու ընտրութիւնը կատարել նախքան տեղեկագրերու ընթերցումը. թեր ու դէմ վիճաբանութենէ յետոյ պէտք տեսնուեցաւ երեք յանձնախումբերու, ա— հաշուեքննիչ՝ որ պիտի զբաղի մարմիններու, խումբի եւ Կեդր. Կոմիտէի հաշիւներու քննութեամբը— դատական՝ որ պիտի զբաղի Կեդր. Կոմիտէի սեղանին վրայ դրուած քննուած եւ անկէ վճռուած դատական խնդիրներով եւ գ— բանաձեւերու յանձնախումբ՝ որ նկատի պիտի ունենայ շրջանէն եկած բանաձեւերը, ինչպէս նաեւ ժողովի վիճաբանութիւնները եւ ըստ այնմ պատրաստելով խնդրոյ առարկայ հարցերու համապատասխան բանաձեւերը՝ պիտի ներկայացնէ ժողովի նկատառման եւ որոշման:

Այսպէս՝ փոխադարձ համաձայնութեամբ հաշուական յանձնախումբի անդամ նշանակուեցան Աթանասեան, Սօֆեան եւ Տ. Ղուկասեան: Բանաձեւերու յանձնախումբի՝ Ֆարհատ, Սասունի եւ Սրենց, դատական յանձնախումբի՝ Վտարանդին, Փաննիկեան եւ Գասապեան. իսկ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը պիտի գործակցի երեք յանձնախումբերուն եւս:

Տեղեկագրերու ընթերցում.— Որոշուեցաւ իւրաքանչիւր մարմնի տեղեկագիրը կարդացուելէ յետոյ պահանջել պէտք տեսնուած լուսաբանութիւնը եւ քննադատութեան ենթարկել խնդրոյ առարկայ մարմնի գործունէութիւնը՝ եթէ հարկ տեսնուի. իսկ բոլոր տեղեկագրերու ընթերցումէն յետոյ՝ ընդհանուր գործունէութեան մասին արտայայտուիլ մէկ բանաձեւով:

Այս որոշման համաձայն կարդացուեցան՝ Կեդր. Կոմիտէի, Մակարայի խումբերուն եւ Ատաբազարի մարմնոյն տեղեկագիրը: Այս վերջինի մասին տրուած բացատրութիւններն ու եղած քննադատութիւնները լրացած չլլալով՝ շարունակութիւնը ձգուեցաւ յաջորդ նիստին:

ՆԻՍ Բ.

1911 Յունուար 4, Երեքշաբթի առաւօտ

Բացակայ՝ Գնճըլարի, Սամաթիոյ եւ Սկիւտարի պատգամաւորները. վճռական ձայնի իրաւունքով ներկաներու թիւ 8, խորհրդակցական ձայնով՝ 2:

Նկատելով որ Գնճըլարի պատգամաւորը գինուոր ըլլալուն համար բանաւոր պատճառաւ կը բացակայի, միւս կողմէ ժողովը առանց որոշումներ տալու տեղեկագրերու ընթերցումէն է որ պիտի լսէ, որոշուեցաւ շարունակել աշխատութիւնները՝ ձայններու մեծամասնութիւնով բանալով ժողովը:

Շարունակութիւն տեղեկագրերու ընթերցման.— Լսելէ յետոյ Ատաբազարի պատգամաւորներուն լրացուցիչ տեղեկութիւնները, Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչն եւս իր նկատողութիւններն ըրաւ՝ յայտնելով որ Ատաբազարի կազմին գործունէութիւնը համապատասխան չէ իր միջավայրի պահանջներուն եւ ընձեռած դիւրութիւններուն, ինչպէս նաեւ կը պակսի վարիչ ընկերներուն յեղափոխականի խիզախութիւնը եւ առհասարակ մտավախութիւն մըն է որ նկատելի է, — իբրեւ թէ յեղափոխական գործը պարզ բարեգործական եւ կամ ո՛րեւէ նման հաստատութիւն մը եղած ըլլար. շարքերու կազմակերպական եւ ընկերական կապերը շատ թոյլ են:

Կարդացուեցաւ Պարտիզակի տեղեկագիրը որ իր թերի կազմութեամբ չէր պատկերացներ ո՛չ տիրող կազմակերպական եռուն կեանքը ո՛չ ալ գործունէութիւնը. պատգամաւորները լրացուցիչ բացատրութիւններ տուին. իսկ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը նկատեց որ Պարտիզակի համեմատաբար պատրաստուած ընկերները՝ սխալ տակտիքի մը հետեւած են չմտնելով մարմնին մէջ, ըստ որում յուսացած են թէ՛ խումբերուն մէջ ցրուելով աւելի օգտակար դեր կրնան կատարել, այն ինչ՝ իրականութիւնը հակառակը ցոյց կու տայ:

Արմաշի կազմը իր տեղեկագրով կը ներկայացնէր ընկերներու տարուան մը գործունէութիւնը, շահակցական եւ այլ ընկերակցութեանց կատարած եւ կատարելիք դերը, ինչպէս նաեւ վերջերս նոյն գիւղին մէջ առաջացած պառակտումները՝ դպրոցական խնդիրներու շուրջ, որուն հետեւանքը եղած է վարժարանին երկու մասի բաժնուիլը. պատգամաւոր ընկերը տուաւ նաեւ բերանացի մանրամասնութիւններ: Ժողովական ընկերներէն ոմանք նկատողութիւն ըրին Արմաշի կազմին որ՝ դպրոցական այդ խնդիրներն են մէջ կառավարական միջամտութիւնը ետ չէ մղած եւ խոհական ելք մը տալու չէ հետամտած. իսկ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը Արմաշի կազմակերպութեան կամ կազ-

մակերպական ընկերներու առաւելութիւնը վեր առնելով հանդերձ, քննադատեց զանոնք, յայտնելով որ՝ ծագած խնդիրները մեղմելու համար պահանջուած տաքթը չեն ունեցած եւ չեն գոհացուցած նոյնիսկ Կեդր. Կոմիտէն՝ ուսուցիչներու վերաբերմամբ ըրած առաջարկի մասին, որպէսզի անոնք դուրս գան վանքէն: Արմաշի վանքի պարագաներուն ծանօթ պատգամաւորներ պատահած խնդիրներուն մէջ նոյն վանքի վանահայր-վարդապետներուն ալ դերը կը տեսնեն, որոնք առիթէն օգտուելով գիւղացիներուն վանքին վրայ ունեցած իրաւունքները ետ մղելու կը ջանան:

Կարդացուեցաւ նաեւ Գարթալի տեղեկագիրը եւ լսուեցաւ իր պատգամաւորին բացատրութիւնները: Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Գ.

Յունուար 4, Երեքշաբթի կէսօրէ ետք

Բացակայ՝ Գուրթալիի, Սամաթիոյ պատգամաւորները: Իրաւասու ձայնի իրաւունքով ներկայ 8 պատգամաւոր, խորհրդակցական ձայնով՝ 2, հրաւիրուած ընկերներէն՝ Սահակեան:

Կարդացուեցաւ Ա. Նիստի ատենագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Շարունակութիւն տեղեկագրերու ընթերցման.— Կարդացուեցաւ Չէնկիլիքի տեղեկագիրը՝ եւ լսուեցաւ նոյն շրջանի պատգամաւորին բերանացի բացատրութիւնը: Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը թուելով Չէնկիլիքի միջավայրին ընձեռած դիւրութիւնները՝ կազմակերպական գործին համար, ընկերներու գործունէութիւնը եւ արդիւնքը համապատասխան չգտաւ անոնց: Նոյն դիտողութիւնը ըրին նաեւ պատգամաւոր ընկերները՝ աչքի առջեւ ունենալով մանաւանդ բանաւորական գործին հանդէպ ցոյց տրուած անուշադրութիւնը:

Սկիւտարի տեղեկագրին հետ նկատի առնուեցաւ նաեւ Գատը-գիւղի տեղեկագիրը՝ որ առանձին կցուած էր: Սկիւտարի մարմնին գուտ կազմակերպական օրկանական աշխատանքը՝ պատգամաւորներու ոմանց կողմէ անբաւարար նկատուեցաւ: Իսկ Գատը-գիւղի ընկերական կազմակերպական մօտաւոր ոչ-միութեարական վիճակը պարզուեցաւ Կեդր. Կոմիտէի կողմէ, ինչպէս նաեւ նոյն տեղի նորակազմ խումբի չկամութիւնը Սկիւտարի մարմնոյն կցուելու՝ փափաքելով անջատ կազմ ունենալ:

Կարդացուեցան նաեւ Սամաթիոյ, Գնճըլարի, Չոնկուլտաքի տեղեկագրերը եւ լսուեցան Կեդր. Կոմիտէի

եւ համապատասխան շրջաններու պատգամաւորներու բացատրութիւններն ու նկատողութիւնները: Այս շրջաններու տեղեկագրերն եւս իրենց առաւել կամ նուազ թերութիւններով եւ առաւելութիւններով՝ շատ քիչ բանով կը տարբերէին միւս շրջաններու տեղեկագրերէն, որոնք կարդացուեցան:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Դ.

Յունուար 4, Երեքշաբթի գիշեր

Բացակայ միայն Գուրթալիի պատգամաւորը: Իրաւասու ձայնի իրաւունքով ներկայ՝ 11 պատգամաւոր, խորհրդակցական ձայնով՝ 2, հրաւիրուած ընկերներէն ներկայ՝ Սահակեան եւ Տէրտէրեան, «Ազատամարտ»ի խմբագրութեան կողմէ՝ Չարդարեան, ընդհանուր թիւ ներկաներու 18 ընկեր:

Քննադատութիւն Կեդր. Կոմիտէի եւ շրջանի գործունէութեան.— Որպէսզի կարելի ըլլար շրջանի կազմակերպական վիճակին եւ գործունէութեան, ինչպէս նաեւ Կեդր. Կոմիտէի տարուան մը կեանքին ու աշխատութիւններուն վրայ արտայայտուիլ հանգամանօրէն՝ երկրորդ անգամ կարդացուեցաւ Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը:

Քննադատութիւնները տարուեցան հետեւեալ ուղղութիւնով.

ա — Գոհունակութիւն յայտնուելով առժամեայ Կեդր. Կոմիտէի վերակազմութեան աշխատանքներուն համար, որ երեք-չորս ամսուան ընթացքին շրջանը բաւականաչափ կազմակերպելով վերստեղծած էր օրինական կազմակերպական կեանքը եւ գումարած ներկայ շրջանական ժողովը, 1 — Կը քննադատուի նախորդ շրջանային ժողովին ընտրուած կազմը, եթէ ո՛չ հաւաքաբար, գէթ անհատաբար, որոնք իրենց պարտականութեան գլուխը չգտնուելով՝ վնասած են շրջանի կազմակերպութեան եւ պատճառ դարձած անոր կազմալուծման, ինչպէս նաեւ բանուորական, փրոփականտի եւ այլ շատ մը կենսական գործեր երեսի վրայ մնալուն:

Ա — Կը քննադատուի վարիչ մարմինները կամ շրջանակները, որոնք ստեղծուած կացութեան համապատասխան դարման կարգադրութիւններ չեն փութացուցած եւ իրերը ձգած են իրենց վիճակին:

բ — Ստեղծուած կացութիւնը եթէ չ'ուզուի վերագրել Սահմանադրութեան յաջորդող խանդավառութեանէն յետոյ տիրող թէ՛ ազգային եւ թէ՛ պետական հակահոսանքին արդիւնք հոգեբանական անօրինակ վիճակին եւ շատ բնական հետեւանքն անոր. ու կ'ուզուի ան-

պատճառ պատասխանատու մը փնտռել՝ այդ պարագային գլխավոր պատասխանատուներն են, I — Շրջաններու, այսպէս ըսենք, առաջնորդող ընկերները՝ որոնք չեն գտնուած իրենց յեղափոխական-կազմակերպական բարձրութեան վրայ եւ գործերը թողած են երեսի վրայ՝ սպասելով վերէն գալիք հրահանգներու, մանաւանդ որ՝ վերակազմութեան օրերուն իսկ Կեդր. Կոմիտէի գրած մէկէ աւելի շրջաբերականներուն եւ նամակներուն հազիւ պատասխանած են, ան ալ ստիպումներէ յետոյ, II — Նախորդ շրջանային ժողովը՝ որ առանց իր ընտրած Կեդր. Կոմիտէի անդամներուն հաւանութիւնը առնելու եւ առանց նոյնիսկ անոնց գիտութեան ընտրութիւն կատարած ու անմիջապէս ցրուած է, III — Դարձեալ նոյն ժողովը՝ որ նոյնիսկ որոշ ուղղութիւն չէ գծած, ոչ ալ ո՛րեւէ պիւտո՛ճ սահմանած է իր շրջանի գործունէութեան եւ փրոփականտին համար:

IV — Ստեղծուած պայմաններուն մէջ՝ Բիւրօ կամ վարիչ ընկերներ՝ իրենց պարտականութիւնը կատարած են միշտ վերակազմութեան փորձեր ընելով Կեդր. Կոմիտէին, եւ հազիւ յաջողած են վերջին կարգադրութիւնով վերջին արդիւնքը ձեռք բերելու:

գ — I — Շրջանի կէս-կազմալուծուած վիճակը բնական էր եւ նոյնիսկ անհրաժեշտ՝ շարքերու գտման եւ ընկերներու ճշդորոշման տեսակէտով, II — Վերակազմութեան շրջանէն յետոյ նկատուող երեւոյթները՝ ըլլան ընկերական ներդաշնակ յարաբերութեանց տեսակէտով, ըլլան դէպի կազմակերպական-օրկանական աշխատանք կատարելու ձգտումի տեսակէտով՝ յուսահատական չեն եւ ընդհակառակը յուսալից՝ յառաջիկայ տարեշրջանի գործունէութեան համար: III — Ստեղծուած ներքին պայքարը՝ պէտք եղածէն աւելի զբաղեցուցած է ընկերները եւ ժամանակ ու կորով սպառած:

Մարմիններու ընդհանուր կազմակերպական թերութեանց տեսակէտէն քննադատուեցան:

ա — Բանուորներու եւ բանուորական կազմակերպութիւններու մասին ցոյց տրուած անտարբերութիւնն ու անհետաքրքրութիւնը,

բ — Տեղեկագրերու անսիստէմ, թերի ու անգոհացուցիչ պատրաստութիւնը, գ — Ընկերներու յեղափոխական դաստիարակութեան եւ տեղական կազմի մասին եղած անփութութիւնը, դ — Տեղական-կուլտուրական ինդիւրներու մասնակցութեանց կամ վերապահութեանց մէջ ցոյց տրուած անհետեւողականութիւնը, ե — դրամական վճարումներու անկանոնութիւնը:

Վիճաբանութիւնները այս ուղղութիւնով թեր ու դէմ եւ երկար շարունակուելէ յետոյ՝ յանձնարարուեցաւ համապատասխան յանձնախումբին՝ ներկայացնել համիմաստ բանաձեւ՝ քուէարկութեան ենթարկելու համար:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Ե.

Յունուար 5, Զորեքշարթի առաւօտ

Բացակայ՝ Գուրթպէյէնի, Գնճըլարի եւ Սամաթիոյ պատգամաւորները: Իրաւասու ձայնով ներկայ՝ 9, խորհրդակցական ձայնով՝ 2:

Շրջանի կազմակերպութեան դիրքը հանդէպ աշակերտութեան եւ ուսանողութեան.— Պատգամաւոր ընկերները լայնօրէն արտայայտուեցան առաջադրուած հարցի մասին՝ առաջնորդուելով հետեւեալ տեսակէտներէն,

ա — I — Աշակերտներուն կը պակսի պահանջուած հասունութիւնն ու ժամանակը՝ զբաղելու համար կուսակցական կեանքով, II — Աշակերտութեան միտքը պէտք է հեռու պահել դոկմերէ, միջոց տալով որ գարգանայ անոր մէջ խորհելու, դատելու կարողութիւնը եւ ինքը գիտակցաբար ընտրէ յառաջիկային իր հետեւելիք քաղաքական ուղին, III — դպրոցներու մէջ կուսակցական խումբեր կազմելով, կամ կուսակցական հոսանքներ մտցունելով՝ աշակերտութիւնը մղուած պիտի ըլլայ կուսակցական պայքարներու եւ մրցումներու, խանգարելով վարժարանի խաղաղ կեանքը եւ թոյլ չտալով որ աշակերտը իր դասերով զբաղի,

բ — I — Գաւառներու պայմանները տարբեր են Պոլիսէն, որովհետեւ այն տեղերը համալսարաններ չկան, այլ նախակրթարաններ եւ երկրորդական վարժարաններ միայն գոյութիւն ունին եւ նախակրթարաններու բարձրագոյն կարգերու աշակերտները ո՛չ միայն բաւական հասունութիւն ցոյց կու տան եւ կը հարկադրեն մարմինները ընդունիլ գիրենք տեղական կազմերուն մէջ, այլեւ անոնք կը ներկայացնեն այսօրուան եւ վաղուան մտաւորականութիւնը՝ զոր կարելի չէ անտես առնել, II — Տարբեր կուսակցութիւններ մուտք գտած են արդէն վարժարաններու մէջ, ուր խումբեր եւ կազմակերպութիւններ կը յառաջացնեն ուղղակի կուսակցական հողի վրայ. այս պայմաններուն մէջ Դաշնակցութեան ձեռնպահութիւնը՝ վնասակար պիտի ըլլայ, որովհետեւ աշակերտութեան մտքերը խաթարուած պիտի ըլլան եւ այդպէսով այսօրուան ու վաղուան գործունէութիւնն է որ դժուարութեան մատնած պիտի ըլլանք:

գ — I — Դպրոցներէն ներս չունենալով կազմակերպութիւն եւ աշակերտները ձգելով ազատ՝ դաշնակցական ընկերները իրաւացիօրէն կրնան պայքարիլ եւ ընդդիմանալ տարբեր կուսակցութեանց կողմէ փորձուած եւ մեր կողմէ վնասակար նկատուած այդ ոտնձգութիւններուն դէմ, II — Երբ Դաշնակցութիւնը իր գաղափարներու եւ իտէալներու մաքրութեան եւ յաղթանա-

ՆԻՍ 2.

5 Յունուար (Դշ. կէսօրէ ետք)

Բացակայ՝ Գուրթպէյէնի, Գնճըլարի, Սամաթիոյ պատգամաւորները: Իրաւասու ձայն՝ 9, խորհրդակցութեան ձայնով 2 պատգամաւոր:

Ընդունուած բանաձեւեր.— Շրջանի եւ նախորդ Շրջանական ժողովի կողմէ ընտրուած եւ ցրուած Կեդր. Կոմիտէի գործունէութեան, ինչպէս նաեւ ուսանողներու եւ աշակերտներու մասին շրջանի կազմակերպութեան բռնելիք դիրքի վերաբերմամբ հետեւեալ բանաձեւերը ներկայացուեցան՝ յանձնախումբին կողմէ:

Ա. բանաձեւ՝ ի մասին շրջանի գործունէութեան.— «Շրջանական ժողովը քննութեան առնելով շրջանի մարմիններու եւ Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը, լսելով նաեւ պատգամաւոր ընկերներու տուած բացատրութիւնները, Պոլսոյ շրջանի Դաշնակցութեան գործունէութիւնը կը գտնէ անբաւարար եւ անհամապատասխան կուսակցութեան շինարար ձգտումներուն եւ անոր բարոյական արժէքին:

«Ու նկատելով՝
«Որ՝ այդ անբաւարար գործունէութեան մէկ կողմէ մասամբ պատճառ ըլլալով շրջապատող աննպաստ պայմանները եւ ստեղծուած հակայեղափոխական, հակադաշնակցական տրամադրութիւնները, միւս կողմէ՝ անիկա արդիւնքն է աւելի նախորդ Շրջ. ժողովի կատարած հապճեպ ընտրութեանց եւ թերի կարգադրութեանց, ըստ որում Կեդր. Կոմիտէի ընտրուած անդամներու հաւանութիւնը չէ առնուած կանխաւ, որով եւ ընտրուած ընկերները չեն ստանձնած իրենց յանձնուած պարտականութիւնը:

«Որ՝ Շրջանի մարմինները կամ իւրաքանչիւր վայրի առաջնորդող ընկերները չեն գտնուած կուսակցական-յեղափոխական պահանջուած գիտակցութեան վրայ՝ պահելու համար իրենց շրջանի կազմակերպական գործը ցանկալի ուղղութեան մէջ՝ առանց թոյլ տալու անոնց կաղաքման:

«Շրջանական ժողովը կը յայտնէ իր ցաւը այս իրողութեանց համար՝ եւ կը յանձնարարէ ըլլայ նորընտիր Կեդր. Կոմիտէին, ըլլայ շրջանի մարմիններուն՝ յառաջիկայ տարեշրջանի իրենց գործունէութեան մէջ ուժեղ եւ խստապահանջ գտնուելի՝ դարմանել կարենալու համար տեղի ունեցած պակասները»: (Ընդունուած միաձայնութեամբ):

Բ. բանաձեւ՝ ի մասին ուսանողութեան եւ աշակերտութեան:

Շրջանական ժողովը խորհրդակցութեան առնելով

կին հաւատքն ունի՝ վաղանցուկ խոչընդոտներ չեն կրնար արգելք հանդիսանալ անոր ծաւալման, եւ արդէն կեանքը ցոյց կու տայ որ՝ տարիներու գոյութենէ եւ ջանքերէ յետոյ իսկ ո՛չ մէկ խելահաս ուսանող ունին իրենց շուրջը հակառակորդ կուսակցութիւնները, ըլլայ Ռուսաստանի, ըլլայ Արտասահմանի կամ Թուրքիոյ մէջ:

Վիճաբանութիւնը այս ուղղութիւնով շարունակելով ուսանողութիւնը եւ աշակերտութիւնը երեքի բաժնուեցաւ, I — Նախակրթարաններ յաճախող աշակերտներ, II — երկրորդական կամ բարձր վարժարաններու աշակերտներ եւ III — համալսարան յաճախող ուսանողներ, ու աչքի առաջ ունենալով զանոնք շրջապատող պայմանները եւ առաջնորդուելով վիճաբանութեանց ընթացքէն, ժողովը ցուցմունքներ ըրաւ բանաձեւերու յանձնախումբին՝ այդ ուղղութիւնով բանաձեւ պատրաստել եւ ներկայացնել ժողովին:

Սամաթիոյ պատգամաւորին խնդրը.— Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը յայտնեց ժողովին թէ՛ Սամաթիոյ պատգամաւորը հակառակ օրին ընտրուած եւ ընտրութեան պարագան տեղեկագրուած ըլլալուն՝ Դ. նիստին միայն ներկայ եղաւ՝ Կեդր. Կոմիտէի դիմումին վրայ, իսկ այժմ անպաշտօն կերպով կ'իմացուի որ յիշեալ պատգամաւոր ընկերը իր ուսանողական աշխատանքը պատճառաբանելով՝ հրաժարել է նախքան ժողովին գալը: Սամաթիոյ մարմինը իմանալով այս պարագան՝ նոր ընտրութեան ձեռնարկել է. այժմ նորընտիր պատգամաւորն է որ եկած կ'առաջարկէ ժողովին մասնակցիլ առանց ձայնի, մինչեւ տեղեկագրի ստացուիլն ու ընտրութեան օրինաւորութիւնը հաստատուիլը:

Ժողովը նկատելով որ՝ ո՛չ մէկ պաշտօնական գրութիւն ունի իր սեղանին վրայ Սամաթիոյ մարմինէն այդ պարագաները պարզող ու չկրնալով մեկնութիւն մը տալ հրաժարող եւ կրկին ժողովին ներկայացող Սամաթիոյ պատգամաւորի ընթացքին, որոշեց նախկին պատգամաւորը իբր օրինաւոր պատգամաւոր ընդունիլ՝ ցորչափ Սամաթիոյ մարմինը գրաւոր կերպով չարտայայտուի. ու աչքի առջեւ ունենալ նոյն պատգամաւորին բացակայութիւնները՝ ժողովի ներքին կանոնագրին համեմատ շարժելու համար, միաժամանակ յանձնարարուեցաւ Կեդր. Կոմիտէին՝ այս մասին հարկ եղածը հաղորդել Սամաթիոյ մարմին:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ուսանողներու եւ աշակերտներու յարաբերութեան հարցը շրջանի կազմակերպութեան հետ փոխադարձաբար, լսելով այս մասին պատգամաւոր ընկերներու տեղեկաբերութիւնները՝ Համաձայն իրենց տեղական պայմաններուն եւ պէտքերուն — կ'որոշէ:

1) Վարժարաններէն ներս չկազմակերպել խումբեր:

2) Նախակրթարաններու աշակերտները չընդունիլ կուսակցութեան շարքերուն մէջ:

3) Երկրորդական կամ բարձր վարժարաններու աշակերտներէն շարքերուն մէջ առնել իբրեւ անհատ դաշնակցականներ անոնք միայն՝ որոնք որոշ պատրաստութիւն եւ յարմարութիւններ ունին, առանց թոյլ տալու անոնց՝ իբրեւ դաշնակցական գործելու իրենց գտնուած վարժարաններէն ներս:

4) Գործօն շարքերու մէջ ընդունիլ Համալսարանական ուսանողները եւ մղել զանոնք կուսակցութեան տեսական փրոփականտին եւ յանձնարարել ու աջակցիլ անոնց՝ միջազգային ուսանողական միութեանց միջոցով ընկերվարական փրոփականտ մղելու:

Շրջանական ժողովը միաժամանակ կը յանձնարարէ դաշնակցական ընկերներուն:

Հնարաւոր սահմաններու մէջ տեսական հարցերու շուրջ դասախօսութիւններ սարքել աշակերտական շրջանակներու մէջ՝ զանոնք պատրաստելով ապագայ հասարակական կեանքին (ընդունուած 2ի դէմ 7 ձայնով):

Շրջանի մարմիններու տեղեկագրերը.— Կեդր. Կոմիտէին կը յանձնարարուի՝ իր եւ շրջանի մարմիններու տեղեկագրերու խտացումը տպագրելով ցրուել մարմիններուն:

Կազմակերպումն եւ պատասխանատուութեանց ճշդումը.— Կեդր. Կոմիտէն եւ պատգամաւոր ընկերներէն ոմանք կ'առաջարկեն որ ժողովը հրապարակային արտայայտութեամբ կամ ներքին կազմակերպական ճանապարհներով ճշդէ ընկերներու եւ մարմիններու դիրքը՝ Հանդէպ կարգ մը երեւոյթներու՝ որոնք կը վնասեն կուսակցութեան Հմայքին եւ աններդաշնակութեանց պատճառ կը դառնան:

Այս տեսակէտով ալ պատգամաւոր ընկերներն երեք պարագաներու վրայ կանգ առին.

1) Որ՝ ինքզինքնին դաշնակցական անուանող — ըլլան անոնք արտաքսուած կամ ոչ — եւ սակայն կազմակերպութեան մէջ չգտնուող մարդիկ իրենց արտայայտութիւններով եւ արարքներով յաճախ վնասակար կը Հանդիսանան կազմակերպութեան՝ եւ հասարակութիւնը այդպիսիներու արարքները կը վերագրէ կուսակցութեան կամ դաշնակցականներու:

2) Որ՝ վերակազմութեան առթիւ վերակազմող ըն-

կերներու կամ խումբերու գործ դրած զգուշութեան եւ կամ անուշադրութեան հետեւանքով կազմակերպութեանէն դուրս մնացած են ընկերներ՝ որոնցմէ շատեր վստահելի են եւ սակայն եղած կարգադրութեանէն վըտացած, իսկ ուրիշներ՝ բոլորովին անտեղեակ մնացած են վերակազմութեան աշխատանքէն:

3) Որ՝ կուսակցութեան շարքերը կազմող ընկերներէն մեծագոյն մաս մը ըլլալով նորամուտ տարրեր՝ տեղ տեղ կուսակցութեան կարգապահութեան եւ հաւաքական քաղաքականութեան հակառակ անհատական դէպքեր կը պատահին:

Ժողովը նկատի առնելով այս երեք պարագաները, թեր ու դէմ արտայայտուելով անոնց մասին՝ հետեւեալ որոշումը տուաւ յանձնարարելով յառաջիկայ Կեդր. Կոմիտէին՝ ի հարկին հրատարակել նաեւ գայն.

«1.— Շրջանական ժողովը դիտելով որ՝ կազմակերպութեան շարքերուն մէջ չգտնուող եւ սակայն ինքզինքնին «դաշնակցական» կամ «Դաշնակցութեան համակիր» անուանող անձերու, ինչպէս նաեւ կուսակցութեան շարքերէն հեռացուած նախկին դաշնակցականներու ոեւէ արարքն ու արտայայտութիւնը հակառակորդներու եւ հակայեղափոխական տարրերու կողմէ դիտումնաւոր կերպով յաճախ կը վերագրուի կուսակցութեան եւ դաշնակցական ընկերներու — կը հրահանգէ շրջանի մարմիններուն:—

Նման երեւոյթներու հանդէպ իրենց տեղական պայմաններու ներած սահմանին մէջ լուսաբանել մտքերը եւ մերկացնել իրողութիւնը թոյլ չտալու համար որ խճճուին դաշնակցական մարմիններն ու ընկերները եւ քաջալերուին դատապարտելի արարքներու մէջ գտնուող տարրերը:

1) Դիտելով որ վերջացող տարեշրջանի մէջ կատարուած գտնումին եւ վերակազմութեան աշխատանքներու ընթացքին՝ ընկերներէն ոմանք անտեղեակ մնացած ըլլալով այդ իրողութեան՝ շարքերու մէջ չեն կրցած մտնել — այդպիսի ընկերներուն կը հրահանգուի:—

Մինչեւ երկու ամսուայ միջոցին դիմել տեղական մարմիններուն եւ անոնց կարգադրութեան Համաձայն մտնել կազմակերպական շարքերուն մէջ, այլապէս՝ տարբեր պայմաններու եւ ժամանակամիջոցի մէջ եղած ոեւէ դիմում նկատի պիտի առնուի՝ ըստ կազմակերպական կանոններու ցուցումունքներուն:

Ասոնց հետ միաժամանակ, կազմակերպութեան շարքերուն մէջ գտնուած շրջանի բոլոր դաշնակցական ընկերներուն աւելորդ անգամ մըն ալ կը յանձնարարուի:—

Իւրաքանչիւր դաշնակցական ընկեր պատրաստ ըլլալով պատշաճեցնել իր գործունէութիւնն ու քայլերը կուսակցութեան ընդգրկած հաւաքական քաղաքականութեան՝ հասարակական բնոյթ ունեցող — պետական թէ ազգային — խնդիրներու վերաբերմամբ, խիստ պա-

տասխանատուութեան պիտի ենթարկուին այն ամէն ընկերները՝ որոնք այս տեսակէտով հակակարգապահական ընթացքներու մէջ կը գտնուին եւ իրենց քայլերով կը վնասեն կուսակցութեան Հմայքին:

Անդամավճարներ եւ հասոյթի նորանոր աղբիւրներ.— Ժողովը շրջանի տեղեկաբերութիւններէն իրագիւլ ըլլալով որ նշանակուած անդամավճարներու քանակութիւնը ոչ միայն անգոհացուցիչ է այլեւ գանձումները անկանոն, մինչդեռ շրջանի պիւտճէն եւ առհասարակ կազմակերպութեան հասոյթներու կանոնաւորումին տեսակէտով աւելին ընել հարկ էր, միւս կողմէ դիտելով որ ընկերները կազմակերպութեան իբրեւ հասոյթի աղբիւր ընդունած են աւելի անդամավճարները առանց արտակարգ հասոյթներ եւս հայթայթել հետամըտելու, Շրջ. ժողովը հետեւեալ պարտադիր յանձնարարութիւնները կ'ընէ.

1) Կանոնաւորապէս գանձել անդամավճարները՝ վճարման նուազագոյն սակ ընդունելով իւրաքանչիւր ընկերը ամսական հասոյթի 2%-ը, ինչպէս կը տրամադրէ ընդհանուր կանոնագիրը, ամսավճարի քանակը որոշել ձգելով վճարող ընկերներուն:

2) Ամէն ջանք եւ աշխատութիւն չխնայել կազմակերպութեան օգտին սարքելու համար երեկոյթ-հանդէսներ, վիճակախաղ եւն:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Է.

5 Յունուար (Դշ. գիշեր)

Բացակայ՝ Պարտիզակի պատգամաւորներէն Սրենց, ինչպէս նաեւ Սամաթիոյ եւ Գուրտպէլէնի պատգամաւորները: Իրաւասու ձայնով ներկայ՝ 9, խորհրդակցական ձայնով՝ 2 պատգամաւոր: Հրաւիրուած ընկերներէն 2. Կեդր. Կոմիտէի մնացեալ անդամներ եւ Բիւրոյի ներկայացուցիչը:

Ցենց չներկայացնող շրջաններ.— Կեդր. Կոմիտէի տեղեկաբերութեան պարզուեցաւ որ բացի ենթակոմիտէի եւ կոմիտէի ցենց ներկայացնող մարմիններէն, շրջանին մէջ կան նաեւ հեռաւոր եւ մերձակայ վայրեր՝ որոնք ենթակոմիտէի մը համար պահանջուած անդամներու թիւը չունին. Կեդր. Կոմիտէն կարգադրած էր իրենց հարեւան մարմին կցել այն խումբերը՝ որոնք անմիջապէս մօտ կը գտնուէին ոեւէ ենթակոմիտէի, իսկ այն շրջանները՝ որոնք ցենց չէին ներկայացնել եւ հեռու կը գտնուէին՝ պահած էր առանձին յարաբերու-

թիւն խումբերու հաւաքականութեան հետ: Սակայն իրենց հարեւան մարմինին կցուած մէկ երկու շրջաններ փափաք կը յայտնէին առանձին մարմին ներկայացնել:

Շրջանական ժողովը խնդիրը նկատի առնելով թէ կարգապահական եւ թէ կազմակերպական տեսակէտներով՝ համաձայն գտնուեցաւ Կեդր. Կոմիտէի ըրած կարգադրութեան, յառաջիկային մէջ եւս յանձնարարելով:—

Այն շրջանները՝ որոնք ցենց չեն ներկայացնել եւ իրենց կից ունին ցենց ներկայացնող մարմին՝ կը մնան կցուած անոնց, մինչեւ որ ենթակոմիտէի մը ցենցը լրացնեն, իսկ անոնք որ իրենց հեռաւորութեան համար անյարմարութիւններ կը ներկայացնեն՝ Կեդր. Կոմիտէն առանձին յարաբերութիւն կը պահէ:

Կանանց խումբեր.— Տեղեկագրերու ընթերցումէն եւ պատգամաւորներու բերանացի բացատրութիւններէն տեսնուեցաւ որ, բացի մէկ երկու շրջաններէ, ուրիշ ոչ մէկ վայրի մէջ — Պոլիսն ալ միասին առնելով — կանանց խումբեր գոյութիւն ունին եւ կամ այդ ուղղութեամբ աշխատանք թափուած է: Միւս կողմէ նկատի առնելով կանանց խումբերու օգտակարութիւնը կազմակերպական գործունէութեան յաջողութեան տեսակէտով, Շրջ. ժողովը կը յանձնարարէ մարմիններուն:

1) Լուրջ աշխատանք գործ դնել՝ կանանց խումբերու կազմութեան համար:

2) Արդէն իսկ գտնուած խումբերու կազմակերպական-յեղափոխական դաստիարակութեան համար պարտաւորիչ աշխատանք կատարել եւ տալ յարմարութիւններ առանձին թէ խառն ժողովներու գումարման:

Արհեստակցական եւ բանուորական միութիւններ.— Առաջարկ եղաւ միութիւնները կազմակերպել՝

1) Կուսակցական հողի վրայ՝ նկատելով որ այդպէսով մարմինները հնարաւորութիւն պիտի ունենան ուղղակի հսկելու եւ պարտադիր աշխատանք վերցնելու:

2) Անկուսակցական հողի վրայ՝ նկատելով որ բանուորութեան շարքերը կը կազմեն տարբեր կուսակցութեանց եւ տարբեր ազգութեանց պատկանող տարրեր՝ զորս դժուար պիտի ըլլար մեր կուսակցութեան դրօշին տակ կազմակերպել, առանց տարանջատումներու եւ ներքին պառակտումներու ծնունդ տալու, ինչ որ կը վնասէ բանուորներու անմիջական եւ կենսական շահերուն՝ յօգուտ գիրենք շահագործող պոլիտուաններուն:

Կարծիքներու լայն փոխանակութեան յետոյ՝ ժողովը միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձեւը:

«Նկատելով որ Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի շրջանը Թուրքիոյ գրեթէ բոլոր շրջաններէ աւելի հող ունի բանուորական հարցին, անհրաժեշտ է որ շրջանի բոլոր ընկերներն ու մարմինները իրենց շուրջը գտնուած

բանուորները կազմակերպեն [իբրեւ] արհեստակցական-բանուորական միութիւններ:

Այդ միութիւնները պէտք է կազմակերպել՝ 1) Միջազգային հողի վրայ՝ ուր բանուորները խառն ազգերէ կը բաղկանան. իսկ ազգային՝ ուր անոնք միայն մէկ ազգէ կը բաղկանան, ըլլան անոնք հայ թէ տարբեր ազգութիւններու պատկանողներ:

2) Կազմակերպել միութիւնները զուտ արհեստակցական հողի վրայ, առանց պարտաւորիչ ընելու անոնց՝ ընդունիլ Դաշնակցութեան ծրագիրն ու թաքթիքը: Դաշնակցական ընկերները կը ջանան հետզհետէ անոնց ծանօթացնել Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրն ու թակ-թիկը եւ մղել ու օգտակար դարձնել, զանոնք քաղաքական-ընկերական նպատակներու:

3) Դաշնակցական ընկերներն ու մարմինները պարտաւոր են ղեկավարել Արհեստակցական Միութիւնները ոչ միայն անոնց լոկ տնտեսական շահերուն՝ այլեւ զանոնք բանուորական օրէնսդրութիւններուն եւ ընդհանրապէս բանուորական դատին յաջողութեան ի նպաստ ծառայեցնելու եւ հետապնդելու տեսակէտներով:

Ժողովը ընդունելով որ արհեստակցական եւ բանուորական միութիւններու կազմակերպական սկզբունքով պէտք է կազմել նաեւ քօօքերաթիւները, միւս կողմէ ղիտելով որ այդ ուղղութեամբ շրջանի մարմինները շատ փոքր աշխատանք գործ դրած են — Կ'որոշէ.

«Նկատելով որ՝ ըլլայ Պոլսոյ զանազան արուարձաններու մէջ, ըլլայ մեր շրջանի զանազան գիւղերու եւ քաղաքներու մէջ ղիւրութիւններ չեն պակսիր հիմնելու սպառողական ընկերութիւններ եւ տեղ-տեղ այդ կարգի հիմնարկութեանց գոյութիւնը նոյնիսկ անհրաժեշտ է աշխատաւոր ազգաբնակչութեան նիւթական թէ բարոյական շահերու տեսակէտէն — կը հրահանգուի մարմիններուն եւ ընկերներուն այս ուղղութեամբ գործնական քայլեր առնել եւ դրական աշխատանք կատարել:

Գալով միութիւններու կազմակերպութեան (արհեստակցական, բանուորական թէ քօօքերաթիւներ) Կեդր. Կոմիտէին վրայ պարտականութիւն կը դրուի մարմիններուն հրահանգել, որպէսզի վիճակագրութիւններով ծանօթացնեն իրենց բանուորական-աշխատաւորական պայմանները, ինչպէս նաեւ քօօքերաթիւներու համար ունեցած յարմարութիւններն, ըստ այնմ հրահանգ-կանոնագիրներ պատրաստելու համար:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍՏ Ը.

Յ Յոռնուար (ԵՉ. կէսօր)

Բացակայ՝ Գուրտպէլէնի պատգամաւորը: Իրաւասու ձայնով ներկայ՝ 11 պատգամաւոր. խորհրդակցական ձայնով ներկայ՝ 2: Հրաւիրուածներէն 2 ընկեր եւ ղիւրութիւններ կայացուցիչը:

Կարդացուեցաւ Ե. Նիստի ատենագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Սամաթիոյ մարմինն նոր կարգադրութիւնը.— Սամաթիոյ մարմինը նամակով մը կը յայտնէր թէ նախապէս ընտրած իրենց պատգամաւորը հրաժարած ըլլալով՝ նախաձեռնած են նորի մը ընտրութեան, որուն արդիւնքով պիտի ներկայանայ ընկեր Մանաս, իբրեւ օրինաւոր պատգամաւոր: Ժողովը նկատելով որ նախկին պատգամաւորը ժողովներուն չգալով, ընդունուած կանոնին համաձայն արդէն կորսնցուցած է իր ձայնի իրաւունքը, ներկայացուած վկայականը քննելով, ընտրութիւնը նկատեց օրինաւոր եւ հետեւաբար այս ժողովէն սկսեալ հրաւիրեց նորընտիր պատգամաւորը՝ մասնակցիլ ժողովին: Ժողովը միաժամանակ նկատի առնելով որ նախկին պատգամաւորը հրաժարելէն յետոյ ներկայացած է ժողովին եւ մարմինը ոչինչ գիտէ կամ ոչ մէկ կարգադրութիւն ըրած է, որոշուեցաւ այս անկարգութեան համար յառաջիկայ Կեդր. Կոմիտէի միջոցով նկատողութիւն ընել Սամաթիոյ մարմինին:

Որինականացում.— Ժողովը լսելով այս մասին Բիւրոյի ներկայացուցիչի եւ շրջանի պատգամաւորները, ընդունեց հետեւեալ բանաձեւը՝ 2-ի դէմ 0-ը ձայնով:

«Նկատելով որ առաջադրուած հարցը կապ ունի ամբողջ կազմակերպութեան հետ եւ հետեւաբար ստեղծուելիք սիստեմը պէտք է ըլլայ միօրինակ եւ ընդհանուր՝ Թուրքիոյ մարմիններու համար, Երջ. ժողովը կ'առաջարկէ նորընտիր Կեդր. Կոմիտէին՝ ձեռնհաս մարմին ղիմելով ստիպողութիւն տալ հրահանգ-կանոններու առաքումին, որպէսզի Կեդր. Կոմիտէն եւս իր կարգին ղիւրութիւն ունենայ պատրաստելու շրջանի ներքին կանոնագիրը եւ ղեկավարելու յառաջիկայ գործունէութիւնը ըստ այնմ»:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

9.- Հարցը կը վերաբերի պետութեան կողմէ կուսակցութիւնը (Դաշնակցութիւնը) օրինականացնելու խնդրին:

ՆԻՍՏ Թ.

Դ Յոռնուար (կէսօրէ ետք, Ուրբաթ)

Բացակայ՝ Գուրտպէլէնի պատգամաւորը: Իրաւասու ձայնով ներկայ՝ 11 պատգամաւոր. խորհրդակցական ձայնով՝ 2: Հրաւիրեալներէն 2, ինչպէս նաեւ «Ազատամարտ»ի խմբագրական մարմնի եւ Բիւրոյի ներկայացուցիչը:

Կարդացուեցաւ Զ. Նիստի ատենագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Դատաստանական յանձնախումբի տեղեկագիրը.— Նկատողութեան առնուելով դատաստանական յանձնախումբի տեղեկագիրը՝ ղիտուեցաւ որ շատ համառօտ կազմուած ըլլալուն համար՝ խնդրոյ առարկայ դատերուն վրայ ամփոփ գաղափար մը չէր տար, որպէսզի պատգամաւորները ղիւրութիւն ունենային արտայայտուելու այդ մասին. որոշուեցաւ վերադարձնել ներկայացուած տեղեկագիրը դարձեալ նոյն յանձնախումբին, քիչ մը աւելի ընդարձակը պատրաստելու յանձնարարութեամբ:

Առաջարկ Կեդր. Կոմիտէին.— Կեդր. Կոմիտէի պատգամաւոր ընկերը ղիտել տալով ժողովին՝ որ՝ նոր Կեդր. Կոմիտէի ընտրութեան խնդիրը օրակարգի բաւական կարեւոր հարցերէն մէկն է, եւ խորհրդակցութեան արժանի ու ժամանակի կարօտ, առաջարկեց պատգամաւորներուն, ժողովին մէջ կամ ժողովէն դուրս խորհիլ եւ կարգադրութիւններ ընել այդ մասին, ընտրութիւնը արդիւնաւոր ըլլալու եւ անակնկալներու չհանդիպելու համար, ինչպէս եղեր է անցեալ տարի՝ Երջ. ժողովին: Պատգամաւոր ընկերները հաւաստեցին թէ՛ այդ ուղղութեամբ սկսած են արդէն խորհիլ իրենք:

Գրաւոր եւ բերանացի փրփականտա.— Դաշնակցական մամուլ կամ հրատարակութիւններ եւ անոնց տարածումը.— Կազմակերպում.—

Ժողովը նախ ճշդելով իր ղիրքը վիճաբանութեան առարկայ ըլլալիք խնդիրին նիւթ կազմելիք ազգակներու մասին, «Դաշնակցական մամուլ» պիտակին տակ ընդունեց պաշտօնական եւ կիսապաշտօնական թերթերը.— «Դրօշակ» եւ «Ազատամարտ»,— եւ Դաշնակցութեան հրատարակած գրքերը՝ «Ազատութեան մատենադարան»ի, «Յառաջ»ի, «Դրօշակ»ի եւ այլն: Այս տեսակէտով ալ պատգամաւոր ընկերները արտայայտուեցան հետեւեալ ուղղութեամբ:

Ա.— Գնահատելով «Դրօշակ»ի ուղղութիւնը՝

1) Բաղձանք յայտնուեցաւ անոր կանոնաւոր հրատարակման համար աւելի ջանք թափել:

2) Փոխադրութեան գաղափարին անհամամտու-

թիւն յայտնել՝ եթէ իրագործուի.

3) Մարմիններու միջոցով թերթին տարածման համար աշխատանք գործ դնել, հարկադրելով ընկերները որ կարգան զայն:

4) Թերթին բաշխումը կատարել իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի միջոցով՝ հաշուական եւ ստացման կանոնաւորութեան համար:

Բ.— 1) «Ազատամարտ»ի խմբագրականներու լեզուն եւ ոճը գնահատելի՝ սակայն անհատական ստորագրութեամբ երեւցած կարգ մը յօդուածներու մէջ կը նկատուին թերթին կշիռին եւ արժէքին անհամապատասխան բացատրութիւններ, ինչպէս նաեւ անհատականութիւններ:

2) Իր մօտեցած հարցերու պարզաբանութեան համար յաճախ չի մօտենար Դաշնակցութեան սոցիալիստական տեսակէտով:

3) Մրազրային խնդիրներ չէ պարզաբանած՝ հակառակ իր խոստումներուն, մանաւանդ որ Թուրքիոյ մէջ հրատարակուած միակ կազմակերպական հեղինակաւոր թերթն է:

4) Կուսակցական արտայայտութեանց մէջ եղած է լիպերալ եւ խնդիրներուն մօտեցած է նոյն ակնոցով:

5) Իրարու հակասող մտքեր երեւցած են՝ հակառակ նոյն իսկ կուսակցութեան աշխարհահայեացքին եւ նման պարագաներու տակ խմբագրութիւնը ո՛րեւէ ծանօթութեամբ իր տեսակէտը չէ պարզած:

6) Կրօնական եւ այլ նման նախապաշարումներու դէմ եւս չէ արտայայտուած եւ ընդհակառակը քաջալերող ղիրք բռնած է:

7) Չափէ դուրս տարուած է ազգային խնդիրներով:

Այս նկատողութիւններուն հակառակ ուղղութեամբ արտայայտուող ընկերները հետեւեալ տեսակէտներու վրայ հիմնուեցան.—

1) «Ազատամարտ»ի ուղղութիւնը համաձայն է Հայ եւ պետական իրականութեան օրուայ պահանջներուն եւ Դաշնակցութեան ընդգրկած այժմեան ուղղութեան եւ տաքթիքին:

2) Դաշնակցութիւնը եւ հետեւաբար «Ազատամարտ»՝ զինք շրջապատող այլազան պայմաններուն մէջ չի կրնար սահմանափակուել զուտ ընկերվարական խնդիրներով:

3) Երբեմն երեւցած խիստ արտայայտութիւններն ու բացատրութիւնները պէտք է փնտռել երկու տարիէ ի վեր մղուած անընդհատ պայքարին եւ ասկէ առաջացած հոգեբանութեան եւ տրամադրութեան մէջ. եւ արդէն ուրիշ կերպ ալ կարելի չէր՝ տրուած պայմաններուն մէջ. նոյնիսկ երեւոյթներու լուսաբանութեան տեսակէտով անձնականութիւններով զբաղիլ անխուսափելի կը դառնայ:

4) «Ազատամարտ» ամէն խնդիրներուն ալ մօտեցած

է ընդհակառակը՝ մեկնելով կուսակցութեան աշխարհահայեացքէն. գալով սկզբունքային-ծրագրային պարզարանութեանց՝ աւելին ընել «Դրօշակ»ին կ'իյնայ, ըստ որում «Ազատամարտ» իբրեւ քաղաքական խնդիրներով զբաղող առօրեայ թերթ՝ զբաղած է այնքան՝ որքան ներած են իր աշխատանքի եւ օրաթերթի սահմանները. յետոյ պէտք չէ մոռնալ ընթերցողներու ինքնութեան եւ թերթին զուտ տնտեսական պարագաները: Նոյն բանը կը տեսնուի Եւրոպայի ընկերվարական կուսակցութեանց մօտ եւս, ուր օրաթերթերը, ինչպէս օրինակ «Իւմանիթէ», կը զբաղին օրը օրին քաղաքական խնդիրներով, զուտ սկզբունքային խնդիրները վերապահելով պրոչիւրներու եւ հանդէսներու:

5) Բանուորական-աշխատաւորական խնդիրներով զբաղած է այնքան՝ որքան նիւթ տրուած է կազմակերպութեան մարմիններէն եւ ընկերներէն, որոնք չեն պատասխանած նոյնիսկ ցրուուած հարցարանին:

6) Ազգային խնդիրներու միջամտելով՝ ընծայած է ընկերվարական-աշխատաւորական դատին ամենամեծ ծառայութիւններէն մէկը, որովհետեւ պայքարի զբաղման նիւթ կազմող խնդիրները շատ որոշ են.— կրթական, ազգապատկան կալուածներուն մատակարարութիւն, եւն, եւն, որոնց մէջ տուժողը միշտ աշխատաւոր մեծամասնութիւնն է:

7) Գեղարուեստ եւ գրականութիւն պէտք չէ չփոթել հրապարակախօսութեան հետ. չենք կրնար պահանջել որ ամէն գրագէտ իր ո՛նեւ գրուածքին մէջ ղեկավարուի զուտ մեր տեսակէտներով եւ մնայ անոնց սահմանին մէջ. ատիկա սպաննել պիտի նշանակէր մտքի թուրքը:

8) Իմաստասիրական-կրօնական յօդուածներու կը մօտեցուի ա՛յն չափով՝ ինչ չափով որ կը թոյլատրեն շրջապատող պայմանները: «Յաւելուած-Ազատամարտ»ի անգոհացուցիչ բովանդակութիւնը՝ խմբագրութիւնը ինքն ալ իր մտահոգութեան առարկաներէն մէկն ըրած է եւ դարմանի ձեռնարկած:

Գնահատելով «Ազատամարտ»ի ուղղութիւնը պետական թէ՛ ազգային խնդիրներու մէջ՝ կ'առաջարկուի 1) Քիչ մը աւելի խիստ արտայայտուիլ «Իթիհատ»ի եւ կառավարութեան մասին՝ ա՛յն խնդիրներու վերաբերմամբ՝ որոնց մասին ակնարկուած գործօնները հակառակ կ'ընթանան մեր աշխարհահայեացքին եւ մեր ազգային իրաւունքներուն եւ առանձնաշնորհումներուն: 2) «Ազատամարտ»ի մէջ յատուկ բաժին մը ունենալ՝ յատկապէս տեղ տալու համար մեր սկզբունքային հարցերը ժողովրդականացնելու ծառայող յօդուածներու: Յանձնարարութեամբ բանաձեւերու յանձնախումբին՝ բերել ժողովի արտայայտութեան համապատասխան բանաձեւ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամանակէն 1/2 ժամ ուշ, օրակարգի մնացեալ մասին վրայ խօսիլ վերապահելով [յաջորդ նիստին]:

ՆԻՍՏ Ժ.

7 Յունուար, ուրբ. գիշեր

Բացակայ Գուրտպէյէնի պատգամաւոր: Իրաւասու ձայնով ներկայ՝ 11 պատգամաւոր. խորհրդակցական ձայնով՝ 2. Բիւրոյի ներկայացուցիչը եւ հրաւիրուած ընկերներէն 2:

Շարունակութիւն՝ նախորդ օրակարգի.— Գրաւոր եւ բերանացի փրոփականտա.— Առաջարկ եղաւ անդրադառնալ դաշնակցական, ընկերներու անհատական նախաձեռնութեամբ եւ պատասխանատուութեամբ հրատարակուած թերթերուն եւս, քանի որ անոնց ոեւէ հակասութենէն կամ անտեղի արարքէն առաջացած հակազդեցութիւնը կը բաժնուի առհասարակ կուսակցութեան վրայ, մանաւանդ որ նման անհատական հրատարակութիւն մըն ալ գոյութիւն ունի Իզմիթի մէջ: Ժողովը նկատելով որ իր իրաւասութեան սահմանին մէջ չ'իյնար զբաղիլ անհատական նման ձեռնարկներով, Կեդր. Կոմիտէին կը ձգէ հրապարակով արտայայտուիլ, երբ տեսնէ թէ՛ այդ կարգի հրատարակութիւնները կը շփոթուին իբրեւ կուսակցական ձեռնարկ եւ կամ անոնց շեղումները կը վերագրուին կուսակցութեան:

Տեղեկութիւններ տրուեցաւ ժողովին այս պահուս կազմակերպութեան տրամադրութեան տակ գտնուած գրքերու քանակին մասին, որոնց գումարը կը հասնի մօտ 2000 ոսկիի: Մինչ միւս կողմէ գրքերու տարածումը չափազանց մոռացութեան տրուած է մեր մարմիններուն կողմէ եւ սպառուածներուն փոխարժէքն ալ փոխադրելու պարտականութեան մէջ՝ կը դիտուի նկատողութեան եւ ուշադրութեան արժանի անփութութիւն: Աչքի առջեւ ունենալով ահա այս ամէնը, հրամայական կը դառնայ գրքերու կանոնաւոր սպառման գործը՝ դիւրութիւն տալու համար նոր հրատարակութեանց, ինչ որ ներկայ պայմաններուն տակ անկարելի կը դառնայ: Եւ իբրեւ միջոց գրքերու տարածման՝ ժողովը հաւաքաբար կ'ընէ հետեւեալ պարտադիր յանձնարարութիւնները.— 1) Պարտականութիւն դնել ընկերներու վրայ՝ որպէսզի ջանան ունենալ կուսակցութեան հրատարակած գրքերէն մէկ մէկ օրինակ եւ անոնց ընթերցումը իրենց մտաւոր աշխատանքներէն մէկը նկատեն: 2) Կազմել իւրաքանչիւր մարմնի հսկողութեան տակ Դաշնակցութեան հրատարակութիւնները — գիրք, պրոչիւր եւ թերթ,— տարածելու աշխատող յանձնախումբեր: 3) Սարքել դասախօսութիւններ՝ սկզբունքային խնդիրներու եւ առհասարակ դաշնակցական հրատարակութեանց նիւթ կազմող հարցերու շուրջը՝ ընկերներու եւ հասարակութեան մէջ հետաքրքրութիւն արթնցնելու համար դէպի այդ գրքերը: 4) Դաշնակցական ակումբներու եւ ընթերցարան-խմբա-

տեղիներու վարչութեանց վրայ եւս պարտականութիւն դնել՝ գրքերու սպառման մասին: 5) Դաշնակցութեան կողմէ սարքուած հրապարակային ատենախօսութեանց միջոցին՝ վաճառման գործին աշխատիլ: 6) Պատգամաւորները իրենց շրջանները վերադարձին՝ պարտաւոր պիտի ըլլան վերոյիշեալ ցուցմունքներով դրական աշխատանք կատարել:

Թուուցիկներու հրատարակութիւնը եւս սերտօրէն կապուած ըլլալով կուսակցութեան փրոփականտին եւ թաքթիքին օգտակար եւ վնասակար հանդիսանալու տեսակէտէն, շրջանական ժողովը՝ համաձայն կուսակցութեան կանոնագրի ցուցմունքներուն՝ կը հրահանգէ.— 1) Տեղական մարմինները թուուցիկ կրնան հրատարակել այն պարագային միայն՝ երբ հրատարակուելիք թուուցիկին պատճէնը ղրկելով Կեդր. Կոմիտէին՝ անոր հաւանութիւնը կը ստանան: 2) Անհատ ընկերները երբ հաւաքաբար կամ անհատաբար տեղական կամ ազգային ոեւէ խնդրի մասին պէտք կը զգան արտայայտուելու՝ պէտք է հաւանութիւն ստանան տեղական մարմիններէ: 3) Ձուտ կուսակցական ներքին եւ թաքթիքական-սկզբունքային խնդիրներու մասին ո՛չ մէկ ընկեր կամ մարմին կրնայ հրապարակ գալ՝ եթէ չունի Կեդր. Կոմիտէի հաւանութիւնը իրեն հետ: 4) Կեդր. Կոմիտէն ազատ է հրատարակել թուուցիկներ՝ երբ պէտքն զգայ եւ լրացնէ կանոնագրի տրամադրութիւնները:

Ծարդ մղուած բերանացի փրոփականտը, իր զուտ միթիւնկային հանգամանքին մէջ՝ պատգամաւորներէն ոմանք նկատեցին սխալ եւ վնասակար. ըստ որում անոնք շարքերու դաստիարակութեան եւ հարցերու պարզաբանութեան տեսակէտէն օգտակար դեր մը չեն կատարած, եւ ընդհակառակը ընկերներու ուշադրութիւն ու հետաքրքրութիւնը կ'յանած են, անոնց մէջ արթնցնելով աւելի ազգայնական նեղ գզգցումներ: Այս արտայայտութեան հակառակ՝ պատգամաւորներու մեծամասնութիւնը ցարդ տեղի ունեցած փրոփականտը նկատեց արդիւնք պահանջի մը՝ որ իրականութենէն բխեցաւ եւ որ նպատակ ունէր մեր տեսական փրոփականտին համար գետին պատրաստել. մանաւանդ սխալ պիտի ըլլար ըսել թէ տեղի ունեցած բոլոր դասախօսութիւն-բանախօսութիւններն ալ չեն կրցած նշանակելի դեր կատարել նոյնիսկ այդ ուղղութեամբ, ընդունելով հանդերձ որ զուտ ընկերներու մտաւոր-ծրագրային դաստիարակութեան փրոփականտը եղած է անբաւարար: Միւս կողմէ մոռնալու չէ ուշադրութեան առնել նաեւ այն բազմապիսի եւ այլազան պայմաններն ու դժուարութիւնները՝ որոնց մէջէն քալել հարկադրուած էր մեր փրոփականտի գործը:

Այս երկու տեսակէտներու շուրջը ժողովը թեր ու դէմ երկար արտայայտուելէ վերջ, որոշ ցուցմունքներ ըրաւ յանձնարարելով բանաձեւերու յանձնախումբին՝ որպէսզի աչքի առջեւ ունենայ ժողովի տրամադրու-

թիւնը եւ ըստ այնմ համապատասխան բանաձեւը պատրաստելով, ներկայացնէ յառաջիկայ նիստերուն:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամանակէն 1/2 ժամ վերջ:

ՆԻՍՏ ԺԱ.

8 Յունուար, Ծին, կէսօրէ ետք

Բացակայ՝ Գուրտպէյէնի պատգամաւորը: Իրաւասու ձայնով ներկայ՝ 11. խորհրդակցական ձայնով ներկայ՝ 2, հրաւիրուած ընկերներէն՝ 2:

Պիւտճէ.— Փրոփականտիսթի հարց եւ յառաջիկայ Կեդր. Կոմիտէի կազմը.— Օրակարգի այս երեք հարցերն ալ իրարու հետ սերտ առնչութիւն ունենալուն, ժողովը միաժամանակ նկատի առաւ երեք խնդիրներն ալ: Կեդր. Կոմիտէի պատգամաւորը ամփոփ տեղեկութիւն տուաւ շրջանի պէտքերուն, նիւթական ուժերուն եւ տրամադրելի ընկերներու որակին ու քանակին, եւ ժողովի ուշադրութեան յանձնեց Կեդր. Կոմիտէի ընկերներու մեծամասնութեան եւ իր անձնական տեսակէտները: Կեդր. Կոմիտէն առաջնորդուելով շրջանի պէտքերէն, այն կարծիքէն էր, որ առանց պիւտճէի անբաւականութիւնը նկատի առնելու եւ մնալու Ընդհ. ժողովի գծած սակին մէջ, պահել երկու ազատ ընկերներ, որոնցմէ մէկը յատկապէս շրջանի մէջ պատի բերանացի փրոփականտի եւ կազմակերպական աշխատանք կատարելու համար, իսկ միւսը մնալով Պոլիս՝ տանի գրաւոր յարաբերութեանց եւ այլ յարակից աշխատանքները, ի հարկին ան եւս քոնթրոլի եւ այլ պարտականութեամբ շրջանը ելլելու առաջադրութեամբ: Իսկ Կեդր. Կոմիտէի պատգամաւորը անձնապէս Ընդհ. ժողովի ցոյց տրուած սակը աչքի առջեւ ունենալով, ինչպէս նաեւ ուրիշ կարգ մը տեսակէտներ՝ կ'առաջարկէր պահել մէկ հրապարակախօս ընկեր, որ տարուան մէջ մէկ-երկու անգամ շրջան ելլէ, իսկ մնացեալ ժամանակը յատկացնէ գրաւոր յարաբերութեանց պահպանման՝ օժանդակութեամբ մնացած ոչ-ազատ ընկերներու: Կեդր. Կոմիտէն շրջանի կազմակերպութեան վիճակը նկատի ունենալով եւ յուսալով որ անդամավճար եւ պատահական հասոյթներ պիտի կրնան կանոնաւորաբար գանձուիլ կամ ստեղծուիլ, տարեկան 25-30,000 դրուշի ընդհանուր եկամուտ մը ցոյց կու տար, որուն 40%ը, ըստ Ընդհ. ժողովի որոշման՝ պիտի յանձնուի Բիւրոյին, կազմակերպութեան ընդհ. պէտքերուն գործածելու համար. 20%ը հազիւ պիտի բաւէր տեղական մարմիններուն,— որմէ աւելի ծախսելու իրաւունք ալ չունին արդէն,— մինչ մնացած 40%ը չպիտի բաւէ փրոփականտի եւ

կազմակերպական այլ անխուսափելի պէտքերու:

Պատգամաւորները Կեդր. Կոմիտէի ներկայացուցած Հասոյթի գումարը ընդունելով շատ նուազ, քան ինչ որ կը խոստանայ տալ շրջանի կազմակերպական ներկայ վիճակը, հետեւեալ պիւտճէն կազմեցին զայն հայթայթելու խոստում տալով ժողովին:

Շրջաններ	Նախահաշիվ Կեդր. Կոմիտէի	Պատգամաւորներու յանձնառութիւնը	ընդհանուր գումար
	Անդամավճար + բացառիկ		
Գարթալ	300	700+ 300=	1000
Գատըզիւղ	680	2600+1000=	3600
Սկիւտար	1320		
Բերա	1200	6000+ 600=	6600
Սամաթիա	2000	2500+ 500=	3000
Պարտիզակ	3300	3500+1500=	5000
Նիկոմիդիա	600	600+ 400=	1000
Արմաշ	1300	1000+ 500=	1500
Ատա-բազար	4000	5400+1600=	7000
Գուրտպէլէն	1000	1000+.....=	1000
Գնճըլար	1500	1760+ 400=	2160
Չէնկիլէր	1800	2000+.....=	2000
Պրուսա	800	800+.....=	800
Պալիա-Սատն	1500	1500+=	1500
Մալկարա	600	700+.....=	700
Ռոտոսթո	300	300+..... =	300
Տէտէ-Աղաճ	300	300+..... =	300
Չոնկուլտաթ	820	1000+ 200=	1200
Այլեւայլ		2000=	2000

40660

Այս հաշուով միջին գումար ընդունելով 40,000 դրուշ, ժողովը 18,000 դրուշը, ըստ Ընդհ. ժողովի որոշման, պիտի տայ Բիւրոյին. 8000 դրուշ տեղական մարմիններու ծախսին՝ ըստ 20% սակի եւ 18,000 դրուշ ալ կը մնայ երկու ազատ ընկերներու եւ դիւանական ծախքերու:

Պատգամաւորներէն ոմանք դիտել տուին որ 20% սակը շատ է շրջաններու համար, սակայն ժողովը մնալով Ընդհ. ժողովի գծած այդ սահմանին մէջ՝ կը յանձնարարէ որոշ խնայողութիւն՝ շրջանի պիւտճէն չնեղելու համար:

Աչքի առջեւ ունենալով մինչեւ այժմ շրջանի փրոփականտայի վերաբերմամբ եղած աշխատանքը եւ անոր դրական թէ բացասական կողմերը՝ առաջարկ եղաւ շրջանային մէկէ աւելի փրոփականտայութիւն ունենալ եւ կամ պատահական փրոփականտայութիւններ դրկել: սակայն երկու պարագային մէջ ալ անպատեհութիւններ նկատուելով՝ շրջիկի մը պէտքին վրայ ծանրացաւ ժողովը եւ գրաւոր յարաբերութիւնները պահող մնայուն ընկերոջ մը անխուսափելի անհրաժեշտութիւնը շեշտեց՝ անոնց երկուքին համար իր պիւտճէին մէջ նախատեսելով տարեկան 140-145 ոսկիի գումար մը եւ 3-ի դէմ 8 ձայնով ընդունեց հետեւեալ բանաձեւը:—

«Նկատի առնելով շրջանի բացառիկ պահանջը՝ այս տարեշրջանի համար առանց նոյնիսկ նկատի առնելու պիւտճէի անբաւականութիւնը կամ սակը՝ պահել երկու ազատ ընկեր՝ մէկը փրոփականտայի, միւսը նամակակցութեան եւ յարաբերութեանց պահպանման համար, ի հարկին այս վերջինը եւս շրջանը պատելու առաջադրութեամբ»:

Անցնելով Կեդր. Կոմիտէի ընտրութեան նախապատրաստութեան, առաջարկուեցաւ յարմարագոյն թեկնածուներու անուններ, անոնց մասին արտայայտուելէ յետոյ, ընտրութիւնը վերապահուեցաւ յաջորդ նիստին, ընտրելիներու հաւանութիւնը կանխաւ առնելու յանձնարարութեամբ: Այս առթիւ նաեւ ժողովը որոշեց 5 անդամէ բաղկացած Կեդր. Կոմիտէ ընտրել, մէկն ունենալով նաեւ յարաբերութիւններ պահող ընկերը՝ իբր այն ընդունելով ժիրայրը², եւ 2 փոխանդամ ալ բացէն ընտրել՝ հեռացող կամ հրաժարող անդամներուն յաջորդելու համար:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍՏ ԺԲ.

8 Յունուար, Շք. գիշեր

Բացակայ՝ Գուրտպէլէնի եւ Գնճըլարի պատգամաւորները: Իրաւասու ձայնով ներկայ՝ 10 պատգամաւոր: Խորհրդակցական ձայնով՝ 2:

Կարդացուեցաւ Թ. րդ. նիստի ատենագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Ընտրութիւն Կեդր. Կոմիտէի.— Պատգամաւորներու յայտնած փափաքին համաձայն, առանց խորհրդակցութեան եւ վիճաբանութեան, գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ Կեդր. Կոմիտէի ընտրութեան համար, որ հետեւեալ արդիւնքը տուաւ.

Ֆելիքս՝ 9 քուէ. Շահրիկ՝ 8, Ժիրայր՝ 8, Սահակեան՝ 8, Օր. Սաթենիկ՝ 8: Փոխանդամներ՝ Արշաւիր 7 քուէ, Գալֆա՝ 6: Ասոնցմէ զատ Կեդր. Կոմիտէի անդամակցութեան համար քուէ ստացան՝ Արշաւիր՝ 3, Պատրիքով՝ 1, Բարբարոս՝ 1: Իսկ փոխանդամութեան համար՝ Սեւակն՝ 2, Ներսէս՝ 2, Շահրիկ՝ 1, Սահակեան՝ 1, Ֆելիքս՝ 1:

Շրջուն փրոփականտայութի խնդիր.— Խորհրդակցութեան առարկայ ընելով շրջիկ ընկերոջ ինքնութեան հարցն ու իրաւասութեան եւ պատասխանատուութեանց սահմանը, Շրջանային ժողովը որոշեց ուղղակի իր կողմէ ընտրել շրջիկը, ենթարկելով զայն Կեդր. Կոմիտէի պատասխանատուութեան եւ անոր ցուցմունքներով դեկավարուելու պարտադրութեան. միաժամանակ ազատ ձգելով նաեւ Կեդր. Կոմիտէն ի հարկին հրաժարեցնել շրջիկը՝ երբ շրջաններէն լուրջ բողոքներ եւ դժգոհութիւններ գան անոր մասին:

Իբր տրամադրելի շրջիկ ընկեր՝ Կեդր. Կոմիտէն կը ներկայացնէր ընկեր Արիսը՝ որու մասին կարծիքներու փոխանակութիւններ տեղի ունենալէ յետոյ՝ միաձայնութեամբ զայն ընտրեց, վերոյիշեալ որոշումներու սահմանին մէջ:

Տինոյեանի նամակը.— Կեդր. Կոմիտէի կողմէ շարքերէն հեռացուած կեդրոնական վարժարանի աշակերտ Տինոյեանի նամակ մը ուղղուելով Կեդր. Կոմիտէին, կ'առաջարկէր իր խնդիրը Շրջ. ժողովի նկատառութեան յանձնել եւ վերաքննել տալ: Նամակը յղուեցաւ դատական յանձնախումբին՝ նկատի առնելու համար:

Շրջանի կազմակերպութեան դիրքը՝ ազգային-կուլտուրական գործերու մէջ.— Օրակարգի նիւթ կազմող այս հարցի մասին պատգամաւոր ընկերները արտայայտուեցան հետեւեալ ուղղութեամբ.

Ա.— 1) Կազմակերպական մարմինները իրենց գոր-

ծելակերպով դուրս եկած են Ընդհ. ժողովի որոշումներու սահմանէն, այնպէս որ կուսակցութիւնը իր կարեւոր գործերը եւ իր աշխարհահայեացքին անմիջական ենթակայ կարեւորագոյն խնդիրները ձգած՝ ազգային գործերու մէջ մխրճուած է: 2) դաշնակցական ընկերները չեն արտայայտուած գոնէ դաշնակցական աշխարհահայեացքով: 3) իբրեւ ընկերվարական կուսակցութիւն չենք կրնար մասնակցիլ գործադիր իշխանութեանց:

Բ.— 1) Դաշնակցական ընկերները աննշան շեղում մը միայն ըրած են Ընդհ. ժողովի որոշումէն՝ մղուած միմիայն իրականութեան պահանջէն, հաւաքական աշխատանք գործ դնելով ազգային գործերու մասնակցութեան մէջ. եւ արդէն իրականութեան պահանջը այնքան ուժեղ է եղած որ՝ դաշնակցականները գրեթէ ամէն տեղ մասնակցելով եւ հետաքրքրուելով՝ Դաշնակցութիւնը մասնակցած ըլլալու երեւոյթը առաջացաւ այն ինչ՝ ընդհակառակը ո՛չ մէկ դաշնակցական մարմին հրապարակ եկած եւ յանուն կուսակցութեան պայքար մղած է: Ազգային ժողովի դաշնակցական երեսփոխաններու դիրքը նոյնպէս տարբեր կերպով չէ կարելի մեկնել, քանի որ անոնք եւս իբր անհատ-քաղաքացիներ կ'արտայայտուին ամէն պատեհութեամբ: 2) Ազգային ժողովի եւ ազգային վարչութեանց յորինուածքն ու դերը նոյնը չէ՝ բաղդատմամբ պետական վարչութեանց: 3) Ընդհ. ժողովը Օսմ. խորհրդարանի դաշնակցական պատգամաւորներուն առջեւ որոշ արգելք կը դնէ մասնակցելու նախարարութեան մէջ, ընդհակառակը ո՛չ մէկ նման արգելք կը սահմանէ ազգային վարչութեանց համար, ու թոյլատրելով անհատ-դաշնակցականներուն մասնակցիլ ազգային-կուլտուրական գործերու, թոյլատրած կ'ըլլայ նաեւ մասնակցիլ գործադիր իշխանութեանց: Անգլիոյ եւ ուրիշ երկիրներու մէջ անգամ ընկերվարականները գործադիր իշխանութեանց մասնակցած եւ ի նպաստ աշխատաւորութեան օրէնքներ անցուցած են. մանաւանդ՝ հաւատարիմ Դաշնակցութեան աշխարհահայեացքին՝ անհատին դերը պէտք չէ ժխտել: 4) Դաշնակցականները չմասնակցելով ազգային-կուլտուրական գործերուն՝ հարկ պիտի ըլլայ ձգել բոլոր գործերը յետադիմական-հակառակորդ տարրերուն. գաւառներու մէջ մանաւանդ մտաւորական ուժերը Դաշնակցութեան մէջն են, հետեւաբար արգիլել անոնց մասնակցութիւնը՝ պիտի նշանակէր քանդել մեր կուլտուրական-կրթական գործերը. ու եթէ երբեք դաշնակցական ընկերները չմասնակցին գործադիր իշխանութեանց՝ որո՞նց է որ քուէ պիտի տան դաշնակցականները: 5) Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան եւ բարեփոխութեան իսկ տեսակէտով՝ դիրքերը պէտք է մեր ձեռքն ըլլան:

Վերոյիշեալ տեսակէտներով լայնօրէն վիճաբանելէ յետոյ հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ.

«Առաջնորդությունով Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովի այն որոշումն է, որ իրաւունք կու տայ դաշնակցական ընկերներուն մասնակցել ազգային-կուլտուրական գործերուն, կ'առաջարկուի յառաջիկայ Ընդհ. ժողովին, որպէսզի այդ իրաւունքը պարտադիր դարձնէ կուսակցութեան համար հաւաքաբար, ձգելով որ իւրաքանչիւր շրջանի դաշնակցական ընկերներ կամ մարմիններ ճշդէն իրենց մասնակցութեան եղանակն ու աստիճանը՝ համաձայն գիրենք շրջապատող պայմաններուն եւ իրենց թուական կամ բարոյական ուժին: Միաժամանակ կը հրահանգուի շրջանի ընկերներուն, որպէսզի մինչեւ 2⁰ Ընդհ. ժողովի գումարումը՝ ընկերները ոչ յանուն Դաշնակցութեան՝ բայց հաւաքական ուժերով ձգտին ազգային ժողովներու եւ մարմիններու մէջ:— ըլլան գործադիր թէ օրէնսդրական,— կարելի եղած չափով իրենց ուժեղ մասնակցութիւնը բերել»: (Ընդունուած 7 ձայնով, 2 ձեռնպահ, եւ 1՝ մասնակցութեան հակառակ):

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍՏ ԺԳ.

Ծ Յունուար, Կիր. կէսօրէ ետք

Բացակայ՝ Գուրտպէլէնի պատգամաւորը: Իրաւասու ձայնով ներկայ՝ 11: Խորհրդակցական ձայնով ներկայ՝ 2, հրաւիրուած ընկերներ՝ 2:

Ընթերցում եւ վաւերացում նախորդ նիստերու:

Բանաձեւ գրաւոր եւ բերանացի փրոփականտի.— Ներկայացուեցաւ հետեւեալ բանաձեւը, որ ընդունուեցաւ 8 ձայնով:—

«Շրջանական ժողովը իր ուշադրութեան առարկայ ընելով շրջանի մէջ ցարդ մղուած բերանացի փրոփականտը՝ իր զանազան ձեւերուն մէջ, ինչպէս նաեւ դաշնակցական մամուլի ուղղութիւնը՝ իր ընդհանուր գծերուն մէջ, լսելով միաժամանակ շրջաններէն եկած կարծիքներն ու առաջարկները այդ մասին՝ յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան.

1) Բերանացի փրոփականտի համար ցարդ ընդունուած միջինկային ձեւը — որոշ չափով արդիւնք սահմանադրութենէն յետոյ առաջացած իրականութեան եւ տիրող հոգեբանութեան — կը նկատուի անբաւարար ստեղծուած պահանջին՝ եւ աւելի նպատակայարմար ու սխալեմաթիք աշխատանքի մը պէտքը կը զգացուի, որուն համար ժողովը կը տրամադրէ իր ունեցած միջոցները, սպասելով նաեւ այդ մասին ձեռնհաս մարմիններու եւ ընկերներու գործնական աջակցութիւնը:

2) Գնահատելով «Դրօշակ»ի ուղղութիւնը՝ բաղձանք

կը յայտնէ ամսէ ամիս անոր կանոնաւոր հրատարակման, պահելով թերթը կրկին ժընելի մէջ:

3) Գնահատելով «Ազատամարտ»ի կատարած օգտակար եւ ներգործական դերն ու ուղղութիւնը պետական թէ ազգային խնդիրներու եւ հարցերու քննադատութեան եւ պարզաբանութեան տեսակէտով, ու քաջալերելով գիրքը իր մղած պայքարին մէջ, կը փափաքի որ անիկա ձգտի սխալեմաթիք եւ պարբերական յօդուածներով Դաշնակցութեան սկզբունքներուն եւ աշխարհահայեացքին պարզաբանութեան եւ ժողովրդակաւնացման, ինչպէս նաեւ անհատական յօդուածներու ուժին եւ ուղղութեան վերաբերմամբ ըլլալ աւելի ուշադիր՝ պահելու համար «Ազատամարտ»ի դիրքը իր դերին արժանի բարձրութեան վրայ եւ իր ուղղութեան մէջ՝ հետեւողական կուսակցութեան սկզբունքներուն:

4) Պարտականութեան տակ կը դնէ շրջանի մարմինները՝ ամէն կարելի աշխատութիւն գործ դնել դաշնակցական մամուլի եւ հրատարակութեանց ծաւալման՝ համաձայն յատկապէս այդ մասին ժողովին կողմէ եղած մասնաւոր ցուցմունքներուն:

Դատական խնդիրներ.— Դատական յանձնախումբը՝ մանրամասն տեղեկաբերութիւն ընելով Տինոյեանի եւ Ենովք Շահէնի դատական խնդիրներուն՝ առաջարկ կը բերէր

I.— Հաստատել Տինոյեանի մասին Կեդր. Կոմիտէի կայացուցած որոշումը՝ աւելցնելով որ դատական յանձնախումբը կողմնակի կերպով լսած է նաեւ ենթական եւ իր տրամադրութեան տակ գտնուած տղքումէներէն ու Կեդր. Կոմիտէի տուած բացատրութիւններէն յետոյ՝ պէտք չէ տեսած հրաւիրելու իր ներկայութեան ամբաստանեալ եւ ամբաստանող կողմերը:

II.— Ընդունելով հանդերձ Ենովք Շահէնի մասին Կեդր. Կոմիտէի որոշման օրինաւորութիւնը, մանաւանդ որ Ենովք Շահէնն ինքն ալ դժգոհութիւն չէր յայտնած, առաջարկ կը բերէր պատիժին 2/3 մասը լրացնելէ յետոյ՝ ներել:

Կեդր. Կոմիտէի պատգամաւոր ընկերը երկու խընդիրներու մասին ալ տուաւ բացատրութիւններ, վերջինի մասին յայտնելով իր ընկերներու մեծամասնութեան կարծիքին հետ եւ փոքրամասնութեան կարծիքը՝ որ Ենովքի ի սպառ արտաքսման կուսակից եղած է:

Շրջանական ժողովը կարծիքներու փոխանակելէ յետոյ միաձայնութեամբ որոշեց հաստատել Կեդր. Կոմիտէի որոշումը՝ այն է՝ «Պօղոս Տինոյեան մինչեւ իր ուսանողական շրջանին վերջացնելը հեռացուած մնայ կուսակցութեան շարքերէն. իսկ այդ ժամանակամիջոցն յետոյ յիշեցնել այս որոշումը այն շրջանի դաշնակցական մարմինն՝ ուր կը գտնուի Պ. Տինոյեան, որպէսզի նկատի առնուի յիշեալի անցուցած կեանքը եւ քննու-

թենէ յետոյ միայն ընդունուի կուսակցութեան շարքերուն մէջ»:

Իսկ ժողովի մեծամասնութիւնը համաձայն ըլլալով դատական յանձնախումբի կողմէ ի մասին Ենովք Շահէնի բերած առաջարկին եւ ընդհակառակը. Կեդր. Կոմիտէի կայացուցած որոշումը երկու ամսուան համար եւս երկարաձգել որոշեց՝ ձայներու 2/3ի մեծամասնութեամբ՝ այսպէս.

«Հեռացնել Ենովք Շահէնը կուսակցութեան շարքերէն 8 ամսուան պայմանաժամով — սկսեալ 1910 Հոկտ. 15էն, իսկ վերստին ընդունուելու պարագային, նկատի առնել՝ հեռացուած 8 ամսուայ ընթացքին մէջ անոր ունեցած ընթացքը եւ առնել Կեդր. Կոմիտէի հաւանութիւնը յառաջիկային մէջ, նման դէպքի մը պարագային աւելի խիստ պատիժ սահմանել:

Համերաշխութիւն հայ եւ տարբեր ազգութեանց պատկանող կուսակցութեանց հետ.— Աչքի առջեւ ունենալով հայ թէ դրացի ազգութեանց իրականութեան մէջ գործող կուսակցութիւնները, անոնց սկզբունքները, ծրագիրներն ու հետազօտութիւնները, Շրջանական ժողովը հետեւեալ որոշումները կու տայ.

I.— «Ըլլալով փափաքող համերաշխութեան զաղափարին տարածման, Շրջանական ժողովը կը հրահանգէ իր շրջանի մարմիններուն՝ համերաշխութեամբ գործել այն բոլոր հայ տարրերուն հետ — ըլլան անոնք խմբակցութիւն թէ կուսակցութիւն — որոնք կը փափաքին Դաշնակցութեան կամ դաշնակցական ունեւ մարմին հետ համախորհուրդ եւ համերաշխաբար աշխատիլ այս կամ այն առաջադրութեան եւ նպատակին իրականացման համար, ըլլան անոնք պետական թէ ազգային խընդիրներու մասին»: (Միաձայնութեամբ):

II.— «Շրջանական ժողովը համամիտ ըլլալով «Իթթիհատ» կուսակցութեան հետ համերաշխ գործունէութեան, կ'առաջարկէ Կեդր. Կոմիտէին միաժամանակ պայքարիլ անոր խիստ դէպի աջ հակումներուն դէմ»: (Միաձայնութեամբ):

III.— «Հ.Յ.Դաշնակցութիւնը ըլլալով ընկերվարական կուսակցութեան մը եւ իբր այդպիսին՝ պարտականութիւն ունենալով Թուրքիոյ միւս ազգութիւններու մէջ յառաջ բերել ընկերվարական խմբակցութիւններ ու անոնց հետ միասին Թուրքիոյ բովանդակ աշխատաւորութեան դատը պաշտպանել, Շրջանական ժողովը կ'առաջարկէ իր ընկերներուն եւ մարմիններուն՝ ուժ տալ տեղ-տեղ արդէն երեւան եկած ընկերվարական խմբակցութեանց եւ ձեռնարկներ ընել անոնց հետ մըլտական համերաշխութիւն կնքելու համար: (Միաձայնութեամբ):

Հողային հարցեր.— Մարմիններու տեղեկագրերն ու պատգամաւորներու բերանացի բացատրութիւնները.

ժողովին ուշադրութեան կը յանձնէին շրջանի զանազան վայրերու մէջ գոյութիւն ունեցող հողային հարցերը որ այրող բնաւորութիւն ստացած ըլլալով՝ ո'չ միայն ազգաբնակչութեան տնտեսական քայքայման պատճառ կը դառնայ, այլ կը սպառնայ միջցեղային ցաւալի բախումներ առաջացնել: Շրջանական ժողովը նկատի առնելով հարցի կարեւորութիւնը ու նշանակութիւնը, կը յանձնարարէ Կ. Կոմիտէին՝ Օսմ. խորհրդարանի դաշնակցական պատգամաւորներու ուշադրութիւնը հրաւիրել այս մասին, որպէսզի հայկական գաւառներու մէջ գոյութիւն ունեցող հողային հարցի հետ, այս շրջաններու համար այնքան կենսականութիւն ունեցող այս խնդիրն ալ նկատի առնեն եւ ըլլայ դիմումներով, ըլլայ փարլամենթի մէջ հարցապնդումներով ստիպողութեան տայ անոր:

Շրջանակային գումարումներ.— Ժողովը աչքի առջեւ ունենալով շրջանի կազմակերպական եւ այլ յարաբերական պայմանները, գտաւ որ Շրջանակային գումարումները ստիպողական պէտք մը չեն ներկայացնել ու նման որոշում մը պիտի մնայ շատ անգամ անիրականալի,— պարտադիր ունէ յանձնարարութիւն չ'ընել այդ մասին, եւ սակայն ազատ կը ձգէ Կեդր. Կոմիտէն հարկ տեսած պարագային հրաւիրել իրարու մօտ եղող շրջաններու մարմիններու ներկայացուցիչները խորհրդակցութեան, եւ կամ եթէ ունէ շրջանակի մարմիններու մեծամասնութեան կողմէ նման փափաք կը յայտնուի: Շրջանակային գումարումները պիտի զբաղին գուտ տեղական բնոյթ ունեցող կազմակերպական եւ այլ հարցերով:

Չանազան առաջարկներ պատգամաւորներէն

I.— Սամաթիոյ պատգամաւորը առաջարկ բերաւ խորհիլ թուրքերէն թերթի մը եւ պրոչիւրներու հրատարակութեան մասին: Նպատակայարմար տեսնուեցաւ որ այդ շրջանի, Պոլսոյ կամ տարբեր շրջանակի ընկերները թուրք մտաւորական երիտասարդութեան մէջ ստեղծելու հետամտին այդ կարգի տրամադրութիւններ եւ գործնական քայրերու մղեն զանոնք. իսկ գալով պրոչիւրներուն՝ Ազատութեան մատենադարանի նպատակին մէջ կ'իյնայ:

II.— Պատգամաւորներէն ոմանց կողմէ փափաք յայտնուեցաւ ցրուելէ առաջ ծանօթանալ կուսակցութեան այժմեան իրականութեան, եւ լսել այս մասին ձեռնահաս ընկեր մը՝ իրազեկ ըլլալու համար կուսակցութեան կեանքին: Ուստի պարտականութիւն տրուեցաւ Կեդր. Կոմիտէին վրայ՝ այս մասին ընել փափաքած կարգադրութիւնը՝ վաղուան եւ վերջին ժողովին համար:

ՆԻՍ ԺԴ.

10 Յունուար (Երկուշաբթի կէսօրէ ետք)

Պատգամաւոր ընկերները վերջին անգամ հաւաքուելով՝ լսեցին արձանագրութեան ամբողջական ընթերցումը՝ վաւերացնելու համար:

Տեղեկաբերութիւն Հաշուեքննիչ յանձնախումբի.— Լսելով Հաշուեքննիչի տեղեկաբերութիւնը, Շրջ. ժողովը կը յանձնարարէ կէտ առ կէտ գործադրութիւնը եղած թելադրութիւններուն եւ լրացումը՝ հրահանգուած պարտադրութիւններուն: Ժողովը պարտք կը դնէ Կեդր. Կոմիտէին վրայ՝ հաշուեքննիչի տեղեկագիրը կցել ներկայ արձանագրութեան եւ գործադրել անոր տրամադրութիւնները:

Կեդրոնական Կոմիտէի սնտուկը գտնուած պատրաստ գումարը՝ 3832.5 հաշուեքննիչ յանձնախումբին կողմէ յանձնուեցաւ Կեդր. Կոմիտէին:

Handwritten signatures and names of committee members, including 'Մարտիկ' and others.

Ա 3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊՈԼՍՈՅ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ ՀԱՇՈՒԹԵՐՆԵՒՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ

1911 ՅՈՒՆՈՒՄԱՐ

Table with 2 columns: Description and Amount (ԼՈՒՏՔ). Rows include 'Կեդր. ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՈՒԹ' and 'Կոմիտէի գանձածները այն վայրերէն որոնց հաշիւները յանձնախումբի տրամադրութեան տակ չեն'.

Դիտողութիւններ.— 1) Թիշուած գանձումներէն յետագաները առանց ընկալագրի եղած են — Ատաբազար՝ 55 եւ 648 + Սամաթիա 117 + Թոտոսթօ-Մալկարա 338 + Աւստրալիայէն Պալաքեան 240 = 1398 (ժ. Կ.Կ.ի Սամաթիոյ 117ը ուղղակի Բիւրոյին յանձնուած ըլլալով՝ անկէ ստացած են ընկալագիրը): 2) Գուրտպէլէնէն ղրկուած 280 ղրշ.ի գումար մը «Ազատամարտ»ի հաշիւներուն հետ շփոթուելով՝ մուտք չէ արձանագրուած Կ.Կ.ի տետրակին մէջ: 3) Կեդր. Կոմիտէի հաշիւները կանոնաւոր են եւ համաձայն շրջաններու հաշիւներուն:

ՇՐՋԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՇՈՒՆԵՐԸ

Table with 4 columns: Description, Amount (Հին), Amount (Նոր), and Total (ԸՆԴՈՒՄ). Rows include 'Պարտիզակ' and 'Ընթացիկ ծախքեր'.

Դիտողութիւններ.— 1) Խմբական տետրակները խիստ անկանոն են. ամբողջովին ղրկուած չըլլալով՝ Շրջ. ժողովին, կարելի չէ եղած բաղդատել անդորրագրերուն հետ: 2) Խումբերու վճարումները մարմնի տետրակին մէջ նկարագրուած են եւ ընկալագրերու համաձայն են: 3) Խմբապետներու քով մնացած է 279, : ղրշ.: 4) Անդամավճարներ մինչեւ 1910 Հոկտեմբերի վերջ եղած են: 5) Հաշուի տետրի 31րդ էջը 399 ղրշ.ի գումար մը կայ՝ գանազան հաշիւներէ աւելցած՝ որ մուտքի գումարներու մէջ չ'երեւիր: 6) Տետրակները ըստ բաւականի կանոնաւոր են: 7) Տեղւոյն վրայ ծախսուած է 65%:

Հաշուեքննիչ յանձնախումբը կ'առաջարկէ Շրջ. ժողովին՝ Պարտիզակի կազմը պարտադրել այդ խմբապետներու քով մնացած դրամը գանձել ըստ կարելոյն շուտով:

Table with 4 columns: Description, Amount (Հին), Amount (Նոր), and Total (ԸՆԴՈՒՄ). Rows include 'Գրնճըլար' and 'Ընթացիկ ծախքեր'.

Դիտողութիւններ.— 1) Խմբատետրերը ամբողջ չըլլալով՝ կարելի չէ եղած բաղդատել. ղրկուած տետրակները կանոնաւոր են:

2) Անդամավճարներէն անվճար մնացածները չնչին գումար մը կը ներկայացնեն. 3) Հաշիւները մինչեւ 910 Դեկտեմբերի վերջ փակուած են: 4) Տեղւոյն վրայ ծախսուած է 50%:

<u>Ամսաթիվ</u>				<u>ՄՈՒՏՔ</u>
Անդամավճարներէ				703,50
				<u>ԵԼՔ</u>
Կեդր. Կոմիտէին վճարուած				583, 50
Տեղւոյն վրայ ծախսուած				120
<u>Դիտողութիւններ.</u> — Անդամավճարները մինչեւ Հոկտ. վերջ ամբողջովին վճարուած են եւ խմբատետրերը խիստ կանոնաւոր են: 2) Տեղւոյն վրայ ծախսուած է 15%:				
<u>Մակարա</u>	<u>Հին</u>	<u>Նոր</u>	<u>ՄՈՒՏՔ</u>	
Անդամավճարներէ	455,75	350,50	806,25	
				<u>ԵԼՔ</u>
Ընթացիկ ծախք	14,75	1,50	16,25	
Կեդր. Կոմիտէին ղրկուած	—	—	785	
Պատրաստ դրամ				5
				806,25
<u>Դիտողութիւններ.</u> — 1) Խմբատետրերը կանոնաւոր են. ընկերները մինչեւ Հոկտ. վերջ վճարած են ամբողջ անդամավճարները: 2) Տեղւոյն վրայ գրեթէ չէ ծախսուած:				
<u>Գարթալ</u>				
Ստացուած է Կեդր. Կոմիտէին կողմէ միայն 70 ղրշ. Հաշուետետր, խմբատետր եւն չկայ:				
<u>Արմաշ</u>				
Կանուխի Հաշիւներէն մնացորդ				330,75
Անդամավճարներէ				650
				980,75
				<u>ԵԼՔ</u>
Բացառիկ ծախք				285,50
Գոյք				40
Կեդր. Կոմիտէին ղրկուած				655,25
				980,75
<u>Դիտողութիւններ.</u> — Ընկերները մինչեւ Դեկտեմբերի վերջ վճարած են իրենց անդամավճարները: 2) Խմբական տետրակները ղրկուած չեն: 3) Տեղական պէտքերու ծախսուած է 20%:				
<u>Չէնկիւէր</u>	<u>Հին</u>	<u>Նոր</u>	<u>ՄՈՒՏՔ</u>	
Անդամավճարներէ	1647	488	2135	
Բացառիկ Հասոյթ	565	—	565	
				2700
				<u>ԵԼՔ</u>
Ընթացիկ եւ բացառիկ ծախքեր				1422
Կեդր. Կոմիտէին ղրկուած				1344
				2766
<u>Դիտողութիւններ.</u> — 1) Խմբապետներու քով մնացած է 201,5 ղրշ. Հաշիւները փակուած են մինչեւ Նոյեմբերի վերջ: 2) Տեղւոյն վրայ ծախսուած է 50%: 3) Միայն Հաշուեկշիռ ղրկած են:				

<u>Չոնկուլտաք.</u>	1910 Ապրիլէն 910 Դեկտ.		<u>ՄՈՒՏՔ</u>	
Խումբը 787,5 ղրշ. անդամավճար ունեցած է եւ զայն ամբողջութեամբ Կեդր. Կոմիտէին ղրկած է			787,5	
<u>Դիտողութիւններ.</u> — 1) Ընկերները մինչեւ Դեկտեմբերի վերջ իրենց անդամավճարները փակած են: 2) Միայն Հաշուեկշիռ ղրկած են:				
<u>Գուրտալէլէնի կոմիտէ</u>	1910 Յունիսէն-Նոյ. վերջ		<u>ՄՈՒՏՔ</u>	
Երեք խումբերէ			354	
				<u>ԵԼՔ</u>
Տեղական ընթացիկ ծախք			74	
Տեղւոյն վրայ ծախսուած եւ մնացած			280	
				354
<u>Դիտողութիւն.</u> — 1) Միայն Հաշուեկշիռ ղրկած են:				
<u>Ալիւտար</u>			<u>ՄՈՒՏՔ</u>	
Նախորդ Հաշուեկշիռէն մնացած			90	
Անդամավճարներէ			769	
				859
				<u>ԵԼՔ</u>
Ընթացիկ ծախք 90, բացառիկ 235			334	
Կեդր. Կոմիտէին ղրկուած			525	
				859
<u>Դիտողութիւններ.</u> — 1) Խումբերէն մէկ քանին մինչեւ Նոյեմբեր, մէկ քանին մինչեւ Հոկտեմբերի վերջ փակած են իրենց Հաշիւները: 2) Խմբատետրերը կանոնաւոր են: 3) «Վրէժ» խումբի քով մնացած է՝ 19,5 ղրշ.: 4) Տեղւոյն վրայ ծախսուած է 40%:				
<u>Ատաբազար</u>	<u>Հին</u>	<u>Նոր</u>	<u>ՄՈՒՏՔ</u>	
Անդամավճար	5025,25	3032,25	8057,50	
Բացառիկ Հասոյթ	3086	463,50	3549,50	
Շրջակայ գիւղեր	—	—	337,75	
				8111,25
				3495,75
				11944,75
				<u>ԵԼՔ</u>
Կեդր. Կոմիտէին ղրկուած	802	1080	1882	
Տեղական ընթացիկ	1888,75	454,50	2343,25	
Գոյք 1510, կարասի 40			1550,75	
Տեղական բացառիկ	3140,50	574,50	3715	
Ընկերներու փոխ տրուած			1593	
Քիւլալի փոխ տրուած			148	
Պատրաստ դրամ			712	
				11944,75

Դիտողութիւնները. — 1) Մախսուած գումարներուն տոքիւման չկայ: 2) Խմբատետր, մարմնի տետրակ, անդորրագիր եւն չկայ, միայն հաշուեկշիռ դրկած են: 3) Տեղւոյն վրայ ծախսած են 50%: 4) Կազմակերպական դրամէն ընկերներու փոխ տրուած է, որուն գանձումը կասկածելի է: 5) Անդամավճարները մինչեւ Հոկտեմբերի վերջ վճարուած են, կան ընկերներ՝ որոնք մինչեւ Հոկտ.ի համար ալ պարտական են, որոնց գումարը 500ի կը հասնի: 6) Հաշուեքննիչ յանձնախումբը կ'առաջարկէ Շրջ. ժողովին այդ փոխ տրուած դրամներու գանձումը պարտադրել Ատաբազարի կոմիտէին եւ ուրիշ ատեն պատահելու պարագային նմանօրինակ անկանոնութիւն՝ խիստ պատասխանատուութեան ենթարկել կազմը:

Ընդհ. դիտողութիւններ

1) Հաշուական սխտէմի եւ հաշիւներու կատարեալ անկանոնութիւն: 2) Ծախսերու տոքիւմաններու պակաս: 3) Ծախսերու անհաշիւ տնտեսում՝ շատ քիչ բացառութիւնով: 4) Խմբատետրերու եւ գանձումի անկանոնութիւն:

Դարման-թելագրութիւններ

1) Իւրաքանչիւր մարմին պէտք է ունենայ մէկ տարուան համար բաւող միօրինակ տետրակ՝ յետագայ բաժանումներով. ա) Արձանագրութեան, բ) ելեմուտքի, գ) անդամավճարներու, դ) «Դրօշակ»ի եւ հրատարակութեանց, ե) կարասիներու:

Այս բաժիններուն մէջ պէտք է արձանագրել — 1) մարմնի ժողովները՝ սեղմ կերպով. 2) մարմնի ելեմուտքը՝ մանրամասնօրէն եւ թուականի կարգով՝ յիշելով ընկալագրի թիւը, իսկ ելքի գումարներէն ամէնէն չնչիններուն համար ալ ունենալ անպատճառ համապատասխան ընկալագիրը՝ տոքիւմանը եւ անոնց թիւը նշանակել տետրակին մէջ, վճարուած գումարին դէմ: 3) Բաժնին մէջ նշանակել ընկերներու անունները իրարու տակ, իւրաքանչիւրին արձանագրուած անդամավճարը նշանակելով դիմացը՝ մասնաւոր սիւնակի մը մէջ: Ասկէ գատ անդամներու այդ անուններուն դէմ պէտք է գծուած ըլլան 12 սիւնակներ՝ տարուան 12 ամիսներուն համար, որոնց մէջ պէտք է նշանակել ընկերոջ վճարած անդամավճարը՝ ամէն ամիս: Դ. եւ Ե. բաժիններուն մէջ պէտք է նշանակել ստացւած եւ վճարուած գրքերու եւ Դրօշակներու, ինչպէս նաեւ կարասիներու քանակն ու արժէքը:

2) Մարմինները պարտաւոր են առ նուազն մէկ ամիսն անգամ մը քննթրու ընել խմբատետրերը: 3) Խմբատետրերու կանոնաւորութեան համար ալ հոգ պէտք է տանիլ եւ ուշադիր ըլլալ հետեւեալ կէտերուն. ա- Վճարմանց սիւնակին մէջ նշանակել միայն վճարուած գումարները. բ- Կարելի եղածին չափ աշխատիլ վճարողներու ստորագրել տալ ստորագրութեան սիւնակին մէջ՝ թուականով. գ) Արձանագրութեան բաժնին մէջ պէտք է անպատճառ նշանակել իւրաքանչիւր ընկերոջ յանձն առած ամսական անդամավճարը: դ) անդամավճարներու կանոնաւոր գանձումին պէտք է խստօրէն գործադրել ներքին կանոնագրի տրամադրութիւնը:

Կեդր. Կոմիտէի պատրաստ դրամը

Յանձնախումբս ճշդած է Կեդր. Կոմիտէի պատրաստ դրամը տետրակներուն համաձայն ըլլալը եւ կը գտնուի յանձնախումբին քով, որուն գումարն է — 3832,5

Table with 2 columns: Description and Amount. 18,5 օսմ. ոսկի 1998 [դրուշ], 12 անգլ. ոսկի 1440 [դրուշ], 4 Քր. 380 [դրուշ], Մանրուք 14.20, 3832,5

Handwritten signature and stamp: ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԹԱՆԱՍԵԱՆ, Թ. ՍՕՅԻԱՆ ԿԱԾՄ

Փաստ. 878-48

Բ.— Հ.Յ.Դ. ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ Գ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

1911 Յուլիս 12-19

ՆԻՍ Ա.

1911 12 Յուլիս, Երեքշաբթի առաւօտ

Հ.Յ.Դ. Զ. Ընդհ. ժողովի գումարման անհրաժեշտ նախապատրաստութեանց համար Բիւրոյի եւ Կեդր. Կոմիտէի կրկին շրջաբերականներով Պոլսոյ շրջանի կազմակերպութեան մարմինները արտակարգ Շրջանային ժողովի հրահրուած էին այսօր:

Վերջին վիճակագրութեան համաձայն շրջանը ունէր Կեդր. Կոմիտէի հետ 13 իրաւասու ձայներ այսպէս.

Table with 2 columns: Name and Votes. Բերա 2 ձայն, Սամաթիա 1 ձայն, Սկիւտար 1 >, Ատա-բազար 2 >, Արմաշ 1 >, Պարտիզակ 2 >, Գնճըլար 1 >, Գուրտպէլէն 1 >, Չէնկիլէր 1 >, Կ. Կոմիտէ 1 >

Ասոնցմէ գատ խորհրդակցական ձայնի իրաւունք ունեցող կազմեր գոյութիւն ունէին 15 վայրեր, որոնցմէ Պրուսա, Պալիա-մատէն, Տէտէ-աղաճ, Իզմիթ, Մալկարա, Չոնկուլտաք, Գարթալ՝ կազմակերպական վերջին շրջանական ժողովէն առաջ (1911 Յունւ.), իսկ Պալլեքէսիւր, Պանտրմա, Սուլթան-գաչայիւր, Պիլճիկ, Քիրմուլթի, Գալալա, Մեծ Նորգիւղ, Ենիճէ՝ նոյն Շրջանային ժողովէն յետոյ:

Իրաւասու ձայն ունեցող պատգամաւորները բոլորն ալ ընտրուած եւ Պոլիս հասած էին, այնպէս որ այս առաջին ժողովին ներկայ էին 10 պատգամաւորներ, կը բացակայէին Գուրտպէլէնի եւ Սկիւտարի պատգամաւորները եւ Ատա-բազարի մէկ պատգամաւորը միայն, որոնցմէ առաջինը ժողովին չկարենալ ներկայ գտնուիլը յայտնած էր, իր զբաղումներու բնոյթը մատնանշելով:

Խորհրդակցական ձայնով ներկայ էին Մեծ-Նոր գիւ-

ղի եւ Պրուսայի պատգամաւորները, իսկ Ենիճէի պատգամաւորը, Պոլիս գտնուելով հանդերձ, երկու-երեք օրի չափ ժողովէն բացակայիլը իմացուցած էր:

Իրաւասու ձայնի իրաւունքով ներկայ եղող պատգամաւորներու թիւը 2/3-ի մեծամասնութենէն աւելի ըլլալով՝ Կ. Կոմիտէի ներկայացուցիչը ժողովը բացուած յայտարարեց:

Անցնելով յանձնարարագրերու ստուգման, դիտուեցաւ որ ամառնային անխուսափելի զբաղումներու հետեւանքով — նախատեսուած արդէն Կեդր. Կոմիտէի շրջաբերականին մէջ իսկ — կարգ մը շրջաններու ընկերական ժողովները կարելի չէ եղած 2/3-ի մեծամասնութիւնով գումարել եւ ընտրութիւններն ալ կատարել ըստ այնմ:

Ժողովը լսելով այս մասին Կեդր. Կոմիտէն եւ ծանօթանալով եղած պատճառաբանութեանց արդարացի բնաւորութեան հետ՝ յանձնարարեց Կեդր. Կոմիտէին, որպէսզի ժողովէն յետոյ, ուսումնասիրելով ընտրութեանց պակասաւոր կողմերը՝ իւրաքանչիւր շրջանի մարմնին առանձին նկատողութիւն ընել, որպէսզի յաջորդ ընտրութեանց մէջ չկրկնուին նոյն թերութիւնները:

Ենիճէի ու Պրուսայի կազմի ընկերներու թիւը իրաւասու ձայներու համար նախասահմանուած թիւը կը լրացնէր, սակայն Կեդր. Կոմիտէն այն կարծիքէն որ՝ անոնց իրաւասու ձայն տալու պարագան ձգուի տարեկան շրջանային ժողովին, մինչեւ որ խնդրոյ առարկայ կողմերու աշխատութեանց եւ կազմակերպական-բարոյական գործունէութեան մասին որոշ համոզում գոյացուի:

Կեդր. Կոմիտէի կարծիքը բաժնելով ժողովը, Ենիճէի պատգամաւորի ընտրութեան եղանակն ալ արդէն ըլլալով թերի, միեւնոյն ատեն ժողովը որոշեց որ ան մնայ իր խորհրդակցական ձայնի իրաւունքին մէջ, իսկ Պրուսայի մասին իր որոշումը վերապահեց՝ մինչեւ որ իբր պատգամաւոր ներկայացող ընկերոջ յանձնարարականը ստացուի:

Պատգամաւորներու մանտաթներու ստուգութենէն յետոյ ժողովը ձեռնարկեց դիւանի ընտրութեան: Առաջարկուեցաւ 1911 Յունուարի ժողովին դիւանը նոյնութիւնով պահել, քանի որ նոյն ժողովին ընկերները ար-

դէն ներկայ էին այս ժողովին եւս: Առաջարկուեցաւ նաեւ իբր նախագահ՝ ընկեր Ատոմ¹⁰ եւ Սրենց¹¹, որոնց երկուքն ալ պատճառաբանեցին այդ առաջարկին դէմ: Յետոյ ժողովը գաղտնի քուէարկութեան դիմեց՝ անոր արդիւնքը պարտաւորիչ դարձնելով: Նախագահ ընտրուեցան ընկերներ Ատոմ եւ Սրենց, իսկ քարտուղարներ՝ Աթանասեան եւ Ժիրայր¹²:

Բանաձեւերու պատրաստութեան եղանակի մասին խորհրդակցելով առաջարկուեցաւ այդ պարտականութիւնն եւս տալ դիւանին, առաջարկուեցաւ նաեւ ընտրել առանձինն յանձնախումբ՝ դիւանի աշխատութիւնները չծանրաբեռնելու նպատակով: այս առաջարկին վրայ ընդհանուր հաւանութիւնով յանձնախումբի անդամ նշանակուեցան ընկերներ Պօղոս, Աթանասեան եւ Ժիրայր:

Ժողովի աշխատութեանց եւ վիճաբանութեանց կանոնաւոր ընթացք տալու նպատակով ընդունուեցաւ նաեւ հետեւեալ ներքին կանոնագիրը:

1- Ժողովները պիտի գումարուին ամէն օր առաւօտեան ժամը 9-12, իսկ կէսօրէ ետք ժամը 3-7, մնացեալ ժամանակը յատկացուելով յանձնախումբի աշխատութեան:

2- Վիճաբանութեանց ընթացքին, ոեւէ հարցի մասին առաջին անգամ կը խօսի առ առաւելին 20 վայրկեան, ըստ կարգին՝ 5 եւ ընդդիմախօսութիւն՝ 10 վայրկեան:

3- Ժողովի որոշումները պիտի վերապահուին մինչեւ անոր աւարտումը: Կեդր. Կոմիտէին կը հաղորդէ ժողովին արդիւնքը իր շրջանի մարմիններուն՝ առանձին շրջաբերականով, իսկ պատգամաւորները իրենց դարձին պարտաւոր պիտի ըլլան ընդհ. ժողովներ կազմել եւ ծանօթացնել իրենց տեղական ընկերները՝ ժողովի զբաղումներու, վիճաբանութեանց եւ առ հասարակ յարակից խնդիրներու ընթացքին:

4- Պատգամաւոր մը անպայման պէտք է ներկայ ըլլայ ժողովին: Ա. բացակայութիւնը ներելի է երբ դիւանի հաւանութիւնը առնուած է, այլապէս նկատողութիւն կ'ըլլայ ժողովին մէջ՝ բացակայ ընկերով: իսկ Բ. բացակայութեան պարագային՝ ենթական իր ձայնը կը կորսնցնէ:

Կարճ խորհրդակցութենէ մը ետք, խորհրդակցական ձայնի իրաւունքով որոշուեցաւ հրաւիրել Բիւրոյէն, Ազատամարտէն եւ օսմ. խորհրդարանի դաշնակցական երեսփոխանութենէն մէկ-մէկ ներկայացուցիչներ, իսկ քաղաքս գտնուող գործիչ ընկերներէն Բժիշկ¹¹ եւ Արամ¹²:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամին:

ՆԻՍՏ Բ.

12 Յուլիս, Երեքշաբթի կէսօրէ ետք

Ներկայ իրաւասու ձայն ունեցող պատգամաւորներէն 11, խորհրդակցական ձայներէն 2. հրաւիրուած ընկերներէն 1, Կեդր. Կոմիտէի անդամներէն խորհրդակցական ձայնով 1:

Ժողովը իր զբաղումներուն առարկայ ընելով Զ^ր Ընդհ. ժողովի օրակարգը՝ Արեւմտեան Բիւրոյի Թուրքիոյ եւ այլ վայրերու մէջ ունեցած գործունէութեան մասին արտայայտուելու համար անհրաժեշտ գտաւ լսել Բիւրոյի տեղեկաբերութիւնը, ինչ որ Ընդհ. ժողովին առջեւ պիտի ըլլար: այնպէս որ այդ գործունէութեան քննադատութիւնը ձգելով հանդերձ իր շրջանէն գնալիք երկու պատգամաւոր ընկերներուն, միաժամանակ որոշեց լսել Բիւրոյի ներկայացուցիչը, օրակարգի սպառումէն յետոյ, եթէ միջոց մնայ, որպէսզի ժողովը դիւրութիւն ունենայ գէթ մասամբ արտայայտուելու:

1- Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները:—

ա) Միութիւն եւ Յաւանութեան կոմիտէն (Իթթիհատ վէ Թերաքը): բ) Միւս քաղաքական կուսակցութիւնները: գ) Ոչ-հայ ազգային խմբակցութիւնները (ասորի, եգիպտի, յոյն, չեքքէզ, քիւրտ, եւայլն):

Այս առթիւ ընկերները արտայայտուեցան հետեւեալ տեսակէտներով:

Ա.— «Իթթիհատ»ը ըլլալով իր կազմով եւ իր բաղկացուցիչ տարրերով էջրաֆներու¹³ եւ իշխող տարրերու կուսակցութիւն մը՝ Դաշնակցութիւնը չի կրնար համերաշխութիւն կնքել անոր հետ: Մանաւանդ՝ անոր պարզած վերջին գունափոխութենէն յետոյ՝ այդ համերաշխութիւնը ինքնին քննադատելի պիտի ըլլայ: Ներկայ պարագային գոյութիւն ունեցող համերաշխութեան հանդիսաւորապէս խզումն ու հրապարակային յայտարարութիւնը՝ թէ՛ Իթթիհատի եւ հայ ժողովուրդին եւ առհասարակ աշխատաւոր տարրերուն վրայ բարոյական աւելի մեծ եւ արժէքաւոր ներգործութիւն մը պիտի ունենայ: Իթթիհատի ներկայ վերաբերումին գալով մամուլի, փարլամէնթի թէ ժողովներու մէջ խիստ կերպով պէտք է արտայայտուել անոր դէմ:

Բ.— Համերաշխութեան գաղափարը չի կրնար ժլխտել Դաշնակցութիւնը, սակայն ո՛րեւէ քաղաքական կուսակցութեան հետ համերաշխութեան պարագային՝ հարկ է մօտենալ անոր գոլտ քաղաքական եւ տնտեսական նպատակներով: գոլտ ընկերվարական խմբակցութիւններու հետ կնքուելիք համերաշխութիւնը խնդրոյ առարկայ չըլլալով՝ գոլտ քաղաքական խմբակցութիւններուն կամ կուսակցութիւններուն պէտք է մօտենալ այն չափով որ անոնց ձգտումները այս կամ այն

10.- Շահրիկեան Յարութիւնն է:
11.- Բժիշկը Տըր Դաւթեան Յովսէփն է:
12.- Մանուկեան Արամն է
13.- Էջրաֆ՝ երեւելի, ազդեցիկ, սեփաւարուստ անձնաւորութիւններու վերնախաւ:

խնդրոյ մէջ դէմ չեն գար մեր ձգտումներուն կամ հետապնդութիւններուն: Այս տեսակէտէն մեկնելով՝ եթէ «Իթթիհատ»ը լիուլի չէ կրցած ընդառաջ գնալ մեր պահանջներուն՝ պատճառներուն մէկ մասն ալ պէտք է փնտել գայն շրջապատող աննպաստ պայմաններուն մէջ: Մոռնալով չէ որ ներկայիս սահմանադրութեան միակ նեցուկ տարրը «Իթթիհատ»ն է թուրքերուն մէջ, որուն տկարացումն ու անկումը՝ սահմանադրութեան տկարացումին ու անկումին համագոր է: Փոխանակ մեր յարաբերութիւնները խզելու՝ լաւ է որ ջանանք ուժ տալ անոր ձախ թեւին զօրացման, մանաւանդ խորհրդարանին մէջ: Նոյնիսկ հայ ժողովրդեան քաղաքական թէ՛ ազգային շահերը կը պահանջեն պահել գոյութիւն ունեցող համերաշխութիւնը:

Գ.— Եղած համաձայնութիւնը ճիշդ է որ ոչ մէկ շօշափելի արդիւնք ցոյց տուած է, սակայն սխալը հէնց անոր մէջ է որ՝ մեծ յոյսեր դրուած է այդ համաձայնութեան վրայ, որ իր էութեան մէջ ուրիշ բան չէ, եթէ ոչ նոյն ինքն սահմանադրութեան պաշտպանումը: Այդ իսկ իր մէջ հակասութիւն մը կը պարունակէ. երբ մէկ կողմէ սահմանադրութեան պահպանումի մասին դաշինք կը կնքուի, միւս կողմէ «Իթթիհատ»ն կազմուած կառավարութիւն մը ինքնապաշտանութեան ամէն միջոց կ'արգիլէ հայ ժողովրդին, երբ վնասակար տարրեր գէնքերով կը շրջին ու կը թալլեն: Ընդհ. ժողովի նախատեսած կամ յանձնարարած խառն ժողովներն ալ տեւականօրէն գոյութիւն չեն ունեցած... Եթէ երբեք յարաբերութիւններ ու բարեացակամութիւններ գոյութիւն ունին՝ ան ալ կը բխի անհատներէ եւ ո՛չ թէ կուսակցութեան հաւաքականութենէն եւ արդէն այդ յարաբերութիւն ըսուածն ալ կեդրոնական մէկ երկու քաղաքներու մէջ է: ոչ մէկ տեղ պաշտօնական հողի վրայ կանոնաւոր յարաբերութիւն գոյութիւն ունեցած է ու մեր յարաբերութիւնը «Իթթիհատ»ի հետ՝ աւելի փարլամէնթէն ներս պիտի ըլլայ, փոխանակ կուսակցական հողի վրայ ըլլալու: Եթէ երբեք «Իթթիհատ»ի եւ Դաշնակցութեան յարաբերութիւնը իր բուն ուղեգծէն չեղած ըլլալու երեւոյթն ունի, ատիկա պէտք է փնտել նաեւ մասամբ յարաբերութիւն պահող ընկերներու ո՛չ այնքան նպատակայարմար տաքտին եւ մեր հրապարակային արտայայտութիւններուն մէջ: Այս բոլորին հետ, աչքի առջեւ ունենալով որ «Իթթիհատ»ի ներքին պայքարը դեռ իր վախճանին չէ հասած եւ անոր ֆիզիոնոմիան Սելանիկի յառաջիկայ քունկէիին մէջ երեւան պիտի գայ, միւս կողմէ յառաջիկայ նստաշրջանի խորհրդարանական ընտրութիւնները՝ ուր գործակցութիւն մը անհրաժեշտ կը դառնայ յառաջիկայ խորհրդարանի կազմին իսկ տեսակէտով, աւելի նպատակայարմար է իրերու ներկայ դրութիւնը պահել, մնալով քիչ մը վերապահ, մինչեւ որ «Իթթիհատ»ը վերջնապէս արտայայտէ ինքզինք. եթէ այդ գունաւորումը աննպաստ ըլլայ «Իթթիհատ»ի ձախ

թեւին, ջանալ Օսմ. խորհրդարանին մէջ առաջացնել իսկական ազատական տարրերէ կազմուած խմբակցութիւն: Միաժամանակ շարունակել սկսուած քննադատական ուղղութիւնը, առանց այդ քննադատութեան տալու այն տեսակ բնոյթ մը՝ որ ժողովուրդը սահմանադրութենէն պաղեցնէ:

Ժողովին մեծամասնութեան տրամադրութիւնը համապատասխան ըլլալով այս վերջին տեսակէտին, յանձնարարուեցաւ յանձնախումբին՝ ըստ այնմ պատրաստուած բանաձեւ ներկայացնել՝ քուէարկութեան համար:

Գալով հայ եւ ոչ-հայ ազգութիւններու պատկանող միւս ընկերվարական թէ՛ ազգային կուսակցութիւններուն եւ խմբակցութիւններուն հետ կուսակցութեան ունենալիք յարաբերութիւններուն՝ ժողովը կ'իրաջնէ նախորդ Շրջ. ժողովի բանաձեւը, այն յաւելումով որ՝ աշխատաւորական տեմօքրաթիկ սկզբունքներ ունեցող կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու հետ յարաբերութեան մէջ ըլլալ, իսկ ազգային կուսակցութիւններու հետ ժամանակաւոր պլոք կազմել՝ երբ այս կամ այն խնդիրի յաջողութեան ի նպաստ գործելու համար անոնց եւ մեր մարմիններու միջեւ որոշ համաձայնութիւն կը կայանայ:

2.— Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը: ա- Հողային հարցը (բունատիրուած հողեր, իսլամ գաղթականներու գրաւած հողեր, անհող եւ սակաւահող գիւղացիներու հողի բաշխում):

Օրակարգի այս հարցին շուրջ ըստ էութեան արտայայտուելու պէտք չտեսան պատգամաւոր ընկերները՝ նկատի ունենալով անոր չափազանց արդար եւ իրաւական հանգամանքը, որ հայ եւ քիւրտ ու թուրք ժողովրդի շահերու տեսակէտով գոյութեան հարց մըն է, իսկ պետական շահերու տեսակէտով՝ արդարութեան եւ խաղաղութեան խնդիր մը: Ուստի միջոցներու մասին է որ ծանրացաւ աւելի ժողովը՝ հետեւեալ երկու տեսակէտներէն առաջնորդուած:

Ա.— Ո՛չ պետական եւ ոչ ալ այս կարգի այլ դիմումներով կարելի պիտի ըլլայ լուծել հողային հարցը, որ ժամանակի կը կարօտի, մինչեւ որ կարելի ըլլայ քիւրտ եւ թուրք աշխատաւոր եւ իրաւագուրկ տարրն ալ շահագրգռել եւ գայն եւս բողոքելու եւ ըմբոստանալու ընդունակ դարձնել: Հողային հարցը գոլտ հայկական խնդիր մը չըլլալով՝ այս ուղղութիւնով պէտք է փրփականտա մղել աշխատաւոր ժողովուրդին մէջ եւ այդ ուղղութեամբ պատրաստել գայն:

Բ.— Շարունակելով հանդերձ վերոյիշեալ աշխատանքը, միաժամանակ փորձել բոլոր այն միջոցները՝ զորս սահմանադրական կարգերը կը թոյլատրեն,— բողոք մամուլին մէջ, բողոք նախարարութեան մօտ՝ իր ցոյց տուած վերաբերումին համար, երբ միւս կողմէ կը

քաջալերել խլամ գաղթականները՝ ամէն դիւրութիւն ընծայելով, վերջապէս հրապարակային բողոքներ: Այս բոլորէն յետոյ իրերու կացութեան պատասխանատուութիւնը թողուլ ամբողջութեամբ կառավարութեան:

բ.- Ապահովութեան խնդիրը հայաբնակ նահանգներու մէջ:

Թէ սահմանադրութեան պահպանման եւ թէ հայ ժողովուրդի կեանքի ապահովութեան տեսակէտէն ըլլալով ամէնէն ցաւոտ խնդիրը՝ ապահովութեան հարցը, այս մասին երկու ուղղութեամբ սխիւթեմաթիւք եւ տեւական աշխատանք պէտք է գործ դնել, ա) պետական միջոցներով եւ թոյլտուութիւնով կազմելու հետամտիլ գիւղական պահակներ: բ) երկրին բոլոր կէտերուն վրայ ոստիկան-գինուորներու կանոնաւոր կազմ: գ) ինքնապաշտպանութիւն՝ ժողովրդական հողի վրայ եւ պարտադիր աշխատանք այդ մասին:

Գ.- Նահանգային ինքնավարութեան կամ իրաւունքներու ընդլայնումը, հարկային սխտեմի բարեփոխումը, հաղորդակցութեան ճամբաները հայկական նահանգներու մէջ, տնտեսական բարգաւաճման միջոցներ, մշակութային ինքնավարութիւնը Թուրքիոյ բաղկացուցիչ ազգերուն եւ այլն հարցերը, ինքնըստինքեան բխելով կուսակցութեան ծրագրէն եւ աշխարհահայեացքէն եւ մաս կազմելով անոր պատճառով, Դաշնակցութիւնը պիտի հետապնդէ նոյն թափով, ըլլայ մամուլի, ըլլայ փարլամէնթի բեմէն, ըլլայ հրապարակային փրոփակնտայով: Սակայն որպէսզի այդ հարցերը լուսաբանուելով դառնան կուսակցութեան շարքերուն սեփականութիւնը եւ այդ առթիւ մղուած փրոփակնտան ըլլայ հետեւողական, կ'առաջարկուի Ընդհ. ժողովին յատուկ յանձնախումբի մը միջոցաւ ուսումնասիրութեան ենթարկել զանոնք եւ կուսակցութեան տեսակէտները ճշգրտուել: Այս աշխատութեան մէջ Շրջ. ժողովը իր կարծիքը բերելու համար որոշեց ընկեր Շահ-րիկեանին յանձնել օրակարգի այդ կէտերը, նախագիծ մը բերելու համար ժողովին, որն իւրացնելով պիտի կցուի Ընդհ. ժողովին գնալիք հարցերուն:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամին:

ՆԻՍ Գ.

13 Յուլիս, Զորեքշաբթի առաւօտ

Նիստը բացուեցաւ ներկայութեամբ 11 իրաւասու եւ 2 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւորներու, ներկայ էին նաեւ հրաւիրեալ ընկերներէն 1, Կեդր. կոմիտէի մնացեալ ընկերներէն 1: Ա.ին նիստի ատենագրութիւնը կարդացուելով վաւերացուեցաւ: Որոշուեցաւ նաեւ խորհրդակցական ձայնի իրաւունքով ժողովի նիստերուն հրաւիրել ընկեր Վահագնը¹⁴:

Օրակարգ՝

3.- Դաշնակցութիւնը եւ հայ ազգային խնդիրները:

Այս մասին ժողովը արտայայտուեցաւ հետեւեալ ուղղութիւնով.

Ա.- Ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու եւ գործերու մէջ անհատաբար մասնակցելու վերաբերմամբ Ե՞ւ Ընդհ. ժողովի պատճառաբանութիւնները լրիւ չեն, որոնց վրայ հարկ է աւելցնել նաեւ այն՝ որ մեր ընկերներու մէջ տակաւին դաշնակցական մտածողութիւնը չէ հիմնաւորուած, որով մեր մասնակցութիւնը պիտի նոյնանայ ազատականներուն հետ, ինչպէս որ ներկայիս մեր գործունէութիւնն ու աշխարհահայեացքը խառնուած է անոնց հետ: Ե՞ւ Ընդհ. ժողովը ինքն ալ կ'ընդունի Ազգային-կուլտուրական գործերը իբրեւ մեր ծրագրին հետ ուղղակի առնչութիւն չունեցող խնդիրներ, հետեւաբար այդ կարգի հիմնարկութեանց մէջ կուսակցութիւնը չի կրնար աշխատիլ յանուն կուսակցութեան: Սկսուած պայքարները այնչափ կ'լանած են մեր շարքերը որ՝ զուտ յեղափոխական-ընկերվարական աշխատանքները սկսած են երկրորդական տեղ բռնել ու տիրող այս ընդհանուր մտայնութեան մէջ՝ յեղափոխական ոգին է որ կը չքանայ ու կ'աղճատուի: Այս տեսակէտներուն վրայ կ'աւելցուի նաեւ այն՝ որ իբրեւ ընկերվարական կուսակցութիւն՝ չենք կրնար մասնակցիլ գործադիր իշխանութեանց: Այն պատճառներով ալ պահելու է նախորդ Ընդհ. ժողովի որոշումը, պայմանաւ որ մասնակցող ընկերներու վրայ կուսակցութիւնը քոնթրոլ ընէ:

Բ.- Ընդունելով այս պատճառաբանութիւնները, որուն վրայ հիմնուելով Բ՞ Շրջանային ժողովը կուսակցութեան անունով եւ հաւաքական ուժերով ազգային- կուլտուրական հիմնարկութեանց մէջ մասնակցելու որոշում տուած է, ըստ որում պետական վարչային կազմին ու դերին հետ բաղդատելով՝ Ազգ. ժողովի եւ ազգ. վարչութեան դերն ու յօրինուածքը նշանակելի տարբերութիւն մը կ'ունենան, որոնց մասնակցելու արգելք չի դնել Ընդհ. ժողովը, ինչպէս կ'ընէ նախարար-

14.- Տաթևեան Վահագն:

րութեանց մասնակցելու վերաբերմամբ, ու մեր ձեռնպահութեամբ հարկ կ'ըլլայ ձգել կրթական եւ այլ կենսական գործեր պահպանողական յետադիմական տարրերուն ձեռքը. գործունէութեան եղանակն ու ցարդ գործ տրուած թաքթիքն է որ փոփոխութեան ենթարկել հարկ կ'ըլլայ: Պայքարին ու ազգային գործունէութեան մէջ մեր ձեռք բերած ոչ ցանկալի արդիւնքին պատճառը ոչ թէ պէտք է փնտռել կուսակցութեան անունով մասնակցելուն մէջ, այլ մասնակցող եւ գործող ընկերներու անհատական մտածելակերպին ու գործելակերպին մէջ, որոնց առջեւ չէ գծուած նաեւ ոչ մէկ ուղեգիծ: Ընդհակառակն իբրեւ կուսակցութիւն մասնակցելով եւ իբրեւ դաշնակցական արտայայտուելով՝ մեծապէս նպաստած պիտի ըլլանք Դաշնակցութեան սկզբունքներուն եւ տեսակէտներուն ծաւալման ու փրոփակնտին, ու ո՛րքան ալ փոքրամասնութիւն կազմենք մենք, պիտի ազդենք ազատական տարրերուն վրայ ու զանոնք պիտի ձգենք մեր հոսանքին մէջ, մինչդեռ մեր ձեռնպահութիւնը պիտի ուժեղացնէ պահպանողականութիւնը եւ տարածէ անոնց ազդեցութիւնը: Բայց մեր գործակցութիւնը ազատականներուն կամ ազատական խմբակցութեան հետ կրելու չէ այն տեսակ բնոյթ մը՝ որ համերաշխութիւնը «նոյնացման» հետ շփոթուի, մանաւանդ որ ազատական եւ դաշնակցական ուղղութիւն նոյնը ըսել չէ. այնպէս որ ինչ որ ազատականներուն պահանջն է՝ չի կրնար միշտ դաշնակցականներունը ըլլալ: Ազատական կուսակցութեան ծրագիրը չի կրնար դաշնակցական երեսփոխաններու ծրագիրը ըլլալ, սակայն դաշնակցական երեսփոխանները ընդունած են զայն եւ մինչեւ իսկ նոյն կուսակցութեան մէջ կեդրոնական գործօն դեր ստանձնած: Դաշնակցութիւնը կը մասնակցի ընտրութեանց՝ իբրեւ կուսակցութիւն՝ նայելով իւր տեղական պայմաններուն. դաշնակցական երեսփոխանները Ազգ. ժողովին մէջ կը կազմեն ուրոյն խմբակ՝ ուրոյն պատճառով եւ կը գործակցին ի հարկին ազատականներուն, իսկ դաշնակցական ընկերներ վարչութեան եւ խորհուրդներու մէջ կը մտնեն իբրեւ անհատ, հետեւելով սակայն խորհրդարանական խմբակի պատճառով եւ ըլլալով պատասխանատու կուսակցութեան առջեւ: Այս տեսակէտը ըլլալով ժողովին մեծամասնութեան տեսակէտը՝ յանձնախումբը իր բանաձեւը պիտի պատրաստէ այդ պատճառաբանութիւններու եւ եզրակացութեան համաձայն:

Բ.- Գալով **Աստիճանագրութեան վերաբնութեան** խնդրին¹⁵, դիտելով որ այդ մասին ժողովուրդի լայն խաւերու մէջ նպաստաւոր տրամադրութիւն առաջացած է եւ ժամանակի անհրաժեշտ պահանջներէն մէկն է, կ'առաջարկուի մէկ կողմէ շարունակել այդ ուղղութեամբ սկսուած աշխատանքին մէջ, միւս կողմէ ուսումնասիրուած նախագիծ մը պատրաստել համահայկական հիմունքով, առանց դաւանութեանց խտրու-

թեան, ըստ այնմ միօրինակ եւ սխիւթեմաթիւք փրոփակնտա կարենալ մղելու եւ ամէն առթիւ պաշտպանելու համար անոր հիմնական կէտերը:

Գ.- Յետադիմական եւ պահպանողական տարրերու դէմ սկսուած պայքարը պէտք է շարունակել, առանց սակայն զայն այլասերելու ու մնալով միշտ համապատասխան բարձրութեան վրայ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Դ.

13 Յուլիս, Զորեքշաբթի կէսօրէ վերջ

Ժողովին ներկայ էին պատգամաւորներէն՝ իրաւասու ձայնով 12 ընկեր, խորհրդակցական ձայնով՝ 2, հրաւիրուած ընկերներէն 2, Կեդր. կոմիտէի մնացած անդամներէն 3:

Օրակարգ. Դաշնակցական երեսփոխանները փարլամէնթին մէջ.— Ա. Օսմ. փարլամէնթի դաշնակցական երեսփոխաններէն չենք կրնար այնքան խստապահանջ ըլլալ, որովհետեւ անոնց կը պակսէր կարգ մը առաւելութիւններ՝ զորս անհրաժեշտ էր, ինչպէս օրինակ թուրքերէն լեզուի հատուկութիւն, փորձառութիւն եւն: Անոնց ընտրութիւնն ալ եղաւ պատահականութեանց բերումով, արդիւնք Սահմանադրութեան առաջին օրերու խանդավառութեան, ուր առանց խորհելու եւ կշռադատելու փարլամէնթի ուղարկուեցան այնպիսի ընկերներ՝ որոնք իրենց ստանձնելիք պարտականութեանց անհամապատասխան էին: Նոյնպէս պէտք է մոռնալ այն բացառիկ պայմանները՝ որոնցմով շրջապատուեցան անոնք փարլամէնթին մէջ եւ որոշ չափով անօգտակարութեան դատապարտուեցան: Եթէ չմնացին օփոգիսիոնի դերին մէջ եւ միշտ «իթիհատ»ի հետ համերաշխ դիրք բռնեցին ու քուէարկեցին, անոնք ատով հետեւեցան կուսակցութեան քաղաքականութեան եւ շարքերուն անոր խորհուրդներով, եւ արդէն զուտ ընդդիմադիր քաղաքականութիւն մը խորհրդարանին մէջ ոչ միայն օգտակար չպիտի կրնար ըլլալ, այլեւ յուսախաբ պիտի ընէր նոյն ինքն հայ ժողովուրդը: Պատգամաւորները տուին այն ինչ որ ունէին. հակառակ իրենց թերութեանց եւ շրջապատող պայմաններու անձեռնտու հանգամանքին՝ անոնք աւելին իսկ ըրին հայկական նահանգներու ցաւերուն վերաբերմամբ:

Բ.- Դաշնակցական երեսփոխաններու ունեցած կա-

15.- Հարցը կը վերաբերի 1863 թ. Հայ Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան:

րողութենէն աւելին չի պահանջուիր, սակայն անոնք իրենց ունեցած կարողութիւնն անգամ օգտակար չընծայեցին. մեր երեսփոխանները ծոյլ եղան եւ աշխատանք չկատարեցին, ինչ որ էականն էր: Երեք տարուայ ընթացքին անոնք ո՛չ մէկ աշխատուած ուսումնասիրութիւն կատարեցին եւ հրապարակ բերին, ոչ իսկ հողային հարցի նման կենսական խնդիրը ուսումնասիրած են լիովին՝ եւ հետեւած անոր բոլոր փուլերուն. իրենց ընտրական շրջաններու ցաւերուն մասին անգամ պատրաստուած ուսումնասիրութիւն մը՝ չունին եւ հրապարակ չբերին. եւ հակառակ այն բազմապիսի աղբիւրներուն՝ որ իրենց տրամադրութեան տակ կը գտնուէր, փոխանակ խորհրդարանի բեմէն թուանշաններով ու փաստերով խօսելու, փաստելու համար ներքին գործոց նախարարը մատնանշելու էին: Անոնք չունեցան նոյնիսկ սիստեմաթիկ ժողովներ, որ նպատակ ունենար շօշափելի աշխատանք եւ ուսումնասիրութիւն կատարելու եւ փարլամէնթի բեմը իրենց ծառայեցնելու համար. եւ հաւաքուեցան միայն այն ատեն երբ հարկ էր դիմում մը ընել նախարարի մը անուանման կամ վստահութեան քուէի մասին խորհրդակցելի: Անոնք չզգացին ինքզինքնին պատասխանատու նաեւ կուսակցութեան եւ համապատասխան Մարմին առջեւ՝ օգտուելով Ե. Ընդհ. Ժողովը որոշման այն տրամադրութենէն՝ որուն համաձայն «Դաշնակցական փարլամէնթական Ֆրակցիան կը կազմէ Մարմին մը»: Անոնք պակսեցաւ յաճախ հաւաքական խորհրդակցութիւնը: Փոխանակ ժամանակաւոր պլոքի, ինչպէս կը հրահանգէր Ե. Ընդհ. Ժողովը, մեր երեսփոխանները նոյնացան «Իթթիհատ»ի հետ, այնպէս որ երբ իրենց անունը խառնուեցաւ «Իթթիհատ»եան երեսփոխաններու անունին հետ, խղճահարութիւնը չունեցան հերքելու. իրենց հրապարակային արտայայտութիւնը փարլամէնթին մէջ յաճախ եղաւ ձախող եւ անհետեւողական. փարլամէնթի բեմէն ոչ մէկ ատեն հնչեց Դաշնակցութեան տեսակէտը եւ ո՛չ մէկ ատեն կուսակցութիւնը իրեն գոյութիւնը զգացուց:

Այս ցաւալի պատկերը կը հարկադրէ յառաջիկայ ընտրութեան ատեն ըլլալ խիստ — սկզբունք ընդունելով.— 1) Փոխանակ կուսակցութեան հմայքին վնասելու եւ հասարակական շահերը վտանգելու՝ հրաժարիլ ընկերներու թեկնածութիւնը պաշտպանելէ եթէ չկան յարմարագոյնները, 2) Թեկնածուներու անուանումը չձգել տեղական կազմերուն այլ Թուրքիոյ ռայոնական ժողովին: 3) Անպայման թուրքերէնի հմուտ անհատներու թեկնածութիւնը միայն պաշտպանել. այդպիսի ընկերներ եթէ չկան՝ նախընտրել մեր տեսակէտներուն մօտ տէմոկրատիկ ո՛չ դաշնակցական տարրեր: 4) Խորհրդարանի մէջ դաշնակցական երեսփոխանները պէտք է արտայայտեն իրենց ինքնութիւնն ու դաշնակցական տեսակէտներ եւ իբրեւ ուրոյն խմբակ ժամանակաւոր

պլոքներ կազմեն «Իթթիհատ»ի կամ ազատական այլ տարրերու հետ: 5) Հայ երեսփոխաններու թիւը ընդլայնելու հետամտիլ: 6) Յառաջիկայ նստաշրջանի համար կազմել նոր պլատֆորմ: 7) Պատգամաւորները հաւաքաբար պատասխանատու պիտի ըլլան այն վայրի կեդր. մարմինն ուր կը գտնուին, միւս կողմէ սերտ յարաբերութիւն պահելով իրենց ընտրական շրջանին հետ: 8) Երեսփոխանները կը մասնակցին ընտրական ֆոնտին՝ որոշ գումարով մը՝ համաձայնելով կուսակցութեան համապատասխան մարմինն հետ, իսկ իրենց անդամավճարը, ըստ կուսակցական նախատեսուած սակի, կը վճարեն այն շրջանի տեղական մարմինն, ուր կը բնակին անոնք: Ժողովին մեծամասնութիւնը համակարծիք ըլլալով այս երկրորդ հոսանքի պատճառաբանութիւններուն եւ եզրակացութեան՝ բանաձեւը պիտի պատրաստուի այդ ուղղութեամբ:

Ռուսաստան.— Պատգամաւոր ընկերներ արտայայտուելով ներկայ իրականութեան մասին, եկան այն բնական եզրակացութեան թէ՛ Ռուսաստանի ներկայ ռեժիմին տակ միայն գաղտնի գործունէութիւն մըն է, որ կրնայ ունենալ կազմակերպութիւնը, այնպէս ինչպէս մօտաւոր անցեալի մէջ ունեցած է ան Թուրքիոյ մէջ մնալով պատրաստական դիրքի մէջ, առանց երբեք նախաձեռնարկ յառաջապահ ըլլալու ռուսական յեղափոխութեան: Իր կազմակերպական ձեւն ալ կ'ըլլայ բնականաբար միեւնոյնը ինչպէս անցեալի մէջ Թուրքիոյ կազմակերպութիւնն էր: Կուսակցութիւնը ըլլալով իլլեկալ՝ հասարակական գործերու մէջ հրապարակ չի կրնար գալ իր անունով: Իսկ արտակարգ պարագաներու տակ, ինչպէս էին օրինակ հայ-թրքական ընդհանրութեան, եկեղեցական կալուածներու գրաւումը եւն, կուսակցութիւնը հրապարակ պիտի գայ ժողովուրդին հանուր իրաւունքներու պաշտպանութեան համար:

Ընդունելով որ ինչպէս Կովկասի արտայայտութիւնը կը ներգործէ թրքահայ յեղափոխական տրամադրութեան վրայ, այնպէս ալ թրքահայ հասարակութեան եւ ընկերական տրամադրութիւնն ու շարժումները ունին իրենց նշանակելի ներգործութիւնը Ռուսիոյ ընկերներու յեղափոխական տրամադրութեան եւ անոնց վիճակին վրայ. պէտք էր շեշտուի ոչ միայն սկսուած նիւթական եւ բարոյական օժանդակութեան հոսանքը խորացնել եւ ընդլայնել, այլեւ թրքահայ ինտէլիգենցիային մէջ ստիպել այդ գաղափարական-գոհաբերական մթնոլորտը: Նոյն յղացողն ու գործադրողը եղան ռուսահայ ինտէլիգենցիայի լաւագոյն տարրերը իրենց անձնական գոհողութեան եւ կեանքի օրինակով: Ռուսական յեղափոխութեան բնոյթին գալով՝ որքան ատեն որ ռուսական հալածանքը ուղղուած է կուսակցութեան դէմ եւ ոչ հայ ժողովուրդի ամբողջութեան եւ անոր ֆիզիքական գոյութեան դէմ՝ մեր ուղղակի եւ նախայարձակ

մասնակցութիւնը օգտակար չի կրնար ըլլալ: Առանց մեր ուժերու գերզնահատութեան ինքնախաբէութիւնը ունենալու՝ հետամտելու ենք մեր կազմակերպութեան ուժեղացման, մնաց որ ռուսական յեղափոխութեան առջեւ դրուած է ռեժիմի փոփոխման խնդիրը: Մինչ թրքահայ յեղափոխութեան առջեւ կեցած էր ժողովուրդի մը ֆիզիքական բնաջնջման եւ մորթուման արիւնոտ պատկերը: Երկու երկիրներուն մէջ բնակող հայ ժողովուրդին վիճակը մեծապէս կը տարբերի իրարմէ: Ժողովը այս ընդհանուր տեսակէտներուն մէջ համաձայն ըլլալով՝ յանձնարարեց բանաձեւը պատրաստել եղած արտայայտութիւններու սահմանին մէջ:

Ա. Բանաձեւ

I.- Հ.Յ.Դ. Պոլսոյ Երջանային ժողովը համոզուած ըլլալով հանդերձ,

ա- որ Դաշնակցութեան եւ Իթթիհատի մէջ կնքուած համաձայնութիւնը ակնկալուած արդիւնքը չտալով՝ սահմանափակուած է մասամբ բարեկամական յարաբերութեանց սահմանին մէջ:

բ- Որ թէ՛ պետական եւ թէ՛ հայ-ժողովուրդի ներքին կեանքին վերաբերեալ կարգ մը անյետաձգելի խնդիրներ մնացած են առկախ, հակառակ անոր որ կնքուած համերաշխութենէն յետոյ անոնց իրականացումը կը սպասուէր Իթթիհատէն, իբրեւ կառավարութիւնը ներկայացնող կուսակցութեան:

գ- Որ կանգնելով նոյնիսկ սահմանադրութեան պահպանման տեսակէտին վրայ, կնքուած համերաշխութենէն յետոյ պարզուած կարգ մը երեւոյթներ հակասական կը յայտնուին նաեւ այդ հիմնական առաջադրութեան, քանի որ ինքնապաշտպանութեան տարրական իրաւունքն իսկ զլացուեցաւ աշխատաւոր եւ կեղեքուած հայ տարրին, երբ աւատապետներ զինուած ըլլալու ամէն իրաւունք վայելեցին:

Միւս կողմէ նկատի առնելով

ա- Որ հակառակ այս բոլոր քննադատելի թերութիւններուն՝ եթէ կայ սահմանադրութեան պաշտպան տարր մը՝ Իթթիհատի մէջ կարելի պիտի ըլլայ գտնել.

բ- Որ փարլամէնթի յառաջիկայ նստաշրջանի ընտրութեանց առթիւ ժողովին ֆիզիոնոմիան մեծապէս առնչութիւն ունի եւ կախուած է Իթթիհատի վայելած ուժէն եւ ազդեցութենէն:

գ- Որ Իթթիհատի վերջնական ուղղութիւնն ու ոգին պարզուելու համար հարկ կ'ըլլայ սպասել նոյն կուսակցութեան յառաջիկայ քունկրէին արդիւնքին:

Երջ. Ժողովը կ'առաջարկէ Ընդհ. Ժողովին.

ա- Պահել նախորդ Ընդհ. ժողովին որոշումը՝ յարաբերութեան որոշ վերապահումներով:

բ- Սահմանադրական պաշտպանութեան հիմնական նպատակը պահելով՝ խզել Իթթիհատի հետ բարեկամական եւ այլ այս կարգի յարաբերութիւնները՝ եթէ քունկրէին մէջ կուսակցութեան ձախ թեւը ի սպառ պարտուի եւ Իթթիհատի ղեկը անցնի աջ հոսանքին ձեռքը, որ էջրաֆներու տիրապետութիւնը պիտի նշանակէ:

գ- Հետամտիլ խորհրդարանի ազատական տարրերէն առաջացնել ուրոյն խմբակցութիւն եւ անոր հետ կազմել ժամանակաւոր պլոք՝ որոշ խնդիրներու շուրջ, միաժամանակ շարունակելով քննադատել կառավարութեան այն բոլոր քայլերը՝ որոնք կը վնասեն երկրի ամբողջական շահերուն, առանց սակայն այդ քննադատութեան տալու այնպիսի թոն ու բնաւորութիւն՝ որ սահմանադրութիւնը նսեմացնէ ժողովրդի աչքին ու զայն խրտչեցնէ անկէ:

II.- Ըլլալով փափաքող համերաշխութեան գաղափարին ծաւալման, կ'առաջարկուի նախաձեռնարկ ըլլալ համերաշխութեամբ գործելու այն բոլոր տարրերուն հետ՝ որոնք տրամադիր են Դաշնակցութեան կամ դաշնակցական ո՛րեւէ մարմնի հետ համախորհուրդ եւ համերաշխ աշխատիլ այս կամ այն առաջադրութեան եւ նպատակի իրականացման համար, ըլլան անոնք պետական թէ՛ ազգային խնդիրներու մասին: Կուսակցութիւններէն կամ խմբակցութիւններէն նախընտրել անոնք՝ որոնք տեմոքրատիք սկզբունքներ ունին. իսկ զուտ ազգային կուսակցութիւններու հետ ժամանակաւոր գործակցութիւններ միայն ունենալ՝ երբ այս կամ այն խնդրի յաջողութեան ի նպաստ գործելու համար մեր եւ անոնց մարմիններու միջեւ որոշ համաձայնութիւն կը կայանայ:

III.- Հ.Յ.Դ. ըլլալով ընկերվարական կուսակցութիւն մը եւ իբր այդպիսին պարտականութիւն ունենալով իր գտնուած վայրերուն միւս ազգութեանց մէջ առաջ բերել ընկերվարական խմբակցութիւններ, անոնց հետ գործակցելու եւ բովանդակ աշխատաւորութեան դատը պաշտպանելու նպատակով, կ'առաջարկուի Ընդհ. Ժողովին, որպէսզի կուսակցութեան մարմիններուն ու ընկերներուն պարտադրէ ուժ տալ այս նպատակին եւ տեղ տեղ արդէն երեւան եկած ընկերվարական խմբակցութեանց հետ ձեռնարկներ ընել ու մշտական համերաշխութիւն կնքել:

Բ. Բանաձեւ

Մեկնելով պետութեան եւ աշխատաւոր ազգաբնակչութեան (առանց ազգի խտրութեան) շահերու տեսակէտէն եւ ընդունելով.

ա- Որ հողային հարցը իրաւունքի հարց մ'ըլլալով հանդերձ արդարութեան հարց մըն է միանգամայն:

բ- Որ աշխատաւոր ազգաբնակչութեան ստուար մեծամասնութեան գոյութիւնը կախուած ըլլալով անկէ,

անոր արմատական եւ արդար լուծումը անխուսափելի անհրաժեշտութիւն մը կը ներկայացնէ:

գ- Որ այդ խնդրին ձգձգումը ո՛չ միայն կը սպառնայ անտեղի յուզումներու եւ բախումներու բնականից ազդեցութեանց եւ տարրերու մէջ, այլեւ երկրին զանազան մասերուն տեւական խաղաղութեան:

դ- Որ կառավարութիւնը մէկ կողմէ կը պատասպարէ ամէն զնով դրսէն եկած իսլամ մուհաճիւրները, մինչ ոչ մէկ հոգածութիւն եւ պաշտպանութիւն ցոյց կու տայ երկրին բնիկ բայց իրաւագրկուած զաւակներուն:

Երջանային ժողովը կ'առաջարկէ,
ա- Օգտուելով սահմանադրական կարգերու ընձեռած դիւրութիւններէն, չդադրել հետապնդելէ խնդիրը բոլոր թոյլատրուած միջոցներով: Հրապարակային բողոք՝ մամուլով թէ միթիւնկներով, խորհրդարանի բեմէն եւ կառավարութեան մօտ եղած օրինական դիմումներով:

բ- Հողային հարցը գուտ հայկական խնդիր մը չըլլալով, քիւրտ եւ թուրք աշխատաւոր ու իրաւագուրկ տարրերուն միջեւ եւս փրօփականտա մղել, որպէսզի անոնք եւս տէր կանգնին իրենց իրաւունքներուն եւ իրենց ձայնը միացնեն հայ բողոքողներուն:

գ- Այս բոլորէն յետոյ առաջնալիք ամէն թիւրիմացութեան եւ անախորժութեան պատասխանատուութիւնը ձգել կառավարութեան վրայ:

Գ. Բանաձեւ

Ապահովութեան խնդիրը հայաբնակ նահանգներու հայ ազգաբնակչութեան համար ըլլալով տեսակ[մը] մահու եւ կենաց խնդիր, ու նկատելով որ այս մասին կառավարութեան ձեռք առած միջոցները անբաւարար են խաղաղութեան տեւական պահպանման եւ թէ վրտանգի ըրպէններուն համար,

կ'առաջարկենք,
ա- Պահանջել թոյլտուութիւն՝ պետական միջոցներով եւ աջակցութեամբ կազմելու գիւղական պահակներ, ինչպէս նաեւ ապահովել ոստիկան-գինուորներու կանոնաւոր կազմակերպութիւն եւ անոնց տեւական գոյութիւնը երկրի բոլոր կողմերը:

բ- Ժողովրդային ինքնապաշտպանութեան համար պարտադիր աշխատանք կատարել եւ դրական արդիւնքներու հետամուտ ընելու ջանալ զայն:

Դ. Բանաձեւ

Երջանային ժողովը՝ քննութեան առնելով ազգային կուլտուրական խնդիրներու մէջ Դաշնակցութեան մասնակցութեան հարցը, եւ նկատելով,

ա- Որ մեր ազգային կուլտուրական հիմնարկութիւնները սերտ առնչութիւն ունին մեր ժողովրդի կուլ-

տուրական կեանքին հետ եւ կ'ամփոփեն իրենց մէջ ազգային-կուլտուրական ինքնավարութեան սաղմերը:

բ- Որ այդ հիմնարկութեանց բարեկարգութիւնը ու նպատակաշարժար ուղղութիւնը մեծ կարեւորութիւն ունի ժողովրդի աշխատաւոր մեծամասնութեան տնտեսական, կրթական ու բարոյական շահերու տեսակէտէն,

գ- Որ կուսակցութեան ձեռնպահութիւնը այդ հիմնարկութեանց մասնակցութեան մէջ յետադիմական-պահպանողական տարրերու ազդեցութեան ընդլայնումը պիտի նշանակէ, ինչ որ աշխատաւոր դասակարգի շահերուն ոտնահարումը ըսել է:

Երջանային ժողովը կ'որոշէ,
ա- կուսակցութիւնը կը մասնակցի երեսփոխանական եւ այլ ընտրութեանց՝ յանուն կուսակցութեան, նայելով տեղական պայմաններուն՝ մասնակցութեամբ նաեւ ազատական տարրերուն, կուսակցութեան թեկնածուները առանձնապէս ծանօթացնելով սակայն ժողովրդին:

բ- Ազգ. օրէնսդրական ժողովին մէջ դաշնակցական երեսփոխանները կը կազմեն ուրոյն խմբակ, առանձին պատժորմով՝ ի հարկին գործակցելով ազատականներուն:

գ- Վարչութեանց եւ խորհուրդներու մէջ դաշնակցականները կը մասնակցին անհատական հանգամանքով, ըլլալով սակայն հետեւող խորհրդարանական խմբակի պատժորմին եւ պատասխանատու կուսակցութեան առջեւ՝ իրենց գտնուած շրջաններու կեդր. մարմիններու միջոցաւ:

II.— Մեկնելով սահմանադրութեան վերաքննութեան գաղափարի շուրջ ժողովուրդին մէջ առաջացած նպաստաւոր տրամադրութենէն եւ ընդունելով այդ վերաքննութեան անառարկելի անհրաժեշտութիւնը, կ'առաջարկուի,

ա- Եարունակել սահմ. վերաքննութեան գաղափարին շուրջ սկսուած աշխատանքն ու պահանջները,

բ- Պատրաստել ուսումնասիրուած նախագիծ մը, համահայկական հիմունքով, առանց դաւանանքի խըրտութեան, ըստ այնմ միօրինակ եւ սիսթեմատիկ փրօփականտա կարենալ մղելու եւ ամէն առթիւ պաշտպանելու համար անոր հիմնական առաջադրութիւնները:

գ- Եարունակել յետադիմական-պահպանողական տարրերու դէմ սկսուած պայքարը, առանց սակայն զայն այլասերելու եւ մնալով մեր դերին համապատասխան բարձրութեան վրայ:

Ե. Բանաձեւ

Մեկնելով կուսակցութեան եւ հասարակութեան շահերու տեսակէտէն միանգամայն, եւ քննութեան առն-

լով օսմ. փարլամէնթի դաշնակցական երեսփոխաններու գործունէութիւնը իրենց աշխատանքին ու արտայայտութեանը մէջ, Երջանային ժողովը ո՛չ միայն գտաւ զայն անգոհացուցիչ այլեւ բացասական:

Իբրեւ արդիւնք առաջին նստաշրջանէն ստացուած փորձառութեան եւ իր այս եզրակացութեան, կ'առաջարկուի Զ՞ Ընդհ. ժողովին,

ա- կուսակցութեան փրեսթիժին եւ հասարակութեան շահերուն չվնասելու նախանձախնդրութեամբ՝ հրաժարիլ ընկերներու թեկնածութիւնը պաշտպանելէ, եթէ չկան յարմարագոյններ,

բ- Պաշտպանել անպայման թուրքերէնի հմուտ ընկերներու թեկնածութիւնը. յարմարագոյն ընկեր չգտնուած պարագային՝ նախընտրել մեր տեսակէտներուն մօտ տեմոքրատիք սկզբունքներու տէր ոչ-դաշնակցական անհատներ,

գ- Թեկնածուներու անուանումը չձգել տեղական կազմերուն, այլ թուրքիոյ Ռայոնական ժողովին:

դ- Հետամտիլ հայ երեսփոխաններու թիւը ընդլայնելու փարլամէնթին մէջ:

ե- Դաշնակցական երեսփոխաններէն փարլամէնթին մէջ ունենալ ուրոյն խմբակ եւ պատրաստել զանոնք արտայայտելու իրենց ինքնութիւնը ու դաշնակցական տեսակէտները եւ, համաձայն կուսակցութեան կողմէ կազմուած գործունէութեան նոր պատժորմի, ի հարկին գործակցիլ Իթթիհատին ու խորհրդարանական ազատական տարրերու հետ:

զ- Պարտադիր դարձնել դաշնակցական երեսփոխաններու հաւաքական պատասխանատուութիւնը թէ՛ կուսակցութեան առջեւ՝ իրենց գտնուած վայրի կեդր. մարմինն միջոցով եւ թէ՛ իրենց գործունէութեան մէջ, միաժամանակ պահելով սերտ յարաբերութիւն իրենց ընտրական շրջանին հետ:

է- Երեսփոխանները ընտրական ֆոնտին կը մասնակցին որոշ գումարով՝ փոխադարձ համաձայնութեամբ որոշելով զայն համապատասխան մարմինն հետ, իսկ իրենց անդամավճարները ըստ սակի կը վճարեն իրենց գտնուած եւ ապրած վայրի տեղական մարմինն իբրեւ սոսկական անդամներ կազմակերպութեան:

Զ. Բանաձեւ

Աչքի առջեւ ունենալով Ռուսաստանի ներկայ իրադրութիւնն ու անոր յեղափոխական-քաղաքական պայմանները, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի վիճակը,

Երջանային ժողովը յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան.

ա- Ռուսաստանի ներկայ ռեժիմին տակ գաղտնի գործունէութիւն միայն կրնայ ունենալ կուսակցութիւնը, ինչպէս երբեմն թուրքիոյ մէջ, եւ միեւնոյն կազմակերպական ձեւը, մնալով սակայն պատրաստա-

կան դիրքի մէջ՝ առանց երբեք նախադրձակ եւ յառաջապահ ըլլալու:

բ- Արտակարգ պարագաներու տակ — ինչպէս էին անցեալին մէջ հայ-թաթարական ընդհարումներն ու եկեղեցական կալուածներու գրաւումը — կուսակցութիւնը հրապարակ կու գայ յանուն ժողովրդային իրաւունքներու պաշտպանութեան:

գ- Իբր իլլեկալ կազմակերպութիւն, հասարակական լեկալ գործօններուն մէջ — մամուլ, Զեմստօ, եւայլն — չկրնալով ուղղակի մասնակցիլ, անուղղակի միջոցներով կը ջանայ ապահովել իր մասնակցութիւնը:

Միւս կողմէ ընդունելով որ ինչպէս կովկասի արտայայտութիւնը կը ներգործէր թրքահայ յեղափոխական տրամադրութեան վրայ, այնպէս ալ թրքահայ հասարակութեան եւ ընկերներու տրամադրութիւններն ու շարժումները ունին իրենց նշանակելի ներգործութիւնը Ռուսաստանի ընկերներու եւ յեղափոխական տրամադրութեան եւ անոնց վիճակին վրայ:

Երջանային ժողովը կ'առաջարկէ.

ա- Յանուն կուսակցութեան ուղղել իր հանդիսաւոր ողջոյնները ու յարգանքը բոլոր այն ընկերներուն՝ որոնք բանտերու խորէն թէ յեղափոխական պատնէշին վրայէն իրենց պայքարի գործն ու աղաղակն է որ կը հնչեցնեն բովանդակ տառապող աշխատաւորութեան եւ քաղաքակիրթ մարդկութեան:

բ- Կոչ ընել թրքահայ ընկերներու եւ առհասարակ ինտելիգենցիային, որպէսզի ո՛չ միայն աւելի ուժեղ թափով առաջ տանի եւ կատարէ բարոյական ու նիւթական աջակցութեան այն համեստ գործը՝ որուն ձեռնարկած է, այլեւ ջանայ ստեղծել իր շարքերուն մէջ գոհաբերութեան այն բարձրօրէն գաղափարական մթնոլորտը՝ որուն յղացողն ու գործադրողն եղան դեռ երէկ Ռուսաստանի հայ ինտելիգենցիայի լաւագոյն տարրերը՝ իրենց անձնագոհութեան կազդուրիչ օրինակով:

ՆԻՍՏ Է.

14 Յուլիս, Հինգշաբթի առաւօտ

Ժողովին ներկայ էին իրաւասու ձայն ունեցող պատգամաւորէն 11, խորհրդակցական ձայնով՝ 3, հրաւիրուած ընկերներէն 2, Կեդր. կոմիտէէն 2:

Ստացուած ըլլալով Պրոսսայի, Զէնկիլէրի եւ Սկիւտարի պատգամաւորներու վկայականները, ընտրութեան պարագաները օրինաւոր նկատուեցան: Իսկ ինչ կը վերաբերի Պրոսսայի պատգամաւորին վճարական ձայն տալու առաջարկին, ժողովը դարձեալ բաժնեց Կեդր. կոմիտէի կարծիքը, նկատելով որ դեռ հազիւ մէկ ամիսէ ի վեր Պրոսսայի կազմը լրացուցած է իր անդա-

մական ցենզը եւ հետեւաբար չի կրնար իրաւասու ձայնի իրաւունք ստանալ:

Օրակարգ՝ Պարսկաստան— Պարսկաստանը վերածնունդու ընդունակ երկիր մը չէ: մինչեւ անոր վերածընուժը՝ դրացի եւ քաղաքակիրթ այլ պետութեանց թաթը կը հասնի արդէն եւ կը բռնէ գայն, ինչպէս օրինակները ցոյց կու տան: Պարսկական յեղափոխութիւնը մանաւանդ — իսկական ժողովրդական յեղափոխութիւն մը չէ, այլ ազդեցութեան (ներքին թէ արտաքին ազդակներով) տարածման եւ տիրապետութեան բաշխում: Եթէ այդպէս չըլլար՝ երէկուան կռուող «ազատական»ները չպիտի տեսնէինք ռէակսիոններու դերին մէջ: Գոյութիւն ունեցող պայմաններուն մէջ՝ մօտաւոր անցեալին մէջ մեր ըրած ճիգերը առանց անոր ալ արդէն շատ եղան եւ անհամեմատ թէ՛ մեր ուժերուն եւ թէ՛ գործին ունեցած կարեւորութեան: Եւ քանի որ երեք տարուան ճիգերը ո՛չ մէկ յոյս ներշնչեցին երկրին բարեկարգութեան ի նպաստ, կը մնայ այլեւս չկլանուիլ, եւ նուիրուիլ հայ ժողովրդեան ինքնապաշտպանութեան գործին՝ որ տիրող պայմաններուն հարկադրութեամբ իսկ ամենակենսական խնդիր մը կը դառնայ եւ արդէն այդքան իսկ մեծ ծառայութիւն մը պիտի ըլլար սահմանադրութեան: Նոր ստեղծուած անցողական կացութեան մէջ, երբ գահընկէց Շահը կ'ուզէ յափշտակել իր աթոռը, անոր դէմ պայքարիլը նոյնքան կարեւոր է, քանի որ այդ յետադարձ շարժումը անմիջական կապ ունի Պարսկաստանի ազատական տարրերու կեանքին հետ եւ մասնաւորապէս հայ ժողովուրդի կեանքին հետ, որուն ճիգերովն էր որ տապալեցաւ Շահը: Կ'արժէ նաեւ սահմանադրական Թուրքիոյ կառավարութեան ուշադրութիւնն ալ հրաւիրել Պարսկաստանի սահմանադրութեան պահանջներն ի նպաստ, քանի որ Ռուսիոյ յառաջացումն ու տիրապետութիւնը Թուրքիոյ արեւելեան սահմաններուն ալ վրայ՝ ինքնին մեծ վտանգ մը կը ներկայացնէ նոյն ինքն Թուրքիոյ համար: Լեկալ պայմաններու մէջ սահմանադրական պայքարը պէտք է առաջ տանիլ պարսիկ ազատականներու հետ, ուղղելով հարուածները մասնաւորապէս աւատակներու դէմ, իսկ փարլամէնթին մէջ դաշնակցական երեսփոխանները կ'ունենան ա՛յն դերն ու թաքթիքը՝ ինչ որ պիտի ունենան դաշնակցական երեսփոխանները օսմ. փարլամէնթին մէջ:

Հիմնուելով այս տեսակէտներուն վրայ, Շրջ. ժողովը կ'որոշէ, հասնելով այն եզրակացութեան

ա- Որ Պարսկաստան՝ մէկ կողմէ անընդունակ վերածնելու, միւս կողմէ ենթակայ պետութեանց կողմէ տիրապետման անմիջական ու անխուսափելի վտանգին:

բ- Որ պարսկական յեղափոխութիւնը չունենալով իսկական ժողովրդական յեղափոխութեան բնոյթ՝ աւելի ներքին թէ արտաքին ազդակներու կողմէ առաջացած ազդեցութեանց պայքար մըն է, ինչպէս փաստերը ցոյց կու տան:

գ- Որ այս պայմաններուն մէջ՝ Դաշնակցութեան բերած մասնակցութեան չափը մօտաւոր անցեալի մէջ առանց անոր ալ արդէն իր ուժերէն բարձր էր ու չնախատեսուած,

Երջանային ժողովը կ'որոշէ,

ա- Սահմանադրութեան պահպանման համար աջակցիլ՝ տեղական ուժերու ներած սահմաններուն մէջ, առանց ամբողջ կուսակցութիւնը կլանելու այդ գործով:

բ- Ինքնապաշտպանութիւնը նկատելով կուսակցութեան առաջնակարգ զբաղումներէն մէկը, ըստ այնմ ուշադրութիւն դարձնել եւ ընթացք տալ՝ ինչ որ իր կարգին պիտի նպաստէ նոյնինքն սահմանադրութեան պահպանման:

գ- Պարսկաստանի սահմանադրութեան պաշտպանութեան գործին մէջ շահագրգռել երիտասարդ Թուրքիան եւս, նկատելով որ Ռուսիոյ տիրապետութիւնը Թուրքիոյ արեւելեան սահմաններուն վրայ՝ վտանգ մըն է Թուրքիոյ ամբողջութեան դէմ:

դ- Նորմալ պայմաններու մէջ, փարլամէնթին մէջ թէ անկէ դուրս սահմանադրութեան պահպանման շուրջը գործակցիլ պարսիկ ազատական տարրերու հետ, ճիշդ այնպէս՝ ինչպէս Թուրքիոյ մէջ տեղի կ'ունենայ:

Աշխատաւորական— Ի.- Արհեստակցական եւ այլ նման միութիւններու «կուսակցական» ըլլալու տեսակէտը պաշտպանեցին ընկերներէն ոմանք՝ հիմնուելով հետեւեալ տեսակէտներուն [վրայ].

Անկուսակցական թէ կուսակցական ըլլալու պարագան տեղէ տեղ կը տարբերի, հետեւաբար Ընդհ. ժողովը պէտք չէ որ բացարձակ որոշում տայ այդ մասին, իբր ուսումնասիրուած եւ եզրակացութեան յանգուած խնդիր, այլ այդ որոշումը պէտք է թողուլ տեղական ընկերներուն կամ Շրջ. ժողովներուն: Արդէն ընկերակարական կուսակցութիւն մը ուժ ներկայացնելու համար հարկ է որ աշխատաւորական կազմ եւ ուժ ունենայ, իսկ այդ պարագային կազմուած միութիւնները ինքնին կուսակցական կ'ըլլան: Արհեստակցական եւ այլ միութիւնները կ'ընդունին կուսակցութեան կանոնագիրը, որով քաղաքական եւ այդ խումբերու մէջ առանձին տարբերութիւն ու խտրութիւն չի դնել, երկուքն ալ դաշնակցական օրինակոր խմբեր են, հետեւաբար իբր այն պէտք է մօտենալ անոնց: Կայ նաեւ այդ խումբերու դաստիարակութեան հարցը, որ կուսակցական հողի վրայ եւ կուսակցութեան աշխարհահայեացքով պէտք է կատարուի, եւ այն բոլոր անպատեհութիւնները որ կուսակցական հողի վրայ կազմակերպելուն մէջ կայ: Կայ նաեւ անկուսակցական հողի վրայ կազմակերպուած [ըլլալու] պարագային: Սոցիալ դեմոկրատներն ալ, բանուորները անկուսակցական հողի վրայ կազմակերպելու անունով, մօտեցած է կուսակցական հողի վրայ

կազմակերպման: Կուսակցական հակամարտութիւնները կը դադրին այն ատեն միայն՝ երբ կուսակցութիւնները դադրին աշխատաւորական դատը ներկայացնելէ կուսակցութեան եւ կուսակցական շահերուն ծառայեցնելէ եւ մօտենան աշխատաւորութեան՝ զուտ անոր շահերուն պաշտպանութեան տեսակէտով: Աշխատաւորական հետեւողական քաղաքականութիւն մը մշակելու համար սխիթեմաթիք փրփականտի պէտք կայ: իսկ անոր մասին որոշ պահանջներ կրնանք գծել այն պարագային՝ երբ ուսումնասիրուած է խնդիրը եւ կանոնաւոր վիճակագրութիւններ կան մեր առջեւ: այդ բանը ընելու համար ալ ձեռնհաս եւ ազատ ընկերներ պէտք է յատկացնել:

Ի.- Ընդունելով հանդերձ որ կուսակցութիւնը բացարձակ որոշումով մը չվճռէ խնդիրը արհեստակցական եւ նման միութիւններու կազմակերպումը կուսակցական կամ անկուսակցական հողի վրայ, սակայն Թուրքիոյ եւ Ռուսիոյ ներկայ պայմանները ի նպաստ անկուսակցական հողի վրայ կազմակերպելու քաղաքականութեան կը խօսին: Մենք չենք կրնար պարտադրել որ դաշնակցական չեղող մը՝ անպայման ընդունի Դաշնակցութեան ծրագիրն ու տեսակէտը՝ իր շահերու պաշտպանութեան դիւրութենէն չզրկուելու համար: այդ կարգի բանուորները առ առաւելն մենք կ'առնենք մեր քաղաքական խումբերուն մէջ: Ամէն տեղ ալ, շատ քիչ բացառութեամբ, բանուորական միութիւնները կուսակցութեան մէջ չեն մտնել եւ կը մնան սոսկական բանուորական միութիւններ: Բանուորական շահը միշտ պէտք է նախադասել կուսակցութեան շահերէն: Բանուորական կազմակերպութիւններ առաջացնելու համար, տգիտութենէն զատ, երկու գլխաւոր դժուարութիւններ կան — ազգային եւ կուսակցական. որպէսզի հակամարտութիւններ առաջ չգան՝ հարկ է որ անոնք կազմակերպուին առանց կուսակցական խտրութեան՝ մէկ կուսակցութեան մէջ. այլապէս կուսակցական թէ ազգային համոզումի հողի վրայ պիտի առաջանան պառակտումներ, ինչպէս եղած է մօտաւոր անցեալին Կովկասի մէջ, ու մանաւանդ մեր շրջանին մէջ, ուր թէ՛ դաշնակցականները եւ թէ՛ այլ խմբակցութիւններ փորձած են կազմակերպել բանուորները կուսակցական հողի վրայ, ինչ որ գործին յաջողութեան վնասած եւ ներկայի աշխատանքները դժուարացուցած է մեծապէս:

Եղած այս արտայայտութիւններէն յետոյ, ժողովը հետեւեալ որոշման յանգեցաւ.

Մեկնելով այն հիմնական տեսակէտէն որ՝ Դաշնակցութիւնը իր փրփականտի եւ աշխատութեան կարեւոր մէկ մասը պիտի նուիրէ աշխատաւորութեան կազմակերպման, անոր տնտեսական թէ քաղաքական շահերու պաշտպանութեան իսկ համար, եւ ընդունելով որ այդ աշխատանքները պէտք է տարուին այնպիսի թաք-

թով ու ուղղութեամբ՝ ուրկէ աշխատաւորութիւնը օգտուի, Երջանային ժողովը կ'որոշէ,

ա- Բանուորական, արհեստակցական եւ այլ այս կարգի միութիւններու կազմակերպումը պարտադիր աշխատանքներէն մէկը նկատել կուսակցութեան բոլոր շրջանի մարմիններուն եւ ըստ այնմ գծել որոշ պարտականութիւններ:

Միւս կողմէ, ընդունելով որ այդ միութեանց կազմակերպման ձեւը տակաւին ուսումնասիրութեան արժանի եւ իրական կեանքի տալիք փորձառութեանց կարօտ խնդիր մըն է, կ'առաջարկուի Զ^օ Ընդհ. ժողովին՝ որ առանց իր բացարձակ եւ վերջնական խօսքն ըսելու այդ մասին, որոշ ժամանակաշրջանի մը համար, Կովկասի թէ Թուրքիոյ բանուորական, արհեստակցական եւ այլ միութեանց օգտին տեսակէտով՝ ընդունի անկուսակցական հողի վրայ կազմակերպելու թաքթիքը եւ հրահանգէ կազմակերպութեան մարմիններուն:

բ- Կազմակերպել միութիւնները միջազգային հողի վրայ՝ ուր բանուորները զանազան ազգերէ կը բաղկանան, իսկ Ազգային՝ ուր բանուորութիւնը մէկ ազգի պատկանող անհատներէ կը բաղկանայ, ըլլան անոնք հայ թէ տարբեր ազգութեանց պատկանողներ, առանց պարտաւորի ընելու անոնց ընդունիլ Դաշնակցութեան ծրագիրն ու թաքթիքը. դաշնակցական ընկերները կը ջանան հետզհետէ անոնց ծանօթացնել Հ.Յ.Դ. ծրագիրը, մղելով զանոնք քաղաքական-ընկերային նպատակներու իրագործումին եւ բանուորական օրէնսդրութիւններ առաջացնելու նպատակով աշխատանքներու:

ՆՍՍ Զ.

14 Յուլիս, Հինգշաբթի, կէսօրէ ետք

Ժողովին ներկայ էին իրաւասու ձայն ունեցող 11, խորհրդակցական ձայնով 3 պատգամաւորներ, Կեդր. Կոմիտէի մնացած անդամներէն ներկայ՝ 2, հրաւիրուած ընկերներէն 1:

Օրակարգ ունենալով կազմական կանոնագրի փոփոխութեան առթիւ որոշուելիք կարգ մը էական անհրաժեշտութիւն ներկայացնող կէտերը, առաջարկուեցաւ քննութեան ենթարկել նախ [Դաշնակցութեան] Խորհուրդի գոյութեան խնդիրը:

Պատգամաւոր ընկերներէն ոմանք Խորհուրդի գոյութեան դէմ արտայայտուեցան՝ հիմնուելով այն պատճառաբանութեան վրայ թէ՛ Խորհուրդը իր կազմով եւ պարտականութիւններով ապակերտնական սկզբունքին անհամապատասխան մարմին մըն էր որ գոյութեան իրաւունք չունի: Այս պատճառաբանու-

Թեան դէմ՝ Խորհուրդի պէտքին վրայ շեշտուեցաւ, որ Ընդհ. Ժողովի չգոյութեան պարագային, անակնկալ ժամանակներ կը գումարուի եւ որոշումներ կու տայ, դատական խնդիրներու ընթացք կու տայ եւ կրնայ օգտակար ըլլալ. որպէսզի Խորհուրդի պատասխանատուութիւնն ու ամբողջութիւնը պահուած ըլլայ, օգտակար պիտի ըլլար զայն ընտրել ուղղակի Ընդհ. Ժողովէն, առանց Բիւրոյի անդամներու մասնակցութեան:

Ժողովի նախագահը իր պատգամաւորի ձայնէն օգտուելով յայտնեց որ իրեն եւ պատգամաւոր ընկերներէն շատերուն կը պակսի Խորհուրդի գոյութեան իրաւունքին, անոր կատարած ու կատարելիք դերին վերաբերմամբ ծանօթութիւններ. այս պարագային՝ Խորհուրդը կը թուի օգտակար ըլլալ՝ ի հարկին Ընդհ. Ժողովին փոխարինելու դերովը միայն:

Խնդիրը քուէի դրուելով՝ սկզբունքով ընդունուեցաւ «առանց Բիւրոյի անդամներուն մասնակցութեան» Ընդհ. Ժողովէն ընտրուած Խորհուրդի մը գոյութիւնը»:

Յետոյ անցնելով Խորհուրդի պարտականութեանց ճշդման խնդրին, ընկեր Ատոմ¹⁰, — նոր եկած ժողովին — դիտել տուաւ որ ժողովը սխալ որոշում մը տուած է, ըստ որում առանց մարմնի մը պարտականութիւնները ճշդելու, կարելի չէ անոր գոյութիւնը որոշել. գուցէ վիճաբանութեանց ընթացքին ժողովը այն եզրակացութեան հասնի թէ՛ Խորհուրդին տրուելիք պարտականութիւններ չկան եւ տրուած որոշումը չեղեալ նկատուի: Այս պատճառաբանութեամբ ալ, ըստ հոլթեան խօսելու համար խօսք ուզեց:

Ընկեր Արամ¹² դիտել տուաւ որ երբ խնդիրը ըստ հոլթեան որոշուած է, այլեւս գոյութեան եւ չգոյութեան հարցը չի կրնար վիճաբանութեան առարկայ դառնալ, կը մնայ Խորհուրդի պարտականութիւնները ճշդել եւ անցնիլ:

Ընկեր Ատոմ իր միտքը կրկնեց, աւելցնելով որ այդ պարտականութիւնները ճշդած պարագային անգամ հարցին պիտի մօտենանք ըստ հոլթեան ու շարունակեց խօսիլ:

Ընկեր Արամ պահանջեց նախագահէն յարգել նախորդ որոշումը, եւ արգիլել ըստ հոլթեան խօսելէ:

Նախագահը դիտել տուաւ որ ժողովը բան մը չի կորսնցնել ընկեր Ատոմը լսելով, քանի որ պատգամաւորներէն մէկ մասին անձանօթ է հարցը. եթէ ժողովը յանգի այն եզրակացութեան որ Խորհուրդին տալիք պարտականութիւններ չունինք, ինքնին նոյն մարմինը եւ քիչ առաջ տրուած որոշումը կը կորսնցնէ իր ուժը:

Ընկեր Արամ հակաօրինական գտնելով ըստ հոլթեան խօսուելու թոյլտուութիւնը, ցորչափ ժողովը հաւաքաբար չէ շեշտած այդ պէտքը, մեկնեցաւ ժողովէն:

Ժողովը շարունակեց լսել ընկեր Ատոմը նոյն խընդրին շուրջը, որ հետեւեալ պատճառաբանութիւնները

մատնանշեց,— Խորհուրդը մարմին մըն է, որ ոչ-մէկ հաւաքական գոյութիւն ունի եւ յարաբերութիւն ունի Բիւրոյին եւ Կեդր. Կոմիտէներուն հետ, որ յանկարծ պատահաբար գումարուելով կու գայ կուսակցութեան անունով որոշումներ տալու: Ասկէ առաջ Խորհուրդ անունին տակ գոյութիւն առած մարմինները իրենց պարտականութիւնները չեն կատարած, որովհետեւ ոչ մէկ ատեն լրիւ կազմ ունեցած են եւ կանոնաւորապէս հաւաքուած: Բիւրոյական պարտականութիւնը մէկ ընկերէ մ'առնելով միւս ընկերոջ մը տալով, կամ մէկ ընկեր մը ասկէ անդին փոխադրելով օգտակար գործ մը ըրած չենք ըլլար: Ընդհ. Ժողովէն ընտրուած Խորհուրդն ալ իր պարտականութեան գլուխը չպիտի մնայ, քանի որ նոյնինքն Ընդհ. Ժողովէն բխած մարմիններն անգամ այս կամ այն պատճառներով, իրենց հաւաքական կազմով չեն մնացած, որոնց փոխարինած են Ընդհ. Ժողովէն չբխած ընկերներ: Այն ընկերները՝ որոնք պատասխանատու չեն Ընդհ. Ժողովի առջեւ, պարզ է որ իրենց պարտականութեան չպիտի մօտենան պատասխանատուութեան զգացումով: Խորհուրդը համապատասխան չէ նոյնիսկ մեր ապակեղրոնացման սկզբունքին: Խաղաղ պայմաններու մէջ Խորհուրդի գումարման պէտք չկայ, իսկ յեղափոխական ժամանակներու մէջ, մինչեւ անոնց հաւաքուելը, արդէն պարագաները կը փոխուին, եթէ երբեք կարենան իսկ ամբողջովին հաւաքուիլ:

Որպէսզի մէկ կողմէ որոշ առաջարկներու շուրջ կատարուած ըլլայ վիճաբանութիւնը, միւս կողմէ աւելի բազմակողմանի կերպով լուսաբանուին ընկերները, ժողովը պարտականութիւն յանձնեց Կեդր. Կոմիտէի ընկերներէն Ֆելիքսին՝ պատրաստել Խորհուրդի հաշւական, դատական եւ այլ կարգի էական կէտեր ճշդող նախագիծ մը եւ զեկուցում բերել այդ մասին վաղուան ժողովին:

Ուստի Խորհուրդի գոյութեան եւ անոր յարակից կազմակերպական բաժնի միւս խնդիրները վերապահելով յառաջիկայ նիստերէն մէկուին, ժողովը անցաւ օրակարգի միւս խնդիրներուն:

«Դրօշակ»ի հրատարակութեան վայրը եւ Դաշնակցութեան տան գնումը.— «Դրօշակ»ի տեղափոխութեան առաջարկին ընդդէմ դիտել տրուեցաւ որ Դաշնակցութիւնը միայն Թուրքիոյ յատուկ կուսակցութիւն մը չէ, այլ նաեւ Կովկասի եւ Պարսկաստանի, որոնք իրենց պայմաններով զանազանութիւններ կը ներկայացնեն. այս պատճառով ալ նպատակաւորաբար կ'ըլլայ եթէ «Դրօշակ»ը տեղափոխելու առաջարկ չներկայացնէր Ընդհ. Ժողովը, այլ միայն ժամանակաւոր կարգադրութիւններ ընէր: Նոյնիսկ աւանդութեանց պահպանման իսկ համար փափաքելի է որ «Դրօշակ»ը մնայ ժընեւի մէջ եւ թերթին գոյութիւնը շարունակուի:

Միեւնոյն պատճառաբանութիւնով ժողովին մեծամասնութիւնը մօտեցաւ նաեւ Դաշնակցութեան տան գնման առաջարկին:

Օրակարգի այս երկու առաջարկ-հարցերուն դէմ ընկերներէն ոմանց այն առարկութեան թէ՛ հարկ չկայ միայն աւանդութեանց յարգանքին համար այդքան զոհողութիւն ընել, որ շօշափելի ո՛չ մէկ արդիւնք կապած է իր հետ, պատասխանուեցաւ որ կեանքի մէջ կան ընկերներ եւ աքթեր, որոնք մաթեմատիքական հաշուի հետ կապ չունին ու կան զգացողական այնպիսի տպաւորութիւններ ու գործեր՝ որոնք կ'առաջացնեն գեղեցիկ արդիւնքներ:

Հարցը քուէի դրուելով 2-ի դէմ 9 ձայնով որոշուեցաւ:

ա- «Դրօշակ»ը պահել ժընեւի մէջ, իսկ եթէ այս կամ այն պատճառներով անխուսափելի դառնայ անոր տեղափոխութիւնը, ընել ժամանակաւոր կարգադրութիւն միայն, հրատարակութեան միակ վայր ընդունելով ժընեւը:

բ- «Դաշնակցութեան տան» գնման առաջարկը Շրջ. ժողովը կը գտնէ համակրելի, այդ հաստատութիւնը ապագային Դաշնակցութեան իբր միւզէօն եւ ուսանողութեան ներշնչարան ծառայեցնելու գաղափարով: Եթէ այս առաջարկը բերող նախաձեռնարկ մարմինն տրամադրած միջոցները անբաւական ըլլան, մեր շրջանն ալ կը բերէ մասնակցութեան իրեն ինկած բաժինը:

Փոխադարձ օգնութեան սնտուկ.— Շրջ. ժողովը կ'առաջարկէ մէկ կողմէ սկսիլ այս գաղափարին իրականացման համար աշխատիլ, միւս կողմէ խնդիրը ուսումնասիրութեան ենթարկել՝ ամբողջ կազմակերպութեան մէջ ձեռնարկին միօրինակ ձեւ մը տալու համար: Միւս կողմէ մեր շրջանի պատգամաւորները իրենց դարձին պարտականութիւն պէտք է զգան զայն իրականացնելու հետամտիլ եւ յառաջիկայ Շրջ. ժողովին բերուած արդիւնքին նայելով կազմել միօրինակ կանոնագիր մեր շրջանի համար, որպէսզի կարելի ըլլայ է՞ Ընդհ. Ժողովին եւս ներկայանալ գործնական եւ փորձառական որոշ արդիւնքով:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Է.

15 Յուլիս, Ուրբաթ առաւօտ

Ժողովին ներկայ էին իրաւասու ձայնով 12, խորհրդակցական ձայնով 3 պատգամաւորներ, Կեդր. Կոմիտէի մնացեալ անդամներէն 1:

Վաւերացուեցան նախորդ նիստերու արձանագրութիւնները:

Նահանգային ինքնավարութեան, հարկային սխալներէն եւ յարակից քանի մը հարցերու մասին ընկեր Ատոմի յանձնուած աշխատութիւնը լրացած եւ պատրաստել յանձնարարուած նախագիծը բերուած ըլլալով՝ ժողովը նախ ամբողջութեամբ լսեց զայն եւ շօշափուած իւրաքանչիւր խնդրի մասին արտայայտուեցաւ. թեթեւ փոփոխութիւններով իր ամբողջութեան մէջ իւրացնելով զայն որոշուեցաւ կցել Շրջ. Ժողովի որոշումներուն՝ Ընդհ. Ժողովի ներկայացուելու համար:

Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը

Նահանգային ինքնավարութիւնը կամ իրաւունքներու ընդլայնումը

Ներկայ պայմաններուն այդ պահանջով հրապարակ գալը վտանգաւոր է: Եթէ արտակարգ կեղրոնացումը կամ ո՛չ-ապակեղրոնական ռեժիմը չի զարգացներ, կամ աւելի ճիշդը կը խեղդէ նահանգային նախաձեռնութեան ոգին, կեղրոնը գրեթէ ամբողջովին կը լափէ նահանգներու եկամուտները: Ինչպէս սահմանադրական առհասարակ կարգերը՝ նոյնպէս եւ նահանգային ապակեղրոնացումները չեն ծառայեր ժողովրդական շահուն՝ մինչեւ որ պետական քաղաքականութիւնը չփոխուի, աւատականութիւնն ու հարստահարիչ տարրերը տիրող ու ղեկավար ըլլալէ չդադրին եւ իրաւունքներու ու պարտականութիւններու համեմատական բաշխման հիմք չընդունուի ու գործնական կիրառութիւն չստանայ:

Ամբողջ հայկական կամ հայաբնակ գաւառներու մէջ հազիւ երկու կամ երեք գազա, մի կամ երկու սանձագ¹⁸ գտնուին՝ ուր հայ-քրիստոնեայ տարրը բացարձակ մեծամասնութիւն կազմէ եւ վճռող ձայնը կարողանայ ապահովել:

Առհասարակ ճշդող մեծամասնութիւնը, մանաւանդ ներկայ նահանգային վարչական շրջաններու բաժանումով, ոչ-հայ քրիստոնեայ տարրերը կը կազմեն եւ ընտրութիւններու մէջ ճշդող ազդեցութիւն կը գործեն աւատական ու հարստահարիչ տարրերը:

Մենք չպիտի պաշտպանենք անշուշտ նահանգա-

16.- Սանձագը՝ գաւառն է, իսկ գազան՝ գաւառակը:

պետներու անձնակազմի վրայ կեդրոնացնել ապակեդրոնացումը կամ իրաւունքներու ընդլայնումը, որովհետեւ նախ նահանգապետներու ընտրութեան եւ կեդրոնին պաշտպանութեան անհրաժեշտ պայմաններու մասին ապահովութիւն չունինք, ուստի եւ ատիկա պիտի ըլլայ երկսայրի սուր՝ երկրորդ՝ անհատի, անձնական իրաւասութեանց կեդրոնացումը կը հակասէր մեր վարդապետութիւններուն:

Նահանգային ինքնավարութիւնը կեդրոնացած պիտի ըլլար նահանգային ընդհանուր ժողովներով, այդ ժողովներու խորհրդակցական որոշումներուն ալ օրէնսդրական ուժ տալով:

Արդ, երեւակայել պէտք է պէկերով, էշրաֆներով, հարստահարիչ ու բացարձակ ո՛չ-հայ քրիստոնեայ մեծամասնութիւնով բաղկացած նահանգային ընդհանուր ժողովները, որոնք որոշումներ, օրէնքի ուժ ունեցող կարգադրութիւններ պիտի կայացնեն իրենց պատկանած նահանգին համար: Անոնք են որ տուրքեր պիտի սահմանեն նահանգային կրթական գործին համար, հաղորդակցութեանց միջոցներու համար, երկրագործութեան, վաճառականութեան, արհեստներու զարգացումին նպաստումին համար: Կասկած կա՞յ որ այդ տուրքերը մեծ մասամբ չպիտի բաշխուին հայ-քրիստոնեայ աշխատաւոր ժողովուրդին առանց այն ալ կըրտած քամակը ճնշելու համար: Կասկած կա՞յ որ հայէն չպիտի գանձեն քուրտին, թուրքին, պէկին ու հարստահարիչին տունը, թաղը, գիւղը շէնցնելու, անոնց ճանապարհներ բանալու եւ քակը պարարտացնելու համար:

Աչքի առջեւ ունենալով այս բոլոր հիմնական վտանգաւոր պայմաններն ու հանգամանքները պէտք է աշխատիլ՝

Ա. Փոխել կառավարութեան քաղաքականութիւնը հանդէպ աւատական, հարստահարիչ տարրերու:

Բ. Մտցնել ազգերու համեմատական չափով իրաւանց եւ պարտքերու բաշխումը:

Գ. Համեմատականութեան չափերու հիմքը ընդունիլ ո՛չ թէ նահանգներու, սանձագներու, գազաներու ազգաբնակչութեան թիւը՝ այլ թուրքիոյ ընդհանուր բնակչութիւնը կազմող ազգերու ուրոյն ընդհանուր թիւերը:

Դ. Նահանգային, գաւառային, գաւառակային եւ համայնքային շրջանակներու նոր բաժանումը կատարել:

Ե. Փոխել նահանգային ընդհանուր ժողովներու ընտրութեանց սխտեմն ու ցննդը:

Իսկ նահանգային եւ անոնց ստորաբաժանեալ ներկայ շրջանակներու փոփոխութեան անհրաժեշտութիւնը ընդունիլ՝ եւ նոր բաժանումները նպատակաշարժար կարենալ կատարել տալու համար, նախ ուսումնասիրած պատրաստի ունենալ աշխարհագրական, ազգագրական, տնտեսական անպատեհութիւններն ու առաւելութիւնները ճշդող վիճակագրութիւնները:

Անհրաժեշտ է նաեւ այժմէն կուսակցական գործունէութեան մէջ մտցնել նահանգային ընդհ. ժողովներու ընտրական պայքարն ու զբաղումները:

Դ. — Հարկային սխտեմնի բարեփոխումը (աշարի խափանումը, յառաջատուական տուրքի հաստատումը, եւ այլն)

Քանի որ հարկային սխտեմնի բարեփոխումը ըսելով կը հասկցուի աշարի՞ խափանումը եւ յառաջատուական տուրքի հաստատումը, այս երկուքն ալ իբրեւ անմիջական պահանջ ներկայացնելը անգործնական ու աննպատակաշարժար է: Անգործնական ու անյարմար է, որովհետեւ երկուքին համար ալ մեր երկրին մէջ դեռ ուսումնասիրութիւն ու վիճակագրութիւն գոյութիւն չունին եւ առանց հիմնական ուսումնասիրութեան եւ վիճակագրութիւններու, միմիայն ֆորմիւլաներու կրկնութիւնով բաւականանալը, եթէ նոյնիսկ օրէնսդրական իշխանութիւնը բարեյօժարութիւն ունենայ՝ անմիջական ու գործնական արդիւնք չի կրնար ունենալ:

Եթէ անվիճելի իրականութիւն մը կայ՝ այն ալ աշարի տուրքի կիրառութեան ձեւն ու սխտեմն է՝ որ գործ կը դրուի իբրեւ վաճառք աճուրդի դրուելով ու ծախելով: Ամէնէն առաջ աշարի իլլիթիզմն ու աճուրդը խափանելու է: Պէտք է գտնել միջին թիւեր ամէն մէկ գիւղի, եթէ կարելի է նաեւ ամէն մէկ արտի տարեկան աշարի փոխարժէքը որոշել, կարենալու համար այդ որոշեալ փոխարժէքը գիւղի համայնքին (ու եթէ կարելի է ամէն մէկ արտի հողատիրոջ) վրայ հաշուելու եւ գանձելու համար: Աշարը պէտք է հաշուել գուտ բերքի՝ եւ ո՛չ արդէն աշարը վճարուած սերմի խառնուրդի վրայ: Եթէ գիւղի կամ համայնքի վրայ պիտի հաշուելի, յատկացեալ գումարը համայնքին կամ միայն հողատէրերուն, ըստ հողի քանակի՝ արդար բաշխումին համար ալ օրէնսդրական բաւարար միջոցներ գծել անհրաժեշտ է:

Նախքան սահմանադրութեան վերայտարարութիւնը Մակեդոնիոյ համար ընդունուած եւ գործածուած աշարի համեմատական տանելի դրութիւն մը կայ, որն իթիթիզատի կուսակցութիւնն ալ ընդունեց եւ իր ծրագրին մէջ մտցուցած էր: Եթէ այդ դրութիւնն իսկ ընդունիլ տրուի ասիական նահանգներու համար, կարելի թեթեւացում ու յաջողութիւն պէտք է նկատել:

Աշարի այս ոչ ըստ էութեան՝ այլ տանելի ձեւակաւ փոփոխութեանը համար պէտք է աշխատիլ ընդունիլ տալ նաեւ յառաջատուական տուրքի հաստատութեան համար անհրաժեշտ ուսումնասիրութիւններն ու վիճակագրութիւնները կատարել՝ պատկանեալ նախարարութեան կողմէ:

Եթէ այս ուսումնասիրութիւնն ու վիճակագրութիւն-

17.- Աշար՝ հողային բերքի տասանորդ տուրք:

նր կատարել որոշուի փարլամենթական առաջին քառամեակի այս վերջին նստաշրջանին մէջ, իսկ ուսումնասիրութիւնը լրիւ կատարուի երկրորդ քառամեակի ընթացքին, այդ ալ կարելի չէր յաջողութիւններէն մէկը կարելի է սեպել. եւ որովհետեւ գիտենք թէ պետական պաշտօնէութեան մէջ հազուադէպ են այդ աշխատութիւնը բարեխղճօրէն կատարելու ընդունակներ, կուսակցութիւնը իր վրայ պիտի վերցնէ իր պատգամաւորներու եւ մարմիններու կամ ձեռնհաս անդամներու միջոցով, առնուազն մէկ երկու նահանգներու մէջ կատարել անպաշտօն կամ կիսապաշտօն բազմակողմանի ուսումնասիրութիւն յառաջատուական տուրքի հաստատութեան եւ նախապէս աշարի նոր ձեւի կիրառութեան համար: Այսպիսի աշխատութեան համար օսմ. պատգամաւորները եւս կարող են ստանալ արձակուրդներու միջոցին տեղույն վրայ կատարելի ուսումնասիրութեանց համար անհրաժեշտ դիւրութիւններ, եւ օժանդակութիւններ պետութենէն, ու այդ դիւրութիւններն ու օժանդակութիւնները իրենց կողմէ տրամադրելի ընել ի հարկին եւ կուսակցութեան:

Ե. — Հաղորդակցութեան ճամբաները հայկական նահանգներու մէջ (խճուղի, երկաթուղի):

Խճուղիներ. — Երկու կարգի խճուղիներ կան — մէկը՝ պետական, որ մեծ պողոտաներն են եւ կախուած ուղղակի պետութենէն, միւսը՝ նահանգային, որ ամէն մէկ նահանգի ներքին հաղորդագրութեանց գծերն ըլլալով՝ կապուած են նահանգային իշխանութեանց ինքնավարութիւններու հետ: Պետական խճուղիներէն 10,000 քիլոմետր գծերու շինութիւնը յանձնուեցաւ Ֆրանսական՝ Ռուվիէի ֆինանսական խմբակցութեան: Դեռ որոշ չէ թէ՛ այդ 10,000 քիլոմետրին ո՛րքանը հայկական է եւ ո՛ր նահանգներուն է վիճակուած: Այդ 10,000 քիլոմետրին միայն միայն 8,000ի շինութեան նախապատրաստութիւնն է որ ձեռնարկած է յանձնառու ընկերութիւնը եւ սակայն այդ 8,000-ին ալ ո՛րքանը հայկական եւ որ նահանգներուն վիճակուած ըլլալը որոշ չէ եւ ենթարկուած է նախարարութեան եւ ընկերութեան հայեցողութեանը կամ կամայականութեանը: Յառաջիկային անհրաժեշտ է որ Օսմ. փարլամենթի դաշնակցական երեսփոխանները զբաղին անհրաժեշտ գծերու ուսումնասիրութիւններով եւ ընկերութեան նախապատրաստութեան ծանօթութիւններով եւ ըստ այնմ հետապնդել նախապատուութիւն տրուելիք գծերու շինութեանը, ճշդելով այս պարագային թէ՛ գծերուն որքանը հայկական եւ որքանը միւս նահանգներու մէջ պիտի շինուի: Իսկ նահանգային գծերու համար ալ նահանգային կուսակցական շարքերը եւ մարմինները առանձնապէս պէտք է զբաղուին անոնց ուսումնասիրութիւններով ու շինութեան որոշումը նահանգային ընդհ. ժողովներէն անցնելու աշխատանքին:

Երկաթուղիներ. — Յարդ հրապարակի վրայ չդրուեցաւ այն տեսակ ուսումնասիրութիւն մը որ՝ հայկական եւ այլ նահանգներու համար անհրաժեշտ նկատուած գանազան երկաթուղային գծերու շինութեան դժուարութիւններն ու առաւելութիւնները, տնտեսական ու քաղաքական, զինուորական պայմանները, դժուարութիւնները յաղթող միջոցները ներկայացնելի եւ ըստ այնմ ալ լուրջ ուսումնասիրութիւններու վրայ հիմնուած գանազան գծերու ծրագրերը ներկայացնելով կամ ուղղակի եւ կամ փարլամենթական միջոցով կառավարութեան ընդունիլ տալ: Յարդ կառավարութեան քննութեան եւ բանակցութեան առարկայ եղած գծերը միայն անոնք են՝ որոնք օտար քափիթախիստները, իրենց սեփական շահերէն առաջնորդուած հետապնդած են, իսկ օտարներու կողմէ հետապնդուած ծրագրերն ալ քննադատութեան առարկայ չեն եղած, առաջնորդուելով կարծես «երկաթուղի թո՛ղ շինուի ի՛նչ պայմաններով եւ ի՛նչ գնով կ'ըլլայ թո՛ղ ըլլայ» ի մտայնութենէն: Ակնարկուած այդ լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրութիւնը նախապէս տեղի ունեցած չըլլալուն պատճառով ալ՝ երկու անգամ «ուսումնասիրելու կարօտութեան» պատրուակով փարլամենթէն յետաձգման ենթարկուեցաւ Չէսթրի ծրագրերը եւ ներկայացուած միայն մէկ երկու ծրագրերը մասին ալ ցոյց տրուած սոսկական պաշտպանութեան եւ ոչ-քննադատական-պաշտպանութեան եղանակը նպաստած միւս կողմէ տիրողներու մտայնութեան ուժեղացումին, եւ հետեւաբար ցանկութեան հակառակ ելքին յանգեցաւ բնականօրէն, մինչդեռ քննադատական վերաբերմունքը կը չէ գոքացնէր այդ մտայնութիւնը, գիտակցական համոզմունքի հասարակական կարծիք կը ստեղծէր ու առաջ կը բերէր աւելի վստահութեան եւ յաջողութեան շանս:

Զ. — Տնտեսական բարգաւաճման միջոցներ. — Մանր ու աժան վարկի ընկերութիւններու, գործակցական միութիւններու հաստատութիւնը գերազանցապէս կապուած է երկրի ընդհանուր տնտեսական դրութիւնը յեղաշրջելու կոչուած հաղորդակցութեան, փոխադրութեան միջոցներու եւ ընդհանուր ապահովութեան հետ: Բռնագրօսիկ կերպով չեն կարող ստեղծուիլ ու զարգանալ անհատական ու հաւաքական նախաձեռնութեան կարօտ հիմնարկութիւնները՝ եթէ գանոնք քաջալերող մթնոլորտն ու պայմանները չեն ստեղծուիլ: Այսպիսի հաստատութիւններու մասին առայժմ կուսակցական գրաւոր ու բերանացի, մանաւանդ մամուլի միջոցաւ բաւարար փրփականտ պէտք է կատարել հասարակական գիտակցութիւնն ու նախաձեռնութիւնը նախապատրաստելու եւ առիթէն օգտուելու համար: Երկրագործական դրամատունը որ հասարակական չարիք մըն է, գուցէ կարելի կ'ըլլար ցարդ վերցնել՝ եթէ

չարիքը պատկերացնող փաստերու լուրջ ուսումնասիրութեան աշխատանք գործ դրուած ու փարլամենթի ու մամուլի մէջ պայքարը նոյն ուղղութեամբ մղուած ըլլար:

Ինչպէս այս՝ նոյնպէս միւս բոլոր հասարակական կեանքի հետ կապուած հարցերու համար պատրաստի ֆորմիւլներով հրապարակ նետուելը՝ տիրող մտայնութեան մէջ ո՛չ մէկ տարբերութիւն կ'առաջացնէ եւ հետեւաբար տիրող ամլութիւնը ջնջելու եւ ստեղծագործական կեանքը սկսելու համար, ամէն բանէ առաջ կուսակցական շարքերու մէջ թէ՛ պատգամաւորական խմբակցութեան մէջ պէտք է ստեղծել սիստեմաթիւք աշխատութեան մթնոլորտը ու պարտադրութիւնը:

Է.— Աշակուծային (culturel) ինքնավարութիւնը Թուրքիոյ բաղկացուցիչ ազգերուն (կրթական խնդիր բարեգործական հիմնարկութիւններ եւայլն):

Ինչքան ալ պետութեան եւ ղեկավար տարրերու կողմէն թաքուն ձգտումներ, յայտնի ոտնձգութիւններ ըլլան, այնուամենայնիւ դեռ շատ երկար ժամանակի համար տեղ չկայ վախճալու թէ՛ ո՛չ մահմետական ազգերու կուլտուրական ինքնավարութեան իրաւունքը կը ջնջուի: Ընդհակառակը անողոք կեանքը պիտի մղէ մահմետական ազգերն ալ նոյն իրաւունքները ձեռք բերելու: Դաշնակցութեան համար հոգածութեան առարկան ուրեմն ո՛չ թէ այդ իրաւունքի պահպանութիւնը՝ այլ զայն կիրարկելու ձեւը պիտի ըլլայ: Այդ իրաւունքը մտքերու վրայ դրոշմուած է իբրեւ «կրօնական առանձնաշնորհում»․ ահա այդ իսկ «կրօնական առանձնաշնորհում» ըլլալու գաղափարը պէտք է ջնջել ու փոխարինել տալ անոր համայնական բնական իրաւունքի եւ կուլտուրական անհրաժեշտութեան գաղափարը եւ այդ իրաւունքի աշխարհականացումը:

Հայ-ազգային Սահմանադրութիւնը՝ օրէնսդրական ճանապարհով հիմը դրած է արդէն այդ շինարար մտքին: Դաշնակցութեան աշխարհահայեացքի պարտադրութիւնն է այդ մտքի լայն կազմակերպումը առաջացնել ու շրջահայեաց նրբութեամբ տանելով փրփրական տը՝ ազգային միութիւնները առաջնորդել այդ ուղղութեամբ:

Եկեղեցին կուլտուրական կեանքէն բաժնելու համար երբեք անհրաժեշտութիւն մը չկայ որ պետութիւնն ալ իր կրօնքէն բաժանուելու օրին սպասենք եւ պաշտպանենք մեր փիլիսոփայութեան բացարձակապէս հակասող միտքը թէ՛ քանի պետութիւնը կապուած ու հիմնուած է խալիֆայութեան եւ կրօնի վրայ, ո՛չ մահմետական ազգերու կրօնական առանձնաշնորհումներն ալ, այսինքն կուլտուրական ինքնավարութիւնը, եկեղեցիներու հետ միացած պիտի մնան:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍՏ Ը.

15 Յուլիս, Ուրբաթ կէսօրէ ետք

Ժողովին ներկայ էին իրաւասու ձայն ունեցող ընկերներէն 11, խորհրդակցական ձայնով 2, հրաւիրուած ընկերներէն 1, Կեդր. Կոմիտէի մնացեալ ընկերներէն 2:

Գրաւոր ու բանաւոր փրփրականտա.— Օրակարգի այս հարցի մասին պատգամաւոր ընկերները բաժնելով նախորդ Շրջանային ժողովի մէջ եղած արտայայտութիւնները, հետեւեալ տեսակէտներու վրայ ծանրացան.

1.— Յարդ մղուած բերանացի փրփրականտը յաճախ իր գուտ միթիւնկային բնաւորութեամբ մանաւանդ, եղած է անբաւարար եւ յաճախ բացասական՝ շարքերու դաստիարակութեան եւ հարցերու պարզաբանութեան տեսակէտէն: Մրազրային-մտաւոր փրփրականտը ընկերներու վերաբերմամբ նոյնպէս ցանկալի ուղղութեամբ չտարուեցաւ եւ գրեթէ չտարուեցաւ: Բերանացի փրփրականտը՝ թէ իբրեւ ազիտացիա եւ թէ իբրեւ դաստիարակութեան խնդիր շարքերու եւ հասարակութեան համար, հարկ է որ առաջ տարուի սիստեմաթիւք եւ ծրագրուած ուղղութեամբ. այս բանին համար անհրաժեշտ կը դառնայ ո՛չ միայն մարմին տալ փրփրականտիսթներու համար օրակարգին մէջ նախատեսուած դասընթացքին, այլեւ կազմել տեսական հարցերու մէջ նախապատրաստութեան համար յատուկ ծրագիր՝ որպէսզի ընկերները իրենց ընթերցումն ու աշխատանքները տանին այդ ուղղութեամբ: Բերանացի փրփրականտը՝ պէտք է սահմանափակուի միայն հայ ժողովրդին մէջ, այլեւ դրացի ժողովուրդներուն մէջ՝ անոնց հասկացած լեզուներով, ինչ որ անտեսուած է ցարդ:

II.— «Դրօշակ»ը իր ներկայ բովանդակութիւնով ու խմբագրութեամբ ձեւով շարքերէն չ'իւրացուիլը եւ շատ սահմանափակ թուով ընթերցողներ միայն ունի. յաճախ մէկ-երկու յօդուածներով ամբողջ թերթը կը լեցուի, այնինչ անհրաժեշտ է նախ անոր ծաւալը ընդարձակել եւ տալ անոր այնպիսի ճոխ հանդէսի մը դերը, ուր կարելի ըլլայ պատկերացնել միջազգային քաղաքական տնտեսական կեանքին հետ, աշխարհի գանազան մասերուն մէջ ընկերվարական այս կամ այն շարժումները, այս կամ այն շրջանի դաշնակցական կեդր. մարմիններու գործունէութիւնն ու նոյն շրջաններուն մէջ նկատուող կուսակցական կազդուրիչ ու հրահանգիչ երեւոյթները. վերջապէս տալ անոր այնպիսի բովանդակութիւն մը՝ որ հաճելի ըլլայ թէ՛ մեր մտաւորականութեան եւ թէ՛ շարքերուն առհասարակ: Այս ծրագրին իրականացումով «Դրօշակ»ը աւելի լայն շրջաններու մէջ կարելի պիտի ըլլայ տարածել:

III.— Իբր ուսոյնական կիսապաշտօնական թերթ ընդունելով «Ազատամարտ»ը, նախորդ շրջանային ժողովին մէջ եղած քննադատութիւններէն յետոյ, դիտել կը տրուի թէ՛ անոր մէջ զգալի փոփոխութիւն մը չտեսնուեցաւ. մեր ծրագիրը պարզաբանող եւ ժողովրդակաւնացնող յօդուածներ պակսեցան եւ կուսակցութեան ծրագրին ու ուղղութեան հակասող յօդուածները եւ նոյնիսկ խմբագրականներ կրկին կը շարունակեն գրուիլ հոն: Թերթին ուղղութիւնը կը միտի աւելի դէպի պատեհապաշտութեան եւ յաճախ անհետեւողականութեան եւ լիպերալ արտայայտութեան: Կը բացակայի նաեւ աշխատաւորական որոշ քաղաքականութիւն:

Իր տուած աշխատաւորական տեղեկութիւնները միայն տեղեկութիւններ են: Այս պակասը դարմանելու համար եւ թերթին վրայ քննիչը անպակաս ընելու համար հարկ է որ խմբագրական մարմինը բիւի կամ Ընդհ. Ժողովէն եւ կամ ուսոյնականէն եւ խմբագրութիւնը սերտ կապ պահէ երկրի կեդր. մարմիններու հետ:

IV.— Շարունակել հրատարակութիւնը կուսակցութեան սկզբունքներուն պարզաբանութեան նուիրուած պրոչիւրներ ու գրքեր:

Ընդունելով վերը յայտնուած մտքերուն եւ եղած առաջարկներուն մեծ մասը, պատգամաւորներէ ոմանց կողմէ դիտել կը տրուի:

ա.— Ոչ մէկ ընկերվարական կուսակցութեան փրփրականտիսթները՝ փրփրականտի դպրոցէն առաջ չեն գար, այլ ինքնօգնութեամբ եւ կեանքէն. եթէ սովորելու եւ սովորեցնելու մտայնութիւնը տիրապետէ մեր կուսակցութեան շարքերուն մէջ, այն ատեն մեր նպատակին լիուլի հասած պիտի ըլլանք, եւ ա՛յս մտայնութիւնն է որ առաջացնելու աշխատելու ենք: Ասկէ գատ փրփրականտիսթներու դասընթացք հաստատելու գաղափարը նոր չէ որ կուսակցութեան ժողովներու սեղանին վրայ է, սակայն այսքան երկար տարիներէ ի վեր կարելի չէ եղած իրականացնել, որովհետեւ ան չի տար նաեւ գործնականութեան երաշխիքը. փրփրականտիսթի դպրոցէն պէտք է օգտուին անոնք՝ որոնք արդէն ժողովուրդին մէջն են, հոս հոն, այս կամ այն շրջանը եւ նըւիրուած գործին եւ ո՛չ թէ անոնք որոնք պիտի գան սորվին վերջը կրկին իրենց նախկին դերին ու դիրքին մէջ մնալու համար. իսկ շրջաններու մէջ որոշ կազմապարտականութեան տակ գտնուող ուժերը հաւաքել թէ՛ դժուար է եւ թէ անգործնական: Մոռնալու չէ նաեւ այն՝ որ այս տեսակ ձեռնարկ մը նիւթական ահագին զոհողութիւններու պէտքը կը զգացնէ, որուն համար դժուար թէ կուսակցութիւնը ի վիճակի ըլլայ այս պահուս: Այս պատճառներով ալ աւելի լաւ պիտի ըլլար՝ եթէ իւրաքանչիւր շրջանի մէջ փորձուէր այդ աշխատանքը, նախաձեռնութեամբ շրջանի կեդր. մարմիններ-

րուն եւ ղեկավարութեամբ նոյն շրջանները գտնուող կամ շրջող ձեռնհաս ընկերներուն: Չենք կրնար ըսել թէ օտար ազգութեանց մէջ փրփրականտա ըրած չէ կուսակցութիւնը:

բ.— «Դրօշակ»ը կուսակցութեան մտաւորականութեան թերթն է. հետեւաբար զարմանալի չէ՛ եթէ շարքերը անկէ չեն կրնար հաճոյք զգալ: «Դրօշակ»ի կանոնաւոր չտարածուելուն մէջ մասնակի դեր ունի նաեւ առաքման անկանոնութիւնները:

գ.— Ռայոնական թերթը՝ «Ազատամարտ» իր արտայայտութեամբ համաձայն է հայ եւ պետական իրականութեան օրուայ պահանջներուն եւ կուսակցութեան հետեւած ուղղութեան: Մրագրային խնդիրներու մասին ուղղութիւն տալու դիրքը աւելի «Դրօշակ»ին կ'իյնայ. օրաթերթերը առօրեայ խնդիրներուն է որ կը մօտենան եւ կը պարզաբանեն զանոնք մեր տեսակէտէն. կարելի է ծրագրային ուսումնասիրութեանց ծառայեցնել նաեւ մասամբ շաբաթաթերթ «Ազատամարտ»ը: Ընկերվարական եւ աշխատաւորական խնդիրներու մօտեցած է «Ազատամարտ»ը այնքան՝ որքան կեանքը արտայայտած եւ ընկերները աշխատակցած են: Յետոյ մոռնալու չէ նաեւ մեր ապրած միջավայրը, երբ թերթին տնտեսական վիճակը կախուած է նաեւ այնպիսի տարրերէ, որոնք տակաւին այդ կարգի հարցերով չեն շահագրգռուիր եւ հետեւաբար անոնց յաճախակի կրկնութիւնը բարոյական օգուտ մը չ'արտայայտեր, այլ վնասած կ'ըլլանք թերթին տնտեսականին: Ազգային խնդիրներու միջամտելով՝ ընծայած է ընկերվարական աշխատաւորական դատին ամենամեծ ծառայութիւններէն մէկը, որովհետեւ պայքարի կամ զբաղման նիւթ կազմող խնդիրները շատ որոշ են.— կրթական, ազգապատկան կալուածներու մատակարարութիւն եւայլն, որոնց մէջ տուժողը ժողովուրդն է:

դ.— Պրոչիւրներու հրատարակութիւնը որոշ ժամանակի մը համար միտք չունի եւ կուսակցութեան տնտեսականը միայն պիտի խանգարէ, որովհետեւ նոր հրատարակուածները չեն ցրուուիր ու վաճառուիր մեր մարմիններու կողմէ, եւ այսօր 2000 ոսկիէն աւելի արժէք ներկայացնող գրքերու հսկայ մթերք մը կայ: Աւելի նպատակայարմար պիտի ըլլար՝ եթէ Ընդհ. Ժողովը պարտաւորեցնէր կուսակցութեան մարմինները՝ որոշ ժամանակ մը այդ գրքերու սպառումէն եւ գրքերու վաճառումէն զոյացած արդիւնքով միայն հրատարակել նոր գրքեր, առանց երբեք մասնաւոր նոր պիւտձէ բանալու: Վաճառման դիւրութեան իբր միջոց՝ Ընդհ. Ժողովին ուղղութիւնը հրաւիրել մեր Բ՞ Շրջ. ժողովին եղած ցուցմունքներուն վրայ,— իւրաքանչիւր մարմին պարտաւորեցնել տարուան մէջ որոշ քանակութեամբ եւ արժէքով գիրք սպառել՝ այդ աշխատանքը եւս ընդունիլ անոր պարտականութիւններէն մէկը:

Մտքերու այս փոխանակութենէն յետոյ ժողովը

միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձեւը.

Երջ. ժողովը լսելով կուսակցութեան բանաւոր եւ գրաւոր փրոփականտի շուրջ եղած արտայայտութիւնները եւ այդ մասին շրջաններէն եկած առաջարկները, կ'որոշէ,

ա- կուսակցութեան կողմէ ցարդ մղուած բերանացի փրոփականտը, մանաւանդ իր միթիւնկային ձեւին մէջ — որոշ չափով արդիւնք սահմանադրութենէն յետոյ առաջացած իրականութեան եւ տիրող հոգեբանութեան — կը նկատուի անբաւարար եւ աւելի նպատակաւոր մար եւ սիստեմաթիկ աշխատանքի մը պէտքը կը զգացուի, առաջարկելով, ա) ընթացք տալ Ընդհ. ժողովի օրակարգին մէջ նախատեսուած փրոփականտի դասընթացքին, շրջապատող պայմաններուն եւ կուսակցութեան տրամադրելի միջոցներու սահմանին մէջ, բ) կազմել տեսական հարցերու նախապատրաստութեան համար յատուկ ծրագիր-ուղեցոյց, սկսնակ ընկերներու ինքնազարգացողական աշխատութեանց դիւրութիւն տալու նպատակով:

բ- Ընդարձակել «Դրօշակ»ի ծաւալը, տալով անոր ընկերվարական ճիւղ հանդէսի մը բովանդակութիւնը, ուր պատկերանայ ո՛չ միայն միջազգային քաղաքական-տնտեսական կեանքը, այլեւ մեր կուսակցութեան ծոցին մէջ նկատուող կազդուրիչ երեւոյթները, որոնց ընթերցումը ըլլայ հետաքրքրական կուսակցութեան բոլոր խաւերուն համար առ հասարակ:

գ- ա) միջոցներ ընձեռել «Ազատամարտ»ին, որպէսզի ան իր ուղղութեամբ,— պետական, ազգային թէ ծրագրային հարցերու պարզաբանութեան եւ քննադատութեան տեսակէտէն — ըլլայ հետեւողական եւ ձգտի սիստեմաթիկ, պարբերական յօդուածներով Դաշնակցութեան սկզբունքներուն եւ աշխարհահայեացքին ժողովրդականացման, բ) յօդուածներու ոճին ու բովանդակութեան վերաբերմամբ ըլլալ աւելի ուշադիր՝ պահելու համար թերթը իր դերին արժանի բարձրութեան վրայ, գ) ճշդորոշել կուսակցութեան կանոնաւոր քոնթրոլը՝ Ազատամարտի եւ առհասարակ կուսակցութեան միւս օրգաններու խմբագրական-վարչական կազմերուն:

դ- ա) Գրքերու հրատարակութիւնը ընդհատել որոշ ժամանակի մը համար, մինչեւ որ պատրաստի մթերքը սպառի որոշ չափով եւ այս մասին որոշ պարտականութիւն դնել մարմիններու վրայ, այդ աշխատանքն ալ մտցնելով անոնց համար սահմանուած ցննդին մէջ, բ) նոր հրատարակութիւններ ընել ծախսուած գրքերու արդիւնքով, առանց նոր պիւտոճէ սահմանելու,

Կազմակերպական.— Ընկեր Մովսէս իր զեկուցումը ըրաւ՝ ժողովին կողմէ իրեն յանձնուած պարտականութեան, որ նպատակ պիտի ունենար կարգ մը հակա կէտեր ճշդորոշել կազմ. ընդհ. կանոնագրին եւ յանձնել

զանոնք Ընդհ. ժողովի ուշադրութեան, որպէսզի կանոնագրի մշակութեան աշխատութեան ընթացքին նկատի առնուին:

Այդ զեկուցումով հետեւեալ ցուցմունքները եղան. Դաշնակցութիւնը իրեն գործունէութեան վայր ունի Թուրքիան, Կովկասը եւ Պարսկաստանը, որոնք տարբեր միջավայրեր են եւ տարբեր պայմաններ կը ներկայացնեն, հետեւաբար կազմակերպութեան եղանակն ու թաքթիքն ալ իրարմէ կը տարբերին: Այս տեսակէտէն մեկնելով՝ նախ կազմակերպութիւնը բաժնել հարկ կ'ըլլայ երկու ռայոններու, Կովկաս եւ Պարսկաստան առանձին, Թուրքիոյ նահանգները եւ արտասահմանը առանձին:

Տաճկաստանը կ'ունենայ իր ռայոնական ժողովը, ունենալով իր մարմինը, իսկ Կովկասը եւ Պարսկաստան միացեալ ռայոնական ժողով մը, որ կ'ունենայ իր համապատասխան մարմինը:

Ռայոնական ժողովներէ զատ աւելի երկարաձգած պայմաններով կը գումարուի Ընդհ. ժողով:

Արհեստակցական միութիւններ, խումբեր, փարլամենթական գործունէութիւն, ազգային ժողովի աշխատութիւններ, փրոփականտ եւայլն կազմելով կուսակցութեան զբաղումները, կը յանձնարարուին Կեդր. Կոմիտէին կամ վարչական մարմիններէն:

Երկու ռայոնական ժողովները կը գծեն մէկ տարւան համար իրենց ռայոնի կազմակերպութեան գործունէութեան ուղղութիւնը եւ պատճառովը եւ այդ պարտադրութիւնները իրականացնելու կը հարկադրեն իրենց շրջանի Կեդր. Կոմիտէները: Այդ մարմիններու վրայ քոնթրոլի եւ հսկողի դերը կը ստանձնէ պատկանեալ շրջանի Բիւրոն:

Ընդհանուր թաքթիքի եւ ընդհ. ուղղութեան եւ սկզբունքներու վրայ հսկող վերին մարմինները կ'ըլլան «Բիւրոն»ները:

Ասոնցմէ զատ կան եւս տիսիփիլիի եւ դատական գործեր որոնք լաւ ձեւուած չեն գոյութիւն ունեցող կանոնագրին մէջ եւ այդ դերը տրուած է Խորհուրդին եւ Կեդր. Կոմիտէներուն: Արդարութեան պահպանումի սկզբունքի իսկ տեսակէտէն այդ դատերը վարչական մարմիններու չեն կրնար տրուել, որովհետեւ արդար չ'ըլլար: Ուստի պէտք է ընդունիլ իրաւարար ատեանի սկզբունքը, որ կը կազմուի երկու կողմէն երկուական անդամ որոշելով, ճիշդ անդամ մըն ալ դատաւորները իրենք կ'որոշեն: Եթէ ատեանի որոշման դէմ ոեւէ բողոք ըլլայ, անիրաւուած կողմը կրնայ դիմել Կեդր. Կոմիտէին որ խնդիրը կը յանձնէ շրջանային ժողովին, ի հարկին ծանր խնդիրներու համար ռայոնական ժողովին եւ այս վերջինները իրենց մէջէն ընտրուած յանձնաժողովներու կողմէ, որոնք կամ կը հաստատեն տրուած որոշումները եւ կամ նոր որոշում կը կայացնեն:

Դրամական բաշխումի եւ քոնթրոլի գործը կ'ընայ

ռայոնական ժողովներուն, Ընդհ. ժողովի տուած որոշումներու սահմանին մէջ:

Բիւրոյի եւ Կեդր. Կոմիտէի հաշիւներու քննութեան համար ռայոնական ժողովը կ'ընտրէ Վերստուգիչ մարմին մը, որ յաջորդ ռայոնական ժողովէն առաջ կը գումարուի, կը քննէ եւ կը տեղեկագրէ ժողովին, ինչպէս Կեդր. Կոմիտէները նոյնը կ'ընեն իրենց շրջանի մարմիններուն վերաբերմամբ Երջ. ժողովին առջեւ:

Յանուն կազմակերպութեան խօսելու իրաւունքը կը տրուի Բիւրոններուն՝ նախապէս Կեդր. Կոմիտէներուն հաւանութիւնը առնելու պայմանով: Երբ կարելի չ'ըլլայ Կեդր. Կոմիտէներուն ամբողջին կարծիքը առնել, գոնէ կարելի հնարաւորութիւնը փորձելու է: Բիւրոն վարչական դեր չունի:

Կուսակցութեան Կեդր. օրկանի խմբագրական կազմը կ'ընտրուի Ընդհ. ժողովէն, ռայոնական թերթերունը պատկանեալ ժողովէն, իսկ շրջանային թերթերունը շրջ. ժողովներէն: Խմբագրութեանց վրայ քոնթրոլ յանձնախմբերը եւս կ'ընտրուին նոյն այդ ժողովներէն: Անհատ դաշնակցականներու թերթերը ոչ ամբողջովին բաց կուսակցութեան քաղաքին. տնտեսկ. ուղղութեան սահմանի մէջ կ'ենթարկուին իրենց շրջանի Կ. Կոմիտէի քոնթրոլին:

Տրուած զեկուցումի շուրջը հետեւեալ թեր ու դէմ կարծիքները յայտնուեցան.

Ա.- Կարեւոր եւ արտակարգ պարագաներու տակ կուսակցութեան կողմէ արտայայտուելու համար առաջարկուած եղանակը բաւական դժուար իրականանալի է, որովհետեւ դժուար կ'ըլլայ կարծիքներ հաւաքել եւ եզրակացութեան մը յանգիլ: Զեկուցումին հետեւելով Ընդհանուր ժողովին բխող ոչ մէկ մարմին կը մնայ բացի Դրօշակէն, որուն դերը յամենայնդէպս այն չէ ինչ որ կազմակերպութեան այն մարմիններուն դերը, որոնք գործնական աշխատանքներ կատարելու սահմանուած [են]. կուսակցութեան ընդհ. ուղղութեան եւ սկզբունքներուն վրայ հսկող քոնթրոլ մարմինները հարկ է որ բխին Ընդհ. ժողովէն եւ այս մարմինները ըստ զեկուցումի կ'ընդունուին Բիւրոններէ: Ասկէ զատ Բիւրոններու ընտրութիւնը՝ ձգել ռայոնական ժողովին՝ անհեռատես գործ մը պիտի ըլլար, կուսակցութեան ներկայ կազմակերպական վիճակը եւ զայն բաղկացնող տակաւին անպատրաստ տարրերը աչքի առջեւ ունենալով: Նոյնպէս Բիւրոյէն առնելով գործադիր մարմնի բոլոր դերերը եւ Կեդր. Կոմիտէները ձգելով առանձին իրենց գործունէութեան մէջ՝ պիտի խանգարէ իր կարգին կուսակցութեան ընդհ. ներդաշնակութիւնը: Դատական խնդիրները, երբ կուսակցութեան գոյութեան եւ անոր կարեւոր ձեռնարկներու հետ կապ չունին՝ նրպատակաւորմար պիտի ըլլար յանձնել իրաւարար ատեաններուն, բայց վերոյիշեալ պարագաներու մէջ այդ ատեանը բխելու է Ընդհ. ժողովէն:

Նոր կազմակերպութիւն չէ որ կը ստեղծենք, այլ 20 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող կազմակերպութեան մը կանոնագիրն է որ բարեկարգութիւններու պիտի ենթարկենք, հետեւաբար հարկ չկայ այդքան հիմնական փոփոխութիւններ յառաջացնել մէկ ոստումով:

Բ.- Հիմնուելով այն տեսակէտին վրայ թէ Դաշնակցութիւնը 20 տարուան փորձառութիւն եւ աւանդութիւն ունի, հարկ է որ դիմենք այդ աւանդութեանց: Այժմ գոյութիւն ունեցող կանոնագիրը սակայն 20 տարուան կանոնագիր մը չէ, այլ մեր աւանդութիւններու շեղման շրջանի ծնունդ կանոնագիր, իսկ զեկուցման նպատակն է կազմակերպութիւնը դարձնել իր նախկին աւանդութիւններուն: Մեր կուսակցութիւնը հիմնուած ըլլալով ապակեդրոնացման վրայ պէտք է նայիլ թէ համապատասխան է անոր տրուած ոեւէ որոշում, դրուած ոեւէ օրէնք. Խորհուրդի ստեղծումը ու Բիւրոններուն տրուած ֆունկցիաները հակասական եւ բացառական են մէկը միւսին:

Մեր կուսակցութիւնը ապակեդրոնական է ոչ թէ անհատական հողի վրայ այլ մարմիններու. կազմակերպութեան շէնքին պահպանման շահն իսկ կը պահանջէ որ զայն վերադարձնենք դէպի ապակեդրոնացման այդ սկզբունքը, որուն համաձայն անհատի սեփական տրամադրութիւնները չէ որ դեր պէտք է ունենան հոն այլ կուսակցութենէն բխած որոշումը, որովհետեւ անհատ մը որքան ալ իտէալական բարձրութեան վրայ կանգնած ըլլայ չենք կրնար ըսել թէ նոյն բարձրութեան մէջ ալ պիտի մնայ: Համաձայն մեր կազմակերպութեան աւանդութիւններուն Բիւրոնները վարչական դեր չունին. անոնք խողովակը պիտի ըլլան կազմակերպութեան. Բիւրոններու այժմեան վարչական դերը արդիւնք է բացառիկ շրջաններու մէջ յառաջացած պայմաններու, այժմ հարկ է որ այդ դերերը յանձնուին համապատասխան այն մարմիններուն, որոնք իրենց շրջաններուն ժողովներէն բխած են: Կ'առարկուի թէ քանի վար իջնենք՝ այնքան շատ կը կատարուի սխալը եւ քանի վեր ելլենք սխալը կը քիչնայ. ատիկա հետեւութիւնն է այն պատճառի, որ գործերը մնացեր են միշտ մասնաւոր ընկերներու ձեռքը եւ եթէ վաղը անոնք հրապարակէն անհետանան ինչ պիտի ըլլայ այս կուսակցութիւնը. որպէսզի այս շէնքը հաստատ հիման վրայ դրուի հարկ է որ ամէն խնդիր շարքերուն մէջ վիճուած, ծեծուած եւ գիտակցուած ըլլայ, որպէսզի քանի մը ընկերներու վրայ չհիմնուի եւ անոնց անհետացումով վտանգուի խնդիրը: Յետոյ միթէ Ընդհ. ժողովի եւ ռայոնական ժողովի պատգամաւորները նոյն շարքերէն եւ նոյն եղանակով չեն ընտրուիր. տարբերութիւնն այն է որ Ռայոնական ժողովի պատգամաւորներու թիւը քիչ մը նուազ է: Խորհուրդին տրուած է այն դերը, որ Բիւրոններուն է, որով Բիւրոններն են որ ջնջուած կ'ըլլան: Դատական խնդիրներն եւս նոյնպէս կարելի չէ Խոր-

հուրդին յանձնել. ընդհակառակը նոյնինքն խորհուրդը իր կողմէն, իր բնոյթին հետեւանքով, բոլոր դատական խնդիրները ձգձգած եւ անլոյծ վիճակի մէջ թողուցած է: Խորհուրդը կեդրոնական բիւրոկրատ մարմին մըն է եւ ոչ-ապակեդրոնական մարմին մը չի կրնար գոյութիւն ունենալ Դաշնակցութեան մէջ: Կ'առարկուի թէ կարելի չէ տագնապալից եւ անմիջական պարագաներու տակ Կեդր. Կոմիտէներու հետ խորհրդակցել. նման պարագաներու տակ խորհուրդն ալ չի կրնար հաւաքուիլ, որովհետեւ ցրուած կազմ մ'ունի ան, որուն երկու երեք անդամներն ալ պիտի ընտրուին ռազմական ժողովներէն. կուսակցութեան երկար տարուայ գործունէութեան ընթացքին հազուադէպ [են] դէպքերը, ուր Բիւրոն ինքնագլուխ գործած ըլլայ, առանց ձեռնհաս մարմիններու հետ խորհրդակցելու. իսկ արտակարգ եւ քրիթիքական պայմաններու մէջ՝ գործին վայրը գտնուած մարմինը կ'ընէ այն ինչ որ ինք յարմար կը տեսնէ, վերցնելով պատասխանատուութիւնը իր վրայ. բացառիկ պարագաներու համար օրէնք չ'ըլլար. Պանք Օթոմանը գրաւողները իրենք վարեցին բանակցութիւնները. ինչպէ՞ս կ'ըլլայ որ ցրուած եւ ընտրելի խորհուրդ մը կրնայ հաւաքուիլ եւ Բիւրոն Կեդր. Կոմիտէներուն հետ չի կրնար խորհրդակցել: Խորհուրդի կազմը անպաշտպանելի է նաեւ այն տեսակէտէն, որ պատասխանատու մարմիններուն անդամներ, որոնք այդ բացառիկ պարագաներու տակ իրենց գործունէութեան վայրն ալ չեն գտնուիր, իրաւունք պիտի ունենան կազմել խորհուրդ: Գալով դատական ֆունկցիային՝ դաւաճանական եւ նման ծանր խնդիրներ մաս չեն կազմեր ակնարկուած ատեաններու ֆունկցիաներուն:

Վերստուգիչ մարմնի ստեղծումն ալ դժուարութիւն մը չունի. ընդհակառակը այդ մարմինն չգոյութիւնն է որ շեղումներու տեղի կու տայ. մինչդեռ այսօրուան Բիւրոնը [թէ՛] հաշուետու են եւ թէ հաշուառու: Որպէսզի կուսակցութեան բարձր. մարմինները բխած ըլլան ընդհ. ժողովներէն, լաւ կ'ըլլայ եթէ թեկնածուները բխին ռազմական ժողովներէն, իսկ ընտրութիւնն ընէ Ընդհ. ժողովը:

Հարցը տակաւին սպառած չըլլալով, վիճաբանութեան շարունակութիւնը վերապահուեցաւ յաջորդ նիստին:

ՆԻՍ Թ.

18 Յուլիս, Շաբաթ առաւօտ

Ժողովին ներկայ էին վճռական ձայնի իրաւունքով 11, խորհրդակցական ձայնով 2 պատգամաւորներ, հրաւիրեալներէն 1, Կեդր. Կոմիտէի մնացեալ անդամներէն 2:

Կարդացուեցաւ նախորդ նիստերու արձանագրութիւնը:

Շարունակուեցաւ երէկուան նիստին օրակարգը՝ ի մասին կազմակերպութեան ընդհ. կանոնագրի վերաքննութեան, որուն շուրջը թեր ու դէմ կարծիքներ փոխանակուեցան հետեւեալ ուղղութեամբ:

Ա.- Բերուած զեկուցման մէջ չէր նախատեսուած այն պարագան՝ թէ ո՞վ պիտի լրացնէ Բիւրոյի կազմը՝ երբ ան պակսի կամ ցրուի, մինչդեռ գոյութիւն ունեցող կանոնագրով այդ խնդիրը նկատի առնուած է, հոգ չէ թէ կանոնաւոր խորհուրդ գումարուած չըլլայ: Բիւրոններու անդամներու թեկնածուները ռազմական ժողովէն նշանակելու տեսակէտը ընդունելով՝ գործերու ընթացքը խանգարուած կամ յապաղման ենթարկուած պիտի ըլլայ եւ արդէն Ընդհ. ժողովին մէջ ալ չէ՞ որ պատգամաւորները իրենց շրջանները գտնուող ընկերներու մասին կրնան ցուցմունքներ ընել:

Նոյնքան եւ աւելի անօգտակար, գուցէ եւ վնասակար պիտի ըլլար ընդհ. ժողովներու գումարման տեւողութիւնը երկարաձգել, երբ երեք երկիրներու մէջ ալ քաղաքական յարափոփոխ վիճակ մը կը տիրէ: Ռազմական ժողովները երկուքի բաժնել միայն կարելի է, փոխանակ երեքի, որովհետեւ Թուրքիոյ պայմանները տարբեր եւ Կովկաս ու Պարսկաստանի պայմանները տարբեր են:

Բ.- Բիւրոյի պակասած կազմը կարելի է լրացնել կամ նախապէս ընտրուած փոխ անդամներով եւ կամ նամակով մարմիններու հաւանութիւնը առնելով, մանաւանդ այդ անպատեհութիւնը շատ քիչ անգամ տեղի պիտի ունենայ, որովհետեւ ամէն տարի Ռազմական ժողով պիտի գումարուի: Բիւրոններու թեկնածուները Ռազմական ժողովներէն նշանակելուն մէջ ոչ մէկ անպատեհութիւն կայ, ընդհակառակը աւելի գիտակցական կ'ըլլայ: Ընդհ. ժողովներու գումարման երկարաձգումը նոյնպէս անպատեհութիւն մը չի ներկայացներ, որովհետեւ ռազմական ժողովները յաճախ կը գումարուին, մինչ իլլեկալ երկիրներու համար դժուար է ամէն երկու տարին անգամ մը պատգամաւոր ուղարկել. եւ ընդհ. ժողովի մը գումարումը իր շրջապատող պայմաններուն մէջ տնտեսապէս ալ բաւական ծանր պիտի կշռէ: Ռազմական ժողովները ստիպ գումարուելով կուսակցական կեանքը մեծ գարկ պիտի ստանայ: Երբ Բիւրոյի ընկերները կը դիտեն որ ո՛չ իրենց զբաղման բնոյթը ոչ ալ կուսակցութեան տնտեսական վիճակը կը ներէ որոշուած թիւէն աւելի ընկերներու ապրուստը հոգալ, որով կը հարկադրուին մեկնիլ իրենց ընտրուած վայրէն, հարկ է որ նախապէս զգան այդ բանը եւ իրենց թեկնածութիւնը չընեն:

Այս վիճաբանութիւններէն ետք ալ կարծիքներ համախմբուած չըլլալով քոնքրէթ առաջարկներու շուրջ, ընտրուեցաւ առանձին յանձնախումբ, որպէսզի ար-

տայայտուած մտքերու թոյլատրած սահմանին մէջ բանաձեւէ եղած առաջարկները եւ բերէ ժողովի յաջորդ նիստին:

Հայերէն-թուրքերէն կնիքներու գործածութեան հարց

Պատգամաւոր ընկերներէն ոմանք յիշելով տեղական կարգ մը անհրաժեշտութիւններ, առաջարկ բերած էին, որ Ընդհ. ժողովին առաջադրուի տեղական կազմերուն ալ կնիք տալու խնդիրը: Ժողովը թեր ու դէմ արտայայտուելով այս առթիւ եւ թուելով անոր կարգ մը անպատեհութիւնները, յանգեցաւ այն որոշումին՝ որ տեղական մարմինները ըստ առաջնոյն չունենան կնիք, հարկ եղած պարագային ստորագրեն նամակները եւ կամ գործածեն տեղական քլիւպներու կնիքը, իսկ Կեդր. Կոմիտէներուն տալ երկուական կնիք՝ որոնցմէ մէկը հայերէն եւ թուրքերէն:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամանակէն կէս ժամ առաջ, միջոց տալու համար յանձնախումբի աշխատութեան:

ՆԻՍ Ժ.

18 Յուլիս, Շաբաթ, կէսօրէ ետք

Ժողովին ներկայ էին իրաւասու ձայն ունեցող պատգամաւորներէն 11, խորհրդակցական ձայնով 2, հրաւիրուած ընկերներէն 3, Կեդր. Կոմիտէի մնացեալ անդամներէն 2:

Ծանձնախումբը ներկայացուց իր բանաձեւած առաջարկները կազմական կանոնագրին մէկ քանի էական կէտերը ճշդող: Այս առթիւ նախորդ ժողովին զեկուցում բերող ընկերող առաջարկին համամիտ եղող պատգամաւորները քննադատեցին նոր բերուած առաջարկները՝ դիտել տալով [որ] անոր մէջ մտցուած են նաեւ այնպիսի կէտեր, որոնց մասին ժողովը չէ ալ արտայայտուած: Բերուած առաջարկին շուրջ կարելի չըլլալով որոշ ձայներ գոյացնել, ակնարկուած հոսանքը ինքն ալ բանաձեւեց իր առաջարկները, որոնք առանձին-առանձին քուէարկութեան դրուեցան:

Այդ բանաձեւերն են.

Ա. Առաջարկ բանաձեւ.— Հ.Յ.Դ. ընդհ. ժողովը կուսակցութեան բարձրագոյն օրէնսդիր մարմինն է եւ կը գծէ ամբողջ կազմակերպութեան համար պարտադրիչ օրէնքներ եւ ընդհանուր սկզբունքներ, եւ կը գումարուի չորս տարին անգամ մը:

1) Թուրքիա եւ գաղութները (կուսակցութեան լեկալ մասը) կ'ունենայ իր ռազմական ժողովը, որ կը գումարուի տարին անգամ մը գծելով Թուրքիոյ համար կուսակցութեան ընդունելիք ընդհանուր քաղաքականութիւնը եւ տաքտիկը՝ Ընդհ. ժողովի գծած հիմնական սկզբունքներուն սահմանին մէջ:

2) Կովկաս եւ Պարսկաստան (կուսակցութեան իլլեկալ մասը) կ'ունենայ իր ռազմական ժողովը, որ կը գումարուի տարին անգամ մը եւ կ'ունենայ այն իրաւասութիւնները՝ ինչ որ Թուրքիոյ ռազմական ժողովը ունի:

3) Ժողովներու կազմը.— Ընդհ. եւ ռազմական ժողովները կը կազմուին կեդրոնական կոմիտէներու եւ շրջանային ժողովներու մէջ մէկ պատգամաւորներէն:

4) Արեւմտեան Բիւրոն կը բխի Թուրքիոյ ռազմական ժողովէն եւ հաշուետու է անոր. իսկ Արեւելեանը՝ կը բխի Կովկաս-Պարսկաստանի ռազմական ժողովէն եւ հաշուետու է անոր:

Բիւրոնները ընտրելու ժամանակ պէտք է ընտրել փոխ անդամներ, որոնք կը յաջորդեն երկար ժամանակ հեռացող կամ հրաժարող անդամներու տեղ:

5) Բիւրոններու ֆունկցիոնները.— Բիւրոնները կը հրակեն Ընդհ. եւ Ռազմական ժողովներու որոշումներուն եւ կազմակերպական ընդհ. կանոններու ճշդիւ գործադրութեան. կապ կը պահեն Կեդր. Կոմիտէներու միջեւ, կը կատարեն դրամական բաշխումները՝ որոշուած նախահաշուի համաձայն: Կուսակցութեան ընդհ. բնոյթ ունեցող հարցերուն շուրջ եւ որոշ յանձնառութիւններու պարագային Բիւրոնները ռազմական ժողովներու գծած սահմաններուն մէջ՝ իրենց շրջանի Կեդր. Կոմիտէներու հետ համաձայնելով կրնան յարաբերութիւններ մշակել տարբեր քաղաքական կուսակցութիւններու հետ:

Արտակարգ պարագաներու մէջ Բիւրոնները, հնարաւոր եղած Կեդր. Կոմիտէներու հետ համաձայնելով, կրնան կուսակցութեան բռնելիք դիրքը որոշել:

6) Հաշուական.— Բիւրոններու եւ ռազմական մամուլի հաշիւները մանրամասնօրէն քննելու եւ ռազմական ժողովներուն բերելու համար կ'ընտրուին ռազմական ժողովներէն Վերստուգիչ մարմիններ (3 հոգիէ բաղկացած եւ 2 փոխ անդամ) որոնք ռազմական ժողովներու գումարումէն երկու ամիս առաջ պատկանեալ Բիւրոյին եւ մամուլի հաշիւները մանրամասնօրէն կը քննեն եւ կը ներկայացնեն ռազմական ժողովին:

7) Տեսչիկիւն եւ դատական.— Ընկերներու, ընկերներու եւ մարմիններու եւ մարմիններու միջեւ ծագած զանազան անհամաձայնութիւններու կամ կազմակերպական յանցանքներու խնդիրները քննելու համար կ'ընտրուի իրաւարար ատեան՝ երկու կողմերէն ընտրուած երկուական ներկայացուցիչներէ, որոնք կ'ընտրեն հինգերորդ մը, որուն տուած վճիռը վերաքննելի է շրջանային եւ ռազմական ժողովներէն, որոնք

կ'ընտրեն իրենց մէջէն դատական յանձնախումբ՝ կայացուած վճիռը քննելու եւ իր կարծիքը բերելու Ծրջկամ ռայոնական ժողովներուն՝ անոնց քննութեան եւ վաւերացմանը ենթարկելու համար:

Կազմակերպութեան համար կենսական բնոյթ ունեցող դատական խնդիրներու նախնական քննութիւնները կը կատարուին ռայոնական ժողովներու կողմէ ընտրուած յանձնախումբէ մը, որ քննութեան արդիւնքը կը ներկայացնէ ռայոնական ժողովին, որ կու տայ իր վճիռը, որ վերաքննելի է Ընդհ. ժողովին:

Յ) Մամուլ. — Կեդր. օրկանի խմբագրական մարմինը կը բխի Ընդհ. ժողովէն: Ռայոնական օրկաններու խմբագրական մարմինները կ'ընտրուին ռայոնական ժողովներէն: Ծրջ. օրկաններու խմբագրական մարմինները կը բխին շրջ. ժողովներէն:

Ռայոնական մամուլի ուղղութեան հսկելու պարտականութիւնը կը ստանձնէ վերստուգիչ մարմինը, որով կը դառնայ մնայուն:

Իսկ շրջանային օրկաններու ուղղութեան հսկողն է շրջանի Կեդր. Կոմիտէն:

11 իրաւասու ձայներէն 5ը ի նպաստ եւ 3ը դէմ քուէարկեցին եւ 3ը ձեռնպահ մնացին:

Բ. Առաջարկ-բանաձեւ. — 1) Երկու տարին անգամ մը Ընդհ. ժողովի գումարում, իսկ տարին անգամ մը Ռայոնական ժողով՝ Թուրքիոյ ամբողջ Կեդր. Կոմիտէներէն առանձին, Կովկաս եւ Պարսկաստան միացեալ առանձին: Ռայոնական ժողովներու մասնակցութիւն՝ մէկ պատգամաւորով, ընտրուած շրջ. ժողովներէն: 2) Ընդհ. ժողովէն կ'ընտրուին Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոնները երեքական ընկերներով, որոնց երկուքին մնայունութիւնը պարտաւորիչ է իրենց զբաղման գլուխը: Բիւրոն պարտաւոր կ'ըլլայ իրեն խորհրդակցութեան եւ գործակցութեան կանչել իր գտնուած վայրը եղող անցեալ ունեցող գործիչ ընկերներ եւ նոյն տեղի Կեդր. Կոմիտէէն մէկ ներկայացուցիչ: Ընդհ. ժողովը երկուական ընկերներ կ'ընտրէ իբր փոխ անդամ, ի հարկին ամբողջացնելու համար կազմը:

Երբ պատահի որ մինչեւ ռայոնական ժողով դարձեալ պակսին Բիւրոյի լրացած կազմի անդամները նոյն ժողովը ինք կ'ամբողջացնէ այս անգամ կազմը՝ մինչեւ յաջորդ Ընդհ. ժողովի համար: Ռայոնական ժողովը կ'ունենայ հաշուեքննիչ մարմին մը՝ որ կը քննէ նոյն ռայոնի Կեդր. Կոմիտէներու հաշիւները: Իսկ Ընդհ. ժողովը կ'ընտրէ առանձին հաշուեքննիչ, Բիւրոյի հաշիւներու քննութեան համար:

3) Քաղաքական անակնկալ տագնապի եւ Դաշնակցութեան անուճով արտաքին յարաբերութիւն պահելու պարագաներուն մէջ երկու Բիւրոնները խորհրդակցելով եւ եզրակացութեան յանգելով, արդիւնքը կ'ենթարկեն ռայոնական ժողովներէն մէկուն կամ երկուքին՝ եթէ

զուգահիւսին՝ հակառակ պարագային Կեդր. Կոմիտէի կարծիքները կը հաւաքեն այդ մասին:

4) Դատական այն թեթեւ խնդիրները որոնք կը ծագին ընկերներու, ընկերներու եւ մարմիններու եւ այլ պարագաներու մէջ կը քննուին ընկերային տեսանով, որուն վճիռը կը հասնի մինչեւ շրջ. ժողով: Իսկ կազմակերպական կեանքին ու ձեռնարկներուն հետ առնչութիւն ունեցող կարեւոր խնդիրներու քննութեան համար Ընդհ. ժողովը կ'ընտրէ դատական յանձնախումբ, որուն պարտականութիւնը կը շարունակուի մինչեւ խնդիրին վերջնական քննութիւնը:

5) «Դրօշակ»ի խմբագրական կազմը կ'ընտրուի ռայոնական ժողովէն եւ համարատու է անոր¹⁸. ռայոնական թերթինը ռայոնական ժողովէն եւ համարատու է անոր:

11 իրաւասու ձայներէն 3ը ի նպաստ. 5ը դէմ քուէարկեցին, եւ 3ը ձեռնպահ մնացին:

Կեդր. Կոմիտէի հրաժարականը եւ Գարօ-Շահրիկ խնդիրը¹⁹. — Կեդր. Կոմիտէն յատուկ շրջաբերականով իր հրաժարականը ներկայացուցած էր շրջանի մարմիններուն, իբրեւ արդիւնք ընկեր Գարոյի կողմէ Շահրիկեանի դէմ եղած հրապարակային արտայայտութեան եւ այդ առթիւ Բիւրոյի բռնած ընթացքին: Ծրջաբերականին մէջ պատճառաբանուած են բոլոր տեսակէտները՝ որոնց վրայ կը հիմնէ Կեդր. Կոմիտէն իր հրաժարականը, եւ կուսակցական այն մտահոգութիւնը՝ որմէ կ'առաջնորդուի ան: Այդ հրաժարականի մասին արտայայտուելու համար՝ Ծրջ. ժողովը այս նիստին մէջ լսեց՝ Բիւրոյի ներկայացուցիչը եւ Կեդր. Կոմիտէի ընկերները՝ որոնք ընդարձակօրէն պարզեցին իրենց հիմնակէտերը եւ ինչպէս նաեւ պատասխանեցին այն հարցումներուն՝ որոնց լուսաբանութեան պէտքն զգացին պատգամաւորները: Ի վերջոյ ժողովը իր ստացած տեղեկութիւնները բաւ համարելով, իր որոշումը վերապահեց յաջորդ նիստին, որ տեղի պիտի ունենայ ի բացակայութեան Բիւրոյի եւ Կեդր. Կոմիտէի ընկերներուն:

Նիստը փակուեցաւ որոշուած ժամանակէն մէկ ժամ ուշ:

18.- «Դրօշակ»ի խմբագրական կազմի ընտրութիւնը «Ռայոնական ժողովէն» յայտնաբար արտագրութեան սխալ է. պէտք է ըլլայ «Ընդհ. ժողովէն», քանի արդէն շարունակութեան մէջ կ'ըսուի «ռայոնական թերթինը ռայոնական ժողովէն»:

19.- Գարոն կը վերաբերի Արմէն Գարոյի կողմէ պետութեան ներկայացուած ծրագրի մը՝ հայկական ցահագնքներէն երկաթուղի անցնելու մասին, եւ այդ առթիւ իր եւ Եւրոպական միջեւ ծագած «միջադէպ»ին, գոր, հակառակ Դաշնակցութեան խորհուրդի վճիռին, կողմնորոշուած հրապարակային վեճի միջոցով ծուլեցած էին: Գարոն տարիներ զբաղեցուց կուսակցական վեճին մարմինները, ներառեալ Կ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէն եւ Երբեքանային ժողովները: Տեսնել այս մասին նաեւ «ՆԻՒՅԵՐ»-ու 2. հատոր էջ 18 եւ ներկայ հատորին մէջ Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը, էջ 137:

ՆԻՍ ժԱ. եւ ժԲ.

18 Յուլիս (Երկուշաբթի)

Իրաւասու ձայն ունեցող պատգամաւորներէն ներկայ էին 11 ընկերներ, խորհրդակցական ձայնով 2 ընկերներ:

Ժողովի այս երկու նիստերուն օրակարգը կը կազմէր՝ Կեդր. Կոմիտէի հրաժարականը եւ Գարօ-Շահրիկ խնդիրը, որոնց առթիւ ունեցաւ կարծիքներու լայն փոխանակութիւն. ուշադրութեան առնուելով՝ կուսակցութեան շահերու պաշտպանութեան տեսակէտը՝ որ Կեդր. Կոմիտէն եւ Բիւրօ միանգամայն կը բաժնեն մեկնելով տարբեր հիմնակէտէ. Բիւրոյի վերաբերումը Գարոյի ընթացքին հանդէպ եւ Շահրիկեանի վերաբերմամբ, Գարոյի ընթացքը հանդէպ Խորհուրդի տուած որոշման, Կեդր. Կոմիտէի հրաժարման նպատակայարմար կամ աննպատակայարմար ըլլալու կրկնակ պարագաները, հրաժարելու կամ ինքն իր կողմէ հրապարակաւ հերքելու միջոցներուն տարբերութիւնը. խառն ժողովի մտավախութիւնը՝ երբ մէկ կողմէ կ'ենթադրէ որ ընկեր Գարոն հրապարակ կու գայ, նոյնը չի խորհիր նաեւ ընկեր Շահրիկեանի վերաբերմամբ՝ երբ մանաւանդ անխրաւուածը ան էր. Բիւրոյին լուծութիւնը՝ նոյնիսկ կազմակերպական շարքերուն առջեւ ներքնապէս, Բիւրոյի կամ խառն ժողովի պարզած վերաբերումին ու դիրքին հակառակ ըլլալը կուսակցութեան շահերուն, Կեդր. Կոմիտէի շրջաբերականը քոյր Կեդր. Կոմիտէներուն եւս ուղարկուելու պարագան:

Մտքերու փոխանակութենէ եւ թեր ու դէմ վիճաբանութիւններէ յետոյ՝ կազմուեցաւ յատուկ յանձնախումբ պատրաստելու հարկ եղած բանաձեւը եւ բերելու երկրորդ նիստին:

Երկրորդ նիստին մէջ ներկայացուած բանաձեւն եւս երկար քննութեան առարկայ եղաւ եւ ինչ ինչ բարեփոխութիւններով՝ միաձայնութեամբ ընդունեցաւ որ հետեւեալն է.

Նկատի առնելով Կ. Կոմիտէի պատճառաբանեալ հրաժարականը Գարօ-Շահրիկեան խնդրի առթիւ, եւ լսելով Բիւրոյի եւ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչներու ընդարձակ բացատրութիւնները, նկատի ունենալով Հ. Յ. Դաշնակցութեան Խորհրդի բնագիր վճիռը, Պոլսոյ Ծրջանային ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան,

ա.- Կեդր. Կոմիտէի պահանջները եւ կուսակցական նախանձախնդրութիւնը կը գտնէ իրաւացի եւ գնահատելի եւ մերժելով իր հրաժարականը անոր ուշադրութեան կը յանձնէ որ պարտաւոր էր իր բողոք հրաժարականը չհանել իր շրջանի սահմանէն դուրս:

բ.- Գարոյի ընթացքը Խորհրդի որոշումէն ետք կու-

սակցական կարգապահութեան հակառակ եւ դատապարտելի կը գտնէ:

գ.- Յաւ կը յայտնէ այս առթիւ ղեկավար ընկերներու մէջ նկատուած փոխադարձ հակակրակական վերաբերումներուն:

դ.- Գարօ-Շահրիկեան միջադէպի այս վերջին փուլին առթիւ Արեւմտեան Բիւրոյի ընթացքը՝ Ծրջանային ժողովը կ'առաջարկէ հարցապնդման ենթարկել Զ. Ընդհ. ժողովոյ առջեւ:

Յետոյ ժողովը պարտականութիւն յանձնեց ընկեր Աթանասեանին, որպէսզի ընդունուած բանաձեւը ներկայացնէ այս գիշեր իսկ Կեդր. Կոմիտէի ժողովին եւ պարզէ Ծրջ. ժողովի տեսակէտները, պնդելով որ ո'չ մէկ կերպով Ծրջ. ժողովը տրամադիր է ընդունիլ տրուած հրաժարականը եւ հրաւիրել զայն շարունակել իր աշխատութիւնները, որպէսզի ժողովը խղճի հանդարտութեամբ ցրուի:

Ընտրութիւն Ընդհ. ժողովի պատգամաւորին. — Թեկնածուներ առաջարկուեցան՝ ընկերներ Շահրիկեան, Պետրոսեան, Արշալիր, Տօքթօր եւ Սրենց, որոնց մասին կարծիքներու փոխանակութենէ յետոյ, գաղտնի քուէարկութեամբ եւ միաձայնութեամբ (ներկայ 12 իրաւասու ձայներու 12-ին քուէով) Ընդհ. ժողովին պատգամաւոր ընտրուեցաւ ընկեր Շահրիկեան:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ ժԳ.

19 Յուլիս, Երեքշաբթի առաւօտ

Իրաւասու ձայնով 11 պատգամաւորներ, Կ. Կոմիտէի մնացեալ անդամներէն 1 ընկեր ներկայ:

Ընկեր Աթանասեան հաղորդեց թէ՛ Կեդր. Կոմիտէն իր երէկ գիշերուան նիստին մէջ, անբաւական գտած է իր հրաժարականի շարժառիթը եղող խնդրոյ մասին քուէարկուած բանաձեւը եւ կը պնդէ իր հրաժարականին վրայ: Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչն ալ բացատրութիւններ տուաւ պարզելով Կեդր. Կոմիտէի տեսակէտը, ըսելով թէ ինք իրաւունք ունէր ուրիշ Կեդր. Կոմիտէներու ղրկելու շրջաբերական, մանաւանդ շրջաբերականներուն մէջ յանձնարարած է որպէսզի Կ. Կոմիտէները իրենց մէջ միայն պահեն այս խնդիրը: Ժողովը պնդեց իր բանաձեւին վրայ, միանգամայն խնդրելով Կ. Կոմիտէէն, որպէսզի շարունակէ իր պաշտօնը եւ այլեւս հրաժարականի խնդրի չյարուցանէ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ ԺԴ.

19 Յուլիս, Երեւանի կէսօրէ ետք

Իրաւասու ձայնով ներկայ 10 պատգամաւոր, Կ. Կոմիտէի մնացեալ անդամներէն 2, դրսէն, պատգամաւորներու հաւանութիւնով, ընկեր Սարգիս Մինասեան եւ խորհրդակցական ձայնով 2:

Կարգաւորեցան մնացեալ նիստերու ատենագրութիւնները եւ վաւերացուցան:

Ընկեր Շահրիկեան մերժեց ընդունիլ իր անձին վրայ կայացած ընտրութիւնը՝ կարգ մը պատճառներով. առնուի են, ղեկավար ընկերներու նկատմամբ տրուած բանաձեւը, երբ մէկ կողմէ ժողովը զինք պատգամաւոր կ'ընտրէ, միւս կողմէ ղեկավար ընկերներու փոխադարձ հակադրութիւն կը վերագրուի, որ իր բացատրութեան այդ ձեւով կրնայ զանազան ենթադրութեանց տեղի տալ, այն ինչ ինք ոչ մէկ ընկերով դէմ հակադրութիւն մը ունի:

Ժողովը միաձայնութեամբ իր վստահութիւնը յայտնեց, որուն ապացոյցն իսկ է միաձայնութեամբ կատարուած ընտրութիւնը, բայց որպէսզի թիրիմացութեանց միանգամ ընդմիջտ տեղի չտրուի, բանաձեւի հատուածը բարեփոխեց հետեւեալ կերպով. չեղեալ համարելով նախապէս գոյութիւն ունեցող հատուածը, այս բարեփոխեալ ձեւը անջատաբար պիտի ներկայացուի Ընդհ. Ժողովին: «Երջ. ժողովը նախանձախնդիր կուսակցութեան բարոյական հմայքին պահպանման եւ խորապէս գիտակ անոր կատարելիք պատմական դերին ու անդրութիւններուն՝ կ'առաջարկէ Ընդհ. Ժողովին կողմէն կուսակցութեան ղեկավար շրջաններուն, որպէսզի իրենց կեանքով ու գործունէութեամբ հաւատարիմ ա-

ւանդապահն ըլլան անոր սկզբունքներուն եւ անդաւանական մաքուր միջնորդութիւն եւ ընկերական կապերու սերտ պահպանման: Կեդր. Կոմիտէն դարձեալ կը մնայ իր հրաժարողի դերին մէջ հետեւեալ պատճառաբանութիւններով:

«Կեդր. Կոմիտէն իր շրջաբերականը՝ ի գիտութիւն միայն դրկած է քոյր Կեդր. Կոմիտէներուն եւ այս մասին ոչ մէկ արգելք կայ. Կեդր. Կոմիտէն իր իրաւունքին մէջն է, մինչ Բիւրոն հասցէներ չէ տուած իրեն: Թաքթի տեսակէտով ալ անպատեհութիւն մը չի ներկայացներ. հարկ էր որ կուսակցութեան կարեւոր մարմինները գոնէ գիտակ ըլլային այդքան կարեւոր խնդրի մը, երբ իր շրջանի տեղական մարմինները կրնային գիտնալ միայն այդ հանգամանքը ունենալուն համար: Երջաբերականի ազդեցութեանը մասին այժմէն կարելի չէ նկատողութիւն եւ դատողութիւններ ընել, քանի որ ոեւէ հարց չկայ այդ մասին: Երջաբերականին նպատակներէն մէկն ալ կուսակցութեան ծոցին մէջ տեղի ունեցած ցաւալի երեւոյթի մը դէմ բողոքի արտայայտութիւն մը ընել էր»:

Երջ. ժողովը երկար վիճաբանութիւններէ վերջ բանաձեւի խնդրոյ առարկայ հատուածը բարեփոխեց հետեւեալ կերպով:

«Երջ. ժողովը Զ. Ընդհ. Ժողովին ուշադրութեան կը յանձնէ այն պարագան որ՝ արդեօք Կեդր. Կոմիտէն իրաւասութիւն ունէր իր բողոք-հրաժարականը իր շրջանէն դուրս հանելու»:

Նախագահը նիստերը վերջացած եւ փակուած յայտարարեց: Այս վերջին նիստի ատենագրութիւնն եւս կարգաւորելով վաւերացուցաւ:

[11 ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ]

Handwritten signatures and stamps of the committee members, including names like Կ. Կոմիտէի անդամներ, Սարգիս Մինասեան, and others.

Փաստ. 877-69

Գ.- «ԱԶԱՏԱՄԱՐՏ»Ի ԽՄԱԲԳՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Առաջնորդուելով «Ազատամարտ»ի բարոյական թէ միութեան յաջողութեանց ապահովութեան տեսակէտէն, Խմբագրութիւնը նպատակայարմար կը գտնէ փոխադարձ յարաբերութեան կապ մը հաստատել մէկ կողմէ Թուրքիոյ եւ Արտասահմանի ընկերներուն, թղթակիցներուն ու գործակալներուն եւ միւս կողմէ իր միջեւ Ազատամարտի հետ անմիջական առնչութիւն ունեցող խնդիրներու շուրջը:

Այս անգամ կարեւոր կը նկատենք դաշնակցական մարմիններու եւ մեր գործակալներու ուշադրութեան յանձնել հետեւեալ քանի մը խնդիրները:

ա) Թերթի մը յարատեւութեան ամենաւեալ միջոցն է անոր տարածումն ու սպառումը հասարակական լայն խաւերու մէջ: Դժբախտաբար շատ տեղեր, այդ հոգը ծանրացած կ'երեւի ատելի գործակալներու վրայ, մինչդեռ ընկերներու դրական եւ յամառ աշխատանքն ու աջակցութիւնն է հարկաւոր հող: Դիտելի է որ՝ բաժանորդ-ընկերներու թիւը մեծ տոկոս մը չի կազմեր համեմատաբար տեղի մը ընկերներու թիւին եւ հոն սպառած Ազատամարտներու քանակին: Որպէսզի կարելի ըլլայ այս զգալի պակասը դարմանել, անհրաժեշտ է համոզել ու հրաւիրել քիչ թէ շատ բարեկեցիկ ընկերները՝ Օրաթերթ-Ազատամարտին բաժանորդագրուելու, իսկ նուազ բարեկեցիկներն ալ՝ գոնէ Շաբաթաթերթ-Ազատամարտին: Ասկէ զատ, ինչպէս ըսինք, իրաքանչիւր ընկեր իր կազմակերպական-կուսակցական պարտականութիւններէն մէկն ալ նկատելու է թերթին ծաւալման եւ տարածման աշխատիլ՝ գտնելով նորանոր բաժանորդներ: Բաժնեգիններու օրը օրին եւ կանոնաւորաբար գանձումն ու առաքումն ալ այս զանցառութեանց մէջ գլխաւոր տեղ մը կը գրաւէ, որ իր կարգին տեղի կու տայ վարչական ընթացիկ գործերու կազմման եւ դժուարութեանց: Հոս եւս հարկաւոր օժանդակութեան եւ գործակցութեան տիրական անհրաժեշտութիւնը կը հարկադրուի իրաքանչիւր վայրի դաշնակցական մարմնի, որպէսզի ջանադիր ըլլայ աջակցիլ գործակալին՝ գանձումները չուշացնելու եւ պատրաստ գումարները անմիջապէս փոխադրելու համար Պոլիս: Ընկերները հաստատապէս գիտնալու են սա պարագան՝ թէ Ազատամարտը պատրաստ դրամագլուխ չունի, անսպառ համբերութեամբ մը սպասելու համար մեծագումար ապառիկներու գանձումին: Ուստի Դաշնակցութեան իրաքանչիւր Մարմին ուշադիր հսկելու է որ ապառիկները չդիզուին եւ անոնց գումարը հնարաւոր նուազագոյնի մը հասցուի:

բ) Թղթակիցներու ընտրութեան եւ պատասխանատուութեան խնդիրը նոյնքան ուշադրութեան արժանի կարեւոր պարագայ մըն է: Ազատամարտ, իր ծանօթ հանգամանքով իսկ, գոյութիւն ունեցող պոլսական եւ այլ թերթերու մէջ ունենալով բացառիկ կարեւորութիւն, իր հաղորդած տեղեկութիւններն ու արտայայտած մտքերը, բնականաբար, ունին նոյնքան բացառիկ նշանակութիւն: Ահա այս պատճառով ալ մեր տեղեկութեանց աղբիւրները որքան վստահելի, նոյնքան եւ այդ տեղեկութիւնները պէտք է ըլլան վաւերական եւ իրական: Եղած են պարագաներ՝ ուր թղթակիցներու ծախսը եւ հապճեպ լրատուութեան տուած է Խմբագրութիւնը,» թէ բարոյապէս եւ թէ միութեամբ. տեղ տեղ, մէկէ ատելի թղթակիցներ միեւնոյն իրողութիւնը տարբեր տարբեր նկարագրած են. ուրիշներ՝ երբեք նկատի չեն առնել քանիցս հրատարակուած այն հրահանգներն ու ցուցմունքները՝ որոնց սահմանին մէջ պէտք է կատարուէին լրատուութիւնները:—

Որպէսզի այս բոլոր անպատեհութեանց առջեւ միանգամ ընդմիջտ առնուի, Խմբագրութիւնը կ'առաջարկէ.

Ամէն քաղաքի եւ գիւղերու մէջ, դաշնակցական մարմիններու եւ ընկերներու պատասխանատուութեան տակ կազմել Տեղեկատու Բիւրոներ եւ պաշտօնապէս տեղեկացնել Խմբագրութեան՝ անոր վաւերականութիւնը, հասցէն, ստորագրութիւնը, որպէսզի Խմբագրութիւնը զայն միայն ճանչնայ իբրեւ վաւերական աղբիւր եւ անկէ բխած լուրերը հրատարակութեան յանձնէ՝ իբրեւ սեփական տեղեկութիւններ: Տեղական մարմինը կամ խումբը ինք պիտի ստանձնէ պատասխանատուութիւնը՝ Տեղեկատու Բիւրոյին հաղորդած լուրերու ստուգութեան եւ վաւերականութեան: Աւելորդ է ըսել, Տեղեկատու Բիւրոն պէտք է կազմել այնպիսի ընկերներէ՝ որոնք բաւականաչափ յաջող ըլլան շարադրելու, ի վիճակի ըլլան կառավարական թէ ազգային ամէն շրջանակի մէջ մուտք գործելու, ինչպէս նաեւ շփուելու ժողովրդական խաւերու հետ:

Ցանկալի է որ մարմինները կարելի եղածին չափ շուտ ընթացք տալով այս առաջարկին՝ փութացնեն իրենց

կարգադրութեան տեղեկագրութիւնը, որպէսզի միանգամ ընդ միշտ կանոնաւորուած ըլլայ լրատութեան եւ թղթակցութեան գործը:

զ) Օգտակար պիտի ըլլար քանի մը ընդհանուր թելադրութիւններ ալ Տեղեկատու Բիւրոներուն կամ թղթակիցներուն համար:

Յիշեցնելով ասկէ առաջ քանիցս հրատարակուած այլ եւ այլ հրահանգները, մասնատրապէս կանգ կ'առնենք հետեւեալ կէտերուն վրայ:

1) Թղթակցութիւն թէ լրատութիւն պէտք է ըլլան շատ կարճ, պիտի պարունակեն միմիայն իրողութիւններ՝ առանց խորհրդածութիւններու: Խորհրդածութիւն եւ երկար գրուած տեղեկութիւններ անպայման պիտի կրճատուին:

2) Ուել՝ իրողութիւն հաղորդել առանց ժամանակ կորսցնելու, իսկ ռել տարածայնութիւն սպուզելէ յետոյ միայն տեղեկագրել:

3) Անձերու շուրջ եղած ամբաստանութիւնները հիմնել իրողութիւններու եւ վաւերաթուղթերու վրայ, այլապէս նկատի պիտի չառնուին:

4) Հետամուտ ըլլալ դրացի հասարակութեանց (թուրք, քիւրտ, յոյն, ասորի, հրեայ, ելն.) մէջ տեղի ունեցած դէպքերուն ու հաղորդել նաեւ զանոնք:

5) Լուրջ ուշադրութիւն դարձնել եւ իրողութիւններ հաղորդել քիւրտ եւ թուրք աշխատատեղերէն եւ զիւրացիութեան մէջ առաջացած դժգոհութեան եւ զանգատներուն՝ հանդէպ ամէն կարգի անիրաւութեանց եւ բռնութեանց:

6) Տեղական ազգային իշխանութիւնները քննադատուած պահուն չղեկավարուիլ անպատճառ քննադատելու տենչէն, այլ իրողութիւններէն: Հիմնուելով սակայն փաստերու վրայ՝ մերկացնել ամէն զեղծում ու ապօրինութիւն:

դ) Խմբագրութեան համար կարելոր է ծանօթանալ նաեւ Ազգայնաւարտի մասին յայտնուած կարծիքներուն եւ անոր գտած ընդունելութեան, օրինակ՝

1) Ի՞նչպէս կը գտնեն ընթերցողները թերթի ուղղութիւնը առ հասարակ, ի՞նչ դիտողութիւններ կան, եւ ո՞ր բաժիններն են որ աւելի հետաքրքրութեամբ կը կարդացուին, ո՞ր բաժիններուն հարկ է աւելի ուժ տալ, յապաւել կամ նոր մը բանալ:

2) Ի՞նչպէս կը գնահատուի թերթը հասարակութեան կողմէ, առ հասարակ ի՞նչ կէտերու մասին դիտողութիւններ կ'ըլլան եւ կամ ի՞նչպէս կ'ուզուի տեսնել թերթը:

3) Մինչեւ հիմա հրատարակուած թերթօնները ի՞նչպէս կը կարդացուին, ո՞րքան հետաքրքիր է թերթօնի բաժինը մասնատրապէս գաւառի համար, ի՞նչ տեսակ թերթօններ աւելի հաճոյքով կը կարդացուին:

Ստիպողաբար կը խնդրենք որ ներկայ շրջաբերականին բովանդակութիւնը նկատի ունենալով՝ դաշնակցական մարմինները իրենց տեղական ընկերներուն կարծիքները առնեն առաջադրուած խնդիրներու մասին եւ փութացնեն մեզ իրենց պատասխանները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱԶԱՏԱՍԱՐՏ»Ի

Պոլիս, 1 Հոկտեմբեր 910

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ V

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Օսմ. Սահմանադրութեան այս առաջին երեք տարիներուն, Վասպուրականի կեդրոնական դէմքերէն շատեր հեռացած էին շրջանէն, ինչպէս Մանուկեան Արամը, որ ուսուցչական պաշտօնով անցած էր Օրտու, Վարդան Շահպազը՝ իր ծննդավայրը Սեբաստիա նահանգ, իսկ Փափագեան Վահան (Կոմս) երեսփոխան ընտրուած ըլլալով Վանէն՝ փոխադրուած էր Պոլիս: Տեղույն վրայ կը գտնուէին գլխաւորաբար Վանայ Սարգիսը (Օտապաշեան Պօղոս) եւ Իշխանը (Միքայէլեան Նիկոլ): Այս վերջինի կազմակերպած Լեռնապարի շրջանը վերամիացուած ըլլալով Վանի, 1909-1911 երկամեակին Վասպուրականը կրկին կը ներկայանայ մէկ Կեդր. Կոմիտեով:

Վան-Վասպուրականը կը մնար Հ. Յ. Դաշնակցութեան ամէնէն կազմակերպուած եւ կուր շրջաններէն մէկը եւ, հակառակ Դիւրի Դաւիթի մատնութեան հետեւանքով բռնագրաւուած կուսակցապատկան ոչ-զանցառելի զինամթերքին, ան յաջողած էր կարելոր չափով մը համալրել իր զինանոցը. զինանոց մը՝ սահմանուած որքան հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան, նոյն չափով նաեւ երկրի սահմանադրական կարգերու պահպանութեան համար: Երեւի ատով ալ Դաշնակցութիւնը դարձած էր աչքին փուշը Իթքիատին եւ թրքական իշխանութեանց, որոնք ճիգ չէին խնայեր զրգոելու շրջակայքի քիւրտ ցեղախումբերը՝ դեռ մօտիկ անցեալին իր մարտունակութեան ապացոյցը տուած Վասպուրականի հայութեան դէմ:

Նշուած երկամեակի ընթացքին սովորական դարձած էին հակահայ արարքները, հողավէճը, կողոպուտն ու աւազակային սպանութիւնները, դաշնակցական հանրածանօթ գործիչներու հալածանքը, վերջիններուն դէմ յարուցուած սարքովի դատերը (Իշխան, Գարմէն, Սեպուհ, Սեբաստացի Մուրատ, Մարգպետ, Եւայլն), որոնք բացի իրենց վարկաբեկիչ հանգամանքէն, կը հետապնդէին մանաւանդ ուշադրութիւնները շեղելու նպատակը բուն սկզբունքային ու էական հարցերէն, ինչպիսիք էին պետական բարեկարգութիւնը, ազգութեանց իրաւահաւասարութիւնը, նահանգներու վարչական ինքնավարութիւնը, բռնագրաւուած հողերու վերադարձը Եւայլն, Եւայլն:

Սահմանադրական սկզբունքներու յարգում կամ իրական բարենորոգումներ, - թրքական իշխանութիւններուն համար եթէ ի սպառ մոռցուած բաներ չէին, որոշապէս սակայն նետուած էին յետին կարգ:

Վասպուրականի թղթածրարը կազմուած է.-

1.- «Հ. Յ. Դաշնակցութեան Վասպուրականի շրջանի համառօտ տեղեկագիր 1910 թուի», ձեռագիր 9 էջ, ստորագրուած Բաֆֆ: Վերջինս՝ իսկական անունով Երեցեան Ռաֆայէլ, դաշնակցական երիտասարդ գործիչ էր եւ կրթական տեսուչը Վասպուրականի հարաւային գաւառներու հայկական դպրոցներուն: Սպաննուեցաւ 1912 թ. ամրան թուրքերու դաւադրութեամբ եւ քիւրտերու ձեռքով:

2.- «Տեղեկագիր Վասպուրականի Կ. Կոմիտէի Հ.Յ.Դ. Չ. Ընդհանուր Ժողովին», ստորագրուած Կ.Կ.ի անդամներու կողմէ. ձեռագիր 22 էջ:

3.- Վասպուրականի Կեդր. Կոմիտէի երեք նամակներ ուղղուած Հ.Յ.Դ. Արեւմտեան (Պոլիս) եւ Արեւելեան (Կարին) Բիւրոներուն, ստորագրուած Շամիլի (Քարսեղեան-Օտապաշեան Պօղոս) կողմէ: Առաջին նամակը ստորագրուած չէ, բայց ձեռագիրը ստուգապէս Շամիլին է:

Փաստ. 670-83

Ա.՝ Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՍՊ[ՈՒՐԱԿԱՆ]Ի ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ 1910 ԹՈՒԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

Տնտեսական.— Ազգաբնակչության տնտեսական դրույթները ընդհանրապէս՝ Սահմանադրութիւնից յետոյ զգալի չափով բարձրացել է:

Ժողովուրդը անջատուելով բունակալական ճնշումներից ու կառավարական ծանր ու ապօրինի գանձումներից ամբողջովին անձնատուր է եղած խաղաղ ու յամառ աշխատանքի՝ իր քրտինքի արդիւնքը վայելելու հաստատ հաւատով:

Խոշոր հողատիրութիւնը հայկական գաւառներում բացառիկ երեւոյթ է: Սակաւահողութիւնը զգալի է Լեռնապարի՝ շրջաններում, իսկ Ալճավազի եւ Արճէշի գաւառներում իւրաքանչիւր տան ընկած հողաբաժինը բաւարար է: Երկրագործութիւնը իր նախնական վիճակումն է], սակայն նկատելի է այդ ասպարէզում նորամուծութիւնների հակում, մեքենաներ եւ այլ գործիքներ բերել տալու մի ուժեղ մղում:

Մեղուաբուծութիւնն ու ոչխարապահութիւնը վերջին երկու տարիներու ընթացքին մէջ բաւական տարածուել է. փեթակներու եւ ոչխարներու թիւը 50% աւելացել է:

Վաճառականութիւնն ու առեւտուրը քաղաքում եւ գիւղաքաղաքներում կենտրոնացած է հայերի ձեռքը, արհեստաւորները ընդհանրապէս հայեր են: Արհեստագիտական եւ առեւտրա-վաճառականական ոչ մի նորագոյն ձեռնարկութիւն:

Քաղաքական.— Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ ապրել է բռնակալութեան տակ, որ քաղաքական իրաւունքներու եւ պարտականութիւններու ճշգրիտ գիտակցութիւն չէ ունեցել, բնական է, որ Սահմանադրութիւնից անմիջապէս յետոյ չունենալով պէտք եղած քաղաքական հասունութիւնը՝ չօգտուէր նոր կարգերի ընձեռած ազատութիւններից: Բայց եւ անուրանալի է, որ երկու տարուան սահմանադրական կեանքը բաւական զգալի փոփոխութիւններ մտցրեց ազգաբնակչության՝ մասնաւորաբար հայերի, քաղաքական հայեացքների եւ գործունէութեան մէջ, որը արտայայտուեց հողային խնդրի եւ պետական մարմինների ընտրութիւնների մէջ:

Կառավարական վարչական մարմինների մեծ մասամբ յետադիմական տարրերից բաղկացած լինելը

որոշ չափով վատ է ազդում ժողովրդի վրայ. այդ ազդեցութիւնը ուժեղացել է վերջերս մի շարք աւագակալին խմբերի երեւան գալուցը (Միր-Մհէ, Ռաշիդ, Սայիդ եւն) որոնք կը գործեն ըստ երեւոյթին միմեանցից անկախ, բայց իսկապէս ներդաշնակուած ծրագրով կարծես սահմանադրական կառավարութիւնը վարկաբեկելու համար: Թալանի եւ սպանութեան դէպքերը համեմատաբար շատացել են, իսկ տեղական կառավարութիւնը այդ վտանգաւոր շարժումները ճնշելու եւ արմատախիլ անելու համապատասխան ուժերը չունի եւ անընդունակ է համարեա:

Կուտուրական կեանք.— Քաղաքական կուտուրական կեանքը զգալի յառաջդիմութիւն է ըրել. դրույթներ եւ այլն ձեռնարկութիւնները բազմացել են եւ կանոնաւորուել: Իսկ գաւառներում այդ ուղղութեամբ տարուած աշխատանքները դանդաղ են առաջ գնում:

Բայց ընդհանրապէս կարելի է ասել, որ ազատութիւնների շրջանում կուտուրական կեանքը առանձին մղում ու թափ է ստացել:

Հողային հարց.— Այս հարցը Վասպ.ի շրջանում չի կրում այնպիսի սուր բնաւորութիւն, ինչպէս ուրիշ նահանգներումն է: Նա վերջերս լուծուեց Ալճավազի, Արճէշի եւ Սարայի շրջաններում. գոյութիւն ունի միայն Մամրտանքի, Սպարկերտի եւ Մոկսի մէջ՝ իր առանձնապատու կերպարանքով: Բունագրաւումները այդտեղերը կատարուել են օրինական աստուի տակ, որը դժուարացնում է վարչական եղանակով հարցի լուծումը (հայ գիւղացին, իր կեանքն ու գոյքը ապահովելու եւ իր ու բէկի յարաբերութիւնները ճշդելու համար ստիպւած է եղել իւր հողերի որոշ մասի թափուէ՞ դարձնել մի որեւէ բէկի վրայ. մնալով անուանական սեփականատէր՝ բէկին վճարել է միայն տարեկան կապալ: Սահմանադրութիւնից յետոյ բէկը օգտուելով իրեն ձեռքն ունեցած թափուից իրեն յայտարարել է հողի սեփականատէր):

1.- Լեռնապար՝ Վասպուրականի հարաւային եւ Լեռնային շրջանը (Մոկս, Ոչտունիք, Կարճկան, Եւայն), որ նախապէս անցատ 4. Կոմիտուքիւն կը կազմէր:
2.- Թափու՝ սեփականատիրութեան փաստաթուղթ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքում կան դաշնակցական, հնչակեան եւ Սահմանադիր Ռամկ[ավար] կուսակցութիւններ:

Սահմ. Ռ. կազմուած են տեղւոյն ազգաբնակչութեան տականքներէն՝ զուտ հակադաշնակցական նկատումներով:

Հնչակեաններ աւելի փոքրաթիւ են եւ ունեն փոքր ի շատէ սկզբունքային բնոյթ: Այս կուսակցութիւնները գոյութիւն ունեն միայն քաղաքում, իսկ գաւառներում մասսա չունեն, այլ համակրող անհատներ միայն: Մեր յարաբերութիւնները նրանց հետ գրեթէ խզուած են:

Դաշնակցութիւնը ամենաստուար, տիրապետող կուսակցութիւնն է:

Մեր կազմակերպութեան ձեւերն են. ա) արհեստակցական միութիւններ. բ) գիւղացիական միութիւններ եւ գ) քաղաքական խմբեր:

Արհեստակցական միութիւններ.— Հիմքը դրուած է եղել բունակալութեան շրջանում եւ այդ ուղղութեամբ ահազին աշխատանք է թափուած, սակայն շնորհիւ դասակարգային շերտաւորումներու թուլութեան միութիւնների դիրքը խախտու է եղել եւ թափուած ջանքերը շօշափելի արդիւնք չեն տուել. բացառութիւն է Շատախի թաղը, ուր կազմուած է ձուլագործ արհեստաւորների միութիւնը:

Գիւղացիական միութիւնները թուով տարածուած կազմակերպական ձեւն է, սակայն գաղափարի նորութեան ու բարդութեան եւ մնայուն դեկավարող ուժերի պակասութեան պատճառով, անխոցելի վիճակ չեն ներկայացնում, սակայն համեմատած ուրիշ շրջաններու հետ, լաւ են:

Քաղաքական խմբեր.— Միակ կենսունակ, ժողովրդի կողմէն իւրացրուած ու մարտուած ձեւն է:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿՑ ՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՎԻՃԱԿԱՑՈՅՑԸ (ԳՊՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊ.)

1.- **Շատախի շրջան.**— Կազմակերպուած է 12 գիւղ, անդամներու թիւը հասնում է 300-ի, բացի դրանից թաղում կան քաղաքական խմբեր եւ արհեստակցական միութիւն. ունեն մօտ 80 անդամ:

Ընտրուած կայ Շրջ. վարչ. եւ ենթակոմիտէ. ինքնապաշտպանութեան գործը որոշ գիւղերում լաւ է տարւած: Այս տարեշրջանում բացուած է 7 դպրոց, ունեն մի գրադարան-ընթերցարան, կանոնաւորապէս ստանում են «Ազատամարտ» օրաթերթը:

2.- **Մոկսի շրջան.**— Կազմակերպուած է 10 գիւղ, անդամների թիւը հասնում է մօտաւորապէս 150-ի. ընտրուած մարմին (կուսակց.) չկայ: Ինքնապաշտպանութեան գործը շատ է կաղում: Այդ շրջանում բէկութիւնը ուժեղ դիրք ունի: Բացուած է այս տարի 18 դպրոց. ունի մի գրադարան-ընթերցարան. ստանում են երկու օրաթերթ «Ազատամարտ» եւ «Բիւզանդիոն»:

3.- **Սպարկերտի շրջան.**— Կազմակերպուած է 15 գիւղ. միութեան անդամներու թիւը հասնում է 250-ի: Տնտեսական դրութիւնը լաւ չէ. ինքնապաշտպանութեան գործը շատ յետ է մնացել. շրջանում այս տարի բացուած է 6 դպրոց. թերթ չեն ստանում:

4.- **Խիզանի շրջան.**— Կազմակերպութիւն եղել է երկու տարի առաջ, այժմ գրեթէ չկայ: Բացուած է այս տարի հինգ դպրոց, տնտեսական վիճակը քիչ լաւ է:

5.- **Կարկառի շրջան.**— Կազմակերպուած է 12 գիւղ, անդամներու թիւը 250էն աւելի. ընտրուած կայ Շրջան. վարչ. ինքնապաշտպանութեան գործը շատ լաւ է. այս տարի այդ շրջանում բացուած է 5 դպրոց:

6.- **Կաւաչի շրջան.**— Կազմակերպուած է 8 գիւղ՝ 200 անդամով. ունի Շրջ. վարչ. կրթական գործը համեմատաբար լաւ է. այս տարի բացուած է 7 դպրոց. տնտեսական վիճակը նախանձելի է:

7.- **Կարճկանի շրջան.**— Կազմակերպուած է 20 գիւղ՝ 600 անդամներով. ընտրուած կայ Շրջ. վարչ. ինքնապաշտպանութեան գործը տարուել է առանձին հոգածութեամբ. բացուած է այս տարի 8 դպրոց. կանոնաւորապէս ստանում են 3 օրինակ «Ազատամարտ»:

Հայոց Զորքը. — Կազմակերպուած է 15 գիւղ. միութեան անդամների թիւը հասնում է 300-350-ի. կայ ընտրուած Շրջ. վարչ. ինքնապաշտպանութիւնը կանոնաւոր հիմերու վրայ չէ դրուած. տնտեսական վիճակը լաւ է: Կրթական մակարդակը փոքր ի շատէ բարձր է: Այս տարի բացուած է 15 դպրոց (5 բողոք[ական]) 10 ազգ[ային]: Ունին մի գրադարան:

9.- **Արուարձաններ.**— Կազմակերպուած է 5 գիւղ՝ 51 անդամով. ինքնապաշտպանութիւնը զգալի չափով առաջ է գնացել: Այս տարի բացուած է 3 դպրոց:

10.- **Ատելճաւազ.**— Կազմակերպուած է 19 գիւղ: Անդամներու թիւն է 600. ունի Շրջ. վարչ. ինքնապաշտպանութեան գործը նախանձելի է: Բացուած է այս տարի 9 դպրոց. տնտեսական դրութիւնը բաւական լաւ է:

11.- Արճէշ.— Գիւղաքաղաքում կազմակերպուած է 8 խումբ՝ 80 անդամով, ընտրուած կայ ենթակոմիտէ. ամսավճարներէ գանձումը կանոնաւոր է: Ինքնապաշտպանութիւնը լաւ է: Ունի գրադարան ընթերցատուն, ստանում են մի քանի օրինակ «Ազատամարտ»-ունին կանոնաւոր ծխական դպրոց:

12.- Բաշգալէ.— Կազմակերպուած է 10 քաղաքական խումբ՝ մօտ 81 անդամով:

13.- Արաւ.— Կազմակերպուած է 4 քաղ. խումբ՝ 25 անդամով: Բացուած է 2 դպրոց:

14.- Նոր-Դուզ.— Կազմակերպուած է 5 գիւղ՝ 25 անդամով: Ինքնապաշտպանութեան գործը թոյլ է: Տնտեսականը աննախանձելի է:

15.- Այգեստան.— Կազմակերպուածներէ թիւը 325-ի է հասնում: Ունի ենթակոմիտէ, ամսավճարները կանոնաւորապէս վճարում են. ինքնապաշտպանութեան գործը նախանձելի է. մի ճոխ գրադարան-ընթերցարան ունի: Ստանում են թերթեր՝ Փրանս., թուրք., հայ.:

16.- Քաղաք [Վան].— Կազմակերպուածներու թիւը 80-ի կը հասնի. ունի ենթակոմիտէ. ամսավճարները կանոնաւորապէս գանձուում են. ունի գրադարան-ընթերցարան, ստանում է պոլսահայ եւ ռուսահայ թերթեր՝ թուրքերէն եւ հայերէն:

17.- Աւանց.— Կազմակերպուած է 12 քաղ. խումբ. անդամներու թիւը մօտաւորապէս 120 է հասնում. ունին ենթակոմիտէ, ինքնապաշտպանութեան գործը լաւ է. ունեն գրադարան-ընթերցարան. ստանում են հայերէն եւ թուրք. թերթեր:

Պէտք է նկատել, որ կազմակերպական մոտաւոր գանձուել են միայն քաղաքական խմբերից եւ մէկ-երկու շրջանների գիւղացիական միութիւններից, մնացածը թողնուած է աշանը գանձել.— Համայնական շտեմարաններ ունին Ատելճաւազի, Կարճկանի, Հայոց Զորերի, Կաւաշի եւ Կարկառի շրջանները:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1910ի Մարտէն սկսեալ Կ. Կ. ի նկատի ունենալով մի քանի շրջանների կազմալուծուած եւ մի քանիսի բոլորովին չկազմակերպուած դրութիւնը, իր ուժերի ներած չափով աշխատել է կազմակերպել չկազմակերպուած

վայրերը եւ վերակազմել քայքայուած շրջանները: Այդ աշխատանքը որոշ չափով յաջողուել է եւ մասսայի ընդհանուր տրամադրութիւնը հակուած է դէպի մեզ: Ազատ ընկերները՝ կարծիքը զգալի է եղած միշտ:

Կուսակցական պրոպագանտ.— Քաղաքում եւ Այգեստանում շնորհիւ մնալուն ընկերներու, պրոպագանդայի գործը դրուած է աւելի կանոնաւոր հիմքերի վրայ. մեր գաղափարներն ու սկզբունքները կը ծաւալին բոլոր խաւերի մէջ: Սակայն շրջանի մէջ թոյլ է, չհիմնաւորուած եւ կրում է պատահական բնոյթ:

Մամուլ.— Շուտով լոյս կը տեսնի կուսակցական կուսապաշտօնական օրգանը «Աշխատանքը»՝ Կ.Կ. ի ղեկավարութեամբ:

Վասպ. ի թէ՛ ազգային եւ թէ՛ կուլտուրական գործունէութիւնները գտնուում են մեր ազդեցութեան տակ:

Երեսփոխանական եւ քաղաքական ժողովներու եւ Ուսումնական խորհրդի ճնշող մեծամասնութիւնները մեր ընկերներից է: Մեզ յաջողուած է այս դպրոցական գործին աւելի լայն ծաւալ տալ:

Պիտի լսել, որ առհասարակ այսօրինակ գործերը մեզանից խլում են մեր ժամանակի մեծ մասը, կլանում են մեր ուժերը:

Մեր եւ կառավարութեան յարաբերութիւնները.— Ներկայ կուսակալի օրով այդ յարաբերութիւնները աւելի սերտացած, մտերմացած են, եւ այդ պարագան հակաչիռ է եղած կառավարական յետադէմ տարրերին, քիւրտ բէկերի եւ իսլամ տարրի ունեւորները տրամադրութեան: Մեր ուժեղ ազդեցութեան հետեւանքն էր Վասպ. ի շրջանի հողային հարցի բաւարար լուծումը:

Մեր եւ Իթիհատի յարաբերութիւնները.— Մենք աշխատել ենք մօտիկ յարաբերութիւններ ստեղծել իթիհատական մարմնի հետ. բայց չէ յաջողուած այդ, որովհետեւ նա կազմուած է այնպիսի անհատներէ, որոնք բոլորովին անընդունակ են համագործակցական աշխատանքի եւ գուրկ են սկզբունքէ ու նկարագրէ, եւ հէնց այդ պատճառաւ մեր յարաբերութիւնները վերջերս գրեթէ սառել են:

Կազմակերպութեան ազդեցութիւնը ուժեղ է եւ քիւրտի, նամանաւանդ նրա աշխատաւոր մասի վրայ, որի մէջ արդէն նկատուում են արթնացման նշաններ, սակայն չնայելով այս նպաստաւոր տրամադրութեան կուսակցութիւնը՝ ազատ, տրամադրելի ընկերներ չունենալուն պատճառաւ, մինչեւ այժմ չէ օգտուած այդ տրամադրութիւնից:

Վասպ. ի Կ. Կոմիտէի պատգամաւոր՝ ԲԱՅԾ

Փաստ. 1543-24

Բ.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ Հ.Յ.Դ. Զ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Սահմանադրութիւնից քիչ յետոյ, Վասպուրականում կազմակերպութիւնը գնալով աստիճանաբար սկսում է թուլանալ:

Այլեւս չէ նկատուում առաջուայ ոգեւորութիւնը կուսակցական շարքերում. գոհարբութեան ոգին եւս հետզհետէ թուլանում եւ նոյնիսկ շատ վայրերում գերոյի է հաւասարուում. կազմակերպութեան դրամական աղբիւրները ցամաքում եւ շարքերը նօսրանում է. ընդհանուր թուլութիւն եւ անտարբերութիւն է նկատուում չորս կողմ:

Վասպ. Հ.Յ.Դ. Ռայոնական Ժողովներում եւ ընկերական շրջաններում, քանիցս խորհրդակցութեան նիւթ է դարձել այդ երեւոյթը, որտեղ եւ փնտռել ենք պատճառները ու շարժառիթները: Ընկերները հետեւեալ բացատրութիւններն են տուել՝

I- Վասպ. ը իբրեւ յեղափոխական կեդրոնական վայրերից մէկը, միշտ եղել է ամենալարուած դրութեան մէջ: Աշխատել է էնտենսիւ կերպով, սպառել է ահագին էներգիա եւ ուժասպառ եղել՝ թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ նիւթապէս:

Բայց երբ անսպասելիօրէն վրայ հասաւ սահմանադրութիւնը, բնական մի պահանջ էր զգացուում իւրաքանչիւրի մէջ, հանգստանալ, վերաշինել իր աւրուած բոյնը եւ տնտեսութիւնը, վայելել կեանքը եւ պահ մը ապրել իր անհատական կեանքով: Ուրեմն մի բնական ունեւոր մարդկանց հոգու եւ ջղերի մէջ:

II- Դաշնակցական մասսայի քաղաքական դաստիարակութեան պակասը մի կողմից, միւս կողմից տեսնելով նաեւ տարրական կեանքի, գոյքի ապահովութիւն, ճանապարհների ազատութիւն եւայլն, կարծում են որ վերջացաւ ամէն բան եւ թէ իրենց բոլոր նպատակները իրականացել է արդէն: Ուրեմն այլեւս առանձին անելիքներ չունինք, հետեւապէս աւելորդ է կազմակերպուել:

III- Հին ռեժիմի ատեն համարեա իւրաքանչիւր գաւառի մէջ ազատ ընկեր ունէինք, որ կարգաւորում էր գործերը եւ ղեկավարում տեղական մարմիններին եւ ընկերներին. սահմանադրութիւնից յետոյ մենք համարեցէք չենք ունեցել մէկից աւելի ընկեր. իսկ այդ բանը չափազանց խոչոր կերպով ազդել եւ անդրադարձել է մեր գործունէութեան վրայ:

Պէտք է յիշել նաեւ, որ վերջերս սկսել է մասսայի եւ կուսակցական ընկերների հոգեբանութիւնը փոխուել:

Քաղաքի մէջ օրէ օր լայնանում է մեր շարքերը. յետ քաշուած ընկերները նորից մօտենում եւ մտնում են շարքերի մէջ, իսկ նոր երիտասարդութիւնը աւելի մեծ հետաքրքրութեամբ մօտենում է Դաշնակցութեանը: Պատճառը պէտք է փնտռել այն հանգամանքի մէջ որ արդէն բաւական հանգստացան եւ նորից բնական կարիք զգացուեց հասարակական ընդհանուր հարցերով զբաղուել: Երկրորդ՝ անցաւ առաջին գինովութեան թափը եւ հաւատը դէպի նոր օրէնքներն ու կարգերը: Խորը կասկած է թափանցել համարեա հասարակութեան բոլոր խաւերի մէջ, վերջին անապահովութեան եւ ունեւորները շարժումների պատճառաւ:

Ներկայումս համարեցէք [որ] Վասպ. ի գաւառները մեծագոյն մասը կազմակերպուած է. ներքեւ դրուած վիճակացոյցը ցոյց կը տայ, որ մեր կազմակերպուած շարքերի թիւը մի պատկառելի քանակի է հասնում:

Կազմակերպուած գաւառները հետեւեալներն են

1. Այգեստան ենթակոմիտէութիւն	
2. Քաղաքամէջ	>
3. Աւանց գիւղ	>
4. Արճէշ	>
5. Շատախ (Քաղ)	>
6. Գարգառ	>
7. Բաշկալէ	>
8. Բերկրի քաղաքական խմբեր	
9. Հաղբակ	> >
10. Գաւառ	> >
11. Վերին եւ Ներքին Թիմարներ Շրջանային վարչութիւններ	
12. Գիտանի[?]	> >
13. Ալջաւազ	> >
14. Վերին Հայոց Զոր	> >
15. Ներքին Հայոց Զոր	> >
16. Գեաւաշ	> >
17. Սպարկերտ-Ուիզան	> >
18. Կարճկան	> >

Դաշնակ. կազմակ. անդամների թիւը հասնում է մօտ 3500: Քաղաք. խմբերին պատ[կանող] 1000, իսկ մնացածը գիւղացիական միութիւնների:

Մանօթ.- ենթակոմիտէութիւնը կազմում է քաղաք. խմբեր, իսկ Շրջ. վարչութ. գիւղաց. միութիւններ:

Կազմակերպական ձևերը

Վասպ-ում երեք կազմակերպական ձևեր կան.

ա) Քաղաք[ական] խմբեր, գիւղացիական եւ արհեստակ[ցական] միութիւններ: Սահմանադրութիւնից յետոյ Վասպ-ի ղեկավար ընկերները եւ իրաւասու մարմինները գտնուում են ժամանակը հասունացած կազմակերպութիւնը՝ դնելու տնտեսական հիմունքների վրայ:

Այդ ուղղութեամբ կազմում են ժամանակաւոր կանոնադիր եւ ձեռնարկում աշխատանքի: Գիւղ-միութեան եկամուտները կազմում են տարեկանները եւ ցանքերից հաւաքած որոշ տոկոսը: Դրա 20%ը հասնում է Կ. Կոմիտէին, իսկ 80%ը իրենց գանազան կուտորական, տնտեսական եւ քաղաքական ձեռնարկների համար:

Այդ միութիւնների գաղափարը մեծ ընդունելութիւն է գտնում գիւղական շրջաններում, ինչպէս նաեւ ցոյց է տալիս վերեւ բերուած թուերը: Որքան ոգեւորութեամբ որ ընդունւում է այդ միութիւնների գաղափարը, այնքան եւս դժուար է դրա կիրառելը կեանքի մէջ: Խնդիրը նրանումն է, որ գիւղ-միութեան ձեռնարկները գլխաւորապէս գործնական բաներ են, պահանջում է սխտեմաթիք եւ յարատեւ աշխատանք, մեքենայական ճշտապահութիւն աշխատանքի եւ ժամանակի նկատմամբ եւ այլն...: Փոքր անփութութիւն եւ պաղ վերաբերմունք՝ գործը արդէն քայքայուած է...

Որպէսզի կարելի լինի վարել այդ դժուար ձեռնարկները, անհրաժեշտ է որ գիւղացիք ունենան այնքան հասունութիւն որ կարողանան գործը առաջ մղել առանց դրսի օժանդակութեան կամ թէ՛ չէ՛ հարկաւոր է ամէն մի շրջանում ունենալ մի ազատ ընկեր գործին տոն տալու եւ ղեկավարելու համար:

Ի նկատի ունենալով Կ.Կ-ի բիւզջէն, վերջինս բացարձակապէս անկարելի է, իսկ եթէ ընդունիք, որ բիւզջէն պատրաստ է, այն ժամանակ այդքան ազատ ընկերներ ունենալը՝ դժուար է անգամ երեւակայել: Իսկ թէ՛ գիւղացիք ո՞րքան հասունութիւն եւ նախաձեռնութիւն ունին այդ ձեռնարկութիւնները առաջ տանելու՝ բաւական է յիշել որ գիւղ-միութեան ցանքերը կամ այլ ձեռնարկութիւնները չեն համարում իրենցը, այլ թողնում են երեսի վրայ. այդ ցոյց տուեց վերջին երեք տարուայ փորձերը: Որքան որ գիւղ-միութեան գաղափարը գրաւիչ երեւայ եւ շուտ իրականանայ կեանքի մէջ, բայց փաստերը ցոյց են տալիս որ դեռ վաղաժամ է: Ենորհիւ գիւղաց-միութեան՝ մեր կազմակ-աղբիւրը (բիւզջէն) ուղղակի ցամաքած է. թէ՛ ուրիշ վայրերում եւս այդ երեւոյթը կրկնւում է, այն ժամանակ դրամական տագնապի առաջ պիտի գտնուինք:

Քաղաքական խմբեր

Այս ձևերը արդէն 20 տարուայ կեանք ունի կազմակերպ-մէջ: Քաղք-խմբերի անհրաժեշտութիւնը եւ այդ սխտեմի պահպանութիւնը երկու գլխաւոր պատճառներ ունի: Առաջին եւ գլխաւոր պատճառը, մեզ թւում է թէ՛ պէտք է փնտռել Թուրքիոյ անցողական-յեղափոխական դրութեան մէջ: Որքան էլ ենթադրելու լինինք, որ սահմանադրական կարգերի մէջ ենք ապրում եւ կարող ենք այսուհետեւ զբաղուել ստեղծագործական աշխատանքով, երեւոյթները գալիս են ապացուցելու, որ դեռ գերազանցապէս անցողական, անորոշ եւ անակրկականների շրջանում ենք ապրում: Այդ պարագան խորապէս ազդում է կազմակերպուած շարքերի վրայ եւ զբաղեցնում նրան աւելի շուտ քաղաքական, քան թէ տնտեսական խնդիրներով:

Երկրորդ պատճառը պէտք է փնտռել քաղաք-խմբերի պահպանման եւ դիւրին դաստիարակութեան մէջ. մենք շատ աղքատ ենք պատրաստուած ոյժերից եւ զուրկ գոհաբերութիւնից. այս պարագան եւս խոշոր է ուրեմն եւ պէտք է աչքի առաջ ունենալ: Մեզ թւում է թէ՛ ընդհանրապէս կազմակերպական ձևերը արագ փոփոխութեան չպէտք է ենթարկել, դրուած այս կամ այն խաբուսիկ երեւոյթներից: Քաղք-խմբերի գոյութիւնը մեզնում, ամէն տեսակէտից աւելի յարմար ձեւն է երեւում ներկայ պայմաններում: Այս ուղղութեանը այսուհետեւ աւելի ենք ուշադրութիւն դարձնելու: Ապագայ գիւղ[ացիական] միութիւնները ինքնաբերաբար կարելի է զարգացնել քաղաքական խմբերի միջից, տարիների ընթացքում քաղաք-խմբերը ենթարկելով անցեալի մետամորֆոզի:

Արհեստակցական միութիւն

Վասպ-ում, մասնաւորապէս Վանում, արհեստ-միութիւնները դեռ հին ռեժիմի ժամանակ ինքնաբերաբար առաջացել էին: Նրանք ունեցան իրենց դրական արդիւնքները.՝ Վարպետների եւ աշակերտների մէջ ստեղծուեց աւելի մտերմական եւ սերտ յարաբերութիւն. իր ազդեցութիւնը ունեցաւ նաեւ տնտեսականի վրայ: Արհեստ-միութիւնների թողած բարոյական արժէքը աւելի մեծ եւ նկատելի է եղել՝ քան տնտեսականը: Ընդհանրապէս այս տեսակի կազմակերպութիւնները մեր շրջանում առաջ են գալիս որոշ մոմենտներում եւ արագօրէն անցնում:

Այժմ միայն մէկ արհեստակցական միութիւն գոյութիւն ունի կուսակ. հողի վրայ, այն էլ Եատախ Թաղի մէջ:

Որսորդական խմբեր⁴

Պէտք է ասել որ այս կարեւոր խնդիրը լայն ջանքերով ուշադրութեան չէ առնուել: Ներկայ քաղաքական-սահմանադրական կարգերը մտավախութիւն են առաջ բերել ղեկավարող շրջաններում, կարծելով, որ պրոպոկանդիայի առիթ կարող է դառնալ: Զգալով այդ խմբերի չափազանց կարեւորութիւնը, գուցէ ոչ պակաս քան առաջուայ ժամանակներում, փոքր չափով հիմք դրուեց: Որսորդ-խմբերը կը կազմուին վերոյիշեալ երեք կազմակերպուած շրջանների աշխոյժ եւ ուշիմ երիտասարդներից: Այսուհետեւ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել այդ ամենակարեւոր կազմակերպական ձևի վրայ:

**ԻՆՉ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ Է ՈՒՆԵՑԵԼ
Վ ԸՆԴՀ. ԺՈՂ-ԻՑ ԹԵՏՈՑ ՎԱՍՊ-Ի Կ. ԿՈՄԻՏԵՆ**

Հողային հարց

Վասպ-ը մեծ դէպքերից յետոյ չափազանց ենթակայ է եղել հալածանքների. դրան պէտք է վերագրել որ որոշ զաւառներ շատ քիչ բացառութեամբ դատարկուել էր հայերից. նախկին շէն, մեծ եւ հարուստ գիւղերում շինւած է այս կամ այն աղաների քօչկերը, ուր եւ բերել լցրել են շատ քրդեր եւ ղոյամներ: Օր-Արճէշի գաւառում մօտ 20 գիւղ բոլորովին կամ կիսով չափ դատարկուել են: Այլաւազ գաւառի 20 գիւղերից կէսը քրդաբնակ էին դարձել, իսկ բնիկները ցրուել քրդերի մէջ եւ օտար վայրեր: Նոյն վիճակն է ներկայացնում Արճակի Հաջ-բախու եւ այլն շրջանները:

Վասպ-ի Կ.Կ-էն սահմանադրութիւնից յետոյ առանձին ուշադրութիւն է դարձրել այդ ամենակարեւոր խնդրի վրայ: Դեռ մինչեւ Վ Ընդ-Ժ-ը Այլաւազ գաւառը համարեա թէ՛ դատարկուեց քրդերից, քանդուեց նոր շինուած քրդական գիւղերը. հայերը մեծ մասամբ վերադարձան իրենց տները: Նոյն բանը եղաւ նաեւ Արճակի եւ Սարայի շրջաններում: 1910 թ. գարնան յաջողուեցաւ դուրս քշել տալ Արճէշի գաւառի հայ գիւղերը բռնի գրաւողներին, այնպէս որ փախած հայերը սիրտ առած, եկան նորից տիրեցին իրենց հողերին: Յաւաք սրտի պիտի ասել, որ այդ գաւառից բաւական թուով հայեր կան կովկասում եւ այլ տեղեր:

Արճէշ եւ Այլաւազ գաւառներում հողային խնդիրը մասնաւոր կերպարանք է կրում ներկայումս: Այժմ մեր շրջանում կարեւոր հողային խնդիրները մնացել են Հաղբակի եւ Նորդուզ գաւառները, ուր մեծ քանակութեամբ բռնի հողեր են գրաւել քիւրդ աղաները: Մամրտանք եւ խիզան նմանապէս ու Եէյի-Սէյի Ալին եւ ուրիշ մի քանի աղաներ նորանոր գրաւումներ են ա-

նում գանազան միջոցներով (կապալով) որը մասամբ յաջողուում է:

Կ.Կ-էն ամէն կերպ աշխատում է պահպանել ճնշուածների իրաւունքները: Բռնագրաւուած հողերի յետ ստանալը եղել է Կ.Կ-ի անդուլ աշխատանքով, որին եւ պիտի հետեւէ միշտ, չնայած խնդիրը քանի գնում կնճռուուում եւ սպառնալից բնաւորութիւն է ստանում: Զմոռանանք յիշելու նաեւ Մոկս գաւառը — ուր հողերի մեծ մասը պատկանում է մատրասաներին, աղաներին, մասամբ եւ վանքերին: Հողագրաւումը կատարուել է այստեղ շատ բռնի ձևերով — ընդհանրապէս ամբողջ գաւառը տառապում է հողի սակաւութիւնից եւ հողային խնդրի լուծումը չափազանց դժուարութիւնների պիտի հանդիպի, եթէ կառավարութիւնը բացառիկ միջոցների չդիմէ այդ շրջանների համար:

Գրադարան-ընթերցարան

Սահմանադրութիւնից անմիջապէս յետոյ կազմակերպութիւնը անմիջապէս ձեռնարկել է այդ հիմնարկութեանց, ունի բաւականին ճիս գրադարան (մօտ 3000 գիրք): Վերջերս եկամուտները բաւականին պակասել են. Կ. Կ-էն մտածում է բացել նաեւ դրանց կից կլուբ եւ դարձնել կուսակցութեան պաշտօնական հաստատութիւնը: Յոյս ունինք որ մօտ ապագայում, լուրջ հիմքերի վրայ դնելով յիշեալ հաստատութիւնը առանց դժուարութեան կարող է ինքը իր ծախքերը հոգալ: Ընթերցարանը ունի նաեւ թուրքական բաժին, որի ընթերցողների թիւը 10-ից չէ անցնում:

Մամուլ

1910 թ. Փետրուարի Ռայոնական Ժ-ը որոշեց տեղական մամուլ ունենալ. նախ քան թերթի լոյս ընծայելը բաւական ծախքերի տակ ընկանք. դրան պէտք է վերագրել, որ այժմս 150 ոսկի պարտք է ծանրացել վրաներս: Թերթի բաժանորդները շատանում են, թերեւս ոչ արագ կերպով: Թերթի վարչութիւնը հաւատացնում է, որ Ի-րդ տարեշրջանին թերթը կարող է իրեն ապահովել, նրանից յետոյ կը սկսինք պարտքերը մաս-մաս վճարել: Պէտք է ասած որ թերթը պահանջ է դառնում ընթերցողների որոշ խաւերի մէջ. թերթը պահուում է ընկերների գոհաբերութեամբ, այլապէս դժուար կը շարունակէր իր գոյութիւնը:

Եթէ մէկ կողմից թերթը կատարում է որոշ հասարակական եւ կուսակցական դեր, չպէտք է մոռանալ նաեւ որ անուղղակի կերպով ազդում է կուսակցական բիւզջէի վրայ: Այն գոհաբերութիւնները (նիւթական)

4.- Որսորդական խումբ. զինավարժութեան նպատակով կազմուած երիտասարդական խումբեր:

որ գործ է դրուում «Աշխատանք» վրայ, չգոյուլթեան դէպքում հաւանորէն կը գնար այդ դրամները կուսակ- կասան:

Մեզ թուում է, թէ ո՛րքան էլ ասելու լինինք՝ թէ կիսա- պաշտօնական օրգանները պահուում են ոչ կուսակցա- կան, այլ անկախ միջոցներով, բայց եւ այնպէս զգալիօ- րէն ազդում է կուսակցական բիւզջէի վրայ:

Դաշնակցութեան տուն

Նկատելով, որ կուսակցութիւնը ահագին վարձք է տալիս գրադարան-ընթերցարանի, թերթի խմբագրա- տան-մամուլի շէնքերին, միւս կողմից էլ նկատելով, որ Դաշնակցութեան ընդհանուր ժողովների եւ ձեռնարկ- ների համար չունինք մի յարմար հաստատութիւն, որ եւ շարունակ տուժում ենք այդ պատճառով, 1910 Դեկ- 5-ի Ռայոնական Ժ-ը որոշեց ունենալ մի սեփական հաս- տատութիւն, ուր հնարաւոր լինի բաւարարութիւն տալ վերեւ յիշած ձեռնարկներին: Այդ ուղղութեամբ որոշ քայլեր արուած է արդէն,— գնուած է հող, որի դրամի մի մասն է վճարուած: Ի հարկէ դրա ծախսերը ընկնում է դաշնակ[ցական] ընկերների վրայ առանց դիպչելու մեր բիւզջէին:

Հանգանակութիւն

Կովկ[ասի] բանտարկ[եալների] օգտին

Տեղիս Կ. Կ.-էն անցեալ աշնան ձեռնարկեց յիշեալ հանգանակութեան. զանազան պատճառներից դրդու- ւած՝ հանգանակութիւնը կատարուել է միմիայն գիւ- դերում. մինչեւ այժմ հաւաքուել է մօտ 50-80 օսմ. լիրա: Սպասում ենք յարմար առիթի, որ քաղաքի մէջ եւս սկսինք շարունակել այդ հանգանակութիւնը:

Աէիզ բէգի դէմ ուղարկուած խմբեր

Մանդանցի յայտնի Սէիզ-բէգը փախչելով բանտից թուրք ունակցիներնեւրի աջակցութեամբ (զաբթիանե- րին) սպանել է իրեն հետեւող երկու զաբթիաներին: 1910 թ. ձմեռը շատ դիւրին էր նրան ոչնչացնել. նկատելով, որ նա չարիք է դառնալու մեր վիլայէթի գլխին, քանիցս առաջարկեցինք կառավարութեանը, [որ] շարժուի մեր առաջարկած ծրագրով, խոստացանք տալ նաեւ մարդ- կային օժանդակութիւն: Կառավարութիւնը խոստա- ցաւ, բայց գործադրութեան ընկնելիս ծածկեց մեզնից, կամ աւելի շուտ չդիմեց մեր օժանդակութեան: Սէիզը նորէն փախչելով իր ապաստարան գտած վայրից նորից վրէժխնդիր եղաւ. յարձակուելով զաբթիաների վրայ սպանեց նրանցից 2-ը եւ ծանր վիրաւորեց 3-ին: Թէպէտ այնուհետեւ Սէիզին ձեռք բերելը շատ դժուար էր, բայց եւ այնպէս չմերժեցինք կառավարութեան դիմու-

մը. 28 հոգիանոց խումբ ուղարկեցինք Սէիզի յետե- ւից.— դրանց ղեկավարութիւնը յանձնուած էր ընկ- Գրիգորին, իսկ օգնական բուզարացի Սարգսին:

Խումբը չհասաւ իր նպատակին, քանի որ Սէիզը արդէն անցել էր Պարսկաստան: Կառավ. գինուորակա- նութիւնը սառը վերաբերմունք ցոյց տուեց մերոնց, առաջնորդուելով նրանով — որ հայ յեղափոխականնե- րը պիտի անեն այն — ինչ որ իրենք չեն կարողանում: Կառավ. մարդիկը միշտ լուր էին տալիս Սէիզին մե- ընոց ուր լինելու մասին, այնպէս որ 4 ամսուայ ընթաց- քում ո՛չ մի անգամ առիթ չեղաւ իրար հանդիպելու: Տեսնելով, որ հակառակ [են] եւ խաբոււմ են մեզ, ստիպ- ւած եղանք յետ կանչելու խումբը:

Թէեւ մեր ձեռնարկը դրական արդիւնք չտուաւ, բայց եւ այնպէս Սէիզին մեծ ահաբեկութեան մէջ ձգեց. մերոնք երբ վերադարձան Սէիզը չըջում էր այն- տեղ ուր գօրք էր լինում եւ ծաղրում ու հեզնում կառա- վարութեան անկարողութեան վրայ: Ունեցաւ նաեւ իր բարոյական նշանակութիւնը հայ եւ քիւրտ հասարա- կութեան վրայ մերոնց երեւալը:

Մեր յարաբերութիւնը

տեղական կառավարութեան հետ

Վերջին երկու տարիներում, մեր յարաբերութիւնը տեղակ. կառավարութեան հետ բաժանուում է երկու շրջանի: Առաջին շրջանում երբ կուսակալ էր Բէքիր- Սամի-բէյը մեր յարաբերութիւնը աւելի կանոնաւոր եւ բարեկամական էր. թէ նա եւ թէ իր շրջապատը գնահա- տում էր Դաշնակցութեան կարծիքը եւ աշխատում էր օգտուել նրա խորհուրդներին: Նրա օրօք է որ Արճէշի հողային խնդիրը լուծուեց: Կուսակցութիւնը կարեւոր պարագաներով իր ընկերներից մէկին ուղարկում էր որոշ պահանջներով, որը ընդհանրապէս բաւարարու- թիւն էր գտնում: Տեղական ունեւորները հա- մախմբուելով, այնպիսի պայմանների մէջ դրուեցին, որ նա ստիպուած եղաւ հրաժարուելու մեր նահանգից: Հեռացրին նաեւ մի քանի ազատական պաշտօնեաներ: Նոր կուսակալի փոխանորդի գալուց յետոյ մեր յարա- բերութիւնները սկսեցին սառել: Նորը անվարչազէտ, նեղ թրքամուլ մի անձնաւորութիւն է, ազատական տարրերին ղեկավարում է իթթիհատների հրահանգնե- րով. մենք պահում ենք կորեկտ-քաղաքավարի յարաբե- րութիւն, ուրիշ ոչինչ:

Պէտք է ասած, որ ազգային եւ ժողովրդական գանա- զան խնդիրները մենք ներկայացնում ենք տեղական կառավարութեան առաջնորդարանի եւ քաղաք. ժողո- վի միջոցաւ: Իշխանութիւնը ինքը գուցէ լաւ է հասկա- նում, որ մենք կանգնած ենք նրա յետեւը. այդ ձեւը այն լաւ կողմը ունի, որ կառավարութեան հետ չփման, մա- նաւանդ ընդհարման շատ կէտեր չեն լինի, եւ կուսակ-

ցութիւնը ստիպուած չի լինի դիւրութեամբ ընդհար- ւելու կառավարութեան հետ: Միւս կողմից երբ խնդիր- ները կարեւոր են եւ ունին կարեւոր նշանակութիւն, այն ժամանակ մենք երեւան ենք զայիս կուսակցու- թեան անուսով, պաշտպանում առաջնորդարանի ներ- կայացրած պահանջները եւ այդպիսով խնդրին տալիս համազգային բնաւորութիւն:

Դաշնակցութիւնը մեծ համարում ունի թէ տեղա- կան եւ թէ գաւառների կառավարութեան աչքում. նրանք գիտեն որ դա մեծ ոյժ է, որին անկարելի է ան- տես առնել այս կամ այն խնդրի մէջ եւ աշխատում են նրա կարծիքը կամ համաձայնութիւնը առնել:

Դաշնակցութիւնը եւ տեղական իթթիհատը

Դժբախտաբար պիտի յիշել, որ Վանայ իթթիհատի մէջ հաւաքուել են բոլոր յայտնի ոճրագործները եւ ունեւորները տարրերը: Թեւեւակաթով⁵ դուրս վաճառուած պետական պաշտօնեաների 95%ը պատկանում է այդ կառավարութեան. կան եւ երիտասարդ լաւ թուրքեր, որոնք դժբախտաբար ոչ միայն չեն կարողանում ազդել եւ ղեկավարել իրենց կազմակերպուած մասսային, այլ ընդհակառակը իրենք են ղեկավարում նրանցից:

Դաշնակցութեան դէմ տարածայնուող պրոպա- կասիոն լուրերը ծնունդ են մեծ մասամբ նրանց կլու- բից: Այստեղի գինուորականները, որ ընդհանուր առ- մամբ իթթիհատականներ են, չեն քաշուում, հրապարա- կաւ այստեղ ու այնտեղ խօսել, որ դաշնակցականները զաղտնի ծրագիր, միտումներ ունին, որ նրանք դաւա- դիրներ են, ցանկանում են թուրքիան քանդել եւայլն:

Այդ խոր թունաւորումը դէպի Դաշնակցութիւնը, պէտք է պատճառաբանել իթթիհատի որակից. լինելով մեծ մասամբ ունեւորներ եւ նախկին ոճրագործ տար- րեր, թունաւորում են անմիջապէս ամէն նոր եկողի: Ահա թէ ի՞նչն է պատճառը եւ չնայած մեր բարի ցան- կութիւններին համերաշխ գործել նրանց հետ, չէ յաջող- ւում այս դժբախտ եւ անակնկալներով լի անկիւնում: Մեր յարաբերութիւնները տեւում են 2-4 շաբաթ եւ ընդհատում ամբողջ ամիսներով: Ներկայ վայրկեա- նում մեր յարաբերութիւնները աւելի քան սառն են: Օղը ապականուել է. ինչ որ կասկածելի բաներ են երե- ւում միջնորդների մէջ, եւ այդ բոլորը պէտք է վերագրել այդ որջիւն, որտեղից միայն շար մտքեր են տարածուում:

Մինչեւ որ մի կարող եւ լուրջ ղեկավար չգայ այս եր- կիրը, իթթիհատի կենտրոնից ուղարկուած, դժուար թէ որեւէ բան [պէտք է] սպասել այստեղի կլուբից: Թէպէ- տեւ ովքեր էլ գան դժուար թէ կարողանան մաքրագոր- ծել տեղի կլուբը, բայց գէթ անձնապէս Դաշնակցու- թեան հետ լաւ յարաբերութիւն պահելով, թերեւս հնա- րաւոր լինի այդ ձգտուած տրամադրութեանը վերջ տալ:

Ռամկավարներ եւ Հնչակեաններ

Այս երկու խմբակցութիւնները վաղուց ի վեր համե- րաշխ էին գործում իրար հետ: Քանիցս անգամ փորձ ենք արել, որ ընդհանուր ազգային բնոյթ ունեցող խըն- դիրներում միասին գործենք, անկարելի է եղել: Պարզ կերպով երեւում է որ նրանք իրենց գոյութեան գրաւա- կանը համարում են Դաշնակցութեան իւրաքանչիւր ձեռնարկին հակառակելու մէջ: Միայն Յուլիս 10-ի Սահմանադրութեան տարեդարձի օրը մի անսպասելի արագութեամբ համերաշխեցինք երեք կուսակցութիւն- ներս եւ միասին տօնեցինք: Նոյն համերաշխութիւնը նկատուեց նաեւ առաջնորդի Վան մտնելու օրը: Իրար յաջորդող այդ երկու օրուայ համերաշխութիւնը մի ու- ժեղ ցոյց էր ընդդէմ կառավարութեան եւ իթթիհատին, որոնք ցանկանում էին չճանաչել կամ անտեսել Հայ քա- ղաք. կուսակցութիւնները:

Այս երկու կուսակցութիւնները մեծ մասամբ սահ- մանափակուած են Վան քաղաքում. ռամկավարների մասսան կազմում են նախկին արմենականները եւ ա- ղայական դասը: Անուղղելի հակառակորդներ են Դաշ- նակցութեան: Հնչակեանները մեծ թիւ չեն կազմում եւ հետեւում են ընդհանրապէս ռամկավարներին:

Միջեղային յարաբերութիւն.

Ա.- Թուրքեր

Մեր նահանգում թուրքերը չափազանց քիչ տոկոս են կազմում . մօտ 25-30 հազար: Լուրջ, հասկացող դա- սի բացակայութեան պատճառով յայտնի հարուստներ եւ աղաներն են համարում նրանց ղեկավարները. վեր- ջիններս մտած լինելով իթթիհատի մէջ, իրենց մասսա- ներին աշխատում են մշտական հակառակութեան եւ թշնամութեան մէջ պահել Դաշնակցութեան եւ հայերի հետ: Թէպէտ կան մի քանի լաւ մաքուր անհատներ, ո- րոնք տարիներ շարունակ մեզ հետ լաւ յարաբերու- թեան մէջ են եղել, բայց դժբախտաբար նրանց ազդե- ցութեան շրջանը շատ նեղ է, եւ առանձնապէս չեն կա- րողանում ազդել իրենց մասսաների վրայ: Իրենք էլ հա- մարեա կղզիացած են մնացել եւ հակառակորդների կողմից համարում են գեաւուրներ:

Բ.- Քիւրտեր

Սրանք բաժանուում են երկու մասի՝ աղաների եւ աշ- խատաւոր գիւղացիների: Թէեւ աղաները աշխատում են Դաշնակցութեան հետ սիրալիր յարաբերութիւններ ստեղծել եւ բարեկամ ցոյց տալ իրենց, բայց զաղտնա-

5.- Թեւեւակաթ (վարչական) բարեկարգում:

պէս թուանաւորում են ժողովրդին հայերի վերաբերմամբ: Այս դասը այժմ շատ կասկածելի խմորման մէջ է. յամենայն դէպս լաւ բաներ չենք սպասում:

Աշխատաւոր մասը աւելի լաւ վերաբերմունք ունի դէպի Դաշնակցութիւնը, որու միջոցաւ գուցէ եւ դէպի հայերը:

Սկիզբները շատ աւելի խանդավառութեամբ էին մօտենում դէպի Դաշնակցութիւնը, յուսալով որ Դաշնակցութիւնը պաշտպան պիտի կանգնէ իրենց անիրաւուած դատին: Բայց տեսնելով որ առանձին օգուտ չստացան, նախկին տաք ու յատուկ վերաբերմունքը պաղեց, թուլացաւ: Պակաս դեր չէ կատարել թուրք ռէակտիւնի տարրը եւ քիւրդ աղայութիւնը այդ վերաբերմունքի փոփոխման մէջ, որոնք շատ գիտակցաբար աշխատում են նրանց հետո պահել հայերից եւ մեզնից: Եթէ Դաշնակցութիւնը հոգատար կերպով գործէ նրանց մէջ, կասկած չկայ, որ կարճ ժամանակում մի որոշ մասը կը հակուէր մեր կողմը:

Գ.- Ասորիներ

Վանայ շրջանում շատ քիչ են, լաւ են հայերի հետ, դիմում են Դաշնակցութեան իրենց շատ գործերի համար: Շատ են Բաշկալի միւթէսարիֆութեան մէջ, Ղուամերիկի մօտ, Դիար-տուխում: Լեռնային երկրի մէջ ապրելով, կիսանկախ կեանք են վարում: Դժբախտաբար երբեք էլ չէ յաջողուել մարդ ուղարկել նրանց մէջ եւ բարեկամական յարաբերութիւն ստեղծել:

Դ.- Եգիպտիներ

Քիչ են մեր շրջանում, սիրալիր դէպի հայերը եւ լաւ, Դաշնակցութեան վերաբերմամբ: Կազմակերպեցինք 7-8 գիւղ, բայց շարունակաբար մարդ չկարողացանք ուղարկել որը եւ դրական արդիւնքներ չտուեց այդ կազմակերպումը: Նրանք շատ աւելի տրամադրելի տարր են:

Կուլտուրական ձեռնարկներ

Վասպուրականում Դաշնակցութիւնը ըստ V Ընդհ. Ժ-ի որոշման, իբրեւ կուսակցութիւն, պաշտօնապէս չէ մասնակցել ազգային կրթական հաստատութիւններին: Բայց թէ՛ ղեկավար ընկերները, եւ թէ՛ դաշնակցական անհատները, ամենալայն աշխատանք են թափել այդ գործերի մէջ: Թէ՛ Վանայ առաջնորդարանի թեմում եւ թէ՛ Աղթամարի շրջանում մասնակցելով երեսփոխընտրութիւններին, երկու վայրերում էլ ջախջախեց մեծամասնութիւն են կազմել, այնպէս որ Աղթամարի քաղաք ժողովը ընտրուած է դաշնակցականներից, իսկ Վանի Քաղաք Ժ-ը դաշնակցականներից եւ համակիր-

ներից ու ազատական տարրերից: Աղթամարի թեմում, բացուած է 49 վարժարան 58 ուսուցիչներով. պարտ են բացառապէս դաշնակցական ընկերներին:

Վանի թեմի 28-30 դպրոցների բացումը մեծ մասամբ նոյն աշխատանքով է առաջ եկել: Դաշնակցական ընկերների ձգտումն է եղել ցաք ու ցրիւ եղած հաստատութիւնները միացնել եւ կազմել մի ուժեղ ազգային իշխանութիւն: Աղթամարի թեմում այդ բանը յաջողւել է. յոյս ունինք, որ նոյն բանը յաջողեցնենք Վանի թեմում: Չանազան ազգային խնդիրներ, որոնցով զբաղուել է կուսակցութիւնը՝ ինչպէս անապահովութեան խնդիր, հողային եւ դպրոցական հարցեր, աշխատել է Ազգ. վարչութիւնների միջոցաւ կատարել: Պէտք է ասած, որ կուսակցութեան եւ Ազգ. իշխանութեան ներդաշնակ աշխատանքը եւ գործակցութիւնը տալիս է իր զգալի արդիւնքները: Ընդհանուր ազգային բնաւորութիւն կրող համարեա թէ բոլոր հարցերում դիմել ենք նրանց օժանդակութեան:

Գործելով համերաշխ Ազգ. իշխանութեան հետ աշխատանքի բաժանման սզկբունքով, շատ հարցեր կան որ նրանք կը վարեն եւ այդպիսով կուսակցութեանը հնարաւորութիւն կը տրուի զբաղուելու իր ներքին եւ այլ աշխատանքներով:

Ինքնապաշտպանութիւն

Աւելորդ ենք համարում խօսել այն ընդհ. անապահովութեան մասին, որ նկատուում է Թուրքիայում, մասնաւորապէս մեր վիլայէթում: Ռէակտիւն տարրերը աշխատում են զանազան ուղղութեամբ եւ տարբեր նկատումներով: Անհաշտ, թուրք ազդեցիկները, յիշելով անցեալի երանելի օրերը, անկարող են տանել ներկայ ազատ կարգերը եւ այն իբր թէ հաւասարութիւնները որ գոյութիւնի ունի Թուրքիայում: Քիւրդ աղաները տեսնում են ակնյայտնի կերպով իրենց սանձարձակ իշխանութեան անկումը: Արդուլ Ռզախները կաշառուած ուս կառավարութիւնից ցանկանում են քրդական շարժումներ առաջացնել. այդ բոլորի վրայ աւելացրէք նաեւ պարսկական ռէակտիւն շարժումները, որ անմիջապէս անդրադառնում է սահմանակից գաւառների ժողովրդեան տրամադրութեան վրայ, պարզ կը լինի այն ընդհանուր անապահով վիճակը, որին մատնուած է Վասպուրականը: 7-8 աւազակախմբեր ահաբեկել են ամբողջ վիլայէթը, կառավարութիւնը անզօր է որեւէ բան անելու: Բոլոր ուժեղ տարրերը թեւ ու թիկունք են աւազակային խմբերին:

Այս ընդհ. անապահովութեան դէմ կուսակցութիւնը շատ քիչ, համարեա թէ ոչինչ չէ արել ինքնապաշտպանութեան տեսակէտից: Ժողովուրդը նկատելով մուայլ օրերի նախանշանները, դիմում է մեզ, բայց մենք անկարող ենք որեւէ բան անել: Վաճառականների բերածը

չատ ջնջին եւ այն էլ սոսկալի սուղ. վերջիններս աւելի շատ վաճառում են հակառակորդներին, քանի որ նրանք աւելի թանգ են գնում:

Վերջերս մարմինը եկաւ այն եզրակացութեան, որ միակ էլքը Ջիֆոնեան⁸ ստեղծելն է, որպէսզի հնարաւոր լինի շարունակաբար մատակարարել, եւ արժան կերպով հայթայթել: Դժբախտաբար անկարելի է լինում տեղական ընկերներից միջոցներ ստեղծել. մեր շարքերը աղքատ են եւ անընդունակ մի այդպիսի գումար տրամադիր անելու կուսակցութեան, շրջանառութեան մէջ դնելու համար:

VI Ընդ. Ժ-ին է մնում այդ ուղղութեամբ մտածելու. ինչ որ գլխաւորն է՝ հարկաւոր է շուտ եւ արագ անել: Մենք շատ ժամանակ կորցրինք, ու թերեւս արդէն ուշացել ենք: Ժողովրդի ինքնապաշտպանութիւնը աշխատեցինք ապահովել կառավարութեան միջոցաւ. սկզբունքը անցաւ բայց երբեք էլ չիրականացաւ. ընդ-

- 6. Զիֆոն կամ Զիֆոնեան՝ գէօքի հայթայթման յատուկ մարմին:
- 7. Դուրան-Բարձրաւաճալը Տարօն – Սասունցի, Վրէժստանի՝ Ատրպատական-Պարսկաստանը:

հակառակը միայն մի քանի մահմետական գիւղեր օգտուեցին մեր անցկացրած առաջարկից: Թէ՛ կառավարութիւնը ինքը տրամադիր չէ հայի ձեռքը գէնք տալու, որքան վտանգաւոր վայրում էլ նա ապրելու լինի, եւ թէ հայ ժողովուրդը կասկածում է կառավարութեան վրայ եւ չէ ցանկանում նրանից ինքնապաշտպանութեան միջոցներ խնդրել:

VI Ընդհ. Ժ-ի գլխաւոր զբաղմունքներից մէկը պիտի լինի այս կարեւոր խնդիրը, այլապէս մեր տարիների աշխատանքը կարծես թէ զուր պէտք է անցնի. մի ռէակտիւն շարժում էլի նորից հայ ժողովուրդն է որ խորապէս պէտք է տուժէ: Ատանան մեզ կենդանի օրինակ պիտի լինի: Մենք կանգնած ենք մի չափազանց տխուր երեւոյթի առաջ:

Յարաբերութիւններ մարմինների հետ

Շարունակաբար յարաբերութեան մէջ ենք եղել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների հետ, Դուրան-Բարձր(աւանդակ)ի, Դիարբէքիւրի եւ Վրէժստանի՝ Կ.Կ.ի հետ:

Ի դիմաց

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵՒ

ՇԱՄԻԼ
ԳՐԻԳՈՐ

ԱՐՄԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ[?]

ԺԻՐԱՅՐ

Գ.- ՎԱՆԱՅ ՍԱՐԳԻՍԷՆ ԵՐԵՔ ՆԱՄԱԿ ԲԻՒՐՈՆԵՐՈՒՆ

Փաստ. 671-15

Գ 1.- Հ.Յ.Գ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Վան, Փեյր. 1911

Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ՝

Մարտի 31-ը՝ մեզ համար մի բան պարզեց, որ թուրք հասարակութիւնը դեռեւս չէ հասունացած քաղաքականապէս, եւ չկան գիտակից ուրիշ քաղաքական կուսակցութիւններ, որոնք պատրաստ կը լինէին ամէն գնով սահմանադրութեան պաշտպանութեան համար աշխատելու. եւ որ կամայական մենք պէտք է իթթիհատին ամէն կերպ աջակցենք, իբրեւ միակ սահմանադրական կուսակցութիւն:

«Համաձայնութիւն» կայացնելով նրանց հետ, ի հարկէ մենք այն կարծիքին չէինք թէ նոքա բոլոր կէտերում կանգնած կը լինեն մեր տեսակէտների վրայ. մեզ աւելի զբաղեցնում էր այն, որ սահմանադրութիւնը վտանգի մէջ գտնուելիս [?], պիտի դաշնակցինք, որպէսզի երկուսիս էլ հաւասարապէս շահագրգռող քաղաքական այդ ձեւեր պահպանուին: Եւ դրան պէտք է վերագրել, թէ ինչո՞ւ Ադանայի աղէտի պէս մի խոշոր անարդարութեան առաջ մենք ունէ խոշոր քայլ չթող տուինք մեզ, եւ նոյնիսկ անմեղ հայերին կախաղան բարձրացնելիս, ստիպուած եղանք լուրջ, որպէսզի երիտասարդ ռեժիմի առաջ նորանոր բարդութիւններ չդնենք:

Այդ բոլորը հասկանալի էր այն ատեն, անհրաժեշտ, հրամայողական. մենք կատարեցինք ընդհանուր պետական տեսակէտից մեր պարտականութիւնը եւ ոչ ոք կարող է այդ մասին մեզ ունէ կշտամբանք թող տալ:

Այնուհետեւ երեւոյթները արագօրէն փոխուում են եւ մենք մինչեւ հիմա մեր ուղղութեան մէջ ունէ նորութիւն չենք մտցրել:

Մեզ համար պարզուեց, որ իթթիհատը կանգնած է «համիսլամական» ճանապարհի վրայ. այդ բանը իմացուեց ոչ միայն «Ազատամարտի» արտասպումից, որը իթթիհատը չհերքեց, այլ մի դոկումենտից եւս, որը մենք տեսանք մեր աչքով. դա մի ստացական էր, տրուած մի հոգեւոր «առաքեալի» կողմից, ուղարկուած Հնդկաստան համիսլամական պրոպագանդի համար: Այդ փաստը անժխտելի է. բացի այդ, հաւաստի աղբիւրից էլ տեղեկացանք այդ գաղափարի մանրամասնութիւնները: 2) Թուրք տարրի գերիշխանութեան գաղափարը, որը բխում է երիտասարդ թուրքերի բոլոր գործողութիւններից. մուհաջիրական քաղաքականութիւնը՝ համիսլամական եւ թուրք տարրի տիրապետու-

թեան գործնական արտայայտութիւնն է. նոքա որոշել են այսուհետեւ Մակեդոնիա գալիք գաղթականները բերել Կովկասից, իբրեւ թուրք ցեղ, եւ իբրեւ այդպիսին աւելի վստահելի: Դժբախտութիւնը նրանում է, որ իւրաքանչիւր տարի քուէարկուող բիւզժէն այդ նպատակի համար մեր պատգամաւորների կողմից ընդունում է լուրթանք, որը հակասական է մեր ուղղութեան, պետականութեան մեր ըմբռնումներին, եւ որ գլխաւորն է՝ ազգային գաղափարին, որի ամենաջատարով պաշտպաններն ենք մենք: Դուք պէտք է լաւ իմանաք, որ մեր ազգային շահերի պաշտպանութիւնը ոչ թէ միայն պէտք է պաշտպանուի այն դէպքում, երբ հարուածը ուղղակի մեզ է հասցւում, այլ եւ այն բոլոր դէպքերում, երբ կատարուում է նաեւ անուղղակի. այդպիսիների կարգում է պատկանում Ռուսներին տեղաւորուող մուհաջիրների խնդիրը: Այսօր նրանց են ուժասպառ անում այդ ձեւով, վաղը նոյնպէս պէտք է անեն եւ մեր վերաբերմամբ. թէպէտեւ մոռանալու չէք, որ այդ խնդիրը մեր գլխին աւելի էր ծանրացած հին ռեժիմի ատեն, եւ քիչ էր մնացել ոչնչացման տանէր. իսկ ներկայումս ե՛ւ Մանազկերտ ե՛ւ Բուլանըխ երկու գիւղեր են հաստատել «հայերի հողերի վրայ»:

Մեր պատգամաւորները պարտաւոր են նման դէպքերում ուժգնօրէն բողոքելու, թէ այդ գումարները անհրաժեշտ են ներքին բարեկարգութեան համար ծախսել, հին բնիկ ժողովրդների կարիքները հոգալ, եւ ոչ թէ նոր «ցաւեր» մեր գլխին աւելացնել, աղքատներով լեցուած մեր երկիրը:

3) Հողային խնդիրը ամենայրօղն է թէ ընդհանուր պետական եւ թէ ազգային տեսակէտից: Իթթիհատը, որ նոյնն է կառավարութիւնը, մեզ շարունակական կերպով իԱԲՈՒԿ է բացարձակօրէն մեր իրաւունքը տալով մահմետական աւատակետներին: Մենք չգիտենք որ Արեւմտ. Բիւրոն եւ մեր պատգամաւորները այդ մասին ի՞նչ կտրուկ միջոցներ են ձեռք առել: Մենք ուղարկել ենք մեր պատգամաւորները Պոլիս, որպէսզի իբրեւ արթուն պահապաններ հսկեն մեր ազգային իրաւանց վրայ. կատարուում է ամենամեծ անարդարութիւնը բարեկամ համարուող կառավարութեան (Իթթիհատի)

8.- Մարտ 31 – ակնարկութիւն 1909 թ. Մարտ 31ին Սուլթան Ապտիւլ Գամիտի կողմէ սահմանադրական վարչակարգը տապալելու փորձին:
9.- Մուհաջիրական քաղաքականութիւն – այսինքն քրքրացող գաղթականներու բնակեցման ծրագիր հայկական նահանգներում մէջ:

կողմից: Փաստեր կան, որ Բուլանըխից, ինչպէս եւ Հաղթակից հայ գաղթականներից շատեր նորից ընտանիքով վերադարձան իրենց եկած տեղերը, իսկ բազմաթիւ գաղթականներ ստիպուած են մնալ Պարսկաստան—Ռուսաստան, չհաւատալով, որ տէր պէտք է դառնան իրենց հողերին: Վերադարձողներից շատերն էլ առանց լծկանի կամ սերմացուի եւ ծածկուած պատրասարանի են մնացել: Ի՞նչ է արուած այդ ուղղութեամբ, եւ կառավարութիւնը ի՞նչ դրական քայլեր է արել այդ անարդարութիւնը վերացնելու:

4) Դպրոցական խնդիրը եթէ այժմ յաջող չկարգադրուեց, այսուհետեւ տասնեակ տարիներ պէտք է ուշանայ: Մեր կարծիքն է, առանց երկդիմի քաղաքականութեան եւ փափկանկատութիւնների, պարզ կերպով պէտք է դնել. ա- իրաւունք չունին միջամուխ լինելու մեր կուլտուրական ներքին կեանքին, որը ամէն ըրպէ կատարուում է լուսաւորութեան նախարարութեան գաղտնի հրամանների համաձայն. բ- կրթական բիւզժէի մեզ հասնելիք մասը պէտք է տրուի հայ առաջնորդարաններին, որը ըստ կարիքի եւ յարմարութեան կը դասաւորի, եւ կ'աշխատի կառավարութեան ի գիտութիւն:

5) Ինչո՞ւ չի պահպանուում կառավարութեան պաշտօնէութեան մէջ ազգային համեմատական սիստեմը, եւ չպահպանուելուց զատ ի՞նչ իրաւունքով հայ «մուսուլմանները»¹⁰ այլեւս գոյութիւն չունեն. այդ մի քայլ էր կառավարութիւնը օսմանացնելու, այն ինչ այժմ գնում ենք դէպի «թուրքականութիւնը»:

Ինչպէս անցեալ նամակներում էլ յիշել ենք, մեզ թուում է թէ ձեռք անձնական «մօտիկ» յարաբերութիւնները սկսել են ծառայել ակամայօրէն տիրող կուսակցութեան շահերին, քան թէ մեր կուսակցական տեսակէտներին եւ ազգային իրաւանց. նոքա բաւարարութիւն են տալիս ձեռք բոլորովին երկրորդական խնդիրներում, իսկ կարեւորները, հակառակը ձգձգում, մի կողմն են դնում, իսկ գաղտնի հրահանգներով էլ իրենց ուզածները թելադրում գաւառների վարչութիւններին:

Դուք պարելով հեռու հայրենիքի հողից, եւ ազգային տրամադրութիւններից, տարուած էք աւելի շուտ «պոլսական» խնդիրներով, քան բուն գաւառի, որը մեր «հոլութիւնը», մեր կեանքն է կազմում: Դժգոհութիւնը գնալով աճում է թէ ժողովրդական խաւերի եւ թէ կուսակցական մարմինների մէջ: Երկար խորհրդածելուց յետոյ եկանք այն եզրակացութեան, որ վերոյիշեալ հակա խնդիրներին համար մի անգամ եւս պէտք է խօսել «Իթթիհատի»—կառավարութեան հետ. այդ նոյն խնդիրները պէտք է դնել նաեւ պարլամենտում. եթէ բաւարարութիւն չտուին, մեր պատգամաւորները պարտաւոր են ուղղակի հեռանալու պարլամենտից, յայտարարելով նոյն տեղում որ գալիք բոլոր դժբախտութիւնների մեղքը գցում ենք ձեռք վրէժն: Չարժէ գործակցել մի

կառավարութեան կամ կուսակցութեան, որը սահմանադրութեան անուշով է ցանկանում այժմ էլ հարուածել մեր ազգային իրաւանց եւ գոյութեան: Սա մեր կարծիքն է: Ձեզ է մնում լուրջ կերպով անդրադառնաք իրական կացութեան վրայ, եւ ճշդէք ձեր վերաբերմունքը եւ դիրքը:

6) Բիթլիսի վիլայէթի եւ մասնաւորապէս Մուշ-Բուլանըխ սկսուած հալածանքները եւ խուզարկութիւնները մեր ազգային-կրթական գործի շուրջը սկսած, պէտք է պահանջ դրուի վերջացնելու: Բոլոր յայտնի դաշնակցական ընկերները ստիպուած պէտք է լինեն փախստական դառնալ կառավարութեան այդ վերաբերմունքի պատճառով: Ի՞նչ է, մենք ապրում ենք սահմանադրական մի շրջանում, թէ հին ռեժիմի ատեն: Մենք քանիցս ասել եւ նոյնը կրկնում ենք: Գարմէնի (Սեմալցի Մանուկի, Կորիւնի եւ միւսների) խնդիրը զուտ անձնական մի խնդիր չէ, այլ ազգային եւ կուսակցական: Դաշնակցութիւնը սահմանադրութիւնից յետոյ իր ամբողջ թափով նետուել էր կրթական գործի մէջ: Դպրոցական տուրքերը պատրուակ են դարձրել թէ գէնքի դրամ է հաւաքել: Սուտ եւ կեղծ վկաներով մարդկանց դատարան են քաշում: Եթէ առաջուկ կառավարական բաշխողով քաղաքականութիւնը այժմ էլ պէտք է շարունակուի Անատոլիայում, անկարելի է որ խաղաղութիւնը շատ երկարատեւ լինի այս երկրում: Դիմումը պէտք է լինի արագ եւ նոյնպէս կտրուկ: Այդ բոլոր խնդիրները պէտք է դնել մի անգամից, եւ պահանջել բաւարարութիւն կարծ ժամանակում:

Արեւմտեան Բիւրոն ինչպէս եւ մասնաւորապէս մեր պատգամաւորները պարտաւոր են կենդանի կապ ունենալ գաւառի մարմինների հետ: Պոլսի ընկերները պէտք է արձագանգ լինեն գաւառի ցաւերին եւ մեր ազգային իրական պահանջներին. եւ այդ կարելի է, թէ խորհրդակցութեամբ կարեւորագոյն խնդիրների համար գաւառի, եւ թէ իրենց ընտրող մարմինների հետ: Այն ինչ մենք բացարձակապէս չգիտենք թէ դուք ի՞նչ խորհրդակցութիւններ էք ունենում ձեր մէջ, ի՞նչ տեսակ յարաբերութեան մէջ էք կառավարութեան եւ իթթիհատի հետ. ձեր գրածներում շատ-շատ կ'ասէք «սիրալիր» յարաբերութիւններ ունենք: Այդ սիրալիր խօսքը մեզ բաւական չէ, եւ պէտք է խնդրենք աւելի մանրամասն գրէիք մեզ, մասնաւորապէս մեր պատգամաւորի պարտականութիւնը՝ աւելի մանրամասն եւ ներքին կապ պահել մեզ հետ:

7) Քաղաքական մթնոլորտը գնալով ծանրանում է: Գարնանը իսկի լաւ բաներ չենք սպասում ընդհանուր Տաճկահայաստանում: Կասկած չկայ որ ունէ աղէտի դէպքում մենք պէտք է տուժողը լինենք: Ի՞նչ էք մտածել այդ մասին եւ ի՞նչ պէտք է լինի մեր դիրքը նման

10.- Սուլաիմ – օգնական քննիչ:

պարագաներում: Ահա այն ամենակարեւոր խնդիրը, որը պէտք է զբաղեցնի այժմ մեր բոլոր ընկերներին եւ մարմիններին: Այստեղ էլ միջոցառում չատ լաւ չի երեւում: Սէյիդ բէյը օրէցօր ուժեղանում է. 7 հոգին դառաւ 52. գարնան երեւի 200-ի էլ հասնի: Կատարում է ակնյայտնի ասպատակութիւններ. հաւաքում է մեծագումար դրամներ քրդերից, եւ նոյնիսկ տուրք: Յայտարարել է կոիւ կառավարութեան դէմ: Ամբողջ վիլայէթի մէջ դաւթարտարը եւ փոլիս միւստիլին, որ անկեղծօրէն ցանկանում են բռնել, բայց զինուորականութիւնը հարկաւոր կերպով չչարժուելուց զատ, չի ամաչում ա-

սել հրապարակաւ թէ դաւթարտարը այդ բոլորը անում է կուսակալ դառնալու համար:

Մինչեւ այժմ հայերին ակնյայտնի կերպով բան չէ արել. հաւանօրէն գարնան դառնայ նաեւ հայերի դէմ:

Անհրաժեշտ է մի լաւ կուսակալի անմիջական առաքումը: Այժմ համարեա թէ վասպուրականում կառավարութիւն չկայ: Վերոյիշեալ հարցերին աշխատեցէք շուտ պատասխանել: Իրերը արագօրէն կը գահավիժեն եւ մենք ենք որ կը մնանք տակը:

[Վասպուրականի Կեդր. Կոմիտէ ՇԱՄԻԼ]¹¹

Փաստ. 671-59

Գ 2.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Անցեալ փոստային մենք ձեզ գրեցինք, որ ամենագլխաւոր եւ հական խնդիրներով մեր Պոլսոյ ընկերները աւելի քիչ են զբաղւում, քան թէ աննշան, երկրորդականներով: Ընկերները նորից խորհրդակցութիւններ կատարեցին եւ դրին հետեւեալ խնդիրները Արեւմտեան Բիւրոյի եւ մեր պատգամաւորների ուշադրութեան:

1) Հողային. 2) Դպրոցական. 3) Մուհաջիւններ, որոնք սպառնում են Ռուսիայից յետոյ, ուղղուել դէպի Անատոլիա եւ հայկական վայրեր. մենք այն կարծիքին ենք, որ պարլամենտում այդ քաղաքականութեան դէմ ուժեղ արշաւանք պէտք է սկսել, որպէսզի մի անգամ ընդ միշտ դադրի այդ ուղղութիւնը: 4) Կառավարական պաշտօնէութեան մէջ պահպանել ազգային ներկայացուցչական սիստեմը: 5) Քրիստոնեայ մուսուլմանների խնդիր:

Ոչ մի կասկած, որ Իթթիհատը ոչ միայն համիլամական է, այլեւ նրա ամբողջ գործունէութեան ընթացքում կարմիր գծով անցնում է թուրք տարրի գերիշխանութեան գաղափարը. եւ դորան պէտք է վերագրել, որ զանազան երկրորդական խնդիրներ հէնց իրենք են յարուցանում մեր դէմ գաւառներում, որպէսզի մենք զբաղուենք դորանով, իրենք էլ ի հարկէ բաւարարութիւն կը տան այդպիսիներին, որպէսզի գլխաւորները թողնենք, կամ նոյնիսկ հնարաւորութիւն չունենանք սրանց մասին մտածելու: Մեզ թւում է թէ ժամանակը արդէն հասել է, որպէսզի մենք վերանայինք Իթթիհատ-Դաշնակցութիւն համաձայնութիւնը, իմանալու համար ի՞նչ վաստակեցինք եւ ի՞նչ կորցրինք: Երեւոյթները եւ պարագաները յստակօրէն փոփո-

խութեան են ենթարկւում, իսկ մենք կարծես թէ շարժւում ենք տրադիցիայով. դժգոհութիւնը եւ անվստահութիւնը գնալով աճում է ոչ միայն հասարակութեան զանազան խաւերի մէջ դէպի Իթթիհատը-կառավարութիւնը, այլեւ որ ցաւալին է նաեւ կազմակերպական դեկավար ընկերների մէջ: Մենք որ ամենաջերմ պաշտպանն ենք եղել երիտասարդ թուրքերի հետ գործել համաձայնութեամբ, այժմ սկսել ենք տատանուել, համոզուած լինելով որ նոքա մեր բարեկամութիւնը ի չարն են գործ դնում. եւ ինչ որ գլխաւորն է, ներկայ պարագայում, երբ ամէն բան նոր է դրւում, ցանկանում են մեզ քննադատել, կա՛մ մեր ազգային իրաւունքները սահմանափակել, կա՛մ թէ բաւարարութիւն չտալ այնպիսի այրող եւ անյետաձգելի խնդիրների, որոնք մեզ համար հական նշանակութիւն ունին, ինչպէս դպրոցականը, հողայինը եւ այլն:

Մենք պահանջ ենք դրել, որ Իթթիհատի հետ այդ խնդիրների համար խօսուի կտրուկ, եւ կարճ ժամանակում, որպէսզի մենք իմանանք մեր բռնելիք դիրքը:

Պոլսոյ ընկերները ապրելով հայրենի հողից եւ ժողովրդից հեռու, տարւում են այլ հոգեբանութեամբ եւ տրամադրութեամբ: Եւ ի՞նչ որ գլխաւորն է, երբեք մենք չենք իմանում թէ ընկերները այնտեղ ի՞նչ են մտածում, ի՞նչ տեսակի յարաբերութեան մէջ են կառավարութեան, Իթթիհատի հետ, եւ մեր ամենաանյետաձգե-

11.- Եամիլ՝ Վանայ Սարգիսն է, բուն անունով Օտապաշեան Պօղոս, որ այդ շրջանին անդամ էր Վասպուրականի Կեդր. Կոմիտէին:

լի եւ հական խնդիրների մասին ի՞նչ դիրք են բռնել կառավարութեան հանդէպ:

Եթէ Արեւմտեան Բիւրոն եւ մեր պատգամաւորները այդպէս կարծեն իրենց յարաբերութիւնները գաւառի մարմինների եւ ընկերների հետ, ամենեւին լաւ բան սպասելու չէ: Նրանք իրենց այս կամ այն հրահանգի դէպքում, գաւառի ընկերներին պէտք է կարծեն կանգնած իրենց թիկունքին, այլապէս խօսքը կը լինի անոյժ, անվճռական:

Բիթլիսի վիլայէթի եւ Մշոյ դաշտի գործերը օրէցօր վատ կերպարանք են ընդունում: Մենք քանիցս ասել եւ կրկնել ենք, որ կառավարութեան սկսած հալածանքը միմիայն Գարմէնի¹² դէմ չէ, այլ որոշ ուղղութեան: Կառավարութիւնը կրթական բեւոյժի մեզ հասանելիք մասը չտալուց զատ, ամէն տեսակի խոչընդոտ է յարուցանում, որպէսզի այդ խնդիրը մենք ներքնապէս էլ չկարգադրենք: Դուք լաւ գիտէք, որ անցեալ տարի մեր այստեղի ընկերների ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրուած էր այդ կարեւոր խնդրի շուրջը եւ որպէսզի հէնց սկզբում խեղդի այդ ձեռնարկը, զէնքի դրամի անմիտ խրտուկիւակը մէջտեղ գցեց, եւ ընկերներին ենթարկեց հալածանքի: Այդ հարցում պակաս դեր չի կատարում եւ հողային խնդիրը. հալածանքի ենթարկելով դաշնակցական ղեկավար ընկերներին, ենթադրում են խեղդել կամ առժամապէս դադրեցնել եւ այդ այրող խնդիրը: Պոլսոյ ընկերները չեն ցանկանում այդ բանը ըմբռնել. Գարմէնի խնդրին տուեցին անձնական խնդրի բնոյթ եւ չեն աշխատում համապատասխան կերպով: Եւ իբրեւ մեր թուլութեան պատճառ, ահա այն խուզարկութիւնների շարանները, որ օրէցօր աւելանում է. եղել են նաեւ նոր ձեռքարկութիւններ Բուլանըխ եւ այլ վայրեր այդ խնդրի շուրջը: Եթէ դա որոշ ուղղութիւն չէ՝ թելադրուած կենտրոնական կառավարու-

թեան կողմից, թող բաւականութիւն տան մեր վերոյիշեալ հական պահանջներին. մենք երկրի ղեկավար ընկերներս ուրախութեամբ կը թողնենք այս հողը եւ կը հեռանանք օտար երկրներ:

Մեր Պոլսոյ ընկերները չեն ցանկանում այդ բանը գիտակցել, եւ ահա այն տարտամ քաղաքականութիւնը, որին նրանք հետեւում են: Այդ անարդար եւ հակասահմանադրական ուղղութիւնը մեր վերաբերմամբ վերջ պէտք է գտնէ կտրուկ կերպով եւ կարճ ժամանակում, եթէ դա կենտ. կառավարութեան թելադրութեամբ չէ: Յայտնի ոճրագործ աղաներ ներուում են եւ հանգիստ թողնում, սահմանադրական կառավարութիւնը մեր մէջն է հակասահմանադրականներ փնտռում: Եթէ այդ քաղաքականութեանը վերջ չտրուի, խաղաղութիւնը անկարելի է ապահոված համարել:

Քաղաքական կացութիւնը ամբողջ թուրքիայում եւ մեզանում լաւ չէ. երկինքը ամպոտում է. ո՛վ գիտէ ինչեր կարող են վաղը կրկնուել: Դժբախտաբար մենք այդ ուղղութեամբ համարեա թէ ոչինչ չենք մտածած, եւ անակնկալների դէպքում յանկարծակիի կարող ենք գալ: Ահա մի չափազանց կարեւոր խնդիր, որի մասին պէտք է մտածել եւ հրահանգել մարմիններին այդ ուղղութեամբ մտածել: Մեզ թւում է թէ «Վիշապը»¹³ մասնաւորապէս պարտաւոր է առանձին, լուրջ ուշադրութեան ենթարկէ այդ խնդիրները. նա կարող է ունենալ թերեւս ճակատագրական նշանակութիւն: Քանի ուշ չէ, շտապելու է:

— Քանիցս կրկնեցինք աչքի դեղ, «Ֆենօ-Ֆրոլմէյին»-ի մասին. շատ կարեւոր է. աչքերիս ցաւը օրէցօր աւելանում է:

— Մեր հաշիւները ի՞նչ եղան. ախր այդ խնդիրը պէտք է մի անգամ ընդ միշտ պարզաբանուի՞ թէ ոչ, որպէսզի մենք մեր անելիքը իմանանք:

Վաղուց է ձեզնից նամակներ չենք ստանում: Ի՞նչ է պատճառը:

Ընկերների կողմից ՇԱՄԻԼ¹¹

12.- Գարմէն՝ Մելքոնեան Սկրտիչ (Մախկիմ Տաճատ վարդապետ), Տարօնի գործիչներէն, որ շատ մը ուրիշ ղեկավար դէմքերու շարքին, կը հալածուէր թուրք կառավարութեան կողմէ:

13.- «Վիշապ»ը Կ. Պոլիսն է. այս պարագային՝ Արեւմտեան Բիւրոն եւ մայրաքաղաքի ղեկավար դէմքերն ու մարմինները:

1911

Փաստ. 1542-3

Գ 3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

7 Մարտ 1911

Ընկերներ!

Կուսակալի գալը պէտք է շտապեցնել. տեղիս անարխիան օրէցօր կ'աւելանայ: Բոլոր սեւ ոյժերը միացած, դորանց հետ եւ տեղիս իթթիհատականներն ու գինուորականները իրենց նպատակ են դրել դաւթարտարին եւ փողիս միւտիւրին¹⁴ հեռացնել տեղիցս: Շարունակ դաւադրութիւններ են սարքում, որպէսզի վարկաբեկեն կամ յուսահատեցնեն: Ինչպէս կ'երեւի, անցեալներ սովորեցրել էին մի զաբթիա չառուշի, որպէսզի գնա ամսական ուզի եւ մի սկանդալ բարձրացնի այստեղ, որը եւ արուեստ. հազիւ այդ դէպքը անցած, ահա երկու օր առաջ, չորս հոգի, որոնցից մէկը ոչխարանենի (?) բժիշկ, հարբած անցնում են կառքով դաւթարտարի դրան առջեւից, եւ երկու անգամ ատրճանակ պարպում. բարեբախտաբար գիշերային փողիսը իսկոյն եւեթ կառքի առաջն է անցնում եւ ձերբակալում յանցաւորներին:

Կուսակալի այստեղ [եղած] ժամանակ Սէյրիին ձերբակալելու համար, հայերից 14, իսկ չէրքէզներից 10 կամաւորներ էին հրաւիրած. այդ խնդիրը դարձրել են մի մեծ բան, գինուորականութիւնը դիմել է Միւշիրին եւ բողոքել որ կառավարական զէնքերը տրուել է Ֆետայիններին: Մի բան, որ եթէ չենք սխալում, արուած է կենտրոնական կառավարութեան կողմից, եւ այն էլ ոչ թէ միայն հայ, այլեւ չէրքէզ կամաւորների էլ է տրուած: Ահա ինչպիսի ստոր ինտրիկներով ցանկանում են տապալել դաւթարտարին եւ փողիս միւտիւրին, որոնք գուցէ միակ անձնաւորութիւններն են, որոնք չեն ցանկանայ սրա եւ նրա դիւղիւկով պարել:

Ընդհանրապէս ամենամութ դերը կատարում է տեղիս իթթիհատը, որի հետ համարեա թէ ոչ մէկ յարաբերութիւն չունենք իրել սեւ ու մութ տարրերի ժողովածուի: Վաւառներ եւ Բժիշկը¹⁵ լաւ են ճանաչում տեղիս յայտնի ունակներին: Դորանք բոլորը կլուբի զարդերն են: Եթէ իթթիհատի կենտրոնը համաձայնէր, մի կարեւոր եւ լաւ ոյժ ուղարկէր երկար ատենուայ համար այս կողմերը, լաւ դեր կարող էր կատարել ներկայ պարագաներում: Դժբախտաբար գաւառացիներս սկսում ենք հիասթափուել եւ պատմական դորանց կենտրոնից¹⁶: Այդ մարդիկը կամ գլուխներն կորցրել են, չեն հասկանում ինչ կ'ընեն, կամ պետութիւնը տանում են դէպի անկում, կամ գուցէ հէնց իրենց ծրագիրը եւ ուղղութիւնը այլ բան է թելադրում, քան թէ մենք ենք կարծում:

Վասպուրականում հայ ժողովրդի միտքը չափա-

զանց զրգուռած է, եւ անհանգիստ: Կորել է վստահութիւնը եւ դէպի իթթիհատ-կառավարութիւնը եւ դէպի սահմանադրութիւնը: Կառավարութիւնը մի յայտարարութիւն փակցրեց պատերին, եւ տպել տուեց «Աշխատանքի» մէջ որ հանգիստ լինեն, ասելով որ դաշնակցականներից զրաւուած զէնքերը պէտք է տան ժողովրդին, գիւղական պահակների համար, բայց մենք հաստատ գիտենք, որ լաւ զէնքերից ոչինչ չի մնացել¹⁷. գողացել եւ ծախել են ժամանակի ընթացքին թուրքերին եւ քրդերին. մնում է հասարակ ժողովրդական զէնքերը. բայց այն էլ չեն տալիս. խոստումներ է միայն: Այն ինչ հայերը որոշ վայրերում միշտ ենթակայ են կոտորածի եւ սպառնալիքի, ինչպէս Բաշկալա, Նորդուզ, Սարայ, Բերկրի, Փոս եւ նման ոչ հայաշատ վայրեր: Կենտրոնական կառավարութիւնը եթէ անկեղծօրէն ցանկանում է երկրի խաղաղութիւնը, եւ ոչինչ չի տածում դէպի հայերը, վտանգաւոր վայրերին պէտք է կարգադրի անմիջական կերպով զէնք բաժանեն, եւ այն էլ գոնէ Մարթինի, եւ ոչ թէ այն ժողովրդական «քոռացաւ» զէնքերը: Մենք չգիտենք ի՞նչ յարաբերութեան մէջ էք դուք իթթիհատի հետ. արդեօք եթէ կան ձեր խառը ժողովները, ոեւէ բանի ծառայում են, թէ առաջուայ պէս անուանական մի բան է: Ներկայ ծանրակշիռ մոմենտում, երբ ամէն բան գահավիժօրէն դէպի անկումն է գնում, անհրաժեշտ է, որ իթթիհատի եւ Դաշնակցութեան համերաշխութիւնը կայանայ աւելի դրական եւ կոնկրետ հողի վրայ, որպէսզի մենք վստահենք, եւ մեր բոլոր բարոյական եւ այլ ոյժերով կանգնած լինենք նրանց կողքին, դիմագրաւելու ամէն վտանգ: Այդ խնդիրները հետեւեալներն են.— ա) դպրոցական, բ) հողային, գ) այստեղ ուր հայերը ենթակայ են մշտական վտանգի, կառավարութեան կողմից զէնք տրուել պաշտպանութեան համար. դ) Պոլսում, ինչպէս եւ գաւառներում, խառը մարմիններ, որոշ խնդիրների մէջ համերաշխօրէն գործելու եւայլն:

Թիշում էք, որ երբ օտարահպատակ ուսուցիչները դէմ օրէնք պէտք է հրատարակէին, մեզ ապահովեց-

14.- Դաւթարտարը Ելեւմտական սպասարկութեան պաշտօնեան է, փողիս միւտիւրին ուստիկան եւ զօրքերու հրամանատարը:
 15.- Բժիշկ՝ ծածկամուճներուն մէկն էր Փափագեան Վահանի (Կոնս), որ Վանէն ընտրուած անդամ էր Օսմ. խորհրդարանի: Կրնայ ըլլալ նաեւ քժ. Յովսէփ Տէր Դաւթեանը, որ 1908 թ. ատեն մը Վան եղած էր:
 16.- Ակնարկութիւն Իթթիհատի Սեւանիկի կեդրոնին:
 17.- Ակնարկութիւն 1908 թ. Դաշնակցութեան գրաւուած զինապահեստներուն:

նում էին թէ դա յոյների դէմ է, դուք անհանգստանալու ոչինչ չունէք. այն ինչ այդ օրէնքը նոյն խստութեամբ իրագործում են եւ մեր վերաբերմամբ, ինչպէս Մուշ, Կարին: Դորանց հետ պէտք է խօսել, որ խաբելու քաղաքականութիւնը միմիայն վստահութեան վերացման կը ծառայէ:

Ինչպէս անցեալ նամակում էլ մենք գրել էինք՝ մենք կողմնակից ենք ռայոնական (Թուրքիոյ) ժողովի, եւ այն էլ խոշոր, ազգային եւ պետական բնաւորութիւն կրող հարցերով պէտք է զբաղուել: Ահա ուղարկում ենք մեր առաջարկելիք օրակարգերը: Եթէ երկու Բիւրոները համաձայնութեան եկաք Յունիսի 1-ին կատարել ռայոնական ժողովը, միւս օրակարգերը շուտով ուղարկեցէք մեզ, որ իմանանք մեր անելիքը:

Օրակարգերը

- 1.- Ռէակցիայի դէպքում մեր դիրքը.
- 2.- Ոեւէ հայկական կոտորածի (օրինակ, ինչպէս Ատանան) պարագային կազմակերպութեան դիրքը.
- 3.- Միստեմատիկ հայերի սպանութիւնների դէպքում (ինչպէս Վասպուրականում), մեր տակտիկը եւ ուղղութիւնը.
- 4.— Ստեղծել Պատասխանատու մարմիններ յատուկ բիւրօներով.
- 5.- Որսորդական ընկերակցութիւններ.
- 6.- Մեր յարաբերութիւնը իթթիհատի հետ.
- 7.- Յարաբերութիւն մեր ծրագրի սահմանում գործող թուրք եւ այլ ազգութիւնների յեղափոխական մարմինների հետ.
- 8.- Նոյնը նաեւ պարլամենտում.
- 9.- Ազգային իրաւահաւասարութիւն.
- 10.- Հողային խնդիրներ.
- 11.- Դպրոցական խնդիր (պետութեան հետ).
- 12.- Մուհաջիրական խնդիր.
- 13.- Ազգային իրաւանց խնդիրներում պատրիարքարանների համերաշխ գործակցութիւն.
- 14.- Կովկասեան խնդիր.
- 15.- Պարսկաստանի խնդիր.
- 16.- Միջոցներ ներկայ սահմանադրական կառավարութեան ուժեղացման համար.
- 17.- Գաւառի իթթիհատական մարմինների գտումը եւ ուժեղացումը:

Մեր ուղարկելիքները սոքա են:

Ձեր նամակները զարմանալի կերպով չոր եւ սեղմ են լինում, ուր բացակայում են կարեւոր խնդիրները, որոնց համար անհրաժեշտ է մէկգումէկ շարունակ տեղեակ պահել:

Յոյս ունենք, որ Ազատամարտի բաժանորդագրութիւնը այս անգամ աւելի կանոնաւոր հիմունքների վրայ պէտք է դրուի, եւ բաժանորդների թիւը աւելացւի:

Ինչո՞ւ համար «Աշխատանքի» համար յատուկ Ազատամարտ չի ուղարկւում:

Շատ բարեւներով՝ ի դիմաց ընկերների՝
 ՇԱՄԻԼ

Գարմէնի խնդրի համար քանի անգամ ձեզ գրեցինք, բայց եւ ոչ մի անգամ պատասխան չառինք. թէ ի՞նչ էք մտադիր անելու, կամ կառավարութիւնը իր այդ կործանարար ուղղութիւնը պէտք է թողնի՞ թէ ոչ:

Մամրտանքի սպանութիւնների համար պէտք է խիստ կերպով պահանջ դնել: Ալճաւազի (?) սպանուածների դատը ուղղակի ծաղրալի վերջաւորութիւն ընդունեց: Եւ ոչ մէկը գոնէ մինչեւ ցմահ բանտարկութեան չենթարկուեց. ամենաշատը 9 տարուայ, իսկ միւսները երեքական մինչեւ 8: Եթէ այդ ձեւով պէտք է մարդասպանները պատժուեն, ի հարկէ խաղաղութիւնը? մշտական կը լինի այս դժբախտ երկրում:

ՆՈՅՆ

Խնդրում ենք մեզ ուղարկէք «Ֆէնօ-Ֆրոլմէին»(?), շատ հարկաւոր է: Բացի այդ մեր գրած նամակները ամէն անգամ դուք Վահանին¹⁵ կարդալու էք, քանի որ իւրաքանչիւրիդ առանձին-առանձին գրելու ժամանակ չենք ունենում:

ՆՈՅՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ VI

ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Դուրան-Բարձրաւանդակը կ'ընդգրկէր Պիթիսի նահանգը գրեթէ ամբողջութեամբ, - Տարօնի ընդարձակ դաշտը Մուշ կեդրոնով, Մասնոյ լեռնաշխարհը, Պիթիս քաղաքը, Մղերդը, Մանազկերտը: Վասպուրականի հետ եւ անոր կից, Հայկ. բարձրաւանդակի ամէնէն հայաշատ այս նահանգը ունէր նաեւ արիւնտ անցեալ: Հակառակ առաջինին, Վան-Վասպուրականին, որ ուսումնական թէ ընդհանուր զարգացման առումով համեմատաբար յառաջադէմ ու լուսատր պատկերով մը կը ներկայանար, Տարօնի աշխարհը, ընդհակառակն, յետամնաց անկիւն մըն էր, համատարած թշուառութեան եւ տգիտութեան մէջ թաղուած եւ ենթակայ յարատեւ կոտորածի ու հալածանքներու:

Մահմանադրութեան հռչակումէն ետք շրջանը գրեթէ պարպուած էր անցեալի դեկավարութենէն. շատերը նահատակուած էին, ուրիշներ հեռացած. մնացողները եւ պարբերաբար հոն մտնող գործիչներ, իրենց կարգին, կ'ենթարկուէին կառավարական սիստեմաթիկ հետապնդումի եւ հալածանքի (Գարմէն, Սեբաստացի Մուրատ, Սեպուհ Կորիւն եւ ուրիշներ):

Այսուհանդերձ, կուսակցական վերակազմակերպման եւ մասնաւորաբար կրթական ու մշակութային կեանքի վերելքին մէջ առաջնակարգ դեր պիտի խաղար Սիմոն Չաւարեան, որ ամբողջ երկու տարի (1909-1911) իբրեւ շրջանի ազգային վարժարաններու տեսուչ փոխադրուեցաւ ու գործեց Հայաստանի սիրտը համարուող Տարօն-Մասունի մէջ:

Շրջանի խնդիրներու քննարկման ու ներկայացման մէջ Չաւարեանի տիրական ներկայութեան ապացոյց են նաեւ յաջորդող էջերու մէջ տրուած նիւթերը, որոնց մեծագոյն մասը կը պատկանի իր գրչին:—

1.— «Քաղուածքներ Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրաւանդակի Շրջանային ժողովի որոշումներէն»։ տպագիր 16 էջոց պրակ, անթուակիր: Նոյնին խմբրատիպ կրկնօրինակը, 8 մեծադիր էջ, Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրաւանդակի Կ.Կ.ի կարմիր կնիքով եւ 6 ստորագրութիւններով: Խմբրատիպ օրինակը ձեռագիր մակագրութիւն ունի.— «1911 Յուլիս 13», որ հաւանաբար այս վերջինին շրջաբերականի ձեռով տարածման թուականն է: Այլապէս, գիտենք որ Շրջ. ժողովը սկսած է Մայիսի վերջերուն եւ, ընդհատումով, շարունակուած մինչեւ Յունիսի 12ը:

Արխիւներուն մէջ պահպանուած են, սեւագրութեան ձեռով, այս «քաղուածքներ»էն որոշ հատուածներ Ս. Չաւարեանի ձեռագրով, ինչ որ ենթադրել կու տայ որ տեղեկագրին եթէ ոչ ամբողջութիւնը, գէթ կարեւոր մէկ մասը անոր շարադրութեան կը պատկանի*:

2.— «Տեղեկագիր Հաշուեքննիչ յանձնաժողովոյ Դուրան-Բարձ.ի Ռայոնական ժողովին»։ ձեռագիր 4 էջ:

3.— «Տեղեկագիր Դուրան-Բարձրաւանդակի Կ.Կ.ական շրջանի մասին»։ անթուակիր է եւ առանց ստորագրութեան, ամփոփ տեղեկագիր Ս. Չաւարեանի ձեռագրով. կը գտնուի Հ.Յ.Դ. Չ. Ընդհ. ժողովի թղթածրարին մէջ:

4.— Չաւարեանի կողմէ (Մքրատ Օհանեան) գոյգ Բիրոններու Պոլսոյ եւ Կարնոյ հատուածներուն ուղղուած 7 նամակներ, ինչպէս նաեւ «Հ. Յ. Դ. Դուրան Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի» մէկ շրջաբերականը, ամենայն հաւանականութեամբ դարձեալ Չաւարեանի գրչին պատկանող:

* Այս «սեւագրութիւնները» սխալմամբ գեղեղուած են Դուրան-Բարձրաւանդակի 1909 թուականի թղթածրարին մէջ, ինչ որ պարզապէս դարձած է, որ անոնք, դարչեալ սխալմամբ, տեղ գրաւեն Հ. Տասնապետեանի կազմած «Սիմոն Չաւարեան» Գ. հարորին մէջ իբրեւ 1909 թ. փաստաթուղթ (էջ 71-77):

Փաստ. 706-138

Ա 1.— ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ
Հ.Յ.Դ. ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸՆ

ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ. ԿԱԶՄԸ. ՕՐԱԿԱՐԳԸ

Անցեալ տարուէն սկսեալ կատարուած երկար նախապատրաստութիւններէ եւ աշխատանքներէ յետոյ, վերջերս գումարուեցաւ Հ. Յ. Դաշն. Դ-Բ-ի Շրջանային ժողովը:

Առաջուց հրաւիրուած վարչական ժողովի որոշման եւ կանոնագրի թելադրութիւններու համաձայն, ժողովի մասնակցելու հրաւիրուած էին ենթակոմիտէական եւ կոմիտէական շրջանակներու մէջ ընտրուած ամէն 50 անդամէ մէկական հոգի:

Այդ ձեւով ընտրուած 19 պատգամաւորներու ներկայութեամբ ժողովը բացուեցաւ. բացակայ էին այլեւայլ պատճառներով կուսակցութեան յայտնի կազմակերպուած վայրերէն միայն 3-4 շրջաններու ներկայացուցիչներ:

Առանձնապէս պատգամաւորներէ գումարուած խորհրդակցութիւնը՝ նախքան դիւանի ընտրութիւնը, որոշեց ձայնի իրաւունքով նիստերու հրաւիրել նաեւ այն շրջիկ ընկերները, որոնք արդիւնաւէտ գործունէութիւն են ունեցած (Յ հոգի), նոյնպէս եւ մէկ ներկայացուցիչ Հաշուեքննիչ մարմնէն, եւ մէկ ալ քաղաքի կազմակերպիչներէն: Որպէսզի հրաւիրուած ընկերները գերակշիռ ազդեցութիւն չունենան ժողովի որոշումներուն վրայ, պատգամաւորները սահմանափակեցին ձայնով հրաւիրուածների թիւը պատգամաւորների թուի կիսով:

Բացի այդ, նիստերուն հրաւիրուած էին եւ կը մասնակցէին խորհրդակցական ձայնով նաեւ Կեդր. կազմի բոլոր անդամները, ինչպէս եւ ժողովի վայրի խմբապետները:

Դիւանը ընտրելէ յետոյ ժողովը, ստուգեց պատգամաւորների ընտրուած լինելը համապատասխան թուով ընկերներու կողմէն, հեռացուց իր մէջէն իրաւասութիւն չունեցողները եւ դրամական սակի քննութիւնը յանձնեց յատուկ յանձնախմբի մը: Ժողովականները համաձայնեցան որ՝ ներկայ պատգամաւորական ժողովը Դուրան-Բարձաւանդակի միակ եւ ամենաբարձր իրաւասութիւն ունեցող ընտրուած մարմինն է:

Գալով իր գրադմանց նիւթերու օրակարգին եւ նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, ժողովը որոշեց

եղած հարցերը սեղանի վրայ դնել հետեւեալ կարգով.—
ա) Պատգամաւորներու տեղեկագրեր եւ հաշուետուութիւն:

բ) Կեդր. կազմի տեղեկագիր եւ հաշիւներ (սկսեալ 1907էն) եւ

գ) Ընտրութիւն Կ. Կոմիտէի կազմի, Դատական մարմնի եւ Ընդհանուր ժողովի պատգամաւորի:

Այս հարցերը լուծելէն յետոյ (մեծ մասը 2/3ի եւ աւելիի ներկայութեամբ), ժողովը դադար ունեցաւ քանի մը շաբաթ, որմէ յետոյ մնացած խնդիրները քննուեցան մասնակցողներու կէսէն աւելիի ներկայութեամբ:

Ստորեւ կը բերենք տրուած որոշումներէն կարեւորագոյնները:

Կուսակցութեանս Բիւրոնները, ինչպէս եւ Բարձր Հայքի Ռայոնական ժողովը՝ շեշտած լինելով տեղիս հաշիւների (սկսած 1905 թուէն) օրինական քննութեանց չենթարկուելը, Շրջանային ժողովը գեկուցումներէն յետոյ ամէնէն աւելի գրադուեցաւ հաշուետուութեան խնդրով:

1908 ՕԳՈՍՏՈՍ — 1907 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՇԻՒՆԵՐԸ

Հաշուեքննիչ մարմնի գեկուցումէն եւ այլ բացատրութիւններէն պարզուեց որ 1908 Օգոստ. 1907 Դեկտ. ընթացքին տեղիս մուտքերն ու ելքերը կազմուած են հետեւեալներէն.—

Մուտք	Դրշ.
Ստացուած դրսի մարմիններէն	151,516
Ելք	
Նպաստ սովեալներու, գինուորներու	75910
Բանտարկեալ ընկերներու	8010
Չինուորական ծախքեր	46127
Սուբհանդակի	11276
Կաշառք	4627
Ընդամէնը ¹	145947
Դրամարկղի մէջ	5589

Հաշիւներու ստուգման համար կան օրագրական մատեանները, ցուցակներ եւ ստացագրեր. դիտելով որ ծախսերը կատարուած են նախասահմանադրական շրջանին մէջ, երբ կը տիրէր գինուորական դրութիւն.

1.- Այս եւ յաջորդ հաշուեցուցակներուն մէջ նշմարելի են գումարումի մանր անճշդութիւններ, վերագրելի հաւանաբար տպագրական վրէպի:

բ) Նկատի ունենալով որ այս դժնդակ պայմանների մէջ իսկ պատասխանատու անդամը եւ կազմը ներկայացրել են ամսէ ամիս կանոնաւոր օրագրական մատեան ծախսերի համար՝ ստորագրուած տեղիս կազմի եւ ազատ գործիչ ընկերոջ կողմէ:

գ) Ստուգելով որ այն ժամանակուայ որոշումների համաձայն դաշտի գինուորներին ամսական ծախսի չափն էր մէկ, լեռի գինուորներին 1/2, իսկ պատասխանատու մարմնի անդամին 3 ոսկի, եւ որ պատասխանատու մարմնի անդամը կը վարէր գինուորներու չափ համեստ, չասել խիստ կեանք:

Ծրջ. ժողովը որոշեց 1908 VIII — 1907 XII ծախսերը համարել օրինաւոր կերպով կատարուած եւ ընդունելի:

1908Ի ՅՈՒՆՈՒԱՐԻ ՀԱՇԻՒՐ

Նախորդ հաշուէն ունենալով մնացորդ 5559 դրշ. գումար եւ ատոր հետ միասին հաշիւների մէջ բոլորովին բացակայ տեսնելով 1909 Յունուարին վերաբերեալ մուտքերն ու ելքերը, որով անկարելի է ունէ բան ըսել այդ ժամանակաշրջանի առթիւ:—

Ծրջ. ժողովը որոշեց հարկ եղած բացատրութիւնները ուզել այդ մասին Թ.ից եւ Գ.ից² ներկայացնելով եկող պատասխանը յաջորդ Ծրջան. Ժ.ին:

1908 II (ՓԵՏՐՈՒԱՐ) IV 1909 (ԱՊՐԻՒ) ՀԱՇԻՒՆԵՐԸ

Հաշուեքներէ մարմնի գեկուցումէն պարզուեց որ 1908 Փետրուար՝ 1909 Մայիս ընթացքին մէջ, տեղիս Կեդր. կազմի մուտքերն ու ելքերը եղած են:—

Մուտք	դրշ.
Դրսի մարմիններէ ստացուած	71483
Ամսավճար եւ տուգանք	3989
Նպաստի եւ որբանոցի համար	12801
Գումար	89073
Ելք	դրշ.
Դիւանական	4051.30
Նպաստ չքաւորների եւ բանտարկեալների	11247
Զինուորների, շրջիկ եւ գործիչ ընկերներու	58634
Ազատ ընկերոջ տան, դրսի ընկ. եւ ձիերի	9893.20
Տնական գոյք	2726
Ազգային մշակոյթ	2470
Գումար	88822.10

Հաշիւները լուսաբանելու համար կան օրագրական մատեաններ, ցուցակներ եւ ստացագրեր: Քննելով այդ ամէնը եւ դիտելով որ ծախսերի մեծ մասը կատարուել են Սահմանադրութեան յայտարարումէն անմիջապէս յետոյ երբ դեռ տեղաւորուած չեն եղեր բազմաթիւ

նախկին գինուորներ, հրապարակի վրայ են գտնուած հարիւրաւոր բանտէն ելնող եւ հազարաւոր քայքայուած ու սոված սասունցի ու դաշտեցիներ, որոնց հանդէպ գործող ընկերները անկարող էին ձեռնպահ մնալ:

Նկատի ունենալով որ խանդավառութեան այդ շրջանին՝ երբ դեռեւս գումարուած չէր ոչ մի ընկերական ժողով կուսակցութեան ապագայ սահմանադրական ընթացքի մասին խորհրդակցելու համար, եւ սովեալներ, դպրոցի եւ այլ հասարակական նպատակների համար կատարուած ծախքերը վերագրուելու են կուսակցութեան գործելակերպի եւ ընկերների գիտակցութեան անորոշութեան:

Գտնելով որ կուսակցութեան տան վրայ եղած եւ այլ մի քանի ծախսերը թէեւ շուայլ են, բայց խանդավառութեան հարեցողական այն շրջանին մէջ դիտուելու են ներելի:

Ծրջ. ժողովը որոշեց:—

ա) Մուրատին ճանապարհի եւ այլ կարիքների համար ծախսուած 21 եւ 10 ոսկիների մասին բացատրութիւններ ուզել:

բ) 1908 II — 1909 IV վերաբերեալ մնացած հաշիւները համարել բաւարար եւ ընդունելի:

1909 IV — 1910 III ՀԱՇԻՒՆԵՐԸ

Քննութիւնը պարզեց որ շրջանիս եւ Կեդր. Կ.ի այդ ժամանակամիջոցին մէջ մուտքեր ու ելքերը կազմուելը են հետեւեալներէն:—

Մուտք	դրշ.	Ելք	դրշ.
Անդամավճարներէն	28816	Դիւանական	1787
Հանգանակութիւններէն	3374	Շրջիկ, գործիչ ընկերների	10678
Կրթական դրամէ	3212	Համերաշխութեան, դպրոցների	3188
Յետ ստացուած պարտքերէ	2899	Հին պարտքեր վճարուած	5039.20
Մախուած գոյքէ, ապրանքէ	1664	Ազատ ընկերի կազմ. տան	28754
Տուգանքէ	540	Հիւրերի եւ ձիերի (10678)	
Դրսի մարմնէն պարտք վերց.	5400	Տնային գոյք գնուած	2115.20
Աւանդ վերցուած գումարներ	7508	Ընդհանուր գումար	51582
Ընդհ. գումար	51411.30		

2.- Ո.Ա պէտք է ըլլայ Ռուսիո Տեր Սիմասեանը. Գ.ը՝ Գարսեմէն (Մկրտիչ Մեղրոնեան):

Այսպիսով ազատ գործիչի, իր հետ անմիջապէս կապուած բնակարանի ու ընկերների վրայ սպառուած է 30.869 դրշ. կամ շրջանի ամբողջ տեղական մուտքը (որ է 30.120):

Շնորհիւ այդ պարագայի՝ յիշուած եռամիսների ընթացքին մէջ ոչ միայն կուսակցական Կեդրոնական դրամարկըր գուրկ է մնացել շրջանիս օժանդակութեանէն, այլ եւ մոռացութեան է տրուած տեղիս գործունէութեան ամենակարեւոր ճիւղերէն մին՝ ինքնապաշտպանութեան գործը:

Կ. Կազմի այս ընթացքը պարզուելով ընկերների ու ժողովրդի մէջ առաջ է բերել պաղուծիւն, յուսախաբուծիւն եւ ձեռնպահութեան աստիճան չէզոքութիւն:

Այս գործելակերպը չի կարող արդարանալ օրուայ կացութեան կամ միմեանց յաջորդող դէպքերի բացառիկ պահանջներով:

Նախընթաց շրջանին համար (1908 II — 1909 IV) ազատ գործիչի եւ տան վրայ եղած ծախքերը դիտելով շուայլ՝ ժողովս «ներելի» էր գտած զայն, նկատի ունենալով միմիայն կուսի շրջանին անմիջապէս յաջորդող ժամանակը, գինուորների ու ժողովրդի թշուառ վիճակը, կուսակցութեան ընթացքի անորոշութիւնը եւայլն:

Սահմանադրութեան հուշակումէն, ազատ ընկերների հեռացումէն, դրութեան պարզուելէն յետոյ նոյնանման ծախքերի շարունակելը համարելու է ապօրինի: Ապօրինի կրկնակի չափով քանի որ շրջանիս անդրանիկ բազմամարդ եւ կազմի ուղղութեան հետեւող Սուրբ Կարապետի ժողովը հաշուի առնելով տեղական պայմանները, Կ. Կազմի եւ տեղական մարմինների պէտքերի համար նշանակած էր տեղական հասոյթների 40% մնացած 40 եւ 20%ները պիտի գործադրուէին ինքնապաշտպանութեան եւ կուսակ. ընդհ. պէտքերու վրայ (Արեւելեան Բիւրոյի միջոցաւ): Զանց առնելով նոյնիսկ հարցի այս իրաւացի կողմը եւ կանգ առնելով ժամանակի ներկայացրած պահանջների վրայ, Շրջանային ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ ազատ ընկերոջ եւ կուսակցական տան (այցելողների ու հիւրերի հետ միասին) համար բարեխղճօրէն կատարուած ծախքերը չէին կարող անցնել ամիսը 8 ոսկուց, մի գումար՝ որի կիսով բաւականացրել է նոյն գործիչը «տնէն» բաժնուելէն յետոյ:

Իրականութեան մէջ եթէ ծախքերը եղեր են ատկէ մի քանի անգամ աւելի, բացատրելու է միայն անով որ կուսակցութեան միջոցներով ապահովուած են եղեր Գարմէնի մտերիմ եւ Հաճի³ ամենամօտ ազգական ընտանիքներ ու մերձաւորներ եւ որ կուսակցական ծախքերը ծանրաբեռուներ են ձիերի հաշիւներով:

Ժողովիս մէջ պարզուեց որ մի քանի ընկերների «ձիերի պահելը» ընդունուել է կրթական գործի համար եւ վերջինիս միջոցներով, որու համար իսկապէս եւ ստացուել է բաւականաչափ գումար (33 ոսկի):

Ձիերի համար ստացուած այդ գումարը դասաւորե-

լու տեղ կրթական տուրքի հանգանակիչներու մէջ (ըստ ամէն մէկի ցոյց տուած օժանդակութեան), դիտաւորեալ կերպով եւ սովորականէն կրկնակի չափ ծախսեր ցոյց տալով, ձիերի ծախսերը կապուել են կազմակերպութեան տան հետ:

Այս ամէնի հետ միասին.

ա) Դիտելով որ 1909 IV — 1910 III հաշիւները չնայած աւելի նպաստաւոր պայմանների՝ չեն ներկայացնել նոյնիսկ նախասահմանադրական շրջանի հաշիւների կանոնաւորութիւնը, չկայ օրագրական մատեան եւ եղածը կազմուած է վերջը, մի քանի խոշոր ծախսերի փաստաթղթեր կը պակսին, իսկ եղած ստացագրերի մեծ մասը ստորագրուած են «ծառաների», «մերձաւորների» կողմէն եւ հետեւապէս չեն ներկայացնել հակա արժէք:

բ) Աչքի առաջ ունենալով, որ 1907 — 1909ի հաշիւները — հակառակ կանոնագրի — չեն ներկայացուած ոչ շրջանիս Պատգամաւորական ժողովին, ոչ Կ. Կազմի անդամներին եւ ոչ ունէ ընկերական շրջանի կամ այլ ձեւի հսկողութեան ու ստուգման եւ ընդհակառակն հաշիւ պահանջողներու նկատմամբ ցոյց է տրուած դժգոհութիւն, գործ են դրուած այլեւայլ ճնշումներ ու խոչընդոտներ:

գ) Նկատի ունենալով որ Գարմէնի Հաճի տան մէջ մնալու դէմ (սկիզբի օրերէն իսկ) բողոքած են բոլոր գործիչ եւ պարզ ընկերները որ այդ «տան» մէջ ապրելը ու անոր հետ կապուած ծախսերը պատճառ են եղած քաղաքի խմբերի պայքարի ու քայքայման, սակայն այդ բողոքները արհամարհուելու են չեն լսուել, միմիայն հաճելի եւ ցանկացած պայմանների մէջ ապրելու համար:

դ) Քանի որ Կ. Կազմի զանազան անդամների իրաւասութեան — պատասխանատուութեան եւ մանաւանդ գործին մասնակցելու չափը իրականութեան մէջ շատ տարբերուել է, իսկ ծախսերի վերաբերեալ որոշումները ու իրագործումը (մինչեւ հաշիւների քննութիւնը), ամենախոշոր չափով կատարուել է Գարմէնի ու Հաճիի հրահանգներով ու ձեռքով:

ե) Քանի որ վերջի 14 ամիսների ընթացքին մէջ յիշեալ երկու անձերին տրուած էր աւելի քան բաւարար ժամանակ արդարանալու համար, այն ինչ, չէզոք հաշիւներէն եւ շրջանային անդամների մատնացոյց ըրած ապօրինի կէտերը մնացին առանց բացատրութեան. իսկ Գարմէնը չնայած երիցս անդամ իրեն պաշտօնապէս զրաւոր ու բանաւոր հրաւերներին՝ առանց պատճառների խոյս տուաւ զրաւոր կամ բերանացի բացատրութիւններ տալէ, ոչ միայն Հաշուեքներէ մարմնին (իր Մուշ գտնուած ատեն), այլ նաեւ ժողովիս:

զ) Հաշուի առնելով այն պարագան որ հակառակ Կ. Կ.ի պաշտօնական դիմումներին՝ Գարմէնն ու Հաճին մինչեւ օրս էլ չեն յանձնած Կազմին ոչ միայն կուսակ-

3.- Կոտոյի Դաճի (Կոտոյեան Յակոբ):

ցական բոլոր գոյքերն ու իրերը այլ եւ պաշտօնական եւ կուսակցութեան սեփականութիւն կազմող քանի մը կարեւոր թղթերը եւ բացի այդ՝ Հաճին առանց կազմի համաձայնութեան ընթացիկ մուտքի եւ ծախսի մէջ է ցոյց տուած աւանդ կամ կարճ ժամանակի համար փոխ յանձնուած գումարները (30 եւ 40 ոսկիներ):

Նկատի ունենալով բոլոր այս պարագաները Դուրան-Բարձրաւանդակի Երջանային ժողովս 1909 Ապրիլ — 1910 Մարտ հաշիւների նկատմամբ որոշեց.—

ա) Օրինական, նպատակայարմար եւ ընդունելի համարել դիւանական, ինքնապաշտպանութեան, բանտարկեալների, մշակութային-համերաշխութեան, շրջիկ ընկերների եւ տեղական մարմինների վրայ եղած ծախքերը, ինչպէս եւ վճարուած պարտքերը:

բ) Ազատ ընկերոջ եւ իր հետ կապուած «տան», հիւրերի երթեւեկների համար բաւարար եւ ընդունելի սեպել ամսական 8 ոսկի (ընդամէնը 88 ոսկի):

գ) Առանց կազմի գիտութեան՝ աւանդ եղած գումարների մտցնելը տոււարի մէջ ընդունելով ապօրինի, այդ գումարների հատուցումը ըստ պատկանելոյն համարել անհրաժեշտութիւն, հակառակ պարագային զեղծում:

դ) Մնացած գումարի ծախսելը համարելով չուայութիւն, անբարեխիղճ եւ անընդունելի, դրա հատուցումը կուսակցութեան (կամ շահագրգռուած անձերի) թողնել Գարմէնին եւ Հաճուն: Սրա հետ միասին իրաւունք տալ վերջիններիս նախկին կազմի անդամների համաձայնութեամբ կամ Միջնորդ դատարանի միջոցաւ ճշդ դել կազմի միւս անդամների վճարելիքը ամէն մէկի ապօրինի կերպով օգտուածի համեմատ:

ե) Մինչեւ այդ ապօրինի կերպով ծախսուած գումարների վերադարձնելը եւ վերադարձնելուց յետոյ 3 տարի ժամանակով, Գարմէնին եւ Հաճուն հեռացուած համարել Դուրան-Բարձրաւանդակի, իսկ դաշնակցական Խորհրդի համաձայնութեամբ ընդհանուր դաշնակցական շարքերէն իրրեւ անհատների, որոնք ի չարն են գործ դրած իրենց կուսակցական դիրքը եւ մերձաւորներին՝ ապահովելու, ցանկացած եւ հաճելի կեանք վարելու համար անբարեխիղճօրէն, աննպատակայարմար կերպով ծախսած են հազարաւոր հաւատարմատէրերի ամսավճարները, խոյս տալով հաշուետուութենէ, իսկ հաշիւ պահանջողների դէմ յարուցանելով այլեւայլ խոչընդոտներ:

զ) Երջանային ժողովը յանդիմանութիւն կը յայտնէ Կ.Կ.ի այն անդամներին, որոնք սահմանադրութենէն ետք հարկ եղած եռանդով չեն գործադրած իրենց իրաւունքները (իրրեւ կազմի անդամներ):

է) Երջանային ժողովը ցաւ կը յայտնէ որ տեղիս դաշնակցական ընկերների մեծամասնութիւնը անհրաժեշտ աչալրջութիւնը եւ հսկողութիւնը չի ունեցած իր շրջանի գործիչների ընթացքի եւ հաշիւների վրայ:

1910 ՄԱՐՏ 13 — 1911 ԹՈՒՆԻՍ 30
ՀԱՇԻՒՆԵՐԸ

Մուտք	ՊՐԶ
Տարելիցի հաշուէն բաց	150
Դրսի մարմիններէ	3094
Անդամավճարներ	1590
Հանգանակ. կովկաս բանտրկլ. համար	9307
«Ազատամարտ»ի բաժնեգին եւ փոստ քարտեր	1387
Ստացուած նհտկ. ընկերների ընտանեաց համար	8556
Հին պարտքերէ գանձուած	779.20
Գումար	24893.20
Պատրաստ կասսայի մէջ	968.30
Պատրաստ թերթի գործակալի մօտ	132

Նւթ	ՊՐԶ
Փոսթա, հեռագիր, արտագր. եւայլն	1175.10
Գործիչներին, ընկերներին, շրջիկներին	2800.20
Կովկ. բանտարկելոց ուղարկուած	9307
Նահատակ ընկերների ընտանիքների տրուած	8556
«Ազատամարտ»ին ուղարկուած	1287
Ազատ գործիչի ապրուստի ծախք	648

Ընդհանուր գումար 23574.30

Լսելով 1910 — 1911ի հաշիւներին վերաբերեալ մանրամասնութիւնները, Երջանային ժողովը որոշեց.—

ա) Փաստաթղթերի ստուգումը յանձնել նախկին Հաշուեքննիչ մարմին, եղած ծախքերը համարելով օրինական եւ ընդունելի:

բ) Ապագայի նկատմամբ դիւանական եւ ազատ գործիչի համար անհրաժեշտ ծախքերը մինչեւ 3 ոսկի ամսական չկաշկանդել սահմանուած տոկոսներով:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

- Ա. Կեդր. կոմիտէ
- Բ. Հսկիչ (կոնտրոլ) մարմին
- Գ. Դատական մարմին
- Դ. Ընդհ. ժող. պատգամաւոր

ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵՓՈՈՒԹԻՒՆՆԵՐ

Դիտելով մինչեւ այժմ գոյութիւն ունեցող կուսակցական վարչական թերութիւնները՝ օրինակ որ կատարուած են չուայ ծախսեր եւ տարիների ընթացքին մէջ Կ. Կազմի հաշիւները Երջանային ժողովի քննութեան հաստատման չեն ներկայացուած, որ Կ.Կ. իրապէս չէ եղած ընտրովի, ուշադրութիւն չի դարձուցած իր շուրջը տարածուող դժգոհութիւններին եւլն.

Նկատելով որ ամէն մի հասարակական մարմինի մէջ

եւ մանաւանդ ընկերվարական Դաշնակցութեան — կարգապահութեան հետ միասին պահելու է նաեւ ընկերական համերաշխութիւն,— օգտուելով խորհրդակցութիւնների ներկայացուցած առաւելութիւններէն:— Որոշուեց.

ա) Լայն հասարակական նշանակութիւն ունեցող հարցերի մասին Կ. Կազմը առնելու է նախապէս միւս մարմինների կարծիքները, յաճախեցնելով առհասարակ խմբական, շրջանների, Երջանային ժողովներու խորհրդակցութիւնները:

բ) Կ.Կ.ի նիստերին մասնակից ընել կոմիտէներու յատուկ նշանակուած ներկայացուցիչներին, եթէ վերջիններս գտնուին Կ. Կազմի վայրին մէջ եւ յամենայն դէպս ամէն ամսուայ առաջին նիստերին:

գ) Կուսակցութեան գոյքը (Կ. Կազմի եւ թէ կոմիտէների տրամադրութեան տակ գտնուած), պահել յատուկ մարմինների մօտ, ընտրուած վարչական կազմերէն դուրս անձերէ:

ՀԱԿԵԶ (ԿՈՆՏՐՈՒ) ՄԱՐՄԻՆ

Համոզուած, որ առանց համաիրաւահաւասար մարմինների գոյութեան ու փոխադարձ օգնութեան եւ հսկողութեան դժուար է կուսակցական մարմինները հեռու պահել միակողմանիութիւններէ, չափազանցութիւններէ, սխալներէ ու զեղծումներէ.

Երջ. ժողովը որոշեց՝
Կեդր. Կազմէն գատ ընտրել նաեւ հսկիչ (կոնտրոլ) մարմին, որը Կ. Կազմին օժանդակելու հետ միասին ժամանակ առ ժամանակ քննէ Կ. կոմիտէի եւ այլ մարմինների հաշիւները: Եւ անկանոնութիւն, չուայութիւն, կամ հակականոնազրական ընթացք նկատելու դէպքում հրաւիրէ համապատասխան շրջանների, կամ ընդհանուր Երջանային ժողով՝ ամբաստանուող մարմինների գործերը քննելու համար:

ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Նկատելով որ շրջանիս մէջ գործող մի քանի անձերի դէմ վաղուց ի վեր (նաեւ Երջանային ժողովին) ներկայացուած են ամբաստանութիւններ, որ առանց այդ մեղադրանքների անաչառ քննութեան, մի կողմէն ամբաստանողները կը գտնուին անորոշ կացութեան մէջ, միւս կողմէն կուսակցական շարքերը իրաւունք կ'ունենան մշտական կասկածներ տածելու դէպի իրենց ընկերակիցների մաքրութիւնը.

Երջանային ժողովը որոշեց.
Ընտրել յատուկ Դատաստանական մարմին այդ ամբաստանութիւնները քննելու եւ Երջանային ժողովի կողմէն իր վճիռներն տալու եւ հրատարակելու համար: Երջանային ժողովին ներկայացուած ամբաստանութիւններէն գատ, մնացած դատական հարցերը կ'առա-

ջարկուի քննել ու լուծել շրջանների մէջ միջնորդ կամ ընկերային դատարաններու միջոցաւ:

ՆՈՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

(Յարմարցուած սահմանադրական պայմաններին)

Մինչեւ օրս եւ մանաւանդ Սահմանադրութենէն առաջ կուսակցական մարմինների գործունէութիւնը կեդրոնացած է եղել ժողովրդի ապահովութեան եւ հիմնական ազատութիւններ ձեռք բերելու գործին վրայ:

Դաշնակցական տեղական խմբերը կը խաղային օժանդակողների դեր, մեծ մասամբ վարիչ մարմինների հրահանգները կատարելով: Բացի այդ, սահմանադրական կարգերի հաստատումով հասարակութեան ապահովութեան գործը դրուեցաւ վստահելի ձեռքերի մէջ, ուստի եւ Դաշնակցութեան ինչպէս եւ այլ սահմ. կուսակցութիւններին, այդ տեսակէտից կը մնայ ոյժ տալ սահմանադրական կառավարութեան, սահմանադրութեան դէմ ուղղուած վտանգների ու տագնապների ժամանակ միայն պայքարելով յետադիմականների դէմ:

Եւ քանի որ, բարեբախտաբար, վերջին վտանգը հաւանական չէ, ուստի կուսակցութեան ուշադրութիւնը կեդրոնացնելու է Դաշնակցութեան ծրագրի այլ կէտերի իրականացման վրայ:

Աւելի ապահով ու յառաջադէմ շրջանների դաշն. մարմինների գործունէութիւնը լինելու է այդ տեսակէտից մեզի ուղեցոյց:

Աշխատաւոր-Ձգաւոր դասի բարձրացման ուղղուած բարեփոխութիւնները, սահմանադրական կարգերի լայն ընթացումն ու կիրառումը կեանքի մէջ, ինչպէս եւ ազգային համերաշխութեան ու հաւասարութեան ապահովութիւնը,— ահա այն ամենակարեւոր պահանջները որ կենսական են մեր երկրի խաղաղ զարգացման համար: Դրանց գործադրութեան վրայ է որ կենտրոնացնելու են իրենց ուշադրութիւնը բոլոր դաշնակցականները, թէ իրենց ոչ սեփական միջոցներով եւ թէ գործադիր ու օրէնսդրական մարմիններին հարկ եղած դիմումները ուղղելով:

Այս ընդհանուր խնդիրներէն գատ կուսակցական մարմինները իրենց առաջ ունին նաեւ տեղական ամէնօրեայ գործունէութիւն, որը առերեւոյթս աննշան է, բայց հապէս շատ կարեւոր կուսակցական գործելակերպի ամրապնդման եւ աշխատաւոր դասի ազատագրման տեսակէտէն այլեւայլ կարգի ճշուամներէն: Հարցը կը վերաբերի այն ձեռնարկներին՝ որոնք կարելի է բաւարարել յանգեցնել ամէն մի խումբի գործունէութեամբ, կամ մի քանի փոքրիկ խմբերի համագործակցութեամբ:

Այդպիսի խմբական-ընկերական ձեռնարկներն ու անելիքներն բազմապիսի են. մի տեղ մեղուանոցի, այգիի հաստատումը, նորագոյն ձեւերով հաւաքաքար պարտէզի, բանջարանոցի, ծխախոտի մշակումը, կամ

թէ նորագոյն սերմերի տարածումը:

Մի այլ վայրի մէջ ընկերաբար գնուող եւ հաւաքաբար կամ հերթով գործածուող նորագոյն գուծանի, սերմերը մաքրող եւ հնձող մեքենայի գնելը կամ հաւաքաբար կատարուած ցանքսերը, անասունների պահելը, շատ վայրերի մէջ կը ներկայացնեն որոշ օգտակարութիւն:

Ասոր հետ միասին ընկերական միջոցներով կազմուող ամբարի հաստատումը (գարնանը չունեւորներին սերմցու մատակարարելու համար), ընկերական կամ համայնական սպառողական խանութի ձեռնարկները կարող են նպաստել վաշխի իյնալուն, դրամատէրերի ճանկերէն ազատուելուն:

Վերջապէս, ով չգիտէ որ մեր ժողովրդի այս տգիտութեան մէջ մի լրագրի հաւաքաբար ստանալն ու ընթերցումը, ամենահամեստ ընթերցարանի բացումը, լսարանի հաստատումը կ'ազատէ մեզի վնասակար նախապաշարումներէ, հիւանդութիւններէ եւ այլ մոլութիւններէ:

Ընկերական այս բոլոր ձեռնարկները կը նպաստեն ոչ միայն աշխատաւոր դասի տնտեսական վերականգման ու մտաւոր արթնացման, այլեւ խոշոր չափով ազդակ կը հանդիսանան խմբերի ինքնագործունութեան ինչպէս եւ համերաշխութեան — բարոյական սկզբունքների արծարծման մեր մէջ:

Թող ամէն մի խումբ հիմք դնէ յիշեալ ձեռնարկներէն մէկի երկուքի, անոր որը (խմբի կարծիքով) ամէնէն աւելի օգտակար ու հասունցած է, ամէնէն աւելի դիւրին կերպով իրականացնելի ու հնարաւոր տեղական պայմանների ու միջավայրին մէջ, եւ կարճ ժամանակին մէջ մենք կ'ունենանք Հ. Յ. Դաշնակցութեան վայել կենդանի ու բեղմնաւոր նոր գործունէութիւն:

Այս հիման վրայ է որ, Շրջանային ժողովը որոշեց առաջարկել Կոլտակցութեան բարձրագոյն մարմինների հաւանութեան (եւ այժմեանից իսկ Տարօն-Բարձր-չրջանի մէջ գործադրել) որպէսզի անդամավճարների 50%ը (կէսը) թողնուի խմբերին տնտեսական վերածնութեան, կոլտակցական գիտակցութեան, տեղական համերաշխութեան ապահովութեան եւ այլ օգտակար ընկերական ձեռնարկների իրականացման համար: Խմբերի մուտքերի 20%ը յատկացնել ենթակոմիտէներին եւ կոմիտէներին (չրջանակի եւ շրջիկների ծախսերը հոգալու համար) իսկ 30%ը Կ. Կոմիտէին եւ Բիւրոներին կոլտակցական ընդհանուր կարիքներին համար:

Այս ամէնը լուրջ կերպով ըմբռնելէ յետոյ, ընկերները կու գան, կը յուսանք, այն եզրակացութեան, որ վերջ պիտի դնել գոյութիւն ունեցող չնչին տնտեսական անդամավճարներին, աւելի զգալի կերպով (թերեւս միանուագ եւ բնական միջոցներով) մասնակցելով կոլտակցական գործունէութեան:

Որոշուեց. Ծանձնարարել կոլտակցական մարմիններին եւ խմբապետներին մինչեւ կալոցի վերջերը հանգանակել

(անցեալ որոշումների համեմատ) եւ համապատասխան մարմինն յանձնել անցեալ եւ այս տարուայ յետ մնացած անդամավճարները:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾ


Ընդունելով որ կրթական գործերի քայքայուած վիճակը արդիւնք է մի կողմէն Գաւառական վարչութեան անհոգութեան ու անպարտաճանաչութեան, միւս կողմէն, նիւթական միջոցներու չզոյուլթեան գիւղերու մէջ, որ հնարաւոր է ստեղծել միայն կալոցին հատիկներ հանգանակելով:

Նկատի ունենալով որ այս գործին մէջ եւս է՛ն կարելու է լուսամիտ Հայ անձերի համագործակցութիւնը (առանց կոլտակցական ու դաւանանքի խտրութեան) ու աշխատասիրութիւնը:

Շրջ. ժողովը որոշեց. Կրթական գործը յառաջ մղելու համար յանձնարարել բոլոր ընկերներին դարձնել այդ հարցի վրայ լուրջ ուշադրութիւն, չխնայելով ոչ մի աշխատանք: Այդ խնդրի կարգադրութեան համար մի քանի երեսփոխանների կողմէ հրահրել Վարդավառին յատուկ լայն ժողով գիւղական երեսփոխաններէն, հոգաբարձուներէն, կրթական գործով շահագրգռուած այլ անձերէ:

Որոշուեցաւ յանձնարարել պատկանեալ մարմիններին Մշտյ մէջ հաստատել մի ժամադրավայր կեդրոնական գրադարանով, ընթերցարանով, որուն օժանդակելու են քաղաքի եւ գիւղերի խմբերը (իրենց օգտուելու աստիճանի չափով): Այդ տան մէջ հակաքել Կոլտակցութեան անունով ու միջոցներով ձեռք բերուած ընթերցանութեան գիրքեր, հրատարակութիւններ:

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ՇՐՋԱՆ.
ԺՈՂՈՎԻ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ՝
ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ**



**ՇԻՆԱԿԱՆ, ՂԱՐԻՔ, ՆՇԱՆ,
ՍՄԲ[ԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ], ԱԹՏԻՍ**

Փաստ. 709-81

**Ա 2.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՇՈՒԹԵՐՆԻՉ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՈՅ
ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

Քննիչ յանձնաժողովս ձեռնարկելով Դուրան-Բարձր[աւանդակ]ի Կ. Կոմիտէի 907-910 տարիներու հաշիւներու քննութեան եւ բազմաթիւ ժողովներու առարկայ դարձնելով այդ հաշիւները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Հաշուապահ ընկերներու փոփոխութեան հետ միասին չէ կատարուել կանոնաւոր կերպով հաշուական փոխանցումները. օրկ. 907ի Դեկտ. 31ին պ. Թուրքիայի ներկայացուցած հաշիւներէն կը տեղեկանանք, որ 908 Օգ. — 907 Դեկտ. 31 ընդհ. մուտք եղեր է 151518 դր. իսկ ելք՝ 145947 դր. ուրեմն դրամարկղի մէջ պատրաստի մնացեր է 5569 դր. յետոյ այդ հաշիւները կը փոխանցուին պ. Գարմէնին: Պ. Գարմէնը իւր պատրաստած եւ միայն իւր ստորագրութեամբ վաւերացուած եռամսեայ 908 թ. Փետր.-Մարտ- Ապրիլ հաշուեկշռին մէջ չի յիշատակել վերոյիշեալ 5569 դր. ի մասին, նոյնիսկ կը պակսի տոմարի մէջ 908ի Յուն. ամսուայ ելքի եւ մուտքի ունէ ծանօթութիւն, հետեւաբար մեզ համար մուլ կը մնայ թէ ի՞նչ է եղեր այդ գումարը: Այնուհետեւ 908 Մայիս — 909 Մայիս պ. Գարմէնի պատրաստած մէկ տարուայ հաշուեկշռէն կը տեսնուի, որ ընդհ. կազմակերպական մուտք եղեր է 79132 դր. նոյնքան ալ ելք եղեր է մէջը հաշուելով նաեւ Կենտ. վարժարանի համար ծախսուած 22½ ոսկու գումարը: 79132 դր. ընդհ. մուտքէն զեղչելով 12801 դր. նպաստի գումարը, որմէ ծախսուած է միայն 10508 դր. ուրեմն այդ գումարէն դրամարկղի մէջ մնացեր է 2033 դր. իբրեւ զուտ մուտք կը մնայ 68564 դր. որը ծախսուած է հետեւեալ կերպով.

Գործիչ ընկերներուն	49088 դր.
Դիւանական	3086 դր.
Ապրուստ	7298 դր.
Ծառաներուն	55 դր.
Իրեղէններու	2726 դր.
Զիբրու	1843 դր.
Կենտ. վարժարանի համար	2472 դր.

Այս հաշուեկշռի մասին յանձնաժողովս հետեւեալ դիտողութիւնները կ'ընէ թէ՛ ըստ ձեւի եւ թէ՛ ըստ էութեան. ա) որ կանոնաւոր եւ օրհաշիւ մատնաներ չկան. բ) կը պակսին լրիւ ու վաւերացուած փաստաթղթեր, այսինքն գնուած ուտելիքի, խմելիքի, ընդեղէններու եւն կշռի ու չափի քանակը չէ նշանակուած, ինչ որ բազմաթիւ զեղծումներու դուռ կարող է բանալ. եւ գ)

այդ հաշիւները կը հակասեն կազմ. կանոնագրի հիմնական օրէնքներուն, որոնք կը տրամադրեն, որ որեւէ կեդր. կոմիտէ իւր ունեցած մուտքերէն ծախսելու իրաւունք ունի նուազագոյնը (minimum) տեղական պէտքերուն համար, առաւելագոյնը (maximum) պիտի յատկացնէ ինքնապաշտպանութեան գործին, իսկ մէկ մասն ալ իբրեւ անձեռնմխելի գումար պիտի պահուի դրամարկղի մէջ: Մինչդեռ ներկայացուած հաշիւներէն կը տեսնուի, որ ոչ միայն ունէ կանոնաւոր գումար չէ յատկացուած ինքնապաշտպանութեան (ծախսուած է 10 ոսկի), որ ոչ միայն անձեռնմխելի գումար մը չէ մնացեր սնտուկին մէջ, այլ բոլոր մուտքը ծախսուած է, ինչ որ հակասիւնական է եւ որու պատասխանատուն ըստ օրինի ժամանակի Կ. Կոմիտէն է: Ասկէ յետոյ հաշիւները պահեր է պ. Հայր Յակոբ Կոտոյեանը: Ասոր ներկայացուցած 909 Ապրիլ — 910 Մարտ 11ամսեայ հաշուեկշռէն կը տեղեկանանք, որ ընդհ. մուտք եղեր է 51627 դր. 30 փարա, իսկ ելք՝ 51562 դր. 30 փարա: Նշանակուած մուտքին մէջ կը մտնեն նաեւ ծխաւցի պ. Յարութիւնեանի 40 ոսկին, առքավանքի նահատակ ընկեր Վահանի 30 ոսկին, պ. Զաւարեանի միջոցով ստացուած 50 ոսկին եւ Առաջնորդարանէն՝ կրթական դրամէն առնուած 3212 դր., որոնք չգիտենք ինչ պատճառաւ ընդունուած են իբրեւ կազմակերպական) մուտք եւ ծախսուած: Իբրեւ մուտք նշանակուած 51627 դր. ծախսուած է հետեւեալ կերպով.

Գործիչ ընկերներուն	7083 դր.
Դիւանական	1487 դր.
Նպաստի	926 դր.
Ապրուստի	12881 դր.
Ծառաներու	673 դր.
Իրեղէններու	1944 դր.
Զիբրու	10513 դր.
Աղքատներու	926 դր.
Այլեւայլք	14494 դր.

Այս հաշուեկշռի մասին ըստ ձեւի եւ ըստ էութեան ընկելով նոյն դիտողութիւններն, ինչ որ վերեւ յիշեցինք պ. Գարմէնի ներկայացուցած հաշուեկշռի մասին, կ'աւելցնենք որ ներկայ ծախսերը կատարուած են Ս. Կարապետի ռայոնական ժողովէն յետոյ, որու մէջ որոշուած եւ յանձնարարուած է, որ Կենտ. Կոմիտէի ընդհ. մուտքը ծախսուի հետեւեալ սակերու համաձայն. 20%

տեղական պէտքերու, %40 ինքնապաշտպանութեան. %20 անձեռնմխելի գումար եւ %20 ալ ուղարկել Արեւելեան Բիւրոյին, սակայն Կ. Կոմիտէն իւր ընդհ. մուտքը չուայրել է հակառակ այս որոշման: Հետեւաբար յանձնաժողովս հիմնուելով կազմ. կանոնադրի Չերչ-յօդուածի եւ Ս. Կարապետի ռալոյն. ժողովի որոշումներու վրայ, կատարուած հակականոնական այս ծախքերուն համար պատասխանատու կը ճանչնայ Կ. Կոմիտէն հաւաքաբար: Յիշատակութեան արժանի է նաեւ հետեւեալ պարագան, որ նոյն ռալոյն. ժողովը եւ մանաւանդ ընկերները պ. պ. Գարմէն, Սեպուհ, Հաջի Յակոբ, Մարգարէտ եւայլն, երբեք խնդրոյ առարկայ չեն ըրեր այդ ժողովի մէջ նախկին տարիներու հաշիւները, մինչդեռ իւրաքանչիւր ռալոյն. ժողովի օրակարգի ա. խնդիրը կը կազմէ հաշուական խնդիրը:

Յանձնաժողովս հարկ կը համարէ յայտարարել նաեւ, որ չի կարող օրինական համարել Կ. Կոմիտէի ընկերներէն ոմանց այն առարկութիւնը, թէ իրենք մեծ մասամբ բացակայ են գտնուելու կենտրոնէն եւ որ ծախսերը կատարուել են պ. Գարմէնի պատասխանատուութեամբ: Յանձնաժողովս կը նկատէ, քանի որ իրենք կազմի անդամներ են եղեր եւ են մինչեւ օրս ալ եւ գործեր են կազմի անունով ու հրահանգներով, այդ պատճառաւ ալ պատասխանատու են եղած ծախքերուն, որովհետեւ ըստ օրինի ոեւէ կազմի անդամներէն ոմանց գործած ապօրինութեանց պատասխանատուն կազմն ինքն է հաւաքաբար:

Ասոր հետ մէկտեղ յանձնաժողովս նկատելով, որ այսքան շուայլ ծախքերու պատճառը մեծ մասամբ կազմակերպական տան գոյուլութիւնն է եղեր, իւր գարմանքը կը յայտնէ թէ Կ. Կոմիտէն ինչ յարգելի պատճառներէ բռնադատուած կազմ. տունն է պահել սահմանադրութեան օրերու մէջ, երբ կազմի դրսեցի անդամները կարող էին աւելի նուազ ծախքով ապրել, առանց այդքան

ծանրաբեռնուելու կուսակցութեան վրայ: Յանձնաժողովս տարօրինակ կը գտնէ նաեւ այն պարագան, որ կուսակցութեան աչքի ընկնող անդամներ, ինչպէս են պ. պ. Զօրեան, Մարգարէտ, Մուրատ, Սեպուհ եւայլն շրջանս եկեր ու գնացեր են եւ նկատելով հանդերձ այդքան հակաօրինական շուայլ ծախքերը, վերջ չեն տուելու կազմ. տան գոյուլութեանը, որմէ օգտուել են առաւելապէս այդ տան բնակիչներն իրենց ազգականներով ու պարագաներով հանդերձ:

Այս բոլորէն յետոյ, ենթադրելով անգամ, որ Կ. Կոմիտէի յարգելի անդամները կազմ. կանոնադրի հաշուական գլխի Չերչ-յօդուածի մասին տեղեկութիւն չեն ունեցեր, ենթադրելով, որ մոռացեր են Ս. Կարապետի Ռալոյն. ժողովի մէջ իրենց տուած որոշումները, ենթադրելով, որ կազմ. տան գոյուլութիւնը անհրաժեշտութիւն է եղեր շրջանիս համար, դարձեալ կը տեսնենք որ եղած ծախսերն ամէն չափ ու սահման անցեր են: Բերենք բնորոշ օրինակ մը. 909 Ապրիլ-910 Մարտ, 11 ամսուայ մէջ ձիերու համար (երբեմն 7, երբեմն ալ աւելի քիչ) ծախսուել է 10513 դր. կամ մօտ 100 ոսկի: Յայտնի է ամէն մարդու, որ ձի մը տարեկան լաւ կերպով կարելի է պահել 7-8 ոսկով. ուրեմն եւ պահուած ձիերու համար 50-60 ոսկին բաւ պիտի համարուէր, բայց ծախսուած է 100 ոսկի: Այս ալ ըսենք, որ մօտ 3-4 ամիս ալ ձիերը քաղաքէն բացակայ են գտնուելու, ուրեմն եւ ծախս չի եղեր. այդպէս 7-8 ամսուայ միջոցին ծախսուել է քանի մը ձիերու համար մօտ 100 ոսկի... բացատրութիւններն աւելորդ են:

Ներկայացնելով այս ամփոփ տեղեկագիրը 907-910 երեք հաշուեկշիռներու հետ մէկտեղ Դուրան-Բարձրաւանդակի ռալոյն. ժողովի լուրջ ուշադրութեան ու անաչառ քննութեան, կը խնդրենք պարտ ու պատշաճը տնօրինուի:

911 Մայիս 28, Մուշ

Անդամք Հաշուեքննիչ յանձնաժողովի

(Ստորագրումներ)

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԹՈՎ ՀԱՆՆԷՍԵԱՆ
 ԱՐՇԱԿ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ
 Ա. ՇԱՐԻԿԵԱՆ
 ՄՈՒՇԵՂ
 ՏԻԳՐԱՆ
 ՏԷՐ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՍԱՐՈՒԽԱՆ

Փաստ. 1543-25

Բ.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱԿԱՆ ԳԱԿԻ Կ. Կ.-ԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Փաստաթուղթը (անստորագիր, Չաւարեանի ձեռագրով) կը գտնուի Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդի. Ժողովի քրթածը-րարին մէջ: Ընդի. Ժողովը գումարուած էր Կ. Պոլիս 1911 թ. Օգոստոս 17 - Սեպտեմբեր 17: Ս. Չաւարեան նախորդ երկու տարիներու գործած էր Տարօն-Սասունի մէջ իբրև շրջանի ազգային վարժարաններու տեսուչ եւ այդ միջոցին հաւաքած եւ իր տեղեկագրին կցած է վիճակագրական այս նիւթերը:

Շրջան

Դ[ուրան]-Բ[արձրաւանդակ]ի շրջանը պարունակում է Բիթլիսի վիլայէթութիւնը՝ Բիթլիս, Մուշ, Սղերդ եւ Գինջ միւթեսարի ֆուլթիւններով: Մշոյ եւ մասամբ Բիթլիսի միւթեսարի ֆուլթիւններ են, որ կիսով չափ հայկական են.—

- Մշոյ դաշտը 90 հայկ. գիւղեր՝ մօտ 4000 ընտանիք (մեծ մասը զուտ հայաբնակ)
- Սասունը (յարակից գաւառակներով) մօտ 1500 ընտանիք
- Երկու Բուլանլիները, մօտ 50 գիւղ խառը 2000 ընտանիք
- Մանազկերտ, 15-20 [գիւղ] խառը ?
- Վարդօ, 6 գիւղ

Կպուած լինելով իւրաքանչեւ — Կարճկանին եւ յետոյ Վանին, Թ[ուրքաց] Հայաստանի մէջ ամենահայկական շրջանն է սա:

Հայկական իր մնալու պատճառը հաւանաբար հեռու լինելն է (15 օր Տրապիզոնից, 10 օր ուղևաց սահմանից, 12 օր Պարսկաց սահմանից եւ 20-25 օր Միջերկրական ծովից), որ արգելք է հանդիսացել դատարկութեան:

Բայց նոյն հեռավորութիւնը պատճառ է եղած նաեւ նրան յետամնաց լինելուն, յետամնաց՝ բոլոր տեսակէտներից:

Ժողովրդի ապրուստի միջոցը կազմում է հողագործութիւնն ու անասնապահութիւնը: Բայց այս ճիւղերն էլ զարգացած չեն: Երկաթէ գութանը նոր է մտած, հրնձելու մեքենայ՝ եւ ոչ մի հատ, տեղ տեղ կամերով կալսելու տեղ կալը կը ծծեն անասունների ոտքերով, սայլերի տեղ գործ կ'ածեն սահակներ... պարզ քաշանի ձեւ: Լաւ ցորենից ստացուած է վատ հաց, կաթը գործ է ածուած իւղ եւ թան ստանալու համար, պանիր չինել չգիտեն... Բայց գործութիւնը (որ տարածուած էր Գաննոֆոնի օրերէն) գոյուլութիւն ունի միայն Մուշ քաղաքի եւ շրջակայ մի քանի գիւղերի մէջ:

Բամբակ կը բուսնի բայց չի մշակուում. չալթուկը՝ կը մշակուի միայն վերջի տարիները:

Արհեստները՝ ամենատարրական, ամենանախնական ձեւերով...

Ժողովրդի կենցաղը շատ ընկած, համարեա հաւասարուած քրդերի կենցաղին: Գետնափոր տներ, անկանոն-անբաւարար սնունդ. սեղանի, ափսէների բացակայութիւն: Աղտոտութիւն՝ ամենալայն իմաստով:

Այս ամէնի հետ միասին ուժեղ, դիմացկուն, աշխատաւոր գիւղացիութիւն, հայ-քրիստոնէական ազգի մի զանգուած, որը համիդական ռեժիմը ուզեց քանդել: Ուզեց քանդել եւ Սասունի հետ միասին ենթարկեց սիւտեմաթիկ հալածանքների, սոսկալի կեղեքումների:

1908-7 թուականներին ողջ գիւղերը չքայած էին, տները կէսերից ծուխ չէր բարձրանում: Մեռնողների թիւը կրկնակի էր ծնողների թիւից:

Սահմանադրութեան լուրը այս շրջանին համար հանդիսացաւ իսկական աւետիս, որ ողջուցուեց նոյնքան մեծ հրճուանքով, որչափ մեծ էին իրենց կրած տառապանքները, տուած գոհերը:

Վերջի երեք տարիների ընթացքին մէջ տարօնցի-սասունցի զբաղուած է շինարարական աշխատանքով:

Գաղթականները կամ բոլորը կամ գէթ նրանց 4/5-ը վերադարձան: Տները նորոգեցին ու վերաշինեցին: Պարտքով, մրիպայութեամբ⁴, սալաֆի⁵ միջոցաւ ձեռք բերեցին լծկան, կիթան, ոչխար. ցանքսերը շատցան. հայի ստացուածքը, բերքն ու եկամուտը կրկնապատկուեց:

15-20 դրուշից ցորենի գինը իջաւ 8-12 դրուշի: Մշակի օրավարձը ամառը 3-5 դահակահից բարձրացաւ 7-8ի:

Մի քանի փաստեր ապացոյց են ասածներին (տես առանձին տախտակը): Անցեալի հետ համեմատած վերջի 3 տարուան մէջ շրջանի կրած փոփոխութիւնը մեծ է. կ'արտայայտուի 30-50-100%-ով: Դժբախտաբար դեռ եւս շատ բան կայ անելիք: Հայ տարրի 9/10-ը ընկած է

4.- Չալթուկ՝ կեղեղ դեռ չհանուած բրինձ:
 5.- Մրիպա՝ հողագործ մշակ:
 6.- Սալաֆ՝ բարձր տոկոսով փոխառութիւն:

սարսափելի պարտքի տակ (5-10-50 ռ[սկի] տան վրայ), եւ դարձած է մրիպա եւ իր ստացած տարեկան արդիւնքի կէսը հարկադրուած է վճարելու դրամատէրերին:

Դրանով է բացատրուում արտագաղթի ուժեղացումը, մանաւանդ դէպի Ամերիկա ուղղուող:

Նիւթականի հետ միասին սահմանադրական շրջանին մէջ ուժեղացաւ եւ ժողովրդի մտաւորը: Դպրոցների թիւը կրկնապատկուած ու եռապատկուած է, բարձրացած է լուսաւորութեան գիտակցութեան որակը:

Կազմակերպութիւն

15 տարուայ պայքարի եւ գինուորական կազմակերպութեան ընթացքում կուսակցութեան մէջ էին մտած (կամ լռելեայն նրա հրամաններին կը հետեւէին) համարեա բոլոր հայերը, որ ունէին արժանապատուութեան զգացմունք: Ազգ եւ Դաշնակցութիւն դարձած էին հումանիշ արտայայտութիւններ: «Յեղափոխութիւնը» դարձած էր կրօնի նման մի պաշտամունք. ընկած հերոսները գրաւած էին վաղեմի սրբերի, աստուածների տեղը...

Սահմանադրութեան հռչակումէն յետ ստեղծուում է կանոնաւոր կազմակերպութիւն համայնական հողի վրայ (բոլոր ցանկացողներից): Թէկուզ 20-10-ական փարա անդամավճարներով, գիւղական ենթակոմիտէների եւ հետեւաբար կոմիտէների ղեկը անցնում է գիւղերի ազդեցիկների (ռէյիսների եւայլն) ձեռքը եւ նախ-

կին գինուորները յետ են մղւում: Ժամանակին կուսակցութիւնից տուժածները եւ այսօր «իշխանութեան» զլուխ կայնածները յաճախ սկսում են վրէժ լուծել գինուորներից: 1900-ին խոստացուած չնչին ամսավճարները, կեդրոնական (կոմիտէի) կամ կոմիտէների ջանքերի շնորհիւ վճարում են իրենց անդամավճարների մեծ մասը: Բայց յետոյ, տեսնելով որ կուսակցութիւնը բանտ ունեցող եւ մահուան ենթարկող կառավարութիւնն չէ, չհասկանալով նրա կարեւորութիւնը ներկայիս մէջ եւ մանաւանդ՝ չտեսնելով կոնկրէտ գործ եւ ընդհակառակը սոսկ ապրուստի վրայ վատնած գտնելով իր տուած գումարները, ժողովուրդը պաղում է: 1910-ին անդամավճարներ համարեա չկային:

Մինչեւ օրս էլ ժողովրդի մաքուր տարրերը հազիւ են գիտակցել կուսակցութեան նպատակները, կենդանութիւնն չէ առած մեր նոր գործելակերպը: Վերակազմուած խմբերը (14 ենթակոմիտէութիւններից) բոլորն էլ խառը ձեւի են. կրնան եւ կրկնապատկուել, բայց եւ շատ սեղմուել նայած ղեկավար անձանց, կենդանի գործունէութեան, տակտին, մաքրութեան: Թաքցնելու չէ որ կ[ուսակցական] գործունէութիւնն էլ դարձած է բաւականին դժուար ներքին պառակտումների պատճառաւ: Կուսակցութիւնը լեզալիզէ չէ եղած. Իթթիհատի հետ պաշտօնական յարաբերութիւններ չունի:

Շրջանի ցանկութիւնն է ունենալ իր մէջ գէթ 1-2 գործող ընկերներ եւ օգնութիւն ստանալ ինքնապաշտպանութեան համար:

Այս շրջանում (այսպէս ասած) հարկադրուած էր մեր հայերը իրենց կողմից ստացած 20-50% շահերը վճարելու իրենց կողմից: 1900-ին խոստացուած չնչին ամսավճարները, կեդրոնական (կոմիտէի) կամ կոմիտէների ջանքերի շնորհիւ վճարում են իրենց անդամավճարների մեծ մասը: Բայց յետոյ, տեսնելով որ կուսակցութիւնը բանտ ունեցող եւ մահուան ենթարկող կառավարութիւնն չէ, չհասկանալով նրա կարեւորութիւնը ներկայիս մէջ եւ մանաւանդ՝ չտեսնելով կոնկրէտ գործ եւ ընդհակառակը սոսկ ապրուստի վրայ վատնած գտնելով իր տուած գումարները, ժողովուրդը պաղում է: 1910-ին անդամավճարներ համարեա չկային:

4. Գաղթականները իրենք իրենց կողմից ստացած 20-50% շահերը վճարելու իրենց կողմից: 1900-ին խոստացուած չնչին ամսավճարները, կեդրոնական (կոմիտէի) կամ կոմիտէների ջանքերի շնորհիւ վճարում են իրենց անդամավճարների մեծ մասը: Բայց յետոյ, տեսնելով որ կուսակցութիւնը բանտ ունեցող եւ մահուան ենթարկող կառավարութիւնն չէ, չհասկանալով նրա կարեւորութիւնը ներկայիս մէջ եւ մանաւանդ՝ չտեսնելով կոնկրէտ գործ եւ ընդհակառակը սոսկ ապրուստի վրայ վատնած գտնելով իր տուած գումարները, ժողովուրդը պաղում է: 1910-ին անդամավճարներ համարեա չկային:

	Տների քիւ	հողագործիկ	անասուն չունեցող	եզ չունեցող	լուծք			մրիպա	պարտք ուկի		
					հիմա [1911]	1908	1894		հիմա [1911]	1908	1894
Աշտիշատ (Գերըք)	30	5	6	9	15+6	12+9	15+0	18	150	200	50
Ղզլաղաճ (10 տուն)	10	2	5	5					140	300	-
Յրօնք	10	1	2								
Ղաշղաղաղ	40	0	15		8+25	4+17	34+4		400	600	?
Բերդակ	130	50	70		10	25	60	60	բոլորը 100էն մինչէւ 5		
Խարց	120	20	76			14+8		42	7800	?	?
Վարդենիս	170	40	50			15+20		42	600	650	?
Արաղ	87		50		7+0	5	20		1300	1500	500
Ազաղքիւր	70		40		3+27	2+16	50		1250		
Քարձոր	60		56		0	40+1	60		250	400	?
Արգավանք	50	4			5+15	0+3	50+4		800		
Տոմ	33	9	15		5+11	4+13	25+15	33	450	620	260
Ավանդինճ	110	21	58		17	13	70				
Արան	200	20	30		70	40	60	50	800	1200	200
Ծխաւու	50	12			25	23	25	22	200	250	250
Սպաղանք	10	0	6						41,5		
Խտան	10	0	2								
Գելիկուզան	10	0									

նշխար սեփական հիմա [1911]	տաւար սեփական			ծողովրդի աճումը տարին				
	1908	1894	1911	1904-11	1903-11	1904-08		
300	230	800	120	100	250	1,7	3,2	+06
230	190	315	110	90	313	0,3	4,5	-1,8
			46	17	167	0,5	2,5	-0,6
260	200	500	60	40	240	0,25	2,1	-1,7
800	600	7000	120	100	?			
250	150	1200	150	80	500	+0,2	+1,3	-0,9
40	0	500	100	40	500			
500	350	3000	200	120	?	2,3	4,5	-0,4
15	0	1500	50	20	400	1,8	3	0,6
0	0	1000	38	3	240	1	3,3	0
200	27	800	80	8	500	-0,2	+1,5	-2
40	40	300	20	20	150	3,55	6,2	23?
700	230	4000				+0,4	2	1,2
500	300	1200	1000	500	1600	+3,3	5,7	0
800	500	900	170	170	200	+2,4	4,3	1,5
182			8			2	5,3	-0,5
253		880	20		84	-1,5%	5	-0,2
180	48	550	37	10	60	+0,2	7	-0,3

Հեթինք	տուն 50 լուծք 7 և կեսը կով 15 նշխար 180 ձի, ջորի էշ 2	ան 50 ան 100 ան 3000 6 60	Մուլուխ	0,7	3,1	1,3		
			Կվարս	հ[այ]	0,5	3,7	1,45	
				զազա	2,4	1,8	2,25	
Չրիկ Աճեցում	ս[րանից] ա[ռաջ]	յետ	միջ[ին]					
հայեր	1	3	1,7					
թուրք	1,6	2	1,7	Առնջվանք	հ[այ]	0,8	2	1,1
				քուրդ	2,3	4	2,5	

Փաստ. 706-30

Գ 1.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

21 Մարտ 1910, Մուշ

Արեւմտեան] Բ[իւրոյ]ի Վիչ[ապի] ընկերներին,

1) Վերջերս, գարնան սկսելուն պէս, միաժամանակ մի քանի տեղերից (հայեր եւ քրդեր) դիմեցին քաղաքս եւ ընդհանուր ստորագրութեամբ հեռագիրներ տուեցին Պոլիս, բռնի կերպով գրաւուած իրենց հողերի մասին. արդիւնքը կը լինի երեւի սովորական ձգձգումներ, որպէսզի գրաւողները վարը-ցանքսը կատարեն, որից յետոյ (ցանքսի պատրուակով) հեռացնելը կը դժուարանայ:

Բոլոր պաշտօնեաները (եւ նրանց մէջ հեռացուած միւլթասարիֆը)բացորոշ կերպով յայտնում են որ այդ քաղաքականութիւնը հետեւանք է ներքին գործոց նախարարի անորոշ, միմեանց հակասող հրահանգներին: Այլ կերպ դժուար է բացատրել նոր մահմ[ետական] գաղթականների առաքումը դէպի այս հայկական շրջանը: Հաշտարար շրջող ատեանը եւս բան չի կարող անել, միմիայն կը ձգձգէ հարցը, մինչեւ որ ըստ էութեան չընդունուի (առանց յետին մտքերի) որ 1890ի (կամ [18]76ի) հողային status-quoն պիտի վերահաստատուի (քոչան⁷ արածների նկատմամբ յետ վճարելով սկզբնական գումարը):

Խառը (Իթթ[իհատ] եւ Դ[աշնակցութիւն]) յանձնաժողովի ուսումնասիրութիւնն ու քննութիւնը եւս նշանակութիւն չունի, եթէ դրանից յետին դիտաւորութիւնները եւ ցանկութիւնները պահելու են իրենց էութիւնը:

2) Սասնոյ նպաստի հարցը մնում է ու մնում: Կարկուտի ենթակայ մի քանի գիւղեր վաղուց ի վեր դիմած էին նպաստի. միւսին էլ վաւերացրած է: Հիմա ասում են որ 24.000 դր. նպաստ են տալիս փոխառութեան ձեւով: Սասնից էլ տատանում են վերցնել: Առանց այն էլ ամէն գիւղ տասնեակ հազար (ոմանք 80.000 եւ աւելի) բաքեաներ⁸ ունեն աւերման-կոտորածի տարիներից մնացած: Սրանց նպաստ է հարկաւոր եւ ոչ փոխառութիւն: Փոխառութիւն քրդերից ու վաշխառուներից էլ կարող են անել:

3) Հողային խնդրից յետոյ աւելի լաւ է առաջ մղել գիւղական պահակների հարցը կամ աշար-աղնամի պակսեցման, միւլթէգիմութեան վերացման խնդրները⁹: Բէկութիւնը արդիւնք է հայերի թուլութեան եւ օրէնքի բացակայութեան. բէկերն էլ յիմար չեն: Սասնում խաֆիրութիւնը¹⁰ վերջացնում են, բայց բոլոր հողերը իրենցն են յայտարարում եւ հողավարձ պահանջում:

4) Մեզ վրայ շատ ծանր տպաւորութիւն գործեց Բիթլիսի, Կարնոյ, Վանի վալիների փոփոխութեան լուրերը. դա կը լինէր սահմանադրութեան ֆիասկոն, դերեբէյիները¹¹ յաղթանակը: Նրանցից դժգոհողները կեղեքիչներն են, հեռացուած գող պաշտօնեաները, որոնք «գործեր» են ստեղծում, հեռագիրներ տալիս: Նրանց դէմ են եւ «համիլիէի» դեկավարները, Քէօռ Հիւսէիները, գուցէ եւ 4րդ բանակի միւլխիրը¹²: Սահմանադրական վալիների փոփոխելը եւ համիլիէն տեղը թողնելը, դա մի այնպիսի ապտակ է, որը չպիտի տանել:

5) Կրթական տուրքի նկատմամբ, մենք գործելու ենք համերաշխօրէն միւս քրիստոնեաների հետ: Հողային տուրքը %12ի բարձրացնելով, կլանուում է պետութեան (թրքութեան) կողմից եւ դպրոցական տուրքը, որ մեզ մօտ միայն կազմում է տարին 1300 ոսկի (որից 3/4ը հայերն են վճարում):

6) «Արեւելեան շրջանին տրուելիք օժանդակութիւնը տարաբախտաբար մնաց միայն «որոշում». արդեօ՞ք նոյն «տարաբախտութիւնը» նկատուում է եւ թերթի ստացած օժանդակութեան նկատմամբ թէ չէ: Այդ կէտը ճշդեցէք:

7) Լաւ կը լինէր, մինչեւ դրամական հարցի կարգաւորումը (տեղիցը եւ տեղիցս սկսած) միւս տեսակի գործուցումներին տրուէր երկրորդական տեղ: Այս երկու տարուայ միտինգային եւ սալոնական քաղաքականութեան արդիւնքը ակնհայտ է. դրա շարունակելը միամտութիւն է:

8) Այդ ի՞նչ 1508 1/4 դրուշ է որ 2-ը պարտ է Ազատութեան Մատենադարանին: Արդեօք Հաջըն, Զէյթուն, Այնթապ զրկուածնե՞րն են, թէ այն գրքերը, որ դեռ Կարին են եւ տեղս չեն հասած:

9) Այստեղի պարտատէրների խստութիւնները (անցեալի պարտքերի համար) հարկադրեցին ինձ հեռագրով 50 ոսկի ուզել վահարից¹³: Կը խնդրեմ տղաներից միւս անգամ մանրամասն բացատրութիւն գրել դրա մասին:

Բարեւներով,
Դ[ուրան]-Բ[արձրաւանդակ]ի Կ.Կ.ի կողմից
ՍՄԲ[ԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

7.- Քոչան՝ սեփականատիրութեան պաշտօնաթուղթ:
8.- Բաքեա, բախեա՝ յետնեալ պարտք:
9.- Աշարը՝ քերթի տասանորդի տուրքն է: Աղնամը՝ ոչխարներու վրայ վերցուած տուրք: Միւլթէգիմութիւն՝ հարկահաւաք կապալառուներու միջոցով:

10.- Քիւրտերու կողմէ պատրաստուած ապօրինի տուրքի դրութիւն:
11.- Դերեբէյի – աւատապետ (բառացի՝ հովիտի իշխան, պետ):
12.- Միւլխիր հրամանատար:
13.- Վահար՝ Վտանեան Արշակ:

Փաստ. 706-47

Գ 2.- Ա[ՐԵՒԵԼԵԱՆ] Բ[ԻՒՐՈՅԻ] ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

10 Մայիս 1910, Մուշ

Օրուայ խօսակցութիւնը այստեղ Գարմէնին² քննութեան ենթարկելու եւ հեռացնելու պահանջն է: Նոր վալին՝ թողած վերջին սպանութիւնների հեղինակներին, մոռացութեան տալով Մուսա եւ այլ բէկերի «չարիաթ»ական միութիւնը, զինուած խմբով պատելը, աչք գոցելով եւ պաշտպանելով բռնութեամբ հողեր գրաւողներին, եւայլն, կողմնակի եւ ուղղակի միջոցներով ուզում է Գարմէնին հեռացնել: Պատճառը՝ թէ նրա դէմ են բոլոր աղաները, որ նա է պատճառ «հողային» խառնակութիւնների հարցի: Էութիւնը պարզ եւ հասկնալի է. Թահիր փաշան սկզբից յայտնի է իր կաշառակերութեամբ, նրանով՝ որ ապրած եւ ապրում է «դրամով»: Նա հին ծանօթ բարեկամ է տեղիս բէկերի, խնամի-ազգական Բիթլիսի Հաջի Նէջմէդդինի, որը վերջին 20 տարուայ մէջ տասնեակ քիւրդ գիւղեր է սեփականացրել Զիտուրի շրջանում: Բռնութեամբ հողեր սեփականացնող աղաները տրամադրելի կ'ընեն հարկւրաւոր-հազարաւոր ոսկիներ, միայն թէ իրենց բռնութիւնը շարունակուի: Քանի որ հայ եւ քիւրդ գիւղացիների յայտնապէս պաշտպան հանդիսացել է Գարմէնը, վերջինիս հեռացումը խոշոր չափով կ'ազդէ բողոքող գիւղացիների տրամադրութեան վրայ, լուեցնել տալով նրանց՝ զաւթող ուժեղների առաջ:

Եթէ դրա վրայ աւելացնենք նաեւ հայերին սպանողների չբանտարկելն ու չպատժելը (որ, բնական է, սարսափի է ենթարկում հայերին), պատկերը կը լրացուի:

Ակներեւ պաշտպանութիւն համիդականների, հալածում ազատական խաւերի...: Քրդերի մէջ յամառ լուրեր են պտտում, թէ Համիդի տղան իրենց մէջ պահուած է, հրահանգներ է տալու իրենց եւայլն:

Միւս կողմից, զօրքեր են գալիս՝ Պիթլիսից, Ախլաթից, գուցէ եւ տեղիցը¹⁴: Կ'ըսեն որ դրանք շրջելու են վտանգը տեղերը, որ գիւղական պահակներ են նշանակելու (տեղացիներից). բայց ամէնից առաջ «խաղաղութեան» համար օգտակար է սեպուում Գարմէնի հեռացումը, որի կը յաջորդեն հարկաւ ուրիշները. Թահիր փաշան Վանից բերել է տալիս մի քանի հին ռեթիմի վառուած[?] «բարեկամներ»: Այս «քաղաքականութեան» դէմ մենք կը բողոքենք ու կը կռուենք. գիտցէք դուք եւս եւ աշխատեցէք որչափ կարող էք:

Քրդերից շատերը չեն միացած Մուսա բէկի եւ եղբայրների հրահանգին եւ այդ անհամաձայնութիւնը մեծապէս նպաստեց խոշոր շարժման առաջ չգալուն: Յանքսերը շատ են եւ լաւ են: Ժողովուրդը յոյսեր ունի ցորենով կշտանալու:

Հաշիւների, «պատճէնի» մասին յետոյ. չենք խօսած դեռ:

Ս[ՄԲԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

14.- Այսիցքն Կարինէն, որ կեդրոնն էր Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածին:

Փաստ. 706-77

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գ 3.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հայրենակիցներ եւ ընկերներ,

Համիտական վարչութեան գործողութիւններէն ամէնէն աւերիչը եւ ամէնէն ատուածը եղած է աշարի դրութիւնը եւ միւլթզիմութիւնը՝

Տասանորդական տուրքէն ազատ պահելով միլիոնների գործառնութիւն ունեցող սեղանատրոններին ու բանքաները, արդիւնաբերական-առեւտրական խոշոր ձեռնարկները, ինչպէս եւ ապահով ռոճիկ ստացող բարձրաստիճան պաշտօնեաները, աշարը ծանրացած է միայն հողագործ դասակարգի վրայ:

Հասարակութեան միւս խաւերի հետ միասին վճարելով պետական ընդհանուր տուրքերը՝ աղնամը, վերգուն, քիմէթուն, ճանապարհի տուրքը, ինչպէս եւ փուլերը, մաքսը, զինուորը – զիւղացիին կը վճարէ նաեւ *յաւելուածական աշարը*, որ համեմատաբար աւելի ապահով քաղաքացիներու ու պաշտօնեաներու հետ՝ կը կրկնապատկէ հողագործի տուրքի բեռը:

Անվիճելի ճշմարտութիւն է, որ պետական գանձին համար ամենաաղքատ գիւղացիին կը վերցուի իր տարեկան ստացածի 1/3-1/4-ը (հարիւրին 20-30ը), այն ինչ քաղաքացի ունեւորը չի վճարէր շահածի 1/10-ը (10%), իսկ շատ հարուստ պէյն ու փաշան կառավարութեան կը շարտէ միայն փշրանքներ, հարիւրատըր սկի հասոյթէն հազիւ մէկ երկու ոսկի...

Ասկէ գատ՝ աշարի հետ կապուած միւլթզիմութիւնը, կեղրոնացնելով առեւտրին ենթակայ հացահատիկները մի քանի տասնեակ վաշխառուների ձեռքին մէջ, կը նպաստէ հացի գնի արհեստական բարձրացման եւ սովի առաջ գալուն:

Վերջապէս, ո՞վ չգիտէ, որ այգեգործութիւնը, պարտիզպանութիւնը, բամբակի եւ այլ շահաւէտ բոյսերու մշակութիւնը աւերուել է մեզ մօտ եւ չի զարգանար գլխատրապէս շնորհիւ միւլթզիմների կամայականութիւնների, քանի որ մէկ ոսկիի բոստանը կամ այգին կը գնահատուի 2-3 ոսկիի:

Համիտական ռեժիմի հարկային այս ձեւով՝ հովանաւորուել է ճարպոտած աղաւթը [?] եւ յուսահատեցրել չարքաշ աշխատատըր ժողովուրդը, ի վնաս ամբողջ երկրի, ամբողջ պետութեան:

Մահմանադրութեան հաստատումով յուսալի էր, որ աշարը պիտի վերացուէր, փոխարինուելով տուրքով՝ հարըստութեան, ժառանգութեան վրայ, կամ պաշտօնեաների քիւր պակսեցնելով եւ բարձր ռոճիկները կրճատելով:

Այդպէս եղած է քաղաքակիրթ բոլոր երկիրների մէջ, նոյնիսկ յետամնաց Ռուսիոյ, եւ այդպէս էլ լինելու էր մեզ մօտ: Դժբախտաբար երկու ձիգ տարիներ այդ տեսակէտէն անցան ապարդիւն:

Աշխատատըր՝ չքատըր դասը այսօր կը գտնուի աշարի նոյն ծանր բեռի տակ, ենթակայ է միւլթզիմների նոյն բռնութիւնների, ինչպէս տարիներ առաջ:

Նոյնն է ցաւը, նոյնը պիտի լինէր եւ վերքի դէմ ուղղուած դարմանը: Բոլոր գաղափարական մարդիկ, ժողովրդի ցաւերով զբաղուած կուսակցութիւնները մեծ չարքի մկատմամբ բռնելու էին նոյն դիրքը, որ ունեցած են անցեալի մէջ:

Դժբախտաբար, ոմանք «մեզնից» անտես առին այս ճշմարտութիւնը: Դաշնակցական «իսկ» ընկերներէն մի քանիսը, դրդուած նեղ վիճակից, ընկնելով քիւրիմացութեան մէջ, կամ հետեւելով սխալ տրամաբանական հաշիւների՝ ուղղակի կամ կողմնակի կերպով գիւղեր կը վերցնեն, կը պարապին միւլթզիմութեամբ:

Դա հակասութիւն է յեղափոխական զինուորի անցեալ մաքուր ու գաղափարական գործունէութեան, քանի որ աշար վերցնելն ու միւլթզիմութիւնը ուղղուած է աշխատատըր ժողովրդի շահերուն դէմ եւ նոյնիսկ վայել չէ պատուատըր մարդու:

Այս իմաստով էլ որոշումներ տրուած են եղել թէ՛ վերջին ռայոնական ժողովի, թէ կեղրոնական մարմնի կողմէ: Հետեւաբար քիւրիմացութեան եւ սխալի մէջ ընկած մեր ընկերներին եւ բոլոր պատուատըր օսմանցիներին կը հրաւիրենք յետ կենալ իրանց սխալ քայլէ եւ բողոքել աշարը գիւղերին:

Եթէ գտնուին կուսակցական անհատներ, որոնք զանց կ'առնեն այդ ազդարարութիւնը եւ կը շարունակեն իրենց «նոր» գործունէութիւնը – այդպիսիների հետ վարուելու է իբրեւ միւլթզիմների, առանց մկատի առնելու նրանց անցեալը կամ կուսակցական համարուիլը:

Միւլթզիմներին վճարելու է միայն բերքէն օրէնքով որոշուածը եւ ոչ մի պարագայում աւելին: Միւլթզիմների անիրաւութիւնների, կեղեքումների եւ անարդարութիւնների դէմ բոլոր օրինական միջոցներով տարուած կռիւր համարելու է բոլոր գիտակից ու ազնիւ մարդոց ամենատուր պարտականութիւնը:

Միայն այս ուղղութեամբ տարուած կռիւր կ'ապահովէ աշարի անարդար տուրքի վերացումը: Միայն այդ ուղին կ'ապահովէ մեր երկրի եւ ամբողջ պետութեան բարեկեցութիւնը:

Հ.Յ.Դ. ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՉՐԱԿԱՆ-ԴԱԿԻ Կ. ԿՈՄԻՏԵ

Փաստ. 706-104

Գ 4.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ Թ[ՈՒՐՔԻՈՅ] Հ[ԱՏՈՒԱԾ]ԻՆ

25 Հոկտեմբեր 1910, Մուշ

Ընկերներ,

Այս շաբաթ ամէնից շատ մեզ մտատանջող հարցը նորակոչ զինուորների վիճակն է¹⁵: Սկզբում սրանք կարծես դժգոհ չէին, կը գանգատուէին միայն մանր, դիւրին կերպով վերացնելի երեւոյթներով: Վերջերս, սակայն, գանգատները սաստկացան. 4 օր առաջ, 4 հոգի եւ երէկ էլ 2 հայ զինուորներ փախել են. իրանք (հայ զինուորներն իսկ) կ'առարկեն որ եթէ էսպէս շարունակուի, շատերը կը փախնեն: Փախչելուն ամէնից շատ նպաստում է մեռնող զինուորների թուի աւելնալը: Եւ իսկապէս, տեղումս տեղաւորուած 4 թաւուրներից (800 հոգուց կարծեմ ոչ աւել), վերջին երեք ամիսների մէջ վախճանուած կան 30ից աւել մարդ: Սոսկալի է մանաւանդ այբանացիների դրուլթիւնը, որոնց կէսը չկայ արդէն: Եթէ այսպէս շարունակուի, մինչեւ տարուայ վերջը ոչ մի կենդանի այբանացի չի մնայ:

Բնական է որ երիտասարդ տղաները այս խաղաղ կոտորածից պիտի սոսկան եւ փախնեն:

Որչափ կարողացայ ըմբռնել, այս ծանր կացութեան պատճառները կարելի է ամփոփել հետեւեալ գլուխների մէջ:

ա) Հայրենիքի թախիծը (անհրաժեշտութիւն է կարծես գէթ առջի ամիսները տեղում պահել):

բ) Բնակարանների նեղուածք, խոնաւ, վատառողջ լինելը (այստեղ զօրանոցներ չկան):

գ) Հագուստի, մանաւանդ վերմակեղէնների պակաս լինելը, մրսելը, վատ դարմանուելը:

դ) Կերակուրի անհամապատասխան լինելը զինուորների ճաշակին: Անպատճառ միասին մի ամանից ուտելը զգուանք է առաջ բերում շատերի մէջ եւ սովի ենթարկում. եթէ սրան աւելացնենք նաեւ նա, որ այդ միեւնոյն հացի ամանի մէջ տեղ-տեղ ե'ւ լուացք են անում ե'ւ հող կրում, կը հասկանաք զինուորների տրտուկը: Ըստ իս պահանջելու է ամէն տասնեակի կամ ամէն զինուորի ձեռքը տալ հասնելիք մթերքը կամ դրամը, կերակուր պատրաստելը թողնելով իրենց նշանակած մարդոց:

ե) Զբօսանքի, մարմնամարզութեան բացակայութիւնը եւ գէթ օրական 1 ժամ ազատ չլինելը, որ ազատ ապրած գիւղացու համար նման է բանտի եւ դառնում է անտանելի: Թերթ-գրքեր կարդալու արգելքը անպայման վերացնելու է:

զ) Զինուորականներից մի մասի ունեցած յատկապէս խիստ վերաբերմունքը հայերի հանդէպ: Եղել են դէպքեր, երբ հայ զինուորները լսած են մահւմ. զինուորների եւ հակասահմանադրական սպանների յայտնած կարծիքները, թէ հայերին «նեղելու-փախցնելու» է, թէ «եթէ շուտ չէք սորվում, կորէք գնացէք» եւ այլն: Սրանք անհատներ են, հարկաւ, քանի որ սպանների մեծ մասը լաւ վերաբերմունք է ցոյց տալիս դէպի զինուորները: Նեղողները աւելի օնբաշիները եւ չաւուչներն են, որոնց դժուար է հասկացնել: Շտապելու է շուտ հայերից տասնապետներ նշանակել:

Բժ. Զ[աւրիեւ]ը ասում էր, որ անցեալ տարի Կարին 2000ից աւելի զինուոր է մեռած: Համեմատած օտար երկիրների հետ, սա տասնապատիկն է: Եթէ այս կամ նման վիճակագրութիւն կայ, մի յատուկ յանձնաժողովի միջոցաւ քննութիւն է կատարելու եւ միջոցներ ձեռք առնելու: Ափսոս է մեր երիտասարդութեանը:

Սա էլ ասեմ որ Պոլսոյ վիճակը համեմատելու չէ գաւառների վիճակի հետ: Զօրանոցների մէջ տարբերութիւնը նոյնն է, ինչ որ պոլսեցիների եւ վանեցի գիւղացիների տների մէջ...

Շեշտելու է որակի վրայ. աւելի լաւ է 200.000ից լաւ բանակ ունենալ քան թէ կիսաստված եւ դժգոհ 300.000: Զինուորների ռոճիկը պահանջելու է 20 դրուչից բարձրացնել 40-60ի: Դատարկապորտ գրագրերի եւ այլ պաշտօնեաների ռոճիկը կրկնապատկելու տեղ լաւ էր մի քիչ էլ զինուորների մասին մտածուէր...

Այլ կերպ խայտառակութիւն դուրս կը գայ:

– Տաւարի կոտորածը շարունակուում է: Զիարէթ գիւղում (200 տնից) մինչեւ օրս կոտորուել է 430 անասուն:

Առաքելոց վանքի 30 մոզլիից մնացել է 10 (այն էլ ամենավատերը): Մի քիւրդ գիւղում 800 անասունից մնացել է կենդանի 30 հատ:

15.- 1910 թուականին առաջին անգամ ըլլալով քրիստոնեայ երիտասարդները ընդունուեցան թրքական բանակ՝ զինուորական ծառայութեան:

Երկրագործական բանկան օգնելու է (տուժողներին) գէթ եզներով... ամէն մի տան (ծական հոգուն) գէթ մի շուխտ եզ տալով...

- Եղանակը չոր է, որ արգելք է հանդիսանում աշնան ցանքսերին: Հետեւանքը կարող է վատ լինել...
- Շնորհիւ նրա որ մեր բոլոր ընկերութիւնները - Միացեալ, Միխիթարեան, Հայուհեաց, Բողոքականների, Ի-դարիէ - մոռացութեան տալով աւելի կարօտ ու խեղճ գիւղերը՝ իրենց ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրած են քաղաքի վրայ - քաղաքի դպրոցները բացուած են, իսկ գիւղերը մնում են փակ: Պատճառը քաղաքացիներից կազմուած Քաղաք-ժողովն է, քանի «կուշտը սովածին մանր կը բողբէ. առածը տեղին է եւ այս պարագայի համար...: Պակաս դեր չի խաղում եւ «խշտողների» ցանկութիւնը գործը քանդելով ինձ հեռացնել շրջանիցս, որպէս-զի «հաշտուտութիւնը» ընդհանուր հին նահապետական ուղղութեամբ եւ ազգային դրամների կլանելը շարունակուի:

- Հնչակեանները քանի ամսից ի վեր ձեռնարկած են քարոզի եւ որոշ յաջողութիւն ունեն:

Առ այժմս բարեւներով ձեր Մ[ՄԲԱՍ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

Յ. Գ.- Երբ նամակս ձեզ հասնի, հաւանորէն ես կը լինեմ կարին: Առանց մի յարմար պաշտօնի նստելը, դուք էլ գիտնալու էք որ ծանր եւ անհնարին է¹⁶:

- Տարօնի կրթական գործին վերաբերեալ տեղեկագիրը ձեզ ուղարկուած էր Սեպտ. 15ին: Զարմանալի է որ մինչեւ հիմա ձեզ չի հասած, կամ արդեօք մէջը յարուցուած հարցերը արժանի չէին լայն հասարակութեան ուշադրութեան:

16.- Հակառակ իր դժգոհութեանց եւ Տարօնի Ազգ. վարժարաններու տեսուչի պաշտօնէն հեռանալու ցանկութեան, Ս. Զաւարեան 1910-11 կրթական տարեշրջանին եւս պիտի շարունակէր իր պաշտօնավարութիւնը:

Փաստ. 709-9

Գ 5.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

4 Փետրուար 1911, Մուշ

Սիրելի Աբրո¹⁷,

Կարգացի գրաւուած հողերու մասին կազմուած նախագիծը եւ քեզ հետ միասին զարմանքով լցուեցայ այդ օրինական խաբէութեան առթիւ:

I) Նախ յիշեցնեմ որ Դաշտի մէջ ամենավատ պայմաններում գտնուած գիւղերում իսկ գնուած այս կամ այն ձեւով գիւղացիներից վերցրած հողերի տարածութիւնը չի անցնում գիւղական հողերի ընդհանուր տարածութեան 1/4-ից: Չնայած դրան գիւղացիք որ կը պոռան, դրա պատճառը երկուք է. նախ որ երբ մի ազդեցիկ մարդ (մանաւանդ թուրք), որեւէ տեղ ձեռք է բերում թէկուզ մի արտ եւ այսպիսով ոտք է դնում գիւղի մէջ, էպպէս նա (բռնի կերպով) սկսում է օգտուել 5-10 արտից: Երկրորդ, հող գնող թուրքը, դառնալով շնորհիւ արտի-հողատէր-աղա, սկսում է գնել գիւղի աշարը⁸, սալաֆի⁹ պարտք է տալիս գիւղացիներին, կաշառում է իր կողմը (չատ անգամ չնչին գումարներով) գիւղի սրիկաներից ոմանց եւ այդ բոլոր միջոցներով ստրկացնում է գիւղը, քայլ առ քայլ տէր դառնում եւ միւս արտերի: Աղայի մը հաստատուելը գիւղի մէջ (ո՛վ էլ լինի) գիւղացոց ստրկութեան սկիզբն է:

II) Գրաւ դրուած (մարշուհա) (բերանացի, պայմանագրով կամ «կիսաքոչան») հողերի տարածութիւնը նոյնչափ մեծ է որչափ եւ ծախսուած-քոչան արուածները: Ուրեմն ջանալու է գրաւ դրուածները չբաժնել ծախսուածներին...

III) Գնողների, գրաւով վերցնողների եթէ 1/10 — 1/15 միայն հայեր են, բայց դրանք կան, հետեւապէս ազգի, կրօնի անուն տալու չէ:

IV) Ծախուելը սկսում է գրաւով, գրաւը պարտքով, պարտքը՝ մրիպայութեամբ: Մրիպայութեան հիմքը նա է, որ դրամ (կամ անասուն, հաց եւայլն) պարտք վերցնողը պարտաւորում է այդ պարտքի եւ սերմի (որ ստանում է դրամատիրոջից) տեղ դրամատիրոջ վճարել իր տարեկան հասոյթի (հատիկների) կէսը: Հայ գիւղերի մէջ, շնորհիւ ունեցած պարտքերի (10-20-50-100 ոսկով), անասուն-լծկան ունեցող ազգաբնակչութեան 1/4-1/2-3/4-9/10 (սովորաբար 1/2-3/4-ը) մրիպաներ են (9/10-ը քրդերի): Այսպիսով, 1000 քիլէ ցորեն ստացող գիւղը 120 քիլէ վճարելով աշար (թասիլ), մնացած 880 քիլէից (1/2ը եւ աւելին) տալիս է պարտատիրոջ: Հաշուած եմ, որ վերցուած դրամի փոխարէն տարեկան մրիպաները վճարում են 35-50% (նայած տարուան եւ պայմանին) եւ դրամագլուխը միշտ էլ մնում է իր տեղը կանգուն: Այս պայմաններում եթէ որեւէ ձեռով գիւղացիներին կրեդիտ (crédit) չբացուի, «հողային հարցի լուծումից» (անշուշտ թուրքական ձեւի) մեծ բան սպասելու չէ: Յամենայն դէպս, սխալ կը լինէր չլիշել որ վերջին 2 տարուայ մէջ (շնորհիւ ապահովութեան, զինւ. տուրքի վերացման եւ լաւ բերքի, հացի էժանութեան) պարտքի քանակը իջաւ 10-20-30%-ով, իսկ մրիպաների թիւը պակսեց 2-10%-ով:

Տաւարի կոտորածը, ձմրան սաստկութիւնը կը կանգնեցնէ այս յառաջադիմութիւնը ապագայի համար, այնպէս որ crédit-ի խնդիրը ստանում է առաջնակարգ նշանակութիւն:

V) Ամէն տեղ էլ գիւղացիների պարտքերը (որոնց շնորհիւ հարկադրուած են եղել գրաւ դնել ու ծախել հողերը) առաջ են եկած չնչին գումարներից, սալաֆի ձեւով կամ բարդացրած տոկոսներով... Տեղ տեղ գիւղացիները գանազան ազդեցիկներից պարտք են վերցրած դիտամամբ, որպէսզի չկոտորուեն: Բոլոր դէպքերում էլ %-ի չափը եղած է 50-100-300%: Սկզբնական գումարը գիւղացիները վճարած են բազմիցս անգամ եւ բնականաբար — երբ մէջտեղը թուղթ չկայ — նրանք հրաժարուում են պարտքից: Դիմացի (դրամ տուող) քրդերն էլ համարելով դա ոտնակոխում հին աղատի ու սրբութեան կամ նստած են բռնի կերպով հայ գիւղերում (Մղակ, Վարդիսաղ), կամ դրսում սպասում են յարմար առիթի՝ վրէժ լուծելու համար (Արգավանք եւ ուրիշներ). բնական է որ առանց դրամի տոկոսի օրինական չափի ճշտման եւ բերանացի պայմանների, նկատի ունենալու է (միջնորդ ատեանի միջոցաւ) դժուար է սպասել խաղաղութեան հաստատման...

VI) Որչափ էլ բռնագրօսիկ լինեն այս բոլոր պայմանները, այնուամենայնիւ տարբերութիւն է դնելու բռնի կերպով գրաւումների (առանց մուրհակի ու քոչանի) եւ գրաւումների «օրինական» պայմաններով, մանաւանդ որ քրդական շրջաններում բռնի կերպով կատարուած գրաւումները բաւականին մեծ նշանակութիւն ունեն:

VII) Մուհաջիրների պայմանները բոլորովին տարբեր են միւս կարգի գրաւումներից: Յամենայնդէպս, մուհա-

17.- Արթուր Թաթևաճուրը կը գործածուէր Արեւմտեան Բիւրոյի Պոլսոյ հաստատուածին համար: Այս եւ յաջորդ ցամակներուն մէջ Խոյթի դէպքերուն մասին տեսնել Մաեւ Ա. Վոսմեանի տեղեկագիրը, էջ 153-155:

Ղիրները մեղաւոր չեն որ կառավարութիւնը իրենց հող է տուել այս կամ այն վայրում:

Այս բոլոր եւ այլ մի քանի պատճառներով, հողային օրինագծի մասին բանակցելիս նկատի պիտի ունենալ հետեւեալ մի քանի առաջարկութիւնները որ կարող են բարեփոխուել այլ շրջանների կարծիքներով:

1) Բռնի կերպով գրաւուած հողերը եւ ջրերը վերադարձնել նախկին տէրերին ամէնից առաջ, վերցնելով գրաւողներից գրաւած ժամանակամիջոցի հողի եկամտի չափը (օրինական տոկոսներով) առանց նկատի ունենալու գրաւողի կողմից շինուած շէնքերը եւ բարելաւումները: Գրաւողի դրամ կամ գոյք չունենալու դէպքում ենթարկել նրանց բանտարկութեան հողը գրաւած տարիների թուի համեմատ:

2) 1877ից յետ Համիդի գնդերի շրջանների մէջ այս կամ այն «օրինական» ձեւով նորերի ձեռքը անցած հողերը եւ ջրերը գնուած կամ գրաւի գումարի հաշուով հին տիրոջ ազդարարութեան դէպքում վերցնել երկրագործական բանկաներէն հին տէրերին դարձնելու պայմանով (աստիճանական վճարումներով): սկզբնական գրաւի կամ գնման արժէքի գումարի նկատմամբ երկու կողմերի մէջ անհամաձայնութեան դէպքում ճշտել դա խառը յանձնաժողովների միջոցաւ, հաշուի առնելով պարտատիրոջ վճարելիքը նախնական գումարի համար 9%-ից եւ գրաւողի հողից ստացած տարեկան հասոյթները նոյնպէս բարդուած 9%-ից: Կառուցուած շէնքերը եւ բարելաւումները գնահատելիս, հաշուել [թէ] ո՞ր մասը կատարուած է գիւղացիների աշխատանքով:

3) Բոլոր նրանց, որոնք մեռած են բանտերում իբրեւ քաղաքական յանցաւորներ, կամ ազատուած են, նրանց որոնք փախած են եղած են օտար երկիրներ եւ դարձած են, համարել մուհաջիրներ եւ ենթարկել մուհաջիրների համար սահմանուած արտօնութիւնների:

4) Մուհաջիրների գրաւած հողերի համար նախկին տէրերին վճարել հողերի այսօրուայ արժէքին կրկնակին (իբրեւ compensation¹⁸ սեփական իրաւունքի խախտման), նաեւ գրաւած ժամանակամիջոցի հողի եկամուտը (բարդացած տոկոսներով): Այսուհետեւ գալիք մուհաջիրներին տեղաւորել իրենց կրօնակիցների գիւղերին մէջ:

Եթէ այսչափ կարելի լինի յաջողցնել, էլի մեծ բան է: Մուհաջիրների նկատմամբ լաւ է կարծեմ մի քիչ զիջող լինենք: Քանի գնում ինձ համար աւելի պարզուած է որ երկրի ընդամուտը պայմանների բարելաւումը (հարկաւ ոչ այս 2½ տարուայ նման), աւելի արժէք ունի եւ աւելի գործնական է, քանի թէ մեր ձեռով դրուած հողային հարցը...

Ճնշուած դասի եւ այս շրջանների ապագայի համար, Սահմանադրութիւնից յետ ամենակարեւոր նշանակութիւն ունեն հետեւեալ տնտեսական բարեփոխութիւնները, որոնց հետամուտ է լինելու.—

ա) Ձնջել գինուորական տուրքից մնացած բաքեաները: ամէլիան (ճանապարհի) տուրքը) վերցնել աշխատանքով կամ միացնել դա հողային տուրքին ու թեմեթթուին¹⁹: Ձնջել օտարութեան մէջ գնացածների բաքեաները: Մնացած բաքեաներից անձի հաշուին ներում շնորհել մի քանիսական ոսկի:

բ) Միւլթեգիմուլթիւնը վերացնել, աշարի քանակը հաւասարեցնել վերցուող թեմեթթուի կամ պաշտօնեաների վճարածի (կառավարութեան): Ձերծ պահել աշարի տուրքից կեանքի գոյութեան պահպանման համար անհրաժեշտ 18 կոտ ցորեն անձի հաշուին կամ նրա համարժէք այլ հատիկներ: զերծ պահել աշարի տուրքից նաեւ գիւղացու անհրաժեշտ սերմնացուն:

գ) Անասուն չունեցողներին վճարել պարտք (անձի հաշուին թէկուզ 2ական ոսկի) 10 տարուայ մէջ տարէց տարի վճարելու պայմանաւ:

դ) Ամենամեծ կարեւորութիւնը տալ երկաթուղիներ անցկացնելուն, առանց որի արեւելեան հայկական շրջանները չեն կարող քաղաքակրթուել...

Եթէ այլ ճարտար չկայ, աշխատելու է գէթ Բէյրութ-Հայկալի գիծը շարունակուել դէպի Բիրբլիկ-Տիգրանակերտ (ապագայում Բիրբլիսի յոյսով): Ռուս-գերման. համաձայնութիւնը պարզ ապացոյց է, որ առանց երկաթուղու Օսմանեան պետութիւնը անկարող կը լինի պահել արեւելեան նահանգները: Չարմանալի եւ ապացոյցի է [թէ] որչա՞փ քիչ նշանակութիւն է տրուած երկաթուղիներին գինուորական տեսակէտից: Հետաքրքիր է, արդեօք գէթ հիմա սկսած են գնահատել դա թէ չէ:

Եթէ յարմար է խնդրեմ գրէք ի՞նչ նպատակով Գարոն²⁰ գացած է Եւրոպա: Թէ Հալաճեանին, թէ Գարոյին գրած եմ որ մի քանի տեսակէտներից կանգ է առնելու նեղ (լեռնային տրամվայական) երկաթուղու գծերի վրայ... այլ կերպ մենք 20-30 տարուայ շոգեկառքի երես չենք տեսնելու:

ե) Երկաթուղիների վնասը (déficit-ը) մեր գրպանից չվճարելու համար, յատուկ տուրք է նշանակելու այն հողերի եւ հաստատութիւնների վրայ՝ որոնք մօտ են եւ օգտուում են երկաթուղիներից եւ շոգեանակերից:

Բարեկենդանով
Ձեր Ս[ՄԲԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

18.- Ֆրանսերէն՝ փոխարինում, հատուցում:
19.- Շահատուրքից:
20.- Արմէն Գարո եւ Հալաճեան Պետրոս, երկուքն ալ պատգամաւոր Օսմ. խորհրդարանից:

Փաստ. 709-106

Գ 6.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ (ՊՈԼԻՍ)

22-VI-1911, Մուշ

Սիրելի՛ Աբր¹⁷,

Խաթայ վրայով անցած եմ մի քանի օրով Բիրթլիս: Վալիին չկարողացի տեսնել. գալուս օրը վերադարձած է Խուլթ, ուր հաւանաբար մեկնիմ վաղը եւ ես: Թէեւ Վալին ինքնասիրութիւնից դրդուած դժգոհ է եւ հերքած է իմ հեռագրում յիշուած երկու գինուորների սպանութիւնը, բայց դա ճիշտ է:

Մինչեւ օրս, զանազան ժամանակներ բերուած եւ բանտարկուած են Բիրթլիս Խուլթէն մօտ 45 անձեր, որոնք Սահմանադրութենէն սկսած զանազան յանցանքներ են գործած (սպանութիւն, գողութիւն եւ այլն), բայց չեն ներկայացած կառավարութեան: Մէջները կան եւ անմեղ մարդիկ:

Թաղականքիների սպանողները լեռներն են եւ կը հետապնդուին թէեւ, բայց կանանց միջոցաւ հաց կը ստանան եւ հանգիստ կերպով կ'ապրին: Նեղը ընկած ատեն կարող են հեռանալ այլ վայր:

Այսչափ (մօտ 45-50) մարդոց ձերբակալուելը նշան է որ նրանց մէջ իսկական միութիւն-փոխադարձ պաշտպանութիւն չկայ:

Վալիի տրամադրութեան տակ կայ 850 գինուոր. քո տուած հեռագիրը 4 թաբուր զօրքի եւ 8 թաբուր պահեստիների մասին, զարմացրել է իրեն՝ վալուն (այդ լուրի մասին, նա «Ազատամարտ»ից է իմացել): Ըստ արեւելեան սովորութեան, դուք զոհ էք գնացած կենտր. կառավարութեան խաբուսիկ խոստման:

Ինչեւէ, այդ 850 գինուորն էլ (մէջները կան եւ հայեր՝ 100 հոգի) աւելի քան բաւական կը լինէին, եթէ կենտր. կառավարութիւնը ունենար շիտակ եւ մէկ ուղղութիւն: Ցաւ ի սիրտ, խոստովանուելու է որ այդտեղից կ'երեւի խուսափողական ուղղութիւն ունեցող հեռագիրներ կը տրուեն — «նախապարձակ չլինել», «խաղաղ ճամբաներով գործ տեսնել» եւ այլն: Այստեղ լսում եմ նոյնը ինչ որ Մուշ, ուր կը գանգատուէին թէ չենք կարող ոճրագործներին ձերբակալել քանի որ մեզնից պահանջում են ձերբակալել առանց հրացան պարպելու, առանց մարդ սպանելու: Այդ պայմաններում բնական է որ նոյնիսկ կարող զափթիէները յուսահատուում են եւ ոչինչ չեն անում:

Այսքան արուածն էլ վերագրելու է վալիի եռանդին եւ անկեղծ ցանկութեան՝ մի կերպ զսպել այս չարագործներին:

Ցաւը նրա մէջն է որ այսքան բանտարկուածները եւս ենթարկուելու են սովորական քննական ու դատաստանական ուղղութեան, որ ոչ մի բարի բան չի խոստանում: 3 կախաղան այս վայրենիների մէջ աւելի ազդեցութիւն կ'ունենան, քան 30 հոգու ցմահ թիապարտութիւն: Ահա այդ խիստ պատիժներից է որ խոյս է տալիս կենտրոնը:

Մուսան եւ եղբայրները ազատ են: Կանանց հեռացրել են տներից. սակայն այս նշան չէ դեռեւս որ նա կը դիմադրէ (եթէ վրան յարձակուեն): Խուլթայ սպանութիւնները ամէն տեղ էլ երես են տուել քրդերին. ամէն տեղ էլ նկատուում է հայերի հողերի գրաւում: Երկու ամսուց ի վեր (պայմանողական իթթ[իհատ]ականների) երեւան գալուց փոխած են իրենց ընթացքը եւ ցած պաշտօնեաները ... միշտ էլ բռնելով քրդերի — իսլամների կողմը ...

Թէ որքա՛ն մեծ է այս խուլ անկիւնների յանցագործութիւնը, դրան ապացոյց Խուլթ-Մուտկանը ուր Սահմանադրութիւնից ասդին դատապարտուած են (7ից մինչեւ 15 տարի) 187 անձ: Այդ 187ի շարքից է որ բանտարկուած են վերը նշանակուած 45 անձերը...

Մեղադրուածներից զատ կան եւ մի քանի հարիւր մեղադրուող, բայց չդատապարտուածներ, որոնք այժմս դեռեւս չեն փնտրուում:

Վատ է. հեռագրով պահանջել էին գիս: Անկարող եմ երթալ: Բոլոր հարցերը վերաբերում են ընդհանուր քաղաքականութեան եւ մեր բռնելիք ընթացքին: Իսկ դա էլ պահանջում է ընդհանուր խորհրդակցութիւն:

Ներփակ կը գտնէք բանտարկուածների անունները: Վերջի 12ի անունները չկրցի իմանալ:

Բարեկենդանով
Ս[ՄԲԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

Փաստ. 709-110

Գ 7.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ՊՈԼԻՍ)

28-VI-1911, Մուշ

Սիրելի Աբրո¹⁷,

Առած ես անշուշտ մի շաբաթ առաջ Բիթլիսից գրածս նամակը. անցայ խուլ, յաճախեցի տուժած գիւղերը, տեսնուեցի վալիի, պաշտօնեաների մի քանիսի հետ: Ընդհանուր առմամբ կրկնելու եմ այն, ինչ որ արդէն գրած եմ նախորդ նամակով:

- 1) Խուլ կայ միայն 800-850 զինուոր եւ ձեր հեռագիրը 4+8 թաղուների մասին թիւրիմացութեան արդիւնք է:
- 2) Ամէն ինչ կատարուելու է սովորական սահմանադրական օրէնքներու սահմանին մէջ, ոճրագործները ձերբակալուելու են խաղաղ միջոցներով (առանց վնաս հասցնելու):

Այս պայմանների մէջ, իսկական ոճրագործները չեն կարող ձերբակալուել: Բացի թաղականքիցները սպանողներից, կան եւ այլ շատ մեղադրուածներ, որ տարիների ընթացքում չեն ներկայացրել կառավարութեան եւ այսօր կը փնտուռին: Նրանք եւս գերադասեր են, մանաւանդ խիստ պատժի արժանիները, իրենց տները փոխադրուել հարեւան անտառները: Վերջիններս ամառ ատեն աւելի հաճելի են քան իրենց տները, ամէն օր էլ դաչաղները տեսնուում են մտերիմների հետ, ազգականների միջոցաւ անարգել կերպով ստանում են իրենց պարէնը, ցերեկները հանդիպում են իրենց տները:

Արդի սահմանադրական օրէնքների հիման վրայ ոճրագործների ազգականներ չեն կարող հետապնդուել, տները խուզարկուել, զինուածները զինաթափ անուել:

Քանի որ վերնւի կարգադրութիւնն է մեղմ վարուել, աւագակներին հանդիպած ատենն իսկ վերջիններին վրայ յարձակում չի կատարուում. նրանք հրաւիրուում են օրէնքին հնազանդուելու:

Բացի այդ, զօրքերը, զպիթիէները բուն ոճրագործներին չեն ճանաչում (երեսից): Միւս կողմից, ճանաչող հայերը (կամ հակառակորդները) չեն գտնուում զօրքի մէջ (ծափեալ կերպով), կամ ոճրագործներին բռնելը (կենդանի կամ մեռած) չի թոյլատրուած, բռնողներին չի խոստացուած որեւէ նպաստ (prime), ինչպէս կատարուում է նման պարագաներում:

Աւելացրէք սրան սարսափի ենթարկուած հայերի հոգեբանութիւնը, եւ դուք կը համոզուէք թէ որչափ անբնական պիտի լինէր ոճրագործների ձերբակալուելը...

Մնում է միայն մի ճամբայ. շրջապատել օղակի ձեւով ամբողջ կասկածելի շրջանը զօրքով եւ նեղացնել շղթան: Բայց դա էլ անհնարին է, քանի որ (15-20)X(8-10) ժամ տարածութիւն ունեցող շրջանը օղակի մէջ առնելը չի կարող կատարուել 800 զինուորներով... Ձինաթափութեան մասին եւս խօսք չի կարող լինել, քանի որ առանց զինուորական դրութեան դրա գործադրելը անհնարին է (թողնենք մի կողմ որ կենտրոնական կառավարութիւնը համամիտ էլ չէ դրան): Վալին յոյս ունի որ երկար ժամանակ (աշուն, գուցէ եւ ձմեռ) մնալով շրջանի մէջ, իրեն պիտի յաջողի թակարդների շնորհիւ ձեռք գցել յանցաւորներին: Չէ՞ որ փնտուռած 180 անձերէն մօտ 80ը արդէն ձերբակալուած են:

Դրան էլ արգելք կը հանդիսանայ իրա՝ Իսմայիլ Հաքքրի տրամադրութիւնը՝ ապագային մէջ արձակուողով մեկնել շրջանէն:

Վանի, Սվազի վալիների նման ճանձրացած որ իր դիմումները (հողային հարցի, ճանապարհների, դպրոցների մասին) մնում են անպատասխան, նա եւս առիթ է փնտուռում փախչելու այս վալիների շրջանից:

Նրանից աւելին պահանջելն իսկ դժուար է: Սա միայն ճիշտ է, որ եթէ թաղականքիցների սպանողների մի քանին չպատժուեն խիստ կերպով, հայերին կը մնայ մի ելք միայն՝ ենթարկուել կատարելապէս քրդերի իշխանութեան (չքանալով աստիճանաբար) կամ թողնել իրենց մայրենի երկիրը եւ գաղթել այլուր:

Հիմա էլ հայերը վախից չեն համարձակուում գնալ-գալ Մուշ Բիթլիս, յաճախել հարեւան գիւղերը, նոյնիսկ գիւղերները ջրել իրենց արտերը: Ղաչաղները սրա նրա միջոցաւ սպառնալիքներ կը կարդան: Սարսափը ա՛յն աստիճանի է, որ չնայած 800 զօրքի ներկայութեան, ամբողջ խուլից, Բունաչէնից, Մոտկանից քրդերու գործած բռնութիւնների դէմ վալուսն չի եկած գանգատուելու եւ ոչ մէկը:

Բարեկներով,
Ձեր՝ Ս. ՕՀԱՆԵԱՆ

Վախենում են վրիժառութիւնից եւ իրաւունք էլ ունեն. կ'եզրակացնեմ.

1) Առանց զինուորական դրութեան եւ ոճրագործների մերձաւորների ձերբակալման, տների խուզարկութեան, դժուար է ստիպել մարդասպաններին անձնատուր լինել:

2) Առանց զինաթափութեան (գէթ ոճրագործների ենթակայ Մոտկանի կազայի մէջ) հայերը անկարող են խաղաղ ապրել:

3) Առանց մարդասպանների գլուխների գնահատման (զինուորական դրութեամբ), ապագայ վախի պատճառաւ ոչ ոք չի ցանկանայ ոճրագործներին հետապնդել, ձեռք ձգել:

4) Մինչեւ թաղականքիցների սպանողների մեծամասնութեան ձերբակալման, վալիին ու զօրքին թոյլ չպիտի տալ հեռանալ շրջանիցս:

Բայց այդ, նախընթաց գրութիւններս պարզած պիտի լինեն ձեզի խաֆիրական-վարկային-հողային, հայ-քրդական փոխյարաբերութիւնների կնճռոտ, անվերջ ոճիրներ խոստացող հարցի լուծման տեսակէտից բան դուրս չգալը:

Օգտուելու է Մոտկանի բացառիկ կացութիւնից, զօրքի-վալիի ներկայութիւնից եւ վարչական ձեւով (խառը յանձնաժողովի միջոցաւ) լուծելու գէթ այդ շրջանի վէճերը, մանաւանդ որ թղթեր (սանաթներ) էլ գոյութիւն չունեն:

Դա օգտակար է նաեւ այն տեսակէտից, որ կը ծառայէ իբրեւ օրինակ ապագայ առնելիք քայլերի: Գիւղացիներն էլ այս ուղղութեամբ գուցէ դիմում ընեն: Եթէ կրնաք, դուք էլ այդ ուղղութեամբ աշխատէք:

Քիւրդ ռայա դասը արթնացման ուղիի վրայ է: Ամէն տեղ էլ հողային գանգատներ կը ներկայացնեն աղաների կատարած բռնութիւնների դէմ: Վերջին 2 ամսուան մէջ Մանազկերտ այդ հողի վրայ 20էն աւելի ոճիրներ են կատարուել (քրդերի մէջ). Վարդօ՝ դատարանին ներկայացող բողոքողների 3/4ը այդպիսի հողային խնդիրներ են:

Վերջերս Երզնկայից Վան-Բիթլիս-Մուշ էր եկած Բիրիւնջի Ֆէրիք Օսման փաշա (բնիկ Ղրիմի թաթարներից): Տեղ-տեղ նրան ընդունած էին միւշիտի տեղ: Շատ տարօրինակ է որ այդպէսի մի դիրք վայելող անձ իր տեսակցութիւնների ժամանակ ցոյց է տալիս այն ընթացքը, որ տեղի ունեցաւ մի շաբաթ առաջ, խառնաճիւղ հայերի-քրդերի ներկայութեամբ: Հայերի ողջոյնին, յայտնած եղբայրական զգացումներին նա պատասխանում է շատ կոպիտ կերպով:

«Հանեցէք նախ ձեր սրտի մէջ եղած թոյնը». «եթէ կ'ուզէք որ համիդիէն ոչնչանայ, նախ ոչնչացրէք ձեր Դաչնակցութիւնը». ինչո՞ւ թոյլ չէք տալիս այս խեղճ քրդերին՝ հողերի տէր դառնան». «ամէն տեղ էլ շապկայի օտարականներ եմ տեսնում». «այս երկրի հիմքը իսլամ կրօնքն է, դուք էլ իրաւունք ունէք եւ պարտական էք հետապնդելու ձեր ազգային նպատակներին» եւ այլն: «Մրով տիրել ենք այս երկրին եւ սրով էլ պահելու ենք», — ասում էր նա ինձ, Բիթլիս, պրովոկասիոնի մտադրութեամբ, ընդունելով որ մենք պարտական ենք հետամուտ լինելու մեր չիրականացած ինքնավարութեան:

Այդպիսի քարոզներով, ոչ միայն համերաշխութիւն, միութիւն առաջ չի բերուում, այլ գրգռուում է միայն ֆանատիկութիւնը, խրախուսուում են բռնութիւն կատարողները:

Ասէք — եթէ հնարաւորութիւն ունէք — ում պէտք է՝ սահմանադրական պարտաճանաչութեան, ազգային հաւասարութեան-համերաշխութեան եւ քաղաքացիական տակտի խորհուրդներ տան այս ծերունուն: Աւելի լաւ է սրան հասկացնել, [որ իր] սպառնալիքները ուղղէ բռնակալներին եւ զինուած հրոսակային խմբերին:

Փաստ. 709-117

Պ 8.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ՊՈԼԻՍ)

6 Յուլիս 1911, Մուշ

Սիրելի Աբրո,

1) *Խլաթից բժ. Զ[աւրեան]ի անունով հեռագրած էի շտապեցնել Ռուբէնի գալը: Վերջինս (Բժշկի հետ միասին) ընտրուած է տեղիս կազմի անդամ եւ իրենց բացակայութիւնը (իմ մեկնելու դէպքում) շատ բացասական ազդեցութիւն կ'ունենայ տեղիս կուսակցական գործերի վրայ: Շտապեցրէ՛ք²¹:*

2) *Խուլթից հասած լուրերը նոյն տարտամ վիճակը կը ներկայացնեն: Մարդասպանները ազատ կը պատեն: Հասարակութեան աչքին էլ թոզ փչելու համար կարծես՝ ոճրագործների տեղ կը բանտարկուեն շատ անմեղ «ոճրագործներ» եւ օրէնքից խոյս տուողներ: Հեռագրած էի, որ առանց այդտեղի կտրուկ պահանջի՝ ձերբակալեն ինչ գնով ու միջոցաւ էլ որ լինի մարդասպաններին – ոչինչ իսկական դրական բան չի լինելու:*

Խուլթեցոց մտադրութիւնն է (եթէ առանց մարդասպանները] պատժելու զօրքը հեռանայ), զօրքի գնալու հետ միասին դուրս գալ այդ շրջանից, դիմել օտարներին կամ դաւանափոխ լինել:

3) *Գեղամը²² եկաւ, տեսնուեցի: Բարի կամեցողութիւնները, խոստումները, վարչական թէ դատաստանական ձեւերը արժէք չունեն եթէ առաջուց համաձայնութիւն չկայ թէ այսինչ-այսինչ կէտերի հիման վրայ է հարցը լուծւելու:*

4) *Հացը այս տարի բաւարար է. թէեւ խոտ, կեր չկայ, բայց սրանից էլ տուժողները լինելու են աւելի ունեւոր, ոչխար պահողները: Հացի արժան եւ օրավարձի բարձր լինելը (ամառը 6-8 դր.) մեծ նպաստաւոր պայման է ժողովրդի ոտքի կանգնելու տեսակէտից:*

5) *«Ազատամարտ»ի մէջ դուրս եկած մշտնակ բարբառով յօդուածը մեծ հետաքրքրութեամբ կը կարդացուի. շարունակելու է նման գրութիւնները: Խուլթայ-Բունաշէնին վերաբերեալ վիճակագրական տախտակները ափսոս չէք տպագրել. ընդհանուր թուերը եթէ հիմնաւորուած չեն յականէ անուանէ վկայութիւններով, արժէք չունին, միշտ կաւկածելի են: Այդ թուերից օգտուելու է. թէ՛ մեր ժողովուրդը, թէ՛ թուրքերը սորվելու են մի քիչ լուրջ նայել հարցերին:*

6) *Ես կը մեկնիմ դէպի ձեզ²³ երեւի մի շաբթից յետ:*

7) *Քո Յունիս 4ի նամակը միայն այս բոլորիս առի. ինչո՞ւ էիք այդ անծանօթ եւ վախկոտ Աւետիս ժամկոչեանի անունով դրկել: Այսուհետեւ գրէք Աւետիսի (Ջանգօզեանի) կամ Գրիգ[որ] Շմիկեանի անունով:*

Բարեւներով՝ Ս. ՕՀ[ԱՆԵԱՆ]

Փաստ. 59-95

Պ 9.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ Ռ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ

1911 Օգոստոս 10/23, Կ. Պոլիս

Ռուբէնին ժընեւ
Սիրելի ընկեր,

Ինչպէս երկու անգամ գրած ենք քեզ, քո ներկայութիւնը հետզհետէ աւելի զգալի է դառնում Մուշի շրջանի համար: Այժմ երբ ընկեր Չաւարեանն էլ հոս է, հոնտեղ մի կարող ընկերոջ ներկայութիւնը անխուսափելի է դառնում: Եւ քանի որ այնտեղի շրջանային ժողովն էլ որոշած է քեզ հրաւիրել իր շրջանը իբր գործիչ, այս նամակով գալիս ենք քեզ յիշեցնելու այդ որոշումը, եւ յոյս ունինք որ այս անգամ արդէն կը զիջիս բուն երկրի ժողովրդական ձայնին եւ գործերդ կարգադրելով՝ անմիջապէս կը մեկնիս հոս²³, այստեղից ճանապարհուելու դէպի Մուշ:

Չեր անմիջապէս մեկնումը կարեւոր է եւ այն տեսակէտով, որ ինչպէս գիտես, այս օրերս սկսուելու են Ընդ. ժողովի նիստերը. եւ ցանկալի էր որ դու եւս մասնակցէիր այդ նիստերին իբրեւ ընկեր գործիչ:

Արդ, այս երկտողը ընդունելով իբր հրաւեր Ընդ. ժողովի նախապատրաստական յանձնաժողովի կողմից, անմիջապէս ճանապարհ ընկիր դէպի Պոլիս՝ մասնակցելու 6^{րդ} Ընդ. ժողովին:

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՈՅԻ ԹՈՒՐԹՈՅ ՀԱՏՈՒԱԾ

Հեռագրով հաղորդիր մեկնումդ:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՉԼՈՒԽ VII

ԲԱՐՁՐԱԲԵՐԴ – ԿԱՐՆՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Բարձրաբերդի Կեդր. Կոմիտեի փոխընկերները կը տարածուէր Կարին–Էրզրումի ընդարձակ վիլայէթին վրայ, հին Պայագիտէն մինչեւ Երզնկա, Բաքերդ, Սպեր: Օսմանեան խորհրդարանին մէջ ներկայացուած էր երկու դաշնակցական պատգամաւորներով՝ Վարդգէս եւ Արմէն Գարո:

Կարին կեդրոնատեղին էր նաեւ Արեւելեան Բիրոյի հայաստանեան հատուածին, ներկայացուած բժ. Յովսէփ Տէր Դաւթեանով (Հաւանաբար Բարսեղեան ծածկանունով): 1910ի ամբիւրդի հոն հաստատուեցաւ նաեւ Ռոստոմ: Այս վերջիններու, ինչպէս նաեւ բազմաթիւ ուրիշ ղեկավար դէմքերու (Ս. Վրացեան, Հրաչեայ Մարալ, փրոֆ. Աստուածատուր Խաչատրեան) ներկայութիւնը Կարին, հոն գործող Սանասարեան վարժարանը, «Յառաջ» քերթը խանդավառութիւն եւ եռուզեռ կը ստեղծէին Բարձր Հայքի այս կեդրոնին մէջ, ուր այս բոլորի գաղափարական շունչին տակ կը կազմաւորուէին նաեւ նորահաս սերունդները:

Ներկայացուած նիւթերու մեծագոյն մասը առնչուած է 1910 թ. Յունիսին Կարին գումարուած Շրջանային ժողովին եւ Բարձրաբերդի տարբեր կոմիտեիքեանց համաձայն տեղեկագիրներուն: Նոյն քաղաքին մէջ Հոկտեմբեր ամսուն պիտի յաջորդէր Արեւելեան Բիրոյի Թուրքիոյ հատուածին Ռայոնական ժողովը (տես էջ 162-174):

- 1.- Շրջաբերդական եւ Օրակարգ Շրջանային ժողովի:
 - 2.- «Արձանագրութիւններ Բարձրաբերդի Շրջանային Բ. ժողովի» (1 – 10 Յունիս 1910):
- Մեծադիր 38 էջ:
- 3.- «Ընդհանուր հաշուեկշիռ Բարձրաբերդի»:
 - 4.- Արժիւ–Երզնկայի տեղեկագիր:
 - 5.- Ջրաւտ–Դերջանի տեղեկագիր:
 - 6.- Միջնաբերդ–Բաքերդի տեղական «Շրջանային» ժողով:
 - 7.- Խորածոր–Քրդի տեղական «Պատգամաւորական» ժողովի որոշումները:
 - 8.- «Տեղեկագիր եւ Չեկուցում Մմբատաբերդի [Սպեր]»:
 - 9.- Բարձրաբերդի Կեդր. Կոմիտեի գրութիւնը ուղղուած Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդ. ժողովին:

Յայտնենք որ «շրջանային» կամ «պատգամաւորական» պէտք է կոչել այն ժողովները, որոնք յատուկ են Կեդր. Կոմիտեիքեան ամբողջ շրջանին: Կը պատահի երբեմն որ մէկ կոմիտեիքեան յատուկ ժողովին եւս տրուի նոյն անունը, ինչ որ սխալ է անշուշտ: Այդպիսիները պէտք է անուանել Ներկայացուցչական:

21.- Խօսքը կը վերաբերի Ռուբէն Տէր Մինասեանին, որ 1909 թուականն է վեր ուսման համար կը գտնուէր Զուիցերիա, ուրկէ 1913ին միայն պիտի վերադառնար Տարօն: Չաւարեան, ինք, կը պատրաստուէր լքելու Տարօնը ու անցնելու Պոլիս, ուր Օգոստոս ամսուն պիտի գումարուէր Հ.Յ.Դ. վեցերորդ Ընդ. ժողովը:

22.- Գեղամ Տէր Կարապետեան, Մշոյ պատգամաւոր Օսմ. խորհրդարանին:

23.- Այսինքն՝ Կ. Պոլիս:

Ա 1.- Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

30 Ապրիլ 910, Բարչրաբերդ

Սիրելի ընկերներ,

Շրջանիս առաջին Շրջանային ժողովը, որու մէջ կա-
յացաւ ներկայ Կեդր. Կոմիտէի ընտրութիւնը, ինչպէս
Ձեզ յայտնի է, գումարուած էր 1909 Մայիսին, որով
չուտով կը լրանայ տարին: Հետեւապէս կը վերջանայ
նաեւ Կեդր. Կոմիտէիս պաշտօնավարութեան ժամանա-
կամիջոցը:

Նկատի ունենալով այս՝ Կ. Կոմիտէս նախքան իր
պաշտօնավարութեան ժամանակաշրջանի լրանալը,
համաձայն Դաշնակցութեան կանոնագրի տրամադ-
րութեան, ներկայ շրջաբերական նամակով շրջանի բո-
լոր մարմինները կը հրահրէ բրկորդ Շրջանային ժո-
ղովի քննելու եւ կարգադրելու շրջանի բոլոր գործերը,
ինչպէս նաեւ ընտրելու նոր Կ. Կոմիտէն: Ժողովին գու-
մարման վերջնական ժամանակը նշանակուած է ներ-
կայ տարուայ Յունիս ամսի մէկին, մինչեւ Յունիս 7ը
վերջանալու պայմանաւ:

Ներփակ դրկելով Ձեզ գումարուելիք Շրջ. ժողովի
օրակարգը, կը խնդրենք դնել Ձեր շրջանի ընկերներու
Ընդհ. Ժողովին, կամ գոնէ տասնապետական Ընդհ.
Ժողովին, լուսաբանելու նշանակուած բոլոր հարցերը
եւ ընկերներու կարծիքը բանաձեւերով դրկել Շրջ. ժո-
ղովին, Ձեր կողմէ ընտրուած պատգամաւորներու
հետ: միաժամանակ պարտք կը համարենք ցաւով շեշ-
տել անգամ մ'եւս, որ հակառակ Կ. Կ.իս քանիցս ըրած
դիմումներուն, շրջաններու հաշիւները ցարդ չդրկուե-
ցան եւ կը մնան առանց ստուգման ու վաւերացման:
չեշտելով այս տիտուր ընթացքը կը յիշեցնենք որ Շրջա-
նային ժողովի գալիք պատգամաւոր ընկերները պէտք է
անպայման իրենց հետ բերեն իւրաքանչիւրն իր շրջանի
մանրակրկիտ հաշիւները, ինչպէս նաեւ պահանջուած
ցենզի համաձայն շրջանի եկամուտներէն Կ. Կոմիտէի
իյնալիք բաժինը:

Հետեւեալ տողերով աւելորդ չենք համարեր Ձեզ
տալ մի քանի հրահանգներ Շրջ. ժողովին Ձեր կողմէ
դրկուելիք պատգամաւորներու օրինական պայմաննե-
րու եւ ընտրութեան ձեւի մասին:

1.- Իւրաքանչիւր շրջան Ծ. Ժ.ին կու տայ երկու
պատգամաւոր, մէկը տեղ. կոմիտէէն, իսկ միւսը շրջա-
նի կողմէն: Տեղ. կոմիտէի կողմէն գալիք պատգամաւոր-
ըր կ'ընտրէ ինքը կոմիտէն իր անդամներէն մէկն ու մէ-
կին, իսկ շրջանի կողմէն գալիք պատգամաւորը
կ'ընտրուի շրջանի մէջ գոյութիւն ունեցող տասնա-

պետներու հաւաքական ընտրութեամբ (տասնապետա-
կան ընդհանուր ժողովի կողմէն):

2.- Պատգամաւորներէն անոնք որոնց շրջանը չի հա-
մապատասխաներ մեր կանոնագրի պահանջած ցենզին,
այսինքն որոնց շրջանը ներկայիս չունի առնուազն 200
դաշնակց. ընկեր եւ 3 ամիս կանոնաւորապէս վճարած
անդամավճարներ, կը զրկուին վճարական ձայնի իրա-
ւունքէն եւ կը մասնակցին ժողովին միայն խորհրդակ-
ցական ձայնով: Համապատասխան ցենզը ապացուց-
ւելու համար, պէտք է վերցնել ներկայիս գոյութիւն ու-
նեցող կազմակերպական վիճակը:

3.- 200է աւելի եւ մինչեւ 400 անդամ ունեցող շրջանը
կու տայ 3 պատգամաւոր, մէկը տեղ. կոմիտէի կողմէն,
իսկ երկուքը շրջանէն: 400է մինչեւ 600 անդամ ունեցող
շրջանը 4 պատգամաւոր եւ այսպէս շարունակ իւրա-
քանչիւր աւելի 200ին շրջանի կողմէ աւելցնելով՝ մէկ
պատգամաւոր:

4.- Իւրաքանչիւր պատգամաւոր Շրջ. ժողովին ան-
պայման պէտք է բերէ իր շրջանի կազմ., գինական,
դրամական եւ այլնի մանրակրկիտ հաշուետուութիւնը,
ստուգուած եւ ստորագրուած տեղ. կոմիտէի առնը-
ւազն 3 անդամի կողմէն: պէտք է ունենայ տեղեկագիր
եւ բերելու է միաժամանակ իր շրջանի եկամուտներէն
Կ.Կ.ին իյնալիք բաժին դրամը՝ պահանջուած ցենզի հա-
մաձայն: Հակառակ պարագային հաշիւ եւ այլ պա-
հանջներ չներկայացնող պատգամաւորները կը զրկը-
ւին ձայնի իրաւունքէն:

5.- Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք է իր հետ բե-
րէ Շրջ. Ժ.ի օրակարգի հարցերու վերաբերմամբ, իրենց
շրջանի տասնապետական ժողովի ընդունած բանաձե-
ւերը գրաւոր կերպով (մանդատներ) ինչպէս նաեւ ունե-
նալու է վաւերաթուղթ տեղ. կոմիտէի կողմէ պատգա-
մաւորի հանգամանքը ստուգող:

6.- Ընտրուած պատգամաւորները մինչեւ Մայիս 28
անպայման պէտք է հասնին տեղս, նշանակուած օրը
անվրէպ սկսելու ժողովը:

7.- Իւրաքանչիւր պատգամաւորի անհրաժեշտ ծախ-
սը (գնալ, գալ ամբողջը) անպայման պէտք է հոգայ ու-
ղարկող շրջանը: Կ. Կոմիտէն պատգամաւորներու ոչ
մի ծախսը չի հոգար:

Ընկերական ջերմ բարեւներով
ԲԱՐՁՐԱԲԵՐԴԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Բ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ

I- Նախնական գործողութիւններ

- 1.- Շրջաններու զեկուցում, հաշուետուութիւն, տեղեկագիրներ
- 2.- Ջեկուցում Կ. Կոմիտէի եւ Ձ. Ընդհ. Ժողովի
- 3.- Օրակարգի նոր առաջարկներ շրջաններէն եւ անհատ ընկերներէն:

II- Կազմակերպական

- 1.- Քաղաքական խմբեր
- 2.- Մարտական խմբեր
- 3.- Արհեստակցական միութիւններ
- 4.- Գիւղացիական միութիւններ եւ կազմակերպական % տուրքի ճշդում
- 5.- Արտադրողական եւ սպառողական խանութներ
- 6.- Շրջաններու նոր բաժանում եւ իւրաքանչիւր շրջանի ներքին ծախսերու չափի ճշդումը.
ընդհ. հասոյթ եւ ազատ գործիչի, պրոպագանդիստի խնդիր
- 7.- Դաշնակցական մամուլ, պաշտօնական եւ ոչ պաշտօնական:
Տեղական թերթ եւ շրջաններու վերաբերումը. Ազատամարտ եւ մեր վերաբերումը:

III- Ինքնապաշտպանութիւն

- 1.- Շրջաններու ինքնապաշտպանութեան գործը եւ մեր վերաբերումը.
(համայնական զէնքը եւ մեր վերաբերումը դէպի անոնց դասաւորումը)
- 2.- Մնայուն գինական ֆոնդ ոչ կուսակցական ձեւով:

IV- Թուրք եւ քրտական յարաբերութիւններ

- 1.- Գիւղացիական եւ արհեստակցական միութիւններու խառն կազմակերպումը հայերու հետ.
- 2.- Իւրաքանչիւր տարրի առանձին կազմակերպում. երբ խառն չեն
եւ անոնց կազմակերպական բնոյթը, կուսակցական թէ ոչ
- 3.- Մեր վերաբերումը դէպի Իթիթիհատ
- 4.- Մեր վերաբերումը դէպի Հնչակեան եւ այլ հայ կուսակցութիւններ
- 5.- Մեր վերաբերումը դէպի Թուրք եւ քիւրտ կուսակցութիւնները (բէկական շարժում եւ այլն):

V- Կրթական կուլտուրական

- 1.- Մեր վերաբերումը դէպի ազգ.-կուլտուրական հաստատութիւնները
(դպրոց, լսարան, գուտ հասարակական հաստատութիւններ). ազգային դպրոց եւ պետական
- 2.- Ժողովրդական շարժուն գրադարաններ:

VI- Հողային խնդիր

- 1.- Մեր դիրքը դէպի հայ գիւղացիի բուն գրաւուած հողերը.
- 2.- Մեր վերաբերումը դէպի քիւրտ եւ թուրք գիւղացիներու բուն գրաւուած հողերը.

VII

- 1.- Կեդր. Կոմիտէի ընտրութիւն
- 2.- Յարաբերութիւն մեր եւ դրացիներու միջեւ
- 3.- Յաջորդ Շրջ. ժողովի թուականը:

Բարձրաբերդ, 30 Ապրիլ

Փաստ. 825-43

Ա 2.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՐՉՐԱԲԵՐԳԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ Բ. ԺՈՂՈՎԻ (1 - 10 Յունիս 1910)

Փաստաթուղթ 825-43-ը ընդարձակ ատենագրութիւնն է 1910, Յունիս 1-10ին գումարուած Բարձրաբերդի Բ. Շրջանային ժողովին: Բաղկացած է 38 մեծադիր էջերէ. այսուհանդերձ ամբողջական չէ եւ անստորագիր է: Միեւնոյն ժողովի մէկ այլ՝ աւելի ամփոփ, գլխաւորաբար որոշումներու բաժինը ընդգրկող արձանագրութիւն (825-44 եւ 764-13 փաստաթուղթեր) գոյութիւն ունի, ամբողջական եւ ստորագրուած (Սօսանուէր եւ Բարսեղեան): Հաւանաբար իբր շրջաբերական պատրաստուած է, որոշումներու բաժինը եւ ժողովական նիւթերու հիմնական մասերը փոխանցելու համար մարմիններուն եւ շարքերուն:

Table with 3 columns: Item number, Description, and Count/Category. Includes items like 'Բարձրաբերդի Տեղական կոմիտէին 1 ձայն', 'Սմբատաբերդ', 'Միջնաբերդ', etc.

- 1.- Ծաղկադաշտը կամ պարզապէս Դաշտ. ըստ երեւոյթին կը համապատասխանէ Որսորդ կոմիտէութեան շրջանին, ուր կը յիշատակուի Արշաւան գիւղը, ինչ որ ենթադրել կու տայ որ Ծաղկադաշտը (ծածկանուն) պէտք է տեղադրուի Կարին քաղաքին մերձակայ շրջան մը: Կարնոյ գաւառին մէջ: Տեղական կոմիտէն՝ անշուշտ Կարին քաղաքի մարմինն է:

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ

Նախապատրաստական Ա. ՆԻՍ 1 Յունիս 1910

Բ. ՆԻՍ 2 Յունիս 2

Նախագահ՝ Բարսեղեան, քարտուղար՝ Մարալ¹⁴: Ժողովին պիտի մասնակցին Բարձրաբերդի Կեդր. կոմիտէ եւ Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչ: Բարձրաբերդի խմբագրութ. ժողովի կողմէ ընկեր Մլեհ. Ջրաւէտի շրջանէն ընկեր Փայլակ, Խոսրով, Սմբուլ Միջնաբերդի շրջանէն ընկեր Սեպուհ Խորաձորի շրջանէն ընկ. Վահան եւ Խմօ:

Միւս շրջաններէն Արծիւ, Սողոմ, Մասիսի Մոց, ստացուած են տեղեկագրեր միայն, առանց յատուկ պատգամաւորի. Սողոմ եւ Մասեաց Մոցի շրջանէն կ'առաջարկեն իրենց կողմէ ընկ. Մարալ, իսկ երկրորդը ընկ. Վահան: Իսկ Բիւրակն, Սմբատաբերդ եւ Կոռուադաշտ ոչ մի տեղեկութիւն չեն տուած հրաւերին:

Մանտաղներու ստուգում եւ ձայներու ճշդում.

Ժողովը ստուգելէ յետոյ եկած պատգամաւորներու շրջաններու ցնեզերը, որոշեց վճռական ձայնի իրաւունք տալ Միջնաբերդին մէկ, Ջրաւէտ՝ 3, Խոսրով՝ 2, ինչպէս եւ Արեւել. Բիւրոյին մէկ. ժողովը խորհրդակցական ձայնով որոշեց հրաւիրել Կեդր. կոմիտէի եւ տեղ. կոմիտէի ընկերները. դուրսի ընկերներէն որոշուեցաւ հրաւիրել Յարութիւն, Արիս, Վտարանդի¹⁵: Ժողովը մերժեց ձայնի իրաւունք տալ Սողոմի շրջանէն պատգամաւորութեան համար առաջարկուած ընկ. Մարալին: Մերժեց նաեւ Մասեաց Մոցի առաջարկը, ցնեզ չունենալուն պատճառաւ:

Ժողովներուն համար ժամանակ նշանակուեցաւ առաւօտ ժամը 11էն - 2 (ըստ) [թրքականի], երեկոյեան 9էն - 1 (ը. թ.):

- 14.- Մարալ կամ Գրաչեայ Մարալ, բուն անունով Դարիպեան Գրիգոր: Ծանօթ էր նաեւ Փիլոս ծածկանունով: 15.- Վտարանդի՝ Արամ Զարրզ: Տեղական կոմիտէ, հոս, պէտք է հասկնալ Կարին քաղաքի: 16.- Սմբուլ կամ Մշեցի Սմբուլ, բուն անունով Յակոբեան Սմբատ: Տեսնել այս մասին էջ 166:

Նախագահ ընտրուեցան ընկերներ Բարսեղեան եւ Վարազդատ, որոնք փոխն ի փոխ պիտի նախագահեն ժողովներուն: Քարտուղարներ Արիս, Մլեհ եւ ներկայ ընկերներ փոխն ի փոխ: - Որոշուեցաւ զեկուցումներու ժամանակ զեկուցանողին տալ 20 րոպէ միայն, ընդդիմախօսներուն 10 րոպէ, Բ. անգամ խօսողներուն 5. գ. անգամուն 2: - Ժողովի պարագումները դիւրացնելու համար առաջարկուեցաւ որ իւրաքանչիւր հարցի մասին ընկերները զեկուցում բերեն ժողովին:

Գ. ՆԻՍ 2 Յունիս (երեկոյեան)

Նախագահ՝ Բարսեղեան, քարտուղար՝ Մլեհ

1.- Ընկերներէն Սօսանուէր գրաւոր դիմում ըրած էր ներկայ ըլլալու շրջանային ժողովներուն իբրեւ Սրբատաբերդի կազմակերպական գործերուն տեղեկ եւ կարեւոր տեղեկութիւններ տալու նոյն տեղի գործերու մասին. ժողովն ընդունեց առաջարկը եւ որոշեց խորհրդակցական ձայն տալ անոր եւ ընտրեց զայն իբրեւ մնայուն քարտուղար:

2.- Ընկերներ Սեպուհ եւ Սմբուլ¹⁶ առաջարկեցին ժողովին հրաւիրել Յակոբին իբրեւ դաշնակցական, զոր կը հաստատէին իրենց անցեալի անձնական յարաբերութիւններով եւ մասնաւոր նամակով մը: Իսկ Բարսեղեանի, Մարալի եւ Գասպարեանի կողմէ պատասխանուեցաւ թէ անիկա այժմ ս[ոցիալ] ու[եւոլուցիոններ] է. այս բանը հաստատուած է Թիֆլիսէն յայտնի ընկերի մը կողմէ գրուած նամակով մը, հետեւաբար կարելի չէ ընդունիլ զայն: Ապա որոշուեցաւ նամակով որոշել անոր բուն հանգամանքը: Ժողովն անցաւ զեկուցումներու:

Լսուեցաւ Խոսրովի զեկուցումները, եւ որոշուեցաւ որ նոյն տեղի բոլոր մարմիններուն նկատողութիւն ըլլայ Շրջանային ժողովոյ կողմէ՝ կազմակերպական կանոնագրէն շեղուելու համար՝ դրամական ապակենտրոնացում կիրարկելով. յետոյ իրերը հաւաքել եւ դնել Կ. կոմիտէի տրամադրութեան տակ: Նոյնպէս որոշուեցաւ Կ. կոմիտէի հասնելիք բաժինը անպայման վերցնել, որոշ քանակութեամբ ծախելով: Ապա կարդացուեցաւ Արծիւի տեղեկագիրը եւ հաշվեցոյցը ու որոշուեցաւ ասոր մասին ալ նոյն նկատողութիւնները:

դուրսիցը եւ կարգադրութիւնը ընել:

— Խորաձորը ունի 51 խումբ 381 ընկերներով: Շրջանը ունի մօտաւորապէս 300էն աւելի գիւղ, որոնց 40-ը քրտախառն հայ գիւղեր են: Հայ տարրի ազդեցութիւնը բաւական մեծ է: Թուրք-հայ յարաբերութիւնները լաւ են: շրջանին մէջ կայ բաւականաչափ ապրանք¹⁷, թէ ժողովրդական եւ թէ կազմակերպական: 909-910 տարեշրջանին մուտք ունեցեր են 24522½ դրչ եւ ամբողջ ծախսուած է: Մուտքը գոյացած է հանգանակութենէ, ամսեվճարներէ եւ կազմակերպութեան մուտքի դրամէ, փոխառութենէ եւ հանդէսներէ: Այդ գումարը ծախսուած է տեղական կազմակերպութեան պէտքերուն, ապրանքի գնման, ընթերցարանի եւ նոյնի հաստատման, պարտքի վճարման եւայլնի համար:

Լսուեցաւ նաեւ Զրաւէտի զեկուցումը: Զրաւէտը ունի 44 խումբ 459 անդամով: Շրջանը ունի 300 գիւղ, որոնց 27ը քրտախառն հայ գիւղեր են: Տնտեսական եւ կուլտուրական վիճակը խեղճ է: ունի բաւականաչափ ժողովրդական ապրանք: կազմակերպութիւնն ունեցեր է մուտք մօտաւորապէս 4000 դրչ: գոյացած անդամավճարներէ:

ՆԻՍ Դ.
(Յունիս 3)

Նախագահ՝ Բարսեղեան, քարտուղար՝ Վահան

Քաղաքական} խումբերը.— Ժողովը լսելէ յետոյ ընկեր Բարսեղեանի զեկուցումը քաղ. խմբերու մասին, վիճաբանութիւններէ յետոյ ընդունեց միաձայնութեամբ ընկեր Մարալի բանաձեւը:

«Նկատելով որ ներկայ քաղաքական կարգերը լիովին չեն երաշխաւորում Դաշնակցութեան Ծրագրէն բխող քաղաքական լայն ազատութիւններ, մասնաւորապէս Թուրքիոյ աշխատաւոր տարրերու պահանջներու համաձայն,

«Նկատելով որ հակառակ այս բանին գոյութիւն ունեցող քաղաքական կարգերն էլ դեռ ապահովուած չեն պահանջուած չափով եւ ենթակայ են ներքին թէ արտաքին վտանգների, որոնց համար էլ անհրաժեշտ է միշտ պատրաստ ունենալ քաղաքական հասունութիւն եւ քաղաքացիական պարտաճանաչութիւն ներկայացնող տարրեր, եւ որ այս տեսակետն մեր քաղաքական խումբերը աւելի քան ներկայացնելու են նոյն տարրերը, որոնք մտնելով քաղաքական խմբերի մէջ կազմակերպական շարքերը անխուսափելիօրէն պէտք է ենթարկուին նաեւ կուսակցական այլ պահանջներին, օրինակ՝ տնտեսականին, այդ պատճառաւ Շրջ. ժողովը առաւելութիւն է տալիս քաղաքական խմբերի կազմակերպման ոյժ տալու նրանց, որոնք տնտեսական եւ այլ հասարակական խնդիրների մէջ էլ պիտի ունենան իրենց մասնակցութեան դերը, համապատասխան մեր Ծրագրի ոգուն եւ պահանջներուն»:

Ե. ՆԻՍ
(Երեկոյեան, Յունիս 3)

Նախագահ՝ Բարսեղեան, քարտուղար՝ Սօսանուէր:
Ներկայք 9 (ձայն ունեցող)
4 (խորհրդակցական ձայնով)

Մարտական խմբեր — Ժողովը լսեց այս մասին ընկեր Սեպուհի զեկուցումը:

Մարտական խմբերու բանաձեւը.— Շրջանային ժողովը ձայներու մեծամասնութեամբ ընդունեց Մարալի պատրաստած հետեւեալ բանաձեւը:—

«Նկատի ունենալով քաղաքական եւ տնտեսական ներկայ ոչ կատարելապէս ապահովուած կարգերը, նկատելով նաեւ մասնաւորապէս հայ ժողովրդի չափազանց վտանգալի վիճակը յետադիմական շարժումներու ժամանակ, որոնք ստիպողական անհրաժեշտութիւն կը դարձնեն մարտական խումբերու գոյութիւնը,— անոնց այժմէն կազմակերպումը, շրջանային ժողովս գտած է անհրաժեշտ, յանձնարարելով այս առթիւ մշակել յատուկ կանոնագիր մարտական գործունէութեան համար:

Մարտական խումբերու ընկերները անպայման ըլլալու են դաշնակց. խումբերու կամ միութիւններու մէջն ընտրուած եւ մասնակցելու են անոնց: Մարտական խումբերու գործունէութիւնը պիտի ըլլայ չափազանց գաղտնի եւ սովորական խաղաղ օրերուն անոնք չպիտի ներկայացնեն ազատ մարմին մը գոյութիւն ունեցող դաշնակց. մարմիններ: Իւրաքանչիւր տեղի մարմին (4. Կոմիտէ, քաղք. կոմիտէ թէ ենթակոմիտէ) իր գիտութեամբ մարտական գործունէութեան վերաբերեալ գործերը պիտի յանձնէ իր ընկերներէն մէկին կամ ոմանց ղեկավարելու զայն որպէս մի սեկցիա ունենալով միաժամանակ ղեկավարող դեր անոնց գործունէութեան մէջ:

Իւրաքանչիւր մարմին պարտաւորիչ կերպով միջոցներ ստեղծելու է՝ մարտական խումբերու կազմակերպման օրէն հնարաւորութիւն տալ անոնց զինավարժութեան» (6 թեր, 2 դէմ, 1 ձեռնպահ):

Գիւղացիական միութիւններ.— Ժողովը ձայներու մեծամասնութեամբ պաշտպան հանդիսացաւ այս միութիւններուն թէ՛ տնտեսական-քաղաքական ազատութեան եւ թէ՛ Դաշնակցութեան հեղինակութեան տեսակէտէն: Յայտարարուեցաւ թէ քաղաքական խումբերը գիւղերու մէջ իրականութեան մէջ նպատակի չեն ծառայիր եւ մենք աւելի Դաշնակցութեան անցեալ հմայքով է որ կ'ապրինք: անհրաժեշտ է գիւղացի դաշնակցականին տալ շօշափելի գործ. այդ կարելի է ընել գիւղացիական միութիւններով:

17.- Ապրանքը կամ մթերքը՝ զէնքն է, ժողովրդական ապրանք՝ ժողովրդի մօտ գտնուող զէնք:

Այնուհետեւ վիճաբանութեան ենթարկուեցաւ զուտ թէ՛ դրացիներու հետ խառն միութիւններ կազմակերպելը: Վերջին խնդիրը ծանրակշիռ հանգամանք ունէր, ուստի որոշուեցաւ կազմակերպական ձեւի մասին երեք անձէ կազմուած յանձնախումբ, որ մանրամասն լուսաբանէ խնդիրը եւ ժողովին զեկուցանէ:

Ժողովը այն կարծիքին եկաւ թէ պէտք է կազմակերպել գիւղ. միութիւնները նախապէս զուտ հայաբնակ գիւղերէ, ապա այն գիւղեր, ուր քիւրտ եւ թուրք՝ ազգաբնակչութեան չնչին մասը կը կազմեն. յետոյ կազմակերպել այն գիւղերը ուր թուրք կամ քիւրտ խոշոր տոկոս կը կազմեն: Ժողովի մէկ մասն ալ համաձայն էր որ առանձին կազմակերպուին թուրք կամ հայ գիւղացիութիւնը եւ անոնք միացած ըլլան մէկ վարչութեան մէջ հաւասար ձայներով, իսկ ժողովականներու միւս մասը կը կարծէր որ պէտք է խառն միութիւններ կազմել: Երկու ուղղութիւններն ալ կը պաշտպանէին որ կուսակցական հողի վրայ կազմուին:

Շարժուն գրադարաններու խնդիր.— Նկատի ունենալով որ մեր ժողովուրդը կրթական միջիջարական վիճակ չի ներկայացներ եւ անգիտակցութեան զոհ եղած է ընդհանրապէս. զեկուցանողը անհրաժեշտ համարեց յեղափոխական գրադարաններու դրութիւնը, մանաւանդ գիւղական իրականութեան մէջ: Շարժուն գրադարաններու անգործնականութեան մասին վիճաբանութիւն կատարուեցաւ ու այդ առթիւ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը:

«Շրջանային ժողովս լսելով շարժուն գրադարաններու մասին եղած զեկուցումը որոշեց.

Նկատելով շարժուն գրադարաններու օգտակարութիւնը բայց զանազան դժուարութիւններու ենթարկուող կեանքի մէջ, որոշեց տեղական մարմիններու նախաձեռնութեամբ հաստատել ընդհանուր մնայուն գրադարաններ ժողովրդին պատկանող եւ ժողովրդական միջոցներով»:

Նոյն ժողովին մէջ մարտական խումբերու կանոնադրի խմբագրութեան համար կազմուեցաւ յանձնախումբ մը Սեպուհի, Յարութիւնի եւ Խմոյի կողմէ, իսկ հաշուական մասին քննութեան համար Շահէն, Մլեհ եւ Վահան:

Ինքնապաշտպանութիւն.— Մեր ներկայ իրականութեան մէջ անհրաժեշտ է ժողովուրդը ինքնապաշտպանութեան մղել: Եթէ նոյնիսկ կառավարութիւնը թուրք եւ քիւրտ ժողովրդին գինաթափ անէ, նորից պիտի գինւի, որովհետեւ կառավարութիւնը վտանգի ժամանակ կրնայ թուրք ժողովրդին գէնք բաժնել, իսկ հայը ճակատազրական զոհ կը դառնայ այդ պարագային: Հայ ժողովուրդին գինումը անհրաժեշտութիւնը մ'է մանաւանդ, որովհետեւ հակասահմանադրական շարժումի

ուրուականը դեռ կը սաւառնի մեր իրականութեան մէջ եւ ինչպէս անցեալին մէջ, հայն է որ քաղութեան նոխագր պիտի դառնայ: Այս առթիւ մեծամասնութեամբ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը:

«Օսմանեան լայն ու ընդարձակ հայրենիքին մէջ ընդհանրապէս եւ հայ կեանքին մէջ մասնաւորապէս դեռ չէ ապահովուած Սահմանադրութիւնը, որ դեռ օսմ. հայրենիքում շարունակուեւ են վխտալ մութ միւսթայիտ¹⁸ տարրեր, որ դեռ զուլումն ու կեղեքումը, սպանութիւններն ու թաւանները ստեպ շարունակուեւ են իրանց աւերիչ դերը կատարել մեր դժբախտ, արիւնքամ երկրին մէջ, եւ որ տնտեսական քաղաքական կեանքը դեռ ենթակայ է ալեկոծումներին,— ժողովս որոշեց առաջին ուշադրութիւնը դարձնել անոր, ինքնապաշտպանութեանը, որը թէւ համայնական հողի վրայ պէտք է դնել, բայց նկատելով որ ժողովուրդը անկարող է այդ գործը ինքնաբերաբար վարելու,— յանձնել ղեկավարութիւնը կազմակերպութեան, ուստի յանձն կ'առնէ կազմակերպութիւնը ինքը պատրաստել ժողովուրդը վտանգի ժամանակ եւ կանոնաւորելուց եւ պատրաստելուց յետոյ յանձնել իրեն եւ հաստատել մնայուն ապահովական ֆոնտը, որով կարելի ըլլայ ապրանքավաճառներու հետ բանակցիլ եւ արժան գնով ապրանք հայթայթել ժողովրդին:

Դաշնակցական մամուլ.— Զեկուցանող ընկերը յայտնեց հետեւեալը:— Ամէն քաղաքական կուսակցութիւն իր սկզբունքներն ու աշխարհահայեացքները ժողովրդին քարոզելու համար ունի մամուլ, որ ժողովրդի սրտին հետ կապուած պիտի լինի, եւ այդ պատճառաւ պէտք է որ սկզբունքները շատ պարզ կերպով ժողովուրդին քարոզուին: Դաշնակց[ութիւնը] կրցեր է պէտք եղած գոհացումը տալ թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր փրփականտին: Մեր կազմակերպութեան պաշտօնական օրգանն է Դրօշակը, որ պէտք եղած կերպով չէ ծառայած ժողովուրդին, հեռու հայկական իրականութենէն, թէ՛ եւ անցեալի մէջ եղած է բաւարար:

Կովկասի մէջ կիսապաշտօնական թերթեր գոհացում տուած են. Տաճկ[աստանի] սահմանին մէջ Սահմանադրութենէն առաջ մամուլը միշտ զաղտնի եղած է ձեռագիր կամ խմորատիպ ձեւին տակ: Սահմանադրութենէն ասդին լոյս տեսաւ «Ազատամարտ», որ որոշ չափով բաւարարութիւն տուած է, թէ՛ եւ սկզբունքային խնդիրներ շատ քիչ տեղ գրաւած են այնտեղ:

«Յառաջ» թերթն ալ նկատուելով կիսապաշտօնական թերթ, որոշ կերպով չէ արտայայտուեր:

Սակայն զեկուցանողի կարծիքով այսուհետեւ Դրօշակն աւելի մեծ ծաւալ պիտի ունենայ եւ սկզբունքային հարցեր շատ տեղ պիտի գրաւեն գիտական փաստերով ապացուցուած: Ան պիտի լինի կուսակցական գործերու արտայայտիչը ու արտայայտուի բաւարար չափով:

18.- Բոնակալ:

«Ազատամարտ» ակելի մեծ տեղ պիտի տայ սկզբունքային խնդիրներու, այնպէս ալ միւս թերթերը, որոնք պատրաստ են ըլլալ ժողովրդական կեանքի արտայայտիչ, համերաշխութեան քարոզող եւ ժողովրդի կուտուրական գործին նպաստող:

Դրօշակը պիտի հրատարակուի կուսակցական միջոցներով, իսկ կիսապաշտօնական թերթերը՝ կողմնակի, սեփական միջոցներով:

Իբրեւ քննադատութիւն, ըսուեցաւ թէ Դրօշակը ներկայ պայմաններուն մէջ չէր կրնար փոխադրուիլ թուրքիա, ու բնաւ չի կրնար հայկական կեանքին նըւիրուիլ բոլորովին, որովհետեւ անոր դերն է, Ընդհանուր ժողովի որոշումով սովորաբար, վերլուծել սկզբունքային եւ գիտական հարցեր, երբեմն հայ կեանքին վերաբերեալ հրատարակել խնդիրներու ալ տեղ տալով:

Դարձեալ յայտարարուեցաւ թէ Երջանային ժողովը պարտի որոշել իւրաքանչիւր շրջանի սպառելիք թերթերու քանակը: Ետ թերթեր իրենց սեփական միջոցներով կ'ապրին. մեր կիսապաշտօնական թերթերն ալ նոյնպէս պիտի լինին, իսկ բոլորովին նեղը լծուելու [մնալու] պարագային թո՛ղ ընկերներու զոհողութեամբ պահեն անոնք իրենց գոյութիւնը: Մասնաւորապէս շեշտուեցաւ «Յառաջ»ի ծաւալման խնդիրը, իբրեւ տեղական թերթ, եւ պարտաւորութիւն դրուեցաւ ամէն ընկերի վրայ որ իր շրջանին մէջ բաժանորդներ գտնեն գործակալներու միջոցաւ: Ժողովը երկար վիճաբանութիւններէ ետք առաջարկեց հետեւեալ բանաձեւը.

«Ընդունելով որ կուսակցական լայն պրոպագանդայի ամենակարեւոր մէկ մասը կը կազմէ կուսակցական պաշտօնական եւ ոչ պաշտօնական մամուլը,

Ընդունելով որ այդ մամուլը կոչուած է մեր մասսաներու եւ ժողովրդական այլ զանգուածներու յեղափոխ. դաստիարակութեան մեծ չափով սատարելու,

եւ նկատի ունենալով մինչեւ այժմ գոյութիւն ունեցող կուսակցական պաշտօնական եւ ոչ պաշտօնական թերթերու կատարած դերը, Երջանային ժողովը կ'առաջարկէ.

1.- Որ կուսակցական պաշտօնական օրգան «Դրօշակ»ը շարունակէ պահպանել իր գիտական ուղղութիւնը, տարածելով մեր հիմնական գաղափարները՝ ուղեցոյց հանդիսանալով մեր պրոպագանդիստ եւ ղեկավար ընկերներին.

2.- Որ ոչ պաշտօնական օրգանները «Ազատամարտ», «Յայրենիք», «Ասպարէզ» եւ այլն «պահուելով իրենց սեփական միջոցներով, աշխատին արտայայտիչը հանդիսանալ հայ ժողովրդի, մասնաւորապէս ճնշուած տարրերու անմիջական պահանջներուն, պահպանելով իրենց բողոքողի դերը ամէն մի անհրաւրեան եւ կեղեքումի հանդէպ՝ բխած կառավարութենէն կամ այլ տարրերէն:

3.- Որ ատոր հետ միաժամանակ որոշ չափով տեղ տան եւ մեր հիմնական գաղափարները ժողովրդականացնելու, պարզ ժողովրդական լեզուով եւ հասկնալի:

4.- «Յառաջ»ը Բարձրաբերդի եւ Բարձր Յայքի շրջանին

մէջ միակ գրաւոր փրոփականդի եւ միանգամայն զանազան հարցերու գործնականացման նպաստելու միջոցն ըլլալով, հնարաւորութիւն ընծայելու է որ դաշնակց. ընկերներն ու մարմինները պարտականութիւն ստանձնեն ամէն կերպ տարածելու այդ թերթերը մեր շրջաններուն մէջ, աւելցնելով անոնց բաժանորդներու թիւը»:

Ապառողական եւ արտադրողական միութիւններ (Չեկուցում).— Ասոնք հիմնուած են փոխադարձ օգնութեան վրայ, եւ այս կը բարձրացնէ հասարակութիւնը թէ՛ տնտեսապէս եւ թէ՛ բարոյապէս: Մէկը ամէնքի համար, ամէնքը մէկի համար սկզբունքով առաջնորդուած են միշտ այս միութիւնները: Օրինակ անգլիական եւ պելճիքական կոոպերատիւ ընկերութիւնները, որոնք ի սկզբան շատ փոքր դրամագումարով եւ սահմանափակ գործունէութեամբ սկսած են, ի վերջոյ շատ ու շատ բարգաւաճած են. (Տես «Յառաջի գրադարան» № 23 կոոպերացիա):

Նոյն միութիւնները հայկական կեանքին մէջ իրականացնելու համար Թիֆլիսի մէջ կազմուեցաւ «Յառաջ» ընկերութիւնը, որ հիմնեց նպարավաճառի խանութ մը աժան եւ լաւագոյն նպարեղէններ հայթայթելու իր միութեան [անդամներուն]: Արդիւնքը ընկերութեան յատկացուելով, գործերը աւելի պիտի ընդարձակէին: Նոյն միութիւնը բիւրոներու հետ ալ պայմանաւորուեցաւ եւ փոխանակ 2-1 ռուբլի առնելու առնուազն, կ'առնէին 50 կոպէկ, շաքարի գործարանները 20% զեղչ կ'ընէին: Դեղարանները նոյնպէս 25% զեղչ կ'ընէին: Թիֆլիսի պէս սուղ քաղաքի մը մէջ ժողովուրդին թէ՛ աժան եւ թէ՛ լաւ ապրանք եւ պիտոյքներ կը հայթայթէր:

«Յառաջ»ի օրինակով Բագուի մէջ ալ սկսաւ սպառողական միութիւն մը ու շատ աւելի զարգացաւ:

Տաճկական իրականութեան մէջ ունինք ազատ կարգեր, ուստի կազմակերպութիւնը բարոյապէս պարտաւոր է ամէն զոհողութիւն յանձն առնելով սպառողական եւ արտադրողական միութիւններ կազմակերպել:

Կարելի է արտադրողական միութիւններ կազմել եւ հակիթ արտադրել մեծաքանակ (Զիթող գիւղը, օրինակ, կրնայ 250 ռուբլիով կարագի զտիչ բերել տալ եւ մաքուր կարագ ստանալ): Արտադրողական եւ սպառողական ընկերութիւններու անհրաժեշտ օգտակարութիւնը նկատի ունենալով, ժողովը որոշեց ընդունիլ հետեւեալ բանաձեւը.

«Ժողովս վճռեց յամենարարել շրջանի բոլոր ընկերներուն, աշխատիլ, ամէն ջանք գործ դնել այդ կարգի ընկերութիւններ հիմնել ու յառաջ բերել կազմակերպական շարքերու մէջ, եւ գործի յաջողութեան համար յամենարարել Կ. Կոմիտէին մշակել արտադրողական եւ սպառողական ընկերութեան ծրագիրներն ու տարածել շրջանները անկուսակցական հողի վրայ»:

Տեղական կոմիտէի թրուցիկ.— Լիպարիտ Աւետիսեանի ծանօթ խնդրոյն առթիւ տեղական կոմիտէն շրջաբերական մը հանած էր ընկերներու շրջանին մէջ գայթակղած մտքերը բուժելու համար: Այս մասին հարցապնդումներ եղան եւ վիճաբանութիւններ, եւ ի վերջոյ ժողովս բաւարարութիւն ստացաւ նկատելով որ ո՛չ թէ թրուցիկ է, այլ շրջաբերական եւ որ Կ. Կոմիտէի գիտակցութեամբ տեղի ունեցած է:

Դրօշակի մէջ տպել շրջաններէ եկած դրամներու քանակը.— Ժողովը նկատելով որ երկար ժամանակ է ի վեր շրջաններէն գանձուած ամսավճարներու մասին «Դրօշակ»ի մէջ չի յայտարարուիլ, յարմար դատեց պարտաւորեցնել Կ. Կոմիտէին որ օրը օրին գանձումները տպելու դրկէ:

Շրջաններու նոր բաժանում.— Շրջանները իրենց հին վիճակի բաժանմամբ դժուարութիւններու կը բախէին, ուստի որոշուեցաւ Խորաձորը բաժնել երկու կոմիտէական շրջանի՝ վերջոյն տարածութիւնը նկատի ունենալով: Միջնաբերդը պահել անփոփոխ, նոյնպէս եւ Ջրաւէտը: Մասեաց Մոցը պիտի կազմէ առանձին ենթակոմիտէ յարաբերութիւն ունենալով Բարձրաբերդի հետ: Սողոմ պիտի մնայ ըստ առաջնոյն. իսկ Սմբատաբերդի մասին վարուիլ այնպէս, ինչպէս կը հրահանգէ Կ. Կոմիտէն: Բիւրակներ թողուլ հին ձեւով, Արծիւը նոյնպէս կը մնայ առանձին շրջան:

Մեր վերաբերումը դէպի Հնչակեան կուսակցութիւնը.— Ձեկոյց ըրաւ ընկեր Արիս, որ ներկայ պայմաններուն մէջ անհրաժեշտ կը նկատէր համերաշխ գործել այդ կուսակցութեան հետ:

Ընկերներ քննադատեցին մանաւանդ Բարձրաբերդ շրջանին հնչակեանները. անոնցմէ մեծագոյն մասը Դաշնակցութեան վտարուածներ կամ վշտացածներ են եւ մանաւանդ անմաքուր եւ վաշխառու տարրերէ կազմուած: Ուստի առաջարկուեցաւ այս տեսակէտէն դիմել Կ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէին որ այս բանը զեկուցանէ Համերաշխութեան մարմնոյն¹⁹: Այս մասին երկար վիճաբանութիւններէ ետք ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.

«Սկզբունքով ընդունելով համերաշխութիւնը Հնչակեան եւ այլ հայ քաղ. կուսակցութիւններու հետ յեղափոխական որոշ ձեռնարկներու եւ ազգ. կուլտուրական ասպարէզներու մէջ,

Բայց եւ նկատի ունենալով որ մեր շրջաններուն մէջ մի քանի տեղեր հնչակեան մարմինները կազմուած են շատ անմաքուր եւ հակալեղափոխական տարրերով, որոնց գլխաւոր գործունէութիւնը ուղղուած է Դաշնակցութեան ընդդէմ: Շրջանային ժողովը կ'առաջարկէ Աշխատիլ համերաշխութեամբ յարաբերութեան մէջ

մտնել մաքուր եւ յեղափոխական տարրերով կազմուած մարմիններու հետ»:

(Փակագծի մէջ ըսենք որ Որսորդ ենթակոմիտէի ներկայացուցիչ ընտրուած էր ընկեր Հմայեակ, որ ժողովիս ներկայանալու պարագային հարցապնդման ենթարկուեցաւ եկեղեցիներու մէջ միթիւնկ կազմելու խնդրին առթիւ հակադաշնակցական քայլ առած ըլլալուն. ժողովը հարցապնդումներէ ետք համոզում գոյացուց թէ անփորձութեան արդիւնք եղած է այդ քայլը եւ ոչ ուրիշ բան, որոշեց զայն ընդունիլ հարկ եղած նկատողութիւնը ընելէ ետք):

Մեր վերաբերումը դէպի Իթիֆհատ.— Ձեկոյց ըրաւ Վարդգէս²⁰. «Դաշնակցութիւնը» սահմանադրական կարգերու ապահովման համար, համերաշխած է Իթիֆհատի հետ. նախքան Սահմանադ. ալ համերաշխութեան փորձեր եղած են. օրինակ Փարիզի կոնգրէն որ Դաշնակցութեան] երկարամեայ ջանքերու արդիւնք էր, եւ որ Սահմանադրութեան հաստատման որոշ չափով նպաստեց:

Իթիֆհատը սահմանադրական ուժեղ կազմակերպութիւն մ'է մեր իրականութեան մէջ. Դաշնակցութիւնը համերաշխած է վերջոյն հետ սահմանադրական կարգերու ապահովման համար եւ մանաւանդ նշանակելի է այդ համերաշխութիւնը՝ ո՛չ թէ ազգային այլ ազգերու ազատագրման տեսակէտով: Շրջանային ժողովը աւելի լայն չափով պիտի ջանայ եւ համերաշխութեան նոր քայլեր առնէ: Բարձրաբերդի Կ. Կոմիտէն Իթիֆհատի հետ միասին աշխատած է սահմանադրութիւնը պահպանել եւ այդ նպատակով ալ ծրագրած է ունենալ խառն խումբեր վտանգի պարագային:

Իթիֆհատական թիֆու ազգայնամոլներուն հետ կան նաեւ ազատականներ, վերջիններուն [հետ] պէտք է աշխատիլ կարելի եղածին չափ սերտ յարաբերիլ, իսկ առաջիններու նկատմամբ ծայրայեղ զգոյշ ըլլալու է, մինչեւ որ անոնք ալ տակաւ զարգացումի եւ ուրիշ ազդակներու շնորհիւ պատրաստուին: Մեր կուսակցութիւնը միայն Իթիֆհատի հետ չէ որ պիտի համերաշխի, այլ եւ բոլոր այն տարրերուն, որոնք սահմանադրական անկեղծ փափաքներ կը տածեն, ինչպէս քիւրտեր, չերքէզներ, լազեր եւ այլն: Եւ այս անհրաժեշտ է որովհետեւ թէ մեր երկրի աշխարհագրական դիրքը եւ թէ փոքրութիւնը ըլլալը համեմատաբար՝ այս կը թելադրեն»:

Քննադատութեան ձեւով ըսուեցաւ թէ կարելի է

19.- Պոլսոյ մէջ գործող համերաշխութեան միջ-կուսակցական կեդր. մարմին, բաղկացած էր Գ. Գաշնակցութիւն, Ս. Դ. Հնչակեան եւ Սահմանադիր-Ռամկավար կուսակցութեանց ներկայացուցիչներէն:

20.- Վարդգէս՝ Օսմ. Խորհրդարանի անդամ Կարիմէն, դաշնակցական ծանօթ գործիչ: Գիսակ ծածկանուծով: Իսկական անունը՝ Սերենկիլեան Յովհաննէս:

վատահիլ իթթիհատի վրայ, երբ նոյն կազմակերպու- թիւնն սկսի ժողովրդական շարքերէն: Եւ թէ մանա- ւանդ իթթիհատ կողմնակի կերպով կը ձգտի թրքացնել հայերն ու միւս բոլոր ոչ խալամ տարրերը:

Ընկեր Մարալ յարեց թէ որքան ալ կառավարութիւ- նը իթթիհատական տարրերէ կազմուած լինի, այնու- մենայնիւ այլ է կառավարութիւն, այլ իթթիհատ: Թուրքիա յետամնաց երկիր է. իթթիհատականները կա- ռավարութեան մէջ մտնելով չեն կրնար անմիջապէս ի- րենց պահանջները դնել: Մարալ աւելցուց նաեւ թէ յե- տամնաց այդ վիճակին մէջ բնական է նաեւ իթթիհա- տականներու թթու ալլատեցութիւնը: Այնու ամենայ- նիւ ոյժ կը ներկայացնէ ան, ուստի պէտք է գտնել աւե- լի յարմար պայմաններ համերաշխութիւնը հաստա- տուն հիմերու վրայ դնելու համար: Կ. Կոմիտէն պէտք է ունենայ իր յատուկ ներկայացուցիչը իթթիհատի հետ բանակցելու, աւելի ուշ պէտք է կազմել խառն մարմին- ներ ու այս ձեւով տանիլ համերաշխութեան գործը:

Կեդրոնական Կոմիտէի գեկուցում.— Կ. Կոմիտէի կողմէ գեկուց ըրաւ ընկեր Դուռմի.—

«Տեղական թուրք կուսակցութեան հետ մեր յարա- բերութիւնը բաւական հին անցեալ ունի. բայց այս յա- րաբերութիւնը կաղն ի կաղ ընթացք է մինչեւ վերջին պաշտօնական համաձայնութիւնը իթթիհատի եւ Դաշ- նակցութեան, որոնք ունեցան հոս խառն ժողովներ, ուր որոշուեցան միջոցներ ուղղուած ընդդէմ հակա- սահմանադրական շարժումներու: Սակայն այս ժողով- ներու որոշումները եղան սոսկ տեսական բաներ: Այդ բանակցութիւններուն ատեն տեղի ունեցաւ հոգեւոյս Եղիշէի²¹ սպանութիւնը. իթթիհատ շատ լաւ վերաբեր- ւեցաւ եւ յանցաւորը ձերբակալուեցաւ: Հողային խն- դիրն ալ շատ զբաղեցուց երկու կուսակցութեանց ներ- կայացուցիչները. այդ մասին դիմում եղաւ նոյնիսկ Կ. Պոլիս, սակայն որոշ արդիւնք չունեցաւ: Այդ առթիւ մեր երկրին անձանօթ 2 քննիչներ եկան. խառն ժողովը Պոլիս դիմեց որ երկրին ծանօթ մարդիկ ընկերանան ա- նոնց, բայց ցարդ արդիւնքն անյայտ է:

Անցեալ ձմեռ որոշուեցաւ երկուստեք գործիչ ըն- կերներ ղրկել գաւառները. մեզմէ մէկ մարդ ընտրուե- ցաւ եւ պատրաստուեցաւ գնալու բայց ընտանեկան պատճառներով յետ մնաց, ուստի յանձնարարուեցաւ Մասիսի Մոց ընկեր Սլաքին²², սակայն այս որոշումը չօշափելի արդիւնք չտուաւ:

Խառն ժողովը նկատի ունեցաւ նաեւ քրիստոնեայ դպրոցներու վրայ կառավարութեան կողմէ քոնթրոլի դրութիւնը. իթթիհատ ուզեց այս հողին վրայ Դաշնակ- ցութեան դիրքը որոշել, տրամաբանելով թէ «երկիրը սահմանադրական կարգեր ունի եւ ամէն ժողովուրդ հաւասար է, ուստի եւ կառավարութիւնը անհրաժեշտ է որ հսկողութեան իրաւասութիւն ունենայ»: Սակայն

Խառն ժողովին մէջ Դաշնակց. նկատելով երկրի ան- հաստատական դրութիւնը պաշտպանեց այդ ինքնու- ըրոյնութիւնն եւ վճռեց թէ միայն այն ատեն կարելի է ընդունիլ այդ քոնթրոլը երբ երկիրն իրապէս սահմա- նադրական կը դառնայ ազատ կարգերով օժտուած:

Անցեալ ձմեռն ռէաքսիոնի շշուկներ սկսան պտտիլ. քրտական-բէկական հսկայ շարժում կը պատրաստը- ւէր. Խառն ժողովը գումարուեցաւ, առաջինը ազատա- կան խումբն էր որ մեզի հետ ձեռք ձեռքի տուած կ'ու- գէր կեանքի գնով պաշտպանել Սահմանադրութիւնը. իսկ երկրորդը պահպանողական տարրն էր որ ճակա- տագրի տնօրինութեամբ գոհ կ'ըլլար: Մեր կողմէ գաղտնի ծրագիր կազմուեցաւ, սակայն վտանգը չպայ- թելով եւ այնպէս մնաց այդ ծրագիրը: Գործնական ձեռնարկներու մէջ իթթիհատը միշտ խոյս տուաւ եւ իր մթերքի¹⁷ մասին մեզ ոչինչ յայտնեց:

Հայերէն-թուրքերէն մամուլի խնդիրը ուշադրու- թեան առնուեցաւ. ի սկզբան որոշուեցաւ «Յառաջ»ի իբր յաւելուած հրատարակել թուրքերէնը. անոնք չփա- փաքեցան եւ ուզեցին առանձին թերթ ունենալ, որու մասին մեր կողմէ որոշուեցաւ մասնակցիլ եւ նոյնիսկ խմբագրութեան մէջ մտնել:

Միացած պրոպագանդիստներ ղրկել շրջանները. այս մասին խորհրդակցել է ետք գործնական քայլ առնը- ւեցաւ. սակայն շատ քիչ արդիւնքով:

Պրոպագանդի համար ժողովներ որոշուեցաւ հաս- տատել, ընդունուեցաւ այս, բայց փորձ չեղաւ:

Իբրեւ եզրակացութիւն պէտք է ըսել թէ Դաշ- նակց.— իթթիհատական յարաբերութիւնները շատ տարտամ եղած են եւ արդիւնքն ալ անվճռական, ինչ որ վնասակար եղած է միշտ մանաւանդ գործնական քայ- լեր առնելու տեսակէտէն»:

Ձանազան հարցապնդումներու մէջ հետաքրքրա- կան էր իթթիհատի դիրքը պէկերու կողմէ գրաւուած հողերու մասին. անոնք անիրաւութիւն կը նկատէին քանի մը տարի շարունակ միեւնոյն հողին վրայ բնա- կողները հեռացնել եւ յանձնել այդ հողերը իրենց տէրե- րուն. անոնք պէտք է մնան այդ հողերուն վրայ, իսկ զրկուած հայերուն ալ դրամական փոխարինութիւն ը- նելով ուրիշ տեղեր յանձնել, անարդարութիւն չըլլալու համար:

Յարաբերական գործնական միջոցներու համար ժո- ղովը որոշեց ամէն ընկերէ գործնական առաջարկներ պահանջել: Առաջարկները չեղան:

Ընկեր Դուռմի ապա շարունակեց իր գեկուցումը

21.- Թոփչեան Եղիշէ. Կարոյ «Յառաջ» թերթի հիմնադիր- խմբագիր: Գ.Յ.Դ. Գիւնգերող Ընդի. ժողովին կը մասնակցէր իբրեւ ներկայացուցիչ Արեւելեան Քիւրդի: Պոլսէն Կարիմ վե- րադարձի ճամբուն վրայ, Բաբերդի մօտ սպանուեցաւ խմբա- պետ Միհրամի եղբոր Յափթի կողմէ:

22.- Սլաք դաշնակցական հին գործիչ Օխիկեան Արմենակ:

կրթական-կուլտուրական հարցի մասին եւ այսպէս պարզեց. «Կուսակցութիւնն իր յեղափոխական ծրագ- րին հետ ունի նաեւ կրթական ծրագիր. Կ. Կոմիտէն աշ- խատած է ըստ կարի կրթական հաստատութիւններու մէջ մեր ընկերներէն մտցնելու ու այդ կերպով ազդել ընդհ. կրթութեան վրայ: Փոյթ տարուած է որ կրթա- կան գործը սակայն չէզոք հողի վրայ մնայ եւ ընդհ. կրթական ուղղութիւն տրուի անոր, որովհետեւ կու- սակցական գործը չի կրնար դպրոցներու մէջ մտնել թէ մանկավարժական տեսակէտով եւ թէ այդ պարագային ժողովուրդը խորթ կը նայի այդ հաստատութիւններուն եւ կը պաղի հետզհետէ անոնցմէ»:

Լսարանի մէջ մեր կուսակցութիւնը վերջին տարին գործօն դեր չէ կատարած:

Մամուլը զուտ կուսակցական չէ եղած, նոյնիսկ ժա- մանակ եղաւ երբ հակակուսակցական ուղղութիւն ա- ռաւ, մինչեւ որ գիտակից ընկերներ մտան եւ ուղղու- թիւն տուին:

Դաշնակցութիւնը դէպի Միացեալ ընկերութիւն որոշ քայլեր չէ առած, վախնալով թէ մի գուցէ կուսակ- ցական գոյն ստանայ այդ մերձեցումը:

Իբրեւ եզրափակութիւն պէտք է ըսել թէ կուսակ- ցութիւնը մեր շրջանին մէջ մեծ գործ կատարած չէ կըր- թական տեսակէտով»:

Իբրեւ քննադատութիւն, ընկեր Շահէն ցոյց տուաւ թէ Դաշնակցութիւնը Երիտ. միութեան միջոցաւ շատ մեծ դեր կատարած է կրթական կուլտուրական դրու- թեան մէջ:

Հերքեց նաեւ թերթի հակակուսակցական ըլլալու մասին եւ ժողովը ձայնակցեցաւ անոր:

Ուրիշ մը աւելցուց նոյնիսկ թէ Եղիշէ կուսակցու- թեան ջանքերով տեսուչ նշանակուեցաւ հակառակ ա- դայական հակառակութեանց:

Առաջարկ եղաւ որ Միացեալի յառաջիկայ ընտրու- թիւններուն, ընկերներ վճարք ընելով իրաւունք ստա- նան ընտրելու եւ ընտրուելու ու այդ կերպով դաշնակ- ցական ընկերներ մտնեն Միացեալի տեղական կազմին մէջ եւ որոշ ուղղութիւն տան անոր գործերուն:

Եղած հարցումի մը վրայ, ընկեր Դուռմի յայտնեց թէ դպրոցներու, լսարանի, թատրոնի եւ մամուլի վրայ միայն անուղղակի կերպով պէտք է ազդել, այսինքն աշ- խատիլ որ անոնց կազմերուն մէջ անպայման մտնեն մեր ընկերներէն հոգաբարձու, ուսուցիչ եւ ուրիշ պաշ- տօնեայ ընտրելու պարագային, ինչպէս Ընդհ. ժողովն ալ որոշած է. ամէն դաշնակցական պարտաւոր է ան- հատաբար մասնակցիլ ազգ. կուլտուրական գործե- րուն, առանց կուսակցական անունի:

Ընկեր Դուռմի պետական հսկողութիւնը ոչ-խալամ դպրոցներու մասին, այսպէս պարզեց.

«Իբրեւ թուրքացի, պիտի ըսեմ, որ կրթութիւնը երկրինն է եւ կրթ. նախարարութիւնը իրաւունք պիտի

ունենայ այդ հսկողութիւնը կատարելու, սակայն որով- հետեւ մեր երկրի սահմանադրութիւնը առ այժմ խա- խուտ հիմերու վրայ է, կառավարութիւնը իր պաշտօն- եաներով հինը կը յիշեցնէ եւ վտանգ կը սպառնայ ազ- գային ինքնուրոյնութիւններու: Կուսակցութիւնը պաշտպան պիտի կանգնի ազգային բոլոր իրաւունքնե- րուն եւ ինքնուրոյնութիւններուն, մինչեւ որ երկիրը հնաւանդ կարգերէ ազատի ու ամէն մարդ եւ ազգ տի- րանայ իր իրաւունքներուն»:

Այս առթիւ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.

1.- «Թէ կրթարաններու յաջողութեան նպաստելու եւ թէ իբրեւ մանկավարժական պահանջ պէտք չէ որ դպրոցը կու- սակցական գոյն ստանայ եւ աշակերտներու մէջ կուսակ- ցական պրոպագանդ մղուի, նկատելով այս ուղղութիւնը ա- ղէտաբեր դպրոցականներու համար, սակայն դաշնակցա- կան կարող անձեր անհատաբար պէտք է մասնակցից կըր- թական գործին ուղղակի կամ անուղղակի կերպով ներկայ պահանջներուն համապատասխան ուղղութիւն տալու հա- մար:

2.- Լսարան, գրադարան, ընթերցարան պէտք է դնել կու- սակցական հողի վրայ, իսկ առաւել ընդհանրացնելու եւ օգտակար դարձնելու համար դասախօսութիւններն ու զըր- քերը պէտք է ունենան նաեւ չէզոք եւ զուտ գիտական բու- վանդակութիւն:

3.- Նկատելով որ Դաշնակցութիւնը ընկերութիւնը հետըզ- հետէ կրթական մեծ ծաւալ կը ստանայ Դաշնակցութեան եւ իր ներկայ վարչական կազմը հակաժողովրդական նեղ կու- սակցական հայեցակէտներով կ'առաջնորդուի, Շրջանային ժողովը որոշեց աւելի գործօն մասնակցութիւն ցուցնել յա- ռաջիկային տեղական մասնաժողովի ընտրութեան ատեն կուսակցական անհատներ ընտրել տալով՝ հակակշռելու եւ ժողովրդական ուղղութիւն տալու վարչութեան գործունէու- թեան:

4.- Նախ՝ Դաշնակցութիւնն իբրեւ ընկերակարական կու- սակցութիւն միշտ կեցած լինելով անհատի եւ համայնքի ինքնուրոյնութեան սկզբունքը պաշտպանելու տեսակէտի վրայ, եւ երկրորդ՝ քանի որ ներկայ օսմ. սահմանադրական կարգերն ալ չեն ցուցնել ընդհանուր պետական անխտրա- կանութիւն բոլոր ազգերու վերաբերմամբ, Շրջանային ժո- ղովը կը մերժէ պետական անմիջական հսկողութիւնը հայ ազգային վարժարաններու վրայ եւ կողմնակից է ազգային առանձնաշնորհումներու պահպանութեան»:

Կ. Կոմիտէի կառավարութեան հետ ունեցած յարա- բերութիւնը.— Ընկեր Վարագդ գեկուց ըրաւ եւ յայտնեց թէ մինչեւ ներկայ կուսակցի ժամանումը, Դաշնակ- ցութ. ուղղակի կառավարութեան հետ յարաբերութիւն չունէր. իթթիհատի հետ միայն բանակցութիւններ կ'ըլ- լային: Կուսակալը ըլլալով ազատական, մեր դիմումներ- րուն վրայ ան աւելի եւս յառաջ գնաց: Բէկերու եւ վաշ- խառուներու դէմ եղած բողոքները միշտ յաջող եղած

են, երբ ժողովուրդը ինքն ալ բողոքած է, իսկ հակառակ պարագային անյաջողութեան մատնուելը են անհատական բողոքները, օրինակ Թաճատին եւ Հայտար պէյերու խնդիրները:

Միջնաբերդի մէջ հազար գարարով թափու եղած արտերու մասին եղած բողոքին վրայ գործը արդիւնք ունեցաւ եւ նմանօրինակ դէպքեր չկրկնուեցան:

Սպանութիւններու, թալանի եւ ուրիշ դէպքերու առթիւ սովորաբար մեր դիմումին վրայ կուսակալը միշտ լաւ վերաբերուած է ու շատ խնդիրներ ալ կարգադրուած: Մոհաճիրներու գրաւած հողերու մասին ալ դիմում եղաւ, հողային հարցին համար նոյնպէս, բայց Շուրուի տէվլէի հեռագրին վրայ կ'երեւի դիմումներն ալ ապարդիւն պիտի մնան, մինչեւ նոր որոշումը: Կ. Կոմիտէի այս գեկոյցը գոհ թողուց Շրջանային ժողովս:

Կ. Կոմիտէի հաշիւները մինչեւ 1910 Մարտ 1.— Կ. Կոմիտէի հաշուական տեղեկաբերը նախապէս յայտարարեց թէ նախորդ Կ. Կոմիտէին իր հաշիւները չմաքած հեռացեր է: Իր ներկայացնելիք հաշուին մէջ կան նաեւ հին հաշիւներ: Հին հաշուեքննիչ մասնախումբը հաշիւները չէ քննած ու ճշդած եւ այդպիսով նորին հետ խառնուած է:

Մուտքի գլուխին մէջ Գնթուելի գանձուած 8775 դրուշի մասին դիտողութիւն եղաւ թէ պակաս է եւ պիտի լինի ամբողջ 125 օսմ. ոսկի. ինչ եղած է 40 օսմ. ոսկին: Ի պատասխան յայտարարուեցաւ թէ այդ 40 ոսկին 22ը ծախսուած է իսանի խումբի ընկերները ազատուելու եւ 18ն ալ Մասսի Մոցին մէջ Դերենիկի ազատութեան համար գործածուած է:

Դիտուեցաւ նաեւ թէ կազմակերպական դրամէն ընկերներու չպէտք է փոխ տալ:

Կ. Կոմիտէի հաշիւը Մարտ 1էն մինչեւ Յունիս 8.— Զեկոյցէն յայտնի եղաւ որ Կ. Կոմիտէն կովկասահայ բանտարկեալներուն ի նպաստ հանգանակուած դրամը իբրեւ մուտք արձանագրած է: Պէտք է անհրաժեշտաբար զայն իր նպատակին դրկել: Այն հարցի մասին թէ ինչո՞ւ Կ. Կոմիտէն 50 ոսկի ուղարկած է կովկասահայ բանտարկեալներուն, ի պատասխան յայտարարուեցաւ թէ Արեւել. Բիւրոյի ներկայացուցչի հաւանութեամբ տեղի ունեցած է այդ:

Ծախքերը փոքր ինչ չափազանց էին, ուստի դիտուեցաւ թէ այսուհետեւ նախորդին պէս մեծաքանակ հանգանակութիւն կարելի չէ ընել, հետեւաբար տնտեսութեամբ ծախսելու է կազմակերպական դրամը: Այս մասին աւելցուեցաւ թէ երբ շրջանները կանոնաւորուին, արդէն աւելի կ'ունենայ կազմակերպութիւնը, հետեւաբար այդ պատճառաւ չէ որ հարկաւոր է տնտեսել, այլ թէ ժողովուրդի կողմէն ի գուր չպէտք է մտնել: Շրջաններէ Կ. Կոմիտէին յատկացուելիք դրամի մա-

սին ժողովը որոշեց ընթանալ ըստ Ե. Ընդհ. ժողովի որոշման:

Ազատ գործիչի եւ պրոպագանդիստի խնդիր.— Ժողովը նկատելով որ պրոպագանդի գործը շատ թոյլ է ամբողջ Բարձրաբերդի շրջանին մէջ, որոշեց Կ. Կոմիտէին մէջ պահել ազատ ընկեր մը որ բոլոր շրջաններն այցելէ, իսկ մէն մի շրջանի պէտքին համեմատ ալ նշանակել ազատ պրոպագանդիստներ, որոնք պահուին նոյն շրջաններէ յատկացուած դրամով եւ զբաղին պրոպագանդով ու կազմակերպական գործով: Այս առթիւ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը:

«Բարձրաբերդի շրջանը գուրկ լինելով ազատ ընկերներէ եւ պրոպագանդիստներէ, որով եւ իր շրջանի կազմակերպական վայրերը կը ներկայացնեն կազմակերպական անգոհացուցիչ վիճակ, որոշեց,

1. Կ.Կ.ի մէջ պահել ազատ ընկեր մը նոյն կազմին մէջ.
2. Շրջաններու պահանջին համաձայն տալ քանի մը սահմանակից շրջաններու համար ազատ ընկեր պրոպագանդիստներ, որոնք զբաղուին կազմակերպական պրոպագանդով ու գործունէութեամբ»:

Արհեստակցական միութիւններ.— Ընկեր Մ. գեկոյցը յայտարարելով թէ տեղական կոմիտէին դիմում եղաւ արհեստակցական միութիւն կազմելու համար, սակայն որովհետեւ կազմակերպութիւնը թոյլ վերաբերուեցաւ ուստի եւ գործը վիժեց: Անհրաժեշտ է ազատ ընկեր, որ զբաղի այդ մասին:

Արհեստապետական միութիւններ.— Տնտեսական կեանքը շատ անյարմար պայմաններ ունի արհեստակցական միութեանց համար, գեկուցանեց ընկեր Մարալ, ուստի եւ աւելի յարմար է արհեստապետներու միութիւն, որոնք կարենան դուրսէն եղած շահագործումի դէմ կուռիլ եւ իրարու չվնասել մանաւանդ, որով եւ աւելի ու աւելի տնտեսապէս կը բարձրանան անոնք: Այս ձեւով թէ՛ տնտեսական վիճակը կը բարելաւուի անոնց եւ թէ՛ արհեստը կը զնահատուի:

Այս մասին դիտուեցաւ թէ մեր բանուորները իրապէս կը շահագործուին, իրենց կարողութեանն աւելի կ'աշխատուին, նորավարժները քանի մը տարի անվարձ կը ծառայեն, գիշերային աշխատութիւններ կը պարտադրուին, կոպիտ վարմունքներու կ'ենթարկուին եւ այլն: Այս բաներուն դէմ պէտք է կազմակերպել այդ բանուորները:

Դիտուեցաւ նաեւ թէ երբ վարպետները կազմակերպուին կրնան այդ պարագային ճգմել բոլորովին բանուորութիւնը:

Վարպետներու եւ բանուորներու կազմակերպութեան հարցը երկար վիճաբանութեանց ենթարկուելէ ետք, որոշուեցաւ բանաձեւ գրել:

Տեղական կոմիտէի խնդիրը Լիպարիտի²³ մասին.— Այս ծանօթ խնդրին առթիւ ժողովը երկար վիճաբանելէ ետք յանձնախումբ մ'ընտրեց ընկերներ Վտարանդի, Վահան, Գեղամ, Խմօ եւ Խոսրովէ կազմուած, որ քննեն մանրամասն եւ բոլոր հանգամանքները ժողովին ներկայացնեն:

Հողային հարց.— Ընկեր Վաղարշ հողային հարցի մասին խօսելէ ետք, ծանրացաւ հողագրաւումներուն վրայ մասնաւորապէս եւ չորս գլխաւոր պայմաններ որոշեց.

1. Փոքր փոխարինութեամբ թափուով հողին տիրանալ.
2. Փոքր գումար մը վճարելով, քանի մը տարի ետք հազար գարարով կը սեփականեն,
3. Գաղթականներու թողուցած հողեր, որոնք բռնատիրուած են այժմ մոհաճիրներէ,
4. Քիւրտ բէկերու եւ աղաներու կողմէ բռնի գրաւած հողեր:

Ապա ծանրացաւ կառավարութեան այն որոշման վրայ, որով կ'ուզէ ան գրաւուած հողերը փոխարինել դրամական հատուցումով եւ յարեց թէ մեր գիւղացիութեան համար ամենամեծ վտանգն է այս, որուն դէմ ըստ կարելոյն խիստ պէտք է բողոքել: Անհրաժեշտ է որ դաշնակցական բոլոր մարմինները աշխատին զանազան միջոցներով ազդել ժողովուրդին վրայ, որ վերջինս ալ գործնական ձեւով բողոքէ կառավարութեան եւ ոչ թէ թուղթի վրայ գրելով: Այնպիսի բողոք, որ աւելի ճշուում լինի քան տրտունջ:

Այնուհետեւ առաջարկեց ընկեր Վաղարշ ունենալ փաստաբաններու յանձնախումբ մը, որ լաւ քննէ խընդիրը, իսկ Դաշնակցութիւնը վարձելով այդ յանձնախումբի մէկ կամ միւս անդամը եւ այդ ձեւով ազդէ կառավարութեան վրայ: Մեր վրայ կը ծանրանայ խնդիրը փութացնելու հոգը: պէտք է դիմենք երեսփոխաններուն, պատրիարքարան ու կեդրոնի կառավարութեան եւ պահանջել որ ըստ կարելոյն շուտ կարգադրուի խնդիրը: Մասնաւորապէս ծանրացաւ կտրուկ միջոցներու վրայ, որոնք ամենալաւ արդիւնքը կու տան եւ այլն:

Ժողովը տաք վիճաբանութիւններէ ետք գեկուցանողի նախորդ ըսածներն ընդունեց, իսկ կտրուկ միջոցներու լուծումը լաւ նկատեց թողուլ շուտով գումարուելիք Ռայոնական ժողովին²⁴: Հողային հարցի մասին ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.

- «Նկատի ունենալով որ
- 1) Հողային խնդիրը առանձնապէս հայկական նահանգներու մէջ իբրեւ համիտեան ռեժիմէն մնացած հալածանքի եւ իրաւազրկութեան մնացորդ շատ ծանր կը ճնշէ մասնաւորաբար հայ գիւղացիի տնտեսականին վրայ.
 - 2) Որ այդ խնդիրը քրտական շարժումներու պատճառով հետզհետէ աւելի կը ծանրանայ եւ կրնայ աննպաստ հետեւանքներ տալ.

3) Որ հողային խնդիրը միայն բռնի գրաւուածներու մասին չէ, այլ նաեւ փոքր փոխարինութեամբ թափու եւ գրաւեղած, պետութեան կողմէ մոհաճիրներու յատկացուած հայ գաղթականներու հողերն ալ այդ կարգէն են, որոնք աւելի մեծ չափ ու թիւ ունին.

4) Որ հողային խնդրի լուծման համար սահմանադրութեան յայտարարումէն ի վեր կեդ. կառավարութեան բռնած դիրքը խիստ անորոշ եւ երերուն է եւ ընդհակառակն դրամով կամ պարապ հողերով փոխարինութիւնը եւ ներկայիս դրկուած ուսումնասիրող-քննիչ մասնախումբը չի կրնար արդարութեամբ բաւարարութիւն տալ գիւղացիի պահանջներուն.

Ժողովը կը յանձնարարէ իր մարմիններուն առանց խըտութիւն դնելու քիւրտ կամ հայ հողագրկուածներու մէջ, աւագ կարեւորութիւն տալ այս հարցին հետեւեալ միջոցներու գործադրութեամբ:

1) Աւելի լայն չափով արտայայտուիլ մամուլի մէջ եւ խնդիրը դարձնել համաժողովրդական՝ ամէն խաւերու համար հետաքրքրական, առաջնորդելով զանոնք ազդելու կառավարութեան վրայ,

2) Կազմակերպել ուղղակի, անուղղակի գրաւոր եւ բերանացի խառն բողոքներ ուղղուած տեղական եւ կեդ. կառավարութեան,

3) Կազմել փաստաբանական մասնախումբեր այդ հողերու ուսումնասիրութեան համար եւ ի հարկին ժողովրդական միջոցներով փոխարինութեամբ վարձել փաստաբան որոշ հողային խնդիրներ դատարաններու մէջ հետապնդելու համար,

4) Բողոքներ կազմակերպելով վերցնել տալ հազար գարարով թափու ընելու օրէնքը,

5) Առաջարկել եւ պարտադիր դարձնել երեսփ. ժողովի մեր ընկեր պատգամաւորներուն եւ Պոլսոյ մեր մարմիններուն աւելի ուժգնօրէն յառաջ տանելու գործը մեր կողմէ խոստանալով ժողովրդական աջակցութիւն,

6) Ոայրնական ժողովի խորհրդակցութեան եւ որոշումին ենթարկել քիւրտ պէյերու եւ հողագրաւներու դէմ բռնի միջոցներու կիրարկում, իբրեւ ժամանակի հասունացած պահանջ եւ վերջնական կտրուկ միջոց»:

Տերսիմցիի խնդիր.— Ընկերներէ ոմանք հարցապընդում ըրին Տերսիմցիի մասին, որովհետեւ սա հակառակ իրեն տրուած հրահանգին, բոլորովին ուրիշ ընթացք բռնած էր. ժողովս հետեւեալ որոշումը տուաւ.

«Ժողովս լսելով Տերսիմցիի խնդիրը, եկաւ այն եզրակացութեան, որ Տերսիմցիին հակակարգապահական քայլ կատարելէ. որոշեց տեղեկացնել Արեւմտեան Բիւրոյին, որպէսզի նա կարգադրութիւն ընէ իր շրջաններուն»:

23.- Աւետիսեան Լիպարիտ:
24.- Ակնարկութիւն Մոյն տարուան Հոկտեմբերին գումարելի «Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածի Ռայոնական ժողովին». տես ներկայ հատորի էջ 162-174:

րուն մէջ որ պատասխանատու գործ չյանձնուի անոր, իսկ Տերսիմցու եւ Մարալի դատը յանձնել ապագայ Խորհուրդին»:

Արազական գեկուցում.— Զեկուցեց ընկեր Գեղամ. «Դաշտի 40 գիւղերը միայն հայաբնակ են. տնտեսապէս եւ կրթապէս գոհացուցիչ վիճակ ունին. Դաշնակցութիւնը այդ 40 գիւղերուն մէջ ունի 180 խումբ 1500 դաշնակցական ընկերներով: Երջանն ունի 250 հրացան եւ 200 ստրճանակ:

Բազմահայ գիւղերու մէջ հայ-թրքական յարաբերութիւնները լաւ են, իսկ միւսներուն մէջ ըստ առաջնոյն:

Եթէ լինին շրջիկ պրոպագանդիստներ, կազմակերպութիւնը շատ լաւ կը յաջողի: Կազմակերպական ամսավճար տուած է Դաշտը ցարդ ----- դրշ.²⁵, որուն մօտ 1300 դրշ. ծախսած է տեղական ծախքերուն, իսկ մնացեալը Կ. Կոմիտէին տրուած է:

Արշաւան գիւղն ունի կանանց միութիւն, 14 խումբ 80 անդամուհիով, որոնք տրամադրութիւն կը ցուցնեն կուսակցական սկզբունքներով ընթանալ»:

Ընդհ. Տաճկաստանի Ռայոնական ժողով.— Ժողովը նկատի ունենալով ամբողջ Թուրքիոյ ամէն կերպով երբեք վիճակը, որոշեց դիմում ընել որ գումարուի շուտով Ռայոնական ժողով. ատոր համար ժամանակ որոշուեցաւ Օգոստոս ամսու վերջը կամ Սեպտեմբերի սկիզբը:

Ռայոնական ժողովի պատգամաւոր ընտրուեցաւ մեր շրջանէն ձայներու բացարձակ մեծամասնութեամբ ընկեր Սեպուհ²⁶:

Այնուհետեւ ժողովս պատրաստեց նոր ընտրուելիք Կ. Կոմիտէի եռանուն ցանկը, եւ իւրաքանչիւր թեկնածու առանձինն քննադատութեան ենթարկեց:

Աչաքի Հարցը²⁸.— Ընկեր Խմօ¹² գեկոյց՝ ըսելով, թէ աչաքի հարցը հրատապ հարցերէն է, շուտով միւլթէ-գլիմները²⁷ դուրս կու գան, Դաշնակցութիւնն ինչ դիրք պիտի գրաւէ եւայլն. ժողովը այս ծանր խնդիրը երկար վիճաբանութեան ենթարկելէ յետոյ ընդունեց հետեւեալ բանաձեւը.—

«Գիւղական միւլթէգլիմները ընդհանուր առմամբ կազմուած են աղա-բէկ վաշխառու դասակարգէն, որոնք լայն չափով կը շահագործեն արդէն քայքայուած ժողովուրդը, եւ նկատելով որ դաշնակցական անհատներն ալ թերեւս փափուկ ճամբաներով աւելի ու աւելի շահագործեն ժողովուրդը:

Ժողովը որոշեց, որ գիւղացին ինքը ամբողջական ոյժով աշխատի վերցնել աշարը, եւ օգուտը յատկացնել դարձողներուն, գիւղացիական միութեանց, իսկ ընկերներու կողմէ վերցուելու պարագային՝ օգուտը թողուլ անոնց կարգադրութեան»:

Կազմակերպական գէնքերու դասաւորում.— Ժողովը նկատի ունենալով որ կազմակերպութիւնն ունի պատրաստի գէնքեր, որոշեց զանոնք դասաւորել հետեւեալ կերպով.

Բիւրականի, Միջնաբերդի եւ Արծիւի տալ առաջին տեղը կազմական տեսակէտով, Խորաձորի եւ Զրաւէտի երկրորդ տեղ, իսկ Սմբատաբերդի, Դաշտի, Սողոմի, Մասեաց Մոցի երրորդ տեղ: Այս վերջիններն աւելի ճամբայ բացող եւ գործ դիւրացնող պիտի լինին քան գէնք վերցնող:

Կոմիտէներու պիւտճէն՝ Երջանային ժողովի կողմէ հաստատուած.—

- 1) Բարձրաբերդի կոմիտէի համար 10 ձայնով 100 օսմ. [իրա]
- 2) Մաղկաղաշտի կոմիտէի համար 9 ձայնով 100 օսմ. [իրա]
- 3) Կուուաղաշտի > > 8 > 30 > >
- 4) Սմբատաբերդի > > 8 > 60 > >
- 5) Մասեաց Մոցի ենթակոմիտէի համար 10 > >
- 6) Բիւրականի համար մեծամասնութեամբ 30 > >
- 7) Սողոմի համար 30 > >
- 8) Խորաձորի առաջին շրջանի համար 60 > >
- 9) > Դիմաքսեան > > 60 > >
- 10) Միջնաբերդի — միաձայնութեամբ 30 > >
- 11) Արծիւի շրջանին համար 100 > >
- 12) Զրաւէտի > > 30 > >
- 13) Կ. Կոմիտէի համար 60 > >

Ամբողջ պիւտճէն 700 լ. օսմ.

Ընդհանուր ժողովի գեկուցում²⁸.— Ընկեր Մարալ իբրեւ պատգամաւոր Ընդհ. ժողովի գեկոյց ըրաւ.

«Ժողովը 32 ընկերներով տեղի ունեցաւ. հրատապ հարցն էր, Թուրքիոյ, Կովկասի եւ Պարսկաստանի կազմակերպութեան հարցը. վիճաբանութեան ենթարկուեցաւ Թուրքիոյ մէջ Դաշնակցութեան օրինականացման հարցը. որոշուեցաւ որ այսուհետեւ դաւադրական կուսակցութիւն ըլլալէ դադարի, իսկ Սահմանադրութեան ընդդէմ երբ վտանգ պատահի, Դաշնակցութիւնն իբրեւ կազմական ոյժ պիտի արտայայտուի:

Կովկասի եւ Ռուսաստանի մասին որոշեց ժողովը համերաշխիւ բոլոր ընդդիմադիր տարրերուն հետ եւ կուտիլ ամբողջ երկրին վրայ իր թեւերը տարածող ուժաքսիոն դէմ:

25.- Գումարին տեղը բաց ձգուած է: Խմորատիպ օրինակը Որսորդ կոմիտէի համար «1908 Դոկտեմբերէն մինչեւ 1910 Փետրուար» իբրեւ մուտք արձանագրած է 13586¼ դրուշ է «տեղական ծախք» 1295 դրուշ:

26.- Աչաք տասանորդի տուրք:

27.- Մուլթէգլիմ՝ կապալառու հարկահաւաք:

28.- Խօսքը կը վերաբերի 1909 թ. Գ.Յ.Դ. Գիւնգորդ Ընդհ. ժողովին:

Պարսկաստանի մէջ Դաշնակց. դարձեալ պիտի կրէ յեղափոխական գործը, համերաշխելով ազատական տարրերու հետ:

Տակտիկա.— Դաշնակցութիւնը Ընդհ. ժողովով կ'որոշէ թէ՛ հայ եւ թէ՛ դրացի բոլոր տարրերուն հետ համերաշխիւ: Այստեղ հարկ է ըսել թէ նկատելով որ ահարարները սոսկ բարձրանալու, աթոռ գրաւելու համար է որ դուրս եկած են իբրեւ կուսակցութիւն, ժողովը անոր հետ համերաշխելու մասին անգամ խորհրդակցութիւն չըրաւ:

Մրազիր, կանոնագիր, արհեստակցական միութիւններ, ՅԼ՝ յօդուած եւայլն գրեթէ քննութեան չենթարկուեցան, որովհետեւ ժամանակը շատ քիչ էր եւ արտաքին աննպաստ պայմաններ գոյութիւն ունէին»:

Այս մասին աւելի ընդարձակ տեսնել «Դրօշակ»ի № 10-11, իսկ կազմակերպական մասը տեսնել Ընդհ. ժողովի որոշումներուն մէջ»:

Այնուհետեւ ժողովս անցաւ ուրիշ խնդիրներու. «Ազատամարտ»ի խմբագրութիւնը տեղույս կուսակցութեան անունով թերթ դրկած է, որու գումարը հասած է 1034½ դրուշ [ի], հակառակ այն պարագային, որ Երզ թիւը ստանալէ յետոյ հեռագիր տրուած է որ չդրկուի: Ժողովը նկատի ունենալով այս անհոգութիւնը եւ «Ազատամարտ»ի շուրջ տեղի ունեցած շուայութիւնը, որոշեց չդրկել այդ դրամը եւ թերթերը միայն յետ դարձնել:

Լիպարիտի խնդրի քննութիւնը.— Երջանային ժողովը լսելէ յետոյ Լիպարիտի խնդրոյն քննութեան յանձնախումբը, հետեւեալ բանաձեւը ընդունեց.

1) «Լիպարիտ «Հորիզոն»ի 38 համարի մէջ իր թղթակցութիւնով անձնական հաշիւներէ դուրս, փաստերը խեղաթիւրելով անուանարկած էր թէ Դաշնակ. շարքերը եւ թէ Կարնոյ երիտասարդութիւնը. իսկ այդ մասին ինքզինք արդարացնող թէ՛ գրաւոր եւ թէ՛ բանաւոր բացատրութիւնները բոլորովին անտրամաբանական, հակասական եւ գրպարտիչ էին:

2) Իր ըրած ամբաստանութիւնները ընկերներ Մարալի, Բարսեղեանի եւ Գասպարեանի հանդէպ, ժողովը գտաւ որ անձնական հաշիւներէ բխած էին, միեւնոյն ատեն անհիմն, եւ այդ մասին իր տուած բացատրութիւնները անտրամաբանական եւ յերիւրուած:

Ասոնք նկատի ունենալով ժողովը Լիպարիտը յանցապարտ գտաւ եւ որոշեց մէկ տարիով գինքը հեռացնել Բարձրաբերդի կեդրոնական կոմիտէի շրջանէն եւ անոր կազմակերպական շարքերէն (սկսած Յուլիսէն 1910):

Երջանային ժողովը որոշեց իր այս որոշումը հաղորդել միմիայն իր շրջանի մարմիններուն, միեւնոյն ժամանակ նախագգուշացնելով գինքը, որ եթէ ուրիշ շրջաններու մէջ ցոյց տայ նման ընթացքներ եւ վարմունք

ներ, իր հարցն ու այս վիճակը կը հաղորդուի դաշնակց. բոլոր կեդրոնական մարմիններուն եւ խնդիրը կը դրուի ռայոնական ժողովներու առաջ:

Անայուն գործիչներու հարցը.— Նկատի ունենալով որ առ այժմ պատրաստի եւ տրամադրելի ընկերներ չկան, որոշուեցաւ առաջարկել կեդ. Կոմիտէին որ ան միջոցներ գտնէ ընկերներ դասաւորելու, իսկ մինչեւ այն՝ օգտուիլ արձակուրդի ատեն պարապ ուսուցիչ ընկերներէ՝ գործը ժամանակաւորապէս պահելու համար: Առ այժմ իբրեւ թեկնածու կ'առաջարկուին.

- 1) Արշակ, 2) Ա. Բլէեան, 3) Սլաք²², 4) Բարունակ (վանեցի):

Կուուաղաշտի գեկուցումը.— Ժողովը լսելէ յետոյ այս շրջանի մասին ընկեր Արշակի²⁹ գեկուցումը, նկատողութեան առաւ, որ այդ շրջանում մնացած հին կազմակերպական ապրանքները իւրացուած են եւ շարք մը գեղծումներ կատարուած:

Երջ. ժողովը որոշեց առաջարկել Կ. Կոմիտէին, որ կտրուկ միջոցներ ձեռք առնէ համաձայն կազմ. կանոնագրի վարուելու այդպիսիներու հետ:

Նոյն վերաբերումը ունենալ նաեւ այլ շրջաններում եղած նման խնդիրներու համար:

Ընկեր Սեպուհ կ'առաջարկէր ժողովին որ դիւրութիւններ տրուին իրեն պատելու կարգ մը գաւառներ, անոնց կազմական դիրքը եւ յարմարութիւնները որոշելու եւ տեղեկագիր կազմելու համար:

Ժողովը որոշեց այս առաջարկը յանձնել Կ. Կոմիտէին եւ որոշումն ու գործադրութիւնը թողուլ անոր կարգադրութեան:

Կանանց միութիւններու կարմիր խաչի եւ կին պրօպագանդիստներու հարցը.—

Ընկերներէ ոմանք անգործնական գտան անկուսակցական հողի վրայ կանանց կուլտուրական միութիւններ կազմելու առաջարկը, որովհետեւ դաշնակց. ընկերները այդ պարագային եթէ չղեկավարեն, գործը կը քայքայուի. առաջարկուեցաւ որ ճիշդ այդ պատճառաւ ալ աւելի լաւ կը լինի որ դաշնակց. ընկերները փոխանակ կուլտ. միութիւններ կազմելու կամ ղեկավարելու, աշխատին ոյժ տալ եւ կազմել ուղղակի դաշնակց. քաղաքական խումբեր:

Իսկ ընկերներէ մէկ քանին ալ գտան քաղաքական խումբերն անգործնական նկատի ունենալով կանանց համեմատաբար զարգացման պակասը եւ գործնական քայլեր առնելու դժուարութիւնները իբրեւ իրաւազուրկ եւ ճնշուած սեռ:

29.- Կուուաղաշտը Բասենի շրջանն է. Արշակը՝ Ներսէսեանն է, աւելի ծագօք Սեպուհ անունով: Ապրանքը, անշուշտ, գէնգլիմանքերն է:

Երկար վիճաբանութիւններէ յետոյ առաջարկուեցաւ հետեւեալ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով որ կանանց խմբերը Դաշնակցութեան մէջ որոշ քաղաքական դեր խաղացած են անցեալում եւ ապագայում էլ իբրեւ գիտակից մայրեր եւ ամուսիններ նոքա աւելի եւս պիտի նպաստեն տարածելու դաշնակցական գաղափարները եւ իրագործելու այն՝ ընտանեկան եւ հասարակական շրջաններում, Երջանային ժողովը կը յանձնարարէ մարմիններին եւ ընկերներին կազմակերպել կանանցից եւ օրիորդներից զուտ քաղաքական խմբեր առաջ տանելու համար ոչ միայն կուսակցական գործերը այլ եւ կուլտուրական գործը»: - -2 +10

ԲԱՐՁՐԱԲԵՐԴԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ³⁰

Ամբատաբերդ⁶.— Երջանը ունի 33 գիւղ հայաբնակ. 15 գիւղ միայն կազմակերպուած է. ունի մօտ 28 խումբ. ինքնապաշտպանութեան եւ տնտեսական վիճակը աւելի լաւ է քան ուրիշ տեղերունը: 1908 Դեկտ. էն մինչեւ այսօր ունեցած է 7118 դրուշ մուտք, որմէ 745¼ դրշ. տեղական կոմիտէի ծախք:

Ասսեաց Մոց⁴.— Երջանը ունի 9 հայաբնակ գիւղեր. նախապէս կազմակերպութիւն կայ եղեր. այժմ միայն քաղաքին մէջ կայ 3 խումբ. մինչեւ 1910 Մարտ 1-ը եկամուտ ունեցած է 800 դրշ. ինքնապաշտպանութիւնը շատ թոյլ է. հայ քրտական յարաբերութիւնները լաւ են. կրթական գործը ընկած է. միայն երեք գիւղ դպրոց ունի. յարաբերութիւնները իթթիհատի հետ լաւ են, իսկ հնչակեաններու հետ լարուած, շնորհիւ այն բանի որ կազմակերպուածները գաղափարական չեն եւ թայֆայական հովեր ունին:

Բիւրակն³.— Երջանը մօտ 30 գիւղ է բաղկացած. անկազմակերպ վիճակի մէջ է. ոչ մէկ հասոյթ ունեցած է: Հինէն մնացած քանի մը ապրանք կայ. հայ-քիւրտ յարաբերութիւնները ենթակայ են արտաքին ազդեցութեան. կան քիւրտ տարրեր, որոնք անկեղծ կերպով բարեկամ են հայերուն. ինքնապաշտպանութեան համար որոշ պատրաստութիւն տեսնուած է ժողովրդի կողմէ: Կրթական գործը բարւոքի սկսած է. քանի մը գիւղերու մէջ դպրոցներ բացուած են. նոյնպէս քաղաքում:

Կուռաղաշտ².— Ունի մօտաւորապէս 40 հայաբնակ գիւղեր, բայց կազմակերպուած չէ բացի մէկէն, ուր կայ 4 խումբ: 1910 Ապրիլին ստացուած է 131½ դրուշ:

Որսորդ¹ կոմիտէի շրջանի 157 գիւղէն 40ը հայաբնակ են. ունի 4 ենթակոմիտէական շրջաններ. կազմակերպուած են մեծ մասը. ունի մօտ 180 խումբ 1500 անդամներով. ինքնապաշտպանութիւնը թոյլ է, բացի մէկ

գիւղէն. տնտեսական վիճակը միջակ: 1908 Հոկտեմբերէն մինչեւ 1910 Փետրուար ունեցած է 13586¼ դրուշ. տեղական ծախք ըրած է 1295 դրուշ:

Բարձրաբերդի տեղական կոմիտէ³¹.— Երջանը ունի 28 քաղաքական խումբեր, 3-4 արհեստակցական միութիւններ: Ինքնապաշտպանութիւնը թոյլ է. մէկ տարւած մէջ ունեցած է 7809½ դրշ. մուտք զուտ անդամավճարներէ:

Բարձրաբերդի Կ. Կոմիտէ.— Երջանը 1908 Յուլիսէն մինչեւ 1910 Յունիս 10 մուտք ունեցած է 106242 դրուշ. ելքն ալ նոյնքան. ունի պարտք մօտ 14 լիրա, որը հաշվեկշիռի մէջ է (ուռսահայ բանտ[արկեալներու] եւ Միջնաբերդի պ. Լ-ին):

Միջնաբերդ⁷ կոմիտէի շրջանը ունի կազմակերպուած քաղաքը եւ 13 գիւղ. ունի 37 խումբ 395 անդամներով. վճարած է 604½ դրշ. վերջին 3 ամիսներու ընթացքին մէջ. պարտ է վճարելու 3570 դրուշ: Ինքնապաշտպանութեան պատրաստուած է, բայց անբաւարար է: Կազմակերպուած քաղաքի եւ գիւղերու հայութիւնը 1588 տուն է, իսկ թուրքերը 3931 տուն, իսկ անկազմակերպ 18 գիւղերու՝ 2108 հայ եւ 4531 տունը թուրք: Չուտ հայաբնակ միայն 8 գիւղ կայ շրջանում: Ազգաբնակութիւնը խեղճ է:

Չրաւէտ⁹ շրջանին մէջ թէպէտ կը հաշուուին 459 անդամ, բայց մօտ 100-ի չափ չէզոքացած եւ պանդուխտ գնացած պէտք է հաշուել. ուրեմն միայն 359 կայ ներկայիս: Կազմակերպուած գիւղերի թիւը 18, ոչ կազմակերպեալ 12-ի մօտ. խումբերի թիւը 43. մուտք ունեցած են վերջին 5 ամիսներու շրջանին 2258¾ դրուշ. ծախսեր են 816¾, բայց ծախքի մանրամասներ չեն ներկայացուցած: Ինքնապաշտպանութեան գործին համար շատ չնչին պատրաստութիւն տեսած է:

Աղոռմի⁵ շրջանին մէջ մօտ 35 գիւղ կայ, որոնցմէ կազմակերպուած կարելի է հաշուել միայն 9: Քաղաքական խմբեր 4 հատ, իսկ գիւղացիական միութեան խումբերու թիւը 31, որոնցմէ 18-ը հին կազմակերպուածներէն է, որոնք միայն 12 կոտ ցորեն են պահած, իսկ 13 խումբեր 287 անձերէ բաղկացած: 1910 Մարտ 1-էն 550 դրշ. են տուած. Կ. Կոմիտէին ուղարկած են միայն 220 դրշ.: Ինքնապաշտպանութեան տեսակէտէ թոյլ է, թէպէտ գիւղացիներու վիճակը կարելի չէ տնտեսապէս շատ ընկած համարել:

30.- «Բարձրաբերդի շրջանները» ներկայացնող բաժինը ամբողջութեամբ վերցուցած ենք խմորատիպ օրինակներն (փաստ. 825-44 եւ 764-13):
31.- Այսիցքն Կարին-Էրզրում քաղաքի կոմիտէ:

Արծիւ¹⁰ կոմիտէի շրջանի նոր կազմակերպուածներու թիւը կը հասնի մօտ 200-ի, բայց Երջ. ժողովին ցանկեր չէ ներկայացուցած: Մտաւորապէս եւ տնտեսապէս բարձր է շրջանը. գիւղերը մեծ մասամբ կազմակերպուած չեն. ինքնապաշտպանութեան համար ջանքեր գործ դրուած են: 560 լիրայի է հասած շրջանառութեան ելած ապրանքի¹⁷ գիները. կազմակերպական ապրանքները բաւարար չեն: 1909 Յունիսէն 1909 Դեկտ. 31, մուտք եղած է 9583¾, որոնցմէ 3119 ծախսուած է ընկերներու վրայ, 4665½ ապրանքի համար, 953 կանխիկ դրամ կայ, 826¾ դրշ. մանր ծախքեր: Մովափէն³² եկած ապրանքէն գոյացած շահ՝ 6889 դրշ.: Կ. Կոմիտէին ոչինչ ուղարկուած է: Ըստ Ե. Ընդհ. ժողովի եւ Բարձրաբերդի Բ. Երջանային ժողովի 70% պիտի յատկացնեն Կ. Կոմիտէին, այսինքն՝ 10.227 դրշ. ապրանք կամ դրամ:

Աղոռմի¹¹ ունի 51 խումբ 381 ընկերներով. շրջանը ունի մօտաւորապէս 300-էն աւելի գիւղ, որոնցմէ 40-ը քրտախառն հայ գիւղեր են. քաղաքին մէջ հայ տարրի ազդեցութիւնը բաւական մեծ է: Թուրք-հայ յարաբե-

32.- Ծովափէն – Տրապիզոն:

րութիւնները լաւ են: Ունի բաւականաչափ ապրանք, թէ՛ ժողովրդական եւ թէ՛ կազմակերպական ինքնապաշտպանութեան համար: 909-910 տարեշրջանին մուտք ունեցեր է 24522½ դրշ. եւ ամբողջ ծախսած է. այդ դրամը յատկացուած է տեղական կազմակերպութեան պէտքերուն եւ ապրանքի գնման ու Կ. Կոմիտէին ոչինչ ուղարկուած է:

Երջանային ժողովը այս ամէնը նկատի ունենալով որոշեց նկատողութիւն ընել խորաձորի եւ Արծիւի շրջաններուն՝ կազմակերպական կանոնագրէն շեղելով դրամական եւ ապրանքային ապակերտնացում կիրարկելուն համար, եւ որոշեց բոլոր շրջաններէն 70% ըստ որոշման Ե. Ընդհ. ժողովի գանձել թէ՛ դրամով եւ թէ՛ ապրանքով ու դնել Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ:

Ատենապետ՝ ԲԱՐՍԵՂԵԱՆ
Քարտուղար՝ ՍՕՍԱՆՈՒԷՐ

Բարձրաբերդ
10 Յունիս 1910

Փաստ. 764-10

Ա 3.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԲԱՐՉՐԱԲԵՐԴԻ

ՄՈՒՏՔ

Լիրա օսմ. 0/3 էն դր2. փարա

Ի հաշի Արեւելեան Բիրոյի Ծովափէն ստացուած	25 լիրա	2575
Արեւել. Բիրոյէն ստացուած (Ռայոն. ժողովին համար)	30 լիրա	3090
907 թուին Գնթունիէն գանձուած իր քով եղած 125 լիրայէն	85 լիրա	<u>8755</u>
		14420

Ծախսուած հին ապրանք

Որսորդէն. Գեղամի ձեռամբ ծախսուած է		5072.75
Բիրակնէն. Նիկոլի ձեռամբ ծախսուած է N° 11ի գնէն		412
Վարդգէսի ձեռամբ ծախսուած է		<u>2369</u>
		7853.75

908 թուին հանգանակութենէն գոյացած Դաշնակց. բաժինը ստուգուած հանգկ. յանձ. հաշիւներէն		41511.75
---	--	----------

Երեկոյք-բատրոն

908 Հոկտ.ին Արեւելեան-Արմենեանի Դաշնակց. ի նպաստ տրուած		3669 75
909 թուին տեղակ. կոմիտէի ձեռամբ տրուած երեկոյքի զուտ հասոյթ՝		2358 50
909 Դեկտ.ին Իթքիհատի հետ տրուած երեկոյքի զուտ հասոյթ		1837
Ի նպաստ Սարուստանի ³³ բանտարկեալներուն երեկ. զուտ հասոյթ		<u>2036</u>
		9901 25

Անդամավճարներ

908 Հոկ. Նոյ. Դեկտ. ամսավճարներ Ծաղկադաշտի շրջանէն		2293
909 յուն. 8 Տերսիմցիի, Վարազդի ձեռամբ գանձուած Դումլիի հաշուէն		587
909 Յունուարէն 910 Մարտ Ըափղէն Դումլի, Վարազդ, Ռուբէնի հաշուէն		2266.25
908 Դեկտ. 910 Մարտ Ծառագայթէն » » » »		2005.25
» » » » Որսորդէն » » » »		3049
» » » » Դղեակէն » » » »		1332.50
910 Մարտ 11էն Յուն. 1 Ծաղկադաշտի շրջանէն Վարդգէսի հաշուէն		<u>1168.75</u>
		12701.75

Ծաղկադաշտի շրջանի Ծովափէն գանձուած Դումլիի, Վարազդի, Ռուբէնի հաշուէն	833.50	
		13535.25

Անդամավճարներ

909 Յունիսէն Դումլիի հաշուին ստացուած Ծառաստան եւ Գետափ		269.50
909 » » » » Սմբատաբերդէն		3387.75
910 Մարտին Վարդգէսի » » » »		489.25
Դումլի, Վարազդ եւ Ռուբէնի հաշուին Ջրաւտէն ստացուած		3069
910 Ապրիլ Վարդգէսի հաշուին Կռուադաշտէն		131.50
910 Յունիս » » Սիջնաբերդէն		206
908էն 910 Ապրիլ քաղաքային կոմիտէն ստացուած Ռուբէնի հաշուին		<u>7600.75</u>
		15156.75

Նուր Բարսեղեանէ		103
Ծախսուած ձիու արժէք		<u>412</u>
		515

Արեւել. Բիրոյի պահանջը ապրանքի գնէ		1961.50
Վարազդի պահանջը		<u>1489.75</u>
		3351.25
		106242

ԵԼՔ

Կեդ. Կոմիտէի սկսեալ 1908 Յուլիս 11էն 1910 Յունիս 10

լիր. օսմ. 0/3 էն դր2. փարա

Դումլիի վճարուած	4120
Դուրան դրկուած Արեւել. Բիրոյի յանձնարարութեամբ 50 լիրա]	5150
Սալնոյ Չորի ³⁴ ընկերներէ դրկուած 15 լիրա	1545
Կովկասահայ բանտարկեալներուն դրկուած 50 լիրա]	<u>5150</u>
	15965

Դումլիի, Տերսիմցիի, Սարհատի, Վարազդի եւ Ռուբէնի հաշիւներով եղած ծախքեր, գործիչ ընկերներու եւ ճանապարհածախսի, պրոպագանդի, գրականութեան, սուրհանդակի, փոստ հեռագրի, բանտարկեալներու նպաստ, տան վարձք, կառքի եւ ձիերու, ապրանքի նորոգութեան, թուրքերու հիւրասիրութեան, դրամի վնաս եւ Երուանդի³⁵ մահուան առթիւ եղած ծախք

58572.50

910 Մարտէն մինչեւ ցարդ 3 ամսուան մէջ նոյն ձեւով Վարդգէսի ձեռամբ ծախսուած է	6151.75
Տեղ. կոմիտէի ձեռամբ Կեդր. Կոմիտէի հաշուայն եղած ծախք	<u>2385.50</u>
	67109.75

Պահանջներ

Ըափղէն եւ Ծառագայթէն պահանջ ապրանքի հաշուէն	742
Սարհատէն պահանջ	<u>697.75</u>
	1439.75

Պատրաստ ապրանք ըստ ցուցակի	19867
Կանխիկ դրամ Կեդ. Կոմիտէին քով	<u>1860.50</u>
	106242

Մոյն հաշուէն զատ Կ. Կոմիտէին քով կը մնայ ի նպաստ կովկասահայ բանտարկեալներուն հաւաքուած	596.50
--	--------

Ատենապետ -----
Քարտուղար՝ ՍՕՍԱՆՈՒԷՐ

Բարչրաբերդ
10 Յունիս 1910

33.- Կովկասի եւ Ռուսիոյ համար գործածուած կուս. ծածկանուն:
34.- Պիթլիս-խլաթի շրջուն կուս. ծածկանունը:
35.- Երուանդը Թոփչեան Եղիշէն է:

Փաստ. 825-34

Արժի – Երզնկա

Բ 1.- Հ.Յ.Դ. ԲԱՐՉՐԱԲԵՐԴԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

ՅԱՆՉՆԵԼԻ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻՆ

Ընկերներ,

Նախ հարկ կը համարենք կարգով պատասխանել ձեր հարցումներուն.

1.- Նախքան Սահմանադրութիւնը հոս գործած են նախապէս դեռ տասնեակ մը ընկերներ. վերջի վերջոյ մնացած են միայն 8-7 հոգի, որք սահմանադրութեան հռչակուելէն անմիջապէս վերջ սկսած են համակիրներու շրջանակն ընդարձակել: Իսկ կազմակերպութեան ամէնէն հմայքոտ օրերուն այն աստիճան խուժում ու տաք վերաբերում ցոյց տրուած է դէպի կազմակերպութիւնը, ինչպէս կը հասնանք իրենց նախորդ տարուոյ տեղեկագրէն, որ նոյնիսկ Կ. Կոմիտէ մը կազմելու փափաքներ սնուցած են, եւ զոր արծարծած է ընկեր Մուրատ³⁶: Ուրեմն եղեր է ժամանակ, երբ 200-300 ընկերներ կան եղեր՝ 80-82 խումբերով, զոր ճշդելու համար ներկայիս գրեթէ օրինական տետրակ չունինք մեր ձեռքին տակ: Ընկերներ Աշոտի, մասնաւորապէս Մուրատի եւ զինուոր Աւոյի(?), Վահանի հոս գտնուիլն ունեցած է անշուշտ իւր օգուտները, թէպէտ պահանջին համեմատութեամբ չեն կարողացած գոհացում տալ:

2.- Ենթակոմիտէներու բաժանում չէ եղած. հետեւաբար ո՛չ անոնց գործունէութիւնն յայտնի է, ոչ ալ թիւը:

3.- Իւրաքանչիւր խումբ 5-12 անդամէ բաղկացած է եղեր. ներկայիս 7ով կազմել հրահանգուեցաւ:

4.- Խումբերու զանազանաւորում չէ կատարուած. ատեն մը մարտական-տեղորի խումբ մը կազմած են. միւսները մնացած են սոսկ քաղաքական:

5.- Միութիւններու մասին երբեք չէ խորհուած: Այսօր ինքնաբերաբար արհեստաւորները կը կազմակերպուին հետզհետէ չէզոք հողի վրայ:

6.- Անդամավճարները եղած են կանոնաւորաբար մինչեւ Դեկտեմբեր: Մնացեալներու զանձման հրահանգ տրուեցաւ:

7.- Դրամական հաշուեկշիռները՝ իրենցմէ պատրաստուած, կ'ուղարկենք: Գալով պատրաստի գումարներուն, մօտ ութ ոսկի, հազիւ տեղական ներկայ ծախսերուն կը բաւէ: Հին հասոյթներու ձեր բաժին ցննզը անկարելի է ուղարկել, քանի որ ատոնց դէմ զէնք կայ:

8.- Ընկերական զինական վիճակին մասին կիսկա-

տար ցանկ չունէինք մեր առջեւ. նոր կոմիտէն շուտով կը պատրաստէ եւ կ'ուղարկէ:

9.- Քաղաքացիներ որչափ ալ բաւական զինուած, բայց նկատի ունենալով բանակի կեդրոնավայր լլլալը, երբեք գոհացուցիչ չէ: Գիւղերը չափազանց թոյլ են:

Երիզայի տնտեսական դրութիւնը, վերջին տարիներուն չափազանց սղութեանց պատճառաւ՝ շատ ինկած է. այնպէս որ տեղական զինումը մեծ գոհողութիւններ կը պահանջէ:

10.- Տրապիզոնի հաշուէն հոն կը մնան երկու սիւրմէյի, մէկ թապալասը մոսին եւ մի ուրիշ հրացան, որոնք նոր կոմիտէին տրամադրութեան տակ են:

11.- Գալով կուսակցական յեղափոխական գործունէութեան, ասոնք ճշդելը շատ դժուար է, քանի որ հարկ եղած տետրակները գոյութիւն չունին: Ընդհանուր առմամբ գոհացուցիչ կրնանք նկատել, սակայն ո՛չ թէ գործունէութեան մը արդիւնքը համարելով, այլ նկատի ունենալով տեղական ժողովուրդի այս ուղղութեամբ ունեցած լաւ տրամադրութիւնները:

«Դրօշակ»ի 30 օրինակի բաժնեգիրներն արդէն ուղարկուած է նախորդ կոմիտէին, հետեւաբար հոս ուղղակի կու գայ:

Վերի պատասխաններէն արդէն կարելի էր որոշ եզրակացութիւն մը կազմել նախորդ կոմիտէի մասին: Սակայն ընկերներէ եւ խումբերէ ստացած լլլալով շատ մը բողոքներ կոմիտէին մասին, կ'ամփոփենք տասը կէտերու մէջ:

1.- Ղեկավար ընկերներն լլլալով հանդերձ մտաւորական գոհացուցիչ զարգացում ունեցողներ, երբեք չեն աշխատած իւրացնել կանոնագիրը, ծրագիրը եւ կազմակերպութեան պատմութիւնը, եւ նոյնիսկ ձեռնարկած են տեղական ծրագիր կազմել, իսկ ներքին կանոնագրին մէջ դրած են արտառոց օրէնքներ:

Օրկ. խմբապետական ժողովը պիտի որոշէ տեղորը եւն:

2.- Կազմակերպութիւնը իւր գաղափարական բարձրութեան վրայ դնելու համար, շատ թոյլ ջանքեր եղած են:

3.- Ատենագրութիւն, հաշուական, կահերու եւ զինական, քորի տետրակ պահած չեն. մինչդեռ մօտ 750 լիրայի չափ գործառնութիւն մ'ըրած են, եւ վարողները բոլորն հաշիւ պահելու ընդունակ մարդիկ են:

եւ երեքը կամայականօրէն գործերը վարած են, առանց նոր ընտրութիւն պահանջելու խմբապետներէն:

5.- Ըստ օրինական տրամադրութեան իրենց հաշիւները Դեկտ. 31ին պէտք է փակած լլլային, սակայն գանազան առարկութիւններով յետաձգած են:

6.- Խմբապետներէն ոմանց հետ ժողով գումարած եւ մի քանի խմբապետներ դուրս ձգած են, որու մասին ո՛չ պատկանեալ խումբերու իմացուցած, որ ասոնք նոր խմբապետներ ընտրեն, որով ասոնք ալ անգլուխ մնալով ցրուած են, եւ ոչ ալ Կ. Կոմիտէի մը կամ շրջակայ մարմիններու իմացուցած: Ապագայի բարդութեանց մէկ մասը այս կամայական որոշումէն յառաջ եկած է:

7.- Իրենց դէմ շատ մը բողոքներ եղած են, որոնց կարեւորութիւն չտալով, քանի մը խումբեր այս պատճառով հեռացուցած են:

8.- Գիւղերը կազմակերպելու համար բաւական ծախսեր ըրած, բայց ի վերջոյ անգլուխ թողուցած են, իսկ ասոնց գործունէութեանց մասին տող մ'իսկ գըրլածք թողած չեն:

Այսօր գիւղական կազմ գրեթէ չկայ:

9.- Ինքնապաշտպանութեան համար ձեռնարկներ ըրած են, բայց սուղ ծախսուած լլլալով, թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ ընկերներուն մէջ դժգոհութիւն յառաջ բերած են. ասով կազմակերպական փրեսթիժը շատ ինկած է: Թէպէտ այս ծախուելուն մէջ Տրապիզոնի մարմինը գէշ դեր մ'ունեցած է՝ շահագործելով տեղական կազմը:

10.- Խմբական դաստիարակութեան մասին երբեք մտածուած չէ, եւ ետեւէ եղած չեն խմբական ժողովներու կանոնաւոր գումարման:

Այս ամբաստանող կէտերը յանձնելով ընկերներու ուշադրութեան, կը պահանջենք խղճմտօրէն նկատի առնել երկուստեք եղած բացատրութիւնները, ըստ կանոնագրի տրամադրութեան հարկ եղածը տնօրինել:

Ընկերական բարեններով
Ի դիմաց Հ.Յ.Դ. Արժիւ կոմիտէի
ԱՐԾԻԻ

Կը հաստատենք. Ընկերք Կոմիտէի
[Ստորագրութիւններ]
ԳԵՂԱՄ, ՓԱՅԼԱԿ, ԹԱՓԱՌԱԿԱՆ,
ԲԱԳՐԱՆԴ, ՄՀԵՐ

Օրինաւոր լլլալը խմբապետական ժողովի կողմէ
կը հաստատեմ:

Ի դիմաց Խմբապետական ժող.
Բ. Ատենագիր՝ ԱՐԹՕ, Բ. Ատենագետ՝ ՀԱՄՕ

25 Մայիս 1910
Երզնկա

36.- Սեբաստացի Մուրատն է (Խրիմեան):

Փաստ. 825-35

Ջրաւէտ – Դերջան

Բ 2.– Հ.Յ.Դ. ԲԱՐՉՐԱԲԵՐԴԻ ԲՐՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Ընկերներ,

Կենտր. Կոմիտէի հրահանգի համաձայն շրջանիս 2^ր Շրջանային ժողովը գումարուելով՝ յետ կարծեաց փոխանակութիւններու մեզ հաղորդուած օրակարգի մասին հետեւեալ կարծիքները տուաւ.

I – Կազմակերպական. –

1.- Ջրաւէտի շրջանի մէջ գոյութիւն ունի մինչեւ ցարդ քաղաքական 3 միութիւն.

2.- Թէեւ մարտական խումբեր քանի տեղ կազմակերպուած են՝ բայց հակառակ Տեղ. կոմիտէի խնդրանքին՝ Կենտ. Կոմիտէն զինավարժ մը չղրկեց զանոնք վարժեցնելու, որով մարտական խումբ չկայ շրջանիս մէջ. շրջանիս բոլոր ընկերներու համար զինավարժ մը հարկաւոր է. նոյնպէս բոլոր շրջաններու համար հարկաւոր է (եւ արդէն այդ նպատակաւ չէ՞ր որ Դաշնակցութիւնը հարիւրի մօտ զինավարժներ հասցուց Պուլկարիոյ մէջ. ո՛ւր մնացին ատոնք):

3-4-5.- Արհեստակցական, գիւղացիական, արտադրողական եւ սպառողական միութիւններ ու խանութներ չկան շրջանիս մէջ, սակայն ամենակարեւոր հարցեր են ասոնք. ի նկատի ունենալով ժողովուրդին նիւթապէս ինկած վիճակը՝ եւ համոզուած ըլլալով թէ աշխատաւոր ժողովուրդը անխիղճ վաշխառուներու, հարրատահարողներու, չարչիւններու ձեռքէն միմիայն կոպերատիւ ձեռնարկներով միայն կարելի է ազատել ուստի ժողովս համաձայն է, որ գիւղերու մէջ ամէն տեղ քաղաքական խումբերու անունը գիւղացիական միութեանց փոխուի. ընդհանուր եկամուտէն առ առաւելն հարիւրին 20 % քսան իսկ նուազագոյն =10ը տոկոս տրուի կազմակերպութեան. հաւաքուած գումարները առ այժմ ապակեղրոնացումով մնայ ամէն մի գիւղի մէջ որպէսզի հաստատուին փոքրիկ դեղարաններ, գրադարան, ընթերցարաններ, բնակիչներու կուլտուրային ծառայեցումի, հողագործական գործիքներ բերլին, մեղուաբուծութեան, թռչնապահութեան, կաթնատնտեսութեան, պարտիզպանութեան զարկ տրուի, խումբերու մէջ մնայուն պրոպագանդիստ, ինքնապաշտպանութեան գործիքներ եւ ուրիշ բարենպատակ միջոցներու գործածուին առ այժմ ապակեղրոնացումով, իսկ հետզհետէ անդամները եւ խմբերի մէջ այս

գաղափարները հասունանալուն՝ ընդհանուր ֆոնտի վերածել կենտրոնացման սիստեմով:

II – Շրջանիս մէջ նոր բաժանման կարիք չկայ. միայն ներքին է շրջանիս ընդհանուր խումբերու ցանկը եւ նոր ընտրուած Տեղ. կոմիտէի անունները. կը խնդրուի վաւերացնել նոր կոմիտէն: Մամուլին քաղաքական մեծ գործօն ոյժ մը լինելը ակնբեր է. Դրօշակ եւ Ազատամարտ պաշտօնական օրգաններէն զատ Դաշնակցութիւնը ոյժ տալու է տեղական մամուլին, եւ աշխատելու է զանոնք Դաշնակցութեան տրամադրութեանը տակ առնել, սակայն պայմանաւ որ «կազմուի վերահսկող մարմին մը» գեղծումներու տեղիք չտալու համար:

«Յառաջ»ը մեծ ծառայութիւն մատուցած է, բայց մեր կարծիքն է որ ուղղակի Դաշնակցութեան հաշուոյն ըլլայ. եթէ ոչ մենք չենք աշխատիր անոր տարածուելուն:

Դրօշակ եւ Ազատամարտ եթէ ընդունին ապառիկի դրութիւնը՝ մենք կ'աշխատինք անոնց տարածուելուն շրջանիս մէջ. միւս թերթերուն հետ մրցման համար այդ զոհողութիւն ըլլալու է: Քանի որ առայժմ գիւղերու մէջ քաղաքական գործօն խումբի կազմակերպութեան սիստեմը կը շարունակուի եւ դեռ գիւղացիական միութիւնները ընդունուած չէ, Շրջանային ժողովը մեր շրջանի համար որոշեց, որ իւրաքանչիւր անդամ պարտադիր ամսական վճարէ նուէր մը եւ այդ նուէրներու հասոյթին հարիւրին 25 տոկոսը կեդրոնին իսկ 75ը տեղական պէտքերու յատկացուի, քանի որ տեղական պէտքերը չա՛տ չա՛տ են, իսկ եթէ կենտրոնը աւելի տոկոս պահանջէ՝ այն պարագային մեր պատգամաւորները ազատ են տոկոսը բարձրացնել պայման դնելով որ կենտրոնը ստանձնէ իր հաշուոյն պրոպագանդիստ ուղարկել: շրջանը ի վիճակի չէ վարձրատրելու զանոնք:

Ինքնապաշտպանութիւն. –

1. Ինքնապաշտպանութիւնը հարկեցուցիչ ըլլալուն՝ ժողովը որոշեց շրջանիս մէջ բարեկեցիկներուն անպայման, թէկուզ բռնութեամբ զինելու իրաւունք տրուի կոմիտէներու: Կենտրոնական կոմիտէն միջոցներ գտնէ շրջաններու գէնք հայթայթելու աժան եւ լաւ տեսակէն: 2. Շրջանիս մէջ, համայնական գէնքեր չկան:

III – Թուրք. քիւրտ եւ խառն կազմ եւ յարաբերութիւն. –

1. Ի նկատի ունենալով մեր հարեւան թուրք եւ քիւրտ ազգերու անվստահելիութիւնը, յետամնաց վիճակը, ֆանատիկութիւնը, կարող գործիչները պակասը՝ անյարմար կը գտնենք շրջանիս մէջ խառն կազմակերպութիւնները, գիւղացիական եւայլնի:

2. Թուրք, քիւրտ եւ հայ կուսակցութիւններու հետ համերաշխութեան կապեր հաստատել. շրջանիս մէջ իթթիհականները լոկ անուանական են, անդամները բուրժուաններէն եւ կառավարական պաշտօնեաներէն են. իթթիհատներու վերակազմութիւնը. խառն պրոպագանդիստներ ղրկել ազգերու համերաշխութեան համար:

3. Զրկուած եւ հարստահարուած աշխատաւոր ժողովուրդին դատը պաշտպանելու համար ստիպուած ենք յաճախ կառավարութեան դիմել. դատարանի մէջ կալուածատէրերը միշտ դատը կը շահին. կարեւոր է Դաշնակցութիւնը ունենայ իր ներկայացուցիչը ըստ օրինի պաշտպանելու գրկուածներու իրաւունքը դատարանի մէջ: Օրէնսգէտ ներկայացուցիչ եւ Դաշնակցութեան պաշտօնապէս ճանաչում:

IV- Շրջանիս մէջ մերայնոց %օին 2 տոկոսը գրագէտ հազիւ կայ. մտաւորապէս եւ գաղափարով շատ ետ մնացած ենք. զարգացման համար կուլտուրային եռանդուն զարկ տալու է, սակայն անհատական եւ համայնական ձեռնարկ չկայ եւ չի կարելի յաջողութիւն գտնել. Դաշնակցութեան միջամտութիւնը եւ հովանաւորումը անհրաժեշտ է կուլտուրական հիմնարկութիւնների համար:

V – Հողային խնդիր. –

Բնակչութիւնը շատնալով հողը անբաւական էր, իսկ

վերջին տարիներս հողագործին հողին 1/4ը բռնի գրաւուած է
1/4ը Պանքայէն գրաւուած
1/4ը Փոխառութեանց փոխարէն եւ ծախուած է խիստ չնչին արժէքով:

Գրաւուած է աննշան գնով, չարեկ, ֆայիզ. բաղադրեալ տոկոս բարդուելը են ժողովուրդին վրայ: Հող չունի, պարտական մնացած է: դատարաններու եղած դիմումներ անօգուտ եղած են ու կ'ըլլան. առանց ազգի ու կրօնի խտրութեան հարստահարուած հայ, թուրք եւ քիւրտներու հողային խնդրին պաշտպան կանգնելու եւ միջամտելու. անհատական ջանքեր չեն գօրեր:

Արտաքոյ օրակարգի մեր առաջարկութիւնները թէ-եւ շատ են բայց մեր պատգամաւորները իրագեկ գաւառի վիճակին՝ կարող են առաջարկներ դնել, ինչպէս, կառավարական պաշտօնեաները փոխել խղճամիտներով, հնչակեաններու հետ շրջանիս մէջ համերաշխութիւն, կրօնա-ազգային խնդիրներու կարգադրութիւն, բռնակալ-հարստահարիչներու տապալում, գաւառիս մէջ տեղի ունեցած ոճրագործութեանց քննութիւն եւ պատիժ, եւայլն եւայլն:

Շրջանային ժողովը սոյն պատասխան-կարծիքներով միասին կ'ուղարկէ իր պատգամաւորները, ամբողջ կազմի ցուցակը, դրամական ու գէնքի հաշիւները. ասոնք վաւերացուելու են շրջանիս Տեղական կոմիտէին:

Ի դիմաց Ջրաւէտի 2^ր Շրջանային ժողովին

Քարտուղար՝ ՊՕՂՈՍ ՄԻՐԷԱՆ
Նախագահ՝ ՇՐՋԻԿ

1910 Մայիս 28
Ջրաւէտ

Փաստ. 764-4

Միջնաբերդ – Բաբերդ

**Բ 3.- ՊԱՏՃԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ Ա. ԺՈՂՈՎԻՆ
1910 Մայիս 22՝ Շաբաթ, եւ 23 Կիրակի**

Ներկայացուցիչներ՝

- 1. Նախագահ՝ **Ընդհանուր ներկայացուցիչ Միջնաբերդի Սեպուհ³⁷**
 - 2. **Տեղ մարմնէն³⁷ ներկայացուցիչ**
Ա. Յ. Քիւրքեան
 - 3. **Տեղ. մարմնէն փոխ-գանձապահ Ս. Գուժրեան**
 - 4. » » **Բ. տասնեակի՝**
գանձապահ Տ. Շէհրանեան
 - 5. **Արթուն-Ազատ գիւղէն Բ. Աբիկեան**
 - 6. **Հանքավայր գիւղէն Ա. Սիմոնեան**
 - 7. **Սակական գիւղէն Խ. Ներսէսեան**
 - 8. **Բարիզ գիւղէն Մ. Մաճէլեան**
 - 9. **Մանչաւեր Քարոտ գիւղէն**
 - 10. **Գետակ գիւղէն Գրիգոր Պողոսեան**
 - 11. **Սառնապատ գիւղէն Մ. Խաչատուրեան**
 - 12. **Ենթամայ գիւղէն Պողոսեան**
 - 13. **Վիշապ գիւղէն Ս. Սուքիասեան**
- Իսկ հրաւիրագիր ստացող Լ. Կ. Խ. Քար գիւղերու ներկայացուցիչները չժամանեցին:**

Օրակարգ

- 1.- **Ինքնութիւն եւ հաստատութիւն**
գիւղական ներկայացուցիչներու
- 2.- **Գիր՝ Քարավրակէն**
- 3.- **Կեդր. Կոմիտէի հրաւիրագիրը եւ օրակարգը**
- 4.- **Ընտրութիւն պատգամաւորի**
- 5.- **Առաջարկներ**
- 6.- **Որոշումներ Տեղ. կազմին յատուկ**
- 7.- **Ենթակոմիտէի հարց**

Որոշումներ

1.- **Հետզհետէ մինչեւ գիւղերուան ժամը չորսը՝ հասան քաղաքէն Տեղ. մարմնոյն կողմանէ երեք ներկայացուցիչներ, որոնք նախագահութեամբ ընկեր Սեպուհի բացին Շրջ. Ա. Ժողովը եւ հասնող ինն գիւղերու ընկեր ներկայացուցիչներու վկայագրերը աչքէ անցնելէ յետոյ՝ օրինաւոր գտնելով գանոնք, ժողովը բացուած հռչակեցին. միայն Հանքավայրի ներկայացուցիչ ընկեր Անդրէաս՝ վկայագիր բերած չլինելով, Ա. նիստին իբր ունկնդիր ներկայ գտնուեցաւ, մինչեւ որ առաւօտ հասաւ գիւղին ընկերներու պաշտօնական վկայագիրը:**

2.- **Ժողովս կարդաց Քարավրակի ընկերներուն մէկ գիրը, որոնք ներկայացուցիչ, տեղեկագիր եւ ամսեկը-**

ճար չղրկելնին կ'ուզէին արդարացնել ինչ-ինչ առարկութիւններով, որոնք կը վերաբերէին հին ու նոր խնդիրներու. ժողովս այս առթիւ լսեց Միջնաբերդի Տեղ. Կ.ի ներկայացուցիչ ընկեր Պարոյրի բացատրութիւնները, ըստ որում անոր ծանօթ էին նոյն խնդիրները եւ անձամբ այցելած էր վերջերս նոյն գիւղը տեղեկագրերու առթիւ. ժողովս գիտակ քարավրակցիներու բռնած ուղղութեան՝ լսելով ընկեր Պարոյրի բացատրութիւնները, լիովին համոզում գոյացուց թէ անոնք կը ստեն յայտնապէս, երբ կ'ըսեն թէ իրենց մէկ վճարումին փոխարէն ընկալագիր չեն ստացած. բացարձակապէս կ'ուրանան այն բարոյական եւ նիւթական օժանդակութիւնները, զորս կարգ մը ընկերներ եւ բաբերդցիներէ ոմանք չզլացան անոնց բանտարկութեան միջոցին եւայլն եւայլն:

Ժողովս իր ցաւը յայտնելով Քարավրակի ընկերներու սխալներուն եւ մոլորումին առթիւ, որոշեց որ պատշաճ պատասխանը տրուի ընկեր Սեպուհի կողմանէ եւ խստիւ պահանջուի անոնց հին ու նոր հաշիւները:

3.- **Այնուհետեւ ժողովս կարդաց Բարձրաբերդի Կ. Կոմիտէին 1910 Ապրիլ 30 թուակիր շրջաբերական գրութիւնը, որով ծանուցանելով թէ Շրջ. Բ. ընդհ. ժողովը պիտի գումարուի Յունիս 1ին եւ փակուի 8ին, կը հրաւիրեն Տեղ. մարմինը ղրկել երկու պատգամաւոր կամ աւելի՝ ըստ թւոյն. Կ. Կոմիտէն մի առ մի կը թուէր այն պայմանները, զորոնք կատարած ըլլալու է Տեղ. մարմինը:**

Ըստ սոյն հրահանգ-հրաւիրագրի՝ թէեւ մեր շրջանը իրաւունք ունէր երկու պատգամաւոր ղրկելու՝ մէկը Տեղականին եւ միւսը շրջանի կողմէ, սակայն նկատի առնելով նիւթական դժուարութիւնը, որուն հանդէպ կը գտնուի Տեղ. մարմինը, ժողովս որոշեց ճամբել մի շրջանային պատգամաւոր՝ Տեղ. մարմնոյ ձայնն ալ տալով անոր:

Ուստի միաձայնութեամբ ընտրուեցաւ ընկեր Սեպուհ, որուն երթեւեկի ծախք սահմանեց (3) երեք ոսկի:

4.- **Ապա ձեռք առնելով Կ.Կ.ին ղրկած օրակարգը՝ սկսաւ վիճաբանութեան դնել բոլոր խնդիրները ու հետեւեալ եզրակացութեան յանգեցաւ³⁸.**

37.- Տեղական մարմինը՝ Բաբերդ քաղաքի կոմիտէն է: Սնացեալ բոլոր տեղանունները կուս. ծածկանուններն են:
38.- Արդարեւ ստորեւ քննարկուած հարցերը կը հետեւին Կեդր. Կոմիտէի ուղարկած օրակարգին: Տես էջ 271:

I – **Հարցը պատկանելով Շ. Ժողովի նախնական գործողութեանց, անցաւ երկրորդին:**

II – **[Կազմակերպական].—** Շրջանիս մէջ ցարդ գոյութիւն ունեցած են մարտական խմբեր միայն ինքնապաշտպանութեան հողին վրայ: Ուրիշ կազմակերպական ոչ մի խումբ գոյութիւն չունի: Այսուհանդերձ ակնարկուած միութիւնները օգտակար եւ անհրաժեշտ լինելով՝ անոնց իւրաքանչիւրին յատուկ կանոնադրութիւններ կարեւոր են յառաջիկայ տարեշրջանին հետըզհետէ կազմակերպելու համար:

Իւրաքանչիւր շրջանի յատուկ մի ազատ ընկերի եւ պրոպագանդիստի ներկայութիւնը օգտակար եւ անհրաժեշտ լինելով հանդերձ, առ այժմ Միջնաբերդի շրջանին համար հարկեցուցիչ չէ ինչ-ինչ պատճառներով:

Ժողովս միաձայնութեամբ ընդունեց որ կազմակերպուած գիւղեր անպայման բաժանորդագրուին Դրօշակ ամսաթերթին՝ առանձինն վճարելով բաժնեգինը. այս մտօք, որոշեց առ այժմ արտօնել պատգամաւորը, որպէսզի 1 օրինակ յանձնարարէ Կ.Կ.ին միջոցաւ: Ժողովս ընդունելով նաեւ Յառաջ եւ Ազատամարտ թերթերու կարեւորութիւնը, որոշեց ոյժ տալ նաեւ անոնց ծաւալումին, որք պիտի նպաստեն կուսակցութեան ընդգրկած սկզբունքներուն տարածումին:

III – **Ինքնապաշտպանութիւն.**— Ընկեր Սեպուհ նշեց որ քանի դեռ ժողովուրդը գիտակցութիւնը չունի ըմբռնելու այս հարցին ստիպողականութիւնը, հարկ է որ կազմակերպութիւնը դեռ մի որոշ ատեն հսկէ այս գործին, եւ պարտաւոր է ժողովուրդը, որպէսզի ինքնապաշտպանութեան գործիքներ զնած ատեն՝ ստիպուի ցոյց տալ կազմին հմուտ մէկ ընկերին, երկրորդ՝ կազմը ստանձնէ վարժեցնելու հոգը. ընկերներէ ոմանք ալ մէջ բերին ոչ-կուսակցականներու ԵՍՂ՝ այս հարցին մէջ, որոնք չեն զիջանիր խորհրդակցութեան. դարման մը պահանջեցին. ուրիշներ ընդունելով ընկեր Սեպուհի տեսակէտը՝ իբր դարման մէջ բերին սիրաշահելու դրութիւնը, մինչեւ որ անոնք գան գիտակցութեան, ու վերջապէս միաձայնութեամբ քուէարկուեցաւ սա բանաձեւը.

«Որ՝ մեր ժողովուրդը դեռ չէ եկած այն ինքնագիտակցութեան, որով ինքնին գիտնայ ինքնապաշտպանութեան կարիքն ու միջոցները. այդ ի նկատի ունենալով,— հայ բազմաշարժար ազգին գոյութեան եւ Օսմ. սահմանադրութեան պահպանման հետ կապ ունեցող այսպիսի ամենակենսական գործը շարունակէ իր ձեռքին մէջ պահպանել առժամապէս՝ Դաշնակցութիւնը, ինք ստանձնէ գէնքերուն ընտրութիւնը, դասաւորումն ու վարժեցնելը, ապա միայն թողու ժողովուրդեան»:

— **Մնայուն գինական ֆոնտ մը կազմելու հարցը ժողովը նոյնպէս նկատեց խիստ կենսական եւ որոշեց իր**

բոլոր ուշադրութիւնը նուիրել անոր՝ զայն կազմելու համար փոխառութեան ձեւի տակ. միայն այս պահուս որովհետեւ ժողովուրդը տնտեսական շատ արգահատելի վիճակ մը ունի, այդ ձեռնարկը Միջնաբերդի շրջանիս համար որոշեց յետաձգել կալոցին՝ գիւղ թէ քաղաք այս մտօք փոխառութիւններ կ'ընելու համար:

IV – **Թուրք եւ քրտական յարաբերութիւններ.**—

1.- **Ժողովս ազգերու համերաշխութեան տեսակէտով օգտակար կը նկատէ գիւղացիական եւ արհեստակցական խառն խմբերու կազմութիւնը եւ համաձայն է աստիճանբար գործել այդ հողի վրայ, իսկ Դաշնակցութեան դրօշին տակ քաղաքական եւ մարտական խառն խումբերու կազմութիւնը առ այժմ կանխահաս կը նկատէ:**

2.- **Հարցին պատասխանը վերեւ պարզուած է:**

3.- **Ժողովս կ'ընդունի ամէն պարագայի մէջ համերաշխ գործակցութիւն այն ամէն քաղաք. կուսակցութեանց հետ՝ ըլլայ իթթիհատական կամ հնչակեան եւայլն, որոնք արտօնուած են Օսմ. կառավարութեան կողմանէ եւ որոնք իրենց կէտ նպատակի ընտրած են Օսմ. սահմանադրութեան եւ օսմ. կայսրութեան հողային ամբողջականութեան անվթար պահպանումը, ինչ որ է արդէն Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրն ու նպատակը:**

Միմիայն՝

1. **Ժողովս համերաշխութեան տեսակէտէն էական կը նկատէ որ իւրաքանչիւր շրջանի մէջ կուսակցութեան եւ իթթիհատի Տեղ. մարմիններուն կողմանէ մէկ մէկ լիազօրներ ճանչնան գիրար եւ հասարակական հարցերու մէջ իրենց կուսակցութեանց անունով ի հարկին բանակցին իրարու հետ՝ միշտ Տեղ. մարմնոյն գծած շաւղովը եւ անոր հաւանութեամբը:**

2. **Նոյնպէս ժողովը յոյժ բանաւոր եւ էական կը նկատէ անպատճառ Հնչակեան կուսակցութեան հետ սերտ յարաբերութեան մէջ գտնուիլ եւ երկու կուսակցութիւններէն կազմուած՝ ունենալ մի խառն մարմին, ուր լուծուին կուսակցական եւ հասարակական խնդիրներ՝ համերաշխութեամբ:**

3. **Օրինական ամէն միջոց ի գործ դնել օրինական ճամբով՝ դիմումներ տեղ. կառավարութեան, կուսակալութեան, կեդր. կառավարութեան, կուսակցութեան վերին մարմիններուն, մամուլին — արգիլել տալու համար որեւէ շարժում — քրտական, ազատական, կամ այլ անուան տակ — որ կը սպառնայ վնասել Օսմ. սահմանադրութեան եւ կամ Օսմ. քաղաքացիներու կեանքն ու ինչքը եւ խաղաղիկ զարգացումը վտանգելու բնոյթն ունի. այս հարցին մէջ կարելի է մտցնել վաշխառուներու դէմ նոյն օրինական միջոցներով պայքարելու հարցը, որոնք օսմանցի աշխատաւոր դասակարգին ցեցն ու պատուհասներն են դարձած:**

V — **Կրթական-կուլտուրական.**— Նկատելով որ Հայ ժողովուրդը մեծամասամբ տակաւին զուրկ է գիտակցութենէ եւ ազգ. կուլտուրական գործը եւս դեռ մխիթարական վիճակ մը ունենալէ հետու, մանաւանդ գիւղերը, ժողովս կ'ընդունի ոչ-կուսակցական հողի վրայ կամ կողմնակի կերպով ջերմապէս աջակցիլ ազգ. կրթական-կուլտուրական զարգացման՝ ստուարացնելու համար կրթական ամէն կարգի հաստատութիւնները եւ առողջ դաստիարակութիւն մը տալու նոր սերունդին՝ գիտակցութեան բերելով նաեւ երիտասարդութիւնը:

Նոյնպէս Հնարաւոր աստիճանի աջակցիլ Միացեալ ընկերութեանց ստանձնած գործին արդիւնաւորութեան:

Պետական ուղղակի հսկողութիւնն ու միջամտութիւնը՝ ըստ մեզ՝ հակառակ լինելով ազգերու ազատ զարգացումին՝ երբեք կարելի չէ ընդունիլ, իսկ կրթական գանձէն ազգերու թւոյն համեմատութեամբ՝ նպաստ ստանալու իրաւունքը բնաւ չանտեսել:

2.- Զանալ որ կուսակցութիւնը անուղղակի կերպով ամէն գիւղի մէջ ունենայ իր գրադարանը, պայմանաւոր գործը լինի համայնական:

VI — **Հողային հարց.**— 1.- Ժողովս պարտք կը համարի ուղղութիւն տալ Հայ գիւղացիութեան օրինական ճամբով վերստանալու համար իր բռնի գրաւուած հողերը: Նոյն իսկ կ'ընդունի որ եթէ Հնար է ուղղակի, եթէ ոչ՝ կողմնակի միջոցներով դիմումներ ընէ կառավարութեան վերստանալու համար իրաւազուրկներու խլուած իրաւունքը:

Ժողովս պատշաճ կը նկատէ իր միջնորդութիւնը չինայել այն պարագաներուն մէջ, երբ համեմատաբար նուազ գնով ծախուած հողերը վերստին ետ առնել կ'ուզեն ծախողները: միջնորդութիւնը լինելու է գնողին եւ առնողին միջեւ, որպէսզի երկուստեք դատական ծախքերէ ազատին եւ համերաշխութիւնը չխախտի երկու դասակարգին միջեւ:

2.- Նոյն վերաբերումն ունենալ քիւրտ եւ թուրք գիւղացիներու բռնի գրաւուած հողերու մասին, ըստ որում Հ. Յ. Դաշնակցութիւնը անխտիր բոլոր կեղեքւած եւ իրաւազուրկ տարրերու իրաւունքներուն պաշտպանութեան կուսակից է:

Առաջարկներ

1.- Միջնաբերդի Տեղ. կոմիտէին յատուկ կնիքը, զոր ընկեր Մարալ երկու տարի առաջ Բարձրաբերդ փոխադրած է, յանձնել մեր պատգամաւորին եւ իրաւունք տալ Միջնաբերդի Տեղ. կոմիտէին՝ անոր գործածութեան համար:

2.- Որպէսզի Հայ գինուորներուն բարոյականին ու մտաւոր զարգացման մասին կուսակցութիւնը մօտէն հսկողութիւն կատարէ, նպատակալարմար կը գտնենք նախ քան անոնց զօրակոչը, զանոնք առնել կուսակցական շարքերու մէջ:

3.- Ե. Ընդհ. Ժողովոյ մէջ յատկապէս շեշտուած լինելով Օսմ. կայս. երկիրներու անբաժանելիութեան եւ ամբողջութեան պահպանութեան մասին Հ. Յ. Դաշնակցութեան յանձնառութիւնն ու պարտականութիւնը, ժողովս կ'առաջարկէ խիստ բողոք բառնալ կրետացիներու ապստամբութեան դէմ, որոնք կը միտին վերջապէս անջատուիլ եւ ոտնակոխ ընել Օսմ. պետութեան գերիշխանութեան դարաւոր իրաւունքը:

Որոշումներ Տեղ. կազմին յատուկ

Ա.- Ժողովս կ'որոշէ որպէսզի Տեղ. կոմիտէն իր ընդհ. հաշիւները ներկայացնելով հանդերձ Կ. կոմիտէի Ծ. ժողովին, յաջորդ նիստին բերէ զայն նաեւ Ծրջ. ժողովիս:

Բ.- Ժողովս գործերու արագ լուծման եւ կանոնաւորութեան համար որոշեց միջոցներ ձեռք առնել ընկերներու թիւը ստանալու. մնացեալ գիւղերը եւս կազմակերպելու համար շրջանս բաժնել Հինգ ենթակոմիտէներու:

Ա.- ենթակոմիտէ — քաղաքի շրջան

Ա.- Քաղաք, Առիւծկայ, Խայէք, Մալասայ, Զահմանց,

Բ.- Վարզահանի շրջան.— Վարզահան, Երկի, Պալախոռ, Օձտեղ, Գրգի, Նիվ, Թումսայ, Փնջրկայ եւ Խնծաւերակ:

Գ.- Քարավրակի շրջան.— Քարավրակ, Հնտէ, Ս. Թորոս, Սարաճուղ

Դ.- Քսանթայի շրջան.— Քսանթայ, Բլուր, Բլրակ, Բուշտի.

Ե.- Լսոնքի շրջան.— Լսոնք, Բումէլ, Ալմշկայ, Աւերակ, Կիվ, Խոււփս եւ Սղըճի:

Ժողովս սկզբամբ ընդունելով սոյն ենթակոմիտէներու կազմակերպութեան անհրաժեշտութիւնը, վերջնական կազմակերպութիւնը կը յետաձգէ ընկեր պատգամաւորի վերադարձէն յետոյ:

Ծրջանային երկրորդ ժողովը պիտի գումարուի ընկեր Սեպուհի անմիջապէս վերադարձին՝ մի պատշաճ գիւղի մէջ:

Ներկայացուցիչներ Տեղ. կոմիտէին
Ս. ԳՈՒՄՐԻԵԱՆ, ՏՐԴԱՏ ԾԷՀՂԱՆԵԱՆ,
Ա. Յ. ՔԻՒՐՔԵԱՆ

Ընդհ. ներկայացուցիչ, Նախագահ՝ ՍԵՊՈՒՀ

ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԽՄԲԵՐ

Անուն	Խմբեր	թիւ	թուական	վճարք	պարտք	
Կեդրոն	Տեղ. մարմին	4	1909 Դոկտ.	313	30	
	Ա. Դրայր խումբ	8	1909 Օգոստ.			
	Բ. Կայծակ »	10	» »			
	Գ. Փոթորիկ »	5	» Նոյեմ.			
Գողակոյտ գիւղ	գործադիր	7	1909 Օգոստոս	-	480	
	Ա. Արծիւ խումբ	10	» »			
	Բ. Ունը »	10	» »			
	Գ. Թոփչեան »	10	» »			
	Դ. Սեպուհ »	7	1910 Ապրիլ			
	Զանքավայր	Ա. Սեպուհ » Բ. Կայծակ »	10 9			» Մայիս » »
Բարիզ քարուտ	Ա. Կայծակ »	16	» »	միամսեայ	19½	-
	Ա. Կարկամեալ (?)	10	» Ապրիլ	երկամսեայ	21	-
Սակական Ենթամնայ	Ա. Կայծ »	8	» Մայիս	»	15	-
	Ա. Արարատ »	7	» »	»	15½	-
Արթուն-Ազատ	Բ. Լոյս աղբիւր »	7	» »	»	60	-
	Ա. Նորագամծ »	9	» Ապրիլ			
	Բ. Թռչուն »	10	» Ապրիլ			
	Գ. Եռաստղ »	8	» »			
Սառնապատ (?)	Դ. Նուիրակ »	8	» »	»	22	244 հիմն
	Ա. Կայն »	11	» Մայիս			
	Բ. Մարալ »	11	» Մայիս			
	Ա. Դիմաքսեան »	10	» »			
Գետակ	Բ. Վարդգէս »	10	» »	երկամսեայ	40	765 հիմն
	Գործադիր »	11	» »			
Թագ գիւղ	Ա. Սեպուհ խումբ	10	1910 Մայիս	41	859 հիմն	
	Բ. Արծիւ »	10				
	Գ. Ալմուռնի »	10				
	Ա. Սեպուհ »	10				
	Գործադիր »	4				
	Ա. Մրկկող (մարտական)	11				
Բ. Ծախիչ »	15	» »	20	10		
Գ.	15					
Վիշապ Դերոս ¹	Դ.	15	» »	41	859 հիմն	
	Ե.	18				
	Զ.	10				
	Դ.	15				
Լոյս ²	Ենթադրաբար	40	հիմն կազմակերպուած՝		342 հիմն	
		395		804¼	3570	

Դիտողութիւն

1.- Այս գիւղը՝ Քարավրակ՝ գուտ հայաբնակ՝ ամենէն մեծն է շրջանիս մէջ.— նախ քան Սահմանադրութիւնը անգոյ պարտք մը պահանջող լազերու լաւ ծեծ մը կը քաշելէ եւ անոնց զէնքերը առնելէ վերջ վտարած են, զէնքերը յանձնեցին վերջը, բայց այլեւս ազատեցան լազերու անհրաւորութիւններէն: Վերջին անհնազանդութիւնին Ս. Ս. ի թելադրութեամբ է՝ համագիւղացի լինելուն: 2.- Այս գիւղը՝ Լսոնք՝ ինչպէս ըսած ենք մեր տեղեկագրին մէջ, հիմնէ կազմակերպուած է բայց այցելութիւններ նուազ ըլլալուն՝ որեւէ թիւ չեն հաղորդած ցարդ, զուտ հայաբնակ է, ինքնապաշտպանութիւնը բաւական գոհացուցիչ. ասոնք անցեալ տարի երկու ամսական վճարած են, ինչպէս պիտի տեսնէք անցեալ տարուան հաշուեցոյցին մէջ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

յուն(ական) երկար	յուն. կարճ	յուն. մաուզեր (5-6 կրակնոց)	մանլիխեր	բերդան	№ 11	Մարթին շինծու	պարզ ատրճանակ	քափսիլով	
Կեդրոն	5	5	2	2	-	{ 1 կազմիս 20 ժողովրդեան	5	100	Կեդրոնի հաշիւն է մօտաւորապէս ամբողջ ժողովրդեան քով
Հողակոյտ	3	7	1	1	1	2	2	29	4
Հանքավայր	5	2			2		3 կազմիս յատուկ 4	20	ինքնապաշտպանութեան
Բարիզ	5							10	»
Քարուտ	2							5	»
Սակական	1	1						5	»
Ենթամնայ	4	շինծու						7	»
Արթուն-Ազատ	6	»			2		6 այնալի մեծ գափաքլի		»
Սառնապատ[?]	{ 1 պետական՝ յունական 10 շինծու 5 » յունական ժողովրդեան							15	»
Գետակ	{ 5 յունական՝ ընկերներու շինծու 10 » ժողովրդեան »							25	»
Թագ	{ 10 » երկր. 8 յուն կարճ 2 մաուզեր 5 » » 4 » »		1		1		4 7	50	ընկերներու
Վիշապ	{ 1 » » 2 » շինծու					1 ռոմանական	1 այնալի	6	
Հերոս	{ 11 » յունական 10 » »			4 ռուսական		4		31	ընկերներու եւ ինքնապաշտպանութեան
Լոյս									
	101	27	5	4	11	24	36	321	

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԳԻՂԵՐ

	400 տուն հայ	3000 տուն թուրք
Կեդրոն	400	3000
Հողակոյտ – Բլուր	81	335
Հանքավայր – Երկի	70	-
Բարիզ – Պալախար	90	180
Քարուտ – Գրզի	52	48
Սակական – Նիվ	30	250
Ենթամնայ – Թոմնայ	42	42
Արթուն – Ազատ – Վարզահան	78	-
Սառնապատ[?] – Բլրակ	90	2
Գետակ – Հնդէ	70	40
Թագ – Քսանթայ	175	40
Վիշապ – Օձտեղ	40	32
Քիրա – Քարավրակ	200	-
Լոյս – Լսոնք	120	2
	1588	3931

ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊ

Փնջրկայ	10	»	»	35	»	»
Խնծաւերակ	12	»	»	40	»	»
Ս. Թորոս	50	»	»	40	»	»
Խայէք	40	»	»	15	»	»
Ջահմանց	45	»	»	45	»	»
Մալասայ	40	»	»	40	»	»
Ալմշկայ	20	»	»	50	»	»
Րումէլ	35	»	»	35	»	»
Աւերակ	100	»	»	120	»	»
Կիվ	35	»	»	25	»	»
Խուփս՝ վանքովը	95	»	»	-		
Առիծկայ	45	»	»	-		
Սըղըրճի	15	»	»	25	»	»
Սարածուզ	12	»	»	70	»	»
Րուշտի	35	»	»	15	»	»
Քեսթսի	1	»	»	45	»	»
	2108	»	»	4531	»	»

Վերջին 15 գիւղերէն միմիայն Մալասայ բաւական ոյժ տուած է ինքնապաշտպանութեան գործին, եւ միւս բոլոր հայ գիւղերուն բաղդատմամբ ամէնէն գոհացուցիչն է տնտեսականով: Միւս գիւղերը կարելի է ըսել թէ բնաւ չունին, կամ գտնուածն ալ խիստ աննշան:

Շրջանիս ամբողջ գիւղերէն՝ նպաստ կը ստանան կրթական գանձէն
 Լսոնք գիւղը՝ ամսական 200 դրշ. եւ ունի իր վարժարանը՝ վիճակ՝ միջակ
 Աւերակ գիւղը՝ ամսական 200 դրշ. » » » » վիճակ՝ »
 Քարավրակ » » 100 դրշ. » » » » » տկար

Փաստ. 764-5

Խորհածոր – Քրի

Բ 4.- Գ. ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԽՈՐԱՉՈՐԻ¹¹

1910 Մայիս 27 – 28

Ներկաներ		
Կ. Կոմիտէ	1 ձայն	ընկեր Վահան
Կոմիտէ	1 »	Տ. Բագարատ քհնյ.
Ենթակոմիտէներ		
Ապարբերդ	2 »	Սահակ Սիրունեան, Տիրան Սրապեան
Քարակ	2	Արամ Քաջբերունի, Ղազար Պարսոյեան
Փայլակ	1 »	Չաքար Սարգիսեան
Վարագ-Առիւծ	2 »	Գարեգին Թուրիկեան, Տիգրան Շահնազարեան
Ամպրոպ	1 »	Կարապետ Չաւտարեան
	10 ձայն	

Օրակարգի հարցեր

- Ա. Հաշուառու յանձնախմբի տեղեկագիր
- Բ. Խորհածորի կազմի թուղթեան
եւ քայքայման պատճառներ
- Գ. Վիլայէթի³⁰ Ռայոնական ժողովի պատգամաւոր
եւ Օրակարգի հարցերու պատասխան
- Դ. Հին Առիւծ ենթակոմիտէի խնդիր
- Ե. Մերմագ գիւղի ընկերներու խնդիր
- Զ. Ժայռ (Ա.Չ.)ին նամակը
- է. Շրջանի նոր բաժանում
- Ը. Կոմիտէի ընտրութիւն
- Թ. Աշարի խնդիր
- Ժ. Տեղական ներքին կանոնադրի մշակում:

Ի նկատի ունենալով քանիցս կոմիտէ եւ Կեդր. Կոմիտէի ներկայացուցչի ազդարարութենէ յետոյ՝ ենթակոմիտէներէն՝ Դիմաքսեան, Արփինեան, Հրատ, Վոսիոր, Հոչակ ենթակոմիտէները տակաւին իրենց հաշիւները չներկայացուցին եւ պատգամաւոր չըրկեցին, որոշուեցաւ ներկայ եղող (7) եօթը մարմիններու ձայնով սկսել ժողովը:

Այն ենթակոմիտէները միայն որոնք ժողովի որոշումներէն յետոյ կը կազմակերպուին օրինական կերպով՝ կ'ընդունուին կազմին մէջ եւ կ'ունենան իրենց ձայնը: Այս բանաձեւը ներկաներու կողմէ միաձայնութեամբ ընդունուելէ վերջ ժողովը անցաւ Օրակարգի հարցերուն: Ժողովի նախագահ ընկեր Վահան եւ քարտուղար ընկեր Փ. Գաբրիկեան ընտրուեցան:

Որոշումներ

Ա.- Հաշուառու յանձնախմբի տեղեկագիր. — Նախորդ խորհրդակցական ժողովի (910 Մայիս 2) կողմէ հաշուառու յանձնախմբի անդամ նշանակուած ընկերներ, Տ. Սուրէն քհնյ. Ս. Մուրատեան եւ Խմօ¹² իրենց յանձնուած գործը ամուլութեան դատապարտելով առանց բանաւոր պատճառի եւ առանց պաշտօնական հրաժարականի գործէն հեռացած են. միաձայնութեամբ որոշուեցաւ նկատողութիւն ընել պատգամ. ժողովի կողմէ այդ ընկերներուն:

Կարդացուեցաւ Հաշուառու յանձնախմբի տեղեկագիրը: Հետեւեալ նկատումները եղան.

1.- Նկատելով որ Վարագ ենթակոմիտէի հաշուեկշիռին մէջ Ամբրիկա եւ այլուր պանդխտացող ընկերներու ամսավճարներու հաշուոյն 142½ դրոշ. ապառիկ մը կայ, որոշեց յանձնարարել Վարագի վարչութեան՝ որ երեք ամիսէն այդ գումարը պանդխտացող ընկերներէն բերել տալով հատուցանէ գանձին, հակառակ պարագային վարչութիւնը պարտական է գոցելու այդ պարտքը:

2.- Ապարբերդ եւ Առիւծ ենթակոմիտէներու կոմիտէի հաշուոյն գնած ապրանք եւ ըրած ծախսերը քննելով ընդունեց, ապրանքը կոմիտէի յանձնուելով:

3.- Կազմակերպութեան պատկանած գոյքեր եւ անոնց տեսակն ու քանակը ստուգելու համար որոշուեցաւ ընկեր Վահանի քննութենէ վերջ Կ. Կոմիտէի կողմէն ընկալագիր տալ կոմիտէին, այդ գոյքերը այլեւս Կ. Կոմիտէին պատկանիլը յայտնելով:

4. Յանձնախումբ մը ընտրուեցաւ վերջին անգամաւ գնուած ապրանքները¹⁷ ծախելով գանձը կոմիտէին յանձնելու հետեւեալներէ՝

- Ընկերներ՝ Ե. Յովնանեան, Կ. Չաւտարեան, Ե. Եսայեան, Ղ. Պարսոյեան, Տ. Շահնազարեան, Կ. Օվոյեան:
- Տեսնելով կոմիտէի 1909 Յունուար 1էն մինչեւ 910 Ապրիլ 30 եղած գործառնութեանց հաշուեկշիռը, մասնաւորապէս քննելէ վերջ վաւերացուց եւ վստահութեան քուէ տուաւ հաշուական խնդրոյն մէջ կոմիտէին:

Բ.- Կազմի թուղթեան եւ քայքայման պատճառները. — Կազմի թուղթեան պատճառներու մասին երկար վիճաբանութիւններէ յետոյ ժողովը սոյն եզրակացու-

39.- Իմա՝ Կարիմ-Էրզրում Ահաճագի (Բարձրաբերդ):

թեան յանգեցաւ որ ատոր հիմնական պատճառները եղած են կարգ մը մարմիններու եւ ընկերներու դիտաւորութեամբ արծարծած խնդիրներ՝ հաշիւներու, գիֆոնի եւ ամսավճարներու հարցերու շուրջ: Եւ որովհետեւ ասկէ առաջ քանիցս այդ հարցերու մասին պարզաբանութիւններ տրուած եւ վստահութիւն յայտնած է, — ապագային նորէն այդպիսի երեւոյթներու եւ խառնակութիւններու տեղի չտալու համար, պատգամ. ժողովը կը յայտարարէ Խորհածորի դաշնակցական բոլոր ընկերներուն եւ մարմիններուն՝ որ դրամական-հաշուական եւ գինական բոլոր հաշիւները վերջնականապէս փակուած եւ վաւերացուելէ յետոյ, կարգադրած է Կ. Կոմիտէի յանձնարարութեան համաձայն: Այն ընկեր եւ մարմինները՝ որոնք անկէ վերջ կ'արծարծեն այն հին խնդիրները, կը նկատուին կուսակցութեան կողմից գեղծարար եւ խառնակիչներ եւ պատասխանատուութեան կը կանչուին իրաւասու մարմիններէն: Ասոր հետ մէկտեղ պատգամ. ժողովը կրկին անգամ ընկերներու եւ մարմիններու ուշադրութիւնը կը հրաւիրէ մեր շարքերու մաքրագործման խնդրոյն շուրջ, խստիւ պահանջելով գտել շարքերը այնպիսի անհատներէ, որոնք իրենց ընթացքով չեն կանգնած կուսակցական պահանջած բարոյական բարձրութեան վրայ եւ իրենց գործերով արատ միայն կը բերեն կուսակցութեան եւ պատճառ կ'ըլլան մեր շրջանի կազմին քայքայման:

Գ.- Վիլայէթի Ռայոնական ժողովի պատգամաւոր եւ օրակարգի հարցերու պատասխաններ. —

Նկատելով որ շրջանը յատուկ պատգամ. ղրկելով կըրոնայ իր խնդիր եւ պահանջներ ղնելով վիլայէթի Ռայոնական ժողովին՝ լսելի ընել տալ իր ձայնը, ժողովը որոշեց երկու պատգամաւոր ղրկել. մէկը շրջանի եւ միւսը կոմիտէի կողմէն եւ ընտրուեցան գաղտնի քուէարկութեամբ շրջանի կողմէն ընկեր Խմօ, կոմիտէի կողմէն ընկեր Վահան: Օրակարգի հարցերն ալ պատրաստուելով ղրկուեցաւ ժողովին:

Դ.- Առիւծ ենթակոմիտէի խնդիր. — Առիւծ ենթակոմիտէի կազմալուծման խնդիրը խորհրդակցական ժողովի կողմէն յանձնուած լինելով ընկեր Վահանի, անոր տուած Տեղեկագրի վրայ ժողովս Առիւծի լուծուիլը արդար գտաւ, իսկ կոմիտէի գործադրութեան ձեւը ապօրինի, եւ վերջին կարգադրութեամբ Վարագի հետ միացած Առիւծ — Վարագ ենթակոմիտէի մը կազմուիլը ընդունելով վաւերացուց:

Ե.- Մերմագ գիւղի ընկերներու խնդիր. — Մերմագ գիւղի ընկերներու մէջ ատենէ մը ի վեր գոյութիւն ունեցող խնդիր ու անհամաձայնութիւնները վերցնելու համար կոմիտէի կողմէն քանիցս փորձեր եղած է ապարդիւն. ժողովը երեք հոգիէ բաղկացած յանձնա-

խումբ մը ընտրեց, 15 օրէն քննելով իր տեղեկագիրը տայ կոմիտէին, — ընկերներ՝ պատ. Կարապետ Մելքոնեան, Փ. Գաբրիկեան, Գ. Սրապեան:

Զ.- Ժայռին (Ա. Չ.) նամակը. — Ընկեր Ժայռի գրած նամակը ժողովին մէջ կարդացուեցաւ. ժողովը նկատելով որ ընկեր Տ. Սրապեանի հետ ունեցած դրամական հաշիւը ինչպէս նաեւ ձիու խնդիրը կապ չունի կազմակերպութեան հետ, քանի որ դրամի հաշիւը կ'ըլլայ Ժայռի շրջան գործիչ ըլլալէն առաջ եւ ձիու խնդիրը պարզ առեւտուրի խնդիր է, որոշեց գրել Ժայռին՝ որ իր պարտքը վճարէ Սրապեանի, առանց թողու որ գործը կառավարութեան ձգուի, ուրկէ գուցէ անպատեհութիւններ ծնին. այդ պարագային Ժայռը պատասխանատու կը ճանչցուի կազմին առջեւ:

է.- Շրջանի նոր բաժանում. — Աչքի առաջ ունենալով շրջանի ընդարձակութիւնը եւ գործերը վարելու դժուարութիւնը եւ գտնելով որ շրջանը կրնայ երկու կոմիտէի անդամական եւ դրամական ՅՕական լիւր ցենց ներկայացնել, ժողովը ընդունեց գրել Կ. Կոմիտէին [եւ] անոր ալ հաւանութիւնը առնելէ վերջ գործադրութեան դնել. բաժանումը հետեւեալ կերպով ընելու նպատակաւարմար նկատուեցաւ.

Ա. շրջան. Գասապա, Ընտրէսի գիւղեր, Խարապէկ, Լըչըք, Հագստուն, Տինէկ, Առէգ, Մերմագ, Խուրտուչի, Ծպոգիւղ, Խաղի, Ապէվանկ, Էօլմէչ, Չումակ:

Բ. շրջան. Թէմրան շրջականերով, Չանագճի շրջականերով, Խուրիս, Սերկեւիլ, Հողաս, Սագաճոր իրենց շրջաններով, Հէրտիֆ, Ազրակ շրջաններով:

Ը.- Կոմիտէի ընտրութիւն. — Նախորդ կոմիտէի կազմը հաւաքական կերպով հրաժարականը տուած լինելով ժողովը ընդունեց, եւ որպէսզի մինչեւ շրջանի նոր բաժանման հարցը վերջ գտնէ, կազմի գործը վարող առժամանակեայ մարմին մը ընտրուեցաւ գաղտնի քուէարկութեամբ հինգ անդամներէ:

Թ.- Աչքի խնդիր. — Թէ ի՞նչ վերաբերում պէտք է ունենան դաշնակցական ընկերները դէպի աշարի հարցը, որոշուեցաւ գրել եւ սպասել Բարձրաբերդի Ռայոնական ժողովի կարծիքին:

Ժ.- Ներքին կանոնադր (տեղական). — Ընկեր Վահանի կողմէ պատրաստուած ներքին կանոնադրը քննուելէ վերջ ղրկուեցաւ Կեդր. Կոմիտէին եւ անկէ վաւերացուելէ վերջ գործադրութեան դնել որոշուեցաւ:

ԺԱ.- Ապարբերդ ենթակոմիտէի խնդիր. — Ապարբերդ ենթակոմիտէի պատուիրակներ ժողովի սկիզբին մասնակցած եւ որոշումներու համաձայնելէ վերջ, վեր-

ջին պահուն միայն հրաժարեցան որոշումները ստորագրելի, առարկելով թէ՛ «իրենց ընկերները իրաւունք չեն տար իրենց ձայն տալու ժողովին, որովհետեւ չըջանի մաքրագործման եւ գործի խառնակման պատճառ եղող ընկերները չեն հեռացուած կազմէն. հակառակ [անոր որ] քննութեան սկսած պահուն ուղղակի եւ որոշ կերպով ամբաստանութիւն չէ բերուած ոչ իրենց եւ ոչ ուրիշներու կողմէ՝ ո՛րեւէ մարմնոյ կամ անհատի վրայ,

ժողովը ապօրինի գտաւ իրենց պահանջի առաջարկին այս ձեւը:

Ժողովը փակուեցաւ Մայիս 28 ժամը 8ին (ը[ստ] թ[ուր-քաց]) երեկոյեան:

Հ.Յ.Դ. ԽՈՐԱԶՈՐԻ ՇՐՋԱՆԻ Գ. ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1910 Մայիս 28
Խորաձոր

Փաստ. 764-6

Սպեր

Բ 5.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՁԵԿՈՒՑՈՒՄ ՍՄԲԱՏԱԲԵՐԴԻ

Տեղական կոմիտէի եւ շրջանի ընկերներու կողմից ուղղեալ Բարձրաբերդի Կ. Կոմիտէի Ընդ. Շրջանային ժողովի պատգամաւորութեան եւ Կեդր. Կոմիտէի ընկերներուն:

Ներկայ ամսոյ 20 թուին բոլոր ընկերներու եւ մարմիններու Սմբ[ատաբերդի] շրջ[անի] Տեղական կոմիտէի կողմից բոլոր ընկերներուն հրաւիրագրեր ուղղուեցան. ցաւ ի սիրտ, բացի կոմիտէի եւ ընկեր Խոռխոռունիից եւ Ձորակի ենթակոմիտէից ընկեր՝ Խիզախ, եւ Ձորակի ընկերներու կողմից պատգամաւոր ընկեր Աստղից գատ, ոչ ոք ներկայ չըլլալուն, ինչ որ հրաւիրագրերու մէջ յայտնուած էր՝ ամսոյ 24-ի ժողովին Սըմբատաբերդի սուրբ Յովհաննէսի վանքի մէջ տեղի պիտի ունենար, եւ այն ընկերներու մինչեւ 28 ուրբաթ երեկոյեան սպասելով՝ կրկին ոչ մի կողմից պատգամաւոր չներկայացուելուն՝ ստիպուած երեք ընկերներու կողմից իրբեւ պատգամաւոր իրենց տեղեկագրութեան եւ գեկուցումներ կու տան, առանց օրակարգի հարցերն մանրամասն քննելու, եւ վերոյիշեալ պատճառներով Բարձրաբերդ պատգամաւոր չկարողացանք ընտրել որովհետեւ ձայներու մեծամասնութիւնը բացակայ էր. այդ մասին կը թողումք Ձեր որոշման:

որովհետեւ ամէն տարի երեքից մինչեւ հինգ ամսեայ միջոցին կարող են պակսել եւ աւելնալ:

IV. Երեք խումբ մարտական Բերդի մէջ եւ մի խումբ մարտական Թմրուի մէջ գոյութիւն ունի: Բացի 4 խումբից միւս մնացորդ խմբեր քաղաքական օժանդակ խումբեր են ինքնապաշտպանութեան համար:

V. Ընկերներու մօտ գտնուած Ձ. 140՝ 100ական ծայրերով, մաուզեր, Բերդ[ան], յունակ[ան], թրք[ական] եւ գերմ[անական] տեսակներով. 15 հատ մաուզեր ատրճանակ 100ական ծայրով. 150 հատ զանազան ատրճանակներ. սոյն զէնքեր կը պատկանին իրենց անձնական եւ ո՛չ կուսակցութեան:

VI. Խումբերու հաշիւներու գումարը յայտնի չէ որովհետեւ ինչպէս ըսած ենք օտարութեան երթեւեկութիւն կայ. պատրաստի գումարը եւ Ձորակի պատգամաւորներու հաշիւն կը ստանաք, միւսներ չեն եկած:

VII. Երկու գիւղի մէջ գիւղացիական միութիւն միայն ընկերներու մէջ սկսած է գոյութիւն ունենալ:

VIII. Սմբատաբերդը կեդրոնի մէջ մի խմբակ երիտասարդական միութիւն ունի իւր փոքր գրադարանով: Կապոյտի, Թմրուի, Շտեայի, Ոսկեձորի, Ձորակի մէջ կեդրոններ գոյութիւն ունին դաշնակցական ընկերներու հովանաւորութեան տակ. Ազատամարտ եւ

I. Շրջանը ունի մի Տեղական կոմիտէ:

II. Շրջանը բաժանուած է երեք ենթակոմիտէի — այսպէս՝ Ձորակի, Թմրուի եւ Բերդի:

III. Ամբողջ շրջանը ենթակոմիտէներով կը բաղկանայ 31 խումբից, բայց այս շրջանին օտարութեան երթեւեկութիւն լինելուն՝ որոշ քանակ չենք կարող յայտնել,

Յառաջ թերթերը կը ստացուին:

IX. Տեղական կոմիտէի ընկերներից մինչ այս վայրկեանի մի միայն ներկայացուցիչը այցելած է ամէն ժամանակ բոլոր շրջանը եւ պէտք եղած աշխատութիւն չէ խնայած: Շրջանի մէջ ամէն ատեն ընկերներու եւ ժողովրդի հրահանգ տուած ու յաջողացած է զէնք գնել. յաջողացած է նաեւ 4 դպրոց բանալ տալ եւ գրադարաններ հաստատել. եւ ժողովուրդը ինքնապաշտպանութեան ձեւին տակ, ոչ կուսակցական հողի վրայ, ձեռնարկած է կազմակերպել:

X. Կուսակցութեան պատկանող ոչ մի զէնք եւ ծայր չկայ. արդէն Դ[աշնակցութիւն]ը գոյութիւն ունի այս շրջանին մէջ գրեթէ մօտ երկու տարի է ի վեր:

XI. Շրջանի 908 Նոյեմբ. մինչեւ 910 Մայիսի վերջ, խումբերէ գանձուած անդամավճարներու հաշիւն մանրամասն ցուցակաւ կ'ուղարկուի Ձեզ:

Բարձրաբերդի Ընդ. Շրջանային ժողովից պահանջներ

I. Պաշտօնական օրգան «Դրօշակ»ը, Տեղական կոմիտէի 30% տոկոսից ուղարկուելով, անհրաժեշտ է] գալն:

II. Մի կարող պրոպագանդիստ ազատ ընկեր եւ երկու գինավարժ ընկեր միաժամանակ տեղս մնալու համար որոշելով ուղարկել:

III. Թղթակցութիւն Տեղական կոմիտէի ներկայացուցիչի հետ, ինչ միջոցաւ պէտք է ընել. եթէ կարելի է ենթակոմիտէներ ալ կ. Կոմիտէի հետ թղթակցել:

IV. Նոր Մրազիր եւ կանոնագիր եթէ մշակուած է եւ պաշտօնական բլանկներ:

V. Այս կողմեր գտնուած հանքերու մասին ի՞նչ միջոց պէտք է ձեռք առնուլ:

VI. Ոսկեձոր՝ Կարապետ Հապլանեան, Ձորակ՝ Վահան Շապանեան, Փ. Չախալեան, Յովսէփ Գոչեան, Սմբատաբերդ՝ Մկրտիչ Մարգարեան, Պօղոս Պոտոյեան, Պօղոս Ղարիպեան, Պետրոս Տէր Յովհաննէսեան, Բարունակ Ճիգմէչեան, Յ. Լալափաշայեան եւ ճիւղակենացի Յարութիւն, Ձորակ՝ Յարութիւն վարդապետ Թուրչեան. սոյն վերոգրեալ անձեր կազմակերպական, հասարակական եւ կուլտուրական յառաջդիմութեանց գլխաւոր թշնամիներն են, որոնց մասին կարելի է վաղուց ունեցած արարքներէն Տեղական կոմիտէի ներկայացուցիչին գրուած է:

Ընդունեցէք ընկերական յարգանքներ. եթէ կարելի է ուղարկեցէք Վեցերորդ [Ընդհ.] ժողովի օրակարգի Ձեր կողմից տուած որոշումներն, որուն մեզ ալ ընդունակ է: Մեր ներկայացուցիչ պէտք էր գար ներկայ գտնուիլ. մի հիւանդութեան պատճառով չկարողացաւ գալ:

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1910 Մայիս 28
Ս. Յովհաննու] վանք, Ս[մբատա]բերդ

Փաստ. 765-32

Գ. - Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Ընկերներ

Բարչրաբերդի կոմիտեի կազմակերպության շերտ եղել է խմբակային: Արհեստակցական և գիտաօգիական միություններ կազմելու փորձը միշտ անաջողություն է մատնում: Բացի այդ՝ ի նկատի ունենալով քաղաքական ներկայ պայմանները խմբակային դրությունը համարում է լուսազոյնը և ասոր ուժ արուած է:

Կազմակերպությունը ներքնապես ընդհանուր առումով եղեր է թոյլ: Կազմակերպության կազմակերպություն և Կեդր. Կոմիտեի հետ յարաբերություն ունեցող, իրենց կուսակցական պարտականությունները փոքր ի շարքէ պաշտպաններ են, Բարչրաբերդի Տեղական մարմինը, Բարչրդին ու Ջրաւերինը, իսկ Պայազիւրը, Ալաշկերտը բոլորովին կազմալուծուած են եղեր կառավարության ապօրինի հետապնդումներու, փրոնց ցեղական արելութեան և վերջերս արդէն Մելիք Միրունեանի յեղադիմական հակադաշնակցական գործունէութեան պատճառաւ: Կազմալուծուած վիճակ մըն են ունեցող Խնուար, Դաշտը՝ չնայելով զանազան ժամանակներ պրոպագանդիստներ են ուղարկուած այդտեղերը, այնպէս և Բաւէնը:

Խորաշորի և Սմբապարդի մէջ մենք ունեցող ենք կազմակերպուած խմբեր, բայց անոնք չեն ունեցած գիւրեմը շահկապող կոմիտեի: Սմբապարդը միայն վերջերս, Կ. Կոմիտեի կողմէն ուղարկուած շրջիկի շնորհի ունեցող է իր տեղական մարմինը և կանոնաւոր յարաբերութիւն կը պահպանէ մեզ հետ:

Արծիւի խնդիրը յայտնի է. այստեղ մենք միշտ ունեցող ենք կանոնաւոր կազմակերպութիւն, մարմին, որը սակայն չգործէ և անկախութեան, խուսափել է որեւէ մարմնի հաշի ներկայացնելէ, բայց վերջերս մեր և Արեւելեան Բիրոյի շեռք առած միջոցներուն շնորհի մեր և անոր յարաբերութիւնները բարւոքուած են:

Այս ներկայ թուութեան պարճառով ալ մենք չկորցանք Ընդհանուր Ժողովի համար կանոնաւոր Օրջանային ժողով մը ունենալ: ունեցանք միայն խորհրդակցական ժողովներ, որոնք զբաղուեցան ներքին խնդիրներով, մեր շրջանի կազմակերպութեան թուութեան պարճառներով և զանոնք չզգոքացնող միջոցներով:

Վերջերս շրջանիս բոլոր կողմերը ընկերներ ուղարկուած են արդէն, յոյս ունիմք կանոնաւորել ի մօտոյ:

Չնայելով սակայն կազմակերպութեան ներքին թուութեանը, ան կրցող է իրեն կնիքը դնել իր շրջանի ազգային-մշակութային բոլոր ասպարէզներու վրայ: Գաւառական երեսփոխ ժողովի և անոր սրորադաս վարչական մարմիններու մեծամասնութիւնը մեր թեկնածուներէն և ընկերներէն են թէ՛ կեդրոնի և թէ՛ միւս գաւառներու մէջ: Դպրոցական գործը, ուսուցչական ասպարէզը մեր ընկերներու շեռքն է գրեթէ:

Կազմակերպութիւնը ունեցող է խոշոր ազդեցութիւն նոյնպէս կառավարութեան վրայ. անոր ազդեցութեանը

կարգադրուած են կարգ մը խնդիրները Բարչրդի, Դերջանի, Խնուարի և այլ վայրերու մէջ. սակայն պիտի նկատուի, որ վերջին ժամանակներս ներքին քաղաքականութեան կրած փոփոխութեան հետ զուգընթաց մեր ազդեցութիւնը այլեւս չունի իրեն նախկին ուժը. այնչափ անող բարդութիւնները, հողային կնիքները այլեւս անկարող ենք օրինական միջոցներով ազդել կառավարութեան վրայ. մեր այդ անկարողութիւնը ի հարկէ զգալի չափով կ'անդրադառնայ մեզ յարած մասսայի վրայ. ան կը սկսի չհասարակ Դաշնակցութեան ուժին. այս կէտը արժանի է լուրջ նկատարութեան. եթէ բաւականանանք միմիայն օրինական միջոցներով, մենք ոչինչ պիտի կրնանք ընել, իսկ մեր այդ անկարողութիւնը պիտի լքէ ժողովուրդը:

Մեր և Իթքիհարի յարաբերութիւնները սկզբէն լաւ են եղեր, բայց հետզհետէ թէն չեն վարացեր, բայց ընդհարուներ են: Այս տարուան սկիզբները, օրինակ, ունեցող խառն ժողովներ, որոնց մէջ իրաւ է թէ չէին վճռուել կարեւորութիւն ունեցող հարցեր, սակայն զոնէ կատարուած են: Եւ նկատուի է որ ինչպէս առհասարակ Իթքիհարի, նոյնպէս և տեղույն մասնաճիւղի մէջ գերիշխող կ'ըլլայ յեղադիմական, աջակողմեան թեր: Մեր կարծիքով Իթքիհարի և Դաշնակցութեան յարաբերութիւնները որոշելու համար պէտք է սպասել քննկրելին, ուր վերջնականապէս պիտի պարզուի Իթքիհարի գոյնը, ծրագրուի անոր ասպազայ անելիքը:

Մեր շրջանի մէջ ուրիշ կուսակցութիւն չկայ, բացի հրեշակեաններէն, որոնք ուժեղ են, մեզ կը հասասարակուեն գրեթէ Դերջանի մէջ, ուր մեր ընկերները առաջարկել են համերաշխ գործակցութիւն միմեանց միջոյ, բայց չէ ընդունուել և անոնք կ'աշխատին խանգարել մեր ընկերներու գործունէութիւնը, թէն զգալի խոչընդոտ մը չեն կրնար հանդիսանալ:

Բարչրաբերդի մէջ գրեթէ կազմալուծուած են, առաջընէ աւելի քայքայուած վիճակ մ'ունին և մեր ու անոնց մէջ ոչ մէկ առնչութիւն կայ:

Ինքնապաշտպանութիւնը, որ այնքան զգալի կը դառնայ հետզհետէ, նախանշելի վիճակ մը չունի. հասարակութիւնը ինքք և նոյնիսկ մեր ընկերները անկախաբար փորձեր չեն ըրեր այդ գործը առաջ տանելու և չեն ալ կրնար, թէն կը զգան որ ժամանակի հրամայականն է. կը սպասեն որ կուսակցական մարմինները նախաշեռնարկ ըլլան, իսկ մարմինները անկարող են, ըստ օրինի, գէնքով զբաղի: Այս կէտն ալ կը յանձնենք Ընդ. Ժողովի ուշադրութեան:

Ընկերական բարեւաններով Ի դիմաց Բարչրաբերդի Կ. Կոմիտեի՝ ԻԳԻԹ

1911 Օգոստոս 10 Բարչրաբերդ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ VIII

ԾՈՎԱՓ - ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Աւագանի Կեդր. Կոմիտեի կը համապատասխանէ Թուրքիոյ արեւելեան ծովափնայ շրջանին: Նախապէս կը կոչուի Ծովափ, Տրապիզոն կեդրոնով: Մահմանադրութեան հռչակումէն ետք վերակազմութեան ենթարկուելով, 1909 թ. Յունուարին գումարուած իր առաջին Շրջանային ժողովին առաւ Աւագան ծածկանունը. ապա կեդրոնը եւս փոխադրուեցաւ Կիրասոն քաղաք՝ քիչ ետք տեղափոխուելու համար Տրապիզոն:

Կազմակերպական նպատակով Տրապիզոնի շրջան գործուում են, ժամանակաւոր կամ մնայուն առաքելութեամբ, շարք մը մտաւորական և մարտական գործիչներ, ինչպէս՝ Մանուկեան Արամ, Մալխաս, Հրաչեայ Մարալ, Մատինեան Նիկոլ, Սեպուհ, Սեբաստացի Մուրատ, Վարդան Շահպազ և շատ ուրիշներ: 1909-1911, ուսումնական երկու տարեշրջան Օրտուի մէջ կը գործէր Արամ Մանուկեան:

* **

Տրապիզոն-Ծովափի թղթածրարին մէջ նկատի առած ենք գլխաւորաբար՝

- 1.- Փաստ. 790-76 - Սահրանի գեկուցագիրը՝ «Աւագանի IV Շրջանային ժողովին»:
- 2.- «Հ. Յ. Դաշնակցութեան Աւագանի Դ. Շրջանային ժողով, գումարուած 1911 Յունուար 6ին», տպագիր 8 էջնոց փոքր պրակ:
- 3.- Փաստ. 790-2 - «Շրջաբերական-նամակ», 4 էջնոց տպագիր փոքր պրակ: Ստորագրուած «Տրապիզոնի շրջանի Հ.Յ.Դ. Ռայ. ժողովի կողմէ - Տրապիզոնի կոմիտեի»:
- 4.- Փաստ. 1543-8 - (Չ. Ընդ. Ժողովի թղթածրար) - «Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան Աւագանի մարմիններուն և Կ. Կոմիտեի, 1 Յուլիս 1909 - 1 Յուլիս 1911»: Զեռագիր 8 էջ:
- 5.- Փաստ. 1543-9 - (Չ. Ընդ. Ժողովի թղթածրար) - «Վեցամսեայ Տեղեկագիր Ծովափի Շրջ. մարմնի, 1911 Յունուար 1 - 1911 Յուլիս 1, Տրապիզոն»: Զեռագիր 4 էջ:
- 6.- Փաստ. 790-57 - «Հ. Յ. Դաշնակցութեան Աւագանի V Շրջ. ժողով - 2 Յուլիս 1911»: Զեռագիր 12 էջ, խիստ մանրատառ և դժուար ընթեռնելի:

Կուսակցական ծածկանունով յիշատակուած վայրերը՝ իրենց իսկական անուններով.-

- Աւագան - Տրապիզոնի Կեդր. Կոմիտեի
- Ծովափ - Տրապիզոն
- Փառնակ - Կիրասոն
- Բերդ - Շապին Գարաիսար
- Մարալի - Եոնուրա
- Լեռնաշղթայ - Կիւմիշլիսանէ
- Ժայռ - Թրիպուլի
- Գեղասի - Էլեի
- Վաշտ - Օրտու

Փաստ. 790-76

Ա 1.- ԱՒԱԶԱՆԻ IV ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Չեկուցագրին հեղինակը՝ Սահրանտ – Սարաֆեան Հրանտ գործիչային առաքելութեամբ Կեդր. Կոմիտեին կողմէ դրկուած էր Շապին Գարաբիսար (Բերդ): Այս վերջինը կարճ առեւտուան մը համար առանձին Կեդր. Կոմիտեութիւն էր, մէկը՝ 1909 թ. կազմակերպուած «Փոքր-Հայք»ի չորս շրջաններէն, ապա միացուեցաւ Աւագան – Տրապիզոնին:

Սի քանի ժամօթութիւններ «Բերդ»ի Կոմիտեի շրջանի եւ գործերի մասին:

Ընկերներ,

Դեռ անցեալ տարի երբ III Շրջանային ժողովում հարց դրուեց «Բերդ»ը միացնել Աւագանի շրջանին, ես կանխաւ այն կարծիքը ունէի որ Աւագանը ըստ ինքեան արդէն բաւական խոշոր եւ թոյլ կազմակերպական վիճակ մը ունի եւ եթէ մեր ուժերը ներքին մենք աւելի մեծ աշխատանք պարտաւոր էինք թափել մեր ունեցածները ուժեղացնելու համար քան նոր-նոր բեռներ մեզ վրայ ծանրացնելու. բայց հակառակ իմ կարծիքին համարեա միաձայնութեամբ «Բերդ»ը միացուեց մեզ հետ. առանց այդ շրջանը ճանաչելու նրա վրայ դրուեց պիւտոնէ եւ այլն...

Երբ Մարտի մէջ եկայ առաջին անգամ Գարահիսար շատ բան կար ինձ համար այստեղ տարօրինակ...

Բայց վերջապէս շնորհիւ մի խումբ տեղական լաւ ընկերների կարելի եղաւ գործերը կարգի դնել այն չափով որչափով որ կը ներէին մեր ուժերն եւ պայմանները: Այս բոլորի մասին արդէն ժամանակին տեղեկագիրներով շրջանիս մարմնոյն տեղեկագրուած է:

Գարահիսարի շրջանը կարող է ինքնուրոյն անկախ շրջան կազմել եւ նրա դիրքը այդ բանի համար շատ յարմար է մանաւանդ եթէ նկատի առնուի իր շրջակայքի գիւղերը: Այնուամենայնիւ մօտ ապագայում երբեք Կ. Կոմիտեի շրջանը չի կարող կազմել, որովհետեւ չնայած իր ազգաբնակչութեան թուին, աշխարհագրական դիրքին՝ ներքնապէս աննպաստ պայմաններ ունի:

Մասնաւորապէս քաղաքում կարող երիտասարդութեան պակասը զգալի է շատ ուժեղ կերպով, իսկ արհեստաւոր երիտասարդներն էլ այնքան մտապէս քիչ զարգացած եւ յետամնաց են ու զբաղուած իրենց անձնական զբաղումներով եւ մի մեծ մասն էլ վատ սովորութեան մէջ խրուած (խմել, թղթախաղ), որ շատ բան սպասել չի կարելի նրանցից: Քաղաքը ոմանց ասելով 800 տուն հայ կայ, բայց այս ուժ հարիւր տուն հայերից

կէսէն աւելին տնտեսապէս շատ անախանձելի վիճակ ունի. ժողովուրդի բարոյական եւ մտային վիճակին վրայ այս անմիջական ազդեցութիւն ունեցող հանգամանքը շատ է կաղացում այստեղ յառաջադիմութեան գործը, ինչպէս նաեւ կազմակերպութեան զարգացումը:

Հիւրիէթից վերջը շատ մը աղաներ եւ գանազան բուրջի [պուրժուա ?] մարդիկ մասնակցել են այստեղ Դաշնակցութեան, բայց այդ ամէնը կամաց կամաց ժամանակի ընթացքում թողել հեռացել են եւ թողել կազմակերպութեան դեկը, որը միժամանակ պատահական մարդկանց ձեռքում էր գտնուում, նրանց ձեռքը որոնց մէջ իսկապէս անկեղծութեան ոգի [չ]կայ:

Դեռ մինչեւ այսօր կան մի քանի խմբեր որոնք կազմուած են ոչ այնքան նախանձելի բարոյական եւ քաղաքական ըմբռնում ունեցող անձերից եւ դրանք էլ իրենք արդէն կը մաքրուեն ու կը գնան...

Դաշնակցութեան գործունէութեան համար քաղաքում այնքան էլ նպաստաւոր հող չկայ: Չնայած որ արհեստաւորների մեծ մասը սաստիկ անձուկ վիճակ ունի, բայց այնուամենայնիւ տնտեսական կազմակերպութիւնները նրանց համար հաւասար [են] 0-ի. փորձերը անյաջողութեան մատնուեցին:

Կրթական եւ ազգային գործերն են որ մեծ մասամբ կարող է եւ պէտք է որ զբաղեցնէ դաշնակցական ընկերներին այստեղ եւ այդ ուղղութեամբ է, որ աշխատանքը շարունակուում է մինչեւ այսօր:

Դաշնակցութեան դէմ այստեղ կազմակերպուած ընդդիմադիր ուժ չկայ, բայց այնուամենայնիւ կան յետադիմականներ, պահպանողականներ, կղերամիտներ եւ կղերներ, որոնք իրենց ուժերը ներածի չափ մեզ դէմ ոտնձգումներ եւ խռովութիւններ հանելու միշտ էլ աշխատում են, բայց անյաջող:

Ժողովուրդի տգիտութիւնը շատ է նպաստում ի հարկէ այդ բանին...

Դեռ անցեալ տարի աւելի վատ էր, բայց այս տարի մի շարք հրապարակային ժողովների շնորհիւ, կարելի եղաւ Դաշնակցութեան դէմ եղած առասպելական գա-

ղափարները մասամբ պարզել եւ հեռացնել ու Դաշնակցութեան բարոյական ուժը զգալի դարձնել...

Այս բոլոր աշխատանքը կատարուած էր մի փոքրիկ խումբ ընկերների անխոնջ աշխատանքի շնորհիւ որոնք զոհաբերում էին թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս եւ պատրաստ են զոհաբերուել եւ ֆիզիքապէս... բայց սրա հետ միասին կան եւ ընկեր անուանեալներ, որոնց անտարբերութիւնը դէպի կազմակերպութիւն եւ յառաջդիմութիւն կատարեալ է...

Ուժերու սակաւութեան եւ մասսայի խակութեան պատճառով Գարահիսարը չի կարող նոյնիսկ մի քանի տարուայ ընթացքի մէջ Կ. Կոմիտեի շրջանը կազմել, մանաւանդ երբ մէջտեղ դրուի նաեւ դրամական ցնեղը:

Բայց չնայած այս ամէնքին «Բերդ»ը Աւագանի շրջանի միւս վայրերի հետ համեմատած առանձնայատուկ բնաւորութիւն եւ ներքին կեանք ու պահանջներ ունի: Նա չի կարող բաւականանալ 10%ով իր ընդհանուր եկամտի, եւ միեւնոյն ժամանակ նա չի կարող խոշոր պիւտոնէ իր վրայ առնել որովհետեւ ընկերների թիւը քանի գնում սակաւանում է, միւս կողմից էլ ընկերների մեծ մասը չունենորներ են... իսկ ունենորներից մի մասն էլ շատ դրամ մսխելու վատ սովորութիւնը չունեն... Շատ անգամ նկատել եմ, որ որոշ ընկերներ են [որ] ամէն հանգանակութեան մասնակցում են առատօրէն եւ միշտ էլ նրանց վրայ է ծանրանում...

Այս պատճառով էլ ցանկալի է որ այս IVրդ Շրջանային ժողովը աւելորդ պիւտոնէով չծանրաբեռնէր «Բերդ»ը եւ շատ էլ չսահմանափակէր նրա ծախսերը %ները:

Այս շրջանի գիւղերի վրայ առայժմ ոչ մի յոյս կարելի է դնել: Մի ժամանակ այդ գիւղերում անուանական կազմակերպութիւն է եղել. շատ տեղեր կազմակերպութեան անունով հաւաքուած դրամները կամ իրենց մէջ են բաժանել եւ կամ դպրոցին յատկացրել. մի քանի գիւղերն էլ, չնայած որ այժմ կազմակերպական վիճակ էլ չունեն, իրենց մօտ են պահում այն դրամները, որոնք հաւաքել են եւ երբեք համաձայն չեն յանձնելու քաղաքի կոմիտեին: Կարգապահութիւնը բոլորովին անծանօթ մի դէմք է այս շրջանի գիւղերի համար:

Կրթական վիճակը շատ վատ. չկայ հոգատարութիւն, գիւղերի մէջ 2-3-4 սրճարաններ՝ նայած գիւղի մեծութեան, որտեղ ծախուում է նաեւ օղի: Գիւղեր կան որոնց մէջ անբարոյականութիւնը տարիների ընթացքում բոյն է դրել, իսկ թղթախաղ եւ այլն սրանք սովորական բաներ են արդէն:

Կարելի է ասել, որ առայժմ այս գիւղերից ոչինչ չի

կարելի սպասել մինչեւ որ կատարեալ դպրոցներ եւ ուսուցիչներ չլինեն այս գիւղերում:

Ահա սրա համար էլ քաղաքի կոմիտէն ամէն կերպ ձգտում է ազատական տարրերից կազմել գաւառական ժողով եւ շրջանի ուսումնական խորհուրդ եւ նպատակ է դրուած հրաւիրել գաւառի շրջանային տեսուչ դպրոցների համար: Եւ բացի այս, վանքերի մէջ բանալ մի գիւղատնտեսական տարրական դպրոց, որտեղից, կարող են եւ ուսուցիչներ պատրաստուել:

Այս բոլորը նկատի ունենալով, ընկերներ, կ'առաջարկեմ որ Գարահիսարի պիւտոնէն չծանրացնէք աւելորդ գումարներ նշանակելով եւ ծախսերի համար էլ այնքան նեղ շրջանակ չընդգծէք որպէսզի կարողանայ վերականգնութեան աշխատանքը առաջ տանիլ:

Իմ կարծիքով Տրապիզոնը միայն պասսիւ դեր կարող է խաղալ այստեղի վերաբերմամբ: Ես նկատի եմ առնում մի կողմից աշխարհագրական դիրքը, միւս կողմից Տրապիզոնի ուժերը եւ իր կարիքները: Տրապիզոնը իր ուժերով ոչ թէ չի կարող «Բերդ»ը եւ կամ ծովեզերը հովուել այլեւ իր տեղի գործիչը եւ Սարափի պէտքերը հոգալ...

Ահա այս պատճառով ցանկալի էր որ այս առաջիկայ տարուայ համար մտածուէր այնպիսի միջոցներ որպէսզի գործերը չկաղային եւ առաջ գնային աւելի լաւ քան էր այս տարի մեր շրջանում:

Ես մի առաջարկ չեմ կարող անել, որը լինէր նպատակայար[մար], ուստի ներկայացնելով այս շրջանի մասին ձեզ այս փոքրիկ պատկերը յաջողութիւն կը ցանկամ ընկեր ժողովականներին, որպէսզի յաջողին իրենց աշխատանքների եւ պարտականութեան մէջ:

Ընկերական յատուկ բարեւներով
ՍԱՀՐԱՆՏ

14/27 XII [1910]

Յ.Գ.- Այս շրջանի մէջ ազատ ընկերող պաշտօնիցս ես արդէն հրաժարուում եմ եւ գնում կարին քրոջս մօտ ապրելու մինչեւ որ մի անձնական գործ ճարեմ. այս առթիւ շրջանի մարմնին գրել եմ պէտք եղածը:

Յատկապէս խնդրում եմ որ ինձ մի օրինակ արձանագրութիւններից ուղարկէք եթէ մի որեւէ արգելք չի դնել ժողովը:

ՆՈՅՆ

Ա 2.- Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՒԱԶԱՆԻ Գ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԳՈՒՄԱՐՈՒԾ 1911 ՅՈՒՆՈՒՄՐ 6ԻՆ

Աւագանի Դ. Շրջանային ժողովի կը մասնակցէին Աւագանի - Վաչտի - Բերդի եւ Փառնակի պատգամաւորները:

Ժողովին կը մասնակցէին 15 հոգի, որոնց 7ը պատգամաւորներ էին, 5ը վճռական եւ 3ը խորհրդակցական ձայնով հրաւիրուած:

Օրակարգ.-

1. Ազգային դպրոցներու պետականացում.
2. Ազգային Սահմանադրութեան վերաքննութիւն.
3. Թրքահայ ներքին պայքար.
4. Մեր մասնակցութիւնը Պէլէտիէի, Իտարէի եւ Մէջլիսը Ումումիէի ընտրութիւններուն մէջ.
5. Վերաբերմունք դէպի կուսակցական թերթերը.
6. Դաշնակցութեան Թուրքիոյ Ռայոնական ժողով.
7. Միջկուսակցական համերաշխութիւն.
8. Գիւղացիական միութիւններ.
9. Ընկերներու դաստիարակութիւն.
10. Կովասահայ քաղաքական բանտարկեալներ.
11. Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութիւն.

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ

Բանաձեւ.— Ջերմապէս կուսակից ըլլալով կուստուրական ինքնավարութեան եւ նկատելով որ ազգային լեզուով դաստիարակութիւնը լաւագոյն մեթոտն է ցեղի մը ստեղծագործական հանձարը մշակելու համար.

Նկատելով որ Թուրքիոյ դպրոցներ չեն գտնուելու ցանկալի մակարդակի վրայ եւ շուտով ալ գտնուելու յոյս չկայ:—

Նկատելով որ պետական վարժարաններու մէջ ոչ մայրենի լեզուով կատարուող ուսուցումը հակամանկավարժական է: Նկատելով որ հայերու մէջ կրթական ներքին ինքնավարութիւնը դարձեր է ազգային սովորոյթ ու պահանջ, եւ այլ նկատումներով դպրոցներու պետականացման ձգտումները կը համարուին ազգային կռիւներ յարուցանող, ներքին կուստուրական ինքնավարութիւնը խախտող սխալ քայլ ու ինքնուրոյնութիւնը վտանգող երեւոյթ:

Ուստի բոլոր օրինական միջոցներով Պարլամենտի հայ պատգամաւորներուն, Ազգային ժողովին եւ այլ խաղաղ միջոցներով հասկցնել Պետութեան այս ձեռնարկին վտանգաւոր ըլլալը. ընդունելով միեւնոյն ատեն, որ ամէն կառավարութիւն քոնթրոլի իրաւունք ունի դպրոցներու վրայ, միայն թէ քոնթրոլը պէտք է

կատարուի ազգային մարմիններու միջոցով:

Այս բոլորին հետ մեծ ջանք թափելու է, մեր ժողովուրդին հասկցնելու համար այս քայլերուն ցաւալի հետեւանքներ ունենալը, զայն գիտակցութեան բերելով:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Բանաձեւ.— Ազգային Սահմանադրութեան վերաքննութիւնը համարելով հասունցած խնդիր մը, որուն կուսակից են նոյնիսկ չափաւոր ազատական տարրեր, անոր ինչ ուղղութեամբ բարեփոխուելու խնդիրը թողելով կուսակցական ձեռնհաս մարմինի մը, պահանջել Բիւրոյէն որ կազմէ քոմիսիոն մը, մշակել տալու համար նոր Սահմանադրութիւնը, որուն շուրջը, իբրեւ կոնգրէտ գործի, հնարաւոր ըլլայ պրոպագանդ ընել:

Այս հարցի մասին աւելի հիմնաւոր պրոպագանդ մղելու եւ ժողովուրդը գիտակցութեան բերելու համար, անհրաժեշտ է նոյն խնդրի վերաբերեալ պրոչիւրներ հրատարակել:

ԹՈՒՐԲԱՀԱՅ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՔԱՐ

Բանաձեւ.— Շարունակուող պայքարը համարել միակ փրկարար ուղին՝ ազգային հիմնարկութիւնները հակաժողովրդական ու մուրթ տարրերէ մաքրելու համար: Յայտնել ուրախութիւն ազատական տարրերու կազմակերպուելուն եւ անոնց հետ միացած գործունէութիւնը համարել լոկ մոմենտի հրամայողական պահանջ: Գաւառներու մէջ ալ աշխատիլ յարաբերութիւն մշակել ազատական տարրերուն հետ ու համերաշխ գործունէութիւն ունենալ անոնց հետ՝ եթէ կան:

ՄԵՐ ՄԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԷՃԼԻՍԻ ՈՒՄՈՒՄԻԻ, ԻՏԱՐԷԻ ԵՒ ՊԵԼԷՏԻԷԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Նկատելով որ նախկին Սահմանադրութեան օրէնքներով, այդ մարմիններու ընտրութեան համար կը պահանջուի շատ բարձր սակ:

Նկատելով որ մեր ընկերները հնարաւորութիւն չունին ընտրելու եւ ընտրուելու.

Ուստի մեր մասնակցութիւնը ներկայիս այդ մարմիններու ընտրութեան մէջ համարել աննպատակաւարմար եւ ապարդիւն:

Եւ քանի որ տեղական ինքնավարութիւններու վե-

րամշակութեան օրէնքը պիտի դրուի յառաջիկայ պարլամենտական նստաշրջանի քննութեան, բաւականա՛նալ միայն ժողովրդական լայն խաւերու մէջ պրոպագանդ ընելով հասկացնել որ միայն լայն դեմոկրատական ընտրողական իրաւունքները հնարաւորութիւն կու տան այդ մարմինները օգտակար դարձնելու ժողովուրդին:

Խնդրել մեր պատգամաւորներէն որ շտապեցնեն այդ օրէնքներու քննութիւնը:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՔ ԴԵՊՈՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Բանաձեւ.— Ա. Դրոշակ.— Խնդրել որ անհկա դառնայ ամսական կամ ըստ յարմարութեան պարբերաբար հրատարակուող հանդէս, եւ պարունակէ ծրագրային, գիտական ու մեր յեղ. պատմութիւնը պարզաբանող յօդուածներ:

Բ. Ազատամարտ.— Անոր բռնած յեղափոխական եւ մերկացնող տակտիկը համարել մեր ընդհանուրի ցանկութեան արտայայտութիւն, թելադրելով որ միշտ մնայ հարկաւոր բարձրութեան վրայ, չգրադուելով այս ու այն թերթերով: Գիտական-գեղարուեստական մասը զարգացնել եւ օրաթերթի մէջ տեղ տալ հասարակական-գիտական հարցերու՝ պարզաբանող մեր ընթացիկ կեանքը, որոնք սնունդ կու տան գաւառական երիտասարդութեան:

Գ. Յառաջ.— Աշխատանք.— Յայտնել գոհունակութիւն մեր այս գաւառական թերթերու ցոյց տուած ջանքերուն, զոհողութեանց եւ համեստ գործունէութեան համար:

Դ. Ամերիկեան Յայրենիք.— Յայտնել ուրախութիւն վերջին տարիներու իր հարուստ բովանդակութեան եւ երիտասարդ ուժերը աշխատակցելու հրաւիրած ըլլալուն համար, ցանկալով որ հետո մնայ ռեկլամային գործելակերպէն, մասնաւորապէս կուսակցական ընկերներու եւ ձեռնարկներու վերաբերմամբ: Նոյնպէս նաեւ ուրախութիւն յայտնել Պարսկաստանի «Առաւօտ»ին:

Յանձնարարել մարմիններուն եւ ընկերներուն, որ աշխատին մեծ քանակութեամբ տարածել շրջաններու մէջ թերթերը, առանձնապէս գաւառական թերթերու մասին մեծ հոգ տանիլ: Մէկ մէկ օրինակ մարմինները ստանալու են դուրսը հրատարակուող բոլոր դաշնակցական թերթերէն, ծանօթանալու համար կուսակցութեան ունեցած գործունէութեան բոլոր վայրերու մէջ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲԻՈՑ ՌԱՑՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Բանաձեւ.— Ներքին պայքարի կանոնաւորման, կազմակերպական միատեսակ սիստեմի ստեղծման,

ընդհանուր գործելակերպ մշակելու եւ փոխադարձաբար գիրար ճանչնալու համար, հրաւիրել թրքահայ ռայոնական ընդհանուր ժողով:

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇ ԽՈՒԹԻՒՆ

Բանաձեւ.— Ընդունելով ազգային-հասարակական-կուստուրական գործերու մէջ համերաշխաբար գործելու անհրաժեշտութիւնը, նոյնպէս եւ քաղաքական հարցերու վերաբերմամբ.— յայտնել խորունկ ցաւակցութիւն Պոլսոյ Համերաշխական մարմնի քայքայման համար, շնորհիւ հնչակեաններու յայտնի որոշման: Հընչակեաններու այդ քայլը համարել հասարակական դժուարին գործերէն փախչելու աւանդական սովորոյթը, չէզոք երեւնալու մարմաջէն բռնուած: Հանգամանքէն օգտուելով մամուլի, ժողովներու եւ դասախօսութիւններու մէջ պարզել հնչակեաններու քաղաքական, հասարակական եւ կազմակերպական ներքին նկարագիրը եւ ախտաւորութիւնը: Այս ամէնը ի նկատի ունենալով հանդերձ, յանձնարարել մարմիններուն, որ հնչակեան վստահելի տարրերու եւ մարմիններու հետ շարունակեն համերաշխ գործունէութիւն:

ԳԻՒՂԱՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս հարցը տեսականապէս պարզուած ըլլալով նախկին Ռայոնական ժողովին մէջ, նոյն բանաձեւը կը մնայ իր ուժին մէջ:

Այդ նոյն բանաձեւով կը շեշտուի որ գիւղերուն մէջ կազմակերպութիւնները ամուր ու տեւական հիմերու վրայ դնելու համար անհրաժեշտ է պաշտօններով (ուսուցիչ եւ այլն) տեղաւորել մշտական ընկերներ, եւ անոնց միջոցով առաջ բերել կազմակերպութիւն:

Նոր վայրերու մէջ յարմար կը սեպուի նախ կազմակերպութիւն ստեղծել քաղաքական խումբերու ձեւով. ապա երբ պրոպագանդը եւ կազմակերպութիւնը կ'ուժեղանայ վերածել տնտեսական միութիւններու:

ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բանաձեւ.— Կանոնաւորել պրոպագանդի գործը, ստեղծելով եւ զարգացնելով՝ 1) Գրադարան-ընթերցարան. 2) Գիշերային դասընթացքներ. 3) Դասախօսութիւններ. 4) Վիճաբանական ժողովներ: Գործնական ոգի ներշնչելու համար, մասնակցիլ պետական, ազգային եւ հասարակական ընտրութիւններուն, իսկ տնտեսական ձեռնարկներու համար ստեղծել կողպերասիոններ:

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ

Բանաձեւ.— Ի նկատի առնելով Կովկասի անցեալ

մեծ գոհողութիւնը, ի նկատի առնելով անոր արդի պարտեալ վիճակը, ի նկատի առնելով որ այդ բանտարկեալները մեծ մասամբ յանձին թրքահայ դատին բանտարկուած են, ի նկատի առնելով որ ռուս կառավարութիւնը կը դատապարտէ ո՛չ միայն քանի մը հարիւր մտաւորականներ — մեղաւոր թէ անմեղ — այլ ամբողջ հայկական յեղափոխութիւնը յանձին Դաշնակցութեան,— կովկասահայ բանտարկեալներու օգնութեան գործը համարել ոչ միայն լոկ ընկերական-մարդասիրական պարտականութիւն մը, այլ պայքար՝ ուղղուած ռուս ռէակսիոնէր կառավարութեան դէմ:

Աշխատիլ որ հնարաւոր միջոցներով մեր շրջանի մէջ որքան կարելի է, լայն դրամական ու բարոյական օժանդակութիւն ուղարկուի կովկասահայ բանտարկեալներուն: Հանգամանքէն օգտուելով երեկոյթներու եւ դասախօսութիւններու միջոցով պարզել ռուս կառավարութեան ռէակսիոնէր ու հակահայ քաղաքականութիւնը եւ կովկասի հայերու նախկին ու արդի վիճակը:

ԿՈՎԿԱՍԷՆ ՓԱՆՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Բանաձեւ.— Գտնելով որ կովկասեան վերջին դէպքերը առիթ են տուեր բազմաթիւ փախստական ընկերներու ապաւինիլ հոս. գտնելով որ թրքահայոց եւ մասնաւորապէս կուսակցութեան պարտականութիւնն է օժանդակել այդպիսիներուն,— օժանդակելու գործը պէտք է ընել կազմակերպական հիմերու վրայ, կազմել ֆոնտ մը՝ անմիջապէս աշխատելով որ ըստ յարմարութեան աշխատանքի դնէ եւ սեփական գործով ապրելու դիւրութիւն տայ:

Կոչ ընել բոլոր դաշնակցական մարմիններուն, որ իրենց շրջաններուն մէջ հանգանակութեամբ, նուէրներով, երեկոյթներով եւ այլ միջոցներով դրամ հաւաքեն՝ կեդրոնացնելով Բիւրոններու մօտ, որոնք այդ դրամներով յարմար վայրերու մէջ — Պոլիս, Տրապիզոն, Կարին — պիտի ընձեռեն հարկաւոր օժանդակութիւնը: Խնդրել զանազան քաղաքներու Կարմիր խաչի օժանդակութիւնը: Օգնութեան գործը պէտք է ըլլայ խիստ եւ ընտ-

րովի. մեր շրջանի մարմիններուն յանձնարարել Դաշնակցութեան քանամեակի առթիւ կազմակերպել երեկոյթներ եւ ատոր եկամուտները յատկացնել այս գործին, ուղարկելով ուղղակի Տրապիզոնի մարմինն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Բանաձեւ.— Կաթողիկոսական ընտրութեան մասնակցիլը Թուրքիոյ մէջ համարել արդի մոմենտի տեսակէտէն սկսուած ազատական պայքարի մէկ օղակը, ո՛չ միայն — յայտնի պատճառներով — դեմոկրատ ձգտումներով կաթողիկոս մը ունենալու, այլեւ պահպանողականներուն վերջին հարուած մը տալու տակտիքական տեսակէտէն:

Շրջանի յառաջիկայ տարուան պիտոճէն որոշուեցաւ հետեւեալ կերպով

Մովափ	150	Հարիւր յիսուն ոսկի
Փառնակ եւ Ժայռ	50	յիսուն ոսկի
Վաչտ	50	յիսուն ոսկի
Բերդ	50	յիսուն ոսկի

Ա.՝ իր տեղական կազմակերպական ծախսերը պիտի ընէ 100ին 80ը. 40ը պէտք է դրկէ Բիւրոյին.

Բ.՝ իր տեղական կազմակերպական ծախսերը պիտի ընէ 100ին 40ը. 100ին 80 պէտք է դրկէ Բիւրոյին.

Գ.՝ իր տեղական կազմակերպական ծախսերը պիտի ընէ 100ին 30ը. 100ին 70 պէտք է դրկէ Բիւրոյին.

Դ.՝ իր տեղական կազմակերպական ծախսերը պիտի ընէ 100ին 50ը. 100ին 50 պէտք է դրկէ Բիւրոյին:

Բերդը ազատ ընկեր ունեցած պարագային իրաւունք պիտի ունենայ ծախսել իրեն յատկացուած տոկոսը, հակառակ պարագային միայն (10) տասը ոսկի ծախսելու իրաւունք պիտի ունենայ:

Փաստ. 790-2

Ա 3.— ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ – ՆԱՄԱԿ

Ընկերներ,

Մեր Շրջանի Ռայոնական ժողովը գումարուած Յունարի սկիզբը, իր օրակարգի մէջ ունէր հետեւեալ խնդիրը.— «Աշխատիլ գումարել տալ Թուրքիոյ Ռայոնական ժողով, զբաղելու համար շարք մը ներքին կուսակցական եւ առհասարակ ընդհանուր հասարակական պետական հարցերով»: Այս մասին զեկուցում լսել է գաղափարներու փոխանակութիւն ունենալէ վերջ, որոշուեցաւ դիմել Բիւրոյին եւ բոլոր Կեդրոնական Կոմիտէներուն, որ շուտով համաձայնութեան գալով՝ առաջիկայ ամառ գումարեն այդ ժողովը:

Ահա՛ այդ կարեւոր խնդիրին համար է որ այս կոչով կը դիմենք ձեզ՝ ձեր գործօն աջակցութիւնը խնդրելու:

Այս աւելի քան օգտակար եւ դեմոկրատիկ սովորոյթը, որ ընդունուած է կիրարկուած է մեր կազմակերպութեան մէջ՝ Ռուսահայաստան եւ Պարսկաստան, մինչեւ հիմա մուտ չգործեց Թուրքիա, երթեւեկի անյարմարութեան եւ իրարու հետ շփում ունենալու անհնարութեան պատճառով, թէի հոս ատոր կարիքը աւելի մեծ է:

Շնորհիւ այդ ժողովին՝ կը լուսաբանուին եւ դիրքաւ կը լուծուին շատ խնդիրներ, մանաւանդ կը ստեղծուին գաղափարներու եւ գործելակերպի նմանութիւններ, ընդհանուր հասկացողութիւններ, առանց որոնց մէկ դրօշակի տակ միեւնոյն նպատակով գործելը անհնարին է:

Թէ կուսակցական շարքերու մէջ միատարրութիւն մտցնելը ո՞րքան անհրաժեշտ է կանոնաւոր ու կարգապահ կուսակցութեան մը համար,— աւելորդ է ըսել:

Արդի վայրկեանը, երբ ստեղծուած է հակադաշնակցական հոսանք մը, որ կը ձգտի արգելք հանդիսանալ մեր գործունէութեան,— աւելի քան երբեք կը պահանջէ որ մենք միասին հաւաքուինք միատեսակ գործելակերպ որոշելու եւ միահամուտ գործելու համար:

Հարկ կը համարենք հոս մատնանշել քանի մը հարցեր, որոնք ինքնին ցոյց կու տան թէ ատոնք կը լուծուին, եւ յաջողութեամբ կը հետապնդուին ու կ'իրագործուին այն ատեն, երբ ընդհանուր համաձայնութիւն, միանման գործելակերպ եւ տրամադրութիւն ստեղծուի:

Ներքին կազմակերպական նմանողութիւն.— Որքան մենք ուսումնասիրած ենք ու գիտենք, ամէն շրջան տարբեր կազմակերպական սիստեմ ունի, օրինակ՝ դեռ մեզ համար ընդհանրապէս պարզ չէ քաղաքական խումբերու, բանուորական-արհեստակցական, գիտացիական միութիւններու բովանդակութիւնն ու կատարելիք դերը. տեղ մը արհեստակցական ինչպէս եւ գիտացիական

միութիւնները կը կազմակերպուին կուսակցական, ուրիշ տեղ մը անկուսակցական հողի վրայ ելլն., ելլն:

Ազգ. ներքին ռեաքսիոնի դէմ պայքար.— Մինչեւ հիմա կազմակերպուած, շրջայուած եւ միաժամանակ գործադրուած ո՛րէն քայլ չառինք այդ շարժումին դէմ, եթէ մէկ կողմ թողունք Պոլսոյ հետեւողութեամբ կատարուած հեռագրական պասիւ քայլերը:

Մեր մասնակցութիւնը Ազգ. կրթական-հասարակական հիմնարկութիւններու մէջ.— Մեր Ընդհանուր ժողովը որոշած է մասնակցիլ անոնց իբրեւ քաղաքացի, բայց կեանքը ոտքով գլխով հող է նետեր մեզ — չենք ուզեր մտնել պատճառներուն մէջ. պէտք է վերջապէս դիրքերը որոշել. կամ ընդունիլ ժողովի որոշումը, կամ հաստատել այդ որոշման անգործականութիւնը եւ առաջադրել առաջիկայ Ընդհ. ժողովին հարց տանիլ որ իր որոշումը փոխէ:

Ազգ. Սահմանադրութեան վերամշակման հարց.— Հոս խնդիր չէ թէ ինչ տեսակետով պէտք է մշակել զայն, գուցէ Բիւրոն ձեռնհաս Մարմինի միջոցաւ, շատ հեշտութեամբ, ամենատիպար «Սահմանադրութիւն» մը մշակել տայ. խնդիրն այն է թէ մենք ի՞նչ միջոցներու պիտի դիմենք որ ժողովուրդը կարենայ ճշմունտ գործ դնել Պատրիարքարանին եւ Կառավարութեան վրայ, զայն վաւերացնել տալու համար:

Կուսակցական գրականութեան ստեղծում եւ տարածում.— Թէ մեր գրականութիւնը, գիրքեր եւ թերթեր, ո՞րքան անխնամ կը տարածուի եւ թէ ո՞րքան նիւթական վրձնաներու կ'ենթարկուինք, գուցէ այդ ամէնքին յայտնի է. իսկ այդ վիճակով շարունակել աններելի է մանաւանդ հիմակ, ներկայ խաղաղ սահմանադրական օրերուն մէջ, երբ մեծ պահանջ ունինք գիտակից շարքերու եւ հասարակութեան, որոնք յառաջ կրնան գալ միայն շնորհիւ այդ գրարտ եւ բանարտ պրոպագանդին:

Պարլամենտի առաջիկայ ընտրութիւններու համար նախապատրաստութիւն.— Առաջիկայ տարի կը վերջանայ ներկայ նստաշրջանի ժամանակամիջոցը. հարկ է հիմնադրել նախապատրաստուիլ, հարկաւոր համաձայնութիւնները գոյացնել ասոր անոր հետ, վերջապէս պէտք է որոշ գործելակերպ եւ նոր պլատֆորմ մը մշակել կամ եղածը վերամշակել՝ եթէ կարիք կայ, այսինքն եթէ կեանքը նոր պահանջներ է առաջադրած:

Պետութեան բռնած ղեկը ղեկի մեր եւ առհասարակ փորը ազգերու կրթական ներքին ինքնավարութեան իսկողնայ. — Ապա հարց մըն ալ, որ շատ մտածելու եւ ընդհանուր գործելակերպ որոշելու հրամայական պահանջը կ'առաջադրէ:

Չենք երկարեր, եթէ մեր առաջարկը ընդունուի, մենք պատրաստ ենք մեր կողմէն օրակարգի նիւթերը ուղարկել Բիւրոյին, որ կեդրոնացնելով ամէն կողմէ եկած հարցերը, կը մշակէ եւ կ'ուղարկէ բոլոր մարմիններուն:

Ընկերներ, հէնց միայն այնքան հեռու վայրերէ հաւաքուած ընկերներու քովքովիութիւնն ու շփումը, իրարու նորութիւններ հաղորդելը ինքնին անազան գործ է եւ ունի մեծ օգտակարութիւն. ուրեմն առանց ժամանակ կորսնցնելու գործի դիմենք:

Համաձայնութեան պարագային՝ ներքին կրեցէք ձեր կարծիքները հաղորդել մեզ, ի հարկէ պաշտօնապէս ե՛ր Բիւրոյին:

Ժողովատեղիի համար մենք կ'առաջարկէինք կա՛մ Մուշ կա՛մ Պոլիս: Մուշ՝ իբրեւ աշխարհագրական տեսակետով մեր կազմակերպական շրջաններու կեդրոն, մանաւանդ իբրեւ կուսակցութեան անցեալ գործունէութեան

թատերաբեմ, որուն մեր ընկերները ծանօթացնելու համար կ'արժէ առիթն օգտուիլ. իսկ Պոլիս՝ իբրեւ նոր պայքարի կեդրոն եւ իբրեւ ժողովներու դիրտութիւն տուող ու մեր ընկերներէն շատերուն ժամադրավայր:

Գալով ճանապարհածախսին, պիտի առաջարկէինք կուսակցութեան վրայ բեռ չըլլալու համար զայն հոգալ արտաքոյ կարգի միջոցներով:

Լաւ կ'ըլլար որ սեփական հաշուով ներկայ գտնուէին շրջաններէն ձեռնհաս ընկերներ եւ՝ խորհրդակցական ձայներով: Ասոնք առաջարկներ են միայն: Առ այժմ այսչափ:

ՏՐԱՊԻՉՈՆԻ ՇՐՋԱՆԻ
Հ.Յ.Գ. ՌԱՅ. ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԵ
ՏՐԱՊԻՉՈՆԻ ԿՈՄԻՏԵ

1911 Տրապիզոն

Մեր հասցէն

Վրէն Գասպարեան

— Տրապիզոն — յանձնել Տիտանին:

Փաստ. 1543-8

Բ 1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՒԱԶԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ԵՒ Կ. ԿՈՄԻՏԵԻ

1 Յուլիս 1909 — 1911 Յուլիս 1

1.- Կազմակերպական

Կիրասոն (Փառնակ).— Կազմակերպութիւնը սկսած է 908ին 20-25 ընկերներով եւ ներկայիս ունի 7 խումբ 173 ընկերներով, ասոնցմէ 16ը ընկերուհի են: Նախ քան հակադաշնակցական պայքարը մինչեւ 85 ընկերներ են եղած, բայց ոմանք հեռացեր, ոմանք վտարուեր են: Ընկերներու զարգացման համար կատարուած են դասախօսութիւններ:— Գիւղերը չըլլալով, գիւղային կազմ չկայ:

Մապին-Գարահիսար (Բերդ).— 908ին 25-30 խմբեր կազմակերպուեր են, սակայն հետզհետէ նուազեր է այդ թիւը եւ ներկայիս քաղաքին մէջ կայ 14 խումբ 104 ընկերներով: Ամբողջ ուշադրութիւնը դարձուցած են ինքնապաշտպանութեան ու ազգ. խնդիրներու շուրջ: 1909ին հոն ղրկուած է ընկեր Սահրանտ, որ իւր դասախօսութիւններով ջանացեր է տեսական հարցերու շուրջ հրահրել ընկերներու ուշադրութիւնը: Ընկերներու նիւթական, ինչպէս եւ մտաւորական վիճակը գոհացուցիչ է: Գիւղերէն միայն Բիւրք կազմ ունի. երկու խումբ 15 ընկերներով, իսկ Թամզարան մէկ խումբ 10 ընկերներով. միւս գիւղերը՝ հակառակ թափուած ջանքերուն, գրեթէ բան մը կարելի չէ եղած ընել հետեւեալ պատճառներով, որ յետամնաց են, կարող ուժեր չունին, Թայֆայական հաշիւները ուժեղ են, քաղաքէն շատ հեռու են, եւ վերջապէս կազմին չեն ուզեր սակ վճարել: Թէպէտ այս գիւղերու նիւթական վիճակը լաւ է, բայց մտաւորականը շատ խեղճուկ:

Օրտու (Վաշտ).— Կազմակերպական վիճակը շատ լաւ է. աչքի զարնող գիտակից ու մաքուր շարքերը մեր կազմին մէջ են: Ներկայիս կան 15 խմբեր 131 ընկերներով, 28ը ընկերուհի: Այս թուին մէջ են գիւղային խմբեր ալ. յաճախ տեղի ունեցած են ժողովներ, ընկերական հաւաքումներ, երեկոյթ, ներկայացում:

Եռմուրա (Մարափ).— Տրապիզոնի գիւղային շրջանն է, որ նախորդ ռեժիմին ալ կազմակերպական որոշ գործունէութիւն է ունեցեր: 910-911ին, նախքան այդ շրջանի լուծուիլը, ունեցեր է 25 խումբ 250 ընկերներով, ասոնցմէ 4ը կանանց խմբեր: Եռմուրան հակառակ ուժեղ եւ կարեւոր վայր մ'ըլլալուն՝ Թայֆայական խնդիրներով յառաջ եկած են կարգ մը սպանութիւններ, որոնց զոհ գացած են մեր լաւագոյն ընկերներէն մէկ քանին:

Այս խնդիրներու վերջնական քննութիւնը ընկեր Սուրէնի՝ ձեռքով կատարուած եւ տեղեկագիրն ալ

ղրկուած է Արեւմ. Բիւրոյի Թ[ուրքիոյ] հատուածին: Այդ շրջանը լուծուած կը մնայ, մինչեւ տեղի ունենայ մաքրագործում: Ներքին հակամարտութիւնները յառաջ բերած են լարուած տրամադրութիւններ, որոնք երբեմն պայթեր են եւ երբեմն ալ Կ. Կոմիտէի միջոցաւ զսպուեր: Եղած են զանազան ժողովներ՝ զբաղելու կազմակերպական ու տեղական խնդիրներով: Այդ շրջանը այցելած են շատ գործիչներ, որոնցմէ սակայն քիչեր կարողացեր են օգտակար դառնալ:

Կիւմիւշխանէ (Լեռնաշղթայ).— 909-910ին կազմուած են խմբեր, որոնք դուրս եկած ըլլալով կարգապահական ուղղութենէ, լուծուած են ներքին երկպառակութեանց պատճառով: 911ին հոն ղրկուած է ընկեր Ուսուցիչ մը, որ վերակազմած է տեղական խմբերը եւ ուղղութիւն ցոյց է տուեր: Ներկայիս քաղաքում ունինք 4 խումբ 40 ընկերներով: Միեւնոյն ընկերն անցեր է 5-6 ժամ հեռաւորութեամբ գտնուող Շէյրան ավանը եւ կազմեր է խումբ մը, անկից ալ Գայլ-գետ երթալով վերակազմեր քայքայուած խմբերը, որոնք Երիզայի կապուած են եղեր կանխաւ եւ սակայն ներկայիս եւ ոչ մի կապ ունին անոնց հետ: Գայլ-գետն ալ յառաջիկային կը միանայ Աւազանի հետ: Վճարումները կանոնաւոր են եղեր:

Թրիպոլի (Ժայռ).— Ունի ներկայիս 4 խումբ 27 ընկերներով: Կատարած են պարբերաբար ընկերային ու խմբային ժողովներ՝ խօսելու տեսական ու տեղական հարցերու շուրջ: Չունենալով յեղափոխական հոգիով դաստիարակուած ընկերներ, այս ուղղութեամբ թոյլ մնացած են. անհրաժեշտ կը գտնեն որ շրջանն ունենայ պրոպագանդիստ ընկեր մը, որ շրջանները պտտելով՝ ոգեւորէ ընկերները եւ հասկցնէ:

Տրապիզոն (Մովափ).— 910ին քայքայման շրջան մ'է անցուցեր: Խումբերը լուծուած եւ պարտականութիւնները կատարած չեն. իբր պատճառ կը ներկայացուի քոլերա, ամառնային թուլութիւնը, թէ մարմնի եւ թէ անհատ ընկերներու քաղաքէն հեռանալը են: 911ին կը սկսի վերակազմութիւնը եւ այսօր կան 9 խումբ 83 անդամներով: Շատ ընդհանուր ժողովներ եղած են, զբաղուած են զուտ կուսակցական տեսական հարցերով. եղած է դասախօսութիւն, մի անգամ վիճաբանական ժողով: Հին թէ նոր անդամավճարները գանձուած են:

Էլէվի (Գետափ).— Ունի երկու խումբ 18 ընկերներ

1.- Սուրէն — Սերաստացի Սուրաթի (Խրիմեան) կողմէ օգտագործուած ծածկանուն:

րով: Ջրադած են տեղական ու կուսակցական հարցերով: Պատրաստուած ընկերներ չունին, կուսակցական գիտակցութիւնը թոյլ է:

2.- Ազգային

Շապին-Գարահիսար.— Ընկերները ազգային պայքարով շատ են տարուած եւ յաջողած են ձեռք բերել Ազգ-Առաջնորդարանի դեկը. դպրոցը յանձնած են ընկեր ուսուցիչներու ձեռքը: Գիւղերու դպրոցական գործին զարկ տալու համար հրաւիրեր են գիւղերէն ներկայացուցիչներ, բայց մեծամասնութիւն չկարենալ գոյացնելու համար, այս ուղղութեամբ գործ չեն կարողացած ընել:

Կիւրասոն.— Նախորդ շրջան Ազգ. մարմիններու ընտրութեանց մէջ չեն կարողացած յաջողիլ: Անցեալին դպրոցական գործը շատ կաղ գնացած է, իսկ յառաջիկային համար մեծ վստահութիւն ունին լաւ լինելուն, որովհետեւ ուսուցչական [կազմի] ընտրութիւնը յանձնուած է մեր ընկերներուն:

Օրտու.— Մեծ յաջողութիւն ձեռք բերած են ընտրութեանց մէջ. առանց մեր ընկերներու եւ ո՛չ մի ազգային գործ կատարուած է: Դպրոցն ալ մերոնց ձեռք է եղեր:

Ետմուրա.— Այդ շրջանին ազգ. բոլոր գործերը մեր ընկերներու ձեռքն է եղեր. բոլոր ուսուցիչները մեր ընկերներն են եղեր: Տրապիզոնի ապօրինի ընտրութեանց առթիւ խիստ բողոքներ ու հանրագրեր պատրաստուած են, ինչպէս եւ բաց ու գոցի խնդրոյ առթիւ:

Կիւմիլիսանէ.— Ազգային գործերն ու դպրոցը մեր ընկերներուն ձեռքն է. կ'աշխատին դպրոցին պիւտճէն բարձրացնել եւ նոր ուժեր պաշտօնի կանչել:

Թրեպոլի.— Ազգային գործերու մէջ ուժեղ են. դըպրոցը իլած է իրենց ամբողջ ժամանակը. յաջողուցած են ընկեր ուսուցիչներու ընտրութիւնը:

Տրապիզոն.— 910ին խանասորի յիշատակը տօնելու խնդրով յառաջ եկած է սուր պայքար, որու մէջ յաջողութիւն գտած չեն. ատոր յաջորդած է ընտրական պայքարը. մերինները ապօրինի նկատելով նոր ընտրութիւնը, պոչքոթ ըրած են Առաջնորդարանի դէմ: Դպրոցական գործէն թէպէտ մարմինը հետու է մնացեր, սակայն ընկեր ուսուցիչները ջանացեր են պահպանել հոն մեր ուղղութիւնը եւ իրենց ետեւէն քաշած են ուսուցչական ժողովը: Հաւանական է որ յառաջիկային ալ նոյնպէս լինի:

Էլէվի.— Հոս ալ մեր ընկերներու ձեռքն է ազգ. գործերու դեկը: Աչքի զարնող հակառակութիւն չկայ մերիններուն հանդէպ:

3.- Կուստուրական

Կիւրասոն.— Սահմանադրութենէն վերջ «յառաջդիմասէր Ակումբ» մը կազմուել է, որ ներկայիս կազմակերպութեան սեփականութիւն է դարձեր: Ունի 45 ան-

դամ, կը ստանայ 7 թերթ, ունի 400 գիրք, հասոյթն եղած է 3000 դրշ.: Ջանացեր են կուսակցական թերթերու տարածման. գոհացուցիչ է արդիւնքը: Ընկեր գրավաճառ մը կայ, որ կուսակցական գրականութեան տարածման կը նպաստէ որոշ չափով: Կատարուած են զանազան ներկայացումներ, երեկոյթ, են:

Շ. Գարահիսար.— Սահմանադրութեան քննարկումէ ընթացքարան մը, որ կը ստանայ 9 թերթ, ունի 60 գիրք, հասոյթն է 2300 դրշ.: Լսարան մ'ալ բացուած, բայց ունկընդիր չլինելուն ստիպուած են եղեր գոցել:

Օրտու.— Նախկին հասարակական քիւլտը յանձնուած է իւր ամբողջ կազմուածքով կազմակերպութեան, որ ներկայիս կը ծառայէ իբր ակումբ: Եղած են շատ բանախօսութիւններ, վիճաբանական ու բացատրական ժողովներ: Կը ստանայ 6 թերթ, ունի 400 կտոր գիրք, հասոյթն է եղեր 2137 դր.: Այս տարի մոգական լապտեր մը գնելու դրամ հաւաքած են: Թերթերու տարածման շատ հոգ տարուած եւ արդիւնքը գոհացուցիչ է:

Ետմուրա.— Ամէն գիւղի դպրոց ունի իւր գրադարանը, եւ կը ստանայ «Ազատամարտ», «Դրօշակ» եւ ոմանք ալ «Յառաջ»: Ներկայիս միայն մէկ գիւղ «Ազատամարտ» կ'առնէ: Գրադարանական գրքերը մեր ուղղութիւնը տարածող գրքերն են:

Կիւմիլիսանէ.— Ունին նոյնպէս գրադարան-ընթերցարան մը, ուր տեղի կ'ունենան պարբերական ժողովրդային դասախօսութիւններ, այսպիսով ժողովուրդը կապուած է կազմակերպութեան հետ: Կազմուած է նաեւ պատանիներու միութիւն մը, որուն նպատակն է ասոնք գիտակցութեան բերել եւ զարգացնել: Եղած են նաեւ հանդէսներ, երեկոյթներ: Ընթերցարանն ունի 4 թերթ եւ 357 գիրք. հասոյթն է 6791 դրշ.:

Թրեպոլի.— Ընկերները ջանք ըրած են ժողովուրդական լսարան-ընթերցարան մը պահել, եւ մինչեւ այսօր դրական արդիւնք գրեթէ չեն ունեցած: Ջանացեր են կազմակերպական թերթերն ու գրքերը որոշ չափով տարածել: Ձեռնարկած են կրթասիրաց միութեան մը, դպրոցին օժանդակելու, բայց մեծ արդիւնք չեն ստացած: Ունին 350 կտոր գիրք:

Տրապիզոն.— Այս տարի բացուած ընթերցարան-գրադարան մը, որ ունի 17 թերթ, 350 գիրք, 6490 դրշ. մուտք: Կազմակերպութեան տուած է՝ ըստ սակի՝ 325 դրշ.: «Ազատամարտ»ի թիրաժը բարձրացնելու համար, կազմուած է «Ֆոնտ», որ նպատակ ունի թերթ բերել տալ եւ տարածել: Հոս ալ կազմուած է պատանեկան միութիւն մը:

Էլէվի.— Ընկերները կ'աշխատին յառաջիկային համար ընթերցարան-գրադարան մ'ունենալ:

4.- Տնտեսական

Կիւրասոն.— Մեր ընկերներու օժանդակութեամբ կազմուած է կանանց միութիւն մը, որ 50 ոսկի դրամ

ունի եւ արհեստանոց մը պիտի բանայ: Միութիւնը կազմին ազդեցութեան տակ է:

Շ. Գարահիսար.— Աղքատիկ գործաւոր ու գործաւորուհիներու գործ հայթայթելու համար հանգանակութիւն մ'ըրած են՝ 167 ոսկի: 1.5 տարի այդ դրամով որոշ չափով ասոնց տնտեսական դրութիւնը բարւոքեր են: Սահմանադրութեան կողմէն կողմէն կողմէն կողմէն խանութներ, որոնք որոշ ժամանակէ վերջ կը դադրին՝ արհեստաւորներու շահասիրական ձգտումներուն պատճառով: Այդ գործունէութեան արդիւնքն է այն որ արհեստաւորներն ու աշխատաւորները ներկայիս աւելի աշխատավարձ կը ստանան:

«Բիւրք» գիւղի մէջ դեռեւս կայ «Եղիշէ» սպառողականը: Գիւղերը մեծ մասամբ հայերէ բաղկացած են եւ հարուստ, բայց տգէտ ու շահամոլ: Կարմիր խաչն ալ լուծուած, դրամը բանտարկեալներուն ղրկուած է:

Ետմուրա.— Մօտ 10 հատ սպառողական խանութներ ունեցեր է, ներկայիս մի քանի հատ կայ: Խանութները ղեկավարուած են ընկերներով, թէպէտ կուսակցական հողի վրայ դրուած չեն:

Թրեպոլի.— Աշխատաւոր ընկերներու վիճակի բարելաւման համար ձեռնարկուած է «Փոխադարձ օգնութիւն» միութեան կազմակերպման, որ միեւնոյն ատեն պիտի զօրացնէ ընկերներու մէջ հաւաքական ոգին: Միութիւնը ժողովրդական գոյն ունի, բայց ղեկը մերիններուն ձեռքն է:

Տրապիզոն.— Ընկեր կօշկակարներու աշխատանքով կազմուած է կօշկակարներու արհեստակցական միութիւն մը՝ միջազգային հողի վրայ: Կանոնագիր-ծրագիրը մեր արհեստակցական միութեան է:

5.- Հանգանակութիւններ

Բոլոր մարմիններն ալ հանգանակութիւններ ըրած են քաղաք. բանտարկեալներու համար, որ անցած է ընդհանրակերպով մէջ: Ատկէ զատ «Ազատամարտի» կրթական ֆոնտին, Տարօնի կրթական գործին, Բարձրաւանդակի ինքնապաշտպանութեան, Թոփչեանի Արմիկին², Կովկասի փախստական ընկերներու համար են:

6.- Քաղաքական

Միայն Շ. Գարահիսարն ու Կիւմիլիսանէն պահած են կառավարութեան հետ որոշ խնդիրներու համար յարաբերութիւն եւ այդ ճամբով լուծուած ինչ ինչ խնդիրներ: Կառավարական ընթացքը ո՛չ լաւ է եղեր եւ ո՛չ վատ: Նոյնը նաեւ Իթիհատի հանդէպ:

Ինքնապաշտպանութեան համար գոհացուցիչ ջանք ըրած են Օրտուն, Շ. Գարահիսարը, Ետմուրան, Տրապիզոնը: Կիւմիլիսանէն ջանք կ'ընէ իսկ էլէվին ու Թրեպոլին գոհացուցիչ չեն: Կիւրասոնն ալ որոշ չափով աղէկ է: Ասոնցմէ միայն վերջնաթեր երկուքի մարմինները սե-

փական մթերք չունին, միւսներն ունին, ոմանք շատ, ոմանք քիչ:

7.- Դրամական

Դրամական հաշուետուութիւնը առանձին աղիւսակով կը ներկայացուի: Գործունէութիւնը գրեթէ համապատասխան է մեր Շրջ. ժողովի որոշման: Միայն 59696,875 դրշ. մուտք ունին մարմինները. Կ. Կոմիտէն ունի ասկէ զատ առանձին հասոյթներ, որոնք կ'անցնին 60000ը, ինչ որ կը տրամադրէ մեր Շրջ. ժողովը:

6 ԱՄՍԵԼՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱԻԱԶԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ Կ. ԿՈՄԻՏԵԻ (ՓԱՌՆԱԿ-ԿԻՐԱՍՈՆ) 909 Յուլիս — 910 Յունուար 1-ը

Արդ Շրջ. ժողովի որոշումով Կ. Կոմիտէն փոխադրուեց Կիրասոն. ուժերու ցրուած եւ վայրի անյարմարութեան պատճառով գործերը բաղձալի վիճակ մը չստացան:

1. Գրաւոր պրոպագանդ.— Իր Յամսեայ գործունէութեան մէջ 3 շրջաբերականներ բաց թողուց. առաջինը պարսկական նոր սահմանադրութեան առթիւ, միւսը Յունիսի 10-ի եւ երրորդը Կովկասի բանտարկեալ ընկերներու եւ տարածուած բրովոքասիոն լուրերու առթիւ:

2. Բանաւոր պրոպագանդ.— Ընկեր Սահմանադրական է վաշտ, որտեղ ունեցեր է քանի մը հրապարակային եւ խմբական դասախօսութիւններ եւ Փառնակի մէջ եղել է շարք մը բանախօսութիւններ, զանազան ժամանակներ անցնող ընկերների կողմից:

3. Բերդի շրջանը.— (Շ. Գ.) Այս շրջանը երկար մնացել է առանձինն. աշխատել է ունենալ իւր մասնաւոր պրոպագանդիստը, այդ ուղղութեամբ Բիւրոյին եղած դիմումները եղել են անյաջող. ի վերջոյ մեր ձեռք առած միջոցներով հնարաւոր է դարձած միացնել Աւագանի շրջանի հետ, որոնց ներկայացուցիչը մասնակցել է IIIրդ Շրջ. ժողովին:

Ինքնապաշտպանութիւն

Բացի մէկ երկու շրջանի յանձնարարութիւնները կատարելուց ուրիշ ձեռնարկ չի յաջողուի:

Որբագեալ ընկեր Թոփչեանի սպանումը

Սպանման լուրը հասնելուն փութացել է ցաւակցութիւն յայտնել, «Դրօշակին», «Ազատամարտին», շրջանի մարմիններուն եւ տիկ. Թոփչեանին:

2.- Ակնարկութիւն հաւանաբար Եղիշէ Թոփչեանի որբացած տղուն:

Որոշ Շրջ. ժողով

Շրջանին աւելի լաւ վիճակ մը տալու համար, հրաւիրել է Շրջ. ժողով:

Աւագանի Կ. Կոմիտէի թուրուքեան պատճառներէց մէկն ալ եղած է այն, որ տեղացի ընկերներէ բաղկացած ըլլալով եւ ենթակոմիտէի մէջ եւս մասնակցելով՝ հնարաւորութիւն չի ունեցել շրջանի մասին մտածելու:

Տեղեկագիր ԱԽԱԶԱՆԻ ԿՈՄԻՏԵԻ

910 Յունուար 1 — 911 Յունուար 1-ը (Տրապիզոն)

Որոշ Շրջանային ժողովը Կ. Կոմիտէն փոխադրելով Տրապիզոն, փութաց ընկերների մէջ եղած անհամաձայնութիւնները յարգարել եւ մարմինը կազմել երկու կողմերից³: Այդ ուղղութեամբ ընտրութիւնը կատարուեց, բայց ընկերներից ընկ. Ժիրայր եւ Յոլակ, մերժեցին մասնակցել, պատճառաբանեալ: Բայց ի վերջոյ ընկ. Ժիրայր համաձայնուեց, իսկ ընկ. Յոլակ խոստացաւ իւր աջակցութիւնը բերել, առանց մարմին մասնակցելու: Կ. Կոմիտէն իւր ստանձնած գործը բաղձացուած աստիճանին չկարողացաւ հասցնել. ընդհակառակը օրէ օր կազմակերպութիւնը աւելի քայքայման ենթարկուեց: Գլխաւորաբար այն պատճառներով, որ ա) Մարմինը չունէր բարձր դիրք ու տեղ շրջանի առաջ, շնորհիւ նախորդ անտեղի պայքարի մղուած ընկերներ Ջուլայի, Սահրանտի եւ Սիւնիի կողմէն. բ) Որ Մարմին անգամ ընկ. Սահրանտ ուղարկուեց Ծ. Գ[արահի]սար մէկ ամսով բայց յիշեալը ընդմիջտ մնաց այնտեղ, իսկ Սիւնի Կարին մեկնելով ամբողջ գործը մնաց մի քանիսի վրայ: գ) Նախկին անագնիւ պայքարի առթիւ Սարափի մէջ առաջ եկած թայֆայականութիւնը պատճառ դարձաւ նոյն շրջանի պարբերական սպանութիւնների, [որոնք] կլանեցին մեծ ոյժ Կ. Կոմիտէից, դ) Սիւնիի յայտնի խնդիրը մեծ վնաս հասցուց թէ շարքերուն մէջ եւ թէ Դ. Կան բրեստի անկման՝ ժողովրդի առաջ եւ գլխաւորը՝ երկար զբաղեցուց մարմինը. ահա այս գլխաւոր պատճառներով մարմինը անգոր հանդիսացաւ գործելու:

Ազգային

Ազգային խնդիրներու մէջ մասնակցեց անհատապէս, թէեւ երբեմն այդ այնքան առաջ գնաց, որ կարծուեց (ժողովրդի կողմից) կուսակցական:

Կուտորական

Քաղաքական ժողովի մէջ ունենալով կուսակցական ընկերներ եւ համակիրներ՝ Ուսումնական խորհուրդը կազմեց իւր հայեացքը պաշտպանող անձնաւորութիւններէ եւ ընկերներէ. բայց նախորդ խորհուրդի հրահրով եկած տեսուչ Խուշակեանի հետ ընդհարուելով, 4 ամիս յետոյ հրաժարուեց, երբ նկատեց, որ Քաղաքա-

կան ժողովը իւր հրաժարականը պիտի տայ, եթէ [Ուսումնական] Խորհուրդը շարունակէ այդ ընթացքը:

Տրապիզոնի ժողովրդական լսարան-ընթերցարանը ձեռք առնելով շարունակեց մի տարի եւս. ի վերջոյ լաւ համարեց ունենալ կուսակցական ընթերցարան մը, եւ գոցեց ժողովրդականը. քանի որ նա բաղձալի արդիւնքը չէր տար:

Բանաւոր Պրոպագանդ

Համաձայն Որոշ Շրջ. ժող-ի որոշման, ընկ. Սահրանտը պահել է ազատ գործիչ, ամբողջ շրջանի համար իսկ ընկ. Սահրանտ սահմանափակուել է միմիայն Ծ. Գ. Կ. Սարափի շրջանը ուղարկել է բանախօսներ:

Սպառողական միութիւններ

Աշխատել է Սարափի սպառողականները պահպանել եւ զարգացնել, բայց շնորհիւ տիրող կացութեան թուլացել է. մասնաւորաբար Աբիոնի⁴ սպառողականը. շնորհիւ ընկ. Արշ. Թորլաքեանի (այժմ սպանուած) ոտնձգութիւններուն թուլացել է եւ փակուել. այդ առթիւ մեր կողմէ եղած բոլոր ջանքերը ի գուր են անցել:

Դատական

Ունեցել է երկու գլխաւոր դատ, Սարափ շրջանի պարբերական սպանութիւնները եւ Սիւնիի յայտնի դատը: Առաջինի վերաբերմամբ մարմինը կարողացել է բաւականի աշխատանք թափել. եւ որպէսզի կարողանայ սպանութիւնները դադարեցնելով հնարաւորութիւն ստեղծել սպանութեանց հեղինակները գտնելու, կողմերու ներկայացուցիչ կարծուածները առժամապէս հեռացրել է շրջանից, արգիւելով նրանց որեւէ կուսակցական հարցի խառնուելու այդ շրջանի մէջ: Իսկ Ս[իւնի]ի խնդիրը համաձայնութեամբ Արեւելեան Բ[իւրոյ]ի Թ[որլաքի] հատուածի հետ, քննել եւ քննութեան պատճէնը ուղարկած է նրանց. ընկեր Վրացեանին յանձնել է քննութիւնը կատարելը, որը մինչեւ Շրջ. ժողովը չէ վերջացած, որով յաջորդ Կ. Կոմիտէին թողած է այդ գործի քննութեան աւարտումը:

IV Ընդհանուր ժողով

Իւր մէկ տարին լրացած ըլլալով հրաւիրեց IV Ընդհանուր ժողովը, որին ներկայացուց շրջանի վիճակը եւ Սարափի կազմալուծուած դրութիւնը: Այդ ժողովին մասնակցելու իրաւունքից զրկուեց Սարափը, իւր քայքայուած վիճակի համար:

3.- Այսիքն երկու քաղաքներու՝ Տրապիզոնի եւ Կիրասոնի ընկերներէն:
4.- Աբիոն՝ գիւղ Եմուրայի շրջանին մէջ:

Փաստ. 1543-9

Բ 2.- ՎԵՑԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԾՈՎԱՓԻ ՇՐՋ. ՄԱՐՄԻ

1911 Յունուար 1 — 1911 Յուլիս 1

1910 տարին Մովսիսի կազմակերպական դրութիւնը թէ նիւթական եւ թէ բարոյական հայեցակէտով գոհացուցիչ հանգամանք մը չունեցաւ: Կարելի է ըսել կազմակերպութիւնը քայքայուած դրութեան մը մատնուած էր. ո՛չ խմբային ժողովներ ու վճարումներ կատարուած էին եւ ոչ ալ մարմինները՝ ինչ ինչ պատճառներով կարողացել էին իրենց վրայ դրուած պարտականութիւնները լիովին կատարել:

Այս դրութեան վերջ տուաւ Յունուարի Շրջ. ժողովը, որ՝ նկատի ունենալով վերոյիշեալ վիճակը, ընտրեց եթէ հոգիէ մարմին մը՝ վարելու համար Մովսիսի, Գետափի, Սարափի եւ Լեռնաշղթայի գործերը: Մովսիսի Շրջ. մարմինը ձեռնարկեց գործի եւ գրեթէ մինչեւ այսօր կանոնաւորապէս ամէն շաբաթ ժողով ունեցաւ եւ ջանաց թէ՛ հին առկախ խնդիրներն ու հաշիւները մաքրել եւ թէ՛ նոր ձեռնարկներ ընել: Եթէ ընտրեալներէն ընկերներ Ժիրայր եւ Որսկան քանի մը ամիս վերջ հրաժարեցան իրենց գործի ծանրութիւնը առարկելով, իսկ ընկեր Ա. Տ. Կովկաս մեկնեցաւ: Ժողովներուն միշտ ներկայ գտնուած է նաեւ ընկեր Յոլակ:

Շրջանային մարմինը հետեւեալ գործերը տեսած է:

- 1- Տեղական կազմի վերակազմութիւն.— Նկատի ունենալով տեղւոյն քայքայուած դրութիւնը, որով անկարելի կը դառնար օրինական ձեւով տեղական մարմին ստեղծել, նշանակեց հինգ հոգիներ մարմին մը՝ զբաղելու զուտ տեղական գործերով եւ վերակազմութիւնը սկսելու համար:
- 2- Ընթերցարան — Տեղական մարմինն աջակցած է ընթերցարանի բացման ու կահաւորման համար:
- 3- Կովկասահայ բանտարկեալներու հանգանակութիւն.— Իւր ջանքերով յանձնախումբ մը կազմուել է, որ ամբողջ քաղաքին մէջ պատելով մօտ 8500 դրչ. ի հանգանակութիւն մը կատարած է:
- 4- Ազատական կուսակցութիւն.— Տեղւոյն մէջ գոյութիւն ունեցող ազատական կուսակցութեան մասնակցելով անհատապէս՝ ուղղութիւն տալ ջանացել է, եւ կը յուսայ ապագայ ազգ. պայքարի մէջ անոր հետ մեծ յաջողութիւն ձեռք բերել:
- 5- Կովկասի համար.— Կովկասի գրաւոր պրոպագանդին նպաստել է «Ազատամարտ» եւ «Դրօշակ» եւ գիրք ուղարկելով: Ասկէ զատ Կովկասի փախստական ընկերներուն տուած է դիւրութիւններ կրկին հոն դառնալու կամ ուրիշ տեղ փոխադրուելու:
- 6- Ազատամարտ.— Չանացել է Ազատամարտի թիրափ բարձրացման: Գործակալի հաշիւներու քննու-

թեան ձեռնարկելու եւ աշխատելու է մաքրել ու կանոնաւորել խճողուած հաշիւները:

7- Հանդէպ կառավարութեան.— Թէ՛ մարմիններէ եւ թէ՛ անհատներէ հաղորդուած խնդիրները՝ իւր ներած միջոցներով՝ հետապնդել է:

8- Դատական.— Ս[իւնի]ի առկախ ու խճողուած խնդիրը քննելով վճիռ է արձակել:

9- Թուրքիոյ ռայ. ժողով.— Հրաւիրել է բոլոր մարմինները, բայց ո՛րեւէ պատասխան չէ ստացել շրջանին համար:

ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Մովսիսի շրջ. մարմինը կապ պահպանել է շրջանի բոլոր մարմիններուն հետ, որոնց հարցերուն ու դիմումներուն ջանացել է շուտով պատասխանել: Գալով իւր հետ կապուած մարմիններուն՝ Սարափի համար մինչեւ այսօր ոչինչ կրցած է ընել, քանի որ՝ ըստ Շրջ. ժողովի որոշման՝ այդ շրջանի վերակազմութիւնն ու տեղական դատական խնդիրներու քննութիւնը թողնուած է Դումանի, եւ ասոր չգալով՝ Մուրատի⁵, որ մինչեւ այսօր դեռ չէ եկած: Ասոր հետ մէկտեղ ջանացել է չէզոքացնել հոն տիրող վատ տրամադրութիւնը:

Լեռնաշղթայի թէպէտ անցեալին ունեցել է խմբային կազմակերպութիւն, սակայն իւր ապօրինի ու սխալ քայլերուն պատճառով լուծուել է, մինչեւ որ ասկից ղրկուել է ներկայացուցիչ ընկեր Վահանը⁶, որ հետզհետէ կազմակերպել է թէ տեղական խմբերը եւ թէ անցել է Շէյրան ու Գայլ-գետ պրոպագանդի: Մարմինը իւր թղթակցութիւններով տուել է ցուցմունքներ՝ գործը դիւրացնելու:

Գետափի հետ պահել է լոկ գրաւոր յարաբերութիւն: Վերջերս մտադիր է մի պրոպագանդիստ ղրկել, սակայն անպատասխան պարագայի մը բերումով՝ չկրցաւ:

Մովսիսի Շրջ. մարմինը՝ Շրջ. ժողովէն իւր վրայ դրուած հետեւեալ պարտականութիւնները չէ կարողացել կատարել:

- 1- Չէ կարողացել քանամեակը տօնել՝ չունենալով սկիզբէն տրամադրելի յարմար վայր եւ երկրորդ՝ ձեռքի տակ յարմար նիւթեր:
- 2- Ազգ. սահմանադրութեան վերաքննութեան, դպրոցներու պետականացման խնդիրներուն համար նոյնպէս ո՛րեւէ բան չէ լրացած:

ՇԱՀԷՆ, ՏԻՐԱՆ, ՅՈՒԱԿ, ՏԱՇՐԱՅԻ

Տրապիզոն, 30 Յունիս 1911

5.- Նիկոլ Դուման եւ Սեբաստացի Մուրատ:
6.- Վահան՝ Մատիցեան Նիկոլն է:

Փաստ. 790-57

Բ 3.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱԻԱԶԱՆԻ V ՇՐՋ. ԺՈՂՈՎ

2 Յուլիս 1911

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Ա. ՆԻՍՏ

- 1.- Բացում
- 2.- Դիւանի ընտրութիւն
- 3.- Մանտաղներու ստուգում
- 4.- Ժողովի զբաղման ժամանակը
- 5.- Հրակիրելիք ընկերներ
- 6.- Յանձնախմբերու ընտրութիւն

Օրակարգ

- 1.- Հաշուետուութիւն մարմիններու
- 2.- Ընդհ. ժողովի օրակարգի մշակում
- 3.- Առաջարկներ Շրջ. ժողովին մարմիններէ եւ ընկերներէ
- 4.- Պատգամաւորի ընտրութիւն

Ներկայ ընկերներ

- Աւագանի Շրջ. մարմնի կողմէ Մ. Պ.
- Կիրասոնի շարքերու կողմէ Տ. Գ.
- Կիրասոնի մարմնի կողմէ Ս. Ե.
- Թրիպոլի Շրջ. մարմնի կողմէ Ա.
- Տրապիզոնի շարքերու կողմէ Յ. Տ.
- Տրապիզոնի մարմնի կողմէ Բ. Զ.
- Շ. Գարահիսարի մարմնի կողմէ Ա. Ս.
- Կիւմիլիսանի մարմնի կողմէ Վ.

Ոչ պատգամաւոր.— Ռոստոմ, Աւօ եւ Վրէն: Աւագանի շրջ. մարմնի ներկայացուցիչը ժողովը բանալով առաջարկեց կատարել դիւանի ընտրութիւն: 2.- Դիւանի ընտրութիւն.— Ընտրուեցան ատենապետ Մ. Պ. եւ Ս. Ե. իսկ քարտուղար Յ. Տ. եւ Ա. Ս.: 3.- Մանտաղներու ստուգում.— Ստուգուեցան բոլոր մանտաղները. բացակայ էին Օրտուի եւ Էլիվի պատգամաւորները. Օրտուէն ստացուած էր օրակարգի որոշումները: Շրջ. մարմնի ներկայացուցիչը յայտարարեց թէ ընկ. Վահան կը մասնակցի Կիւմիլիսանի կազմէն որպէս շրջ. մարմնի կողմէն ուղարկուած ներկայացուցիչ: 4.- Ժողովի զբաղումներու ժամանակը.— Որոշուեց օրը երկու նիստ գումարել, առաւօտեան 12-3 եւ երեկոյեան 1-3ը: 5.- Ընկերներ հրակիրել.— Որոշուեց հրակիրել ընկերներ՝ Քրմապետ, Աւօ, Արշակ եւ Էդուարտ վճռական ձայնով, Շրջ. մարմնի եւ Մովսիսի կոմիտէի ընկերները՝ խորհրդակցական ձայնով: 6.- Հաշուական յանձնախմբի ընտրութիւն.— ընտրուեցան ընկերներ Մ. Կ. Յ. Ա. եւ Վահան:

1.- Մարմիններու հաշուետուութիւն.— Ա.- Մովսիսի կոմիտէի հաշուետուութիւնը ըրաւ ընկեր Ը. որով կը պարզուէր թէ կոմիտէն իր գործունէութիւնը սկսած է 1911 Յունուար 1էն, երբ տեղին խմբերը քայքայուած վիճակի մէջ են եղած: Ներկայիս կան 9 խմբեր 83 անդամներով: Կոմիտէն հիմնած է ընթերցարան մը՝ «Լոյս» գրադարանով միասին, որ ունի 350 նոր գիրք. ընթերցարանը ունի 83 անդամ, կը ստանայ 16 թերթ. ընդհանուր մուտքն է 8490 դր. ըստ որոշած սակի կազմին տուած է 325 դր.: Կոմիտէն ցարդ ունեցեր է 9 ժողով, չորս ներկայացուցչական ժողով եւ 12 ընկերական ժողով, երկու ընկերային դասախօսութիւն, մէկ վիճաբանական ժողով: Ազատամարտի տարածման համար կազմուած է յատուկ ֆոնտ մը եւ գործը յանձնուած է յանձնախմբի մը. վերջերը ընտրուած են երկու յանձնախմբեր. մէկը պրոպականտի իսկ միւսը ազգագրական եւ արհեստակցական վիճակացոյցեր կազմելու համար: Ամսավճարները ամսէ ամիս գանձուած են ինչպէս նաեւ հինէն վճարելի մնացածները գանձուած:

Բ.— Փառնակի կոմիտէի կողմէն զեկուցում տուաւ ընկ. Տ.:

Գ.— Ժալուի ենթակոմիտէի կողմէն զեկուցում տուաւ ընկ. Յ. Ա.: Ընկեր[ական] ընդհ[անուր] ժողով տեղի ունեցած է, որոնց մէջ զբաղուած են ծրագրային հարցերով. տեղի ունեցած են նաեւ յաճախակի խմբական ժողովներ. ենթակոմիտէն նախաձեռնարկ եղած է կրթասիրաց միութիւն մը կազմելու՝ զուտ կրթական նպատակներով եւ փոխադարձ օգնութեան ընկերակցութիւն մը կազմելու աշխատանք եղած է, ընկեր անդամներու վիճակը բարելաւելու համար: Վեցամսեայ շրջանին ենթակոմիտէն զբաղեցնողը եղած է կրթական եւ տեղւոյն դպրոցի դատական գործը, որովհետեւ զուտ կուսակցական կազմակերպական գործեր չկան: Դ. Շրջ. ժողովին չէ մասնակցած երթեւեկութեան անկարելիութեան պատճառաւ միայն: Ի նկատի ունենալով որ ենթակոմիտէի շրջանին մէջ կը պակսին իրապէս համոզումով եւ յեղափոխականապէս դաստիարակուած ընկերներ, կ'առաջարկէ որ Շրջ. ժողովը միջոցներ ստեղծէ պրոպականդիստ ընկեր մը ունենալու համար, որ տարեկան գոնէ մի քանի անգամ այցելէ իրենց շրջանը եւ իր դասախօսութիւններով ոգեւորէ ընկերները:

Երբքի կոմիտէի կողմէն զեկուցում տուաւ Ա. Ս.: Բերդի շրջանը ունի 18 խումբ, մօտ 90 ընկերներով. գիւղերէն մեծ մասին մէջ կարելի եղած չէ կազմակերպութիւն առաջացնել — գիւղացիներ չեն համաձայնիր ըստ կանոնագրի իրենց անդամավճարները յատկացնել կուսակցութեան. երեք գիւղերու մէջ միայն կարելի եղած է մի քանի խմբեր կազմակերպել. այս ալ զիջում ընելով՝ իրենց անդամավճարներէն միայն մէկ մասը ստանալով առ այժմ: Քաղաքին մէջ ամիսը երկու անգամ տեղի կ'ունենան ընդ. ժողովներ, կուսակցական-ծրագրային եւ տեղական կրթական գործերով զբաղելու համար: Խմբական ժողովներ տեղի կ'ունենան մօտաւորապէս ամիսը մէկ անգամ:

Դ. Շրջ. ժողովի որոշած տարեկան 50 ոսկիի եկամուտը կը գոյացուի հետեւեալ կերպով. մօտ 24 ոսկի անդամավճարներէ. իսկ մնացեալը ընկերներու նուէրներէ, ներկայացումներու հասոյթներէ կը գոյանայ: Ընկերներու մտաւորական զարգացման եւ տեսական, ծրագրային հարցերով հետաքրքրութիւնը շատ քիչ է. դասախօսութիւններ կարելի չէ եղած յարատեւել: Կոմիտէի նախաձեռնութեամբ բացուած ընթերցարան գրադարանը ունի 8 տեսակ թերթ եւ 100 կտոր գիրք, տարեկան մուտքն է մօտ 2400 դր. որ կը յատկացուի շէնքի վարձքին, պաշտօնեայի, մաքրութեան եւ այլն: Կուսակցական բաժինը կարելի չէ եղած գանձել ցարդ: Կոմիտէի նախաձեռնութեամբ կազմուած է ժողովրդական լսարան մը. բայց մի քանի ամիս միայն տեսած է ժողովրդի ցոյց տուած անհետաքրքրութեան պատճառաւ:

Ինքնապաշտպանութեան միջոցներ ստեղծելու համար՝ կոմիտէն յաճախ յորդորած է ընկերները եւ որոշ չափով դիւրութիւններ տուած է անձնական միջոցներ գտնել: Գիւղերու մէջ այդ ուղղութեամբ ոչինչ կարելի եղած է ընել: Ազգ. կրթական գործերը զբաւած են կոմիտէի եւ ընկերներու աշխատանքներու մէջ մասը. կարելի եղած է վերջացող տարեշրջանին դպրոցական գործը քաղաքին մէջ քիչ շատ կանոնաւորել՝ ընկեր ուսուցիչներու միջոցաւ. իսկ առաջնորդական խնդիրներու կանոնաւորման ամէն կերպ աշխատած եւ վերջին երեսի[տխանական] ժողովի ընտրութեան մէջ յաջողութիւն ձեռք բերած է:

Շրջ. մարմնի կողմէն տեղեկագիր տուաւ ընկ. Մ. Պ. — 1910 տարուան ընթացքին Մովսիսի կազմակերպութիւնը քայքայուած վիճակի մէջ էր. ո՛չ խմբական ժողովներ, ոչ ալ վճարումներ եղած են: Յունուարի Շրջ. ժողովը վերջ տուաւ այդ դրութեան եւ ընտրեց 7 ընկերներէ բաղկացեալ ներկայ Շրջ. մարմինը, վարելու համար Մովսիսի, Գետափի, Սարափի եւ Լեռնաշղթայի գործերը: Շրջ. մարմինը ամէն շաբաթ մէկ ժողով ունեցած է. ջանացած է հին առկախ հաշիւները մաքրել եւ նոր ձեռնարկներ ընել: Ա) Վերակազմած է տեղական կազմակերպութիւնը՝ նշանակելով հինգ ընկերներէ բաղկացեալ տեղական մարմին մը: Բ) Տեղական մար-

մինը աջակցած է ընթերցարանի բացման եւ կանոնաւորման համար: Գ) Կովկասահայ բանտարկեալներու հանգանակութեան ձեռնարկած եւ 8500 դր. գանձած է: Դ) Տեղւոյն մէջ գոյութիւն ունեցող Ազատական կուսակցութեան մասնակցելով անհատապէս՝ ուղղութիւն տալ ջանացած է եւ կը յուսայ ապագայ ազգ. պայքարին մէջ անոր հետ մեծ յաջողութիւն ձեռք բերել: Ե) Կովկասի համար գրականութիւն փոխադրած է եւ անկէ փախըստական ընկերներու կարելի եղած դիւրութիւններ տուած է: Զ) Ջանացեր է Ազատամարտի տարածման: Է) Կառավարութեան հանդէպ մարմիններէ եւ անդամներէ հաղորդուած խնդիրները հետապնդած է իր ներած միջոցներով: Ը) Ս.ի առկախ ու խճողուած խնդիրը քննելով վճիռ տուած է: Թ) Հրակէր ուղղած է Թուրքիոյ բոլոր մարմիններուն Թուրքիոյ Ռայոնական ժողով գումարելու, բայց ո՛րեւէ պատասխան չէ ստացած: Ասկէ գատ Շրջ. մարմինը կապ պահած է շրջանի բոլոր մարմիններուն հետ, անոնց հարցերուն եւ դիմումներուն պատասխանելով: Սարափի համար մինչեւ այսօր ոչինչ կրցած է ընել, քանի որ ըստ Շրջ. ժողովի որոշման այդ վերակազմութեան գործը թողուած էր Դումանին եւ ասոր չգալուն համար Մուրատին, որ տակաւին չէ եկած: Լեռնաշղթայի գործերը կանոնաւորելու եւ կազմակերպութիւնը [ամուր] հիմքերու վրայ դնելու համար ուղարկած է ընկ. Վահանը, որ Յունուարէն սկսեալ իբրեւ ուսուցիչ հոն հաստատուելով կազմեր է 4 խումբ 40 ընկերներով. բացած է լսարան մը, ժողովրդական տարրերէ կազմուած անդամներով, եւ ասով կապ ստեղծեր է ժողովուրդին եւ ընկերներու միջեւ: Շաբաթը երկու անգամ ընկ. ժողովներ ու դասախօսութիւններ տեղի ունեցեր են: Դպրոցի կանոնաւորման համար աշխատած է հնարաւորը ընել: Քաղաքէն գատ ընկերը կազմակերպութիւն առաջ բերած է Շէյրանի եւ Գայլգետի մէջ: Գետափի հետ Շրջ. մարմինը զբաւող յարաբերութիւններ պահած է միայն: Շրջ. մարմինը Դ. Շրջ. ժողովին իւր վրայ դրուած պարտականութիւններէն չէ կարողացած ընել: 1) Դաշնակցութեան քսանամեակը սօնել [չէ կրցած], տրամադրելի յարմար վայր եւ նիւթեր չունենալուն համար: 2) Ազգ. սահմանադրութեան վերաքննութեան, դպրոցներու պետականացման խնդիրներուն համար նոյնպէս ոեւէ բան չէ ըրած:

Ժողովը լսելէ յետոյ ընկեր պատգամաւորներու վերեւ նշանակուած զեկուցումները, երկար վիճաբանութիւններէ յետոյ, որոշեց դիտողութիւն յայտնել 1) Շրջ. մարմին, որ Դ. Շրջանային ժողովի օրակարգի որոշումները մարմիններուն ղրկած է երեք ամիս յետոյ միայն, այդ յապաղման մասին իր առաջ բերած պատճառաբանութիւնները գտնելով ոչ բաւարար: 2) Բերդի կոմիտէն՝ որ տեղական Ազգ. գործերով զբաղուած ըլլալուն համար չէ ուղարկած իր զբաւող տեղեկագիրը եւ Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերուն պատասխանները, որ հակառակ է) Ե. Ընդհ. ժողովի որոշման:

մարմինը ուղղակի իրրեւ դաշնակցական մասնակցած է տեղւոյն Ազգ. կրթական գործունէութեան: Ժողովը յարմար նկատեց թելադրել նաեւ որ Բերդի ընկերները այսուհետեւ մասնակցին անհատապէս աշխատելով Ազգ. գործերու մէջ համերաշխիլ եւ իրենց հետ ունենալ ժողովրդի այլ տարրերու ներկայացուցիչները, գործին աւելի ժողովրդական լայն բնաւորութիւն տալու համար:

Բ. ՆԻՍ

Ժողովը բացուեցաւ եւ սկսաւ Զ. Ընդհ. Ժողովի օրակարգի քննութեան:

1.— Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները

ա) Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէն.—

Նկատելով որ իթթիհատի մէջ գործողացած են այնպիսի տարրեր, որոնց ազդեցութեամբ՝ Սելանիկի եւ ուրիշ տեղերու մէջ կայացած համաձայնութեան կէտերը անգործադրելի մնացած են կեդրոնական եւ մասնաւոր տեղական իշխանութիւններու կողմէ: Որ տրուած բոլոր խոստումները ոչ թէ մնացած են անգործադրելի այլ իրականութեան մէջ բոլորովին հակառակն է տեղի ունեցած՝ եւ նկատելով որ իթթիհատը որեւէ գործնական քայլերով չարտայայտուեցաւ կառավարութեան այն գործունէութիւններու հանդէպ՝ հետեւաբար Դաշնակցութեան եւ իթթիհատի մէջ կայացած համաձայնութիւնը խախտած պէտք է նկատել: այսուհանդերձ կը յայտարարենք որ ինչպէս առաջ նոյնպէս եւ այժմ մեր բոլոր ուժերով պիտի գործակցինք իթթիհատի հետ պահպանելու սահմանադրական կարգերը արտաքին եւ ներքին թշնամիներէ:

բ) Միւս քաղաքական կուսակցութիւնները.— Նկատելով որ Տաճկաստանի գանազան վայրերու մէջ քաղաքական կուսակցութեան անունին տակ կազմուած խմբակցութիւնները թելադրուած են յաճախ ոչ թէ քաղաքական հայեացքներով, այլ Դաշնակցութեան դէմ կռուելու նպատակով, գրաւոր եւ բանաւոր պրոպագանդի միջոցով պարզել ժողովրդին անոնց գործունէութեան բնոյթը, ըստ կարելոյն չտարուիլ անոնց յարուցած խնդիրներով եւ փակցիլ անոնց այն բոլոր ձեռնարկներուն, որոնք հասարակական տեսակէտով օգտակար կը լինին:

գ) Ոչ հայ ազգային խմբակցութիւնները.— Ոչ հայ տարրերու մէջ գոյութիւն ունեցած այն բոլոր խմբակցութիւնները, որ կ'առաջնորդուին աշխատաւորական սկզբունքներով եւ երկրի շահերու նախանձախնդրութեամբ, այնպիսիներուն ուժ տալ եւ աշխատիլ առաջ բերել նոր խմբակցութիւններ նոյն ուղղութեամբ: Իսկ զգուշանալ այնպիսի ոչ-աշխատաւորական խմբակցութիւններէ, օր. (վերջերս) քիւրտ տերէպէիներու ստեղծած քրտական շարժումը, որոնք գիտակցաբար թէ ան-

գիտակցաբար կը ծառայեն ի վնաս երկրի շահերուն:

2.— Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը

ա. բ.) Հողային հարց եւ ապահովութեան խնդիր.—

Ընդունելով Արեւելեան Բիւրոյին Թուրքիոյ հատուածի Ռայոնական ժողովի պատճառաբանութիւններն ու առաջարկած միջոցները Հողային հարցի մասին¹, կ'աւելցնենք որ այս բոլորէն յետոյ հարկաւոր է որ դիմումներ ընել կուսակցութեան ձեռնհաս մարմինն կողմէ կառավարութեան եւ խորհրդարանական խմբակի կողմէ՝ խորհրդարանին: ապարդիւն լինելու պարագային բողոքել միթիւններով եւ հրաւիրել դաշնակցական երեսփոխանները հրաժարուիլ խորհրդարան յաճախելուց: Ասոր կից կ'առաջարկենք նաեւ որ ժողովուրդը իր ունեցած բոլոր օրինական միջոցներով պաշտպանէ իր իրաւունքները, նկատելով որ ապահովութեան խնդիրը կապ ունի հողային հարցին հետ եւ նոյնքան կարեւոր է որքան միւսը: կ'առաջարկենք այս խնդիրը եւս նոյն ձեւով լուծել:

գ) Նահանգային ինքնավարութիւն.—

Նկատի ունենալով Թուրքիոյ նահանգներու աշխարհագրական, կլիմայական եւ ազգաբաշխական տարբերութիւնները եւ անոնցմէ թելադրուած տեղական մասնայատուկ օրէնքներու անհրաժեշտութիւնը ի հաշիւ Օսմ. պետութեան ընդհ. զարգացման եւ յառաջդիմութեան, կ'առաջարկենք ստիպողականութիւն տալ այս հարցին եւ յառաջիկայ երեսփոխանական ժողովին քննութեան ենթարկել անպայման մասնախմբի մէջ մշակուած նահանգային կանոնադիրը, աշխատելով հոն մտցնել Դաշնակցութեան պատճառով այն մասերը, որոնք կը վերաբերին նահանգային ինքնավարութեան:

դ) Հարկային սիստեմի բարեփոխում.—

Նկատելով որ հարկերու ներկայ սիստեմը բացառապէս ծանրացած է աշխատաւոր դասակարգին վրայ, եւ այս տխուր իրողութիւնը խոչընդոտ կը հանդիսանայ երկրի տնտեսական զարգացման, եւ հարկերու թեթեւացումով նպաստած կ'ըլլանք նաեւ սահմանադրութիւնը ժողովրդականացնելու խնդրոյն, կ'առաջարկենք՝ կառավարական շրջանակներու մէջ պառլամենտի ընկերներու միջոցով շարունակել դարձեալ պայքարը հարկերու արդար բաշխման եւ թեթեւացման մասին, ու որպէս ամենապատակաւոր մարմին կարգերու մէջ ընդունիլ յառաջատուական տուրքի հաստատումը: յանձնարարել պատգամաւորներու որ իրենց շրջանի մէջ առանց ցեղի եւ կրօնի խտրութեան միթիւններ եւ հանրագրութիւններ պատրաստելով բողոքել հարկերու ներկայ սիստեմի դէմ եւ պահանջել աշարի խափանումը:

Գ. ՆԻՍ

ե.— Հաղորդակցութեան ճանապարհները.— Նկատելով որ այլեւս պաշտպանութեան կարօտ չէ այս ճամար-

տութիւնը, որ երկրի յառաջադիմութեան ամենակարեւոր ազդակներէն մէկն է հաղորդակցութեան կանոնաւոր եւ արագ միջոցներու գոյութիւնը: Ընդունելով որ այդ տեսակէտով ամենատխուր վիճակը կը ներկայացնեն մեր երկրի հայկական նահանգները:— հաստատուած ըլլալով որ այդ երկրամասի հաղորդակցութեան խեղճ դրութիւնը պատճառ կը դառնայ տնտեսական կեանքի յետամնացութեան եւ ընդհանուր պետական կեանքի ստեղծելու արգելք կը դառնայ՝

Կը յանձնարարենք.— Պահանջել կառավարութենէն հաղորդակցութեան միջոցներու անմիջական շինութիւնը եւ դիւրութիւններ ստեղծել կառավարութեան այդ գործը գլուխ բերելու,— ճանապարհներու շինութեան համար իւրաքանչիւր նահանգէն զանձուած տուրքը յատկացնել նոյն նահանգի ճանապարհներու շինութեան, իսկ այն ճանապարհները որոնք ընդհանուր նշանակութիւն ունին՝ պետութեան ճանապարհներուն յատկացուած առանձին պիտուէ՞նով:

զ.— Տնտեսական բարգաւաճման միջոցներ մանր եւ արժան վարկային ընկերութիւններ.—

1) Ընդունելով հանդերձ նման ընկերութիւններու օգտակարութիւնը, կը յայտնենք որ մեր շրջանի մէջ նման միութիւններ առաջ բերելը եթէ ոչ անկարելի բայց խիստ դժուարին է եւ մեծ աշխատանք կը պահանջէ:

2) Երկրագործական դրամատուն.— Ամէն ջանք եւ միջոց ի գործ դնել կառավարութեան մօտ եւ երեսփոխանական ժողովի մէջ, բարեկարգելու համար երկրագործական դրամատան վարչական վատթար կազմը եւ զայն ծառայեցնելու իր գոյութեան իսկական նպատակին:

3) Գործակցական ընկերութիւններ.— Գործակցականները մասնաւորապէս գիւղային շրջաններում մեծ օգուտներ կարող են տալ: լաւ է որ անկուսակցական հողի վրայ ալ կազմուին անոնք առ այժմ, քանի որ դուրսէն մասնակցողներու մէջ ալ կան գիտակից տարրեր եւ երկրորդ՝ անոնք իրենց մասնավճարներով մեծապէս կ'ուժեղացնեն գործը: Եւ սակայն որպէսզի միութիւնը իր նպատակէն չչեղի եւ չդառնայ շահագործող ընկերութիւն, ջանալու է որ անդամներու մեծամասնութիւնը դաշնակցական ուղղութիւնը ընդգրկող մարդիկ լինին: գործակցականները կազմելու միօրինակութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է մշակել կանոնադիր:

Բաղկացուցիչ ազգեր.— 1) Ընդունելով որ բազմացեղ երկրի մը ինչպիսին է Թուրքիան, յառաջդիմութիւնը կ'ապահովուի եւ կ'իրագործուի միայն այն ժամանակ, երբ այդ երկրին բաղկացուցիչ ազգերը ազատօրէն կը վարեն իրենց կրթական, բարեգործական հաստատութիւնները՝ կուլտուրական ներքին ինքնավարութեան սկզբունքներով,

2) նկատելով որ այն երկիրներում որտեղ կուլտուրական գործերը յանձնուած են համայնքներուն, գործը

աւելի լաւ հողի վրայ է դրուած, ոչ թէ սեղմել կ'առաջարկենք համայնքներուն ներկայ իրաւասութիւնները, այլ աւելի ընդլայնել եւ տարածել այն վայրերում որ անոնք գոյութիւն չունին կամ սաղմնային վիճակի մէջ են:

3) Դաշնակցութիւնը եւ հայ Ազգ. խնդիրներ.—

Ա) Մեր մասնակցութեան եղանակը ազգային մշակութային հաստատութիւններու մէջ:— Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն պիտի չմասնակցի ազգային կուլտուրական եւ հասարակական հիմնարկութիւններու մէջ, իսկ կուսակցութեան անդամները, իբրեւ անհատ քաղաքացիներ կը մասնակցին այդ հիմնարկութիւններուն առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն:

Բ.— Թուրքիոյ հայոց ազգային Սահմանադրութեան վերաքննութիւնը —

ա) հայկական բոլոր գաւառները, ինչպէս եւ Պոլիսը ազգաբնակչութեան որոշ թուի համեմատութեամբ կու տայ Ազգ. կեդր. երեսփոխանական ժողովին՝ հաւասար թուով պատգամաւորներ: Պոլիսը որպէս ուրոյն շրջան ունենալու է ուրոյն գաւառական երեսփոխանական ժողովը:

բ) Վերացնել ընտրական ցենզը: ընտրողների մինիմում 25 տարին իջեցնել 21ի:

գ) Հոգեւորականութիւնը որպէս առանձին դասակարգ պիտի չմասնակցի ժողովներուն: Իւրաքանչիւր հոգեւորական որպէս պարզ քաղաքացի ընտրելի է միաժամանակ եւ կ'ընտրուին ժողովրդական քուէով:

դ) Սահմանել օրինական յատուկ տրամադրութիւն մը Ազգ. Սահմանադրութեան մէջ, որով ազգային իշխանութիւնները հնարաւորութիւն ունենան միջոցներ ձեռք բերելու Ազգ. կրթական ու կուլտուրական խնդիրներու զարգացման համար եւ իրաւասութիւն՝ որոշումները գործադրելու:

ե) Ազգ. Սահմ. հապէս ազգային դարձնելու համար միջոցներ մտածել լուսաւորչական համայնքի հետ կապելու այլադաւան հայերը:

զ) Ազգ. երեսփ. կեդր. ժողովը իր զբաղումներու համար կ'ունենայ իր յատուկ ժամանակաշրջանը: զբաղումներու ժամանակամիջոցի համար, ընդունիլ պատգամաւորները վարձատրելու սկզբունքը:

Գ) Շարունակուող պայքարը համարել միակ փրկարար ուղին ազգային հիմնարկութիւնները հակաժողովրդական ու մութ տարրերէ մաքրելու համար: յայտնել ուրախութիւն ազատական տարրերու կազմակերպուելուն եւ անոնց հետ միացած գործակցութիւնը համարել լոկ մոմենտի հրամայողական պահանջ: գաւառներու մէջ ալ աշխատիլ յարաբերութիւն մշակել ազատական տարրերուն հետ ու համերաշխ գործունէութիւն ունենալ անոնց հետ եթէ կան:

7.- Յիշատակուած Ոայ. ժողովի մասին տես էջ 162-174:

Դ. ՆԻՍ

4.— Օսմ. Խորհրդարանի դաշնակցական երեսփոխաններ.— Ընտրել Բիւրոներու, Կ. Կոմիտէներու յանձնախմբեր, որոնք մարմիններու հետ փոխադարձ համաձայնութեամբ կ'որոշեն ընտրելիները. թեկնածուները պէտք է ծանօթ լինին Դաշնակցութեան ծրագրին ու պատմութեան: Ընտրութիւնները յաջողցնելու համար կազմել ընտրական ֆոնտ, որուն պարտաւոր են մեր ընտրած պատգամաւորները մասնակցիլ իրենց պատգամաւորական եկամուտի 20% տոկոսով:

Ռուսիա.— Բոլոր մարմինները եւ մանաւանդ Կովկասի հարեւան մարմինները պարտական են բարոյապէս ու նիւթապէս օգնել:

գ) Դաշնակցութիւնը եւ հայ ազգ. հաստատութիւնները. տես Թուրքիոյ բաժինը:

ե) Կուսակցական մամուլը Կովկասի մէջ.— Նկատելով որ Կովկասի մէջ դաշնակցական ուղղութեամբ ո՛րեք թերթ չկայ եւ չի ալ կրնար ըլլալ որտեղ կարելի լինէր արտայայտուիլ, կ'առաջարկենք հիմնել գաղտնի թերթ մեր խորին ցաւը յայտնել այն ալլասերման առթիւ որ ներկայիս մէջ կը տիրէ Կովկասի մեր երբեմնի յեղափոխականներու եւ համակիրներու մէջ:

զ) Դաշնակցութիւնը եւ Դաշնակցութեան գործը անուան տակ ծանօթ դատավարութիւնը եւ հարածանքը հայ ժողովուրդի դէմ.— Շարունակել նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը:

Ե. ՆԻՍ

Նախորդ ատենագրութեանց ընթերցում եւ վաւերացում:

Զ. ՆԻՍ

Պարսկաստան.— Պարսկաստանի հայաբնակ վայրերու ապահովութեան խնդիր. հայաբնակ վայրերու ինքնապաշտպանութիւնը.— Կազմակերպութիւնը կը վերցընէ իր վրայ եւ տեղական զանազան միջոցներով կը ստեղծէ զինական ֆոնտ, որով կը զինէ ամբողջ ժողովուրդը: Պարտադրել Թուրքիայի մարմինները որ առանձին ուշադրութիւն դարձնեն նիւթապէս եւ բարոյապէս օգնելու Պարսկաստանին:

Դ.— Կազմակերպական.—

ա) Օսմանեան կառավարութեան վաւերացուած ծրագրի վերաքննութիւն.— Նկատելով որ ըլլալիքը ձեւակաւութեան գերծ պիտի չլինի, կ'առաջարկենք եղածը իսկութեամբ պահել: բ) Հիմնական կանոնագրի վերաքննումը եւ վաւերացումը — կատարել Ընդհ. ժողովի մէջ: Ի. Հ. Յ. Դ. Խորհրդի ընտրութիւնը Ընդհ. ժողովի մէջ անյարմար նկատելով, կ'առաջարկենք Խորհուր-

դը կազմել նախկին ձեւով: Եւ Բիւրոյական շրջաններու նոր բաժանում.— Եղածները պահելով պարտադրել Արեւելեան Բիւրոյին կապուած մարմիններուն, որ իրենց դրամական հաշիւները ուղարկեն Արեւելեան Բիւրոյին, կապ պահելով միւս Բիւրոներուն հետ ալ: Եւ Պատասխանատու մարմիններու վերացում.— պատասխանատու մարմիններու վերահաստատման կարիք չկայ: Եւ Մնայուն հաշուեքննիչ մարմնի հաստատում.— մնայուն հաշուեքննիչ մարմնի հաստատութիւնը ընդունելով հանդերձ, ներկայ պարագաներու մէջ նիւթական տեսակէտով անընդունելի կը գտնէ: Եւ Թուրքիոյ մարմիններու համար հայ-թուրքերէն կնիքներու գործածութեան խնդիր.— կլիւպներ կ'ունենան հայ-թուրքերէն կնիքներ իսկ Կ. Կոմիտէներ եւ Բիւրոներ պաշտօնական յարաբերութեանց առթիւ կ'ունենան հայ-թուրքերէն բլանկներ: գ) Դրօշակ-ի հրատարակութեան վայրը.— հրատարակութիւնը պահել [Ժընեւ]: դ) Ժընեւի տան գնում.— Ամերիկայի ռազմական ժողովի առաջարկը ընդունելով կ'առաջարկենք որ բոլոր մարմիններ ալ մասնակցին: ե) Փոխադարձ օգնութեան արկղի մը հաստատումը դաշնակցականներու համար: Այդպիսի առաջարկ նպատակայարմար կը գտնենք:

Ե.— Բանաւոր եւ գրաւոր փրօփականտ.—

1.- Պաշտօնաթերթ Դրօշակ.— Կը ցանկանք որ Դրօշակի մէջ տեսական հարցերու բաժին մը լինի:

2.- Կիսաշաշտօնական թերթերը.— Ազատամարտ.— Անոր բռնած յեղափոխական եւ մերկացնող[?] տակտիկը համարել մեր ընդհանուր ցանկութեան արտայայտութիւն, թելադրելով որ միշտ մնայ հարկաւոր բարձրութեան վրայ, չզբաղուիլ այս ու այն խնդիրներով, զարգացնել զիտա-գեղարուեստական մասը եւ տեղ տալ հասարակական-գիտական հարցերու, որոնք սնունդ կու տան գաւառական երիտասարդութեան.— Յառաջ.— Աշխատանք.— գոհունակութիւն յայտնել մեր այս գաւառական թերթերու ցոյց տուած ջանքերուն, գոհողութեանց եւ համեստ [?] գործունէութեանց համար.— Հայքընէք.— Ուրախութիւն յայտնել վերջերս ունեցած հարուստ բովանդակութեան եւ երիտասարդ ուժերը աշխատակցելու հրաւիրած ըլլալուն պամար. կը ցանկանք որ հետո մնայ ռեկլամային գործելակերպէն, մասնաւորապէս կուսակցական ընկերներու եւ ձեռնարկներու վերաբերմամբ: Նոյնպէս ուրախութիւն յայտնել նաեւ Առաւօտին. յանձնարարել մարմիններուն եւ ընկերներուն որ աշխատին մեծ քանակութեամբ տարածել թերթը. առանձնապէս գաւառական թերթերուն մեծ հոգ տանիլ. մէկ մէկ օրինակ մարմինները ստանալու են բոլոր դաշնակցական թերթերը՝ ծանօթանալու համար իւրաքանչիւր վայրի կուսակցական գործունէութեանց: 3.- Հրատարակութիւններ.— Լայն տեղ տալ հրատարակութեանց, մասնաւորապէս Ազատութիւն մատենադարանին: 1.- Դասընթացքի մը հաստատում պրոպա-

կանդիստներու համար.— Ընդունելով այս դասընթացքի անհրաժեշտութիւնը, կ'առաջարկենք որ Ընդհ. ժողովը գործադրութեան միջոցներ գտնէ: 2.- Գործիչ եւ պրոպականդիստ ընկերներու բաշխում.— Նկատելով մեր ներկայ իրականութիւնը՝ անհրաժեշտ կը գտնենք ազատ ընկերներու գոյութիւն ունենալը: 1.- Բանաւոր եւ գրաւոր փրօփականտ օտարախօս հայերու մէջ.— Կ'առաջարկենք պատշաճ մարմիններու դիւրամատչելի լեզուով բորջիւրներ հրատարակել, այն պարզ պատճառաւ որ այդպիսի բորջիւրներ իրենց նիւթերով կարող պիտի ըլլան մեծապէս նպաստել մեր դրացի քիւրտ տարրի զարգացմանը, որը զրկուած է առաջընթացական նպաստաւոր պայմաններէ. խորապէս կարիք ունի ներկայ քաղաքական, տնտեսական պայմանները շօշափող ու պարզաբանող հրատարակութեանց:

Ընդհանուր ժողովի գումարման վայր.— Կը ցանկանք որ Ընդհ. ժողովը լինի Թուրքիայէն դուրս՝ Թուրքիոյ արդի կառավարութեան հանդէպ մեր անվստահութիւնը յայտնած լինելու նկատմամբ:

Զ. ՆԻՍ

Առաջարկներ մարմիններու կողմէ.— 1.- Երջ. մարմիններու յարաբերութիւն եւ Կ. Կոմիտէի հարց: 2.- Կ. Կոմիտէի վայրը եւ ընտրութիւնը: 3.- Կ. Կոմիտէի պիւտճէ. 4.- Ընդհ. ժողովի պատգամաւորի ընտրութիւն:

ա) Աւագանի Շրջ. մարմին.— Երջ. ժողովը նկատողութեան առնելով IV Երջ. ժողովի այն որոշումը, որով Աւագանի շրջանէն, Բերդը, Փառնակը եւ Վաշտը նկատ-

ած էին մեկուսի կոմիտէներ եւ յարաբերութիւն պահած էին Արեւմտ. Բիւրոյի հետ, այս որոշումը գտաւ հակառակ մեր հիմնական կանոնագրի ոգուն եւ որոշեց այդ սխալին վերջ տրուելու համար ձեռնարկել Կ. Կոմիտէի ընտրութեան՝ Աւագանի շրջ. համար, եւ Տրապիզոնը ընել Կ. Կոմիտէի վայր: Ժողովը ընտրութեան ձեռնարկեց եւ ընտրուեցան հետեւեալները:—

1. Վ. 2. Ք. 3. Գ. Ծ. 4. Մ. 5. Մ. Բ. 6. Մ. — ներկայ մարմինը կը պաշտօնավարէ մէկ տարի եւ առնուազն մինչեւ յաջորդ Երջ. ժողովը: Ընտրուածներէն եթէ հեռացողներ լինին, մարմինը իրաւունք ունի իր կողմէ այլ ընկերներ հրաւիրել: Կ. Կոմիտէի պիւտճէ.— Որոշուեցաւ պահել նախորդ Երջ. ժողովի պիւտճէն, բաշխումը կատարելով ըստ կանոնագրի: 4. Ընդհ. ժողովի պատգ. ընտրութիւն.— Ընտրուեցան ընկ. Ս. Ե[սայեան] իսկ երբ անձնական պատճառներով չկարողանայ երթալ, Ընդհ. ժողովին կը մասնակցի Յ. Տ[էրտէրեան] իբր պատգամաւոր: Պատգամաւորի ծախքը կը հայթայթեն շրջ. մարմինները բացառիկ միջոցներ ստեղծելով: 3½ ոսկի Կիրասոն, 3½ Շ[ապին] Գարահիսար, 3½ Օրտու, 1½ Թրիպոլի, 5½ Մովսի, 1½ Գետափ, 1 ոսկի Կիւմիւշխանէ:

Ը. ՆԻՍ

1.- Ընթերցում եւ վաւերացում ատենագրութեանց: 2.- Հաշուեքննիչ մարմնոյ գեկուցում: 3.- Ս[իւնի]ի դատական խնդիր:

Կարդացուեցան եւ ատենագրութիւնները եւ փոքրիկ սրբագրութեամբ վաւերացուեցան:

8.- «Յառաջ»ը Կարճոյ, «Աշխատանք»ը՝ Վանի, «Հայրենիք»ը՝ Ամերիկայի, իսկ «Առաւօտ»ը՝ Պարսկաստանի դաշնակցական կիսապաշտօնական թերթերն են:

9.- Արձանագրութեան խնդրատիպ օրինակին վերջին երեք էջերը հազիւ ընթերցելի եւ վերձանելի են: Յստակ է միայն որ մանրամասն քննութեան կ'ենթարկուի Գրիգոր Սիւնիի վերաբերող դատական հարց մը, որուն իբրեւ եզրակացութիւն կ'ըսուի.—

«Այս բոլորէն յետոյ Սիւնիի մասին տրուած վճիռը անբարեկամ գտնելով, որոշեց ի սպառ կազմէն հեռացնել մինչեւ որ բոլորովին ապահովուինք իր ընթացքը ուղղած ըլլալուն»:

Դժուար ընթերցելի էջերն մէկը (10) յատկացուած է Աւագան-Տրապիզոնի մարմիններու կիսամեայ (1911 թ. Յունուար — Յուլիս) հաշուեկշիռին, իսկ փոքրատառ, տեղ-տեղ մեկանը տարածուած ըլլալուն անվերձանելի թուանշաններով խճողուած: Բարեբախտաբար էջին երկրորդ մասին տրուած է ընդհանուր ելեւմուտքին հետեւեալ ամփոփումը:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԾՈՎԱՓԻ ՇՐՋ. ՄԱՐՄՆԻ

Մուտք	Ելք
Նախորդ հաշուէն մնացած	Ի հաշիւ Դրօշակի Բիւրոյին
Մարմիններէն եկած դրամ	Ի հաշիւ գրքերու Բիւրոյին
Դրօշակի բաժնեգին Բիւրոյին դրկելու	Տեղական ծախսեր
Վաճառուած հրատարակութիւններէ	Բանտարկեալներու
[Կովկասի]քաղ. բանտարկեալներու	Չամագան մարմիններու
Չամագան մարմիններու	Փոխառութիւն վճարուած
	Պատրաստի գումար
[դրուշ]	
22	91 3/4
5814 3/4	93 1/2
91 1/4	939...
93 1/2	7650
7650	972
972	702
14643 1/2	4194 3/4
	14643 1/2

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՉԱՆՆԵՐ

ՉԼՈՒՆ IX

ԽԱՐԲԵՐԴ – ԼԵՌՆԱՍԱՐԻ Կ. ԿՈՍԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Լեռնասարի Կեդր. Կոմիտեի Կոմիտեի գործունեությունը կը տարածուի Խարբերդի մահանգին վրայ, ուր կը գործէին շուրջ 20 կազմակերպական միատրուներ (կոմիտեի եւ ենթակոմիտեի) իբրեւ գլխաւոր կեդրոն ունենալով Խարբերդն ու Մալաթիան: Կուսակցական միւս կարեւոր շրջաններէն յիշատակելի են՝ Մեզրէն, Արաբկիրը, Բալուս, Ակնը, Չարսանճաքը, Չմշկածագը եւայլն:

Ծղրածրարին մէջ նկատի առնուած են 1910 եւ 1911 տարիներու գումարուած Շրջ. ժողովներու արձանագրութիւնները, Կեդր. Կոմիտեի մէկ ամիսի տեղեկագիրը՝ ուղղուած Չ. Ընդհ. ժողովին, ապա Մեքաւտացի Մուրատէն նամակ մը:

Փաստաբարութեան մէջ յիշատակուած յատուկ անունները, անձնանուն ըլլան անոնք թէ տեղանուն, ծածկանունով են եւ որոշ չափով դժուար իմանալի: Ստորեւ տեղանուններէն անոնք՝ որոնք յայտնի են մեզի-

- | | |
|---------------------------|-----------------------|
| Լեռնասար – Խարբերդի շրջան | Անուշաւան – Հիւսէյնիկ |
| Բերքառատ – Մալաթիա | Թաթառ – Ակն |
| Արեւալուսին – Մեզրէ | Գահաւանդ – Չարսանճաք |
| Բլրակ – Արաբկիր | Բազէ – Չմշկածագ |
| Մեքաւտացի – Բալուս | |

Փաստ. 825-16

Ա 1.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԵՌՆԱՍԱՐԻ Բ. ՇՐՉ. ԺՈՂՈՎ

- | | | |
|-----------------------------|-------------------|---|
| Ներկայ պատգամաւորներ | | Խորհրդակցական ձայնով Նիրվանա, Ատրուսի, Պարոյր, Յոլակ, Զարեհ եւ Զախու, Պետրովիչ[?]: |
| 1. Կ. Կոմիտէ | – Ատրուշան | |
| 2. Բերքառատ | – Ժիրայր, Գուրգէն | |
| 3. Մեքաւտացի | – Բացակայ | |
| 4. Արեւալուսին | – Խորէն, Արտաւազդ | |
| 5. Բլրակ | – Արզամ, Սմբատ | |
| 6. Զիֆոն | – Բացակայ | |
| 7. Թաթառ | – > | |
| 8. Գահաւանդ | – Մըհէ | |
| 9. Բերդորդի | – Ռոմանով | |
| 10. Բուրաստան | – Բացակայ | |
| 11. Որսորդ | – Արամ | |
| 12. Սրբավայր | – Միխիթար | |
| 13. Միածան | – Զայնէ դադրած | |
| 14. Տաճար | – Մոզպետ | |
| 15. Հայկեան | – Արա | |
| 16. Դաշտավայր | – Զօլախ | |
| 17. Բազէ | – Բացակայ | |
| 18. Եփրատ | – Զարմայր | |
| 19. Անուշաւան | – Սուր | |
| 20. Յաղթաբերդ | – Բացակայ | |

- Օրակարգ**
- Դիւանի ընտրութիւն
 - Պատգամաւորներու վաւերացում
 - Տեղեկագրերու ընթերցում
 - Զիֆոնի հարց
 - Գլխակի >
 - Պրոպագանդի հարց
 - Սակի հարց
 - Կարմիր-խաչի հարց
 - Պատանեկան խումբերու հարց
 - Կուսակցական խմբակներու հարց
 - Կ. Կ. վայրի ընտրութիւն
 - Դատական յանձնախումբի հարց
 - Կ. Կոմիտէի անդամոց ընտրութիւն
 - Ռազմական ժողովի պատգամաւոր
 - Ինքնապաշտպանութեան հարց
 - Կ. Կոմիտէի հաշուետուութիւն

- Որոշումներ**
- Գաղտնի քուէարկութեամբ եւ քուէից բացարձակ մեծամասնութեամբ ընտրուեցան Ա. Ատենապետ՝ Արզամ, Բ. Ատենապետ՝ Գուրգէն, Ա. Ատենադպիր՝ Ռոմանով եւ Բ. Ատենադպիր՝ Ժիրայր:
 - Քննուելի վերջ օրինակութիւնը հաստատուեցաւ եւ ձայնատուութեան իրաւունքները ճշդուեցան հետեւեալ կերպով. 1. Լեռնասարի Կ. Կոմիտէի կողմէն մէկ ձայն, 2. Արեւալուսինի կողմէն՝ երկու ձայն, 3. Բերդորդի՝ մէկ ձայն, 4. Անուշաւան՝ մէկ, 5. Միածան՝ մերժուած, 6. Սրբավայր՝ մէկ, 7. Հայկեան՝ մէկ, 8. Դաշտավայր՝ մէկ, 9. Տաճար՝ մէկ, 10. Բլրակ՝ երկու, 11. Բերքառատ՝ երկու, 12. Բուրաստան՝ մերժուած, 13. Զիֆոն՝ բացակայ, 14. Եփրատ՝ մէկ ձայն, 15. Մեքաւտացի՝ բացակայ, 16. Թաթառ՝ բացակայ, 17. Գահաւանդ՝ մէկ, 18. Որսորդ՝ մէկ, 19. Բազէ՝ բացակայ, 20. Յաղթաբերդ՝ բացակայ:
 - Թէ Կ. Կոմիտէի եւ Թէ ուրիշ պատգամաւորներու տեղեկագրերն կարդացուելով, այս մասին հարկ եղած բացատրութիւններն լսուեցան:
 - Զիֆոնի համար Կ. Կոմիտէն եւ մարմինները հարցապնդուելով Շրջ. ժողովի կողմէն՝ տրուած այլ եւ այլն պատճառները ընդունուեցան.
 - 3. -----
 - 5. -----
 - Զիֆոնի համար հետեւեալ որոշումները տրուեցան միաձայնութեամբ.

1. Բլրակ	42 ոսկի
2. Բերքառատ	40 >
3. Արեւալուսին	34 >
4. Մեքաւտացի	20 >
5. Անուշաւան	12 >
6. Յաղթաբերդ	12 >
7. Բուրաստան	10 >
8. Գահաւանդ	10 >
9. Տաճար	10 >
10. Բազէ	10 >
11. Թաթառ	10 >
12. Միածան	7 >
13. Որսորդ	6 >
14. Սրբավայր	6 >
15. Դաշտավայր	6 >

Որոշուեցաւ նաեւ 15 օրէն չվճարող եւ կամ հեռի գտնուող մարմիններու կողմէն վստահեցուցիչ պատասխան չառնուած մարմիններու հետ Կ. Կոմիտէն պիտի պարտաւորի 5 ամիս իր յարաբերութիւնը խզել եւ ուրիշ քոյր մարմիններու շրջաբերականաւ հաղորդել, եւ պատժուող մարմինները պիտի շարունակեն սովորականին պէս ամսավճար տալ:

5.- Գլխակի հարց. —
Արեւմտ. Բիւրոյի Թուրքիոյ Հատուածին N2 Յունար 25 թուակիր շրջաբերականին համաձայն Գլխակի խնդիրը հարց մը ըլլալէ դադարեցաւ, բայց պաշտօնական յարաբերութիւնները՝ տեղական բարձրագոյն մարմինները որոշ անձի մը եւ ի պահանջել հարկին վարձուած վայրի մը միջոցաւ կրնայ իրագործել:

6.- Պրոպագանդի հարց. —
Որոշուեցաւ միաձայն քուէարկութեամբ Լեռնասարի, Բերքառատի, Բլրակի եւ Մեքաւտացի շրջաններուն համար վեց պրոպագանդիստ ունենալ -----:

Բոլոր ծախքերը (պրոպագանդիստի վերաբերող) պրոպագանդիստներուն վրայ ըլլալով, (180) հարիւր ութսուն լիւրա յատկացնել որոշուեցաւ վեց պրոպագանդիստի համար: Պրոպագանդիստներու յարմարագոյնները գտնել եւ անոնց ամսավճարներու որոշումը Կ. Կոմիտէի վերապահուեցաւ: Կ. Կոմիտէն կ'երաշխաւորէ իննսուն ոսկին, իսկ մնացեալը մարմինները պիտի հոգան:

7.- Սակի հարց. —
Որոշուեցաւ սակի բարձրացումը՝ իբր պահանջներ կայացնել յառաջիկայ Ռազմական ժողովին:

8.- Կարմիր-խաչի հարց. —
1. Նկատելով որ շրջանիս կազմակերպութեանց Կարմիր-խաչի կազմերը անորոշութեան մը մէջ են՝ որոշուեցաւ առանձին ծրագրի մը կազմութիւնը հարց ընել ու պահանջել յառաջիկայ Ռազմական ժողովին
2. Կարմիր-խաչի պրոպագանդի գործն ալ նկատի ունենալով՝ որոշուեցաւ Կարմիր-խաչի հասոյթին % 10ը բարդել Դաշնակցութեան պրոպագանդայի ընդհանուր պիւտճէին վրայ:
3. Նկատելով որ շատ տեղեր իրարու հետ շփոթած են Կարմիր-խաչի եւ Դաշնակցութեան քաղ. կանանց կազմի տարբերութիւնները՝ որոշուեցաւ դիմել Ռազմականի ճշդելու անոնց իրաւասութեան եւ պարտականութեան սահմանը:

4. Կարմիր-խաչի կազմերը տեղական դաշնակց. մարմիններու հետ խորհրդակցաբար կրնան շահագործել իրենց դրամագլուխը:
Մանօթ. — Նկատելով որ կանանց Կարմիր-խաչերը զանազան տեղերու մէջ իրենց դրամագլուխները ձեռագործներու յատկացուցած են՝ ատոնց սպառման հարցը՝ մանաւանդ արտասահմանի մէջ յաջողցնելու համար՝ որոշուեցաւ, պարտք դնել նոր Կ. Կոմիտէի վրայ որ կարեւոր բանակցութիւններ կատարէ բարձրագոյն եւ քոյր մարմիններու միջոցաւ:

9.- Պատանեկան խումբերու հարց.—

Նկատելով որ պատանեկան խումբերու կազմութիւնը սկզբունքով ընդունուած է Փ[ոքր] Հայքի Ռայոնի ժողովի Դ. կանոնի համաձայն, եւ հետեւաբար ընդունուած Երջ. ժողովէս, բայց նկատելով որ փորձը ցոյց տուած է թէ՛ լաւ ըմբռնուած չէ անոնց կազմակերպութեան տրուելիք ուղղութիւնը՝ սխալ եւ Դաշնակց. ոչ-պատուաբեր անտեղութիւններ յառաջացուցած են, Երջ. ժողովս կ'որոշէ.

1. Պատանեկան խումբերը դաշնակց. վերհսկողութեամբ եւ նախաձեռնութեամբ ոչ-կուսակցական հողի վրայ կազմել առանց անդամավճարի:

Ծանօթ.- Պատանեկան խումբի կազմութիւնը՝ տեղական յարմարութիւնը նկատի ունենալով՝ տեղական մարմիններու իրաւասութեան ձգուած է:

2. Բացարձակապէս 14-18 տարեկան տղաքները միայն ընդունիլ այդ շարքերուն մէջ:

3. Որոշ կանոնադրով մը անոնց ազգային զգացումը արծարծել եւ միայն այդ ուղղութեամբ դաստիարակել:

Ծանօթ.- Կազմակերպական գաղտնիքներ հաղորդել անոնց ի սպառ արգելուած է:

4. Պատանեկան խումբերու ներկայացուցիչները տեղական մարմնոյս յայտնի անդամէն զատ ոչ ոք ճանչնալու են:

10.- Կուսակցային համերաշխութեան հարց.—

Նկատելով որ ամէն վայր տարբեր պայմաններ ունի, տեղական հայ կուսակցութիւններու հետ համերաշխութիւնը իրազործելու [համար], ժողովս որոշեց համերաշխութեան իրաւունքը տեղական մարմիններուն թողուլ, պայմանաւ որ կազմակերպական գործին ինչ ինչ գաղտնիքներ տալէ զգուշանան: Դժուարութեան պարագային կրնան դիմել Կ. Կոմիտէի օժանդակութեանը:

11. Կ. Կոմիտէի վայրի ընտրութիւնը.—

Ժողովս միաձայնութեամբ որոշեց Լեռնասարի Կ. Կոմիտէին իր նախկին վայրին մէջ պահել, նկատելով որ շատ մը տեսակէտներով աւելի յարմար է:

Ծանօթ.- Բերքառատի, Բլրակի թղթակցութիւնները Կ. Կոմիտէի միջոցաւ եղած ատեն շատ մը դժուարութիւններ պատահելուն համար՝ Երջ. ժողովս պարտք դրաւ Կ. Կոմիտէին վրայ, որ Արեւմտ. Բիւրոյին հաղորդէ թէ՛ յետ այսու քաղաքական եւ ընդհ. կազմակերպական գոյն ունեցող խնդիրներու համար պէտք է ուղղակի բանակցել Բերքառատի եւ Բլրակի հետ, իսկ կազմակերպական գաղտնիքներու մասին Կ. Կոմիտէի միջոցաւ:

12. Դատական յանձնախումբի տեղեկագիրը.—

Երջ. ժողովոյ ներկայացած կարգ մը դատերու վերաքննութիւնը կատարելու համար՝ ժողովը երեք ընկերներէ՝ Ժիրայր, Մոզպետ եւ Սուր՝ դատական քննիչ յանձնախումբ մը կազմեց, որոնց տուած տեղեկագրին վրայ յետ խորհրդակցութեան որոշեց

1. Կ. Կէմիտէանի նկատմամբ հաստատել Կ. Կոմիտէի տուած վեցամսեայ վճիռը (1911 Յունուար 1էն սկսեալ):

2. Տ. Պաղտիկեանի գործած յայտնի գեղծարարութեանը համար պատիժը սաստկացնել — պատիժը պիտի ըլլայ՝ Կ. Կ. ի տուած վճիռի թուականէն սկսեալ վեց ամիս վտարուած մնալ կազմակերպութենէն, եւ, անկէ վերջն ալ տարի մը պատասխանատու գործ չյանձնել՝ Թուրքիոյ երկու պարագան ալ իմացնել ըլլոր խումբերուն եւ քոյր մարմիններուն:

13.- Կ. Կոմիտէի անդամոց ընտրութիւնը.—

Երջանային ժողովս ձայնի 2/3ի մեծամասնութեամբ Լեռնասարի Կ. Կոմիտէի անդամ ընտրեց Նիրվանա, Ատրունի, Պարոյր, Յոլակ եւ Մոզպետ — իսկ պահեստի անդամ ընտրուեցան X եւ Մըհէ:

14.- Ռայոնական ժողովոյ պատգամաւորները.—

Միաձայն հաւանութեամբ ընտրուեցան ընկերք՝ Նիրվանա եւ Պարոյր յանձնելով անոնց Ռայ. ժողովի օրակարգը եւ հրահանգները:

15.- Ինքնապաշտպանութեան հարց.—

- 1. -----
- 2. -----

16.- Կ. Կոմիտէի հաշուետուութիւնը.—

Երջ. ժողովը Կ. Կոմիտէի եւ Ջ[իֆոն]ի հաշուեքննիչ քննելու համար կազմեց երեք ընկերներէ մի հաշուեքննիչ յանձնախումբ, որոյ անդամներն են Արզամ, Գուրգէն եւ Արտաւազդ, որոնք մանրամասնօրէն քննել վերջ ներկայացուցին ժողովոյս — տեսնուեցաւ թէ՛ գոյացած է 16891 դր. անդամավճարներէ եւ 14531 դր. նուէրներէ եւ ելք ունեցած է -----, որուն մանրամասնութիւնը վերապահուած է Երջանային ժողովին եւ աւելի բարձր մարմիններու:

Այս հաշուոյն հետ քննուած է նաեւ Ջ. ի գործառնութիւնները եւ կարեւորները նկատի առնուած են:

**Հ. Յ. Գ. ԼԵՌՆԱՍԱՐԻ
Բ. ՇՐՋ. ԺՈՂՈՎ**

1910 Մարտ 4
Լեռնասար

Փաստ. 826-14

Ա 2.- Հ. Յ. Գ. ԼԵՌՆԱՍԱՐԻ ԳՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Գումարուած 1911 ԱՊՐԻԼ 8/21-16/29

Պատգամաւորներ

- 1.- Կ. Կոմիտէ — Արծրունի
- 2.- Բլրակ կոմիտէ — Սուրէն եւ Ժիրայր
- 3.- Մեսրոպաւան կոմիտէ — Վահան եւ Կարօ
- 4.- Գահաւանդ > — Մազնիս եւ Տիգ.
- 5.- Արեւալուսին > — Ջանգակ եւ Գալբերունի
- 6.- Բերքառատ > — Բացակայ
- 7.- Անուշաւան եմթակոմիտէ — Վարեատ
- 8.- Բուրաստան > — Ջրահ
- 9.- Սրբավայր > — Միսիթար
- 10.- Դաշտավայր > — Ատրշէն
- 11.- Միածան > — Երևուտ
- 12.- Բագէ > — Արզամ
- 13.- Նաւրուզ > — Մթերնիկ
- 14.- Հայկեան > — Բացակայ
- 15.- Մաստառ > — >
- 16.- Եփրատ > — >
- 17.- Թաթառ > — Անկազմակերպ
- 18.- Բերդորդի > — >
- 19.- Փոքր Հայք > — Կազմալոյծ
- 20.- Գործիչ ընկերներ Աստիկ[եան], Ջալլմ եւ Խորէն

Խորհրդակցական ձայնով ներկայ էին Կ. Կոմիտէի ընկերներ եւ ուրիշ հրաւիրեալներ:

Օրակարգի հարցեր

- 1.- Դիւանի ընտրութիւն
- 2.- Տեղեկագրերու ընթերցում
- 3.- Կուսակցային համերաշխութեանց հարց
- 4.- Ռայոնական ժողովի հարց
- 5.- Քլլպի եւ ներկայացուցիչի հարց
- 6.- Սակի հարց
- 7.- Փրոփականտի հարց
- 8.- Պատանեկան խումբերու հարց
- 9.- Դաշնակցական գրադարաններու հարց
- 10.- Մամուլի հարց
- 11.- Հողային հարց
- 12.- Ընկերային իրերօգնութեան հարց
- 13.- Ազգ. Առաջնորդարաններուն հանդէպ վարուելակերպի հարց
- 14.- Կարմիր խաչի հարց

- 15.- Ուսուցչական եւ արհեստակցական միութեան հարց
- 16.- Տեղական իթթիհատներու հետ բռնելիք ուղղութեան հարց
- 17.- Կոմիտէներու եւ եմթակոմիտէներու գործունէութեանց հարց
- 18.- Ջիֆոնի հարց
- 19.- Միջարանուանական յարաբերութեան հարց
- 20.- Երջանային ժողովի պատգամաւոր ընտրելու հարց
- 21.- Բացակայ մարմիններու պարտազանցութեան հարց
- 22.- Մեսրոպաւանի անկախութեան հարց
- 23.- Փաստաբանի հարց
- 24.- Մաքրագործման հարց
- 25.- Դատական եւ հաշուական յանձնախումբերու հարց
- 26.- Կ. Կոմիտէի վայրի ընտրութիւնը
- 27.- > > անդամոց ընտրութիւնը

Որոշումներ

1. Ձեռամբարձ եւ քուէներու բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան ատենապետ՝ նախ Մազնիս եւ ապա Վահան ու ատենադպիր Ջանգակ ընկերները:

2. Մարմիններէն (ոմանք չունէին) բերուած տեղեկագրերու ընթերցումը տեղի ունեցաւ լուրջ եւ ուշադիր ունկնդրութեամբ մը: Առաջարկուած հարցերու, կարեւոր եւ ուշադրաւ նկատուածները նշանակուելով ժողովի ընթացքին մէջ նկատի առնուեցան, իսկ ամէնէն վերջ կարողացուեցաւ Կ. Կոմիտէին տեղեկագիրը որուն իւրաքանչիւր հատուածն՝ առանձինն ծեծուեցաւ ու վիճաբանուեցաւ:

3. Որոշուեցաւ քաղաքական այլեւայլ կուսակցութիւններու հետ համերաշխական գետիններ ստեղծել Հ. Յ. Գ. ԵՐԸ Ընդհ. Ժողովի տրամադրութեան համաձայն միջավայրային պայմաններն ու պարագաները նկատի առնելով:

4. Որոշուեցաւ թելադրել Կ. Կոմիտէին, որպէսզի դիմէ Փոքր-Հայքի Կ. Կոմիտէներուն գումարելու Ռայոնական ժողով կարելի եղածին չափ շուտ:

Եթէ գումարումը կարելի ըլլայ, Կ. Կոմիտէն պարտաւոր է շրջաբերականով մը արտակարգ Երջ. ժողով

գումարել ուր պիտի որոշուին Ռայոնականին ղրկուելիք հարցերը եւ պիտի ընտրուի պատգամաւոր:

Մանօթ.- Այդ արտակարգ Շրջ. ժողովէն բացակայող մարմինները իրաւունք ունին իրենց ձայնը այդ ժողովին յանձնելու:

5. Որոշուեցաւ Լեւոնասարի այժմի կուսակալանիստ քաղաքին մէջ «Լեւոնասարի Ակումբ» անուն հաստատութիւն մը ունենալ, որուն շինութեան համար Շրջ. ժողովը մարմիններուն վրայ հետեւեալ դրամական բաշխումը ըրաւ.

Արեւալուսին	25 ոսկի
Բերքառատ	10 ոսկի
Բլրակ	5 »
Մեսրոպաւան	5 »
Գահաւանդ	5 »
Անուշաւան	7 »
Սրբավայր	5 »
Բուրաստան	5 »
Բազէ	3 »
Դաշտավայր	3 »
Միածան	3 »
Մաստառ	1 »
Նաւրուզ	1 »
Հայկեան	1 »
Փոքր-հայք	1 »

Այս գումարէն դուրս հարկ եղածը հայթայթելու համար Շրջ. ժողովը ընտրեց ինը ընկերներէ (Շաւասպ, Զարեհ, Կաթակ, Վահան, Վազր, Քաջբերունի, Խորէն Պֆլուպիլ եւ Եփրատ) բաղկացած յանձնախումբ մը, որը Կ. Կոմիտէի ներկայացուցիչին հետ խորհրդակցաբար եւ յարմար նկատուած միջոցներով հանգանակութիւնն յառաջ տանելու է. ուր ալ փոխադրուի Կ. Կոմիտէն անոր տրամադրութեան տակ մնալու է Կեդր. Ակումբը:

Իսկ նախքան այս հաստատութեան շինութիւնը որոշուեցաւ վարձել առժամապէս քլրպավայր մը, որուն համար տրամադրելի ընել Կ. Կոմիտէի մատուկէն տասը օսմ. ոսկի. անկէ աւելին յարմար դասուած միջոցներով հայթայթելը պարտքն է Կ. Կոմիտէին:

9. Շրջ. ժողովը պարտք դրաւ նորընտիր Կ. Կոմիտէին վրայ որ կառավարութեան մօտ տալիք ներկայացուցիչի հարցը լուծէ յարմար սեպուած եղանակով ու բացառիկ ծախսերն ալ իր սնտուկէն տալու պայմանաւ: Իսկ ներկայացուցիչը տարեվճարով միայն, կարելի եղած պարագային արտաքին եկամուտներով կրնայ հայթայթել պիւտձէ առանց կազմակերպական դրամին դաշխելու:

8. Որոշուեցաւ Ա[րեւմտեան] Բ[իւրոյի] Թ[ուրքիոյ] հատուածին ղրկուելիք % 40ի սակը նոյն պահել եւ % 20 իջեցնելու առաջարկ դնել յառաջիկայ 8^ր Ընդհ. ժողովին. հետեւաբար մինչ ցնոր տնօրինութիւն կոմիտէներն %20 իսկ Կ. Կոմիտէի կապուած ենթակոմիտէները % 10 միայն վար դնելու են տեղական ծախքերու համար:

7. Որոշուեցաւ պարտադրել իւրաքանչիւր կոմիտէ իր շրջանին համար տեղական փրոփականտիսթ մը ճարելու անպատճառ եւ առանց սակին դաշխելու: Իսկ Կ. Կոմիտէն պարտադրուեցաւ ունենալ ինտելիգենտ եւ մարտիկ մէյ-մէյ գործիչ, շրջեցնելու իր ընդարձակ սահմանին մէջ՝ հսկելու եւ դաստիարակելու մասնաւորապէս տեղական գործիչները եւ ընդհանրապէս բոլոր շարքերը:

8. Որոշուեցաւ ընթացիկ ու հրամայական կարիքները նկատի առնելով պատանեկան խումբերը դնել կուսակցական հողի վրայ եւ Կ. Կոմիտէին մշակուած կանոնագրով մը պարտաւորեցնել մարմինները որ իրենց իրաւասութեան տակ ունենան լուրջ ղեկավար վարչութիւն մը, որը կարենայ դաշնակցական պատանիները առաջնորդելու ազնիւ ու շրջահայեաց տաքտիքով մը առանց անպատեհութիւններ յարուցանելու:

Պարտք դրուեցաւ Կ. Կոմիտէին վրայ որ թելադրանքներ տայ մասնաւորապէս Արեւալուսնի կոմիտէին, որը ձեռնամուխ չըլլայ Մեզրէի Ազգ. Կեդր. վարժարանին մէջ պատանեկան խումբեր կազմելու, պայմանաւ որ տարբեր կուսակցութիւններ ալ համանման ձեռնարկներ չընեն նոյն դպրոցին մէջ:

9. Որոշուեցաւ Կ. Կոմիտէական շրջաբերականներով պարտադրել մէն մի մարմին որ Հ.Յ.Դ. անունով իրեն յատուկ գրադարանն ունենայ, պատասխանատու ըլլալով Դ. Շրջ. ժողովին:

10. Որոշուեցաւ որ նորընտիր Կ. Կոմիտէն պարտք ստանձնէ յանձնարարել ստիպողաբար բոլոր մարմիններուն որ յարմար ու կարելի դատուած միջոցներով նախաձեռնարկը ըլլան Լեւոնասարի յատուկ տպարան մը ունենալու առանց կազմակերպական գանձին դաշխելու:

11. Որոշուեցաւ պարտադրել Կ. Կոմիտէն որ կարելիութեան սահմանին մէջ հետապնդէ այս հարցը հողագործ ու այս տեսակէտով անիրաւուած համայնքներու եւ անհատներու դատը ու շահը պաշտպանելու. եւ յաճախակի գրէ նաեւ Բիւրոյին, որը հարկ անհրաժեշտ դիմումներն ընէ ուր որ անկ է: Մարմինները պարտաւոր են իրենց վայրին մէջ պատահած հողային վէճերն տեղեկագրել Կ. Կոմիտէին:

12. Որոշուեցաւ նորընտիր Կ. Կոմիտէի բերնով ջերմապէս յանձնարարել բոլոր մարմիններուն ու անհատ ընկերներուն որ նուիրական պարտականութիւն համարեն իրարու աջակցիլ իբրեւ ընկերական ու բարոյական գոհողութիւն կարելի եղած ամէն միջոցներով:

13. Որոշուեցաւ պարտք դնել բոլոր մարմիններուն վրայ որ հոգ տանին ու ջանք չինայեն առաջնորդարանական ժողովներու մէջ գետեղել ընկերներ կամ վստահութիւն վայելող համակիրներ: Այս մասին մղուած փրոփականտը պաշտօնական գոյն ունենալու է:

14. Որոշուեցաւ շրջանիս Կարմիր-խաչերու անկերպարան ու գրեթէ քայքայուած վիճակը դարմանելու համար, պարտաւորել իւրաքանչիւր մարմին որ կարող ընկերներէ յանձնախումբ մը կազմէ, նոյն վայրի Կարմիր-խաչն առաջնորդող: Նոյնպէս որոշուեցաւ հարկադրել Կ. Կոմիտէն որ Կարմիր-խաչերու յատուկ փրոփականտիսթ մը ճարէ իրենց մասնակցած ծախքերով, եւ Կ. Կոմիտէն ալ պարտադրէ մարմիններն որ թելադրեն իւրաքանչիւր ընկերոջ որպէսզի իր տունէն անդամուհի մը տայ Կարմիր-խաչին եթէ երբեք պարագաները կը ներեն: Կարմիր-խաչի ընդհանուր կանոնագիր մը մշակելու համար Գ. Շրջ. ժողովը կազմեց Աստիկ, Վշնասպ, Քաջբերունի ընկերներէն բաղկացած յանձնախումբ մը, որ գայն պատրաստելէ վերջ Կ. Կոմիտէին վաւերացնելու է ամէնէն ուշը 15 օրէն:

15. Որոշուեցաւ պարտադրել նորընտիր Կ. Կոմիտէն որ նախ դաշնակցական հողի վրայ կազմէ ուսուցչական միութիւն մը ընկեր ուսուցիչներէ բաղկացած: Ապա հետզհետէ գայն ընդլայնելու է ոչ-ընկեր ուսուցիչներու համագործակցութեամբ, (բնականաբար ոչ կուսակցական անունին տակ) կարելի միջոցներով: Նոյնպէս Կ. Կոմիտէին վրայ պարտք դրուեցաւ պարբերական շրջաբերականներով հրահանգել մարմիններն որ միջոց ըլլան կազմելու արհեստակցական, բանուորական եւ գիւղացիական միութիւններ, պայմանաւ որ տեղական ու միջավայրական պարագաները միշտ նկատի առնուին:

16. Որոշուեցաւ նորընտիր Կ. Կոմիտէի միջոցով հրահանգել մարմիններն որ դարձեալ իրենց յարաբերութիւնը պահեն տեղական իթթիհատներու հետ օգտուելով միայն Հ.Յ.Դ. Ե. Ընդհանուր ժողովի որոշման տրամադրութենէն:

17. Նկատելով որ Կ. Կոմիտէի, Արեւալուսնի եւ Գահաւանդ կոմիտէներու դիւանատետրերը, անդորրագրերու արմատները եւ գոյքատետրերն ամբողջութեամբ բերուած էին, Գ^ր Շրջ. ժողովը գնահատութեան արժա-

նի գտաւ, իսկ պարսաւանքի ու քննադատութեան՝ մնացած մարմիններու պարտագանցութիւնը: Հետեւաբար որոշուեցաւ որ բոլոր մարմիններն անխտիր՝ կանոնագրի տրամադրութիւնները տառապէս յարգեն ասկէ ետեւ:

18. Որոշուեցաւ բոլոր մարմիններու ուսին վրայ իբր կենսական ու նուիրական պարտք ծանրացնել տալ որ որեւէ կարելի ջանք չինայեն ինքնապաշտպանութեան հարցը լուծելու տեղական պայմաններու տրամադրութեանց համաձայն եւ կարելիութեան սահմանին մէջ: Իսկ ասկէ առաջ ընդունուած զիֆոնական դրութիւնը թեր ու դէմ կարծիքներու եւ գաղափարներու փոխանակումէն յետոյ, քուէներու մեծաձայն առաւելութեամբ ջնջուեցաւ վերջնականապէս, ու պարտադրուեցաւ այս տեսակէտով ընդունուած դրամները վերադարձնել պատկան մարմիններուն:

19. Նկատի առնելով ազգ. ընդհանուր գործերու ընթացիկ աննախանձելի վիճակը, ուր համերաշխ գործակցութիւնը բացարձակապէս կը բացակայի, որոշուեցաւ պարտք դնել տալ շրջանի բոլոր մարմիններուն վրայ որ իրենց տեղական պայմաններու համաձայն ուժ տան միջարանուական համերաշխ գործունէութեան մը ազգային, կրթական եւ հանրային բոլոր գործերու եւ խնդիրներու մէջ:

20. Որոշուեցաւ Շրջ. ժողովի պատգամաւորն ընտրել ներքին կանոնագրի 77րդ յօդուածի տրամադրութեան համեմատ. միայն թէ ընտրական ժողովին ներկայ ըլլալու է նաեւ տեղային մարմնոյն մէկ պատգամաւորն եւս:

21. Շրջ. ժողովի աւարտումէն մինչեւ ամիս մը վերջերք բացակայ մարմիններն որոշ բացատրութիւն չտան իրենց գործունէութեան եւ պատգամաւորներու բացակայութեան մասին՝ որոշուեցաւ յանձնարարել նորընտիր Կ. Կոմիտէին որ այս պարագան իմացնէ Բիւրոյին:

22. Նկատողութեան եւ ուշադրութեան առնուելով այս առաջարկը՝ Շրջ. ժողովն որոշեց ու վճռեց, բնա՛ւ չընդունիլ գայն, կանոնագրի հակառակ գտնելով պարզապէս:

23. Ազգ. եւ հողային խնդիրներու առթիւ Լեւոնասարի կազմին յատուկ փաստաբանի մը անհրաժեշտ ու կենսական պէտքը նկատի առնուելով՝ որոշուեցաւ նորընտիր Կ. Կոմիտէին վրայ պարտք դնել որ իր վայրի Ազգ. առաջնորդարանին դիմումներ ընելէ յետոյ, յաճախ բանակցի անոր հետ, որ յարմար դատուած միջոցներով ապահովէ այն կարեւոր հարցին յաջողութիւնը:

24. Որոշուեցաւ պարտադրել նորընտիր Կ. Կոմիտէն որ մարմիններուն ուժ տալէ ընա՛ւ չթերանայ կարելիութեան սահմանին մէջ ընկերական շարքերը մաքրելու — բառին դաշնակցական առումով — անկարգապահներէն ու Դաշնակցութեան անունը շահագործողներէն:

25. Հաշուական յանձնախումբի տեղեկագիրը կարգացուելով եւ անոր մասին թեր ու դէմ կարծիքներ եւ Կ. Կոմիտէի լուսաբանութիւնները լուելէ ետք Շրջ. ժողովը նշանակեց Հաշուական նոր յանձնախումբ մը որուն գլխաւոր պաշտօնը պիտի ըլլայ Կ. Կոմիտէի աջակցութեամբ՝ լուրջ, շրջահայեաց եւ քննական բովմը անցնել նախորդ երկու տարուան ամբողջ հաշիւները: Յանձնախումբի անդամներն են ընկերք՝ Աստիկեան, Զանգակ, Խինդ եւ Վարեատ:

Իսկ կարգացուելով տեղեկագիրը դատական յանձնախումբին, որ գլխաւորաբար զբաղած էր Արեւալուսնի լուծուած կոմիտէի, տոք. Աստուր Յակոբեանի, Յովսէփ Պարտիզպանեանի եւ ամբաստանուած ընկերներու հարցերով, Գ. Շրջ. ժողովը թեր ու դէմ կարծիքներ յայտնելէ [ետք], որոշեց՝ 1. մեղադրելի նկատել Կ. Կոմիտէն՝ Արեւալուսնի կոմիտէի լուծման խնդրոյն մէջ շատ խիստ միջոցի դիմած ըլլալուն համար, քանի որ ներքին կանոնադրի համաձայն՝ կոմիտէ մը անկախ է իր տեղական գործերուն մէջ: 2. Ի միջի այլոց տոք. Ա. Յակոբեան Բաֆֆի խումբին գրած իր հրաժարականով յետնեալ ամսավճարները չտալու եւ փրոփականտիսթները (Չալրմ եւ Խորէն) անուանարկելու միտքեր յայտնած էր. Ապրիլ 18էն սկսեալ՝ մէկ տարուան համար ընկերական շարքերէն դադրեցնել զայն: Յիշեալը կրնայ վերընդունուիլ իբր ընկեր՝ երբ որոշուած այդ միամեայ բացակայութեան միջոցին կարենայ ընկերներու վստահութիւնը գրաւել. հակառակ պարագային պատիժը կ'երկարաձգուի: 3. Յովսէփ Պարտիզպանեան Զարսանճագի հողային դատի առթիւ հանգանակուած դրամը իւրացուցած ըլլալու խնդրով ամբաստանուած ըլլալով, իր գրաւոր խոստումին վրայ պիտի ենթարկուի Կ. Կոմիտէի վերահսկողութեան տակ բացուելիք քննութեան մը, որուն արդիւնքը պիտի հաղորդուի նորընտիր Կ. Կոմիտէին: 4. Միւս ամբաստանուած եւ բողոքող ընկերներու հարցին կարգադրութիւնն ալ թողուեցաւ

իր տեղական գործ Արեւալուսնի կոմիտէին, որ պիտի կարգադրէ Կ. Կոմիտէի աջակցութեամբ:

26. Միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ Կեդր. Կոմիտէի վայրը նախորդ ու միեւնոյն տեղը պահել ինչ ինչ յարմար պարագաներ նկատի առնելով:

27. Որոշուեցաւ միաձայն հաւանութեամբ դիւրութեան համար գործի բաժանման առիթով ընտրել եօթը ընկերէ բաղկացած Կ. Կոմիտէ մը, եւ եռապատիկ ցանկի մը վրայէն ընտրուեցան Վիշնու, Շանթ, Հրատ, Ֆարհատ, Քրիստափոր, Զուլումաթ ու Վահէ ընկերները, որոնց վերջին երկուքը ուրիշ երկուքի մը բանաւոր պատճառով բացակայելէն յետոյ կանչուած են նորընտիր Կ. Կոմիտէի կողմէն:

Ի ԴԻՄԱՅ
Հ.Յ.Դ. ԼԵՌՆԱՍԱՐԻ ԳՐԾՐՋ. ԺՈՂՈՎԻ
Ատենադպիր Ատենապետ

ՈՒՇԱՆՐՈՒԹԻՒՆ

Լեռնասարի մարմիններուն ղրկուած ունէ շրջաբերական կամ որոշում պէտք է խնամով պահուիլ. շրջաբերականները պէտք է ղրկուիլ նորէն. իսկ որոշումները բերելու են Շրջ. ժողովին. հեռու վայրերը եթէ չեն կրնար առանց փոսթի ծախքով ղրկել շրջաբերականները, Շրջ. ժողովին ամբողջութեամբ բերելու պարտադրուած են:

Իւրաքանչիւր մարմին շրջաբերականի եւ որոշումի վրայ պիտի ունենայ իրեն յատուկ թիւը եւ նշանակուած Կ. Կոմիտէին:

Գ. Շրջ. ժողովոյ որոշումներու ճշգրտութիւնը կը հաստատենք:

Հ.Յ.Դ. ԼԵՌՆԱՍԱՐԻ Կ. ԿՈՄԻՏԷ

Ատենապետ՝ ՇԱՆԹ
Վ[ան] Ատենադպիրի՝ ՅԱՐՀԱՏ

1/14 Մայիս 911

Փաստ. 1543-11

Ա 3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԼԵՌՆԱՍԱՐԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

(Արկուած Հ.Յ.Դ. 6^ր Ընդհ. Պատգ. ժողովին)

Յարգելի ընկերներ,

Յաւալի է ըսել որ կարճ ժամանակի մէջ պատրաստուած մեր այս տեղեկագիրը չի բովանդակեր այն՝ ինչ որ մեր ամբողջական իրականութիւնը պիտի պատկերացնէր եւ սակայն համապատասխանած ըլլալու համար, Ա[րեւմտեան] Բ[իւրոյի] Թ[ուրքոյ] հատուածին այլ տեսակէտով ուղարկած շրջաբերական) նամակին պահանջներուն կը փութանք համառօտիւ պարզել մեր կեանքն ու գործունէութիւնը:

1.- Բարոյական ցենզը.— Իբրեւ Կ. Կոմիտէ շրջանի կազմութիւնը մօտաւորապէս երկուքուկէս տարի է (1900-1911). անկէ ի վեր կը շարունակէ պահել իր գոյութիւնը, հակառակ այնքան աննպաստ պայմաններուն, որոնց համեմատ՝ շրջանիս թշուառութիւնը եւ նոյն ատեն զայն ձեւացնող զանազան մարմիններուն մէջ՝ սահմանադրական օրերու գինովներէն ներքսամուտ՝ ոչ-յեղափոխական տարրերու հոծութիւնը, անոնց պահանջկոտութիւնն ու թոյլ գործունէութիւնը, մեր գործող ուժերու անբաւականութիւնը եւ նիւթական խեղճուկ դրութիւնը գիրար գրկած՝ կը միաւորեն Լեռնասարը քիչ մ'աւազուտ կամ երբեք խարխալի մը վրայ:

Ստուգիւ, երբ Փոքր-Հայքի Ռայոնական Ա. ժողովը կը գումարուէր՝ շրջանս հագիւ իր շուրջը կը բոլորէր մէկ-երկու կոմիտէ եւ քանի մըն ալ ենթակոմիտէ. բայց առաջին օրերուն մէջ Մուրատ եւ Շահբագ՝ ընկերներու՝ շրջանիս տուած այցելութեամբ թողած տպաւորութեան եւ ներքին քիչ մըն ալ շղուտ գործունէութեան շնորհիւ՝ սահմանը սկսաւ լայնանալ եւ ճիւղաւորուիլ, մինչեւ որ 5 կոմիտէ եւ 22 ենթակոմիտէ (1200-1500 ընկերներով) մեր այժմեան քանակութեան ցենզը ունեցանք:

Այս սահմանը շատ աւելի կ'ընդլայնուէր, եթէ Բիւրոն քիչ մ'աւելի բարեացակամութիւն ունենար մերթ ընդ մերթ մեր շրջանը ղրկելու լաւ թեորիսքներ եւ փորձ ընկերներ եւ կամ գէթ պատահական անցորդ գործիչներ: Դժբախտաբար ասոնցմէ եւ ոչ մին իրականացաւ եւ որովհետեւ ներքին ուժերն ալ պանդխտելով կամ գործէ քաշուելով ու ընդհանրապէս նիւթական ցենզի չգոյութեան պատճառաւ՝ տկարացան, որոնք առիթ դարձան կազմին հետզհետէ տեղատուութեան: Դիւրին է երեւակայել թէ ինչո՛ւ մեր շրջանը չէ կրցած իր մէջէն գործիչներ ունենալ.— նախ՝ որովհետեւ տրամադրելի

գործիչներ չկային: Երկրորդ՝ ընկերներու նիւթական վիճակը քայքայուն էր եւ երրորդ՝ կազմակերպական հասունութեան պակաս կար. իսկ գործօն կամքը զօրաւոր չէր. պատճա՞ռ.— Որովհետեւ ռամիկ ընկերներ միայն եւ միմիայն դրական փաստով կ'ուզէին առաջնորդուիլ. անոնց համար կազմակերպութեան գերագոյն նպատակը ինքնապաշտպանական ձեռնարկներն էին եւ սակայն մէկ կողմէն Զիֆոնի գործառնութեանց մէջ մեր տկարացումը եւ ուրիշ միջոցներու համար կազմակերպութեան գտած սեղմ պայմանները, եւ միւս կողմէն շահադիտական ձգտումներով ներս սպրդած ընկերներու յուսավրիպումը եւ կարգ մըն ալ arrière-pensées-ներով՝ առաջնորդուող անհասուն պիտակներու ներքին պառակտող ոգին՝ զօրեղ արգելքներ էին ընդհանուր գործելակերպին դէմ, երբ նամանաւանդ կը տեսնուէր, թէ Ս. Դ. Հնչակեան եւ Ս. Ռամկավար կազմերը որոշ գործունէութիւն մը ցոյց կու տային: Խնդիր չէ թէ անոնք քանակով սահմանափակ տեղ մը կը բռնէին, բայց անոնց գործիչները կը վարձատրուէին սոսկ հակադաշնակցական փրօփականտ մղելու եւ այս՝ տգեղ միջոցով իրենց կազմերը վերահաստատելու համար (մենք հաւաստի աղբիւրէ իմացած եւ ստուգած ենք որ Փարամագ Հնչակեան գործիչը յորդորած է իրենները որպէսզի դպրոցներէ ներս աշակերտներու միջոցաւ դաշնակցական ուսուցիչները անբարոյական արարքի մէջ ամբաստանեն, իսկ դուրսը թուցիկներով անբարոյական եւ անկրօն զրպարտութիւններու նշանակ դարձնեն դաշն. ընկերները): Յայտնի է թէ որոշ չափով այս ընթացքները ազդեցին տգէտ ընկերներու մտքին վրայ եւ չնայելով որ իրենց տուչութեան(?) մէջ թերացումին հետեւանք ըլլան՝ կազմակերպութեան նիւթապէս անբաւականութիւնը եւ գիֆոնական գործառնութեան մէջ ալ վաճառականի տարագով դուրս գալն, որուն պատճառն ալ պէտք է վերագրել Բանալիին³, որ այնքան սուղ զնով հայթայթեց որ համեմատած տեղական վաճառականներու ծախսին՝ աւելի սուղ տեսնուեցաւ մերիններուն գիները եւ այն ալ պակաս գործիքներով. ասոնք ամէնքը ներքին հակահոսանք մըն ալ ստեղծելու առիթ դարձան, որովհետեւ Կ. Կոմիտէս չկրցաւ բաւարարութիւն տալ այս տեսակէտով պահանջկոտ ընկերներուն:

1.- Սերաստացի Մուրատ եւ Բարսեղ Շահպագ:
2.- Ֆրանսերէն՝ յետին, բարուն մտքերով:
3.- Բանալի՝ Սանսոնի կուս. կազմակերպութիւնն է:

2- Նիւթական ցննչը.— Ինչպէս ըսինք Լեւոնասարը կազմուած է հինգ կոմիտէներէ եւ 22 ենթակոմիտէներէ, որոնք հաւաքաբար կը ներկայացնեն 1200-1500 ընկեր: Չարմանալի պիտի գտնէք թէ ինչպէս կը լինի որ տարեկան միջին հաշուով հազիւ 12000 դրուշի մուտք մը կ'ունենանք, նկատելով որ իրարու վրայ 2%ով գէթ ամսական 2400 եւ տարեկան 28.800 դրուշի հասոյթ մը կարելի էր ակնկալել: Կը պատասխանենք թէ մեր շրջանին մէջ Բլրակի կոմիտէէն գատ մնացածները գրեթէ կանոնաւոր վճարում չեն ըներ եւ կամ չեն ունեցած:

1- Անդամավճարի համեմատական չափը չգործադրելով: 2- ընկերներու անկանոն վճարումներով եւ 3- ընկերներու յարաբերական աճումովն ու նուազումովը: Այս անկանոնութեան եւ անկերպարանութեան առջեւն առնելու համար որչափ ալ գրաւոր պահանջումներ տեղի ունեցած են մարմիններէն, սակայն անոնք յաճախ չոր լուծեցանք եւ կամ անհարկի պահանջներով ցցուած են մեր դէմ եւ որովհետեւ միջոցներնիս անզօր գտնուած են կտրուկ ճամբով քայլել, եւ մաքրագործելու համար շարքերը՝ լուծ ենք եւ մենք ակամայ, վախնալով թէ անով զօրացուցած պիտի ըլլանք միւս կուսակցութիւնները եւ Դաշնակցութիւնը անկում պիտի կրէր անով:

Չիֆոնական գործառնութեան համար առաջին պատեհութեամբ մարմիններէն գանձուած որոշ գումարներ կային, բայց արդիւնքին ամլութեանը պատճառաւ Շրջ. Գ. ժողովին [որոշեց] իւրաքանչիւր մարմնի թողուլ որ ինք հայթայթէ իր պէտքերը կարելի միջոցներով:

Գիտնալով հանդերձ թէ առանց նիւթական լայն միջոցներու կարելի չէր նորմալ գործունէութիւն մը ապահովել եւ իբրեւ կազմակերպութեան մէկ ազդակը օգուտ մ'ընձեռել Բիւրոյին՝ չկրցինք դուրս գալ վերոյիշեալ նկատումներէն եւ վեր բռնել ինքզինքնիս ցոյց տրուած պատճառներէն:

Այսպէս ուրեմն, նիւթական մեր վիճակին, կրնանք ըսել թէ ուժ տուած են առաւելապէս անհասուն ընկերակցութիւնը, պանդխտութիւնն ու մեր գործունէութիւնը, որ նկատումներու զոհուած է ամէնէն աւելի, ինչպէս տեսանք:

Պէտք է գիտնալ թէ մեր շարքերուն մէջ երեւցող քիչ թէ շատ հասուն ընկերներն են եղած արտասահմանէն, մասնաւորապէս Ամերիկայէն վերադարձողները, որոնցմէ 50%ը դարձեալ վերադարձած են տնտեսական պայմաններու աններողութենէն ահաբեկ եւ կամ այլուր պանդխտած:

Կը տեսնէք, ընկերներ, թէ ի՞նչ պատճառներ ծնունդ տուած են մեր կազմին եկողներու թուլացման, որուն առաջին առնելու համար միակ միջոց՝ ձեռք բերուած աննշան արդիւնքէն հարկադրուեցանք փրօփական-դիստ ընկեր մը ունենալը մեր շրջանին համար. այդ իսկ պատճառաւ չկրցինք նաեւ տարուէ տարի, ըստ սակի, Բիւրոյին մեր բաժին պարտքը դրկել, բացի նախորդ

տարիէն: Այս տարուան մեր ընդհանուր հասոյթն էր եղած իբր անդամավճար 12.258 դրուշ, որուն փոխարէն ծախսուած է փրօփականտի, քարտուղարի (բանաւոր-գրաւոր) եւ այլ գանազան ծախսոց համար 18.402 դրուշ, որով 7144 դրուշ աւելի ծախք մը կը տեսնուի: Այս ծախքին մաս կը կազմեն նախորդ տարուանէ ինքնապաշտպանութեան) բաժին 5317 դրուշ 10 փարա եւ 1528 դրուշ 50 փարան ալ Ձիֆոնի դրամներէն, որ մեր պարտքն է մեր մարմիններուն, բայց այդ ծախսոց գումարին մէջ է նաեւ մեր նախորդ տարուան Բիւրոյին վճարքը (= 5730 դրուշ):

Մենք քանիցս դիմեցինք Բիւրոյին որ մեր սակը իջեցնէք, բայց նկատի չառնուեցաւ: Այս անգամ նոյն խնդրանք-պահանջն ընել հարկադրուեցանք մեր Գ. Շրջ. ժողովի որոշման համաձայն, վստահ ըլլալով թէ այսպիսի նորակազմ եւ անկայուն շրջանի մը համար ուշադրութեան արժանի կը դառնայ մեր խնդրանքը: Միւս կողմէ մեր յետնեալ պարտքին համար շնորհ մը կը խնդրենք, քանի որ մէկ փրօփականդիստի թողակին եւ թղթատարութեանց ծախքերը վճարել հազիւ կարող պիտի լինենք, մինչեւ որ կարենանք շարքերը վերակազմել, մաքրագործել վերջ:

Գործունէութեան բաժին

Նեղ պայմաններու մէջ դիտուած՝ մեր գործունէութիւնը որոշ երանգ մը ունի. որչափ որ կրցինք ըմբռնել մեր կոչումը՝ չզլացանք մեր աշխատութիւնը նուիրել, ըստ որում անցնող երկու տարուան ընթացքին մէջ դաշնակցական շարքերը ընդլայնեցինք կարելի եղած միջոցներով: Առաջին տարին ունեցանք ամէն տեղ մեր Կարմիր խաչի կազմերը, որոնցմէ ոմանք վերջերս լուծուեցան հակադաշնակցական շուռնէն թունաւորուելով: Այդ կազմերէն՝ Արեւալուսին (Մեգրաա) կոմիտէին ենթարկուածը ունեցաւ արհեստանոց մը, որ բաւական օգտակար պիտի ըլլար եթէ շարունակուէր, բայց վերջերս անոր վերաբացումը կատարուեցաւ. յուսալի է որ շարքերը պիտի վերակազմուին. հետեւի Կ. խաչերը բաւական լաւ կը գործեն: Պատանեկան խումբեր ունինք փողոցիկ եւ դպրոցական տղաքներէ խառն. ասոնք հակառակ կրած հալածանքներուն՝ ամուր հիմ մը կը կազմեն եւ աւելի եռանդալից կը գործեն. ունեցան կանոնագիր մ'ալ, որուն համեմատ կը վարին. կը զարգանան իրենց յատուկ մատենադարաններով:

Կ. կոմիտէն ուժ տուած է սկիզբէն ի վեր մտաւորականներու. ուսուցչական միութեան մարմին մը մեր մօտիկ շրջանին մէջ 35-40, իսկ շրջականներն ալ ամէն տեղ 2-3ական դաշնակցական ուսուցիչներ կը գտնուին: Հոս ամէն դպրոցի մէջ կան անոնցմէ, մասնաւորապէս Գրանսական գոլէճին եւ Ազգ. բոլոր հաստատութիւններուն մէջ, բացի Եփրատ գոլէճէն եւ Թլկատիցի դպրոցէն, որոնք ծայրայեղ հակադաշնակցական հաստատութիւններն են:

Մտաւորական վերազարթնումի գործին նպաստելու համար վերջերս բացուեցաւ քլիւս մը, ուր ժողովներ եւ վիճաբանութիւններ կը սարքուին. կազմուած է Ուս. միութիւն մը գուտ դաշնակցականներէ, որոնք եւս առանձին կանոնագրով մը կը վարին: Արհեստակցական միութիւններու համար նպաստաւոր հող չկայ մեր շրջանին մէջ: Բերքառատն (Մալաթիա) ու Բլրակը (Արաբկիր) այդ տեսակէտով գետին մ'ունին, որոնցմէ սակայն վերջինը ունեցած ու քայքայուած է. իսկ առաջինը դեռ կը պահէ իր մէջ կազմուածներ: Կ. կոմիտէն ասկէ գատ շատ ջանացած է Ազգ. վարչական ժողովներու մէջ գետեղել իր ընկերներէն եւ յաջողած է ըստ բաւականին. բայց իթթիհատի եւ հայ միւս կուսակցութեանց հետ իր յարաբերութիւնները միշտ ձգտուած մնացած են շատ որոշ պատճառներով: Հայ կուսակցութիւնները (բացի վերակազմեալ) հնչակեաններէն, որոնք մեծ թիւ մը չեն կազմեր հոս), միշտ դաւադիր գտնուած են. ուզած են խաբել Դաշնակցութիւնը. անոր համար ալ ջանացած ենք այլեւս համերաշխելու խօսք չընել կամ չվստահիլ իրենց խօսքերուն. բայց իթթիհատի հետ ունեցէ առիթով մեր յարաբերութիւնները միշտ մերժողական պատասխաններու ենթարկուել են, որովհետեւ զայն կազմող տարրերը վերջին ծայր յետամնաց անձեր են եւ մասնաւորապէս Չարսանձաքի հողային հարցին դէմ լարուողներ, եւ որոնք Դաշնակցութիւնը պաշտպան նկատելով՝ շատ հակառակ ոգի մը կը տածեն մեզի դէմ, մասնաւորապէս վերջերս եկող իրենց լիտըր Ապտիւլ Ղանի պէյ անուն ոչնչութիւնը ոգի ի բռնի կ'աշխատի հալածել Չարսանձաքի խնդիրը, նոյնիսկ հրապարակաւ իրենց ժողովին մէջ ձեռքի հորիզոնական շարժումը, ըսել ուզելով թէ պէտք է ջարդել, եթէ չկասին այդ հարցը հետապնդելէ. ինչ որ տեղեկագրուած է Բիւրոյին, եւ այդ պարագան վկայելով կը հաստատէր ժողովին ներկայ եղող իթթիհատական հայ ազգային մը: Արդէն կուսակալն ալ ասոնց թմբուկը կը գարնէ: Անցնող ամսուն «Ճիրատ» թերթին մէջ մէկ հերքումագիր [կար] թէ՛ Չարսանձաքի մէջ հողային հարց չկայ. եւ տակաւին մեր Բիւրոն կը տնտնայ այս սինլթորը պաշտօնանկելու ճիգերը կրկնապատկելու:

Պահանջներնիս

Կ. կոմիտէն այս տեղեկութիւնները տալէ վերջ՝ նկատի ունենալով որ իր շրջանի կազմը պէտք ունի վերանորոգումի՝ կը պահանջէ հետեւեալները իբր կազմակերպական անհրաժեշտութիւններ.

1- Ղրկել կարող գործիչ մը, որ մնալով ատեն մը վերակազմէ եւ կանոնաւորէ (ասկէ առաջ մէկ երկու անգամ վրամեանն ուզեր ենք, բայց...):

2- Ընդհ. ժողովը նկատի առնելով մեր նիւթական քայքայման վիճակը՝ բարի ըլլայ առնուազն 20%ի իջեցնել սակը:

3- Ջանայ ցոյց տալ միջոց մը, որով կարող ըլլանք գիֆոնական գոյքերու փոխադրութիւնը կատարել եւ թոյլ տալ որ ինքնապաշտպանութեան) համար նիւթեր մատակարարուին (օրինակի համար պայթուցիկ) վերաբերմամբ): Ինքնապաշտպանութեան) օրինական է եւ մենք ներքին գաւառի խորութեան մը մէջ կծկրտած՝ մեծազանգուած ազգայիններու բազմութեամբ մը ճակատագրուած կը մնանք բախտին...:

4- Հակառակ մեր քանակին, նիւթական քայքայուած վիճակնիս կը հարկադրէ որ խնդրենք բարձր ժողովէր որ մեր նիւթական ցննչը պակսեցնէք եւ անոր հետ արտօնէք «կնիք» կրելու, որպէսզի քիչ մ'աւելի ազդեցութիւն թողուք մեր շրջանին, նոյնիսկ օտարներու վրայ:

5- Փափաքելի էր տեսնել Դաշնակցութեան պատմութիւնը հրատարակուած. նաեւ դաշնակցական (ձայնագրուած) երգեր, որոնք լաւ դեր պիտի կատարեն իրաւամբ տղաքներու շրթունքին միջոցաւ գեղգեղուած: Այս առթիւ մանաւանդ փափաքելի է տեսնել Դաշնակցութեան յատուկ եւ պաշտօնական ձայրը:

6- Դաշնակցական հերոսներու կենսագրական նութերն ու հերոսական կոխները առանձին պրոչլուրներով հրատարակել եւ բոլոր հայ հերոսներու (մանաւանդ դաշնակցականներու) ալալումը. ասոնք առհասարակ տպաւորիչ հրատարակութիւններ ըլլալու սահմանուած են:

7- Կը շեշտենք Դորոշակի ամբողջական հաւաքածոյին Բ. տպագրութեան անհրաժեշտութիւնը. խնդրանքը շատ է, սպառումը շատ պիտի ըլլայ, մանաւանդ երբ մատչելի գնով մ'երեւան գայ:

**Մեր ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
2. ԸՆԴՀ. ՊԱՏՅ. ԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԱՐԱՆԻՆ**

1.—ԹՈՒՐԹԻՒ

Ա- Մ[իութիւն] եւ Թ[առաջդիմութիւն] կոմիտէին այժմեան դիրքը. նկատելով որ կառավարութիւնը կազմուած է իթթիհատեաններէն, կը խորհինք որ ըստ առաջնոյն պէտք է նախկին յարաբերութիւնը պահպանել:

Բ- Միւս քաղաքական կուսակցութիւններէն (բացի վեր. հնչակեաններէն) օգտակար չենք գտներ համերաշխութիւնը, եւ միայն վերապահութեամբ պէտք է ապրիլ, քանի որ ա'լ հասկցուած է թէ անոնք չեն շաղուիլ եւ հակադաշնակցական տարագրով կը վերաբերին:

Գ- Ջանալ միջոցաւ յարաբերութիւնը մշակել միւս ոչ-հայ ազգերուն հետ:

**2.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

.....

3.- ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՀԱՅ ԱԶԳ. ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա.- Ազգ. մշակութային հաստատություններու մէջ կազմակերպութիւնը պէտք է պաշտօնապէս մասնակցի
Բ.- Ազգ. սահմանադրութեան բարեփոխումը շատ անհրաժեշտ է եւ հարկ է ընդլայնել զայն ժողովրդային իրաւասութիւնը գծող օրէնքներով:
Գ.- Պահպանողական եւ հակայեղափոխական տարրերու դէմ զինուել մամուլով, բեմով եւ տեղական... միջոցներով:

4.- ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ԴԱՇՆ. ԵՐԵՍՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Ա.- Թեկնածուներու անուանումը իւրաքանչիւր շրջանի Շրջանային ժողովները պէտք է որ ճշդ են:
Բ.- Ընտրուող երեսփոխանները, քանի որ կազմակերպութեան ուժով պիտի յաջողին, պէտք է որ ոչ միայն ընտրող մարմինն այլեւ կազմակերպութեան ալ վճարում մը ունենան:

2.- ՈՌՒՄԻԱ

Ա.- Կազմակերպուած ուժով մը պէտք է պայքարիլ ներկայ ռեժիմին դէմ:
Բ.- Միւս քաղ. կազմակերպութիւններուն հետ համերաշխաբար գործել:
Գ.- Դաշնակցութիւնը ամէն կարելի միջոցներով պէտք է ուժ տայ Ազգ. բոլոր հաստատութիւններու ուժեղացման:
Դ.- Պէտք է ստեղծել կուսակցական մամուլ մը, որ պէսզի հակառակ տարրերը չխիզախեն եւ իրենց չափը ճանչնան:
Ե.- Կազմակերպութիւնը հաւաքական ուժով պէտք է ջանայ պաշտպանել կովկասահայ բանտարկեալներու դատը:

3.- ՊԱՐՍԿԱՍԱՆ

Ա.- Կազմակերպութիւնը պէտք է պաշտպանէ հայաբնակ վայրերը մարտիկ (բառին բուն առումով) խումբերով:

Աշխատաւորական քաղաքականութիւնը

Տեղական պայմաններու համաձայն պէտք է ընթացք բռնել այդ հարցին հանդէպ:

Կազմակերպական

Բ.- 1.- Խորհուրդը պէտք է ընտրուի Ընդհանուր ժողովով:
2.- Բիւրոներէն Արեւելեանը՝ Ռուսիա, Պարսկաստան ու Հնդկաստանի գաղութները, իսկ Արեւմտեանը՝ Թուրքիա եւ գաղութները բաժին ունենալու են:

3.- Սկզբունքով պէտք է վերահաստատել Պատ. մարմինները:

4.- Շրջիկ փրոփականդիստներու վրայ ծանրացնել հաշուեքննական գործն ալ:

5.- Թուրքիոյ համար մարմիններու կնիքները հայերէն առանձին եւ թուրքերէնները առանձին ըլլալու են:

Գ.- Քաղաքական ընդհանուր երերուն վիճակը նկատի ունենալով՝ Դրօշակն ըստ առաջնոյն ժընեւի մէջ հրատարակելու է:

Դ.- Ժընեւի Դաշնակցութեան տան գնումը պարտաւորել ընել:

Ե.- Դաշն. ընկերներու համար փոխադարձ օգնութեան արկղ մը հաստատել պէտք է:

4.- ԲԱՆԱԽՈՐ ԵՒ ԳՐԱԽՈՐ ՓՐՈՓԱԿԱՆՏ

Ա.- Գրաւոր

1.- Պաշտօնաթերթ Դրօշակը շարունակուի կանոնաւոր եւ անընդհատ ու ծաւալի ընդլայնմամբ կամ կիսամսեայի վերածմամբ:
2.- Կիսապաշտօնական թերթեր հարկաւոր են, որոնք պէտք է գրադուին գաւառի լուրերով եւ կազմակերպական գործունէութիւններուն նկարագրականներով եւ պատմութեանը: նաեւ ընկերվարական սկզբունքի փրոփականդով:
3.- Պրոչիւրներու հրատարակութիւնը անհրաժեշտ մասնաւանդ փափաքելի է որ անոնց մէջ տեսնուին դաշնակցական-յեղափոխական ռումաններ (Բաֆֆիական սիստեմով):

Բ.- Բանաւոր

1.- Փրոփականդիստները մասնաւոր դասընթացքի մը համաձայն պէտք է մարզուին:
2.- Պէտք է որ Ընդհ. ժողովը ամէն Կ. Կոմիտէի համար մէկ-մէկ փրոփականդիստ նշանակէ, որոնք փոփոխակի եւ շրջան առ շրջան պտտին, այնպէս որ վայրերը բնաւ պարապ չմնան:
3.- Պէտք է որ ոչ-հայախօս վայրերու մէջ առանձին փրոփականդ մղուի, ժողովուրդին յատուկ դասագիրքերով:

Ընկերական ջերմագին բարեւերով, խորունկ յարգանքներով եւ կանխայայտ շնորհակալութիւններով:

Հ.Յ.Դ. ԼԵՌՆԱՍԱՐԻ Կ. ԿՈՄԻՏԷ
Ատենադպիր Ատենապետ
ՔՐԻՍՏԱՓՈՐ ՇԱՆԹ

1911 Յունիս 20/2 [Օգոստոս]
Լեռնասար

Փաստ. 839-15

Բ.- ՍԵՔԱՍԱՅԻ ՍՈՒՐԱՏԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԵՒՆ

Պոլսոյ Պատասխանատու մարմնին յղուած զեկուցական բնոյթի նամակ է, գրի առնուած այլ անձի մը, քայքայ ստորագրուած Սեքասայի Մուրատի կողմէ, որ Օսմ. Մահմանադրութեան հռչակումէն ետք կազմակերպական գործով շրջեցաւ հայկական նահանգներ՝ Սեքաստիա, Կարին, Խարբերդ, Տիարպեքի, Պիթիա եւ այլն:
Զեկուցագրին յաւելուածական բաժինը արդէն Մուրատի ձեռագրով է: Այդ տարիներուն Մուրատի գործիչային ծածկանունն էր Սուրէն:

Սվազ, 21 Փետրուար [1909]

Սիրելի ընկերներ,

Ստացայ այստեղ ձեր Յունուար 28 թուակիր նամակը: Մուշ ուղղուած խաչատուրի նամակը ստացած չեմ:

Իմ տպաւորութիւնները:— Բաղէշէն մինչեւ Դուխան, Տիգրանակերտի ճանապարհին վրայ ես տեսայ կիրճ մը այնքան անառիկ որպիսին գրեթէ երբեք չէի տեսեր. այնտեղ թէեւ չկան հայ բնակիչներ, բայց եւ այնպէս կարելի է մի քանի հոգով հարիւրներին դիմադրել:

Դուխանէն մինչեւ Հազու հայութիւնը համարեա բոլորովին ջնջուած է, իսկ Հազու-Տարդին, Սիլվան⁵ եւ Հայնի հայութիւնը թէեւ թուով քիչ՝ բայց զգացումներով եւ յեղափոխական տրամադրութիւնով լաւ են: Այդ գիւղերը ինչպէս նաեւ Արդնա-Մատէն, Բալու, Ջերմուկ, Չնգուշ ժողովուրդը պատրաստ է եւ ուզում են զինուել եւ կազմակերպուիլ բայց զէնքեր եւ կազմակերպողներ կը պակսին: Թէեւ ես մի մարդ ուղարկեմ եւ բայց երկրորդական ուժ է:

Այդ տեղուանքը Տիգրանակերտն ալ միասին առած՝ համակրութիւն կայ հայ Դաշնակցութեան վերաբերմամբ, բայց զօրեղ կազմակերպութիւն կը պակսի: Անհրաժեշտ է մի լաւ գործիչ ուղարկել այնտեղ որովհետեւ, մասնաւորապէս Տիգրանակերտի մէջ կայ շատ լաւ պատրաստութիւն:

Վարդգէսը⁶ շատ մեծ համակրանք կը վայելէ այդ շրջանին մէջ. թող նա շարունակ թղթակցութիւն պահպանէ զանազանների հետ: Տիգրանակերտի մէջ ես շատ աշխատեցի որպէսզի այդ ցրուած մարմինները միացնելով դնեմ հաստատ հողի վրայ բայց չյաջողեցայ որովհետեւ զիս հեռացրին: Երեւի Շահէնը⁷ եթէ գնայ այնտեղ եւ գոնէ մնայ մէկ-երկու ամիս, յաջողի ստեղծել այդ շրջանին համար առանձին կեդր. Կոմիտէ: Առանց կեդր. Կոմիտէի անկարելի է ղեկավարել այդ շրջանը:

Խարբերդի շրջանը բոլորովին տարբեր է միւս բոլոր շրջաններից թէ տնտեսական թէ մտաւորական տեսակէտով: Այնտեղ ալ կը պակսին փորձուած ուժեր որոնք

կարենան ղեկավարել գործը եւ ես կարծում եմ որ Հէնց դա է պատճառը որ մենք կորցրինք ընտրութիւնների խնդրում. իսկ եւ իսկ հակառակորդները դեր խաղացել են. բայց այդ այնքան էլ կարեւորութիւն չէր ունենայ եթէ գործը դրուած լինէր աւելի լուրջ ուղղութեամբ:

Կան Ամերիկայէն վերադարձած ընկերներ, որոնք ազդում են օգտակար կերպով. ցանկալի էր դրանց թիւը շատանար. իմ էլ ներկայութիւնը ունեցաւ իր փոքրիկ օգուտը, բայց ի հարկէ չկրցի երկար մնալ այն պատճառով որ ընկեր Շահէնից հեռագիր ստացայ գնալու Սեքաստիա՝ մասնակցելու համար Ռայոնական ժողովին:

Խարբերդի վրայ պէտք է աշխատիլ անպայման, իբրեւ այս շրջանի մտաւորական կեդրոն. նա կրնայ ոչ միայն իրեն բաւել՝ այլ շրջաններին էլ փրոփականդիստներ հասցնէ: Այստեղ էլ ինքնապաշտպանութեան միջոցների ստեղծման մեծ կարիք կայ՝ ինչպէս գրած ենք ձեզ անցեալ շաբթու:

Մալաթիայի մէջ տեսայ որ թէեւ 95/98ի սարսափներից առհասարակ պարտէզներ եւ կալուածներ թուրքերի ձեռք են անցած, բայց հայութիւնը դարձեալ սիրում է յեղափոխութիւնը: Բոլոր այն ըմբոստ տարրերը, որոնք ժամանակին գործեր էին Հնչակեանն՝ անունին տակ՝ թէ Մալաթիա եւ թէ Չոք-Մարզուան՝ հիմա դարձած են դաշնակցական ղեկավարներ, բայց էլի կը պակսի ուղղութիւն տուողը:

4.- Եղազի շարուած այս եւ յաջորդ բառերը ձեռագրին մէջ թուանշաններով են (չիֆր): Կը բացուին «Մայր Արաքսի ակերով»ի խօսքերով:

5.- Չեռագրին մէջ Սիւլվան, որ սխալ է եւ այդ անունով բնակավայր չկայ: Ուղղեցինք Սիլվան, որ Տիարպեքի նահանգի գիւղաքաղաքներէն է եւ որուն կ'ակնարկէ վստահաբար հեղինակը:

6.- Վարդգէս՝ Սերենկիւեան Յովհաննէս, որ իր բանտարկութեան վերջին տարիները անցուցած էր Տիարպեքիի բանտին մէջ:

7.- Շահէնը՝ նոյնպէս իբրեւ գործիչ դրկուած՝ Բարսեղ Շահպազն է:

Մալաթիայի մէջ ալ ինքնապաշտպանութեան գործը լուրջ ուշադրութեան առարկայ է: Շահէնը այնտեղից անցնելով յոյս ունիմ որ կ'ուժեղացնի:

Գալով Սվազին, սկիզբից ի վեր Հնչ(ակեան) ըլլալով նրանք այժմ էլ պէտք է ասել որ տիրապետած են քաղաքին եւ գիւղերի ժողովրդեան կարեւոր մասին: Երիտասարդութիւնը լաւ է բայց մինչեւ որ նա մարզուի դաշնակցական ուղղութեամբ՝ հարկաւոր է յամառ աշխատանք եւ մինչեւ այն ատեն էլ դժուար է սրանց վրայ յոյս դնել: Իսկ բոլորովին նոր տեղեկութիւնների համար ձեզ կը խօսիմ երբ անձամբ տեսնուինք:

Թէ՛ նամակներից եւ թէ՛ լրագրներից իմացանք որ ռուսական բռնապետութիւնը էլի՛ գլուխ է բարձրացրել ու սրանով յայտնում եմ ձեզ որ պատրաստ ենք ամէն բոլոր անցնիլ այնտեղ եւ կուռիլ: Ես, Շահէնը, Կարոն, Արտաշը (Նարբերդի պատգամաւոր Մորենիցի) պատրաստ ենք զնալու Կովկաս՝ եթէ կարիք կայ: Դեռ կան շատ մը սաստնցի-մշեցիներ որոնք պատրաստ են:

Ու համոզուած եղէք որ մենք տաճկահայերս նոր պիտի ապացուցանենք թէ՛ մեր ազատասիրութիւնը համամարդկային է եւ վար չպիտի դնենք մեր գէնքերը մինչեւ որ սահմանի էն կողմն էլ սահմանադրական կարգեր չհաստատուին:

Այս բոլորը լաւ գիտցէք, խօսքեր չեն եւ եթէ կարիք կայ՝ հեռագրեցէք միմիայն «կիտինի» բառը եւ մեծ խումբով մը մենք արդէն կ'անցնինք Կովկաս:

Ընկերական բարեկենդրով
Ձերդ՝ ՍՈՒՐԷՆ

Յ. Գ.— Թելադրեցէք այնտեղի մեր տիկիներին եւ օրիորդներին որ նամակներ գրեն Նարբերդ եւ Մալաթիա Կարմիր-խաչերին ու քաջալերեն նրանց:

ՆՈՑՆ

Տիվրիկի, Ալն, Արաքիիր անհրաժեշտ գնալու կարիք կը զգաք, գրէք շուրջով մեկնիմ այն կողմ: Յոյս ունիմ պարասխանած կը լինէք Կարմիր խաչի խմբերի անակներին: Ներողամիտ կը լինէք նկարողութեան: Կարծում եմ Ընդհանուր Ժողովը չպէտք է շրջապահել որովհետեւ դեռ ոչ մի տեղ կազմակերպական գործեր կանոնաւոր չէ: Անկի լաւ կը լինէր Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին թողնել: Սիրելի Չարդարեանի անամակներին կը պարասխանեմ. ներողամիտ թող լինի:

Համբոյրներս բոլորիդ անկապին:

Ձեր քափառակ[ան]
ՍՈՒՐԷՆ

*Մեր-բիւր. Անի. Արաքիիր, անհրաժեշտ գնալու կարիք
կը զգամք քեզ շուրջով մեկնիմ այն կողմ: Յոյս ունիմ
պարասխանած կը լինէք Կարմիր խաչի խմբերի
անակներին: Ներողամիտ կը լինէք նկարողութեան:
Կարծում եմ Ընդհանուր Ժողովը չպէտք է շրջապահել
որովհետեւ դեռ ոչ մի տեղ կազմակերպական գործեր
կանոնաւոր չէ: Անկի լաւ կը լինէր Սեպտեմբեր-
Հոկտեմբեր ամիսներին թողնել: Սիրելի Չարդարեանի
անամակներին կը պարասխանեմ. ներողամիտ թող
լինի:*

Սերաստացի Մուրատի ձեռագիրը ստորագրուած ՍՈՒՐԷՆ ծածկանունով

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՉԼՈՒՄ X

ՎԻՇԱՊԱԾՈՐ – ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Վիշապածորի կազմակերպական շրջանը կ'ընդգրկէր Տիարպեքի ցահանգը, որուն ընդհանրապէս Տիգրանակերտ անունը կու տային հայերը:

Շրջանային կոմիտէութեան կարգավիճակ ունեցող Վիշապածորի թղթածրարին մաս կը կազմեն՝

1.— «Հ.Յ.Դ. Վիշապածորի շրջանի համաժողով տեղեկագիր, 1910 Սեպտեմբեր 12». ձեռագիր 9 էջ: Տեղեկագիրը սահմանուած էր նոյն թուականի Հոկտեմբերին Կարնոյ մէջ հրատարակուած Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածի Ռայոնական ժողովին, որուն կը մասնակցէր Վիշապածոր երկու պատգամաւորներով:

2.— «Հ.Յ.Դ. Տիգրանակերտի շրջանի տեղեկագիր, 1911 Յունիս 30». ձեռագիր 23 էջ: Տեղեկագիրը յղուած է Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին եւ մաս կը կազմէ վերջինիս թղթածրարին:

3.— «Հ.Յ.Դ. Վիշապածորի Գ՝ Շրջանային ժողովի որոշումները», երկու տարբեր խըմբագրութիւններով, որոնցմէ մէկը մակագրուած է «մարմիններուն» (խմբատիպ 12 էջ), երկրորդը նոյնպէս խմբատիպ (13 էջ), հաւանաբար իբրեւ շրջաքերական սահմանուած շարքերուն:

4.— Նոյն Շրջանային ժողովի կողմէ գամակ, ուղղուած Արեւելեան Բիւրոյին (20 Յուլիս 1910):

5.— «Փրակերթ» կոմիտէի գամակ Արեւմտեան Բիւրոյին (30 Հոկտ. 1910). մեծագիր 4 էջ:

6.— Ֆերիտ Անիլի բաց գամակը Ներքին գործերու նախարարութեան.— «Հողային հարց Հազրոյի քիւրն ալ կրնա՞ք հերքել». ձեռագիր 16 էջ:

7.— «Յուզակ Սիլվանի եւ Պշերիկի բռնատիրուած կայրածոց», վիճակագրական փաստաթուղթ կազմուած Հ.Յ.Դ. Փրակերթի կոմիտէին կողմէ:

Վերջին երեք փաստաթուղթերը կը վերաբերին Տիարպեքի ցահանգին Մուֆարդին շրջանին, որ հայկական Նփրկերտ քաղաքն է եւ որուն մօտ գտնուող աւերակները կը կարծուի որ մնացորդներն են Հայաստանի հնագոյն մայրաքաղաքներէն Տիգրանակերտի:

Տեղույն Հ.Յ.Դ. կազմակերպութեան կեդրոնը Մուֆարդին քաղաքն էր, ծանօթ Փրակերթ ծածկանունով. գործունէութիւնը կը տարածուէր Հազրոյի, Պշերիկի եւ Սիլվանի գաւառական շրջաններուն վրայ, մեծ մասամբ քիւրտերէ բնակուած: Հայերու կարեւոր մէկ համեմատութիւնն ալ քրտախօս էր:

Կազմակերպական գետնի վրայ Փրակերթոն սերտ կապեր ունեցած էր Տարօն-Մասունի եւ Վասպուրականի դաշնակցական գործիչներուն հետ: Սահմանադրութեան առաջին տարիներուն ան մաս կը կազմէր Վիշապածոր-Տիգրանակերտի Կեդր. Կոմիտէութեան: 1910էն սկսեալ, սակայն, շրջանը կը գտնենք անջատուած եւ իբրեւ այդպիսին ուղղակի կապի մէջ Արեւմտեան Բիւրոյին հետ:

Փաստ. 764-14

Ա. - Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԱՂՈՐԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1910 Սեպտեմբեր 12

Վ[իշապա]ճորի շրջանը կը կազմուի հետեւեալ կերպով

Սողոմ	45 ընկեր	ամսական 90 դրշ.
Վրէժի-Ձոր	25 ընկեր	» 50 »
Ընդարձակ-Դաշտ	10 »	» 15 »
Գետափ	15 »	» 22.5 »
Քարայր	8 »	» 16 »
Ապառաժ-Լեռ	50 »	» 100 »
Ջարեւանդ	50 »	» 75 »
Վ.Ձոր ¹	250 »	» 750 »

Ընդամէնը 453 » » 1118.5 »

Առհասարակ օրը օրին հացերնին ճարող, բանուոր եւ հսնաֆ դասակարգէն կազմուած, մտաւորական վիճակնին շատ խեղճուկ է, 50% ոչ այնչափ լաւ ընթերցանութիւն մը եւ լի սխալներով երկու տող գիր մը գրել հազիւ գիտեն. Դաշնակցութեան սկզբունքներուն տեղեակ չեն. իրենց ամբողջ դաշնակցական հասկացողութիւնը սա երկու տարրական գաղափարն է, որ ապագայ անկախ Հայաստանի մը նպատակը ի սպառ հեռացուցած են իրենց մտածումներէն, երկրորդ որ՝ Դաշնակցութիւնը աշխատաւորութեան պաշտպանն է: Կը ղեկավարուին՝ տարին մէկ անգամ ուղղակի քուէով որոշուած մարմին մը կողմէ, որուն յայտնի անդամին հետ կը յարաբերին խմբապետները: Կը ստանան «Դրօշակ» եւ «Ազատամարտ» կը գտնուին նաեւ բրոշուրներ, կ'ունենան առնուազն տասնուհինգ օրը անգամ մը խմբական ժողովներ, ուր խօսուածները կ'արձանագրեն խմբական-արձանագրութեան տեսրի մէջ ու կը հաւաքեն շարաքովմարներն կամ ամսեկմարները: Շրջականներուն մէջ տեղ տեղ կ'ըլլան ընկերական ընդհանուր հաւաքոյթներ:

Արհեստակցական միութիւններ.— Բուն դաշնակցական կանոնագրով ղեկավարուող արհեստակցական միութիւններ չկան: Որովհետեւ արհեստաւորներուն մէջ չկայ յեղափոխական եւ իրենց շահերու իսկական գիտակցութիւնը եւ դէպի ապագան զոհողութեան պատրաստակամութիւնն ու զօրեղ հաւատքը: Այլ բուն Վ.Ձորին մէջ կան 4-5 հսնաֆական միութիւններ, դաշնակցութեան արհեստակցական միութեան մասնախումբ

բին կամ անհատ ընկերներու գործակցութեամբ: Այս ուղղութեամբ պրոպականդ եւ ջանք թէեւ շատ եղած է թէ Վ.Ձոր եւ թէ՛ շրջականներուն մէջ ու առաջին պատահութեամբ ալ մեծ թիւերով կազմակերպուած, բայց կեանք չեն ունեցած. միայն վարպետներու (մեր գործարանատէրերը) կողմէ թեթեւ գիջումներ ու գոհացումներ եղած են եւ արհեստաւորներուն մէջ ալ կազմակերպուելու անհրաժեշտութիւնը ու իրենց շահերուն թեթեւ գիտակցութիւնը արթնցած է:

Գործակցական ձեռնարկներ.— Մեր շրջանին մէջ աչքի իյնող գործակցական խոշոր ձեռնարկներ չկան. միայն Վ.Ձորի մէջ կայ գոնտորաճի բանուորներու միութիւնը, որոնք գրեթէ ամբողջը միացած, մէկ մէկ լիրա դրամագլուխով կը գործեն, կու տան նաեւ շաբաթավճար, ունին երկու սպառողական եւ երկու արդիւնաբերողական խանութներ. մտաւորապէս 40 ընկեր կ'ըլլան, իրենց բուն գործադիր մասնախումբի գործօն անդամները մեր ընկերներն են, ոեւէ խռովութեան, դժուարութեան համար հրահանգ եւ ուղղութիւն կը ստանան Դաշնակցութեան արհեստակցական միութեան մասնախումբէն: Վրէժի-Ձորի մէջ կայ դրամական ձեռնարկ մը գուտ մեր ընկերներուն մէջ, որուն նպատակն է աղքատ ընկերները ազատել վաշխառուներու տնաքանդ տոկոսէն. կան եւ մանր մուկ ուրիշ ձեռնարկներ թէ գուտ ընկերական եւ թէ խառն. Վ.Ձորի Արծուիկ խումբը ունի տարիէ մի վեր կազմուած ձեռնարկ մը, դրամագլուխը հիմա կը հասնի 20 օսմ. լիրայի եւ դրուած է իրենց ընկերներէն բանջարավաճառի մը տրամադրութեան տակ շահագործուելու. կայ նաեւ խառն միութիւն մը ջուլհակ ընկերներէ եւ չէզոք ջուլհակներէ որ 908 Հոկտեմբերէն մինչեւ հիմա կը շարունակուի:

Գիւղացիական միութիւններ.— Վերջերս բուն Վ.Ձորի շրջակայ գիւղերուն մէջ 2-3 տեղ կազմուեցաւ գիւղացիական միութիւններ եւ հետզհետէ բազմացնելու ջանքեր կ'ըլլան: Ջրաբեր գիւղի անկերպարան կազմակերպութիւնն ալ վերածուեցաւ գիւղացիական միութեան:

Ուսանողական միութիւն.— Վ.Ձորի կազմակերպութեան ամէնէն ուրախառիթ պարագան դպրոցա-

կան պատանիներուն մէջ խլրտացող եւ հետզհետէ ձեւաւորող յեղափոխական շարժումն է: Վ.Ձորի Ուսանող. միութիւնը կազմուած է 1909 Օգոստոսէն, կ'ունենայ խմբական եւ ընդհանուր հաւաքոյթներ, որոնց մէջ կը խօսին ձեռնհասները եւ կը վիճաբանին օրուան որոշուած նիւթին վրայ: Կը հրատարակեն «Արաքս» անունով թերթ մը: Կ'աշխատին դպրոցներուն մէջ մտցնել օրուան պահանջներուն համաձայն բարենորոգումներ եւ հակաառաջդիմական հին օրէնքները ջնջել: Մինչեւ դպրոցական անցնող տարին, կը ղեկավարուէին իրենց մշակած կանոնագրով. կը գործէին դաշնակցական անհատ ընկերներու եւ առհասարակ իրենց վարչութեան հրահանգներով եւ ոչ՝ ուղղակի կազմակերպութեան պատասխանատուութեան տակ:

Գ. Շրջ. ժողովը նկատի ունենալով այս պարագաները, որոշեց ուղղակի կազմակերպութեան քոնթրոլին տակ առնել մշակելով կանոնագիր:

«Արաքս»ը առայժմ դադրած է կառավարական արտօնութեան եւ ուսանողական այլ եւ այլ փոփոխութիւններուն հետեւանքով: Ուսանող. միութիւն կայ նաեւ Սողոմի մէջ Գ. Շրջ. ժողովի որոշած ուղղութեամբ: Ապառաժ-Լեռի մէջ ալ՝ նոյն շարժումը:

Թատրոն.— Վ.Ձորի մէջ 909 Մայիսէն կազմուած է Դաշնակցութեան թատրոնի մասնախումբ մը: Գործը բազմակողմանի պահանջներ ունենալուն ու միեւնոյն ժամանակ տեղական պայմանները ձեռնտու չլինելուն հազիւ հազ կրցած է կանոնաւորիլ: Կազմուելուէն մինչեւ հիմա 25-30 լիրայի մը չափ հազիւ կազմակերպութեան կրցած են հասցնել: Իսկ հիմա՝ թատրոնի նախնական պէտքերուն համար 910էն ասդին եղած ծախքերուն 25-30 լիրայի չափ բաց մը ունին: Այս ուղղութեամբ բաւական ուժեր կը սպառին. կարելի է գոնէ ամիսն անգամ մը ներկայացում մը սարքել, բայց Վ.Ձորի մէջ վերջերս արծարծուող հակայեղափոխական շարժումը շատ գէշ ազդած է հանդիսականներու թուին վրայ, այնպէս որ ներկայացումներ եղան, որոնք չկրցին իրենց ծախքը հանել: Գ. Շրջ. ժողովէն վերջ Սողոմի մէջ ալ կազմուած է թատրոնի մասնախումբ:

Լսարան.— Ձուտ դաշնակցական լսարաններ՝ ընկ. Ֆերիտ Ճեմիլէ³ եւ ուրիշ ընկերներու պարբերաբար այցելած տեղերը եղած են (Սողոմ, Ջարեւանդ, Ապառաժ-Լեռ եւն) իսկ Վ.Ձորի օֆֆիսին մէջ 910 Ապրիլէն շաբաթն անգամ մը կամ տասնուհինգ օրը եւ շատ անգամ ալ շաբաթական երկու լսարան սարքուած է գիշերները:

Կարմիր-խաչ.— Վ.Ձորի մէջ Կ. խաչ կազմուած է 908ի վերջերը. 909 Յուլիսին իրենց թիւը կը հասնէր մտաւորապէս 120 ընկերուհի, բայց հակայեղափոխական շարժումները (Պոլսից) հետզհետէ նուազեցուցին իրենց թիւը. գործ ունեցան նաեւ հնչակեաններ իրենց յերկրած ստոր ստերով. եւ այժմ անոնք կը համրուին 25-30 ընկերուհի: Ունին գրադարան (մտաւորապէս 100 կտոր գիրք ու բրոշուր), կը սարքեն կանանց յա-

տուկ լսարաններ Ազգ. աղջկանց դպրոցին եւ առաջները երբեմն եկեղեցիին մէջ: Ունին կիրակնօրեայ դասատուութիւն, որմէ կ'օգտուին նաեւ ոչ-ընկերուհիներ: Սարքած են երկու ներկայացումներ, որուն վերջինի («Արցունքի հովիտ») հասոյթը յատկացուած է կովկասահայ քաղաքական բանտարկեալներուն, մտաւորապէս 250 դրշ.) եւ կը մնայ իրենց գանձապահին քով: 909ի ամառը սկսան կազմակերպել բանուորուհիները եւ կազմեցին մետաքսի գործով գբաղող բանուորուհիներու գործակցական ձեռնարկ մը, որը վեց ամիսի չափ շարունակուելէ վերջ, այլեւայլ պատճառներով լուծուեցաւ: Կ'ունենան խմբական եւ ընդհանուր հաւաքոյթներ, կու տան ամսեկմար (1 դրշ.), կը ստանան «Դրօշակ» եւ «Ազատամարտ»: Կը ղեկավարուին ներքին կանոնագրի իրենց բաժնով — տեղական կոմիտէէն անկախ՝ համարատու Շրջանային մարմին: Կ. խաչ կայ նաեւ Սողոմի մէջ (10-12 ընկերուհի) եւ կը գործէ տեղական ենթակոմիտէի ղեկավարութեամբ: Ապառաժ-լեռի մէջ ալ թէեւ կայ, բայց բոլորովին անկերպարան:

Ընկերակցութիւններ.— դաշնակցական ընկերներու նախաձեռնութեամբ կան նաեւ քանի մը կուլտուրական ընկերակցութիւններ: Վ.Ձորի մէջ կան «Ուսումնասիրաց» եւ «Դպրոցասիրաց» ընկերութիւնները. «Ուսումնասիրաց»ը կազմուած է 908 Օգոստ.էն երբ դեռ Դաշնակցութիւնը ուղղակի հրապարակ իջած եւ օֆֆիս ունեցած չէր, եւ ընկերներ «Ուսումնասիրաց»ին մէջ եւ անոր անուան տակ կը գործէին, «Ուսումնասիրաց»ի ամէնէն փայլուն ու արդիւնաւոր շրջանն էր, անկէ վերջ թիւը նուազած եւ հասած է 50-60 ընկերուհի. ունի գրադարան մը (որ հիմնուած է 901էն) եւ ուր կայ մտաւորապէս 700 կտոր գիրք.— բրոշուր, ունի ընթերցատուն եւ ձեռնարկն ալ գիշերային դպրոց միշտ ընկերներու ջանքովը առաջացող: «Դպրոցասիրաց»ը ունի մտաւորապէս 200 ընկեր ամսական 1 դրշ. ամսեկմարով («Ուսումնասիրաց»ին ալ նոյնպէս 1 դրշ.): Ունին 15 սան Ազգ. երկսեռ դպրոցներուն մէջ եւ երկու դպրոցներ՝ Գահպիք ու Հայեղիկ գիւղերուն մէջ: Տարւոյ սկիզբը ունէին նաեւ Սաղուգեղի մէջ եւ անկէ առաջ Պաղչէճիկի մէջ. Ա.ը գիւղացիներու հետ չհամաձայնելուն եւ վերջինն ալ յարմար ուսուցիչ մը չունենալուն գոցուեցան: Կայ նաեւ «Երիտասարդներու միութիւն» մը Վ.Ձորի Ս. Սարգիս թաղին մէջ. ունին գրադարան մտաւորապէս 250 կտոր գիրքով եւ առհասարակ հին բանք, որոնք Մկրտիչ Եպիսկոպոս Տիգրանեանէն մնացած են: Կը սարքեն լսարաններ, ունին գիշեր. դպրոց: Այսպիսի երկու միութիւններ կան Սողոմի եւ Վրէժի-Ձորի մէջ. ունին գիշեր. դպրոցներ, կը սարքեն լսարաններ եկեղեցիին կամ դպրոցին մէջ. Սողոմի ընկերները վարձած են տուն մը իբր ընթերցատուն, ուր կ'ունենան

1.- Ծածկանուցով յիշատակուած կազմակերպական շրջաններն օմնօք են մեզի Վիշապաճորը, որ Տիարպեթի քաղաքն է (հայերու կողմէ Տիգրանակերտ անուանուած): Ընդհանրապէս Վիշապաճոր կ'օգտագործուէր Կ. Կոմիտեւեան ամբողջ շրջանին համար, իսկ քաղաքին կը տրուէր Վեւ Վիշապ օմնօք անուանը. Ապառաժ Լեռը Լճն է, իսկ Ջարեւանը՝ Դաղո: Շրջանին մաս կազմած է յաճախ մաս Գրակերթը, Ֆարդիցը կամ հայոց Նփրկերտը:
2.- Ուսանողականը պէտք է հասկնալ աշակերտական իմաստով:

3.- Ֆերիտ Ճեմիլ քուն անուցով Տիգրան Ամսեան, աւելի ուշ օմնօք Տիգրան Ծամուր օմնօք անուցով:

լսարաններ եւ կազմակերպական այլ գործեր: Հիւսիսայգի մէջ Դաշնակցութիւնը գոյութիւն ունեցած ատեն կազմուած է «Ուսումնասիրաց ընկերութիւն» մը տեղւոյն երիտասարդ եւ լաւ ուժերէն, որոնք մինչեւ հիւսիսայգի գործեն եւ թղթակցութիւն կը պահեն մեր անհատ ընկերներուն հետ:

Աղաներ ու պէկեր Վ.Ձորի շրջանին մէջ ալ կը գտնուին ու թէեւ ազատութենէն յետոյ իրենց բիրտ ուժի ազդեցութիւնը կորսուած, բայց արդիւնաբերութեան միջոցները իրենց ձեռքն են. հողային խնդիրներ ալ կը գտնուին, որոնց մասին սակայն ստոյգ տեղեկութիւններ հաւաքել տակաւին չկրցինք: Կառավարութենէն իր ներկայ օրէնքներուն համաձայն այդչափ դժգոհելու առիթներ չունինք:

Իթիքիւստ.— Տեղւոյս Իթիքիւստը այդչափ զօրաւոր չէ, իրենց հետ ալ լաւ ենք, բայց սերտ յարաբերութիւններ չկան ու չեն եղած, կարող, յարմար ու թրքագէտ ընկերի պակասէն: Դաշնակցական եւ Իթիքիւստ խառն մասնախումբ մը կազմելը թէեւ չյաջողեցաւ, բայց անցեալ տարի այս օրերուն կազմուեցաւ «Ուսումնասիրաց Օսմանիյէ» անունով միութիւն մը, որուն կը մասնակցէին ամէն գլխակներէ, ընկերութիւններէ եւ կուսակցութիւններէ երկ-երկու հոգի. քանի մը անգամ լսարաններ տուին, ընթերցատուն մը բացին եւ յետոյ ընթերցատան բացը գոցելու համար մէկ-երկու ներկայացումներ տուին եւ իրենց ընկերներու մեծ մասի հոս հոն գաղթելու եւ մեծագոյն մասն ալ ժողովի չգալուն լուծուեցաւ:

Հնչակեանները առհասարակ լոկ մեզ հակառակելու ձգտող ու յեղ. գաղափարներու եւ տակտիքի անընդունակ տարրերէ կազմուած ըլլալով, մեր գործունէութեան ընթացքին, միշտ իրենց ընդդիմութիւններուն կամ յարուցած խռնդոտներուն հանդիպելու այլեւս ճակատագրական հարկին մէջ կը գտնուինք: Այսպէս է Վ.Ձորի բոլոր շրջաններուն մէջ. եւ ապացուցած են այս ալ եւ այլ պարագաներու մէջ. օրինակ, թրքահայ հակայեղափոխական շարժումներուն մասնաւորապէս ձայնակցելով եւ գործակցելով, Կ. խաչի մասին փտած կարծիքներ եւ ցնցող զրպարտութիւններ տարածելով:

Ազգ. Իշխանութիւններ.— Մեր գործունէութեան մէջ իրարու դէմ կ'ըլլենք նաեւ Ազգ. Իշխանութիւններուն հետ, գլխաւորաբար կուլտուրական խնդիրներու եւ հասկացողութեան մէջ:

Դպրոց.— Յուսահատելով կանոնաւոր եւ նորագոյն սիստեմներով Ազգ. դպրոց մը ունենալէն, ընկեր բժիշկի հետ մի քանի ընկերներ մասնաւոր դպրոցի մը գաղափարը յղացան անցեալ տարիէն. հետզհետէ այս գաղափարը ընկերներու մեծամասնութիւնը շահելով, ամէն կողմէ եղած խնդրանքներու վրայ Գ. Շրջ. ժո-

ղովն ալ վաւերացուց: Ուստի, հիմնուելով ընկերներու այս պատասխանատուութեան վրայ մասնաւորապէս եւ ժողովրդին այս ուղղութեամբ ցոյց տուած հաճութեան ընդհանրապէս, ընկեր բժիշկին նախաձեռնութեամբ գործի սկսեցան: Հասոյթները պիտի կազմեն կրթաթոշակներ, ընկերներու նուէրներն ու ամսեկճարներ, ներկայացումներ, հանդէսներ եւն: Պիտի կոչուի «Յառաջիմական վարժարան»: Սողոմի մէջ ալ կրկին ընկերական միջոցներով կառավարուող մասնաւոր դպրոց մը բացուած է: Ապառաժ-լեռի մէջ ալ այդ գաղափարը կայ, բայց չէ իրականացած:

Կովկաս.— Անտարբերութեամբ չէինք կրնար դիտել մեզ՝ թրքահայերու համար այդքան նիւթական եւ բարոյական անգին գոհողութիւններ ընող կովկասահայերուն ընդհանրապէս եւ կովկասահայ բանտարկեալ մեր ընկերներու կսկծեցուցիչ դրութիւնը մասնաւորապէս: Ուստի, յատուկ շրջաբերականով մեր բոլոր ընկերներուն գիտցնելով կովկասահայ բանտարկեալներու օրհասական դրութիւնը ցարիզմի ճշող թաթին տակ, հրահրեցինք որ ամէն ընկեր իր լուծման չինայէ այդ ուղղութեամբ: Ամէն շրջան ղրկուեցաւ շրջաբերականները, գործնականապէս պատասխանած են Սողոմի եւ Գետափի ու Քարայրի շրջանները, որոնց գումարն է մօտաւորապէս 5 օսմ. լիրա: Իսկ Վիշապաձորի կոմիտէն խորհելով, որ այս այնպիսի համակրելի ձեռնարկ մըն է, որ կրնայ քաջալերուած ըլլալ նաեւ հայ ազգէն ամբողջ, ուստի ուզեց խառն մասնախումբ կազմելով գործը ընդհանրացնել ու կ'ըր գումար մը գոնէ ձեռք բերել: Մասնախմբի կազմութեան ու ընդունելու-չընդունելու դրութեան մէջ, սկսաւ հակադաշնակցական վերջին պայքարը «Ասուպ» անուն տետրակի մը հրատարակութիւնով. կոմիտէն սկսաւ զբաղիլ այդ խընդրով. մասնախմբի մարդիկը Դաշնակցութեան այդ վարկաբեկումէն ու խօսուած գրոյցներէն ազդուած բոլորովին հրաժարեցան եւ քանի մը հատերուն ալ, որ դեռ նոր պիտի խօսուէր, տեղական կոմիտէն յարմար դատեց, որ թէ այն եւ թէ ընդհանուր հանգանակութիւնը յետաձգուի: Անկէ վերջ, եկեղեցիներու բացուողի խնդիրը եւ այլ կազմ. խնդիրներ պատճառ եղան որ տակաւին չիրագործուի այդ:

Գլխաւոր պակասը, որ միշտ այլեւայլ ձեւերով ու տարբեր պարագաներու տակ կը յայտնուի ու կը շեշտուի, մօտաւորապէս կարող ընկերներու պակասն է միշտ: Այլապէս մենք պիտի կարողանայինք աւելի յաջող արդիւնքներ ձեռք ձգել:

Հ.Յ.Դ. Բարձր Հայքի Ռայոնական ժողովի Վ.Ձորի շրջանի պատգամաւորներ ՎՐՈՅՐ, ԲԵԳՈՒԼ

910 Հոկտ. 3
Բարձրաբերդ⁴

Փաստ. 1543-7

Բ.— Հ.Յ.Դ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1911 Յունիս 30 Տիգրանալիերի

Տիգրանակերտի շրջանը կազմուած է հետեւեալ կերպով.

Տիգրանակերտ	330 ընկեր	ամսական	1000
Հազրօ	64 ընկեր	»	64
Լճէ	50 ընկեր	»	60
Հայնի	20 ընկեր	»	42
Արդնի	25 ընկեր	»	45
Ջերմուկ	31 ընկեր	»	45
Մատէն	27 ընկեր	»	32
Սեւերէկ	28 ընկեր	»	35
	575		1323

Բացի այս վայրերէն՝ Փիրանի, Տրպնէի, Սաղուզեղի եւ շրջակայ քանի մը գեղերու մէջ կան արձանագրուած դաշնակցականներ, սակայն կանոնաւոր անդամավճար եւ կազմ չունենալնու պատճառաւ զանոնք համակիրներու կարգը դասած ենք:

Մեր շարքերը կազմուած են ընդհանրապէս արհեստաւոր, բանուոր, ուսուցիչ եւ ուսանող դասակարգերէ. միջակ եւ վաճառական դասակարգէն քիչ կը համրուին մեր մէջ: Մեր շրջանի ընկերներու մեծ մասը անգլուրագէտ եւ Դաշնակցութեան սկզբունքներուն անտեղեակ են: Տնտեսական վիճակն ալ ընդհանրապէս անախանձելի է: Յեղափոխական վիճակն ու եռանդը գոհացուցիչ է:

Լսարաններ.— Շրջանի մէջ քիչ շատ յեղափոխական եւ կրթական արթնութիւնները արդիւնք են մեր լսարաններուն, հանդէսներուն, ներկայացումներուն եւ մեր տեղական համեստ ուժերով առաջ մղած բանաւոր ու գրաւոր պրոպագանդներուն: Ատեն մը երբ դեռ չըրապարակ իջնելը անյարմար նկատած էինք, մեր նախաձեռնութեամբ կազմուած Ուսումնասիրաց ընկերութեան միջոցաւ կը վարէինք կանոնաւոր լսարան Ս. Կիրակոս եկեղեցիին մէջ: Սակայն երկու տարիներէ ի վեր Դաշնակցութեան ընդարձակ օֆիսին մէջ կը վարենք: Դաշնակցութեան լսարանէն, բացի հայ հասարակութենէն, մեծապէս կ'օգտուին ասորի, յոյն եւ քաղղէացի ժողովուրդները, որոնք օրինակելով հետզհետէ իրենց մէջ ալ փորձեցին լսարանական ձեռնարկներ: Լսարանի բեմէն արժարժուած են ամէն ժամանակ իրենց կարգին ազգային, հասարակական եւ քաղաքական խնդիրներ. դարձած են օգտակար վիճաբանու-

թիւններ որոնք մասնաւորապէս աւելի շատ վարժեցուցած են հասարակութիւնը հետաքրքրուելու իր իրաւունքներով ու պարտականութիւններով:

Մինչեւ 1910 Նոյեմբերին այրերուն եւ կիներուն անշատ լսարան կը տրուէր. կիները մասնաւորապէս կը զրկուին օգտակար եւ հետաքրքիր դասախօսութիւններէ: Սակայն անկից վերջ փորձեցինք երկսեռ ընել եւ յաջողեցանք, ու քիչ վերջ մեծ ընդունելութիւն գտաւ: Այս քայլը Տիգրանակերտի պէս յետ ինկած միջավայրի մը համար խիստ քաղաքակրթական է:

Հայկական թատրոն.— Հայկական թատրոնը Դաշնակցութեան օֆիսի ընդարձակ բակն է, որուն վրան ծածկելով վերածուած է պատշաճ սրահի մը:

Երկու տարիներէ ի վեր յաջողակ ընկերներէ կազմուած թատերասիրաց մասնախումբին կողմէ կը պատրաստուին եւ կը տրուին ժողովրդի եւ յեղափոխական կեանքէ ներկայացումներ եւ կենդանի պատկերներ:

1910 թուի Նոյեմբերէն ասդին մասնաւորապէս աւելի կանոնաւոր ընթացք մ'ունեցած է հայկական թատրոնը. լսարաններուն պէս ներկայացումներն ալ երկսեռ եղած են: Նիւթերը ընտրովի եւ խնամուած ըլլալով տոմսերու արժէքն ալ խիստ ցածրուած էր որպէսզի հասարակութեան բոլոր խաւերն ալ օգտուին: Հայկական թատրոնը Տիգրանակերտի շրջանի գաւառացի ու գիւղացի հասարակութեան վրայ իսկ թողած է կրթիչ հետեւանքներ: Հայկական թատրոնը կը գտնուի ուղղակի դաշնակցական հսկողութեան տակ. իր հասոյթներէն մէկ մասը օֆիսի, սպասարարի եւ գիշերային լսարաններու եղած ընթացիկ ծախսերուն յատկացնելէ ետք կը ծախսէ իր վրայ, հետզհետէ իր պիտոյքները լրացնելով:

Ուսումնասիրաց, Դպրոցասիրաց եւ Երիտասարդաց միութիւնները.— Սահմանադրութենէ վերջ մեր ընկերներու նախաձեռնութեամբ կազմուած ընկերութիւնները թէեւ իրենց նախորդ գործունէութիւնը չունին այսօր, սակայն հասարակութեան յառաջդիմութեանը դարձեալ մէյ մէկ ազդակներ պէտք է նկատել ասոնք: Առաջին երկուքը Ասդի թաղը Ս. Կիրակոս եկեղեցոյ շրջափակին՝ վերջինը Անդի թաղի Ս. Սարգիս եկեղեցոյ փակին մէջ կը գործեն: Ուսումնասիրացը ունի բաւական ճոխ գրադարան մը, գիշերային, երիտասարդաց յատուկ դասախօսութիւնները եւ կիրականօրեայ լսարան: Դպրոցասիրացը Ազգ. դպրոցին մէջ ունի սաներ:

4.- Վիշապաձորի այս տեղեկագիրը սահմանուած էր յղուելու Կարոնյ (Բարձրաբերդ) մէջ 1910 Յունեմբերին գումարուած Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածի Ուսումնական ժողովին:

Երբեմն Պաղճաճիկ ու Սաղուզեղ, այժմ Գահալիք եւ Հայեղիկ գիւղերու մէջ ունի դպրոցներ: Երիտասարդացը՝ ունի անկանոն կիրականօրեայ լսարան եւ գրադարան-ընթերցարան մը, եւ Անդի թաղի Ազգ. դպրոցներու ղեկավարութիւնն ալ անոնց ձեռքն է:

Կարմիր իւռ:— Հակադաշնակցական հոսանքը երկու տարիներու մէջ ամէնէն շատ ազդեց Տիգրանակերտի մէջ կազմուած իգ[ական] սեռի այս անդրանիկ միութեանը:

Առջի տարի ունէր 120 անդամուհի, կանոնաւոր լսարան, կիրականօրեայ դասախօսութիւններ, գրադարանի գործօն մասնախումբ, բանուորուհիները կազմակերպելու եւ անոնց գործ հայթայիթելու մասնախումբ, սակայն այժմ հազիւ մնացած է 20 ընկերուհի, անոնք ալ հետզհետէ նուազելու ենթակայ:

Տեղական մարմինները սակայն միշտ զգալով Կարմիր խաչի անհրաժեշտութիւնը կ'ին սեռը արթնացնելու գործին համար, ջանացած են միշտ օգնելու անոր: Այս տարի պատգամաւորական ժողովին մէջ մասնաւորապէս յատուկ որոշումներ տրուեցան անոնց գործընթացին համար միջոցներ ի գործ դնելու: Կարմիր խաչի խմբակներ կան նաեւ շրջանի տարբեր վայրերու մէջ, սակայն անոնք աւելի անյոյս վիճակ մ'ունին: Լճէի մէջ մեր հակաակորդներու թելադրանքներու ազդեցութիւնով Կ. խաչի գանձապահ Տիկին Բրաբրոն Հայրապետեան կոչուած կ'ինը 300 դահեկան ամսավճարները իւրացնելով պատճառ դարձաւ տեղ. Կ. խաչի միութեան քայքայման:

Ուսանողական միութիւն:— Անցեալ տարուայ Ազգային վարժարանի մէջ դաշնակցականամիտ ուսանողական միութեան Ազգ. վարչութեան կողմէ հալածուած ու ապա ոստիկաններով դուրս վտարուած ըլլալը գրեթէ զիրենք կազմալուծած էր. սակայն այս տարի վերակազմուած է՝ Յառաջդիմական վարժարանի ամբողջ ուսանողներով, անկուսակցական հողի վրայ: Ունին գրադարան, կանոնաւոր հաւաքոյթներ, կ'աշխատին դաշնակցական տեսակէտներով պրոպականդ մղել նաեւ դպրոցէն դուրս. իրենց ընտանիքներու ու բարեկամներու մէջ: Կը փափաքին յարաբերութիւն պահել արտասահմանի Ուս. միութեան հետ եւ անոնցմէ ուղղութիւն ստանալ:

Ուսանողական խմբակներ կան նաեւ շրջանին մէջ սակայն շնորհիւ հնչակեան խմբակներու հալածանքներուն, երբ դպրոցները կը գրկուին դաշնակցական ուսուցիչներէ եւ շատ անգամ դպրոցներն ալ կը խափանուին, ուսանողութիւնը անդեկ ու անյոյս մնալով ուժման կ'ենթարկուի:

Յառաջդիմական վարժարան:— Ընկերներուն դաշնակցական վարժարան մ'ունենալու համար բերած պահանջը 1910 Յուլիս 5-ին գումարուած Գ. Երջանային պատգամաւորական ժողովին մէջ նկատի առնուելով որոշուեցաւ անմիջապէս ընկեր թերթեանի պատասխանատու-տնօրինութեան տակ ձեռնարկել վարժարանի բացման:

Դժբախտաբար տեղական եւ կեդրոնական կառավարութիւնները յուսահատեցուցիչ ձգձգումներէ յետոյ տարուայ կէսին՝ Յունուար 17-ին հազիւ ստացուեցաւ դասախօսութիւնները սկսելու թոյլտուութեան հրամանը: Ֆերմանը դեռ չէ ստացուեր:

Այսպիսի մեծ ու կարեւոր ձեռնարկ մը գլուխ հանելու համար երէց ընկերներ ամէն ճիգ ու զոհողութիւն չէին խնայեր, անդին մեր հակաակորդներն ալ հոգի ի բռին կը ճգնէին, նոյնիսկ մատնութիւններով զայն քանդելու իր սաղմնային վիճակին մէջ:

Վարժարանը ունի բարձր գոյճի ծրագիր. վեցամեայ ընթացքը իսկապէս գնահատելի արդիւնք ցոյց տուած է: Ուսանողներու մեծ թիւ մը հետզհետէ հոն կը դիմէ. այժմ արդէն որոշ համակրանք կը վայելէ բոլորին քով եւ ատոր մէջ կրկին կը տեսնեն Դաշնակցութեան գործնական ժողովրդականութիւնը: Ապագայ քաղաքական պատահականութենէ զերծ պահելու համար ջանացած ենք չէզոք հանգամանք տալ իրեն: Յառաջդիմական վարժարանի պիւտճէին օգնած են ընկերներ կանոնաւոր եւ բացառիկ նուէրներով, եւ Թատերասիրացը՝ ներկայացումներով: Յառաջդիմական վարժարանի վարչութիւնը ամէն տարի կ'ընտրուի շրջանային պատգամաւորական ժողովին մէջ. իր գործառնութեան մէջ ազատ է, սակայն կը վայելէ Երջանային կոմիտէի վերին հսկողութիւնը:

Գիւղացիական միութիւններ:— Թէեւ երեք տարիներէ ի վեր ջանք շատ թափուած է, սակայն անհնար եղած է կանոնաւոր գիւղացիական միութիւն մը առաջ բերել. մեր շրջանին մէջ անյաջողութեան գլխաւոր պատճառը գիւղացիներու տգէտ, հողագործ ու աղքատ ըլլալն է:

Քաղաքի մօտիկ գիւղացիները մեծ մասամբ միջրկայ եւ վարձկան են քաղաքի էջրաֆներուն⁵, պէկերուն եւ երբեմն ալ հայ աղաներուն: Ընկերներու այցելութիւններու շնորհիւ բաւական արթնացած են: Մեծ սէր մ'ունին դէպի Դաշնակցութիւնը: Սակայն նկատի ունենալով անոնց մտաւոր խեղճ վիճակը զանոնք առ այժմ դպրատուններու շուրջ հաւաքել աւելի նպատակալարմար սեպած ենք: Անցեալ տարի Պաղճաճիկ գիւղին մէջ բացուած էր դպրոց եւ քրտախօս տղայք ուղիմութեամբ կ'օգտուին անկէ:

Արհեստակցական միութիւն:— 1909 թուին արհեստակցական մասնախմբի մը ջանքերով կազմուած

5.- Էշրաֆ Երեւելի, ազդեցիկ աճնաւորութիւններ: Մրիպան սեփականագործ, անհող գիւղացի է, մշակ:

միութիւնները հետզհետէ լուծուելով այսօր գրեթէ չկան: Ասոր ալ անյաջողութեան պատճառը, արհեստաւորներու եւ բանուորներու տգէտ եւ իրենց իրաւանց դեռ վերահասու չըլլալն է: Երջանային պատգամաւորական ժողովով որոշուած է այս տարի կրկին մասնախմբի մը միջոցով ոյժ տալ արհեստակցական եւ բանուորական միութիւններու հետեւելով մասնաւոր սիստեմի եւ կարգապահութեան:

Գործակցական ձեռնարկ:— Բուն դաշնակցական գործակցական ձեռնարկներ չկան: Զանք կը թափուի ըլլալու:

Հնչակեաններ:— Իսկապէս մեզ հակառակելու համար կազմուած են հնչակեան խմբակները մեր շրջանին մէջ: Եւ այսօր դժբախտաբար քաղաքն ու շրջանին մէջ մեզի հաւասար թիւ կը կազմեն:

Իրենց շարքերը կը կազմեն մեծամասնաբար փեխան (սրիկայ) դասակարգը եւ մասամբ միջակ ու վաճառական դասակարգը: Երջանի մէջ ոչ մի յեղափոխական գործ չունին: Իրենց ձգտումները անորոշ եւ հակասական են իրենց ծրագրին. ամէն տեղ միացած եպիսկոպոսի, քահանայի, աղայի եւ հակաառաջդիմականի հետ մեր բոլոր գործունէութեանց դէմ կ'ելլեն: Քաղաքի եւ շրջանի դպրոցները որոնք քիչ շատ մեր տեղական մարմիններու ու դաշնակցական ուսուցիչներու շնորհիւ բարւոք ընթացք մ'ունէին, այսօր բոլորն ալ քանդուած է անոնց յարուցած դիտումնաւոր արգելքներու միջոցաւ:

Դաշնակցական շարքերու հետ կռիւ ընելու յամառ միտումներու ու ընթացքի մէջ են: Մատենէն, Արդիէն, Զերմուկէն, Սեւերէն, Հայնիէն, Լճէն շարունակ անոնց անազնիւ շահատակութիւնները կը գրեն մեզ. իրենց տեղական մասնաճիւղը ազնուութիւնը յանձն չ'առնել մեր դիմումները լսելու: Անցեալ աշունէն հոս բերուած են Փարամազ⁶ եւ Գ. Նալբանտեան գործիչները, որոնք թէեւ ամէն ճիգ թափեցին քաղաքին մէջ մեզ վնասելու, սակայն չյաջողեցան: Երջանները միայն շարունակ պտտելով յաջողած են բաւականին մտքեր պղտորել եւ Պիշերիկի կարգ մը գիւղեր հնչակեան կազմել:

Այս տարի ի նպաստ հնչակեան մամուլի ու այլ կարեւոր ձեռնարկներու համար վիճակահանութեան պլէթներ բռնիաբար հարուստներուն տարտղնելով բաւականին դրամ շորթեցին: Գրթիլ պիւղացի ասորի բողոքական Խըշոյն, եւ եղբորորդի Հաննոյն 150 լիւրա դրամ բռնիաբար եւ սպառնալիքով պահանջած էին. սակայն վերջը դիմադրութեան հանդիպելով շատ խայտառակուեցան: Դաշնակցութեան նմանելու համար այսօր իրենք ալ ունին օֆիս, թատրոն եւ լսարան. եւ «Գրասիրաց անուան տակ ուսանողական միութիւն մը:

Պէտք է ըսել որ Նալբանտեան գիւղերու ու գաւառակներուն մէջ աւելի մեծ շահատակութիւններ կ'ընէ. իրենց հնչակեան ընկերներէն, յանուն մամուլի դրամ հաւաքելէ ետք, Վերանշէհիւրի ազգայիններէն 20 լիւրա կ'առնէ իրենց իբր թէ գիրք-թերթ ղրկելու համար:

Հնչակեաններու հետ շատ փորձած ենք միջկուսակցական համերաշխական խորհուրդ մը կազմել, սակայն անոնք ատեն մը դիտմամբ կը խուսափէին, այժմ ալ իրենց պատգամաւորական ժողովի որոշումը մեզ յիշեցնելով ետ կը կենան: Զաւէն եպիսկոպոս, Սաւմանաղիւր ռամկավարներ եւ հնչակեաններ իրար հետ կապուած են մեզ դէմ աւելի յաջողութեամբ պայքարելու համար:

Սաւմանաղիւր Ռամկավարներ:— Անցեալ տարի եգիպտահայ բարեգործական անուանին տակ կազմուած խմբակն էր. այս տարի Դեկտեմբերի սկիզբներուն երեւան եկան իբր Ս. ռամկավարներ: Այս խմբակը եւս ամէն ճիգ թափեց ժողովրդեան մտքերը պղտորելու եւ Դաշնակցութիւնը վարկաբեկելու, սակայն անյաջող եղան: Զաւէն եպիսկոպոսը անոնց մարդն է: Յարդ որեւէ ժողովրդական ձեռնարկ չունին: Դժբախտաբար ժամանակին մեր ջանքերով ընտրուած ըլլալով գաւառական ժողովի անդամներ, մեծ մասը այսօր Ս. ռամկավարներ դառնալով մեզ դէմ են, եւ կ'աշխատին ամբողջ գործերու դեկը իրենց ձեռքը անցնել: Ս. ռամկավար 50-60 անդամ միայն Տիգրանակերտի մէջ կան եւ կ'աշխատին Ֆարդին ալ ճիւղ հաստատել:

Ազգ. իշխանութիւն:— Ծատ սերտ չեն եղած ընդհանրապէս մեր յարաբերութիւնները Ազգային իշխանութեանց հետ. կանգնելով Բարձր Հայքի Ռայ. ժողովի որոշման վրայ՝ աշխատած ենք Ազգ. իշխանութեան վարկը պահել: Ազգ. իշխանութիւնը սակայն հայ հասարակութեան, մասնաւոր գիւղացի զրկուածներու ժիր պաշտպան չի հանդիսանար, իր փրեսթիթը ինքնին բաղձալի ազդեցութիւնը չունի տեղական կառավարութիւններու մօտ: Ազգ. իշխանութեանց մէջ համեմատաբար 50% մեր ընկերներէն են:

Իթթիհատ:— Երջանի մէջ Իթթիհատի ճիւղեր չկան գրեթէ. քաղաքի մէջ կազմուած են ընդհանրապէս պաշտօնեայ եւ բարձր դասերէ:

Սկիզբէն ի վեր թէեւ իրար հետ կը յարաբերինք, սակայն ցարդ ուշադրութեան արժանի ժողովրդական ձեռնարկ մը չենք ունեցած միասին: Իրենց յարաբերութեան մէջ դժբախտաբար այնքան ալ անկեղծ չեն մեզ հանդէպ. մեծամասնաբար ազգայնամոլներ են եւ հայ:

6.- Սարգիսեան Մատթոս, հնչակեան յայտնի ղեկավար գործիչ:

րենասիրութիւնը անոնց մօտ թրքասիրութիւնով սահմանուած է: Կառավարիչները եւ պաշտօնեաները մեծ մասով իրենցմէ ըլլալով՝ դատաստանական գործերով վրայ ունին մեծ ազդեցութիւն: Ազդեցութիւն կը բանեցնեն շատ անգամներ իրենց անդամներուն ի նպաստ կամ որեւէ մէկի մը, եթէ կանխապէս իրենց մօտ իթթիհատական արձանագրուի:

Քէաթիպեան ծանօթ խնդրի առթիւ իթթիհատական հարցաքննիչի մասին մեր հրատարակած հակադաշնակցական եւ օրինազանց ընթացքը պատճառ եղած է մեր եւ անոնց ցրտութեան: Սակայն այսուհանդերձ կարելորդ է անոնց հետ յարաբերութիւնը չխզել:

Տեղիս իթթիհատականներու մէջ ամէնէն յուսալից կողմը կը ներկայացնէ 15-20 երիտասարդներէ կազմուած «Մեսաի Փերվեր» «Ջանասէր միութիւնը»: մեզ հանդէպ ունին սիրալիք վերաբերում: կը հետեւին նոր մտքերու եւ մեծ զարկ կու տան իրենց յառաջդիմութեան:

Իթթիհատականները ունին տպարան: կը հրատարակեն «Տիճլէ» -Տիգրիս- անուն շաբաթաթերթ մը:

Տեղական կառավարութիւնները.— Տեղական կառավարութիւններու հետ մեր յարաբերութիւնները ընդհանրապէս լաւ եղած է: Երջանները կուսակալի միջոցաւ ճանչցուցած ենք մեր մարմիններու ներկայացուցիչները: Քաղաքի ներկայացուցիչները առժամապէս ընդունուած են որովհետեւ կը պահանջեն կնքուած ծրագիր, յայտագիր եւ վկայական գոր մենք չունինք: Այս մասին ժամանակին գրած ըլլալով Բիւրոյին դարձեալ այդպէս կը մնայ: Երջանի մէջ տեղ. կառավարութիւնները մեծ նշանակութիւն կու տան Դաշնակցութեան: Մանաւանդ Ազատամարտին, կուսակալը եւ դատարանները շատ անգամներ թարգմանել կու տան Ազատամարտը:

Դատարանները.— Դատարանները ընդհանրապէս արդար եւ կտրուկ դատ չեն տեսներ արտաքին ազդեցութիւններու շնորհիւ: Երջանի մէջ պատահած շատ անգամ սպանութիւնները, առեւանգումները եւ բռնագրաւումները կ'անցնին անպատիժ կամ համեմատաբար շատ թեթեւ պատժով կը թողուին:

Դատերը շատ անգամ կը ձգձգուին, դատախազները կը յուսահատին, արդարադատութեան միամիտ յոյսով գործը դատարանին ձգած ըլլալուն համար:

Ոստիկանութիւնը թոյլ եւ անկարող է. քաղաքին մէջ դէպքեր անպակաս են:

Հողային խնդիր. Ազա. Պէկ. Էրզաթ.— Տիգրանակերտի մօտիկ վայրերուն մէջ բռնագրաւումներ կան: Գիւղերու պարտէզներու ամբողջութիւնը գրեթէ արդէն երկար տարիներէ ի վեր պէկերու, էջրաֆզատէնե-

րու սեփականութիւն դարձած են: Հողային բաւականին խնդիրներ կան Հազրոյի, Պիշերեկի եւ Սլիվանի շրջաններուն մէջ որոնց մասին դժբախտաբար ցարդ չենք կրցած ճշգրիտ ցուցակներ ձեռք բերել: Հողային դատ ունեցող հայեր, նոյնիսկ քիւրտեր հաւատ ու համարձակութիւն չունին դատարանին դիմելու որովհետեւ պէկը ամէն միջոց ունի իր ձեռքը զանոնք ճնշելու եւ գրաւածները ձեռքէ հանելու. ցարդ դատարանը ի նպաստ գրկուածներուն ոչ մէկ խնդիր լուծած կ'երեւայ եւ գրաւուած հողերէն ոչ մէկ կտոր գրեթէ իր բուն տէրերուն չէ վերադարձուած:

Տնտեսական.— Տիգրանակերտի շրջանը գլխաւորաբար կ'արտադրէ ցորեն, գարի, կորեկ, բամբակ, նուշ, չոր ծիրան, խէժ, բրինձ, մետաքս եւ ծխախոտ:

Այս վերջին երեքը համեմատաբար աւելի զարգացած է եւ բուրդ, իւղ ու ծիրան(?) բաւական քանակութեամբ կ'արտածէ:

Հողագործութիւնը նախնական վիճակին մէջ է. արհեստներու վիճակը վատ չէ, շերամաբուծութիւնը եւ մետաքսեղէնի գործերը մասնաւորապէս վերջին տարիները բաւական զարգացած են:

Քաղաքին մէջ կան 2 մետաքսի մանարաններ. 7 ժագարտ մեքենաներով Մանթին բանող գործարաններ մօտաւորապէս 400 գործաւորներ, 12 դրուշ օրավարձով:

Բացի գործարաններէն կան նաեւ մետաքսով գործելի չարչաֆի եւ բուշիի (գլխի փաթեթոց) տեղեկահաններ, որով կը զբաղին մօտաւորապէս 150 բանուորներ, միջին հաշուով 7 դրուշ օրավարձով. երկուքէն բաւական քանակութեամբ կ'արտածուի եւ կը սպառուի մասնաւորապէս Մուսուլի, Պաղտատի, Վանի, Պիթլիսի եւ Շամի մէջ:

1910 թուին շրջանի բերքը ընդհանրապէս գոհացուցիչ էր:

Այս տարուանը նուազ կ'երեւայ. ձմրան սառնամանիքները մեծապէս վնասելով կենդանիներուն՝ պանիրի, իւղի, մսի գները կրկնապատկուած, քառապատկուած են:

Ձիւնուորագրութիւնը զգալապէս կ'ազդէ տնտեսական վիճակին. սակայն ռեստիֆի եւ էյթիաթի պարագային աւելի շատ պիտի ազդէ, երկիրը ու ընտանիքները զրկելով բոլորովին աշխատող ու պաշտպան ձեռներէ: Իսլամները ռեստիֆութենէն ազատելու համար ունին շատ միջոցներ. զինուորագրութեան միայն աղքատները կ'երթան, 1910-ին թէմեթուէ (տասանորդ) գատ քաղաքին մէջ տուրք չէ վճարուած. շրջաններէն լրիւ տեղեկութիւն չենք ստացած այս մասին:

Սահմանադրութենէ ասդին զգալի փոփոխութիւն չէ կրած ժողովրդի տնտեսականը. բացառաբար օգտուած են դրամատէրներ, վաճառականներ, մանր գործատէրերը. մասնաւորապէս տեղական մանիսագործութիւնը

երկու երեք տարուայ ընթացքին մէջ եւրոպական ապրանքներու ներածումով գրեթէ քանդուած է եւ շատ մ'ընտանիքներ թշուառացած. մանիսագործի (Շէյթանպեղի ջուլհակ) 400-500 տեղեկահաններէն այսօր հազիւ 80-70 տեղեկահա կը հաշուուի:

Տիգրանակերտի մէջ մօտաւորապէս 15,000 հայ կը հաշուուի. կուսակալութեան մէջ եղածին թիւը չկրցանք իմանալ, եւ առաջնորդարանն ալ չունի կանոնաւոր ցուցակ: Հայերը շատ մը տեղեր քրտախօս են եւ անկիրթ:

Գաղթ. ներգաղթ.— 95 թուէն ասդին մօտաւորապէս 1500 անձ — անհատ եւ ընտանեօք միասին — գաղթած են, մեծ մասը Ամերիկա, մնացածը Եգիպտոս, Հալէպ, Պոլիս, Կիպրոս եւն. Սահմանադրութենէ ասդին հազիւ 20 ընտանիք եւ 30-40 անձ վերադարձած են:

Տիգրանակերտի մէջ մօտաւորապէս 2000 պանդուխտներ կան — անհատ եւ ընտանիքով — բոլորն ալ գրեթէ շրջանի վայրերէն հին ռեստիֆին անապահովութեան երեսէն փախած են: Մուշի, Վանի եւ շրջակայ գեղրանքներէն 1000ի չափ ալ համայնք եւ մշակներ կու գան ու կ'երթան:

Պանդուխտներու մեծ մասը արհեստաւոր, բանուոր եւ քիչ մասը առեւտրականներ են:

Սահմանադրութենէ ասդին որչափ դարձած են երկիր, գրեթէ կրկինը գաղթած են:

Ազգային մշակութեւ վարժարանները.—

Տիգրանակերտի մէջ կան հետեւեալ վարժարանները.		
	ուսուցիչ	ուսանող
Յայոց Ս. Կիրակոս եկղց. Ազգ. երկսեռ վրժ. — Գալսակրթարան	25	800
Յայոց Ս. Սարգիս եկղց. Ազգ. երկսեռ վրժ. — Գալսակրթարան	8	210
Յայոց կաթոլիկ եկղց. Ազգ. երկսեռ վրժ. — Գալսակրթարան	8	200
Յայոց բողոքական եկղց. Ազգ. երկսեռ վրժ. — Գալսակրթարան	5	150
Լատինացոց երկսեռ Գալսակրթարան	4	150
Դաշնակցական «Յառաջդիմական» վրժ. բարձրագոյն	5	107
Պետական Տարիւմուալիմ (ուսուցչաց)	10	70
Պետական Ռուշտի Ասքրի	10	150
Պետական Իտատի վարժարան	8	200
Պետական թաղային վարժարաններ	10	150

Թուրքերուն թաղերու մզկիթներու մէջ կան նաեւ շատ մը մետրասաներ: Ասորիներուն, յոյներուն եւ քեաղդէացիներուն կան միայն 40-50 աշակերտներով տէր Թոթիկեան դպրատուններ:

Պետական ուսուցչանոցին մէջ կան 20. իտատիի մէջ 30 հայ ուսանողներ:

Բացի Սլիվանէն, շրջանին մէջ կան 39 ծաղկոցներ 51 պաշտօնեաներով 1785 աշակերտներով:

Քաղաքին մէջ «Յառաջդիմական» վարժարանը եւ շրջակայ գիւղերուն մէջ Հայեղիկի, Պաղճաճիկի, Սադուգեղի, Տպնէի, Ջերմուկի դպրոցները գրեթէ ուղղակի Դաշնակցութեան ազդեցութեան ներքեւ են:

Մնացածներէն տասէն 5-ը անուղղակի կերպով մեր ազդեցութեան կ'ենթարկուին:

Շրջանի մէջ գտնուած ուսուցիչներու 2/3-ը դաշնակցական են:

«Յառաջ» վարժարանի ուսանողութեան մեծագոյն մասը Դաշնակցական համարելով, շրջանի մէջ ալ խլրտացող ուսանողներու 50%ն ապագային Դաշնակցութեան հող կրնանք նկատել, եթէ յաջողինք ամէն տեղ դաշնակցական ուսուցիչներու մուտքին հետ շրջիկ պրոպագանդիստներ ապահովել:

Տիգրանակերտի մէջ մեր ուղղակի եւ անուղղակի ազդեցութեան տակ կան 5 գրադարան. հայ կաթոլիկ Ջարգասիրաց միութեան՝ 1 եւ Ս. Դ. Հնչակեաններուն՝ 1:

Կուսակցութիւնները.— Քաղաքի մէջ կան 5 կուսակցութիւն Դաշնակցութիւն — 330

Հնչակեան — 300

Իթթիհատ — 200

Ահար յայտնի չէ եւ գործօն ալ չեն:

Ս[ահմանադիր] Ռամկավար — 80:

Շրջանները հնչակեանները մեզի չափ, Իթթիհատ բաւական քիչ, Ահար եւ Ս. Ռամկավար չկան:

Արհեստային յարաբերութիւններ.— Ընդհանրապէս շրջանի բոլոր կողմերը արմատական թշնամութեան մը հանգամանք կայ հայու եւ միւս բոլոր ցեղերու մէջ: Անոր ալ գլխաւոր պատճառը կրօնական նախապաշարումներն են որ երկու կողմէն — համեմատաբար հայեր աւելի նուազ — կրօնաւորներու ձեռքով գրեթէ կը ներշնչուի միամիտ հասարակութեան:

Սահմանադրութենէ ասդին քիչ լաւցած է:

Տեղական իշխանութիւնները.— Տեղական իշխանութիւնները գոհացուցիչ դիրքի մը մէջ չեն. ամբողջ շրջանին մէջ թէեւ պաշտօնէից փոփոխութիւն եղաւ, սակայն դժբախտաբար նոր դրուած պաշտօնեաները իրենց կարողութիւններով ու տրամադրութիւններով հիններէն քիչ տարբերութիւն կը ներկայացնեն: Ոստիկանական եւ դատարանական անհրաժեշտ փոփոխու-

Թիւններու պէտքը կը զգացուի: Զոր օրինակ, անհատի անպարտ արձակուած պարագային, զրպարտող դատախազին խիստ պատիժ եւ իրաւանց ու պատուոյ հատուցում, եւայլն. եւ քաղաքի ու շրջաններու պատահած որեւէ դէպքի պարագային ոստիկանութիւնը ենթարկել պատասխանատուութեան: Վարը կը դնենք գլխաւորաբար աչքի զարնող կարգ մը պատասխանատու պաշտօնեաներու՝ սահմանադրասէր, բարեխիղճ եւ ձեռնհաս՝ ու հակառակը եղողներու ցանկը:

Սահմանադրասէր, բարեխիղճ, ձեռնհաս պաշտօնեաներ

Անուն մականուն	Ծննդավայր	պաշտօն	պաշտօնավայր
Ղալիպ փաշա	Պոլիս	կուսակալ	Տիգրանակերտ
Մուխթար Շէրիֆպէյ	Շամ	մեքթուպճի	>
?	Քասթեմունի	տէֆթէրի խազանի	միւտիւրի >
Ալի Ուլի պէյ*	Պոսնիա	ընդհ. դատախազ	>
Մուրատ պէյ	?	ժանտարմա գոմանտար	>
Էմրուլլահ պէյ	վանեցի	էրզանի հարպ	>
Շէֆքի պէյ**	Խարբերդ	էրզանի հարպ	>
Շէֆքէթ էֆ.	?	միւթեսարըֆ	Մերտին

* Ընդի. դատախազը միայն սահմանադրասէր եւ ձեռնհաս կ'երեւայ:

** Շեֆքի պէյ իրօքիատական է, խիստ ազդու սահմանադրական մը: 909 Մարտ 31ին Տիգրանակերտի մէջ ինքն էր որ զսպեց յետադիմականները եւ կառավարութեան շէնքին մէջ ծեծել տուաւ սաստիկ կերպով Գազոյի բռնաւոր Սեվտին փաշան, քաղաքի Նիազի պէկը: Շեֆքի կ'ատէ սակայն կուսակցականները. մեզ հանդէպ նախանձոտ դիրք ունի:

Ոչ-սահմանադրասէր անձեռնհաս, անբարեխիղճ պաշտօնեաներ

Անուն մականուն	Ծննդավայր	պաշտօն	պաշտօնավայր
-	Շամ	գատի	Տիգրանակերտ
Մուսթաֆա էֆ.	Տիգրանակերտ	էվրագ միւտիւրի	>
Համիտ էֆ.	>	վերկի միւտիւրի	>
Էմին պէյ	Կարի՞ն	հարցաքննիչ	>
Շեֆիգ պէյ	Սեւերէկ	բանտի տեսուչ	>
Ճեզրալի գատէ			
Սաիտ էֆ.	Տիգրանակերտ	քաղաքապետ	>
Սրկու յոյներ	Ռումելի	խմբիկապետ	>

Շրջաններէն մեր տարտղնած հարցարաններուն պատասխանները դժբախտաբար չենք ստացած: Գաւառներէ եւ քաղաքէն հայերէն վերցուած զինուորներու թիւը չենք կրցած ճշդել. թէ այս եւ թէ ուրիշ հարցումներուն ստացուած պատասխաններուն համաձայն լրացուցիչ տեղեկագիրը պատրաստելով, պատգամաւորին կը յանձնուի որ բերէ, կամ եթէ յարմար եղաւ ուրիշ անգամ կը դրկենք:

Կովկասահայ հանգանակութիւն.— Կովկասահայ քաղ. բանտարկեալներուն ի նպաստ կատարուած հանգանակութեան արդիւնքը քաղաքի եւ շրջանի քանի մը տեղերու մէջ եղած էր մօտաւորապէս 100 օսմ. լիրա: 90 լիրան ղրկուած է կեդրոնական յանձնախմբին, մնացածն ալ քիչ օրէն կը ղրկուի հասցէին: Հանգանակութիւնը գրեթէ կատարուած է մեր շարքերուն մէջ ամբողջովին. հակառակորդները, մասնաւորապէս հնչակեանները, մեծ արգելքներ յարուցին անյաջողութեան համար:

Հ.Յ.Դ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷ

Փաստ. 744-57 եւ 57ա

Գ 1.- Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԱՅՈՐԻ ԳՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Հ.Յ.Դ. Վիշապաճորի Երրորդ Շրջանային ժողովի որոշումները» խորագրով գոյութիւն ունին խմորատիպ երկու փաստաթուղթեր, որոնցմէ առաջինը (744-57) մակագրուած է «մարմիններուն». երկրորդը (744-57ա) ըստ երեւոյթի իբրեւ շրջաբերական սահմանուած էր կուսակցական շարքերուն: Հակառակ խմբագրական եւ բովանդակային գալի տարբերութիւններուն, երկուքը միասնաբար մէկգմէկ կը լրացնեն: Հետեւաբար, կրկնութիւններէ խուսափելու համար, ջանացած ենք Շրջ. ժողովին որոշումներուն ամբողջութիւնը, առանց խմբագրական փոփոխութեան, միացեալ մէկ շարադրութեամբ ներկայացնել:

1.- ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Քաղաքական ըուպէի գնահատութիւնը

Աչքի առաջ ունինք Ա.) որ՝ սահմանադրութիւնը թուրքիոյ մէջ ստացուած չէ ժողովրդական մասսաներու յեղ. կռուի մասնակցութեամբ Բ.) որ՝ սահմանադրական իրաւունքներու անգիտակցութիւնը համատարած է ժողովրդական մասսաներու վրայ. Գ.) որ՝ ազգամիջեան եւ միջցեղեան զանազան հակամարտութիւններ դեռ ուժ ունին. Դ.) որ՝ կրօնական մոլեռանդութիւնը նոյնիսկ փոքրիկ չափերով ետ չէ մղուած. Ե.) որ՝ կառավարութիւնը — մանաւանդ գաւառներու մէջ — կտրուկ ու վերջնական միջոցներ ձեռք չառաւ պատժելու համար հին ռեժիմի մեղսակիցները. Զ.) որ՝ աւատական-բռնապետական-կղերական զանազան տարրեր արդէն համարձակ կռիւ են յայտարարած նոր ռեժիմի դէմ. Է.) որ վերջապէս յեղ.-ազատական կազմակերպութիւններու եւ աշխատաւոր ժողովրդի միջեւ եղած վստահութիւնը թուլացաւ շնորհիւ այդ կազմակերպութիւններու կողման անհամապատասխան բարձրութեան. Ը.) որ՝ արտաքին քաղաքականութիւնը միշտ կը սպառնայ մեր երկրի վերածնութեան — այս բոլորը կ'եզրակացնեն որ սահմանադրական կարգերը հեռաւոր, մանաւանդ մօտաւոր ապագայի համար բոլորովին ապահով չենք կրնար ընդունիլ: Բայց, միւս կողմէ Շրջ. ժողովս գոհունակութեամբ կ'արձանագրէ այն անմիջական օգուտները, որոնք դէպի յառաջդիմութիւն կը մղեն ժողովուրդի կեանքը շնորհիւ սահմանադրական զանազան ազատութիւններու, որոնց խորացումին ու զարգացումին մէջ, կը գտնենք սահմանադրական կարգերու վերջնական յաղթանակը:

Օսմանեան սահմանադրութիւն

Օսմ. սահմանադրութեան մասին լսելով զեկուցում եւ այդ մասին գաղափարի փոխանակութիւն ունենալով կը գտնենք որ Օսմ. սահմանադրութիւնը պէտք է վերանորոգուի հետեւեալ կերպով:

- 1) Վեհապետական իրաւունքները պէտք են հասցըլին նուազագոյնին. 2) Երկպալատեան սիստեմի փոխարէն մի պալատեան սիստեմ (մէճլիսի այսին՝ ջնջել). 3) պէտք է աշխատիլ իրականացնելու համար երկրային-ազգային ապակեդրոնացման սիստեմը, օրէնսդրական, վարչական-դատաստանական, ինքնավարութեան լայն հիմունքներու վրայ համասօսմանեան դաշնակցութեան սահմաններուն մէջ:

Մէճլիսի մէպուսան⁸

Մէճլիսի մէպուսանի ընտրական հրահանգը պէտք է բարեփոխել համեմատական (ազգային) եւ ուղղակի (25000 հոգի մի պատգամաւոր) սկզբունքներուն համաձայն. այժմեան մէճլիսի մէպուսանի օսմ. աշխատաւորութեան շահերուն անհամապատասխան կազմը նկատի ունենալով պիտի աշխատինք քննադատել անոր հակառակ դիմական գործունէութիւնը միշտ բարձր պահելով սակայն անոր պետական գերագոյն հիմնարկութեան վարկը:

7.- Ծերակոյտը:
8.- Խորհրդարան, Ազգային ժողով:

Տեղական կառավարություն

Աչքի առաջ ունենալով տեղական կառավարություններու անգոհացուցիչ եւ երկրի իրական շահերու անհամապատասխան կազմութիւնը, Շրջ. ժողովը կ'որոշէ դաշնակցական մարմիններու հսկողութեան տակ կազմել կուսակցական անհատներէ մասնախմբեր, որոնց պաշտօնը լինի Ա.) օրը օրին հետեւիլ տեղ. կառավարութեան գործառնութիւններուն, Բ.) շրջաններէն փաստեր ու ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքել տեղական կառավարութիւններու մասին. Գ.) պարբերական տեղեկութիւններով մամուլին յանձնել կարեւոր իրողութիւնները եւ Դ.) մշակել երկրին տնտեսական, կրթական բարգաւաճման նպաստող ծրագիրներ ու անոնց գործադրութեան համար աշխատիլ: Մասնաւոր խումբերը յարաբերութիւն պիտի պահեն իրարու հետ մարմիններու միջոցաւ:

Զինուորագրութիւն եւ բանակ

Մշտական բանակի հակաշխատաւորական բնաւորութիւնը աչքի առաջ ունենալով, սկզբունքով դէմ ենք մշտական զինուորական կազմակերպութիւններուն, բայց աչքի առաջ ունենալով Ա.) որ՝ հայ ժողովուրդը տարիներու ընթացքին մէջ զուրկ մնացած լինելով զինուորական մարտական գործողութիւններէ, կորսնցուցած է իր ասպետական յատկութիւններէն լաւագոյն մասերը. Բ.) որ՝ հայ անգէն ու անվարժ ժողովուրդի քով զինուած ու մարզուած դրացիները մշտական սպառնալիք են երկրի ու մեր ժողովուրդի անդորրութեան. Գ.) որ՝ զինուորագրութեան միջոցով ազգերու համերաշխութեան ճանապարհը պիտի հարթուի. Դ.) որ՝ տնտեսապէս ընճկուած հայ ժողովուրդը զինուորական տուրք չի կրնար վճարել. կը գտնենք որ հայ երիտասարդութեան զինուորագրութիւնը կանոնաւոր ու օգտակար է: Ընդօժեւելով հանդերձ այս ամենը մենք համամիտ ենք խառն բանակներու սիստեմին: Յետոյ — բանակի օրէնքներու անմիջական վերանորոգութեան եւ բանակներու շրջաններու մէջ ծառայեցնելու դրութեան:

Ժողովը նկատի ունենալով զինուորագրութեան ձգձգումը, միաձայնութեամբ որոշեց, որ շրջանի մարմինը մասնաւոր տեղեկութիւններ առնելէ վերջ Բիւրոյն, ժողովրդական հողի վրայ պահանջէ զինուորագրութեան գործադրումը:

Ազգութիւններու հարց

Նկատելով որ՝ ազգ. հարցի կնճռոտութիւնը միշտ արգելքներ պիտի յարուցանէ մեր աշխատաւորական գործունէութեան առաջ, երկրի շինարար քաղաքակրթութեան համար անհրաժեշտ է հիմնուիլ միմիայն այն

տարրերու ու սկզբունքներու վրայ, որոնք իրենց հութեամբ երբեք չեն կարող կողմնակից հանդիսանալ ժողովրդական բարօրութիւնը քայքայող ազգ. արիւնոտ ատելութիւններուն. Շրջ. ժողովը անհրաժեշտ կը գտնէ աշխատիլ դաշնակցական կազմեր առաջ բերել բոլոր օսմ. պետութիւնը բաղկացնող ազգութիւններու միջեւ ու այսպիսով ազգութիւններու իրաւահաւասար Դաշնակցութեան ճանապարհը հարթել:

Ինքնապաշտպանութիւն

Աչքի առաջ ունենալով Ա.) որ՝ հին ռեժիմի նպատաւորեալները մշտական սպառնալիք են նոր ռեժիմի համար, Բ.) որ՝ երկրի նոր կարգերուն սպառնացող իւրաքանչիւր ցնցում անմիջականօրէն կ'անդրադարձնայ հայ ժողովուրդին գոյութեան վրայ, Շրջ. ժողովը կը յանձնարարէ ինքնապաշտպանութիւնը իբրեւ համաժողովրդական պահանջ դնել անկուսակցական հողի վրայ, միեւնոյն ժամանակ պարտք կը դնէ դաշնակցական մարմիններու վրայ տեղական հանգամանքներու համաձայն աշխատող ընկերներու զինման գործը կազմակերպելու. Գ.) այլեւ կը պահանջէ ետ կենալ ամէն տեսակի գրգռիչ ցոյցերէ զանազան առիթներու մէջ:

Շրջանային ժողովը աչքի առաջ ունենալով ինքնապաշտպանողական թոյլ վիճակը, երկար խորհրդակցութենէ մը վերջ, որոշեց որ՝ ասկից առաջ այդ նպատակին համար եղած նուիրատուութիւններու հետ Զիֆոնի համար նախապէս հաւաքուած դրամներուն վրայ նորէն հանգանակուելիքները բարդելով յանձնել այդ նպատակին համար կազմուելիք մասնախումբին: Մասնախումբը լինելով ամբողջ շրջանին համար, շրջանի բոլոր մարմիններու վրայ պարտք կը դրուի իրենց աջակցութիւնները միացունել: Իւրաքանչիւր մարմին Զիֆոնի մասնախմբին տրամադրութեան տակ դրած փոխ դրամին ալ համեմատութեամբ պէտք է արդիւնք սպասէ: Մարմիններուն ղրկելիք դրամագլուխը 10 լիւրայէն պակաս ըլլալու չէ:

Նշանաձգութիւն, մարմնամարզ.— Ժողովը նկատի ունենալով ինքնապաշտպանութեան մէջ նշանաձգութեան եւ մարմնամարզական կրթութեանց անհրաժեշտութիւնը, պարտք կը դնէ մարմիններու վրայ որ պարտադրեն խմբերն ու ընկերները կանոնաւորապէս ուժ տալու այս պարագաներուն:

Մեր դիրքը դէպի Իթիօպիա

Աչքի առաջ ունենալով որ՝ Ա.) Իթիօպիայի Օսմ. պետութեան մէջ վճռական ուժ մըն է սահմ. կարգերը պաշտպանելու. Բ.) որ միակ տարրն է որուն հետ եւ

որուն միջոցով մենք հնարաւորութիւն ունինք մեր գաղափարները տարածելու թուրք ժողովուրդին մէջ. Գ.) որ՝ անոր միջոցով մենք պիտի կրնանք կառավարական մասնակի դժուարութիւնները հարթել. Դ.) որ՝ չունի յեղ. գտուած համոզումներ ու դաստիարակութիւն: Առանց շեղելու մեր սկզբունքային ու կազմ. հասկացողութիւններէն, Շրջ. ժողովը կը յանձնարարէ համերաշխ յարաբերութիւններ հաստատել իթիօպիական մարմիններու հետ, չմոռնալով պահանջ դնել անոր շարքերուն մաքրութեան:

Մեր դիրքը դէպի Հնչակեանները

Ժողովը երկար զբաղելէ վերջ մեր շրջանին մէջ հրնչակեաններու հանդէպ բռնելիք դիրքի մը մասին, ընդդէմ 4-ի 10 ձայնով հետեւեալ բանաձեւը ընդունեց.

Ա.) Խորունկ ցաւով կը նկատենք, որ անոնք կազմուած են միայն հակա-ընկերվարական, հակա-յեղափոխական, այլեւայլ հակա-առաջդիմական անմաքուր եւ դաւադիր ուժերէ. Բ.) որ՝ այդ անունին տակ փողոցային պայքար մղուած է Դաշնակցութեան եւ ժողովուրդի լաւագոյն խտէլներու դէմ. Գ.) որ՝ յանուն լաւագոյն շահերու մեր երկարատեւ լուծութիւնը արդէն չափազանց սուղի նստած է ոչ միայն Դաշնակցութեան այլ եւ ժողովուրդի յառաջդիմութեան վրայ. Գ.՝ Շրջան. պատգ. ժողովը կ'որոշէ, որ մեր յարաբերութեան խնդիրները հնչակեաններու հետ՝ ձգուի Շրջան. մարմին ըստ յարմարութեան կարգադրելու, որը պէտք է նկատի ունենայ միջ-կուսակցական ժողովներու որոշումները ինչպէս եւ տեղի պայմանները:

Շրջ. ժողովս կը յանձնարարէ դաշնակցական ընկերներուն իրենց կենդանի օրինակով հնչակեան մաքուր տարրերը մեր դրօշին տակ բերել եւ համերաշխութիւնը պահպանելով՝ առաջը առնել ազգային եւ պետական կեանքի մէջ յետադիմականներու արշաւանքին:

2.— ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Տնտեսական

Ժողովը շրջանի մէջ ազգաբնակչութեան մեծագոյն մասին տնտեսական խեղճ ու տխուր վիճակը նկատի ունենալով, երկար խորհրդակցութիւններէ յետոյ, ընդդէմ 2-ի 13 ձայնով հետեւեալ բանաձեւը ընդունեց. «Աչքի առաջ ունենալով Ա.) որ՝ մեր շրջանի ամբողջ տարածութեան վրայ, մեր երկրի միակ հարստութեան աղբիւրը կազմող հողերը այսօր կը գտնուին միայն մի քանի կալուածատէրերու ձեռքը. Բ.) որ՝ այս վերջիններն այդ ընդարձակ գետիններուն տիրացած են ապօրինի եղանակներով. Գ.) որ՝ անոնք օգտուելով բռնապետա-

կան կառավարութեան ընձեռած դիւրութիւններէն, օրինական ձեւ տուած են իրենց շահատակութիւններուն, Դ.) որ՝ դեռ այսօր ալ այդ գորաւորներն են միայն օրէնքէն, դատարանէն, ու փաստաբանական ուժերէն օգտուողները. եւ Ե.) որ՝ այդպիսով մեր շրջանի աւատական կազմը միշտ պահելով իւր նիւթական ու բարոյական գորութիւնը, խոշոր խոչընդոտ կը հանդիսանայ, ինչպէս հազարաւորներու յառաջդիմութեան, այնպէս ալ սահմանադրութեան բարիքներու գերիշխանութեան:

Գ.՝ Շրջանային ժողովը կ'որոշէ Ա.) յատուկ մասնախումբի մը միջոցաւ, եւ մարմիններու օժանդակութեամբ վիճակագրութիւններ կազմել հողային հարցի մասին. Բ.) կոչ ընել ժողովուրդասէր իրաւաբաններուն, որ փութան հոս բազմահազար զրկուածներու պատուաբեր դատերը վարելու եւ Գ.) պէտք եղած միջոցներով օգնելու, որ հակասահմանադրական պէկութիւնը տեղի տայ աշխատաւորական իրաւունքին:

Արհեստակցական միութիւններ

Ժողովը նկատի ունենալով Արհեստակցական միութեան հարցը, երկար վիճաբանելէ վերջ Բ. Շրջ. ժողովի հետեւեալ բանաձեւը ընդունեց.

«Նկատելով արհեստաւորներու, բանուորներու տնտեսական ու բարոյական չքաւորութիւնը, Շրջանային ժողովը կը յանձնարարէ մարմիններուն զարկ տալ արհեստակցական միութիւններուն, թելադրելով անոնց չզբաղուիլ միայն ստամոքսի խնդիրներով, չտարուիլ տնտեսութիւնը քայքայող ծայրայեղ պահանջներով, այլ եւ մեծ ուժ տալ կազմակերպութիւններու յեղափոխական, զարգացողական-բարոյական կարիքներուն:

Գիւղացիական միութիւններ

Շրջանային ժողովը իմանալով որ շրջանի մէջ գիւղացիական միութեանց համար գրեթէ լուրջ աշխատանք չէ տարուած՝ ընդդէմ 1-ի 18 ձայնով Բ. Շրջ. պատգ. ժողովի հետեւեալ որոշումը ընդունեց եւ պարտք դրեց որ՝ իւրաքանչիւր մարմին իր շրջանակին մէջ զայն կատարելու աշխատի: Նկատելով որ՝ Ա.) տակաւին աղայական-պէկական կարգերու տակ գիւղացիութեան անհող ու սակաւահող մասը լայն շահագործումներու կ'ենթարկուի. Բ.) որ՝ գիւղացիական աշխարհի վրայ ծանրացող անօրինակ բռնութիւնները մեծ համեմատութիւններ կը ստանան գիւղի շահագործուող տարրերու անհամերաշխ ու անմիաբան գործունէութենէն. Գ.) որ՝ գիւղի շահագործող դրամական եւ այլ բիրտ ուժերը մշտական դաւերով հակամարտութիւն կը ստեղծեն շահագործողներու բանակին մէջ եւ այսպէսով հրէշաւոր չափերու կը հասցունեն իրենց

քայքայիչ գործը. Երջանի ժողովը անհրաժեշտ կը գտնէ կազմակերպել գիւղացիական միութիւններ, որոնց նպատակը լինի պաշտպանել տնտեսական, բարոյական եւ մտաւորական շահերը, անհող, սակաւահող, եւ միայն իրենց աշխատանքով ապրող գիւղացիներուն, առանց խտրութեան:

Յաւելուած.— Զարկ տալ նաեւ անոնց ինքնապաշտպանութեան գործին:

Գործակցական ձեռնարկներ

Նկատելով Ա.) որ՝ քաղաքային եւ գիւղային աշխատաւորութիւնը շահագործման անուղղակի՝ բայց մեծ չափերու կ'ենթարկուի, նաեւ այն պատճառով որ չէ կազմակերպած իր համեստ ու բաժան-բաժան նիւթական ու բարոյական ոյժերը, Բ.) որ՝ մեր երկրի նախնական առեւտուրի եւ արդիւնաբերութեան ուժասպառող հանգամանքներու դէմ յարմարագոյն ու յաջող միջոցն է գործակցութիւնը. Գ.) որ՝ այս վերջինը ունի նիւթական անմիջական օգուտներ, բացի այն՝ համայնական ընկերվարական կենցաղի մէջ մէկ բջիջներն են ներկայ հասարակութեան ծոցին մէջ. Երջ. ժողովը կը յանձնարարէ մարմիններուն սկսիլ կազմակերպել արտադրողական գործակցութիւններ, քաղաքի արհեստաւորներու մէջ — սպառողական խանութներ՝ գիւղի եւ քաղաքի աշխատաւորութեան համար եւ յառաջ բերել համայնական շտեմարաններ, մեքենաներ եւ տաւարներ գիւղական աշխարհին մէջ:

Աշխատանքի Տուև.— Աչքի առաջ ունենալով Ա.) որ՝ անաշխատութիւնը — մանաւանդ իգական սեռին մէջ — կապուած է մի շարք հակաշահութեամբ անպատեհութիւններուն հետ. Բ.) որ՝ տնտեսական ապահով վիճակներ յառաջ բերելով մեծ զարկ տուած կը լինինք նաեւ ազատական գաղափարներու յաղթանակին, Երջ. ժողովը կը յանձնարարէ ձեռնարկել Աշխատանքի Տուևեր հիմնելու:

3.— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Սմբական կազմ.— Երկար բարակ վիճաբանութիւններէ վերջ, Երջ. ժողովը դաշնակցական իրաւասու մարմիններուն կը յանձնէ, համաձայն մեր կանոնադրին եւ տեղին ու պարագաներուն, որոշել օժանդակ, քաղաքական եւ մարտական խումբերու կազմը:

Կարմիր-խաչ.— Հ.Յ.Դ. Կարմիր-խաչերը ինքնավար են իրենց ներքին գործերուն մէջ. ի հարկին անոնք կը դիմեն համապատասխան մարմիններու աջակցութեան:

Ժողովը այս անգամ եւս ընդունելով Կ.-խաչի միութեան անհրաժեշտութիւնը իգական սեռին մէջ, պարտք կը դնէ շրջանի մարմիններու վրայ որ անոնք ուժ տան այս միութեան, եւ թելադրեն ընկերներուն որ աշխատին իրենց պարագաներուն մէջ պրոպագանդ մղել, որ մասնակցին Կ.-խաչի միութեան:

Կարմիր-խաչը ջանք պիտի թափէ իր կարգին դաշնակցական նպատակներու իրագործումին եւ յառաջացումին: Կարմիր-խաչը լուծուած պարագային գոյքերը, դրամները կը մնան Դաշնակցութեան:

Ուայոնական ժողով.— Ժողովը նկատի ունենալով, որ խիստ անհրաժեշտ է մեր մասնակցութիւնը Արեւելեան Ռայոնական ժողովին⁹, կազմակերպական շատ մը խնդիրներու համար, որոշեց ընկեր մը դրկել, ծախքի հայթայթման միջոցը թողովը Երջանային մարմին, որը իր սնտուկէն՝ կամ խումբերէն հանգանակելով՝ պիտի վճարէ:

Որինականացման հարցը.— Մեր դիրքը վերջնականորէն որոշելու համար, սպասելով հանդերձ Պոլսի մարմնոյ հրահանգներուն, Երջ. ժողովը հիմնուած ընկերներու տրամադրութեանց վրայ, կը յանձնարարէ հրաժարիլ Դաշնակցութեան անուան տակ հրապարակային գործունէութենէ:

Պիւտեճ.— Միաձայնութեամբ անցեալ տարուայ ձեւն ընդունուեցաւ, այսինքն 70%ը դրկել Երջանային մարմինին, իսկ մնացեալ 30ը տեղական մարմիններուն ծախս:

4.— ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ազգային ժողովներ

Նկատելով որ Ա.) Ազգային սահմանադրութիւնը կարօտ է հիմնական վերանորոգութեան՝ համաձայն ժողովրդական ռամկավարական շահերու. Բ.) որ՝ ազգային երեսփոխանական, գաւառական, քաղաքական, տնտեսական ժողովները կարեւոր դեր կը կատարեն Ազգ. գործերու մէջ, Գ.) որ՝ աղայական-տէրտէրական-իշխանական տարրերը չարաչար կը շահագործեն իրենց պաշտօնները. Երջ. ժողովը կը յանձնարարէ դաշնակցական ընկերներուն պրոպագանդ մղել յօգուտ սահմանադրութեան վերանորոգումին եւ իբրեւ ազգային անհատներ աշխատիլ այդ ժողովներուն մէջ մտցնել ժողովրդի շահերուն հաւատարիմ մարդիկ:

Դպրոց եւ ուսուցչութիւն

Ժողովը երկար խօսելով մեր ներկայ դպրոցներու ուսուցչութեան կազմի մասին, ընդդէմ 1-ի 14 ձայնով հետեւեալ բանաձեւը ընդունեց. «Աչքի առաջ ունենալով Ա.) որ՝ Ազգային դպրոցներու ղեկավար մարմինները — Ուսումն. խորհուրդը եւայլն — հակադատութեան ու մանաւանդ հակաառաջդիմական իրենց կազմով ու ձգտումներով մեծ աղէտներ կը հասցնեն Ազգ. կրթական գործին. Բ.) որ՝ ասոնց բոլոր գործերը իբրեւ «Օրինական» դժուար փոփոխելի են ժողովրդի միջոցաւ, քանի որ այլեւս ժամանակավրէյ դարձած Ազգ. Սահմանադրութեան որոշ տրամադրութիւններու վրայ են հիմնուած. եւ Գ.) որ՝ անհնար է սպասել մինչեւ այն ժամանակ, երբ ժողովրդի շահերու ու ժամանակի պահանջներուն համեմատ վերաքննուած ու վերափոխուած կը լինի Ազգ. Սահմանադրութիւնն ու անոր միջոցով նաեւ ազգ. ինքնավարութեան միւս հիմնարկութիւններն, որոնց մէջ եւ դպրոցը:

Գ. Երջանային ժողովը պարտք կը դնէ Ա.) բոլոր ընկերներու վրայ երեւան բերել դպրոցի այժմեան աննախանձելի դրութեան հիմնական պատճառները. Բ.) հաստատել կրթական գործի գլուխ գտնուող տարրերուն իրենց պաշտօնին անընդունակութիւնն ու անկարողութիւնը. Գ.) հնարաւոր միջոցներով եւ ազգային իշխանութեան չենթարկուող մարմիններով հիմնել նորագոյն դպրոցներ համաձայն պետական, մանկավարժական պահանջներուն. Դ.) կարելի եղածին չափ ասպարէզ բանալ կարող, աննախապաշարուած ու ազատամիտ ուսուցիչներու առաջ դպրոցները. Ե.) աշխատիլ դպրոցէն դուրս վտարել տալ յետադէմ, անբարոյական ու անարժան պաշտօնեաները եւ վերջապէս դպրոցական ու ընտանեկան յարկերը իրար կապել բարոյական-կրթական, ինչպէս եւ հաշուետուական յարաբերութիւններով:

Մասնաւոր դպրոց.— Մասնաւոր դպրոցի մը պէտքը խիստ զգալի դարձած ըլլալուն համար տեղիս մէջ, ժողովը միաձայնութեամբ որոշեց որ արդէն ծրագրուած մասնաւոր դպրոցին ուժ տրուի:

Ուսանողական միութիւն

Գ. Երջանային ժողովը լուրջ ուսումնասիրութեան ենթարկելով աշակերտական այն խլրտումները, որոնք ինչպէս հոս, այնպէս եւ առհասարակ Թուրքիայի չորս կողմերը տեղի ունեցան այս տարի, եւ գտնելով որ Ա.) անոնք արդիւնք են դպրոցի մէջ տիրող բռնաւոր,

անմիտ ու անխիղճ օրէնքներուն. Բ.) որ՝ անոնք հակադատական եւ հակամանկավարժական ծրագրիներու կոպիտ ուժով գործադրութենէն կը բխին. Գ.) որ անոնք անխուսափելի են, քանի գոյութիւն ունի դպրոցի նիւթական ու բարոյական անհաշիւ, անկազմակերպ ու անքոնթրոլ մատակարարութիւնը. Դ.) որ՝ անոնց դէմ մղուած աղտոտ պայքարը գիտական ու բարոյական ո՛չ մի հիմք չունի. Երջ. ժողովս իր համակրանքը կը յայտնէ արթնցող ու նոր գաղափարներով ոգեւորուող հայ մատաղ աշակերտութեան, ու կը յանձնարարէ բոլոր դաշնակցական ընկերներուն, պաշտպան հանդիսանալ անոնց, եւ վար առնել անոնց կեղծաւոր հակառակորդներու դիմակը: Որպէսզի այս աշխատանքը յաջողութեամբ գլուխ հանուի, Երջան. ժողովը կ'որոշէ դպրոցներու մէջ կազմուած պատանեկան խմբերը ենթարկել տեղական մարմիններու հսկողութեան:

Մայրենի լեզու

Նկատելով Ա.) որ մայրենի լեզուի կրթութիւնը ժողովրդական յատկանիշներէն մէկն է, Բ.) որ՝ կրթութիւնը մայրենի լեզուով միայն բնական ու ներդաշնակ է, Գ.) որ մայրենի լեզուն կորսնցուցած համայնքները շատ շուտով կ'ենթարկուին ուժացումի եւ Դ.) որ մեր մօտ մայրենի լեզուի տեղ գործածուող լեզուները — արաբերէն, թուրքերէն — զուրկ են կրթական համապատասխան արժանիքներէն, Երջ. ժողովը 1) կը յանձնարարէ պրոպագանդ մղել ի նպաստ մայրենի լեզուին, 2) դպրոցներ բանալու ձեռնարկել մայրենի լեզուն կորսնցուցած գիւղերուն մէջ, 3) առանձին ուշադրութիւն դարձնել աղջկանց վարժարաններու վրայ:

Եկեղեցի եւ յարանուանութիւններ

Նկատելով Ա.) որ՝ եկեղեցին իր ապիկար եւ ճրիակեր պաշտօնեաներով, աշխատաւոր ժողովրդի նիւթական եւ բարոյական կենսական ոյժերը կը խլէ, Բ.) որ՝ յանուն եկեղեցիի կղերական ու կղերամիտ տարրերը պայքար կը մղեն յեղափոխութեան դէմ. Գ.) որ՝ յարանուանական առաւելութիւններու պատճառով ազգային գաղափարն եւ ոյժը կը նսեմանան. Դ.) որ կրօնը անհատի խղճի գործն է. Երջ. ժողովը կը յանձնարարէ Ա.) իրբեւ ազգային անհատներ վար առնել ժողովրդի մոլեռանդութիւնը շահագործողներու դիմակները. Բ.) պրոպագանդ մղել լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական հատուածները ազգային միութեան շուրջ համախմբելու՝ անոնց յարանուանական ատելութիւններն ոչնչացնելու համար:

9.- Տես Ներկայ հատորի էջ 162-174:

**5.- ԳՐԱԽՈՐ ԵՒ ԲԱՆԱԽՈՐ
ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆ**

Դաշնակցութեան հրատարակութիւններ.— Երկար վիճաբանութիւններէ վերջ Շրջ. ժողովը քաղաքներու խումբերու համար մէյ-մէյ օրինակ Ազատամարտ եւ Դրօշակ ստանալ պարտաւորեցուցիչ կ'ընդունի, իսկ շրջ. ենթակոմիտէները եւ քաղաքի Կ. խաչը պարտաւոր են առնուազն 2-ական օրինակ ունենալ. Շրջ. Կարմիր խաչը 1 օրինակ ունենալու է:

Ազատութեան մատենադարանի եւ Յառաջ գրադարանի մասին պահանջ ղնելով հանդերձ որ, որչափ կարելի է հասկնալի ոճով խմբագրուին, Շրջ. ժողովը պարտք կը ղնէ դաշնակցական մարմիններու վրայ կանոնաւորել անոնց սպառումի գործը:

Մամուլ.— Մամուլի հարցի մասին երկար խօսելէ վերջ որոշուեցաւ առայժմ լիթոկրաֆով¹⁰ մեր հրատարակութիւնները կատարել:

Լսարաններ.— Նկատելով Ա.՝ որ՝ ժողովուրդի մէջ նահապետական-կղերական մտքերը առատ սնունդ կը մատակարարեն՝ յետադիմական հոսանքներու, Բ.՝ որ՝ ազատ խօսքը լաւագոյն միջոցներէն է ժողովուրդը գիտակցութեան բերելու. Գ.՝ որ՝ բեմի ազատութիւնը չարաչար կը գործածեն խաւար ուժերը. Շրջ. ժողովը կը յանձնարարէ զարկ տալ լսարաններու ծառայեցնելով զանոնք յեղափոխական-ընկերակարական պրոպագանդին՝ յարգելով հանդերձ կարծիքներու ազատութիւնը:

Լսարան եւ եկեղեցի.— Թեր ու ղէմ վիճաբանելէ վերջ որոշուեցաւ ամէն գնով բաց պահել տալ եկեղեցին ժողովուրդի լսարաններու առաջ:

Ներկայացումներ.— Նկատելով որ 1) Թատրոնը ժողովուրդի դաստիարակութեան կը նպաստէ. 2) որ նա գեղարուեստական հոգեկան վայելք կը հայթայթէ բազմաչարչար ժողովուրդին, 3) որ շնորհիւ բռնապետութեան՝ Թատրոնը անբարոյական հիմնարկութեան մը

10.- Բառացի՝ վիմատիպով. գործածուած է խմորատիպի համար:

վերածուած էր՝ ժողովուրդը անասնացնելու ծառայող. Շրջ. ժողովը կը յանձնարարէ ներկայացումներ կազմակերպել, ուշադրութիւն դարձնելով անոնց բարոյական-գեղարուեստական պահանջներուն:

Պրոպագանդայի հարց.— Նկատի ունենալով պրոպագանդիստի պահանջը, միաձայնութեամբ որոշուեցաւ որ ընկեր ճէմիլը՝ յառաջիկային համար բռնել դարձեալ իր պրոպագանդիստ, եւ հատ մ'ալ պահանջել Բիւրոյէն. սակայն ընկեր ճէմիլ՝ հակառակ եղած պնդումներուն, եւ տրուած դիւրութիւններուն՝ մերժեց:

6.- ԹԵՆԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովը ընդհանրապէս անբաւարար նկատելով հողային խնդրոց ու աւատականներու ու պէկերու մասին ներկայացած տեղեկագիրները, մասնաւոր պարտք կը ղնէ շրջանի բոլոր մարմիններու վրայ որ ձեռնարկեն ճշգրիտ վիճակագրութիւններու:

Պարտք կը դրուի մարմիններու վրայ որ ստուգեն եթէ Տիրապէցիւրի գաւառական ժողովին իրենց շրջանէն պատգամաւոր չէ եկած կամ պակաս ղրկուած է, աշխատին նոր ընտրութիւններով դաշնակցական ընկերներ (Տիրապէսակերտէն) գաւառական ժողովին մէջ մտցունել, նկատի ունենալով անոր անյետաձգելի անհրաժեշտութիւնը:

Շրջանի մարմինները Շրջանային ժողովէն վերջ անյապաղ պիտի ղրկեն իրենց հին պարտքերը:

Շաբաթը անգամ մը շաբաթավճարները պէտք է հաւաքուին խմբին մէջ, ամիսը անգամ մը պիտի ղրկուի մարմինն եւ մարմիններն ալ անյապաղ եռամսեայ հաշիւները պիտի փութացնեն Շրջանային մարմինն:

Ներկայ բոլոր որոշումները պարտաւորիչ են մինչեւ Դ. Շրջանային ժողով:

Բարեւներով
**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Վ[ԻՇԱՊԱ]ՁՈՐԻ Գ.Ր ԾՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

10 Յունիս 910

Փաստ. 744-58

Գ 2.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐԳ[ԻՈՅ] ՀԱՏՈՒԱԾ)

ԿԱՐԻՆ

Ընկերներ

Յուլիս 8-ին Վ[իշապա]ձորի շրջաններէն Սողոմի, Վրէժի-Ձորի, Ընդարձակ Դաշտի, Ապառաժ [Եռ]ի, Բարայրի, Գետափի եւ տեղական պատգամաւորներու մասնակցութեամբ Գ. Շրջանային ժողովը սկսելով՝ վերջ գտած է Յուլիս 19-ին:

Որոշումներու եւ մանրամասնութեանց մասին ուրիշ առթիւ կը գրենք:

Առայժմ մեր շրջանին համար, ստիպողաբար գործիչ-ընկեր մը յատկացնել անհրաժեշտ դարձած է, որովհետեւ ընկեր ճէմիլ³ հակառակ ընկերներու եւ Շրջ. ժողովի ստիպումներուն՝ մեկնեցաւ Սղերդ, անկից ալ անցնելու համար Կարին, ուր հրաւիրուած է Սանասարեանցի տեսչութեանէն:

Թէ՛ տեղւոյս եւ թէ՛ շրջանի ընկերները պրոպագան-

դիստ-գործիչի խնդրով մեզ անդադար հետապնդելուն՝ Ձեր անմիջական նկատառման կը յանձնենք զայն:

Ռայոնական ժողովի գումարման ու վայրի մասին⁹ հաճեցէ՛ք շուտով մեզ հաղորդել Ձեր հրահանգները. Շրջ. ժողովը արդէն մեր շրջանի կողմէ Ռայոն. ժողովին պատգամաւոր ընտրած է ընկեր -----¹¹:

Ամէն պարագայի տակ փափաքելի էր որ մեր շրջանին պէս ընդարձակ ու կարեւոր տեղ գրաւող շրջանակ մը ունենալով իր մասնաւոր պատգամաւորը՝ չզրկուէր Ռայոնականի մասնակցութեանէն, որմէ կախուած է պրոպագանդիստի եւ ուրիշ կարգ մը անյետաձգելի պահանջներու անմիջական բաւարարութիւնը:

Ընկ. բարեւներով՝
Հ.Յ.Դ. Վ. ՁՈՐԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

20/7/1910, Վ. Ձոր

Թ. Գ.— Եթէ հնարաւորութիւն ունիք թելադրեցէ՛ք գէթ ընկեր ճէմիլ հոս մնայ: Արտաքին բուռն հոսանքներուն դիմադրելու համար ճէմիլի պէս ուժի մը կարիքը խիստ զգալի է: Հակառակ պարագային կարող, լուրջ եւ թրքազէտ ընկեր գործիչ մը մեզ հայթայթեցէ՛ք. Վիշապաձորի շրջանը շատ կարօտ է նամանաւանդ կազմ[ակերպական] տեսակէտով:

Շրջանին մէջ քաղ. վիճակը անդորր է, միայն բաւական տարածաշրջան եւ կասկածներու տեղի տուած՝ անցեալ օր շուկային մէջտեղը առանց պատճառի թուրքէ մը հայ երիտասարդի մը ատրճանակով սպանութիւնը:

Ո՛չ նուազ կասկած ու լքում առաջ բերած է Պիշերիկի աշխրթապետ Հասոյի Իպրահիմի անպարտ դատարանէն արձակուիլը:

Հասոյի Իպրահիմը, կատարեալ պատուհաս մըն էր Պիշերիկի գիւղացիութեան գլխուն. 100 մարդ սպանած էր հին ռեժիմի ատեն: Մարտ 31-ի¹² շրջանի գլխաւոր ռէակտիոններէն էր, Սեվտին¹³ փաշայի հարազատ գործակիցը: Կառավարութիւնը ա՛ֆ Գիզամնային համաձայն ներման արժանացուցեր էր զայն, սակայն այդ աններելի ներումէն յետոյ — երկու տարիէ ի վեր —

նորէն իր հին ընթացքը շարունակած էր: Ամբողջ ճնշուած գիւղացիութեան միահամուռ բողոքով թէ՛ եւ բռնուեցաւ եւ սակայն անպարտ արձակուեցաւ, հիասթափութեան եւ յուսահատութեան մէջ թողնուելով գիւղացին...

Ընդ. դատախազը պաշտպանած է բացարձակապէս ոճրագործը, կարծես թէ կառավարական մասնաւոր հրահանգով մը:

- Ահա՛ անոր խօսքերը.
— Ասոնք աղաւաթ են, թէ՛ եւ երբեմն ժողովուրդը կը նեղեն, բայց շատ անգամ ալ կրնան պաշտպանել:
— Ասոնք մեզի պէտք են...
— Ասոնք աշխրթապետներ են. թէ՛ շատ նեղելու ըլլանք, տակէն ուրիշ բաներ կ'ըլլէ...

Լսարանական պայքարը հոս ալ բուռն է. որոշած ենք կտրուկ քայլեր առնել, արդէն անցեալ շաբթուն Անդի-Թաղի եկեղեցին ժողովուրդը բացաւ¹⁴. այս թաղն ալ պիտի փորձենք (ժողովուրդական):

Անդի-Թաղին համար Ազգ. Առաջնորդարան եւ Քաղ. ժողովը կառավարութեան դիմած է բացողները ձերբակալել տալու համար: Տեսնենք վերջը:

ՆՈՅՆ

11.- Նշուած Ռայ. ժողովին Վիշապաձորի պատգամաւորներն էին Վրոյր եւ Բեգու: Տես էջ 162:
12.- Ակնարկութիւն Ապտիւլ Համիտի կողմէ սահմանադրական կարգերը տապալելու փորձին:
13.- Ուղիղը՝ Սէյֆետտին փաշա:
14.- Գարցը կը վերաբերի «բացի-գոցի» ծանօթ խնդրին, այսինքն եկեղեցւոյ բեմը իբր ժողովրդական լսարան աշխարհականներու կողմէ օգտագործուելու արտօնութեան կամ արգելքին:

Փաստ. 744-77

Դ 1.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

20 Հոկտ. 1910

Ընկերներ

Ժողովրդեան վիճակը կը վատթարանայ օրէ օր. տիրող քաղաքականութիւնը ծանր մղձաւանջի պէս կը ճնշէ հայ ազգաբնակչութեան սրտին վրայ, ուսկից յուսահատական աղաղակներ կը բարձրանան շարունակ: Կառավարութեան կողմէն արդարութեան եւ բարեմուտութեան ո՛չ մի նշոյլ կը տեսնենք դէպի հայր: Մեր բոլոր դիմումներն ու բողոքները կը մնան ապարդիւն եւ անարգանք ու սպառնալիք կը յարուցանեն միայն մեզի դէմ: Խուզարկութիւններէ ու լրտեսութենէ զատ, որոնք դադրած են այժմ, ամէն բան համարական սիստեմով կ'ընթանայ եւ կը ձգտի իր ծայրայեղութեան հասնիլ: Սլիվանի կառավարութիւնը ո՛չ մի ժամանակ իր շրջանակին մէջ ունեցած է ներկային պէս ստորին նեղ հայեացք եւ բռնակալական ոգով լարուած պաշտօնեաներ, որոնք գուրկ պետական ճշմարիտ շահերու գիտակցութենէ, մէկդի դրած խիղճն ու ուղղամտութիւնը՝ ամբողջովին տրամադրած ըլլալին ինքզինքնին՝ աղա-պէյերու քմահաճոյքները գոհացնելու եւ յայտնի ու բացարձակ կերպով այդ հրէշներուն գոհելու աշխատաւոր ժողովրդեան իրաւունքները: Տեղակալ* Մեմէտ Թէլհաթ էֆ. եւ ոստիկան զօրաց հարիւրապետը — Ալի էֆէնտի — մանաւանդ՝ ջերմեռանդ քուրմերն եւ երկրորդադասներն են աւատապետական կուռքերուն. ասոնց պաշտօնավարութիւնը նախատինք մըն է Օսմ. սահմանադրութեան եւ ստորնութիւն՝ կառավարութեան անլան: Վերջինը ամէն օր աղապէյերու սեղաններուն վրայն անոնց պնակները կը լիզէ անամօթաբար: Իրաւագործ ժողովուրդէն ոչ մէկ անհատ այլեւս կ'ուզէ իր ոտքը կառավարչատան շեմէն ներս կոխել եւ բողոքել աղայի մը կամ անոր մէկ պաշտպանեալին կողմէն կրած զրկանքին համար. զի երբ բողոքը անոնց դէմն է ուղղուած՝ բողոքողն է յանցաւոր անպատճառ եւ կ'ենթարկուի լիջեալ հարիւրապետի յանդիմանութեան եւ լուտանքներուն: Հին ռեֆորմի ժամանակ աւելի տանելի էր մեր վիճակը. զի այն ատեն մօտալուտ բարենորոգումներու յոյսը կը կրէինք մեր մէջ, որը կը թեթեւցնէր մեր կրած բոլոր նեղութիւնները: մինչ այժմ այդ յոյսը մարած է, քանի որ մեր բոլոր ակնկալութեանց պսա-

կումը եղաւ Սահմանադրութիւն մը՝ որ նախկին բռնութիւնները նուիրագործեց:

Ամէն մէկ պէկը եւ աղան փաստաբան մը վարձած է իրեն առատ վճարումներով. միեւնոյն ժամանակ գիտէ կառավարական պաշտօնեաներու քիմքերը միշտ քաղցրը պահել. ասոնց հետ ինչպէ՞ս գլուխ պիտի կրնայ ելնել խեղճ ժողովուրդը՝ որ ոչ լեզու ունի եւ ոչ դրամ իր դատը պաշտպանելու: Գոնէ տգէտ եւ անճարակ վարդապետներու տեղ՝ առաջնորդարաններու մէջ ունենար ուղղամիտ, կարող եւ անկաշառ փաստաբաններ, որոնք կառավարական շրջանակներուն մէջ պաշտպանէին իր իրաւունքները եւ լսեցնէին անոր արդար բողոքները:

(Դուք պիտի կրնա՞յիք արդեօք Պոլսէն վստահելի փաստաբան մը դրկել հոս՝ եթէ սլիվանցին հեռացնելով իր ներկայ առաջն. փոխանորդը (զոր գուր տեղ կը պահէ) ասոր տեղ՝ այդ փաստաբանին յատկացնել ուզէր իր առաջնորդարանի համար ըրած գոհողութիւնները — տարեկան մօտաւորապէս 70-80 ոսկի — քանի որ փոխանորդի եւ փաստաբանի համար զատ զատ չի կրնար գոհողութիւն ընել: Այս մասին ձեր պատասխանին կը սպասենք):

Անցեալ օր առաւօտուն Թրդպսի Պետրոսը՝ իր եղբոր եւ ծառային հետ՝ իր սեփական արտին մէջ ցանք ըրած ժամանակ՝ Հաճի Սատուն աղայի մարապաները¹⁵ անոր ծառաներու առաջնորդութեամբ՝ հոն տանելով իրենց լուծքերը՝ կ'ուզեն զայն վռնտել եւ արտը իրենք սերմել բռնութեամբ՝ իբր աղային սեփականութիւնը: Պետրոսը կ'ընդդիմանայ բնականաբար, ուստի անոր վրայ յարձակելով՝ քարով, փայտով եւ դաշոյններով կը վիրաւորեն զայն իր եղբորը եւ ծառային հետ: Ասոնք (Պետրոսը, իր եղբայրն ու ծառան) իրենց արօրները իշու վրայ բեռցնելով հոս բերին եւ կառավարչատան բակը ձգեցին բողոքելով իրենց պատահածի մասին եւ ցոյց տալով իրենց ստացած վէրքերը: Կառավարութիւնը մի քանի ժամ հոն արգիլելով գիրենք իբր յանցաւոր՝ յետոյ արձակեց. իսկ Սատուն աղան պատասխանատուութեան չենթարկեց բնաւ: Սատուն աղան բաւական չհամարելով Թրդպսի մէջ ցարդ իւրացուցած կայրուածները՝ կ'ուզէ գիւղացիներու ձեռք մնացած մի քանի կտորներն ալ սեփականացնել. այս նպատակաւ նորանոր էնթրիկներու կը դիմէ, հարեւան քիւրտ գիւ-

ղացիները կը դրդէ սուտ վկաներով եւ զրպարտութեամբ հայերու ձեռքէն հանել իրենց հողային սահմաններուն կից ասոնց ունեցած սեփական արտերը, ջնջին գնով մը իրեն ծախելու համար. կառավարութիւնը միշտ ի նպաստ անոր վճիռ կու տայ, արգիլելով հայերը վարուցան ընել իրենց սեփական արտերուն մէջ:

Քէօն Սըլօն՝ որ անցեալին մէջ ահարկու բռնաւոր եւ կեղեքիչ մը եղած է միշտ Խիանի համար իբր աղա եւ միանգամայն միւտիր, Սահմանադրութիւնը հաստատուելէն ի վեր զրկուած էր իր պաշտօնէն եւ բաւական ամփոփուած. վերջերս սիրտ առնելով տիրող դրութենէն՝ կեղծ կնիքներով հանրագրութիւն մը կը պատրաստէ եւ կը դրկէ Մշոյ կառավարութեան կրկին միւտիրութեան կողմէն ի նպաստ ու կը յաջողի իր նպատակին հասնիլ դիւրաւ: Այժմ վերսկսած է իր սովորական կեղեքումները, առաջին աւթիւ իր շրջանի գիւղերէն իւղ եւ ոչխար պահանջելով. քանի մը տեղերէ հաւաքած է արդէն:

Փափարի կենճոն՝ որ հակառակ իր գործած անթիւ ոճիրներուն եւ սպանութեանց՝ վերջերս ազատ ու անպարտ արձակուեցաւ Մշոյ բանտէն, մէկկի մէկկի գիւղէն դուրս շարտել սկսած է նորգեղցի հայերը՝ իւրացնելով անոնց հողերը: Ասոր ազգականներէն մին՝ Բաշիտի լամուկը¹⁶՝ նորգեղի մէջ, աղբիւրի վրայէն բռնի առեւանգեց կիւր թարուքցի Սեդրակ Մուրատեանին, որը օր մը առաջ կառավարութեան ներկայանալով՝ սատուցի ուրիշ շատ մը երիտասարդներու հետ գուրաքաշած էր եւ զինուոր արձանագրուած: Սասնոյ Բուսանաց գիւղախմբի հայ երեւելիները՝ այդ դէպքէն յուզուելով՝ Գապլօզ կառավարութեան կը դիմեն եւ կը պահանջեն որ առեւանգուած կիւր իրենց յանձնուի: Երկու հարիւր զինեալ քիւրտեր նոյն միջոցին կառավարչատան շուրջը կը հաւաքուին եւ մերժելով կիւր յանձնել կը սպառնան հայերուն: Գէորգ Զաւուչի հօրեղբոր որդին՝ Ղազարը՝ զայրանալով բաց է բաց տեղակալին կ'ըսէ որ եթէ կացութիւնը այսպէս շարունակի իրենք պիտի ստիպուին նորէն լեռը ելնել եւ երկիրը խռովութեան մատնել. տեղակալը կը յայտնէ թէ ինքը անկարող է բան մը ընելու քանի որ իր հրամանին տակ զօրք չունի եւ տեղական բոլոր պաշտօնեաներն ալ հակառակ են իրեն:

Դժուար կը լինի մէկկի մէկկի ներկայացնել հոս հարստահարութեանց եւ բռնութիւններու բոլոր դէպքերը եւ յետադիմական քայլերը: Հարկ չկայ աւելի փաստեր շարելու: Մեր բոլոր գրածները չափազանցութիւն մի նկատէք եւ հայուն սովորական լալկանութիւն մի սեպէք: Լաւ գիտցէք որ անիշխանական վիճակ կը տիրէ մեր շուրջ: Կը ցաւինք որ իրերու այս կացութեան հանդէպ փոխանակ մեր քաղաքական բոլոր կուսակցութիւնները եւ ազգային իշխանութիւնները ձեռք ձեռքի տուած՝ համերաշխութեամբ երկրի ցաւերուն դարման-

ման հոգ տանելու՝ ստորին վէճերով եւ բաց ու գոցի նման չնչին խնդիրներով¹⁷ իրարու դէմ լարուած՝ զիրար քննադատելու, անուանարկելու եւ ցեխտոտելու կը նկրտին: Ափսո՛ս:

Մեր ամէն ցաւերուն վրայ լուր կը շրջի թէ ժողովրդեան ձեռքէն բոլոր գէնքերը պիտի հաւաքուին: Եթէ կառավարութեան բարեմտութիւնը տեսած ըլլայինք եւ անոր անխտրականութեան, արդարութեան եւ ուղղամտութեան վրայ հաւատք ունենայինք, այդ լուրը մեզ ցաւ չէր պատճառեր բնաւ. այլ ուրախութիւն ընդհակառակն, քանի որ հայերու մէկ հրացանին դէմ քիւրտերը ունին 100 հրացան ու աւելին. բայց մենք լաւ գիտենք որ հարուածը դարձեալ հայերու գլխին է որ կ'իջնէ գէնքի հաւաքմամբ, վասնզի քիւրտերու ձեռքին գէնքերը չեն առնուիր երբեք եւ եթէ առնուին ալ հազիւ հարիւրին տասը, ան ալ անպէտ եւ անգործածելի եղածները միայն, կամ մէկ ձեռքով առնուածները միւս ձեռքով ետ պիտի տրուին անոնց՝ ինչպէս եղած է յաճախ. մինչդեռ հայերու քով դանակ մը իսկ չպիտի թողուի այդ պարագային: Եթէ Սահմանադրութիւնը հոգակուելէն ի վեր շատ անգամ չէյնարու եւ աւատապետներու կողմէ գծուած հայկական ջարդի ծրագիրները անգործադրելի մնացին՝ զլիսաւոր պատճառը հայերու զինուած ըլլալու եւ դիմադրելու գաղափարէն առաջ եկած անհամարձակութիւնն է եղեր: Հայերու ձեռքէն գէնք առնելը՝ զայն քիւրտին պատրաստ որս դարձնել եւ անոր կեանքը կապտել կը նշանակէ*: Այս աւթիւ ի՞նչ է ձեր խորհուրդը. ինչպէ՞ս վարուելու է ժողովուրդը՝ եթէ մի օր յանկարծ պահանջուին անկէ անձնապաշտպանութեան համար իր մեծ գոհողութեամբ եւ դժուարութեամբ հազիւ ձեռք բերուած քանի մը կտոր գէնքերը:

Տիրող ցաւալի դրութիւնը՝ յոռի ազդեցութիւն առաջ բերած է հասարակութեան տրամադրութիւններուն վրայ. կազմակերպական գործը լքուած եւ քայքայման դատապարտուած է գրեթէ: Ձեր կողմէն ալ քաջալերութիւններ կը պակսին դժբախտաբար. մեր նամակները անպատասխան կը թողուին. մեզ կը թուի թէ Դաշնակցութիւնը մայրաքաղաքին մէջ ալ նախանձելի վիճակ մը չի ներկայացնել այժմ:

Կովկասահայ բանտարկելոց ի նպաստ մեր ձեռքէն եկածը պիտի ընենք. կը ցաւինք որ մեծ արդիւնք մը չպիտի կրնանք գոյացնել: Արդէն վաղուց հանգանակութեան սկսած են. մօտերս կը դրկենք մեր հայթաղած գումարը:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. Փրակերթոյի կոմիտէի կողմից
ԼՈՒՍԻԿ

* Տեղակալի հեռացման համար կը խնդրենք կարելին ընել հոն. եթէ անիկա շարունակէ հոս մնալ, Սլիվանը պիտի աւերէ:

15.- Սարապա կամ մրիպա՝ հողագուրկ գիւղացի, սչակ:

16.- Որդին:

* Հոս գիւղեր կան՝ ուր այն աստիճան անապահարութիւն կը տիրէ՝ որ գիւղացիները առանց գէնքի չեն համարձակուիր լուծքի երթալ:

Փաստ. 744-92

Գ 2.- ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ ՀԱԶՐՈՅԻ. ԹԻՒԵՐՆ ԱԼ ԿՐՆԱՊ ՀԵՐՔԵԼ

Ներքին գործերու նախարարութեան

Ոչ մէկ բարեխիղճ մտածող պիտի համարձակէր պահանջել, որ անմիջապէս, կամ կարճ ժամանակի մը մէջ քաղաքակրթական բարիքներու հայրենիքը դառնար մի երկիր, որու մէկ ծայրէն միւսը համիտական բռնատիրական խորշակը մահ ու աւեր տարածեց, արիւն ու հողեհ սփռեց, գաղթ ու ջարդ գոյացուց, բայց եւ ոչ մէկ բարեմիտ խորհող չի կրնար առանց վրդովմունքի նկատել, որ բազմատանջ մեր ժողովուրդի գէթ ապագան ապահովելու եւ անոր յառաջադիմութիւնն ու ստեղծագործող աշխատանքը փութացնելու համար՝ ամենահասարակ ձեռնարկները դեռ կը մնան յուսախաբ երազներ լոկ:

Ընկերաբանական, պետական, գիտական, խղճի ինչ օրէնք կ'ուզէք առէ՞ք, ամէնքն ալ պիտի աղաղակեն, որ զրկուածներու, հարստահարուածներու, մարդկային տարրական իրաւունքներու պաշտպան Մահմանադրութեան ոգիին տրամագծօրէն հակառակ է մի դրութիւն, մի հասարակարգ, որու ծոցին մէջ անծնունդ մահուան են դատապարտուած Յիմնական օրէնքի ամենապարզ պահանջները, ինչպէս օրինակ, խօսելու, դատի, խղճի ազատութիւնը, կրթութեան, յառաջդիմելու, ֆիզիքական հանգստի երաշխաւորումը, հանրային բարօրութեան, ապահովութեան եւ պետական կազմի շահերուն գերադասումը ունէ անհատական, ցեղապետական շահէ մը:

Երեսուն միլիոնանոց օսմանեան քաղաքացիներու կառավարութիւնն իրենց ձեռքն առած պետական մարդիկ, եթէ դժբախտութիւնն ունին յաւիտենապէս անձանօթ մնալու այդ ազգաբնակչութեան կեանքի իրական պահանջներուն, եթէ անոնք յանցանքն ունին այդ կեանքի աղաղակող փաստ-ապացոյցներու առաջ անտարբեր մնալու, եթէ մանաւանդ անոնք, այդ պետական մարդիկը, ոճիրը կը գործեն դէմ — հակառակ երթալու այդ կեանքի ձեռքազատուած յառաջդիմութեան, ապա ուրեմն դարձեալ պէտք է կռել այն արշալոյսը, երբ «սահմանադրական կոճակները» իրաւունք չպիտի ունենան պատասխանատուութենէ ու պատիժէ ազատ պահելու զանոնք: Եւ ահա թէ ինչպէս բնականօրէն տեղի կ'ունենայ այդ: Կը խօսինք թուրքով ու վստահ ենք, թէ զանոնք հերքելու համար մարդիկ քարէ ուղեղ ունենալու են անպատճառ:

Տիրապետելի վիճակին ենթակայ Հազրոյի գա-

լառն այցելեցինք: Ահա մեր համառօտ ուսումնասիրութեան արդիւնքը:

Հազրոյի դաշտին մէջ կան 80 գիւղեր՝ հայ եւ քիւրտ — վերջինները կը կազմեն մեծամասնութիւն — մօտաւորապէս 15000 բնակիչներով եւ մօտ 80000 քիւրտ տարածութեամբ հողերով:

Այդ ամբողջ հողերը հիմա սեփականութիւնն են միայն 2-3 մարդու: Սուլթան Համիտի սիրական յայտնի ուժաբաստնէր Սէյֆէտտին փաշան տարիներու ընթացքին մէջ կարողացած է իւրացնել այդ ամէնը բոլոր այն «օրինաւոր» եւ ապօրինի միջոցներով, որոնք իրաւունք կու տային երէկուան անօթի գաղթականին մի քանի տարւան մէջ անբաւ հարստութիւն եւ անզուգական ազդեցութիւն ձեռք բերել: Օսմանցիական ականջներն այնքան յոգնած են բիրտ վայրագութեան ու խուժուժ անիրաւութեան մասին լսելէ, որ բոլորովին կը հրաժարինք այստեղ խօսելէ յիշեալ աւագակապետի եւ իր արբանեակներու գործադրած ու անպատիժօրէն գլուխ հանած սարսափներու, թալաններու, սպանութիւններու, առեւանգութիւններու, բռնի աշխատութիւններու եւայլնի մասին: Հազրոյի իւրաքանչիւր քարը, իւրաքանչիւր խոտը այդ մասին ահագին բաներ ունին պատմելիք:

Այստեղ մենք կ'առնենք միայն ա'յնպիսի պարագաներ, որոնց մէջ գողապատիւ փաշան ու իր արժանի ժառանգներ Պէտրի եւ Նաթիպ պէկերը գրաւած են բոլոր այդ գիւղերը, որպէս թէ օրինական միջոցներով:

Մէջ կը բերենք միայն մի քանի օրինակ, յայտնելով նախապէս, որ մնացած բոլոր գիւղերու վերաբերմամբ կամ նոյն եւ կամ աւելի դաժան սիստեմն է գործադրուած: Հարկ կա՞յ նախապէս յայտնելու, որ մեզ համար բոլոր քրտաբնակ գիւղերն այցելել ու այդտեղէն թիւեր հաւաքելը բոլորովին անթոյլատրելի է կամ անկարելի է, զանազան պատճառներով, որոնց մէջ ամենաուժեղը պէտք է ընդունիլ պէկական յայտնի գրգռումներն ու թելադրութիւնները, որոնց նպատակն է ստրուկ գիւ-

Ծանօթ.- Վիճակագրական ճշմարիտ թիւեր չեն ասոնք. արդէն բոլորովին անհեթեթութիւն է սպասել այդ քանի որ կառավարական տեսակետով իսկ — կարծես — վիճակագրութիւնը կ'ընդունուի կամ աւելորդ, կամ — թերեւս — վնասակար մի գործ:

ղացիներն անհաղորդ պահել «կեաւորի» ամբարիշտ մտքի ծնունդ սահմանադրական ազատութիւններուն:

Սկսինք.

Հայաբնակ Ազրակ գիւղը կը հաշուէ իբր 35 տուն մօտ 1000 քիւրտ հողի տարածութեամբ. հիմա ամբողջ գիւղը Նաթիպ պէկի անունին վրայ ֆերաղ եղած է, ի փոխարէն ... քսան (20) ոսկիի: Հաշուեցէք, ո՞վ կառավարական յարգելի պաշտօնեաներ: Մէկ քիւրտ կ'իյնայ միայն 2 դրուշի: Դարձեալ Գֆրճըն գիւղը ունի 25 տուն հայ եւ 10 տուն քիւրտ բնակիչներ: Ամբողջ գիւղի հողերը, մօտ 900 քիւրտ, հիմա Պետրի պէկի եւ Սէյֆէտտին փաշայի անունին ֆերաղաթ եղած են:

Այդ ինչպէս վերը Նաթիպ պէկը — Սէյֆէտտին փաշան հիմա չկայ արդէն — այնպէս ալ Պետրի պէկը այնչափ ալ ապուշ չեն գտնուած, որ օրինական զգեստ չհագնէին իրենց շահատակութեան: Մտիկ ըրէք:

Գիւղին բոլոր հողերը կը պատկանին 8 մարդու, այսպէս,

I Մկրոյի որդի Շուկոյին կը պատկանէր	300 քիւրտ հող
II Օվոյի Բէլէշի կը պատկանէր	200 քիւրտ հող
III Ղազոյին կը պատկանէր	100 քիւրտ հող
IV Պօղոսին	50 » »
V Արքոյին	60 » »
VI Աստոյին	100 » »
VII Ադամին	60 » »
VIII Ադոյի Զեչոյին	50 » »

Ընդամէնը 920 » »

Ասոնցմէ առաջինը, այսինքն Շուկոն պարտք ունէր	3000 դրշ.
Երկրորդը այսինքն Օվոյի Բէլէշը պարտք ունէր	1000 դրշ.
Չորրորդը	» Պօղոսը » 1500 դրշ.
Հինգերորդը	» Արքոն » 1500 »
Վեցերորդը	» Աստոն » 3000 »
Եօթերորդը	» Ադամը » 1200 »
Ութերորդը	» Ադոյի Զեչոն » 1000 »

Ամբողջ գիւղը պարտք ունէր 12200 »

Աստուածային ներողութեամբ ընդունինք մի ըռպէ, որ 12200 դրուշի ցորենը, որ գիւղացիներուն տրուած է, հարամ մալ չէ, այդ խեղճերէն յափշտակուած ապրանք չէ: Տեսնենք, թէ բարի փաշան ի՞նչ «օրինական» միջոցներով զանձած է իր «արդար քրտինքի վաստակ» այդ գումարը:

Ասկէ 4 տարի առաջ Սէյֆէտտին փաշայի — ասոր

ժառանգական յաջորդն է Պէտրի պէկը — ծառաները կը բարեհաճին իրենց գինուած ներկայութեամբ պատուել գիւղացիները ու հրամանել զանոնք... Մուֆարդին: Ծածի եւ սպանալիքի գրաւիչ հրապոյրներով շնորհընկալ գիւղացիները կը դիմեն հոն եւ հիւսնի ըրիզայով Պէտրի պէկի անունից ֆէրաղաթ կ'ընեն իրենց հողերը:

Արդ անգամ մալ սրբազնագոյն յիմարութեամբ ընդունինք, որ այստեղ ալ տարօրինակ, կամ հակաօրինական ոչինչ չէ պատահած: Հաշուենք: 920 քիւրտ եթէ կ'արժէ 12000 դրշ., մէկ քիւրտ պիտի արժէ 14 դրշ.: Ծարունակենք. եթէ ամբողջ Օսմանեան երկիրը ենթադրենք 10 միլիոն քիւրտ տեղ, ունէ միլիոնատէր իրաւունք պիտի ունենար մեր երկիրը վերցնել փոխան... 2.000.000 օսմ. լիրայի, եթէ նա, իբրեւ ճէօմէր¹⁷ մէկը, Սէյֆէտտին փաշայէն քիւրտ գլուխ 6 դրշ. ալ աւելի վճարէր:

Դեռ անցնինք. Տրսիլ գիւղը ունի 35 տուն հայ եւ 10 տուն քիւրտ: Ամբողջ գիւղի հողերը կը հաշուեն մօտ 950 քիւրտ տեղ, ասոնք ամբողջը գրաւուած են 5000 դրշ. փոխարէն: — Դարձեալ անպիտան հաշիւ — քիւրտ կ'իյնայ մօտ ... 5 դրշ.: Դեռ շարունակենք: Բայց միշտ միեւնոյնն է:

Այսպէս եւ մանաւանդ քրդերու մէջ, ասոնցմէ շատ աւելի դաժան պայմաններով գրաւած եւ տարիներ ի վեր շահագործուած են 55 գիւղերու հողերը:

Եզրակացութիւն.— Հազրոյի պէկերը ոճրագործ ազակներ են, որոնք տարիներ շարունակ — ճիշդ Սուլթան Համիտին նման — հիմնադատակ կործանած են պետութեան մէկ մասին բարօրութեան ու յառաջդիմութեան հիմքերը:

Եզրակացութիւն.— Հազրոյի «միր»երը պետական օրէնքը խաբողներ են, ուրեմն եւ պետական դատաւաններ:

Եզրակացութիւն.— Հազրոյի պէկերը երկար տարիներու շահագործումին ու անիրաւօրէն թեսարրուֆ ըրած հողերու բոլոր արդիւնքը պարտական են գիւղացիներուն:

Եզրակացութիւն.— Հազրոյի պէկերու ամբողջ անցեալ եւ ներկայ հարստութիւններու միակ իրաւացի եւ օրինական տէրը դարձեալ բոլոր գիւղացիներն են:

Դիմենք դարձեալ թիւերուն: Իւրաքանչիւր գիւղի մէջ, միջին հաշուով մենք ընդունինք 10 լուծ, որոնց կէսը պէկերուն, իսկ միւս կէսը գիւղացիներուն: 55 գիւղերու մէջ մենք կ'ունենանք ուրեմն ընդամէնը 550 լուծ,

17.- Առատածեղ:

որոնց 225ը պէկերուն, իսկ 225ը գիւղացիներուն: Արդ, իւրաքանչիւր սեփական լուծ 30 լիւրա շահ կը բերէ, որով $250 \times 30 = 7500$ լիւրա գուտ շահ ունին պէկերը միայն իրենց լուծերէն: Մնացած 250 լուծը (գիւղացիներուն) կը բերեն 5000 լիւրա, պէկերուն՝ իսկ միայն 5000 լիւրա բոլոր գիւղացիներուն: Միացնենք, երկու պէկերն ուրեմն կը ստանան ընդամենը 12500 օսմ. լիւրա գուտ շահ, իսկ 15000 գիւղացիներն ամբողջը միասին կը ստանան 5000 լիւրա, որով իւրաքանչիւր գիւղացիին կ'իյնայ 33 դրշ. ցորեն: Այսպէս են թիւերը:

Բայց դեռ շատ բան կայ: Պէկերու ձեռքն են գիւղի արդիւնաբերութեան միւս աղբիւրներն ալ: Զաղացներէն, մատուակներէն (ոռոգող ջրերը), բրինձէ ու ծխախոտէն տարեկան միջին հաշուով — իւրաքանչիւր գիւղի մէջ — 100 լիւրա գուտ շահ ունին: 80 գիւղերու մէջ ուրեմն 8000 լիւրա: Իւղեղէնէ ու բրդեղէնէ ալ — իւրաքանչիւր գիւղի մէջ — պէկերն ունին մօտաւորապէս 58 լիւրայի շահ, իսկ 80 գիւղերու մէջ այդ կ'ընէ 3000 օսմ. լիւրա: Աւելցնենք այդ՝ ցորենէն, ստացած գուտ շահի վրայ $12500 + 8000 + 3000 = 21500$ լիւրա օսմ. գուտ շահ ունին պէկերը, եթէ մոռնանք այն դժոխային պայմանները, որոնցմով աշարի, սէլէֆի, նեճմի, կաշառքի եւ զանազան հազարումէկ տեսակ ածալարարութիւններու ձեւին տակ կը թալլեն անպաշտպան գիւղացիներու անմըուունջ հօտը:

Այս հսկայական գումարին հետ բաղդատենք այդ բոլոր հարստութիւններն իր քրտնաջան բազուկներով արտադրող գիւղացուն ինկած բաժինը: Մենք աւելի վարը պիտի մանրամասնենք թիւերը համաձայն երեք աստիճանի գիւղական ընտանիքներու, հարուստ, միջակ ու աղքատ: Բայց առաջմ շարունակենք յառաջ տանիլ մեր քննութիւնը համաձայն ընդհանուր ազգաբնակչութեան միջինին:

Վերը տեսանք, որ 15000 մարդուն վարուցանքը կը բերէր տարեկան 5000 լիւրա. բացի այդ, գիւղացին ունի ապրուստի այլեւայլ միջոցներ ալ. արհեստէ (Չուլհակ) եւ օրավարձով աշխատանքէ մի գիւղ կը ստանայ տարեկան միջին* հաշուով 20 լիւրա, ի փոխարէն չարաչար յոգնութեան. 80 գիւղը միասին կը վաստակին ուրեմն 1200 լիւրա ալ. բոլորէն եւ իւղեղէնէն ալ միջին հաշուով** իւրաքանչիւր գիւղի ստացած բարիքներու արժէքը կ'ընէ 50 լիւրա, որով $80 \times 50 = 3000$. միացնենք այս գումարները. $5000 + 1200 + 3000 + 2800 = 12000$. վերջին

*) Մէկ մարդու օրավարձը կ'իյնայ միջին հաշուով 2 դրշ. էն 100 փր. աշխատանքի ժամերը հաշուելով միջին թիւով 12: Այստեղ բոլորովին աւելորդ է արդէն երեւակայն բանուորական հանգստի ժամեր:

**) Միջին հաշիւները հանուած են իրական թիւերու վրայէն, որ աւելորդ համարեցինք մանրամասնութեամբ մէջ բերել:

2800ը մենք դրած ենք ի դիմաց այն վաստակին, որ գիւղացիները կրնան ունենալ գիւղէն դուրս, քաղաքներու մէջ եւ զանազան միջոցներով, որոնք չինկան վերը յիշուածներու շարքին մէջ:

Այսպէս ուրեմն 15000 հոգի տարեկան կը ստանան 12000 լիւրա օսմանեան. իւրաքանչիւրին պէտք է իյնայ, ուրեմն, տարեկան միայն 80 դրուշ ապրուստի դրամ:

Եզրակացութիւն. — Երկու պէկական ընտանիք հիմա մօտ 2 անգամ աւելի շատ կ'օգտուի երկրի արդիւնաբերութենէն, քան տասնհինգ հազար օսմանցին միասին առած եւ այն ալ այնպիսի ժամանակ, երբ այդ երկու պէկերու ընտանիքները վաւաշտութենէն զատ ուրիշ ոչինչով չեն յոգնիր, այն ինչ այդ 15000 հոգին գիշեր ցորեկ, ամառ ձմեռ, անասունի մը չարչարանքով արիւն քրտինք կը թափեն:

Եզրակացութիւն. — Երկրի հարստութիւնը կը փճանայ պէկերու քօշքերու մէջ, իսկ բուն ժողովուրդի նկուղանման խրճիթներուն մէջ քաղաքակրթական ռեւ բարիք մուտք չի կրնար գործել:

Եզրակացութիւն. — Երկիրը կը մնայ բարբարոսութեան, հաղորդակցութեան միջոցները՝ անդրօրհեղեղեան դրութեան եւ կրթական-բարոյական հիմնարկութիւնները յաւիտենական անգործութեան մէջ:

Եզրակացութիւն. — Սահմանադրութեան ու մարդկային իրաւունքի, ժողովրդակամութեան ամենահասարակ գաղափարները կամ գոյութիւն չեն ունենար կամ կ'ընդհատուին...

Լսած ենք, որ կ'ըսեն, թէ երկրի մը ժողովուրդը, որքան հարուստ է, որքան նա տնտեսապէս ապահով է, որքան նա կարող է բաւարարութիւն տալ իր նիւթական-մտաւորական պահանջներուն, այդքան այդ երկիրը զօրաւոր է ու կենսունակ: Լսած ենք եւ գլուխնիս գնաց լսելով, որ մեր ժողովուրդը գավմը նեճիպ է, ազնիւ ազգ, օժտուած աշխատանքի օրհնեալ մղումներով ու այլ բարի ձիրքերով:

Դեռ շատ բաներ ալ կը լսենք, բայց անգամ մ'ալ թիւերուն ձայնը լսենք:

Շանլի Օսմանցի է հազրոցի մի ընտանիք, որ իբրեւ տեղին հարուստը 35-40 քիլէ արմտիք միայն կը ստանայ ամրան վերջը կային մէջ՝ անցնող ձմրան, գարնան ու ամրան տաժանակիր յոգնութիւններէն վերջ: Տեսնենք ինչ կը լինի այդ: Ենթադրենք 40 քիլէ: Ասոր 5 քիլէն իբրեւ աշար (8էն մէկը կ'առնեն հիմա) կ'առնէ աշարճին: Մէկ քիլէն կ'առնէ շահնան ու միւսը պէկի սու պաշին, կը մնայ 33: Քանի որ հողերը պէկին են եւ գիւղացին կ'իսրարով աշխատած է ուրեմն իրեն կը մնայ $18\frac{1}{2}$ քիլէ: Գիւղացին այնչափ յոգնել է վերջ իր ստացած այդ $18\frac{1}{2}$ քիլէն արդեօք ինչպէս կը գործածէ: Լսենք. 40 քիլէ

ստացող գիւղացի մը կը բռնէ երկու մշակներ — ընծապէր — որոնք գիւղական դասակարգի ամէնէն աւելի չքաւորներն են — գիւղական վարձու բանուորներ, պրոլետար: Իւրաքանչիւրի վարձքը ամբողջ տարուան համար 5 քիլէ ցորեն ($2\frac{1}{2}$ քիլէ ձմեռը եւ $2\frac{1}{2}$ քիլէ ամառը): Երկու ընծապէրին, ուրեմն, կը տրուի 10 քիլէ: Մնաց 8 քիլէ: 1 քիլէ արօրի կը տրուի, 1 քիլէն ծախք կը լինի եզնբրու, տաւարին վրայ, 1 քիլէն ծախք կը լինի դարձեալ ռենճպիներուն վրայ, 1 քիլէն ալ... տըրտըրները կը ստանան: Հաշուեցէ՛ք գիւղացուն մնաց 2 քիլէ ցորեն, թէ եւ մեր հանդիպած 100 գիւղացու ՅՅը կը պատմէին. «պարտն, Տէրը վկայ, որ աշուն մենք տուն կը դառնանք... «եղանը մեր փէճին» (հոսեյին ուսին):

Այո, հողի մարտիրոսները ամբողջ տարուան չարչարանքներէ վերջ ձեռնունայն տուն կը վերադառնան իրենց ձագուկներուն լացն ու կոծովը մխիթարուելու:

Նորէն կը սկսի կախարդական շրջանակը, ուտելու հաջող գիւղացին կը յաջողի աղաչանքով պարտք առնել, հին ցորենի մէկ քիլէն=18 հօլչէկի փոխարէն կային ժամանակ 20 հօլչէկ վճարելու պայմանով — 8-7 ամիս միջոցի մը համար % 25 տոկոս —:

Այս հարուստ ընտանիքն էր: Միջին ընտանիքը 20-25 քիլէ եւ աղքատը՝ 10-15 քիլէ արդիւնաբերողներն են. Արդիւնքի բաշխումը կը կատարուի վերջինի համեմատութեամբ:

Համեմատաբար բախտաւոր են — ո՛վ հեզնոտ ողբերգութիւն — ռենճպիները, վարձու բանուոր գիւղացիները:

Այստեղ ամէն ինչ դարձեալ դիտուած է վարդագոյն, նոյնիսկ Օսմանցիականը գերազանցող լաւատեսութեամբ. նկատի առնուած չեն երբեք կարկուտն եւ բնութեան այլ եւ այլ պատահարները, հիւանդութիւնները, որոնք այնքան ուժեղ պատուհասներ են գիտութեան նոյնիսկ աղամական միջոցներէն զուրկ գիւղացիներուն համար:

Եզրակացութիւն. — Չքաւորութեան անտանելի լուծին տակ, բազմահազար գիւղացիներ ճորտ եւ ստրուկ են դեռ այսօր ալ, Սահմանադրութեան հռչակումէն ի վեր:

Եզրակացութիւն. — Չքաւոր եւ սովի սարսափներուն միջոց ենթակայ գիւղացիներու, մտաւորական, քաղաքական եւ այլ պահանջները կը մնան շատ ստորին աստիճաններու վրայ:

Եզրակացութիւն. — Պետութեան մէջ երկրորդ զօրաւոր պետութեան մը կրկնակի լուծին տակ ինկած գիւղացիներու համար «չանլի օսմանցի», «հիւրիյէթ», «ատալէթ»¹⁸ եւ այլ «սահմանադրական կեղծիքները» միայն մտրակներ են, բայց ոսկեթել բանուած մտրակներ:

18. Շանլի օսմանցի փառաւոր, պանծալի օսմանցի: Դիւրօրէք՝ ազատութիւն, ատալէթ՝ արդարութիւն:

Եզրակացութիւն. — Օսմանեան սահմանադրական կառավարութիւնը պարտաւոր է այս խայտառակ, անպատիւ եւ բարբարոս դրութեան վերջ տալ:

Ի մօրէ պէկ ծնելու բախտը չունեցող մը, երբ պատրուտած կապերտ մը, կամ կարկտնած փայթօ մը, կամ ծակծկած պղինձ մը տանի ուրիշի մը տնէն, կառավարութիւնը զայն իբր գող 1-3 տարի բանտարկութեան կը դատապարտէ. եթէ նա երկրորդ անգամ կրկնէ, պատիժը կը սաստկանայ. եթէ նա գողութեան ժամանակ նաեւ վիրաւորած կամ սպաննած է մէկը, արդէն կը դատապարտուի տաժանակիր աշխատանքի, բերդարգելութեան եւ մինչեւ իսկ մահուան:

Այս ամէնը խիստ ու արագ կերպով կը գործադրուին, եթէ դատախազը, վնասուողը, մասնաւոր անհատ մէջ, պարզ քաղաքացի մը:

Թերեւս կարելի է մտածել, թէ եթէ վնասուողը համայնք մը, հանրութիւն մը, պետութիւն մը լինի, այն ժամանակ պատիժը կը սաստկանայ, դատը կը խստանայ եւ վճիռը կը լինի բոլորովին անողոք ու անգուլթ:

Այո՛, կարելի է այդպէս մտածել, կարելի է եւ պէտք է այդպէս մտածել հիմնուած պետական, խղճի, տրամաբանական օրէնքներու վրայ: Բայց նայինք թիւերն ի՞նչ մտածել կու տան:

Տարիներ շարունակ պէկ մը — իբրեւ իր շրջանի միակ գերիշխանը — իւրացուցեր — տեսէ՛ք պէկերու համար չենք ըսեր գողցեր — է պետութեան տուրքերը: Գիւղի մը մէջ կայ 300 ոչխար, բայց պէկը արձանագրել տրուած է միայն 30 հատ. անդին 270 հատի դրամը ինք առած է: Հաշուե՛նք դարձեալ: Ըստ աղմամի* օրէնքի այդ գիւղը պիտի տար $300 \times 4 = 1200 =$ դրուշ: Բայց տուած է միայն 120, թող ըլլայ 200 դրուշ: Մնացած 1000 դրուշէն զրկուած է եղբր պետական գանձարանը: Լաւ. մէկ գիւղի մէջ պետութեան գանձէն պէկը յափշտակած է 1000 դրուշ. 80 գիւղէն կ'ընէ $80 \times 1000 = 80000$. եթէ ենթադրենք, թէ միայն 20 տարի է, որ այս պետական թալանը կը լինի, կ'ընենք ուրեմն $20 \times 80000 = 1.200.000 =$ դրուշ:

Այսպէս, ուրեմն, 20 տարուան ընթացքին մէջ պետութեան զանձարանը վնասուած է մօտ 12.000 լիւրա աղմամի տուրքէն պէկի ձեռքով: Հաշուեցէ՛ք. 50 լիւրա գողցող մը կը դատապարտուի 1 տարուան բանտի, 10.000 լիւրայի գողը պէտք է դատապարտուի 10.000:50=200 տարուան: Եւ քանի որ ոչ թէ 200 տարի, այլ նոյնիսկ 200 ակնթարթի չափ կառավարութեան խստութեան ենթարկուած չեն եղբր Հազրոցի պէկերը, եւ որովհետեւ

*) Մանօթ.- Աղնամը ոչխար գլուխ 4 դրուշի կը հաշուել:

10.000 լիրա կառավարութեան գանձէն յափշտակողները դեռ այսօր նոյնիսկ կ'արժանանան կառավարական լուծֆֆներու, իհասաններու, ժպիտներու, ուրեմն պէտք է ընդունիլ, թէ մոլորութիւն է կարծել, թէ մեծ գումարներ իւրացնելը գողութիւն է: Այդ, թերեւս, մի առաքինութիւն է, որ արժանի է... քաջալերութեան!...

Թիշե՞նք հոս աշարը: Թղթատեցէք կառավարութեան էվրաֆներ, եւ պիտի տեսնէք, թէ իւրաքանչիւր պէկ միայն մէկ աշարէն միջին հաշուով տարեկան 3000 դրուշ յափշտակած է կառավարութեան իրաւունքէն:

Այսպէս նախասահմանադրական շրջանին մէջ միայն 2300 դրուշի առնուած աշարը¹⁹ այս մէկ երկու տարուան մէջ բարձրացեր է 10-15000ի նոյնիսկ 20000ի եւայլն:

Մօտաւոր հաշուով — միշտ ներողամտութեամբ վարուելով դէպի «ազնուական միրը» — տեսնենք կառավարութեան գանձարանէն որչափ գումարներ առնուած են պէկերու ձեռքով, Հագրոյի մէջ, աշարէն:

Իւրաքանչիւր գիւղի աշարէն տարեկան 3000 դրուշ եթէ գողցուի, 80 գիւղէն գողցուած կ'ըլլայ, 80x3000=180.000 դրուշ: Պէկի վսեմապատիւ խաթեր համար այդ ընդունինք միայն 150.000: Արդ, եթէ մէկ տարուան մէջ մի պէկ կառավարութեան աշարէն կը գողնայ 150.000 դրուշ, քսան տարուան մէջ գողցած պիտի լինի 20 անգամ աւելի շատ, այսինքն 20x150.000=3.000.000 դրուշ:

Կ'ուզէ՞ք իմանալ, թէ 100 լիրա գողցող մը եթէ կը դատապարտուի մէկ տարուան բանտարկութեան, 3.000.000 դրշ. այսինքն 30.000 լիրա գողցող մը քանի՞ տարուան պիտի դատապարտուի:

Հարկ չկար մեզ ծանօթ թուաբանութեան դիմելու քանի որ կառավարական թուաբանութեամբ լուծուած խնդիր մէկ այդ: Պատասխանը հետեւեալն է: Մեծ գումարները իւրացնելը գողութիւն է, պատիժը փոքր գողութիւններուն համար է:

Հարկ կա՞յ հոս յիշել այն հազարաւոր լիրաները, որոնք «եօլ փարասի»ի անունով գանձուած են ժողովուրդէն եւ, որոնք — թերեւս պատահամբ — սահեր գնացեր են... պէկերու տունը: Ճամբաներ չա՛տ, պայմանով, որ մինչեւ ծոնկերդ ու քիչ մ'ալ աւելի ցեխին ու փոշիին մէջ թաղուիս: Գետերու վրայ կամո՞ւրջ. ինչ հա՛րկ, էֆէնտիմ. թող մարդիկ բոլորինն ու անցնին, չկրցողներն ալ թող ջրին հետ դէպի վար երթան, տարուան մէջ մէկ քանի հոգի ալ թող պետութեան ղուրբան լինին:

Դեռ երկարե՞նք շարքը այն յափշտակութիւններուն, որոնցմով պէկերը կանոնաւորաբար թալլած են պետութեան գանձարանը ու անանկացուցած զայն: Դեռ շարունակե՞նք յիշել այն դրամական ու բարոյական վնասները, որոնք պէկերու ձեռքով հասցուած են պետութեան, դեռ թուե՞նք այն ոճիրներն ու մարդասպանու-

թիւնները — այս վերջինները կը կազմեն մի անծայր շղթայ — որոնցմով տարիներ շարունակ ամայացուցած ու անապատի վերածած են ահագին գաւառներ — բայց այդ կը լինի անհատնում աշխատանք, անվերջ գործ:

Եզրակացնե՞նք հիմա: I. Կառավարութեան պարտքն ու իրաւունքն է միանգամայն հաշիւ պահանջել պետութեան գանձարանը կողոպտած այդ արհեստաւոր գողերէն:

II. Կառավարութեան իրաւունքն ու պարտականութիւնն է միանգամայն յարքունիս գրաւել պէկերու՝ պետութեան գանձարանէն գողցած ու դիզած անբաւ հարստութիւնները:

III. Եւ ամենակարեւոր է սա: Կառավարութեան, Սահմանադրական կառավարութեան առաջին պարտականութիւնն է վերջ տալ պետական կազմակերպուած ու ալ արհեստ եղած աւազակութիւններուն — հեռացնելով — աքորելով, մինչեւ իսկ ոչնչացնելով զանոնք, որոնք իրենց տարիներու չարագործութեամբ վաղուց արժանացած են ամենամեծ պատիժին:

* * *

Կը տեսնուի, թէ դատողութիւններու, հաւաքաբանութիւններու, տրամաբանութիւններու փոխան այստեղ կիրարկուած են թիւեր միայն եւ այս միայն ա՛յն պատճառով, որ թիւերու դատողութիւնն ու տրամաբանութիւնը շատ պարզ, ճշմարիտ ու, ա՛յդ իսկ հանգամանքով, անառարկելի են: Թիւերու դիմաց պէտք է լռեն «պաշտօնական հերքումները», «դիւանագիտական դարձուածքները», «րէսմի քաջքընները»...:

Սարսափով միայն կը պնդենք, որ թիւերու այս նզովուած սպանդանոցը միայն Հագրոյին յատուկ է, նա կը գրաւէ աւելի լայն սահմաններ, նա կը տարածուի Անատոլի արեւելեան բարձրաւանդակի մէկ ծայրէն միւսը:

Պէկական-ֆեոդալական հասարակարգը իր անցելի աւերներով, իր ներկայի խստաշունչ սարսափներով եւ իր ապագայի աղէտաւոր արհաւիրքներով պէտք է — իրաւամբ — արժանանայ շինարար, յառաջդիմասէր աշխատաւորութեան, հետեւաբար եւ ընդհանուր պետութեան շահերը պաշտպանելու համար կեանքի կոչուած կառավարութեան անմիջական ու կտրուկ խստութիւններուն:

Միայն պէկական կարգերու վերացումով ու հողային ընդարձակ տարածութիւնները գիւղացիներուն վերադարձնելով է, որ կարելի պիտի լինի ինչպէս Հագրոյի այնպէս եւ վիճակակից բոլոր գաւառներուն մէջ հիմնել սահմանադրութիւնը, զօրացնել իրաւունքն ու ազատութիւնը, յառաջ տանիլ եւ բազմացնել տնտեսութիւնը, արդիւնաբերութիւնը, հարստութիւնը, զարկ տալ

19.- Բերքի տասաներորդ տուրք:

կրթական հիմնարկութիւններուն եւ ասոնց բոլորովին — իբրեւ անխուսափելի արդիւնք — ճոխացնել կառավարական պիւտճէն, գոյացնել օսմանեան ուժեղ պետութիւնը:

Ճորտ քաղաքացիներով բնակուած երկիրները քսաներորդ դարուն մէջ գոյութեան իրաւունք չունին, ստրուկ գիւղացիներով լեցուն երկրագործ պետութիւն մը սահմանադրական օրէնքներու մասին խօսելու իրաւունք չունի:

Գիւղացին մինչեւ ապահով չլինի իր վաստակին, իր աշխատանքին համար, անկարելի է, որ նա իր ձգտումները հաշտեցնէ կառավարութեան հրամաններուն, հրահանգներուն ու քաղաքականութեան հետ:

Պէտք է թոյլ տալ, աւելի ճիշդ պէտք է ստիպել, որ հացի ազատութիւնը փնտռող բայց չգտնող գիւղացիական բանակներ ոտքի կանգնին արիւն ու ապստամբութիւն տարածելու համար. խելացութիւնն է բռնադատել, որ գիւղացիական, հողային շարժումներ բռնկին հանգստութեան, խաղաղութեան կարօտ գաւառներու

մէկ ծայրէն մինչեւ միւսը, կամ, որ նոյնն է, անյատակ թշուառութեան մէջ մեռնին՝ մեռցնելով իրենց հետ պետութիւնն ալ:

Յաճախ կը տեսնենք «Մամուլ տեսչութեան» հերքումներն «Ազատամարտ»ին ուղղուած: Ճշմարիտ հայրենասէր օսմանցին՝ գանազան միջոցներով իրականութիւնը վարագուրել ձգտող, այլ կերպ մեկնութիւններ տուողըն է, ապահովաբար:

Եւ որպէսզի կառավարութիւնը «հերքումի» իր տեսնողտ հակումին բաւարարութիւն տալու համար շատ ժամանակ չվատնէ — քանի որ պէտք է գնահատել այս թանկագին ժամերն իսկ — մենք խօսեցանք թիւերով, որոնց առաջ պէտք է միայն խոնարհիլ:

ՖէՐԻՏ ՃԵՄԻԼ

Ասոր պատճէնը արդէն դրկուած է «Ազատամարտ»ին եւ հրատարակուած կրճատումներով:

Փաստ. 744-93

**Գ. 3.- ՑՈՒՑԱԿ
ՍԼԻՎԱՆԻ ԵՒ ՊՇԵՐԻԿԻ ԲՈՆԱՏԻՐՈՒԱԾ ԿԱԼՈՒԱԾՈՑ**

Սլիվանի շրջան

Գիւղի անուն	բուն կալուածատէր	բռնատէր	գրաւուած կալուածներ	
			վարելահող	այլեայլ կալուածներ
Ֆարդին	տեղացի հայեր	Սատրզ եւ Մահրան պէյ (եղբարք)	4 տօնիւմ	1 պարտէզ
Ֆարդին	հասարակութիւն եւ քանի մը հայեր	Հաճի Սատուն աղա	2 տօնիւմ	գերեզմանատան կէտը եւ 1/2 տուն
»	Ղազար Իպրոյեան	Սլէման եւ Հիւսէյն Չաւուշք		պարտէզի մը 1/4 մասը եւ տան շէնքի մը գետին
»	հայ հասարակութիւն	Հէնզա Քեհեա		աւերակ եկեղեցի մը
Պամայտան	Յակոբ Ափէեան	Իպրահիմ աղա	160 տօնիւմ	
Ղանիճան	տեղացի քանի մը հայեր	Սատրզ եւ Մահրան պէյ	106 »	
»	»	Շէյխ Հալիմ եւ Իպրայիմ	64 »	
»	»	Էօմէր եւ Շէյխ Մուհէմմետ	96 »	
Թըրպըսքի	տեղացի հայեր	Հաճի Սատուն աղա	1000 »	1 տուն եւ 1 թթաստան
Կունտեռալօ	գիւղացի 4 հայ ընտանիքներ	»	1250 »	
Խօշակա	Գրգօ Պղտէեան	Սատրզ եւ Մահրան պէյ	10 »	
Հելին	գիւղացի 9 հայ ընտանիքներ	Հաճի Սատուն աղա	340 »	
Ալիպանկի	գիւղացի 3 հայ ընտանիքներ	»	420 »	
Սալըգան	Արգէ եւ Ոսշշօ	Հաճի Րաշիտ աղա	120 »	
»	գիւղացի 2 հայ ընտանիքներ	Սատրզ եւ Մահրան պէյ	345 »	1 տուն
Աւանք	տեղացի հայեր	գիւղացի քիւրտեր	750 »	
Հիւսէյնա	Մըկո Մանոյեան	Հաճի Աւտըլլա եւ Ֆազի Սլէման	40 »	
»	Սարգիս եւ Առաքել	Հաճի Րաշիտ աղա	580 »	
Ասլօ	գիւղացի 13 հայ ընտանիք	Տիարպեքիրոյի Մուսթաֆա պէյ	1800 »	8 տուն եւ 8 պարտէզ
Էօմէրա	տեղացի քիւրտեր	Գամըշլուցի շէյխ Շէմսէտտին	150 »	
Հաճըգա	տեղացի քիւրտեր	Գամըշլուցի Սէյֆէրուլահ	850 տօնիւմ	

Շէտալ	տեղացի հայեր	Հաճի Րաշիտ աղա		9 պարտէզ
Հալտա	Անդրեաս Սելիքեան	Իպրայիմէ Էօմէր		1 պարտէզ
»	Արթին Սարգիսեան	Ամէ եւ հաճի Իպրահիմ		1 »
Պաշգա	տեղացի հայեր	Հաճի Րաշիտ աղա	48 տօնիւմ	
»	»	Շէվլէրանցի Մահմատ Ահմօ	20 »	
»	»	Չիչըքանցի Րազօտ Ալօ	10 »	
»	»	Պէզուանցի շէյխ Հիւսէյին	48 »	
»	»	Պրօէ շէյխ Սլէման		1 այգի
»	»	Րազօտ Ալօ	12 »	
»	»	Սատրզ պէյ	25 »	
»	»	պատըզանցի Աւոտ Եուսուֆ	50 »	
Ֆերան	»	Տիարպեքիրոյի Գազազեանք	2600 »	
Սլօզ	»	» »	480 »	
Աթշա	»	Խոճա Դաւիթ	570 »	
»	»	Քիւրտ ճըհօ	15 »	
Պաշըմք	Այօ Պետրոսեան	Ֆեյեաթէ Հիւսէյն		1 այգի
»	Խաչօ Թորոյեան	Օսմանէ պապիկ	2 »	
»	եւ Սարգիս			
»	Հօնէ Աւոյեան	Մեհմետ Պէլլէ		1 այգի
»	Թունօ	Սօլլա Ֆէթիի քիւրտ ընտանիք	40 »	
Ձօթ	տեղացի հայեր	Իպրայիմէ Ագուպ	130 »	
Տասընա	Յակոբ Մ. Մուրատեան	Հաճի Միրզօ	80 »	
Գարաւլիա	Խաչօ Հըթոյեան	Հաճի Սատուն աղա	300 »	
Չըրըք	տեղացի հայեր	Խաթունա Խաթօ	120 »	1 թթաստան 1 տուն 1 այգի
»	»	Հաճի Րաշիտ աղա	40 »	1 պարտէզ
Մերալիան	գիւղացի 6 հայ ընտանիք	»	1000 »	1 պարտէզ
Քէլլէ	գիւղացի քիւրտեր	Մահմատէ Մահմատ աղա	78 »	
			13753 տօնիւմ	

Պշերիկի շրջան

Գիւղի անուն	բուն կալուածատէր	բոնատէր	գրաւուած կալուածներ	
			վարելահող	այլեւայլ կալուածներ
Պահղզորգ	Բաճօ Եկոյեան եւ Ժառանգորդք (հայ)	Չասսօտ Իպրայիմ	800 տոճիւմ	
Գանիրաւալ	Շամօ եւ Մուրատ Սարգիսեան	»	200 »	
Պլէյտեր	գիւղացի հայերէ եւ քիւրտերէ	»	390 »	1 կալ. 1 տուն
Քօրոք	» »	Չաճի շէյխ Մուս	800 »	
Թըլմարճ	գիւղացի հայերէ	»	746 »	6 տուն
»	»	Քիւրտ Մուլլան		1 տուն 1 պարտզ
Չալգամի Շահնատրք Ազըզ Թըլչօզ	Իսա Մկրտչեան	Չաճի Ալի, Միրզայէ Իսա Չազա Օղլի՝ Սայիտ աղա Չաճի ճըրճիս եւ Եուսուֆ	1500 »	
			4436 տոճիւմ	

Մանօթութիւն

Ներկայ ցուցակը շատ թերի է տակաւին. թէ՛ Սլիվանի եւ թէ՛ Պշերիկի մէջ դեռ կան շատ մը հայ եւ քիւրտ գիւղեր, զոր աղաներ եւ պէյեր գրաւած են ամբողջովին կամ մասամբ. սակայն դիւրութիւն չունեցանք ցարդ այդ տեղերէն ստոյգ տեղեկութիւններ ստանալ եւ ցուցակագրել:

Ծուցակէս բոլորովին դուրս կը մնայ Հազրոյի շրջանը՝ որ Սլիվան գաւառակին մաս կը կազմէ. այդ շրջանին մէջ ինչպէս ժամանակին հրատարակուեցան Ազատամարտի մէջ ընկեր Ճէմիլի³ կողմէ՝ Հազրոյի պէյերը գրաւած են 80 գիւղերու (մեծ մասամբ քիւրտ) ամբողջ հողերը: Աւելորդ է ըսել թէ միայն այդ գիւղերը կ'արժեն 80,000 ոսկի, գումար մը՝ որով գոցել կ'ուզուէր Անատոլուի հողային վէճը:

Լրագիրներէն իմացանք թէ հողային խնդրոյ համար Պոլիսէն քննիչներ ղրկուած են Անատոլու. այդ քննիչներու շուքն անգամ չերեւցաւ այս կողմեր:

Հ.Յ.Դ. ՓՐԱԿԵՐԹՈՅԻ ԿՈՄԻՏԷ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XI

ԼԵՌՆԱՎԱՅՐ – ԿԻԼԻԿԻԱ

Հ.Յ.Դ. Լեռնավայրի կազմակերպութիւնը կ'ընդգրկէր ընդարձակ տարածութիւն մը. – Կիլիկիան՝ յարակից շրջաններով, Մուրիան եւ Լիբանանը: Ատանայի կոտորածները, սակայն, մահացու հարուած հասցուցած էին եւ Կիլիկիան կը մնար նոր սարսափներու սպառնալիքին տակ: Կուսակցական գետնի վրայ եւս վերակազմակերպութեան գործը, հակառակ հոն առաքուած շարք մը գործիչներու ջանքերուն, ժամանակի կը կարօտէր արդիւնատուրուելու համար: Այս իրողութեան ապացոյց էր բացակայութիւնը կարգ մը կարեւոր կազմերու 1910 թ. Յուլիսին գումարուած Կառափնատի Շրջ. ժողովէն, – Ատանա, Մարաշ, Չէթուն, Չոք Մարգուան, Մերսին, Իսկէնտերուն: Ոմանց կողմէ արդէն ժողովին եւ անոր ընտրած «իրաւասու մարմնին» օրինականութիւնն ալ խնդրոյ առարկայ պիտի ըլլար: «Կառափնատ» անունին (որ միայն յաջորդ քանի մը տարիներուն գործածական պիտի ըլլար) կը հանդիպինք առաջին անգամ: Երեւի Հալէպի համար է, որ գումարուած էր ժողովը:

Շրջ. ժողովին մասնակից կոմիտէութիւնները յիշատակուած են ծածկանուններով (ոմանք նոր). այսպէս՝

- Հողաբոլորդ Այնթապի շրջանն է
- Հովիպը Այնթապ քաղաքը
- Լիճը Դամասկոս (ուսանողներէ բաղկացած)
- Ծոցը Պէյրութ
- Լեռը Հալէպ
- Մուսա յեռը Մուկտիոյ շրջան
- Արծուաքերդը Չէթուն

Քացի Կառափնատի Շրջ. ժողովի արձանագրութենէն, որ թղթածրարի գլխատըր փաստաթուղթն է (ձեռագիր 16 էջ), նկատի առած ենք նաեւ կարգ մը գործիչներու նամակները ուղղուած Պոլիս՝ Արեւմտեան Բիւրոյին:

Փաստ. 954-58

Ա 1.— Հ.Յ.Դ. ԿԱՌԱՓՆԱՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Գումարուած 1910 Յուլիս 5/18, ի Լեռ

ՆԻՍՍ Ա.

Յուլիս 5 ժամը 3-7 (ըստ) թիւքականի)

Հ.Յ.Դ. Կառափնատի Շրջանային ժողովի Ա. նիստին ներկայ եղան Հինգ պատգամաւորներ.— Հողաբլուրի պատգամաւոր՝ ընկեր Ուրագ, Հովիտի պատգամաւոր՝ ընկեր Համբո, Լճի պատգամաւոր՝ ընկեր Գիսակ, Ծոցի պատգամաւոր՝ ընկեր Մարալ Սալբի, Լեռի պատգամաւոր՝ ընկեր Հրակ: Մուսա-լեռն ալ ղրկած էր իր հաշ-ւեկչիուն ու տեղեկագիրը: Նախագահ ընտրուեցաւ ընկեր Հրակ եւ քարտուղար՝ ընկեր Մ. Սալբի:

Ժողովը զբաղեցաւ Հինգ վարքերէ եկած օրակարգերու դասաւորումով պատրաստելու համար ընդհ. օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

Ա.— Քաղաքական

- I Ներկայ քաղաքականութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը
- II Մեր դիրքը Օսմ. երեսփոխանական ժողովոյ աշխատաւոր ժողովրդին նպաստաւոր եւ աննպաստ որոշումներուն հանդէպ
- III Մեր դիրքը թուրք եւ հայ քաղ. կուսակցութիւններու հանդէպ

Բ.— Տնտեսական

- I Մեր դիրքը հողային անարդար գրաւումներու հանդէպ
- II Արհեստակցական, բանուորական, գիւղացիական եւ համագործակցական միութիւններ

Գ.— Կուլտուրական

- I Մեր դիրքը Ազգ. կուլտուրական հաստատութիւններու եւ անոնց ղեկավար մարմիններու հանդէպ
- II Ժողովրդի կրօնական մոլեռանդութեան եւ հակահոսանքի հանդէպ:
- III Շրջանիս համար ուսումնարան կամ երկրորդական վարժարանի մը պէտքը
- IV Մամուլի մը հաստատութիւնը

Դ.— Կազմակերպական

- I Պրոպականդ

II Տեղական, մարտական խումբեր

եւ գինավարժութիւն

III Ուսանողական միութիւններ

IV Տեղական եւ շրջուն գործիչներ

V Զիֆոն

VI Հաստատել կամ օժանդակել կանանց Կարմիր խաչի եւ ուրիշ կուլտուրական միութիւններու

VII Կառափնատի բարձրագոյն մարմնի մը (Կեդր. Կոմիտէ) կամ Եր[ջանային] իրաւասու մարմնի մը կազմութիւնը եւ անոր իրաւասութեան սահմանը

VIII Կազմակերպական կարգապահութեան (Տիւրքի-լին) ոգին զարգացնել մեր շարքերուն մէջ

IX Շրջանային ներքին կանոնագրի մը մշակումը

X Հրահանգներ Կառափնատի յառաջիկայ Շրջ. ժողովի գումարման մասին

Ե.— Հաշուական

- I Շրջանային հաշուետուութեան քննութիւն եւ վաւերացում
- II Պիւտճէի համաչափութիւն
- III Հասոյթի աղբիւրներ

Զ.— Յաւելուածական

- I Լեռի հեռացուած ընկերներու մասին վերջնական կարգադրութիւն
- II Ընկեր Նեշվէյապի ներկայ վիճակը
- III Ընկեր Քասիմի խնդիրը
- IV Յր. Տ. Պ.ի պարտքի խնդիրը
- V Ե. Պ.ի Յ Ֆրանսական պարտքի խնդիրը
- VI Ծոցի Զիֆոնի եւ ընկեր Մուշեղի խնդիրը
- VII Հովիտի մէջ բացուելիք տեղական դաշնակցական վարժարանի խնդիր:

Բ. ՆԻՍՍ

Յ/18 Յուլիս 1910 ժամ 9 1/2-12 (ը. թ.)

Ա.— Քաղաքական

I Ներկայ քաղաքականութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը — Ներկայ քաղաքականութեան միջոցին որչափ կառավարութիւնը կը մնայ էապէս սահմանադրական, մենք կը լինենք միշտ բարեկամ եւ ոյժ կու տանք

իրեն. բայց նկատելով երկրին քաղաքական տարտամ վիճակը, յետադիմական շարժումի միշտ սպառնացող հանգամանքը, կը պարտինք ամէն գնով եւ դրական ճշդութեամբ անպայման իրագործել ինքնապաշտպանութեան միջոցները: Մանաւանդ որ արդի սահմանադրական ազատութիւնը աւելի դիւրութիւններ կ'ընծայէ այդ մասին: Ասոր մէջ ղեկավարի [դեր] պէտք է ստանձնեն Հ.Յ.Դ. մարմինները եւ մարտական խումբերը, մղելով մասսան որպէսզի իր յատուկ միջոցներով իրագործէ իր ինքնապաշտպանութեան գործը:

II Մեր դիրքը Օսմանեան երեսփ. ժողովի՝ ժողովուրդի նպաստաւոր եւ աննպաստ որոշումներու հանդէպ.— քաջալերել Օսմ. երեսփ. ժողովի այն ամէն դեմոկրատ որոշումները, որ նպաստաւոր են օսմանեան բաղկացուցիչ տարրերուն ազգային ինքնուրոյնութեան եւ արհեստաւոր, գործաւոր ու երկրագործ իրաւագուրդ դասակարգի շահերուն: Իսկ մամուլով եւ բոլոր օրինական միջոցներով բողոքել այն որոշումներուն դէմ, որոնք հակառակ են ժողովրդական շահերուն:

III Մեր դիրքը Իթիհատի հանդէպ.— Հ. Յ. Դաշնակցութիւնը սահմանադրութիւնը պաշտպանելու հիման վրայ, համերաշխած է Իթիհատի հետ: Ուստի մենք ալ պէտք է աշխատինք, հայ եւ թուրք տարրերուն միջեւ համերաշխութեան ոգին արթնցնել եւ ընտրական պայքարներու ժամանակ անոնց հետ համաձայնելով եւ գործակցելով ժողովրդական շահերը պաշտպանելու կարող եւ արժանի պատգամաւորներ ընտրել:

Գ. ՆԻՍՍ

Յ/19 Յուլիս 1910 ժամը 2-8 (ը. թ.)

IV Մեր դիրքը Հնչակեաններու հանդէպ.— Ս. Դ. Հընչակեան կուսակցութիւնը (նաեւ Վերակազմալ) սկզբունքով չըլլալով դեմոկրատ ժողովրդական կուսակցութիւն մը, մենք հայ յեղափ. Դաշնակցութեան ընդհ. սկզբունքներու վրայ յենելով նպատակաւորմար ու անհրաժեշտ կը գտնենք Պոլսոյ Կեդր. Կոմիտէի առաջ բերած հայ Միջկուսակցային համերաշխութեան բոլոր կէտերը: Այսպիսի համաձայնութիւն մը մեր շրջանի տեղական, կուլտուրական, տնտեսական, ազգային, ընտրական, վերջապէս ինքնապաշտպանութեան ամէն քայլերուն մէջ գեղեցիկ օժանդակ մը պիտի ըլլայ ստուարացնելով ազատախոհներու թիւը, ջնջելով գոնէ մասամբ մեր յեղափոխական գործունէութեան մէջ իրերամերժ հակառակութիւններու չափը, որոնք կը տկարացնեն կազմակերպական հաւաքական ոյժը. մանաւանդ որ արդի հակաօրինակական հոսանքի ժամանակ, անիկա պիտի հանդիսանայ լաւագոյն թոււորը

մեր հայ յետադիմական խուժանատիրութեան:

V Մեր դիրքը Հ. Սահմանադիր Ռամկավար կուսակցութեան հանդէպ.— Նկատելով որ Հ.Ս.Ռ. կուսակցութիւնը ինքնին հակաօրինակական կուսակցութիւն մ'է եւ բացէ ի բաց յայտարարած է թէ իր պայքարի գոյությունը կ'երկարի այնքան, որքան որ հայութեան մէջ կը գտնուին ընկերավարական կուսակցութիւններ, ուստի երբ նա որոշ կերպով կ'արտայայտուի, մենք կը պարտինք սկզբունքային հողի վրայ ուժգին եւ անողոք պայքար մղելու եւ աշխատելու ժողովրդին պարզել անոնց բուն նպատակը:

Բ.— Տնտեսական

I Հողային անարդար գրաւումներ.— Նկատելով որ մեր շրջանին մէջ ալ որոշ չափով գոյութիւն ունի անարդար գրաւումներու ցաւատանջ հարցը, կը յանձնարարենք շրջանի բոլոր մարմիններուն որ ձեռնհաս ընկերներու միջոցաւ մանրամասնօրէն ուսումնասիրեն ներկայ շրջանի մէջ տեղի ունեցած բռնի եւ անարդար գրաւումները, եւ կարելի եղածին չափ հողային հարցը շօշափող ընդհանուր խնդիրները, եւ հարստահարուած համայնքներու մէջ արթնցնել իրենց բռնաբարուած իրաւունքին տիրանալու եւ ամէն գնով զայն պաշտպանելու գիտակցութիւնը: Այս կերպով գրաւուած հողերը վերադարձնելու համար մամուլով եւ բոլոր օրինական միջոցներով հարկ եղած տեղերը բողոքել:

V Մանօթ.— Այս տարուայ շրջանին մէջ կարելի եղածին

չափ փոփոխում ուսումնասիրել տասանորդի գեղծումները եւ կորովի կերպով բողոքել մամուլի միջոցաւ:

II Արհեստակցական, բանուորական գիւղացիական միութիւններ.— Արհեստակցական, բանուորական եւ գիւղացիական միութիւնները ըլլալով միջոց մը արհեստներու զարգացման գործին՝ արհեստաւորներու, բանուորներու եւ գիւղացիներու կազմակերպման, միեւնոյն ատեն նեցուկ՝ զանոնք կազմակերպող կուսակցութեան եւ մեծ ազդակներ լինելով՝ իրաւագործ փողովորդի տնտեսական վիճակի բարելաւման, — անհրաժեշտ է որ շրջանի մարմինները հետամուտ ըլլան ամէն տեղ այդ տեսակ միութիւններ կազմել, ու եթէ գոյութիւն ունին՝ աջակցիլ անոնց գործելակերպին ուղղութիւն տալուն:

III Համագործակցական (cooperatif) միութիւններ.— Ընկերներու եւ ուրիշ մասնակցողներու տնտեսական վիճակը բարելաւելու, եւ աղքատիկ հասարակութեան նպաստաւոր պայմաններով ապրուստ հայթայթելու համար, յարմար վայրերու մէջ փափաքելի է որ շրջանի տեղական մարմինները թելադրեն բոլոր ընկերներուն ու համակիրներուն, նաեւ հասարակութեան պատկանող չէզոք անձնաւորութիւններուն՝ օր առաջ կազմելու համար տեղական պահանջները գոհացնող համագործակցական միութիւններ:

Դ. ՆԻՍ

1910 Յուլիս 6/19 ժամ 10-12 (ը. թ.)

Գ.— Կուլտուրական

I Մեր դիրքը ազգ. կուլտուրական հաստատութիւններու հանդէպ.—

Ա. Վարժարան.— Որպէսզի ունենանք առողջ դաստիարակութիւնով նոր սերունդ մը ներկայ դժբախտ հայկական իրականութեան մէջ, անպայման պէտք է ոյժ տալ կրթական յարկերուն՝ որոնք ընդհանրապէս կղեր-աղայական քմահաճ տնօրինութեան, եւ, իրենց պաշտօնի անգիտակ ուսուցիչներու դաստիարակութեան ներքեւ, ենթարկուած են տխուր եւ անախանձելի վիճակի մը: Այս կրթական անկերպարան կացութեան առջեւ շրջանի ամբողջ ընկերները կը պարտին

ա.- Լսարաններու կամ ժողովրդական ուրիշ հաւաքավայրերու մէջ, մանկավարժական սկզբունքներու եւ Դաշնակցութեան դաստիարակութեան հանդէպ ունեցած ըմբռնումներու մասին գրաւոր եւ բերանացի փրփականտ մղել եւ ժողովրդի մէջ արթնցնել գիտակից հետաքրքրութիւն մը դէպի կրթական գործը, իսկ երբ նորէն կրթական յարկերը կը մնան քմահաճոյքի առարկայ, ընկերները կը պարտին ուղղակի ժողովուրդի միջոցաւ եւ բանաւոր պայքարի ուղղութիւնով հակազդել

այդ դրութեան:

բ.- Ազգային ընտրական պայքարներու միջոցին, պաշտօնական մարմիններու մէջ բոլոր օրինաւոր միջոցներով աշխատիլ ազատախոհներ, կամ ընկեր եւ համակիրներու մոտաքր ապահովցնել: Այս մասին պէտք է ըլլալ չափաւոր եւ հասկնալ ժողովուրդի հոգեբանութիւնը:

գ.- Ազգային կրթական հաստատութիւններու մէջ, գործունէութեան գետին մը պատրաստել վերջ, պէտք է ջանալ շրջահայեաց կերպով եւ աստիճանաբար սկսիլ ծրագրի եւ կանոնագրի փոփոխումի՝ մանկավարժական սկզբունքներու եւ Դաշնակցութեան դաստիարակութեան հանդէպ ունեցած ըմբռնումի համեմատ:

դ.- Այս մասին յանձնարարել մեր բոլոր ուսուցիչ եւ համակիր ընկերներուն չչեղիլ մանկավարժական սկզբունքներէ, եւ իբր տիպար ուսուցիչ կատարել իրենց բոլոր պարտականութիւնները թելադրուած գիտակցութեան ոգիէն:

Մանօթ.— Մեր ընկեր ուսուցիչները կը պարտին ոչ միայն «մանկավարժական» անունով գոհանալու այլ ինքնօգնութիւնով առաջ տանիլ այդ մասին իրենց հիմնութիւնը:

ե.- Մեր վերջի Ընդհ. ժողովի որոշման համեմատ դաշնակցական մարմինները պէտք է պաշտօնապէս ուղղակի միջամտութիւն ընեն ազգ. կրթական գործերուն:

II Մեր դիրքը դէպի եկեղեցին եւ անոր պաշտօնները.—

ա.- Պաշտօնական կերպով եկեղեցւոյ գործերուն բնաւ չմիջամտել, իսկ իբր հայ անհատ քննադատել բոլոր այն տգեղ երեւոյթները, որոնց հեղինակն ուղղակի ներկայ անկեղ կղերականութիւնն է:

բ.- Հաւատքի տեսակէտով ոչ մի խօսք ունէ դաւանանքի հանդէպ քանի որ Դաշնակցութիւնը որդեգրած է «խղճի ազատութիւնը»:

գ.- Եկեղեցւոյ դաւանանքներու եւ կղերներու պատճառով հայութիւնը անջատուած լինելով 3-4 հատուածներու, մեր միակ ուղղութիւնը պիտի ըլլայ ազգային գաղափարով շողկապել եւ համերաշխ ապրեցնել այդ հատուածները իրարու հետ:

III Լսարան, գրադարան եւ թատրոն.—

Լսարանը լինելով մեր գաղափարներու տարածման առաջնակարգ միջոցներէն մին, գրադարանն ալ՝ կրթական ուժեղ ազդակ ու թատրոնն ալ՝ ժողովուրդի բարքերու ազնուացումի եւ նախապաշարունակները հեռացնելու միակ հաստատութիւնը, շրջանի տեղական մարմիններուն նկատման կը յանձնուի որ ամէն տեղ թելադրեն ընկերներուն չինայել իրենց բարոյական աջակցութիւնը անոնց գոյութեան եւ յարատեւութեան համար, տեղական պայմաններու եւ պահանջներու համաձայն:

Ե. ՆԻՍ

1910 Յուլիս 7/20 ժամը 1-5 (ը. թ.)

IV Մեր դիրքը Ազգային մարմիններու հանդէպ.—

Ընկերները պէտք է աշխատին ունէ տեսակէտով չմիջամտել Ազգային մարմիններու գործերուն եւ պարապ տեղ չվատնել իրենց ոյժը, բայց երբ անոնք Ազգային Մահամահաբանութեան ոգւոյն եւ ժողովուրդի շահերուն հակառակ գործեն, ժողովրդական պայքարի ուղղութիւնով եւ ժողովուրդի միջոցով պայքար մղել որպէսզի գիտակից տարրեր միայն մոտ գտնեն ազգային մարմիններուն մէջ: Հոգ տանիլ եւ մասնաւորապէս հետաքրքրուիլ ազգ. մարմիններու ընտրութեան միջոցին բանաւոր փրփականտ մղել, որպէսզի ժողովուրդը լաւ հասկնայ իր բուն բարեկամները եւ յաջողցնէ անոնց ընտրութիւնները: Հոգ տանիլ նաեւ մասնաւորապէս Գաւառական ժողովի եւ Պոլսոյ Ազգ. երեսփոխանական ժողովի ընտրութիւններու միջոցին:

Մանօթ.— Ընկերները պարտին վերլուծել արդի հակահոսանքի գլխաւոր պատճառները, ինչպէս հինի եւ նորի պայքարը, տգէտ ժողովուրդի մոլեռանդութեան չարաչար շահագործումը, կղեր-էֆէնտիական դասակարգային շահերը եւ կարգ մը խայտառակ դաւադիրներու աղտոտ փրփականտը — եւ այսպիսով լուսաբանել ժողովուրդին միտքը, գիտակցութիւն տալ իր բուն կացութեան, մերկացնել հայ յետադէմներու թաքուն նպատակները, զգուշանալով չափազանցութիւններէ եւ միշտ մնալով մեր սկզբունքային պայքարի ուղղութեան վրայ:

V Երկրորդական վարժարանի կամ ուսումնարանի մը պէտքը.—

Կառափնատի Շրջ. ժողովը անհրաժեշտ կը նկատէ մեր շրջանի յարմարագոյն վայրի մը մէջ ուսումնարանի մը կամ երկրորդական վարժարանի մը պէտքը, որ պիտի կառավարուի մեր աշխարհահայեացքի տեսակէտով: Այդ մասին տեղական մարմինները պէտք է հոգածու ըլլան ուսումնասիրելու այս խնդիրը, թղթակցիլ իրարու հետ եւ խորհիլ դրամազուլի մը կազմութեանը համար (նուիրատուութիւն, հանգանակութիւն, վիճակահանութիւն, եւ ուրիշ աղբիւրներ) եւ իրենց ճշգրիտ տեղեկագիրը բերել յաջորդ շրջանային ժողովին, եւ շրջան. իրաւասու մարմինը հոգ տանելու է ասոր գործադրութեան:

VI Մամուլի մը հաստատութիւնը.—

Նկատելով որ արդի յետադէմ շարժումին հակազդելու, բանաւոր պայքար մղելու, եւ մասսայի մտքին ու սրտին վրայ Դաշնակցութեան սկզբունքները դրոշմելու համար, անհրաժեշտ է մամուլի բարերար դերը, եւ նկատելով որ Հողաբլուրի ընկերները համագործակցական հիման վրայ մամուլ մը հաստատելու հաստատ առաջադրու-

թիւնը ունին, եթէ անոնք մինչեւ 6 ամիս չկարենան իրագործել այս գաղափարը, Կառափնատի Շրջան. իրաւասու մարմինը, տարուայ մը միջոցին, պատասխանատու է՝ տեղական մարմիններու հետ թղթակցելով իրագործել այս ձեռնարկը: Որքան որ կարելի է, աշխատիլ որ պիտոճէն դուրսէն հայթայթուի, վիճակահանութեան, ներկայացումի եւ նուիրատուութեան միջոցներով:

Մանօթ.— Շրջան. ժողովը կ'որոշէ ունենալ շաբաթաթերթ մը՝ տնտեսական, գիտական, գրական-տեղական բաժիններով, որ պիտի ըլլայ ամբողջ Կառափնատի շրջանին արտայայտիչ օրկանը եւ շրջանի մարմինները պիտի բերեն իրենց բարոյական աջակցութիւնը: Շրջան. ժողովը յարմար կը դատէ իր կողմէ թերթը մկրտել «Ալիք» անունով:

Զ. ՆԻՍ

1910 Յուլիս 7/20, ժամ 8 1/2-12 (ը. թ.)

Դ.— Կազմակերպական

I Փրփագանդ.—

Ա.— Դաշնակցութեան ոյժը կը ներկայացնէ՝ գիտակից իր սկզբունքներու, ծրագրի տեղեկ ընկերներու կառափնատի Շրջան. ժողովը կը պարտադրէ տեղական մարմինները որ թեկնածուին բացատրեն եւ ուսուցանեն Դաշնակցութեան ծրագիրը: Թեկնածուն, իր հաւանութիւնը յայտնող ուխտագիրը ստորագրելէ վերջ, կ'ընայ անդամակցիլ Դաշնակցութեան:

Բ.— Նկատելով որ ընկերներու մէջ կը գտնուին այնպիսիներ որք ծրագիրը ամբողջովին ըմբռնած չեն տակաւին, նոյնպէս Շրջան. ժողովը կը պարտաւորեցնէ տեղական մարմինները որ ձեռնհաս ընկերներու միջոցաւ Դաշնակցութեան ծրագիրը փրփականտ ընեն ընկերներուն եւ գիտակցութիւն արթնցնեն անոնց մէջ:

Գ.— Թէ՛ լսարանի բեմերէն եւ թէ՛ մասսայի խաւերուն մէջ ժողովուրդին դիւրահասկնայի լեզուով բացատրել Դաշնակցութեան ծրագիրը եւ պահանջները: Հոգ տանիլ որ փրփականտը ընդգրկէ նաեւ հարեւան ազգերը, «մասսան եւ ինտելիգենցիան», շեշտելով համերաշխութեան պէտքը յօգուտ մեր տառապեալ երկրի բաղկացուցիչ տարրերուն:

II Տեղական խումբեր.—

Տեղական խումբերու ընկերներու պարտականութիւնն է Դաշնակցութեան պիտոճէին (համար) նորանոր աղբիւրներ գտնել եւ մեր ծրագրին տնտեսական կուլտուրական մասերը գործադրելու աշխատիլ, եւ ունէ առնուելիք լուրջ կազմակերպական քայլ, անպայման տեղեկացնել իրենց պատկան մարմինին: Խմբական նիստերու մէջ ինքնազարգա-

ցումի համար սարքել դասախօսութիւններ եւ սկզբունքային վիճաբանական ժողովներ:

III Մարտական խումբեր եւ գինավարժութիւն.— Մարտական խումբերը կը կազմեն Դաշնակցութեան գինուորական ուժը: Խաղաղ միջոցին պարտաւոր են իրենց պարապ ժամերուն լուրջ եւ շրջահայեաց կերպով զբաղիլ ընկերներու եւ հայ երիտասարդներու գինավարժութեան գործով, իսկ ունեւորներն առթիւ ինքնապաշտպանութեան կռիւներու ղեկավարութիւնը ստանձնող եւ գործադրող միակ ուժը պէտք է ըլլայ մարտական խումբերէ ընտրուած գինուորական խորհուրդը: Ամէն պարագայի տակ շրջանիս մարմինները հարկ եղած օրակցութիւնը եւ ուժը տրամադրելի ընելու են յիշեալ խումբերուն գինուորական դաստիարակութեան եւ կարգապահութեան:

Մանօթ.— Մարտական խումբերը պարտին ունենալ իրենց պարտականութեանց սահմանները ճշդող ներքին կանոնագիր մը:

III Ուսանողական միութիւններ.— Երջան. ժողովը աննպատակ եւ վնասակար կը գտնէ նախակրթարաններու եւ ազգ. միջնակարգ վարժարաններու մէջ աշակերտական միութիւններու կազմութիւնը, ինչպիսի հողի վրայ ալ կանգնած ըլլան: Ջերմապէս կը յանձնարարէ ընկերներուն արգիլել այնպիսի միութիւններ իսկ քաջալերել շրջանաւարտից միութիւններ եւ անոնց ուղղութիւն տալ մեր աշխարհահայեացքի տեսակէտով: Յանձնարարել շրջանիս պատկանող Մոցի եւ Լիճի համալսարանական ուսանողութիւններուն, որպէսզի որոշ քայլեր առնեն Արեւմտեան Բիւրոյի եւ Պոլսոյ համալսարանական ուսանողութեան քով — կազմելու համար ընդհանուր թրքահայ դաշնակցական ուսանողական միութիւն մը: Այս մասին ծրագրի կազմութեան, թղթակցութեան եւ ուրիշ շրջանի ուսանողութեան հետ համաձայնութեան իրաւասութիւն կը տրուի Մոցի եւ Լիճի ուսանողութեան:

IV Տեղական եւ շրջուն գործիչներու պէտքը.— Ա.- Նկատողութեան առնելով մեր շրջանի մէջ այլեւայլ վայրեր, ուր Դաշնակցութիւնը դժնդակ կացութեան կը մատնուի ձեռնհաս եւ կարող ընկերներու բացակայութեան պատճառով, Երջան. ժողովը այս մասին կը յանձնարարէ տեղական մարմիններուն՝ տեղական գործիչ մը պահելու համար պարտ ու պատշաճը տնօրինել, եթէ իրենց պիտուէն ներքէ:

Բ.- Նաեւ նկատողութեան առնելով Կառափնաստի շրջանին աննախանձելի վիճակը եւ զանոնք մարգելու եւ կազմակերպելու անհրաժեշտ պէտքը, Երջան. ժողովը Կառափնաստի Երջան. իրաւասու մարմին կը յանձնէ խնդիրը, Բիւրոյէն պահանջելու համար շրջուն գոր-

ծիչ մը որ իր անձին վրայ միացնէ անպայման գինուորական եւ կարելի եղածին չափ փրոփականտիստի յատկութիւնները:

է. ՆԻՍՍ
1910 Յուլիս 8/21 ժամը 1-5 (ը. թ.)

VI Զիֆոն.— Կազմել տեղական զիֆոններ տեղական մարմիններու քննիչով եւ պատասխանատուութեան ներքեւ. իր պարտականութիւնն է շրջահայեաց ըլլալ եւ հայթայթել մաքուր եւ աժան ապրանքներ: Երջանի եւ հեռաւոր վայրերու պահանջներուն գոհացում տալու համար, Երջան. ժողովը անհրաժեշտ կը դատէ կեդրոնական Զիֆոն մը եւ յարմարագոյն վայրը կը նշանակէ «Լեռ»ը: Կեդրոնական Զիֆոնը կը կազմուի Լեռի Զիֆոնի եւ թոշակաւոր ընկերի մը հետ: Լեռի ենթակումիտէին կը ձգուի իր յարմար դատած մէկ ընկերը նշանակել եւ այդ մասին թղթակցիլ իր յարմար դատած մարմիններու հետ: Այդ ընկերը պիտի վճարուի գէնքերու վաճառումէն յառաջ եկած սակէն (նուազագոյն չափ քսան չորս ոսկի օսմ.): Եթէ տարեկան սակը այդ գումարը չըրացնէ, շրջանները պարտաւոր են պակասը լրացնել իրենց եկամտի համեմատութիւնով: Վաճառումի իբր սակ 3-5% մարմիններու, 5-10% դուրսէն եղած յանձնարարութիւններու համար:

VII Կանանց Կարմիր խաչ եւ այլ կուլտուրական միութիւններ.— Նկատի առնելով շրջանիս իգական սեռի հասարակական կեանքէ ունեցած մեկուսացած դիրքը եւ ընդհանուր առումով իբր հասարակական տարր կենսական հարցերու հանդէպ իր ունեցած անտարբերութիւնը, եւ իր ընկերական շահերուն պաշտպանութեան համար իր անկազմակերպ վիճակը, ընկերները կը պարտին անոնց մէջ ձեռնհաս ընկերակիներու միջոցաւ ուղղակի եւ անուղղակի միջոցներով պրոպագանդ ընել, արթնցնել ինքնագիտակցութիւն դէպի իրենց կոչումը, ընկերութեան մէջ դէպի իրենց կատարելիք բարձրագոյն դերը եւ այսպէսով կազմել իրենց մէջ զարգացական, կուլտուրական, դպրոցասիրաց, բանուորական միութիւններ, աշխատանքի տուներ, եւ Կարմիր խաչի կազմակերպութիւններ, եւ քաջալերել արդէն իսկ իրենց մէջ գոյութիւն ունեցող միութիւնները եւ հոգածու ըլլալ զանոնք կապելու աշխատանքի տան կամ Կարմիր խաչի դաշնակցական միութիւններու հետ:

VIII Կառափնաստի բարձրագոյն մարմնի մը (Կեդր. Կոմիտէ) կամ Երջան. իրաւասու մարմնի մը կազմութիւնը եւ անոր իրաւասութեան սահմանը.— Նկատելով Կառափնաստի շրջանի մէջ ընկերներու թիւին սակաւու-

թիւնը եւ հասոյթի քանակին անբաւարարութիւնը, ըստ Դաշնակցութեան ընդհ. կանոնագրի, արգելիչ պատճառներ են Կեդր. Կոմիտէի վերածելու համար Կառափնաստի շրջանը, ուստի Երջան ժողովը [կ'որոշէ կազմել] շրջանի գործերը աւելի կանոնաւորելու համար, Հոգաբարձի ընկերներէն իրասաւու մարմին մը որու պարտականութիւնն է.

ա.- Երջանի այլեւայլ վայրերը սերտ յարաբերութեան մէջ պահել:

բ.- Երջան. ժողովի տուած որոշումներու գործադրութեան հսկել (ստիպողականութիւն տալ շրջուն գործիչին):

գ.- Տեղական մարմիններէն տեղեկագիր, հաշուեկրչիւններ եւ կանոնագիրները պահանջել եւ զանոնք հրաւիրել Երջան. ժողովին:

Մանօթ.— Մարմինը ըստ կանոնագրի պիտի որոշէ իւրաքանչիւր վայրի համար պատգամաւորի թիւը եւ թրւականէն 2 ամիս առաջ, լուր պէտք է տայ մարմիններուն. երբ պատգամաւորներու ՁՅը ներկայ գտնուին ժողովը բացուած կը յայտարարուի:

դ.- Կառափնաստի շրջանը Կեդրոնական Կոմիտէի վերածելու համար պէտք է որ թղթակցի շրջակայ վայրերու հետ (Արեւան Հովիտ, Սահմանաբերդ, Խորածոր, Արծուաբերդ, Հ...)¹ թելադրելով տեղական մարմիններուն որ պրոպագանդ յառաջ մղուի եւ կազմակերպութիւնը ոյժ ստանայ:

ե.- Երբ իրաւասու մարմնի մը անդամը բացակայի հիւանդութեան եւ կամ գաղթելու պատճառով, Հոգաբարձի կողմէն յարմարութիւն ունեցող ընկեր մը կրնայ նշանակել բացակայ ընկերը փոխանորդելու համար:

զ.- Երջան. ժողովի գումարուելիք տեղը իրաւասու մարմինը պիտի որոշէ:

է.- Երջանի ընդհ. գործերուն համար իրաւասու մարմինը կը թղթակցի Բիւրոյի հետ, իսկ տեղական ստիպողական գործերու համար տեղ. մարմիններն ալ ի հարկին կրնան թղթակցիլ նաեւ Բիւրոյի հետ:

ը.- Իրաւասու մարմինը պարտաւոր է նամակներու պատասխանել անպատճառ առաջին փոսթով:

թ.- Երջան. իրաւասու մարմինը պարտաւոր է հաշուետուութիւն ընել յառաջիկայ Երջան. ժողովին:

Մանօթ.— Երջան. իրաւասու մարմինը ընտրուեցաւ երբ հոգիներէ, որոնց անունները պիտի իմացուի Հոգաբարձի կոմիտէին եւ մասնաւոր հրահանգներն ալ պիտի հաղորդուի պատգամաւորի միջոցաւ. եւ իրենց ստորագրութիւնները պիտի ըլլայ՝ Կառափնաստի Երջան. իրաւասու մարմին:

IX Կազմակերպական կարգապահութեան ոգին (discipline) գարգացնել մեր շարքերուն մէջ.— Դաշնակցութեան ներքին կանոնագրի կազմակերպական կարգապահութեան վերաբերեալ պարտաւորած կանոններուն

գործադրումը առաջին եւ նուիրական պարտականութիւնն է ամբողջ ընկերներուն, սակայն Երջան. ժողովը անմիջական պէտք կը զգայ շեշտելու.

ա.- ընկերական-ընտանեկան շրջանակներու մէջ գաղտնապահութիւն ընդհ. Դաշնակցութեան կամ տեղական ունէ որոշումներու հանդէպ:

բ.- Ընկերոջ մը օտար շրջանակներու մէջ իր կազմակերպութեան հանդէպ գործածած նախատական խօսքը կամ անտարբեր վերաբերումը՝ պախարակելի սեւ բիծ մըն է զոր ամբողջ կազմակերպութիւնը պէտք է նկատի առնէ ընդհանրապէս եւ տեղական մարմինները մասնաւորապէս:

գ.- Պատշաճ վարուելակերպ ընդհանուր ընկերներու իրարու հանդէպ:

դ.- Ունէ ընկեր առանց իր պատկանած մարմնին նախապէս համամտութեան, պաշտօնական վայրի կամ հաւաքոյթի մէջ, երբեք իրաւունք չունի իր կուսակցութեան անունով ունէ յայտարարութիւն ընել: Այս կէտը մասնաւոր ուշադրութեան կը յանձնուի շրջանի մարմիններուն:

ե.- Ընկերական թղթակցութիւններու համար փոփոխութեան պարագային՝ անմիջապէս տալ որոշ հասցէ.— մարմինները կնիք չունենալով պէտք է որոշ ստորագրութիւն ունենան:

զ.- Ամսավճար գանձումին հսկել ճշգրտապահ կանոնաւորութեամբ. եթէ ոչ՝ գործադրել ընդհ. կանոնագրի տրամադրութիւնները:

X Երջանային ներքին կանոնագիր.— Ամբողջ շրջանին համար ներքին կանոնագրի մը պէտքը զգալի ըլլալով, յառաջիկայ շրջանային ժողովէն 2 ամիս առաջ շրջանիս տեղական մարմինները իրենց ներքին կանոնագիրը, պատրաստուած տեղական պահանջներու եւ Դաշնակցութեան ընդհ. կանոնագրի համաձայն, պէտք է ղրկեն Հոգաբարձի՝ Կառափնաստի Երջան. իրաւասու մարմնին, որպէսզի ան ալ իր կարգին անոնցմէ քաղելով եւ ամփոփելով յառաջիկայ շրջանային ժողովին բերէ շրջանիս համար ընդհանուր ներքին կանոնագիր մը:

1.- Արեւան Դովիտը՝ Ուրֆան է. Սահմանաբերդը՝ Մարաշ. Խորածորը՝ Զոյ. Արծուաբերդը՝ Չէլսու:

Ը. ՆԻՍ

1910 Յուլիս 8/21 ժամը 8-11 1/2 (ը. թ.)

XI Հրահանգներ յաջորդ շրջանային ժողովի համար

Ա.- Բ՞ Շրջան. ժողովը պիտի գումարուի յառաջիկայ տարի Յուլիս 1/14ին:

Բ.- Իրաւասու մարմինը կ'որոշէ ժողովի վայրը, եւ թուականէն 2 ամիս առաջ տեղական մարմիններէն կը պահանջէ իրենց հաշուեկշիռը, տեղեկագիրը եւ կահագիրը, զորս պարտին ղրկել անյապաղ: Թուականէն երկու ամիս առաջ Իրաւասու մարմինը պարտի ղրկել նաեւ մշակուելիք օրակարգը եւ ամիս մը առաջ ժողովի հրահրագիրը:

Գ.- Շրջան. ժողովի կրնան մասնակցել կոմիտէները, ենթակոմիտէները եւ 15-20 ընկեր ունեցող տեղերն ալ եթէ տարուայ միջոցին վճարած են իրենց ամսավճարները:

Դ.- Պատգամաւորները պարտին ներկայ գտնուիլ ժողովին Յուլիս 28ին:

Ե.- Տեղեկագիր, կահագիր եւ հաշուեկշիռ չներկայացնող պատգամաւորը չ'ընդունուի ժողովէն:

Ե.— Հաշուական

I.— Շրջանային հաշուետուութիւն եւ վաւերացում.— Շրջան. ժողովը իւրաքանչիւր շրջանի հաշիւը, տեղեկագիրը եւ կահագիրը ընդունած ըլլալով, այդ մասին իր աշխատութիւնները շարունակելու համար, իրաւասութիւն կու տայ Լեռի ենթակոմիտէին քննելու եւ դասաւորելու համար շրջանային հաշուետուութիւնը եւ իրաւասու մարմինն գիտակցութիւնովը մէկ պատճէնը ղրկելու Արեւմտեան Բիւրոյին, իսկ միւս պատճէնը Շրջան. Իրաւասու մարմինն:

II.— Պիտճէի համաչափութիւն.— Տեղական պայմանները եւ ընկերներու անձուկ վիճակը նկատողութեան առնելով, նաեւ Ե՞ Ընդհ. ժողովի հրահանգի տրամադրութեան համաձայն, Շրջան. ժողովը գեղչեց Բիւրո ղրկուելիք սակը, եւ որոշեց որ տեղական մարմինները իրենց հասոյթին 50% յատկացնեն ինքնապաշտպանութեան գործին, 20% Բիւրոյին եւ 30% տեղական եւ այլեւայլ ծախքերու:

III.— Հասոյթի աղբիւրներ.— Հասոյթի աղբիւրները կը կազմեն ա) Ամսավճարները զորս պէտք է գանձել կանոնաւոր կերպով ամսէ ամիս, բ) Ներկայացումներ, գ) Նուիրատուութիւններ, դ) Վիճակահանութիւններ:

Թ. ՆԻՍ

1910 Յուլիս 9/22 ժամը 1 — 5 (ը. թ.)

Զ.— Յաւելուած

I.— 1908 Սեպտեմբերի Լիսի² դատական մարմնի եւ Արեւմտեան Բիւրոյի կողմէ նշանակուած քննիչ Բեգուլի կողմէ հեռացուած եւ վերջնական տնօրինութիւնը Շրջան. ժողովի ղրկուած Լեռի նախկին ընկերներէն Յարութիւն քհնյ. Եսայեանի եւ Արտաշէս Գաբրիէլեանի վերջնական վտարումը կը յանձնարարէ Շրջան. Իրաւասու մարմինն հրապարակել Դրօշակի միջոցաւ, նկատի առնելով իրենց դէմ եղած ամբաստանութիւններուն ճշդութիւնը եւ իրենց արդի հակայեղափոխական պախարակելի ընթացքը:

II Մարթինի խնդիրը.— Մարթինի խնդիրը յետաձգուեցաւ յաջորդ Շրջան. ժողովի, որպէսզի որոշ կերպով լուսաբանուին վճիռներու գլխաւոր պարագաները:

III Նշվէ յապի խնդիրը.— Շրջան. ժողովը նկատի առնելով Լեռի ենթակոմիտէի կողմէ ընկեր Նշվէ յապի Թաւթ պատահարի մասին տրուած տեղեկութիւնները, յարմար չըլլալով պատասխանատուութեան խնդրին վրայ վիճիլ, այլ իբր բարոյական աջակցութիւն եւ վարձատրութիւն ֆիզիքապէս ոչնչացած աննման յեղափոխական գինուորի մը համար՝ կը յանձնարարուի Լեռի ենթակոմիտէին մինչեւ յառաջիկայ Շրջան. ժողովը պատրաստել իր կենսագրութիւնը եւ միշտ տաք համակրութիւնով վերաբերիլ երբեմնի քաջառողջ եւ աւելնոտ եւ արդի անբախտացած վիրաւոր ընկերով հանդէպ: Նաեւ կը յանձնարարէ շրջանի հեռաւոր ընկերներուն թղթակցիլ իրեն հետ, սիրով ալ անձնուէր ընկերը եւ ապագային նիւթապէս սատարել ի պահանջել հարկին:

IV Պարոյր Քասիմի խնդիրը.— Շրջան. ժողովը նկատի առնելով ընկեր Քասիմի մասին եղած ամբաստանութիւնները, առաջին պատասխանատու կը նկատէ այն ժամանակի տեղական մարմինը, որ առանց ուշիցէ քննիչի ղրկութիւն մը հաստատելու իր Զիֆոնը ներկայացնող ընկերով հանդէպ գտնուած է բոլորովին անտեղեկ եւ անհոգ: Իսկ նկատի առնելով որ ընկեր Քասիմ յեղափոխական մարմիններու անունին յանձնարարութիւն ստացած (Վիշապաձոր)³ եւ ատոր մէջ ցուցուցած է ընկերական պարտականութեան մեղանչող անազնիւ չարաշահութիւն մը, որչափ որ կողմնակի պարագաներու իրմէ այս մարմիններու վնասը գանձուած ըլլայ, նորէն ինքը կը մնայ այդ ժամանակի համար Հ.Յ.Դ.ի անունը շահագործող ընկեր մը եւ այդ մասին Լեռի ենթակոմիտէին կը յանձնարարէ Շրջան. ժողովի

այս որոշումը արտայայտող յորդոր յանդիմանագիր մը ղրկել ընկեր Քասիմին:

VI Մայիլի եւ Ե. Պ.ի խնդիրը.— Ընկեր Մայիլ եւ Ե. Պ. իրենց կազմակերպութեան ունեցած պարտքի համար հեռացուած ըլլալով Լեռի ենթակոմիտէի կողմէ, միեւնոյն ժամանակ նկատի առնելով իրենց յեղափոխական գաղափարի լաւ վերաբերումը եւ պատշաճ ընթացքը, Շրջան. ժողովը իր յանձնարարէ Լեռի ենթակոմիտէին իր պահանջը գանձել վերջ, եթէ յիշեալ ընկեր Մայիլը եւ Ե. Պ. կը տեսնէ միեւնոյն ուղղութեան վրայ, ընդունիլ իբր դաշնակցական ընկեր:

VII Մոցի Զիֆոնի եւ ընկեր Մուշեղի խնդիրը.— Ա.- Ինչպէս կը հասկցուի երկու կողմի նամակներու ուսումնասիրութենէն, այն յանձնարարութեան մասին Մոցի Զիֆոնի ընկերները պատասխանատուութիւն չեն ստանձնած:

Բ.- Ընկեր Մուշեղ իրեն տրուած հրահանգներու համաձայն չվարուելուն համար, յեղափոխական կարգապահութեան դէմ մեղանչած է. եւ ինչպէս կը տեսնուի նամակներու ընթերցումէն, Մոցի պատասխանատուութիւն ստանձնելու մասին ըրած առարկութիւնները բոլորովին չէ հասկցուցած Լեռի ենթակոմիտէին:

Գ.- Մարտ 28 թիւ նամակովը «Յունականները քանի որ չպիտի կրնաք ղրկել այդ պայմանի ներքեւ» բացատրութիւնը գործածելէն ետք, ինչ որ կը ցուցնէ յառաջագունէ այդ մասին Մոցի Զիֆոնի հակառակութիւնը, յաջորդ նամակներու մէջ ալ կը պնդէ թէ «արդէն ինչպէս յայտնի է պատասխանատուութիւնը հոն դուք ստանձնեցիք»: Այս երկու հակասող ֆրագները նկատողութեան առնելով, ժողովս համոզում գոյացուց որ ընկեր Մուշեղը սուտ խօսած է: Եթէ առարկութիւն ունի, իրեն իրաւունք կը տրուի ինքզինք արդարացնել յաջորդ Շրջան. ժողովի մէջ:

Միեւնոյն պահուն Մոցի Զիֆոնի վրայ եւս կը ծանրանայ բարոյական պատասխանատուութիւնը, թէ իրենց մէջ պատասխանատուութեան սահմանը դեռ բո-

լորովին որոշապէս չճշդած, ղրկելու չէր ապրանքները: Այս առթիւ Շրջան. ժողովը կը մերժէ Մոցի Զիֆոնի անդամներէն մէկուն ընկեր Բեգուլի մասին Լեռի ենթակոմիտէին կողմէ եղած ամբաստանութիւնները: Իսկ կը վաւերացնէ Մոցի Զիֆոնի կողմէ Բեգուլի եւ Լեռի ենթակոմիտէի անդամներէն երեք ընկերներու կրնաք ղրամական համաձայնութիւնը եւ կը յանձնարարէ կարելի եղածին չափ փութացնել ղրամական յանձնարարութիւններու գործադրումը:

VIII Հովիտի վարժարանի խնդիրը.— Նկատի առնելով Հովիտի մէջ բացցուելիք վարժարանի մը համար իրենց պատգամաւորի կողմէ բերուած առաջարկը, Շրջան. ժողովը սկզբունքով համամիտ գտնուելով հանդերձ այդպիսի ձեռնարկի մը, անժամանակ կը գտնէ անոր գործադրութիւնը, եւ իր ծանրաբեռնուած պիտճէն նկատի առնելով միայն կը յանձնարարէ իր ընկերներուն իրենց շրջանին մէջ եթէ կարելի է յառաջ բերել անհատական նիւթական աջակցութիւն մը:

Արժուաբերդի պատգամաւորը ուշ հասնելուն համար Շրջան. ժողովը յաւելուածական նիստի մը մէջ նկատողութեան առաւ ընկեր պատգամաւորին առաջարկները, որոնց մեծ մասը արդէն իսկ բովանդակուած էր Շրջան. ժողովի օրակարգին մէջ: Գալով Արժուաբերդի թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս աջակցելու խնդրին, զոր ընկեր պատգամաւորը առաջարկած էր, Շրջան. ժողովը նկատելով որ նիւթապէս աջակցելու համար կանոնաւոր կազմակերպութիւն մը անհրաժեշտ է, այս առթիւ որոշեց Հոգաբարձի ընկեր պատգամաւորի միջոցաւ հրահանգ տալ Իրաւասու մարմինն որ առաջին առթիւ տեղական շրջուն գործիչ մը ղրկէ հոն: Եթէ չկարենայ իրագործել զայդ, Բիւրոյէ խնդրուելիք շրջուն գործիչը նախ հոն ղրկել:

Շրջանային ժողովը պարտք համարեց հոս արձանագրել Լեռի ենթակոմիտէի նախաձեռնութեան ոգին զոր ցուցուց ժողովի գումարման առթիւ:

2.- Լիսը՝ 4. Պոլիսն է:
3.- Տիգրանակերտ-Տիարպեղի:

Փաստ. 954-60

Ա 2.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ)

1910 Յուլիս 20/2 Օգ

Լեռ ենթակոմիտէ

Ազնիւ ընկերներ,

Շրջան. ժողովի գումարման պէտքը անհրաժեշտ դարձած էր. ուստի Յունիս 10ին շրջանի բոլոր մարմիններուն հրահրագրերը դրկեցինք իրենց պատգամաւորը Լեռ դրկելու, վերջնական թուական որոշելով Յուլիս 1: Այս թուականին միայն Մոցի, Հովիտի, Լիճի եւ Հողաբլուրի պատգամաւորները ներկայ գտնուեցան. մինչեւ Յուլիս 4ը սպասեցինք, բայց ուրիշ կողմէ եկող չեկաներկաները յարմար դատեցին ժողովը կազմել: Ժողովը զբաղեցաւ զանազան օրակարգերով. բայց բոլոր վայրերու հաշիւները եւ տեղեկագրերը ստացուած չլլալով, այս մասին [ժողովը] մեզ յանձնարարեց գրել բոլոր շրջանի մարմիններուն, պահանջել իրենց հաշիւները*, դասաւորել զանոնք եւ որոշումներու օրինակին հետ Ձեզ դրկել: Նոյնը նաեւ շրջանիս Իրաւասու մարմինն համար, որը ընտրուեցաւ այդ ժողովի կողմէ Հողաբլուրի ընկերներէն: Մենք գրեցինք շրջանի մարմիններուն եւ հաշիւներու ստացումէն վերջ, կը գործադրենք Շրջան. ժողովի յանձնարարութիւնը:

Տեղական մարմնի պաշտօնավարութեան միջոցը լրացած լլլալով, Մայիսին նոր ընտրութիւն կատարուած էր տեղական Ընդհ. ժողովին կողմէ, որով նամակները այսուհետեւ կը դրկէք հետեւեալ հասցէին Minas Berberian, Alep (միշտ Ֆրանսերէն գրել):

Ստացած ենք Ձեր վերջին յանձնարարական քարթը ընկեր Սլոյեանի մասին, պէտք եղածը կը գործադրենք:

Ընկերական բարեւներով
ի դիմաց «Լեռ»ի ենթակոմիտէի տեղ. մարմնին

ՎԱՀԷ ՍԻՒՆԻ

* Տեղեկագիրը եւ մանաւանդ կահագրերը. Արծուաբերդի պատգամաւորը թէեւ ուշ հասաւ, սակայն վաւերացուց Շրջ. ժողովի որոշումները իր կողմէ ալ, եւ իր առաջարկները նկատի առնուած են:

Փաստ. 954-81

Ա 3.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Ապրիլ 28 Գեկտ. 1910

Ընկերներ,

Պարբերաբար կը ստանանք Ձեր նամակները եւ շնորհաբերականները. եթէ մինչեւ այժմ չկրցանք պատասխանել, պատճառը այն է որ տեղույս կազմակերպութիւնը կազմալուծուած եւ քայքայուած վիճակի մէջ լիւնելով, գրելու ունէ շահեկան բան չկար կազմակերպական հարցերու մասին, մանաւանդ որ կազմակերպութեան գործով զբաղելու համար պարագաները շատ աննպաստ էին:

Ատանայի դէպքերէն վերջը մեր բոլոր ընկերները երկիրը ձգած եւ ասդին անդին տարտղնած էին: Հիմա սկսան կամաց կամաց վերադառնալ հոս: Հոս գտնուողներուն մէջ ալ մեծամասնութիւնը կը գտնուէր այնպիսի մի հոգեկան դրութեան մէջ, որ նպաստաւոր եւ օգտակար ազդակներ չէին կրնար լլլալ կազմակերպական տեսակէտով: Պէտք էր նաեւ ի նկատի ունենալ տեղական հոգեկան ընդհանուր կացութիւնը, որը կը խրտչէր յեղափոխական կուսակցութեան անունէն իսկ, սա սին նախապաշարումը ունենալով որ Ատանայի ջարդերուն տեղի տուած լինէր յեղափոխականներու գործունէութիւնը:

Ուրիշ պատճառ մըն ալ գործիչի պակասն էր: Ես առ այժմ այնպիսի հոգեկան եւ անհատական պարագաներու տակ կը գտնուիմ՝ որ ինծի համար անկարելի կ'ըլլայ մինակս կազմակերպական գործը յաջողցնել: Վահագն⁴ ալ որբանոցի վերակազմութեան հարցով զբա-

ղած՝ չէր կրնար ունէ ձեռնարկութիւն ընել: Տեղույս վրայ ուրիշ գիտակից ընկերներ ալ չկան՝ որոնց կարելի լլլայ վստահիլ կազմակերպական կենսական գործերը: Այսուամենայնիւ մօտ ապագայի մէջ սահմանափակ ընկերներու մէջ կազմակերպական կապը հաստատելու պիտի ձեռնարկուի. արդէն նոյն իմաստով Ձեզի գրուած է վահագնի կողմէ: Շրջանն ալ նոյն դրութեան մէջ է:

Գալով վահան Պետրոսեանի քով գտնուած գումարին, ընկերներու մեծամասնութիւնը այդ գումարը տեղույս վրայ պահելու կողմնակից կը գտնուի. այդ պատճառով է որ այդ դրամը իբր աւանդ կը պահուի մեր վերոյիշեալ ընկերով մօտ: Տեսնենք, այդ խնդիրն ալ պիտի կարգադրենք:

Վերջերս Այնթապէն նամակներ կը ստանանք ինքնակող «Իրաւասու մարմնի» մը կողմէ, որուն ինքնութիւնը մեզի անծանօթ է պաշտօնապէս, ուստի անյարմար գտանք իրենց պատասխանելու: Այդ մարմինը իբր թէ ընտրուած լլլայ կիլիկեան Շրջ. ժողովի մը կողմէ, որուն հաւաքումէն ունէ տեղեկութիւն ունեցած չէինք մենք: Եթէ Ձեզի հետ ալ կը թղթակցին հաղորդեցէք իրենց՝ իրենց անպատասխան մնացած լլլալուն պատճառները:

Գիւտ հայր սուրբի յանձնարարած մարդուն նկատմամբ առած տեղեկութիւններս նպաստաւոր են. ըստ այնմ կը կարգադրէք:

Առ այժմ այսչափ:

4.- Տաթևեան Վահագն, որ տեսուչ կարգուած էր Ատանայի որբանոցին:
5.- Պզտիկեան Ջաքարիա, Կիլիկիոյ հին գործիչներէն, ծագօր Կիլիկեան ծածկանուծով:

Ընկ[երական] բարեւներով՝
ՋԱԲԱՐԻԱՅ

Փաստ. 955-1

Բ.- ՎԱՀԱԳՆ ՏԱԹԵԻԵԱՆԷՆ ՎՈՒՍԵԱՆԻՆ

Սիրելի Վուսեան եւ ընկերներ

Ատանայի վիճակը կրկին սկսաւ պղտորուել. հետեւեալ ձեւով. ութը օրէ ի վեր սա խօսքերը կը դառնան ժողովուրդի մէջ իրարու ետեւէ՝ թէ իթթիհատի անկումը մօտ է, հին կառավարութիւնը պիտի դառնայ, թէ անգլիական կառավարութիւնը ումբակոծեր է Պասրան, թէ գերման ռուս համաձայնութիւնը վտանգաւոր երեւոյթ մըն է թուրքիոյ համար, թէ Նիյոտէն վառած ու ջարդած են. վերջապէս՝ Պոլսոյ կեդրոնական կառավարութեան եւ խորհրդարանի ալելոծ եւ տատանեալ վիճակը երկիրայի կացութիւն մը ստեղծած է հոս. եւ այս վիճակէն ծնունդ առաւ հոս, դեռ երեք օր առաջ, որ գիշերուան ժամը չորսին անսպասելի կերպով հզան տրուեցաւ մօտ 10 վայրկեանի չափ, եւ իսկոյն թուրք ամբոխը հաւաքուեցաւ քանի մը տեղեր. եւ սակայն ոստիկանութիւնը վրայ հասաւ, ամբոխը ցրուեց եւ հզան տուողը ձերբակալեց եւ հետեւեալ օրը, քննութենէ մը յետոյ, իբրեւ թէ հարբած տղայ մըն է եղել, որ իր գինովութեան համար՝ ոստիկանութեան ձեռքէն խուսափելու համար ճամին է մտեր եւ սկսեր է հզան տալ: Ասոր վրայ ժողովուրդը սկսաւ աւելի վախնալ. ահա ասոր վրայ հագիւ երկու օր անցած, ճիշդ խթման իրիկունը քանի մը տասնեակ հայերու տան դռան վրայ խոչոր կարմիր խաչեր տեսնուեցան, եւ ընդհանրապէս այն տունները որ անցեալի մէջ թալան չեն եղած եւ հարուստ տուններ են: Այս ճիշդ իրական փաստի վրայ, հայութիւնը եւ ուրիշ քրիստոնեայ տարրը կոտորածի վախէն, իսկոյն դիմումները ին տեղական կառավարութեան եւ ձեռքի տակէն ալ օտար ներկայացուցիչներուն, պատմելով տիրող կացութիւնը եւ կատարուած փաստը: Պէտք է ըսել որ վալի ձեմալ պէյը ամբողջ հոգով եւ բոլոր ուժովը կ'աշխատի որեւէ բանի տեղի չտալ. ամէն միջոց ի գործ կը դնէ. մինչեւ իսկ գիշերը ինքը անձամբ կը պտտի թաղերը. եւ սակայն աւելորդ չէ ըսելը, որ մինակն է գրեթէ ամբողջ վիլայէթին մէջ: Հարկաւոր է Պոլսոյ կառավարութիւնը կտրուկ կերպով ուժ եւ վստահութիւն ներշնչէ իրեն:

Մոռցայ ըսելու որ քանի մը շաբաթէ ի վեր թուրքութիւնը առատօրէն կը գինուի, եւ այս կը տեսնուի բոլոր բնակիչներէն: Այս տիրող կացութեան մասին տեսակցութիւն մը ունեցայ վալի ձեմալ պէյի հետ: Թէեւ ինքը մինակ կը գգայ ինքզինքը, բայց անվախ է եւ տրամադիր բոլոր ուժերը գործածելու. եւ այս ձեւով ապահովել կը հաւատայ: Վալին թելադրեց որ ես ալ մերիններին հետ գիշերները թաղերը պտտիմ եւ հետամտինք գտնելու համար խաչեր քաշող ձեռքը: Առաջին գիշերն է որ ես առանձին պտտեցի, եւ դեռ քանի մը գիշերներ ալ ընկերներով պտտի պտտինք: Տեսնենք ինչով պիտի վերջանայ:

Օսմանեան որբանոցների վերին մարմնի նախագահը եւ միեւնոյն ժամանակ տեղիս առեւտրական դատարանի նախագահը՝ Գրիգոր էֆ. Ֆայիք արձակուրդով Պոլիս կու գայ. ինքը կիսա-ազատական եւ իթթիհատական մըն է, լաւ տրամադրութիւններով եւ հետաքրքիր ազգային եւ քաղաքական կեանքով: Կը փափաքի որ մեր ընկերներին հետ ծանօթանայ եւ տեսնուի: Տուած եմ «Ազատամարտ»ի հասցէն եւ ընկերների անուններ՝ Վուսեան, Ջարդարեան եւ Հրաչ: Պիտի խնդրէի որ համակրանքով ընդունէիք զինքը եւ խօսէիք հետը լայնօրէն, եւ միեւնոյն ժամանակ տեղեկութիւններ առնէիք մասնաւորապէս առեւտրական գործերի մասին, որոնց հմուտ եւ տեղեակ է ու իր ձեռքովն է անցեր բոլորը. նաեւ օսմանեան որբանոցների մասին: Լաւ կ'ըլլայ որ մեր խմբագիրներէն մին տաք, որ կէս ժամի չափ տեսակցութիւն մը ունենայ այս նիւթերի մասին թերթին համար:

Սկսեցի կազմակերպական գործով զբաղիլ: Որքան ջանացի երկրորդ ձեռքով ընել՝ չեղաւ: Յոյս ունիմ որ լուրջ եւ կուռ բան մը կը շինեմ շուտով, եւ այս մասին լայն տեղեկութիւններ կու տամ մօտ օրէն, նաեւ կ'ըրգոմար մը կ'ովկասի բանտարկեալների համար. արդէն հանգանակութեան մէջ եմ:

Նոր տարին շնորհակարար. կը համբուրեմ բոլորդ ալ:

ՎԱՀԱԳՆ

6.- Թիրեաքեան Դայկ, Օսմանեան դրամատան գրաւման ղեկավարներն, ապա «Ազատամարտ»ի վարչական տնօրէն:

3 Յունուար 1911 Ատանա

Փաստ. 1543-6

Գ.- ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Պէյրոս, 17 Յունիս 1911

Ընդունած ենք մեզ ղրկուած թիւ 14, 15 եւ 18 շրջաբերականները:

Ինչպէս յայտնի է, անցեալ տարեշրջանին, Շրջանային ժողովով մը իրարու կցել ուզած էինք ամբողջ Կիլիկիոյ ցրուած կազմերը, ունենալու համար Կեդր. Կոմիտէ մը եւ որոշ տոկոս: Սակայն, ինչպէս կ'երեւի, յիշուած գործը պէտք եղած ընդունելութիւնը չգտաւ եւ հետեւաբար մասնաւոր գործիչ մը չդրկուեցաւ զայն աւելի ամուր հիմերու վրայ դնելու համար: Մենք պիտի փափաքէինք որ, այս անգամ լուրջ ուշադրութեան առարկայ դառնար ան, եւ յառաջիկային գործիչ մը փութացուէր դէպի Կիլիկիա: Ասիկա, այնքան էական ու ստիպողական է, որքան աննախանձելի եւ անկերպարան է Կիլիկիոյ ներկայ վիճակը՝ դաշնակցական-կազմակերպական տեսակէտով:

Թիւ 18 շրջաբերականին մեզ վերաբերող յօդուածներուն կը պատասխանենք: Տեղույս կազմակերպութիւնը մեծամասնութեամբ ուսանողներէ կը բաղկանայ: Ընկերներու թիւը կը փոխուի ամէն տարի: Այս տարեշրջանին՝ Ֆրանս. վարժարանի ընկերներու թիւը 50% համեմատութեամբ է. մնացեալ մասը կը լեցնեն չէզոքներ եւ հնչակեաններ: Ամերիկեան վարժարանին մէջ, մեր ընկերները ոչինչ թիւ մը կը ներկայացնեն հակառակ ուրիշ տարիներու: Հոն՝ հնչակեանները քանակով աւելի շատ են: Հոն կայ նաեւ ուսանողական միութիւն մը, որ իր մէջ կը համրէ քոլէճական եւ համալսարանական չէ-

զոքներ եւ երկու կուսակցութեանց պատկանող ընկերներ: Ամերիկեան վարժարանի հայ ուսանողները բաւական ճոխ մատենադարան մ'ունին, այս տեսակէտով Ֆրանս. վարժարանի հարստութիւնը մի քանի գիրքերու մէջ կը կայանայ:

Համալսարանական ուսանողներու ամբողջ թիւը 60-70ի մէջ կ'ելեւէջէ: Իսկ երկրորդական ուսում առնողներու թիւը թէպէտ անցեալին մէջ շատ՝ սակայն ներկայիս 60-70ը չ'անցնիր:

Ֆրանս. վարժարանին մէջ, օտար ազգութիւնները ունէ կազմակերպութիւն չեն ունեցած եւ չունին, միայն յոյները վերջերս ունեցած են ուսանող. միութիւն մը. կարգադրուելիք երբեմն գործերու համար. ընդհ. միացում մը՝ աւելի կ'իրքերը գրգռելով կարելի եղած է յառաջ բերել, քան գաղափարական գիտակցութեամբ: Ամերիկեան վարժարանին մէջ գոյութիւն ունեցած են միութիւններ, զանազան ազգութիւններու մէջ եւ ունին: Մերթ միջկազմակերպական յարաբերութիւններ տեղի ունեցած են զանազան խնդիրներու շուրջ, առանց սակայն այդ յարաբերութիւնները աւելի լայն եւ աւելի որոշ հիմերու վրայ դնել փորձելու: Նմանօրինակ ձեռնարկի մը համար, նոյն վարժարանի ներկայ հայ ուս. միութիւնը պէտք եղած ձեռնհասութիւնը չունի:

ԾՈՑԻ Հ.Յ.Դ. ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ ԿՈՂՄԷ Մ. ՍԱԼԲԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XII

ՓՈՔՐ ԱՍԻՈՅ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՒՍ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Այս գլուխին տակ միատրամ ենք Փոքր Ասիոյ տարածքին գործող կազմակերպական գլխավոր շրջաններուն պատկանող փաստաթուղթերը, խմբելով զանոնք հետեւեալ միատրամներուն վրայ։—

- Ա.— *Բանայի*, Մամսոնի եւ Մարգուանի շրջան
- Բ.— *Սեւ Բլուր*, Սեբաստիոյ նահանգ
- Գ.— *Բարչր Սար*, Կեսարիա
- Դ.— *Ոսկեհանք*, Իզմիրի շրջան:

Առաջին երկուքը, Մամսոն-Մարգուանն ու Սեբաստիան արդէն Կեդր. Կոմիտէութեան կարգավիճակ ստացած էին 1909 թ. գումարուած «Փոքր Հայքի Ռայ. Ժողովին»: 1911ին շրջանին մէջ քոլերայի խիստ համաճարակ տարածուելուն պատճառաւ չէին կրցած Շրջանային ժողով գումարել եւ Ընդհ. Ժողովին պատգամաւոր ընտրել: Այսուհանդերձ Սեբաստիոյ Կեդր. Կոմիտէն նշանակեց իր ներկայացուցիչը յանձին Սեբաստացի Մուրատի (Սուրէն ծածկանունով ծանօթ այդ օրերուն): Աւելի ուշ հասաւ նաեւ Մամսոնի պատգամաւորը, որուն ինքնութիւնը սակայն չէ յայտնուած:

Կեսարիան, որ միայն յաջորդ 1912 տարուան ընթացքին պիտի բարձրանար Կ. Կոմիտէութեան, միայն խորհրդակցական ձայնի իրաւունք ստացած էր (պատգամաւոր՝ Վիշապեան Գեորգ): Խորհրդակցական ձայնի իրաւունք տրուած էր նոյնպէս Ոսկեհանք-Իզմիրին, որ ատենին հանդիսացած էր Դաշնակցութեան հնագոյն եւ գործունէայ շրջաններէն մէկը:

Վեցերորդ Ընդհ. Ժողովի թղթածրարին, ինչպէս նաեւ վերեւ յիշատակուած Կ. Կոմիտէութեանց արխիւին մէջ գոյութիւն չունին Ընդհ. Ժողովը կանխող շրջանային ժողովներու արձանագրութիւններ կամ գործող մարմիններու պաշտօնական տեղեկագրեր: Բացը մասամբ կը լրացնեն այն հակիրճ տեղեկութիւնները, որոնք տրուած են ի պատասխան Ընդհ. Ժողովի Օրակարգի հարցերուն եւ մանաւանդ այն «Հարցարանին», զոր Բիւրոն նախապէս ուղարկած էր շրջաններուն՝ տեղեկագրական բնոյթի տուեալներ պահանջելով: Այս վերջիններուն մէջ կը գտնենք քաղաքական, տնտեսական, կրթական ու մշակութային կարգի շահեկան ծանօթութիւններ ու վիճակագրութիւններ: Հարցումները, պարզ թուանշաններով կամ գլխակարգով նշանակուած, առհասարակ կը համապատասխանեն Ընդհ. Ժողովի Օրակարգին կամ Հարցարանին մէջ նշուած շարքին (Օրակարգը եւ Հարցարանը տեսնել էջ 11-15):

I – Հ.Յ.Դ. ԲԱՆԱԼԻԻ [ՍԱՄՍՈՆ – ՄԱՐԶՈՒԱՆ] Կ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Փաստ. 810-10

Ա. – ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԷՆ ՎՈՎԱՄԵԱՆԻՆ

1910 թ. Օգոստոս 23, Մարզուան

1909 – 1911ին, ուսումնական երկու տարի, Արամ Մանուկեան մնաց Օրսու, ուր հրաւիրուած էր իբրեւ տեսուչ քաղաքի հայկական վարժարաններուն: Բնականաբար ան կը զբաղէր նաեւ կազմակերպական գործերով, ինչպէս ցոյց կու տան իր կողմէ գրուած բազմաթիւ նամակներ: Արեւմտեան Բիւրոյի կարգադրութեամբ Ա. Մանուկեան մասնակցած է Մարգուանի մէջ 1910 Օգոստոսին գումարուած Շրջ. ժողովին, որուն առիթով Պոլիս Վոսմեան Արշակին (Արեւմտեան Բիւրո) կը դրկէ գեկուցական բնոյթի այս գրութիւնը:

Սիրելի Վոսմեան!

Երեք օր առաջ ժողովը վերջացրինք. ինձնից անկախ պատճառով չկարողացայ գնալ եւ Ամասիա. ժողովին կը մասնակցէին միայն 7-ը. 2-ը չեկան. պատճառները չիմացանք: Անցնեմ տպաւորութիւններին:

Ա. Կազմակերպական վիճակ. — Ընդհանրապէս նախանձելի վիճակի մէջ չի կարելի տեսնել կազմակերպութիւնները, շնորհիւ վերջին շարժումներին. այս շրջանը իբրեւ նոր շրջան բնականաբար շատ է ազդուել: Հնչակեաններն էլ պակաս դեր չեն կատարել տրամադրութիւնները փչացնելու մէջ, բայց մի միջիթարական բան կայ. համարեա բոլոր վայրերում կազմակերպութիւնների սաղմերը մնացել են. մանաւանդ երիտասարդութիւնը ամէն տեղ հաւատարիմ է մնացել. վերջին 5-8 ամիսը բոլոր տեղերը վերակազմուել են, շրջաններ ստեղծել եւ գործ կատարել: Պէտք է խոստովանել որ Աստիկեանի տուրնէն¹ բաւական գործ կատարել է այս շրջանում. առանց նրան հաւանորէն շատ գէշ կը լինէին այս կողմերը, թէեւ այս բանը իրենք չեն գգում... Կարծում եմ այնպէս է դրուած նոր գործերի հիմքը, որ իրենց տեղական ուժերով պիտի կրնան շարունակել: Առ այժմ 500-էն աւելի կազմակերպուած ընկերներ կան, եւ յոյս կայ աւելին կը լինի, քանի որ առաջիկայ տարին մեծ փոթորիկներ չեն սպասուում:

Բ. Մտաւոր վիճակ. — Ողորմելի դրութիւն է. մերոնք ոչինչով տարբեր չեն մնացածներէն. տարբերութիւնները միայն զգացմունքների մէջ է: Սրանք մեծ մասամբ

երիտասարդ եւ մաքուր տարրեր են. անպայման կը հաւատան եւ փարած են կազմակերպութեան նպատակին. լսելու, կարդալու, զարգանալու ծարաւի են: Գրադարան-ընթերցարաններ համարեա չկան. եղածներն էլ հնչակեաններինն է. մերոնք ունեն Մարգուան մի ընթերցարան, որ կը ստանայ մեր թերթերէն միայն «Ազատամարտ» իսկ մնացածը՝ «Ժամանակ», «Բիւզանդիոն», «Դաշինք», «Կաւուռ», «Ասպարէզ» եւայլն...

Երբ նկատողութիւն արի, թէ ինչո՞ւ այդ խայտառակութիւնները կը տարածէք, կը պատասխանեն. — «Չէ՞ որ համոզմունքի ազատութիւն է»...

Ահա թէ ինչպէս են հասկանում համոզմունքի ազատութիւնը...

Մարգուան լաւ երիտասարդութիւն կայ, բայց ցաւալի է որ մէկը չկայ որ դրանց ղեկավարէ, առաջնորդէ: Ինչպէս Վան, այնպէս էլ այստեղ հասակաւորների մէջ պաղուցիւն կայ. գործերը բնականաբար վերջինների ձեռքն է. առաջիններն էլ լքուած՝ իրենց համար գործ որոնելու են ելել եւ գտել են... Կազմակերպել են մի միութիւն: «Նոր սերունդ» անունը դրել են, մի ահագին ծրագիր, լաւ երեւակայութեամբ եւ յիմարութիւններով լեցուն. կ'ուզենային կառավարութեան հաստատել տալ եւ գործի սկսիլ. պիտի զբաղուեն կրթական-դպրոցական եւ ինքնազարգացման գործով: Բնական է, որ կոի-

1.- Տուրնէ՝ շրջապտոյտ. Տիգրան Աստիկեանը՝ Ե. Ընդհ. ժողովին պատգամաւոր էր Ամերիկայէն. ժողովն ետք մնաց եւ իբրեւ գործիչ աշխատեցաւ Փոքր Ասիոյ գանազան շրջաններուն մէջ, յատկապէս Խարբերո: 2. Ընդհ. ժողովի հրաւիրեալներէն էր. իրեն իրաւասու ձայն տրուեցաւ իբրեւ Խարբերոյ պատգամաւոր:

Փաստ. 1543-16

Բ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԲԱՆԱԼԻԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱՆԻՆ

1. — Տնտեսական.—

Ա.- Երկրագործութիւնը բաւական զարգացած է, թէև նախնական ձևով կը գործեն: Ամբողջ շրջանը կ'արտածէ 400,000 ոսկիի ծխախոտ 1,000,000 ոսկիի աֆիոն. 500,000 ոսկիի ալ ցորեն, գարի եւ եգիպտացորեն:

Իսկ արհեստներէն զարգացած են մանուսայագործութիւնը եւ եագմաճութիւնը, որոնց վրայ մեծ քանակութիւնով արտածութիւն կ'ըլլայ: Մնացեալ արհեստները միայն տեղական պէտքերու կը բաւեն, որոնք աստիճանական զարգացում ունեցած են:

Բ.- Սամսոնի մէջ ծխախոտի գործարանը կայ, ուր կը գտնուին 1000-է աւելի գործաւորներ, միջին օրավարձը 7-12 [դրուշ], իսկ 2000ի չափ բանուորուհի 3էն 5 դրշ. օրավարձով, կան նաեւ 1000ի մօտ բեռնակիրներ:

Ամասիոյ եւ Մարզուանի շրջանին մէջ կան այլերի ֆապրիքաներ 50-80 հատ, Մարզուանը ունի գործաւոր եւ բանուոր՝ 4-000, Ամասիա՝ 3000. Հաճի-գիւղ՝ 1000. Զիլէ՝ 5000, Թոգատ՝ 3000, Պաֆրա՝ 1000, որոնք կը ստանան 5-8 դրշ. օրավարձը:

Գ.- 1910ի բերքերը գոհացուցիչ էին:

Դ.- Երաշտը եւ անասուններու համաճարակը մեր շրջանին աչքառու վնասներ չեն պատճառեր:

Ե.- Զինուորագրութիւնը մեր շրջանի տնտեսութեան վրայ վնաս չազդեց:

Զ.- 1910ին բոլոր տուրքերն ալ գանձուած են, շատ չնչին համեմատութեամբ յետամնացներ կան:

Է.- Սահմանադրութեան հռչակումէն ասդին մեր տնտեսական կացութիւնը բաւական բարելաւուած է. 25 առ 100 համեմատութեամբ:

Ը.- Մեր շրջանի հայ բնակչութեան թիւը մօտաւորապէս 80,000 է:

2.— Գաղթը.—

Մեր շրջանը բռնապետութեան ժամանակ շատ ջնջին համեմատութիւնով արտագաղթ ունեցած է, որով վերջացող երեք տարեշրջաններուն ո՛չ արտագաղթ, ո՛չ ալ ներգաղթ եղած է:

3.— Հողային հարցը.—

Ընդհանրապէս չունենալով հայ գիւղացիութիւն՝ չունինք նաեւ հողային վէճեր:

4.— Ազգային Մշակոյթ

Ա.- Կրթական վիճակագրական պատկեր [ՏԵՍ էջ 382-383]:

Բ.- Թոգատ եւ Հէրէկ ունին 25 հայ գիւղեր, որոնցմէ ո՛չ մէկը ունի ներկայանալի վարժարան: Թիշեալ գիւղերէն մէկ քանին ձմեռները խեղճ ու կրակ դասընթացքներ կ'ունենան:

Գ.- Սամսոնի, Զարչամպայի ազգ. նախակրթարանները Դաշնակցութեան ազդեցութեան տակ են, նոյնպէս նաեւ Զորումի վարժարանները: Իսկ մնացեալ քաղաքներու դպրոցները ընդհանրապէս պահպանողական աղայականութեան ազդեցութեան տակ են:

Դ.- Ուսուցիչներէն % ին 25ը դաշնակցական են:

Ե.- Թաղ. խորհուրդներու, հոգաբարձութեանց եւ այլ ազգային վարչութեանց անդամներու 10 %-ը ուղղակի դաշնակցական են. իսկ %ին 15 ալ համակիր:

Զ.- Մեր շրջանի նախակրթարաններուն ուսանողութեան 50 առ 100ը համակիր են, որոնք երբ շրջանին աւարտեն շարքերու մէջ գործօն դեր պիտի ունենան (ընդհանրապէս նոր սերունդը համակիր է Դաշնակցութեան):

Է.- Կազմակերպական 5 հատ գրադարան ունինք, գիւղական ո՛չ:

5.— Միջազգային յարաբերութիւնը.—

Ա.- Մեր շրջանի հայերու եւ բնակած ազգերու յարաբերութիւնները ընդհանրապէս մօտիկ են, թէև ներքնապէս կասկածոտ կը վերաբերուին:

Բ.- Սահմանադրութեան հռչակումէն ասդին յարաբերութիւնները կարծես աւելի խորամանկ կեղծաւորութեան փոխուած են:

6.— Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնները.—

Ա.- Տեղական իշխանութիւնները դաշնակցականներու հանդէպ միշտ կասկածելի եւ անվստահելի վերաբերում ցոյց կու տան:

Բ.- Երբեմն տեղական գործեր որոնք համայնական ընդթ ունեցած են՝ կարելի եղած է իշխանութեանց հետ համաձայնութեամբ գործակցիլ. օրինակ, վերջերս, քոլերայի համաճարակի առթիւ նախնական միջոցներ միասնաբար գործադրուած են:

Գ.- Վարչական լրիւ մաքրագործում տեղի ունեցած է, բայց միեւնոյն ատեն պէտք է խոստովանել որ Բանայի շրջանը է՛ն խաղաղ շրջանն է, բաղդատամբ՝ ուրիշ շրջաններու: Դատարանները բաւական փոխուած են, բայց անհրաժեշտ է որ բոլոր անդամները նոր ուժեր եւ ո՛չ տեղացի ըլլան: Իսկ թաղապետութիւնները խիստ անկերպարան եւ անփոյթ կազմ մը ունին. պէտք է ջնջել տալ թաղապետական ներկայ ընտրութեան օրէնքը՝ որը մենակ կալուածատէրերու մոնոփոլ դարձած է, իւրաքանչիւր քաղաքացի իր ձայնը պէտք է ունենայ: Ժանտարմայի անկանոնութեանց պէտք է վերջ տալ, փոսթ-հեռագրական վարչութեանց կանոնաւորումը զգալի է, որով թերթեր շատ զբաղեցան:

Դ.- Անբարեխիղճ, անձեռնհաս պաշտօնէութեան թիւը խիստ շատ է, ինչպէս Սամսոն՝ բացի ճեզա-ռէխիէն, միւս բոլոր պաշտօնեաները, Ամասիա՝ մուսթասարը-Ֆէն սկսեալ ամենայնտիւնը, Մարզուան՝ մալ-միւտիլին, մուսթանթըզը, միւֆթին, միւտայի ումումի մուսվինը, գանձաւորը. Զորում՝ ճեզա-ռէխի Ալի Ռիզան, Սեմ. Հաճի-գիւղ միւֆթին եւ իր արքանեակ պաշտօնեաները, կը ցաւինք որ ապացոյցներ հաստատեցին[?]:

Ե.- Բարեխիղճներէն՝ Սամսոնի ճեզա-ռէխիին, Զորումի պաշտօնեաներէն Արմենակ եւ Յակոբ Տատըրեանները:

7.— Միւս կուսակցութիւնները.—

Ա.- Մեր շրջանին մէջ կան Իթթիհատը եւ Ս. Դ. Հընչակեան կուսակցութիւնը եւ հասարակութիւնը ընդհանրապէս ցուրտ վերաբերմունք ունի բոլոր կուսակցութիւններու հանդէպ:

Բ.- Իթթիհատականները կը հաշուելին մօտաւորապէս 800-1000 հատ. Ս. Դ. հնչակեանները մեր շրջանին 500-800 կը հաշուելին:

Գ.- Իթթիհատի մէջ %օի 75 հաշուով յետադիմականներ կան. իսկ հնչակեաններու մէջ %օին 75 ո՛չ գաղափարական ու գիտակից, պահպանողականներ: Դաշնակցութենէն արտաքսուածները չկան անոնց մէջ, բայց չընդունածները կան:

Դ.- «Իթթիհատականները» կը կազմեն կալուածատէրեր, վաճառականներ, խանութպաններ եւ պաշտօնեաներ. գիւղերու մէջ ցանցառ թիւով երկրագործ իթթիհատականներ կան, իսկ հնչակեանութիւնը կը կազ-

մեն վաճառականներ, խանութպաններ արհեստաւորներ եւ ուսուցիչներ:

Ե.- «Իթթիհատի» հետ յարաբերութիւններ միշտ պահուած է պաշտօնական գետնի վրայ. իսկ հնչակեաններու հետ առերեւոյթս համերաշխ, բայց դժբախտաբար միշտ աւելի հակասութեանց մատնուած են եւ դժուարութիւններ յարուցած:

Զ.- «Իթթիհատի» հետ սահմանադրութեան պաշտպանման համար համերաշխ գործակցութիւն ունեցած ենք. իսկ հնչակեաններու հետ՝ ինքնապաշտպանութեան շուրջ: Վերջիններու հետ տեղական կրթական եւ այլ ազգ. գործերու մէջ միշտ անհամերաշխ ապրած ենք:

Մանօթութիւն.—

Քոլերայի համաճարակին պատճառով Շրջանային ժողով գումարել կարելի չեղաւ, որով մարմիններու ընդհանուր հաշուեցոյցները եւ վիճակագրական պատկերները իրենց տեղեկագրերով չեն հասած: Կեղը. Կոմիտէն իր ձեռք հասած հաշուեցոյց-տեղեկագրերէն ներկան կը ցաւ պատրաստել:

Մեր շրջանը Սահմանադրութեան հռչակումէն վերջ կազմակերպուած ըլլալուն՝ երեք տարուան ընթացքին դժբախտաբար չէ ունեցած կանոնաւոր հաշուական-կազմակերպական վիճակացոյց պատկերներ. ատոր պատճառը ընկերներու անփորձութիւնն է եղած: Իսկ ուրախ ենք ըսել թէ՛ հակառակ վերջին տարուան հակա-յեղափոխական շարժումին շրջանի մարմինները իրենց կազմական գոյութիւնները պահեցին եւ իւրաքանչիւր մարմին ունեցաւ եւ ունենալու վրայ է ընթերցարան, գրադարան, քիւլաներ, կանանց միութիւններ եւ քոօպերատիւ միութիւններ:

Շրջանիս կազմակերպութեան զարգացման համար անհրաժեշտ է ազատ գործիչ-փրոպականդիստ մը, որը պիտի նպաստէ թէ՛ կազմակերպութեան շարքերու խտացման եւ թէ՛ պիւտճէի բարձրացման: Առանց ատոր շրջանի մարմինները բացարձակապէս ամուլթեան պիտի դատապարտուին:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Օգոստոս 9/22 1911

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Քաղաք	Վարժարաններ		Աշակերտ	Աշակերտուհիներ	Ուսուցիչ
	Մանչերու	Աղջկանց			
Սամսոն }	1 նիսկրթ. հայ	1 նիսկրթ. Ազգ.	250	150	7
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	100	60	3
	1 նիսկրթ. կաթոլիկ	1 նիսկրթ. կաթոլիկ	90	70	3
Մարզուան }	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	500	250	13
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	100	60	2
	1 նիսկրթ. կաթոլիկ	1 նիսկրթ. կաթոլիկ	300	150	5
Ամասիա }	2 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	700	300	16
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	200	100	3
	1 նիսկրթ. կաթոլիկ	1 նիսկրթ. կաթոլիկ	200	100	3
Թոգատ }	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	500	250	10
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	180	70	3
	1 նիսկրթ. կաթոլիկ	1 նիսկրթ. կաթոլիկ	150	100	3
Զիլ է }	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	240	160	5
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	100	60	
Սիմ, Դաճի-գիւղ }	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	350	200	7
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	60	30	
Վեզիր Զեօփրու }	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	250	100	4
	1 նիսկրթ. բողոք.	1 նիսկրթ. բողոք.	100	50	3
Չորում	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	200	150	6
Դերեկ	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	200	80	4
Պաֆրա	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	180	70	3
Չարշամպա	1 նիսկրթ. Ազգ.	1 նիսկրթ. Ազգ.	150	70	3
Դամագումար	23	22	5100	2630	109

ՊԱՏԿԵՐ

Ուսուցչուհիներ	Օտար դպրոց	Աշակերտի թիւ	Ուսուցիչ եւ ուսուցչուհիներ	Ծանօթ.
5 2 3 մայրապետ	1 ֆրանս. գոլէճ	150 երկսեռ	6	Փերերու ազդեցութեան տակ են: Աշակերտութիւն խառն ազգերէ
10 2 3 մայրապետ	1 ամերիկ. գոլէճ 1 ֆրանս. գոլէճ	500 երկսեռ 100 երկսեռ	25 7	Միսիոնարական նիսկրթ. ճիզուիթական նիսկրթ.
9 2 3 մայրապետ	1 ֆրանս. գոլէճ	90	7	ճիզուիթական նիսկրթ.
7 2 3 մայրապետ	1 ֆրանս. գոլէճ	100	7	ճիզուիթական նիսկրթ.
3 1				Խրաքանչիւր քաղաք առ հասարակ ունի իր մանկապարտէզները, որոնց մանուկներն ու մանկավարժները ներկայ ցուցակէն դուրս են:
4 1				
2 2				
3				
2				
2				
2				
73	5	940	52	

Փաստ. 1543-16

Բ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԱՆԱԼԻԻ [ՍԱՄՍՈՆԻ]ՇՐՋԱՆԻ

Ա.- Տնտեսական

1.- Սամսոնը ներքին գաւառները Եւրոպայի հետ յարաբերութեան դնելով՝ անոնց արտադրութիւնները մին միւսին փոխադրող միջոց մը եղած է: Մխախտի վրայ մշակութիւն ունի՝ շրջակայ քաղաքներէ ալ արտադրուածը ռեփիի եւ վաճառականներու միջոցաւ պատրաստուած սիկառը, տուփով եւ կամ հակերով՝ թէ մեծաքանակ եւ թէ փոքրաքանակ կը սպառէ: Սամսոն-Պաֆրա ծխախոտը ամէնէն նշանաւորն է: Փոքր տարողութեան վրայ ունի նաեւ ցորենի եւ գարիի մշակութիւն: Արհեստներու մէջ՝ ընկոյզ մաքրելը եւ տեսակաւորելը նշանաւոր է:

2.- Նշանաւոր հարստութիւններ.— ռեփիի եւ ամբրիկեան ծխախոտի գործարաններ: Մոթորով ալիւրի Ֆապրիքա մը. ընկոյզի գործի համար յատկացուած չէնքեր վաճառականներու կը պատկանի, ուր կիներ կ'աշխատին: Օսմանեան, Սալոնիկ, Աթինա դրամատուները: Այս տարի կառուցուած եւ ռուսական ընկերութեան մը պատկանող քարիւղի գործարանը, որուն շտեմարանին մէջ հեղուկը լեցուելով, ապա գործաւորներու աշխատութեամբ թիթեղներու մէջ կը գետեղուի:

Սամսոնի բանուորութեան սակը, տարուայ եղանակին եւ այլ պատճառներով, կը փոխուի: Մխախտի գործաւորները՝ 1000-էն աւելի, 12-20[ղրուշ] օրավարձով: Բեռնակիրներ՝ 1000-ի չափ 7-12 օրավարձով: Ալիւրի եւ քարիւղի գործարանները դեռ կանոնաւոր գործի սկսած չեն: Մէկ ձի լծող կառապաններ՝ 200-ի մօտ, 18-25 օրավարձով: Վաճառականներու առաջնակարգ պաշտօնեայ եւ գրագիրներ՝ ընդհանրապէս 5-8 ոսկի ամսական: Միջակները՝ 3-4 ոսկի ամսական. նոր սկըսնակները՝ 1-2 ոսկի ամսական: Նաւակաւոր՝ 5-800 հատ, 15-20 օրավարձով:

3.- Անցեալ տարուան բերքը՝ առհասարակ գոհացուցիչ (թէ հոս եւ թէ ներքին գաւառները): Սակայն այս տարուան անձկութիւնները, քաղաքին մէջ գործը աւրող վաճառականները, Յունուարի սաստիկ եւ երկար ձմեռը, քոլերան, փոխադրութեան յոռի միջոցները՝ թէ վաճառական եւ թէ գործաւոր դասակարգին մեծապէս տուժել տուին: Այս տարուան ծխախոտի բերքը յուսալից է. արմտիքի բերքը անցեալ տարուան 80%-ը կը հաշուուի:

Սահմանադրութիւնը իր ազատ երթեւեկի թոյլտուութեամբ մեծ քաջալերութիւն մը եղաւ թէ վաճառականութեան եւ թէ ժողովուրդին: Փոխադրութեան համար մաքսի ընծայած դիւրութիւնները անուրանալի են: Սակայն եւ այնպէս ապրուստը շատ սուղ ըլլալուն տնտեսական վիճակը ամէն պարագայի տակ անձուկ է,

ինչպէս ներքին գաւառներէն շատերը. գործողները գործէն շատ աւելի են, որով վնասակար. տնտեսական մրրցումները՝ յաճախ անանկութեան յանգող, անպակաս են:

4.- Չմրան սաստիկ ցուրտերը պատճառ եղած են անասուններու, թէ ընտանի եւ թէ վայրի, մասամբ փճանալուն եւ մեծ մասամբ նիհար մնալուն:

5.- Այս քաղաքէն շատ զինուոր ելած չէ, բնակչութիւնը մեծ մասամբ պանդուխտներէ բաղկացած ըլլալուն. գացողներու պակասը եկողները լրացուցած են:

6.- 1910-ի տուրքը ամբողջովին վճարուած է:

8.- Բնակչութիւն՝ 4000 հայ, 10.000 թուրք եւ լազ, 15.000 յոյն:

Բ.- Գաղթ (արտագաղթ եւ ներգաղթ)

Մովեզերեայ քաղաք ըլլալուն գրեթէ ամէն շաբաթ արտագաղթը եւ ներգաղթը պակաս չէ: Սամսոնի բնակչութիւնը առհասարակ պանդուխտ է. ներքին ամէն գաւառներէ հաստատուած ընտանիքներ կան: Կուսակցութեան անդամակցութեան ցանկը մանրանկարը կը պատկերացնէ, իր ներկայացուցած քաղաքներով:

Գ.- Հողային հարց

Մեր շրջանը, ի բաց առեալ Չարչամպա եւ Պաֆրա, գրեթէ հողային հարց եղած չէ, որովհետեւ բնակչութիւնը շատ նոր է, եւ ամէն մարդ՝ բուն իր ստացուածքին տէրը: Չարչամպա եւ Պաֆրա ցաւալի է ըսել որ մինչեւ ցարդ տեղեկագիր դրկած չեն:

Դ.- Ազգային մշակոյթ

1.- Նախակրթարան մը. միջնակարգ՝ աղջկանց եւ տղայոց՝ 400 աշակերտներ, 5 ուսուցիչ, 5 ուսուցչուհի:

3.- Դպրոցը անուղղակի Դաշնակցութեան ազդեցութեան ներքեւ էր անցեալ տարի:

4.- Ուսուցիչներէն 3-ը դաշնակցական. մին համակիր էր. երեքն ալ այս տարի մեկնած են, բարձագոյն դասընթացքի համար:

5.- Հոս ընտրութեան պահուն Դաշնակցութիւնը միշտ յաջող հանդիսացած է. սակայն մեր ընկերներէն գրեթէ ամէնքն ալ շուկայի գործերով ծանրաբեռնուած ըլլալուն, բացի քաղաքական ժողովէ, ուրիշ ազգային գործերէ հրաժարած են: Թաղական եւ հոգաբարձութեան [ընտրութիւններուն] միշտ մեր ընտրելիները յաջողուցած ենք, սակայն բարձր մտածման տէր, խորհող անձեր չըլլալուն, Ազգային գործը գոհացուցիչ արդիւնք ունեցած չէ:

Ե.- Միջազգային յարաբերութիւններ

1.- Հայ եւ յոյն տարրերը տարիէ մը ի վեր, յունական

տազնապէն ի վեր, սկսած են իրարու համակրիլ. առաջնորդարաններու յարաբերութիւնը լաւ է: Թուրք տարրը առհասարակ քրիստոնէին հանդէպ միշտ կասկածոտ է եւ փոխադարձաբար:

2.- Սահմանադրութենէն ասդին կառավարական եւ բարձրաստիճան դասակարգին մէջ կեղծաւորութիւնը մուտ գործած է: Ճերմակ սաւաններու տակ սեւ սիրտեր պակաս չեն:

Զ.- Դաշնակցութիւնը

1.- Մեր շրջանին մէջ կառավարութեան հետ ուղղակի յարաբերութեան մտած չենք. եւ կառավարութեան դրութիւնն ալ փոխուած չէ գրեթէ: Մեզ հանդէպ համակրող, սահմանադրասէր եւ թէ Դաշնակցութեան եւ թէ ընդհանուր հայութեան արդար իրաւունքները պաշտպանող միայն ճեզա ռէյիսին վրայ կրնանք վստահիլ, որուն պնդումով Բ. գոմիսէրը 9 օր բանտարկութեան դատապարտուեցաւ հայ նպարավաճառ մը չարաչար ծեծած ըլլալուն:

Է.- Միւս կուսակցութիւնները

1.- Իթթիհատ եւ Ս. Դ. Հնչակեան: Իթթիհատ թէ իր անդամներու պաշտօնէութեամբ եւ թէ անուղղակի ազդեցութեամբ կառավարական դեկը վարող ըլլալուն, ամէն տարրերէ անդամակցութեամբ բեռնաւորուած է: Կառավարութեան, նաւավարներու, բեռնակիրներու բռնելիք ընթացքը իրենք կը ծրագրեն:

2.- Իթթիհատի անդամակցութիւնը 5-800 կը կարծենք: Հնչակեանները սահմանադրութենէն վերջը քայքայուելու վիճակի մէջ էին: Հոս իբր փրփականտ[իստ] եկող ընկ. Շահպազի եւ Չուլալի³ յախուռն ընթացքներով բոլորովին խրտչեցան. թէ ոչ, ամէնքն ալ դաշնակցական շարքերու մէջ մտնելու պատրաստ էին. եւ այդ պատճառ մը եղաւ իրենց որ կազմակերպուելու փորձ ընեն: Մարգուանու տեսուչ Գազիկ Օզանեանի եւ Սապահգիւլի⁴ միջոցաւ բաւական կազմակերպուեցան եւ քրիւպ մըն ալ բացին: Անդամակցութիւնը 50-80ի կը հասնի:

3.- Իթթիհատի յետադիմականները շատ են, 50% համեմատութեամբ:

4.- Իթթիհատականները ամէն դասակարգի կը պատկանին: Հնչակեանները ընդհանրապէս վաճառականներ եւ արհեստաւորներ են:

5.- Մեր յարաբերութիւնը, աւելի շիտակը ըսելով՝ անոնց յարաբերութիւնը մեր հետ, փոխադարձ վստահութեամբ եւ անկեղծ չէ: Նաւավարներու խնդրին առթիւ, Չրահաւորի նպաստահաւաքութեան եւ այս անգամ սահմանադրութիւնը տօնելու համար միայն մեզի դիմած են: Սահմանադրութեան պահպանման, պաշտօ-

նէութեան եւ կառավարութեան մաքրագործման համար միջոցներ ձեռք առնելու բնաւ ջանք ըրած չեն: Հնչակեանները վերջերս սկսած են լաւ յարաբերութեան մէջ մտնել մեզի հետ եւ կ'ուզեն միջկուսակցական՝ ինքնապաշտպանութեան յանձնախումբ մը ընտրել:

8.- Շոգենաւային ընկերութիւններ.— Փաքլ՝ ամբողջ պաշտօնէութիւնը հայ եւ դաշնակցական անդամ կամ համակիր: Մեսաժըրի՝ մէկ հայ պաշտօնեայ համակիր (նախապէս անդամ, յետոյ չէզոքացած է): Գերմանական 4 հայ պաշտօնեայ, երկուքը մեզմէ: Աւստրիական մէկ հայ պաշտօնեայ: Կուրճի՝ մէկ հայ պաշտօնեայ: Ամերիկեան ծխախոտի հաստատութիւն՝ մի քանի հայ պաշտօնեայ, համակիր: Գաղիական եւ ռուսական դեսպաններու թարգման՝ դաշնակցական եւ համակիր հայեր: Ռուսական քարիւղի գործարան՝ մի քանի հայ պաշտօնեայ, համակիր:

Կարեւոր ծանօթ.— Մեր շրջանը անպայման պէտք ունի գործիչի մը, որ ըլլայ վարչագէտ եւ հոգեբան, առանց ուրիշ կուսակցութիւններու եւ չէզոքներու զգացումները գրգռելու լրջօրէն գործիչի մը: Հոս կ'արժէ ըսել որ եթէ ընկ. Ռոստոմ հոս գալով, իր հմտալից եւ փորձառու, համակրելի գաղափարներով մտքերը չհանդարտեցնէր, ընկ. Շահպազի, Չուլալի եւ Աստիկեանի — առաջիններու յախուռն եւ անխոհեմ ընթացքով եւ վերջինին խակ վարմունքով — Դաշնակցութիւնը բոլորովին անել դրութեան մը մէջ մտած էր: Այս տեղի Դաշնակցութիւնը իր վերակազմութիւնը եւ ժողովուրդին մեծ մասին կողմէ վայելած յարգանքը ընկ. Ռոստոմին եւ Սիւնիին կը պարտի: Յուսով ենք որ մօտ ատենէն գործիչ մըն ալ գտնելով կուսակցութիւնը այս շրջանին մէջ իր արդիւնաւորութիւնը կ'ունենայ: Մեծ փափաք ունէինք Ընդհ. ժողովէն առաջ մեր գործերը կանոնաւորել եւ դրամական սակը վճարել Կ. Կոմիտէին, սակայն քոլերան գալով դժբախտաբար ամէն յոյս ի դերեւ հանցեալ մեք չկրցանք կատարել մեր պարտականութիւնը: Նախ որովհետեւ այդ ժամանակ հաւաքումները անկարելի կ'ըլլային. երկրորդ՝ որովհետեւ հիւանդութեանց պատճառով մեր ընկերները մէկուկէս ամիսէ ի վեր գիւղեր եւ ուրիշ քաղաքներ ցրուած են: Մի քանի շաբաթ վերջ մեր շրջանը իր իսկական զօրութեամբ կը յայտնուի:

Մեր նաւահանգիստի տարեկան արտածումը մօտաւորապէս 2.000.000 ոսկի եւ ներածումը 900.000 ոսկի կը հաշուուի: Եթէ մանրամասնութիւն ուզէք իւրաքանչիւր տեսակի քանակութիւնը, արժէքը, ուր արտածուիլը եւ որ երկրէ ներածուիլը ճշգրիտ սթատիստիքը ունինք:

ԿԱՅՄ, ՇԱՆԹ

Միւս ընկերները օդափոխութեան համար քաղաքէն հեռու կը գտնուին:

ՇԱՆԹ

3.- Երկուքն ալ դաշնակցական գործիչներ.— Բարսեղ Շահպազ եւ Կարապետեան Լեւոն:
4.- Տեր Դանիելեան Ստեփանոս:

Փաստ. 1543-27

Բ 3.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՄԱՍԻՈՅ ՇՐՋԱՆԻՆ

Ա. Տնտեսական

1.- Մեր շրջանին մէջ, ըստ բաւականի զարգացած են շերամուրուկութիւնը, պարտիզպանութիւնը եւ մեքենագործութիւնը: Ժողովուրդը մեծաւ մասամբ կ'ապրի պարտիզպանութեամբ եւ շերամուրուկութեամբ:

2.- Կան ալիւրի, մետաքսի եւ մանոցի ֆապրիքաներ:

3.- 1910 բերքը, ըստ բաւականի գոհացուցիչ եղած է:

4.- Մեր գաւառին մէջ երաշտ չէ պատահած, սակայն գետին յորդիլը, բաւականաչափ վնաս հասցուց պարտիզպաններուն: Ձմեռուան սաստիկ ցուրտը, գրեթէ ոչնչացուց մեր շրջանին մէջ գտնուած ոչխարները եւ հաւերը:

5.- Որովհետեւ օսմ. բանակին մէջ հայ զինուորներու դիրքը, խիստ աննախանձելի վիճակ մը ունի, հայեր ստիպուած եղան, ծանր տոկոսներով փոխառութիւն ընել, եւ պետել բռնել իրենց գաւակներուն, որով շատ մը ծնողներ տնտեսապէս փճացումի ենթարկուեցան:

6.- 1910 տուրքերը, հայոց կողմանէ գրեթէ ամբողջապէս վճարուած է:

7.- Սահմանադրութեան հռչակումը առիթ ընծայած է, որ վաճառականներ ազատ երթեկեկեն. այդ տեսակէտով միայն բարելաւուած կրնանք նկատել տնտեսական վիճակը, սակայն ուրիշ տեսակէտներով գրեթէ եւ ոչ մի առաւելութիւն բռնապետական շրջանէն:

8.- Մօտաւորապէս մեր շրջանի հայ բնակչութեան թիւն է 10.000: Մեր շրջակայքը հայ գիւղեր չունինք:

Բ. Արտագաղթ եւ ներգաղթ

1.- Մօտաւորապէս 20 ընտանիք գաղթած են Ամերիկա եւ այլուր:

2.- Սահմանադրութեան հռչակումէն վերջ 1 ընտանիք միայն վերադարձած է երկիր:

3.- ----- 4.- ----- 5.- -----

Գ. Հողային հարց

1.- ----- 2.- ----- 3.- -----

Դ. Ազգային մշակույթ

1.- Մեր քաղաքին մէջ կայ ազգային 2 մանչերու եւ 1 աղջկանց: Իբրանոսեանը ունի 1 մանչերու եւ 1 աղջկանց. Բողոքականները ունին 1 մանչերու եւ 1 աղջկանց. պապականներ-միսիոնարներու հովանաւորութեամբ — 1 մանչերու եւ 1 աղջկանց: Ընդամէնը հայ 9 վարժարան 40 պաշտօնեաներով: Ազգայինները ունին նաեւ 2 մանկապարտէզ:

2.- Մեր շրջակայքը հայ գիւղեր չկան:

3.- Անցնող շրջանին, գրեթէ ազգայիններու երկու վարժարանները Դաշնակցութեան ներքեւ էր, բայց ո՛չ ներկայիս մէջ:

4.- 30 ուսուցիչներէն 6 հատը դաշնակցական են:

5.- Ազգային մարմիններու շատ քիչ մէկ մասը դաշնակցական են:

6.- ----- 7.- ----- 8.- -----

Ե.- Միջազգային յարաբերութիւններ

1.- Մեր միջազգային յարաբերութիւնները բաւական լաւ կ'ընթանան:

2.- Սահմանադրութեան հռչակումէն ասդին շատ բարեփոխուած են թուրքերը, եւ բաւական մօտ կու գան հայերու:

Զ.- Դաշնակցութիւն եւ տեղական իշխանութիւններ

1.- Տեղական իշխանութիւններ շատ անտարբեր են Դաշնակցութեան հանդէպ եւ իրենց տեսակցութիւնները կեղծիքով լի են:

2.- Պելէտիէի ընտրութիւնը կարելի պիտի ըլլայ կարգադրելը եթէ կրկին չխաբեն մեզ:

3.- Մահճէմէն միայն վերակազմուած է. իսկ կառավարական միւս բոլոր պաշտօնեաները կրկին կը մնան:

4.- Անպարտաճանաչ, յետադիմական, կաշառակեր պաշտօնեաներու թիւը խիստ շատ է հոս. Միւթէսարէֆէն սկսեալ, մինչեւ յետին զինուորը գրեթէ աղտոտ անցեալ ունեցող, անճարակ եւ ապիկար անձնաւորութիւններ են: Գլխաւորները, պէլէտիէի ընտրութեան թօփօսողը, Բէֆիք Հաֆըզ, Էմլաք Քեաթիպի համազ էֆ. Տէյնի, Ումումի Մէմուրը Մուհամետին Հաֆըզ Մէհմէտ-Պանքա Մէմուրը Հիմլի Ֆ. Փոսթա Մէմուրը, փոխաներ, հայ մուխթար մը՝ Պըչաքճի եւայլն:

5.- Պարտաճանաչ եւ գիտակից պաշտօնեաներ են. պէլէտիէի բժիշկը, Սանուրզ էմինին, Ճէզայ Բէյիզին, Մահճէմի աղաները, եւ մի քանի ուրիշ պաշտօնեաներ:

Է.- Միւս կուսակցութիւններ

1.- Մեր քաղաքին մէջ կան իթթիհատ եւ հնչակեաններ, որոնք գրեթէ անուանապէս գոյութիւն ունին:

2.- Իթթիհատներ 100-120, հնչակեաններ 120-150 անդամներ:

3.- Իթթիհատի մեծամասնութիւնը էշրէֆ եւ յետադիմական տարրերէ կը բաղկանայ:

4.- Յետադիմականները, ընդհանրապէս պաշտօնեաներն են եւ էշրէֆներն են:

5.- Մեր եւ անոնց միջեւ եղած յարաբերութիւնները, շատ քաղաքավարական? եւ խիստ պաշտօնական են:

6.- Հնչակեաններու հետ կարելի է եղած թաղային կազմակերպութիւններու մասին համաձայնութեան գալ:

7.- ----- 8.- -----

Փաստ. 1543-28

Բ 4.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐԵՔ-ԲԼՈՒՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻՆՏ

Կազմակերպական վիճակ.— Տեղույս մէջ Դաշնակցութիւնը առաջին անգամ ըլլալով մուտք գտած է 1908ին, Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս վերջ, Պոնտոսի՞ կողմանէ ղրկուած ընկեր ներկայացուցչի մը ձեռամբ: Քանի մը ամսուայ տաք գործունէութենէ վերջ, կուսակցական ոգիի չգոյութիւնէն, շարքերու մէջ թուրքութիւն մը առաջ եկած եւ գրեթէ քայքայուած վիճակի մը մէջ, հերթական բռնկումներով իր գոյութիւնը քաշքշած է մինչեւ ընկեր Հայրիկեանի գալուստը: Վերջոյն ձեռամբ թէպէտ նոր կազմակերպութիւն մը եղած, սակայն արմատական գործունէութեան մը պակասին պատճառաւ անկերպարան վիճակի մը մէջ շարունակուած է մինչեւ ակումբիս հաստատութիւնը:

Քիւլա.— Կազմակերպական գործը, մինչեւ 1911 Նոյ. 1, պարբերական ճախողանքներով կաղնիկաղ ընթանալէ վերջ, ընկերներ խորապէս համոզուելով որ առանց ակումբի կուսակցութիւնը հաստատ հիմերու վրայ չպիտի կրնան դնել եւ ստուարացնել ընկերներու թիւը, Սահմանադրութեան հռչակումէն ի վեր գոյութիւն ունեցող Ընթերցասիրաց ակումբի ձուլման առաջարկ մը կը ներկայացնեն: Ընթերցասիրացի բոլոր բաժանորդները, բացի մի քանի բացառութիւններէ, (չնորհիւ գործօն դեր ստանձնած շարք մը դաշնակցական ընկերներու ջանքերուն, արդէն պէտք եղած չափով խմորուած ըլլալով դաշնակցական գաղափարներով) սիրով կ'ընդունին այն առաջարկը եւ 1911 Նոյ. 1էն սկսեալ ջախջախիչ մեծամասնութեամբ Ընթերցասիրացը պաշտօնապէս Դաշնակցութեան ակումբի կը վերածուի: Սոյն թուականէն սկսեալ կը սկսի զօրանալ տեղ. կազմակերպութիւնը եւ երեւան գալ իր որոշ գործունէութեամբ: Տեղ. ենթակումիտի միջոցաւ սարքուած ինչ ինչ կուսակցական, քաղաքական, գիտական եւայլն դասախօսութիւններու հետեւանօք, ժողովուրդը կը սկսի հետաքննել սերտ համակրանք տածել դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ կու գայ ստուարացնել ընկերներու թիւը, որը ներկայիս կը յանգի մօտաւորապէս 130ի: Ժողովուրդի մտաւոր զարգացման սատարելու եւ երիտասարդութիւնը դաշնակցական առողջ սկզբունքներով լեցնելու նպատակաւ բերել կը տրուին կարգ մը օրաթերթեր, պարբերաթերթեր եւ պրոչիւրներ միշտ նախապատուութիւն տրուելով դաշնակցական հրատարակութիւններու: Ակումբը ցարդ պահուած է իր ու-

րոյն հասոյթներով. սակայն իր դիրքով եւ շինութեամբ ներկայացումներ եւ հանդէսներ սարքելու անյարմար ըլլալով՝ առ ի չգոյէ յարմարագոյնի մը, չէ կրցած որոշ շահ մը արտադրել հազիւ հազ ապահովելով իր տարեկան ծախքերը:

Ինքնագարգացում.— Ընկերներ, մասնաւորապէս եւ քաղաքի հայութիւնը, ընդհանրապէս թէեւ տաք վերաբերում ցոյց տուած են դէպի ինքնագարգացումի գործը, սակայն տեղացի ժողովուրդի բարեկեցութիւնը սերտ կապ ունենալով հողի արտադրութեան հետ, առեւտրական ցրիսի, բերքի նուազութեան եւ յարատեւութեան ոգիի չգոյութեան պատճառաւ պէտք եղած մղումը չէ տրուած ինքնագարգացումի: Յառաջ եկած արդիւնքն ալ եղած է անհամապատասխան զգացուած պէտքին:

Այլ կուսակցութիւններ.— Բացի Դաշնակցութենէն, տեղույս մէջ գոյութիւն ունին երեք տարբեր կուսակցութիւններ՝

- 1.- Ս. Դ. Հ[նչակեան] կուսակցութիւն
- 2.- Իթթիհատ
- 3.- Իթիլաֆ

Ս. Դ. Հ. կուսակցութիւնը թէպէտ հազիւ տարուան մը գոյութիւն ու հնութիւն ունի, սակայն ինչպէս ամէն տեղ, նոյնպէս հոս եւս, տարուած ինչ-ինչ գձուճ հաշիւներէ կը սկսի հոս եւս երեւան գալ իր աղտոտ ոգիով եւ պայքարիլ անազնիւ հողի վրայ Դաշնակցութեան հմայքը նսեմացնելու նպատակաւ: Պայքարը, նամանաւանդ կը սկսի աւելի սուր հանգամանք մը ստանալ ներկայ դպրոցական տարելիցի առթիւ, կրթական գործի շուրջ: Դաշնակցական ուսուցիչները դպրոցէն հեռացնելու համար, կը փորձուին բոլոր կարելի ստոր միջոցներու դիմել, սակայն կը յուսանք թէ չպիտի կրնան յաջողիլ:

Իթթիհատը գոյութիւն ունի չորս տարիէ ի վեր: Ժամանակ մը թէեւ գործօն դեր ունեցաւ, սակայն իթթիհատական նախորդ դահլիճի անկումէն վերջ իր գլիւկը ցրուելով, գործունէութեան հրապարակէն քաշուեցաւ:

- 5.- Երեք-Քլուրը Կայան-Մարգուանի շրջանի Ենթակոմիտեաներու մէկն է:
- 6.- Պոնտոսը՝ Աոյն շրջանի Ամասիոյ կոմիտեան Ժածկանունն է:

Ներկայ դահլիճը իթթիհատական ըլլալով հանդերձ, զարմանալի է որ գոյութեան նշան միակ ցոյց չի տար ան, եւ կը մնայ լուռ...:

Իթթիաֆը կազմակերպուեցաւ իթթիհատական դահլիճի անկումէն քիչ առաջ: Իր գործունէութիւնը թէեւ տաք, սակայն ժամանակաւոր եղաւ: Յարդ կը պահէ իր անկեղրոն գոյութիւնը: Որոշ գործունէութիւն մը չունի եւ կը ներկայացնէ անկերպարան վիճակ մը:

Դրամական վիճակ.— Տեղ. կազմակերպութիւնը կանոնաւոր ելեւմուտք եւ գործառնութիւն ունեցած է միմիայն 1912 Յունուար 1էն սկսեալ: Սոյն թուականէն առաջ ո՛չ մուտք ունի ո՛չ ելք եւ ո՛չ արձանագրութիւններ: 912 Յունուար 1էն մինչեւ հիմա, ըստ ներփակ հաշվեցոյցի մուտքերնիս եղած է 2371³/₄ դր., որուն 819¹/₂ը փոխ տրուած է Ակումբին, մեզի փոխանցուած գոյքերու փոխարէն, Ընթերցասիրացի հրատարակի վրայ ունեցած պարտքերը վճարելու համար: Սոյն գումարին 238¹/₄ը գանձուած ըլլալով մնացորդը ակումբը կը պարտաւորի մեզ: Ակումբի եղած փոխատուութենէն դուրս, ընդհանուր մուտքի մնացորդ գումարը յատկացուած է

զանազան ծախքերու եւ գոյքի, որոնք ներկայացուցած ենք մեր հաշուոյն մէջ:

Կը սիրենք յուսալ թէ՛ ներկայ հակիրճ տեղեկագրով ըստ բաւականի կրցանք պատկերացնել մեր եւ ժողովրդեան ընդհ. վիճակը: Յառաջիկային յօգուտ հայ տարրին եւ յեղ. կազմակերպութեան կարեւորը ի գործ կարենալ դնելու համար, պարտք եւ անհրաժեշտ կը համարենք մեր կողմանէ դնել հետեւեալ պահանջները, իբր խնդրոյ նիւթ շրջանային ժողովիդ:

- Ա.- Բիւրոյի հաշիւները
- Բ.- Դրօշակի կանոնաւոր հրատարակութիւնը
- Գ.- Ձէնքի ֆոնտ
- Դ.- Բարոյա
- Ե.- Ռայոնական ժողով
- Զ.- Դաշնակցութեան դիրքը ազգ. ժողովներու հանդէպ
- Է.- Դրամական սակ %20
- Ը.- Մ[արտական]

Հ. Յ. Դաշնակցութեան
Տեղ. ենթակոմիտէի կողմէ
ՇԱՀԷՆ

Փաստ. 1543-20

Գ.- ՊԱՏԱՍԽԱՆ ԹԻԻ 16 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆԻՆ [ՄԱՐԶՈՒԱՆ]

Ա.- Տնտեսական

1.- Երկրագործութիւն, քանի մը տարիներէ ի վեր սկսուած է նաեւ աֆիոնի եւ ծխախոտի մշակութիւնը, որոնք տարուէ տարի զարգանալու վրայ են: Արհեստներէն ի միջի այլոց կարեւոր տեղ կը գրաւեն մանուսագործութիւնը, պղնձագործութիւնը եւ գինեգործութիւնը:

2.- 20 հատի մօտ այլևրի աղօրիքներ, 10 մանուսայի գործարան կան, 5000 բանուոր, միջին հաշուով 10 դուրուշ օրավարձք: Այս վերջին տարիներս գործաւորները վիճակը ըստ բաւականի բարելաւուած է:

3.- 1910 տարուայ բերքը լաւ էր:

4.- Գրեթէ ոչինչ:

5.- Զինուորական ներկայ խրտչեցնող պայմաններու հետեւանքով ամէն մարդ զանազան միջոցներու կը դիմէ գինուորութենէ խուսափելու համար: Այս պատճառաւ մանաւանդ միջին դասակարգը տնտեսապէս կը քայքայուի:

6.- -----

7.- Ընդհանուր առմամբ մասամբ ալ բարելաւուած է:

8.- Մօտաւորապէս տասը հազար (10.000) [հայ բնակչութիւն]:

Բ.- Գաղթ (արտագաղթ եւ ներգաղթ)

1.- Քսան տարուայ ընթացքին մօտաւորապէս 100 ընտանիք գաղթած են, մեծ մասը Ամերիկա, մնացեալը Եգիպտոս եւ Պուլկարիա, ասոնցմէ հազիւ 5 ընտանիք, միայն սահմանադրութենէն վերջ գաղթած:

2.- Հազիւ 8 ութ անձ [ներգաղթ]:

3.- Քսան տարուայ ընթացքին տեղս գաղթած են Կեսարիայէն 20, Ակնէն 10, Բաբերդի եւ Կարինի գիւղերէն գործաւոր 12 ընտանիքներ:

4.- Հինէն պանդխտողները վաճառական, նորերը գործաւոր եւ բանուոր դասակարգ:

5.- Նուազած է [պանդխտներու թիւը]:

Գ.- Հողային հարց

1.- Բռնատիրուած հողերէն եւ ոչ մէկը վերադարձուած է:

2.- Սահմանադրական շրջանին մէջ Մարգուանու շրջակայ գիւղերէն Եէնիճէ հայաբնակ գիւղի քանի մը կտոր հողերը բռնատիրուած են մօտակայ թուրք գիւղացիներու կողմէ:

3.- Եէնիճէի մէջ, վերոյիշեալ հողային խնդրին համար, բնակակից թուրքերու հետ փոքր ընդհարումներ ունեցած են հայերը:

Դ.- Ազգային մշակույթ

1.- Լուսաւորչական հայերը ունին մէկ իտատի վար-

ժարան 300 աշակերտ, 11 ուսուցիչ: Մէկ աղջկանց միջնակարգ վարժարան 150 աշակերտուհի, 6 ուսուցչուհի: Մանկապարտէզ մը 100 աշակերտ 4 ուսուցչուհի: Բողոքական հայերը ունին նախակրթարան մը 80 աշակերտ 2 ուսուցիչ: Մանկապարտէզ մը 50 աշակերտ 2 ուսուցչուհի: Հայ կաթողիկէները սէօուերու եւ ժէզուիթներու հսկողութեան տակ ունին նախակրթարան եւ միջնակարգ վարժարան մը 200 աշակերտ, 10 ուսուցիչ: Աղջկանց նախակրթարան եւ մանկապարտէզ մը 80 աշակերտ ՏՕՄԷ-երու հսկողութեամբ:

Ասոնցմէ զատ տեղս կը գտնուի ամերիկեան երկսեռ բարձրագոյն գոլէճը, որուն մէջ 150ի չափ երկսեռ մարգուանցիներ եւս կ'ուսանին:

2.- Երկու հայ թրքախառն գիւղ ունինք: Եէնիճէ եւ Կէօլ Քէօյ (վանք): Վանքը ունի 10-12 աշակերտով նախակրթարան մը 1 ուսուցիչ-տիրացուով:

3.- Եւ ոչ մէկը:

4.- Հինգերորդ ընդհ. պատգամաւորական ժողովի ծանօթ որոշումին համաձայն, թէ «Դաշնակցութիւնը պէտք չէ պաշտօնապէս կուլտուրական գործերու միջամտէ», Տեղական մարմինը վերապահ գտնուած է դպրոցական խնդիրներու մէջ: Հնչակեանները առիթէն օգտուելով դպրոցին դեկը ձեռք առած [են] ուսուցչական մարմինը ամբողջապէս իրենց ընկերներէն կազմելով հինէն ի վեր դպրոցին մէջ (ազգային) պաշտօնավարող 5 հինգ դաշնակցական ուսուցիչները առանց պատճառի միմիայն դաշնակցական եղած ըլլալուն համար հեռացուցած են:

5.- Եւ ոչ մէկը:

6.- Ուսանողութեան հարիւրին եօթանասունը Դաշնակցութեան համակիրներ եւ շրջանաւարտները նոյն համեմատութեամբ դաշնակցական են:

7.- -----

8.- Երեք գրադարան: Մէկը Ազգ. վարժարանը, Հ.Յ.Դ. ընթերցատունը 300 հատոր գրքերով եւ Կէօլ Քէօյի Զարխափան վանքը:

Ե.- Միջնդային յարաբերութիւններ

1.- Խաղաղ, բայց ոչ անկեղծ:

2.- Բնաւ տարբերութիւն չկայ:

Զ.- Դաշնակցութիւնը եւ

տեղական իշխանութիւնները

1.- Տեղույս Դաշնակցութիւնը տակաւին ինքզինքը պաշտօնապէս ճանչցուցած չէ տեղական իշխանութեան: Դաշնակցականներէ ոմանք ճանչցուած ըլլալով, յարգանքով կը վերաբերուին անոնց հանդէպ:

2.- -----

3.- Վարչական իրազործում բնաւ տեղի ունեցած չէ: Գրեթէ ամբողջ պաշտօնէութիւնը թուեղ յետաշրջականներէ կը բաղկանայ:

4.- Ցուցակը ներփակ կը գտնէք:

5.- > > է:

Է.- Միւս կուսակցութիւնները

1.- Իթթիհատ Թէրազըր եւ Հնչակեան Ս. Դ. կուսակցութիւնը:

Սահմանադրութեան առաջին օրերուն իթթիհատականները լաւ եւ ազդեցիկ դիրք ունէին բայց այժմ կազմալուծուելով չին հմայքը կորսնցուցած են: Այս վիճակին հազիւ 70-80 անդամ ունին: Գալով Ս. Դ. Հնչակեաններուն, յեղափոխութեան առաջին շրջանին այս կողմերը գործող ? կուսակցութիւնը Հնչակեանը ըլլալուն ժողովրդեան խաւերուն մէջ այդ անունը տարբեր հմայք մը թողուցած էր. սահմանադրութեան առաջին օրերուն բնական է այդ հմայքը իր ազդեցութիւնը ունենար ամբողջ իրեն քաշելու: Այդ օրերուն 700-800 անդամ կրցին գրել, բայց 2-3 տարուան ընթացքին գրողներէն շատերը գաղափար չունենալնուն, ոմանք այդ կուսակցութեան ունէ մէկ գործունէութիւնը չի տեսնել:

նուն, ոմանք ալ անոնց ներքին փտութիւնները տեսնելով հրաժարեցան. անդամներու թիւը այսօր հազիւ հարիւրի կը հասնի. ասոնց ալ մեծ մասը «ութանմա պէլասը կեցեր են»:

2.- Իթթիհատականները 70-80, Ս. Դ. Հնչակեանները 100:

3.- Հնչակեաններուն մէջ կան 2-3 հատ Դաշնակցութեան արտաքսուածներ. իթթիհատականներուն մէջ ալ ազատամիտ ըսուելու արժանի մէկ հատ իսկ չկայ:

4.- Ս. Դ. Հնչակեաններէն մէկ մասը, իրենց դիրքը պաշտպանել ուզող թաղականներէ, հոգաբարձուներէ, ուսուցիչներէ, անցեալին մէջ կուսակցութեան դրամները իւրացնող խաչագողներէ, մնացածներն ալ ունէ գաղափարէ զուրկ տգէտ արհեստաւորներէ:

5.- Մեր յարաբերութիւնները պաշտօնական են:

6.- Ս. Դ. Հնչակեաններուն հետ ինքնապաշտպանութեան հարցին շուրջ:

7.- ----- 8.- -----

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Մարզուան, 24 Օգոստոս 1911

ՑՈՒՑԱԿ ԱՆԲԱՐԵՆԻՊԸ, ԱՆՁԵՌՆՀԱՍ ԵՒ ՅԵՏԱՇՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ

I — Գայմագամ վասը Ֆ ----- պէյ, տխրահաշակ քննիչ (Դ. գորաբանակի) Միւշիր Օսման փաշայի որդին է: Յ ամիսէ ի վեր հոս է. ունէ գործ տեսած չունի, անկարող, անձեռնհաս մէկը ըլլալով, կառավարական էշրաֆ եւ ազդեցիկ պաշտօնեաներու ձեռքը խաղալիք է, որուն առաջին գործը եղաւ օրինաւոր քուէով թաղապետական նախագահ ընտրուող հայը հրաժարեցնելով, իր արբանեակներէն մութ անցեալովը ծանօթ, կաշառակեր, կառավարական պաշտօններէ ի սպառ վտարուած մէկը տեղաւորել այդ պաշտօնին:

II — Տիւրիկցի Մալ միւտրի Ազմի էֆէնտի. սոսկալի հայատեաց եւ հակասահմանադրական. տեղացի հայ եւ թուրք ազգաբնակչութեան կողմէ «Արապ Իզգէթ» անունով ճանչցուած: Կառավարութիւնը իր մատին փաթթած ուզածը կը խաղայ այստեղ:

III — Իճրա Մէմուրու թօգաթցի Սուչէհիրլի գատէ էօմէր Սապրի էֆ.

կաշառակեր, յետադիմական եւ անժողովրդական մէկը:

IV — Քոմիսէր Մահեր էֆ. վանեցի, դաւանափոխ (հայէ դարձած թուրք) գինիէ դարձած քացախ: Վանեցի է հայ անունը Արամ է եղեր:

V — Ճէզա րէիսի Ապտիւլ Հաֆըզ.

խակ եւ անձեռնհաս, իր քէյֆին վճիռ արձակող հակահայ պարոն մը, որուն շահատակութիւններուն չլրնալով հանդուրժել մահքէմէի հայ ներկայացուցիչը (ազա) իր հրաժարականը տուած է:

VI — Թաղապետական նախագահ Րէշիտ պէյ: Մարզուանցի:

Գայմագամի եւ գայմագամի փոխանորդ Մալ միւտրին Ազմի էֆ. ազդեցութեամբ ապօրինի կերպով նախագահ ընտրուած, կաշառակեր, մութ անցեալով ծանօթ, կառավարական պաշտօններէ ի սպառ վտարուած անձ մը:

ՑՈՒՑԱԿ ԲԱՐԵՆԻՊԸ, ՁԵՌՆՀԱՍ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԳՐԱՍԷՐ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ

I — Սանտրք էմինի Սարնայիպ գատէ Համտի էֆ. մարզուանցի:

II — Մահքեմէ II Քեթիպի Քալիլ օլլու Քիազիմ:

III — Նիֆուս Մէմուրու Մուսուֆ էֆ.:

IV — Թափու Մէմուրու էմին էֆ. թօգաթցի:

II.- ՍԵՒ ԲԼՈՒՐ – ՍԵՔԱՍՏԻՈՅ ՇՐՉԱՆ

Փաստ. 1543-34

Ա.– Հ.Յ.Դ. ՍԵՒ ԲԼՈՒՐԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԿՈՂՍԷ ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Յ.Դ. Զ^ր Ընդ. Ժողովի Օրակարգի մասին

Բ- Արդի քաղաքական վիճակը երեք երկիրներու եւ Կուսակցութեան դիրքը անոր հանդէպ

I Թումքա

1.— Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները

Ա- Նկատի ունենալով ներկայ քաղաքական անգոյն վիճակը, միեւնոյն ատեն նկատելով որ Միութիւն եւ Յաւանաբարութիւն կուսակցութիւնը, սահմանադրասէր ամենաուժեղ կուսակցութիւնն է, աշխատիլ անոր հետ պէտք եղած համաձայնութիւնը ձեռք ձգել, հոգային եւ կրթական հարցերու եւ ուրիշ կարեւոր հարցերու շուրջ: Աշխատիլ նմանապէս կանխաւ կնքուած համաձայնութեան գործադրութիւնը ձեռք բերել:

Բ- Ամէն կարգի ճիգ թափել, աշխատիլ բանաւոր եւ գրաւոր պրոպականդայով համբարաշխութիւն գոյացնել բոլոր քաղաքական կուսակցութիւններու հետ:

Գ- Նկատելով որ ասորի, եգիտի, չերքէզ, քիւրտ եւն ազգայնութիւններուն մեծամասնութիւնը դեռ տգէտ է եւ նոյնիսկ անտեղեակ ազգայնական գաղափարին, նկատելով որ իրենց այս տգիտութեամբ նոյնիսկ խոչընդոտ կը հանդիսանան ներկայ ռեժիմին, աշխատիլ եւ ամէն ճիգ թափել գիրենք գիտակցութեան բերելու, անոնց մէջ կազմել տալ ազգայնական խմբակցութիւններ եթէ չունին, իսկ եթէ ունին անոնց հետ համբարաշխական քայլեր առնել մեր շահերու համաձայն:

2.— Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը

Ա- Հայ եւ թուրք անդամներէ կազմուած յանձնախումբեր կազմել տեղոյն մէջ քննելու եւ վճռելու համար այդ անլոյծ հարցը: Յանձնախումբը կազմուած ըլլալ Առաջնորդարանի կողմէ նշանակուած հայ, կառավարութեան կողմէ ընտրուած թուրք անդամներով, եւ կեդրոնի կարգելիք ներկայացուցիչներով:

Բ- 1.- Ոճրագործները զինուորական ատեաններու առջեւ դատել:

2.- Հայաբնակ գաւառներու մէջ հայ ժանտարմաներ շատցնել եւ համեմատական թիւով հայ պաշտօնեաներ նշանակել:

3.- Հայաբնակ գաւառներու մէջ մշտական զօրք պահել:

4.- Սպանութեանց ժամանակ ապահովութեան հսկող պաշտօնեաները պատասխանատու բռնել:

5.- Աւատապետներու զինաթափութիւն, հակառակ պարագային հայ-ժողովրդի ալ պետութեան կողմէ գէնքերու բաշխում:

Գ- Իտալի եւ Պէլէտիէի ժողովներու ընտրական կանոններու բարեփոխումը (հաւասարապէս ընտրելու եւ ընտրուելու իրաւասութիւն տալ անխտիր բոլոր այն անհատներուն, որոնք բարեւոք կերպով կրնան կատարել իրենց այդ իրաւունքը, առանց նկատի առնելու վճարած էմլաքի տուրքերին):

Դ- 1.- Աշարի վերացում եւ անոր տեղ իւրաքանչիւր հողագործի իր ունեցած հողին համեմատ տարեկան համեմատական տուրքի մը հաստատումը:

2.- Բարեփոխել թիճարէթի տուրքի օրինագիծը:

3.- Թեթեւացում աղնամի տուրքին:

4.- Բոլոր հարկերու համար յառաջատուական տուրքի հաստատում:

Ե.- Աշխատիլ Անատոլուի երկաթուղին խիտ ցանցելով պատել: Իսկ խճուղիներու համար իր տեղին վրայ ծախսել ճամբորդաց անուսով գանձուած տուրքը: Չկեցած տեղեր հեռագրական գծեր հաստատել եւ հեռագրական ու թղթատարական վարչութեան հիմնովին բարեփոխութիւն: (Օր. իր պաշտօնին անգիտակ պաշտօնեաներու պաշտօնանկութիւն եւ թղթատարական եւ հեռագրական կեդրոններու եւ մասնաճիւղերու մէջ օտար լեզուներու տեղեակ պաշտօնեաներու նշանակում):

2- 1.- Հողագործական եւ ջրաբաշխական նորաձեւ մեքենաներու կառավարութեան կողմէ հողագործներու պայմանագրով տրուելու եւ ասոնց գործածութեան եղանակը վարժեցնելու համար մասնաւոր պաշտօնեաներու անուանում:

2.- Բոլոր կուսակալանիստ քաղաքներու մէջ երկրագործական վարժարաններու հաստատում:

3.- Նկատելով որ երկրագործ եւ արհեստաւոր դասակարգի ստուար մեծամասնութիւնը դրամի չգոյութեան պատճառով վաշխառուներէ փոխատուութեան կը դիմէ եւ ահռելի տոկոսի ենթարկուելով տնտեսապէս կը քայքայուի, այդ քայքայումէն ազատելու եւ արհեստներու յառաջդիմութեան օգնելու համար աժան վարկի ընկերութիւններու հաստատում:

4.- Նկատելով որ Երկրագործական Պանքան ներկայ գործելակերպով կ'օգնէ միայն հարուստ, կալուածատէր եւ ազդեցիկ երկրագործներու, անուղղակի պատճառ դառնալով որ ասոնք պատուհաս մը դառնան խեղճ աղքատ գիւղացիութեան, աշխատիլ հիմնովին բարեփոխել գայն:

5.- Պարբերական ցուցահանդէսներով արհեստներու ոյժ տալ:

Է- Կրթական եւ բարեգործական հաստատութեանց ինքնավարութեան պահպանումը Թուրքիոյ բաղկացուցիչ ազգերու համար:

Պետութեան կողմէ իւրաքանչիւր ազգութեանէ գանձուած կրթական տուրքէն 100ին որոշ մաս մը պետական բարձրագոյն կրթութեան յատկացնելով մնացորդը վերադարձնել իւրաքանչիւր ազգութեան իր համայնքին կրթութեան յատկացնելու համար:

3.- Դաշնակցութիւնը եւ հայ ազգային խնդիրներ

ա) Պէտք է ազգային-մշակութական հաստատութիւններու մէջ մասնակցիլ ոչ-պաշտօնապէս եւ պարտադրել ընկերները աշխատիլ գանոնք յառաջացնելու:

բ) Ազգ. սահմանադրութեան վերաքննութեան պէտք է ձեռնարկել երբ մեր ազգային ներքին կեանքը թոյլատու կ'ըլլայ եւ վստահ կ'ըլլանք որ կառավարութիւնը ոեւէ խոչընդոտ չի հաներ եւ վերաքննուածն ալ առանց առարկութեան կ'ընդունի:

գ) Պայքարը անհրաժեշտ է, պէտք է լինի գրաւոր եւ բանաւոր եւ պարագաներու համեմատ լուրջ եւ շրջահայեաց, եւ միշտ նկատի առնել որպէսզի ոեւէ անտեղութիւն եւ շփոթութիւն առաջ չգայ:

4.- Օսմանեան խորհրդարանի դաշնակցական երեսփոխանութիւնը

ա) -----

բ) Խորհրդարանական խմբակը եւ Բիւրոն միասնա-

բար ժողովներ գումարելով մեծամասնութեան որոշումը թող պարտադիր ըլլայ խորհրդարանական խմբակին:

գ) Խորհրդարանական խմբակին հրահանգել՝ Հ.Յ.Դ. 2^ր Ընդ. ժողովին մէջ բոլոր ընդ. պետական եւ ազգ. կառավարական խնդիրներու շուրջ տրուող որոշումները իրականութիւն դարձնել Օսմ. խորհրդարանի միջոցով: Նաեւ իրենց ուշադրութիւնը հրաւիրել բռնի իսլամացումի, զինուորներու վիճակի եւ ուրիշ այս կարգի կարեւոր հարցերու շուրջ:

դ) Թեկնածուն ընտրուելու է Կեդր. Կոմիտէներու կողմէն, ժամանակէն առաջ Բիւրոյին եւ շրջանի մարմիններու հետ խորհրդակցելով:

Թեկնածուին կուսակցական ըլլալը կամ ոչ նկատի չառնել, այլ անոր արժանիքը, մտային կարողութիւնը, նկարագիրը եւն, համաձայնութեան գալով ազգ. պաշտօնական մարմիններու եւ ուրիշ քաղաքական կուսակցութեանց հետ:

II Ռուսիա

Ա — 2.— Ռուսիոյ ներկայ վիճակին եւ քաղաքական ներքին կեանքին մօտէն ծանօթ չլլալով, տակտիկի եւ կազմակերպական նոր եղանակի որոշումը կը թողունք կովկասահայ եւ այդ վայրերու ծանօթ ընկերներու, միեւնոյն ատեն անոնց նկատողութեան յանձնելով, որ Դաշնակցութիւնը Ռուսիոյ մէջ գոյութիւն ունեցող վստահելի կուսակցութեանց հետ համերաշխելով, միասին դիմեն այն ամէն միջոցներուն որոնք անհրաժեշտ կը նկատուին, ըլլայ դաւադրական ըլլայ յեղափոխական:

Ազգ. հաստատութիւններու հանդէպ, Դաշնակցութեան ուղղութիւնը ըլլալու է այն ինչ որ էր 903-904 ազգ. կալուածներու գրաւման ատեն:

Ամէն գնով աշխատիլ եւ պայքարիլ «Դաշնակցութեան դատը» անունով շարունակուող դատը յաջող ելքի մը հասցնել եւ այդ դատի պատրուակի տակ ընդհանուր ռուսահայերու դէմ սկսած հալածանքին վերջ մը տալուն:

Աշխատիլ կուսակցական մամուլ մը պահել այդ անւան տակ:

III Պարսկաստան

Աշխատատրական քաղաքականութիւնը

ա) Ոյժ տալ աշխատաւորական կազմակերպութիւններու, դնելով գանոնք ոչ-կուսակցական եւ միջազգային հողի վրայ:

բ) Աշխատութեանց ժամուայ օրական 9 ժամուայ գեղջում:

2.- Բանուորներու տարիքի սահմանափակում

3.- Հիւանդութեանց եւ արկածի պահուն գործարանատէրերու կողմէ վճարում:

4.- Գործարաններու մէջ մնայուն բժիշկի հաստատում:

5.- Ձեռքով գիշերային աշխատութեանց:

6.- Գործարանատէրերու համար օրինագծի մը քուէ-արկումը բանուոր ընդունելու եւ ճամբելու մասին:

7.- Կառավարութեան կողմէ օժանդակ սնտուկի մը հաստատումը ծերութեամբ, յիմարութեամբ վերջապէս ոեւէ պատճառով գործելու անկարող գործաւորներու:

Կազմակերպական

ա) -----

բ) Բիւրոյական շրջաններու նոր բաժանում Պատասխանատու մարմիններու վերընտրութիւն: Մնայուն հաշուեքննիչ մարմնի մը հաստատումը: Թուրքիոյ կեդր. կոմիտէներուն աշխարհագրականօրէն ճշդում:

Հայ-թուրք կնիքի մը անհրաժեշտութիւնը: (Ընկերակցութեան կանոնագիրը նկատի առնելով):

գ) Ժընեւ [«Դրօշակ»ի հրատարակութեան վայր]:

դ) Ժընեւի տան գնումը կատարուի բայց ոչ-կազմակերպական դրամով, այլ ընկերներու օժանդակութեամբ, նուէրներով եւ հանգանակութիւններով:

ե) Կազմակերպական ընդ. հասոյթի %ին շրջապահներ փոխադարձ օգնութեան արկղին եւ միեւնոյն ատեն պարտք դնել իւրաքանչիւր մարմնի որպէսզի ամէն տարի ի նպաստ այս արկղին մէկ մէկ ներկայացում եւ հանդէս սարքեն:

Ե- Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդ

Գրաւոր

1.- «Դրօշակ»ի կանոնաւորապէս հրատարակում:

2.- Կիսապաշտօնական թերթերու հրատարակում

Պոլիս եւ գաւառները:

3.- Հրատարակութիւններու շարունակում:

Բանաւոր

1.- Երկրի կարեւոր կեդրոններէ մէկու մէջ մնայուն դասընթացքի մը հաստատում պրոպագանդիստներու համար ուր իւրաքանչիւր շրջանէ ղրկուած ընկերներ հետեւին կանոնաւորապէս:

Ընդունուած բանաձեւեր Հ.Յ.Դ. Սեւ Բիւրոյի Տեղական կոմիտէի ընկերական ժողովի մէջ:

Փաստ. 1543-30

Բ.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԷՐՊԱԱՅԻ ՇՐՉԱՆԻ⁷

Ա.- Տնտեսական

- 1.- Հրպայտի շրջանին մէջ ծխախոտի մշակութիւնը զարգացած է. այս տարի ունեցած է մօտաւորապէս 2250,000 քիլօ ծխախոտի արտադրութիւն 90000 ոսկի արժողութեամբ: Ունի ցորեն, գարի, աֆիոն, բուրդ տարեկան 200000 ոսկի արժողութեամբ:
- 2.- Գործարան չկայ:
- 3.- 1910ին բերքը գոհացուցիչ եղած է:
- 4.- Երաշտ չունեցանք. անասունի համաճարակ ունեցանք եւ 2000 ոսկի վնաս պատճառեց:
- 5.- Ձինտորագրութիւնը ունի արդիւնք չէ ունեցած հոս:
- 6.- 1910ի տուրքերը հայոց կողմէ ամբողջովին վճարուած է:
- 7.- Սահմանադրութիւնը մեր տնտեսական գոյութեան վրայ ազդեցութիւն ունեցած է, որովհետեւ վաճառականներու ազատ երթեւեկը եւ ծխախոտի արտադրութեան տուրքին նուազումը ծխախոտի գներու նպաստած է:
- 8.- Մեր շրջանի մէջ քաղաքը (Հէրէկ) ունի 500 տուն հայ բնակչութիւն եւ շրջակայ հինգ հայ գիւղերու մէջ 100 տուն ընդամէնը 2500 բնակչութիւն:

Բ.- Արտագաղթ եւ ներգաղթ

- 1.- Մէկ ընտանիք Ամերիկա, մէկ ընտանիք Անգլիա եւ մէկ ընտանիք Սուտան, իսկ երկու անձ Ամերիկա գաղթած են:
- 2.- Մէկ ընտանիք եւ մէկ անձ վերադարձած են Սահմանադրութենէ վերջ:
- 3.- ----- 4.- ----- 5.- -----

Գ.- Հողային հարց

- 1.- Բռնապետութեան միջոցին Սաուրը օղլու Ալի պէյի կողմէ 20 տուննոց (էյվազայի) հայ գիւղացիներու 500 արտավար հողը գրաւած եւ որպէսզի գիւղացիները իրենց արդար պահանջումէն ետ կենան, չէ դադարած գանոնք հալածելէ եւ ներկայ տարւոյս Մայիս 21ին մեռած է Սարգիսը (Թոքատցի) բանտին մէջ, որուն մասին Ալի պէյի դրողումով հրձիգութեան գրպարտութիւն եղած էր:
- 2.- Ոչ:
- 3.- Ոչ մէկ ընդհարում:

Դ.- Ազգային մշակույթ

- 1.- Երկու նախակրթարան դպրոց ունինք. մին մանչերու՝ 200 աշակերտներով, միւսը աղջկանց՝ 80 աշակերտուհիներով:

- 2.- Հինգ հայ գիւղեր ունինք, որոնք դեռ դպրոց չունին:
- 3.- Ոչ մէկ դպրոց, որովհետեւ հոս դեռ նոր կազմակերպուած է:
- 4.- Դաշնակցական ուսուցիչ չունինք:
- 5.- Ինքնակոչ երկու թաղական ունինք. տեղւոյն Դաշնակցութեան նախաձեռնութեամբ այս մասին հանրագրութիւնով մը բողոք դրկուած է Թոքատի Առաջնորդութեան, եւ Թոքատի քաղ. ժողովը որոշած է առաջնորդը անձամբ հոն գալով ըստ Սահմանադրութեան թաղականութեան ընտրութիւնը կատարել, սակայն ծանօթ քույրայի պատճառով առաջնորդը չէ կրցած գալ:
- 6.- Չունինք:
- 7.- Չունինք:
- 8.- Դաշնակցութիւնը ակումբի մէջ հաստատած է մէկ գրադարան:

Ե.- Միջացեղային յարաբերութիւններ

- 1.- Շատ լաւ յարաբերութիւն:
- 2.- Միեւնոյն վիճակի մէջ է:

Զ.- Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնները

- 1.- Անտարբեր վերաբերում:
- 2.- Կարելի եղած է նախկին դատարանի անդամ Եորկին վերընտրութեան ցուցակէն դուրս ձգել տալ:
- 3.- Երբեք մաքրագործում չէ եղած. կան ծեր պաշտօնեաներ Սանտրը Էմինի Օսման էֆ-ին եւ նիւֆիւս մէմուրին Ահմէտ էֆ-ին: Բաղձայի են կարող, բարեխիղճ եւ արդարադատ պաշտօնեաներ:
- 4.- Հոճա Ալիմ էֆ-ին բնիկ (էրպասցի), այժմ միւսթանթը Իթթիհատի տեղական կազմակերպութեան Ա. նախագահը որուն կաշառակերութիւնը հաստատուած է, սակայն ապացուցանելը դժուար է. այս անձը պայքարած է մեզ դէմ ակումբի բացումը արգելելու համար: Դատարանի նախագահը դեռ նոր եկած է, թէեւ լաւ ընթացք մը չի տեսնուիր:
- 5.- Տեղւոյս գայմագամը անկաշառակեր է. տեղական անդորրութեան վերջին ծայր հսկող անձ մ'է եւ ինք անձամբ գիշերները կը պտտի փողոցները եւ քաղաքէն
- 7.- Էրպասցի՝ Սեքաստիոյ Թոքատ գաւառի Գերեկ գիւղացադաքն է:

դուրս կը հետապնդէ նաեւ չարագործները. սակայն ազգայնամոլ հովեր ունի, այս անձէն զատ չունինք ուրիշ կարող պաշտօնեայ մը:

Է.- Միւս կուսակցութիւնները

- 1.- Իթթիհատ Թէրագգը կուսակցութիւնը ունի իւր ակումբը սակայն ժողովուրդը ի սրտէ համակիր չէ կուսակցութեան անդամներուն:
- Հնչակեան կուսակցութիւն կազմելու աշխատողներ եղան, բայց հետեւողներ չկրցին գտնել:
- 2.- Իթթիհատի կուսակցութիւնը ունի մօտաւորապէս 80 անդամ:

3.- Իթթիհատի կուսակցութեան մէջ կան յետադիմականներ %80 համեմատութեամբ:

- 4.- Մեծ մասամբ էջրաֆներէ եւ կառավարական պաշտօնեաներէ կազմուած է եւ վեց ամիս առաջ եկած հրահանգի մը համաձայն գիւղի մուխթարներն ալ անդամ արձանագրեցին:
- 5.- Թէեւ Իթթիհատի հետ պաշտօնական այցելութիւններ փոխանակած ենք, բայց առ հասարակ պաղ վերաբերում ցոյց կու տան Դաշնակցութեան հանդէպ:
- 6.- Ոչ մէկ հարցի մասին համերաշխութիւն ունեցած ենք, արդէն տեղւոյս Իթթիհատը թոյլ ընթացք մ'ունի:
- 7.- ----- 8.- -----

Փաստ. 1543-29

Գ 1.- ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՑԱՐԱՆԻ [ՍԵՔԱՍՏԻԱ]

ԱՏնտեսական

- 1) Տնտեսական արդիւնաբերութեան զարգացած ճիւղերն են.
 - ա- Գորգագործութիւն, բ- Դանակագործութիւն (պլագճի), գ- Կարագործութիւն (մարանկէօզ), դ- Կօշկակարութիւն, ե- Դերձակութիւն, զ- Պողպատաւորութիւն (չիլինկիր) եւ է- Նամանաւանդ երկրագործութիւն, իրենց նախնական ձեւով միայն զարգացած են:
 - 2) Կան գորգի գործարաններ, որոնց մէջ կ'աշխատին 1550 բանուորուհիներ, 130 բանուորներ: Բանուորուհիներու միջին տարիքն է 11-12: Կ'աշխատին ամառը 13-15 ժամ, իսկ ձմեռը՝ ցորեկը 10-11 ժամ եւ գիշերը 2 1/2-4 ժամ: Գապալէ բանուորուհիներունը 4000 հանգոյցը (իւմէկ) 40 փարա, մէծիտը 20էն (հակառակ հրապարակի վրայ մէծիտը 19էն ըլլալուն). ասոնց 30%ը օրական կը ստանայ 10-30 փարա, 30%ը 1-2 դրուշ, 20%ը 2-3 դրուշ եւ 20% 3 1/2-4: Միջին հաշուով բանուորուհիները կը ստանան օրական 75 փարա, օրական 13-14 ժամ աշխատելով. իսկ բանուորները միջին հաշուով կը ստանան 4 դրուշ:
 - 3) 1910 տարուայ բերքը (ցորեն, գարի) խիստ գոհացուցիչ էր, սակայն գիւղացին եւ աղքատ դասակարգը չօգտուեցաւ անկէ նիւթապէս, որովհետեւ սղութեան ժամանակ մեծ քանակութեամբ պարտքի տակ ինկած էր՝ ահռելի տոկոսով դրամ եւ ցորեն առած ըլլալուն համար:
 - 4) 4 տարի առաջ սկսող եւ յաջորդաբար 3 տարի տեւող երաշտը ժողովրդեան 85-90%ը տնտեսապէս քայքայած է եւ դեռ ուսեստի սղութիւնն ալ կը շարունակուի:

Իսկ երաշտութեան հետ ծագում առնող եւ պարբերաբար մինչեւ [հիմա] շարունակուող համաճարակը (կառավարութեան անգուշութեան պատճառով) երկրագործին 30%ը լուծքէ գրկած եւ լծկաններու գներու բարձրացման պատճառ դարձած է:

- 5) Ձինտորագրութիւնը տնտեսականի վրայ մեծ ազդեցութիւն մը չէ թողած, դեռ քիչ զինուոր երթալուն համար:
- 6) Անորոշ էր, բայց մեծ մասը գանձուած է, եւ խիստ կերպով:
- 7) Տնտեսական կացութիւնը աչքառու փոփոխութիւն մը չէ ունեցած. աշխատանքի նուազումը (աւելի ճիշդ չգոյութիւնը) կը շարունակուի հին ռեփիմի նման. աշխատավարձը գրեթէ հինին նման է հակառակ տիրող սղութեան. առաւելութիւն մը որ կայ այժմ ճամբաներու բաց լինելը եւ գիւղացիներու եւ քաղաքացիներու այլեւայլ երկիրներ երթալն է, աշխատելու եւ իրենց նիւթական վիճակը բարելաւելու համար:
- 8) Առաջնորդարաններու մէջ մարդահամարի չգոյութեան պատճառաւ որոշ թիւ չկայ: Մօտաւորապէս 200.000 հայ բնակչութիւն կայ ամբողջ Սվազի վիլայէթին մէջ:

II Գաղթը

- 1) [18]95էն ասդին 5-700 ընտանիք գաղթած են, իսկ 909ի Մարտի յետադիմական շարժումէն ասին Սվազէն մօտ 150-170 տուն գաղթած են մեծ մասամբ Ամերիկա, եւ շատ քիչ Պուլկարիա եւ Եգիպտոս. պանդխտացողներ շատ կան գիւղերէն, 20-25% Սվազի մէջ իսկ գիւղե-

ըհն, գրեթե ամեն տունն մեկ անձ, մեծ մասը Պոլիս, մաս մը Ամերիկա եւայլն:

2) Սերաստիոյ մէջ ընտանիքով վերադարձող չէ եղած վերադարձած են այնպիսիները, որոնց ընտանիքը հոս էին, ծերացած եւ կամ լաւ գործ ունեցած չէին եւ հասոյթներն ալ ցանցառ է:

III Հողային հարց

Մի քանի վայրերու մէջ կան հողային հարցեր, բայց մանրամասնութիւններ պակսելուն՝ չենք կրնար պատասխանել:

IV Ազգ. Մշակոյթ

Սվազի մէջ հայերը ունին

9 մանկապարտէզ } 650-700 աշակերտ
40-45 վարժուհի
1 աղջկանց դպրոց } միջնակարգ

1 բարձրագոյն } Իտալիի աստիճան
1 միջնակարգ } վաւերացուած աշակերտներու
1 նախակրթարան } թիւր 1100-1200
վարժապետներու թիւր 25-30
1 որբանոց } 30-40 մանչ որբեր, 3-4 ուսուցիչ

Ամերիկեան միսիոնարները ունին՝

1 բարձրագոյն դպրոց տղայոց (իտալիի աստիճան) 290-300 աշակերտ 10 ուսուցիչ
1 միջնակարգ դպրոց աղջկանց 472-500 աշակերտ 13 վարժուհի
1 որբանոց աղջկանց 60-80

Փեզուկիները

1 բարձրագոյն դպրոց տղայոց 500-600 աշակերտ 10-12 ուսուցիչ շախարհական

Մայրապետներ

1 մանկապարտէզ }
1 միջնակարգ աղջկանց } 300-350 աշակերտ

Այս երեք հաստատութեանց մէջ կ'ուսանին հայ աշակերտներ:

2) Սերաստիոյ առաջնորդ. թեմին տակ կայ 38 հայ գիւղ. աստնք առ հասարակ դպրոց ունին. դպրոցները ընդհանրապէս նախակրթարան են:

- 4)
- 5) } Տեղեկագիր չստանալնուս չենք կարող բան մը ըսել:
- 6)
- 7)

8) Կեդր. կոմիտէի շրջանին մէջ 12-15 տեղեր գրողաբան կայ:

V Միջնակարգ դպրոցներու թիւն

1) Փոփոխական է քաղաքականութեան հետ. անկեղծ համերաշխութիւն մը չի տեսնուիր մինչեւ հիմա. պատճառը

ա) Թուրք աւատականներու իրենց առանձնաշնորհումներէ զրկուելն է, զոր ունէին հին ռեփորմի. բ) Թուրք բնակչութեան տգիտութիւնը, որոնք կը քըշւին ամէն տեսակ հովերէ. գ) եւ որովհետեւ տեղույս իթիհատի մէջ կարող եւ անկեղծ գործիչներու չգոյութեան պատճառաւ, այդ հարցով երբեք չգրադուիր: Աստնք պատճառ եղած են բնակչութեան զանազան ազգութիւն իրար [չ]մօտեցնելու:

2) Շատ չնչին փոփոխութիւն մը կրած է նախկինն բաղդատմամբ:

VI Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնը

1) Տեղական իշխանութեանը մարմինն հանդէպ ունեցած վերաբերումը կախում ունեցած է միշտ կուսակալներու առաւել կամ նուազ սահմանադրասէր ըլլալէն. այսինքն անոնց ազատականներուն կամ յետադէմներուն կողմը յարելէն: Առաջին պարագային յարաբերութիւնները եղած է լաւ եւ սերտ, իսկ երկրորդ պարագային մէջ, յարաբերութիւնները եղած են առերես եւ շողոքորթիչ ու ասպարդիւն:

2) Եւ ոչ մի կարեւոր գործ:

3) Վարչական մաքրագործումը երբեք լրիւ չէ կատարուած:

Բոլոր յետադէմ, անկարող եւ կաշառակեր պաշտօնեաները որոնք մեծ մասամբ տեղացի են, մնացած են իրենց պաշտօնին վրայ, կաշառքի եւ այլ միջոցներու շնորհիւ: Արդ, վարչական կազմը իր օրինաւորութիւնը ստանալու համար, անհրաժեշտ է կատարել թեմսիգաթի գործողութիւնը, հեռացնելու համար թէ օտար եւ թէ տեղացի այն պաշտօնեաները, որոնք ներքնապէս ոյժ կու տան յետադէմ տարրերուն, էջրաֆներուն եւ շրջանները գտնուած անկարող, կաշառակեր եւ գեղծարար պաշտօնեաներուն:

4) Անբարեխիղճ, անձեռնհաս եւ յետաշրջական պաշտօնեաները թուել շատ երկար պիտի լինի: 60%ը անբարեխիղճ եւ անձեռնհաս են (30-40%ը՝ յետաշրջական): Մատի վրայ կը համրուին արդարասէր եւ սահմանադրասէրները: Ահա մի քանիներու անունները, որոնց օր առաջ պաշտօնէ հեռացնելու համար հարկ է աշխատիլ: ա- Իտարէի պաշ քեաթիպ, Մուհասէպէճի գատէ Թեֆիք 65 տարեկան

բ- Մէքթուպ միւմէքլի, Զիա միւթեպլի գաղէ 45 տարեկան

գ- Մուհասէպէ Մերքէզ քեաթիպի Քէօր Քեամիլ 60 տարեկան

դ- Տէֆտէրտար միւմէքլի Լութֆի 60 տարեկան
ե- Նիւֆիւս պաշքեաթիպի ինճէ Սէիտ գաղէ Քէօր Համիտ 60 տարեկան

զ- Նիւֆիւս իքինճի պաշքեաթիպի Թէֆիք 50 տարեկան

է- Մուհասէպէ վիլայէթ քեաթիպի Շիւքրիւ 30 տարեկան

ը- Պիտայէթ պաշքեաթիպ Սելիմ Քէօլէզգաղէ 50 տարեկան

թ- Սէր Միւսթանթիք

ժ- Մերքէզ Միւստայի ումումի

ի- Վալի վէքլի

Ա. եւ Բ. ի համար Մեհմէտ էմին պէյը շատ աշխատեցաւ ի գուր. վերջի երեքն ալ, նամանաւանդ թ. եւ ժ. բացորոշ անտանելի դարձած են իրենց կաշառակերութեամբ, հայու հակառակութեամբ եւ այլ գործունէութեամբ:

VII Միւս կուսակցութիւնները

1) ա- Հնչակեան — Ժողովրդեան առջեւ արժանի դիրք մը չունին:

բ- Իթիհիւստի թերաբըր — Կառավարական շրջանակի մէջ ազդեցիկ. Ժողովրդեան զարգացած դասակարգին մէջ լաւ դիրք ունին:

գ- Էլմիէ — Թուրք կրօնաւորներէ բաղկացած է միայն. ոչ մի գործունէութիւն:

2) Հնչակեան — 3-450 [անդամներ]
Իթիհիւստի — 600-800
Իլմիէ — 100-150

3) Իթիհիւստի եւ Իլմիէի մէջ կան. Հնչակեաններու մէջ մէկ հատ Դաշնակցութեանն) արտաքսուած (Տիգրան Շիրինեան, որը երկու կուսակցութիւնները միացնելու համար կազմուած ժողովներէն վերջ անդամակցած էր մեզի):

4) Իթիհիւստի մէջ 50%ը պաշտօնեայ, 30%ը էջրաֆ, վաճառական, 20%ը արհեստաւոր:

Հնչակեաններու 80%ը արհեստաւոր, 15%ը խանութպան, 5%ը վաճառական:

5) Հնչակեաններու հետ յարաբերութիւններու ժամանակ մը եղած էր թշնամական. վերջերս՝ առերես:

Իթիհիւստի հետ յարաբերութիւնները լաւ են եղած:

6) Հնչակ. — Եւ ոչ մի գործի մէջ համերաշխութիւն ենք ունեցեր:

Իթիհիւստի — Խառն ժողովներ կազմակերպեցինք, որը տարիէ ասդին առկախ կը մնայ. բայց եւ ոչ մի գործունէութիւն:

Պատրաստուած

Հ.Յ.Դ. Սեւ Բլուրի

Տեղական կոմիտէի ընկերներու կողմէ

Գ 2.- ՀԱՐՑԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Ա.- Տնտեսական

1.- Երկրագործութիւն գրեթէ նահապետականին պէս է. իսկ արհեստներէն գորգագործութիւնը միայն զարգացած:

2.- Այլուրի ֆապրիքայէ գատ ուրիշ գործարան չկայ, հոն հազիւ քանի մը բանուոր կը գտնուի: Իգական սեռը միայն գորգ կը բանի, օրական երկու դրշ. հազիւ կը ստանան:

3.- Բերքը գոհացուցիչ էր:

4.- 910-911ի ձմեռը շատ ոչխար կորսուած է:

5.- Քանի որ հարեւան ազգերու բարոյապէս ազդած է գինուորագործութիւնը քաղաքացիական իրաւունքի տեսակէտով, այդ առթիւ տնտեսապէս ալ լաւ հետեւանք ունեցած է:

6.- Ի հաշիւ յետամնաց գինուորական տուրքի վճարում չունինք. իսկ գիւղերը ուր տակաւին կազմութիւն չկայ, մասնաւոր վճարումներ ունին, իսկ էմլաքի տուրքը վճարուած է 8%:

7.- 3% բարելաւուած է տնտեսական վիճակը:

8.- Գիւղերով միասին 4000 [հայ բնակչութիւն]:

Բ.- Գաղթը

1.- Երկու ընտանիք Օտեսա. երկու անձ Վառնա, Պոլիս, Իգմիր, Ատանա միջին հաշուով 45 (գիւղերէն Ատանա եւ Մերսին 500ի շահի):

2.- Չկայ [ներգադի]:

Գ.- Հողային հարց

1.- Հոս չկայ:

2.- Հոս չկայ:

3.- Երկու գերեզմանոցի խնդիր (բաւական արժէքատր) յունաց հետ, նախորդ կառավարութեան դրամամբխնդիրը ցարդ անլուծելի կը մնայ:

Դ.- Ազգային մշակոյթ

- 1.- Պիւնիան — մէկ վարժարան, մէկ ուսուցիչ, աշակերտ՝ 40,
- Կիլիկ — մէկ վարժարան, մէկ ուսուցիչ, աշակերտ՝ 60,
- Սըվզէն — մէկ վարժարան, մէկ ուսուցիչ, աշակերտ՝ 50,
- էքրէք — երկու վարժ., երկու ուսուցիչ, աշակերտ՝ 200,
- Սարը Օղլան — մէկ վարժ., մէկ ուսուցիչ, աշակերտ՝ 30,
- Բոլորն ալ նախակրթարան:

2.- Պատասխանը առաջին հարցումին մէջ է (գիւղը 5):

3.- Ուղղակի չկայ:

4.- Չկայ [դաշնակցական ուսուցիչ]:

5.- Թաղական խորհրդին մէկը, հոգաբարձութեան 4/5ը դաշնակցական են, գիւղերը ցարդ կազմակերպութիւն տեսած չեն:

6, 7, 8.- Չկայ:

Ե.- Միջցեղային յարաբերութիւններ

1.- Նախորդ ռեժիմին գոհացուցիչ չէր:

2.- Սահմանադրութեան հռչակումէն վերջ թրքաց հետ բաւական լաւ, իսկ յունաց հետ միջակ:

Զ.- Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնը

1.- Կառավարութիւնը տեղեակ չէր մեր կազմակերպութեան:

2.- Թէեւ կառավարութիւնը անտեղեակ է, բայց հայ պաշտօնեայի դաշնակցական լինելով հանդերձ, տեղւոյս առաջնակարգներն ի վաղուց լաւ յարաբերած են կառավարութեան հետ. այդ առթիւ կարելի եղած է կարգադրել ազգային բնոյթ ունեցող գործերու մեծամասնութիւնը:

3.- Թէնսիգաթը շատ աննշան եղած է:

4.- Տեղւոյս պաշտօնեաներու բարելաւութիւնը տեղակալէն կախում ունի: Այժմու տեղակալ Շուլայիպ Շիւքրի պէյ, կրօնամուլ չէրքէզ մըն է, եւ բնաւ չի խորհիր քաղքին յառաջդիմութեան եւայլնի վրայ, որոյ փոփոխմամբ եթէ բարեխիղճ ու ժրջան մին գայ, կըրնան միւս բոլոր պաշտօնեաները ի կարգ գալ:

5.- Մնացեալ պաշտօնեաները կրնան ժամանակին եւ տեղակալին պահանջներու ու գաղափարին պատշաճիլ: (Հայ պաշտօնեաները բացառութիւն կը կազմեն, թէ՛ ազատական գաղափարով, եւ թէ՛ գործունէութեան տեսակէտով):

Է.- Միւս կուսակցութիւնները

Դաշնակցութենէ գատ ուրիշ կուսակցութիւն բնաւ չկայ:

ՋՐՎԷՃԻ ԽՈՒՄԲԵՐ

III.- ԲԱՐՉՐ ՍԱՐ – ԿԵՍԱՐԻՈՅ ՇՐՉԱՆ

Փաստ. 1543-13

Ա- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԲԱՐՉՐ-ՍԱՐԻ (ԿԵՍԱՐԻՈՅ) ՇՐՉԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Ա. Պրոպականտի շրջան

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս յետոյ տեղս կը հասնին մի քանի դաշնակցական ընկերներ ու ձեռք ձեռքի տուած արդէն գոյութիւն ունեցող մի քանի ուսուցիչ ընկերներու հետ կ'որոշեն իրենց հայրենիքին մէջ յառաջ բերել կազմակերպութիւն, եւ ըստ որում 1908ի Օգոստոսին կը սկսին պրոպականտ որ կը տեւէ մինչեւ 1909, առաջադրուած նպատակին համար տրամադրելի ընծայելով մի քանի տասնեակ երիտասարդ գաղափարական ոյժեր:

Բ. Կազմակերպութեան կամ հանգանակութեան շրջան

1909 Յունուարին սկիզբը տեղի կ'ունենայ կազմակերպութիւնը, որ կ'ունենայ իր քիւլաք ու պատիկ գրադարանը. հետզհետէ կը ստուարանայ ընկերութիւնը ու ժողովուրդի զանազան խաւեր կու գան միանալ Դաշնակցութեան դրօշին ներքեւ գոյութիւն տալով մարտական ու մտաւորական խումբերու. ոգեւորութեան այս շրջանին ձեռնհաս ու հեղինակաւոր ընկերներու նախաձեռնութեամբ կը ձեռնարկուի հանգանակութեան որ կը տեւէ մինչեւ Ատանայական եղեւնի յարուցած գոյութեան տազնապաներու վաղորդայնը. արդիւնքը կը հասնի մօտաւորապէս 100 ոսկիի որ ամբողջովին կը յատկացուի ինքնապաշտպանութեան գործին:

Գ. Ընդհատման շրջան

Դրացի երկրին մէջ տեղի ունեցած (Ատանա) հաւաքական նախճիրներու տխուր լուրերը կ'ազդեն բոլորի հոգեբանութեանը վրայ ու շատեր կը պաղին կը լքեն գործը ու կը հեռանան. կազմակերպութիւնը պահ մը կ'ընդհատուի ու դուրս կ'ելլէ իր բնականոն վիճակէն բայց այս ընդհատման շրջանի արհաւիրաց օրերուն Դաշնակցութեան փոքրամասն ընկերներ մի քանի ձեռնհաս ընկերներու ղեկավարութեան տակ զանազան տեղեր բաժանուած ժողովուրդը ինքնապաշտպանութեան մղեցին՝ տրամադրութիւնները միշտ վառ պահե-

լով ու շաբաթներ ամբողջ գիշեր ցորեկ մնացին հսկեցին ինքնապաշտպան դիրքերու մէջ ի միխթարութիւն պաշտպանութեան կարօտ երկսեռ ժողովուրդին:

Ընդհատման շրջանը կը տեւէ մինչեւ 1909 Սեպտ.ի սկիզբները. այս միջոցին ընկերները կը գտնուին ցրուած ու անկազմակերպ վիճակի մը մէջ:

Դ. Վերակազմութեան կամ մաքրագործման շրջան

1909 Սեպտեմբերին սակայն դուրսէն հասնող մի քանի ընկերներու ջանքերով ու տեղական գործօն ու մտաւոր տարրերու խորհրդատու թելադրութիւններով կը ձեռնարկուի վերակազմակերպել ժամանակէ մը ի վեր անջատուած ոյժերը, նկատի ունենալով մաքրագործման պահանջը, որ հրամայական դարձած էր կրիտիքական վայրկեաններուն մի շարք փառասէր, եսամուլ ու շահադէտ հոգեբանութիւններու յայտնաբերումով: Մաքրագործումը կը կատարուի յաջորդաբար երկու արդիւնքով. դաշնակցական ընկերներու ու համակիրներու երեւումը կամ մասնակցութիւնը ազգ. իշխանութեանց, ինչպէս հոգաբարձութիւններու, թաղականութեանց, քաղաքական եւայլն ժողովներու, ուսումնական խորհուրդին մէջ. դարձեալ այս շրջանի գործունէութիւն կը համարուի այն ներկայացում-հանգանակութիւնը, որ տեղի ունեցաւ ի նպաստ Կովկասի բանտարկեալներուն, արդիւնաւորելով մօտաւորապէս 75 օսմ. ոսկի:

Ազատամարտի տարածման համար եղած պրոպականտը եւ ընձեռուած արդիւնքը կարելի է համարել 1-2-3 շրջաններու գործունէութիւնը որով Ազատամարտը կը հանդիսանայ Կեսարիոյ ու շրջաններու մէջ ամէնէն տարածուած թերթը ու կը վայելէ յարգանք բոլոր գիտակից խաւերու մէջ:

Ե. Շրջան — ներկայ վիճակ — 1911

Ներկայիս մէջ մեր կազմակերպութիւնները կը միացնեն իրենց մէջ — ամէն տեղեր գոյութիւն ունին — երիտասարդութեան լաւագոյն մասը որ կը բաղկանայ մեծ մասամբ մտաւորական տարրերէ, իսկ ոչ մտաւոր-

րական փոքրամասնութիւնը դարձեալ ունի ծանօթութիւններ հայերէնի ու գրել կարողալու մասին:

Շարունակական ու լարուած գործունէութիւն կարելի չէ ներկայ պայմաններու տակ, ուր իրենց ժամանակովը տրամադրելի ընկերներ ստիպողական պատճառներով կը հեռանան շրջանէս-այսպէսով գործը կ'ենթարկուի կարծես մի տեսակ բարոյալքումի- այս վիճակին կ'օգնէ ձեռնհաս ընկերներէ շատերուն ուսուցիչ լինելու պարագան որով չեն կրնար իրենց բազմազբաղ անդամներու մէջ կը չհզոքացուին ամբողջ խումբեր անպէտ ու վնասակար տարրերու արտաքսումովը, ըստ որում նոր կազմակերպութիւնը իր հիմունքը կը դնէ մաքուր ու գաղափարական գետնի վրայ- այս շրջանին տեղի կ'ունենան լսարաններ ու գիշերային դասախօսութիւններ եւ դաշնակցական ընկերներու նախաձեռնութեան ու դեկավարութեան տակ յառաջացած ժողովրդական մեծ շարժման շնորհիւ արտաքսումը՝ Տրդ[ատ] եպս. Պալեանի տեղւոյս կազմակերպութեան հետ գուգադիպօրէն գոյութիւն առած էին էվէրէկ-Ֆէնէսէ, Չոմաքլու, Պողազլեան, Ռուստիկին, Պրուքչլա, Ուզունլու, Սէյտէլի, Մունճուսուն, էֆֆէրէ, որոնք գրեթէ միեւնոյն պայմաններէ եւ հանգամանքէ անցնելով վերակազմակերպուեցան քաղաքին հետ, այցելու ընկերներուն ջանքերով, ինչպէս էֆֆէրէ, Մունճուսուն, էվէրէկ-Ֆէնէսէ, Ռուստիկին, Թալաս- եւ սակայն միւս չորս տեղերը ի սպառ կազմալուծուեցան իրենց հեռաւորութեան ու տեղական մտաւորական ոյժերու բացակայութեան պատճառաւ- միւս կողմէ մօտաւոր տեղերէն Պիւնիան, Մունճըսըն, Աքսերայ, ժամանակի ընթացքին տարուած ջանքերուն շնորհիւ եկան միանալ իրենց նոր կազմակերպութիւններով, ըստ որում Կեսարիա հիմակ իր 8 շրջաններովը կը կազմէ Բարձր Սարի մեկուսի կոմիտէն: Բաց աստի տեղւոյս ու Ս. Կարապետի վանքի վարժարանին մէջ այս շրջանին

գոյութիւն ունեցան երկու ուսանողական խումբեր, որ կը խոստանան ընթացքէն յետոյ մտնել Դաշնակցութեան [անոնք] գործօն շարքերուն մէջ: Այս շրջանին կը վերաբերին նաեւ ընտրական պայքարներու աշխատութիւններուն պատճառաւ գործօն մասնակցութիւն ունեցան կազմակերպական գործերուն մէջ, իսկ մնացած ընկերներու մէջ թէեւ պակաս չեն մտաւորական ոյժեր որ կը խոստանան լաւ ապագայ, սակայն ներկային մէջ չունին պէտք եղած հասունութիւնը, փորձառութիւնն ու հեղինակութիւնը յառաջ մղելու գործը այնպէս ինչպէս վայել է իր անուան:

Այս պայմաններու տակ որպէսզի Դաշնակցութեան գործը Փոքր Հայքի այս շրջանին մէջ մնայ իր իտէալական բարձրութեան վրայ, անհրաժեշտ է մի ձեռնհաս գործիչ ընկերի մը ներկայութիւնը որ ապրի տեղական կազմակերպական հաշուով, գործունէութեան մղէ ընկերական կենսունակ շարքերը, ստեղծէ գործեր իւրաքանչիւր խմբի կարողութեան եւ ընդունակութեան համեմատ, սնունդ տայ կուսակցական կամեցողութեան, գործի մէջ մարգելով ու փորձառու ընծայելով ընկերներու կամքն ու անհատականութիւնը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐ-ՍԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

27 Յունիս 911

Անդամական տուրք տարեկան մօտաւորապէս 60 ոսկի:
Անդամներու թիւը կը հասնի 210ի ու կը բաղկացնէ 28 խումբ:
Բիւրոյին փոխադրուած է անդամական ու արտակարգ եկամուտներէ մօտաւորապէս 90 ոսկի:

Փաստ. 1543-31

Բ.- ԹՈՔԱՏԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ա. Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնը

1.- Իթիբհատ Թէրազզրի հետ չենք կրնար համեմատել ըլլալ նկատելով որ անիկա կեղծ է, որու ապացոյցն հայկական ցաւերու եւ դատերու հանդէպ անտարբերութիւնն է:

2.- Քաղաքական կուսակցութիւններէն միմիայն ունինք Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, որոնց հետ կը համեմատուինք միմիայն քաղաքական ծանր պատահարներու եւ աղէտալի դէպքերու ատեն:

3.- Ոչ հայ ազգի խմբակցութիւններ չունինք:

Բ. Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը

1.- Չիֆլիկի խնդիրը եւ ուրիշներ կան, որոնց պատճառաւ բախում ունեցած են հայերը չէրքէզներու հետ, բայց կառավարութիւնն երբեք հոգ տարած չէ. քանի որ այսպէս է պէտք է արդարութիւնը պաշտպանել, ինչ որ անկ է:

2.- Ապահովութիւն երբեք չկայ, այս հարցը տեղւոյս համար մեծ տեղ բռնած է, քանզի չունինք բարեացակամ պուրժուաններ, որոնցմով ինքնապաշտպանութեան պէտքին գոհացում տալու կարողանանք:

3.- Նահանգային ինքնավարութիւնը կամ իրաւունքներու ընդլայնումը խիստ կարեւոր է, եւ կը պահանջենք զայն ռամկավար սիստեմով (եւ կամ ապակեդրոնացման սիստեմով):

4.- Դասակարգային համեմատ[ութեամբ] վճարել հարկերը- աղքատները պէտք է գերծ ըլլան տուրք վճարելէ- ինթիզամն իսկոյն ջնջուելու է, եւ հաստատուելու է յառաջատուական տուրքը:

5.- Հաղորդակցութեան միջոցներ հայկական նահանգներու մէջ, կենսական պէտքերէն մէկն է:

6.- Պէտք է կազմակերպել ընկերակցութիւններ եւ նաեւ ունենալ երկրագործական պանքա, պայմանաւոր անգործ եւ աշխոյժ կարօտեալ երկրագործներու եւ արհեստաւորներու օգնէ առանց գրաւի:

7.- Ամէն ազգ իր ինքնուրոյն ազատ ու անձեռնմխելի մշակութային ինքնավարութիւնն պէտք է ունենայ Թուրքիոյ մէջ:

Ա. Դաշնակցութիւնը եւ հայ ազգ խնդիրներ

1.- Մեր մասնակցութեան եղանակը ազգ[ային], մշակութային, հրատարակութիւններու պէտք է լինի ռամկավարական, դպրոցի ծախքերու մէկ մասը կառավարութեան դրամով լինելու պայմանաւ:

2.- Այո պէտք է Ազգ. սահմանադրութեան քննութիւնը օր առաջ պահանջել Ազգ. ժողովէն:

3.- Պահպանողականներու եւ յետադիմականներու դէմ պէտք է պայքարիլ խօսքով, գրիչով, ընտրութեանց պահուն գործքով, պրոպականդով:

Բ. Օսմ. խորհրդարանի դ[աշնակցական] երեսփոխանները

1.- Իւրաքանչիւր երեսփոխան պարտաւոր է համարատուութիւն տալ իր գործունէութեան մասին:

2.- Խորհրդարանական խմբակը պէտք է Բիւրոյի հետ փոխադարձ յարաբերութիւններ ունենայ:

3.- Պէտք է Բիւրոյի հրահանգներով շարժի:

4.- Ամէն ազգ իւր թիւին համեմատ պէտք է երեսփոխան ունենայ:

1.- Թեկնածուներ պէտք է ցոյց տրուին նահանգներէն եւ գաւառներէն:

2.- Պէտք է:

Գ. Աշխատաւորական քաղաքականութիւնը

1.- Ոչ կուսակցական հողի վրայ պէտք է կազմակերպել արհեստակցական միութիւններ թէ քաղաքներու եւ թէ գիւղերու մէջ:

2.- Օրավարձերու բարձրացում եւ ժամերու կրճատում տեղական պայմաններու համաձայն: 8 ժամ աշխատանք:

Դ. Կազմակերպական

1.- Օսմանեան կառավարութեան կողմանէ վաւերացուած ծրագիրը պէտք է վերաքննուի:

2.- Պէտք է նաեւ վերաքննել հիմնական կանոնագիրն եւ վաւերացնել:

- Հ.Յ.Դ. Խորհուրդի ընտրութիւնը կարեւոր է կուսակցութեան այլեւայլ մարմիններու իրաւասութիւնները [ճշդելու համար]:

- Դ. Ընդհանուր ժողովի կանոնագրին համաձայն ըլլալ- բիւրոյական շրջաններու նոր բաժանում պէտք է:

- Պատասխանատու մարմիններու վերահաստատումը խիստ կարեւոր է: Մնայուն հաշուեքննիչ մարմնի մը պէտքը զգալի է:

- Թուրքիոյ Կեդր. Կոմիտէներու շրջաններուն աշխարհազրականօրէն ճշդումը կարեւոր է:

- Թուրքիոյ վայրերու համար պէտք է գործածել հայերէն]-թուրքերէն կնիքներ:

3.- Դրօշակի հրատարակութեան վայրը պէտք է փոխել:

4.- Դաշնակցութեան տան գնումը «Ժրնեւի» կարեւոր է: Փոխադարձ օգնութեան արկղի մը հաստատումը խիստ փափաքելի է:

Ե. Բանաւոր եւ գրաւոր պրոպականդ

1.- Պաշտօնաթերթ «Դրօշակ» ամէն ամիս անպայման պէտք է հրատարակուի:

2.- Կիսապաշտօնական թերթեր զանազան վայրերու մէջ ունենալ կարեւոր է:

3.- Հրատարակութիւններն ալ կարեւոր է:

Բանաւոր

1.- Պէտք է հաստատել դասընթացքներ պրոպականդիստ ընկերներու:

Բանաւոր եւ գրաւոր պրոպականդ մղել պէտք է ոչ հայախօս հայերու մէջ:

Զ. Ելեւմտացոյց

1.- Դրամական հաշուետուութիւնն իւրաքանչիւր մարմինի կարեւոր է:

2.- Օսմանեան Սահմանադրութեան ընկերակցութեանց յօդուածին տրամադրութեան համաձայն պէտք է գանձել:

Փաստ. 1543-12

Գ 1.- ԹԻՒ 16 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՀԱՐՅԱՐԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ [ԿԵՍԱՐԻԱ]

Ա.- Տնտեսական

1.- Երկրագործութիւն — Երկրի պէտքերուն բաւելու չափ:

Գորգագործութիւն — 130-135000 ոսկիի ապրանք կ'արտածէ. գոյութիւն ունին 5-8000 թէգկեահներ:

Շղարչագործութիւն (եագմա) — կ'արտածէ մօտաւորապէս 30000 ոսկիի ապրանք

Կօշկակարութիւն — կ'արտածէ մօտաւորապէս 8000 ոսկիի ապրանք:

Ապուխտագործութիւն — կ'արտածէ 100000 ոսկիի ապրանք իր մանրամասնութեամբ:

Խէժ (քեթրէ) — կ'արտածէ 30000 ոսկիի ապրանք:

Բորակ (կէօյէրչելէ) — կ'արտածէ 10000 ոսկիի ապրանք. կառավարական մենաշնորհի տակ. ասկէ շատ աւելի կարելի է արտադրել, բայց կառավարութիւնը կ'արգիլէ այս արդիւնաբերութեան վաճառումը ուրիշներուն բացի իրմէ:

Խաղախորդութիւն — կ'արտածէ 20/25000 ոսկիի ապրանք:

Մանօթութիւն

Բորակի եւ խաղախորդութեան արդիւնաբերութիւնները ամբողջութեամբ թուրք ազգաբնակչութեան ձեռքն է: Խէժ եւ երկրագործութիւն հայ եւ թուրք գիւղացիութեան ձեռքն է, մեծ մասը վերջինին. իսկ մնացած արդիւնաբերութիւնները՝ գորգագործութիւն, շղարչագործութիւն, կօշկակարութիւն, ապուխտագործութիւն գրեթէ հայերուն ձեռքն են:

2.- Շղարչի արդիւնաբերութեան համար գոյութիւն ունին 7-8 փոքրիկ գործարաններ. միւս արդիւնաբերութիւնները գործարանական դրութեան մէջ չեն եւ կը բանին պայմանադրական վարձքով (հատի, տողի, գոյգի գլուխ որոշ վարձքով): Այս հաշուով միջին օրավարձն է 8 դր. եւ բանտարներու թիւը կը հասնի մօտաւորապէս 13.500ի:

3.- Բաղդատմամբ նախորդ հինգ տարիներու սովանման սղութեան 1910ի բերքը իր առատութեամբ ամբողջ կեսարիոյ շրջանին համար օրհնութիւն մը եղած է:

4.- Մինչեւ 1910, 5-8 տարիներու յաջորդական երաշտութիւնը փճացուցած է ամբողջ գաւառին հունձքը առաջ բերելով սովանման սղութիւն. անասուններու ընդհանուր ու շարունակական համաճարակ գոյութիւն չէ ունեցած:

5.- Կատարելապէս բացասական հետեւանք. հարուստը — պէտէլով եւ կամ կաշառով կ'ազատէ իր գաւակը օգտուելով գինուորական պաշտօնէութեան զեղծումներէ, իսկ միջակորեարը պէտէլ⁸ տալու պարագային ամբողջ ընտանեկան տնտեսութիւնը քայքայումի կ'ենթարկէ. գինուորագրութիւնը ընդհանրապէս կը ծանրանայ աղքատ ժողովուրդի եւ գիւղացիութեան տնտեսութեան վրայ անպայման, խլելով այս երկու դասակարգին զաւակները իրենց ընտանեկան օճախներէն: Զինուորագրութեան օրէնքներու ներկայ պայմաններովը երիտասարդի գործունէութեան տարիները կը կլանուին պետական ծառայութեան մէջ:

6.- Վճարած ենք 2.488.478 դր. (էմլաք, Թէմէթթու եւ Թարեզ). այս գումարին %75ը գանձուած է %25ը յետմնաց:

7.- Բարելաւուած չէ. մեր վայելածը քաղաքական համեմատական ազատութիւն է միայն. իսկ մեր տնտեսական վիճակը կը մնայ աւելի աննախանձելի դրութեան մէջ քան առաջ. այս վիճակին կ'օգնեն գինուորագրութիւն ու ապրուստի միջոցներու հետզհետէ սղացումը:

8.- Շրջանի ամբողջ բնակչութիւնը ըստ պետական արձանագրութեան կը հասնի 48.391ի, որուն 24.381ը արու եւ 22.030ը էգ. նկատելով որ Նիւֆուսի մէջ չարձանագրուածներ ալ կրնան գտնուիլ, այդ պարագային այս թիւը կրնայ մի քանի հազար աւելնալ:

Բ.— Գաղթը

1.- Պանդխտացող անձերու որոշ թիւ նշանակել դժուար է, բայց եւ այնպէս արտագաղթը համեմատութեամբ ու թերեւս աւելի է ինչ որ էր Սահմանադրութեանէն առաջ. ընտանիքներ թերեւս բացառապէս ներգաղթած լինին. պանդխտացողները կը տեղաւորուին ընդհանրապէս Եգիպտոս եւ Ամերիկա:

2.- Ընտանիքներ վերադարձած չեն. միայն պանդուխտներու փոքրամասնութիւն մը վերադարձած է. բայց անոնցմէ քիչեր հաստատուած եւ շատեր վերստին դարձած են:

8.- Փրկագիրն՝ գինուորակն ծառայութենէ ազատ կացուցելու համար:

Գ.— Հոդային հարց

1.- Մեր շրջանին մէջ բռնատիրուած հողեր, բաղ- դատամբ հայկական նահանգներու, քիչ գոյութիւն ունեցած են. անոնց մէկ մասը Սահմանադրութեան վա- դորդային տիրող ընդհանուր ոգեւորութեան միջոցին ուրեք ուրեք վերստացուած են կալուածատէրերու ուղ- դակի իրենց կալուածներուն մէջ բնակութիւն հաստա- տելով, իսկ մնացած մասը 10-12 տարի [պահանջող] Օրի- նականութեան ձեւ (չէքի գանուկ) առած ըլլալուն՝ ժողովուրդը յուսահատ անոնց վերստացումին՝ բողոք չի բառնար:

2.- Սահմանադրութեան շրջանին նոր բռնատիրում- ներ տեղի ունեցած չեն:

3.- Հողային վէճերու շուրջ ընդհարումներ տեղի ու- նեցած չեն որովհետեւ բռնատիրուած հողերու մասին լուրջ բողոքներ ու պահանջներ տեղի չեն ունենար գիւ- դերու անկազմակերպ վիճակին պատճառով. մինակ շրջականներէն Ռուստիկինի մէջ երբեմն մասնակի ընդ- հարումներ պատահած են շնորհիւ ժողովուրդի խիզա- խութեան, բողոքող ու խորհող անհատներու ներկայու- թեան:

Դ.— Ազգային մշակոյթ

1.- Ունինք 30 դպրոց. անոնցմէ մին բարձրագոյն, մին միջնակարգ եւ մնացեալները քաղաքային ու գիւ- դական նախակրթարաններ. 3000 աշակերտ եւ 135 ու- սուցիչ ուսուցչուհի կը համրուին:

2.- Երեսուն հայաբնակ գիւղեր ունինք. բոլորն ալ ունին իրենց վարժարանները:

3.- Գաւառին բազմամարդ կեդրոններուն մէջ ու- սուցիչներու մեծ մասը դաշնակցական ընկերներ են. կրթական պաշտօնէութեանց մէջ նոյնպէս կը գտնուին ընկերներ. այս պարագան եթէ Դաշնակցութեան ազդե- ցութիւն կարելի է համարել վարժարաններու վրայ, կա- րելի է մէկ միջնակարգ վարժարան եւ 4-5 կարեւոր նա- խակրթարաններ Դաշնակցութեան ազդեցութեան տակ համարել:

- 4.- Երեսուն առ հարիւր:
- 5.- Տասը առ հարիւր:
- 6.- Տասը առ հարիւր:

7.- [Դաշնակցութեան շարքերը մտնելու տրամադիր ուսանողներ] Պողոս Սվաճեան, Անդրանիկ Ղազէլեան, Օննիկ Պարզճեան, Սարգիս Կիրիւնլեան, Վահան Լե- ւոնեան,— կեսարացի

- ՅԿԲ. Նշանեան, Կրպ. Գարողյանեան,— կէրմերցի
- Բարսեղ Տատուրեան,— թայասցի
- Տիգրան Լաֆքեան, Արամ Դաւիթեան,— ազսէրայցի
- Վահան Քիւրճեան, Կորիւն Կիրեղեան,— Սվազցի

Հմայեակ Յակոբեան, Կրպ. Աւագեան, Գէորգ Աւագ- եան,— գաղատիացի

Ներսէս Տէր Գաբրիէլեան,— տիգրանակերտցի:

8.- Ութը գրադարաններ ունինք, չորսը տեղական չորսը գիւղական

Ը.— Միջազգային յարաբերութիւններ

1-2.- Սահմանադրութենէն առաջ թուրք ազգաբնա- կութեան հետ մեր ունեցած յարաբերութիւնները միշտ լարուած էին. իսկ Սահմանադրութենէն վերջ ձեւակեր- պական ու երեւութային լաւ յարաբերութիւն մը ստեղծուած է, որ դարձեալ լարուած է Ատանայական եղեռնի ատեն. հիմակ յարաբերութիւնները դարձեալ կը մնան երեւութապէս լաւ. մեր շրջանի թուրք տար- րին համար այս երեւութական լաւ յարաբերութիւնը կախում ունի, գիտակցութենէ աւելի, կառավարու- թեան գլուխը գտնուող բարեխիղճ պաշտօնեաներու գոյութենէն ու անոնց ազդած երկիւղէն: Թուրք տարրը այն է քաղաքական կեանքի մէջ ինչ որ է ջերմաչափը ջերմութեան տարբեր աստիճաններու մէջ:

Զ.— Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնները

1.- Յարգալից եւ դիւանագիտական յարաբերութիւն ցոյց կու տան:

2.- Տեղական իշխանութիւններու հետ համաձայնու- թեամբ կարգադրելիք ոեւէ գործ ցարդ չէ ունեցած:

3.- Վարչական մաքրագործումը լրիւ կատարուած չէ. իր(ենց) ինքնութեամբը անորոշ տարրեր պաշտօ- նէութեան մէջ կը մնան իբրեւ սահմանադրասէր պաշ- տօնեաներ, իրենց ինքնութեամբը որոշ վտանգաւոր տարրեր ալ կը մնան պաշտօնի վրայ:

Դատական պաշտօնէութիւնը կարօտ է հիմնական մաքրագործման, որովհետեւ կը պահեն դեռ իրենց նախկին կազմը, ըստ որում այս շրջանի մէջ դատական գործերը տարիներէ ի վեր դիզուած ու կարող ու բարե- խիղճ պաշտօնէից պակասը դատարանները լաբիւրին- դոսներու վերածած են:

4.- Անբարեխիղճ, յետադիմական ու անձեռնհաս պաշտօնեաներու շարքին մէջ կը գտնուին.

Պէլէտիէի մէջ. նախագահ Կեսարիոյ մէպուս էօմէ- րին եղբայր Մէհմէտ. անձեռնհաս: Անդամ Բարսեղ Քիլիմլեան կեսարացի. անբարեխիղճ ու յետադիմա- կան:

Ելեւմտականի մէջ. Մուհամմէտ Ալի Բիզա գաղա- տիացի, սոսկալի յետադիմական ու անյազ կաշառա- կեր:

Իրաւանց դատարանի մէջ (հուգուգ). Անդամ ՅԿԲ. Ալլահվէրդիին, կեսարացի. անբարեխիղճ ու յետադի- մական:

Նիւֆուսի մէջ. պաշտօնեայ Սալիհ Սամի կեսարացի անբարեխիղճ ու կաշառակեր:

Փանտարմորիի մէջ. Յիսնապետ Ըսմէթ ----- հա- յատեաց, անբարեխիղճ, յետադիմական ու անբարոյա- կան:

Պատօ. դատ. մէջ. Նախագահ Թէվֆիք ----- որ այս օրերս Պիթլիսի կեդրոնի ընդհ. դատախազ անուանուե- ցաւ. երկամեայ պաշտօնավարութեան միջոցին հաս- տատուած է թէ կեղծաւոր, կաշառակեր, հայատեաց յե- տաշրջական մըն է. կը ցաւինք որ հայկական գաւառ Պիթլիս գնաց տեղաւորուելու:

Ասոնք քաղաքին մէջ կը գտնուին. շրջականներն ալ գոյութիւն ունին:

5.- Մենք չենք գիտեր բարեխիղճ պաշտօնեաներու անուններ բացի Կեսարիոյ նախորդ միւլթէսարրըֆ Մուամմէր պէյէն, որ վերջերս Ատանայի կուսակալ ան- անուանուեցաւ եւ որ իր թերութիւններուն հետ մեր ճանչ- ցած միակ բարեխիղճ պաշտօնեան է. հոս տեղին է յիշել դարձեալ թուրք պաշտօնէին համար ընդհանրապէս քաղաքական կեանքի մէջ բարեխիղճութիւն կամ անբա- րեխիղճութիւն կամ յետադիմականութիւն ու սահմա- նադրասիրութիւն, այն է ինչ որ է ջերմաչափը ջերմու- թեան տարբեր աստիճաններու մէջ:

Ը.— Միւս կուսակցութիւնները

1.- Մեր շրջանին մէջ գոյութիւն ունին իբրեւ քաղա- քական կուսակցութիւններ՝ Հնչակեան, Բարեգործա- կան (եթէ կարելի է համարել), իթթիհատական: Հնչակ- եանութիւնը շնորհիւ իր հետզհետէ եկած գործիչներու առաւ- փախաւորութեան, տգիտութեան, անխոհեմ խի- զախ քայլերուն, ու իրենց քննադատելի բարոյականով վարկաբեկուած վիճակին մէջ են: Բարեգործականները նոր կազմուած են, ունին պուրժուա ու պուրժուազա- միտ հետեւողներ. իսկ իթթիհատականները փոքր մի կազմակերպութեան մէջ ունին ժողովուրդի զանազան խաւերէ խայտաբղէտութիւն մը: Ժողովուրդի մէջ իթ- թիհատը անկեղծ յարգանք չի վայելել. իսկ հայերէն 5-10 հոգի կը մասնակցին:

9.- Արդեօ՞ք բալագան, անկարգ, անլուրջ իմաստով:

2. Հնչակեանները կը համրուին մօտաւորապէս 100 հոգի

Բարեգործականները կը համրուին 100-120 հոգի

Իթթիհատականները -----

3.- Հնչակեան կազմին գլուխը գտնուող մէկ երկու անձեր շահագործող վտանգաւոր ոյժեր են եւ սկզբունք չունին, իսկ հետեւողները կը բաղկանան ընդհանրապէս սոգէտ բալագարներէ՞: Իթթիհատի մէջ կը միանան զա- նազան դասակարգի մարդիկ որոնց մեծ մասը իթթի- հատէն բան մը չեն հասկնար եւ իրենց դիրքը ու վերա- բերմունքը կենցաղագիտական է դէպի կազմակերպու- թիւն:

4.- Հնչակեանները կը բաղկանան մեծ մասամբ գոր- ծաւորներէ ու արհեստաւորներէ, կը գտնուին իրենց մէջ շատ քիչ թիւով խանութպաններ եւ մի քանի ուսու- ցիչներ:

Իթթիհատի մէջ կը գտնուին հարուստներ, մեծ ու փոքր վաճառականներ, կառավարական ու կրթական պաշտօնեաներ:

5.- Հնչակեանութեան հետ մեր յարաբերութիւնները մնայուն բնոյթ չեն ունեցած շնորհիւ իրենց բարոյական ու մտաւորական վիճակին. ազգային մի քանի հարցե- րուն շուրջը ժամանակաւոր կերպով զանոնք մեզի կա- պած ենք. «բաց-գոց» ի նման ուրիշ իրենց կողմէ ան- կեղծ վերաբերմունք չտեսնուելուն պատճառաւ յարա- բերութիւնները խզուած են:

Իթթիհատի հետ պաշտօնական յարաբերութիւններ չենք ունեցած. միմիայն անկեղծ իթթիհատական նա- խորդ միւլթէսարրըֆ Մուամմէր պէյի հետ մեր յարաբե- րութիւնները մինչեւ վերջը եղած են խիստ բարեկամա- կան ու սիրալիր:

6.- Հնչակեանութեան հետ Ատանայական եղեռնի պատճառած տագնապներու առթիւ ինքնապաշտպա- նութեան գետնի վրայ համերաշխութիւն կայացած է: Իթթիհատի հետ ոեւէ ինչորոյ շուրջը համերաշխ գոր- ծակցութիւն ստեղծելու առիթ չէ ներկայացած:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐ-ՍԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

27 Յուլիս 911

ԷՎԵՐԵԿ

Գ 2.- ՏԵՂԵԿԱԳՐԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՂՐԿՈՒԱԾ ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ա.- Տնտեսական

1. Հարց.— Երկրագործութիւնը ժողովուրդի 3/4 մասի գրադումն է, թէպէտ կը մնայ իր նախնական վիճակին մէջ. հողերու մեծամասնութիւնը հայերու ձեռքն է: Վերջերս Մերսին եւ էրէյլի կը ղրկուին բաւականաչափ հաճար, գարի եւ լուբիա: Վաճառականական ըստ բաւականի գործառնութիւններ կ'ըլլան Մերսինի, Պոլսոյ եւ Կեսարիոյ հետ. կ'արտածուի նաեւ քեթրէ, ճեհրի եւ բուրդ. արհեստները իրենց նախնական վիճակի մէջ են (քեթրէ մօտ 12500 ոսկի):

2. Հարց.— Ունինք կատարելագործեալ մեքենաներով մի գուլպայի գործարան (գործարանատէր Յ. Չագմազեան). իր գործառնութիւնները օրէցօր աւելնալու վրայ են, Մերսինի, Պոլսոյ, Իզմիրի եւ Կեսարիոյ հետ: 3 զրշ. միջին օրավարձով կ'աշխատին 20 բանուորուհիներ:

3. Հարց.— Անճրեւներու առատութեան պատճառաւ շատ առատ գարի ունեցանք, 1910ը բարիք մեղաւ քանի մը տարիներէ ի վեր հացի սղութենէ տանջուող ժողովրդին:

4. Հարց.— 910-911ին երաշտի վնաս չկայ, բայց այս տարուան երկարատեւ (4 ամիս) եւ խստաշունչ ձմեռայ պատճառաւ համաճարակ հիւանդութիւնը շատ մեծ վնաս առթած է ոչխարներու, կոտորելով անոնցմէ 75%ը. կառավարութեան կողմէ դարմանումի կամ զգուշական միջոցներու ոչ մէկ ձեռնարկ:

5. Հարց.— Սահմանադրութենէն առաջ էվէրէկ եւ Ֆենեսէ գինուորական տուրք կը վճարէր 1700 օսմ. ոսկի. այժմ հայերու գինուորագրութենէ ի վեր 1280 ոսկի գինուորական պէտէլ տրուած է եւ այս տնտեսապէս օգտակար եղած է աղքատ դասակարգին:

6. Հարց.— 910-911ին, 20425 ոսկի տուրք վճարուած է այս կերպով:

7. Հարց.— Մալիյէ պէտէլի 1.024.161, Աղնամ 317315 զրշ., Պէտէլը աւգայի 128250, օրման հասըլաթը 845, թալմատքէր մուհաքէմէ խարճը 22.329.75 զրշ. նուֆուս հասըլաթը 113.318 զրշ., 4842, մուշերեյէ 4842, ֆէրազ վէ ինթիգալ խարճը 328456.25 զրշ., գայտերէ 1453.50 քիեհազ պէտէլի 2200, հիճազ եոլու հասըլաթը 20413, Շամ մէքթէպի 985, միւթէֆէրիքա 21941, էմլաք վէ արագի 263850, թէմէթթու 28750 թարքի պէտէլը հագտիսի 161283. համագումար 20425 ոսկի:

8. Հարց.— 12876 է տեղուայ եւ շրջանի հայ բնակչու-

թեան թիւը որուն 8886ը արական իսկ մնացեալ՝ 8010ը իգական սեռին կը պատկանին:

Բ.— Գաղթ

1. Հարց.— Բնակչութեան 30%-ը գաղթած է Ամերիկա, Եգիպտոս, Պուրդարիա եւ այլուր, տնտեսական պատճառներու համար:

2. Հարց.— Օսմ. սահմանադրութեան հռչակումէն ասդին 5%-ը դէպի երկիր վերադարձած է:

3. 4. 5. Հարց.— շրջանիս մէջ չունինք հայ պանդուխտներ:

Գ.— Հողային հարց

Մեր շրջանին մէջ չունինք:

Դ.— Ազգային մշակոյթ

2. Հարց.— Մեր շրջանին 14 հայաբնակ գիւղեր ունինք: 1. Հարց.— Տեսնել Կեսարիոյ կոմիտէի պատասխանաբրին մէջ:

3. Հարց.— > > > >

4. Ուսուցիչներու 30%ը դաշնակցական:

5. Թաղականութեան եւ հոգաբարձութեան անդամներու մէջ համակիրներ ունինք:

6. -----

7. Մեր ուսումնարանի շրջանաւարտներէն Յրթ. Մէլէքեան, Մերճան Մանուկեան եւ Արմենակ Թեփրեան մտած են գործօն անդամներու շարքին մէջ:

8 Հարց.— Երկու գրադարան ունինք՝ մին էվէրէկի եւ միւսը Ֆենեսէի մէջ:

Ե.— Միջացեղային յարաբերութիւններ

1. 2. Հարց.— Նախկին ռեժիմէն տարբերութիւն չունին՝ թուրքերը համակերպած՝ բայց սրտով սահմանադրասէր չեն:

Զ.— Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնները

1. Հարց.— լաւ: 2. ----- 3. Հարց.— Վարչական բարեփոխումը կատարուած է

եւ կը կատարուի ցարդ բայց հետեւեալ բարեփոխումները անհրաժեշտ հարկ են.—

Ա. տեղակալը թէեւ ոչ վնասակար բայց բոլորովին թոյլ, տգէտ եւ անգործունեայ մէկն է, ազգաւ յոյն: Իտարէ մէծլիսին փափաքելի է որ փոխուի իւր կազմով:

4. Հարց.— Ա. Ղարապէտգատէ Տէրվիշ.— Ինչպէս ծանօթ է մամուլէն հայ պատուոյ թշնամին եւ առեւանգիչ, արբեցող. հակառակ մեր հետապնդումներուն նա կը մնայ դեռ պաշտօնի վրայ. դատարանը անպարտ հռչակած է զայն թահսիլտարէն:

Բ. Հաճի Ապտուլլահ թահսիլտար, ծեր, խարդախ, շողոքորթ իր կողման բացարձակապէս անյարմար Յնոց ծերուկ մը:

Մուհապէմէ տաիթէսի

ա.- Արշակ էֆ. Սինանեան. բոլորովին անտեղեակ իր պաշտօնին եւ միանգամայն անկարող:

բ.- Պին պաշը գատէ Օսման էֆ.— Նախկին իսթիպտայի մնացորդներէն, գործին անտեղեակ յետաշրջական մը:

Պէլէտիյէ տաիթէսի

ա.- Պէլէտիյէ գալֆասը Մ. Գրիգոր Կէլտեան.— Կաշառակեր, պատուհասը աղքատ դասակարգին:

բ. Պէլէտիյէ ռէխի Յակոբ Մէլէքեան.— Կատարեալ էնթրիքան մը, քիչ թէ շատ գիտակ խոզերէն, առաջին անգամ վտարուած մուհաքէմէյէն, կաշառակերութեան պատճառաւ:

գ. Ազաներէն Միհրան Քէօլէեան.— Բոլոր աղտոտութեանց մարմնացումը, թշնամի դպրոցներու եւ յառաջդիմութեան եւ պատճառ ժողովրդային երկպառակութեան, մասնաւոր թշնամի Դաշնակցութեան:

դ. Տոթթ. Քէլէչեան, կաշառակեր, բոլորովին անտեղեակ իր պաշտօնին:

Տրդ յօդուած. թէպէտ ճշմարիտ Սահմանադրութեան գիտակից պաշտօնեայ չունինք, բայց ակամայ կը ջանան յարգել Սահմանադրական կարգերը. պատեհապաշտ մարդիկներ են:

Է.— Միւս կուսակցութիւնները

1. 2. Հարց.— Կայ Ս. Դ. Հնչ. մի տկար կազմակերպութիւն՝ որոյ հանդէպ հասարակութիւնը տաք վերաբերում մը չունի. նա կը բաղկանայ իր շրջաններով 40-50 անդամներէ՝ միջին դասակարգէ:

3. Չկան: 4. -----

5. Հարց.— Մեր յարաբերութիւնները լաւ են:

6. Հարց.— Երկար ատենէ ի վեր զբաղեցնող Ամատուի խնդրի կարգադրման, էվէրէկի թաղական ընտրութեան եւ առեւանգուած հայ կնոջ դատի պաշտպանութեան համար համաձայնած ենք Ս. Դ. Հնչ. ի հետ:

7. Ամերիկայի մէջ ունինք Հ.Յ.Դ. էվէրէկ-Ֆենէի գրադարանաց ընկերութիւն մը՝ որը մինչեւ այսօր իր նիւթական եւ բարոյական կարեւոր օժանդակութիւնը բերած է մեզ:

8.- Չունինք:

Տեղուայ Իթթիհատին մանրամասնութիւնները

Անդամներու թիւը մօտաւորապէս 230	
Ասոնցմէ	% 12ը հայ,
	% 3ը յոյն,
խլամ	% 10ը պաշտօնեայ
>	% 10ը լուսամիտ
>	% 10ը հոճա
>	% 20ը էշրաֆ
>	% 35ը զանազան դասակարգերու պատկանեալ

Քրիստոնեաներուն անդամակցութիւնը անուանական, նոյնիսկ իսլամներունը: Կանոնաւոր վճարում եւ պիւտճէ չունի. իսլամ պաշտօնեաներ, աջակցութեամբ տեղացիներու: Մի քանի իսլամ մղում տալու թէեւ կ'աշխատին բայց դժբախտաբար կը ձախողին. ներկայ վիճակը այսպէս է, վաղուանը չի գիտցուիր:

Փաստ. 1543-10

Գ 3.- ՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻԻ 16Ի

Ա.- Տնտեսական

- 1.- Մեր շրջանի արդիւնաբերութիւնն է երկրագործութիւն եւ վաճառականութիւն:
- 2.- Մեր շրջանի մէջ կան ալիւրի ֆապրիքաներ, որոնց մէջ կան միջին հաշուով տասը բանուոր. իւրաքանչիւրին օրավարձը հինգ դահեկան:
- 3.- 1910ի բերքը գոհացուցիչ էր:
- 4.- 1911ի ձմեռուան ձիւնի սաստկութենէն շատ մը անասուններ վնասուած են:
- 5.- Զինուորագրութեան արդիւնքը եղած է խօսքի ազատութիւն եւ ոչ ուրիշ բան:
- 6.- Տեղւոյ հայ ժողովուրդը մօտաւորապէս ունի երեսուն եւ հինգ հազար դահ. տուրք 910 տարուայ մնացորդ հազիւ 3000:
- 7.- Սահմանադրութեան հռչակումէն ասդին առ երեսս թէեւ բարեկամ են, սակայն ներքնապէս միշտ ոխերիմ են քրիստոնեայ տարրին հանդէպ:
- 8.- Մօտաւորապէս մեր շրջանի հայ բնակչութիւնը երեք հարիւր տունի կը հասնի:

Բ.- Գաղթ (արտագաղթ եւ ներգաղթ)

- 1.- Անձ մը միայն գաղթած է Ադեքսանդրիա՝ Գրիգոր Պասմաճեան:
- 2.- Եւ ոչ մէկը վերադարձած:
- 3.- Մօտաւորապէս տասը տուն հայ պանդուխտներ կան Մարզուանէն, Կեսարիայէն, Նիկսարէն եւ Ամասիայէն ու Հաճի գիւղէն:
- 4.- Այս պանդուխտներու զբաղումներն են գրագրութիւն, արհեստաւոր եւ բանուոր:
- 5.- Վերջին տարին աւելցած է պանդուխտներու թիւը:

Գ.- Հողային հարցեր

- 1.- Հայոց հին գերեզմանատան մէկ մասը բռնատիրուած է թուրքի մը կողմէ եւ չէ վերադարձուցած Սահմանադրութենէն վերջ:
- 2.- Բռնատիրութեամբ համար ունէ ընդհարումներ տեղի ունեցած չէ:
- 3.- Հողային վէճ չկայ բացի վերոգրեալէն:

Դ.- Ազգային մշակութիւն

Ունինք եօթը վարժարաններ. Ա. միջնակարգ 19 աշակերտներով, Բ. եւ Գ. նախակրթարան 100 աշակերտներով, Դ. եւ Ե. աղջկանց նախակրթարան 50 աշակերտներով, Զ. եւ Է. մանկապարտէզ ութսուն աշակերտներով, Ը ուսուցիչ, Թ ուսուցչուհի, 2 օգնական:

- 2.- Ոչ հայ գիւղ ունինք եւ ոչ ալ վարժարան:
- 3.- Դաշնակցութեան ազդեցութեամբ ունէ դպրոց չկայ:
- 4.- Ուսուցիչներէն մէկը դաշնակցական եւ միւսը համակիր. ոչ ուրիշներ:
- 5.- Ազգային վարչութեան անդամներէն ոչ մէկը Դաշնակցութեան կը պատկանի:
- 6.- Համալսարան եւ բարձրագոյն դպրոց չկայ:
- 7.- Ուսանողներու մէջ դեռ ունէ մէկը չկայ:
- 8.- Երկու գրադարան. ոչ մէկը գիւղական:

Ե.- Միջացեղային յարաբերութիւններ

- 1.- Օտար ազգերու հետ միշտ փոխհարաբերութիւն կը վարուինք:
- 2.- Սահմանադրութենէ ասդին թուրք եւ հայերու մէջ բաւական տարբերութիւն կայ:

Զ.- Դաշնակցութիւնը եւ տեղական իշխանութիւնը

- 1.- Հոս տեղական իշխանութիւնը մեզմէ լուր չունի:
- 2.- -----
- 3.- Մեր վարչական մարքագործումը լրիւ կատարուած է: Բաւական բաղձանքներ ունինք, սակայն մեր թուին նըլազութեամբը տակաւին չենք կրնար ձեռնարկել:
- 4 եւ 5.- Ունէ պաշտօնեայի համար որոշ գաղափար մը չունինք. ամէնքն ալ առ երես սահմանադրական եւ ներքնապէս հակասահմանադրական են:

Է.- Միւս կուսակցութիւնները

- 1.- Բացի մեզմէ ուրիշ կուսակցութիւններ չկան:
- 2.- Դաշնակցութեան անդամներուն թիւն է տասը:
- 3.- Ասոնց մէջ յետադիմական եւ Դաշնակցութենէ արտաքսուող ունէ մէկը չկայ:
- 4.- Վաճառականներէ եւ արհեստաւորներէ կը բաղկանայ:
- 5.- Հոս Իթթիհատութիւն կայ սակայն մեռեալ վիճակի մէջ ըլլալուն ունէ չփոխ մը չունինք:
- 6.- -----
- 7.- Գաղթային մարմինները կ'ուզեն հնչակ. կուսակ. յառաջ տանիլ, սակայն ոչինչ, անկարող են:
- 8.- Օտար արհեստակցական միութիւններ չկան:

Հ. Թ. Դաշնակցութեան Շաւարշանի խումբին ներկայացուցիչ վասն Խիզախի խմբապետ ԿԱՅՄԱԿ

1911 Յուլիս 12
Շաւարշան

IV.- ՈՍԿԵՀԱՆՔ – ԻԶՄԻՐԻ ՇՐՋԱՆ

Փաստ. 1543-14

Ա.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԻԶՄԻՐԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ

Հոկտ. 1909 – Յուլիս 1911

Յաւալի է որ երկամեայ վերջացող այս շրջանը՝ բարոյական-նիւթական արդիւնքի տեսակէտով՝ մեծ բան մը եղած չէ, առանց սակայն ապագային համար յուսալից ըլլալէ դադրելու:

Իրաց այս վիճակը վերագրելի է մասնաւորաբար մնայուն գործիչ ընկերոջ մը բացակայութեան եւ հայկական հասարակական կեանքին մէջ պահ մը գոյութիւն առած եւ ամուլ պայքար մը ստեղծած հակադաշնակցական զանազան հոսանքներու: Պէտք է միեւնոյն ժամանակ խոստովանիլ նաեւ Կ. Կ.ի անդամներու ալ՝ իրենց անձնական զբաղումներուն պատճառով՝ այս մասին պատասխանատուութեան որոշ բաժին մը ունենալը:

Ա.- Կազմութիւն Կեդր. Կոմիտէի.— Կ.Կ.ը միշտ պահած է իր հինգ անդամի ամբողջութիւնը, հետզհետէ հրաժարող մէկ քանիններուն տեղ, կոչելով ընտրութեան պահուն առաւելագոյն քուէ ստացողները: Այժմ ալ ունի իր օրինական թիւը:

Բ.- Իզմիր քաղաքի կազմ.— Մէկ քանի ինքնաբեր մեկուսացումներէ դուրս, բոլոր ընկերները՝ միեւնոյն խանդով՝ կը շարունակեն փարած մնալ Դաշնակցութեան ծրագրին եւ անոր աշխարհահայեացքը միայն եւ միայն կը նկատեն հայութեան փրկութեան տախտակը: Աւելորդ է ըսել թէ այս մասին պահանջուելիք ամէն գոհողութիւն, անկասկած, հաստատական եւ գործնական արդիւնք պիտի ունենայ: Վկայ՝ ամիսը անգամ մը ընկերներու ընտրութեամբ պաշտօնի անցնող տեղական մարմինները իրենց կարողութեան չափով ու տարողութեամբ օգտակար ըլլալէ դադրած չեն կազմակերպութեանս, բնականաբար օրուան հոսանքներուն համաձայն առաւել կամ նուազ արդիւնք ցոյց տալով:

Գ.- Շրջաններ.— Վերջացող երկամեայ շրջանը այդ կազմերուն համար եղած է գոյաման շրջանը: Հինէն եղածներուն վրայ բարդուած նորերով, 32ի հասնող մեր շրջաններէն 5-ը կապուած են արդէն Կ. Պոլսոյ Կ.Կ.-ին հետ, 4-5ը գոյութեան նշաններ իսկ ցոյց չեն տար, իսկ մնացեալները կը շարունակեն սեր-

տիւ փարած մնալ կազմակերպութեան: Ստոյգ է թէ ստուար մեծամասնութիւն կազմող թուրք եւ յոյն տարրերուն մէջ, իբր ովասիս իր գոյութիւնը պահող, մտաւոր եւ բարոյական զարգացումէ զուրկ հայութենէ մը աւելի բան մը յուսալի աւելորդ էր: Այսուհանդերձ մեր գաւառին լաւագոյն ու թարմ ուժերը կը կազմեն անոնք, եւ յաճախակի իրենց եղած այցելութիւններով կարելի է զանոնք վերածել կենսունակ եւ բարոյապէս ու նիւթապէս արդիւնաւոր շրջաններու:

Դ.- Համակիր շրջանակներ.— Տրուած պայմաններուն հետեւանքով, բազմաթիւ լքումներն ալ ի նկատի առնելով, թէ հոս եւ թէ գաւառը, եթէ ոչ այնքան լայն բայց գիտակից համակիրներու շրջանակներ միշտ կը պահեն իրենց գոյութիւնը, նոյնիսկ ամենադժուարին պարագաներուն օգտակար հանդիսանալով կազմակերպութեան:

Ե.- Կարմիր խաչ.— Ստեղծուած պարագաներուն բերմամբ խոհեմութիւն սեպած ենք, ժամանակաւոր կերպով, դադրեցնել անոնց գործունէութիւնը:

Զ.- Յարաբերութիւններ.—

- I Բիւրոններուն հետ.— Կ. Կոմիտէս կարելիին սահմանին մէջ աշխատած է շարունակական եւ կանոնաւոր յարաբերութիւններ պահել անոնց հետ:
- II Շրջաններուն հետ.— Նոյնպէս:
- III Ազգ. շրջանակներուն հետ.— Մինչեւ անցեալ տարի Մարտ, անուղղակի կերպով, այդ շրջանակները եղած են մեր ազդեցութեան տակ եւ քալած մեր գծած կամ թելադրած ուղղութեամբ: Ընդհատուած յարաբերութիւնները վերջերս սկսած են դարձեալ բարուքիլ եւ յուսալի է որ մօտ ատենէն, լայն կերպով, կազմակերպական տեսակէտները ներմուծուած տեսնենք վարչական այդ մեքենային մէջ: Գէթ զայս կ'ապացուցեն վերջերս տեղի ունեցած իրադարձութիւնները:
- III Իթթիհատի հետ.— Սիրալիք եղած են միշտ մեր յարաբերութիւնները, բայց ոչ՝ շարունակական, հակա-

ուակ երկուստեք կանոնաւոր նիստեր ունենալու մասին յայտնուած փափաքին:

IV Կառավարութեան հետ.— Ներկայ վալի Նազրմ փաշայի գալուստէն ի վեր, ընդհատած ենք մեր յարաբերութիւնները, սակայն անոնք կը շարունակեն միշտ զմեզ հրաւիրել մասնակցելու հանդէսներու եւ կատարելիք հանգանակութիւններուն յանձնաժողովներու մասնակցելու:

Է- Հաշիւներ.— Ընկեր Ֆարհատին² յանձնուած են անոնք: Անոնց արդիւնքը մեծ բան մը եղած չէ, մանաւանդ 19 ամիսէ ի վեր տիրող կեանքի սղութեան պատճառով:

10.- Ոսկեհանք-Իզմիրի պատգամաւորը, որ խորհրդակցական ծայրով մասնակցեցաւ Գ.Յ.Դ. Վեցերորդ Ընդի. ժողովին:

Այս հակիրճ տեղեկագիրը կը խօսի միայն Կ. Կոմիտէիս գործունէութեան ընդհանուր գիծերուն մասին. անոնցմէ դուրս ունեցած ենք նաեւ գործունէութեան զանազան շրջանակներ ալ, խիստ օգտակար կերպով, միշտ իբր հիմ ունենալով կազմակերպութեանս աշխարհահայեացքը:

Ապագային համար մեր ունենալիք գործունէութեան եւ բռնելիք թաքթիքին մասին ընկեր Սարրեանը¹⁰ բերանացի պիտի խօսի Ընդհ. ժողովիդ: Աստուց գործադրութիւնը բնականաբար կախում պիտի ունենայ հոդ տրուելիք որոշումներէն եւ գծուելիք թաքթիքէն:

Յարգանքներով
ԱՆԴԱՄՔ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ

Փաստ. 1543-23

Բ.— ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1.— Միութեան եւ Յառաջդիմութեան կոմիտէն (Իթիֆհատ վէ Թերաքքը)

Պ(ատասխան).— Միութեան եւ յառաջդիմութեան կոմիտէն ինչ չափով որ յարգած է իր համաձայնութեան պայմանները եւ խոստումները, նոյն չափով պահել յարաբերութիւնները ըստ առաջնոյն, սպասելով դէպքերու բերումին ըստ այնմ գործակցելու եւ կամ ուղղութիւն գծելու նոյն կոմիտէին հանդէպ:

2.— Միւս քաղաքական կուսակցութիւնները

Պ.— Մեր ծրագրին սկզբունքներուն մօտիկ բոլոր կազմակերպութիւններու հետ սերտ յարաբերութիւն պահել, միեւնոյն ժամանակ ոյժ տալ յարատեւ գոյութեանը միջկուսակցական ժողովի մը:

3.— Ոչ-հայ Ազգ. կուսակցութիւնները (Ասորի, եգիպտի, յուն, չեքքէզ, քիւրտ եւ այլն)

Պ.— Եթէ կան ուրիշ ազգերու մէջ խմբակցութիւններ՝ անոնց հետ յարաբերութիւն մշակել, եւ ոյժ տալ միջցեղային համերաշխութեան ամրապնդման եւ եթէ գոյութիւն չունին խմբակցութիւններ՝ աշխատիլ կազմակերպելու համար զանոնք մեր ծրագրին համաձայն ուղղութիւնով:

2.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ա) Հողային հարցը (բռնատիրուած հողեր, իսլամ գաղթականներու գրաւած հողեր, անհող եւ սակաւահող գիւղացիներուն հողի բաշխում):

Պ.— Նկատելով որ բռնատիրուած հողերու խնդիրը բոլոր ազգերու երկրագործ դասակարգին, մանաւանդ հայ ազգին համար կենսական մի հարց է, աշխատիլ աւելի ուժգին թափով եւ նախկին ուղղութիւնով հետապնդել խնդիրը, նոյնպէս նկատելով որ Թուրքիան գերազանցապէս երկրագործ(ական) երկիր մ'է, ուստի եւ շատ մը աշխատաւոր ձեռքերու անհող լլլալը եւ շատ մը հողերու ալ անմշակ մնալը մեծապէս կը վնասէ թէ ժողովուրդին տնտեսապէս բարգաւաճման եւ թէ պետութեան հասոյթներուն, ուստի եւ խորհրդարանի եւ մամուլի միջոցաւ ամէն ջանք թափել մասնաւոր օրէնքի մը գոյութեանը այդ ցաւի վերացումին համար:

բ) Ապահովութեան խնդիրը հայաբնակ գաւառներու մէջ

Պ.— Նկատելով որ սահմանադրութեան ամենանուրի-

րական սկզբունքներէն պատուի, գոյքի եւ անձի ապահովութիւնը չյարգուելէն զատ սահմանադրութենէն ասդին երեք տարուան ժամանակամիջոցին «սխիթեմաթիկ» կերպով քանի մը հարիւր հայեր մորթուած եւ ոճրագործներուն մեծամասնութիւնը գրեթէ անպատիժ է մնացած ցայսօր, եւ այս՝ մասնաւորապէս հայաբնակ գաւառներու մէջ, ուստի եւ եթէ կառավարութիւնը իր ոյժով անկարող է ապահովութիւնը հաստատել, աջակցիլ կառավարութեան անդորրութիւնը եւ ապահովութիւնը հաստատելու սոյն վայրերուն մէջ:

գ) Նահանգային ինքնավարութիւնը եւ կամ իրաւունքներու ընդլայնումը

Պ.— Հիմ ունենալով Դաշնակցութեան վերջին պլատֆորմը, ոյժ տալ խորհրդարանին մէջ եւ խորհրդարանէն դուրս մամուլի եւ այլ միջոցներով իրագործմանը նահանգային ինքնավարութեան, եւ ատոր իրականացումին համար օրէնքներու հաստատման:

դ) Հարկային սիստեմի բարեփոխումը (Աշարի խափանումը, Յառաջատուական տուրքի հաստատում եւ այլն)

Պ.— Նոյնպէս հիմ ունենալով Դաշնակցութեան վերջին պլատֆորմը խորհրդարանի դաշնակցական պատգամաւորներու եւ մամուլի միջոցաւ ջանք չինսայել ներկայ հարկային սիստեմի բարեփոխման, մանաւանդ աշարի բարձման եւ աղնամի տուրքին նուազեցման, ինչպէս նաեւ յառաջատուական տուրքի հաստատումին եւ, վերջապէս, անուղղակի հարկերու վերացման:

ե) Հաղորդակցութեան ճամբաները հայկ. նահանգներու մէջ (խճուղի, երկաթուղի)

Պ.— Երկրի մը յառաջդիմութեան առաջնակարգ ազդակներէն մին ալ հաղորդակցութեան արագութիւնը լլլալով, նոյնպէս մեծ օգտակարութիւն ունի ապահովութեան համար, ուստի ծայր աստիճան աշխատիլ ճամբաներու շինութեան, թէ՛ երկաթուղի եւ թէ՛ խճուղի:

զ) Տնտեսական բարգաւաճման միջոցներ (մանր եւ աժան վարկի ընկ.ներ, երկրագործ. գրամատուներ, գործակցական ընկերութիւններ)

Պ.— Դաշնակցական մարմիններու եւ ընկերներու միջոցաւ աշխատիլ կազմակերպելու արհեստակցական եւ քոռփերաթիւ եւ աժան վարկի ընկերութիւններ եւ միութիւններ, խորհրդարանի մէջ ոյժ տալ օրէնքի մը

հաստատմանը որ դիւրութիւն տայ այդպիսի ընկերութիւններու կազմակերպմանը:

է) Մշակութային ինքնավարութիւն թուրքիոյ բաղկացուցիչ ազգերուն (կրթական խնդիր, բարեգործական հաստատութիւններ եւ այլն)

Պ.— Բացարձակապէս հակառակիլ կառավարական ոեւէ միջամտութեան եւ ոտնձգութեան ազգերու ներքին ինքնավարութեան դէմ եւ աշխատիլ ալ աւելի ընդարձակմանը իրենց ունեցած իրաւունքներուն:

3.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ա) Մեր մասնակցութեան եղանակը ազգ. մշակութային հաստատութիւններուն

Պ.— Դաշնակցութիւնը լինելով սոցիալ յեղ. կուսակցութիւն, հետեւաբար պարտաւոր ըլլալով իր ուժերուն մեծ մասը կեդրոնացնելու աշխատաւոր դասակարգերու քաղաքացիական դաստիարակութեան, ուստի եւ Դաշնակցութիւնը ոչ մէկ պարագայի իսկ պաշտօնապէս չմասնակցի ազգ. կուլտուրական հաստատութիւններուն, այլ Եւրոպ. Ընդհանուր Ժողովի գծած սահմաններու համաձայն անհատ ընկերներու միայն թոյլատրել մուտ գործելու վերոյիշեալ ազգային հաստատութիւններու մէջ:

բ) Թուրքիոյ հայոց ազգ. սահմանադրութեան վերաբննութիւնը

Պ.— Սահմանադրութեան էական հիմերէն մին է համեմատական ներկայացուցչութիւնը: Չընդունիլ ո՛չ մի սահման եւ առանձնաշորհուրմ աշխարհականի եւ կրօնականի: Ընտրելու եւ ընտրուելու հաւասարութիւն եւ ոչ մի արգելքով —տուրքով— չկաշկանդել ընտրութեան իրաւունքը: Նոյնպէս 21 տարեկանի համար ընտրող եւ 25 տարեկանի ընտրելի ըլլալ: Ամէն գաւառ կամ թեմ իր թուին համապատասխան երեսփոխան պէտք է ունենայ Պոլսոյ Ազգ. Ժողովին մէջ պայմանաւ որ ասոնք վճարուեմով ըլլան. վերջապէս աշխատիլ սահմանադրութեան մէն մի յօդուածը ժողովրդապետական հիմերու վրայ բարեփոխելու, լայն իրաւունքներ տալով աշխարհականութեան:

գ) Պայքար հայ պահպանողական եւ յետադիմական տարրերու դէմ

Պ.— Պայքարը պայման է յառաջդիմութեան համար. պայքարիլ օրինաւոր սահմաններու մէջ. Դաշնակցութեան ծրագրին իրականացումը նպատակ ունենալով, անդուլ աշխատիլ ժողովուրդի խաւերուն մէջ տարածելու մեր սկզբունքներն ու գաղափարները:

4.— ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆՈՒԹԻՒՆԸ

ա.— Համարատուութիւն
իրենց գործունէութեան մասին
բ.— Խորհրդարանական խմբակը եւ
Բիւրոն փոխարարբերութիւններ

Պ.— Նկատելով որ Օսմ. խորհրդարանի դաշնակցական պատգամաւորները կ'ընտրուին ուղղակի դաշնակցական ընկերներու ջանքով եւ անոր հմայքին շնորհիւ, ուստի կ'առաջարկուի որ դաշնակցական երեսփոխանները իրենց ընտրական շրջանին համարատու ըլլալով հանդերձ, մասնաւորապէս պատասխանատու ըլլան Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. Ժողովի կողմէ նշանակած իրաւասու մարմնին:

գ.— Հրահանգներ յառաջիկայ գործունէութեան մասին

Պ.— Օսմ. խորհրդարանի դաշնակցական պատգամաւորները իրենց գործունէութիւնը պէտք է կեդրոնացնեն հայկական նահանգներու ապահովութեան, ինչպէս նաեւ հողային եւ այլ առկախ խնդիրներու լուծման եւ աշխատաւորական հարցերով զբաղին:

դ.— Առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններ (1912-1916 նստաշրջան)

1.— Թեկնածուներու անուանման եղանակը
2.— Երեսփոխաններու դրամական մասնակցութիւնը կուսակցութեան ընտրողական Ֆոնտին

1.— Պ.— Մեր ուժերով աշխատելով հանդերձ, համաձայնութիւն գոյացնել ուրիշ ազատական կուսակցութիւններու հետ մեր թեկնածուներուն ընտրութիւնը յաջողցնելու համար:

2.— Պ.— Ընտրելի պատգամաւորները կազմակերպական պահանջուած բարոյական վստահութիւնը եւ փորձառութիւնը ունենալով միասին, իրեւ օսմ. երեսփոխան արդիւնաւոր աշխատելու համար, պէտք է ունենան պահանջուած կարողութիւնը եւ թրքերէնի ծանօթութիւնը: Միեւնոյն ժամանակ անպայման որոշ չափով պէտք է մասնակցին կուսակցութեան Ֆոնտին:

ՌՈՒՄԻԱ

Դաշնակցութեան տակտիկը Ռուսիոյ ռեփրմին հանդէպ եւ կազմակերպական նոր եղանակի մը անհրաժեշտութիւնը:

Պ.— Որոշ գաղափար եւ կարծիք չենք կարող յայտնել որովհետեւ մօտէն տեղեակ չենք անցեալի եւ ներկայի անցուղարձէն. մօտէն գիտցող եւ ձեռնհաս ընկերներու կը թողունք:

Ա. Աշխատաւորական

Պ.— Դաշնակցութիւնը ուղղակի սոցիալիստ կուսակցութիւն լինելով պարտաւորութիւն ունի կազմակերպելու արհեստակցական եւ գործաւորական միութիւններ եւ շահակցական ընկերութիւններ մեր ծրագրին սկզբունքներուն համաձայն, ուղղութիւն տալով անոնց գործունէութեան եւ օժանդակելով, բարոյապէս ուժեղացնելով, աւելի աշխատելով փրփակմանի եւ անհատ ընկերներու նախաձեռնութեամբ անոնց կազմակերպման:

Բ.— (Ուրոյն եւ նուազագոյն աշխատաւորական պահանջներ թուրքիոյ, Ռուսիոյ, Պարսկաստանի քաղաքական եւ տնտեսական պայմաններու համաձայն)

Պ.— Հիմ ունենալով մեր նուազագոյն պահանջները, ինչպէս նաեւ ներկայ աշխատաւորական վիճակը, օրէնքի մը գոյութեան ոյժ տալ որը գոհացնէ ըստ բաւակաւին աշխատաւորութիւնը:

Դ.— Կազմակերպական

Կուսակցութեան այլեւայլ մարմիններու իրաւասութիւններուն աւելի բացայայտ ճշդումը

Պ.— Նախկին իրաւասութեանց սահմանը մնալու է նոյնը. եթէ կան մուրթ կէտեր, որոշակի ըսուած պարագային ըստ այնմ սահմանը ճշդորոշել:

— Բիւրոյական շրջաններու նոր բաժանում

Պ.— Աշխարհագրական դիրքերու համաձայն բաժանում կատարել:

— Մնայուն հաշուեքննիչ մարմնի մը հաստատումը

Պ.— Համաձայն ենք հաշուեքննիչ մարմնի մը գոյութեան, պայմանաւ որ անոնցմէ մէկը շրջուն քննիչի դերը ստանձնէ:

Գ.— Պ.— «Դրօշակը» մնալու է նախկին տեղը:

Դ.— Պ.— Դաշնակցութեան տան գնումը պէտք է իրագործուի իբր յիշատակ եւ սրբավայր կուսակցութեան:

Ե.— Փոխադարձ օգնութեան արկը մը դաշնակցականներու համար

Պ.— Ամէն ընկեր պէտք է մասնակցի իր բաժինով ընկերներու օգնութեան համար, փոխադարձաբար. միայն այդպիսի պայմաններով պէտք է հաստատել որ ընկերներու մէջ այլասերում ու մուրացկանութիւն չբաշխուի:

Ե.— Գրաւոր եւ բանաւոր պրոպանդանդ

1.— Գրաւոր պաշտօնաթերթ «Դրօշակը»
Պ.— Նախկին ուղղութիւնով պէտք է շարունակել, աւելի դիւրահասկնալի բառեր գործածելով:

2.— Կիսապաշտօնական թերթեր

Պ.— Կիսապաշտօնական օրկանները ներկայ ուղղութիւնով պէտք է շարունակեն առանց նիւթական ակընկալութիւն ունենալու կուսակցութեանէն. բացառաբար, ոեւէ պատասխանատու մարմնի մը աջակցութիւնով «օրկան» մը հիմնուելու պարագային, եթէ պէտք է, օժանդակութիւն կրնայ ըլլալ:

3.— Հրատարակութիւններ

Պ.— Ժողովուրդը աստիճանաբար զարգացնելու եւ նոր գաղափարները անոնց իւրացնել տալու համար դիւրամատչելի եւ դիւրահասկնալի պրոչիւրներ պէտք է հրատարակել:

Բանաւոր

1.— Դասընթացքի մը հաստատումը պրոպանդիստներու համար

Պ.— Առաջին պահանջն է մանաւանդ նոր սերունդին

2.— Գործիչ եւ փրփակմանտիստ ընկերներու բաշխում

Պ.— Ամէն կեդրոնական մարմին պէտք է ունենայ իր մշտական գործիչը, վճարումը իր անտուկէն վճարելու պայմանաւ, առանց պահեստի որոշ դրամին դպչելու:

Բանաւոր եւ գրաւոր պրոպանդիստ ոչ-հայախօս հայերու մէջ:

Պ.— Թրքաբարբառ հայատառ «պրոչիւր»ներ հրատարակել. ժամանակ առ ժամանակ թրքախօս գործիչներու այցելութիւնն ալ չզլանալ:

Ինթընացիոնալիստ

Պ.— Ներկայի առաջին պահանջն է, զարկ տալ ինքնապաշտպանութեան ամէն կերպով. ընկերները եւ ժողովուրդը գինելու միջոցներուն վրայ խորհիլ:

Կը հաստատենք որ ներկայ պատասխան-որոշումները տրուած են յատկապէս սարքուած ընկերական ժողովներուն մէջ:

Հ.Յ.Դ. ԻԶՄԻՐԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ
ՎԱՀԱՆ, Ա. ԱՐԶՈՒԵԱՆ, Յ. ՓԻԼԱԻԵԱՆ,
Մ. ՍԱՐԸԵԱՆ

Իզմիր, 27/9 Սեպտ. 1911

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XIII

Հ.Յ.Դ. ՊԱԼ-ՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Պալքանի Կ. Կոմիտեի անունից իրաւաստիւնը կը տարածուէր Պուկարիոյ եւ Ռումանիոյ վրայ: Կազմակերպական այս շրջանը ունէր հին անցեալ: Հոն գործած էին Ռոստոմի, Քրիստափորի, Վոսմեանի, Չարդարեանի նման վաստակաւոր գործիչներ, յեղափոխական ու հայրենասիրական ոգի ներշնչելով շրջանի երիտասարդութեան: Հոն էր կնքուած ու հասարակաց արինով նուիրագործուած հայ-մակերդնական զինակցութիւնը: Հոն էր սկիզբ առած Ապտիլ Համիտի ահաբեկման ծրագիրը եւ անոր գործադրութեան նախապատրաստութիւնը: Հոն էր, վերջապէս, իրագործուած Հ.Յ.Դ. Չինուորական վարժարանը եւ շատ մը ուրիշ նախաձեռնութիւններ, որոնց մէջ նկատուելի դեր ու մասնակցութիւն ունեցած էր շրջանի Կեդր. Կոմիտեի անունը:

Օսմ. Մահմանադրութեան հռչակումէն ետք Պալքանի կազմակերպութիւնը մօտէն կը հետեւէր սահմանակից Թուրքիոյ ներքին անցուղարձերուն, առհասարակ վերապահութիւն ու կասկածանք արտայայտելով՝ ազատական ու արդար կարգեր հաստատելու նկատմամբ՝ Երիտասարդ թուրքերու կուսակցութեան (Իթթիհատ) ունեցած անկեղծ եւ ուղղամիտ դիտարկութիւններուն մասին: Այսուհանդերձ, շրջանի ղեկավար ընկերներէն շատեր, ինչպէս Ռուբէն Չարդարեան, Քարթող Չօրեան եւ ուրիշներ գործուղուեցան Պոլիս նորահաստատ կարգերու տակ նոր պատասխանատուութիւններ ստանձնելու պարտականութեամբ: Չարդարեանի հեռանալով փակուեցաւ նաեւ իր խմբագրած «Ռազմիկ» թերթը, եւ անոր տպարանային կազմածներու մէկ մասը փոխադրուեցաւ Պոլիս «Ազատամարտ»-ի հրատարակութեան համար:

Կուսակցական շարքերը եւս, որոնց ստուար մասը կը բաղկանար Երկրէն գաղթած եւ սեւ բանտրութեամբ ու բռնակրութեամբ օրուան ապրուստը հոգացող պանդուխտներէ, զգալիօրէն նստացան, իրրեւ հետեւանք դէպի Երկիր տունդարձի հոսանքին: Ինչ խօսք՝ որ հայրենադարձներու ճնշիչ մեծամասնութիւնը հիասթափ պիտի ըլլար ի տես պապեանական հողերու բռնագրաւուած մնալուն, ինչպէս եւ՝ համիտեան վարչակարգը յիշեցնող՝ ընդհանուր անպահովութեան, Երկրին պարզած տխուր վիճակին: Այդ պայմաններուն տակ անոնցմէ շատեր վերստին ձեռք պիտի առնէին պանդխտութեան ցուպը:

*
**

- Պալքանի յատկացուած այս գլուխը կազմուած է հետեւեալ երեք փաստաթուղթերէն.—
- 1.- «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Պալքանի Կեդր. Կոմիտեի, 1909 Ապրիլէն 1910 Ապրիլ». ձեռագիր 10 էջ: Խոնարարութեան հետեւանքով կարգ մը էջերու մելանը տարածուած կամ գունաթափ ըլլալուն պատճառաւ, ձեռագիրը դժուար ընթեռնելի է:
- 2.- «Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Պալքանի ԹՊՇ Շրջանական Ժողովի» (գումարուած 1910 Ապրիլ 19-24). ձեռագիր 32 էջ:
- 3.- «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. Կոմիտեի, 1910-1911 տարեշրջանի». ձեռագիր 17 էջ:

Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովի նախօրեակին, Պալքանի Կ. Կոմիտեի անունից «Ժամանակի սղութեան» պատճառաւ չէ կրցած Շրջանային ժողով գումարել եւ Ընդհ. Ժողովին մասնակցած է միայն մարմինը ներկայացնող պատգամաւորով (Գեորգ Քետանեան):

Փաստ. 1543-1

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՊԱԼ-ՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ

1909 Ապրիլէն 1910 Ապրիլ

1909-1910ի համար Պալք. Կեդր. Կոմիտեի ընտրութեան պարագաները ծանօթ արդէն՝ աւելորդ պիտի ըլլար ծանրանալ այդ մասին. յիշենք միայն որ՝ ներկայ Կեդր. Կոմիտեի ընկերները դեռ անցեալ Շրջ. Ժողովէն առաջ՝ դրած չըլլալով իրենց թեկնածութիւնը, Ռուս-Ղուզի ընկերները կանխաւ յանձնառու եղած էին տանիլ Կեդր. Կոմիտեի պարտականութիւնները. այս մտքով յանձնարարուեցան ներկայացուած թեկնածուները շրջանի մարմիններուն՝ առանց տարբեր ընկերներու մասին եւս մտածելու պէտքն զգացուելու: Եղաւ որ նախորդ Շրջ. Ժողովի ընթացքին Ռուս-Ղուզի ընկերները զանազան պատճառներով յանկարծ ետ կեցան իրենց յանձնառութենէն, Շրջ. Ժողովը մնաց նեղ կացութեան մէջ եւ երկար ստիպումներու գնով միայն յաջողեցաւ ընդունիլ տալ ներկայ կազմին, որպէսզի իր ամբողջութեամբ շարունակէ տանիլ գործերը՝ միաձայն վստահութեամբ կրկին վերընտրելով զայն:

Անցնելով իր պարտականութեան գլուխը՝ Կեդր. Կոմիտէն չունէր նախորդ տարեշրջաններու նման համեմատաբար բարդ պատասխանատուութիւններ գլուխ բերելու: Իբր գործունէութեան վայր ունէր շրջան մը եւ մարմիններ՝ որոնք Սահմանադրութենէն յետոյ կորսնցուցած էին իրենց կենսունակութենէն բաւական բան: Բաւական մըն ալ, դէպի կազմակերպական անպարտաճանաչութիւնն ու անհետաքրքրութիւն. արդիւնք՝ մէկ կողմէ շարքերու ոչ-զգօնութեան(?), միւս կողմէ գործօն ու համեմատաբար գիտակից ուժերու մեկնումին՝ գաղթականութեան վերադարձի հոսանքին հետ: Ըսենք որ Ատանայի կոտորածներն ու Պոլսկարիոյ եւ Ռումանիոյ մէջ հաւասարապէս գոյութիւն ունեցող տնտեսական շատ նեղ կացութիւնն ալ ուժեղապէս ներգործեց եւ առաջացուց յիշատակուած վիճակը:

Այս պայմաններուն մէջ Պալքանեան շրջանի կազմակերպական գործերը կը դառնային եւ մտահոգիչ եւ իրերու շրջապատող հանգամանքին տակ նաեւ չորհուրդ: Այդ է պատճառը, որ նախորդ տարեշրջաններուն՝ բարդ ու եռուն աշխատութեանց պահուն գրուած կազմակերպական նամակներուն ընդհանուր թիւը տարւայ ընթացքին մինչդեռ անցած չեն 150-200-ը, այս տարի արդէն 300-ի կը բարձրանայ այդ թիւը, այն պարզ պատճառով, որ մարմիններն ու ընկերները եղած դիմումներուն եւ պարտադիր յանձնառութիւններուն գործնապէս թէ գրաւոր չպատասխանելով՝ հարկ կը դառնար շատ անգամ ունէ աննշան խնդիրի համար 2-3

նամակ գրել՝ պատասխան մը ստանալու համար. մարմիններ կան՝ որոնցմէ տարուայ ամբողջ ընթացքին հազիւ 2-3 նամակ ստացած ենք՝ հոգ չէ թէ մեր կողմէ մինչեւ 8-10 նամակ գրուած ըլլայ առանց հաշուելու դեռ շրջաբերական-նամակներն ու Կեդր. Կոմիտեի ընկերներուն կողմէ գրուած բազմաթիւ անհատական նամակները. նոյն երեւոյթը տեղի ունեցաւ նոյնիսկ ներկայ Շրջ. Ժողովի գումարման վերաբերմամբ՝ հակառակ անոր որ հաշիւ, հարցեր, եւայլն ժամանակէն շատ առաջ եւ քանի՜ մը անգամներ ուղղուած էին եւ պէտք էին ժողովէն առաջ Կեդր. Կոմիտեի տրամադրութեան տակ դրուած ըլլալ, գործերու եւ աշխատութեանց ընթացքն եւ կանոնաւորութիւնը խանգարուած չըլլալու համար: Մինչդեռ 8-9 մարմիններէն հազիւ 2-3ը կատարած են այդ յանձնառութիւնը, ան ալ շատ ուշ. միւսները դատապարտելի զանցառութիւնն ունեցած են այդ անխուսափելի պարտականութեան վերաբերմամբ անգամ:

Միւս կողմէ ընկերական անպարտաճանաչութիւններու եւ ընկերական թէ մարմնի զանցառութիւններու պատճառով արդէն կը յայտնուին թերութիւններ՝ որոնք ասկէ առաջ հազուադէպ էին ու բացառիկ: Կը դիտուէր, օրինակի համար, զանցառութիւն՝ ամսավճարներու մէջ, քոնթրոլի պակաս՝ խումբերու եւ մարմնի անդամներու վերաբերմամբ, որ իր կարգին տեղի կու տայ դրամական անպատեհութիւններու. անտեսում կազմական կանոններու գործադրութեան եւ անկանոնութիւն ժողովներու գումարման մէջ. ընտրութեանց մէջ անփութութիւն եւ անտարբերութիւն. աշխատանքի բաժանման պակաս՝ մարմնի անդամներուն քով, հակառակ որ նախորդ Շրջ. Ժողովը այդ մասին խիստ յանձնառութիւններ դրած եւ նկատողութիւններ ուղղած է:

Այս կացութեան մասամբ դարման տանելու համար Կեդր. Կոմիտէն հարկադրուեցաւ Ռումանիոյ շրջանը դրկել նախ՝ ընկեր Ադամեան, յետոյ ընկեր Ժիրայրը՝ որ իր կարգին այցելեց Ռումանիոյ եւ Պոլսկարիոյ բոլոր մարմիններուն քոնթրոլի ենթարկելով անոնց հաշիւները եւ կազմակերպական պէտքերու յանձման հետ ծանօթացնելով շրջանի ընկերները Ընդհ. Ժողովի գրաւումներուն եւ որոշումներուն գլխաւոր գծերուն հետ. այս այցելութեան մասին ինքը ցոյց կու տայ աւելի ըն-

1.- Ժիրայր Չօրեան Բարթողի ծածկանունն է:

դարձակ տեղեկություններ անձամբ եւ բերանացի: Օգտուելով Ընդհ. Ժողովի գումարումէն նախաձեռնեցինք Պուլկարիոյ 2-3 քաղաքներու մէջ հրապարակային ատենախօսութիւններու՝ Ընդհ. Ժողովին եկող ընկերներու կողմէ: Սլիվէնի շրջանը ղրկուեցաւ նաեւ ընկեր Ֆելիքս՝ նոյն քաղաքի կազմակերպական-ընկերական պէտքերու յանձնաձեռնման համար:

Շրջանի մարմիններուն այցելող ընկերներու բերած տեղեկութեանց հետ, հիմնուելով նաեւ մեր ստացած փորձառութեան վրայ, հետեւեալ երկու-երեք հակա կէտերը կը յանձնենք ժողովի ուշադրութեան, եթէ ոչ շրջանի կազմակերպութիւնը աւելի փայլուն վիճակի մը մէջ դնելու յոյսով՝ գէթ եղածը պահելու եւ կազմակերպական մաքրութիւնն ու աւանդութիւնները անաղարտ պահպանելու ակնկալութեամբ: Մենք կ'առաջարկենք.

1) Ո՛ր եւ ինչ ձեւով կազմուած ըլլայ Կեդր. Կոմիտէն՝ տարուայ ընթացքին մէջ անպատճառ քոնթրոլ ընկերով մը այցելութիւնն ապահովել շրջանի բոլոր մարմիններուն մօտ, որպէսզի խիստ քոնթրոլի ենթարկուին մարմիններու ղրամական եւ բարոյական գործառնութիւնները, ղրամական գանձումները կատարուին եւ փոխադրուին կեդրոնական արկղը՝ տեղի չտալու համար գանազան թիւրիմացութիւններու եւ խնդիրներու: Առանց այս պայմանի իրականացման թէ կազմակերպական գործերը պիտի տուժեն ծանրապէս եւ թէ կառոյցները՝ տեղի տալով նոյնիսկ անխորտութիւններու:

2) Պահել ղրամական գործառնութեանց մասին Կեդր. Կոմիտէի կողմէ ներքին կանոնադրի մէջ մտցուած խիստ տրամադրութիւնները՝ ի սպառ արգիլելու համար պատահական անուղղամտութիւնները, որոնք տեղի կու տան թէ վարկաբեկումներու եւ թէ ընկերական թուլացումներու:

3) «Քիչ բայց լաւ» սկզբունքը դարձնել տիրապետող կազմակերպութեան բոլոր մարմիններու մօտ եւ պահել շարքերուն մէջ անոնք միայն՝ որոնք համոզումով կապուած են կուսակցութեան հետ [եւ] ոչ թէ այս կամ այն տրամադրութիւններով:

4) Թեթեւցնել ներքին կանոնադրով պարտադիր կարգ մը աշխատութիւնները՝ որոնք շատ մարմիններու կողմէ չեն գործադրուիր արդէն՝ վնասելով սակայն օրէնքի հեղինակութեանը: Ներքին կանոնադրի վերաբերմամբ շրջանէն եկած ցուցմունքները նկատի առնելով հարկ եղած սրբազրութիւնն ըրած կը ներկայացնենք ժողովի դիւրութիւն մը տուած ըլլալու համար աշխատութեանց:

5) Որոշ սակ ու սահման սրճարաններու դրամէն տեղ-տեղ անօգնական ընկերներու տրուած փոխատուութեանց քանի որ անոնք սկսած են տակաւ հեռանալ չափաւորութեան սահմանէն:

Անցնելով Կեդր. Կոմիտէի գործառնութեանց, ըսենք որ բացի շրջանի կազմակերպական ընթացիկ գործերու յանձնաձեռնմէն՝ ընթացք տուաւ ի միջի այլոց հետեւեալ յանձնառութիւններուն.

1) Մասնակցեցաւ Ընդհ. Ժողովին՝ երկու պատգամաւորներով, ներկայացնելով իր երկու-երեք տարուան ղրամական-հաշուական գործառնութեանց հաշուետուութիւնը, որուն պատճէնը կը դրուի ձեռնարկութեան տակ, իսկ պատգամաւոր ընկերը կու տայ յատուկ գեկուցում իր հերթին:

2) Երկիր փոխադրութեան Զ[ինուորական] Վ[արժարան]ի 50ի չափի Հ[րացան]ները՝ մօտ 10-12000 ծայրերով², որոնց մէկ կարեւոր մասը դժբախտաբար վտանգուել է ճանապարհին: Այս պահուստ շրջանին մէջ կը մնան 10.000ի չափ պարապ ծայրեր՝ որոնք պիտի վաճառուին, հոս անոնց պէտքը զգալի չըլլալով: Կան հոս զանազան գինական ապրանքներ՝ որոնց մանրամասն ցանկը կայ արդէն:

3) Ըստ առաջնոյն շարունակուեցաւ Երկիր մարմիններէն ոմանց հետ մեր յարաբերութիւնները, մասնաւորապէս Պատասխանատու մարմին հետ՝ Ընդհ. Ժողովէն առաջ, իսկ Արեւմտ. Բիւրոյի Թուրքիոյ հատուածին հետ՝ Ընդհ. Ժողովէն յետոյ:

4) Շրջանական ժողովի կողմէ Պատանեաց խումբերու համար պատրաստել յանձնարարուած կանոնադրը մշակուած եւ ցրուելու է:

5) Անօգնական գաղթականները Երկիր վերադարձը նելու վերաբերմամբ թէ եւ նախորդ Շրջ. Ժողովի որոշումը մնաց անիրականանալի — քանի որ յանձնառու մարմիններէն ոչ մէկը իր խոստացած գումարը հայթայթեց եւ ղրկեց Կեդր. Կոմիտէին — սակայն տեղ-տեղ ընկերները իրենք անհատական-հաւաքական օժանդակութիւններով բաւական թիւով անօգնական ընկերներ ղրկեցին Երկիր:

6) Զ.ի Տ.ին համար Պուլկար Ազգային Պանքան դրուած 2000 Ֆր.ի գումարի խնդիրը կը մնայ առկա Վիճակի մէջ հակառակ մեր հետապնդութիւններուն եւ բազմաթիւ դիմումներուն որովհետեւ երկրորդ դատավարութեան կոչնագիրները դեռ վերջերս միայն հրապարակ ելան — Մայիսի մէջ տեղի ունենալու համար դատավարութիւնը — եւ յետոյ՝ Տ.ի վերադարձը Մակեդոնիայէն բաւական դժուար կը թուի՝ մակեդոնական կազմակերպութեան ներքին խառն եւ անկերպարան վիճակին պատճառով:

7) Եր. Ալաճաճեանի վրայ գտնուած 1577 Ֆր.ի գումարին համար Շրջ. Ժողովի տուած որոշումը հաղորդուեցաւ թէ Պատասխանատու մարմին միջոցաւ պ. Երևանդի եւ թէ Արեւմտ. Բիւրոյի Թուրքիոյ հատուածին, դարձեալ այս վերջինին միջոցաւ պ. Երուանդին: Քանի

2.- Փամփուշտներով:

մը օր առաջ Բիւրոյէն մեր առած մէկ նամակին համաձայն՝ պ. Երուանդ յայտնած է թէ առ այժմ հնարաւորութիւն չունի վճարելու եւ կը խոստանայ ապագային երբ միջոցներ կ'ունենայ՝ ամբողջովին վճարելու: Հետեւաբար այս մասին նոր տնօրինութիւն մը ընելը կը մնայ ժողովի:

8) Պուրքէշի նախկին ընկերներէն Առաքելի վրայ գտնուած կազմակերպական դրամի գանձման մասին եւս հարկ եղած հետապնդութիւնը կատարուած եւ վճարման մուրհակներ ալ առնուած են, որուն արդիւնքի մասին տեղեկութիւններ պիտի տայ ի հարկէ Ռուջուգի պատգամաւորը՝ իբրեւ նոյն մարմնի իրաւասութեան ենթարկուած խնդիր:

9) Անցեալ տարի «Ռազմիկ»ի համար որոշուած ծախսի սակէն 2500 Ֆր. աւելի գումարին դէմ բաժնեգիններէ եւ կորուսեալներէ գոյացած գումարներէն վերադարձուած է Կեդր. Կոմիտէի արկղը ----- Ֆր. վճարելով նաեւ թէ՛ բաժնորդներու, թէ՛ բաժնետոմսերու եւ թէ՛ գանազան պարտքերու փոխարժէքին համար բաւական գումար մըն ալ, դարձեալ գոյացած ապառիկ բաժնեգիններու գանձումէն: Այժմ Կեդր. Կոմիտէի պահանջի գումարը կը մնայ «Ռազմիկ»էն ----- Ֆր., որ նոյնպէս կրնայ հայթայթուիլ ճշդապահ եւ պարտաճանաչ ճանչցուած գործակալներու եւ բաժնորդներու կրկին դիմումով մը: «Ռազմիկ»ի մօտ 6-7000 Ֆր.ի գանձելի գումարներէն շատ աւելին կարելի պիտի ըլլար ձեռք բերել՝ եթէ մեր ընկերները, Պալքանի մէջ թէ Արտասահման ու Երկիր, ըլլային քիչ մը աւելի բարեացակամ եւ ճշդապահ:

Պարզ է նկարագրուած պայմաններու մէջ շրջանի հասոյթը պիտի չունենար նախընթաց տարիներու բեղմնաւորութիւնը: Շրջանի մարմիններուն եւ ընկերներուն ոչ միայն պակսեցաւ անդամավճարներու կանոնաւոր հաւաքում-վճարման պարտաճանաչութիւնը, այլեւ ոչ մէկ նշանակելի փորձ եղաւ արտակարգ հասոյթներու ստեղծումին՝ վիճակահանութիւններով եւ այլ նման ձեռնարկներով. եթէ չենք սխալի միայն Ֆիլիպի ընկերներ այդ ուղղութեամբ ձեռնարկ մը փորձեցին՝ տալով ներկայացում մը Կովկասի մեր բանտարկեալներու օգտին: Անդին Ռուսաստանի երեք-չորս կազմակերպական սրճարանները՝ որոնք սակէ 1-2 տարի առաջ հաւաքաբար տարեկան 7-8 միլիոն 10.000 Ֆրանք գուտ հասոյթ մը կու տային կազմակերպութեան, այս տարեշրջանին մէջ հազիւ 1000-1500 Ֆր. փոխադրած են ցարդ կեդր. արկղը: Ընկեր Ժիրայրը իր Ռուսաստան ըրած այցելութեան պահուն շատ մանրակրկիտ քննութեան մը ենթարկեց իւրաքանչիւր սրճարանի մէկ-երկու տարուան հաշիւները՝ ուսումնասիրելով նաեւ հասոյթի նուազման պատճառները: Այդ հաշիւներն ու պատճառները պէտք եղածէն աւելի ուշագրաւ եւ լուրջ խորհրդակցութեան արժանի, որոնց կը

ծանօթանաք մեր արխիւին մէջ գտնուած իր մանրամասն նամակներէն՝ մենք հոս կու տանք, քաղուածաբար հետեւեալ համառօտ պատկերը:

1907					
Քաղաքներ	տեւողութիւն	մուտք	ծախք	հասոյթ	
Պրայլա	4 ամսեայ	4474	2888	1818	
Կալաց	ամբողջ տարին	11214	8095	3125	
Սուլիմա	-	-	-	-	
Քոնսթանցա	-	-	-	-	
Պուրկազ	-	-	-	-	
1908					
Պրայլա	ամբողջ տարին	8258	5189	3070	
Կալաց	ամբողջ տարին	10486	8484	2091	
Սուլիմա	ամբողջ տարին	4875	2866	1708	
Քոնսթանցա	Եռամսայ	1848	1082	463	
Պուրկազ	908 Յուլիս 909 Մայիս ամբողջ տարի	6966	6796	170	
1909					
Պրայլա	-	-	-	-	
Կալաց	ամիս	7711	7324	288	
Սուլիմա	8 ամիս	2580	1968	532	
Քոնսթանցա	վեցամսեայ	2050	2067	-	
Պուրկազ	վեցամսեայ	3647	3810	163	

Այս պատկերին հետ մեր ընկերով բերած թուանշաններու մանրամասնութիւնները կ'ապացուցանեն քանի մը ուշադրաւ կէտեր. 1) Բացի Պրայլայի հաստատութենէն՝ միւս բոլոր քաղաքներու սրճարաններու հասոյթը զգալի կերպով նուազած է. 2) Մուտքի տարուէ տարի նուազումը արդիւնք է մէկ կողմէ ընկերներու մեկնումին եւ ներքին աններդաշնակութիւններու, միւս կողմէ տիրող տնտեսական քրիզին, 3) Ելքի մասը մուտքին հետ համեմատական չէ ընթացած սակայն. ընդհակառակը քիչ մուտքին դէմ եղած է շատ ծախք, որով նոյն համեմատութեամբ ալ հասոյթը ինկած է. այսքանին պատճառը մէկէն աւելի է ա) Պակասած է հաստատութեանց վրայի քոնթրոլը. բ) Տնտեսութիւնը եղած է շատ անհա-

չիւ. գ) Անփորձ պաշտօնեաներ վարձրւած են. ասկէ՛ պաշտօնեաներու կողմէ՛ գործուած անուղղամտութիւնները ակներեւ են: Որպէսզի այս այնքան օգտակար հաստատութիւնները արդիւնաւորին ի նպաստ կուսակցութեան՝ հարկ է որ հաստատութեանց հսկելու վարչութիւնները կազմուած ըլլան պարտաճանաչ եւ խստապահանջ ընկերներէ:

Բացի սրճարաններէ՛ Վառնա, Սլիվէն եւն ունին խմբատեղի-ընթացարաններ՝ որոնք հասոյթ չեն տար, իսկ Ռուսջուգ, Ֆիլիպէ եւն կան գուտ խմբատեղիներ՝ որոնց վարձքը կը հոգացուի տեղական մարմիններու ծախսի սակէն:

Գալով կեդրոնական արկղի մուտքին՝ մինչեւ ընկեր ժիրայրի պտոյտը 1500-2000 Ֆր.ի մուտք մը եղած էր. այդ այցելութեան ընթացքին գանձուեցաւ եւ դրկուեցաւ 2500-3000 Ֆր.: Համաձայն քննուած հաշիւներուն եւ նախատեսուած նուազագոյն պիւտճէին՝ այս վերջին վեցամսեային պիտի ունենայինք առնուազն 6-7000 Ֆր.ի հասոյթ մը եւս, որով այս տարուան մուտքի գումարը կը յուսացուէր բարձրանալ 13-14000 Ֆր.ի: Սակայն՝ մէկ կողմէ՛ գործերու սակաւութիւնն ու տնտեսական անսպասելիորէն սեղմ պայմանները, միւս կողմէ՛ ընկերական մատնանշուած անպարտաճանաչութիւնները չպսակեցին այս ակնկալութիւնները, այնպէս որ պատգամաւորներու բերած գումարներն ալ հաշուելով վերջացող այս տարեշրջանի Պալք. Կեդր. Կոմիտէի հասոյթը կը հասնի 9-10000 Ֆր.ի:

Ներկայ Երջ. ժողովի կարեւոր հոգերէն մէկն ալ կը թուի թէ՛ պիտի ըլլայ Կեդր. Կոմիտէի կազմութիւնը, պարագայ մը՝ որ երեք-չորս ամիսէ ի վեր մեզ մտահոգութեան մատնած է, ներկայ կազմի ընկերները չուզելով ստանձնել յառաջիկային եւս այդ պարտականու-

թիւնը՝ հարց կը դառնայ նոր ուժեր կանչել գործի գլուխ: Այդ տեսակէտով միակ յարմարագոյն վայրերը պիտի կրնան ըլլալ դարձեալ Ֆիլիպէ եւ Ռուսճուգ, ուր համեմատաբար պատրաստուած ուժերու կը հանդիպինք: Սակայն այդպէս ըլլալով հանդերձ՝ երկու քաղաքի ընկերական շրջանակներն ալ անկարող կը յայտնուին 5 կարող ուժեր տրամադրելի ընելու: Փիլիպէի ընկերները կը ներկայացնեն երկու-երեք ընկերներ իբր թեկնածու Կեդր. Կոմիտէին՝ պայմանաւ որ ներկայ Կեդր. Կոմիտէի մնացած երեք ընկերներն ալ պարտականութիւն ստանձնեն անոնց հետ. Ռուսճուգը առաջին անգամ ներկայացուց 5 ընկերներ եւ սակայն ընկերներու[?] ցրուումէն յետոյ յայտնեց թէ ներկայացուած թեկնածուներէն ոմանք տրամադիր են մեկնիլ հայրենիք, որով պիտի չկրնան ստանձնել Կեդր. Կոմիտէի կազմը: Այս անել վիճակին ի տես խնդիրը յանձնեցինք Արեւմտ. Բիւրոյի ուշադրութեան որուն պատասխանին կը սպասենք մօտ օրէն: Ամէն պարագայի տակ շրջանը ձգել առանց Կեդր. Կոմիտէի պիտի նշանակէր Կազմակերպութիւնը ցրուել. մինչ ներկայ թոյլ տրամադրութիւններու պահուն՝ հարկ է շատ աւելի գործօն մարմնի մը ներկայութիւնը: Կը կարծենք որ եթէ Արեւմտ. Բիւրոն յանձն առնէ տարուան ընթացքին մեզի մէկ երկու անգամ տրամադրելի ընել ոեւէ ընկեր երկուական անգամ Պալքանի մարմիններուն այցելելու համար՝ գուցէ խնդիրին լուծումը որոշ չափով դիւրանայ:

Յանձնելով[?] այս բոլորը ձեր ուշադրութեան եւ ցանկալով ժողովին բեղմնաւոր աշխատանք՝

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Գ. ՊԱԼՔ. Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1153-80

Ա 2.- ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Գ. ՊԱԼՔ[ԱՆԻ] Թ՞՞ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ (Գումարուած 1910 Ապրիլ 19էն 24)

Բացում ժողովի.— Համաձայն Հ. Յ. Դաշնակցութեան կազմական եւ Պալք. շրջանի ներքին կանոնագրի ներու տրամադրութեանց՝ Պալք. Կեդր. Կոմիտէն հարկ եղած օրինական նախապատրաստութիւնը տեսած եւ շրջանի իրաւասու մարմինները հրաւիրած էր գումարելու Պալք. Թ՞՞ Շրջանական ժողովը Ֆիլիպէի մէջ: Նախորդ Շրջանական ժողովի վերջաւորութեան պահուն շրջանի մէջ գոյութիւն ունէին թէ՛ Թ մարմիններ — Ֆիլիպէ, Սլիվէն, Պուրկազ, Վառնա, Ռուսճուգ, Քոնսթանցա, Սուլիսա, Կալաջ եւ Պրայա — սակայն նոյն ժողովը նկատի առնելով Վառնայի կազմակերպութեան բարոյական-նիւթական անգոհացուցիչ պատկերը՝ կը յանձնարարէր լուծել զայն՝ եթէ կարելի չըլլար վերջ տալ տիրող անգոհացուցիչ կացութեան. հակառակ սակայն գործ տրուած աշխատութեանց եւ ջանքերուն՝ Վառնայի ընկերական-կազմակերպական գործերը մնացած էին աննախանձելի եւ կուսակցութեան ոչ պատուաբեր վիճակի մը մէջ, տեղի տալով նոյնիսկ մէկ տարուայ ընթացքին երկու-երեք մարմիններու ընտրութեան եւ քայքայման. ուստի նախորդ Շրջանական ժողովի յանձնարարութեանց եւ ներքին կանոնագրի տրամադրութիւններուն հետ՝ հիմնուած նաեւ յիշատակուած պատճառներուն վրայ՝ Կեդր. Կոմիտէն Վառնայի ընկերական կազմը գուրկ կը նկատէր ժողովին մէջ վճռական ձայն ունենալու իրաւունքէն: Մնացած 8 իրաւասու մարմիններու 5 ներկայացուցիչներու Ձ/Յի մեծամասնութիւնը անհրաժեշտ կը դառնար ժողովի գումարման համար: Միւս կողմէ, դիտելով որ շրջանի — մասնաւորապէս Ռուսմանիոյ — կարգ մը մարմինները, նիւթապէս բացարձակ անկարելիութեան եւ գորկանքներու ենթարկուած վերջացող տարեշրջանի ընթացքին, իրենց բացակայութեամբ հաւանաբար վտանգէին նոյնիսկ ժողովի գումարումը, Կեդր. Կոմիտէն ստեղծուելիք այդ փափուկ պայմաններուն տակ՝ գոնէ ընկերական լայն խորհրդակցութիւն մը ապահոված ըլլալու համար շրջանի գործերուն եւ վիճակի մասին Ֆիլիպէի երկու-երեք ընկերներու մէկ ցանկը ներկայացուցած էր այն մարմիններուն՝ որոնք բացարձակապէս յայտարարած էին թէ պատգամաւոր չպիտի կրնան ունենալ: Կեդր. Կոմիտէի որոշումով համապատասխան մարմիններու հաւանութեան ենթարկուած ընկերները

պիտի ունենային խորհրդակցական ձայնի իրաւունք, քանի որ Պալք. ներքին կանոնագրի թոյլ չի տար ձայնի փոխանցման դրութիւնը:

Կեդր. Կոմիտէն տեղեկացած ըլլալով որ Ռուսճուգի պատգամաւորը թէ՛ Ե ընտրուած՝ սակայն Ֆիլիպէ պիտի կարենայ հասնիլ երկու-երեք օր յետոյ միայն՝ մինչ Քոնսթանցայի, Պուրկազի, Սլիվէնի եւ Ֆիլիպէի պատգամաւոր ընկերները արդէն ներկայ են, այսօր, 19 Ապրիլ Բշ., առաջին անգամ զանոնք հրաւիրեց նիստի, առաջարկելով ընթացք տալ անմիջական պարտադիր աշխատութեանց եւ արդիւնքը արձանագրել տեսրակին մէջ՝ Ռուսճուգի պատգամաւոր ընկերը եւս հաւանութեան — այսինքն՝ ժողովի օրինաւոր կազմի հաւանութեան — ենթարկել յետոյ միայն:

Ներկայ 4 պատգամաւոր ընկերները համաձայն եղած առաջարկին՝ միաձայն հաւանութեամբ ժողովին նախագահ ընտրելով ընկեր Փայլակը, իսկ քարտուղար՝ ընկեր Ժիրայր¹, անցաւ առաջադրուած աշխատութեանց՝ 5 իրաւասու ձայներու ներկայութեամբ եւ պատգամաւոր ընկերներ եւ Կեդր. Կոմիտէն. ժողովին ներկայ էին խորհրդակցական ձայնի իրաւունքով նաեւ Կեդր. Կոմիտէի մնացած ընկերները:

Ստուգում վկայագրերու.— Տարեշրջանի ընթացքին Պալքանեան շրջանի գրեթէ բոլոր քաղաքներէն ալ ստուար թիւով ընկերներ մեկնած էին, այնպէս որ անկարելի կը դառնար հիմ ընդունիլ ներքին կանոնագրի սահմանած 50 ընկերներու ցենզը՝ ձայն ունենալու համար, մասնաւոր որ խնդրոյ առարկայ ընկերները տարուայ սկիզբէն չէ որ մեկնած էին՝ այլ կէսէն: Ուստի որոշուեցաւ հիմնուելի Դաշնակցութեան ընդհ. կանոնագրով ենթակոմիտէներու համար սահմանուած նուազագոյն տրամադրութիւններուն վրայ՝ օգտուելով վերջին Ընդհ. ժողովի գծած կանոնական մէկ տրամադրութենէն. այսպէս՝ 35 գործօն ընկերներու գոյութեան վրայ հիմնուելով՝ Ֆիլիպէի, Սլիվէնի, Պուրկազի եւ Քոնսթանցայի ներկայ պատգամաւորներուն ընտրութիւնները օրինաւոր էին. միայն պէտք տեսնուեցաւ հետեւեալ երկու նամակները ուղղել Սլիվէնի եւ Քոնսթանցայի մարմիններուն:

1910 Ապրիլ 20/3

Հ.Յ.Դ. Քոնսթանցայի կոմիտեին

Ընկերներ,

Ձեր պատգամատրի ընտրութիւնը ծանուցանող նամակին մէջ ստացուած է յիշատակել այդ ամբողջութեամբ Ընդհ. ժողովին մասնակցող ընկերներուն քիւր: Պատգամատր ընկերոջ հաստատումներուն համաձայն այդ քիւր 35ի չափ եղած պիտի ըլլայ: Բայց որպէսզի օրինական ամէն տրամադրութիւն լրացուցած ըլլայ, Շրջ. ժողովը պէտք տեսաւ տեղեկանալ այս պարագան պաշտօնապէս: Ուստի հաճեցէք նամակով մը հաստատել պատգամատր ընկերոջ վկայութիւնը: Յուսալով որ կարելի եղածին չափ շուտով ընթացք կու տաք մեր այս յանձնարարութեան՝ ընկերական բարեմեքով

Հ.Յ.Դ. Սիլվեհի կոմիտեին
Ընկերներ

Ձեր պատգամատրի ընտրութիւնը ծանուցող նամակին մէջ յիշատակուած չէ Ընդհ. ժողով գումարուած ըլլալու պարագան, այնինչ ներքին կանոնագրի 58-69 յօդուածը կը տրամադրէ ընտրութիւնը կատարել տեղական ընդհանուր ժողովներու մէջ եւ գաղտնի քուտարկութեամբ: Արդ՝ որպէսզի ձեր պատգամատրի ընտրութեան պարագան օրինական ամէն տրամադրութիւն լրացուցած ըլլայ, Շրջ. ժողովը պէտք տեսաւ տեղեկանալ ձեզմէ այդ ամբողջութեամբ բաց քուտարկութեամբ կատարուած է, ինչպէս կը հաւաստէ ձեր պատգամատրը, այդ պարագային հաճեցէք ընտրող ընկերներու ստորագրութիւնները դրկել մեզ.— (Տես վերջ):

Սորհրդակցական ձայներու խնդիր.— Սեփական պատգամաւոր չունեցող մարմիններէն Պրայլան իր ձայնը կու տար ընկեր Թ.ի, իսկ Սուլիանս՝ ընկեր Գնէլի: Ժողովը դիտելով որ ներքին կանոնագիրը ձայն տալու վերաբերմամբ արգելիչ տրամադրութիւն ունի, սակայն 70րդ յօդուածով իրաւունք կու տայ խորհրդակցական ձայնի իրաւունքով Շրջանական ժողովին հրահրել յարմար դատուած ընկերներ, թէ՛ խնդրոյ առարկայ երկու շրջաններու ընկերներուն փափաքն յարգած ըլլալու եւ թէ՛ ժողովը աւելի լայն դարձնելու ցանկութեամբ որոշեց կանչել յիշեալ երկու ընկերները: Գալով ուրիշ ընկերներու՝ եթէ ժողովը իր նիստերու ընթացքին հարկ տեսնէ՝ պիտի հրահրէ: Ժողովը կը փափաքէր

թէ եւ իր մէջ ունենալ նաեւ ընկեր Անդրանիկը, սակայն ժամանակի սղուծեան հետ նաեւ տեղւոյ հեռաւորութիւնը արգելք ըլլալով իր այդ փափաքին իրականացման՝ անցաւ իր հերթական գրադումներուն:

Նիստերու ժամանակը.— Որոշուեցաւ նիստին սկսիլ առաւօտեան ժամը 9-12, իսկ կէսօրէ յետոյ 2-7, գիշերները յաճախ վերապահելով ընթացիկ աշխատութեանց:

ՆԻՍՏ Բ.
19 Ապրիլ Բշ. գիշեր

Ներկայ՝ 4 պատգամաւոր ընկերները, Կեղը. Կոմիտէին՝ 1 վճռական ձայնով՝ յանձին ժիրայրի, ինչպէս նաեւ խորհրդակցական ձայնով հրահրուած երկու ընկերները, Կեղը. Կոմիտէի մնացած անդամներէն Յը՝ նոյնպէս խորհրդակցական ձայնով:

Մարմիններու տեղեկաբերութիւնը.— Ժողովը անցնելով մարմիններու ընդհանուր վիճակին եւ գործունէութեան նկատման՝ որոշեց իր այս նիստով լսել պատգամաւոր ընկերներն ու հասած տեղեկագրերը:

Սուլիանսի, Կալաքի եւ Պրայլայի մարմինները տեղեկագրեր ուղարկած չըլլալով՝ դիւանը կարգաց ստացւած մէկ-երկու համառօտ նամակները, իսկ ժիրայր տուաւ աւելի լայն ծանօթութիւններ՝ այդ շրջաններու ընկերական-կազմակերպական կեանքէն ու գործերէն: Իբրեւ նոյն շրջաններն այցելող ընկեր. համաձայն այդ տեղեկութեանց՝ այդ շրջաններու ընկերները սոգորուած թէ եւ բարի ցանկութիւններով դէպի կազմակերպութիւնը, սակայն տեղւոյն մէջ գիտակից եւ գործօն ուժերու չգոյութեան եւ այցելու ընկերներու պակասին պատճառով ընկերները իրենց կազմակերպական-կուսակցական ըմբռնումներով ու ծանօթութիւններով մնացած են խակ եւ կապուած կազմակերպութեան՝ աւելի վստահութեան կապերով ու հաւատքով: Այս պարագան միանալով կարգ մը տեղական բնոյթ ունեցող պատճառներու՝ կը խանգարեն երբեմն ընկերական-կազմակերպական ներքին ներդաշնակութիւնը եւ տեղի կու տան անհասկացողութիւններու. այս խնդիրները աւելի կը դառնան չառաջարկան-բանտորական վէճերու շուրջ, որոնց ցաւալի գոյութիւնը կը փոխադրուի մինչեւ կազմակերպական գործերուն եւ յարաբերութիւններուն, մատնելով զանոնք աններդաշնակութիւններու: Միւս կողմէ համապատասխան պատճառներով եւ յաճախ ընկերներու եւ մարմիններու անհետաքրքրութեան եւ անճշդապահութեան հետեւանքով հաւաքումներու գործն ալ կը կաղայ եւ կազմակերպական կապերը թուլացումներու կ'ենթարկուին: Առանց այս պատճառներուն՝ այդ շրջաններու կազմակերպական-

բարոյական պատկերը աւելի լաւ պիտի ըլլար քան շրջանի միւս մարմիններունը: Ընթերցարան-սրճարաններու մատակարարութեան եւ հսկողութեան գործը տարուէ տարի ինկած է, նոյն համեմատութեամբ նաեւ հասոյթը. նոյն հաստատութիւններու հասոյթէն երբեմն իբր փոխատուութիւն կը տրուի ընկերներէն անօգնականներուն՝ որոնց գանձումը սակայն կաղացումներու կ'ենթարկուի տեղի տալով թէ ներքին վէճերու եւ թէ դատական անախորժութիւններու: Օգտուելով սահմանադրութեան թոյլտուութենէն եւ հարկադրուած տնտեսական պատճառներէ՝ Ռուսմանիոյ շրջանէն 100-120 ընկերներ մեկնած են, թէ եւ երկրէն նոր հասնողներ եկած անոնց տեղը գրաւած մասամբ կազմակերպութեան մէջ:

Քոնսթանցայի պատգամաւոր ընկերը համապատասխան եւ համիմաստ լրացումներ ըրաւ՝ այս նոյն տեղեկաբերութեան՝ մասնաւորելով իր խօսքը աւելի ֆոնսթանցայի ընկերական գործունէութեան եւ պայմաններու մասին, այն տարբերութեամբ որ հոս ընկերները համեմատաբար աւելի կը հետաքրքրուին ընկերական կազմակերպական ընդհանուր խնդիրներով եւ կ'ունենան պարբերական ընդհ. ժողովներ:

Պուլկարիոյ մարմիններու գործունէութիւնն ու կազմակերպական կեանքը թէ եւ չունի Ռուսմանիոյ մարմիններու եւ ընկերներու մէջ յայտնուած բարոյական թէ յարաբերական աններդաշնակող պատճառները, բայց իրենց նիւթական պայմաններով են համեմատաբար անգոհացուցիչ եւ կազմակերպական կապերով աւելի թոյլ: Այս մասին Պուլկարիոյ շրջանի մարմիններու տեղեկաբերութիւնները հետեւեալ կերպով կը պարզեն դրութիւնը.

Վառնան որ դեռ անցեալ տարեշրջանէն յայտնի իր աննախանձելի վիճակով՝ առարկայ կ'ըլլայ նախորդ Շրջ. ժողովի նկատուածութեան եւ որոշումին՝ կը շարունակէ մնալ նոյն աննախանձելի վիճակին մէջ: Պարբերաբար ընտրուած մարմինները կը լուծուին կամ կը դադրին գործունէութենէ. միւս կողմէ ընկերները իրենց կազմակերպական վերաբերութիւններով տեղի կու տան այդ կացութեան ստեղծումին: Պարբերաբար հոն այցելող ընկերներու աշխատութիւնները կ'արդիւնաւորուին միայն անոնց հոն գտնուած պահուն — անկէ յետոյ իրերը ստանալով նախկին աննախանձելի վիճակը: Ժողովներու եւ ընկերական յարաբերութիւններու մէջ տեղի կ'ունենան կազմակերպութեան համար անուանարկիչ երեւոյթներ ու դէպքեր՝ մնալով ի հարկէ անոնց հեղինակները անպատասխանատու, քանի որ պատասխանատուութիւն ըստուած գոյութիւն չունեցաւ այդ կազմի ընկերներուն մէջ: Եւ այս բոլորը առաջ կը բերեն նոր վէճեր ու նոր անհամաձայնութիւն — անախորժութիւններ: Վառնայի կազմը եթէ կարելի ըլլայ արմատական եւ վճռական մաքրագործութեան մը

ենթարկել եւ դնել կանոնաւորութեան մէջ, ապահովաբար կարելի է ունենալ օգտակար ակնկալութիւններ, երբ նկատի առնուի որ բարոյական իր այս պատկերին մէջ իսկ 500 Ֆր.ի կազմակերպական մուտք մը ունեցած է:

Պուլկարի կազմակերպութիւնը թէ եւ գրկուած երիտասարդ գործօն ուժերու ներկայութենէն՝ ինքն իր մէջ կը ներկայացնէ բաւական օրինակելի ներդաշնակութիւն մը, եթէ սակայն երկու-երեք տարիէ ի վեր պարբերաբար յարատեւող անգործութիւնը եւ տնտեսական տագնապը ջլատած չըլլար ընկերներու կորովը. այս պատճառով է որ անդամավճարներն ամբողջ տարին մնացած է անգանձելի եւ վերջին մէկ-երկու ամիսներուն միայն կարելի կ'ըլլայ 300 Ֆր.ի չափ գումար մը հաւաքել: Միւս կողմէ մարմնի ընկերներուն եւս պակաս է պէտքին համապատասխան աշխատութեան ջանադրութիւնը: Սրճարանը այս վերջին մէկ տարուայ ընթացքին նշանակելի արդիւնք մը չէ տուած՝ չնայած որ իր առեւտրական պայմանները այդ ակնկալութիւնը կը ներշնչէին լիովին, եթէ մարմինը, հակառակ նոյնիսկ Կեղը. Կոմիտէի հրահանգներուն, ցաւալի անփութութիւնն ու անվճռականութիւնը ցոյց տուած չըլլար հաստատութեան մէջ ծառայող պաշտօնէութիւնը չէզոքացնելու: Ինչպէս ուրիշ շրջանի խումբերու, նոյնպէս եւ Պուլկարի մէջ կան այնպիսի ընկերներ՝ որոնք 2-3 տարիէ ի վեր ոչ մէկ վճարում ունեցած են եւ որոնց համար տեղւոյն մարմինը կը սպասէ վճռական կարգադրութեան մը: Պուլկարի մէջ կայ թատերասէրներու խումբ՝ բաղկացած մեծ մասամբ ընկերներէ:

Սիլվեհի կազմակերպութիւնը բուն քաղաքին մէջ ունի հազիւ 20-25 ընկերներ. խումբերու մեծագոյն մասը ցրուած են շրջակայ կայարանները եւ ստացած աւելի օժանդակի հանգամանք: Անգործութիւնն ու տնտեսական տագնապը ծանրօրէն կը ճնշէ կայարաններու ընկերները, դժուարացնելով անոնց կազմակերպական յանձնառութիւններու իրականացումը: Սիլվեհի կազմը տարեշրջանի սկիզբը ոչ այնքան ներդաշնակ, վերջին ամիսներուն մէջ մտած է կանոնաւորութեան մէջ եւ սկսած է արտայայտուիլ տարբեր աշխատութիւններով, ինչպէս օրինակ՝ սարքելով երեկոյթ-ներկայացումներ՝ այս կամ այն նպատակի շուրջը:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍՏ Գ.
Ապրիլ 20 Գշ.

Ներկայ 4 պատգամաւոր ընկերներ ու Կեղը. Կոմիտէի կողմէ ժիրայր, խորհրդակցական ձայնի իրաւունքով հրահրուած երկու ընկերները, ինչպէս նաեւ Կեղը. Կոմիտէի միւս ընկերները՝ նոյն իրաւունքով:

Ժողովը ուշադրութեան առնելով Ռուսըրուզի պատգամաւոր ընկերոջ յապաղման պարագան՝ հետեւեալ հետազոտող նոյն քաղաքի կոմիտէին:

«Մարտիկ Պասսաճեան – Ռուսըրուզ: Ներկայ պատգամաւորները վրդովմանով դիտել կու տան ձեր պատգամաւորին յապաղումը, որով պատճառ կը դառնաք ժողովի խանգարման. կը սպասուի անոր ներկայութիւնը. անմիջապէս հետազոտեցէ արդիւնը – դիւան»:

Գատը Գիւղէն (Պոլիս), պ. Ապրո Մաղիկեան նամակ մը ուղղելով ժողովին՝ կը յայտնէր թէ 1905ի Վառնայի խնդիրներուն հետեւանքով իր կրած դատապարտութեան պայմանաժամը լրացած ըլլալով, կը խնդրէր արտօնել զինքը՝ մտնելու կազմակերպութեան շարքերուն մէջ: Որոշուեցաւ նկատի առնել խնդիրը իր հերթին՝ երբ օրակարգի վրայ գտնուող նման խնդիրներու մասին կը խօսուի:

Շար. Մարմիններու տեղեկագրի ընթացման. – Ֆիլիպէի կազմակերպական կեանքը ներքնապէս եղած է ներդաշնակ, թէեւ տիրող ընդհանուր անտարբերութեանէն զերծ չեն նաեւ այս շրջանի ընկերներն ալ: Մարմինը ունեցած է ընկերական ընդհանուր հաւաքումներ եւ անդամավճարներու համար ըրած է կարգադրութիւններ՝ անոնց գանձումը դիւրացնելու համար: Ունի իր տրամադրութեան տակ բաւական քանակութեամբ կազմակերպական գոյքեր: Խմբատեղիի վարձքը ճնշած է իր պիւտճէին վրայ՝ եւ որոշուած 10% սակէն անցած, ըստ որում առանց հաւաքատեղիի գոյութեան անկարելի պիտի ըլլար եղածն ալ պահել: Երջականերուն մէջ ունի մէկ-երկու խումբեր՝ իրեն կապուած: Գոյութիւն ունի «Վ. Մանուէլեան» պատանեաց խումբը որ իր ուժերու ներած սահմանին մէջ կը ջանայ օգտակար հանդիսանալ: Գոյութիւն ունի նաեւ երկու իգական խումբեր: Կազմակերպուած է ներկայացում մը՝ ինպատու կովկասի մեր բանտարկեալներուն: Ֆիլիպէի շրջանէն եւս մեկնած ըլլալով բաւական թիւով ընկերներ՝ կազմակերպական կեանքը չունի իր նախկին կենդանի եւ արդիւնալից վիճակը:

Ռուսըրուզի կազմակերպութեան կապուած են 5-6 քաղաքներու մէջ գտնուող խումբերը: Ընկերական-կազմակերպական կեանքին մէջ հոս ալ նկատելի են թուլացումներ, թէեւ տեղական ընկերներու կողմէ եղած են ջանքեր՝ այդ երեւոյթին դէմ ընկերական ընդհ. ժողովներու յաճախակի գումարումներով: Կազմակերպութեան մուտքի քանակը անհամապատասխան է Ռուսըրուզի նման կեդրոնի մը համար: Դաշնակցական ընկերները ջանացած են որոշ աշխատանք ստանձնել ընթացքարանի եւ թատերական գործերու մէջ: Տեղական ընկերուհիներու նախաձեռնութեամբ տեղի ունեցած է ներկայացում մը ի նպատակ որբերուն:

Ընթացում հարցերու. – Վերջացնելով շրջանի մարմիններու տեղեկագրութիւնները, ժողովը անցաւ ծանօթանալու շրջաններէն եկած հարցերուն, որոնցմէ շրջանի կազմակերպութեան վերաբերեալները յանձնեց դիւանի ուշադրութեան՝ օրակարգ անցնելու համար, իսկ երկրի գործունէութեան վերաբերեալ հարցերը վերապահել յառաջիկայ Ռայոնական ժողովին՝ իր ատենին կրկին դիմում ընելով մարմիններուն:

Ներքին կանոնագրի բարեփոխութիւն. – Երջանէն եկած առաջարկներու եւ ցուցմունքներու համաձայն կեդր. կոմիտէն իր բարեփոխած ներքին կանոնագիրը ներկայացուց ժողովի ընթացման եւ վաւերացման: Կանոնագրի սկիզբը նշանակուած նպատակի վերաբերմամբ եղաւ երկու առաջարկ – 1) Բոլորովին վերցնել «նպատակ» վերնագրին տակ գետեղուած քանի մը տողերը այն պատճառով որ – ա) Կազմական ընդհանուր կանոնագիրն ալ չունի իր սկիզբը տրուած ունի նպատակ. բ) Որովհետեւ գետեղուած քանի մը բառերը ոչ միայն չեն պատկերացնել կուսակցութեան լայնօրէն գեղեցիկ նպատակներն ու սկզբունքները, այլ ընդհակառակը աւելի կ'աղաւաղեն ու կը փոքրացնեն գանտնք. գ) Որովհետեւ պարբերաբար իրարու յաջորդող Երջանական ժողովները միշտ փոփոխութեան ենթարկած (են) գայն, մինչդեռ նպատակը պէտք էր որ մնար անփոփոխ եւ հետեւաբար չէ կարելի պնդել որ նոյնը պիտի չընէ յաջորդ Երջ. ժողով մը: – 2) Կ'առաջարկուէր կուսակցութեան նպատակը քանի մը տողով խտացուած ընել կանոնագրի սկիզբը, որպէսզի ընկերները միշտ պատեհութիւն ունենան գայն կարդալու եւ յիշելու: Այս ուղղութեամբ թեր ու դէմ երկար շարունակուելէ յետոյ վիճաբանութիւնը, 1 ձեռնպահ դէմ 4 ձայնով անցաւ հետեւեալը՝ իբրեւ «նպատակ» ներքին կանոնագրի սկիզբը դրուելու համար.

«Յ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան կազմակերպութիւնը նպատակ ունի կուսակցութեան սկզբունքներուն տարածումը եւ անոր ծրագրի գործադրութեան հետապնդութիւնը կուսակցութեան ընդհ. ժողովներու կողմէ գաղութներու համար գծուած ուղղութեամբ»:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍՏ Դ. Ապրիլ 20 Գշ.

Ներկայ 4 պատգամաւոր ընկերներ, կեդր. կոմիտէն մէկ վճարական ձայնով, խորհրդակցական ձայնով հրաւիրուած երկու ընկերներն ու կեդր. կոմիտէի մնացած անդամները:

Շար(ընկերութիւն) ներքին կանոնագրի բարեփոխութեան. – Յօդ. 1ը հետեւեալ կերպով բարեփոխուեցաւ, կազմակերպութեան ընդհանուր կանոնագրէն նոյնութեամբ ընդօրինակուելով.

«Յօդ. 1. – Իւրաքանչիւր ոք, որ կ'ուզէ Հ. Յ. Դաշնակցութեան անդամակցիլ, պէտք է ամբողջովին ընդունի կուսակցութեան ծրագիրն ու տաքտիքը, ենթարկուի կանոնագրին եւ ամէն ջանք ի գործ դնէ կեանքի մէջ գանտնք իրականացնելու»:

«Յօդ. 3ին վերջը գտնուած լսելով տարակարծիքին պատճառները» խօսքը ջնջելով աւելցուեցաւ հետեւեալը. «Նոր ընդունուած անդամ մը 3 ամիս օժանդակ մնալէ յետոյ միայն գործօն անդամ կրնայ նկատուիլ»:

Յօդ. 5ի «երեք» կը փոխուի «վեց»ի: Իսկ Յօդ. 6ի «վկայական ունենայ իր ձեռքը» խօսքը փոխուի «յանձնարարուի»ի. կը ջնջուի նաեւ նոյն այդ յօդուածի «մինչեւ որ»-էն սկսեալ միւս խօսքերը:

Յօդ. 7ը կը բարեփոխուի այսպէս. – «Խումբը կ'ունենայ հաւաքիչ մը միայն, որ կ'ընտրուի համապատասխան խումբի ընկերներուն գաղտնի քուէարկութեամբ եւ պարտականութիւն կ'ունենայ. 1) գանձել իր խումբի ընկերներուն անդամավճարները, 2) ամէն 2 ամիս (երկու) անգամ մը գանձումները հաշիւներով մէկտեղ յանձնել կոմիտէին եւ անկէ առած ընկալագիրը ցոյց տալով ընկերներուն՝ անկորուստ պահել»:

Մանօթ. – ա) Այն հաւաքիչը որ մինչեւ երեք ամիս իր հաշիւները չի ներկայացնել կոմիտէին իսկոյն հաւաքչութենէն կը զրկուի՝ յայտարարուելով այս մասին խումբի ընկերներուն. իսկ չէզոքացումէն մինչեւ երկու ամիս յետոյ եթէ չվճարէ իր մօտ գտնուած գումարը՝ իբր գեղծարար դուրս կը ձգուի, իսկոյն յայտարարուելով այդ մասին տեղական ընկերներուն եւ կեդր. կոմիտէին՝ այդ ժամանակաւոր արտաքսումը ներքին շրջաբերականով ծանուցանելու համար շրջանի ընկերներուն՝ մինչեւ Երջ. ժողովի գումարումը. բ) Տեղական մարմիններու վրայ պարտականութիւն կը ձգուի այդ պիտիներուն անունները նոյնպէս հաղորդել կեդր. կոմիտէին՝ երբ տարբեր շրջան մը մեկնին, զգուշացնելու համար այն շրջանի ընկերները՝ ուր կը մեկնի մեղադրուեալը:

Յօդ. 8ին մէջ «հաւաքաբար» բառէն յետոյ կ'աւելնայ «ոեւէ կուսակցութեան» խօսքը:

Յօդ. 10ի «տարուան մէջ երեք» կը փոխուի «յաջորդաբար 3»ի. իսկ «ներկայի բացակայի դրութեամբը» բացակայութեան տեսրակի վրայի:

Յօդ. 15ին կը կցուի հետեւեալ ծանօթութիւնը. – «Մանօթ. – Եթէ մինչեւ երեք ամիս կոմիտէն խումբերու հաւաքիչին քով հաւաքուած գումարները իր տրամադրութեան տակ չառնէ՝ կորուստը պարտաւոր պիտի ըլլայ հաւաքաբար վճարելու. իսկ եթէ հաւաքիչն է որ

չուզեր վճարել՝ գործադրութեան պէտք է դնէ յօդ. տրամադրութիւնը»:

Յօդ. 18ի «յարաբերութիւն կը մշակէ ընկերներու հետ» խօսքը կը ջնջուի. իսկ «հարեւան» բառին տեղ կը դրուի «իր շրջանին կապուած» խօսքը:

Յօդ. 19ի բ) տրամադրութեան մէջի «8-10»ը կը փոխուի «առնուազն 5-8»ի. ե) տրամադրութիւնը կը ջնջուի ամբողջովին. իսկ գ) կը բարեփոխուի այսպէս. – «Տարին մէկ անգամ ուղարկել կեդր. կոմիտէին իր բարոյական եւ նիւթական գործառնութեանց տեղեկագիրը, դիւրութիւն տալով այս վերջինին՝ կարենալ կազմելու իր տարեկան տեղեկագիրը: Նոյն յօդուածի ծանօթութեան մէջ «տոմսերը» բառէն յետոյ աւելցնել նաեւ «աւելցած դրոշմանիչերը» խօսքը:

Ժողովը դիտելով որ շրջանի մարմիններուն պիւտճէները երթալով կը նուազին, մինչ ծախքերը կը մնան նոյնը, որով 10% սակը բացարձակապէս անբաւական ըլլալով կարգ մը մարմիններ նոյնիսկ երկու երեք տարիէ ի վեր որոշուած այդ սակէն միշտ աւելի կը ծախսեն. միւս կողմէ եւս պահանջուած ըլլալով բարձրացնել սակի այդ անբաւական քանակութիւնը, կ'որոշէ Ընդհ. ժողովի կողմէ կեդր. կոմիտէներու համար 20%ի սահմանուած սակը կ'իրարկել նաեւ տեղական կոմիտէներու վերաբերմամբ եւ իր այս որոշումը տեղեկացնել Արեւմտ. Բիւրոյին: Այս որոշման համաձայն՝

Յօդ. 22ի «10%»ը կը փոխուի «20%»ի. իսկ «չունի» բառէն յետոյ կ'աւելցուի «հակառակ պարագային պարտաւորուած պիտի ըլլայ աւելորդ դրամը հաւաքաբար վճարելու» խօսքը: Նոյն այս յօդուածի ծանօթութեան մէջի «10%»ը եւս պիտի փոխուի «20%»ի:

Յօդ. 23ի բ) տրամադրութեան «կանոնաւորապէս արձանագրել» կը փոխուի «սեղմ կերպով նոթագրելու»:

Յօդ. 25, 26 եւ 28ը կը ջնջուին ամբողջովին:

Յօդ. 27ը կը բարեփոխուի այսպէս. «մարմինը ամէն տարուայ վերջ կը պատրաստէ եւ կ'ուղարկէ կեդր. կոմիտէին՝ խումբերու վիճակագրոյցներու ամփոփումը՝ անոր կողմէ ղրկուած վիճակագրական բլանկներու համաձայն. իսկ իր քով յատուկ տեսրակի մէջ արձանագրուած կ'ունենայ տեղական եւ իր շրջանակի բոլոր ընկերներու անունները մանրամասնութեամբ եւ պատկանեալ խումբերու անուններով»:

Յօդ. 30ի «շրջաբերականներու» բառը պիտի ըլլայ «որեւէ շրջաբերական»:

Յօդ. 32ի Բ՞ եւ Գ՞ տրամադրութիւնները ամբողջովին ջնջուելով՝ կը պահուի մի միայն Ա. տրամադրութիւնը:

Յօդ. 38ի Բ՞ տրամադրութեան «մթերատետր» բառը կը փոխուի «գոյքատետրի», ինչպէս նաեւ կը ջնջուի Գ՞ տրամադրութեան միջին «10%»ը:

Յօդ. 38էն կը ջնջուի «ամէն տարի» խօսքը, ինչպէս նաեւ 40՞ յօդուածի Թ՞ եւ ԺԱ. տրամադրութիւնները:

Կը ջնջուի նոյնպէս յօդ. 43ի «միաժամանակ» բառէն սկսեալ ամբողջ պարբերութիւնը: Յօդ. 44ի 10%ը պիտի ըլլայ «20%», իսկ «10 Ֆրանքը» «5 Ֆրք-ի»:

Յօդ. 47ը կը ջնջուի, իր իսկ ծանօթութիւնով. իսկ 48-ը եւ 50-ը յօդուածները կը միացուի այսպէս — «Շրջանական ժողովը Պալք. շրջանի դաշնակցական բարձրագոյն ժողովն է եւ կը գումարուի երկու տարին անգամ մը՝ Զատիկի օրերուն, որուն կը մասնակցին 35-70 ընկեր ունեցող կոմիտէները մէկ պատգամաւորով, իսկ 75էն աւելի ընկեր ունեցող ընկերները երկու պատգամաւորներով:

Յօդ. 51էն «բացի տարեկան» կը փոխուի «բացի հերթականի»: Կը ջնջուի յօդ. 55ը, իսկ յօդ. 57ին վերջը կ'աւելցուի «խորհրդակցական ձայնով» խօսքը:

Յօդ. 58ը կը խմբագրուի հետեւեալ կերպով. ա) ընկերներու նկատմամբ ընկերական ատեանի կողմէ տրուած վճիռին դէմ եղած բողոքը տեղական կոմիտէի միջոցով կը հասնի Կեդր. Կոմիտէին, որ իր իրաւասութեան սահմանին մէջ կ'ընէ հարկ եղած տնօրինութիւնը: բ) Շրջանական ժողովին միայն վերապահուած է մէկ կամ մէկէ աւելի ընկերներու արտաքսումը՝ ներքին շրջաբերականով, իսկ Ռայոնական ժողովին՝ թերթերու միջոցով ի սպառ արտաքսման իրաւունքը:

Ծանօթ.- Դրամական խնդիրներու մէջ միայն Կեդր. Կոմիտէին իրաւունք կը տրուի ներքին շրջաբերականներ հանել արտաքսման:

Յօդ. ---- ա) Տեղական կազմակերպութեանց կողմէ չէզոքացուած այն ընկերները՝ որոնք իրենց պատժի պայմանաժամը լրացուցած են եւ լաւ ընթացք ունեցած են, կոմիտէն պարտաւոր է հրաւիրել զանոնք մտնելու կրկին կուսակցութեան շարքերու մէջ: բ) այն չէզոքացուածները՝ որոնք իրենց պայմանաժամի 2/3 մասը լրացուցած ըլլալով լաւ ընթացք ունեցած են՝ տեղական ընկերական ընդհանուր ժողովի միաձայն հաւանութեամբ վերստին կրնան ընդունուիլ՝ եթէ չէզոքացուածին կողմէ ցանկութիւն յայտնուի: գ) Շրջանային ժողովին եւ Կեդր. Կոմիտէի կողմէ չէզոքացուածները վերստին կազմակերպութեան մէջ ընդունելու իրաւունքը կը պատկանի նոյն այդ մարմիններուն:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն՝ կանոնադրի մնացեալ կէտերու քննութիւնը ձգելով յաջորդ ժողովին:

ՆԻՍՏ Ե.
21 Ապրիլ Դշ.

Ներկայ 4 պատգամաւոր ընկերները, Կեդր. Կոմիտէին՝ իր վճռական ձայնով, խորհրդակցական ձայնով հրաւիրուած ընկերներէն մէկը, ինչպէս նաեւ Կեդր. Կոմիտէի մնացած անդամներէն մէկ ընկեր:

Շար[ուենակութիւն] ներքին կանոնադրի բարեփոխութեան.— Ընթերցումը կը վերսկսի յօդ. 87էն, որ կը պահուի անփոփոխ, ինչպէս նաեւ յաջորդող միւս յօդուածները:

Ժողովը դիտելով որ անդամավճարներու հաւաքումը թէ դժուարութիւններու եւ թէ անկանոնութիւններու կը բախի, որոշեց դրոշմանիշի դրութիւնը հաստատել եւ առ այդ ներքին կանոնադրին իբր մաս մշակեց հետեւեալ հաշուական նոր կանոնները:

Յօդ. ---- ա) Կեդր. Կոմիտէն կը պատրաստէ գրպանի յատուկ փոքրադիր տետրակներ՝ անոնց սկիզբը տպագրել տալով ներքին կանոնադրով սահմանուած անդամավճարի վերաբերեալ յօդուածները, ինչպէս նաեւ 50 սանթիմոնց եւ 1 Ֆրանքոնց դրոշմանիշեր, որոնցմէ որոշ քանակութեամբ կ'ուղարկէ տեղական կոմիտէներուն: բ) Տեղական կոմիտէները իրենց կարգին կը բաժնեն այդ տետրակները իւրաքանչիւր ընկերոջ, իսկ դրոշմանիշերը՝ հաւաքիչներուն, համաձայն իւրաքանչիւր խումբի անդամավճարներու երկամսեայ քանակին, ստանալով համապատասխան ստացագիրը հաւաքիչէն:

Յօդ. ---- ա) Հաւաքիչը պարտաւոր է ամսէ ամիս ներկայանալ եւ գանձել իւրաքանչիւր ընկերոջ ամսավճարը՝ փոխարէն անոր տետրակին մէջ փակցնելով վճարուած գումարին քանակութեամբ դրոշմանիշ, որուն վրայ կը ստորագրէ ինքը՝ հաւաքիչը: բ) Երբ վճարող ընկերը չստանայ իր վճարած գումարին դէմ պահանջուած դրոշմանիշը՝ պատասխանատուն ինքն է:

Յօդ. ---- Հաւաքիչը իր կարգին կ'ունենայ իր խումբի հաշուական տետրակը՝ ուր մանրամասնօրէն կ'արձանագրէ ընկերներէն ստացած գումարները դիւրութիւն տալով կոմիտէի հաշուական եւ ցննչի քննութիւնը:

Ծանօթ.- Թէ՛ կոմիտէները եւ թէ՛ հաւաքիչները բացարձակապէս պատասխանատու են իրենց յանձնուած դրոշմանիշերուն:

Վերջացնելով ներքին կանոնադրի քննութիւնը, ժողովը կը յանձնարարէ յառաջիկայ Կեդր. Կոմիտէին՝ յօդուածներու դասաւորման պահուն բոլոր մարմիններու հաշուական պարտաւորութիւններն ալ ամփոփել առանձին գրուիքի մը տակ՝ լաւ պատկերացուելու համար:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամէն առաջ՝ ընթացք տրուելու համար արձանագրութեան վերաբերեալ աշխատութեանց:

ՆԻՍՏ Զ.
Ապրիլ 21 Դշ.

Ներկայ 4 պատգամաւորները, Կեդր. Կոմիտէին՝ իր վճռական ձայնով, խորհրդակցական ձայնով հրաւիրուած ընկերներէն 1, նոյնպէս 2 Կեդր. Կոմիտէի մնացած ընկերներէն:

Անվճար մնացած անդամավճարներ.— Ժողովը Կեդր. Կոմիտէի եւ պատգամաւոր ընկերներու տեղեկաբերութիւններէն ծանօթանալով որ շրջանի կազմակերպութեանց մէջ կան բաւական թիւով ընկերներ՝ որոնք իրենց անդամավճարները չեն վճարած՝ շարունակելով հանդերձ մնալ շարքերուն մէջ, միւս կողմէ մարմիններէն ոմանք ժողովի մէկ որոշման պէտքը կը զգացնեն այս մասին, կը յանձնարարէ:

Մինչեւ հաշուական-դրոշմանիշի դրութեան կիրարկման դրուիլը՝ տեղական ընկերական ընդհանուր ժողովները, ինչպէս նաեւ կոմիտէները ջանադիր ըլլան գանձելու մնացող անդամավճարները: այն ընկերները՝ որոնք նիւթական անկարողութիւնը կը հաստատուի տեղական ընկերական ընդհ. ժողովներու մէջ ձայներու 2/3ի մեծամասնութեամբ՝ կը շարունակեն մնալ շարքերուն մէջ, յաջորդ ամսականները միայն վճարելու առաջադրութեամբ: այն ընկերները՝ որոնք նոյն ընդհանուր ժողովներուն կողմէ վճարելու կարող նկատուելով հանդերձ՝ չեն ուզեր վճարել, կը դադարեցնեն կուսակցութեան անդամակցութենէն յայտարարելով այս պարագան տեղական ընկերներուն, իսկ Կեդր. Կոմիտէի միջոցով նաեւ շրջանի ընկերներուն՝ ներքին շրջաբերականով: Տեղական կոմիտէներուն վրայ պարտականութիւն կը ձգուի այդպիսիներու անունները հաղորդել Կեդր. Կոմիտէին՝ երբ անոնք Պալք. շրջանէն դուրս կը մեկնին:

Նոյնպէս այն ընկերները կամ հաւաքիչները, որոնց քով կուսակցական դրամներ մնացած են, տեղական կոմիտէներու կողմէ կը հրաւիրուին վճարելու, հակառակ պարագային իբր գեղծարար կը տեղեկագրուի Կեդր. Կոմիտէին, Շրջ. ժողովին ներկայացուելով օրինականը տնօրինելու համար:

Պատգամաւորական հին ծախքեր.— Շրջ. ժողովը դիտելով որ նախորդ տարիներէ տեղ տեղ մնացած պատգամաւորական ծախքերը ցարդ չեն վճարուած, կը յանձնարարէ:

Այն մարմինները, որոնք պատգամաւորական ծախքէ մնացած պարտքեր ունին կուսակցութեան սնտուկին, պարտաւոր են բացառիկ միջոցներով եւ կամ իրենց ծախսի սակէն խնայելով մաս առ մաս վճարել:

Նախկին դատապարտուածներու վերաբերմամբ.— Կեդր. Կոմիտէն դիտել տալով որ նախորդ Շրջանական ժողովներէ ոմանց դատապարտութեան պայմանաժամը լրացած ըլլալով դիմումներ կ'ըլլան, այն մասին կարգադրութեան մը պէտքը կը զգացնէր: առ այս ժողովը կը յանձնարարէ:

ա) Շրջանական ժողովներու կողմէ այն չէզոքացուած նախկին ընկերները՝ որոնք իրենց պայմանաժամը լրացուցած եւ լաւ ընթացք ունեցած են՝ Կեդր. Կոմիտէի

ցուցմունքին համաձայն տեղական կոմիտէին կողմէ կը հրաւիրուին մտնել կրկին կուսակցութեան շարքերուն մէջ:

բ) Այն չէզոքացուածները՝ որոնք իրենց պայմանաժամի 2/3 մասը միայն լրացուցած եւ լաւ ընթացք մը ունեցած ըլլալով հանդերձ ցանկութիւն կը յայտնեն շարքերուն մէջ մտնելու եւ կը գրաւեն Կեդր. Կոմիտէի վրատահութիւնը, կը թոյլատրուի վերստին ընդունիլ շարքերու մէջ՝ այդ մասին Կեդր. Կոմիտէի կողմէ ըլլալով հարկ եղած ցուցմունքը տեղական կոմիտէներուն:

Ընտրական յանձնարարութիւն.— Շրջանական ժողովը Ռուսմանիոյ կազմակերպութեան վերաբերմամբ ծանօթանալով շրջիկ ընկերներու եւ Քոնսթանցայի պատգամաւորին տեղեկաբերութիւններուն եւ դիտելով որ տեղ տեղ չաւուշներու անդամակցութիւնը մարմիններու մէջ գործերու կաղաքման պատճառ դարձած է, կը յանձնարարէ նոյն շրջանի ընկերներուն՝ ընտրութեանց պահուն նկատի ունենալ այս պարագան:

Վառնայի մասին.— Շրջանական ժողովը դիտելով որ հակառակ նախորդ Շրջ. ժողովի որոշման եւ Կեդր. Կոմիտէի ձեռք առած միջոցներուն՝ Վառնայի կազմակերպութիւնը շարունակած է մնալ իր նախկին տիւրը վիճակին մէջ, տեղի տալով նոյնիսկ նոր անախորժութիւններու, կը յանձնարարէ յառաջիկայ Կեդր. Կոմիտէին լուծել զայն եւ ստեղծել բոլորովին նոր կազմակերպութիւն: Համապատասխան միջոցներու կիրառումը ժողովը կը ձգէ յառաջիկայ Կեդր. Կոմիտէին:

Ընտրութիւն հաշուեքննիչ յանձնախումբի.— Կեդր. Կոմիտէի հաշիւները քննելու համար ժողովը նշանակեց ընկեր Արմէն եւ Նէչօ, պարտականութիւն յանձնելով մնացած 3 պատգամաւորներուն եւս իրենց կարգին քննել եւ աչքէ անցնել բոլոր տետրակներն ու հաշիւները, այսպէսով բոլոր պատգամաւոր ընկերներն հաւաքաբար քննած ըլլալու համար զանոնք:

Նիստը որոշեալ ժամանակէն առաջ վերջացաւ, ընթացք տալու համար արձանագրութեանց վերաբերեալ աշխատութիւններուն եւ հաշուեքննութեան:

ՆԻՍՏ Է.
Ապրիլ 22 Եշ.

Ռուսչուգի պատգամաւոր ընկերը եւս հասած ըլլալով Շրջ. ժողովը մտաւ իր օրինական կազմին մէջ եւ ունեցաւ իր լիազուտ մարմինը: Ժողովին ներկայ էին 5 պատգամաւոր ընկերներ, Կեդր. Կոմիտէն իր վճռական ձայնով, ինչպէս նաեւ խորհրդակցական ձայնով հրա-

Լիրուած ընկերներէն 1 եւ Կեդր. Կոմիտէի մնացած անդամներէն 2:

Համաձայն Ա. նիստի որոշման, ցարդ տեղի ունեցած նախապատրաստական աշխատութեանց արձանագրութիւնները կարդացուեցան եւ հարկ դատուած ուղղումները մտցուելէ յետոյ միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ անցնել զանոնք ժողովի արձանագրութեան տեսրակին մէջ, վաւերացնելով անոնց օրինաւորութիւնը:

Պուկարիոյ ընկերվարական կուսակցութեանց հետ յարաբերութեան խնդիրը.— Հարցը արդէն պատգամաւոր ընկերներու մէջ կարծիքներու փոխանակութեան տեղի տուած [ըլլալով] ոչ պաշտօնական հողի վրայ, կրկին լայն վիճաբանութեան առարկայ եղաւ ժողովին մէջ, որուն իբրեւ հետեւեանք ժողովը քուէարկեց հետեւեալ բանաձեւը.

Համաձայն այն առաջարկին որով կ'ուզուէր ճշդուած տեսնել Պուկարիոյ մարմիններու եւ ընկերներու դիրքն ու յարաբերութեան սահմանները տեղական սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւններու հետ՝ բանուոր-ընկերներու շահերու պաշտպանութեան տեսակէտէն, Երջանական ժողովը քննութեան առաւ խնդիրը իր յարակից պարագաներով եւ նկատելով որ՝

ա) Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովը ոչ միայն առաջարկուած յարաբերութեան սահմաններն ու եղանակը չէ ճշդած, այլեւ այդ ուղղութեամբ արտօնութիւն մըն ալ չէ յանձնարարած մարմիններուն՝ որպէսզի կարելի ըլլար խնդիրին մօտենալ ըստ հոլութեան. բ) Միւս կողմէ այդ հարցը Երջ. ժողովին յղուած է առանց կրցուելու անոր՝ գործնական ունէ փորձի նպաստաւոր կամ աննպաստ արդիւնքը, այլ՝ դիտուած է միայն երեւոյթներու թելադրութեամբ:

Երջ. ժողովը կը յանձնարարէ յառաջիկայ Կեդր. Կոմիտէին խնդիրը իր բոլոր կողմերովը ներկայացնել Դաշնակցութեան ձեռնահաս ժողովներու ուշադրութեան եւ անոնց ցուցմունքներուն վրայ հիմնուելով միայն հրահանգել մարմիններուն հարկ եղածը:

Տեղեկաբերութիւն Ընդհ. ժողովի պատգամաւորին.— Ընդհ. ժողովի Պալքանի պատգամաւոր ընկեր ժիրայր՝ ժողովի գրադուաններու եւ անոր քննութեան առարկայ եղող հարցերու մանրամասն տեղեկաբերութիւնն ըրաւ, ծանօթացնելով նաեւ պատգամաւոր ընկերները ժողովի այդ աշխատութեանց ընթացքին՝ նիստ առ նիստ: Այս առթիւ պատգամաւոր ընկերներու կողմէ հարցումներ ուղղուեցան՝ որոնց տրուեցաւ բացատրիչ պատասխաններ:

Կեդր. Կոմիտէի արկղի պատրաստի գումարը.— Կեդր. Կոմիտէն՝ հաշուեքննութեամբ ստուգուած իր

արկղի պատրաստ դրամը՝ 3372,20 իր գանձապետին միջոցով ներկայացուց ժողովին՝ վերջացած նկատելով իր պատասխանատուութիւնը: Մինչեւ նոր կեդր. կազմի ընտրութիւնը այդ գումարը յանձնուեցաւ նախագահ ընկերոջ՝ ի պահ:

Ժողովը վերջացաւ որոշեալ ժամուին:

**ՆԻՍՏ Ը.
Ապրիլ 22 ԵՂ.**

Ներկայ 5 պատգամաւոր ընկերներն ամբողջ, Կեդր. Կոմիտէն՝ իր 1 ձայնով, խորհրդակցական ձայնով հրաւիրուած ընկերներէն 1, ինչպէս նաեւ Կեդր. Կոմիտէի մնացած չորս ընկերները:

Ընթերցում Կեդր. Կոմիտէի տեղեկագրին.— Կեդր. Կոմիտէի տեղեկաբերութեան ընթերցումը յետաձգուած ըլլալով՝ ժողովի լիագումար նիստերէն մէկուն՝ այս նիստով որոշուեցաւ լսել զայն: Տեղեկագիրը կը խօսէր Կեդր. Կոմիտէի ընտրութեան պարագաներուն, շրջանի կազմակերպութեան ընդհ. վիճակին, մարմիններուն յարաբերական եղանակին վրայ, քանի մը հակիրճ տողերով կը ծանօթացնէր նաեւ իր կատարած աշխատութիւնները, կը ներկայացնէր շրջանի հասոյթներու պատկերը, ինչպէս նաեւ յառաջիկայ Կեդր. Կոմիտէի ընտրութեան հետ կապուած ինչ-ինչ դժուարութիւններ: Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը արդէն առանձին գոյութիւն ունենալուն՝ աւելորդ նկատուեցաւ անոր ամփոփումը մտցնել արձանագրութեան մէջ, քանի որ պիտի գետեղուի արդէն ժողովի արձանագրութեանց ամփոփումին մէջ ցրուելու համար մարմիններուն եւ քանի որ կայ անոր ամբողջութիւնը գրաւոր՝ ներկայ տեսրակին մէջ:

Տեղեկաբերութիւն Կեդր. Կոմիտէի հաշուեքննիչին.— Հաշուեքննիչը գոհութեամբ յայտարարեց թէ՛ Կեդր. Կոմիտէի հաշիւները գտած է շատ կանոնաւոր ու խնամուած, ունի բոլոր գումարներուն՝ շատ անգամ ամենափոքր գումարներուն համար տղբումաններ: Կեդր. Կոմիտէի ծախսը կը մնայ 20% սակին մէջ. նախորդ շրջանէն գանձը գտնուած է պատրաստ՝ 7089,35, մարմիններէն ստացած է 8977,80, «Ռազմիկ»ի բաժնեգիններու եւ կարասիներու հաշուին՝ 1899,85, նախորդ շրջանէն փոխանցուած գանձելիներէ՛ 199,05: Իր ելքին մէջ ունի՝ բացի 20%ի սակով շրջանի վրայ ըրած ծախսէն եւ Ընդհ. ժողովի ծախսէն՝ բանտարկեալներու ուղարկուած 300 Ֆր., պատկերներու իբրեւ փոխարժէք փոխադրուած «Դրօշակ»ի խմբագրութեան 292, Արեւմտ. Բիւրոյին փոխադրուած եւ կամ անոր հաշւոյն վճարուած 10,071,60, Պատասխանատուի հաշուին

1216,25. գինական 403,45 եւն., որոնց աւելի մանրամասն մէկ հաշուեկշիռը կը դրուի մարմիններու առջեւ Կեդր. Կոմիտէի կողմէ պատրաստուելիք ժողովի ատենագրութեան հետ:

Պուրքէչի գանձումներն ու գոյքերը.— Նախորդ Երջ. ժողովի կողմէ Ռուսչուզի մարմինն յանձնուած ըլլալով գանձումը Պուրքէչի մէջ Առաքել Գրիգորեանի վրայ գտնուած գումարներուն՝ նոյն քաղաքի պատգամաւորը յայտնեց թէ այդ մասին աշխատանք գործ դրուած եւ մաս առ մաս գանձելու համար պոնոններ առնուած են, որոնց առաջինին օրը հասած ըլլալով յանձնուած է պանքային, սակայն մինչեւ իր մեկնումը արդիւնք չէր յայտնուած:

Երջ. ժողովը կը յանձնարարէ կրկին Ռուսչուզի մարմինին՝ 1) հետապնդել խնդիրը եւ ապահովել գանձումը կազմակերպական դրամներուն, 2) «Նէվրոզ» ընթերցարանի գրքերը փոխադրել Ռուսչուզ՝ Կեդր. Կոմիտէի կողմէ ուղարկուելու համար Տարօն եւ կամ Երկրի ունէ կարօտ վայր:

Ազատամարտի օժանդակութեան հարց.— Համաձայն Ընդհ. ժողովի ցուցմունքներուն՝ Արեւմտ. Բիւրոն (Թ. Հ.) «Ազատամարտ»ի օժանդակութեան կամ փամանակի մը համար անոր պիւտճէի ապահովման խնդիրը կը յանձնէր Կեդր. Կոմիտէներու հոգածու նկատուութեան, ընելով այս առթիւ դրամական բաշխումներ, որոնց հայթայթումը կը յանձնարարէր: Պալք. շրջանին բաժին ձգուած էր այդ բաշխման գումարէն 2000 Ֆր.: Երջ. ժողովը ծանօթանալով հանդերձ այս մասին Կեդր. Կոմիտէի կողմէ Բիւրոյին ուղղուած նամակներու կամ ներկայացուած առաջարկներուն հետ, եկաւ այն եզրակացութեան որ — հակառակ իր ջերմ ցանկութեան որ այդ գործին մէջ Պալք. շրջանի մասնակցութիւնն ալ գոյութիւն ունենայ — տիրող ներկայ տնտեսական եւ կազմակերպական պայմաններու մէջ անկարելի պիտի ըլլայ առաջարկուած գումարէն նոյնիսկ աւելի նուազ գումարի մը հայթայթումը՝ ըլլայ վիճակահանութեամբ, ըլլայ նման միջոցներով, ուստի կը յանձնարարէ Կեդր. Կոմիտէին՝ իր ծախսի սակէն խնայողութիւններ ընել եւ տարեկան որոշ գումար մը տրամադրել «Ազատամարտ»ին, ինչպէս այդ կ'ըլլար «Ռազմիկին»: այդ օժանդակութեան գումարին մէջ պիտի մտցուի նաեւ այն մարմիններու ծախսի սակը, որոնք պէտք չեն զգացած ծախսելու նոյն տարուայ ընթացքին, որով ժողովը կը յուսայ տարեկան 4-500 Ֆրանք ապահոված ըլլալ:

Արձրդակցութիւններ Կեդր. Կոմիտէի յառաջիկայ կազմի մասին.— Ժողովը լսեց այս մասին Կեդր. Կոմիտէն, ինչպէս նաեւ թեկնածուներ ներկայացնող վայրերու — Ֆիլիպպի եւ Ռուսչուզի — պատգամաւոր ընկերներու կարծիքները եւ ունեցաւ խորհրդակցութիւններ այս մասին:

**ՆԻՍՏ Թ.
Ապրիլ 23 Ուրբաթ**

Ներկայ 5 պատգամաւոր ընկերները. Կեդր. Կոմիտէն՝ 1 վճռական ձայնով. խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուած 2 ընկերները եւ Կեդր. Կոմիտէի մնացեալ ամբողջ ընկերները:

Պանդուխտ եւ անօգնական ընկերներու Երկիր վերադարձը.— Ժողովը լայնօրէն արտայայտուելով այս հարցի շուրջը՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Նկատելով որ Արտասահմանի հայ անօգնական գաղթականները երկիր վերադարձնելու համար — կոչ, հրաւէր եւ նման միջոցներ չեն գործեր, ըստ որում խնդիրը սերտօրէն կապուած է երկրի եւ գաղթականներու տնտեսական կեանքին հետ, — Դաշնակցութեան ձեռնահաս մարմիններու ուշադրութեան կը յանձնուի.

ա) Երկրի տնտեսական կեանքը զարգացնելու սատարող երկաթուղիներու շինութեանց եւ հողային խնդիրներու լուծման համար ամէն հետապնդութիւն չխընայել եւ Օսմ. փարլամենթի հայ պատգամաւորութեան, ինչպէս նաեւ ազգային երեսփ. ժողովի միջոցով կրկնել արդէն իսկ այդ ուղղութեամբ եղած դիմումները՝ աւելի ազդու կերպով:

բ) Հայկական նահանգներու մէջ կազմել խառն միթիւններ՝ նոյն այդ պահանջներու հիման վրայ.

գ) Միջոցներ ձեռք առնել պանդուխտ եւ անօգնական գաւառացի հայերու վերադարձի համար անհրաժեշտ եղող նիւթական օժանդակութիւնը ուղղակի կառավարութեան կողմէ հայթայթուելու համար, քանի որ գաղթական եւ պանդուխտ հայութեան բացարձակ մեծամասնութիւնը գոհն է նախկին ռեժիմին:

Վանի գէնքերու եւ յարակից խնդիրները.— Երջ. ժողովը լսելով Վանի ծանօթ խնդիրներու մասին Ընդհ. ժողովի իր պատգամաւորին տեղեկութիւնները, ինչպէս նաեւ ի պատասխան Կեդր. Կոմիտէի դիմումներուն Արեւմտեան Բիւրոյին (Թ. Հ.) ստացուած նամակի պարունակութիւնը, ցաւով կը դիտէ այնքան կարեւորութիւն ունեցող խնդիրին լուծման յետաձգումը՝ V Ընդհ. ժողովէն ալ յետոյ, երբ կազմակերպական շարքեր անհամբեր էին լսելու անոր հեղինակաւոր կարծիքը. ու կրկնելով նախորդ Երջ. ժողովի բողոքը, կը պահանջէ խնդրոյն շուտափոյթ լուծումը:

Երուանդ Ալաճաճեանի խնդիրը.— Երջ. ժողովը ծանօթանալով Կեդր. Կոմիտէի դիմումներուն՝ գանձելու համար պ. Եր. Ալաճաճեանի վրայ գտնուած 1557,50 Ֆր.ի կազմակերպական դրամը, ինչպէս նաեւ Արեւմտ. Բիւրոյի այն նամակին՝ որով կ'իմացնէր պ. Երուանդի պատասխանը յայտնող թէ՛ «առաջիմ հնարաւորութիւն չունի վճարելու եւ կը խոստանայ ապագային». ծանօթանալով նաեւ ընկեր Ռոստոմի մէկ նամակին հետ՝

ուղղուած կեդր. Կոմիտէի ընկերներուն՝ ուր Ֆիլիպէի հայ մասնաւոր վարժարանի պարագան ուշադրութեան կը յանձնուէր իբրեւ ուղղակի շարժառիթ դրամական այդ խնդիրին եւ իբրեւ մեղմացուցիչ պարագայ Երուսաղիմի յանցապարտութեան, ժողովը արտայայտուեցաւ լայնօրէն՝ անդրադառնալով նախորդ որոշումներուն եւս եւ երկար վիճաբանութիւններէ յետոյ որոշեց.

Մնալով է՞ Լ՞ Երջ. ժողովներու որոշումներու վրայ եւ աւելցնելով որ — ա) Եր. Ալաճաճեան ընդունելով հանդերձ իր պարտքն ու պատասխանատուութիւնը՝ երեք տարուայ ընթացքին ոչ իսկ ամենաջնջին վճարում մը ըրած է՝ յարգելով իր մասին Երջ. ժողովներու կողմէ տրուած որոշումը. բ) մինչեւ իսկ չէ ուզած անձնապէս պատասխանել Ֆիլիպէի կոմիտէի հրահրին՝ լսելու համար է՞ Երջ. ժողովի որոշումը իր մասին, օրինազանցութիւն մը՝ որուն համար Լ՞ Երջ. ժողովը հարկադրուած է կրկնել Երուսաղիմի կազմակերպութեան չէզոքացումի պայմանաժամը:

Կը յանձնարարէ յառաջիկայ Կեդր. Կոմիտէին — ա) Գործադրել նախորդ Երջ. ժողովներու որոշումը եւ Երուսաղիմի Ալաճաճեանը դաշնակցական մարմիններուն ուղղուած շրջաբերականով արտաքսուած յայտարարել՝ եթէ մինչեւ յիշեալի չէզոքացման պայմանաժամի լրանալը — 1911 Ապրիլ — չվերադարձնէ պալք. կազմակերպութեան պահանջը եղող գումարը:

բ) Մինչեւ այդ պայմանաժամի լրանալը ոեւէ գումար չյանձնուելու պարագային՝ խնդիրը յանձնել Ռայտական ժողովին, միանգամ ընդմիջտ Ժ՞ Երջանական ժողովին առջեւ հանելու համար զայն՝ չորրորդ անգամ մըն ալ:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ Ժ. Ապրիլ 23 Ուրբաթ

Ներկայ՝ 5 պատգամաւոր ընկերները, Կեդր. Կոմիտէին՝ իր վճարական ձայնովը, 2 ընկերներ ինչպէս նաեւ Կեդր. Կոմիտէի մնացած անդամներէն 3ը՝ խորհրդակցական ձայնով:

Շրջանի կազմակերպութեան մասին. — Ժողովը թէ՛ Կեդր. Կոմիտէի եւ թէ՛ մարմիններու եւ պատգամաւորներու տեղեկաբերութիւններէն ծանօթանալով շրջանի կազմակերպութեան վիճակի մասին, գտաւ որ՝ եթէ յայտնուող թուլացումները արդիւնք են մէկ կողմէ Սահմանադրութեան յետոյ առաջացած տրամադրութիւններուն հետ նաեւ համեմատաբար գիտակից եւ գործօն ուժերու մեկնումին դէպի երկիր, միւս կողմէ

արդիւնք է նաեւ փրփականտի պակասին: Այս նկատումով ալ կը յանձնարարէ Կեդր. Կոմիտէին.

ա) Օգտուել ներկայացած ամէն պատեհութենէ, ինչպէս նաեւ դիմումներ ընել համապատասխան մարմիններուն՝ շեշտուած պէտքին դարմանը ձեռք բերելու եւ ընկերներու այցելութիւնն ապահովել շրջանի մարմիններուն մօտ:

բ) Յառաջիկայ վազանսի օրերուն ընկեր Արմէնը ուղարկել Ռուսմանիոյ մարմիններուն մօտ՝ փրփականտի գործով. իսկ Պուլկարիոյ մարմիններուն եւ գաղութի փրփականտին համար այժմէն դիմել Արեւմտ. Բիւրոյին (Պոլիս եւ ժրնեւ) ուսանող ընկերով մը ներկայութեան պէտքն զգացնելով, ինչպէս կը յանձնարարէ վերջին Ե՞ Ընդհ. ժողովը:

Արտագաղթին դէմ. — Երջ. ժողովը կը յանձնարարէ Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ ընկերներուն՝ կուսակցութեան մամուլին միջոցով յաճախ ներկայացնել նոյն շրջաններու մէջ տիրող տնտեսական աննպաստ պայմանները եւ կարելի եղած սահմանին մէջ ետ մղել գաղթականութեան հոսանքը, քանի որ եկող բոլոր գաղթական-պանդուխտներն ալ կը մնան անօգնական եւ թըշուառ՝ իրենց հետ ծանրացնելով առանց անոր ալ արդէն աննախանձելի վիճակը շրջանի ընկերներուն:

Ընտրութիւն Կեդր. Կոմիտէի. — Վերջին անգամ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ Ռուսչուզի եւ Ֆիլիպէի թեկնածութիւններու մասին: Պատգամաւորները ձգտեցան ազատ՝ մասնակի խորհրդակցութիւններու համար: Ֆիլիպէի ընկերները առանց հրաժարող Կեդր. Կոմիտէի ընկերներու մասնակցութեան՝ չուզեցին ներկայացնել իրենց թեկնածութիւնը, որով ժողովը կանգ առաւ ուղղակի Ռուսչուզի թեկնածուներուն վրայ եւ անոնց իւրաքանչիւրին կարողութեան եւ այլ յատկութիւններու մասին քաղեց ծանօթութիւններ Ռուսչուզի պատգամաւորէն, որ ժողովին առջեւ տուաւ բարոյական յանձնառութեան ամէն խոստում՝ կազմի յարատեւութեան եւ ներդաշնակութեան, ինչպէս նաեւ աշխատութիւններու տեսակէտէն ստանձնելով պատասխանատուութիւն իր բացակայ ընկերներուն ի դիմաց:

Այս հաստատումներուն վրայ, ձեռնարկուեցաւ գաղտնի քուէարկութեան, որ տուաւ հետեւեալ արդիւնքը — ընկերներ՝ Միսաք Թոփչեան՝ 5 քուէ, Գառնիկ Մկրտիչեան՝ 8, Մարտիկ Պասմաճեան՝ 8, Գէորգ Քէստանեան՝ 8, Հայկ-Աշոտ՝ 8, Օր. Ֆիլոմէն՝ 1, որով գրեթէ միաձայնութեամբ յառաջիկայ Կեդր. Կոմիտէի համար պարտականութեան կանչուեցան վերոյիշեալ 5 ընկերները:

Ժողովը շնորհաւորելով ընտրուածները՝ վերջացուց իր նիստը, միջոց տալով արձանագրութեան վերաբերեալ աշխատութեանց:

Փորթի պատգամաւոր ընկեր Արմէն հարկադրուած ըլլալով մեկնել, հետեւեալ նամակը յանձնեց դիւանին.

«Հ. Յ. Դաշնակցութեան Պալք. Թ՞ Երջանային ժողովին «Ինձմէ անկախ պատճառներով ստիպուած եմ այս երեկոյեան 8½ ժ քուէով պաշտօնիս մեկնիլ: Ժողովի ատենագրութիւններու սեւագրութիւնն արդէն կարդացուեցաւ եւ վերջնական սրբագրութիւնները կատարուեցան մեր ամէնուս համամտութեամբ: Կը խնդրէի ուրեմն թոյլատու գտնուիլ իմ մեկնումիս — 910-Ապրիլ 29 Ֆիլիպէ — Բորթի պատգամաւոր ԱՐՄԵՆ»:

Ժողովը համամտութիւն յայտնելով ընկերով առաջարկին՝ Կեդր. Կոմիտէին կը յանձնարարէ յառաջիկային ստորագրել տալ արձանագրութեան տետրակը՝ երբ պատեհութիւն ունենայ Ռուսչուզ այցելելու: Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

ՆԻՍ ԺԱ. Ապրիլ 24 Եր.

Ներկայ 4 պատգամաւորներ եւ Կեդր. Կոմիտէին՝ իր վճարական ձայնով:

Տեղեկաբերութիւն շրջանի մարմիններու հաշիւներուն. — Համաձայն ներքին կանոնագրի տրամադրութեանց, Կեդր. Կոմիտէն քննած ըլլալով շրջանի մարմիններու հաշիւները, հետեւեալ տեղեկաբերութիւնն ըրաւ.

Ֆիլիպէ. — Ընդհ. մուտք՝ 1709,35. Կեդր. Կոմիտէին յանձնած է՝ 1314,30, տեղական պէտքերուն ծախսած 15%. Նախորդ տարուայ պատգամաւորութեան ծախսէն մնացած 57 Ֆր. ի գումարը կը մնայ չգանձուած. հաւաքիչներու վրայ կը մնայ՝ 34,50. սնտուկը պատրաստ՝ 50 Ֆր.:

Ալիպէ. — Նախորդ տարիէն պատրաստ՝ 541,05, մուտքի գումար այս տարուան՝ 441,50, Կեդր. Կոմիտէին դրկուած 907,70, ծախսած է իր տեղական պէտքերուն՝ % 8,50:

Պուրկազ. — Մուտք 1440,50 (1000 անցեալ տարուան հաշիւ). դրկուած Կեդր. Կոմիտէին՝ 1340,70, տեղական ծախք՝ 7%:

Վառնա. — Ընդհ. մուտք 638,20, Կ. Կոմիտէին փոխադրած՝ 518,80, ծախք՝ 7%, գանազաններու վրայ գտնուած գումար՝ 58. Նախորդ 1908 շրջանի պատգա-

մաւորական ծախքը կը մնայ չգանձուած՝ 377½: Ռուսչուզ. — Մուտք 723. Կեդր. Կոմիտէին՝ 520,65. ծախքի սակ 14%. սնտուկը պատրաստ 100,30. 1908ի պատգամաւորութեան ծախքը կը մնայ չգանձուած:

Քոնսթանցա. — Նախորդ տարիէն պատրաստ՝ 122,15, մուտք՝ 795,30, Կ. Կոմիտէին դրկուած 845, ծախսի սակ՝ 3,50. սնտուկը պատրաստ 45,70:

Պրայա. — Մուտքը պատրաստ 430, այս տարուան մուտք 3098,25, Կ. Կ. ին փոխադրուած՝ 2208. անօգնական ընկերներու փոխատուութիւն սրճարանի դրամէն երաշխաւորութեան տակ՝ 525. սնտուկը պատրաստ 797: Ծախսի սակ՝ 4%:

Կալապ. — Պատրաստ 764,45, մուտք՝ 886, 30, Կեդր. Կոմիտէին՝ փոխադրուած՝ 800, ծախսի սակ՝ %11, սնտուկը 387,15, գանազաններու վրայ՝ 349,40:

Սուլիսա. — Պատրաստ 48, մուտք 645,30, Կեդր. Կոմիտէին՝ 400, գանազաններէ գանձելի 55, ծախսի սակ՝ 13%, պատրաստ սնտուկը՝ 148,80:

Դիտողութիւններ. — 1) Կալապի եւ Սուլիսայի հաշուետուները ստացուած ըլլալով՝ Կեդր. Կոմիտէին հիմնուեցաւ Ժիրայրի պատրաստած հաշուեկշիռներուն վրայ, որոնք սակայն վերջին 4-5 ամսուան մուտքերը եւ ծախքերը չեն կրեր:

2) Ռուսմանիոյ մարմինները սկիզբէն ի վեր շատ աննշան գումար մը ծախսելով իրենց տեղական պէտքերուն վրայ՝ պատգամաւորական ծախքերէ մնացած գումարները ծախսի սակին մէջ հաշուելով՝ փակուած են հաշիւները:

3) Բոլոր հաշիւներն ալ կանոնաւոր են եւ յստակ, առանց ոեւէ աչքառու թերութեան:

4) Զանազաններու վրայ գտնուած գումարները հետըզհետէ շատնալու հակամիտութիւն ցոյց տալուն՝ ժողովին ուշադրութիւնը կը հրահրուի:

5) Պուլկարիոյ կարեւոր քաղաքներու մարմինները սահմանափակուած են մի միայն իրենց ընկերական անդամավճարներու նեղ շրջանակին մէջ, առանց կողմնակի հասոյթներու հայթայթման եւս հետամտելու, ինչ որ անհրաժեշտ է, այնինչ Ռուսմանիոյ մարմինները այդ պէտքը ձգտած են լրացնել տարբեր ձեռնարկներով. չնայած այս տարբերութեան՝ ծախքերու քանակը խոտոր կը համեմատի:

Երջ. ժողովը բաժնելով Կեդր. Կոմիտէի դիտողութիւնները՝ կը յանձնէ գանոնք մարմիններու նկատուութեան, մասնաւորապէս յանձնարարելով գանազաններու վրայ գտնուած գումարներուն խստիւ գանձումը օրէնքի եւ Երջ. ժողովի կողմէ գծուած որոշումներու հիմունքով:

Ժողովը կարդալով եւ վաւերացնելով նախորդ մէկերկու նիստերն եւս՝ հարկ եղած ուղղումներն ընելէ յետոյ յանձնարարեց անոնց եւս ընդօրինակութիւնը:

ՆԻՍ ՏԻՐ.
Ապրիլ 24 ԵՐ.

Պատգամաւոր ընկերները, ինչպէս նաեւ նախկին Կեդր. Կոմիտէի վճռական ձայնը ներկայացնող ընկերը վերջին հաւաքում մը ունենալով՝ նիստերու արձանագրութիւնը ծայրէ ի ծայր կարգացին, որուն ի վաւերացում կը ստորագրեն:

ժԻՐԱՅՐ (Նախ[կին] Կեդր. Կոմիտէի կողմէ)	
Պատգամաւոր Ֆիլիպէի	Գ. ՔԻՒՐՔՅԵԱՆ
> Ռուջոլզի	ՄԻՍԱԲ ԹՈՓՉԵԱՆ
> Սիլվէնի	ՊՕՂՈՍ ՌՈՒԲԷՆԵԱՆ
> Պուրկազի	ԽԱՉԻԿ ԽԱՉԻԿԵԱՆ
> Քոնսթանցայի	

Քրիստոս ձի.

Ապրիլ 24 ԵՐ.

Գրեցի ձեզ իմ խոր ցնցումներով, որոնք ինձ համար ինչպէս որ ձեզ համար, որովհետեւ մենք միմեկիս հանդիմանում ենք միմեկիս հանդիմանումը, որովհետեւ մենք միմեկիս հանդիմանում ենք միմեկիս հանդիմանումը...

Գրեցի ձեզ իմ խոր ցնցումներով

Միստր Գ. Քիւրքեան
Միստր Մ. Թոփչեան
Միստր Պ. Օղոսեան
Միստր Խ. Խաչիկեան

Միստր Գ. Քիւրքեան
Միստր Մ. Թոփչեան
Միստր Պ. Օղոսեան
Միստր Խ. Խաչիկեան

Փաստ. 1154-139

Բ.՝ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԵԻ

1910-1911 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Հայ Յեղ. Դաշնակցութեան Պալքանեան Ծ՞ Շրջանական ժողովի կողմէն 1910-1912 տարեշրջաններուն համար Կ. Կոմիտէի վայր ընդունուած էր Ռուսոճուքը: Շրջանի միւս վայրերը թեկնածուներ չունենալուն՝ եթէ Ռուսոճուքն ալ չստանձնէր՝ բացէ ի բաց տեղի պիտի տրուէր, որ Պալքանի մէջ արդէն թուլացած մարմինները ամբողջովին կազմալուծուին եւ ընկերները ցրուին: Այս տխուր իրականութեան առջեւ էր որ հարկադրուեցանք ստանձնել Կ. Կոմիտէի պաշտօնը, հակառակ անոր, որ այդօրինակ գործ մը վարելու յարմարութիւններն ու դիւրութիւնները կը պակսէին մեզմէ:

Մեր ստանձնած գործը եւ շրջանի մարմիններուն պատկերը չէին այն՝ ինչ որ շրջանական ժողովը ցոյց կու տար: Երբ գործի գլուխ անցանք, տեսանք որ անանապէս միայն ինը մարմիններ գոյութիւն ունէին. իսկ տէ ֆաքթօ առ առաւելն մէկ կամ երկու մարմիններ կային միայն, իսկ միւսները գրեթէ կազմալուծուած վիճակ մը կը ներկայացնէին: Այս պարագան պէտք է վերագրել մէկ քանի կարեւոր պատճառներու, որոնց մասին կ'արժէ տալ կարգ մը լուսաբանութիւններ:

Սահմանադրութեան վերայտարարութեամբ ընդհանրապէս Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ գաղութին, եւ մասնաւորապէս ընկերական շարքերուն մէջ առաջ եկած էր հակակուսակցական եւ հակակազմակերպական տրամադրութիւն մը, ու սառն անտարբերութիւն մը դէպի ազգային գործերը: Ամէնուն բերնին մէջ շրջան կ'ընէր այդ ատեն սա խօսքերը. «Հուրիխէ Է. ազատութիւն է. ազգը ալ պէտք չունի կուսակցութիւններու»: Այսպէս ըսողները սակայն սահմանադրութեան վրայ կասկածանքով կը նայէին. նամանաւանդ Մարտ 31-ի եւ Ատանայի կոտորածէն յետոյ այդ կասկածանքը աւելի ուժեղացաւ: Փորձեցինք ընկերներու մէջ նախ այդ սխալ հասկացողութիւնը եւ մտայնութիւնը փոխել եւ այնուհետեւ սկսիլ բուն կուսակցական գործունէութեան: Այս մտօք մեզ ծանօթ բոլոր հասցէներուն դրկեցինք նամակներ՝ այդ սխալ ու վնասակար հասկացողութիւնը դատապարտող. զգացուցինք անոնց որ սահմանադրութեան վերայտարարութեամբ հայ քաղաքական կուսակցութիւնները ունին կատարելիք մեծ աշխատանք, որ սահմանադրութիւնը դեռ ամուր հիմերու վրայ դրուած չէ, նոյնիսկ եթէ վտանգ ալ չմնայ սահմանադրութեան — իրերու բերմամբ կուսակցութիւնները պիտի ապրին: Թէպէտեւ ընկերներու մէջ առաջ եկած է այժմ շարժում մը դէպի կազմակերպում, բայց այժմու մեր շրջանի կազմակերպութիւնը չէ այն՝ ինչ որ եղած

էր նախորդ տարիներու մէջ, եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, քանի որ ընկերներու մտաւոր մակարդակը շատ ցած է եւ անկարող են ըմբռնելու ներկայ փոխանցման շրջանի ելեւէջները, եւ ճանչնալ իրականութիւնը իր բոլոր երեսներովը:

Յեղափոխութեան առաջին շրջանին յաջորդող այս երկրորդ շրջանը, ուր կ'ապրին այժմ թուրքիոյ կուսակցութիւնները, մեր ընկերներու մտաւոր ու կուսակցական դաստիարակութեան այս ցած մակարդակով շատ ալ բնական էր, որ ոգեւորիչ ու փայլուն շրջան մը չունենայինք, նամանաւանդ գաղութներու հայկական անապատ այս կեանքով:

Եթէ աչքէ անցունենք անգամ մը Պալք. Կ. Կոմիտէին 1908-09-10-11 տարեշրջաններու եկամուտները, պիտի տեսնենք, որ աստիճանաբար նուազման է ենթարկուելու. նոյնպէս կոմիտէներու գործունէութիւնը սահմանափակուելու եւ ամենայաւ պարագայի անդամավճարներու գանձումներով բաւականացուելու է: Ճիշդ է, թէ տեղական կեանք ստեղծելու համար ընդհ. ժողովները եւ շրջ. ժողովները իրենց որոշումներու մէջ դրած են, որ գաղութներու կազմակերպուած մարմինները տեղական աշխատակողական կուսակցութիւններու հետ յարաբերուին եւ համագործակցական կապեր ստեղծեն անոնց հետ: Այս որոշումները որ տրուած են ինչպէս ըսինք տեղական ներքին կեանք ստեղծելու համար, անիրականալի գտած ենք դաշնակցական ուրոյն մարմիններու, ապագային մէջ տեղական աշխատակողական կուսակցութիւններու մէջ չբանալու տեսակէտէն առաջին՝ եւ երկրորդ՝ մեր եւ անոնց հոգեկան բաւարարութիւն տուող շարժառիթները տարբեր մեկնակէտներ ունենալէն: Այս վերջերս մեր նախկին ընկերներէն մէկ քանիներ մտնելով տեղական ընկերվարական կուսակցութիւններու մէջ, բոլորովին կը հակասեն այժմ իրենց նախկին սկզբունքներուն եւ որ զարմանալին է Դաշնակցութիւնը իրենց տեսակէտէն գոյութեան իրաւունք չունի այլեւս. եւ շատ անգամ ալ անոնց վերաբերմունքը դէպի հայկական կեանքը ու Դաշնակցութիւնը՝ եղած են թշնամական: Ի բաց առեալ վերոյիշեալ պարագաներէն՝ կան եւ ուրիշ արգելիչ պատճառներ մեր եւ տեղական աշխատակողական կուսակցութիւններու հետ համագործակցական կապեր ունենալու եւ մասնակցելու անոնց տնտեսական եւ քաղաքական կուռին: Մեր ընկերներուն 95% ըլլալով հայաստանցիներ եւ հետեւաբար օտարահպատակներ, տեղական աշխատակողներու նման չեն կրնար օգտուիլ տիրող օրէնքներէն:

աւելին կայ. ո՛չ միայն այդ օրէնքները պիտի չհովանաւորեն հայ դրսեցի աշխատաւորը, այլ շատ անգամ ի վնաս անոր շահերուն պիտի արտայայտուին:

Ռուսմանիոյ մեր մարմինները բացարձակ անկարելիութեան մէջ են ունէ կերպով մերձեցում եւ յարաբերական կապ ունենալու տեղական աշխատաւորական կուսակցութիւններու հետ, քանի որ ռուսման կառավարութիւնը կասկածի մը առիթով իսկ օտարահպատակի մը ընկերվարական ըլլալու հանգամանքին մէջ, կ'աքորէ իսկոյն երկրէն դուրս առանց այլեւայլի:

Երբ պալքանեան շրջանի կազմակերպութեան թուլացման պատճառներուն վրայ կը խօսինք, պէտք է յիշենք եւ մի քանի կարեւոր ներքին պատճառներ ալ. ատոնցմէ մին փրոփականտիստ ընկերներու մեր շրջանը այցելութեան գրեթէ բացարձակ դադարն է: Եթէ նախընթաց տարիներու մէջ Պալքանը կուսակցական գործունէութեան տեսակէտով եղած էր փայլուն, ատոր պատճառներէն մին ալ պէտք է նկատել փրոփականտիստ ընկերներու յաճախակի մեր շրջանը այցելելն եւ այն պարագան որ Պուլկարիան կը ներկայացնէր Երկրի հանդէպ իբր ճանապարհ ու ապաստան Ռուսաստանէն եւ Հայաստանէն փախստական հայերուն: Կ. Կոմիտէն զգալով ժամանակին փրոփականտիստ ընկերներու ահագին դերը, դիմած էր Բիւրոյին եւ խնդրած՝ որ շրջիկ ընկեր մը հանէ դէպի մեր շրջանը: Բիւրոն հաւանած էր մեր առաջարկին եւ տեղեկացուցած որ մօտ օրէն ընկեր իսահակեան³ ճամբայ կ'ելլէ կուսակցական խօսքի տարածողի հանգամանքով. բայց շաբաթ մը յետոյ Բիւրոն կը յայտնէր, որ յիշեալ ընկերը պիտի չկրնար գալ անձնական ինչ ինչ պատճառներով: Ուրիշ ալ կայ: Այդ ալ կուսակցական դաստիարակութեան պակասն է: Մեր ընկերներուն մեծագոյն մասը դեռ անգիտակ է այսօր թէ կուսակցութիւնը ի՞նչ բանի կը ձգտի, ո՞րն է անոր դաւանած վարդապետութիւնը: Տասն եւ եօթը տարիներէ ի վեր մեր շրջանին մէջ գոյութիւն ունեցած է կազմակերպութիւն. բայց կարծես երբեք ալ ջանք չէ թափուած պատրաստելու ընկերները դաշնակցական շկոյալով: Եթէ թափուած ալ են այդ ուղղութեամբ ջանքեր, չեն եղած անոնք յարատեւ ու սիստեմաթիկ եւ լրացուցիչ: Ահա այս պակասներուն համար է որ հակադաշնակցական պայքարներու ատեն, մեր ընկերներէն ոմանք սկսած են հակիլ աւելի շատ հակառակ կողմին վրայ:

Անցեալ տարուայ հայ պահպանողականներու կողմէն բացուած պայքարը կուսակցութեան դէմ՝ այս երեւոյթը առաջ բերաւ: Աղթամարի խնդիրը իթիւհատի հետ համաձայնութիւնը, եւ այլն բոլոր փորձերը որ կազմակերպական պատասխանատու օրկանները կը կիրարկէին ժողովուրդի օգտին՝ ընդդիմադիր կողմերուն մոլորեցնող սուտերուն եւ զրպարտութիւններուն հետեւանքով յառաջ եկած էր մտայնութիւն մը՝ որ աւելի շուտ կը հակաէր հակառակորդ կողմին վրայ՝ քան մեր կողմին:

Ըստ մեզ Կ. Ընդհ. Ժողովէն յետոյ կուսակցութիւնը պիտի չունենար թէ Պալքանի մէջ եւ թէ այլուր կուսակցական այն քրիզը — որ քիչ էր մնացած ադէտալի հետեւանքներ ունենար — եթէ նախօրօք ջանք թափուած ըլլար կուսակցական շարքերը կրթելու կուսակցական դպրոցով: Թերեւս առարկուի որ կազմակերպութիւնը ասկէ առաջ զբաղուած ըլլալով կենսական ու գործնական հարցերով, չէր կրնար տեսական այլ խնդիրներով զբաղելու: Այս առարկութիւնը որքան ալ ճիշդ թուի երեւութապէս, սակայն եւ այնպէս ճիշդ չի կրնար ըլլալ: Կազմակերպութիւնը կուսակցութեան դիսցիպլինայի եւ շարքերու բիւրեղացման տեսակէտէն անգամ պարտաւոր էր այդ ուղղութեամբ աշխատանք թափելու: Պահ մը իսկ ենթադրենք որ երկրի մարմիններու եւ ընկերներու համար, տիրող պայմաններու հետեւանքով անկարելի էր ունէ կերպով այդ հարցին մօտենալու, սակայն կային անդին արտասահմանի մարմինները ու ընկերական շարքերը, որոնք բռնապետական տարիներուն մէջ կուսակցութեան ճակատագրին վրայ ունէին բաւական ազդեցութիւն ու կշիռ եւ որոնց համար չէր պակսեր ոչ միջոց եւ ոչ ալ ժամանակ եթէ Բիւրոն եւ կամ այլ ձեռնհաս մարմիններ հարկ եղածը գործադրութեան դնէին:

Գործիչ փրոփականտիստ ընկերներ, մեր շրջանը եկած, անցած-գացած են. բայց անոնք աւելի շատ խօսած ու ծանրացած են ընկերներու պարտականութիւններուն վրայ դէպի իրենց տառապեալ եղբայրները: Կուսակցական դաստիարակութեան հոգը պէտք էր վերցուցած ըլլային Բիւրոնները եւ ուսանողական դաշնակցական միութիւնները եւ մէկ ալ կուսակցական մամուլը որոնք ամէն կերպ ունէին տրամադրելի միջոցներ եւ յարմարութիւններ:

Ճիշդ է նոյնպէս, թէ՛ Կ. Կոմիտէները արտօնուած են Ընդհ. Ժողովներէն՝ վարելու անկախ կերպով կուսակցութեան ծրագրին սահմաններուն մէջ տեղական ներքին գործերը եւ հետեւաբար կուսակցական դաստիարակութիւնն ալ կրնային այդ կերպով առաջ տանիլ: Արտասահմանի կազմակերպութիւններուն համար, իրենց օժանդակի հանգամանքը եւ Ընդհ. Ժողովներու կողմէն իրենց համար բացուած վտիտ սակերովը հիմնովին անկարելի էր վերել յիշուած հարցին մօտենալու, քանի որ այդ սակը շատ անգամ տեղական ամենահամեստ ծախսերն անգամ չէր կրնար լրացնել:

Երբ մենք այնքան կարեւորութիւն կու տանք ժողովուրդներու կեանքին մէջ կրթութեան ու դաստիարակութեան դերին, եւ զանոնք կը նկատենք յառաջադիմութեան եւ լուսաւորութեան ամէնէն կարեւոր գործօններէն մին, ապա եւ ուրեմն կուսակցական դաստիարակութիւնն ալ նոյնքան կարեւոր է կուսակցու-

3. - Զշկոթել ժամօք բանաստեղծին հետ. այս մէկը իսահակեան Արշակն է, յետագային ժամօք Ա. Ջամալեան ծածկաճուղով:

թեան յառաջդիմութեան համար:

Ընկերները պէտք է դաստիարակել գէթ այսուհետեւ կուսակցական դաստիարակութեամբ սիստեմաթիկ ու յարատեւ ջանքերով, եթէ կ'ուզուի ունենալ կուռ եւ ամուր կուսակցութիւն մը որ պատրաստ ըլլայ դիմագրաւելու ներքին ու արտաքին ամէն տեսակ պատահարներ. առանց ասոր մեր ճիշդ դէպի վերածնունդը չի կրնար յաջողիլ եւ մեր կուսակցութիւնը կը մնայ իրեն տեղը՝ ուր որ է:

Մեր շրջանի կազմակերպութեան թուլացման պատճառները երբ կը թուենք նկատի պէտք է առնել սա կէտերն ալ որ նոյնպէս կարեւոր են եւ կը կազմեն լրացուցիչ մասերը կուսակցական եւ ընկերական պատկերին: Ատանայի կոտորածէն յետոյ, հայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ առաջ եկած էր յուսահատական վիճակ մը դէպի ներկան ու ապագան: Այդ վիճակը նոյնպէս չէր կրնար չանդրադառնալ մեր ընկերական շարքերուն վրայ եւս, եւ չունենար իր հակազդեցութիւնները դէպի նոր ուժերը: Հողերու այսքան ատեն բռնաբարուած մնալը եւ սիստեմաթիկ այն տեւորները որ երեք տարիներէ ի վեր կը գործուին քիւրտ պէկերու կողմէն հայ ժողովուրդին վրայ եւ ասոնց դէմ կառավարութեան բռնած կողմնակալութիւնը՝ զօրաւոր պատճառ մը կ'ըլլան կարծես նոյն հակազդեցութեան շարունակութեանը: Սահմանադրական Թուրքիոյ մասին, երբ դեռ բռնապետական օրերուն այնքան յոյսերով եւ ակնկալութիւններով տարուած էին մեր այստեղի ընկերական շարքերը, եւ կը կարծէին որ անիկա պիտի ամօքէր բազմաչարհար հայ ժողովուրդին խոր վէրքերն ու ցաւերը եւ դառնար իսկական խնամակալը անոր, եւ ահա երեք տարի է որ այդ յոյսերը չարդարացան. բայց աստի շատ տեղեր ալ տեսնուեցաւ որ անիկա պատճառ եղաւ որ հայուն իրաւունքները ոտքի տակ երթան: Կտրուած ըլլալով բուն կեանքէն մեր մարմինները ու ընկերները՝ գաղափարով միայն կապուած են այդ կեանքին, եւ որքան ուժեղ ըլլան Թուրքիոյ իրականութեան մէջ՝ կուսակցութեան գործունէութիւնը այնքան աւելի կենսունակ կը մնան իր հեռաւոր մասերը եւ օրկանները: Փարլամենտի դաշնակցական պատգամաւորները եւ մամուլը հանրային բեմերու վրայ պէտք էր որ աւելի ուժեղ հնչեցնէին անիրաւուած հայ ժողովուրդին ձայնը: Մեր ընկերներէն շատերը, երբ ոճիրներու լուրերը կ'առնէին՝ հարց կու տային մեզի.— ի՞նչ կ'ընէ կուսակցութիւնը...: Թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին մեր թուած այս պատճառները եղան ահա որ մեր շրջանի ընկերները եւ մարմինները ենթարկուին թուլացման եւ սկսեալով տրամադրութիւններ սնուցուին ապագայի նմատմամբ ալ:

Շարքերու վերակազմակերպման փորձեր.— Շրջանական ժողովը Ռուսմանիոյ կազմալուծուած մարմինները կազմակերպելու եւ ընկերական վէճերն ու ընթացիկ խնդիրները կարգադրելու գործը յանձնած էր նոյն

ժողովի Գոնսթանցայի պատգամաւոր ընկեր Ահարոն Յովնանեանի: Այդ Շրջանական ժողովի փակումէն անմիջապէս յետոյ [ան] անցաւ նոյն շրջանը: Այցելեց Գոնսթանցա, Կալաց, Պրայլա, Սուլինա. բայց յիշեալ ընկերը ունէ յաջողութիւն չունեցաւ եւ նոյնիսկ շատ տեղեր ալ դժգոհ մնացին ընկերոջ կարգադրութիւններէն: Ռուսմանիոյ շրջանը պալքանեան ռայոնի ճակատագրին վրայ ունենալով մեծ կշիռ, իր նիւթական ու բարոյական անցեալին մէջ մատուցած գոհաբերութիւններովը, իր ներկայի անմիջիկա վիճակը Կ. կոմիտէին լուրջ մտահոգութիւններէն մին դարձաւ: Անհատական եւ կազմակերպական ճանապարհներով ջանացինք պահպանել ընկերական ու կուսակցական կապերը, պարզեցինք շրջաբերական նամակներով այն թիւր կարծիքները, որ սահմանադրութենէն ասդին ծնունդ են առած: Կարճ ժամանակէ ետք սթափում մը սկսաւ առաջ գալ. ընկերներէն շատեր կը խոստանային կազմակերպուիլ կրկին եւ առաջուան թափով փարիլ գործին: Ընկերներու այս խոստումները ո՛րքան ալ անկեղծ ըլլային, բայց եւ այնպէս նկատի ունենալով, որ իրենք իրենց անկարող պիտի ըլլան արդիւնաւէտ կարգադրութիւններ ընելու գործին շուրջ, նկատելով նաեւ որ կուսակցական բանաւոր խօսքին ազդեցութիւնը անհրաժեշտ է ընկերներու մէջ առաջ եկած սխալ ու թիւր հասկացողութիւնները լուսաբանելու՝ դիմեցինք Պոլիս ընկեր Ժիրայրին, որ մէկ ամիսի չափ այցելէ Ռուսմանիոյ շրջանը նոյն առաջադրութեամբ: Ընկեր Ժիրայր¹ կազմակերպական եւ խմբագրական գործերով զբաղուած ըլլալը իմացնելով ցաւ կը յայտնէր, որ մեր փափաքը պիտի չկրնար իրագործել. բայց կը յանձնարարէր մեզ՝ դիմել ընկեր Ֆարհատին⁴ խոստանալով իր կողմէն ամէն ջանք թափել, յաջողցնելու համար յիշեալ ընկերոջ այցը Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ շրջանը:

Ընկեր Ֆարհատ ընդունելով մեր առաջարկը՝ իսկոյն անցաւ Ռուսմանիա: Ուրախ ենք ըսելու որ ընկեր Ֆարհատ կարճ ժամանակի մը մէջ փոխադրեց կեդրոնական արկղը ընկերներու եւ մարմիններու մօտ գտնուած կարեւոր գումար մը, եւ ըստ կարելու կարգի դրաւ կուսակցական եւ ընկերական գործերը. քննեց կազմակերպական սրճարաններու հաշիւները. լուծուած մարմիններու տեղ նոր մարմիններ ընտրել տուաւ, կարգադրեց ընկերներու մէջ ծագած վէճերը: Պուլքէշի մէջ Կովկասի բանտարկեալներուն համար մեր յանձնարարութեան համաձայն հանգանակութիւն մը բացաւ տեղական քանի մը ընկերներու մասնակցութեամբ: Պուլքէշի մէջ ընկերը չկրցաւ կազմ առաջացնել ընկերներու այլասերման եւ անգիտակցութեան պատճառաւ. նոյնպէս չհաջողեցաւ զանձելու 1904էն ի վեր տեղույն մէջ

4. - Ֆարհատ. չշփոթել նոյն ծածկաճուղով ծանօթ Օհանջանեան Սարգիսի եւ Թիրեաթեան Հայկի հետ: Այս մէկը Պալքանի Կ. Կոմիտի աղայնցեան Պասանեան Մարտիկն է:

ապրող երեքմիս ընկեր Առաքել Գրիգորեանի վրայ կազմակերպութեան ունեցած 480 Ֆրանքի գումարը: Մեր հրահանգին համաձայն փոխադրեց մեզ մօտ կազմակերպական գոյքերն ու իրերը, որոնք 4-5 տարիներէ ի վեր անխնամ կերպով ձգուած էին ասոր անոր մօտ ընկեր Ֆարհատ կ'այցելէ նաեւ Շուվալա եւ Վառնա-Շուվալայի գոյքերն ու իրերը կը փոխադրէ նոյնպէս Վառնայի մարմնի մօտ, քանի որ Շուվալայի մէջ եւս չէ մնացած ոչ կազմ եւ ոչ ալ ընկերներ:

Տարուան սկիզբէն տակաւին Վառնայի առժամեայ մարմինը, որ ընտրուած էր նախորդ Կ. Կոմիտէին՝ քանի որ տեղական ընկերները մէկ քանի տարիներէ ի վեր չէին կրնար համաձայնութեան գալ իրարու մէջ օրինական մարմին մը ընտրելու՝ կու տար իր հրաժարականը պատճառաբանելով՝ որ առժամեայ մարմին մը չի կրնար երկար ատեն պաշտօնի գլուխ մնալ առանց հակակշռելու «առժամեայ» հանգամանքին եւ թէ անկարող կը զգան ինքզինքնին այլեւս այդ միջոցառումն մէջ կազմակերպական ոեւէ աշխատանք տանելու: Կ. կոմիտէն օգտուելով ընկեր Օննիկ Աղամեանի Ռուսոստի վրայով Վառնա ճամբորդութենէն՝ պաշտօն յանձնեց անոր տեղական մի քանի գիտակից ընկերներու հետ համախորհուրդ օրինական մարմին մը ջանալ ընտրելու ընկերը քիչ շատ յաջողեցաւ այս առաջադրութիւնը գլուխ հանելու: Այժմ Վառնայի մէջ ունինք մարմին մը ընտրուած ընկերներու քուէներով բայց դեռ ցարդ չեն կատարած որեւէ նշանակելի գործ:

Կովկասեան բանտարկեալներու դատական ծախսերու համար հանգանակութիւն եւ վիճակահանութիւն.— Ստացած ըլլալով Արեւմտեան Բիւրոյի շրջաբերականը կովկասեան բանտարկեալներու դատավարութեան մօտալուտ տեղի ունենալը իմացնող, այս առթիւ դատական եւ այլ ծախքերու խոչոր գումարի մը անհրաժեշտութիւնը զգացնելով, պարտականութիւն կը դնէր մեր վրայ հայթայթելու համար որոշ գումար մը նոյն նպատակին համար:

Կ. Կոմիտէն նկատելով որ խնդիրը իր հոլթեամբ արժանի է ամէն տեսակ զոհողութեան՝ համակրութեամբ ընդունեց այդ առաջարկը, եւ իր ուժերուն եւ տիրող պայմաններուն թոյլ տուած չափերով աշխատեցաւ որ որքան կարելի է շուտ եւ արդիւնաւէտ ըլլան կատարելիք տեղական ձեռնարկները: Եւ որովհետեւ գաղութը եւ ընկերներէն շատերը անգիտակ էին բանտարկութեան շարժառիթներուն եւ ոռու կառավարութեան յայտնի սարդանքներուն եւ հայահալած քաղաքականութեան, Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ հայ ժողովուրդին ուղղեալ կոչ մը հրատարակուեցաւ, որուն մէջ կը բացատրուէր կառավարութեան՝ դիտումները ընդհանրապէս հայ ժողովուրդին եւ մասնաւորապէս անոր մտաւորականութեան հանդէպ: Կոչը կը ծանրանար Պուլկարիոյ եւ Ռուսմանիոյ հայութեան եղբայրական պարտականութեանը վրայ եւ դիտել կու տար որ, եթէ հնարա-

ւորութիւն չկայ ինչ ինչ պատճառներով բողոքի միջոցներ գումարելու, նիւթական օգնութիւններով ցոյց տան որ թէպէտեւ մոռնանք իրարմէ հեռու՝ բայց եւ այնպէս՝ իրենք սրտերով շատ մօտ են իրարու: Միեւնոյն ատեն նամակներով մեր շրջանի մարմիններուն եւ ընկերներուն կը թելադրուէր որ ներկայացումներ, հանդէսներ սարքելով արդիւնքը փութացնեն կեդրոնական արկղը: Կ. Կոմիտէն ալ իր կարգին սարքեց վիճակահանութիւն մը: Ներկայացումներէ, հանգանակութիւններէ եւ վիճակահանութենէ գոյացաւ երկու հազար Ֆրանքի գումար մը, որը իր ատենին փոխադրուեցաւ Բիւրոյին: Այստեղ անցողակի ըսենք որ տեղացի հայութիւնը, նամանաւանդ ունեւոր դասակարգը խիստ անտարբերութիւն մը ցոյց տուաւ հանդէպ այս ձեռնարկներուն:

Յարաբերական.— Մեր յարաբերութիւնները երկրի եւ արտասահմանի մարմիններուն հետ հակառակ մեր փափաքներուն ու բաղձանքներուն գոհացուցիչ չեղան:

Սկիզբէն ի վեր աշխատած ենք որ երկրի ծոցին մէջ բուն կեանք պարող մեր մարմինները մեզի գիտակ պահեն իրենց գործունէութեան հետ, բան մը՝ որ մեծապէս իր օգուտները պիտի ունենար եւ կուսակցական կապերը զօրացնելու ծառայէր: Մեր շրջանը կուսակցութեան օրգաններէն մին ըլլալով, անոր ընդհանուր կեանքին անհաղորդ եւ մեկուսացած պարագային շատ բնական է որ դատապարտուի խորթացումի եւ որ աւելին է, ենթարկուի բարոյական մահուան: Պոլսոյ Կ. Կոմիտէն եւ Արեւմտեան Բիւրոն թէպէտեւ տուած են երեքմիս տեղեկութիւններ եւ ծանօթութիւններ կուսակցութեան գործունէութեան մասին, բայց անոնք չեն եղած բազմակողմանի եւ լիակատար: Իսկ Վանի, Մուշի, Խարբերդի, Իզմիրի Կ. Կոմիտէները ո՛չ մէկ պատասխան տուած են մեր շօշափած խնդիրներու մասին. միայն Ամերիկայի Կ. Կոմիտէն պահած է մեզ հետ կատարեալ յարաբերութիւն եւ մեր նամակներուն օրը օրին պատասխանած: Չմոռանանք ըսելու որ Խարբերդի Կ. Կոմիտէն տեղույն վրայ թերթ մը հրատարակելու համար դիմած էր մեզ դեռ տարեշրջանին սկիզբները եւ խընդրած՝ որ նիւթական օժանդակութիւն մը ընենք իրենց: Այդ առաջարկը մեր կողմէն ուրախութեամբ ընդունեցաւ եւ որոշեցինք մեր ծախսի սակէն խնայողութիւններ ընելով տարեգլխին աւելցած գումարը յատկացնել նոյն նպատակին:

Մենք աւելի գոհ պիտի մնայինք Խարբերդի Կ. Կոմիտէնէ, եթէ մեզ տար անիկա իր շրջանի կազմակերպութեան պատկերը, հայ ժողովուրդի տնտեսական, կրթական վիճակը, վերաշինութեան այն ձեռնարկները՝ որ սահմանադրութենէն ասդին տեղի ունեցած են: Մէկ ալ Բիւրոյի միջոցաւ Տրապիզոնի Կ. Կոմիտէն ստացած ենք այս վերջերս շրջաբերական նամակ մը Թուրքիոյ

5.- Պոլսոյ Կ. Կոմիտէն:

արեւմտեան նահանգներու Կ. Կոմիտէներու ռալոնական ժողով գումարելու առաջարկը ներկայացնող:

Մեր յարաբերութիւնները շրջանի մարմիններուն հետ եղած են բաւականին կանոնաւոր. շնորհիւ յաճախակի մեր դիտողութիւններուն, մարմինները եւ ընկերները կարծես հետզհետէ կու գան գիտակցութեան, ու սկսած են ըմբռնել որ արտասահմանի ընկերները դեռ ունին պարտականութիւններ կատարելիք, քանի չեն վերջացած դեռ հայ ժողովուրդի վրայ գործ դրուած բռնութիւնները ու անիրաւութիւնները եւ երկիրը քանի դեռ ապրած չըլլայ խաղաղ, ստեղծագործ եւ վերաշինող տարիներ:

Շրջանի կազմակերպական եկամուտը.— Շրջանի երկու տարուայ եկամուտները բաղդատամբ միւս տարիներուն նուազած է. այս պարագան պէտք է վերագրել մասամբ ընկերներէն շատերուն երկիր վերադառնալուն եւ մասամբ ալ կուսակցութեան ընդհանուր հանգանակութիւններուն ժամանակէ մը ի վեր մեր շրջանէն վերնալուսն: Կարեւոր տեղ ունի նաեւ հասոյթներու նուազման մէջ ընկերներու կողմէն կազմակերպական տուրքին հանդէպ ցոյց տրուած անպարտաճանաչութիւնը. այս պարագան աւելի յատուկ է Պուլկարիոյ ընկերներու համար: Վերոյիշեալ հանգամանքներու մէջ այս տարի ունեցած ենք 7582 Ֆր. կազմակերպական հասոյթ:

Նիստեր.— Կ. Կոմիտէն տասն եւ վեց ամսուայ միջոցին մէջ ունեցած է ութսուն նիստեր, որոնց ընթացքին զբաղուած է շրջանի մարմիններուն ընթացիկ գործերով, Ազատամարտի պահանջներու խնդիրներով եւ կազմակերպական ու կուսակցական գանազան հարցերով: Գրած է շրջանի մարմիններուն թէ շրջաբերական նամակներ եւ թէ 150 ալ սովորական նամակներ: 15րդ նիստէն յետոյ մեր պաշտօնակիցներէն Հայկ-Աշոտ չէ մասնակցած նիստերուն Ֆիլիպէ տեղափոխուելուն պատճառով:

Ղատական.— Պոլսոյ Կ. Կոմիտէն իմացած ըլլալով, որ Պարտիզակցի Մ. Ֆրէնկեան, երեքմիս մեր Ֆիլիպէի ընկերներէն, որ իր շարաշահութիւններուն համար դատապարտուած էր նախկին շրջանական ժողովէն, այս անգամ Մաղնիսա քաղաքին մէջ շանթաժ ընելով յաջողած է գանձել 15-20 ոսկիի գումար մը ասոր անոր սպառնալիքներ ընելով: Կ. Կոմիտէն նկատելով յիշեալ անձին դաշնակցականի հանգամանքը, որոշեց վերջնականապէս արտաքսուած համարել շրջանի կազմակերպութենէն, այս որոշումը յայտարարուեցաւ իր ատենին պաշտօնաթերթով:

Քոնսթանցայի մարմինը տարուայ սկիզբները առանց Կ. Կոմիտէին հաւանութիւնը առնելու, կազմակերպական սրճարանը հազար Ֆրանքի վաճառել կ'իմացնէր. որոշուեցաւ միայն դիտողութիւն մը ընել, որ առանց Կ. Կոմիտէին հաւանութեան՝ այդ կերպ վարմունքներ հակառակ են դիսցիպլինայի եւ կանոնագրի

տրամադրութիւններուն: Այսպէս վարուիլ որոշուեցաւ, որովհետեւ շատ լաւ ծանօթ էինք անոնց մաքուր եւ անկեղծ զգացումներուն. եղածը լոկ կազմակերպական օրէնքներուն անհասկացողութենէն առաջ եկած թերութիւն մըն էր:

Կազմակերպական պահանջներ. ընկերներու նախկին ընկերներու եւ հաստատութիւններու վրայ.— Նախկին Կ. Կոմիտէի տոմարներուն մէջ արձանագրուած կային շարք մը դրամական պահանջներ, որոնք ժամանակին ինչ ինչ պարագաներու տակ թէ փոխ տրուած էին եւ աւանդ ձգուած տեսակ տեսակ ձեռնարկութիւններու համար: Կ. Կոմիտէն իր ատենին հարկ եղած դիմումները կատարած էր յիշեալներու մօտ եւ յիշեցուցած՝ որ կազմակերպական դրամները պարտաւոր են վճարել եթէ չեն ուզեր որ հրապարակով յայտարարուի իրենց անունները որպէս զեղծարարներ: Ասոնցմէ միայն Կարօ Աճէմեան, Ամերիկայի Կ. Կոմիտէի ձեռամբ դրկած է իր 130 Ֆր.ի պարտքը, իսկ միւսներէն մինչեւ այսօր անկարելի եղած է գանձել:

Պալքանեան Կ. Կոմիտէին կը պարտին այժմ Երևանդ Ալաճաճեան (Ֆիլիպէի նախկին ընկերներէն, 1577-20 Ֆր., Առաքել Գրիգորեան (Պուլքէշ) 487 Ֆր. Համբարձում Դաւիթեան 187-55: Իսկ Ֆիլիպէի դատավարութեան մը համար պահ է) դրուած 2000 Ֆր.:

Ասոնցմէ Երևանդ Ալաճաճեան խոստացած է իր պարտքը վճարել Բիւրոյին մէկ քանի ամիսէն. Առաքել Գրիգորեանէ, որ առած էինք երկու մուրհակ, հակառակ մեր ըրած ջանքերուն չկրցանք գանձել, որովհետեւ այս անձը սնանկացած ըլլալով իր Ֆիլիպէի փոխանցած է ուրիշի մը անուան: Իսկ Ֆիլիպէի 2000 Ֆրանքին համար այդ տեղի մեր ընկերներէն Ա. դիմած է գործին պաշտպան փաստաբանին եւ ուզած է անոր կարծիքը այդ դրամները ետ առնելու մասին, բայց այս վերջինս յայտարարած է որ քաղաքական այս տեսակ պայմաններու մէջ խելք չէ մէջտեղ նետել այդ օրինակ խնդիր մը որ կրնար կնճռոտութիւններ եւ բարդութիւններ առաջ բերել: Ահա մեր շրջանը իր կուսակցական եւ ընկերական շրջանին մէջ իր ընդհանուր գծերով: Չենք յիշատակել շրջանի մարմիններուն առանձին առանձին տեղեկագրութիւնները քանի որ անոնք չեն ունեցած կազմակերպական ո՛չ մի գործունէութիւն ի բաց առեալ կազմակերպական տուրքի գանձումներէ ուր մի քանի տեղեր ցաւ է խոստովանիլ որ այս իսկ չէ կատարուած:

Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷԻ ԱՆԴԱՄՆԵՐ Մ. ՊԱՍՄԱՃԵԱՆ, Գ. ՔԵՍԱՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ, ՄԻՍԱԲ ԹՈՓՉԵԱՆ

(Կնիք)

1911 Օգոստ. 9, Ռուսլոզ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XIV

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Ամերիկայի Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտեի անունով կազմակերպված էր 1896 թուականին Միացեալ Նահանգներու արեւելեան գոտիի մէջ. ապա կազմակերպական ցանցը տարածուելով հասած էր Արեւմտեան շրջան (Քալիֆորնիա) եւ Քանատա, - աշխարհագրական ընդարձակ երկրամաս մը, ուր վերջին տասնամեակներուն հաստատուած հայութիւնը բաղկացած էր մեծ մասամբ Արեւմտեան Հայաստանէն (Խարքերո, Քալու, Քոլի, Տիգրանակերտ եւայլն) գաղթած, բայց եւ հայրենի բնօրրանի կեանքին ու կենցաղին ջերմօրէն կապուած, անոնց տակաւին թարմ ու կարօտալի վերջի-շումներով ապրող պանդուխտներէ: Այս իմաստով ամերիկահայութիւնը պատրաստ եղած էր միշտ, նիւթական գետնի վրայ եւ մարդոյ ժով, սատար կանգնելու Երկրի վերաշինութեան գործին: Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգերը ոչ առաջին եւ ոչ ալ վերջին պատեհութիւնը պիտի ընծայէին, որպէսզի հեռուոր այս ցամաքամասի տարագիր հայութիւնը ցոյց տար ամէն կարգի նուիրաբերում հայրենի բնօրրանի տառապեալ ազգակիցներուն:

Այսուհանդերձ, կազմակերպումի եւ ղեկավարումի տեսակետներով, շրջանը կը տառապէր որակեալ մարդոյ զի պակասէն: Յատկապէս 1907էն առիւն, երբ Արշակ Վոսմեան գործիչային երկարամեայ ու բեղմնաւոր առաքելութենէ մը ետք (1899-1907) վերադարձաւ Արեւելք, Կեդր. Կոմիտէն անընդհատ պնդումներով պահանջ կը դնէր զոյգ Բիւրոներուն գործիչներ ուղարկելու թէ «Հայրենիք»-ի խմբագրութեան եւ թէ կազմակերպական գործերու համար. այլապէս տարածքային հեռաւորութիւններու պատճառով դժուար, եթէ ոչ անկարելի պիտի ըլլար տեղական ուժերով ղեկավարել արդէն գոյութիւն ունեցող շուրջ 50 մեծ ու փոքր կոմիտեիները իրենց 1200ը անցնող ընկերներով: Այս ուղղութեամբ զանազաններու եղած դիմումները (Ռուբէն Չարդարեան, Նիկոլ Աղբալեան, Ռուբէն Գարբինեան-Արտաշէս Չիլինգարեան եւ շատ ուրիշներ) հետեւանք չէին ունեցած: Ընդառաջած էր միայն Սիամանթոն (1909 թ.), որ սակայն հարկ եղած յարմարութիւնը չունէր խմբագրի, առաւել եւս գործիչային աշխատանքի: Ամերիկա իր կեցութեան շուրջ երկու տարիները, սակայն, առիթ պիտի ընծայէին անուանի բանաստեղծին նոր ստեղծագործութիւններ երկնելու եւ իր բանաստեղծութեանց հատորները լոյս ընծայելու: Ի վերջոյ Արեւմտ. Բիւրոյի անդամներէն Է. Ակնունի, 1910 թ. Սեպտեմբերին յանձն պիտի առնէր մեկնիլ Ամերիկա, սկզբնապէս երկու ամսուան համար միայն, որ յետոյ երկարեցաւ մինչեւ 1911 Մայիսի աւարտը: Ակնունիի եւ Սիամանթոյի վերադարձէն ետք, նոյն տարուան Նոյեմբերին, Սիւ. Վրացեան եւ Սիմէոն Նարինեան (Սնար) պիտի հասնէին Նիւ Եորք, երկարատեւ առաքելութեամբ մը ըստ բաւականին զոհացում տալու համար ամերիկեան պահանջներուն:

Ակնունիի իննամսեայ տեւողութեամբ ներկայութիւնն ու ժրաջան շրջագայութիւնը Միացեալ Նահանգներու արեւելեան ափէն մինչեւ արեւմտեան ափը եւ Քանատա, արտակարգ խանդավառութիւն ստեղծած էր թէ կուսակցական շարքերուն եւ թէ հայ հասարակութեան մէջ: Հրապարակային բանախօսութիւններով, մամուլի եւ այլազան հանդիպումներու ճամբով Ակնունիի ամերիկեան գործունէութիւնը պիտի կեդրոնանար առաւելաբար հետեւեալ մարզերուն վրայ. -

1.- Կազմակերպական աշխատանք, որու ընթացքին ան ջատագով հանդիսացաւ հայկական կազմակերպութիւններու միջեւ փոխադարձ հանդուրժողականութիւն եւ գործակցութիւն ստեղծելու անհրաժեշտութեան:

2.- Ամերիկեան պետական եւ քաղաքական շրջանակներու եւ հանրային կարծիքին առջեւ արծարծել կովկասահայ քաղաքական բանտարկեալներու եւ այդ առթիւ Ռուսիոյ ցարական վարչակարգի հայահալած քաղաքականութեան խնդիրները:

3.- Նոյն բանտարկեալներու դատի պաշտպանութեան համար ժողովրդային հանգանակութիւններ, որոնցմէ գոյացած գումարը հասաւ 10.000 տոլարի:

Ակնունին էր դարձեալ որ բանախօսութիւններու ընթացքին եւ «Հայրենիք»-ի էջերէն բազմիցս պիտի արձակէր «Դէպի Երկիր» լոզունգը, կոչ ուղղելով ամերիկահայ պանդուխտներուն հայրենիք վերադառնալ եւ լծուիլ արեւմտեան Երկիրը ծաղկեցնելու գործին*:

Վերջապէս, Ակնունիի մղումով է, որ Ամերիկայի տարածքին գործող Հայ Կարմիր խաչի խումբերը, միաւորուելով Հ. Յ. Դաշնակցութեան հովանաւորութեան ներքեւ, կազմեցին յետագայի «Հայ Օգնութեան Միութիւն» կանացի համահայկական մեծ կազմակերպութիւնը:

*
**

Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտեի անունով քթածրարին նիւթերը. -

- 1) «Ամփոփ տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի կոմիտեի անունով Տասնհինգերորդ Պատգամաւորական ժողովի» [Դեկտ. 1909]: Մեքենագիր, մեծադիր 5 էջ:
- 2) «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէի (1909 - 1910)»: Չեռագիր 8 էջ:
- 3) «Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Ամերիկայի 16^{րդ} Պատգ. ժողովի, գումարուած Դեկտ. 24-29, 1910, Փրավիտէնսի մէջ»: Փաստ. 1399-157 տետրակի առաջին 41 էջերու մէջ արտագրուած:
- 4) «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէին 1910 - 1911»: Չեռագիր 12 էջ, դժուար ընթեմնելի վիճակի մէջ:
- 5) «Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Ամերիկայի 17^{րդ} (Արտակարգ) Պատգ. ժողովի, գումարուած Յունիս 1-4, 1911, Հարթֆորտի մէջ»: Արձանագրութիւնը արտագրուած է թիւ 1399-157 փաստաթուղթին մէջ, տետրակին 61-77 էջերուն: Շրջ. ժողովը «արտակարգ» է, որովհետեւ տարբեր է տարեկան ընթացիկ ժողովներէն եւ գումարուած է բացառապէս քննելու համար Ընդհ. Ժողովի օրակարգը:
- 6) «Տեղեկագիր Ամերիկայի շրջանի [1911]»: Չեռագիր 6½ էջ, ստորագրուած Չ. Ընդհ. Ժողովէն Ամերիկայի պատգամաւոր Նշան Թաշնեանէ:
- 7) Է. Ակնունիի նամակը Արեւմտեան Բիւրոյի Պոլսոյ հատուածին, գրուած Նիւ Եորքէն, 31 Յունուար 1911ին:
- 8) Շրջաբերական Է. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէի, 1911, Նոյեմբեր 4, Պոսթըն: 13 էջնոց տպագիր պրակ, որ Ամերիկայի պատգամաւոր Նշան Թաշնեանի զեկուցագիրն է, Չ. Ընդհ. Ժողովի մասին, շրջաբերականի ձեւով ուղղուած կոմիտեիներուն:

* Տես առանցիկ հապորդներով Է. Ակնունի «Դէպի Երկիր» 1911 Պոսթըն, ինչպէս նաեւ «Բողոքի ձայն» (ցարական հալածանքի մի էջ 1911, Պոսթըն) (հայերէն եւ անգլերէն):
Յայրենեք որ կովկասահայ քաղաքական բանտարկեալներու վերաբերող փաստաթուղթերը պիտի տրուին «ՆԻՒԹԵՐ»-ու յաջորդ Թ. հապորդին մէջ:

Փաստ. 1397-125

Ա. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒ ՏԱՄՆՀԻՆՔԵՐՈՐԴ ՊԱՏՊԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէներու ժեռ. Պատգամաւորական ժողովը գումարուեցաւ 1909 Դեկտ. 23-24-25-28 օրերը, Պոսթընի մէջ: Նախապատրաստական ժողովը բացուեցաւ Դեկտ. 23 Հինգշաբթի կէսօրէ ետք ժամը մէկին:

Ժողովը պաշտօնական հանգամանք ստանալուն պէս յոտնկայս յարգանքի արտայայտութիւն մը ըրաւ ընկեր Շիլիէ Թոփչեանի եղբրական մահուան առթիւ եւ որոշեց ցաւակցական հեռագիր մը ղրկել «Ազատամարտ»ի միջոցով Հ. Յ. Դաշնակցութեան եւ իր ընտանիքին:

Դիւանի կազմութենէն առաջ Հինգ անձերէ բաղկացած յանձնախումբ մը կազմուեցաւ, ճշդելու համար կոմիտէներու իրաւասութիւնը: Կոմիտէները դարձեալ անկարող եղած էին 1909ի տուրքերը ամբողջովին գանձելու. յանձնախումբի թելադրութեան համաձայն, որոշուեցաւ միայն այս տարուան համար իրաւասու ճանչնալ այն կոմիտէները որ գէթ իւրաքանչիւր անդամէ միջին հաշուով վեց տալէր գանձած էին:

Այս կարգադրութեան դէմ բողոքեցին Նիւ Եորքի Շրջան. խորհուրդի, Նիւ Եորքի, Ո. Հոպոքընի եւ Փեթրոսի կոմիտէներու ներկայացուցիչները:

Ժողովին կը մասնակցէին հետեւեալ կոմիտէները:

Փրավիտէնս	— 5 ձայն
Նիւ Եորք	— 2 ձայն
Լին	— 1 ձայն
Նեշուէ	— 1 ձայն
Ուստր	— 1 ձայն
Ուոդըթաուն	— 1 ձայն
Պոսթըն	— 2 ձայն
Փորթլէնտ	— 1 ձայն
Լոուէլ	— 1 ձայն
Լորէնս	— 1 ձայն
Հէյլըրհիլ	— 1 ձայն
Միլֆրտ	— 1 ձայն
Ուայթինսփիլ	— 2 ձայն
Նիւպրիփորթ	— 1 ձայն
Նիւ Պրիթըն	— 1 ձայն
Նիւ Հէյլըն	— 1 ձայն
Ո. Հոպոքըն	— 1 ձայն
Պրաքթըն	— 1 ձայն
Սենթըրլֆորտ	— 1 ձայն
Տիթրոյիթ	— 2 ձայն

Փեթրոսըն	— 1 ձայն
Ուոտըրվիլէթ	— 2 ձայն
Թրոյ	— 1 ձայն
Յիլիատելֆիա	— 1 ձայն
Հէյլիթըն եւ Ս. Կադարինէ	— 2 ձայն
Ռիչմընտ	— 1 ձայն
Մանլըր	— 1 ձայն
Մանչէսթըր	— 1 ձայն
Պրէնտֆրտ	— 2 ձայն
Կոլը	— 1 ձայն
Համագումար	— 41 ձայն

Տեղի հեռաւորութեան եւ ուրիշ պատճառներով պատգամաւոր ղրկած չէին Նորֆոք, Ուէստ Փուլմըն, Կրանտ Ռաբիտս, Շիքակօ, Ուօքէլըն, Կրանիդ Սիթի, Սէնթ Լուիզ, Իսթ Սէնթ Լուիզ եւ քանի մը նորակազմ կոմիտէներ:

Ուրեմն ժողովին կը մասնակցէին 30 կոմիտէներ 41 ձայնով: Ասոնցմէ զատ Կ. Կոմիտէն, Նիւ Եորքի Շրջան. խորհուրդը, եւ «Հայրենիք»ի վարչութիւնը իւրաքանչիւրը կը ներկայացնէր մէկ մէկ ձայն: Ընդամենը 44 ձայն:

Թրոյի եւ Ուոտըրվիլէթի կոմիտէները դատական խնդրի մը առթիւ խորհուրդակցական ձայնով միայն մասնակցեցան: Ուոտըրվիլէթի երկու պատգամաւորներէն մէկը իր քուէի իրաւասութիւնը պահեց:

Բ^ա նիստի մէջ դիւանի ընտրութենէն ետք ընտրուեցան հետեւեալ յանձնախումբերը.

1. Կեդր. Կոմիտէի հաշիւները քննող յանձնախումբ:
2. Հարցերը դասաւորող յանձնախումբ:
3. Կանոնադիրը վերաքննող յանձնախումբ:
4. «Հայրենիք»ի հաշիւները քննող յանձնախումբ:
5. Կեդր. Կոմիտէի դիւանական յարաբերութիւնները քննող յանձնախումբ:
6. Դատական յանձնախումբ:

1.- Կարնոյ «Յառաջ» թերթի հիմնադիր խմբագիր եւ Գ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի անդամ, որ Գիմգերորդ Ընդի. ժողովի ակաւորտին Կարին վերադարձի ճամբուն վրայ, 1909 թ. Գոկտ.ին Բաբերդի մօտ սպանուած էր խմբապետ Սիիրանի եղբոր՝ Յարթի կողմէ:

Օրակարգ

Պատգամաւորական ժողովի զբաղումը կազմող Հարցերը, կ'ամփոփուին հետեւեալ գլուխներուն տակ

1. Գործիչի հարց:
2. Նիւ Եորքի Շրջան. խորհուրդի տեղեկագիրը:
3. Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը:
4. Գործիչներու տեղեկագիրը:
5. Կանոնադիրը վերամշակութիւն
6. Արեւմուտքի շրջանը Կ. Կոմիտէի հիմնելու հարց:
7. Դաշնակցութեան հիմնադրութեան քսանամեակը տօնելու հարց:
8. Հայ կուսակցութիւններու հետ համերաշխութեան հարց:
9. Պատգամաւորական ժողովի վայրը փոխելու հարց:
10. Թրոյի եւ Ուոտըրվիլէթի կոմիտէներու խնդիր:
11. Ուոքէլընի եւ Շիքակոյի կոմիտէներու հարց:
12. Կ. Կոմիտէի հաշուեկշիռը եւ դիւանական յարաբերութիւնները:
13. Խմբագիր:
14. Խմբագրական գործերը վարելու խնդիր:
15. Կոմիտէներու տեղական ծախսերու խնդիր:
16. Տուրքերու նուազեցումի հարց:
17. Գործիչներու ընտրութիւն:
18. Կեդր. Կոմիտէի ընտրութիւն:
19. «Հայրենիք»ի վարչութեան ընտրութիւն:

Գործիչի հարց.— Ժողովը որոշեց հեռագրով երկու գործիչ պահանջել Արեւմտեան Բիւրոյէն, բայց հեռագրի պատասխանը ժողովի ցրուելէն ետք հասած ըլլալով պատգամաւորները անտեղեկ մնացին: Բիւրոն իր վերջին նամակով յոյս կը յայտնէ որ ընկեր Մար² մեր կողմը կու գայ իր գործերը կարգադրելէ ետք:

Որոշուեցաւ ընկերներ Ա[րամ] Աշոտ³ եւ Տիգրանեան⁴ կանչել: Պատասխան ստացանք որ անոնք այս տարի անձնական գործով զբաղուած ըլլալով չպիտի կրնան գալ:

Նիւ Եորքի Շրջան. խորհուրդի տեղեկագիրը կարդացուեցաւ եւ ժողովը գտաւ որ ան իր պարագաներուն ներած չափով աշխատած է եւ օգտակար եղած իր շրջանին մէջ:

Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը.— Կարդացուեցաւ նաեւ Կ. Կոմիտէի տեղեկագիրը որով կը պարզուէր մէկ տարուան շրջանին մէջ կատարուած գործունէութիւնը: Ժողովը նկատի ունենալով Կեդր. Կոմիտէի տրամադրութեան տակ եղած ուժերն ու գինք շրջապատող հանգամանքները, իր մէկ տարուան գործունէութիւնը գոհացուցիչ եւ գնահատելի գտաւ:

Գործիչներու տեղեկագիրը.— Արեւմուտքի գործիչ Ա. Ռատիկեանի եւ ժամանակաւոր գործիչ Ս. Չիքեանի տեղեկագիրները կարդացուեցան: Ուոքէլընի եւ Շիքակոյի կոմիտէներու մասին գրուածները հակասական գտնելով, ժողովը դատական յանձնախումբին յանձնեց գանոնք, որպէսզի քննութիւն մը կատարէ եւ եզրակացութիւնը հաղորդէ ժողովին:

Անկէ ետք ժողովը լսեց գործիչի պաշտօնով Նիւ Եորքի շրջանն այցելող ընկերներ Յ. Յ. Չազմագճեանի բերանացի բացատրութիւնները:

Անոր յաջորդեց Խարբերդի եւ իր շրջանի վայրերուն գործիչ ընկեր Ամատունի⁵ բացատրութիւնները: Ժողովը տրուած բացատրութիւնները գոհացուցիչ գտաւ:

Կանոնադիրը վերամշակութիւնը.— Կանոնադիրը վերամշակութեան յանձնախումբը վեցերորդ նիստի ժողովի քննութեան յանձնեց վերամշակուած կանոնագիրը, վաւերացումի համար:

Փոփոխութեան ենթարկուած մասերը յօդուած առ յօդուած կարդացուեցաւ եւ ընդունուեցաւ քուէներու երկու երրորդ մեծամասնութեամբ: Վերամշակուած կանոնագիրը յանձնուած է տպագրութեան, լոյս տեսնելէ ետք կը ղրկուի կոմիտէներուն:

Արեւմուտքի շրջանը Կեդր. Կոմիտէի մը հաստատումը.— Այս հարցը բերուած էր Արեւմուտքի շրջանէն: Պատգամաւորները կը պահանջէին որ այս մասին դրական որոշում մը տրուի, հակառակ պարագային մնալուն գործիչ մը յատկացուի Արեւմուտքի համար: Պատգ. ժողովը նկատելով որ Կեդր. Կոմիտէ մը հիմնելու իրաւասութիւնը միմիայն Ընդհանուր ժողովին կը պատկանի, իր հեղինակութեան սահմանէն դուրս նկատեց այդ խնդիրը, բայց գոհացում տալու համար Արեւմուտքի շրջանի երկրորդ պահանջին, որոշեց որ ընտրուելիք երկու գործիչներէն մէկը անպատճառ ղրկուի Արեւմուտք:

Դաշնակցութեան հիմնադրութեան քսանամեակը.— Այս հարցը բերուած էր քանի մը կոմիտէներէ. ժողովը նկատի առնելով խնդիրը իր բոլոր հանգամանքով, որոշեց որ նորընտիր Կեդր. Կոմիտէն Արեւմտեան Բիւրոյին յայտնէ ժողովին բաղձանքը այս մասին:

Հայ կուսակցութիւններու հետ համերաշխելու հարց.— Հ.Յ.Դ. Ե^ր [Ընդհ.] ժողովի որոշումին համաձայն, Պատգամ. ժողովը յանձնարարեց նորընտիր Կ.

- 2.- Մար՝ Տեր Մարտիրոսեան Միքայէլ:
- 3.- Արամ Աշոտ՝ Միմասեան Մարգարէն:
- 4.- Տիգրանեան՝ իսկական անունը՝ Խաչմալեան Թադէոս, որ 1903 թ. առաջին անգամ իրեւ գործիչ եղած էր Ամերիկա:
- 5.- Ամատունի բուն անունով Աղբաւտեան Յովհաննէս:

Կոմիտէին որ առաջին առթիւ բանակցութեան մտնէ Ա- մերիկայի միւս հայ կազմակերպութիւններուն հետ, մշակելու համար համերաշխութեան պայմանները որոշ կէտերու շուրջ:

Պատգամաւորական ժողովը վայրը.— Նկատելով որ Պատգամաւորական ժողովը միշտ Պոսթընի մէջ կը գու- մարուի, ժողովը քուէներու երկու երրորդի մեծամաս- նութեամբ որոշեց յաջորդ Պատգամաւորական ժողո- վին վայրը փոխել, Կ. Կոմիտէին յանձնելով վայրը որո- շելու իրաւունքը:

Թրոյի եւ Ուտրովիթի կոմիտէներու խնդիրը.— Երկու կոմիտէները ասկէ առաջ միացեալ կոմիտէ մը կը կազմէին, բայց Կ. Կոմիտէն իրենց տեղական պահանջին համաձայն երկուքի բաժնած էր: Բաժան կոմիտէները իրենց բողոքները բերած էին Պատ. ժողովին, որը իր կարգին յանձնած էր դատական յանձնախումբին: Դա- տական յանձնախումբի որոշումով երկու կոմիտէները կը կորսնցնէին մէկ մէկ ձայն եւ կը մասնակցէին ժողո- վին խորհրդակցական ձայնով, եւ թէ տեղի Շրջան- խորհուրդի իրաւասութեամբ յանձնախումբ մը կազմը- լի եւ խնդիրը կրկին քննուի տեղին վրայ: Ժողովը վա- ւերացուց այս որոշումը:

Ուօքէկնի եւ Շիքակոյի կոմիտէներու խնդիրը.— Դատական յանձնախումբը կարգալով ընկեր Չթեանի եւ Ա. Ռստիկեանի տեղեկագիրները, որոշած էր կոմի- տէները իրաւասու ճանչնալ եւ Շրջան- խորհուրդի որո- շումները չեղեալ համարել: Ժողովը լսեց եւ վաւերա- ցուց:

Կ. Կոմիտէի հաշուեկշիռը եւ դիւանական յարաբե- րութիւնները.— Յանձնախումբի տուած տեղեկութիւն- ներէն դատելով, ժողովը գոհացուցիչ գտաւ եւ վաւերա- ցուց:

Խմբագիրը.— «Հայրենիք»ի խմբագիր որոշուեցաւ

ընկեր Սիամանթօ, իսկ պատասխանատու կը ճանչցուի ընկեր Յ. Յ. Չագմագճեան Կ. Կոմիտէի կազմին հետ:

Կոմիտէներու տեղական ծախք.— Այս հարցը վիճա- բանութեան առարկայ դառնալով որոշուեցաւ որ, մէկ տարուան համար հարիւրին 20 յատկացուի առ առա- ւելն:

Տուրքի նուազեցում.— Քուէներու երկու երրորդի առաւելութեամբ որոշուեցաւ ամսական տուրքը 85 օտնթ ընել:

Գործիչներ.— Պատգամաւորներու բացարձակ քուէ- ուով, Ամերիկայի համար գործիչ ընտրուեցան ընկերներ Յ. Յ. Չագմագճեան եւ Ա. Ռստիկեան: Յ. Յ. Չ[ագմագ- ճեան] յետոյ ընտրուեցաւ Կեդր. Կոմիտէի անդամ:

Կեդր. Կոմիտէ.— Գաղտնի քուէով Կ. Կոմիտէի ան- դամ ընտրուեցան ընկերներ Վ. Ա[ճէմեան], Վ. Ի., Յ. Յ. Չ[ագմագճեան], Չ[ատիկ] Մ[աթիկեան] եւ Տ. Տ[ապաղ- եան]:

«Հայրենիք»ի վարչութիւն.— Գաղտնի քուէով վար- չութեան անդամ ընտրուեցան ընկերներ Յ. Ա., Շ[ա- հան] Ն[աթալի], եւ Մ. Մ.: Որոշուեցաւ որ վարչութեան անդամներ պաշտօն չստանան եւ թելադրուեցաւ հրահրել Նիւ Եորքի ընկերներէն Համբարձումեանը Հայրենիքի քարտուղարութեան պաշտօնը ստանձնե- լու:

Ընտրութիւնները կատարուելէ ետք, Ընդհ. ժողովի պատգամաւոր ընկեր Ճելալեան բերանացի բացատրու- թիւններ տուաւ Ընդհ. ժողովի որոշումներէն երկրի եւ արտասահմանեան գործունէութեան շուրջ: Ժողովը վերջացաւ Դեկտ. 28ի Կիրակի գիշեր ժամը 12ին եւ պատգամաւորները ցրուեցան գոհ տպաւորութեան տակ:

ԱՄՓՈՓՈՒԱՄ ՊԱՏԳԱՄ. ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ



1909 ԹՈՒԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՐ

ՄՈՒՏՔ

Table with 2 columns: Item Name and Amount. Items include 'Փրավիտէնսի', 'Տիթրոյիթի', 'Պոսթընի', etc., with amounts ranging from 40 to 700.

Table with 2 columns: Item Name and Amount. Items include 'Նուիրատուութիւններէ', 'Գաղթ[ականներու], Սովեալ[ներու] եւ', etc., with amounts ranging from 3 to 105,753.

ԵԼՔ

Արեւմտեան Բիւրոյին ղրկուած	8120
Անդրանիկին ղրկուած	800
Անդամատերերու պատրաստութեան եւ պայուսակի	25,15
Դիւանական եւ յարակից ծախսերու	113,25
Փոստատուփի վարձք	12
Սովեալներու ղրկուած	346,55
Նիւ Եորքի Ծրջան. խորհուրդի ծախս	47,34
Հեռագիրներու ծախս	31,91
Կ. Կոմիտէի նիստերու եւ յարակից ծախսեր	120,33
Խորհրդակցութիւններու բացառիկ եւ Պատգամ. ժողով ծախս	58,25
Ընկեր Չագամազեանի 52 շաբաթական	590
Նիւ Եորքի շրջանը այցելութեան ծախս	47,35
Ընկեր Մանկունիի 52 շաբաթական	520
Ընկեր Աստիկեանի 28 շաբաթական	280
Սերոբ-Աղբիւրի ընտանիքին ղրկուած	74,50
Երկիրը «Հայրենիք» թերթ եւ գիրքեր ղրկուած	97,77
Գործ թերթին ղրկուած	23,62
Մոզական լապտերի պատրաստութեան համար	58
Ընկեր Ռաստիկեանի 14 շաբաթական	140
Պարսկաստան ղրկուած	500
Դրամական փոխադրութիւն	127
Կ. Կոմիտէի կողմէ կոմիտէներու այցելութեան ծախս	36,14
«Դրօշակ»ին ղրկուած	10
Նուիրատուութիւն Կ. Պոլսի Պատասխանատուին ղրկուած	20
Ինքնապաշտպանութեան համար ղրկուած	695
Ընկեր Ամատունիին երկիր ղրկուած	50
Զինանշաններու պատրաստութեան համար	112,85
Ընկեր Ճելալեանի 7 շաբաթական	70
Ընկեր Սիւսանի 5 շաբաթական	50
Պատգամաւորներու ծախս	598
Պատգամաւոր շրջելու եւ այլ յարակից ծախսեր	89,55

Համագումար 11,626,56

1908էն զանձը մնացած	6,785,29
1909ի մուտքը	10,574,53
	17,359,82
1909ի ելքը	11,626,56
Պատրաստ դրամ 1909ի զանձին մէջ	5,733,26

Փաստ. 1398-134

Ք 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Գ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ (1909 - 1910)

1909-ի Կեդր. Կոմիտէն, իր շրջապատով եւ աշխատութիւնով բոլորովին տարբեր է նախորդ տարիներու Կեդր. Կոմիտէներէն: Յայտնի է թէ մեր կազմակերպական գործերը եւ մամուլը ինչ վիճակով փոխանցուեցան նորընտիր մարմինին, — խարխուլ եւ անկերպարան: Նորը պիտի աշխատէր ընթացք եւ ուղղութիւն տալ, կոմիտէներու ներքին կեանքը գորացնել եւ տեւական յարաբերութիւն պահպանել երկրի մեր գործադիր եւ տեղական մարմիններուն հետ:

Կոմիտէներու գործերուն ուղղութիւն տալու եւ գանոնք գորացնելու համար հարկաւոր էին ուժեր, եւ այդ ուժերը գոյութիւն չունէին: Նախորդ տարիները կային գործիչներ, պրոպականտիստներ, մէկէ աւելի, նոյնիսկ անցեալ տարի, մեր կազմակերպական շրջապատը աւելի հարուստ էր. կային տեղական ուժեր, որոնք մեկնեցան կամ բացակայեցան այս տարի: Նկատելի է թէ՛ գործը կը ծանրանար բոլոր մը ընկերներու վզին: Մենք ստիպուած եղանք մեր երկրորդական, երրորդական ուժերը գործի կոչել, գործը եթէ ոչ կատարեալ յաջողութեամբ, գէթ զայն յառաջ մղելու եւ մեր կրցած չափով գլուխ հանելու [համար]: Գլխաւոր խնդիր մըն էր մեր կոմիտէներուն հրապարակային, դասախօսական ժողովներուն բաւարարութիւն տալ, պահանջներուն մենք մեր ուժերով աշխատեցանք եւ եթէ այս կէտի մէջ թերութիւններ պատահած են, ընկերները նկատի ունենալու են մեր հանգամանքները:

2.- Կեդր. Կոմիտէն նկատի առաւ իր նիստերուն մէջ գործադրութեան դնել 1908ի Պատգ. ժողովի յանձնարարելի որոշումները: Ուստի շրջանը պէտք էր գործիչ ղրկել. ընկեր Թաշճեան խոստացած էր Պատգ. ժողովէն անմիջապէս ետք մեկնիլ. դպրոց գնաց. երկու ամիս ու կէս վերջ մեզի յայտնեց որ ինք տրամադրելի է Ուստի մեկնիլ: Մինչեւ այդ ատենը Ուստի մեր կազմակերպական գործերուն իրազեկ ընկերները կը հաղորդէին որ ընկերներու տնտեսական վիճակը վատ է, գործ չկայ, գործիչը որ այստեղ գայ՝ մենք անկարող պիտի ըլլանք հանգանակութիւններու ձեռնարկել, որով արդիւնաւոր պիտի չըլլայ: Կ. Կոմիտէն առանց անսալու անհատական այդ տեղեկատուութիւններուն, մասնաւոր շրջաբերականով մը Ուստի կոմիտէներուն հաւաքական կարծիքը ուզեց լսել: Անոնք ալ եկան նոյն բանը մեզի հաստատելու, թէ առայժմ գործիչ հարկաւոր չէ, լաւ է աշնան ղրկէք եւ եթէ Պատգամաւորականէն վերադարձին մէկը գայ՝ աւելի լաւ:

3. Գործիչ հարկաւոր էր Նիւ Եորքի շրջանին: Նիւ Եորքի Ծրջ. խորհուրդը քանի մը անգամ մեզ դիմեց, պահանջելով որ ընկեր Ճելալեան շրջան մը կատարէ անցնելով Նիւ Եորքի կոմիտէներուն: Ճելալեան, այս պարագային գործով զբաղուած էր, առաջ տրամադրիր էր երթալ, բայց գործը երկարելուն համար՝ անկարող եղաւ մեկնիլ: Այս պարագան կարող ենք իմանալ ուղղակի իրմէ:

4. Նկատի ունենալով որ Պոսթընի շրջանի կոմիտէներուն եւս այցելութիւն մը կատարել պէտք է, ընկեր Պէննէեան երկու շաբաթուան մէջ այցելեց Հետեւեալ կոմիտէներուն, — Հէյվլըհիլ, Նեշուէ, Լովելլ, Լորէնս, Մանչեսթըր, Քանքըրտ: Կ.Կ.ի միւս ընկերները նոյնպէս այցելութիւններ կատարած են առանձնապէս, երբ որեւէ կոմիտէ մը նման պահանջ եղած էր:

Աշնան ընկեր Չագամազեան երկու ամիս ու կէսով այցելեց Նիւ Եորքի կոմիտէներուն: Իսկ Ուստի գործիչ ղրկելու համար մենք դարձեալ դիմեցինք ընկեր Թաշճեանին, որը մեզի յայտնեց թէ դպրոց երթալուն համար, անկարող է երթալ: Դիմեցինք ընկեր Ռաստիկեանին, որը յանձն առաւ մեկնիլ եւ հիմա արդէն կը գտնուի Ուստի շրջանը:

Նկատի ունենալով Ուստի մէկ քանի կոմիտէներուն թոյլ եւ խռովայոյց վիճակը, իրաւաստութիւն տուինք ընկեր Ռաստիկեանին անոնց ներքին բոլոր գործերը կարգադրելու: Այդ կոմիտէներէն մեզի հասած նամակները ուրախութեամբ կը յայտնեն որ իրենց ներքին գործերը կարգադրած են եւ աւելի եռանդով փրած գործին:

Ընկեր Ռաստիկեան մեզի կը մատնանշէր որ Ուստի պէտք է անպայման տեւական գործիչ մը պահուի, որը թէ՛ նիւթական եւ թէ՛ կազմակերպական տեսակէտէ մեծ կարեւորութիւն ունի մեզի համար:

5. Պատգամաւորական ժողովին մեզի յանձնած որոշումներու անշեղ գործադրութեան համար, մենք մեր արտասահմանեան եւ տեղական գործառնութեանց մէջ ջանացինք [զանոնք] գլուխ հանել: Արտասահմանեան մեր գործադիր մարմիններէն ստացած մեր կազմակերպական տեղեկութիւնները շրջաբերականի նիւթ դարձուցինք եւ հաղորդեցինք մեր շարքերուն, որպէսզի աւելի մօտիկէն գիտակ ըլլան մեր գործադիր մարմիններու գործառնութեանց:

Տեղական որոշումները նամակներու եւ շրջաբերականներու միջոցով ժամանակին մենք հաղորդեցինք

կոմիտէներուն, որպէսզի իրենք եւս մեզի հետ աշխատին եւ դիւրացնեն 1909-ի Պատգ. ժողովի աշխատութիւնները:

Ծ. Հայրենիքը.— Մեր կազմակերպական աշխատութիւններուն հետ մեծ առնչութիւն ունեցող գործ մըն էր «Հայրենիքը»: Մեր ջանքը եղաւ անոր մէջ առաջին օրէն իսկ ջիղ ու արիւն դնել: Բայց խնդիր է թէ այդ գործը յաջողութեամբ գլուխ հանելու համար ունէ՞ինք մտաւորական ուժեր:

Մենք առանց վերապահութեան կ'ըսենք որ թերթը չըրուեցաւ պահանջուած հողին վրայ եւ չտուաւ պահանջուած դրական արդիւնքը: Ինչո՞ւ. թերթը այդ բաղձալի արդիւնքին հասցնելու համար, հարկաւոր էր կարող խմբագիր մը. մենք չունէինք: Թերթին համար հարկաւոր էր կողմնակի աշխատակիցներ. ասոր համար գրեցինք Արեւմտ. Բիւրոյին, որ մեզի կովկասէն կամ Տաճկաստանէն կարող աշխատակիցներ տրամադրելի ընէ վճարելու պայմանով. չորաւ:

Միաժամանակ կարելի է ըսել որ «Հայրենիք»ի նիւթական ալ խեղճ էր, բայց մենք այդ պարագան բնաւ նկատի չունեցանք: Յետոյ ընտրուած էր խմբագրավարչական մարմին մը, որուն անդամներն իսկ իրենց կարողութիւնը եւ աշխատութիւնը սպաս չըրին գործին. նորը վերընտրելու պարագային միայն եւ անպայման աշխատող մարդիկ նկատի ունենալու է: Ասոր հետ մէկտեղ, մենք կ'ըսենք որ թերթն ալ իր ներկայ ուժերով, իր շրջապատով, աչքի զարնող գործ կատարեց, կանգնելով աւելի ձախակողմեան հողի վրայ, աւելի ջիղ ու արիւն ունենալով իր մէջ: Մեր համոզումն է՝ որ տեղական ուժերով կարելի է գործը եռա տանիլ, բայց թերթը պահանջուած բարձրութեան վրայ պահելու համար՝ առաջնորդող մէկէ աւելի մեծ ուժերու պէտքը կայ:

7. Կ. կոմիտէի այս տարուան մուտքը եղած է ----- իսկ ելքը՝ -----:

Չնայելով մեր յաջողական դիմումներուն, կոմիտէները անդամատուրքերը հաւաքելու մէջ թերի գտնուեցան: Անդամատուրքի շատութիւնը պատճառներէն մէկն էր, ինչպէս նաեւ գործիչներու բացակայութիւնը:

8. Այս տարուան ընթացքին կազմակերպական գործերուն ամէնէն հոգածու եւ պարտաճանաչ կոմիտէները քանատացիներն եղան:

Ծ. Արտասահման.— Նախորդ Պատգամաւորական ժողովին մեզի յանձնարարած արտասահմանեան գործերուն հետամուտ եղանք եւ ջանացինք մեր իրաւասութեան մէջ ինկած գործերը կատարել:

Արեւմտեան Բիւրոյին՝ երկրի ինքնապաշտպանութեան գործին համար փոխադրեցինք 8,000 տոլար մէկ անգամ, իսկ 1000 տոլար ուրիշ անգամ: Պարսկաստան ղրկեցինք 500 տոլար, Անդրանիկին՝ 800 տոլար:

10. Ընկեր Ամատուների երկիր մեկնած ըլլալով, Կ. կո-

միտէս որոշեց զայն Խարբերդի շրջանին գործիչ նշանակել, թէեւ Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը ընդդիմացաւ՝ յայտնելով որ Երկրի շրջաններուն գործիչ նշանակելը ձեզի չի պատկանիր: Սակայն Արեւմտեան Բիւրոն համամիտ գտնուեցաւ մեր կարծիքին: Ընկեր Ամատուների վերադարձած է Ամերիկա եւ կը գտնուի մեր մօտ: Իր գործունէութեան մասին կը լսենք ուղղակի իրմէն:

11. Ժամանակին գրեցինք Կ. Պոլսի Պատասխանատուին որ այստեղի Տիգրանակերտցի ընկերները եւ համակիրները պատրաստ են նիւթական գոհողութիւն ընել, Տիգրանակերտի մէջ մամուլ մը հիմնելու՝ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ: Մեր կրկնակի դիմումներուն՝ Պատասխանատուն պատասխանեց որ Տիգրանակերտը այնքան լայն հայկական շրջան մը չէ եւ չունի լայն մտաւորականութիւն ու մենք առաջիմ անյարմար կը նկատենք այսպիսի գործի մը ձեռնարկութիւնը:

12. Երկրի հետեւեալ մարմիններուն հետ յարաբերութեան մէջ էինք.— Իզմիր, Կարին, Մուշ, Վան, Պիթլիս, Բալու, Տիգրանակերտ, Քղի, Խարբերդ, Ատանա, Սվազ, Մարզուան, եւ այլն:

13. Նկատի ունենալով որ գաւառը Սահմանադրութենէ յետոյ թերթերու եւ գիրքերու կարիք ունէր, վերեւ յիշուած վայրերուն «Հայրենիք»ի հրատարակած գիրքերէ 2-Յական օրինակ ղրկեցինք մեր տեղական մարմիններուն՝ գրադարաններուն բաշխելու: 4-5 ամիս ալ «Հայրենիք» թերթ շարունակեցինք ղրկել: Մինչեւ հիմա ալ դեռ կարգ մը նիւթապէս աղքատ վայրերուն՝ ինչպէս Մուշ, Պիթլիս, Վան եւ այլն կը շարունակուի: Կ. կոմիտէն փոստի ծախսերը վճարած է:

14. Նկատի ունենալով որ՝ Ամերիկայի մեր կազմակերպական գործերը վարելու եւ «Հայրենիք»ին ուղղութիւն տալու համար հարկաւոր էր գործիչ, մեր մտահոգութեան առաջին առարկան եղաւ պահանջել մեր գործադիր մարմիններէն գործիչ եւ խմբագիր: Մեր յարաբերութիւններուն մէջ մենք գործածեցինք շատ անգամ խիստ եւ վիրաւորական լեզու, բայց անօգուտ:

Արեւմտ. Բիւրոն մեզի պատասխանեց ամէն անգամ, որ մեր ջանքն է եղած գործիչ ղրկել ձեզի, բայց կը ցաւինք որ մինչեւ հիմա չկրցինք յարմար գործիչ մը գտնել, որը կարողանար ձեզի բաւարարութիւն տալ. բայց ամէն ատեն նկատի ունինք ձեր պահանջը:

Վերջին անգամ հեռագրեցինք Մարին², առանձին նամակ գրեցինք Արամ Աշոտին³ որ հոս գայ խմբագրի պաշտօնով: Մեր բոլոր դիմումները անօգուտ եղան: Վերջին ամիսներուն, այսինքն Սեպտեմբերէն ի վեր, Ամերիկա կը գտնուի ընկեր Ակնունին, որուն կատարած գործունէութեան լրիւ պատկերը հրատարակուած է «Հայրենիք»ի մէջ:

Փաստ. 1399-157 (էջ 1-41)

Բ 2.— ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԱՏԵՐԻԿԱՅԻ 16^ր ՊԱՏԳ[ԱՄԱՒՈՐԱԿԱՆ] ԺՈՂՈՎԻ

ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ԴԵՎ 24-29, 1910, ՓՐԱՎԻՏԵՆՍԻ ՄԵՋ

Նախապատրաստական ժողովը բացուեցաւ Դեկտ. 23-ի Շաբաթ իրիկուն ժամը 8-ին:

Դիւանի կազմութենէն առաջ եօթը անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմուեցաւ ճշդելու համար կոմիտէներու իրաւասութիւնը:

Որոշեց.— պատգամաւորներուն բերած գումարներուն համեմատ, նկատի առնել ձայնի իրաւասու պատգամաւորները, ու խորհրդակցականները: Կոմիտէներէն երկուքը միայն իրենց 1910-ի տուրքերը ամբողջովին վճարած չըլլալուն, առարկուեցաւ ժողովի կողմէն, եւ 2/3-ի մեծամասնութեամբ որոշուեցաւ, ժողովի մասնակցող իրենց երկու պատգամաւորներէն մէկը, խորհրդակցական ձայնով միայն մասնակցիլ:

ՆԻՍ Ա.

Կիրակի առաւօտ ժամը 8:

Ժողովին կը մասնակցէին 34 կոմիտէներ 49 ձայնով, Կեդր. կոմիտէ, գործիչներ, «Հայրենիք»ի վարչութեան, Նիւ Եորք եւ Պոստընի Շրջանական խորհուրդները, մէկ մէկ ձայնով, որով ընդամէնը 54 ձայն հետեւեալ կերպով⁶.—

- Պոստըն — Ծ. Չօկիւրեան, Օ. Ղազարոսեան՝ 1 խորհր.
- Պրանթֆրտ — Ե. Մուրատեան, Ս. Քրքիսեւեան
- Պրիճփորթ — Տ. Կարապետեան
- Պրակթըն — Ս. Արամեան
- Քէնթըն — Մամիկոն Արսլանեան
- Սենթրոլ Ֆոլս — Պ. Հարմանեան
- Չրլսի — Պ. Խտրեան
- Շիքակօ — Կ. Խշտոյեան
- Քանքըրտ — Ծ. Սանդրազործեան
- Տիթրոյիթ — Ղ. Պահլաւունի, Օ. Պողոսեան՝ երկու ձայն

- Կրանիթ Սիթի — Ս. Արսլանեան եւ Ս. Չթճեան
- Համիլթըն — Գ. Իսկենտերեան
- Հարթֆրտ — Պ. Աւագեան
- Հեյլըճիլ — Ս. Չուլճեան
- Լին — Ռ. Ասլանեան
- Միլֆրտ — Պ. Բարսեղեան
- Նէշուէ — Ա. Ասլանեան

- Նիւ Պրիթէյն — Կ. Նիկողոսեան
- Փեթրոսըն — Ծ. Պէնկլեան
- Ֆիլատելֆիա — Գ. Միրանշահեան, Դ. Ջամանիկեան
- Փրավիտէնս — Թ. Ճէլալեան, Ն. Մանկունի, Պ. Այվազեան

- Րէյսին — Ս. Չթճեան
- Ս. Կատարինէ — Գ. Իսկենտերեան
- Թրոյ — Ծ. Տէրտէրեան
- Ուոթըրթաուն — Յակ. Թաշճեան, Ես. Կոնոյեան՝ խորհրդակց.
- Ուոթըրվիլայթ — Հ. Ուզունեան, Լ. Սէֆիրեան՝ 2 ձայն

- Ուոքիլըն — Ծ. Տէրտէրեան
- Ուեստ Հոպոկըն — Տ. Ջաքարեան
- Ուայթիւսվիլ — Ե. Թօսունեան, Ն. Համբարձումեան, Գ. Մուրատեան
- Ուատր — Տ. Ճնտանեան
- Նիւթըն Ափըր Ֆոլս — Տ. Ադամեան
- Նիւ Հէյլըն — Ծ. Մաղաքեան
- Նիւ Եորք — Ծ. Պարոյրեան, Վ. Փափագեան
- Նիւ Պրիթըն — Ա. Շալճեան
- Ն. Ե. Շրջ. խորհուրդ — Սանտալ
- Պոստընի Շրջ. խորհուրդ — Ս. Համբարձումեան
- Հայրենիքի վարչութիւն — մէկ ձայն
- Կ. կոմիտէ — մէկ ձայն
- Գործիչներ — մէկ ձայն

Ամէնը 54 քուէարկու ձայն եւ երկու խորհրդակցական⁶: Ժողովին չէին մասնակցեր, Քիլվէնտ, Տովրո, Ֆրեզնօ, Կայթ, Կրենտ Բափիտս, Ճալիէթ, Լօվել, Փորթլենտ եւ Ուէստ Փուլմընի կոմիտէները բանաւոր պատճառներով:

Դիւանի ընտրութեան ձեռնարկելով, 3 ատենապետներ ընտրուեցան, ընկեր Թ. Ճէլալեան, Ս. Չթճեան եւ Ս. Համբարձումեան. փոխնիփոխ ժողովը կառավարելու, նաեւ երեք ալ ատենադպիրներ, ընկերներ Գ. Միրանշահեան, Ղ. Պահլաւունի, Ս. Սանտալ:

6.- Թիւ 1358-130 փաստաթուղթը, որ միւլուրդն այս 16^ր Պատգ. ժողովի մէկ արձանագրութիւնն է, կ'աւելցնէ՝ «Ընկերները Ակնունի եւ Սիւմանթօ ժողովին մասնակցեցան խորհրդակցական ձայնով»: Նոյն այս փաստաթուղթէն քաղած ենք նաեւ այս ատենագրութեան վերջին բաժինը.— «Ընկեր Ակնունի Ամերիկա այցելութիւնը»:

Դիւանի ընտրութեան վերջ, ընտրուեցան նաեւ հետեւեալ յանձնախումբերը:

- 1- Օրակարգի յանձնախումբ
- 2- «Հայրենիք»ի հաշիւները քննող յանձնախումբ
- 3- Կեդր. Կոմիտէի հաշիւները քննող յանձնախումբ
- 4- Կեդր. Կոմիտէի դիւանական յարաբերութիւնները՝ քննող յանձնախումբ
- 5- Դատական քննիչ յանձնախումբ

Որոշուեցաւ Փրավիտէնսի կոմիտէի ընկերներէն Ն. Փաշալեան, Արամ Թորոս, Մ. Փարթոյեան հրահրել Պատգ. ժողովին մասնակցելու խորհրդակցական ձայնով, ինչպէս նաեւ Ն. Թաշեան եւ Գ. Ռատիկեան:

Նիստը փակուեցաւ 2:30ին: Յաջորդ նիստը թողուվ Երկուշաբթի առտու ժամը 9:

ՆԻՍՏ Բ.
Դեկտ. 28

Նիստը բացուեցաւ առաւօտեան ժամը 10:30ին, այն պայմանաւ, որ կազմուած յանձնախումբերը իրենց գործերը աւարտած չէին:

Նախորդ նիստի արձանագրութիւնը կարդացուելով վաւերացուեցաւ:

Որոշուեցաւ «Հայրենիք»ի քարտուղարին հետ նաեւ «Հայրենիք»ի հաշիւները քննող յանձնախումբի անդամներէն մէկը (երկու հոգի) դրկել Պոստըն Պատգ. ժողովին վայրը փոխադրելու «Հայրենիք»ի հաշիւտեստերը ու բոլոր քարտերը ու թղթակցութիւնները, որպէսզի կարելի ըլլայ վերջնական հաշուեքննութիւն մը ընելու:

Որոշուեցաւ նաեւ, որ Պատգ. ժողովէն վերջ յանձնախումբը երթայ Պոստըն, տեղին վրայ քննելու «Հայրենիք»ի հաշիւները, գոյքերը ու հրատարակութիւնները, ըստ հաշուեկշիւին:

Որոշուեցաւ նաեւ Փորթլենտի կոմիտէին հեռագրել որ իրենց պատգամաւորը անմիջապէս դրկէ, քանի որ ան կը բացակայէր թիւրիմացութեան մը հետեւանքով:

Օրակարգի յանձնախումբը իր օրակարգը պատրաստած էր հետեւեալ կերպով —

- 1- Արեւմ. Բիւրոյի տեղեկագիրը
- 2- Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը
- 3- «Հայրենիք»ի վարչ. տեղեկագիրը
- 4- Շրջան. խորհուրդներու տեղեկագրերը
- 5- Գործիչներու տեղեկագրերը
- 6- Կեդր. Կոմիտէի հաշուեքննիչ յանձ. տեղեկագիրը
- 7- Կեդր. Կոմիտէի դիւանական յարաբերութիւնները՝ քննող յանձ. տեղեկագիրը

- 8- «Հայրենիք»ի հաշուեքննիչ յանձ. տեղեկագիրը
- 9- Դատական յանձնախումբի տեղեկագիրը
- 10- Անցեալ տարուայ Պատգ. ժողովի տեղեկագրի անհարազատ ըլլալու պարագան (հարցը բերուած Պոստընի կոմիտէի կողմէ)
- 11- Գործիչ եւ խմբագիրը
- 12- Համերաշխութեան հարց
- 13- Տեղական կոմիտէներու հետ Կ. Կոմիտէին կողմէ կանոնաւոր յարաբերութիւն պահելու հարց
- 14- Դասախօսական եւ հրապարակային ժողովներու հարց
- 15- Բողոք Կեդր. Կոմիտէի դէմ, կոմիտէներու նամակներուն ուշ պատասխանելուն համար
- 16- Կեդր. Կոմիտէի ունէ անդամ, կազմակերպական թղթակցութիւն չպահէ անհատներու հետ
- 17- «Հայրենիք»ի փոխադրութեան հարց
- 18- Գործիչներու ընտրութիւն
- 19- Կեդր. Կոմիտէի ընտրութիւն
- 20- «Հայրենիք»ի վարչութիւն
- 21- «Հայրենիք»ի ուղղութիւն
- 22- «Հայրենիք»ի առեւտրական բաժին (manager)
- 23- «Հայրենիք»ի վարչութեան եւ Կեդր. Կոմիտէի իրաւասութիւններու ճշգրտում
- 24- Կոմիտէներու տեղական ծախսերու պիւտձէի յաւելում եւ նուազեցում
- 25- Ազգային գործերու մասնակցութիւն
- 26- Պատգ. ժողովի ժամանակի փոփոխութիւն
- 27- Ամերիկայի Կարմիր խաչի հարց
- 28- Վճարուած աշխատակիցներու հարց («Հ.»-ի)
- 29- Միջ-կուսակցական յանձնախումբերի կազմութիւն
- 30- Անդամավճարներու յաւելման հարց
- 31- Գործիչ Քանատայի համար
- 32- Շրջանական խորհուրդ
- 33- Մամուլի միջոցաւ արտագաղթին հակազդել
- 34- Ոչ հայի մը կազմակերպութեան միացման հարց
- 35- Փոստոյեանի հարց
- 36- Կոմիտէներու Պատգ. ժողովի մասնակցելու իրաւասութեան սահմանի ճշգրտում
- 37- Ութըրովլայթի հեռացած ընկերներու հարց
- 38- Հիւանդ ընկերներու օժանդակելու հարց
- 39- Դաշնակցութեան կողմէն հողեր գնելու հարց

Օրակարգը կարդացուելով միաձայնութեամբ ընդունուեցաւ:

- 1) Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիր: Յիշուած տեղեկագիրը ստացուած չըլլալուն, ընկեր Ակնունին խոստացաւ բերանացի տեղեկութիւններ տալ յաջորդ նիստերէն մէկուն մէջ:
- Պատգ. ժողովի անունով եկած նամակները կարդացուեցան եւ յանձնուեցան պատկան յանձնախումբերուն: Ժամանակը լրացած ըլլալուն նիստը փակուեցաւ:

ՆԻՍՏ Գ.

1) Ժողովը բացուեցաւ ժամը 3-ին, բոլոր ընկերներու ներկայութեան:

2) Պատգ. ժողովը լսելով Ընդհ. ժողովի ներքին կանոնագիրը՝ մշակուած մասնախումբի մը կողմէն, միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Նախորդ տարուայ Պատգ. ժողովի տեղեկագրին արձանագրութեան անհարազատութեան բողոքը, որ Պոստընի կոմիտէի կողմէն եկած էր. ժողովը որոշեց այդ հարցի քննութիւնը յանձնել դատական յանձնախումբին:

3) Կեդր. Կոմիտէի տեղեկագիրը.— Կարդացուելէ վերջ, կարդացուեցաւ նաեւ Կ.Կ. յարաբերական թղթերը քննող յանձնախումբի տեղեկագիրը՝ երկուքի մասին միաժամանակ վիճաբանելու (համար): Սակայն Կ.Կ. տեղեկագիրը երկար քննադատութեան ենթարկուելէ յետոյ, նկատի առնելով որ ժողովի ժամանակը լրացած է, որոշուեցաւ Կ. Կոմիտէի տեղեկագիրը, հարցերու բաժանումներու ենթարկելով, առանձինն զանոնք քննելով վերջնական վաւերացումէ վերջ, անցնիլ օրակարգին:

Ժողովը փակուեցաւ ժամը 6-ին:

ՆԻՍՏ Դ.

Ժողովը բացուեցաւ ժամը 8-ին բոլոր ընկերներու ներկայութեան:

Պատգ. ժողովին ուղղուած նամակներու ընթերցումէն վերջ, որոշուեցաւ զանոնք պատկան յանձնախումբին յանձնել, միայն պատասխանել ընկ. Ռաֆայէլեանի գրութեան, տեղեկացնելով անոր միանգամայն, որ կազմակերպութիւնը չի գիշանիր զբաղուիլ այդ կարգի հարցերով, եւ կը թելադրէ իրեն դիմել պատուոյ ատենի մը իր վիրաւորուած անձնասիրութիւնը պաշտպանելու:

Ժամանակը լրացած ըլլալուն, առաջարկուեցաւ գործը դիւրացնելու համար յանձնախումբ մը ընտրել, որ օրակարգի բոլոր հարցերուն համար բանաձեւեր պատրաստէ, որ յաջորդ նիստերուն դիւրութեամբ խնդիրները լուծուին:

ՆԻՍՏ Ե.

Ժողովը բացուեցաւ ժամը 9-ին. ներկայ էին բոլոր պատգամաւորները, բացի Թ. Ճէլալեանէն:

Դատական յանձնախումբի կողմէն նամակ մը կարդացուեցաւ, որով երկու ընկերներ եւս օժանդակ կ'ուզէին իրենց ծանր գործերը վարելու, եւ որոշուեցաւ երկու ընկերներ ալ տալ, Սանտալ եւ Թաշեան: Կեդր. Կոմիտէի տեղեկագիրի վերաքննութիւնը կր-

կին յետաձգուելով, Նիւ Եորքի Շրջ. խորհուրդի տեղեկագրի մասին լսուեցան իր շրջանի կոմիտէներու գոհացուցիչ արտայայտութիւնները եւ միաձայնութեամբ ընդունուեցան: Իսկ Պոստընի Շրջանական խորհուրդի տեղեկագրի մասին թէեւ նպաստաւոր կարծիքներ յայտնուեցան քանի մը կոմիտէներու կողմէն, սակայն մի քանի առկախ խնդիրներ պարունակելով, յետաձգուեցաւ մինչեւ դատական ատենանի այդ առթիւ բերելիք տեղեկագրի ընթերցումը: Նոյնպէս եւ գործիչի տեղեկագրի վաւերացումը յետաձգուեցաւ մինչեւ դատական ատենանի վերջնական տեղեկագրութեան, քանի որ նա ալ դատական մաս կը պարունակէր:

Ասկէ վերջ ժողովը զբաղեցաւ Կեդր. Կոմիտէի եւ «Հայրենիք» թերթի վարչութեան մէջ եղած առկախ մնացած խնդիրներով, որ երկար վիճաբանութիւններէ վերջ չկրցաւ ելքի մը յանգիլ. որոշուեցաւ այդ վաղուան նիստին թողուվ թարմ ուժերով կրկին անդադառնալու:

Ժողովը փակուեցաւ ժամը 12:30-ին:

ՆԻՍՏ Զ.

Ժողովը բացուեցաւ ցերեկէն վերջ ժամը 3-ին: Ներկայ էին բոլոր պատգամաւորները բացի Թ. Ճէլալեանէն:

Բանաձեւերու անցնելէ առաջ, որոշուեցաւ, որ քուէի իրաւասու պատգամաւորներէն ոչ ոք իրաւունք ունի Պատգ. ժողովի վերջնական աւարտումէն առաջ մեկնելու, նոյն իսկ եթէ ժողովը որոշուած օրը չվերջանայ, իսկ խորհրդատու պատգամաւորները կրնան բացառութիւն համարուիլ:

Անցնելով բանաձեւերուն,

1.— «Հայրենիք»ի մասին.—

Հ.Թ.Դ. Ամերիկայի 18^ր Պատգ. ժողովը, ծանօթանալով իր պաշտօնական թերթի խնդրին, եւ մանրամասն քննելով անոր վերաբերեալ առաջարկները, որոշեց,

Ա) Շարունակել «Հայրենիք»ի հրատարակութիւնը, ճանչնալով անոր օգտակարութիւնն ու անհրաժեշտութիւնը, շաբաթը մի անգամ, ծաւալի որոշումը թողուվ խմբագրական մարմնին, ընտրուած Կեդր. Կոմիտէին, որուն կը վերաբերի ընդհանուր ղեկավարութիւնը ինչպէս նաեւ տնտեսական հոգատարութիւնը,

Բ) Պարտաւորեցնել խմբագրութիւնը անշեղ կերպով հետեւիլ կազմակերպութեան ծրագրի տարածման, եւ հեռու մնալ այնպիսի պայքարէ, որ կը վնասէ տպագրական խօսքի հմայքին ու պատուին:

Գ) Թերթի բովանդակութիւնը ճոխացնելու նպատակով հրահրել նոր խմբագիր մը. այս առթիւ անմիջական եւ ստիպողական դիմում ընելով Արեւմտեան Բիւրոյին (նոյնութեամբ ընդունուեցաւ):

Դ) Յատկացնել որոշ գումար մը, վճարելու կարող աշխատակիցներուն, ըլլան անոնք Ամերիկայի մէջ կամ այլուր, վարձատրութեան չափը խմբագրական մարմնին թողոյով (նոյնութեամբ ընդունուեցաւ):

Ե) Թերթի ծանուցումներու բաժինը հատուցանելու համար, այդ մասը յանձնել յատուկ անձի մը, այդ գործի կարգադրութիւնը թողոյով Կեդր. Կոմիտէին (նոյնութեամբ ընդունուեցաւ):

Չ) Ամէն միջոց գործ դնել, որպէսզի «Հայրենիք»-ը մեծ քանակով տարածուի թէ Ամերիկայի եւ թէ երկրի մէջ իբրեւ տեղեկատու կապ գաղութներու եւ մայր երկրի մէջ (նոյնութեամբ ընդունուեցաւ):

Ձ.- Գործիչներ եւ Շրջանական խորհուրդ

Կազմակերպութեան զարգացումին նպաստելու համար, ժողովը որոշեց

Ա) Կազմել չորս Շրջանական խորհուրդ, Նիւ Եորք, Պոստըն, Շիքակօ (եւ) Քանատայի շրջաններու համար:

Բ) Քալիֆորնիայի շրջանը կրնայ ունենալ իր Շրջանական խորհուրդը, պայմանաւ որ նոյն շրջանի կոմիտէներուն թիւը (3) պակաս չըլլայ:

Գ) Պահել երկու գործիչ, մէկը Արեւելքի իսկ միւսը Միջին Արեւմուտքի շրջանին համար՝ Շիքակօ-Քանատա, թողոյով Քալիֆորնիան ինքն իր մէջէն հոգալ այդպիսի գործիչ մը իր շրջանին համար:

Դ) Երկու գործիչներէն մէկը ընտրել Ամերիկայի ընկերներէն, իսկ միւսը բերել տալ արտասահմանէն Բիւրոյի միջոցով:

Ե) Գործիչներու ընդհանուր ղեկավարութիւնն ու հոգատարութիւնը կը վերաբերի Կեդր. Կոմիտէին:

Անդամավճարի լաւելում

միաձայնութեամբ մերժուած

4.- Դաշնակցութեան օտար անդամակցողները:

Դաշնակցութեան 5^{րդ} Ընդհանուր Ժողովի տուած բացատրութեան համաձայն, Ամերիկայի պատգամաւորական ժողովը բաղձալի կը նկատէ որ Ամերիկայի մէջ կազմակերպութեան դրօշին տակ ընդունուին նաեւ ոչ-հայ անդամներ, որոնք կ'ընդունին Դաշնակցութեան ծրագիրը, կանոնադիրը եւ թաքթիքը:

Մանօթ.- (Ոչ-հայեր կրնան կազմակերպուիլ իբրեւ առանձին խմբեր):

Ժողովը ուրախութեամբ իմացաւ ընկեր պատգամաւորներէն, որ Քանատայի մէջ արդէն մեր կոմիտէներուն կը մասնակցին քանի մը քիւրտ հայրենակիցներ, իսկ Շիքակոյի շրջանին ապրող օսմանցի թուրքեր եւ քիւրտեր շատ մօտ են մեր կոմիտէներուն եւ մեծ համակրանք կը տածեն դէպի կազմակերպութիւնը:

Ժողովը բաղձալի կը նկատէ, որ ասկէ վերջ աւելի

եւս ուժգին կերպով գրաւուին դէպի մեր շարքերը ոչ-հայ պանդուխտներ, համոզուած որ այդ է լաւագոյն միջոցներէն մէկը փոքր առ փոքր նուազեցնելու համար թշնամական այն զգացումը, որ կայ Օսմանեան կայսրութեան այլացեղ ու այլակրօն տարրերուն մէջ:

Ատենախօսութիւններ եւ պրոպականդ

Համոզուած որ հրապարակային ատենախօսութիւնները եւ այլ բանաւոր պրոպականդը շատ մեծ նշանակութիւն ունին թէ կազմակերպութեան գաղափարներու տարածման եւ թէ շարքերու ուժեղացման համար:

Ժողովը կը հրահանգէ

Ա) Շարունակել ուժգին կերպով կազմակերպել հրապարակային ատենախօսութիւնները մեր բոլոր գաղութներուն մէջ, հրաւիրելով այդ գործին համար բոլոր ձեռնհաս ուժերը, թէ մեր շարքերէն եւ թէ համակիրներէն:

Բ) Ատենախօսութիւններուն տալ ոչ թէ կուսակցական բանակուի ձեւ, որ յաճախ փնասակար կերպով կը գրգռէ կրքերը, այլ այդ ժողովները դարձնել կուսակցական խնդիրներէն դուրս նաեւ գիտութեան եւ հասարակական խնդիրներու տարածման միջոց:

Գ) Կազմակերպել նոյն նպատակով, պարբերաբար, գէթ երկու շաբաթը անգամ մը, ինչպէս կանոնադիրն ալ կը հրահանգէ, ընկերական ժողովներ, պարտաւորիչ դարձնելով բոլոր ընկերներուն համար ծանօթութիւնը մեր ծրագրային հարցերուն ինչպէս նաեւ կազմակերպութեան հրատարակած գրքոյկներուն:

Դ) Թելադրել անգլիախօս ընկերները յաճախել ըստ կարելիութեան ամերիկեան եւ այլ ժողովներու, յատկապէս ընկերվարական, լայնցնելու համար իրենց մըտաւոր հորիզոնը:

Հասարակական

ազգային գործերու մասնակցութիւն

Քննելով ազգային եւ հասարակական հիմնարկութիւններու ու գործերու մասնակցելու խնդիրը, 18^{րդ} Պատգ. ժողովը հարկ կը համարէ հրահանգել բոլոր ընկերներուն ղեկավարութեան այդ գործին մէջ Դաշնակցութեան 5^{րդ} Ընդհանուր Ժողովի որոշումով, այսինքն մասնակցիլ այդ հիմնարկութիւններուն իբրեւ քաղաքացի-անհատ, առանց դուրս գալու հարկաւ կազմակերպութեան ուղղութենէն:

Ժողովը անհրաժեշտ կը համարէ աւելցնել որ Ամերիկայի մէջ, նկատի ունենալով տեղական պայմանները, լիովին բաղձալի է, որ մեր ընկերները ջերմ մասնակցութիւն ունենան այն բոլոր կրթական ու քաղաքակրթական ընկերակցութիւններուն եւ ձեռնարկներու մէջ, որոնց նպատակն է աջակցիլ մայր երկրի մէջ ուսումնական եւ հանրային գործերուն:

Ներգաղթի խնդիր

Կանգնելով այն հիմնական տեսակէտին վրայ, որ Օսմ. սահմանադրութենէն⁷ վերջ, հրամայական պահանջ կայ արագացնել եւ ուժեղացնել հայ գաղթականներու դարձը դէպի երկիր,

Հ.Յ.Դ. Ամերիկայի 18^{րդ} Պատգամաւորական ժողովը որոշեց

Ա) Կոչ ընել Ամերիկայի կոմիտէներուն այդ միտքը արծարծել հայ գաղութներու մէջ, ժողովներով, խմբական գրոյցներով եւ այլ յարմար միջոցներով:

Բ) Առաջարկել կազմակերպութեան պաշտօնական օրկանին «Հայրենիք»-ին ինչպէս նաեւ «Ասպարէզ»-ին ու ամերիկահայ բոլոր թերթերուն այս ուղղութեամբ գրելու ու պրոպականդ ընելու:

Գ) Կազմել գլխաւոր քաղաքներու մէջ ներգաղթի յանձնախմբեր, որոնց նպատակը ըլլայ նիւթական եւ այլ աջակցութիւններով նպաստել անկարող պանդուխտներու վերադարձին:

Միեւնոյն ժամանակ ժողովը պարտք կը դնէ Կ.Կ.ին վրայ յանձնարարել Երկիր վերադարձող ընկերներուն տարածելու մայր երկրի ժողովրդին մէջ այս միտքը թէ՛ մեծ թիւրիմացութեան մէջ են պանդխտի փափաքողները, կարծելով թէ Ամերիկան դրամի եւ երջանկութեան աղբիւր է, մինչ այս երկրի մէջ հայ գաղութը ենթակայ է անսովոր կերպով չարքաչ կեանքի եւ մեծ դառնութիւններու, որոնք անխուսափելի կերպով կապուած են պանդխտութեան հետ:

ՆԻՍՏ Է.

Ժողովը բացուեցաւ ժամը 8-ին երեկոյան: Բոլոր պատգ[ամաւորները] ներկայ էին:

Բանաձեւի կարգին անցնելէ առաջ, Փրավիտէնսի մէջ Դեկ. 24 գումարուած կովկասահայ բանտարկեալներու հանգանակութեան ժողովի մասին կանգ առնելով բանտարկեալներու օգտին եղող հանգանակութեան վրայ, ժողովը որոշեց գումարը հասցնել 1500 տալերի, որուն \$800 պիտի տրուի Փրավիտէնսի կոմիտէին (ընկերներ-հասարակութիւն), իսկ \$700-ը պիտի բաժնուի պատգամաւորներու [վրայ] իրենց ներկայացուցած թուին համաձայն:

Որոշուած յիշեալ գումարը Կեդր. Կոմիտէն պիտի դրկէ Պոլսոյ մէջ ի նպաստ Կովկասի քաղաքական բանտարկեալներու կազմուած Կեդ. յանձնախմբին, պարտք դնելով Փրավիտէնսի կոմիտէին վրայ, որ մինչեւ 15 օրէն հասցնեն Կեդր. Կոմիտէին մնացած գումարը:

7.- Չեռագրին մէջ «կայսրութեան»:

Կովկասահայ քաղ. բանտարկեալները

Լսելով կովկասահայ քաղ. բանտարկեալներու հարցի մասին, Հ.Յ.Դ. Ամերիկայի Դաշ. 18^{րդ} Պատգամաւորական ժողովը, բարոյական եւ հրամայական պարտականութիւն կը համարէ ուղարկել ուսական բանտերուն մէջ անարդար կերպով փակուած հայ ժողովուրդի բոլոր խաւերուն իր ջերմ համակրանքը ու յարգանքը:

Ժողովը համոզուած է, որ Ամերիկայի հայ գաղութը պիտի շարունակէ առանց կուսակցական կամ յարանաւանական խտրութեան յայտնել իր բողոքը ցարդ կառավարութեան հայահալած քաղաքականութեան:

Պատգ. ժողովի ժամանակ

Քննելով քանի կոմիտէներու կողմէ եկած առաջարկը փոխելու Պատգ. ժողովի ժամանակը,

Ժողովը որոշեց

Շարունակել Պատգ. ժողովը գումարելու Դեկ. ամսու 24-28 օրերը, քանի որ բոլոր միւս ամիսները անյարմարութիւններ կը ներկայացնեն մեր գործաւոր ընկերներուն համար, ինչպէս ցոյց կու տան պատգամաւորներու մանրամասն տեղեկութիւնները:

Ընկերվարական կուսակցութիւններու հետ

յարաբերութեան հարց

Հ.Յ.Դ. Ամերիկայի 18^{րդ} Պատգամաւորական ժողովը նկատողութեան առնելով տեղական ընկերվարականներու հետ յարաբերութեան հարցը, որոշեց.

Ա) Մօտ յարաբերութեան մէջ մտնել Ամերիկայի ընկերվարական կուսակցութեան հետ, յանձնարարելով մեր կոմիտէներուն յաճախել տեղական ընկերվարական ակումբները ու յարանները:

Բ) «Հայրենիք»-ի մէջ տեղ տալ տեղական ընկերվարական եւ աշխատաւորական շարժման եւ ընտրական պայքարին, ամերիկահայ աշխատաւորութեան մէջ ընդհանրացնելու համար ընկերվարական գաղափարը:

Գ) Այդ յարաբերութեան ընթացքին, ոեւէ գործնական քայլ առնելու համար, (ընտրական պայքար եւ այլն) նկատի պէտք է ունենալ տեղական պայմանները:

ՆԻՍՏ Ը.

Ժողովը բացուեցաւ ժամը 9-ին առաւօտ: Ներկայ էին բոլոր պատգ.ները բացի Թ. Ճէլալեանէն:

Կարդացուեցաւ Նիստ Զ-ի արձանագրութիւնը եւ նոյնութեամբ վաւերացուեցաւ:

Օրակարգի անցնելէ առաջ, կարդացուեցաւ Փորթ-

լէնտի կոմիտէին գրած մէկ նամակը, ի պատասխան Պատգ. ժողովի հեռագրին իրենց պատգամաւորը շուտով ժողովին դրկելու մասին. ժողովը որոշեց — նկատի չառնել Փորթլէնտի կոմիտէին պատճառաբանութիւնները Կ.Կ.ին դէմ՝ ժողովէն բացակայելու մասին եւ յանձնել այդ նամակը նորընտիր Կեդր. Կոմիտէին ի կարգադրութիւն:

Կարդացուեցաւ դատական յանձնախմբի տեղեկագիրը, որը երկու կարեւոր կէտեր կը շօշափէր իր մէջ, Ա) Ն. Թաշճեանի բողոքը Շահան Նաթալիի դէմ զայն ամբաստանելով: Բ) Ամերիկայի 15^{րդ} Պատգ. ժողովին ատենագրութեան անհարազատութեան հարց.—

Ա) Դատական յանձնախմբի եզրակացութեան վրայ, որ խնդիրը վերաքննութեան կը կարօտէր ամբաստանութեանց ճշդութիւնը ստուգելու համար, սակայն ընկեր Շահան Նաթալիի մերժումին վրայ, առարկելով թէ բողոքը օրինական ճամբով չէր եկած, Դատ. յանձնախումբը խնդիրը Պատգ. ժողովին կը ձգէր: Այս առթիւ երկար վիճաբանութիւններէ վերջ, Պոստընի Երջան. խորհուրդի վճիռը օրինական գտան, միեւնոյն ժամանակ իրաւունք տրուեցաւ ընկեր Ն. Թաշճեանի որ նա իր բողոքը ներկայացնէ ուղղակի Պատգ. ժողովին:

Սակայն երկուստեք տեղի ունեցող վիճաբանութիւնները՝ այդ խնդիրը վերաքննելու մասին, որոշ ելքի մը չհասնելուն, թելադրուեցաւ, որ կազմուի յանձնախումբ մը՝ աւելցնելով դիւանի վրայ, քննելու թէ, Ամերիկայի ներքին կանոնադրութեան թոյլ կու տա՞, որ վերոյիշեալ դատական խնդիրը վերաքննութեան համար ժողովին ներկայացուի:

Այս թելադրութիւնը ընդունելով, ընկեր Շահանէն պահանջեց, որ այդ յանձնախումբին [մէջ] իր եւ ընկեր Ն. Թաշճեանի կողմէն նշանակուին երկ-երկու անձ իբրեւ յանձնախմբի անդամ: Ընկերներ Ե. Ն. ի կողմէն ընտրուեցան Չէօկիւրեան, Աստիկեան, Ն. Թաշճեանի կողմէն Յ. Թաշճեան, Յ. Պարոյրեան: Նիստը փակուեցաւ ժամը 12:30-ին:

ՆԻՒՍ Թ.

Ժողովը բացուեցաւ կէսօրէ ետք ժամը 3-ին: Ներկայ էին բոլորը բացի Թ. Ճէյալեանէն:

Կարդացուելով նախորդ նիստի արձանագրութիւնը վաւերացուեցաւ:

Դատական յանձնախմբի առաջին գործը վերջանալէ առաջ, քանի այդ առթիւ կազմուած յանձնախմբի մէկ անդամը բացակայ էր ժողովէն, անցաւ երկրորդ մասին, որով դատական յանձնախումբը բաղադրուելով 15^{րդ} Պատգ. ժողովի ատենագրութիւնը [գտած էր որ] 3 կէ-

տերու մէջ բնագրին հարազատ ընդօրինակութիւնը չէր,— ժողովին կը թողուր այդ առթիւ իր վերջնական խօսքը ըսելու:

Ժողովը շատ երկար լսելով անցեալ տարուայ Պատգ. ժողովի արձանագրութիւններու բնագրին եւ Կեդր. Կոմիտէի պատրաստած պատճէններու տարբերութեան մասին, եկաւ այն եզրակացութեան, որ

Ա) Բնագրի եւ պատճէններու մէջ կան տարբերութիւններ,

Բ) Այդ արդիւնք է եղած ժողովի դիւանի թղթերու ոչ վերջնական ձեւով ներկայացուելուն,

Գ) Տարբերութիւններու էութիւնը Պատգ. ժողովի որոշումներուն ոգոյն հակառակ չէ, եւ չի մտցնել կազմակերպական շարքերուն մէջ սխալ հակասութիւններ: Որոշեց՝

Ազդարարել դիւանին այսուհետեւ ներկայացնել իր թղթերը կանոնաւոր եւ ձեւաւոր, իսկ ցաւ յայտնել Կ. Կոմիտէին որ հոգ չէ տարած այդ թղթերը կանոնաւոր դրութեամբ ներկայացուելուն:

Դատական նախորդ խնդիրը յետաձգուեցաւ, եւ անցաւ բանաձեւերուն:

Փորթուգալեանի յոբելեան
Պատգ. ժողովը լսելով Մկրտիչ Փորթուգալեանի յոբելեանը տօնելու կեդրոնական յանձնախմբի հրահրը, որով ան կոչ կ'ընէր Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէներուն մասնակցիլ այդ հանրային տօնին, որոշեց — իբրեւ յարգանք Փորթուգալեանի երկարամեայ համակրելի գործունէութեան, առաջարկել շրջանի բոլոր կոմիտէներուն եւ ընկերներուն ջանք չխնայել աջակցելու բարոյապէս եւ նիւթապէս այդ հանրային ձեռնարկին, մանաւանդ որ այդ միտքը ամէնէն առաջ յղացած է մեր կուսակցական շարքերուն մէջ:

Համերաշխ գործակցութեան հարց
Դաշնակցութեան 18^{րդ} Պատգամաւորական ժողովը յատուկ ուշադրութեան առաւ այլ եւ այլ հայ քաղաքական կուսակցութիւններու հետ համերաշխ գործակցութեան խնդիրը, որ ամերիկահայ գաղութին մէջ ստացած է օրուայ ցաւի կերպարանք:

Ժողովը տիրութեամբ լսեց զանազան քաղաքներէ եկած պատգամաւորներու բերած տեղեկութիւնները, որոնք քիչ բացառութեամբ ցոյց կու տան որ երկու հայ կուսակցութիւններու պատկանող թերթեր, խմբեր եւ անհատներ իրենց անուղղամիտ հակահամերաշխական քայլերով եւ նոյնիսկ գրգռիչ դիրքով ծանրապէս կը վնասեն կուսակցութիւններու ներդաշնակ համերաշխ գործունէութեան:

Անհերքելի դարձած է, որ

Ա) Հայ հասարակութիւնը արդէն յոգնած է այդ անգաղափարական կռիւներէն,

Բ) Որ այդ ընթացքը սաստկապէս վնասած է քաղա-

քական կուսակցութիւններու արդիւնաւոր գործունէութեան,

Նկատի ունենալով այս բոլորը, ինչպէս նաեւ այն, որ Դաշնակցութեան բարձրագոյն ատենին՝ Ընդհանուր ժողովի հրահանգած ուղղութիւնը, որ կը ձգտի ներդաշնակ ու համերաշխ վիճակ ստեղծել այլ եւ այլ կուսակցութիւններու մէջ,

Ժողովը որոշեց —

1) Կարեւորութիւն չտալ այս կամ այն կուսակցութեան պատկանող խմբերու հակահամերաշխական արարքներուն եւ հրահանգել բոլոր կոմիտէներուն ու ընկերներուն անկեղծաբար եւ անշեղ կերպով շարունակել ընթանալ միշտ կուսակցութեան գծած ճամբով, այն է միշտ դէպի համերաշխութիւն, եւ անգաղափարական կռուի դադարում:

2) Յարմար առթիւ կոչել ուղղել հայ գաղութներուն եւ չէզոք հասարակութեանը որպէսզի անոնք ալ, իրենց վերաբերմունքով քաջալերեն քաղաքական կարեւորութիւն ունեցող այս շարժումը, վերջ դնելու համար այն վնասակար ու անազնիւ կռիւներուն, որոնք կը գրգռեն կուսակցական շարքերը, եւ կը վնասեն մեր քաղաքական հասունութեան:

3) Հրահանգել շրջանի պաշտօնական թերթին, հաւատարիմ մնալ այդ ուղղութեան եւ ըստ այնմ մղել իր պրոպականդը:

Անցնելով Ն. Թաշճեանի եւ Շահան Նաթալիի դէմ եղած ամբաստանութեան, կարդացուեցան պատրաստուած բանաձեւերը:

Ա) Համաձայն յօդուած 91-ի, դատական յանձնախումբը իրաւունք չունի խնդիրը ըստ էութեան քննելու, այլ կը քննէ ըստ դատավարութեան եւ եզրակացութիւնը կը բերէ Պատգ. ժողովին:

Բ) Յանձնախումբը այն կարծիքի է թէ, նկատելով, որ Պատգ. ժողովը սկսած օրէն Կեդր. Կոմիտէի իրաւասութիւնը կը դադրի, կրնայ բողոքը ուղղակի գալ Պատգ. ժողովին:

Գ) Ճանաչելով, որ Պատգ. ժողովը իրաւասութիւն ունի քննելու այդ խնդիրը, սակայն յանձնախումբը այն կարծիքին է, որ ժողովը տարածամ ըլլալուն առթիւ ցանկալի է այս դատը յանձնել նորընտիր Կ. Կոմիտէին՝ յատուկ մարմնի մը միջոցաւ խնդիրը քննելու, եթէ Պատգ. ժողովը կը հաւանի:

Այս երեք բանաձեւերը կարդացուելէն վերջ, ժողովը մեծամասնութեամբ որոշեց, որ մի որոշ ժամանակ յատկացուի լսելու համար շահ[ագրգռուած] կողմերը եւ հարկաւոր բացատրութիւններէ վերջ կարելի ըլլայ ճշդել ընկերներու դիրքը, որպէսզի աւելի որոշ ըլլայ ընկերներու տրամադրութիւնը եւ վերաբերումը ընտրութիւններու առթիւ:

Երկու կողմերն ալ մէկէ աւելի անգամներ լսելով,

ինչպէս նաեւ իրենց վկաներու այդ խնդրին հետ կապ ունեցող ընկերները՝ Շահանի կողմերու բացակայութեան՝ ընկերներ կարծիքներ փոխանակելէ վերջ, հետեւեալ բանաձեւը քուէարկեցին:

Ժողովը փակուեցաւ իրիկուան ժամը 7-ին:

ՆԻՍ Ժ.

Ժողովը բացուեցաւ երեկոյեան ժամը 8-ին: Ներկայ էին բոլոր պատգամաւորները, բացի ընկեր Մանկունիէն:

Ժողովը քննելով ընկեր Ն. Ս. Ս. Թաշճեանի ամբաստանութիւնները հանդէպ ընկեր Շահան Նաթալիի, հասաւ հետեւեալ եզրակացութեան:

Ա) «Հայրենիք»ի հասցէները «Շանթին» համար գործածուած են «Հայրենիք»ի վարչութեան գիտակցութեամբ. ժողովը մեղաւոր կը համարէ «Հայրենիք»ի վարչութիւնը ամբողջ կազմով, որու մէջն է նաեւ ընկեր Շահան Նաթալին, եւ կ'որոշէ խիստ յանդիմանութեան ենթարկել «Հայրենիք»ի վարչութիւնը: Ժողովը նկատի ունենալով, որ Շահան Նաթալի անկազմակերպական ընթացքի մը հետեւած է եւ կազմակերպութեան օգտակար ըլլալու չէ աշխատած, կը համարէ [զայն] անպարտաճանաչ:

Գ) Դրամական անկանոնութիւններու մասին Ն. Ս. Ս. Թաշճեանի ըրած ամբաստանութիւնները հանդէպ Շահան Նաթալիի, կը համարուի անհիմն եւ բացարձակապէս զուրկ ճշմարտութենէ:

Ժողովը ցաւ յայտնելով որ ընկերներու մէջ անձնական ջնջին խնդիրներու այդքան լուրջ բնոյթ կը տրուի եւ մինչեւ Պատգամաւորական ժողովի առջեւ կը ներկայացուի,

Որոշեց —

Բոլորովին վերջացած համարել խնդիրները, յանձնարարելով երկու կողմերուն անձնական խնդիրներով չվնասել կազմակերպական կարգապահութեան եւ գործին:

Նոյնութեամբ ընդունուեցաւ:

Սահմանադրութեան պաշտպանութեան խնդիր

Հ.Յ.Դ. Ամերիկայի 18^{րդ} Պատգամաւորական ժողովը, հիմնուած այն տեղեկութիւններու վրայ որ ստացուած են եւ կը ստացուին Թուրքիայէն երկրի սահմանադրութեան կացութեան վրայ,

Նկատի ունենալով —

1) Որ Օսմանեան սահմանադրութեան պաշտպանութեան գործը, ընդդէմ ռէակսիտներ տարբերու եւ քաղաքական դաւերու, կ'իյնայ նաեւ հայ տարրի, բայց

մասնաւորապէս մեր ժողովրդի քաղաքական կազմակերպութեանց վրայ.

2) Որ մեր ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը սերտօրէն կապուած է նոր ռեժիմի ամրապնդման հետ, Որոշեց —

Ա) Յանձնարարել բոլոր ընկերներուն, որ Երկիր վերադառնալու ժամանակ, անպատճառ ունենան զէնք, որ հրամայական անհրաժեշտութիւն է մեր արդի կացութեան մէջ:

Բ) Զանք չխնայել, որ Ամերիկայի հայ գաղթականները բոլոր հնարաւոր միջոցներով նպաստեն ինքնապաշտպանութեան գործին, մատակարարելով իրենց պատկանած համայնքներուն զէնքի դրամական միջոցներ, որ իբրեւ սահմանադրական ձգտում հակաօրինական բնոյթ չունի:

Գ) Տարածել գաղութներուն մէջ այն համոզումը, թէ որբերու, կրթական եւ նման գործերու մասին խորհելու ատեն, պէտք է մոռնալ նաեւ նոր ռեժիմի եւ ինքնապաշտպանութեան կարեւորագոյն խնդիրը:

Դ) Պատգամաւորներուն վրայ պարտք կը դրուի յայտարարել իրենց կոմիտէներուն, որ ամէն մի դաշնակցական պարտաւոր է զինավարժութեան հետեւիլ եւ ապացոյց տալ որ ինք հմուտ է զէնքի գործածութեան մէջ:

Նոյնութեամբ ընդունուեցաւ:

«Հայրենիք»ի տպարանը

Պատգ. ժողովը լսելով իր անդամներու կարծիքը «Հայրենիք»ի տպարանի Նիւ Եորք կամ Փրայմիտէնս փոխադրելու մասին, նաեւ ծանօթանալով այն անախորժ յայտնութիւններուն, որոնք արտայայտուեցան տպարանական շրջապատի մասին,

Որոշեց,

Ա) Կեդրոնական Կոմիտէի միջոցով վերջ տալ այն անկարգապահ վիճակին, որ կայ տպարանական գործերու մէջ, իրաւասութեան սահմանները չճանաչուելուն պատճառով:

Բ) Անմիջապէս վարձել խմբագրութեան յատուկ բնակարան: Լիազօրութիւն տալ Կ. Կոմիտէին, որ եթէ հարկ կը համարի եւ պէտք կը տեսնէ՝ փոխադրէ տպարան-խմբագրատունը Նիւ Եորք կամ այլուր:

Ատոր հետ միասին Պատգ. ժողովը կը յանձնարարէ Կ. Կոմիտէին, իբրեւ պատասխանատու մարմին, ամէնէն խիստ կարգապահութիւնը մտցնել տպարանի գործերուն մէջ եւ թոյլ չտալ որ կրկնուին հին անախորժութիւնները ոչ մէկ պատճառաբանութիւնով:

ՆԻՍ ԺԱ.

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը 9-ին. նախորդ արձանագրութիւնը նոյնութեամբ ընդունուեցաւ:

Ատենապետը յայտարարեց որ նախորդ Կեդր. Կոմիտէի անդամներէն ընկ. Աճէմեան նամակ մը դրկած էր Պատգ. ժողովին՝ ընկ. Զէօկիւրեանի հասցէին: Ընկերները օրինական ճամբով հրապարակ գալէ զուրկ նկատելով՝ որոշեցին բնաւ ուշադրութիւն չտալ այդ նամակին եւ ետ յանձնել զայն:

Կարդացուեցաւ Կ. Կոմիտէի հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը, որը շատ ճիշդ եւ կանոնաւոր գտաւ: Սակայն նախորդ նիստերուն մէջ Կ. Կոմիտէի տեղեկագիրն գրեթէ բոլոր կէտերը որոշ չափով ծեծած եւ լուսաբանուած ըլլալուն՝ վիճաբանութեան ենթարկուեցաւ Կ. Կոմիտէի տեղեկագրի ամբողջական վաւերացումը: Հետեւեալ բանաձեւը կարդացուեցաւ:

— Պատգամ. ժողովը լսելով Կ. Կոմիտէի հաշուեքննիչ յանձնախումբի գեկուցագիրը, եկաւ այն եզրակացութեան որ 1) Հաշիւները հաշուական տեսակէտէ բոլորովին ճիշդ են, 2) Նկատեց որ ծախսելու ելքը կը կազմէ մեծ տոկոս քան թէ կանոնադրը կը տրամադրէ, թէ եւ անոնք ստիպողական են եղեր, եւ թելադրեց Կ. Կոմիտէին մնալ իր սահմանին մէջ ծախսելու վերաբերմամբ, յայտնելով իր վստահութիւնը Կ. Կոմիտէի ընդհանուր գործունէութեան վերաբերմամբ առհասարակ: Ատոր հետ մէկտեղ նկատել կու տայ Կ. Կոմիտէին, որ նա չէ կրցեր խիստ կարգապահութեան ենթարկել «Հայրենիք»ի վարչութեան, խմբագրութեան կազմի եւ գործաւորներու գործածութիւնը՝ ներդաշնակ եւ օգտակար գործունէութեան մը համար:

«Հայրենիք»ի հաշուեքննիչ յանձնախումբը

Կարդալով հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ

— Նկատի առնելով «Հայրենիք»ի հաշիւներու խճողումը եւ անկանոնութիւնները, ժողովը կ'որոշէ ընտրել մասնաւոր յանձնախումբ, որ մանրամասնօրէն քննէ «Հայրենիք»ի հաշիւները եւ գոյքերը եւ մանրամասն հաշիւ պատրաստելով ուղարկէ կոմիտէներուն՝ Կ. Կոմիտէի միջոցով, առ առաւելն երկու ամսուայ ընթացքին մէջ: Յանձնախումբի անդամ ընտրուեցան

- Հ. Գօշիկեան — Նիւ Բրիպորտ
- Յ. Զէօկիւրեան — Բոստոն
- Գ. Պոյաճեան — Չրչի
- Լ. Թաշճեան — Բոստոն
- Յ. Կէմիճեան — Բոստոն

ՆԻՍ ԺԲ.

Ժողովը բացուեցաւ ժամը 1:30-ին կէսօրէ վերջ. նախորդ նիստի արձանագրութիւնները կարդացուեցան եւ ընդունուեցան:

Դրամարկդ Կ. Կոմիտէի եւ «Հայրենիք»ի գոյքերու ապահովութեան համար:

Ժողովը նկատի ունենալով որ Կ. Կոմիտէի եւ «Հայրենիք»ի գոյքերը անապահով վիճակի մէջ կը գտնուին, դրամարկդի մը չգոյութեան պատճառով, կը յանձնարարէ Կ. Կոմիտէին անմիջապէս դրամարկդ մը դնել:

Պատգ. ժողովի արձանագրութեան տեսրակ

Ժողովը նկատի ունենալով եղած Պատգ. ժողովներու արձանագրութեան տեսրակի մը գոյութիւն չունենալը, որոշեց, Ունենալ արձանագրութեան տեսրակ մը, ուր կ'արձանագրուին Պատգ. ժողովի որոշումները արձանագրուելով դիւանի կողմէ:

Հ.Յ.Դ. Կարմիր խաչի անդամները

Փափաքելով միջոց տալ հայ կիներուն ըստ կարելոյն շատ մտնել Կարմիր խաչի մեր շարքերուն մէջ, որպէսզի մօտէն ծանօթանան կազմակերպութեան ծրագրին եւ ուղղութեան,

Նկատելով միեւնոյն ժամանակ, որ այժմեան անդամավճարի քանակը յաճախ արգելք է եւ որպէսզի ընտանիքի իգական անդամները եւս մտնեն կուսակցութեան մէջ, ժողովը որոշեց կանանց եւ օրիորդներու համար անդամավճար ընդունիլ տարեկան \$3 տոլար:

Զինուորագրութեան վերաբերմամբ

Տեղեկանալով, որ շատ դէպքեր պատահած են, երբ մեր երիտասարդները խոյս տալով զինուորագրութենէ թուրքիայէն կը փախչին դէպի արտասահման, եւ նկատելով որ այդ տխուր երեւոյթը անարգանք է քաղաքացիական այդ կարեւոր իրաւունքին, որ տրուած է հայ ժողովուրդին՝ նոր օրէնքով:

Ժողովը որոշեց,—
Նիստ նկատողութիւն ընել մեր կազմակերպութեան այն անդամներուն, որոնք խուսափած են զինուորագրութենէ, եւ հրահանգել ընկերներուն, հասկցնել հայ երիտասարդներուն առհասարակ, որ այդ ծառայութենէ խոյս տալը, ներկայ պայմաններու մէջ, ծանր հարած է մեր ինքնապաշտպանութեան գործին եւ նոր ռեժիմին:

Քղեցիներու դիմումը

Պատգ. ժողովը լսելով քղեցի խումբը մը դաշնակցական ընկերներու խնդիրը, որով կը ցանկային ոյժ տալ իրենց շրջանի կրթական եւ կազմակերպական գործերուն, որոշեց յանձնարարել Կ. Կոմիտէին խնդրելու Կարնոյ Կ. Կոմիտէին ուշադրութիւն դարձնել Քղի շրջանի կրթական եւ կազմակերպական գործերուն եւ ուղարկել շրջուն գործիչներ պարբերաբար այդ շրջանին համար:

Ընտրուեցաւ Իննի յանձնախումբը. Ս հոգիէ բաղկացած յանձնախումբը, որ Պատգ. ժողովի լրանալուն յաջորդ օրը պատրաստէ բոլոր թղթերն ու գոյքերը եւ արձանագրութիւնները եւ զանոնք ստորագրելէ եւ վաւերացնելէ վերջ յանձնէ Կ. Կոմիտէին, որմէ վերջ կարող են մեկնիլ: Յանձնախումբի անդամ ընտրուեցան

- 1. Յ. Զէօկիւրեան
- 2. Գ. Միրանչահեան
- 3. Ա. Ռստիկեան
- 4. Ս. Զթճեան
- 5. Ն. Թաշճեան
- 6. Ն. Մանկունի
- 7. Տ. Զաքարեան
- 8. Տ. Տապաղեան
- 9. Յ. Զազմագճեան

Յիշեալ յանձնախումբը լիազօր է՝

- 1.- Կարգի բերել բանաձեւերը եւ յանձնել տպագրութեան: Որոշումները տպուած պիտի ցրուին կոմիտէներուն ամենաուշ մինչեւ Յունուարի 20-ը:
- 2.- Ընթացք տալ Պատգ. ժողովի պարապմունքներու առկախ մնացած հարցերուն, դուրս չգալով Պատգ. ժողովի որոշումներու սահմանէն եւ հոգիէն:
- 3.- Ամբողջ դիւանը, գոյքերը եւ թղթերը յանձնել նորընտիր Կեդր. Կոմիտէին:
- 4.- Քննել Ընդհ. ժողովի ծախքերու հաշիւը եւ արդիւնքը յանձնել Կ. Կոմիտէին:
- 5.- Յանձնաժողովը պէտք է գործի սկսի Պատգ. ժողովի փակման յաջորդ օրն իսկ, եւ ապա միայն ցրուի:

Գործիչի ընտրութիւն

Գործիչներու ընտրութեան մասին կարծիքներ փոխանակելէ վերջ՝ որոշուեցաւ ընկ. Ա. Ռստիկեան Արեւմուտքի ժամանակաւոր Շրջանային գործիչ:

Արեւմուտքի պատգամաւորներու առաջարկին եւ պնդումին վրայ ժողովը որոշեց որ Եւրոպայէն եկած գործիչը ժամանումէն մէկ երկու ամիսէ վերջ՝ պէտք է անպատճառ Արեւմուտք երթայ:

Իսկ Արեւելքի համար որոշուեցաւ թոշակաւոր գործիչ չպահել եւ թելադրուեցաւ Կ. Կոմիտէին որ Արեւելքի ընկերներէն խօսելու յարմարութիւն ունեցող ընկեր-

ներու ցանկ մը պատրաստէ, եւ Պատգամ. Ժողովը բարոյական պարտք կը դնէ այդ ընկերներուն վրայ, որ ամէն անգամ որ իրենց կը դիմուի, չմերժեն, հակառակ պարագային կը ճանաչուին անպարտաճանաչներ:

Կ. Կոմիտէի ընտրութիւն

Գաղտնի քուէարկութեան ենթարկուելով հետեւեալները ընտրուեցան.

- Կոբոյեան — 38 (ձայն)
- Ջատիկ [Մաթիկեան] — 37
- Փաշալեան — 34
- Սանտալ — 27 (49 բաց ձայն)
- Միրանշահեան — 25 (51 բաց ձայն)
- Փոխ անդամ բաց քուէով.
- Թ. Ճէլալեան
- Տ. Տապաղեան

Ազատութեան կոթողը

Հ.Յ.Դ. Ամերիկայի Պատգամ. Ժողովը միաձայն ընդունեց Պոլսի մէջ, ի պատիւ հայ յեղափոխութեան, արձան մը կանգնեցնելու առաջարկը:

Արձանը պիտի անուանուի «Ազատութեան կոթող» եւ պիտի կանգնեցուի հայ յեղափոխական նահատակներու շիրմատեղիին վրայ, Շիրազի գերեզմանատան մօտերը, յարմարագոյն դիրքի մը վրայ:

Ժողովը որոշեց.—

1. Այդ ձեռնարկին վերաբերեալ դրամական հանգանակութեան գործը սկսիլ Ամերիկայի հայ գաղութին մէջ, անոր սկզբնաւորութիւնն ընելով նոյն ժողովին մէջ:
2. Ձեռնարկին համաժողովրդական բնոյթ տալու համար, սկսիլ հանգանակութիւնը ամբողջ հայ գաղութին մէջ, եւ նշանակել 5 սէնթ իբր մասնակցութեան գումար,— ինչ որ հարկաւ, չ'արգիլելու աւելի մեծ գումարներու նուիրումը — որպէսզի գաղութի ամէն մէկ անհատ մասնակցած ըլլայ գործին:
3. Այս նպատակով կոչ ընել «Հայրենիք»ի եւ բոլոր այն թերթերուն մէջ, որոնք կը համակրին գործին:

«Դրօշակ»ի խմբագրութեան շէնքի գնման հարց

Պատգամաւորական ժողովը սիրով ընդունեց Դաշնակցութեան սեփականութիւնը դարձնելու առաջարկը՝ «Դրօշակ»ի խմբագրութեան այժմեան շէնքին, որուն հետ կապուած են այնքան յիշատակներ, ուր աշխատած են շատ ընկերներ, այժմ նահատակուած, որ իբրեւ յիշատակավայր, սիրելի է կազմակերպութեան բոլոր անդամներուն, եւ ուր պիտի պահուին կուսակցութեան թանգարանն ու բոլոր դիւանական թղթերը (արխիւ) եւ այլն:

Ա) Ամերիկայի ընկերներուն կողմէ առաջարկ ներկա-

յացնել՝ առաջիկայ Ընդհանուր Ժողովին գնել այդ շէնքը:

- Բ) Կազմակերպութեան Ամերիկայի ընկերները պիտի մասնակցին այդ գործին՝ տալով մէկ մէկ դոլար:
- Գ) Բոլոր կոմիտէներուն հաղորդել այս որոշումը,
- Դ) Յանձնարարել Կ. Կոմիտէին՝ առաջիկայ Ընդհ. Ժողովին առաջ գոյացնել այս գումարը՝ զայն դնելու համար ժողովի տրամադրութեան տակ:

Հ.Յ.Դ. փոխադարձ օգնութեան արկղ

Իննի յանձնախումբը սկզբունքով ընդունեց դաշնակցական ընկերներու փոխադարձ օգնութեան արկղի հիմնումը, կազմակերպութեան հովանիին տակ, եւ յանձնեց Բոստոնի Շրջ. խորհուրդին, մինչեւ երեք ամիս մշակել այս մասին մասնաւոր ծրագիր՝ միւս Շրջ. խորհուրդի եւ Կ. Կոմիտէի վաւերացումն ալ ստանալէ վերջ գործադրութեան դնելու համար:

Այս արկղի դրամական մասը ունէ կապ պիտի չունենայ կազմակերպական եկամուտներու հետ, այլ պիտի կազմակերպուի իբրեւ բոլորովին անջատ գործ:

Բնագրին համապատասխան ըլլալը կը հաստատեն: Զարտուղար Կ.Կ.Ի ՍԱՆՏԱԼ

Ընկեր Ակնունիի Ամերիկա այցելութիւնը

Պատգամաւորական ժողովը լսելով ընկեր Ակնունիի չորս ամսուայ տեղեկագիրը՝ ներկայացուած Կ. Կոմիտէին եւ Արեւմտեան շրջանի գործիչ ընկեր Ա. Ռատիկեանի կողմէ՝ գտաւ՝

ա. Որ մեր ընկերոջ այցելութիւնը, ինչպէս կ'ակընկալուէր, ունեցած է այնպիսի մեծ օգուտ ամերիկահայ գաղութին մէջ,— Նիւ Եորքէն մինչեւ Սան Ֆրանչիսկո — որու ազդեցութիւնն ու արդիւնքը վստահաբար պիտի մնայ անջնջելի:

բ. Ժողովը գտնելով նաեւ որ ընկեր Ակնունիի Ամերիկա այցելութիւնը մեծապէս նպաստած է կազմակերպական շարքերու ուժեղացման՝

որոշեց՝
ա. Մասնաւոր նամակով մը գոհունակութիւն յայտնել Արեւմտեան Բիւրոյին, որ մեր շրջանի արդարացի պահանջին գոհացում տալու համար, ընկեր Ակնունիին այցելութեան ղրկեց Ամերիկա:

բ. Նոյն նամակով խնդրել Արեւմտեան Բիւրոյին, որ ընկեր Ակնունիին մնայ մեր շրջանը մինչեւ որ մնայուն գործիչ մը ունենայ Ամերիկան:

գ. Ժողովը անգանցառելի պարտք կը համարէ նաեւ խորին շնորհակալութիւն յայտնել ընկեր Ակնունիի, իր ա՛յն անգնահատելի աշխատանքին համար, որով ան նպաստեց Պատգ. Ժողովի նիստերու արդիւնաւոր կերպով առաջ տարուելուն:

Փաստ. 1399-159

Գ 1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻՆ 1910 – 1911

Ընկերներ,

Այս տարուան Կեղր. Կոմիտէին վիճակուած դժուարութիւնները կարելի չէ բաղդատել նախորդիններուն հետ: Ամէն տարի իրաւ է իր դժուարութիւնները ունեցած է, բայց երեք տարիէ ի վեր դժուարութիւնները ամառ են որոշ պատճառներով, եւ այս տարի ամենադառն փորձառութիւնները մեզի վիճակուեցան:

Այդ պատճառները ընդհանուր եւ մասնաւոր հանգամանքով կը ներկայանան: Ընդհանուր դժուարութիւնները կը պատկանին ամբողջ կազմակերպութեան, իսկ մասնաւորները յատուկ են մեր շրջանին:

Կազմակերպութիւնը այնքան խոր արմատ ձգած եւ գործօն դեր մը ստանձնած է տեղի կեանքին մէջ, որ սահմանադրութեան հռչակուելուն պէս անմասն ոգեւորութենէն ցնցուած ամբողջ հասարակութիւնը, հայ, յոյն, թուրք, պուլկար, եւն, իր ուշադրութիւնը անոր դարձուց:

Այդ յափշտակութիւնը գիտակցական երեւոյթ չունէր, մտածում եւ կշռադատութիւն չկար անոր մէջ, այլ իրերու տարտամ ըմբռնում մը միայն, որ ոգեւորութեան եւ յուզումի շրջանէն ետք չէր կրնար անբեկանելի մնալ: Իրաւ ալ երբ կեանքը իր բնականոն վիճակը ստացաւ, հինի եւ նորի, առաջդիմութեան եւ կայուն [նու]թեան կռիւր ծայր տուաւ: Անձնական շահերը հանրայինի հետ բախեցան: Նոյնիսկ անոնք որ կատարեալ գիտակցութեամբ եւ համոզումով կազմակերպութեան քաղաքականութիւնը կը ներբողէին, դաւաճանեցին անոր դէմ, երբ տեսան որ կազմակերպութիւնը շարունակ վեր կը բռնէ հանրութեան շահերը անձնական շահերէն:

Հակահոսանքը ահաւոր եղաւ եւ եթէ Դաշնակցութիւնը տոկաց անոր դէմ եւ իր դիրքը պահեց, այդ շնորհիւ իր ուժին ու կենսունակութեան էր:

Այսուհանդերձ այդ հակահոսանքը անհամեմատօրէն դժուարացուց Դաշնակցութեան գործը. անոր դէմ դնելու համար գերագոյն ուժ թափել պէտք էր. աւելի մեծ թիւով գործակիցներ ու գործիչներ նշանակել պէտք էր այնպիսի տարրերէ, որոնք իրենց հանրային ճշմարիտ եւ բարձր գաղափարներով ապահովութիւն ներշնչէին մեր մէջ պիւրոքրատութեան եւ spoil system-ի ներմուծման վտանգին դէմ:

Այս նկատումի եւ կանխազգուշութեան արդիւնքը ամէն տեղ կը յայտնուէր գործիչներու պակասով: Որ-

չափ մեծ էր գործիչներու պահանջը այնքան մեծ պէտք է ըլլար գոուշութիւնը: Որովհետեւ դիւրին է քիչ շատ լեզուն դարձնել գիտցողի մը պաշտօն տալ, բայց խիստ դժուար է անոր սխալ գործունէութիւնը դարմանել:

Անդին գործիչներու պակասէն կ'օգտուէին մեր անուղղամիտ հակառակորդները: Ուստի Դաշնակցութեան բարձրագոյն մարմինները երկրի ինքնապաշտպանութեան եւ ծանրակշիռ հարցերէն զատ իրենց սեղանին վրայ ունէին այս շփոթեցնող հարցը,— ամէն ջանք թափելով գոհացում տալու իւրաքանչիւր շրջանի պահանջին:

Գործիչի հարցով ամէնէն աւելի տուայտող շրջանը մերը եղած է: Նախ տեղին հեռաւորութիւնը ահագին խնդիր մըն է ունէ գործիչի համար, երկրորդ՝ տեղին պայմաններուն յարմար գործիչ մը գտնել արդէն փոքրաթիւ գործիչներուն մէջ՝ շատ փափուկ պարագայ մըն էր, երրորդ՝ Մահմանադրութենէն ետք գործին նուիրուած կարող ընկերներ բնականօրէն Երկիրը պիտի նախընտրէին իրենց գործունէութեան վայր, ուր բուն ժողովուրդը կը սպասէր լոյսի, դաստիարակութեան եւ կազմակերպումի: Հետեւապէս մեր շրջանը կը մնար զրկուած կարող գործիչ մը եւ գործերը հետզհետէ լքումի կը մատնուէին:

Ընդհանուր եւ մասնակի դժուարութիւններու մէջ նկատելի կէտ մըն է հանրութեան հոգեբանութեան փոփոխութիւնը:

Սահմանադրութենէն առաջ զգացումն էր որ ժողովուրդը կը կապէր կազմակերպութեան մը հետ, իսկ ներկայիս աւելի գաղափարն է որ կը ծառայէ իբրեւ կապ, պայծառատեսութեամբ եւ իմացականութեամբ զօրացած, անշահախնդիր, մաքուր գաղափարը: Այս յանկարծակի փոփոխութիւնը պէտք է վնասէր կազմակերպութեան, եթէ Դաշնակցութիւնը իր գործունէութիւնը շարունակ դաստիարակչական եղանակով առաջ տարած չըլլար:

Ի հարկէ կարելի չէր սպասել որ մեր դաստիարակութիւնը դիւրութեամբ հասնէր ժողովուրդին, եւ երբեմն նշանները ցոյց կու տային որ միմիայն զգացումով կապուած անհատներ կ'իյնային շարքերէն: Սակայն ինչպէս անցեալ նոյնպէս ներկայ Կեղր. Կոմիտէին հրկողութեամբ շարքերը կը դաստիարակուէին, եթէ ոչ փափաքուած չափով գոնէ տեղի ունեցող հոգեբանա-

8.- Անգլերէն քանդիչ մեթոտ իմաստով:

կան փոփոխութեան զգալիորէն հակազդելու չափով: Գաղափարով տկար մարդիկ Երկիր երթալու հեռանկարով յաճախ խնայողութեան համար կը խուսափին կազմակերպական գործերու մասնակցութենէ, բայց անոնք որ կազմակերպական դաստիարակութեամբ զօրացած են աւելի եռանդուն կապուած կը մնան գործին:

Անցեալ տարուան Կեդրոնական Կոմիտէն բացատրած էր իր տեղեկագրին մէջ թէ որքան տաժանելի եղած էր իրեն կռուիլ այդ յարաճուն լքումին դէմ իր ձեռքին տակ ունեցած ուժերով եւ մատնանիչ կ'ընէր, որ ուժերը լքումին հետ խոտոր համեմատութեամբ գացած էին, այսինքն ուժերը միշտ պակասած եւ լքումը աւելցած էր: Այս տարի ուժերը աւելի պակասած էին, ուստի եւ մեր գործերը աւելի դժուարացան:

Յաճախ հինգ վեց կոմիտէներ մէկէն ժողովի պատրաստութիւններ կը տեսնեն, եւ իւրաքանչիւրը երկուքէն պակաս ատենախօսով չի բաւականանար, ան ալ իր ընտրած երկուքը կը պահանջէ եւ չ'ուզեր հասկնալ մեր շուարեցնող կացութիւնը: Մէկը կամ միւսը համոզել որ յետաձգէ ժողովը եւ կամ միայն մէկ ատենախօսով բաւականանայ դիւրին գործ եղած չէ: Կոմիտէները իրենց խիստ պահանջներուն մէջ երբեմն այնքան կը մոռնային մտածելու եւ կշռադատելու պարտականութիւնը, որ իրենց դիմումները չէին կրնար կրկնել կամ յուսախաբութիւնը արտայայտել, առանց թերանալու պատշաճութեան մէջ, ինչ որ յաճախ վիրաւորած է ընկերներու սիրտը:

Այս հարեւանցի ակնարկը կ'ընենք ոչ թէ ամբաստանելու կոմիտէները, այլ մատնանիչ ընելու կազմակերպական եւ ինքնայարգանքի աւելի զօրաւոր դաստիարակութեան պէտքը:

Եթէ Կ. Կոմիտէն չէ կրցած բոլոր կոմիտէներուն պահանջին գոհացում տալ եւ կամ ումանց աւելի մեծ չափով գոհացում տուած քան միւսներուն, այդ հաճոյք մը չէր իրեն համար, այլ պարագաներու բերումով կատարուած: Ընկերները վստահ կրնան ըլլալ թէ ինչ որ կարելի էր ընել ըրած ենք այդ ուղղութեամբ, եւ ինչ որ չենք կրցած ընել, այդ բացարձակապէս անկարելի եղած է:

Կեդր. Կոմիտէի ընկերները կրցածնուն չափ վազած են շրջանի կոմիտէներու հրապարակային կամ անդամական ժողովներուն, ազատ կամ հանգիստ Կիրակիի խիստ անբաւական թիւ մը ունենալով:

Ինչ որ կարելի եղած չէ անձամբ ընել, ջանացած է ընել թղթակցութեամբ, լուծուած կոմիտէները վերակազմելու — կամ նորեր կազմելու համար, կազմակերպական խնդիրներու եւ ծրագրային հարցերու շուրջ եղած հարցումներուն ընդօրոյթ պատասխանելով:

Մեր այս աշխատութիւնները ապարդիւն անցած չեն: Հակառակ եղած ահագին դժուարութիւններու, մենք

նուազած ուժերով ոչ միայն մեր շարքերը չենք կորսնցուցած, կամ պահած ենք, այլ նաեւ աւելցուցած ենք:

Այս պայմաններու մէջ մեր շարքերը կուռ պահեցինք: Այս իրողութիւնը կարելի է ըմբռնել, եթէ բաղդատենք անցեալ տարուան եկամուտը ներկայ տարուան նուազած տուրքերու եկամուտով: Ընկերներու վրայէն ծանր բեռը մասամբ վերցուցեալ, սակայն անոնք որ իտէալով զօրացած չէին դարձեալ թերացան իրենց ընկերական պարտականութեանց մէջ, հակառակ եղած դիւրութեան. իսկ կազմակերպութեան համար աւելի գուրգուրանք ունեցող ընկերներ ամբողջովին վճարեցին իրենց տուրքերը, եւ տուրքի նուազումէն օգտուելով մասնակցեցան այլեւայլ բարեգործական նպատակներու, ինքնապաշտպանութեան համար եւ աւելի լայն համեմատութեամբ հետեւեցան մեր գրակառութեան:

Այս տարուան մէջ կազմուեցան կամ վերակազմուեցան հետեւեալ կոմիտէները.— Ֆրեզնո, Քէնթըն, Մէնթ Լուիզ, Քոնոչա, Ծալիէթ, Հարթֆըրտ, Ֆիչպուրկ, Սփրինկֆիլտ, Չըլսի, Նիւթըն, Ափրը Ֆոլզ եւ վերջերս Հըտսըն:

Լուծուեցան մեր հետեւեալ պատիկ կոմիտէները, որոնց ընկերներու թիւը հազիւ հասնէր.— Տոլլըր, Նորֆոք, Պըֆլօ եւ Մանչեսթըր: Ասոնցմէ միայն Մանչեսթըր ընկերներու անհամաձայնութեամբ լուծուեցաւ, թիւը հինգէն երեքի իջնելով, իսկ միւսները լուծուած են ընկերներու Երկիր մեկնած ըլլալուն համար:

Արեւմուտքի կոմիտէները շարունակ երկպառակութեան տեսարան մը կը ներկայացնէին, բայց այս տարի գրեթէ բոլորովին խաղաղեցան: Արեւմուտքի գործիչ ընկեր Ռատիկեան ձեզի աւելի լայն տեղեկութիւն կու տայ այդ շրջանին առթիւ: Դեռ երեք-չորս ամիս առաջ մասնաւոր նամակներով վերջին անգամ ըլլալով՝ հարցումներ ուղղեցինք իրենց ներքին խաղաղութեան մասին. ամէնքն ալ գոհացուցիչ պատասխաններ գրեցին:

Գործիչի հարցը եւ ոչ մէկ ըրալէ մոռացութեան տրուեցաւ. ամէն մէկ պաշտօնական եւ անպաշտօնական նամակի մէջ Բիւրոյին ուղղուած՝ շեշտեցինք այդ պէտքը, հեռագրով պահանջեցինք: Սկիզբէն հեռագրով եւ նամակով ուզեցինք ընկերներ Արամ Աշոտը³ եւ Տիգրանեանը⁴, ետքէն Մար² եւ ուրիշներ, բայց ամէնքն ալ այս կամ այն պատճառով չընդունեցին մեր հրահրը:

Ամէնէն ետքը երբ լսեցինք որ ընկեր Ակնունի Եւրոպա անցած է, առիթէն օգտուելով դիմեցինք Բիւրոյին եւ Դրօշակի խմբագրութեան նամակներով եւ հեռագրերով: Մեր երկար պահանջները վերջապէս լաւ արձագանգ գտան եւ ընկեր Ակնունի յանձն առաւ գալ: Ընկեր Ակնունի իր պատասխանատու պաշտօնին բերմունքով միայն երկու ամիս տրամադրելի ըրած էր սկիզբէն, մեր շրջանին համար, եւ ըստ այնմ ժողովներու շարք մը պատրաստեցինք, շարք մը որ խիստ յոգնե-

ցուցիչ էր ընկեր Ակնունիի համար, եւ երբեմն աննպաստ մէկ կամ միւս կոմիտէին. բայց թէ՛ ընկեր Ակնունիի անխոնջ աշխատութեամբ եւ թէ՛ կոմիտէներու եռանդոտ ջանքերով, գրեթէ բոլոր ժողովները յաջող անցան: Ընկեր Ակնունի տեսնելով մեր շրջանի վիճակը սիրալոյսով երկարացուց իր այցելութիւնը, եւ զնաց նոյնիսկ մինչեւ Ֆրեզնո, Սաքրամենթօ, Փառ Լուի եւ Սան Ֆրանսիսկօ, ուր ոչ մէկ դաշնակցական գործիչ ոտք կոխած էր մինչեւ այս տարի: Ֆրեզնոյի կոմիտէն քանի մը ամիս առաջ վերակազմուած էր, մօտաւորապէս տասնհինգ կամ քսան ընկերներով: Ընկեր Ակնունիի այցելութենէն ետք վաթսուների բարձրացաւ: Ուրախ ենք ըսելու որ գրեթէ բոլոր գաղութները վերջին ծայր գոհ մնացին այդ այցելութենէն եւ ընկեր Ակնունիի հակառակ իր նախկին ծրագրին, ամէն տեղ այնչափ մնաց որքան պահանջ կար, ժամանակ տալով նաեւ կոմիտէներու ներքին ժողովներուն: Միայն Նիւ Ինկլէնտի պատիկ գաղութները եւ քանի մը ուրիշ կոմիտէներ զրկուեցան իր այցելութենէն, ժամանակ չըլլալուն, բայց անոնք ալ իրենց բաժինը պիտի ունենան այս ժողովէն ետք: Այցելութեան եւ ժողովներու այդպիսի հսկայ ծրագիր մը առանց անպատեհութեան չէր կրնար ըլլալ: Շիքալօ եւ Պոսթըն դառն փորձառութիւններ ունեցան: Հարիւրաւոր նամակներ հակառակ պահանջներով՝ կը տեղային. անոնց համաձայն ընկեր Ակնունիին՝ գիտակ պահել ճամբու վրայ, հեռագրերով եւ նամակներով, միշտ կարելի էր: Շիքալօ անգամ մը յուսախաբ եղաւ բայց անոր փոխարէն երկու անգամ ժողով ունեցաւ:

Ընկեր Ակնունիի հետ խորհրդակցելով հեռագրեցինք ժընեւ ընկեր Միմոն Յակոբեանը կամ մեզի աւելի ծանօթ անունով Բերուինի դրկելու, բայց այդ ընկերը Վիեննա Միսիթարեաններու հաստատութիւնը երթալ որոշած ըլլալով (ուսումնասիրութեան մը համար) հրաժարեցաւ գալ: Մենք դարձեալ շարունակեցինք ուրիշ գործիչ մը պահանջել: Գրեցինք ընկեր Ժիրայրին⁵ համար, թէ եւ բաւական ատեն այդ մասին պատասխան չկրցանք առնել, բայց Բիւրոն իր վերջին նամակով տեղեկացուցած էր թէ ընկեր Ժիրայրը պէտք էր այնտեղ, եւ անոր տեղ կ'առաջարկէր ընկեր Եահիաթունեան, միայն նկատել տալով թէ այս վերջինը չի կրնար խօսելու համար ճամբորդութիւններ ընել իր տկար կազմին կը մնայ ընկեր Ակնունիի հետ խորհրդակցելով լաւագոյն կարգադրութիւնը ընել: Բիւրոն յայտնած էր նաեւ թէ ընկեր Ակնունի կրնայ մնալ մինչեւ ամառ:

*
**

Չորրորդ Ընդհ. ժողովի որոշումներէն եւ սահմանադրութենէն ետք կիներու կոմիտէները ամէն տեղ լուծուած էին. թէ եւ մեր ներքին կանոնագիրը այս տա-

րի կոմիտէներուն կազմը առանց սեռի խտրութեան կ'ընդունի եւ կարգ մը տեղեր տրիկլիններ կը մասնակցին կոմիտէներու, բայց տակաւին կան հայ տրիկլիններ որ այնքան ազատ չեն զգար մասնակցելու այրերէ բաղկացած կոմիտէներու, եւ շարժում մը կար դարձեալ կանանց կոմիտէ մը կազմելու: Թրոյի կանանց նախկին կոմիտէի անդամները ձեռնարկած էին կոմիտէն կազմելու ու դժկամութիւն ցոյց կու տային ուրիշ անունով գործելու, բայց ներկայացնելով իրենց մեր ներքին կանոնագրի տրամադրութիւնը եւ մանաւանդ Ընդհ. ժողովի որոշումները, համաձայնեցան կազմակերպուիլ Հ.Յ.Դ. Թրոյի եւ Ուոթըրվիլի կանանց կարմիր խաչի ընկ. անունով եւ մինչեւ որ այս ժողովը վաւերացնէ նոր կանոնագիր մը այդպիսի ընկերութեան մը համար, կ'առաջնորդուին կանանց կոմիտէի հին կանոնագրով:

Նորակազմ Կարմիր խաչի ընկերութեան առաջին գործը եղաւ նախկին ընկերութիւններու տուրքի պարտքերը հաւաքել եւ եօթանասուն տալէրի հասցնելով դրկել կովկասահայ բանտարկեալներու դատին համար:

Նիւ Պրիթընի մէջ ալ այդպիսի ընկերութիւն մը կազմուելու վրայ էր, բայց յետաձգած են մինչեւ կանոնագրի մը լոյս տեսնելը:

Մեր գործերու սովորական դժուարութիւններէն գատ, մեծ դժուարութիւն էր նաեւ Կեդր. Կոմիտէի ցըրուած հանգամանքը: Խորհրդակցութեան համար ամէն ատեն ժողով ընել թէ դժուար էր եւ թէ ահագին ծախքերու դուռ կը բանար: Ուստի հաւաքական ժողովները խիստ կարեւոր պարագաներու վերապահելով, ընթացիկ գործերուն նախ թղթակցութիւնով կը խորհրդակցէինք, ինչ որ դժուար էր բոլոր ընկերներու համար ալ հաւասարապէս: Շրջաբերականներ կանխաւ կը դրկուէին եւ ընկերներու հաւանութիւնը, թելադրութիւնը եւ բարեփոխութիւնը առնելէն ետք կը դրկուէին կոմիտէներուն, նոյնպէս միջկուսակցական յարաբերութիւններու թուղթերը:

Այդպիսի ցրուած Կեդր. Կոմիտէի մը ընտրութիւնը արդէն պերճախօս փաստերէն մէկն էր թէ մեր ուժերը որչափ պակասած էին եւ գործը, որ աւելի մեծցած էր, որքան ծանրացած քանի մը ընկերներու վրայ: Հակառակ այս աննպաստ կացութեան, ամէն ջանք ի գործ դրինք անցեալ Պատգ. ժողովի որոշումները գործադրելու:

Այդ ընելու համար ունեցած ենք վեց կանոնաւոր եւ ամբողջական ժողովներ, իսկ երբ մեծամասնութեանը մօտենալու պատեհութիւն ունեցած ենք, աւելի յաճախ ժողովներ եւ խորհրդակցութիւններ ունեցած եւ իրարու հաղորդած ենք. Պոսթընի մէջ երեք ընկերներ 4-5 անգամ խորհրդակցութիւններ ունեցած են, իսկ Նիւ Եորքի մէջ երբ երեք ընկերներ իրարու մօտ էին, աւելի

9.- Ժիրայր՝ Ջօրեան Բարթող, Գախապէս Պուկարիա, այժմ Պուխ:

քան երեք ամիս գրեթէ ամէն Հինգշաբթի ժողովներ ունեցած են, թիւով 12:

Մեզի յանձնուած գլխաւոր գործերն էին.

- 1.- Գործիչի մը անհրաժեշտութիւնը:
- 2.- Վերամշակուած կանոնագրի տպագրութիւնը:
- 3.- Միջ-կուսակցական համերաշխութեան հարցը:

Գործիչի հարցի մասին արդէն լսեցիք:

Վերամշակուած կանոնագիրը խիստ անխնամ եւ մատիտով գրուած խառն թուղթերու վրայ յանձնուած էր մեզ: Սովորական գործերէ դուրս բաւական դժուար էր գտնուիլ կարգի բերելու ժամանակ գտնել եւ տպագրութեան յանձնել: Հակառակ եղած դժուարութիւններուն անոր տպագրութիւնը եւ ցրուումը աւելի երկար չառաւ քան գործին թեքնիքական մասը կը պահանջէր: Տպագրութեան ատեն խիստ մեծ զգուշութիւն ձեռք առնուած է Պատգ. ժողովի վաւերացումին համաձայն գործին հարազատութիւնը պահելու համար: Տպագրուած օրինակները կանխաւ դրկուած են Կ.Կ-ի ընկերներուն համեմատութեան համար: Ուրախ ենք ըսելու որ աչքառու վրիպում եղած չէ, եւ ոեւէ վրիպումի մասին գանգատ եկած չէ:

Միմիայն երրորդ յօդուածի տրամադրութեան համաձայն դիմումներ գրելու պատրաստութիւնը խիստ ուշացաւ՝ ձեւի մասին վերջնական համաձայնութեան գալու եւ տպարանական դժուարութիւններու պատճառով. բայց վերջապէս տարին լրանալէ առաջ ցրուումը է բոլոր կոմիտէներուն: Դիմումներ գրելու ուշանալու պատճառով շրջաբերականներով բոլոր կոմիտէներէ իրենց անդամներու թիւը ուզեցինք, կատարեալ եւ ճշգրիտ մարդահամար կատարելու համար. դժբախտաբար կոմիտէներու ամբողջութիւնը չկրցաւ մեզի հարկ եղած ծանօթութիւնները տալ:

Միջկուսակցական համերաշխութեան հարցը չափազանց փափուկ եւ դժուար հարց էր: Կ. Կոմիտէն ինքզինքը որոշ աշխարհահայեացքով ներկայացուած կուսակցութիւն մը չէր որ կը գտնէր, այլ իւրաքանչիւր կուսակցութիւն տեղական եւ հակասական ըմբռնումներ ցոյց կու տար: Օրինակ, Հնչակեան Պոլսոյ Կեդր. մարմինը համերաշխական էր, իսկ Ամերիկայի մէջ թունդ հակահամերաշխական... համերաշխութիւնը իր քանդումին ազդակը նկատող: Ռամկավարականները արդէն թէ՛ երկրի մէջ եւ թէ՛ արտասահմանի մէջ հակառակ էին, իսկ Վերակազմեալները թէ՛ Երկրի մէջ անկեղծ համերաշխականներ եղած էին, բայց այստեղ ուժերը տկար ըլլալուն՝ որոշ ձգտում մը ցոյց չէին տար: Այս կացութեան մէջ Կ. Կոմիտէս որոշեց այս շրջանին նախապատրաստութեան ուժ տալ, այսինքն մշակել համերաշխութիւնը նախ մամուլի, բեմի եւ անհատական յարաբերութիւններու միջոցով, զգուշանալ կարելի եղածին չափ ուրիշի ինքնասիրութեան դպչող անհարկի

բառերէն եւ բացատրութիւններէն, աշխատիլ քննադատութեան ատեն գէշ կողմերը շտկելու անկեղծ ոգիով, նիւթերը մշակել եւ մարդոց լաւ կողմերը տեսնել, միեւնոյն ատեն միշտ հսկել որ [երբ] համերաշխութեան առիթ մը ներկայանայ՝ չփախի: Պրէնտֆրէրթի մէջ դաշնակցականներու կողմէն կատարուած ենթադրական տեւորի լուրը առիթ մը եղաւ մեզ, որ Պոլսոյ միջկուսակցական] ատենին տեղեկագիր մը ներկայացնենք եւ միջկ. ատենանով խնդրին քննութիւն բանալու մեր համաձայնութիւնը յայտնենք:

Հնչակեանները առաջինը եղան այստեղ ատենանը պահանջելու, բայց դժբախտաբար միշտ խուսափեցան եւ երբեք չընդունեցին ժողովի պայմանները, նոյնիսկ ժողովին նիւթ ըլլալիք «անյաջող մահափորձ»ի որակումը, ինչպէս իրենց հեռագրերը կ'ըսէին: Իրենց գործածած միակ բառը գոց նամակի մը մէջ «յարձակում» բառն էր: Հակառակ անոր որ մենք իրենց գրեթէ բոլոր առաջարկները ընդունեցինք, բացի «յարձակում» բառէն եւ Վեր[ակազմեալ] Հնչ[ակեաններ] ժողովէն դուրս ձգելու առաջարկէն, իրենք բացարձակապէս մերժեցին նոյնիսկ պատասխանել մեր պայմաններուն:

Ընկեր Ակնուների գնալէն ետք կրկին փորձեցինք, Վերակազմեալները սիրալոյսով արձագանգ տուին, թէ՛ եւ խոշոր ծրագրով, բայց միւսները ոչ միայն մերժեցին, այլ նաեւ անպատիւ միջոցներու դիմեցին համերաշխութիւնը անկարելի դարձնելու համար:

* * *

«Հայրենիք»ի տպարանը շատ աննպաստ կացութեան մէջ յանձնուեցաւ մեզի: Նախ անցեալ Պատգ. ժողովը հապճեպով վերջնալուծ, կարելու խնդիրներու վրայ շրջահայեաց ակնարկ նետելու ժամանակ չունեցաւ, եւ նոյնիսկ որոշումներ վաւերացնելու մոռցաւ, որով կարգ մը թիւրիմացութիւններ, թէ՛ Երկրի մէջ կարելու, երկար ատեն յոգնեցուցին մեզ եւ վերջապէս գործը անորոշ կացութեան մատնուեցաւ: Վարչութիւն եւ Կեդր. Կոմիտէ՝ իբրեւ մէկ գործի վրայ երկու մարմին, սովորականին պէս դարձեալ անհասկացողութեան մատնուեցաւ, ինչ որ վնասեց գործին: Նախ գործաւորները կորսնցուցին իրենց յարգանքը ոեւէ մարմնի հանդէպ, եւ գործը ղեկավարել դժուարացաւ: Երկրորդ՝ Կեդր. Կոմիտէս խիստ անհաճոյ կացութեան մէջ գտնուելով՝ չէր գիտեր ինչ քայլ առնելիքը: Եթէ չհսկէր՝ գործի քանդումին կ'երթար, եթէ հսկէր՝ ուրիշ իրաւասութիւնը բռնաբարած կ'ըլլար:

Փետր. 27ին Կեդր. Կոմիտէի, «Հայրենիք»ի վարչութեան եւ խմբագրութեան խառն ժողովի մէջ որոշուեցաւ ընկեր Համբարձումեանը կանչել Նիւ Եորքէն իբրեւ «Հայրենիք»ի քարտուղար, ըստ թելադրութեան անցեալ տարուան Պատգ. ժողովին: Վարչութիւնը գործադրեց այդ որոշումը, բայց ետքէն հետզհետէ անտար-

բեր դիրք մը բռնեց: Իրերու այս դրութիւնը դարմանելու համար դիմում ըրինք վարչութեան, որ աւելի հոգ տանի գործին. ի պատասխան մեր դիմումին վարչութիւնը խառն ժողով պահանջեց Օգոստ. 14ի Կիրակիին համար: Երբ մենք 344 թիւ նամակով կրկին իրենց ուշադրութիւնը հրաւիրեցինք եւ պահանջեցինք իրենց դիրքը շտկել, վարչութենէն երկու անդամներու ստորագրութեամբ նամակ մը ստացանք, որով կը յայտնէին իրենց հրաժարումը պատասխանատուութենէ, պատճառ բռնելով մեզի անծանօթ ոտնձգութիւններ: Անկէ վերջ ինչպէս առաջ գործը դարձեալ մեր վրայ ծանրացած մնաց:

Այս դժուարութիւններուն աւելցաւ նաեւ փոխադրութեան խնդիրը. թէ՛ Երկրի Փրովիտէնսի կոմիտէն կ'առաջարկէր տպարանը Փրովիտէնս փոխադրել, բայց այդ ուղղութեամբ գործելու նախ ժամանակ չկար, երկրորդ՝ կոմիտէներու ամբողջութիւնը չկրցաւ իր որոշ կարծիքը դրկել: Կարծիք յայտնողներու մէջ երկու երրորդի մեծամասնութիւն չկար: Կեդր. Կոմիտէս անյարմար դատեց փոխադրութիւնը թէ՛ ժամանակի կարճութեան համար անկարելի ըլլալուն, եւ թէ խնդիրը լուրջ խորհրդակցութեան կարօտ ըլլալուն: Այս ժողովն է որ այդ մասին իր վերջնական որոշումը պիտի տայ:

Տպարանը երբեք կազմակերպութեան վրայ բեռ չ'ըլլար, եթէ ղեկավարող ուժ մը ըլլայ. դժբախտաբար այդ ուժը պակասած է եւ վերջ բացատրուած անպատեհութիւններու պատճառով, քիչ մըն ալ կոմիտէներու պարտքերուն պատճառով, տպարանը նիւթապէս կորսնցուց եւ Կ. Կոմիտէս այնպիսի կացութեան մը առջեւ գտնուեցաւ որ կամ թերթը դադարեցնել հարկ էր կամ քիչ մը պարտք տալով գործը փրկել: Կ. Կոմիտէս երկու չարեաց փոքրագոյնը ընտրելով՝ 305 տալէրի պարտք մը տուաւ: Եթէ այս տարուան եւ անցեալ տարուան հաշուեկշիռներու բաղդատութիւնը ընէք պիտի տեսնէք որ կորուստը աւելի բաժանորդագիրներու եւ ձեռքէ ծախուած թերթերու մէջ եղած է: Ասոր մէկ պատճառն է անշուշտ թերթերու շատնալը, բայց ուրիշ պատճառներ ալ կան, ինչպէս թերթի պարունակութեան մէջ երբեմն զանազանութեան պակասը՝ կարող եւ կանոնաւոր աշխատակիցներու չգոյութեան հետեւանքով:

Թերթի խմբագրութիւն

Ի հարկէ թերթը մեր փափաքածին չափ լաւ չխմբագրուեցաւ բայց եղած ուժերով ինչ որ կարելի էր ըրինքնախ թերթին մաքրութեան խիստ հոգ եւ հսկողութիւն տարուեցաւ, պահելով նաեւ անոր մէջ կարելի եղածին չափ գաղափարի ուժ եւ ջիղ: Կարելու հարցերու շուրջ խմբագրականներէ եւ ընտրուած գրական ու բանաստեղծական կտորներէ գատ երեւցած են դաշնակցական ամէնէն սիրուած գրողներու յօդուածներ: Այդ պատա-

հական յօդուածներէ դուրս սխտեմաթիք աշխատութիւններ երեւցան, ինչպէս՝ Իմ եղբայր գիւղացին, Կրէնգրպիլ, Քրիստոսի Սոցիալիստական ուսուցումը, որոնք ետքէն գիրքի վերածուեցան: Թերթի միջոցով հրատարակուած գիրքերը բաւական եկամուտ բերած են, Պոլսոյ գրավաճառներու հինցած պարտքերը գոցելէ ետք: Դժբախտաբար կանոնաւոր աշխատակիցներ չըլլալուն թերթը երբեմն կը կորսնցնէր իր գանազանութիւնը: Խմբագրութեան համար դժուար հարց մը եղած է կոմիտէներէ եկած թղթակցութիւնները ղեկավարելու մասը ընդհ. շահագրգռութենէ գուրկ ըլլալով նոյնիսկ տեղական օգտակարութիւն չունին, իսկ թղթակիցները այնպէս կը ներկայացնեն որ առանց այդ գրութեան հրատարակումին, եթէ ոչ Դաշնակցութիւնը՝ գոնէ տեղական կոմիտէն պիտի փճանայ. երբեմն գիրքեր անընթեռնելի եւ լեզու խիստ անհասկնալի, եւ յաճախ խիստ անպատշաճ բառերով լեցուն: Եւ զարմանալիս այն է որ ամէնքն ալ կը պահանջեն անոնց անփոփոխ հրատարակութիւնը, ոմանք միայն համեստութիւնը կ'ունենան առաջարկելու որ տառասխալները շտկուին, պայմանով որ բառերը եւ իմաստը անփոփոխ մնան: Երբեմն թախանձանքները յաղթած են, եւ անմիջապէս ուրիշ տեղերէ բողոքներ եկած են լեզուի դէմ, բազմաթիւ հերքում գրութիւններով: Ասոնց իւրաքանչիւրին պատասխանել եւ դիտողութիւններ ընել՝ խմբագրութեան աշխատութեան ահագին մեծ մասը կազմած է:

Թերթը իր բոլոր պակասութիւններով հանդերձ, որոնց մենք եւս կատարելապէս գիտակ ենք, իր դիրքը պահեց, ու չինկաւ ամբոխի բաղձանքներուն ենթակայ. թերթը նուիրուեցաւ մեծ մասով դաստիարակչական գործին, հրաժարելով ամբոխի բաղձանքներուն համակերպելէ եւ անոր ծափերը վայելելէ: Ուրախ ենք մենք ըսելու որ ժողովուրդի մաքուր մասը, նոյնիսկ չէզոք հասարակութիւնը աւելի յարգանք ունի մեր թերթին հանդէպ քան ուրիշ ոեւէ արտասահմանեան թերթի:

Լրագրական վիճաբանութիւնը եթէ մաքուր հողի վրայ տարուելի, շատ օգտակար է ժողովրդի մտաւոր դաստիարակութեան համար: Բայց Ամերիկայի եւ արտասահմանի մէջ հրատարակուող հակառակորդներու թերթերը այնպիսի անսկզբունք եւ անպարկեշտ մարդոց ձեռք ինկած են, որ բոլորովին աղտոտած են գրականութիւնը, եւ մարդ չի կրնար անոնց հետ գործ ունենալ առանց ցեխտոտելու. ուստի մեր մամուլի մաքրութիւնը պահպանելու համար զգուշացած ենք յաճախ նոյնիսկ անունները յիշել անոնց, եւ հերքած ենք միայն կարճ եւ անուղղակի կերպով ամէնէն վրդովեցուցիչ սուտերը:

Երկրի ինքնապաշտպանութիւնը

Մեր այնքան աշխատանքներու մէջ մոռցանք երկրի ինքնապաշտպանութեան խնդիրները:

Վայրի մը մէջ ինքնապաշտպանութեան համար բաւական մեծ քանակութեամբ զէնքեր գնուած էին լաւ պայմաններով, բայց ընկերները դրամը պարտքով վերցուցած ըլլալով ստիպողաբար մեզ դիմում ըրած էին հարկ եղած գումարը փոխանցելու եւ կազմակերպական հմայքը փրկելու: Պատեհութիւնը այնքան յանկարծակի եղած էր որ անկէ օգտուելու համար միջոց չէր մնացած կազմակերպական օրինական ճամբով, այսինքն Բիւրոյի հրահանգով կատարել: Ընդհ. ժողովի մեր պատգամաւորներն ալ շեշտած էին խնդրին փափկութիւնը, ուստի ժամանակ չկորսնցնելու համար փութացուցինք պահանջուած \$517,50ի փոխանցումը: Գրնւած զէնքերը ինքնապաշտպանութեան ատակ ընկերներու վաճառուելով կրկին դրամի պիտի վերածուէր եւ այդ գումարը պիտի յատկացուէր Ջիֆոնի դրամագրութիւն: միեւնոյն ատեն մենք իմաց տուինք Բիւրոյին մեր առած քայլի մասին եւ թէպէտ սկիզբէն Բիւրոն իր դժգոհութիւնը յայտնած էր կազմակերպական կարգապահութեան այս ակամայ շեղումին առթիւ, բայց լսելով մեր բացատրութիւնները համաձայնեցաւ:

Այլեւայլ նպաստներ

Մենք չմոռցանք նաեւ որբերը, մեր հերոսներու որբեւայրիները եւ բանտարկուած եղբայրները: Միակ մէկ անպատեհութիւնը որ կար՝ ընկերները մէկ հերոսին ուշադրութիւն դարձնելով մասնաւորա-

10.- Ամերիկայի մէջ կովկասահայ բանտարկեալներու համար հաւաքուած դրամը պիտի հասնէր 10.000 տոլարի:

պէս, մոռացութեան կը մատնեն ուրիշ հերոսները: մեր եւ ուրիշներու ձեռքով օրինակի համար աւելի քան 1000ական տալէր հասցուած է մեր սիրած երկու հերոսներու՝ Սերոբի եւ Հրայրի այրիներուն, մինչդեռ մեր թելադրութիւններու միջոցով միայն պատիկ գումար մը կըրցանք ապահովել ուրիշ հերոսներու համար:

Աշխատանքի Տունը, որ դաշնակցական ընկերներու եւ ընկերուհիներու գեղեցիկ ու իմաստուն մէկ հաստատութիւնն էր, այնքան ուշադրութիւն չգրաւեց, ինչ որ ցաւալի է:

Միսթարական է այն երեւոյթը որով գիտակից հասարակութիւնը արձագանգ տուաւ մեր կոչին կովկ. եղբայրներու դատը փրկելու համար: Արդէն մեր մամուլի միջոցով 1041,87 [տոլար] փոխանցուած է:

Ուրիշ գումարներ տակաւին պիտի դրկուին կամ դրկուած են Պատրիարքարանի միջոցով: Մինչեւ հիմա պահանջուած գումարը կարելի էր դիւրութեամբ հանել, եթէ հակառակորդներու բացարձակապէս վատ դերը երեւան չելլէր¹⁰:

Ընկերներ, կազմակերպութիւնը շատ դժուարութիւններէ ու տագնապներէն դուրս ելած է եւ այս կացութենէն ալ կ'ելլէ իր ճշմարտապէս նուիրումով ժողովրդին շահերուն, մաքրութեամբ եւ ուղիղ քաղաքականութեամբ: Մեզի կը մնայ պահել եւ զօրացնել այդ ուժը, մաքրութեան եւ ճշմարտութեան ուժը:

Ձեզի կը մնայ վիճաբանութեան ժամանակ իւրաքանչիւր խնդրին իր արժանիքին համեմատ եւ ուժ տալով անցնել օգտակար եւ գործնական որոշումներ յաջորդ տարուան գործունէութեան համար:

Յաջողութիւն կը մաղթենք ձեզ:

Փաստ. 1399-157 (էջ 61-77)

Գ 2.- ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ 17^Ի (ԱՐՏԱԿԱՐԳ) ՊԱՏԳ[ԱՄԱՒՈՐԱԿԱՆ] ԺՈՂՈՎԻ

Գումարուած Յուլիս 1-4, 1911, Հարթֆորդի մէջ

Նախապատրաստական նիստը գումարուեցաւ յուլիս 1-ի շաբաթ իրիկունը ժամը 8-ին: Նիստը օրինաւոր լինել-չլինելը նկատողութեան առնուելով երեւան եկաւ որ 34 կոմիտէներու պատգամաւորներ ներկայ էին, հետեւաբար իբրեւ մեծամասնութիւն նիստը օրինաւոր նկատուելով առժամայ դիւան ընտրուեցաւ, ընկ. Մէյ-մատեան՝ ատենապետ, եւ ընկ. Մուրատեան ատենադպիր:

Յաջորդող նիստերուն արագ եւ կանոնաւոր ընթացք տալու համար, նոյնպէս եւ պատգամաւորներու իրաւասութիւնը ճշդելու համար կազմուեցան երկու յանձնախմբեր. ա.- կոմիտէներու իրաւասութիւնը քննող յանձնախումբ, որուն յանձնուեցան բոլոր յանձնարարականները եւ հաշիւները եւ բ.- Օրակարգը պատրաստող յանձնախումբ, որու յանձնուեցան Զ^Ի Ընդհ. ժողովի օրակարգը, ինչպէս եւ կոմիտէներէ եկած բոլոր հարցերը:

Ընկերներու կողմէ առաջարկուեցաւ ժողովին հրաւիրել կարող ընկերներ խորհրդակցական ձայնով:

Այս հարցը յետաձգուեցաւ յաջորդ նիստին: Նիստը փակուեցաւ ժամը 11-ին յաջորդ նիստը որոշելով կիրակի առաւօտեան ժամը 9-ին:

ՆԻՍՏ Բ.

Կիրակի առաւօտ, ժամը 9:

Նիստին առաջին մասը շարունակեց նախորդ օրուայ դիւանը մինչեւ մնայուն դիւանի ընտրութիւնը: Կարդացուեցաւ կոմիտէներու իրաւասութիւնը քննող յանձնախումբի տեղեկագիրը, որը կը հաստատէ կոմիտէներու իրաւասութիւնը բացի չորս կոմիտէներէ, որոնք իրենց հաշիւներէն մաս մը միայն վճարած էին, իսկ ուրիշ չորս կոմիտէներ եւս, որոնք բնաւ վճարում չէին ըրած:

Նկատելով, որ Ուստը, Զլի, Նիւ Հէյլըն եւ Ուօթըր-վլայթի կոմիտէները իրենց վեցամսեայ հաշիւները չէին փակած, ժողովը լսելով յիշեալ կոմիտէներու պատճառաբանութիւնները, գտաւ ոչ-գոհացուցիչ, բայց նկատի ունենալով Արտակ[արգ] Պատգ. ժողովի հանգամանքը,

թոյլտուութիւն ըրաւ իրենց պատգամաւորներուն պայմանաւ, որ այդ կոմիտէները ժողովի թուականէն մինչեւ երեք շաբաթ փակեն իրենց վեցամսեայ հաշիւները: Նմանապէս նկատի առնուեցաւ վեցամսեայ հաշիւներէն մաս մը միայն դրկած կոմիտէները եւ անոնց ալ թոյլտուութիւն եղաւ Արտ. Պատգ. ժողովի հանգամանքին համար:

Յանձնախմբի երկրորդ գեկոյցն էր ձայներու բաշխումի պարագան, որը երկար վիճաբանութեան ենթարկուելէ վերջ եւ նկատելով, որ հեռաւոր կոմիտէները, հակառակ ներքին կանոնագրի յօդ. 118-ի, ձայն դրուած էին անհատ ընկերներու եւ կամ Կ. Կոմիտէին, ժողովը որոշեց գոհանալ անոնց տեղեկագրերու ընթերցումով եւ մերժեց մօտաւոր կոմիտէներու ձայները, եւ Կ. Կոմիտէի նկատողութեան յանձնեց այն կոմիտէները, որոնք ոչ մէկ կերպով պատասխանած էին:

Օրակարգի յանձնախումբի պատրաստած օրակարգը եւս կարդացուելով ձեռնարկուեցաւ մնայուն դիւանի ընտրութեան հետեւեալ կերպով՝ ընկերներ Գ. Պօյաճեան, Յ. Կորոյեան եւ Յ. Չատիկեան՝ ատենապետներ յաջորդաբար հսկելու ժողովներուն իսկ ընկերներ Պ. Ներսիսեան, Ղ. Մարգարեան եւ Ե. Մուրատեան ատենադպիրներ: Վերոյիշեալ մնայուն դիւանը ընտրուեցաւ ձեռամբարձ քուէով:

Որոշուեցաւ խորհրդակցական ձայնով ժողովի հրաւիրել ընկերներ Նշ. Թաշճեան, Յ. Չազմազճեան, Շահան Նաթալի, Յ. Զէօկիւրեան եւ Տ. Թերլեմեզեան, եւ յանձնարարուեցաւ դիւանին որ պէտք եղած կարգադրութիւնը ընէ հեռագրով:

Մանօթ.- Բացի ընկ. Յ. Զէօկիւրեանէ, բոլոր միւս հրաւիրուածները ներկայ եղան հող նիստէն սկսեալ: Ժողովը փակուեցաւ ժամը 12-ին:

ՆԻՍՏ Գ.

Ժողովը բացուեցաւ ցերեկէ վերջ ժամը 3-ին: Ներկայ-բացակայի ընթերցումէն վերջ կարդացուեցան նոր եկող պատգամաւորներու յանձնարարականները եւ անոնց իրաւասութիւնը քննելէ յետոյ ընդունուեցան: Օրակարգի անցնելով՝

«Բ. Արդի քաղաքական վիճակը երեք երկիրներուն մէջ եւ կուսակցութեան դիրքը անոնց հանդէս»:

I Թուրքիա

1.— Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները

ա.- Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէն (Իթթ. վէ թէրազըր). կարճ վիճումէ վերջ որոշուեցաւ հետեւեալը.

— Դաշնակցութիւնը պէտք է շարունակէ իր արդի համերաշխական քաղաքականութիւնը Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէին հետ համաձայն իր սկզբունքին եւ գործելակերպին:

Միւս քաղաքական կուսակցութիւնները եւայլն

Որոշուեցաւ հետեւեալը.

Հ.Յ.Դ.ը պէտք է ջանայ համերաշխութիւն մշակել քաղաք. բոլոր կուսակցութիւններու նոյնպէս եւ ոչ-հայ խմբակցութիւններու հետ սահմանադրութեան պահանջներուն համար:

2.— Դաշնակցութիւնը եւ կառավարութիւնը

ա.- Հողային հարց եւայլն:

Որոշուեցաւ.— Պահանջել Ընդհ. ժողովէն հողային հարցերու առթիւ եղած հետապնդումը շարունակել եւ կարելիութեան սահմանին մէջ հետապնդել հողերու հաւասար բաշխումը:

բ.- Ապահովութեան խնդիր հայաբնակ գաւառ(ներ) մէջ:

Որոշուեցաւ.— Կուսակցութիւնը պէտք է ստիպողական դիմումներ ընէ սահմանադր. կառավարութեան մօտ, երկրի անապահովութեան վերջ մը դնելու եւ միանգամայն պէտք է իր բոլոր կարելի միջոցներով ոյժ տայ ինքնապաշտպանութեան գործին՝ անհատական, ազգային եւ պետական շահերու պաշտպանութեան համար:

ժողովը փակուեցաւ ժամը 8-ին:

ՆԻՍՏ Դ.

Բացուեցաւ երեկոյեան ժամը 8-ին եւ շարունակուեցաւ օրակարգը:

գ.- Նահանգ. ինքնավարութիւնը, իրաւունքներու ընդլայնումը:

դ.- Հարկային սիստեմի բարեփոխում:

ե.- Հաղորդակց. ճամբ. հայկական նահանգներու մէջ:

Յիշեալ երեք հարցերը նոյնութեամբ ընդունելի եւ փափաքելի ըլլալով թողուեցան մեր պատգամաւորի դատողութեան:

զ.- Տնտեսական բարգաւաճ միջոցներ, co-opératif ընկ. եւայլն:

Այս հարցի մասին երկար բացատրութիւններ տալէ վերջ որոշուեցաւ հետեւեալը.

— Նկատելով որ co-opératif ընկերութիւնները միակ միջոցն են գործաւոր դասակարգը դրամատէրերու անյազ կեղեքումէն ազատելու, ժողովս բաղձանք կը յայտնէ, որ այդ միութիւնները գոյութիւն ունենան երկրի մէջ եւ մեր կազմակերպութիւնը իր բարոյական աջակցութիւնը չինայէ այդ առթիւ:

է.- Մշակութային ինքնավարութիւն թուրքիոյ բաղկացուցիչ ազգերուն:

Ազգային, կրթական եւ ուրիշ ինքնավարութեան յատուկ իրաւասութիւնները վիճաբանութեան ենթարկելով որոշուեցաւ.

— «Ձանալով հանդերձ Հ.Յ.Դ. ծրագրի տրամադրութեան համաձայն ազգային մշակութային իրաւասութիւնները ընդլայնել, միեւնոյն ատեն սահմանադրութիւնները ընդլայնել, միեւնոյն ատեն սահմանադրութեան ներկայ պայմաններուն մէջ ամէն գնով պահպանել արդէն ֆէրմաններով ստացուած իրաւունքները: ժողովը փակուեցաւ գիշերուան 12-ին:

ՆԻՍՏ Ե. (Յուլիս 3)

Բացուեցաւ առաւօտեան ժամը 8-ին: Օրակարգը շարունակուեցաւ:

3.— Դաշնակցութիւնը եւ հայ ազգ. խնդիրներ

ա.- Մեր մասնակցութեան եղանակը ազգ.-մշակութային հաստատութիւններուն:

Որոշում.— Դաշնակցութիւնը իբրեւ ընկերվարական եւ քաղաքական մարմին, քաղաքական եւ ընկերական ձեռնարկներու եւ գործերու մէջ կը մասնակցի պաշտօնապէս, իսկ դպրոցական, եկեղեցական եւ բարեսիրական գործերու մէջ [ընկերները] կը մասնակցին իբրեւ հայ անհատ քաղաքացիներ, համաձայն իրենց քաղաքացիական պարտաւորութեան եւ տեղական պայմաններուն եւ ըմբռնումին:

բ.- Թուրքիոյ հայոց Ազգ. Սահմանադրութեան վերաքննումը:

Որոշում.— Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովը նախաձեռնող ըլլալ Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան եւ առանց կրօնի, քաղաքական դաւանանքի խտրութեան ազգային բոլոր տարրերէ բաղկացած խառն յանձնախմբի մը պաշտօն տրուելի վերաքննութեան համար մի-

ջոցներ ձեռք առնելու եւ զայն Օսմ. կառավարութենէն վաւերացնել տալու:

գ.- Պայքար հայ պահպանողական եւ յետադիմակական տարրերու դէմ:

Որոշում.— Ծարունակել պայքարը պահպանողական, յետադիմական տարրերու դէմ թաքթիքով ձեւակերպելով զայն իւրաքանչիւր վայրի պայմաններու համաձայն:

4.— Օսմ. խորհրդարանի դաշնակցական երեսփոխանութիւնը

ա.- Համարատուութիւն իրենց գործունէութեան մասին:

Որոշում.— Դաշնակցական պատգամաւորները ընտրուած ըլլալով կազմակերպութեան կողմէն, պարտաւոր են տեւական յարաբերութիւն պահել Բիւրոններուն հետ, անոնցմէ ստանալ իրենց հրահանգները, համարատու ըլլալ անոնց պարբերական տեղեկութիւններ ներկայացնելով:

Մանօթ.— Այն վայրերուն մէջ ուր դաշնակցական թեկնածուի ընտրութիւնը կասկածելի է, եւ եթէ միւս հայ կուսակցութիւնները կամ մարմինները ունին վրատահելի թեկնածու, ուժ տալ այդպիսիներուն բարոյապէս:

բ.- Խորհրդարանակ(ան) խմբակը եւ Բիւրոն. փոխարաբերութիւններ:

Որոշում.— Խորհրդարանի դաշնակցական պատկերներու թեկնածութիւնը նշանակուի Բիւրոններու կողմէն խորհրդակցութեամբ տեղական կոմիտէներու:

գ.- Հրահանգներ յառաջիկայ գործունէութեան մասին:

Որոշում.— Ամէն օրինաւոր միջոցներով կազմակերպութիւնը ընտրողական պայքար ստանձնէ եւ մամուլով ու պրոպականտով աշխատի ձեռնհաս պատգամաւորներու ընտրութիւնը ապահովելու եւ անոնց թիւը աւելցնելու համաձայն հայ տարրին հիմնական իրաւունքներուն:

դ.- Յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները (1912-1916):

Որոշում.— Կուսակցութիւնը իր թեկնածուներու ընտրութիւնը յաջողցնելու համար պէտք է նիւթապէս եւս օժանդակէ: Թեկնածուները պարտաւոր պէտք է ըլլան ընտրողական ֆոնտին մասնաւոր վճարումներ ընել համաձայն կանխօրօք գծուած պայմաններու:

ժողովը փակուեցաւ ժամը 12-ին:

ՆԻՍՏ Զ.

ժողովը բացուեցաւ կէսօրէ վերջ ժամը 3-ին:

Օրակարգի անցնելէ առաջ կարդացուեցաւ Ֆրեզնոյի կոմիտէի այն հեռագիրը, որով ընկեր Թիւֆէնկեանը կը ներկայացնէ իբրեւ իրենց պատգամաւորը:

ժողովը ծափերով ընդունեց հեռաւոր կոմիտէի մը այս առաջին մասնակցութիւնը եւ անցաւ օրակարգին:

II Ռուսիա

ա.- Դաշնակց(ութեան) թաքթիքը Ռուսիոյ արդի ուժ-ժիւղի հանդէպ եւ կազմակերպական նոր եղանակի մը անհրաժեշտութիւնը:

Որոշում.— Ընդհ. ժողովը նկատի ունենալով Կովկասի կացութիւնը, կ'որոշէ երկու թաքթիքներ — յեղափոխական ծայրայեղ եւ չափաւոր միջոցներ: Եթէ դատը վերջնայ հայ տարրի նկատմամբ նպաստաւոր, դիմէ չափաւոր միջոցներու, իսկ եթէ ռուս կառավարութիւնը շարունակէ իր արդի ընթացքը՝ հայ ժողովրդի իրաւունքներու հանդէպ, դիմէ ծայրայեղ միջոցներու, որուն տեսակէտէն ընտրութիւնը թողուլ Կովկասէն եկած տեղեկագիրներուն եւ ցուցմունքներուն:

բ.- Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները:

Որոշում.— Կազմակերպութիւնը միջոցներ ձեռք առնէ համերաշխութիւն մը կայացնելու ընդդիմադիր կուսակցութիւններու հետ եւ գումարելով մասնաւոր քննիչս մը, մշակէ կուրի եւ պրոպականտի նոր թաքթիք, հիմնուած դարձեալ Կովկասէն եկած տեղեկագիրներու եւ պայմաններու վրայ:

գ.- Դաշնակցութիւնը եւ կովկասեան նահանգ. ինքնավար նոր հաստատութիւններ (Ջեմստով):

Որոշում.— Կովկասեան նահանգային ինքնավարութիւնները, եթէ գոյութիւն ունին նեղ սահմաններու մէջ, ջանալ զանոնք աւելի ընդլայնել:

դ.- Դաշնակցութիւնը եւ հայ ազգային հաստատութիւնները:

Որոշում.— Դաշնակցութիւնը ինչպէս Թուրքիոյ նոյնպէս եւ Կովկասի մէջ յարաբերութիւն չ'ունենար ազգային հաստատութիւններու հետ, բայց անհատ դաշնակցականներ ինքզինքնին պէտք է պարտաւոր զգան՝ եռանդուն կերպով մասնակցելու ազգ. բոլոր հաստատութիւններուն մէջ, միշտ համերաշխ եւ համաձայն կազմակերպութեան ընդհանուր սկզբունքներուն, նկատելով որ այս անհրաժեշտ է ազգային ներքին կեանքի կանոնաւոր զարգացման համար:

ե.- Կուսակցական մամուլը Կովկասի մէջ:

Որոշում.— Քանի որ արդի ռուս բռնապետական ռեժիմը թոյլ չի տար ունենալ յայտնի մամուլ մը, կու-

սակցութիւնը պէտք է ստեղծէ գաղտնի միջոցներ, նկատի ունենալով մամուլի անհրաժեշտութիւնը:

գ.- Դաշնակցութիւնը եւ դաշնակցական գործը անւան տակ ծանօթ դատաւարութիւնը եւ հալածանքը հայ ժողովրդին դէմ:

Որոշում.— «Դաշնակցական գործ» ծանօթ դատաւարութեան մասին ըլլալիք բոլոր նիւթական ու բարոյական օժանդակութիւնը շարունակել մինչեւ դատաւարութեան վերջը չինսայելով ոչ մէկ գոհողութիւն:

III Պարսկաստան

1.- Դաշնակցութիւնը եւ միւս կուսակցութիւնները խորհրդարանէն ներս եւ դուրս:

2.- Դաշնակցութիւնը եւ Իրանի սահմանադրական կառավարութիւնը:

3.- Պարսկաստ. հայաբնակ վայրերու ապահովութեան խնդիր:

ա.- Իրանեան խորհրդարանի դաշնակցական երեսփոխաններու համարատուութիւն:

բ.- Դաշնակցական երեսփոխանութիւնը եւ Ատրուպատականի Կ. Կոմիտէի փոխայարաբերութիւնը:

գ.- Հրահանգներ յառաջիկայ գործունէութեան մասին:

Որոշում.— Ամերիկայի Ընդհ. Արտակարգ Պատգ. ժողովը իր թուրքիոյ մասին տուած բոլոր որոշումները կ'ընդունի նաեւ Պարսկաստանի համար:

Ժողովը գոցուեցաւ ժամը 8-ին:

ՆԻՍ Է.

Ժողովը բացուեցաւ երեկոյեան ժամը 8-ին: Օրակարգի շարունակութիւնն էր գ.- Աշխատաւորական քաղաքականութիւնը:

ա.- Կուսակց. աշխատաւոր. քաղաքականութիւնը՝ գիւղացիական, արհեստակցական եւ գործակցական միութիւններու հանդէպ, եւն:

Որոշում.— Դաշնակցութիւնը իբրեւ ընկերավարական կազմակերպութիւն, ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս եւ ապագայի համար պէտք է ձգտի աշխատաւոր դասակարգի ինքնագիտակցութեան եւ անոր տնտեսական վիճակին բարձրացման, կազմակերպելով աշխատաւորական-արհեստակցական եւ գիւղացիական միութիւններ, ոչ-կուսակցական եւ միջազգային հողի վրայ: Այդ միութիւններու ղեկավարումը կը յանձնուի բոլոր աշխատաւոր տարրերէ բաղկացած եւ ընտրուած մարմիններու:

բ.- Ուրոյն նուազագոյն աշխատաւորական պահանջներ թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի քաղաքական) եւ տնտեսական պայմաններու համաձայն:

Որոշում.— Նկատի ունենալով Դաշնակցութեան ծրագրի աշխատաւորական պահանջները եւ հիմնուելով երեք երկիրներու հատուածներէն եկած զեկուցումներուն վրայ, պէտք է գծել աշխատաւորական նուազագոյն պահանջներու փլաթֆորմ մը:

(4.— Կազմակերպական)

ա.- Օսմ. կառավար. վաւերացուած ծրագրին վերաբնումը:

Որոշում.— Դաշնակցութիւնը նկատի ունենալով քաղաքական հանգամանքները պէտք է գայն վերաբնէ եւ վաւերացնել տայ կրկին անգամ:

բ.- Հիմնական կանոնագրին վերաբնումը եւ վաւերացումը:

Որոշում.— Հիմնական կանոնագիրը պէտք է վերաբնել եւ վաւերացնել:

գ.1.- Հ.Յ.Դ. Խորհուրդի ընտրութիւնը Ընդհ. ժողովի կողմէն:

Որոշում.— Շարունակել նախկին ձեւով:

2.- Կուսակցութեան այլեւայլ մարմիններու իրաւասութեանց աւելի բացայայտ ճշդումը:

Որոշում.— Հարկաւոր նկատուած:

3.- Բիւրոյական շրջաններու նոր բաժանում:

Որոշում.— Եթէ անհրաժեշտ է:

4.- Պատասխանատու մարմիններու վերահաստատում:

Որոշում.— Համաձայն ենք:

5.- Մնայուն հաշուեքննիչ մարմնի մը հաստատում:

Որոշում.— Կարեւոր է:

6.- Թուրքիոյ Կեդր.Կոմիտէներու շրջաններուն աշխարհագրական ճշդումը:

Որոշում.— Կարեւոր է:

7.- Թուրքիոյ մարմիններու համար հայերէն, թրքերէն կնիքներու գործածութեան խնդիր:

Որոշում.— Կարեւոր է:

8.- Դրօշակի հրատարակութեան վայր:

Որոշում.— Համաձայն ենք ժրնեւ հրատարակուելուն:

9.- Դաշնակցութեան ժրնեւի տան գնում:

Որոշում.— Պէտք է գնել:

10.- Փոխադարձ օգնութեան արկղի մը հաստատումը դաշնակցականներու համար:

Որոշում.— Համաձայն ենք կազմուելուն եւ սակայն ոչ պարտաւորիչ:

(5.— Բանաւոր եւ գրաւոր պրոպականտ)

Գրաւոր

1.- Պաշտօնաթերթ Դրօշակը:

Որոշում.— Կը պահանջենք Դրօշակի հրատարակութիւնը ամէն ամիս կանոնաւորապէս:

2.- Կիսապաշտօնական թերթերը:

Որոշում.— Ձանալ գաւառները, ուր որ չկայ, մամուլ հաստատել տեղական պայմաններով եւ միջոցներով:

3.- Հրատարակութիւններ:

Որոշում.— Շարունակել ուժ տալ դաշնակցական գրականութեան:

Բանաւոր

1.- Դասընթացքի մը հաստատումը պրոպականտիստներու համար:

Որոշում.— Անհրաժեշտ նկատելով դասընթացքի մը հաստատումը պրոպականտիստներ պատրաստելու տեսակէտէն, կ'առաջարկենք ընտրել ձեռնհաս անձ մը, որ պաշտօն ունենայ որոշ ծրագրով մը (եւ) ղրկուի վայրէ վայր դասընթացքներ սարքելու. աւելի արդիւնաւոր ընելու համար այս ձեռնարկը պատրաստել տալ սիստեմաթիք եւ աստիճանաւոր գրաւոր դասընթացք մը:

2.- Գործիչ եւ պրոպականտիստ ընկերներու բաշխում:

Որոշում.— Անհրաժեշտ է:

3.- Բանաւոր եւ գրաւոր պրոպականտ ոչ հայախօս հայերու համար:

Որոշում.— Համաձայն ենք:

Օրակարգի հարցերը վերջացած ըլլալով եւ ժամանակն այ ուշ, նախքան Ընդհ. ժողովին ղրկելիք կոմիտէներէ եկած հարցերով զբաղելու, յանձնախումբ մը ընտրուեցաւ Ընդհ. ժողովին ղրկուելիք պատգամաւորի եւապատիկ ցանկ մը պատրաստելու համար, որուն արդիւնքը եղաւ Յ. Չազմազճեան, Նշ. Թաշճեան եւ Ա. Ռատիկեան իբր թեկնածուներ:

Ժողովը փակուեցաւ գիշերուան ժամը 1-ին:

ՆԻՍ Ը. (Յուլիս 4)

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը 8-ին:

Նախքան օրակարգի անցնիլը, կարդացուեցաւ Նիւ Պրիթէնի Տիկնանց ազատութեան կոթողի յանձնախմբի մէկ նամակը, որով Արտակարգ Պատգ. ժողովին յաջողութիւն մաղթելէ վերջ կը փափաքէին որ եթէ ժողովին զբաղումները ներքն, հաւաքաբար ներկայ ըլլանք իրենց դաշտահանդէսին նոյն օր կէսօրէ վերջ եւ հակառակ պարագային՝ իրենց ատենախօս մը

տրամադրենք: Ժողովը իրենց անկեղծ բաղձանքներուն համար շնորհակալութեան նամակ մը գրել որոշեց եւ իբր ատենախօս յանձնարարեց ընկ. Շահան Նաթալին:

Օրակարգի համաձայն պէտք էր պատգամաւորի ընտրութեան ձեռնարկուէր, որմէ առաջ ընկ. Աճէմեան իր կոմիտէին կողմէ առաջարկ բերաւ թէ, արդեօք ուսանող ընկերները կրնա՞ն իրաւասու ճանչցուիլ ընտրելի ներկայանալու համար, քանի որ անոնք կազմ. տուրք չեն վճարեր, եւ այդ պարագային ներք. կանոնագրի յօդ. 12-ի համաձայն կը կորսնցնեն իրենց իրաւասութիւնը:

Թեր ու դէմ վիճաբանութենէ վերջ ժողովը

Որոշեց.— Արտակարգ Պատգ. ժողովս կ'ընդունի ուսանող ընկերներու իրաւասութիւնը բոլոր ընտրական շրջաններու մէջ բնաւ նկատի չառնելով անոնց տուրքի պարագան, այլ միայն նկատելով անոնց բարոյական օժանդակութիւնները:

Անցնելով օրակարգին՝ եւապատիկ ցանկին համաձայն առաջարկուեցաւ թեկնածու ընկերներուն որ կարգով ժողովէն դուրս ելնեն իրենց բացակայութեան կարենալ իրենց մասին կարծիքներ փոխանակելու համար: Իսկ Նշ. Թաշճեանի մասին կարծիքներ փոխանակելու պարագային ընկ. Յ. Աստիկեան նկատել տուաւ թէ թեկնածու ընկերը 1908-ին ամբաստանուած էր ընկ. Տիգր. Աստիկեանի կողմէ, որը երկար վիճաբանութիւններու տեղի տուաւ, որմէ վերջ որոշուեցաւ.—

«Նկատելով որ ոչ մէկ ատեն ընկ. Նշ. Թաշճեանի դէմ ոեւէ գրաւոր ամբաստանութիւն չէ ներկայացած եւ եղած տարածայնութիւնները թիւրիմացութեան արդիւնք են, որոշեց չզբաղիլ այդ հարցով»:

Ընտրութեան ձեռնարկուելով գաղտնի քուէով 2/3-ի մեծամասնութեամբ ընկ. Նշ. Թաշճեան ընտրուեցաւ ԶԳ Ընդհ. ժողովին ղրկուելիք Ամերիկայի պատգամաւոր:

Ծանօթ.— Ամերիկայի Դաշ. կողմէն մէկ կամ երկու պատգամաւոր ղրկելու հարցը եւս ծածուելէ վերջ նախորդ նիստին մէջ մեծամասնութեան որոշումով մէկ պատգամաւոր ղրկել քուէարկուեցաւ:

(Տեղական) կոմիտէներէ եկած հարցեր)

1.- Մասնաւոր պիւտճէ մը դաշնակցական ուսանողութեան:

Որոշում.— Այս հարցը լուծուած է պրոպականտի հարցի որոշումով:

2.- Թուրքերէն թերթ եւ պրոշիւրներու հրատարակութեան խնդիրը:

Որոշում.— Այդ ուղղութեամբ արդէն ջանքեր կ'ըլլան, ինչպէս Ազատամարտի թուրքերէն բաժինը:

3.- Պարտադիր ընել Բիւրոները, որ տարեկան ընդհ. տեղեկութիւններ ղրկեն Կ. Կոմիտէներուն:

Որոշում.— Թելադրել Կ. Կոմիտէին եւ պատգամաւորին այդ խնդիրը ներկայացնելու ընդէ. Պատգամ. Ժողովին եւ պահանջել անոր գործադրութիւնը:

4.- ՈՅԷ Կ. Կոմիտէ իր հրապարակ հանած շրջաբերականներէն ղրկէ նաեւ միւս բոլոր Կ. Կոմիտէներուն, Որոշում.— Իւրաքանչիւր Կ. Կոմիտէ իր շրջանի կոմիտէներուն ղրկած շրջաբերականներէն մէկ մէկ օրինակ ալ պէտք է ղրկէ բոլոր միւս Կեդր. Կոմիտէներուն Բիւրոններու միջոցաւ, զանոնք տեղեակ պահելու համար զանազան շրջաններու մէջ տեղի ունեցած կազմակերպական անցուղարձեւումը:

5.- Գործիչի հարց: Որոշում.— Յանձնարարել մեր պատգամաւորին, որ ստիպէ Ընդհ. Պատգամ. Ժողովին մէջ փութացնելու մեզ գործիչ ղրկելը:

6.- Հայ գինուորներու հարց: Որոշում.— Նկատի ունենալով զանազան կողմերէ եկած բողոքները հայ գինուորներու դէմ գործուած անարդարութիւններու մասին օսմ. բանակին մէջ, դիմել Ընդհ. Ժողովին, որպէսզի վարչական միջոցներով ջանայ բարելաւել անոնց վիճակը:

Կեդր. Կոմիտէի մէկ անդամը պակաս ըլլալով (հրաժարած ընկ. Միրանշահեանի փոխարէն) Ժողովը որոշեց ընտրութիւն կատարել եւ բացարձակ քուէով ընտրուեցաւ ընկեր Ն. Մանկունի իբր քարտուղար:

Ընկ. Ռստիկեան, որ Արեւմտաքի գործիչ ընտրուած էր եւ սակայն ստիպուած «Հ[այրենիք]»-ի քարտուղարութիւնը ստանձնելու մի առժամանակ — գործերը կարգի բերելու համար, ամփոփ տեղեկութենէ մը վերջ ներկայացուց «Հ[այրենիք]»-ի նիւթական ներկայ վիճակը, որմէ պարզ կ'երեւէր թէ մինչ այս թուականին սնտուկին մէջ մտած էր \$3486,97 եւ ծախսուած \$3187,76, որով զանձը պատրաստ կը մնայ \$ 319,21. Ժողովը ուրախութեամբ լսեց ընկ. Ռստիկեանի տեղեկագիրը, որմէ վերջ ընկ. Չատիկ քանի մը հակիրճ եւ տպաւորիչ խօսքերով փակեց Արտ[ակարգ] Պատգ. Ժողովը:

Ընկերներ պատգամաւորները ցրուեցան գոհ տպաւորութեան տակ:

Հ.Յ.Դ. ԱՐՏ[ԱԿԱՐԳ]
ՊԱՏԳ[ԱՄԱԻՈՐԱԿԱՆ] ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ
Ատենապետ Գ. ՊՕՅԱՃԵԱՆ
Ատենադպիրներ Պ. Կ. ՆԵՐՍԻՍԵԱՆ
ՂՈՒԿ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
ԵՂ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Բնագրին համապատասխան ըլլալը կը հաստատեն:
Քարտուղար Կ.Կ.Ի՝
ՄԱՆՏԱՆ

Փաստ 1543-26

Պ. 3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ [1911]

Համաձայն տեղեկագիր՝ Ընդհ. Ժողովին պատգամաւոր զացած Ն. Տ. Թաշճեանի ստորագրութեամբ: Գրի առնուած է հաւանաբար տեղւոյն վրայ:

Ամերիկայի դաշնակցական կազմը կը բաղկանայ 56 կոմիտէներէ*:

Անդամներու ընդհանուր թիւն է 1200՝ ցրուած Միաց. Նահանգներու արեւելեան նահանգներէն մինչեւ արեւմուտք — հեռաւոր Քալիֆորնիան եւ Քանադա:

Անդամական տուրքն է երկու տարիէ ի վեր 10 տոլար 20 սէնթ, ամսական 85 սէնթ վճարումի հաշուով, որու փոխարէն, իւրաքանչիւր դաշնակցական կը ստանայ կուսակցութեան գինանշանը կրող դրոշմ մը՝ իբր ընկալագիր՝ փակցնելու համար իր անդամատետրին մէջ: Երկու տարի առաջ 18 տոլար էր, բայց Սահմանադրութենէն վերջ, խորհելով որ Երկիրը նոյնչափ պէտք չունի, Պատգ. Ժողովը նուազեցուց զայն:

Կազմակերպութեան տարեկան մուտքն է, միջին հաշուով 10 հազար տոլար, գլխաւորաբար գոյացած անդամավճարներէ: Այս գումարը կը նուազի կամ կ'աւելնայ՝ համաձայն շրջանի գործունէութեան: Մնայուն կարող գործիչ ունեցած ատեն, Ամերիկան տուած է տարեկան մինչեւ 15 [հազար] տոլար, եւ նոյնը ու աւելին կրնայ տալ նաեւ ապագային եթէ պահանջուած կարող գործիչը ղրկուի Ամերիկա:

Անդամական տուրքէն զատ, կազմակերպութիւնը ստացած է նաեւ նուիրատուութիւններ՝ յօգուտ նահատակ ընկերներու պարագաներուն, եւ այլ բացառիկ պահանջներու համար, ինչպէս վերջերս՝ յօգուտ Կովկասի քաղաքական բանտարկեալներուն, որու համար բացուած հանգանակութիւնը, երեք ամսուայ ընթացքին, բարձրացաւ մօտ 10 հազարի: Այս հանգանակութիւնը թէեւ ընդհանուր, սակայն գումարի մեծագոյն մասը վճարած են ընկերներ եւ մօտիկ համակրողներ: Զանազան հասոյթներու մասին տեսնել հաշուեցոյցը:

Գաղթը (արտագաղթ եւ ներգաղթ)

Ամերիկահայ գաղութը թէեւ չունի իր որոշ վիճակագրութիւնը, սակայն, հիմնուած ցան ու ցրիւ տեղեկագրութիւններու վրայ, կը հասնի 50 հազարի: Գաղթականները կը վերաբերին Թուրքիոյ բոլոր վայրերուն ալ, բայց գլխաւորաբար Խարբերդ եւ Քղի շրջաններուն:

Պանդուխտներու գլխաւոր զբաղումն է գործաւորութիւն, գործարաններու մէջ. կան բաւական թուով խանութպաններ, առեւտրականներ եւ ազատ-արհեստի տէր մարդիկ:

Դաշնակցականներու մօտաւորապէս 85%ը գործաւորներ, 10% արհեստաւորներ, իսկ 5%ը ազատ-արհեստի տէր են:

Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս վերջ շատ մեծ էր Երկիր վերադառնալու տրամադրութիւնը, եւ բաւական թուով հայեր վերադարձան ալ. Ատանայի դէպքէն վերջ, սակայն, կանգ առաւ այս շարժումը որ մինչեւ այսօր կը տեւէ՝ Երկրի անապահով եւ տնտեսապէս քայքայուած վիճակին հետեւանքով: Վերջին տարիները արտագաղթը գերակշռած է ներգաղթը:

Ազգային մշակույթ

Ամերիկահայ գաղութն ունի նաեւ իր դպրոցները՝ պայքարելու համար ձուլման վտանգին դէմ: Այդ դպրոցները, բնականաբար, փոքրիկներուն հայերէն սովորեցնելու համար են միայն եւ գոյութիւն ունին գլխաւորաբար ա'յն քաղաքներուն մէջ, ուր գաղութն ունի եկեղեցի, գրադարան, եւ կամ ունի հաւաքատեղի՝ ուր մանուկները, շաբաթը 3-4 անգամ — ամերիկեան վարժարաններէն արձակուելէ վերջ — կը համախմբուին մայրենի լեզուն սովորելու: Այս ուղղութեամբ ջանքեր շատ եղած են, բայց աննպաստ պայմաններու պատճառով տեւական չեն եղած: Այժմ, քիչ թէ շատ կանոնաւոր վիճակ ունեցող 5-8 դպրոց հազիւ ունինք, ան ալ գլխաւոր կեդրոններու մէջ, ինչպէս Նիւ Եորք, Պոսթըն, Թրոյ, Ուստը, Ֆրեզնօ, Եւայլն:

* Կոմիտէ բառը այն իմաստը չունի Ամերիկայի մէջ, ինչ որ կը սահմանէ կանոնագիրը: Կոմիտէ, կը նշանակէ իւրաքանչիւր քաղաքի դաշնակցականներու համախմբումը՝ իբր մէկ մարմին. այս մարմիններու թիւը կը տարբերի 5էն 100-120-ի մէջ:

Դաշնակցականները շատ քիչ թուով, գրեթէ բնաւ չեն մասնակցիր տեղական ազգային-մշակութային կեանքին. ո՛չ կը մասնակցին հոգաբարձական ընտրութիւններուն եւ ո՛չ իսկ գրադարաններու վարչութեան, որովհետեւ քիչ բացառութեամբ ոչ ոք անդամ է յիշուած հաստատութիւններուն, այդպիսով հրապարակը թողով մրցակից կուսակցութիւններուն, որոնք իրենց գոյութիւնը այդպիսով միայն ապահոված են:

Կրթական բարձրագոյն հաստատութիւններ յաճախող ուսանողութեան (150-200) հարիւրին 15ը դաշնակցականներ են:

Միւս կուսակցութիւնները

Դաշնակցութենէն զատ կան նաեւ հետեւեալ կուսակցութիւնները.—

- 1.- Սահմանադիր Ռամկավար
- 2.- Հին Հնչակեաններ
- 3.- Վերակազմեալ Հնչակեաններ

1.- Սահմանադիր ռամկավարները կը ներկայացնեն յետադէմ-պահպանողական եւ աղայական խմբակցութիւն մը. երեւութապէս զօրեղ, բայց իբր կազմակերպութիւն՝ գրօ. անդամներու մեծ մասը կանչուած են անոր՝ անձնական շահերու ապահովման համար. ուրիշներ՝ Դաշնակցութեան իբր թէ հակառակած ու վնասած ըլլալու համար: Իրենց օրկան «Ազգ» թերթը հազիւ «Հարեներ»ի 3/4 սպառումն ունի:

Այս խմբակցութիւնը վերջերս կը գործէ Բարեգործականին հետ, ու գրեթէ նոյնացած է անոր հետ, ռամկավարներն ըլլալով միեւնոյն ատեն բարեգործականներ:

2.- Հին Հնչակեանները բազմաատար աւելի յեղափոխական են: Ո՛չ մէկ ազդեցութիւն ու դիրք ունին հասարակութեան առջեւ. իրենց ամբողջ ուժով կը գործածեն թերթի մը հրատարակութիւնն ապահովելու համար Ամերիկայի մէջ, բայց դարձեալ պարտք ունին գրաչարներուն:

3.- Վերակազմեալ Հնչակեանները նոյնպէս բազմատար յեղափոխական, բայց իրենց ազդեցութեամբ գրեթէ ոչինչ: Անհատներ ունին միայն, իսկ կազմակերպութիւն՝ գրեթէ գոյութիւն չունի: Մասնաւոր ճիւղերով հազիւ յաջողեցան «Հայրենիք»ի կէս ծաւալով շաբաթաթերթ մը հրատարակել:

Յետադիմականները գլխաւորաբար կազմուած են Ս. Ռ. կուսակցութեան մէջ, իսկ Դաշնակցութենէ

վոնտուածները մուտք գտած են թէ Ս. Ռ. եւ թէ Հին Հնչ. կուսակցութիւններուն մէջ:

Վերջին տարիները, Շրջանային Պատգ. ժողովի որոշումներուն համաձայն, Դաշնակցութիւնը մասնաւոր ջանքեր ըրած է բոլոր միւս կուսակցութիւններուն հետ համերաշխելու, բայց միշտ արգելքի բախած: Անհաշտ հակառակորդի դիրքին մէջ յամառած են մնալ մասնաւանդ Ս. Ռ. եւ Հին Հնչ. կուսակցութիւնները: Վերակազմեալները աւելի տրամադիր երեւցած են համերաշխելու, անոնք ալ թերեւս իրենց տկարութեան համար:

Ոչ միայն անկարելի եղած է մնալուն համերաշխութիւն մը կնքել վերը յիշուած կուսակցութիւններուն հետ, այլեւ անկարելի եղած է ժամանակաւոր գործակցութիւն մը ապահովել, նոյնիսկ համազգային ձեռնարկներու շուրջ, ինչպէս յօգուտ կովկասեան բանտարկեալներու եւ ազատութեան կոթողի համար բացուած հանգանակութիւնները:

Վերջին տարիներուն սկսած ենք յարաբերութեան կապ հաստատել Ամերիկայի ընկերվարական կուսակցութիւններուն հետ. անոնք զիրար կը ճանչնան հիմա, մտերմական կապ մը կայ իրարու մէջ. գործադուլներու եւ գործաւորական այլ պահանջներու պարագային կը գործակցին իրարու եւ երբեմն միասին կը սարքեն հրապարակային ժողովներ:

Բանուորները միացած են տեղական արհեստակցական միութիւններուն, եւ կը վարուին համաձայն մեր ծրագրի տրամադրութիւններուն:

Անցեալին մէջ տեղի ունեցած են պարագաներ, ուր հայ բանուորներ — որոնց մէջ նաեւ, երբեմն, դաշնակցականներ — ընդդէմ գնացած են բանուորական շահերու գործադուլներ աւելելու եւ ուժ չտալով բանուորական միութեան: Վերջերս, սակայն, շնորհիւ կազմակերպութեան տուած խիստ որոշումներուն (գործադուլ աւելող ընկերներ կը հեռացուին կազմակերպութեան շարքերէն, համաձայն ներքին կանոնագրի), եւ «Հայրենիք»ի գրաւոր պրոպականտին, բանուորական շահերու գիտակցութիւնն արթնցած է գործաւոր դասակարգին մէջ, եւ անցեալի անպատուաբեր երեւոյթները չեն կրկնուիր նոյնքան յաճախ:

Ընկերվարական ուղղութեամբ աւելի դաստիարակելու համար ընկերները, վերջին պատգամաւորական ժողովներուն մէջ որոշումներ անցած են, որոնց համաձայն կոմիտէները ջանալու են աւելի սերտ յարաբերութիւն մշակել տեղական աշխատաւորական-ընկերվարական կազմակերպութիւններու հետ:

Ն. Տ. ԹԱՇՃԵԱՆ

Փաստ 1399-22

Գ.— ԱԿՆՈՒՆԻՒ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄ. ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

Նիւ Եոքք 1911, Յունուար 31

Միքելի ընկերներ,

Ինչպէս տեսնում էք, գրում եմ Նիւ Եոքքից: Այստեղ մնալու եմ մի քանի օր, եւ ապա Ֆիլատելֆիայի վրայով, պիտի անցնեմ Վաշինգտոն:

Վերջին քաղաքը գնում եմ գլխաւորապէս *բանտարկեալների հարցի* համար: Ինչպէս երեւի գիտեք, ամերիկեան հայ գաղութներից, մտաւորապէս 16 քաղաքներից, բողոքի որոշումներ գնացին Վաշինգտոն, Արտաքին գործերի նախարարութեան եւ դեսպաններին: Մի քանի քաղաքներից, ինչպէս Ման-Ֆրանսիսկո եւայլն, բողոքներ ենք ուղարկել տուել եւ ամերիկացիների կողմից: Բողոքներ ուղարկուած են եւ Տաֆտին¹¹: Չանագան կանտոնների պատգամաւորներին գրուած են յատուկ դիմումներ, որպէսզի խնդիրը պաշտպանեն: Մի քանիսի համար յանձնարարականներ ունին:

Այժմ հարկաւոր է այդ բողոքը միացնել, կապել եւ *պաշտօնական* բնոյթ եւ ընթացք տալ: Եթէ այդ գործը, այս վերջին կէտը յաջողուի, յոյս ունիմ, որ Պետերբուրգ մի փոքր կը չափաւորեն եղած լրբութիւնները. հակառակ արտաքուստ սովորական դժկամութեան հարկաւ այս քայլը մի փոքր աւելի կարեւոր կը դառնայ, եթէ Պարիզի մէջ նոյն օրինակ տրամադրութիւն լինի միմիստութեան կողմից: Պարիզից դեռ լուր չունիմ այդ մասին տարաբախտաբար, եւ սպասում եմ Միքայելից¹² մանրամասներ:

Վաշինգտոնի մէջ անցած-դարձածները կամ կը գրեմ, կամ կը պատմեմ բերանացի:

Բանտարկեալների խնդրի միւս մասը՝ հանգանակութեան գործն է: Արդէն 8 հազար դուլար հանգանակուած է եւ երբ տասն հազարը (50 հազար ֆրանկ) լրանայ, պիտի յայտարարուի հանգանակութիւնը փակուած: Այդ կը լինի մօտ օրերս: Իբրեւ համակրանք եւ յարգանք մեր կալանաւորներին, դա բաւական է այս խեղճ գաղութի կողմից: Երկու ամսուայ մէջ այդ գումարը այստեղ նկատուած է բացառիկ բան:

Ի դէպ, ինչո՞ւ մինչեւ այսօր չէք գրել, եւ ո՞վ է Պոլսոյ մէջ կազմուած կեդրոնական յանձնախումբի գանձապահը եւ պաշտօնական հասցեն որն է: Ինչպէս կարելի է այդպիսի անհոգութիւն: Հեռագրից յետոյ՝ ոչ մի նամակ այդ մասին չեկաւ:

Չեր յատուկ ուշադրութիւնն եմ դարձնում այն բանի վրայ, որ այդ մարմինը պէտք է լինի աւելի քան ճշտապահ եւ խիստ իր հաշիւների մէջ: Նա պէտք է մանրա-

մասն հաշիւ տայ գումարների մասին.— Ամերիկեան հայ գաղութը կասկածների մի օրօրոց է:

Եթէ մինչեւ այս լուրերի ստացումը, Կենտ. յանձնախումբի պաշտօնական հասցեն չէք ուղարկել տուել, ուղարկեցէք, եւ բացի դրանից՝ տպել տուէք Պոլսի թերթերից մի քանիսի մէջ:

Հանգանակութեան փակումով եւ Վաշինգտոնի մէջ ասածս դիմումները անելով՝ ես այդ հարցը կը համարեմ, իմ անելիքի տեսակետից, փակուած եւ ուրեմն ազատ այդ կողմից:

Այս բոպէին երկու խնդիր կայ, որի շուրջը աշխատանքներ պիտի թափենք.—

1) *Գաղթականների դարչը* եւ 2) Կարնեգիի դիմումը:

Դարձի մեծ շարժում կայ, սակայն շատերը միջոց չունին: Մի քանի ամերիկացիների կարծիքը իմանալուց յետոյ, ուզում ենք կազմել *ամերիկեան կոմիտէ*, որը դրամով նպաստէր անկարող պանդուխտների դարձին, յատկապէս նրանք, որոնք փախել են հին ռեժիմի օրով:

Եթէ այդ չաջողուց, նոյնը պիտի փորձել անել Պոլիս, օսմանեան կառավարութեան միջոցով եւ միջոցներով: Այդ առիթով պիտի տեսնեմ՝ բացի ամերիկացիներից, նաեւ Վաշինգտոնի օսմանեան դեսպանը: — Այս մասին շատ քաղաքների մէջ հայերը յատկապէս խնդրել են:

Միւս հարցը, Կարնեգիի¹³ դիմումը, առ այժմ պահուած է գաղտնի, մինչեւ կարող լինենք պատրաստուել: Ահա եւրօրը: Կարնեգին յատուկ գումարներ է նուիրել՝ հիանդանոցների եւ գրադարանների համար, որքան գիտեմ 12 միլիոն: Ինչու այդ գումարից չօգտուի տանջուած եւ բազմակարօտ Փոքր Ասիան, հայկական նահանգների հետ միասին: Բիրլիական երկիրը միանգամայն արժանի է այդ նպաստին:

Այդ մասին գրել էր եւ Ռոստոմը: — Մեր հարքն Չարիերը իր աղէխարշ նամակով, գրած Մուշից, աւելի դրդեց ինձ: Բոլոր տեղեկութիւններին նայելով, շատ մեծ դժուարութիւն չի լինի, մի պայմանով միայն — պէտք է դիմումը կազմակերպել *հանուր* ձեւով, բոլոր հայերի կողմից, համազգային եղանակով: Արդ, այս

11.- Ուիլիզմ Գովորտ Թաֆթ, Միացեալ Նահանգներու նախագահ:
 12.- Վարանդեան Միքայել:
 13.- Ամերիկացի յայտնի գործատու եւ բարեգործ:

անհիծուած գաղութի մէջ, ուր ամէն ինչ եւ ամէն բան քայքայուած է կուսակցական կռիւների շնորհիւ, ուր ոչ մի բանի մէջ չեն միանում եւ պատրաստ են լաւագոյն ձեռնարկներն իսկ սպանել, կուսակցական նկատումներով – այդ միացման խնդիրը ամենադժուարն է:

Տարաբախտաբար վերջին շաբաթները մի քանի տեղ, ինչպէս օրինակ, հէնց Նիւ Եորք, կրքերը սկսել են բորբոքուել, շնորհիւ մի թեթեամիտ եկուորի, Ադամայի տխրանուն Մուշեղը¹⁴, որը կարծէք ստեղծուած է կռիւ յարուցանելու, եւ ես ահագին դժուարութիւններ եմ կրում մտքերը խաղաղ պահելու համար:

Այս խոշոր գործը պահանջում է մեծ կապեր, սերտ յարաբերութիւն եւ երկար աշխատանք: Պիտի յաջողի՞նք արդեօք: Երջանիկ պիտի լինեն եւ պիտի սոռանան այս գլխապտոյտ ճամբորդութեան դժուարութիւնները, եթէ այդ գործը գէթ յաջողութեան ճամբու վրայ տեսնենք: Դրանով մենք ապահոված կը լինենք հարիւրաւոր գաղթածներ եւ հեռացածներ, թէ՛ հայերի եւ թէ՛ մահմեդական ժողովուրդների համար:

Կեդրոնական Կոմիտէին եմ թողնում գրելու ձեզ իմ պտոյտի հետեւանքների եւ արդիւնքների մասին, ինչպէս եւ այստեղի Պատգամատրական ժողովի որոշումների վերաբերմամբ: Այդ որոշումներից մի քանիսը կապ ունեն ժընեւի եւ Պոլսի մարմինների հետ, հետեւաբար երկու տեղից էլ պէտք է կարգադրել: Յատկապէս «Դրօշակ»ի խմբագրատան շէնքի գնման մասին պէտք է մի քայլ անել. ես այդ մասին գրեցի ժընեւ որ օր առաջ իմանան տանտիրոջ տրամադրութիւնը, եւ ըստ այնմ տեղեկացնեն ամերիկեան ընկերներին: Մրանք լաւ տրամադրութիւն ունեն եւ պէտք է օգտուել այդ բանից:

Պատգամատրական ժողովից անմիջապէս յետոյ,

14.- Մուշեղ եպիսկոպոս Սերոբեան, նախկին առաջնորդ Ատանայի:

15.- Իրականութեան մէջ Ակնուցի Ամերիկայէն պիտի մեկնէր Մայիս 31ին միայն:

16.- Փրօ-Արմենիայի (դադրած) ծանօթ խմբագրապետ Փիտե Քիլար:

ձեզ հեռագրուած էր եղել Ժիրայրը ճամբայ դնելու մասին եւ այդ՝ շուտափոյթ: Չեր նամակը պատասխան չէր, այլ միայն՝ մի բան գրած լինելու փորձ: Անցեալ օր Կենտ. Կոմիտէն որոշում կայացրեց նորից *հեռագրելու եւ գրելու*, եւ ես մի խօսք ունեմ միայն անելացնելու. – Կարգադրել պէտք է այդ խնդիրը. այդ ձգձգումը միայն վնասել կարող է այս շրջանին, եւ ուրիշ ոչինչ:

Եթէ Ժիրայրն Վիեննա է, նորից յիշեցրէք նրան, որ կազմակերպական պարտք է յարգել ամերիկացիների խնդիրը: Կովկաս անկարող պիտի լինի գնալ, եւ ուրեմն թող այս ճամբան բռնէ, գէթ մինչեւ ճամբաների բացուելը:

Քանի մը խօսք իմ մասին: Եկայ երկու ամսով: Այս մասին գրուած էր «Դրօշակի» եւ իմ կողմից շատ վճռական: Բանտարկեալների հարցը եւ Կալիֆորնիան այդ երկուսը դարձրին չորս: Այժմ, միւս խնդիրների համար եւ առիթով՝ չորսը լինում է հինգ: Արել եմ, ինչ հնարաւոր էր: Աւելին անկարող եմ, եւ պատրաստուած եմ Փետրուարի կէսին նա առնելու¹⁵:

Այս նամակը առնելուց յետոյ՝ այլեւս ինձ նամակ չգրէք. – Նա ինձ չի հասնի: Ուզում եմ անցնել Լոնտոն, եւ այնտեղից, մի քանի մարդ տեսնելուց յետոյ, Պարիզ, որտեղ կարող էք ինձ գրել Քիլարի¹⁶ հասցեով, եթէ գրելու բան կայ:

Քարեւներ բոլորիդ՝ ԽԱՉԱՏՈՒՐ

P.S.- *Վերադարձիս սրացայ երկու-երեք նամակ քիւրդական հարուածի կողմից, գերագանցապէս պաշտօնական չեւի տակ դրած: Ուզեցի պատասխանել, բայց զգացի որ գրածս պիտի լինի շատ գրգռուած եւ նոյնիսկ վիրատրական, ուստի լաւագոյն է չպատասխանել:*

P.S.- *Մի քանի տեղ ինչ գանգադրուեցին, որ թերթին քղթակցութիւններ են գրել իմ ճամբորդութեան մասին եւ չեն տպուել եւ ոչ մի տող: Երջար է, միթէ՞:*

Փաստ. 1399ա-8

Կոմիտէներուն համար

Ե.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Է. Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂԻ. ԿՈՄԻՏԵԻ

1911, Նոյեմբեր 4, Պոսքըն

Ընկերներ,

Նոր կը վերադառնամ Պոլսէն, ուր տեղի ունեցաւ մեր Ընդհանուր կուսակցաժողովը: Պարտք կը համարիմ գրաւոր ամփոփ տեղեկատուութիւն մը ընել ներկայ շրջաբերական-նամակով, որովհետեւ գիտեմ թէ անհամբերութեամբ կը սպասեն ընկերները լսելու այս մասին: Այս ամփոփ տեղեկատուութիւնը կ'ընեմ անմիջապէս նամակով, մանրամասնութիւնները թողով բերանացի տեղեկատուութեանս, զոր պիտի ջանամ տալ ժամանակիս ներածին չափ շուտ:

Հ. Յ. Դաշնակցութեան Զ^ր Ընդհ. Ժողովը բացուեցաւ Օգոստոս ամսի 20ին եւ փակուեցաւ Սեպտեմբեր 30ին: Ժողովի նիստերուն կը մասնակցէին 32 ընկերներ վճռական ձայնի իրաւունքով, իբր պատգամաւոր եւ կամ ներկայացուցիչ եւ խորհրդակցական ձայնով՝ իբր գործիչ ընկերներ զանազան շրջաններէ: Պատգամաւոր ունէին Թուրքիայի, Պարսկաստանի, Պալքանի եւ Ամերիկայի մարմինները: Կովկասը միայն, ուստի կառավարութեան ծանօթ հալածանքին պատճառով անկարող եղած էր այդ դաժան պայմաններուն տակ ժողով գումարել եւ պատգամաւոր ընտրել: Այս պակասը կը լրացնէին նոյն ատենները գրաւականով բանտէն արձակուած եւ Թուրքիա անցած մեր կովկասահայ ընկերները Ա. Ահարոնեան, Գ. Խաթակ եւ Ա. Իսահակեան, որոնք ժողովին մասնակցեցան վճռական ձայնի իրաւունքով:

Կովկասի մէջ մեր հարիւրաւոր ընկերներու բանտարկումը եւ այնտեղի մարմիններուն պատգամաւոր չդրկելու պարագան շատ իրաւամբ ենթադրել պիտի տար՝ կացութեան մօտէն անծանօթին՝ թէ Դաշնակցութիւնը տկարացած է Կովկասի մէջ, թէ ցարական կառավարութեան ճնշիչ, բարբարոս միջոցները հասած են նպատակին. իրողութիւնը սակայն այն է, որ հակառակ այս տրակտնական խտրութեան, մեր կազմակերպութիւնը կը մնայ հաստատուն իր կրանիթէ պատուանդանին վրայ, կազմակերպական շարքերը կը մնան յեղափոխական բառին բարձր իմաստով, եւ հիներուն, բանտարկուածներուն տեղ նորերը, բռնակալութեան այդ սպառնալիքները արհամարհող երիտասարդներն եկած են գրաւելու ղեկավարի առժամապէս թափուր մնացած տեղը:

Այսպէս ներկայացուցին մեզ կացութիւնը բանտարկուած մեր ընկերները. նոյնը կը հաստատեն օրը

օրին կազմակերպական ճամբայով ստացուած տեղեկութիւնները. եւ այս բոլորէն աւելի, յեղափոխական կենդանի գործը խօսուել վկան է այս իրողութեան:

Յեղափոխութեան քուրան կը վառի, ուրեմն կեցցեն՝ անոր անձնուէր գործիչները:

Ընդհանուր վիճակին այսպէս հակիրճ կերպով տեղեկանալէ վերջ, ընկերները մեծ անհամբերութեամբ կը սպասեն լսել նաեւ բանտարկեալներու մասին. կը ցաւիմ որ խրախուսիչ լուրեր չունիմ հաղորդելիք: Բռնակալութիւնը թէեւ չունի փաստեր բանտարկեալները դատապարտելու, սակայն որոշած է անպատճառ յանցապարտի կնիք զարնել անոնց ճակտին, ատեն մը բանտային սարսափներու ենթարկելէ վերջ ով գիտէ ինչ ծանր պատիժներու ենթարկելու համար զանոնք: Ու այս բոլորը, որպէսզի յաջողի մարել յեղափոխութեան կրակը: Ի գո՛ւր. յեղափոխութեան շունչը նոյնչափ ուժգին է այսօր որչափ երէկ, հալածանքի չգոյութեան օրերուն: Ընդհանուր ուսական յեղափոխութիւնը գործօն շրջանի մէջ անցած է արդէն եւ բռնակալութեան գազիր ներկայացուցիչները կարգով գոհ կ'երթան Յեղափոխական արդարութեան: Յուսալի է որ քաղաքական տեւորներու շարքը զգաստացնէ անուղղայ ցարիզմը եւ համայն Ռուսաստանի մէջ տիրող բռնութեան թեթեւացումովը թեթեւանայ նաեւ հալածանքը հայերու հանդէպ:

Ընդհ. Ժողովը նկատի ունենալով այս խնդրին մէջ բռնակալութեան դէմ պայքարելու համար անհրաժեշտ նիւթական ու բարոյական մեծ ուժը, յանձնարարեց իր մարմիններուն շարունակել ի նպաստ բանտարկեալներու սկսուած շարժումը:

ԹՈՒՐԳԻԱ

Թուրքիոյ մէջ, ինչպէս ընդհանուր առմամբ յայտնի է բոլորիդ, կազմակերպութիւնը յարաճուն եւ պատկառազու վիճակի մը մէջ կը գտնուի այսօր:

Դաշնակցութիւնը, ինչպէս կեանքի մէջ գործօն դեր ունեցող ամէն կազմակերպութիւն, օսմանեան սահմանադրական վերահսակումէն ի վեր ենթակայ եղաւ համակրութեան ու հակակրութեան փոփոխակի հոսանքներու: Այդ երկու հոսանքներն ալ անցեալին մէջ եղած են կոյր, անգիտակից. ժողովուրդը, սահմանադրութեան խանդավառ շրջանին փառաբանեց, աստուածացուց Դաշնակցութիւնը, առանց զայն իրապէս ճանչցած

ըլլալու վերջին հակադաշնակցական պայքարի ատեն այդ նոյն ժողովուրդը խաչ հանել ուզեց Դաշնակցութիւնը դարձեալ առանց ճանչցած ըլլալու՝ յարգանքի ու խոր համակրանքի միայն արժանի այդ կուսակցութիւնը: Այսօր, սակայն, խորխուսական է արձանագրել որ Դաշնակցութեան ցոյց տրուած համակրութիւնը չի կրեր այլեւս նախկին անգիտակից, կոյր բնաւորութիւնը. սահմանադրական երեք տարիներու ընթացքին ժողովուրդը անաչառ քննադատութեան բովէն անցնելէ ետք մեր կեանքին մէջ գործող այլեւայլ կուսակցութիւնները, գործնական փորձերով այն համոզման եկաւ թէ Դաշնակցութիւնը այն կուսակցութիւնն է, որ իսկապէս նուիրուած է հայ ժողովրդի քաղաքական ու տընտեսական բարգաւաճման մեծ գործին, որ գիտէ անչեղ քաղել դէպի իր նպատակը, արհամարհելու իր ճամբուն վրայ նետուած բոլոր մեծ ու պզտիկ արգելքները: Ժողովուրդը յանձին իր ողջամիտ եւ համեմատաբար գիտակից ներկայացուցիչներուն, կրցաւ թափանցել այս ճշմարտութեան եւ ինքնաբերաբար փափաք յայտնեց օժանդակելու այն կազմակերպութեան, որ վտանգի պահուն ուժ ու ընդունակութիւն ունէր ժողովրդի ինքնապաշտպանութեան՝ գործին գլուխը կանգնելու:

Այս է Պոլսի մէջ տիրող տրամադրութիւնը, որուն անձամբ ծանօթանալու պատեհութիւն ունեցայ, այս է նաեւ տրամադրութիւնը գաւառներու մէջ, ինչպէս կը ներկայացնէին մեր պատգամաւոր ընկերները:

Ժողովուրդի լայն խաւերուն կողմէ Դաշնակցութեան հանդէպ ցոյց տրուած այս անվերապահ համակրանքն ու վստահութիւնը կրկնակի խթաններ կ'ըլլային բնականաբար որպէսզի մեր կազմակերպութեան Ընդհ. Ժողովը իր մարմիններու ապագայ գործունէութեան մասին իր տալիք հրահանգներուն մէջ ըլլար ա'լ աւելի շրջահայեաց, ա'լ աւելի համապատասխան ժողովրդի շահերուն: Ու պարծանքով պէտք է յիշել, որ Ընդհ. Ժողովը իր օրակարգին մէջ նշանակած կենսական հարցերուն մօտեցաւ իր բազմամեայ փորձառութեամբը աւելի լուրջ ու հեռատեսութեամբ:

Այս հակիրճ տեղեկատուութեան մէջ անկարելի ըլլալով ամբողջութեամբ ներկայացնել Ընդհ. Ժողովի գրադումները, պիտի ջանամ ամենազլխաւոր կէտերու մասին միայն յիշատակութիւն ընել եւ անցնիլ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՅԱՌԱՋԻՒՄՈՒԹԵԱՆ ԿՈՄԵՏԷՆ ԿԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կարելոր խնդիրներէն մէկն էր այս, որով գրադեցաւ ժողովը աւելի երկար:

Այս հարցին շուրջ ժողովին մէջ գոյութիւն ունէր երկու հոսանք. մէկը կ'առաջարկէր խզել յարաբերութիւնները Իթիհատի հետ, իսկ միւսը համակիր էր հա-

մերաշխութեան շարունակութեան: Խզումի համակիր եղողներուն հիմնակէտն էր Իթիհատի եւ թուրք դեկավար շրջաններու անհաշտօրէն համախալմական ճրգտումները՝ երեւան եկած զանազան առիթներով, իսկ համերաշխութեան համակիրներուն հիմնակէտն այն էր թէ Իթիհատի ձախ թեւը խոստումնալից է եւ թէ այդ թեւի ուժեղացման պարագային կարելի եղած է շատ պահանջներու գոհացում ստանալ, — հակահայ եւ հակասահմանադրական պաշտօնեաներու հրաժարեցում, հողային խնդրի մասամբ լուծում եւլն.:

Արեւմտեան Բիւրոն եւ զեկուցանող յանձնախումբը իրենց տեղեկատուութիւններն ընելէ վերջ կազմակերպութեան ունեցած յարաբերութեան մասին Իթիհատի եւ կառավարութեան հետ, ժողովը սկսաւ անոր վիճաբանութեան եւ թեր ու դէմ կարծիքներու փոխանակութենէն վերջ, հետեւեալ իմաստով բանաձեւեց իր որոշումը այդ մասին. — Շարունակել իր համերաշխութիւնը Մ. եւ Յ. կոմիտէին հետ, ցաւ յայտնելով հանդերձ կոմիտէի եւ կառավարութեան առհասարակ հետեւած ձախող քաղաքականութեան, որուն հետեւանքով թէ ամբողջ կայսրութիւնը եւ թէ հայաբնակ նահանգները չվայելեցին այն բարիքները, որ իրաւունք ունէին ակունկալելու սահմանադրական ռեֆորմն: Այս որոշումը, վերջին երեք տարիներուն հայաբնակ վայրերուն մէջ տեղի ունեցած սպանութիւններուն ու ամէն կարգի զրկանքներուն պատկերը ներկայացնող յիշատակագրի հետ միասին, պիտի ներկայացնէր Իթիհատի համաժողովին որ նոյն օրերը պիտի գումարուէր Սելանիկի մէջ:

Ժողովը մասնաւոր որոշումներ անցուց հայկական շահերը պաշտպանելու համար այն պարագային, երբ կառավարութիւնը շարունակէ անտարբեր մնալ հայկական վայրերու արդար պահանջներուն հանդէպ, եւ Իթիհատի հետ մեր համերաշխութիւնը չտալով ակընկալուած օգուտը՝ ձեռնհաս մարմինները հարկադրուած ըլլան դադարեցնել իրենց յարաբերութիւնները այդ մարմինն հետ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Ընդհ. Ժողովը առանձին ուշադրութիւն դարձուց հայաբնակ վայրերու ինքնապաշտպանութեան գործին վրայ եւ տուաւ գործնական եւ խելացի որոշումներ՝ քաղաքական անակնկալներու ատեն ժողովուրդը դնելու համար ինքնապաշտպանութեան ընդունակ վիճակի մը մէջ:

Այս առիթը կազմակերպութիւնը պէտք կը զգայ անգամ մըն ալ յայտարարել, որ ակնկալուած յաջողութիւնը ձեռք բերելու համար ինքնապաշտպանութեան գործը դնելու է ժողովրդական հողի վրայ. պէտք է ժողովուրդը ինքը հոգայ իր ինքնապաշտպանութեան համար՝ կազմակերպութեան թողովը հսկողի եւ ղեկավարի դերը:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԶԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Հակառակ նախորդ Ընդհ. Ժողովի յանձնարարութեան համաձայն, Դաշնակցութեան նախաձեռնութեամբ Պոլսի մէջ տեղի ունեցած համերաշխութեան յայտնի ժողովներուն, անկարելի եղած էր բաղձացուած արդիւնքին հասնիլ: Պատճառները արդէն հրատարակուած են, այնպէս որ բոլորիդ ծանօթ է թէ ինչ դրդապատճառներով հատիկ հատիկ հեռացան այդ ժողովին մասնակցող կուսակցութիւնները եւ Դաշնակցութիւնը մնաց դարձեալ միմակ:

Այս իրողութիւնը նկատի ունենալով՝ ժողովը առանձին, պարտաւորիչ որոշում չանցուց այս մասին, այլ բաւականացաւ ցաւ յայտնելով, որ իր ջանքերը այսպէս միշտ արգելքներու բախած են, ինչ որ բնականաբար չի քաջալերեր զինքը՝ նոր քայլեր առնելու դէպի այդ բաղձալի նպատակը: Ասոր հետ մէկտեղ, արտօնեց իր մարմինները, մանաւանդ երկրին մէջ, համագործակցիլ վստահութիւն ներշնչող բոլոր յեղափոխական տարրերուն հետ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ժողովին առջեւ դրուած կարելոր հարցերէն մէկն այս էր. պէ՞տք է որ Դաշնակցութիւնը իբր կազմակերպութիւն մասնակցի ազգային-մշակութական հաստատութիւններուն, թէ պէ՞տք է շարունակել համաձայն նախորդ որոշումին, այսինքն կազմակերպութիւնը չի մասնակցի, բայց անհատները ազատ են: Հոս ալ կարծիքներ կը տարբերէին, բայց ոչ սկզբունքային տեսակէտէ, որովհետեւ բոլորն ալ կ'ընդունէին որ համաձայն մեր ծրագրի, — որ պարտք կը դնէ կազմակերպութեան վրայ «ձգտիլ պաշտպանել հայ աշխատաւոր զանգուածներուն բովանդակ շահերը, թէ տնտեսական-դասակարգային, թէ՛ մարդկային քաղաքական եւ թէ ազգային-մշակութական» — պէ՞տք է որ մասնակցինք իբր կազմակերպութիւն. բայց, կարգ մը սոսկ գործելակերպի վերաբերեալ նկատումներով, որոշուեցաւ սահմանափակումներ ընել՝ արտօնելով կազմակերպութեան իբր կուսակցութիւն մասնակցիլ ազգային բոլոր օրէնսդրական ժողովներուն — ազգ. երեսփոխական, գաւառական եւլն.: — Վարչական կամ գործադիր իշխանութիւններուն մասնակցիլ արտօնելով՝ այն դաշնակցականներուն միայն, որոնք կազմակերպութեան մէջ պատասխանատու պաշտօն չունին, եւ հետեւաբար ազատ ժամանակ ունին իրենց ստանձնած գործին նուիրուելու, առանց վնասելու կազմակերպական գործերու յաջող ընթացքին:

ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԻՒՆ

Օսմ. Խորհրդարանի դաշնակցական երեսփոխաններէն ներկայ էին Վանի եւ Մուշի երեսփոխանները, միւսները արձակուրդով Պոլսէն բացակայ գտնուելուն համար: Ընկեր երեսփոխանները ըրին ընդարձակ հաշուետուութիւնը իրենց գործունէութեան, որմէ թէեւ կը յայտնուէր որ մեր պատգամաւորները փարլամենթին մէջ գտնուող միւս ներկայացուցիչներէն համեմատաբար աւելի գործունեայ գտնուած էին, բայց չէին ունեցած դաշնակցական երեսփոխանութենէն ակնկալուած լաւագոյն գործունէութիւնը: Որպէսզի ապագային աւելի արդիւնաւոր ըլլայ դաշնակցական երեսփոխանութեան գործունէութիւնը, ժողովը որոշեց որ անոնք աւելի ետքն ունենան իրենց Բիւրոն, ուր հաւաքուելով խորհրդակցին փարլամենթին ներկայացուած կամ ներկայանալիք բոլոր հարցերուն շուրջ՝ այսպիսով ապահովելով հաւաքական բաղձալի գործունէութիւնը օսմ. կայսրութեան օրէնսդրական ժողովին մէջ:

Որոշուեցաւ նաեւ որ երեսփոխանները կուսակցութեան ընտրական ֆոնտին համար վճարեն իրենց մէկ ամսականը (50 ոսկի):

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանի մէջ մեր կազմակերպութեան ունեցած դիրքը յայտնի է ամէն ընկերոջ: Պարսկաստանի մանուկ սահմանադրութիւնը պահպանուեցաւ ու տակաւին կը պահպանուի շնորհիւ դաշնակցական մարտիկներու. այս պահուստ գործի ասպարէզն են Եփրեմ, Քեռի, Նիկոլ եւ այլ բազմաթիւ ընկերներ, ծանօթ իրենց ռազմական փորձառութեամբ, կազմակերպութեան վարած նախորդ կռիւներու միջոցին՝ թուրք բռնութեան եւ հայաթաթար ընդհարումներու ատեն: Այս անվեհեր ֆետայիներու բոլոր իր քաջարի գործունէութեամբ ոչ միայն բարձրացուց հայ ցեղի ռազմական կորովին ներկայացուցիչ մեր կազմակերպութեան վարկը, այլ եւ յարգանքի արժանի դարձուց ամբողջ հայ ժողովուրդը Հայաստանի երեք հատուածներուն մէջ ալ:

Պարսիկ մոլեռանդ եւ այլատես ժողովուրդը որ անարգանքի ամէնէն ծանր բառն ունէր սակէ առաջ, հայերուն համար — սուլտար կ'անուանէր զանոնք — այսօր պատկառանք եւ խոր յարգանք ունի դէպի հայը: Պարսկաստանի մեր ընկեր պատգամաւորը կը պատմէր թէ ինչպէս կեանքի ամէնօրեայ երեւոյթներուն մէջ կը յայտնուի հոգեբանական այդ զգալի փոփոխութիւնը պարսիկ ժողովուրդին մէջ: Իբր գործնական ապացոյց այս ուրախալի իրողութեան, պարսիկ փարլամենթի երեսփոխան մեր ընկեր Միրզոյեան իր տեղեկագրին մէջ կը յայտնէր թէ ընդունուած է երկու հայի մասնակցու-

թիւնը փարլամենթին մէջ, — պահանջ մը, որ երկար ատենէ ի վեր դրած էին մեր պարսկահայ եղբայրները:

Դաշնակցութիւնը նոյն տիրական դիրքն ունի պարսկահայ ներքին կեանքին մէջ. կրթական հասարակական բոլոր հաստատութիւնները կը գտնուին մեր կազմակերպութեան ազդեցութեան տակ եւ այս գործերուն մէջ մեր ընկերներու ցոյց տուած խելացի ընթացքին հետեւանքով ա՛լ աւելի կը մեծնայ ժողովրդի համակրութիւնը դէպի Դաշնակցութիւնը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

1.— Ժողովը քննելով օսմ. կառավարութենէն վաւերացուած ծրագիրը, գտաւ համաձայն մեր հիմնական սկզբունքներուն:

2.— Հիմնական կանոնագիրը քննելով տեղի ունեցան զանազան բարեփոխումներ, որոնց կարեւորագոյնները միայն կը յիշեմ հոս:

ա) Դաշնակցութեան խորհուրդը: Ասկէ վերջ, Դաշնակցութեան խորհուրդը պիտի չգումարուի ներքին կանոնագրի նախկին տրամադրութեան համաձայն, ընդունելով որ գործերու արագ եւ լաւագոյն կերպով առաջ տարուելուն համար նպատակաւոր մարջ չէ այդ կերպը: Երկար վիճաբանութիւններէ վերջ, որոշուեցաւ. — խորհուրդին մասնակցելու համար պատգամաւոր կը զրկեն Կովկասը, Պարսկաստանը, Ամերիկան, Թուրքիոյ գլխաւոր Կ. Կոմիտէներն եւ Բիւրոները: Խորհուրդը կը գումարուի տարին անգամ [մը]:

բ) Սնայուն Դաշնակցութեան մարմին: Կազմակերպութեան ամբողջ ելմտական քոնթրոլի վերին հսկողութիւնը յանձնուեցաւ երեք հոգիէ բաղկացած մարմնի մը, ընտրուած Ընդհ. Ժողովէն: Այս մարմինը պիտի քննէ բոլոր մարմիններու հաշիւները եւ պիտի հսկէ Ընդհ. Ժողովի որոշած պիւտճէի ճշդիւ գործադրութիւնը:

գ) «Դրօշակ»ը կը շարունակուի հրատարակուիլ ժրնեւի մէջ, ամիսն անգամ մը, կրկին ծաւալով եւ բազմազան բովանդակութեամբ:

դ) Դաշնակցութեան ժընեւի տան գնման առաջարկը, ներկայացուած Ամերիկայի կողմէ, արժանանալով հանդերձ բարձր գնահատումի, ժողովը թելադրեց որ Ամերիկայի ընկերները իրենց այդ գովելի գոհողութիւնը յատկացնեն նոյնչափ նուիրական բայց աւելի այժմէական նպատակի մը — երկար ատենէ ի վեր ծրագրուած հերոսներու ալպոմին՝ ամփոփ կենսագրականներով եւ Դաշնակցութեան պատմութեամբ:

Կ. Կոմիտէն ծանօթանալով Ընդհ. Ժողովի այս բաղձանքին, կը խորհի ընել շատ նպատակաւոր մար կարգադրութիւն մը՝ այս երկու ձեռնարկներն ալ գլուխ հանելու համար նոյն գոհողութեամբ:

ԲԱՆԱԻՈՐ ԵՒ ԳՐԱԻՈՐ ՊՐՈՊԱԿԱՆԴ

Կազմակերպութեան արագ ծաւալումով կը մեծնայ նաեւ պահանջը պրոպականդիստներու եւ կազմակերպութեան սկզբունքները բացատրող եւ լուսաբանող հրատարակութիւններուն: Այս պահանջին գոհացում տալու համար Ընդհ. Ժողովը որոշեց՝

ա) Հաստատել դասընթացքներ պատրաստելու համար պրոպականդիստներ. այս դասընթացքներու առաջինը կը հաստատուի Պոլսի մէջ կարճ ժամանակէն:

բ) Այս դասընթացքներուն զուգընթաց եւ անոնց մեթոտով պատրաստել կազմակերպական դասագրքեր՝ աստիճանական դասաւորումով եւ դիւրահասկնալի լեզուով:

Գրաւոր պրոպականդի մէկ մասը կազմող «Կիսապաշտօնական օրկաններուն» համար տրուեցաւ հետեւեալ որոշումը:

«Ոեւէ դաշնակցական մարմին կամ ընկերներու խումբ մը դաշնակցական պրոպականդին ծառայելու նպատակով թերթ մը հրատարակելէ առաջ, պարտաւոր են իրենց բարոյական եւ նիւթական կարողութեան հաշիւը ներկայացնել ձեռնահաս մարմնին եւ անոր հաւանութիւնը ստանալէ ետք միայն ձեռնարկել հրատարակութեան:

Գործիչներու բաշխման ատեն Ընդհ. Ժողովը Ամերիկայի երկար տարիներու պահանջումին գոհացում տուաւ որոշելով որ Ամերիկա մեկնին ընկերներ վրացեան (Կարինի «Յառաջ» թերթի խմբագիր) եւ Նարինեան, Եւրոպայի մեր ուսանողներէն («Ուսանող»ի խմբագիր): Այս երկու ընկերներն ալ ամիսէ մը Ամերիկա կ'ըլլան:

Առաջիկայ Ընդհ. Ժողովը կը գումարուի երկու տարի վերջ, 1913-ի Յուլիսին:

Պատգամաւոր՝ Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆ

Կարեւոր

ա) Բոլոր կոմիտէները իրենց հաշիւները պէտք է փակեն մինչեւ Նոյեմբերի վերջը, որպէսզի կարելի ըլլայ հաշուեկըշիո պատրաստել: Այն կոմիտէները, որ իրենց տրամադրութեան տակ կազմակերպական գումար ունին, փոխադրելու են Կ. Կոմիտէին:

բ) Կը խնդրուի կոմիտէներէն եւ գործակալներէն, որ իրենց «Դաշնակցութեան» ի հետ ունեցած հաշիւները փակեն, որպէսզի կարելի ըլլայ նաեւ «Դաշնակցութեան» հաշուեկըշիո պատրաստել:

Ընկ[երական] բարեւներով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐ[ԻԿԱՅԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Արգարեան Գ. — 181:
 Արիկեան Բ. — 202:
 Ազինեան Ներսէս հայր — 20:
 Ադամեան Տ. — 445:
 Ադամեան Օննիկ — 434:
 Աթանասեան Յարութիւն — 181, 182, 196, 200, 202, 223:
 Արամեան Երուանդ — 416, 417, 427, 428, 435:
 Արի էֆէնտի — 352:
 Արոյեան Գալուստ (Թորոս) — 174:
 Ակնուկի է. (Մալումեան Նաչատուր) — 7, 24, 26, 35, 36, 40, 42-46, 48-50, 55, 56, 58-60, 62-64, 67, 68, 71, 81-83, 85-89, 98-101, 103-109, 111, 114-118, 137, 138, 333, 436, 437, 444-446, 454, 456-458, 469, 470:
 Ահարոնեան Աւետիս (Միսեան) — 7, 24, 26: 33, 35, 36, 40, 42, 43, 53, 67, 71, 74, 81, 471:
 Ահմէտ Ռիզա — 149:
 Աղբալեան Նիկոլ (Հանգոյց) — 436:
 Աճէմեան Կարօ — 435:
 Աճէմեան Վ. — 440, 452:
 Ամատունի (Աղբատեան Յովհ.) — 439, 442, 444:
 Այվազեան Պ. — 445:
 Անդրանիկ (Պարոյր, Օզանեան) — 7, 20, 24, 46, 106, 109, 420, 441, 442, 444:
 Անդրէասեան Տիգրան — 378:
 Անտոն — Տես Զաւարեան Միմոն:
 Ապտէլ Գատէր — 141:
 Ապտիւլ Համիտ Բ. — 56, 61, 149, 238, 351, 354, 355, 414:
 Ապտիւլ Ռզախ — 236:
 Ասլմ բէգ — 59:
 Ասլան — Տես Զարդարեան Ռուբէն:
 Ասլանեան Ա. — 445:
 Ասլանեան Ռ. — 445:
 Ասողիկ — Տես Տէր Կարապետեան Գեղամ:
 Աստիկեան Յ. — 442, 450, 465:
 Աստիկեան Տիգրան (Մոփացի) — 6, 7, 24-26, 28, 31, 33-35, 37, 40-46, 50, 51, 55-57, 62, 64, 67, 69, 71, 77, 79, 81, 87, 90, 93, 97, 98, 108, 109, 123, 138, 325, 327, 328, 377, 385, 465:
 Արամ — Տես Մանուկեան Արամ:
 Արամ Աշոտ (Մինասեան Սարգիս) — 224, 439, 444, 456:
 Արամեան Ս. — 445:
 Արամեանց Հմայեակ — 137:

Արամ Թորոս — 446:
 Արզուկեան Վահան — 413:
 Արիս — 273, 277:
 Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին) — 45, 47, 55, 106, 111, 139, 140, 143, 147, 148, 162, 222, 223, 264, 269:
 Արշակ (Ներսէսեան) — Տես Սեպուհ:
 Արշալիր — Տես Միսաքեան Շաւարշ:
 Արոնեան — 177:
 Արսլանեան Մամիկոն — 445:
 Աւագեան Պ. — 445:
 Աւօ — Տես Իսահակեան Աւետիք:

Բարա — Տես Նաժակ Գարեգին:
 Բագարատ քհնյ. — 298:
 Բաթարանեան Հայկ — 140:
 Բարունակ (Վանեցի) — 283:
 Բարսեղ Շահապ (Պերճ, Շահէն) — 177, 224, 329, 333, 334, 385:
 Բարսեղեան — Տես Տէր Դաւթեան Յովսէփ:
 Բարսեղեան Պ. — 445:
 Բժիշկ — Տես Տէր Դաւթեան Յովսէփ:
 Բլէեան Ա. — 283:

Գարրիկեան Արտաշէս — 370:
 Գազրիկեան Փ. — 298, 299:
 Գալֆայեան Յարութիւն (Գալֆա) — 7, 24, 106, 108, 109, 136-138, 193:
 Գայեան Ս. — 144:
 Գասապեան Տոքթ. Տիգրան — 181, 182, 196:
 Գասպարեան Վրէն — 273, 283, 310, 315, 316:
 Գավճեան Գառնիկ — 18:
 Գատրի պէյ — 148:
 Գարմէն (Մելքոնեան Մկրտիչ) — 138, 140, 141, 160, 164, 227, 239, 241, 243, 244, 246-248, 251, 252, 259:
 Գեղամ — Տես Տէր Կարապետեան Գեղամ (Ասողիկ):
 Գեղամ (Կարին) — 272, 281, 282, 286, 288:
 Գէորգ Զաւուշ — 353:
 Գիւտ վարդապետ — 373:
 Գնթունի — 280, 286:
 Գումրիեան Ս. — 292, 294:

Գրգօ — Տես Քեստանեան Գէորգ:
 Գրիգորեան Առաքել — 427, 433, 435:
 Գօշիկեան Հ. — 452:

Էմին բէյ — 59:
 Էտիպ մոլլա — 147:

Դարբինեան Ռուբէն (Զրիլնկիրեան Արտաշէս) — 138, 436:
 Դաւթեան Յոնան — 123, 137:
 Դաւիթ Դհերցի — 227:
 Դաւիթեան Համբարձում — 435:
 Դերենիկ — 280:
 Դումլի — 278, 279, 286, 287:

Եագուպ Ճեմիլ պէյ — 147, 155:
 Եղիկեան Աշոտ — 77:
 Ենով Շահէն — 177, 194, 195:
 Եսայեան Ե. — 298:
 Եսայեան Յարութիւն քհնյ. — 370:
 Եսայեան Ս. — 321:
 Երէցեան Յովհաննէս (Թորգոմ) — 16, 24, 26, 29, 42, 55, 66, 67, 73, 80, 87, 88, 90, 93, 94, 100, 106:
 Երէցեան Ռաֆայէլ (Րաֆֆ) — 227, 230:
 Եփրեմ (Դաւթեան) — 59, 82, 83, 473:

Զամանիկեան Դ. — 445:
 Զատիկեան Յ. — 461:
 Զարդարեան Ռուբէն (Ասլան) — 7, 21, 24, 26, 28, 29, 31, 33, 35, 38, 43, 44, 46, 49, 50, 56, 57, 62, 64, 66, 67, 72, 74, 77, 85, 86, 89, 91, 93, 95, 97, 103, 105, 106-109, 116, 136, 137, 334, 374, 414, 436:
 Զարիֆեան — 98, 100, 101:
 Զաւարեան Միմոն (Անտոն, Օհանեան Սմբատ) — 6, 17, 24-27, 29, 30, 32, 35, 36, 38-40, 47, 49, 51, 54, 55, 58, 60, 63-65, 69, 71, 75, 77-82, 85, 87, 88, 90, 91, 93-95, 97, 99-101, 103, 105-111, 113-118, 136, 137, 141, 174, 183, 244, 250, 251, 253, 255, 258, 259, 262, 264, 265, 267, 268:
 Զաւրեան Յակոբ — 7, 24, 109, 261, 268, 469:
 Զաքարեան Տ. — 445, 453:
 Զուլալ (Կարապետեան Լեւոն) — 314, 385:
 Զօհրապ Գրիգոր — 44-46, 148:
 Զօրեան Բարթոլ (Տիրայր) — 7, 24, 26, 28-31, 35, 40, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 71, 74, 75, 77, 81, 85, 98, 100, 101, 103, 105, 107, 109, 114, 177, 181, 192, 193, 202, 224, 414, 415, 417-419, 421, 429, 430, 433, 457, 470:
 Զօրեան Ստեփան — Տես Ռոստոմ:

Թալէաթ — 60, 141, 143-146, 148, 152, 154, 160:
 Թահիր փաշա — 141, 144, 146, 259:
 Թադի Զադէ — 20, 100, 142:
 Թաշեան Լ. — 452:
 Թաշեան Յակոբ — 445:
 Թաշեան Նշան — 7, 21, 24, 26, 30, 34, 51, 70, 75, 80, 82, 86, 90, 99, 100, 104, 106-108, 110, 111, 437, 443, 446, 447, 450, 451, 453, 461, 465, 467, 468, 474:
 Թաֆթ Ուիլիլմ Հովրոս — 469:
 Թերլեմէզեան Տ. — 461:
 Թիրեաքեան Հայկ (Հրաչ, Ֆարհատ) — 7, 22, 24, 88, 89, 98, 99, 106, 108, 109, 138, 140, 177, 181, 182, 193, 196, 224, 374, 378, 410:
 Թրկատիցի (Յարութիւնեան Յովհ.) — 330:
 Թորգոմ — Տես Երէցեան Յովհաննէս:
 Թորլաքեան Արշ. — 314:
 Թորոս — Տես Ալոյեան Գալուստ:
 Թուրիկեան Գարեգին — 298:
 Թոփչեան Եղիշէ (Երուանդ) — 166, 278, 279, 287, 313, 438:
 Թոփճեան Միսակ — 19, 428, 430, 435:
 Թօսունեան Ե. — 445:

Տիրայր — Տես Զօրեան Բարթոլ:

Իգիթ — 302:
 Իշխան (Վանայ, Միքայէլեան Նիկոլ) — 227:
 Իպրահիմ փաշա — 144, 146:
 Իսահակեան Աւետիք (Աւօ) — 7, 24-26, 28, 29, 31, 33, 35, 40, 43, 44, 46, 50, 58, 62, 64, 71, 74, 77, 85, 88, 93, 105, 106, 111, 114, 117, 471:
 Իսահակեան (Զամալեան Արշակ) — 432:
 Իսկենտերեան Գ. — 445:
 Իսմայիլ Հապար — 141, 144, 266:
 Իսրայէլեան Արիս — 181, 193:
 Իփէկեան Գասպար — 140, 148:

Լեւնեան — Տես Նազարեանց Հրապարտ:
 Լրժին — 3:
 Լիբարիտ (Աւետիսեան) — 163, 165, 166, 277, 281, 283:
 Լուսիկ — 353:

Խաժակ Գարեգին (Չազալեան, Բարա) — 7, 24-26, 28, 29, 31, 33, 35, 40, 43, 46, 50, 51, 54, 58, 62-64, 66-68, 71, 81, 85, 86, 88-91, 93, 95, 101, 106-109, 111, 114-118, 471:
 Խալիլ պէյ — 144-146, 148, 154, 155:
 Խայրի պէյ — 146:
 Խաչատուրեան Մ. — 292:
 Խաչատրեան Աստուածատուր — 269:
 Խաչիկեան Խաչիկ — 430:
 Խզմալեան Թադէոս (Տիգրանեան) — 439, 456:
 Խլղաթեան Գ. — 77:
 Խմօ (Տէր Ղազարեան Ղազար) — 272, 273, 275, 281, 282, 298:
 Խշտոյեան Կ. — 445:
 Խոսրով — 273, 281:
 Խուչպուլեան — 314:
 Խտրեան Պ. — 445:

Մաղիկեան Ապրօ — 422:
 Մոփացի — Տես Աստիկեան Տիգրան:

Կարաբէկով — 142, 148:
 Կարազեան — Տես Պանիրեան Հայրապետ:
 Կարապետեան Տ. — 445:
 Կէմիճեան Թ. — 452:
 Կէմիճեան Կ. — 324:
 Կորոյեան Թ. — 454, 461:
 Կոմս — Տես Փափազեան Վահան:
 Կոնոյեան Եսայի — 445:
 Կոտոյի Հաճի (Կոտոյեան Յակոբ) — 247, 248, 251, 252:
 Կորիւն (Գոմսայ իսօ) — 239, 244:

Հազգը փաշա — 48, 67, 118, 146, 147, 156:
 Հալլաճեան Պետրոս — 45, 146, 148, 264:
 Հաճի — Տես Կոտոյի Հաճի:
 Հաճի Սատուն — 352:
 Համբարձումեան Մ. — 445:
 Համբարձումեան Ն. — 445:
 Հայկ-Աշոտ — 435:
 Հայրապետեան Բրաբրոն — 340:
 Հայրիկ — Տես Պանիրեան Հայրապետ:
 Հապիպ փաշա — 143, 144:
 Հաջի բէյ — 143, 144:
 Հասոյի Իպրահիմ — 351:
 Հարմանեան Պ. — 445:
 Հիւմի փաշա — 152:
 Հիւսէին փաշա — 156:

Հիւսէին Քերիմ պէյ — 156:
 Հմայեակ — 272, 277:
 Հրաչ (Ֆարհատ) — Տես Թիրեաքեան Հայկ:
 Հրաչեայ Մարալ (Ղարիպեան Գրիգոր) — 162, 163, 165-167, 174, 269, 273, 274, 278, 282, 294, 303:
 Հրայր-Դժոխք (Ղազարեան Արմենակ) — 441, 460:

Ղազարոսեան Օ. — 445:
 Ղանի պէյ — 147, 331:
 Ղուկասեան Թ. — 181, 182:

Ճաւեր բէյ — 143, 145, 152, 154:
 Ճելալ պէյ — 144:
 Ճելալեան Թովմաս — 440, 442, 443, 445, 447, 449, 450, 454:
 Ճեմալ պէյ — 144, 146, 374:
 Ճնտանեան Տ. — 445:

Մաթիկեան Զատիկ — 21, 440, 454, 466:
 Մալխաս (Յովսէփեան Արտաշէս) — 137, 181, 303:
 Մալումեան Խաչատուր — Տես Ակնունի Է:
 Մաղաքեան Թ. — 445:
 Մաճէլեան Մ. — 292:
 Մամբրէ — 272:
 Մայր — 39, 40:
 Մանաս — 188:
 Մանիսիա Զադէ — 56:
 Մանկունի Մ. — 442:
 Մանկունի Ն. — 445, 453, 466:
 Մանուկ (Դուրան-Բարձրաւանդակ) — 162, 174:
 Մանուկեան Արամ — 6, 17, 24, 26, 29, 30, 36, 40, 51, 56, 62, 66, 72, 74, 77, 79, 107, 109, 110, 115, 141, 202, 212, 227, 303, 377-379:
 Մատինեան Նիկոլ (Վահան) — 303, 315-317:
 Մար (Տէր Մարտիրոսեան Միքայէլ) — 7, 24, 29, 33, 35, 37, 39, 40, 43, 44, 46, 50, 52, 53, 56-58, 62, 64, 71, 73, 86, 106, 109, 136, 137, 439, 456:
 Մարալ — Տես Հրաչեայ Մարալ:
 Մարալ Սալբի — 364, 375:
 Մարգարեան Ղուկաս — 461, 466:
 Մարզպետ (Ղազարոսեան Ղազարոս) — 7, 24, 28, 29, 31, 35, 37, 40, 43, 44, 46, 49, 58, 64, 67, 74, 77, 80, 81, 85, 86, 88-91, 93-95, 98, 100, 101, 105, 107, 114, 117, 118, 145, 148, 160, 227, 252:
 Մարթին (Մուրատեան) — 370:
 Մելոյեան Ղեւոնդ (Մելօ) — 7, 26, 28, 33, 35, 43, 44, 46, 50, 51, 58, 60, 62, 64, 70, 93, 100, 101, 103, 106, 107, 109, 111, 114, 117, 137, 181:

Մելքոնեան Կարապետ — 299:
 Մելքում — 7, 58, 62, 64, 71, 81, 83, 85, 86, 95, 98, 100, 105-107, 109, 111, 114:
 Մեծատուր — 63, 64:
 Մեհմեդ Ալի (էքս Շահ) — 3, 20, 83, 86, 131, 210:
 Մեհմետ էմին — 144, 156, 397:
 Մեհրապեան Սարգիս (Վարդան Խանասորի) — 7, 25, 103, 105, 106, 108, 109, 111:
 Մեմէտ Թելահաֆ էֆ. — 352:
 Միհրան (Խմբապետ) — 166, 278:
 Մինասեան Սարգիս — Տես Արամ Աշոտ:
 Միսաքեան Շաւարշ (Արշաւիր) — 177, 193, 223:
 Միտհաթ պէյ — 143, 154, 160:
 Միրանշահեան Գ. — 445, 453, 454, 466:
 Միրզոյեան Յովսէփ — 473:
 Միրէեան Պօղոս — 291:
 Միրիճանեան Արշակ — 252:
 Միքայէլեան Քրիստափոր — 414:
 Մլեհ — 272, 273, 275:
 Մկրտիչեան Գառնիկ — 19, 428, 435:
 Մոհամմէտ պէյ — 144:
 Մուամմէր պէյ — 404:
 Մուհամմէտ Ալի — Տես Մեհմէդ Ալի (էքս Շահ):
 Մուսա բէգ — 259:
 Մուստաֆա Նեմլիպ պէյ — 147, 378:
 Մուրատ Սերաստացի (Մուրէն, Խրիմեան) — 6, 24, 26, 37, 40, 42, 44, 57, 61, 67, 72, 74, 78-80, 88, 89, 93, 94, 97, 99, 100, 104, 106, 107, 109, 114, 138, 141, 142, 227, 244, 252, 288, 303, 311, 315, 317, 329, 333, 334, 376:
 Մուրատեան Գ. — 445:
 Մուրատեան Եղ. — 445, 461, 466:
 Մուրատեան Սեդրակ — 353:
 Մուրատեան Սուրէն քանյ. — 298:

Յարէթ (Սմբապետ Միհրանի եղբայր) — 166, 278:
 Յակոբեան Աստուր — 328:
 Յակոբեան Սիմոն — 138, 457:
 Յակոբով Արամ — 177:
 Յարութիւն — 273, 275:
 Յոնան, Յովնան — Տես Դաւթեան Յոնան:
 Յովհաննէսեան Արիստակէս — 252:
 Յովհաննէսեան Կիրակոս — 16:
 Յովնանեան Ահարոն — 433:
 Յովնանեան Թ. — 298:

Նազարեանց Լիպարիտ (Լեւոնեան) — 26, 29, 31, 33, 35, 37, 39, 40, 43, 46, 53, 57, 66, 67, 73, 83, 85, 100, 103, 105-108, 116, 118, 136-138, 140:
 Նազրմ պէյ — 141, 143, 145, 146, 154, 156, 160:
 Նալբանտեան Գ. — 341:
 Նաջի պէյ — 145, 147, 154:
 Նարինեան Սիմէոն (Մնար) — 436, 474:
 Նեմեստոսին մոլլա — 146, 259:
 Նեշվէյապ — 364, 370:
 Ներսէսեան Խ. — 292:
 Ներսիսեան Պ. — 461, 466:
 Նիազի — 156:
 Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան Նիկողայոս) — 58, 89, 136, 137, 181, 286, 315, 317, 473:
 Նիկողոսեան Կ. — 445:
 Նշան — Տես Թաշճեան Նշան:
 Նորաշխարհեան Նազարէթ — 140:

Շալճեան Ա. — 445:
 Շահան Նաթալի — 440, 450, 451, 461, 465:
 Շահսաթունեան Աւետիք — 138, 457:
 Շահէն — 272, 275, 279:
 Շահնազարեան Տիգրան — 298:
 Շահրիկեան Յարութիւն (Ատոմ, Նիթրա) — 6, 19, 24, 26, 29, 34, 36, 37, 39, 40, 42, 45, 46, 49, 50, 56, 59, 60, 63, 64, 66, 69, 72, 74-78, 90, 93, 94, 104, 106, 107, 110, 111, 114, 115, 118, 137, 139, 140, 143, 144, 160, 193, 202, 204, 212, 213, 222-224, 378:
 Շամիլ (Վանայ Սարգիս, Օտապաշեան Պօղոս) — 5, 227, 237, 240, 241, 243:
 Շարիկեան Ա. — 252:
 Շաւարշ — 39, 56, 97, 108, 109:
 Շեքէթ փաշա — 149:
 Շէհրանեան Տիգրան — 292, 294:
 Շէյխ Սէիդ Ալի — 233:
 Շիրինեան Տիգրան — 397:
 Շմիկեան Գրիգոր — 268:

Ոստան — 107:
 Ուզունեան Հ. — 445:

Չազմազճեան Թ. Թ. — 439, 440, 442, 443, 453, 461, 465:
 Չաւտարեան Կարապետ — 298:
 Չէօկիւրեան Թ. — 445, 450, 452, 453, 461:
 Չթճեան Սահակ — 439, 445, 453:

Զիլինկիրեան Արտաշէս – Տես Դարբինեան Ռուբէն:
Չուլճեան Ս. – 445:
Չպուճեան Գալուստ – 196, 224:

Պալեան Տրդատ եպս. – 400:
Պահլաունի Ղ. – 445:
Պանիրեան Հայրապետ (Հայրիկ, Կարապետ) – 6, 18, 20, 24, 26, 30, 34, 38, 40, 42, 44, 52, 54, 55, 63, 66, 68, 74, 78, 80, 82, 83, 86-88, 101:
Պապայեան Խոսրով – 177:
Պասթաճեան Կ. – 141:
Պասթաճեան Մ. – 18:
Պասմաճեան Մարտիկ – 19, 422, 428, 433-435:
Պարոյր – 292, 297:
Պարոյր – Տես Անդրանիկ (Օզանեան):
Պարոյրեան Թ. – 445, 450:
Պարսոյեան Ղազար – 298:
Պարտիզպանեան Յովսէփ – 328:
Պղէեան Միսակ – 163, 173:
Պետրոսեան Վահան – 373:
Պերճ – Տես Բարսեղ Շահպազ:
Պզտիկեան Զաքարիա (Կիլիկեան) – 140, 373:
Պէնկլեան Թ. – 445:
Պէննէեան – 443:
Պէքիր Սամի – 141, 144, 146, 156, 234:
Պիոնեան Կարապետ – 16, 18, 20:
Պոյաճեան Գ. – 452, 461, 466:
Պոսթաճեան Մ. – 18:
Պուլկարացի Սարգիս – 234:
Պօղոսեան Գրիգոր – 292:
Պօղոսեան Օ. – 445:

Ջանգէօզեան Աւետիս – 268:

Ռափայկլեան – 447:
Ռոստոմ (Զօրեան Ստեփան) – 6, 26, 58, 61, 66, 68, 71, 74, 77-79, 81, 82, 84, 85, 87-90, 92, 94, 99, 100, 105-107, 109, 136-138, 161, 162, 165, 169, 172-174, 252, 269, 316, 385, 414, 427, 469:
Ռուբէնեան Պօղոս – 430:
Ռստիկեան Ա. – 439, 442, 443, 453, 454, 456, 465, 466:

Սաթենիկ, Սաթօ – Տես Օհանջանեան Սաթենիկ:
Սահակեան – 181, 183, 193:

Սահրանտ (Սարաֆեան Հրանտ) – 303-305, 311, 313, 314:
Սանդրազորճեան Թ. – 445:
Սանտալ Մ. – 445, 447, 454, 466:
Սապահ-Գիւլեան – 137, 385:
Սապահետտին – 149, 155:
Սասունի Կարօ – 181, 182, 196, 224:
Սատրզ պէյ – 146:
Սարգիսեան Զաքար – 298:
Սարրեան Մարտիրոս – 7, 22, 62, 64, 410, 413:
Սարուճեան – 7, 57, 74, 107:
Սեմալցի Մանուկ – 239:
Սեպուհ (Ներսէսեան Արշակ) – 145, 148, 160, 162, 165, 174, 227, 244, 252, 272-275, 282, 283, 292-294, 303:
Սերոբ Աղբիւր (Վարդանեան) – 441, 442, 460:
Սերոբեան Մուշեղ եպ. – 470:
Սէիդ բէգ – 234, 240, 242:
Սէյիտ պէյ – 146:
Սէյֆէտտին փաշա – 351, 354, 355:
Սէֆէրեան Լ. – 445:
Սիւսանի (Նարեանեան Աստմ) – 436, 440, 442, 445:
Սիւսանեան Ա. – 292:
Սիրունեան Մելիք – 302:
Սիրունեան Սահակ – 298:
Սիւնի Գրիգոր – 314, 315, 321, 385:
Սիւջա էդ Դովլէ – 20:
Սլաք – Տես Օխիկեան Արմենակ:
Սմբուկ (Յակոբեան Սմբատ) – 163, 166, 272, 273:
Սուրէն – Տես Մուրատ Սեբաստացի:
Սուքիասեան Ս. – 292:
Սրապեան Տիրան – 298, 299:
Սրենց (Գլոճեան Սարգիս) – 181, 182, 187, 202, 223:
Սօսանուէր – 272-274, 285, 287:
Սօֆեան Թ. – 181, 182, 200:

Վաթան – Տես Մերոյեան Ղեւոնդ:
Վահագ – Տես Տաթևեան Վահագն:
Վահան – Տես Փափազեան Վահան (Կոմս):
Վահան (Քղի) – 272-275, 281, 288, 298, 299:
Վահապ – Տես Վռամեան Արշակ:
Վաղարշ – 168:
Վարազդ (Կարին) – 272, 273, 279, 286, 287:
Վարազդատ – 7, 74, 80, 81, 86-88, 93-95, 99, 103-106, 108, 109, 111, 116, 117, 136:
Վարանդեան Միքայէլ (Յովհաննիսեան) – 24-26, 29-31, 35-38, 42, 43, 49, 55, 60, 79, 83, 84, 94-96, 106, 107, 109, 114, 117, 118, 137, 469:
Վարդան (Սանասորի) – Տես Մեհրապեան Սարգիս:
Վարդան Շահպազ – 227, 281, 303:

Վարդաֆէս (Սերենկիւլեան Յովհ.) – 45-47, 55, 106, 139, 143, 145, 147, 162, 172, 269, 278, 286, 287, 333:
Վիշապեան Գէորգ – 6, 18, 22, 24, 26, 29, 52, 56, 60, 71, 79, 89, 90, 94, 99, 107, 108, 114, 116, 376:
Վլախով – 47:
Վռամեան Արշակ (Վահապ, Դերձակեան Օննիկ) – 5, 6, 18, 20, 26, 27-32, 35-42, 46, 52, 54, 55, 58, 59, 63, 64, 66, 71, 73-75, 78, 80, 81, 84, 85, 88, 90-96, 98, 99, 104-109, 136-138, 140, 142-145, 160, 242, 258, 263, 331, 374, 377, 414, 436:
Վտարանդի (Արամ Զարրգ) – 181, 182, 273, 281:
Վրացեան Սիմոն – 109, 160, 269, 436, 474:
Վրոյր (Տէր Եղիաշեան Վարդ) – 162, 174, 338, 351:

Տաթևեան Վահագն – 99, 140, 204, 373, 374:
Տաշրացի – Տես Գասպարեան Վրէն:
Տապաղեան Տ. – 440, 453, 454:
Տասնապետեան Հրաչ – 244:
Տատրեան Արմենակ – 381:
Տատրեան Յակոբ – 381:
Տերսիմի Աշոտ – 160, 166, 281, 282, 286-288:
Տէր Դաւթեան Յովսէփ (Բժիշկ) – 6, 24, 26, 29, 30, 42, 61, 63, 78, 89-91, 99, 109, 136, 137, 162, 165, 174, 202, 242, 269, 272-274, 283, 285, 286:
Տէր Կարապետեան Գեղամ (Ասողիկ) – 7, 40, 43-46, 49, 50, 54, 56, 58, 62, 64, 71, 74, 75, 77, 86, 94, 99, 106, 109, 114, 139, 268:
Տէր Մարտիրոսեան Միք. – Տես Մար:
Տէր Մեսրոպեան Սարուխան – 252:
Տէր Մինասեան Ռուբէն – 246, 268:
Տէրտէրեան Թ. (Մէմօ) – 6, 17, 24, 26, 51, 55, 63, 72, 80, 87, 88, 98, 99, 181, 183, 321, 445:
Տիգրան – Տես Աստիկեան Տիգրան:
Տիգրանեան – Տես Սլաւիկեան Թադէոս:
Տիգրանեան եպ. Մկրտիչ – 337:
Տիլպեր Զարեհ – 144:
Տինոյեան Պօղոս – 193, 194:
Տիտան – 17, 310:
Տուրբախ (Կիրակոսեան Յարուսթիւն) – 162:

Րաֆֆ – Տես Երէցեան Ռաֆայէլ:
Րեզուկ – 162, 174, 338, 351, 371:

Փալլակ – 273, 289:
Փաննիկեան – 181, 182:
Փաշալեան Ն. – 446, 454:

Փարամազ (Սարգիսեան Մատթէոս) – 329, 341:
Փարթոյեան Մ. – 446:
Փափազեան Թ. – 20:
Փափազեան Վ. – 445:
Փափազեան Վահան (Կոմս) – 7, 24, 26, 28, 29, 31, 33-35, 40, 42-48, 50, 53, 73, 74, 77, 95, 105, 106, 109, 114, 116, 118, 123, 137, 139, 145, 227, 242, 243:
Փափարի Կենճօ – 353:
Փիլաւեան Թ. – 413:
Փիլոս – Տես Հրաչեայ Մարալ:
Փոստոյեան – 446:
Փորթուգալեան Մկրտիչ – 29, 109, 450:

Քաջերունի – 325-327:
Քասիմ – 364, 370, 371:
Քեամիլ փաշա – 60:
Քեռի (Գաւաֆեան Արշակ) – 473:
Քեստանեան Գէորգ (Գրգօ) – 6, 7, 19, 24, 26, 30, 34, 37, 49, 70, 79, 80, 97, 99, 106, 107-110, 124, 414, 428, 435:
Քէօր Հիւսէին – 258:
Քէօր Սլոյ – 353:
Քիյառ Փիեռ – 470:
Քիւրքճեան Ա. Թ. – 292, 294:
Քիւրքճեան Թ. – 430:
Քրքիսէլեան Ս. – 445:

Օզանեան Գաբիկ – 385:
Օխիկեան Արմենակ (Սլաք) – 278, 283:
Օհանեան Սմբատ – Տես Զաւարեան Սիմոն:
Օհանջանեան Սաթենիկ (Սաթօ) – 7, 26, 31, 33, 35, 40, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 71, 81, 85, 86, 91, 93, 98-101, 103, 106, 114, 116, 181, 193:
Օսման փաշա – 146, 267:
Օվոյեան Կ. – 298:
Օտապաշեան Պետրոս – 17:

Տալիք Գրիգոր – 374:
Տարհատ – Տես Թիրեաքեան Հայկ:
Տելիք – 7, 19, 26, 28, 114-117, 177, 193, 212, 416:
Տերիտ Ճեմիլ (Ամսէեան Տիգրան) – 141, 335, 337, 350, 351, 359, 362:
Տրէնիկեան Մ. – 435:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբրին – 314:
Ագրակ – 355:
Ալաշկերտ (Սողոմ) – 272, 273, 277, 282, 284, 286, 302:
Ալեքսանդրապոլ (Քար) – 170:
Ալպանիա – 44, 46, 146, 156, 157:
Ալջալազ – 153, 228, 229, 231, 233, 243:
Ալվառինճ – 256:
Ախլաթ – Տես Նլաթ:
Ակն (Թաթառ) – 322, 323, 325, 334, 389:
Աղթամար – 236, 432:
Ամասիա (Պոնտոս) – 41, 377, 380-382, 385, 387, 408:
Այգեաստան – Տես Գանձակ:
Այնթապ (Հովիտ, Հողաբլուր) – 10, 11, 24, 91, 101, 102, 134, 140, 147, 258, 363, 364, 374-373:
Անուշաւան – Տես Հիւսէյնիկ:
Աշոտի – 41:
Ապառաժ լեռ – Տես Լճէ:
Առիւծկայ – 304:
Աստարա – 20:
Ատաբազար – 120, 156, 181, 182, 192, 197, 199, 201, 378:
Ատանա (Նոր Վիրապ) – 10, 11, 22, 24, 57, 58, 83, 91, 134, 138, 140, 144, 147, 148, 150, 155, 237, 238, 243, 363, 373, 374, 398, 399, 415, 444, 467:
Ատրպատական (Վրէժ, Վրէժստան) – 3, 4, 6, 16, 20, 82-84, 86, 101, 139, 142, 161, 237:
Արաբիա – 44, 146, 156, 157:
Արաբկիր (Բլրակ) – 141, 322-324, 326, 330, 331, 334:
Արաղ – 256:
Արգաւանք – 256, 263:
Արեան Հովիտ – Տես Ուրֆա:
Արեւալուսին – Տես Մեղրէ:
Արծիւ – Տես Երզնկա:
Արդանա-Մատէն – 333:
Արդնի – 339, 341:
Արճակ – 233:
Արճէշ – 144, 152, 228, 230, 231, 233, 234:
Արմաշ – 120, 152, 181-183, 192, 198, 201:
Արշաւան – 272, 282:
Աւագան (Կիրասոն) – Տես Տրապիզոնի Կ. Կոմիտէ:
Աւանց – 230, 231:
Աւզադբերդ – 256:
Աւրան – 256:
Աքսերայ – 400:

Բարբերդ (Միջնաբերդ) – 160, 166, 269, 272, 273, 277, 278, 282, 284, 286, 292-297, 302, 389, 438:
Բազու – Տես Պաքու:
Բազէ – Տես Զարսանճաք:
Բալու (Մեսրոպաւան) – 322, 323, 325, 326, 333, 436, 444:
Բաղէշ – Տես Պիթլիս:
Բանալի – Տես Սամսոն:
Բաշգալէ – 230, 231, 236, 242:
Բասեն (Կոռուղաշտ) – 272, 273, 282, 284, 302:
Բարձրաբերդ – Տես Կարին:
Բարձր-Սար – Տես Կեսարիա:
Բարժրուշ – 20:
Բերա – 120, 181, 192, 201:
Բերդ – Տես Շապին Գարահիսար:
Բերդակ – 256:
Բերկրի – 231, 242:
Բերքառատ – Տես Մալաթիա:
Բիթլիս – Տես Պիթլիս:
Բիւրակն – Տես Ննուս:
Բիւրք – 311, 313:
Բլրակ – Տես Արաբկիր:
Բուլանըլիս – Տես Պուլանըլիս:
Բունաշէն – 172, 266, 268:
Գահպիք – 337, 340:
Գայլ-գետ – 311, 315, 317:
Գանձակ (Այգեաստան) – 170:
Գատրգիւղ – 183, 192, 422:
Գարթալ – 120, 181, 183, 192, 198, 201:
Գաւալա – 201:
Գաւառ – 231:
Գելիկուզան – 256:
Գընճըլար – 120, 181-185, 192, 193, 197, 201:
Գինջ – 253:
Գուրտպելէն – 120, 181, 183-186, 188-194, 199, 201:
Դամասկոս (Լիճ) – 101, 102, 122, 140, 342, 363, 364, 368, 371, 372:
Դաշտ – Տես Հալէպ:

Դերջան (Ջրաւէտ) – 269, 272-274, 277, 282, 284, 286, 290, 291, 302:
Դուրան – Տես Տարօն-Սասուն:
Դուրան-Բարձրաւանդակ – Տես Տարօն-Սասուն:
Եգիպտոս – 7, 11, 24, 91, 101, 134, 138, 160, 343, 389, 395, 403, 406:
Ենիճէ – 201, 389:
Եոմուրա (Սարափ) – 120, 142, 303, 311-315, 317:
Երեւան (Մրգաստան) – 170:
Երեք-Բլուր – 387:
Երզնկա (Արծիւ) – 91, 142, 167, 267, 269, 272, 273, 277, 282, 285, 288, 289, 302:
Զարեւանդ – Տես Հազրո:
Զէյթուն (Արծուաբերդ) – 140, 258, 363, 369, 371, 372:
Զիարէթ – 261:
Զիլէ – 380, 382:
Զոնկուլտաք – 120, 181, 183, 192, 199, 201:
Հիւի (Գետափ) – 120, 303, 311, 312, 313, 315-317, 321:
Հրզրում – Տես Կարին:
Հրէյլի – 406:
Հրպաա – Տես Հերէկ:
Կվերէկ-Ֆենեսէ – 121, 400, 406:
Կֆերէ – 406:
Թաթառ – Տես Ակն:
Թալաս – 121, 400:
Թաղաւանք – 153, 154:
Թամզարա – 311:
Թամսընլիլ – 441:
Թաւրիզ (Վրէժ) – 18, 20, 84, 85, 137:
Թեհրան – 83, 85, 86:
Թըրպարի – 352, 360:
Թիմար – 231:
Թիֆլիս (Մեծ քաղաք) – 32, 90, 99, 161, 170, 273, 276:
Թոքատ (Չորալի) – 41, 380, 382, 394, 401:
Թրիպոլի (Տալու) – 120, 303, 308, 311-313, 316, 321:
Թրոյ – 438-441, 445, 457, 467:

Ճընել – 35, 105, 107, 124, 135-137, 212, 213, 268, 320, 332, 402, 428, 457, 464, 470, 474:
Իզմիթ – 120, 190, 192, 201:
Իզմիր (Ոսկեհանք) – 22, 24, 71, 101, 102, 104, 123, 137, 138, 140, 147, 148, 152, 376, 398, 406, 409-413, 434, 444:
Իսթ Սէնթ Լուիզ – 438, 441:
Իսկենտերուն (Կարաւան) – 363:
Լեռ – Տես Հալէպ:
Լեռնասար – Տես Նարբերդ:
Լեռնավայր (Կիլիկիա) – 7, 363-375:
Լիճ – Տես Դամասկոս:
Լին – 438, 441, 445:
Լճէ (Ապառաժ Լեռ) – 326, 339, 341, 351:
Լսոնք-Լոյս – 294-297:
Լուիլ – 438, 441, 443, 445:
Լորէնս – 438, 441, 443:
Նալէք – 294:
Նասգիւղ – 146, 267:
Նարբերդ (Լեռնասար) – 6, 7, 24, 28, 40-42, 56, 71, 77, 85, 86, 88, 89, 91, 93, 100, 102, 105-107, 109, 111, 114, 117, 121, 138, 141, 144, 147, 155, 322-334, 377, 434, 436, 444, 467:
Նարց – 256:
Նիզան – 229, 231, 233:
Նլաթ – 253, 259, 265, 268:
Ննուս (Բիւրակն) – 272, 273, 277, 282, 284, 286, 302:
Նոյ (Աւարայր) – 149:
Նոյթ – 145, 146, 152-155, 172, 263, 265, 266, 268:
Նորաձոր – Տես Քղի:
Նտան – 256:
Օաղկաղաշտ (Կարնոյ շրջան) – 272, 282, 286, 302:
Մերմակ – 298, 299:
Միաւու – 256:
Մղակ – 263:
Մոց – Տես Պէլուսի:
Մովափ – Տես Տրապիզոն:

Կալաց – 417, 419, 420, 429, 433:
Կառափնատ – *Տես Լեռնավայր-Կիրիկիա*:
Կարին (*Բարձրաբերդ, Էրզրում*) – 4, 6, 11, 24, 25, 28, 29, 31, 33, 35, 40, 43-46, 50, 58, 59, 62, 64, 67, 74, 77, 81, 86, 88-91, 93, 95, 98, 100-103, 105-107, 109, 121, 136-138, 142, 144, 146-149, 152, 155, 161, 162, 165, 166, 174, 227, 258, 259, 262, 269-302, 308, 314, 333, 335, 338, 351, 389, 444:
Կարկառ – 229, 231:
Կարճկան – 229, 231, 253:
Կարս (*Ջրաբերդ*) – 170:
Կարս-Բազար – 140:
Կաւաչ – 229, 231:
Կեսարիա (*Բարձր-Սար*) – 6, 10, 18, 22, 24, 26, 28, 31, 35, 40, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 67, 71, 81, 85, 86, 89, 91, 93, 95, 98, 100-103, 105-107, 109, 111, 114, 116, 117, 121, 134, 148, 376, 389, 399-408:
Կէօլքէօյ (*Չարխափան վանք*) – 389:
Կիրասոն (*Փառնակ*) – 18, 102, 120, 139, 162, 303, 306, 308, 311, 312-314, 316, 321:
Կիւմիւշխանէ (*Լեռնաշղթայ*) – 120, 303, 311-313, 315-317, 321:
Կիւրին – 41:
Կոլդ – 438, 441, 445:
Կովկաս (*Սարոստան*) – 7, 24, 27, 28, 50, 68, 69, 72, 73, 79, 82, 83, 86, 89, 90, 101-103, 115, 120, 131, 132, 136, 146, 151, 160, 161, 163, 166, 167, 170, 171, 173, 206, 209, 218, 220, 221, 234, 238, 243, 248, 269, 282, 286, 306-308, 315, 317, 320, 321, 334, 338, 344, 374, 417, 422, 433, 437, 438, 449, 460, 463, 470, 471, 474:
Կոուաղաչտ – *Տես Բասնն*:
Կրանիդ Սիթի – 438, 441, 445:
Կրանտ Ռափիտս – 438, 441, 445:

Հազրո (*Չարեւանդ*) – 335-337, 339, 342, 354, 355, 358, 362:
Հազօ – 333:
Հարէպ (*Դաշտ, Լեռ*) – 10, 11, 22, 102, 140, 147, 156, 264, 343, 363, 364, 368, 370-372:
Հաղբակ – 231, 233, 239:
Հաճրն – 140, 258:
Հաճի-գիւղ (*Կաթակ*) – 380-382, 408:
Համա – 156:
Հայեղիկ – 337, 340, 343:
Հայնի – 333, 339, 341:
Հայոց Ջորեր – 229, 231:
Հարթֆրոտ – 437, 445, 456:
Հաւրան – 146:
Հեթինք – 256:
Հեմիլթրն – 438, 441, 445:
Հերէկ (*Էրպասա*) – 380, 382, 394-396:

Հէյվրրհիլ – 438, 441, 443, 445:
Հըտսըն – 456:
Հիւսէյնիկ (*Արեւալուսին*) – 322, 323, 325, 326:
Հողաբլուր – *Տես Այնթապ*:
Հոպոքըն – 438:
Հովիտ – *Տես Այնթապ*:

Ջիթոդ – 276:
Ջորայր – *Տես Թոքատ*:

Ղաշղալթաղ – 256:
Ղզըլաղաճ – 256:
Ղուամերիկ – 236:

Ճալիէթ – 445, 456:

Մալաթիա (*Բերքառատ*) – 41, 91, 141, 322, 323, 325, 326, 331, 333, 334:
Մալասայ – 294, 297:
Մալկարա – 120, 181, 182, 192, 198, 201:
Մակեդոնիա – 144, 157, 416:
Մակու – 86:
Մաղնիսա – 435:
Մամուրէթ-իւլ-Ազիզ – *Տես Մեզրէ*:
Մամրտանք – 228, 233, 243:
Մանազկերտ – 238, 244, 253, 267:
Մանչեսթր (*Ամերիկա*) – 438, 441, 443, 456:
Մասեաց Մոց – *Տես Պայազիտ*:
Մատէն – 339, 341:
Մարաչ (*Սահմանաբերդ*) – 140, 363, 369:
Մարզոսան (*Կայան*) – 7, 35, 41, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 67, 71, 74, 81, 86, 91, 95, 98, 100-103, 105-107, 111, 114, 116, 117, 140, 141, 376, 377, 381, 382, 385, 389, 390, 408, 444:
Մեզրէ (*Արեւալուսին*) – 11, 322, 323, 325, 326, 328, 330:
Մեծ Նորգիւղ – 201:
Մեծ Քաղաք – *Տես Թիֆլիս*:
Մերսին (*Ջրվէժ*) – 363, 398, 406:
Միլֆրոտ – 438, 441, 445:
Մինարէթ – *Տես Սալմաստ*:
Միջնաբերդ – *Տես Բաբերդ*:
Մոկս – 228, 229, 233:
Մոսկան – 265-267:
Մունճուսուն – 121, 400:

Մուշ – 7, 24-26, 28, 29, 31, 40, 43, 44, 56, 60, 67, 71, 90, 95, 99, 116, 141, 144, 155, 239, 241, 243, 244, 252, 253, 258, 261, 263, 265-268, 310, 333, 343, 353, 434, 444, 469, 473:
Մուսա Լեռ – 140:
Մուսուլ – 342:
Մրգաստան – *Տես Երեւան*:

Նաւահանգիստ – *Տես Պաթում*:
Նեշուէ – 438, 441, 443, 445:
Նէմրուն – 153:
Նիկոմիդիա – *Տես Իզմիթ*:
Նիկսար – 408:
Նիւ Եորք – 436, 438-443, 445, 447, 448, 452, 454, 458, 467, 469, 470:
Նիւթրն Ափրը Յոլս – 445, 456:
Նիւ Ինկլէնտ – 457:
Նիւ Հէյվրն – 438, 441, 445:
Նիւ Պրիթրն – 438, 441, 445, 457, 465:
Նիւպրիփորթ – 438:
Նիւփորթ – 441, 452:
Նորդուզ – 230, 233, 242:
Նորֆոք – 441:
Նովոգերակսկ – 147:
Նփրկերտ (*Փրակերթօ*) – 101, 102, 141, 167, 333, 335, 341, 355, 360, 362:

Շահի, Շահստանի կոմիտէ – *Տես Թեհրան*:
Շամ – *Տես Վան-Վասպուրական*:
Շապին Գարահիսար (*Բերդ*) – 91, 120, 160, 303-306, 308, 311-314, 316, 317, 321:
Շատախ – 229, 231, 232:
Շէյրան – 311, 315, 317:
Շիբակօ – 438-441, 445, 448, 457:
Շումլա – 434:

Ոսկանապատ – *Տես Պաքու*:
Ոսկեհանք – *Տես Իզմիթ*:
Ոստան – 144:
Որսորդ (*Ենթակոմիտէ*) – 272, 277, 284, 286:
Ուալթնսվիլ – 438, 441, 445:
Ուեստ Հոպոքըն – 438, 441, 445:
Ուեստ Փուլմըն – 438, 441, 445:
Ուզուլու – 400:

Ուոթրրթաուն – 438, 441, 445:
Ուոթրվիլ – 438-441, 446, 457, 461:
Ուոքէկըն – 438-441, 445:
Ուստր – 438, 441, 445, 461, 467:
Ուրմիա (*Փարոս*) – 20, 86, 139:
Ուրֆա (*Արեան Հովիտ*) – 91, 369:

Չարչամպա – 41, 380, 382, 384:
Չարսանճաք (*Գահաւանդ*) – 144, 155, 322, 323, 325-328, 331:
Չէնկիլէր – 120, 181, 183, 192, 198, 201, 209:
Չըլսի – 445, 452, 461:
Չիսուր – 259:
Չմշկածաղ (*Բաղէ*) – 322, 323, 325, 326:
Չնդուշ – 333:
Չոմաքու – 400:
Չորում – 380-382:
Չոք Մարզուան (*Քարալանք*) – 140, 333, 363:

Պաթում (*Նաւահանգիստ*) – 170:
Պալթէսիր – 201:
Պալիա-Մատէն – 120, 177, 181, 192, 201:
Պալբան (*Կ. կոմիտէ*) – 6, 7, 11, 19, 24-26, 28, 29, 31, 32, 35, 40, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 67, 71, 74, 77, 81, 85, 86, 88, 89, 91, 93, 98, 100-103, 105, 107, 109, 111, 114, 116, 117, 121, 166, 168-170, 177, 414-435:
Պաղչէճիկ – 337, 340, 343:
Պաղտատ – 156, 342:
Պայազիտ (*Մասեաց Մոց*) – 269, 272, 273, 277, 278, 280, 282, 284, 302:
Պանտրմա – 177:
Պասրա – 374:
Պարտիզակ – 120, 181, 182, 192, 197, 201:
Պաքու (*Ոսկանապատ*) – 87, 101, 161, 170, 276:
Պաֆրա – 380, 382, 384:
Պետերսբուրգ – 3:
Պէյրուէթ (*Մոց*) – 140, 264, 363, 364, 368, 371, 372, 375:
Պըֆլօ – 441, 456:
Պիթիլիս (*Բաղէշ, Սալնոյ-ձոր*) – 11, 101, 138, 141, 144, 145, 147, 149, 154, 155, 239, 241, 244, 253, 258, 259, 264-267, 287, 333, 342, 444:
Պիլէճիկ – 201:
Պիրէճիկ – 264:
Պիւնիան – 400:
Պշերիկ – 335, 341, 342, 351, 362:
Պողազլիան – 400:

Պոլիս (Արս, Վիշապ) – 4-6, 11, 18, 19, 21, 24-26, 28, 30, 31-33, 35, 36, 38, 40-44, 46, 49-51, 55, 56, 62, 64, 65, 67, 68, 71, 73, 77, 81, 85, 90, 91, 94, 101-103, 105, 111, 113, 114, 116, 117, 120, 123, 124, 128, 136-140, 144, 145, 149, 151, 154, 156, 159, 160, 175-227, 238-241, 253, 258, 261, 268, 277, 307, 308, 310, 319, 337, 343, 352, 362, 363, 365, 368, 370, 374, 377, 378, 393, 398, 406, 409, 412, 414, 428, 433, 434, 442, 444, 449, 454, 458, 469, 470-474:
Պոլու – 144:
Պոնտոս – **Տես Ամասիա**:
Պոսթրն – 437, 438, 440, 441, 443, 445-448, 450, 452, 454, 457, 467, 471:
Պուլանդիս – 164, 238, 239, 253:
Պուրկազ – 417, 419, 421, 429, 430:
Պուրքէշ – 427, 433:
Պրաքթըն – 438, 441, 445:
Պրայլա – 417, 419, 420, 429, 433:
Պրենտֆրոտ – 438, 441, 445, 458:
Պրիճփորթ – 441, 445:
Պրունքլա – 400:
Պրուսա – 138, 175, 181, 192, 201, 209, 378:

Ջահմանց – 294:
Ջերմուկ – 333, 339, 341, 343:
Ջրաբերդ – **Տես Կարս**:
Ջրարբի – 336:
Ջրաւէտ – **Տես Դերջան**:
Ջրիկ – 256:

Ռիչմոնտ – 438, 441:
Ռոտոսթօ – 177, 181, 192, 197:
Ռումելի – 238, 240:
Ռումտիկին – 400, 404:
Ռուսթուք – 415, 418, 419, 422, 427-431, 434:

Սաղուգեղ – 339, 340, 343:
Սալմաստ (Մինարէթ) – 20, 82, 83, 86, 139:
Սալոյ-Չոր – **Տես Պիթլիս**:
Սահմանաբերդ – **Տես Մարաշ**:
Սամաթիա – 181-185, 187, 188, 192, 198, 201:
Սամսոն (Բանալի) – 7, 24, 28, 35, 40, 41, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 67, 71, 74, 77, 81, 85, 86, 88, 91, 95, 98, 100-103, 105-107, 111, 114, 116, 117, 140, 141, 329, 333, 376, 377, 380-385:
Սան Ֆրանչիսկօ – 454, 457, 469:

Սարայ – 228, 230, 233, 242:
Սարափ – **Տես Եոմուրա**:
Սարուստան – **Տես Կովկաս**:
Սաքրամենթօ – 457:
Սեբաստիա (Սեւ Բլուր, Սըվազ) – 6, 11, 24-26, 28, 29, 33, 35, 41, 43, 46, 50, 53, 56, 58, 59, 62, 64, 67, 71, 77, 85, 88, 91, 93, 95, 98, 100-103, 105-107, 114, 116, 117, 121, 137, 141, 144, 148, 156, 227, 266, 333, 334, 376, 378, 391-398, 444:
Սելանիկ – 5, 56, 75, 137, 139, 144, 145, 147, 149, 150, 153, 154, 160, 242, 318, 384, 472:
Սենթրըլ Ֆոլս – 438, 441, 445:
Սեւ Բլուր – **Տես Սեբաստիա**:
Սեւերէկ – 339, 341:
Սեւ Վիշապ – **Տես Տիգրանակերտ-Տիարպեքիր**:
Սէնթ Լուիզ – 438, 441, 456:
Սիս – 140:
Սիվան – 333, 335, 342, 343, 352, 362:
Սիվէն – 416, 418-421, 429, 430:
Սկիւտար – 120, 181-183, 192, 199, 201, 209:
Սղերդ (Դոնիք) – 95, 244, 253, 351:
Սմբատաբերդ – **Տես Սպեր**:
Սոդոմ – **Տես Ալաշկերտ**:
Սուլտիա (Մուսա Լեռ) – 363:
Սուլթան-Չաչալի – 201:
Սուլինա – 417, 419, 420, 429, 433:
Սպաղանք – 256:
Սպարկերտ – 228, 229, 231:
Սպեր (Սմբատաբերդ) – 269, 272, 273, 277, 282, 284, 286, 300-302:
Սփրինկֆրոտ – 456:
Ս. Քաթարինէ – 438, 441, 445:

Վան-Վասպուրական (Շամ) – 4, 6, 7, 11, 23, 26, 28, 29, 31-33, 35, 40, 43, 58, 59, 62, 64, 71, 77, 81, 89, 90, 98-103, 105-107, 109, 111, 114, 116, 117, 122, 137, 139, 141, 142, 144-149, 152-156, 161, 162, 164, 174, 227-244, 253, 258, 259, 266, 267, 335, 342, 343, 377, 378, 427, 434, 444, 473:
Վաշինկթըն – 469:
Վաշտ – **Տես Օրտու**:
Վառնա – 20, 398, 418, 419, 421, 422, 425, 429, 434:
Վարդենիս – 256:
Վարդիսաղ – 263:
Վարդօ – 164, 253, 267:
Վարդահան – 294, 297:
Վերանշեհիր – 341:
Վիեննա – 18, 149, 457, 470:

Վիշապ – **Տես Պոլիս**:
Վիշապաձոր – **Տես Տիգրանակերտ-Տիարպեքիր**:
Վրէժ, Վրէժստան – **Տես Ատրպատական**:

Տարենտէ – 41:
Տարօն-Սասուն (Դուրան-Բարձրաւանդակ) – 4, 6, 17, 28, 46, 50, 58, 60, 64, 74, 77, 81, 85, 86, 88, 89, 91, 93, 95, 98, 100-103, 105-107, 109, 111, 116, 117, 121, 138, 141, 162, 164, 165, 172-174, 244-270, 287, 313, 335, 427:
Տեստ-Աղաճ – 177, 181, 192, 201:
Տերիք (Աշտիշատ) – 256:
Տիգրանակերտ-Տիարպեքիր (Վիշապաձոր) – 6, 11, 16, 24-26, 28, 29, 31, 33, 35, 40, 41, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 67, 71, 74, 77, 81, 85, 86, 88, 89, 91, 93-95, 98, 100-102, 105-107, 121, 123, 137, 141, 147, 155, 162, 166, 167, 174, 237, 264, 333, 335-362, 370, 436, 444:
Տըպնէ – 339, 343:
Տիթրոյիթ – 438, 441, 445:
Տիվրիկ (Որոտու) – 334:
Տոմ – 256:
Տովրը – 441, 445, 456:
Տրապիզոն (Մովսիս-Աւագանի Կ. Կովտէ) – 4, 6, 11, 17, 24-26, 28, 29, 31, 33, 35, 40, 43, 44, 46, 50, 56, 58, 62, 64, 71, 74, 77, 81, 85, 86, 88, 89, 91, 93, 95, 98, 100-103, 105, 106, 109, 110, 120, 123, 138, 142, 148, 162, 166, 174, 253, 285, 286, 288, 303-321, 434:

Րէյսին – 445:

Տրօնք – 256:

Փառնակ – **Տես Կիրասոն**:
Փարոս – **Տես Ուրմիա**:

Փարիզ – 149, 151, 277, 469:
Փեթիրսըն – 438, 441, 445:
Փիրան – 339:
Փոս – 242:
Փորթլինտ – 438, 441, 445, 446, 450:
Փսանք – 172:
Փրակերթօ – **Տես Նփրկերտ**:
Փրաւիտենս – 437, 438, 441, 445, 446, 449, 452, 459:

Քանքրոտ – 441, 443, 445:
Քար – **Տես Ալեքսանդրապոլ**:
Քարավանք – **Տես Չոք Մարզուան**:
Քարավրակ – 292, 294, 295, 297:
Քարձոր – 256:
Քենթըն – 445, 456:
Քիրմուլի – 201:
Քլիվլենտ – 445:
Քղի (Սորաձոր) – 167, 269, 272-274, 277, 282, 285, 298-300, 302, 369, 436, 444, 467:
Քնոչա – 456:
Քոսթանցա – 417, 419-421, 429, 430, 433:
Քսանթայ – 294:

Օտեսա – 398:
Օրտու (Վաշտ) – 120, 227, 303, 306, 308, 311-313, 316, 321, 377, 378:

Ճառ Լուի – 457:
Ճարդին, Մուֆարդին – **Տես Նփրկերտ**:
Ճիչուրկ – 456:
Ճիլատեքիա – 438, 441, 445, 469:
Ճիլիպէ – 418, 419, 422, 427-430, 435:
Ճրեզնօ – 104, 445, 456, 457, 463, 467:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ 3

ՊԼՈՒԽ I.- Հ.Յ.Դ. VI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
(էջ 7 - 135)

- Ա 1.- Հ.Յ.Դ. մարմիններուն (Շրջաբերական թիւ 13) 8
- Ա 2.- Հ.Յ.Դ. մարմիններուն (Շրջաբերական թիւ 15) 9
- Ա 3.- Օրակարգ Հ.Յ.Դ. 2. Ընդհ. Ժողովի 11
- Ա 4.- Հարցարան տեղեկագրերու պատրաստութեան համար 14
- Բ.- Լիազօրագրեր 16
- Գ.- Հ.Յ.Դ. 2. Ընդհ. Ժողովի ատենագրութիւնները 23
- Դ.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. 2^ա Ընդհ. Ժողովի կողմէ ընտրուած Հաշուեքննիչ յանձնախմբին (1911) 120
- Ե.- Հ.Յ.Դ. 2^ա Ընդհ. Ժողովին Որոշումները (Ամփոփում եւ քաղուածքներ) 125

ՊԼՈՒԽ II.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ
(էջ 136 - 161)

- Ա.- Տեղեկագրի ամփոփոյք Հ.Յ.Դ. Արեւմ. Բիւրօ (Թ[ուրքիոյ] հատուած) 137
- Բ 1.- Յարաբերութիւնները «Իթքիհատ վէ Թերաքքը»-ի հետ (1909 Նոյ. - 1911 Օգոստ.) 143
- Բ 2.- Յիշատակագիր Հ. Յ. Դաշնակցութեան եւ «Իթքիհատ վէ Թերաքքը» կուսակցութիւններու փոխադարձ յարաբերութիւններու մասին 149
- Գ 1.- Թուրք կառավարութենէն վատերացուած ծրագրի բնագրին ձեռագիրը 157
- Գ 2.- Շրջաբերական թիւ 11 (Կ. Կոմիտէներուն) 159
- Դ.- Արեւմտեան Բիւրոյէն Արեւելեան Բիւրոյին 160
- Ե.- Կովկասի մարմիններուն 161

ՊԼՈՒԽ III.- ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
(էջ 162 - 174)

Ռայոնական ժողով Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածին 162

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՊԼՈՒԽ IV.- ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Կ. ԿՈՍՏԵՆՈՒԹԻՒՆ
(էջ 175 – 226)

Ա 1.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Պոլսոյ Կ.Կ.ի (1909 Օգոստ. – 1910 Դեկտ.) -----	177
Ա 2.– Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Պոլսոյ Բ. Շրջանային ժողովին (1911, Յունուար) -----	181
Ա 3.– Տեղեկագիր Պոլսոյ Շրջ. ժողովի Հաշուեքննիչ յանձնախումբի -----	196
Բ.– Հ.Յ.Դ. Պոլսոյ շրջանի Արտակարգ Գ. Շրջ. ժողովոյ ատենագրութիւնը (1911, Յուլիս) -----	201
Գ.– «Ազատամարտ»ի խմբագրութեան շրջաբերականը Հ.Յ.Դ. մարմիններուն եւ ընկերներուն -----	225

ՊԼՈՒԽ V.- ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՍՏԵՆՈՒԹԻՒՆ
(էջ 227 – 243)

Ա.– Հ.Յ.Դ. Վասպուրականի շրջանի համառոտ տեղեկագիր 1910 թուի -----	227
Բ.– Տեղեկագիր Վասպուրականի Կ.Կ.ի Հ.Յ.Դ. Չ. Ընդհ. ժողովին (1911) -----	231
Գ.– Վանայ Սարգիստէն երեք նամակ Բիւրոյներուն -----	238
Գ 1.– Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին -----	238
Գ 2.– Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյին -----	240
Գ 3.– Արեւմտեան Բիւրոյին -----	242

ՊԼՈՒԽ VI.- ԴՈՒՐԱՆ – ԲԱՐՉՐԱԿԱՆ-ԴԱԿԻ Կ. ԿՈՍՏԵՆՈՒԹԻՒՆ
(էջ 244 – 268)

Ա 1.– Քաղուածքներ Հ.Յ.Դ. Դուրան-Բարձրաւանդակի Շրջ. ժողովի որոշումներէն (1911) -----	245
Ա 2.– Տեղեկագիր Հաշուեքննիչ յանձնաժողովոյ Դուրան-Բարձրաւանդակի Ռայ. ժողովին (1911) -----	251
Բ.– Տեղեկագիր Դուրան-Բարձրաւանդակի Կ.Կ.-ական շրջանի մասին (1911) -----	253
Գ 1.– Արեւմտեան Բիւրոյի Պոլսոյ հատուածին (21 Մարտ 1910) -----	256
Գ 2.– Արեւելեան Բիւրոյի ընկերներուն (10 Մայիս 1910) -----	257
Գ 3.– Շրջաբերական (10 Օգոստ. 1910) -----	258
Գ 4.– Արեւմտեան Բիւրոյի Թ[ուրքիոյ] հ[ատուած]ին (25 Հոկտ. 1910) -----	259
Գ 5.– Արեւմտեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածին (4 Փետրուար 1911) -----	261
Գ 6.– Արեւմտեան Բիւրոյին (Պոլիս) (22 Յունիս 1911) -----	263
Գ 7.– Արեւմտեան Բիւրոյին (Պոլիս) (28 Յունիս 1911) -----	264
Գ 8.– Արեւմտեան Բիւրոյին (Պոլիս) (6 Յուլիս 1911) -----	266

ՊԼՈՒԽ VII.- ԲԱՐՉՐԱԲԵՐԴ – ԿԱՐՆՈՅ Կ. ԿՈՍՏԵՆՈՒԹԻՒՆ
(էջ 269 – 302)

Ա 1.– Հ. Յ. Դաշնակցութեան Տեղական մարմին (30 Ապրիլ 1910) -----	270
Ա 2.– Արձանագրութիւններ Բարձրաբերդի Շրջանային Բ. ժողովի (1910) -----	272
Ա 3.– Ընդհանուր հաշուեկշիռ Բարձրաբերդի -----	286
Բ 1.– Հ.Յ.Դ. Բարձրաբերդի Կ. Կոմիտէին, յանձնելի Շրջ. ժողովին [Երզնկա] -----	288

Բ 2.– Հ.Յ.Դ. Բարձրաբերդի Բ ^մ Շրջանային ժողովին [Դերջան] -----	300
Բ 3.– Պատճեն արձանագրութեան Միջնաբերդի Շրջանային Ա. ժողովին [Բաբերդ] -----	292
Բ 4.– Գ. Պատգամատրական ժողով Խորածորի [Բողի] -----	298
Բ 5.– Տեղեկագիր եւ զեկուցում Մմբատաբերդի [Սպեր] -----	300
Գ.– Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովին (10 Օգոստ. 1911) -----	302

ՊԼՈՒԽ VIII.- ԾՈՎԱՓ – ՏՐԱՊԻԶՈՆԻ Կ. ԿՈՍՏԵՆՈՒԹԻՒՆ
(էջ 303 – 321)

Ա 1.– Աւագանի IV Շրջանային ժողով (1911, Դեկտ.) -----	304
Ա 2.– Հ.Յ.Դ. Աւագանի Դ. Շրջանային ժողով (1911, Յունուար) -----	306
Ա 3.– Շրջաբերական-նամակ (1911, Տրապիզոն) -----	309
Բ 1.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Աւագանի մարմիններուն եւ Կ.Կ.ի (1909-1911) -----	311
Բ 2.– Վեցամսեայ տեղեկագիր Ծովափի Շրջ. մարմնի (1911) -----	315
Բ 3.– Հ.Յ.Դ. Աւագանի V Շրջ. ժողով (1911) -----	316

ՊԼՈՒԽ IX.- ԼԵՆՆԱՍԱՐ – ԽԱՐԲԵՐԴԻ Կ. ԿՈՍՏԵՆՈՒԹԻՒՆ
(էջ 322 – 334)

Ա 1.– Հ.Յ.Դ. Լեննասարի Բ. Շրջ. ժողով (1910) -----	322
Ա 2.– Հ.Յ.Դ. Լեննասարի Գ. Շրջ. ժողով (1911) -----	325
Ա 3.– Տեղեկագիր Լեննասարի Կ. Կոմիտէին (1911) -----	329
Բ.– Սերաստացի Մուրատէն Պոլսոյ Պատասխանատու մարմնին -----	333

ՊԼՈՒԽ X.- ՎԻՇԱՊԱՉՈՐ – ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
(էջ 335 – 362)

Ա.– Հ.Յ.Դ. Վիշապաձորի շրջանի համառոտ տեղեկագիր (1910) -----	336
Բ.– Հ.Յ.Դ. Տ[իգրանա]կերտի շրջանի տեղեկագիր (1911) -----	339
Գ 1.– Հ.Յ.Դ. Վիշապաձորի Գ ^մ Շրջանային ժողովի որոշումները (1911) -----	345
Գ 2.– Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյին (Թուրքիոյ) հատուած -----	351
Դ 1.– Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածին -----	352
Դ 2.– Հողային հարց Հազրոյի. քիւերն ալ կրնա՞ք հերքել -----	354
Դ 3.– Յուցակ Սլիվանի եւ Պշերիկի բոնատիրուած կալուածոց -----	360

ՊԼՈՒԽ XI.- ԼԵՆՆԱՎԱՅՐ – ԿԻԼԻԿԻԱ
(էջ 363 – 375)

Ա 1.– Հ.Յ.Դ. Կառափնատի Շրջանային ժողով (1910) -----	364
Ա 2.– Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուածին) -----	372
Ա 3.– Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին -----	373
Բ.– Վահագն Տաթեւեանէն Վոստեանին -----	374
Գ.– Արեւմտեան Բիւրոյին -----	375

ՊԼՈՒՆ XII

ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՒՍ ՇՐՋԱՆՆԵՐԸ

(էջ 376 - 413)

1.- ԲԱՆԱԼԻԻ ՍԱՄՄՈՆ-ՄԱՐԶՈՒԱՆՆԻ ՇՐՋԱՆ

Ա.- Արամ Մանուկեանէն Վոսմեանին (1910) -----	377
Բ 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Բանալիի Կ.Կ.ի շրջանին (1911) -----	380
Բ 2.- Տեղեկագիր Բանալիի [Մամսոն] շրջանի -----	384
Բ 3.- Տեղեկագիր Ամասիոյ շրջանին -----	386
Բ 4.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Երեք-Բլուրի ենթակոմիտէին -----	387
Գ.- Պատասխան թիւ 16 շրջաբերական հարցարանին [Մարզուման]-----	389

2.- ՍԵՒ ԲԼՈՒՐ - ՍԵՐԱՍՏԻՈՅ ՇՐՋԱՆ

Ա.- Հ.Յ.Դ. Սեւ Բլուրի խումբերու կողմէ թելադրութիւններ (1911) -----	391
Բ.- Տեղեկագիր Էրպայայի շրջանին [Հերէկ] -----	394
Գ 1.- Պատասխան հարցարանի [Սերաստիա] -----	395
Գ 2.- Հարցարանի պատասխան -----	398

3.- ԲԱՐՉՐ ՍԱՐ - ԿԵՍԱՐԻՈՅ ՇՐՋԱՆ

Ա.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Բարձր-Սարի (Կեսարիոյ) շրջանի կազմակերպութեան (1911) -----	399
Բ.- Թոքատի տեղեկագիրը -----	401
Գ 1.- Թիւ 16 շրջաբերական-հարցարանին պատասխանները [Կեսարիա]-----	403
Գ 2.- Տեղեկագրերու պատրաստութեան համար դրկուած հարցարանին պատասխանը [Էվերէկ] -----	406
Գ3.- Պատասխան շրջաբերական թիւ 16ի -----	408

4.- ՈՍԿԵՀԱՆՔ - ԻԶՄԵՐԻ ՇՐՋԱՆ

Ա.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Իզմիրի Կ.Կ.ի (1909-1911) -----	409
Բ.- Հարցարանին պատասխանները (1911) -----	411

ՊԼՈՒՆ XIII.- ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

(էջ 414 - 435)

Ա 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Պալքանի Կ. Կոմիտէի (1909-1910) -----	415
Ա 2.- Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Պալքանի Թ՞՞ Շրջանական ժողովի (1910) -----	419
Բ.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. Կոմիտէի (1910-1911 տարեշրջանի) -----	431

ՊԼՈՒՆ XIV.- ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

(էջ 436 - 474)

Ա 1.- Ամփոփ տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի կոմիտէներու 15 ^{րդ} Պատգ. ժողովի (1909, Դեկտ.) -----	438
Բ 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ի (1909-1910) -----	443
Բ 2.- Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Ամերիկայի 16 ^{րդ} Պատգ. ժողովի (1910, Դեկտ.) -----	445
Գ 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ի (1910-1911) -----	455
Գ 2.- Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Ամերիկայի 17 ^{րդ} (Արտակարգ) Պատգ. ժողովի (1911) -----	461
Գ 1.- Տեղեկագիր Ամերիկայի շրջանի [1911] -----	467
Դ.- Ակնունցի նամակը Արեւմ. Բիւրոյի Պոլսոյ հատուածին -----	469
Ե.- Շրջաբերական Է. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ի (4 Նոյ. 1911) -----	471

ԱՆՉԱՆՈՒՆՆԵՐ ----- 476

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ----- 482

ՆԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – Ը. ՀԱՏՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ

Համակարգչային շարուածք եւ էջադրում
ԹԱՄԱՐ ՍՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

ՑՐՈՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

HAMAZKAYIN LIBRARY
P.O.BOX 80-1096
BOURJ HAMMOUD – LEBANON
TEL.: 00961 - 1 - 241263/4
FAX: 00961 - 1 - 260329
E-MAIL: impliamaz@inco.com.lb
www.liamazkayin-bookstore.com



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ